



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

OL 44909.73



Harvard College Library

FROM THE BEQUEST OF

JAMES WALKER, D.D., LL.D.,

(Class of 1814)

FORMER PRESIDENT OF HARVARD COLLEGE;

“Preference being given to works in the Intellectual
and Moral Sciences.”

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՆՎԱԿԵՐ ԳՐՈՑ ՎՐԱՅ

○

Parsegh Sarkisian.

Studies on the apocryphal
books of the Old Testament

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ


ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՆՎԱԻԵՐ

ԳՐՈՑ ՎՐԱՅ

ԳՐԵՑ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅՈՒԻՏԷՆ ՄԻԹԱՐԱՅ



ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՅԽԷ = 1898

~~IV, 10085~~

~~OL 440515~~

~~OL 44177.31~~

OL 44909.73



Walker fund



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

« Թեոփիլոս հին և նոր նախնիաց, Ա. ՀԿԲ
Անվանոս հին և նոր կրտսերաց, Վիտրիի.
Ս. Ղազար 1896 »:

Այս աշխարհում լոյս տեսած հետաքրքրական գրութիւնն՝ անցեալ տարւոյն սկիզբը կու գայր ողջունել հնութեան սիրահար մերասեր և օտարազգի գիտնականները, որոց սիրտն և միտք կենաց նոր շրջանին հետ՝ գիտութեան նորագոյն յայտնութիւններով և քան զէս կը բարախեն և կը հրճուին: Այս, նորագոյն յայտնութիւններ են Ս. Գրոց պատմութեան վերաբերեալ այն ամեն հատկոտորներն, որոնք այս ինչ կամ այն ազգի գրականութեան մէջ թաղուած կը մնային, և հետզհետէ գուտտէմբերգեան ջահի լուսով կը յայտնուին և կը ծանօթանան մեզ, կարծէք թէ պատուելով իմն զիրենք պատող դարուց թանձրագոյն քօղը: Յայտնութիւններ են նախնեաց խորամուխ կամ հետևակ հանճարներու այն ամեն ստեղծագործութիւնք, որոնք կը կազմեն իրենց դարուն մէջ զարգացած մերթ կրօնական և իմաստասիրական և մերթ ալ վիպական մրցութեանց ուղղամթերքը. որոնցմով նոքա զբաղեցան և զբաղեցուցին իրենց ժամանակակիցներն, և մենք պիտի դատենք անոնց անցեալը:

Անվաւեր գրուածոց մասին եղած նախնի հարց, այսպէս նաև ծթ. դարէն և այսր ուսումնասիրութիւնքն՝ կը գտնուէին դեռ իրենց նախկին սաղմի մէջ, զուրկ այն դրական ուղղութենէն և գիտական բազմակողմեան արդիւնքէն. վասն զի առաջիններն գրէթէ առհասարակ արհամարհոտ աչքով մի կը նայէին կամ բողբոլին անտես ըրին զանոնք ուսումնասիրել, և կամ լոկ իբրև մոլորեալ մտքերու ստայօղ և Ս. Գրոց հակառակ առասպելաբանութիւններ՝ հարևանցի յիշատա-

կելով միայն բաւականացեր են: Իսկ վերջիններն, այսինքն է ՓՁ. դարու իմաստասէր և իմաստակ մատենագիրներն, այս տեսակ գըրուածոց այն տեղերով միայն և այն տեսութեամբ զբաղեցան, իբրու այն՝ թէ սոքա Ս. Գրոց և եկեղեցական աւանդութեանց դէմ մենամարտելու միակ զինարաններ ըլլային, և ոչ այլ ինչ աւելի:

Բայց ժՔ դարն երկուքէն իսկ բոլորովին տարբեր աչքով սկսաւ դիտել անվաւեր գրուածները, տարբեր դրութեամբ ուսումնասիրել և տարբեր արդիւնքներ անոնցմէ յառաջ բերել: Այնքան կարևոր, այնքան ուշագրաւ եղած է այսօր այս տեսակ հնութեանց ուսումնասիրութիւնն յԵւրոպա, որ ազատ և անտարբեր բանասիրին առընթեր՝ մենք կը տեսնենք բազմաթիւ կրօնասէր և զգուշաւոր քննադատներ. և զոյգ ընդ բողոքական Ուսուցչին և հրէայ ռարունոյն՝ նա և Հարիւրաւոր ուղղադաւան աստուածաբաններ և մեկնիչներ, որոնք անխոնջ աշխատութեամբ և անյազ տենչմամբ կ'ուսումնասիրեն և կը հրատարակեն զանոնք. և մենք գիտենք, թէ ինչպիսի անհուն արդիւնքներ յառաջ եկան և պիտի գան այսպիսի անաչառ քննադատութենէ առաջնորդուած ուսումնասիրութիւններէ:

Ասոնցմէ կ'իմանանք արդարեւ, թէ ո՛րքան և որպիսի օւանդութիւններ պահուած են՝ մարդկութեան և աստուածապետական կրօնից իբրև նախկին խանձարուրք եղող արևելեան ժողովրդոց և դպրութեան մէջ, որոնցմով ներկայս աւելի կը պարծի քան թէ միջին դարը. որովհետև միջնադարեան մատենագիրներն աւելի աւանդապահ եղան անոնց մէջ պարունակուած բազմատեսակ գանձուց, քան թէ ճանաչողք որպիսութեանց. որովհետև նոքա նիւթական յարասողներ եղան անվաւեր գրուածոց, քան թէ վերժանողք անոնց պատրուակեալ նութիւններուն:

Ընդունելով Հանդերձ, թէ Ս. Գիրք եղած են միշտ կատարեալ և անթերի ներկայացուցիչներ յայտնեալ ճշմարտութեանց, և թէ անոնց ազդեցութիւնն խիստ մեծ եղած է ստուգիւ նաև անվաւեր գրուածներու հեղինակաց և անոնց ժամանակակցաց վերայ, սակայն և այնպէս կրնանք ըսել առանց երկրայութեան, թէ այս վերջնոցս քով պահուած են այնքան և այնպիսի վիպական, ազգագրական և վախճանաբանական (éschatologique) գանձեր, որոնցմով կը պարզուին կանոնական գրոց մթին տեղերն, նորանոր պարագաներով կ'ընդարձակուին պատմական Հակիրճ ակնարկութիւններն և կը լրանան ի լուծեան թողուած շատ մի վիպական արարուածներն: Օրինակի աղագաւ, Ս. Գիրք Համառօտիւ կը պատմեն նախածնողաց պատուիրանա-

զանցութիւնն և ի դրախտէն արտաքսումը . բայց թէ անկէց վերջ
 ինչպէս ապաշխարեցին, ապրեցան, մեռան և թազուեցան . այս դա-
 բաւոր միջոցիս մէջ իրարու յաջորդող վէպք և արարուածք՝ զորս թու-
 զին անոնք իրենց յաջորդող սերնդոց մէջ, լուռած են իսպառ : Իսկ
 անվաւեր Ադամգիրքն զայս ամենայն հետաքրքրական վիպօք և պա-
 րագաներով կը բարգաւաճեն, գոգցես իմն նոր աշխարհ մի և ընդ-
 արձակածաւալ հորիզոն մի բանալով մեր դիմաց : Այսպէս նաև Մով-
 սիսի՝ Փարաւոնի արքունեաց մէջ և յերկրին Մադիամու անցուցած
 կենաց վերայ՝ Ս . Գիրք լուութիւն կը պահեն, անոր ամուսնութիւնը
 միայն յիշատակելով Յողորայ դստեր և եթովպացի կնոջ մի հետ .
 իսկ Մովսեսի անվաւեր կենսագրոտքիսն՝ Հիանալի վէպեր կ'աւանդէ
 մեզ այս սահմանաց վերայ կատարուած անոր զինուորական զօրու-
 թեան և այլ սխրագործութեանց մասին, ժողովրդական կենդանի
 աւանդութիւններով լի : Երկոտասան նահապետաց խաշնարած լինելը
 միայն գիտեմք մենք Մնկոց գրքէն, Յովսէփ Գեղեցկի սրտաշարժ
 արարուածներով . բայց թէ անկէց վերջ ինչպէս կեցին և մեռան, և
 ինչ բարուց և բնաւորութեան տէր էր անոնցմէ իւրաքանչիւրն և թէ
 ինչ թողուց զկնի, զայս ամենայն ժի՛ նահապետաց անուամբ մեզ
 Հասած անվաւեր Կտակին բանիրուն հեղինակը կը պարզէ մեր դի-
 մաց, պարզ և գեղեցիկ և միանգամայն խորագնին մարդարանու-
 թեամբ : Ս . Գիրք չոր և ցամաք կերպով կը ծանուցանեն մեզ Յովսէփ
 Գեղեցկի ամուսնութիւնը Պետափրեայ դստեր Ասանէթայ հետ . բայց
 թէ որպիսի՞ ոք էր Ասանէթ, ինչպէս կատարուեցան այդ Հարսա-
 նիքն . ինչ պատմական դէպքեր անցան այդ ժամանակամիջոցին Յով-
 սեփայ և Փարաւոնի որդւոյն մէջ, և թէ ինչ նշանակութիւն ունէին
 այդ դէպքերն, Հիանալի վիպաստնութեամբ և վրձինով զայս ամե-
 նայն կը նկանագրէ մեզ Յովսեփայ և Ասանէթայ անվաւեր Պատ-
 մոտքիսն, տալով միանգամայն Հազուագիւտ տեղեկութիւններ Երբա-
 յեցուց և Եգիպտացուց՝ կրօնական, քաղաքական և առտնին սովո-
 րութիւններով : Այսպէս իմա և բիրիլիակաւ ուրիշ նշանաւոր անձանց
 և անցից մասին, ուր կանոնական Գիրք լուսծ են, անկանոններն
 ընդհակառակն անոնց վերայ աւելի հիացմամբ կը ճառեն և կը ճո-
 խանան . և գերբնականէն աւելի բնական և բանաստեղծական ան-
 ցից և եղբուրթեանց գունագեղ պատկերները անակընկալ կերպով
 մեր աչաց առջև կը բանան և կը պարպեն : Անվաւեր գրոց այս ա-
 լելազանցութիւնքն այնքան աւելի ուշագրաւ են և ճշմարտանման,
 երբ մանաւանդ կանոնականներուն իսկ ուղղակի չեն Հակասեր : Սոցա

Հնագոյններն՝ որոց հեղինակներն կամ զուտ և կամ քրիստոնէացած հրէաներ են, դիտաւորութիւն չունին Ս. Գիրքն եղծանելու համար բուրրովին մտացածին և սուտ բաներ յօդել, այլ անոնց սահմանքը այսպէս կամ այնպէս ընդարձակել, ազգային և Հնաւանդ մնացորդներով: Այս կարգէն են Ադամայ, Ենովքայ և Գ. (ըստ Հային Գ) Եգրի գրքերն և Փոքր Աշարածոց անուանեալ գրուածն: Իսկ անոնք՝ որոց հեղինակներն են քրիստոնեայ Գնոստիկեաններ կամ Վաղենտինեանք, Մոնտանեանք և Պրիսկիլիեանք, թէպէտ և յաճախ իրենց կէտ նպատակի դրած են յեղաշրջել կանոնական գրոց և եկեղեցւոյ հաւատալիքը, էակարանութեամբ և այլ նորահնար վարդապետութեամբք և մեկնարանութիւններով, սակայն և այնպէս շատ և շատ նոր դէնքեր կը մատուցանեն մեզ զիրենք պարտելու և Ս. Գրոց ստուերակողմանքը լուսարանելու համար: Յամենայն դէպս կրնանք ըսել, թէ անվաւեր գրուածոց ձեռքով կը յայտնուին մեզ վաւերական գրուածոց անյայտացած աղբիւրներ և աղբերաց աղբիւրք, յորոց նոր Կտակի հեղինակներն ևս յաճախակի տեղեր փոխ առած և վաւերացուցած են արդէն:

Գարձեալ, անվաւեր գրութիւններն՝ իբրև կամուրջներ են հին Կտակարանէն՝ նորին անցնելու և հրէական պատմութենէն՝ քրիստոնէութեան: Պատրաստութիւններ են Աւետարանին. վասն զի արարչագործութեան և աստուածային նախախնամութեան հետ՝ մարդկային փրկագործութեան և Քրիստոսի տնօրինականքն ևս աւելի պայծառ կերպով և յայտնաբարբառ կ'աւանդեն: Առաջին կերպով՝ կը հաստատեն հին Կտակի աւանդութիւնները՝ կռամով հեթանոսութեան և հեթանոս Գնոստիկեանց դէմ. իսկ վերջնովք՝ իբրեւ ամենահին և զօրեղ ապացուցութիւններով կը հաւաստեն եկեղեցւոյ մէջ մինչև ցայսօր պահուած՝ քրիստոսադիր խորհրդոց և հաւատոյ մասանց հարկաւորութիւնը նորակրօնից նորահնար յարձակմանց դէմ: Ասոնցմէ իսկ կը տեսնուի, թէ արդարութեան արեգական, այն է Քրիստոսի գալստեան մերձաւոր ճառագայթներով ո՞րքան ողջամիտ Հրէաներ լուսաւորուեր են և լուսւորել ուզած այն թշուառ ժողովուրդը, աղօտ նմանութեամբ առաքելոց և աւետարանչաց: Ահա այս և ազգագրական դեռ ուրիշ կէտերով իսկ՝ այժմ աւելի քան երբէք Հաւհագրգիտ դարձած են անվաւերական գրութեանց հրատարակութիւնք և ուսումնասիրութիւնք. և մենք պիտի ջանանք այլարանութեան քօղի տակ ծածկուած այսպիսի տեսիլներն ևս ի լոյս ածել յօգուտ Ս. Գրոց պատմութեան:

Ստեփան, մեզ համար առանձին նշանակութիւն ունին Հայերէն լեզուով թարգմանուած այն անվաւերականներն, մասնաւանդ անոնց մէջ ներմուծուած և անոնց հետեւողութեամբ եղած յարասութիւններն, յորս մասնաւոր կերպով կը փայլին օտարին առնթեր՝ նոյն իսկ Հայկական մտաց և երկանց արտադրութիւնքն: Այո՛, ուրախ ենք տեսնել, որ դարերու ահաւոր հարուածոց ենթարկուած և աղքատին կարծեցեալ մեր գրականութիւնն՝ այսու իսկ ոչ միայն յետնեալ չի մնար քան իւր դրացի և հեռաւոր ազգերու գրականութիւնն, այլ համեմատութեամբ անոնց՝ աւելի ծածկեալ գանձեր ընծայած է և դեռ պիտի ընծայէ ուսումնասեւնչ աշխարհի: Ասոր յայտնի ապացոյց են այն բազմաթիւ անվաւեր գրուածներն, որք յիշատակուած են Յովհ. Սարկաւազ վարդապետի ձեռքով կարգաւորուած ցանկին մէջ, զոր պահած է մեզ Մխիթար Այրիվանեցին, և ազգային մատենադարաններում գտնուող գրչագրաց մէջ:

Մխիթարեան հարցս փափազն էր, — յետ ի վաղուց ճանաչելոյ այտղիսի գրուածոց կարևորութիւնը, — օր մ՛առաջ լեցնել տոհմային բանասիրաց հետ՝ նաև օտարաց ծարաւը. սակայն պէսպէս դժուարութեանց հետ՝ տպարանիս բազմազրաղ վիճակն ևս արգելք կ'ըլլային առ այս: Բայց հուսկ ուրեմն իւր եռանդուն գործիչներու ջանափրութեամբ հարթելով այն դժուարութիւնները, հրատարակեց Հին Կտակի անվաւեր գրուածոց Ա. հատորը, որուն ապա պիտի յաջորդեն միւսներն, որք պիտի ընծայեն հետզհետէ նոր Կտակին վերաբերեալ անվաւերականներն և ասորի և յունական հարց անուամբ Հայկական Հին թարգմանութեանց մէջ միայն պահուած ամբողջ կամ մասնական գրութիւնները: Եւ կրնանք ըսել, թէ այս վերջնոց պատճառաւ է որ Ա. հատորին վերայ դրոշմուած է թանգարան հին և նոր նախնեաց տիտղոսն:

Ի սկզբան գործոյս դիտաւորութիւն կար ըստ կարելոյն անթերի հաւաքմունք մ'ի լոյս ընծայել, քաղելով զայն նա և ազգային ուրիշ գրատանց գրչագրերէն. և անշուշտ այս առթիւ տարիով յառաջ ազդ մ'ևս հրատարակուցաւ «Բազմավիպի» միջոցով առ ընդհանուրս: Ստեփան այսպիսի ազգապարծանք հրաւերին մէկը միայն ձեռքնտու եղաւ մեզ՝ միտվ իւրիք, և այն իսկ յարտաքնոց. ուստի հարկադրուեցաւ հրատարակիչն մատենադարանիս գրչագրերովը միայն շտանալ, դիտելով կարեկցարար մերայնոց անշարժութիւնը, որոնք օտարին աւելի մտադիւր կը ծառայեն:

Եթէ ըսենք, թէ վերայիշեալ հրատարակութիւնն փափաքուածին

Համեմատ կատարեալ եղած է, ճշմարտութիւնը ծածկած պիտի ըլլանք և կամ խեղաթիւրած. վասն զի մէկ կողմէն ժամանակի սղութիւնն և բանիբուն վաստակաւորաց սակաւութիւնն, իսկ միւս կողմէն այդ տեսակ գրուածոց անվերնագիր և ցիրուցան կերպով գրացարաց անծայրածիր ծովուն մէջ գտնուիրն՝ թոյլ չէին տայր հրատարակչին միատամանակ որսալ զանոնք, և ըստ կարգի և պատշաճի դասաւորել զանոնք յիշեալ թանգարանին մէջ: Այս պատճառաւ հարկ եղեր է վերջէն գտնուածները՝ առանձին յաւելուածով տպել: Բնագրոց գործածութեան ընտրութեան և տպագրութեան մէջ իսկ տեղ տեղ փոքրիկ թերութիւններ սպրդած են, որոնք ուրեք ուրեք գրութիւնն անհասկանալի է՝ ընեն և հայերէն թարգմանութեանց և անոնց բնագրերու կամ ուրիշ թարգմանութեանց մէջ անհամաձայնութեանց պատճառ դարձած են: Վերջին թերութեանց կը վերաբերին անճիշդ և անյարմար կէտագրութիւնքը, գլխակարգութեանց և թուահամարներու կամ տանց բարձումը և բառից սխալագրութիւններն: Մեք մեր այս ուսումնասիրութեան մէջ մտադիր ենք թէ՛ այս և թէ՛ առաջին թերութեանց մասին ինչ ինչ ուղղութիւններ և դիտողութիւններ ընելու, — քէթ կարևոր գրութեանց և տեղեաց նկատմամբ, — զանոնք իրենց բնագրոց կամ ուրիշ թարգմանութեանց հետ համեմատած ժամանակ. որպէս զի քննասէրք հայերէն թարգմանութեանց մասին սխալ գաղափար չունենան:

Այս թերութիւններովս հանդերձ՝ կրնանք ըսել, թէ յիշեալ հրատարակութիւնն մինչև ցայդ եղածներէն աւելի ճոխ է, գէթ բազմատեսակ և հում նիւթոց պարունակութեամբք. այսպէս նաև գրացարաց հոծ և նշանաւոր տարբերութիւններով, որոնք ըստ բաւականին աշխատութեամբ և խնամքով նշանակուած են մեր վաստակասէր Հ. Սարգիս Յովսէփեանի ձեռքով, ի ստորև իւրաքանչիւր իջին, և մեծապէս կը նպաստեն բնագրոց քննադատութեան: Անշուշտ ենք, թէ Բ. Հատորին, այն է՝ նոր Կտակի անվաւեր գրոց հրատարակութիւնն՝ որ արդէն սկսած է, թէ՛ զերծ պիտի լինի առաջնոյն թերութիւններէն և թէ՛ նոր առաւելութիւններ ևս պիտի ներկայացնէ անոնցմով զբաղուող բանասէրներուն:

Ընդհանուրէն դուրս՝ մասնաւոր նշանակութիւն ունին այս ինչ կամ այն անվաւեր գրութեան համար մէկէն աւելի այն այլատեսակ օրինակներն, որոնք իրարմէ ունեցած ահագին տարբերութիւններով նոյնպէս տարբեր բնագրոց վրայէն և տարբեր ժամանակներ կատարուած թարգմանութիւններ կամ խմբագրութիւններ ըլլալու

բնագրողը կը կրեն իրենց վերայ: Այսպիսեաց համեմատութիւններն աւելի դժուարին ըլլալով, լաւ կը լինէր, որ փոխանակ տարբերութիւնները միայն դնելու՝ ամբողջապէս հրատարակուէին անոնք, դիմացէ դիմաց կարգեալ սիւնակներով առանձինն, ինչպէս կը տեսնենք Ա հատորին մէջ զետեղուած մի քանի նիւթերը:

Իսկ մենք յիշեալ հատորին մէջ հրատարակուած գրոց գաղտնիքը իբրև ծայրիւ մատին պարզելու, և ապագայ ըլլալիք ուսումնասիրութեանց դիւրընթաց ասպարէզ մի պատրաստելու համար՝ ձեռք պարկինք այս ուսումնասիրութեանս, ջանալով նիւթին համեմատ՝ հակիրճ կամ ընդարձակ տեսութիւններ ևս ընել անոնց իւրաքանչիւրի վերայ, քննելով անոնց բնագրոց ծագումը, թարգմանութիւններն և այլևայլ հրատարակութիւնքը՝ իրենց տարբերութիւններով, մերասեր բանասիրաց քան թէ օտարաց համար, որոնց արդէն այս ամենայն ծանօթ ըլլալուն: Բաց աստի՝ օտարաց ևս օգտամատոյց և հետաքրքրական ըլլալու համար պիտի ջանանք հայկական դպրութեան հետ ունեցած ընդարձակ աղերսներն ևս ցոյց տալ, որոնք ծանօթ չեն անոնց: Առ այս՝ հարկ եղաւ աչքէ անցընել շատ մի տպագրուած և անտիպ գրութիւններ, որոնք ժամանակի հետ՝ քիբտն և վաստակ ևս կը պահանջէին ի մէնջ: Այսպիսի ուսումնասիրութիւն մի ոչ միայն հարկաւոր, այլ և լրացուցիչ և գոհացուցիչ պիտի լինի անվաւեր գրոց ընթերցողներուն:

Ի վերջոյ կը ծանուցանենք, թէ յիշեալ հրատարակութեան անվաւեր գրութիւններն՝ ուրիշ աղերսներով կը կազմեն նա և մեր ուսումնասիրութեան նիւթերը, սակայն հրատարակուածէն տարբեր կարգով: Անվաւերականներէն ոմանք, օրինակ իմն, Աղօթք Մանասէի և այլն, որոնք արդէն ի վաղուց հրատարակուած էին և ծանօթացած ամենուն, և մեծ կարևորութիւն մի չեն ընծայեր Ս. Գրոց կամ արտաքին պատմութեան, մենք կամ հարևանցի պիտի ուսումնասիրենք, և կամ ոչ: Իսկ Սգրի Գ. գիրքն՝ իբրև աղբիւր Ենովբայ և Դանիէլի Է. տեսիլներուն, և մանաւանդ իւր ծանրակշիռ հեղինակութեան համար՝ ընդարձակաբար ուսումնասիրելու միտք ունինք, թէպէտ և կը ցաւինք ըսել, որ դժբաղդաբար Վենետիոյ արքունի Մատենադարանն՝ ուրիշներուն պէս չընծայեր պէտք եղած միջոցները, կամ նոր հրատարակութիւնները: այլ կը շատանանք մերովսան ձեռք բերած հեղինակութիւններովը միայն, որոնք սակայն ամէն գրութեան համար հարկաւոր եղած չափով չկարացինք ժամանակին ստանալ: Այսու հանդերձ կը յուսանք, թէ ծարաւի չպիտի մնան մեր ընթերցողներն նիւթոց մասին հարկաւոր եղած գիտելիքներէն, ինչպէս մենք ալ մեր սիրայօժար ստանձնած ծառայութենէն:

Ա Դ Ա Մ Գ Ի Ր Ք



ամանակագրական կարգն ևս կը պահանջէ, որ այս անվա-
 ճութեան գրուածով սկսինք մեր ուսումնասիրութիւնը: Ընդհա-
 նուր մակագրութիւնս որ դրուած է վեներական հրատարակու-
 թեան Ա. գլխոյն վերայ՝ ոչ մի ձեռագրի մէջ չկայ. այլ հրատա-
 րակչի կողմէն յերկրուած է, ըստ որում գործածեր է Սարկա-
 ւազ մականուանեալ վարդապետն՝ Մխիթ. Այրիվանեցոյ խանսևա-
 կագրոտքեանք պահուած հնագոյն ցանկին մէջ: Բայց թէ Սարկաւազ
 վարդապետէն յիշուածն արդեօք ուղղակի ա՛յդ գրութիւնն էր, թէ ընդ
 հակառակն Եւրոպացոց ծանօթ Ադամայ ընդարձակագոյն Գիրքը
 (Livre d'Adam), որ բոլորովին կը տարբերի անկէ: Եթէ վերջինն
 ընդունինք, այնուհետև պէտք է ըսել, թէ այդ ընդարձակ գրութեան
 հայերէն թարգմանութիւնն տակաւին մեզ հասած չէ ամբողջպէս.
 այլ աւելի կամ պակաս այլափոխուած հատուածներ միայն: Անհա-
 ւանական չէ ըստ ինքեան նոյն իսկ Սինգեղոսի ΒΙΟΣ ΑΔΑΜ, այսինքն
 է Կենսագրութիւն կամ պատմութիւն Ադամայ՝ իբրև անճիշդ թարգ-
 մանութիւն համարել զայն. ուստի այսպէս կամ այնպէս մենք ևս
 վերջին առամար կը գործածենք մակագիրս Ադամգիրք:

Այս ընդհանուր մակագրութեանս ներքև կը գտնուին իրարմէ
 տարբեր հինգ նիւթեր, որոց առաջին երկուքը գրուած են սպա-
 գրեալի 1-21 էջերը, և մակագրուած են, մին՝ Պատմութիւն վարդա-
 Ադամայ և Երայի նախաստեղծիցն, և այլն. և միւսն՝ Մահ Ադամայ:
 Իսկ միւս երեք հատուածներն կը կազմեն Յաւելուածի ժԱ և ժԲ.
 զուխները, հետեւեալ մակագրութեամբք. Պատմութիւն ստեղծման և

յանցման Աղաւմայ. — Պատմութիւն երանելոյն Աղաւմայ ի գրախտեւ. — Պատմութիւն ապաշխարութեան Աղաւմայ և Երայի նախաստեղծից՝ Այս հնգաթիւ զլիսոց հետ միջանկեալ կերպով և իրրեւ շարունակութիւն սպուած են նա և ուրիշ երեք հատուածներ. մին՝ Յաւելուածի 314—319 էջերում, որ կը կրէ հետեւեալ մակագրութիւնը. Պատմութիւն որդոցն Աղաւմայ՝ Արեղի և Կայեկի. իսկ միւսն՝ յէջ 319—321 վասն աշտեացն Սերայ, զոր պարտ է մեզ ունկն դնել» (*). և հուակ երբորդն յէջ 331—332, Բանք Աղաւմայ՝ առ Սէր:

Այս վերջին երեք հատուածներս՝ առաջիններուն, այն է Աղաւմայ գրոց հետ պարզապէս պատմական յարաբերութիւն մի ևեթ ցոյց կու տան, բայց իրօք չեմ կարծեր, թէ անկէց յառաջ եկած ըլլան. այլ կրնանք իրրեւ շարայարութիւն Պատմութեան երանելոյն Աղաւմայ ի գրախտեւ մակագրութիւն համարել: Այսպէս նաև վերջին հատուածն որ թէ և վերջընթերին հետ նոյն կ'երևի ծագումով, բայց լեզուի համեմատական մաքրութեամբ և պարունակութեամբ իսկ տարբեր յարկութիւն ունի. և հետեւաբար իրրեւ շարագրութիւն անկէ աւելի հին ըլլալու երևոյթ ունի: Յաւելուածի ԺԱ և ԺԲ գլուխները կազմող երեք հատուածներն՝ մակագրութեանց կարգաւորութեամբ իրարու հետ լաւ կը կապուին, ամբողջական գրութիւն մի կազմելու չափ. և կարծէք թէ Ա. զլիսում գետեղուած գրութիւններն, այսինքն են՝ Պատմութեան վարոց Աղաւմայ և Երայի նախաստեղծից, և Մահ Աղաւմայ՝ ասոնց իրրեւ շարունակութիւն եղած ըլլան: Սակայն գրոցս վերայ եղած լուրջ քննութիւնը կ'երաշխաւորէ մեզ ըսել, թէ այս երկու գրութիւններէն գէթ առաջինն՝ ԺԱ և ԺԲ. գլուխներուն իրրեւ մասն չի կրնար կազմել. վասն զի նախ ասոնց մէջ պատմուած բաներն՝ անոր մէջ ևս կը պարունակուին. Բ. նա իւր համառօտութեամբ հանդերձ՝ Ագամայ և Եւայի ամբողջ կենսագրութիւն մի կը կազմէ. հետեւաբար անոնցմէ տարբեր գրութիւն մ'ըլլալու է: Իսկ ասոնք ընդհակառակն կամ Պատմութեան վարոց Աղաւմայ և Երայի նախաստեղծից, գրութեան վերայ խմբագրուած յարասութիւններ ըլլալու համեմատականութիւնն ունին, և կամ Աղաւմայ Գանճոց Trésors d'Adam զերմաներէն Schatzhölle անուանեալ գրքին մնացորդներ:

Իւր Աղամագրոց քննադատութեան խորը չի նաւած՝ յիշեմք օտար լեզուներով եղած անոր հրատարակութիւնները, տեսնելու համար,

1. Դիտել կու տանք, որ այս հատուածիս վերջի վաբերութիւնն. — յէջ 350. — վեց առջի չափ զբազարի ստացողի Յիշատակարանն է, որ անուշադրութեամբ ի միսսին ընթացիկակուած և սպուած է:

թէ ինչ հանգամանաց մէջ կը գտնուին սոքա, և թէ որպիսի առնչու-
թիւններ ունին հայերէնի հետ, հետեւաբար ապա կարենալ անոնցմով
գատել սորայս որպիսութիւնը:

Գարուս առաջին կիսում հին Կտակի անվաներ գրուածներով ըզ-
բաղուող գիտնականաց ծանօթ է Ադամգիրքն այն հատուկտիր հա-
տուածներով միայն, որոնք պահուած են ցանուցիր եղած կերպով
բիւզանդական ժամանակագրաց՝ Սինգեղոսի և Կեդրենոսի, այսպէս
նա և Բար Երրէոսի և Միքայէլ ասորոյ քով: Սոքա առհասարակ կամ
Ադամգրոց հին բնագիրը տեսած չըլլալով, և կամ իրենց ոճին և գրու-
թեանց համաձայն՝ Սեթայ, Կայենի և Ենովքայ ընծայուած անվա-
ւեր գրուածներէն քաղուած հատուածներուն հետ խառն ի խուռն
տեղեր միայն մէջ բերելով՝ կարող չէին որոշ գաղափար մի տալ մեզ
յիշեալ գրութեան վերայ. մանաւանդ թէ տարրեր անուանակոչու-
թիւններով երբեմն շփոթութեան իսկ պատճառ եղած են: Փարբի-
կիոս՝ այս և ուրիշ միջնադարեան արաբերէն և լատին գրուածներէ
հատուածներ հաւաքելով՝ հրատարակեց¹, ջանալով միանգամայն պար-
զել Ադամգրոց որպիսութիւնը: Սակայն և այնպէս կարող ենք ըսել
չենք. Գեղգէրի հետ, թէ Փարբիկիոսի յիշեալ հրատարակութեան
Ադամգրոց վերաբերեալ այդ մասունքն՝ բացարձակապէս զուրկ են ի
կարեւորութենէ, և խիստ աննշան գաղափար մի կազմել կու տան այն
գրոց մասին: Հետեւաբար, արևելեան հին եկեղեցիներու և գրակա-
նութեան մէջ պահուած ամբողջական թարգմանութիւնք կամ խմբա-
գրութիւններ միայն պիտի կարենային նոր լոյս սփռել անոր վերայ:
Այն ասորերէն հատակոտորներն՝ զորս յամին 1853 հրատարակեց²
Ռընան, կտակ նախահօր մերոյ Ադամայ խորագրի ներքև, ոչ միայն
ըստ մասին բառ առ բառ կը համաձայնին Սինգեղոսի և Կեդրե-
նոսի յամանակագրութեանց մէջ բերուած հատուածոց հետ, այլ
ընդարձակ նորութիւններ ևս կը պարունակեն, այսինքն են՝ տուրնջեան
և գիշերոյ ժամերը, — յայտնութիւն Ադամայ առ Սէթ, — ջրհե-
ղեղն և Բանին Աստուծոյ մարդանալն. և ի վերջնոյ կը ծանուցուի ի
դիմաց Սեթայ, թէ ինքն Ադամայ կտակը կնքեց և թողեց այրին
մէջ, Ադամայ գանձին՝ այն է օսկոյ, կնդրքի և զմուսի հետ: Այս
գրուածին հետ սերտ յարաբերութիւն ունեցող և յիշատակութեան
արժանի ուրիշ ժամանակագրական³ գրութիւն մ'ալ, որ ասորի եկե-

1. Տես Codex pseudoepigr. apocryph. gr. T. I.

2. Տես Journal Asiatique, 1853, Série V. T. II Novembre, p. 427.

3. Զոր Կարլ Քեղզուց ասորերէն երեք ձեռագրերէ գերմաներէնի թարգմանելով
հրատարակած է Է Լայպցիք, 1883ին:

ղեցւոյ մէջ խիստ յարգուած է, և կը կրէ Գանձ Ադամայ տիտղոսը: Այս գրութիւնս կ'աւանդէ, թէ Ադամայ գանձուն հետ՝ մարմինն ևս կը գտնուէր այն սրբազան լեռան այրի մի մէջ, ուր Սեթեանք Կայենի դատերաց հետ խառնակուելով, 100 Սեթեաններ անջատուած սրբակենցաղ կեանք կը վարէին: Բաց աստի, կ'աւանդէ Ադամայ մարմնոյն նոյեան տապանի մէջ պահպանուիլն, և յետոյ Սեմայ և Մելքիսեդեկի ձեռքով Գողգոթայ լեռան վերայ ի հանգիստ փոխարկուիլը, այլովքն հանդերձ: Այս երկու գրութիւններս նման հատուածներ ունին վենետիկեան հրատարակութեան Յաւելուածի մէջ յիշուած գլխոց հետ, բայց ըստ ամբողջութեան գլխովին տարբեր են:

Եթովպական թարգմանութիւն մի, զոր յամին 1853 հրատարակեց Ադոլֆ Իլման ֆրիստոնեական Ադամգիրք արևելեայց՝ տիտղոսով, որ Գ. Մէյերի և Ռընանի կարծիքով իբր թէ արարերենէ թարգմանուած է: Հրատարակիչն առանց երաշխաւորելու եթովպական խմբագրութեան ճիշդ ժամանակը, այս գրուածքս իբրև աղբիւր եղած կը համարի Արևելքի այլևայլ ժողովրդոց մէջ շրջող Ադամգրոց: Եւ ստուգելու եթովպական խմբագրութեան բուն տիտղոսի առաջին մասն, զոր մէջ բերինք ի ստորև 1. ծանօթութեան, քաջ կը համաձայնի մեր վերոյիշեալ ժֆ. Գլխու Պատմոյքիսն ասպոյսարոյքեան Ադամայ և Եշայի նախատեղծից խորագրին. իսկ մնացած մասն՝ նոյն է անմիջապէս ասկէ յառաջ յիշատակած ասորերէն Գանձ Ադամայ կոչուած գրոց տիտղոսին հետ: Գօթաղղաբար ես չունէի ի ձեռին Իլմանի հրատարակութիւնը, և ոչ իսկ Գանձ Ադամայ կոչուած ասորի գրութիւնը, հայերէն Ադամգրոց հետ բաղդատելու և իրարու հետ ունեցած աղերսն իմանալու համար: Սակայն անուղղակի ստացած տեղեկութեանցս համեմատ՝ երկուքն այլ մեծապէս կը տարբերին հայերէն Ա. գլխում Պատմոյքիսն վարոց Ադամայ և Եշայի նախատեղծից խորագրուած խմբագրութենէն:

Յունարէն խմբագրութիւնն, զոր յամին 1866 հրատարակեց՝ Տիւ շենդորֆ՝ Վիեննայի կայս. մատենագարանի՝ ժֆ և ժԳ դարերում գրուած և Վենետկոյ գրատան ժԳ դարուն գրուած ուրիշ երկու ձեւ

1. Իսկ եթովպական բնագրի բուն տիտղոսն այսպէս կը թարգմանուի. ԿՌԻԻ (իմա Կողգոթա-թիւն) ԱԴԱԲԱՅ ԵՒ ԵԻԱՅԻ՝ ՅԵՑ ԱՐՏԱՔՍՈՒԵԼՈՅՆ Ի ԴՐԱԻՑԵՆ, և երբ ևէ քննելն Գանձայց այրի մէջ իբեց արբու և իբու տեբլ հրամանաւ: Տեաղոսիս վերջին մասն յետոյ ուրիշն գրուած է, իբրև յաւելուած, իրեն վերաբերեալ նիւթին հետ, որն անշուշտ տարբեր ծագումն ունենալու է յառաջիկէն:

2. Տես Apocalypses apocryphae, Lipsiae, 1866, p. 1-23.

ուգրաց վրայէն, որոց վերջինն, այն է Cod. D. Մեդիոլանու ամբարտան գրատան Cod. C. թիւ 237՝ ԺԱ. դարում գրուած ձեռագրէն ընդօրինակուած կը տեսնուի: Այս գրչագրիս և Տիշենդորֆի հրատարակութեան միևս օրինակաց իրարմէ ունեցած տարբերութիւնքն ընթերցողաց ակնհրէ ընելու համար անշուշտ՝ գիտնական չ. Անտ. Կերիանի յամին 1868 նորէն հրատարակեց զայն, Monumenta Sacra et profana ուրիշ անվաւերականաց շարքին մէջ. (տես T. V, Fascicolo I, p. 21-24, Mediolani): Սոյն հրատարակութեան մէջ ընդարձակ պարագ միջոց մի կայ, այսինքն է՝ 18-36 թուահամարներն, որ յայանի նշան մ'է գրչագրի հնութեան: Բ. Կերիանի բնաւ իւր կողմէն սրբագրութեան փորձ մ'ըրած չէ ոչ Տիշենդորֆի և ոչ ալ իւր հրատարակած օրինակի այս ինչ կամ այն սխալ կամ ուղիղ ընթերցուածոց մասին. այլ միայն իբրև հում նիւթ ուզած է ներկայացնել զայն քննասիրաց: Տիշենդորֆ իւր հրատարակութեան ճակտին վերայ գրոշմած է իբրև տիտղոս APOCALYPSIS MOSIS. սակայն այս ըստ քմաց է, և ոչ թէ ըստ յուն. գրչագրաց, որոնք, ինչպէս պիտի տեսնենք, բոլորովին տարբեր խորագիրներ կը կրեն: Հուսկ ուրեմն յիշենք լատին հին խմբագրութիւնը, զոր յամին 1878 հրատարակեց՝ Գուլ. Մէյեր՝ VITA ADAMI ET EVAE խորագրի ներքեւ: Մէյերի հրատարակութիւնն, — ինչպէս կը ծանուցուի անոր հմտալից ներածութեան մէջ՝ յէջ 219, — Ա. և Բ. դասակարգութեան վերաբերեալ ձեռագրաց համեմատ է, որոց մին, այն է Միւնխէնի Cod. S. 17740, այն է Թ. դարուն գրուած է. T. cl. 18525b. Ժ. դարում. M. cl. 18142, ԺԲ, իսկ միևս չորս օրինակներն ԺԴ-ԺԵ. դարերում: Իսկ ինչ կը վերաբերի սլաւոնական լեզուով եղած խմբագրութեանց և հրատարակութիւններուն՝ արդէն համառօտիւ յիշած է Հառնակ՝ Ի Լայպցիգ հրատարակած Gesch. der altchristl. Litteratur գործոյն մէջ:

Արդ՝ գիտելով որ մինչև ցայժմ յիշուած Ազամգրոց արևելեան և արևմտեան խմբագրութիւններն՝ թէ՛ իրենց վրան կրած խորագիրներով և թէ՛ նիւթոց պարունակութեամբ իրարմէ շատ կը տարբերին, սակայն և այնպէս էական մասերու և ընդհանուր գաղափարաց նկատմամբ իրարու հետ սերտիւ կը միանան, հետևաբար այս երկու աչքի զարնող երևոյթներս՝ պէտք է, որ յառաջ եկած ըլլան իրօք

1. *See* Abhandlung der Philos-Philolog. classe des K. Bayerisch. Akademie der Wissenschaften, XIV Bandes, München, 1878.

գոյութիւն ունեցող երկու պատճառներէ. այսինքն թէ՛ եղած է անշուշտ նախկին և ամենահին բնագիր մի, զոր իբրև հասարակաց աղբիւր արդէն ի վաղուց ճանաչեր և ի գործածեր են յիշեալ խմբագրութիւններէն զէթ հնագոյններն: Բ. Թէ այդ բնագրէն դուրս ունեցեր են այդ խմբագրութեանց հեղինակներն ուրիշ համասեռ հին կամ համեմատաբար նոր աղբիւրներ, որով սարդած են ապա անոնց մէջ իրարմէ աւելի կամ նուազ եկամուտ յաւելուածներ, զորս պէտք չէ որ որոնենք նախկին բնագրի մէջ: Եզրակացութեանս առաջին կէտն արդէն իսկ յառաջագոսնեկ (a priori) յայտնի է, և ուրիշ նոր ապացուցի պէտք չկայ. իսկ երկրորդը կ'ապացուցուի այն հոծ յաւելուածներովն և յապաւումներով, որոնք յետին ժամանակաց յայտնագոյն հետքեր կը կրեն, և մենք մտադիր ենք ժամանակին ակնբեր և ընել:

Այս այսպէս լինելով, այժմ բնականաբար մեղքընդ առաջ կ'եննեն հետևեալ հարցերն. այսինքն թէ, Ա. ի՞նչ լեզուով և երբ գրուած էր նախկին բնագիրն. Բ. վերոյիշեալ խմբագրութիւններէն որն է արդեօք հնագոյն. Գ. Հայերէնն ասոնցմէ՞ որուն աւելի կը համաձայնի, և թէ ի՞նչ կարևորութիւն ունի Ադամգրոց անյայտացած բնագրին և անոր վրայէն եղած միւս խմբագրութեանց կամ թարգմանութեանց նկատմամբ. Դ. թէ ե՞րբ կատարուած է Հայերէն խմբագրութիւնն և ի՞նչ ազդեցութիւն ունեցել է մեր ժողովրդեան կամ գրականութեան մէջ:

Առաջին հարցի, այն է նախկին բնագրի նկատմամբ՝ քննադատներու կարծիքն իրարու անհամաձայն են տակաւին և ոչ վճռական: Տրուպպ¹ և Դիլման² ասորի լեզուով գրուած կը համարին զայն, և ուրիշ բան չէր, կ'ըսեն, բայց եթէ նոյն ինքն Ադամայ Գանճոց գիրքն (Schatzhölle), յորմէ ապա օժանդակուած են Դիլմանէն ֆրիւտոնեական Ադամգիրք Արևելից կոչուածն, և կղնմենտեան խմբագրութիւնն: Իսկ անոր գրութեան ժամանակը՝ Դ-Ձ դար եղած կը կարծեն՝ Ասորոց բայց ի մասնաւորի Սիմոն Երիցու վկայութեան վերայ հաստատուած: Գուլ. Մէյէր³, ընդհակառակն, կը կարծէ թէ քրիս-

1 *Stu Der Kampf Adams*, Abhandl. der K. Bay. Akademie der Wissenschaft. philolog. hist. clas. XV. III.

2 *Stu Das Christlich. Adambuch des Morgenlandes*. Jahrb der Bibl. Wissensch. 1853. S. 1-44.

3 Abhandlung der K. Bayer. Akademie der philos-philolog. Wissensch, XIV. Bandes. S. 207

տոնէական թուականէն յառաջ և երբայցեցերէն գրուած էր այն, և կը կոչուէր Ադամգիրք (Adambuch), դիտելով, որ այդ գրութեան յոյն և լատին թարգմանութեանց մէջ իսկ քրիստոնէութեան ուրիշ հետք չկայ, բաց ի Մեսիայի գալստեան մասին եղած յայտնութենէն, որը նոյնպէս հրէական կը համարի Մէյէր: Սակայն ըստ իս, դժուարին է թէ՛ այդ տեղիքը և թէ՛ Ադամայ թաղման ևայլն, վերաբերեալ ուրիշ հատուածները նախաքրիստոսեան հրէական գաղափարաց հետ միարանել. հետևարար՝ գէթ յոյն և լատին խմբագրութիւններէն հանած հետևութիւնն հիմնաւոր չէ: Մէյերի կարծեաց մասամբ իւրք համամիտ կ'երևի Ադոլֆ Հառնակ¹, որ հիմնուելով երբայական Թալմուտի մէկ տեղւոյն վերայ, կը յիշէ երբայցեցերէն Ադամգիրք մի, որուն վրայ իբր թէ յետոյ յորինուած ըլլան միւս քրիստոնէական խմբագրութիւններն և գնոստիկեան Ադամգրքերն: Այս բանիս ի հաստատութիւն ցոյց կու տայ մեզ Եպիփանի քով (26,8) յիշուած Ἀποκαλύψεις τοῦ Ἀδάμ, Առաքելոց Սահմանադրութեան մէջ (VI, 16 Ἀπόκριφον τοῦ Ἀδάμ, և Գերասիոսեան վճռոց մէջ՝ Liber poenitentiae Adae, այսինքն է Գիրք ապաշխարութեան Ադամայ: Հենր. Գելզերի² կարծիքով թէ Βίος Ἀδάμ, թէ Կրեմենտեան խմբագրութիւնն և թէ Ադամայ Գանձոց գիրքն՝ քրիստոնէական մտաց և մատանց արտադրութիւնք են, Եգիպտոսի միայնակեցաց ձեռքով յորինուած՝ Քրիստոսի թուականին առաջին դարերու մէջ. և թէ անոնց իբրև նախկին ներկայացուցիչներ կը ներկայանան մեզ Պանդոգորոս և Ալեիանոս՝ իրենց այժմ անյայտացած և անուղղակի կերպով մեզ հասած գրուածոց հատակոտորներով: Գերմանացի գիտնականիս կարծիքն մասամբ հիմնաւոր է, ըստ որում Պանդոգորոս և Անիանոս են փրկչական թուականին մէջ ծաղկող ժամանակագրաց հնազոյններն, որոնք ճոխագոյն գանձեր գտեր և մատակարարեր են անվաներ գրութիւններու՝ յետագայ յոյն և ասորի ժամանակագրաց. սակայն ասկից միայն չի հետևիր, որ նոքա իրօք հեղինակած ըլլան յիշեալ գրութիւններն եգիպտական լեզուով. այնու մանաւանդ, որ այդ ազգին ոչ եկեղեցական գրոց և ոչ այլ ընդհանուր գրականութեան մէջ պահուած է երբէք յիշեալ գրութենէն օրինակ մի: Բ. Ադամգրոց մէջ բերուած

1. Gesch. der Altchristl. Litteratur, Erster Theil, 2. Hälfte, Leipzig, 1893, S. 856.

2. Sextus Jul. Africanus und der Byzant. Chronologie, II. Theil, S, 273, Leipzig 1885.

տեղիք, սովորութիւնք, նկարագրականքն աւելի երբայական են՝ քան թէ եզրուականն :

Երկրորդ հարցին, այն է թարգմանութեան նկատմամբ՝ առանձնաբար ըրած համեմատութիւններէն կը տեսնուի, թէ ասորերէնն՝ բոլոր միւս ծանօթ խմբագրութիւններէն հնագոյնն է : Ասոր անմիջապէս կը յաջորդէ յունարէնն, զոր Գ. Մէյէր՝ Դ դարէն վերջ ապա լատիններէնի թարգմանուած կը համարի : Այս վերջին տեսութիւնս, լատին թարգմանութեան նկատմամբ, երկուստեք դժուարութեանց կը հանդիպի, որովհետեւ Սինգեղոս և Կեղրենոս անգամ, — ինչպէս ապացուցած է Գեղզէր՝ իր յիշեալ գրութեան մէջ, — յունարէն հին թարգմանութիւնը չէին ճանչնար. և անոնց քով մէջ բերուած Ադամգրոց վերաբերեալ տեղիքն իսկ ուղղակի Անիանոսէն և Պանդոքորոսէն փոխ առնուած են : Բ. Առ լատինս՝ առաջին անգամ Գեղախոսի քով կը հանդիպինք յիշեալ գրութեան յիշատակութեան, յայտ է թէ լատիններէն լեզուաւ. հետևաբար Ե դարուն վերջեր հազիւ թէ թարգմանուած, թող թէ ծանօթացած ըլլար ամենուն լատիններէնն : Իսկ յունարէն հին թարգմանութիւնն Գ-Դ դարերում ծանօթ ըլլալու էր շատերուն, եթէ առաքելական Սահմանադրութեան մէջ յիշուած Ἀπόκριφον τοῦ Ἀδάμ և Եպիփանու Ἀποκαλύψεις τοῦ Ἀδάμ խնդրոյ նիւթ եղող Ադամգրոց հին թարգմանութեան կամ գէթ Դիլենգորֆէն հրատարակուածին հետ նոյն ըլլալն ապացուցուի : Արաբերէնն՝ Դիլմանի կարծիքով (Ա. գլ. էջ 11.) խմբագրուած է Ե-Ձ դարուն, և ասոր վրայէն եղած է եթովպացերէն ֆրիստոնեական Ադամգիրքն Արեւելեաց : Տրուպայ՝ (Ա. գլ. էջ 8) Եւտիքիոսի Տարեգրութեանց վկայութեամբ՝ մինչև ԺԱ. դար վար կ'իջեցնէ արաբերէն խմբագրութեան ժամանակը. որով եթովպացերէնն այս ժամանակէս ալ տարիներ վերջ կատարուած պիտի լինի : Այս երկու կարծեաց ևս կան թերու դէմ փաստեր : Բայց Աուրանի և ուրիշ մահմէտական գրուածոց մէջ Ադամգրոց մասին եղած հնագոյն վկայութիւնքն, զորս Փարիկիոս մէջ կը բերէ իւր յիշեալ երկասիրութեան մէջ, Դիլմանի կարծեաց աւելի կը նպաստեն : Հուսկ ապա հայերէն խմբագրութիւնն, որուն վերայ յիշեալ գիտնականներէն ոչ ոք մինչև այսօր զեռ խօսած կամ գրած է, ըստ իս՝ յունարէն բնագրէն թարգմանուած է անտարակոյս. վասն զի իրարու հետ եղած համեմատութիւնն տեսանք յայտնապէս, որ առաջինն՝ թէ՛ ընդհանուր պարունակութեամբ և թէ՛ մանրամասն պարագաներու մէջ՝ վերջնոյն կը համաձայնի :

Ադամգրոց նախկին բնագրին և անոր վերայ եղած այլևայլ խորձ-
բագրութեանց մասին քննադատներու կարծիքը չեզոքաբար մէջ բե-
րելէն վերջ, պիտի ջանանք այժմ հայերէն հրատարակութեան ձեռ-
քով փորձել պարզելու անոնց գաղտնիքը: Քայց նախ քան զամենայն
կարևոր կը համարիմ հրաւիրել ուշիմ ընթերցողաց ուշադրութիւնը
հետեւեալ եղելութեան վերայ. այսինքն թէ՛ հայերէն Ադամգրոց վե-
նետկեան հրատարակութեանն իբրև գլխաւոր բնագիր առնուած է մեր
մատենադարանի Ա¹. օրինակն. և ի ստորև իջից ծանօթութեամբ
նշանակուած են Բ, և Գ. օրինակաց տարբերութիւններն: Սակայն
դիտել կու տանք, որ Ա. օրինակն անյարմար կերպով ընտրուած է
իբրև բնագիր. որովհետև ընդարձակ և հոծ յաւելուածներով և յա-
պաւումներով մեծապէս կը տարբերի ոչ միայն միւս երկու օրինակ-
ներէն, — որոնց գէթ առաջինն ընդհանրապէս համաձայն կ'ընթա-
նայ յունարէն խմբագրութեան, — այլ նոյն իսկ այս վերջինէն: Լաւ
կը լինէր, որ Բ. օրինակն, — որուն յաճախ կը ձայնակցի նաև Գրգ՝
Ա. օրինակէն խոտորած ժամանակ, — գործածուած ըլլար իբրև բնա-
գիր անվաւերականիս հրատարակութեան, որով ոչ միայն հայերէն
այս խմբագրութեանս՝ յունարէն բնագրի հետ ունեցած ներդաշնա-
կութիւնն զգալի կերպով դուրս պիտի ցայտէր, այլ նոյն իսկ Ա.
օրինակի ձեռքով մեզ ներկայացուած խմբագրութեան՝ Բ. օրինակի
ներկայացուցածէն և յոյն բնագրէն ունեցած ահագին տարբերու-
թիւնքն ակներև պիտի տեսնուէին: Սակայն հրատարակչի այս անյա-
լող ընտրութեամբ հանդերձ՝ ճշմարտութիւնը կը մնայ միշտ ճշմարիտ. և
մենք կրնանք ըսել, թէ Ա. օրինակն՝ բնագրոց ուսումնասիրութեան
համար գեղեցիկ և շահեկան նորութիւն մ'է. մանաւանդ եթէ անոր
մեզ ընծայած ահագին տարբերութիւնները՝ այժմեան յունարենէ
տարբեր մի ուրիշ բնագրի արդիւնք համարինք, և կամ հայագրի
խմբագրի մի ձեռքով ներմուծուած յաւելուածներ: Այլ, թէ եղած
է արգեօք այժմեան յունարենէ տարբեր մի յոյն կամ եբրայական
բնագիր, որուն վրայէն Ա. օրինակէն ընծայուած հայերէն խմբագրու-
թիւնն եղած ըլլայ կանուխ կամ անագան, թէ ընդհակառակն ասու-
րերէն բնագրին ուղղակի արդիւնք համարելի է այն, և կամ լաւ ևս
հայագրոց մի ազատ գրչի խմբագրութիւն. ահաւասիկ մէկ մէկէ ա-
ւելի աղօտ՝ ըսայց յոյժ ուշագրաւ կէտեր, զորոնք ի լոյս ածելու հա-

1. Այս օրինակիս, — այն է ժ Աստուածաշնչի, — մասին պէտք եղած ձեռ-
գրական տեղեկութիւնքը կը գտնէ ընթերցողն յեշտալ հրատարակութեան Թ իշում:

մար՛ լաւագոյն միջոցն է համեմատել հայերէնն, — ըստ երկուց խմբա-
գրութեանց, — յունարեմնի հետ: Կը յուսանք, թէ այս կերպով նոր
ծառայութիւն մ'եւ մատուցած կ'ըլլանք Արամգրոց հին բնագրով
գրող քննասիրաց:

Համեմատութեան առաջին քայլափոխին՝ բան մի, որ զգալի կեր-
պով աչքի կը զարնէ, է հետեւեալ խորագիրն, զոր կը ներկայացընէ
մեզ Բ. օրինակն. Պատմաբիւն վարոցն Աղամայ և Երայի նախա-
ստեղծիցն՝ որ յայտնեցաւ հրամանաւ Աստուծոյ ի ճեան Միքայելի
երկրակապետին՝ մեծին մարգարէին Մովսիսի, որ զաստուածագիծ
տախտակն ընկալաւ: Խորագրութեան վերջին մասն՝ բոլորովին
անյարմար է իւր ներքեւ պարունակուած գրութեան և սխալական,
որովհետեւ կը ներկայանայ մեզ իբրև գլուխ մի՝ առանց մարմնոյ. որով-
հետեւ գրութեան մէջ ոչ Միքայել հրեշտակապետին ձեռքով Աստուծմէ
առ Մովսէս յայտնութեան, և ոչ իսկ Մովսէս անուան յիշատակութեան
կը հանգրկուիք բնաւ: Սակայն այսպիսի մի անյարմարութիւն, — եթէ
եկամուս յաւերուած եւ լինի, — պէտք է ըստ իս ուղղակի յունարէն
ներկայ բնագրին վերագրել. վասն զի իրօք իսկ անկէ յառաջ եկած
է: Ահաւասիկ յուն. բնագրի խորագիրն, Α και Δ δειναγρας համեմատ,
և ակնարկ մի միայն բաւական է ըսածնուս ստուգութեան համո-
զուելու համար. Διήγησις και πολιτεία Ἀδὰμ και Ἐδὰς τῶν πρω-
τοπλάστων, ἀποκαλυφθεῖσα παρὰ Θεοῦ Μωϋσῆ τῷ θεράποντι αὐτοῦ,
ὅτε τὰς πλάκας τοῦ νόμου τῆς διαθήκης ἔκ χειρὸς κυρίου ἑδέξα-
το, διδάχθεις ὑπὸ τοῦ ἀρχαγγέλου Μιχαήλ.

Արդ, երկու բնագրոց խորագիրներու նոյնութիւնն ակներև ըլլա-
լով, կրնանք եզրակացնել, թէ Բ. օրինակի ներկայացուցածն՝ ուղ-
ղակի Թարգմանութիւն է Α և Δ) ձեռագիրներու ներկայացուցած յոյն
բնագրին: Իսկ որովհետեւ Բ. օրինակի ներկայացուցած հայերէն
Թարգմանութիւնն Փ. դարէն յառաջ կատարուած է, ուրեմն յունա-
րէն այդ բնագրի խորագիրն իսկ յետնագոյն գրչի մ'աղաւաղութիւն
ի կրնար եղած ըլլալ. ինչպէս կը կարծէ Գ. Մէյեր. այլ կարծուա-
ծէն աւելի հին է: Բայց թէ ե՞րբ և ի՞նչպէս եղած է, այս ահա քն-
նութեան կը կարօտի:

Այս նկատմամբ՝ նախ գիտել կու տանք, որ հայերէն Աղամ-
գրոց Ա. օրինակն՝ այնպիսի խորագրով մի կը ներկայանայ մեզ, որ
մեծապէս կը տարբերի Բ. օրինակի, այսպէս նաև վերը մէջ բերուած
յունարէն խորագրէն, և համապատշաճ է իւր ներքեւ պարունակեալ
գրութեան. այսինքն է, « Այս Պատմաբիւն վարոցն Աղամայ և Ե-

այսի՝ զկենի երանելոյ ևնոց ի դրաստեն փափկոսրեան, որպէս (զոր) անուանէ երկիր տրսմոսրեան: Խորագրիս առաջին մասն՝ է բուն վերնագիր Աբամզրոց, որ կը համապատասխանէ Տիչէնդորֆի հրատարակութեան 1. Համարի Αὐτῆ ἢ δι' ἡγήσις Ἀδὰμ καὶ Εὐὰς խօսքերուն, որուն հետ մօտ աղերս և նմանութիւն ունին նոյն իսկ վերը մէջ բերուած եթովպական և լատին խմբագրութեանց տիտղոսներն. իսկ գաւազանաձև փակագծերու մէջ կրկին ենթագծուած խօսքերն՝ ուղղակի գրուածքին սկզբնաւորութեան առաջին տողերը՝ կը կազմէին, և միայն պատահամբ, այսինքն է, ընդօրինակողի ձեռքով՝ իրենց տեղէն խախտուած և խորագրի հետ միացած են: Ուրեմն Հայերէն Ա. օրինակի խմբագրութեան խորագրի տարբերութենէն կարող ենք հետեցընել, թէ անոր բնագիրն ևս՝ նախընթաց, այն է՝ Բ. օրինակի ընծայած թարգմանութեան բնագրէն տարբեր ըլլալու էր:

Ես չեմ կարծեր, որ այդ բնագիրն՝ աւելի ասորերէն լեզուով գրուած ըլլար, քան թէ յունարէն մի ուրիշ և այժմեանէն աւելի հին, գուցէ թէ պարունակութեամբ շատ տարբեր գրուածք մի, որ բաղկացած էր երկու անվաւեր գրութիւններէ, որոց վերջինն՝ իրօք կը ներկայացնէր կամ Մովսիսի անուամբ Յայտնութիւն մի, և կամ Փոքր Արարածոց (այն է Λεπτή կամ μικρὰ Γένεσις) կոչուած գրութիւնը: Բայց այժմեան յունարենի խմբագրողն դուրս թողուցեր է այն մասը, առանց մտածելու սակայն յապաւել նա և խորագրի անոր վերաբերեալ մասը, որով յառաջ եկած է խորագրի և բնագրի մէջ տեղի ներհակութիւնն, և փոխանցեր է նոյնպէս անոր վրայէն եղած Հայերէն և այլ թարգմանութեանց մէջ:

Ա. օրինակի ներկայացուցած Հայկական խմբագրութեան հեղինակն՝ կամ շնորհիւ տարբեր բնագրի մի, և կամ իւր բնատուր զգօնութեամբը՝ կ'երևի, թէ ոչ միայն անդրադարձեր է յիշեալ ներհակութեան վերայ, այլ մասամբ մի ջանացեր է ուղղել զայն, փոխադրելով ի վերջ գրութեան գրուած յիշատակարանի՝ մէջ յառա-

1. Դիտել կու տանք, որ խորագրիս կրկին ենթագծուած մասը՝ յունարէն բնագրի մէջ 1. թուանամարի առաջին երկու տողերուն կը համապատասխանէ. այսինքն են Μετά τὸ ἐξελθεῖν αὐτοὺς ἐκ τοῦ παρωδείσου. Ուստի կամ Մեդդիտանու թիւ 237 նեւագրի մէջ վրեպական այդ տողերն՝ վերնագրէն անջատուած են և բնագրի հետ միացած, և կամ այն է, թէ նոյերէն Ա. օրինակն՝ ընդհակառակն, — բնագրէն զատելով, — խորագրի հետ միացուցեր է: Վերջին կէտն ինչ աւելի հասանական կ'երևի:

2. Ուր գրուած է այսպէս. « Ո՛վ եղբարք, գիտութիւն լինի ձեզ, զի Պարսութեան նախադրութիւնն՝ հրամանաւ Աստուծոյ Միտայել հրեւոյնապետն յայտնաց նախադրութիւն Միտայել »:

լագոյն յիշուած խորագրի երկրորդ, այսինքն է՝ Մովսիսի յայտնու-
թեան վերաբերեալ մասը:

Այս յիշատակարանս, — եթէ ստուգիւ հայագրի խմբագրի գրչէն
ելած է, — ցոյց կու տայ մեզ, թէ Ա. օրինակի ներկայացուցած խմբ-
ագրութեան հեղինակին իսկ ծանօթ էր այժմեան յոյն բնագրի
տիտղոսն, թէպէտև ոչ այնպէս՝ ինչպէս որ մէջ բերինք, և D ձեռա-
գրաց համաձայն: Իսկ եթէ ուղղակի արդիւնք համարինք յունարէն
այն բնագրին՝ զոր թարգմանեց Ա. խմբագրութեան հեղինակն, այն
ժամանակ կրնանք ըսել, թէ այժմու յունարէն Διήγησις και πολιτεία,
և այլն, տիտղոսն՝ կամ ի սկզբան՝ ի վերջ գրութեանն կը գտնուէր,
իրր փոքրիկ վերջարան կամ ազդ գրչին, և յետոյ ուրեմն փոխա-
գրուած է ի ճակատ գրութեանս. և կամ ֆոքր Արարածոցի յատուկ
խորագիրն է, որ կը կանխէր քան զպատմութիւն նախաստեղծիցն,
ինչպէս որ ըսուեցաւ արդէն:

Տիշէնդորֆէն՝ Յայտնօրին Մովսիսի կոչուածն, այսինքն է՝ Պատ-
մութիւն վարուց Ադամայ և Եւայի գրութեան՝ ֆոքր Արարածոցի
հետ ունեցած այսպիսի վաղեմի առնչութեան նկատմամբ, նշանաւոր
է նախ Կեդրենոսի (յէջ 3) այս տեղիս. ὡς ἐν λεπτῇ φέρεται γε-
νέσει, τῶν και Μωυσέως εἶναι φασί τινες ἀποκάλυψιν. Բ. Ադամայ
և Եւայի պատմութեան վերաբերեալ ամբողջական հատուածներ կան
ոչ միայն Եպիփանու ընծայուած ֆոքր Արարածոց մեկնութեան հայ-
կական թարգմանութեան, այլ նոյն իսկ Յաղագս հերձոսածոց զը-
րուածքին մէջ, Գլ. 1^թ. էջ 287, և այլն. Գ. Վիեննայի կայս. մա-
տենադարանի ուրիշ երկու ձեռագիրներ կը ներկայցնեն մեզ հետե-
ւեալ վերնագիրս. Διήγησις τοῦ μεγάλου θεόπτου Μωυσέως περὶ
τῆς πολιτείας Ἀδάμ και Ἐῶας τῶν πρωτοπλάστων, ἀποκαλυφθεῖσα,
παρὰ Θεοῦ ὅτε τὰς πλάκας τοῦ νόμου ἐδέξατο ἐκ Χειρὸς αὐτοῦ, δι-
δαλθεὶς ἀπὸ τοῦ Ἀρχαγγέλου Μιχαήλ, այսինքն է՝ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ
ՄԵՍԻՆ ՄՈՎՍԷՍԻ, որ երես աւ երես ետես զՍտուած, ՎԱՍՆ ԿԵ-
ՆԱՅ ԱԴԱՄԱՅ ԵՒ ԵՒԱՅԻ ՆԱԽԱՍՏԵՂԵՍԻԾ, որ յայտնեցաւ նմա յոր-
ժամ ընդունէր ի ձեռաց Աստուծոյ զսոխտակս օրինաց՝ ածեալ ի
հրէշտակացեալսն Միքայելի: Վերնագրիս կարգին հետ՝ բառերն
և կը տարբերին Տիշէնդորֆի հրատարակութեան խորագրէն, զոր և
Փարբիկոս՝ Կեդրենոսի և Սինգեղոսի անուամբ՝ իրրև խորագիր
ֆոքր Արարածոցի մէջ բերած է արդէն: Իսկ Գեղզէր՝ սոյն գրու-

1. Codex pseudoepigr. Veter. Test. T. I. p. 850.

2. Sextus Jul, Africanus und die Byzant. Cronogr. 2. Theil, s. 291,

թենէն հետեւեալ կոչումը կ'ընէ καθὼς αὐτὸς ὁ ἄγγελος τῷ Μωϋσῆ εἶπεν, և այլն, Պանդորոսէն փոխ առեալ Վեդրենոսի հատընտիր հատուածոց մէջ, որ Ադամայ պատմութեան այժմեան յունարենի մէջ կը պակսի: Ուրեմն ինչպէս նախընթացաբար մէջ բերուած Պատմութեան Ադամայ յոյն խորագրէն՝ այսպէս և վերջինէս յայտնապէս կը տեսնուի, թէ Մովսէս, կամ լաւ ևս անոր անուան տակ ծածկուած հեղինակն եղած է գրիչ՝ ոչ թէ Մովսիսի անուան մակագրուած մեզ անպայտ մի ուրիշ Յայտնութեան, այլ Պատմութեան վարուց Ադամայ և Եւայի (Αδτη ή διήγησις και Εὐας) անվանք գրութեան, զոր կրնանք նկատել իբրև Փոքր Արարածոցի (Μικρὰ Γένεσις) վրայ կատարուած մասնաւոր մի խմբագրութիւն, յորում յատուկ կերպով բարգաւաճուած է նախաստեղծից կեանքն և մահը: Յատուածուստ եղած յայտնութեամբ գրուած կը համարուի, վասն զի հեղինակին յայտնի էր Հրէից այն ընդհանուր աւանդութիւնն, թէ Մովսէս աստուածային յայտնութենէ ուսեալ՝ զրեց Արարածոց կամ Մենդոց գիրքը: Միջայէլ հրեշտակապետի գործակցութեամբ եղած կը համարի այն յայտնութիւնը, որովհետև անծանօթ հեղինակն՝ երիցս և չորիցս Աստուծոյ կողմէն իբրև բանբեր առ Ադամ՝ կ'իջեցնէ զնա յիրկնից և կու տայ վերանալ յերկինս, ի Պատմութեան անդ Ադամայ: Նախաստեղծից ապաշխարութեան, մահուան և թաղման զխաւոր գործերն իսկ՝ Հրէից պաշտպան և բարեխօս այս երկնաւոր իշխանիս ձեռքով կատարել կու տայ: Այս և դեռ ուրիշ բնորոշ պարագաներ յայտնապէս ցոյց կու տան, թէ նա ստուգիւ երբայեցի էր ազգաւ, և թէ իւր գրուածքն ի լեզու երբայեցի գրած էր, որուն վերայ ապա խմբագրուեցան, աւելի կամ պակաս մանրամասնութիւններով, ասորականն և յունարէն բնագիրքն: Այս վերջնոյս վրայէն եղած ազատ թարգմանութիւն է Հայերէն գէթ Բ. օրինակի խմբագրութիւնն, որուն հետ ունի յանախակի և մերձաւոր աղերսներ նաև Ա. օրինակի ներկայացուցած խմբագրութիւնն, իւր նշանաւոր տարբերութիւններով հանդերձ: Այս կէտերս՝ ևս քան զևս պիտի պայծառանան անդրագոյն համեմատութեանց ձեռքով:

Հայերէն խմբագրութեան սկիզբը՝ նոյն է, — ըստ երկուց օրինակաց իսկ, — յունարենի հետ, բայց հանդերձ տարբերութեամբք, որոնք եթէ ազատ թարգմանութեան արդիւնք չեն պարզապէս, հարկ է որ այժմու յունարենէ տարբեր բնագրէ մի յառաջ եկած լլլան: Նոյն երևոյթը կ'ընծայեն նաև վերջարանութիւնքն, աւելի նշանաւոր տարբերութիւններով. այսինքն է՝ ուր յունարէն բնագիրն ունի, թէ

Ձայս ասելով Հրեշտակն՝ վերացաւ յերկինս, փառաւորելով և ասելով ալէլուիա. Հայերենի մէջ ընդհակառակն երեք ուրիշ Հրեշտակներ ևս կը յիշուին Միքայէլ Հրեշտակապետին հետ, երեք ալէլուիայք, և երեք սրբասացութիւնք, և այլն:

Երկու բնագրոցս իրարու հետ ունեցած այսպիսի նմանութեան և աննմանութեանց վերայ գաղափար մի տալու համար, կը դնենք հոս դէմ առ դէմ նախ անոնց սկզբնաւորութիւնն և վերջը, ծանօթագրելով մի կողմը յուն. օրինակաց, իսկ միւս կողմը Հայերէն Ք. և Գ. օրինակաց տարբերութիւնները, փակագծի մէջ:

ՅՈՒՆ. ԲՆ.

ՀԱՅ. ԲՆ.

1. ¶ Αὕτη ἡ διήγησις Ἀδάμ καὶ Εὕας¹ ¶. Πετὰ τὸ ἐξελεθεῖν αὐ-
τούς ἐκ² τοῦ παραδείσου. Ἔγνω³
δὲ Ἀδάμ τὴν Εὕαν, καὶ ἐξηλθαν
πρὸς ἀνατολήν, καὶ ἔμειναν ἐκεῖ
ἕτη δεκαοκτώ⁴ καὶ μῆνας δύο.
Καὶ ἐν γαστρὶ εἰληφεν ἡ Εὕα,
καὶ ἐγέννησεν δύο υἱούς, τὸν Ἀ-
διάφορον⁵, τὸν λεγόμενον Κάιν,
καὶ τὸν⁶ Ἀμιλαβέες, τὸν καλούμε-
νον Ἀβελ.

«Չկնի ելանելոյ նոցա ի դրախտէն փափկորեանս՝, ասելաւ Ադամ զկին իւր զԵւայ, և զնաց ի տեղի մի որ կը ի կողմանս արևելից՝ դիմ յանդիման զրախտին, և բնակեալ եղև անդ զամս ութևասան և զամիսս երկուս: Եւ յետ այսորիկ մերձեցաւ Ադամ յԵւայ կին իւր, և յղացաւ և ծնաւ երկուս որդիս, զԱնդոյս՝ որ կոչի Կայէն, և զԲարեխորհն՝ որ կոչի Աբել »:

1. Գաւազանաճի փակագծի մէջ նշանակուածն, ինչպէս կանխաւ ըսինք, նազն խորագիրն ըլլալու է: B օրինակն չունի այս մասը:

2. Cod. B ունի τὸν Ἀδάμ ἀπὸ τοῦ παραδ...

3. Cod. AC ունին ελαβεν.

4. Cod. B ունի καὶ ἦσαν πενθοῦντες χρόνους λ'.

5. Cod. A ունի Διάφορον, C, διάφο-
τον, B διάφορον

6. Cod. C ունի ἀμιλαβέστατον.

1. Այս տողս՝ Ա. օրինակի մէջ խորագիրն նետ միացուած է: Բ. օրինակն չունի Գ-Վ-Յ-Ն, նամական յունիկն: Եւ թագածուած բառերն և ըացատրութիւններն՝ նայերէն խմբագրութեան յունէն ունեցած տարբերութիւններն են:

Վերջ.

Και ταῦτα εἶπᾶν ὁ ἄγγελος ἰ
ἀπῆλθεν εἰς τὸν οὐρανὸν, δοξάζων
καὶ λέγων· Ἀλληλούϊα. ᾠ ἡ δόξα
καὶ κράτος εἰς τοὺς αἰῶνας τῶν
αἰῶνων. Ἀμήν.

Վերջ.

« Եւ զայս իրրև. ասաց Միքու-
յիչ հրեշտակապետն ցլիք, և աս-
ժամայն համարձաւ յերկինս՝
հանդերձ երեք հրեշտակապետօքն,
գոհանալով և փառաւորելով զԱս-
տուած, և երգելի զերգս՝ ասելով.
Աչէլուիա, աչէրաիա, աչէրաիա.
սարր, սարր, սարր Տէր զօրու-
րութեանց, և փառք Աստուածոյ
ամենակալին յաւիտեանս յաւի-
տենից » :

Երկու բնագրոցս սկզբնաւորութենէն և վերջաւորութենէն թեւ-
կոխելով ամբողջին՝ նոյն օրինակ նմանութիւններ և աննման տեղեր
կ'երևեն մեզ ընդ ասով. այսինքն է՝ կան, — յաւելուածի ձևով, — խիս
առ խիտ տարբերութիւններ հայերենի մէջ (ըստ Ա. օրինակին), որոնք
կը պակսին յունարէն բնագրի մէջ. այսպէս կան փոխադարձաբար
վերջնոյ մէջ՝ զորս չունի հայերէնն: Նշանակեմք նախ հայերենի և ասպ
յունարէն բնագրի այսպիսի տարբերութեանց գէթ նշանաւորքը:

Հայերէնն՝ գլխակարգութիւն և թուահամարներ չունենալով, էջե-
րու և սողերու համեմատ պիտի ըլլան կոչումներն:

Յէջ 1 սող Գրդ. Ետես Երայի տեսիլ. (Բ. օր. չունի). — յէջ 2
սող 2. Եւ նա ընկեր զարիան եղոր իշրոս (Բ. օր. չունի). — 7
սող. Իրրև յուա զայս. — 16. սող. Աստուած... որդոյ ըս Արեւի
(Բ և Գ. օրինակներն չունին). — 25 սողին մէջ՝ Արդ յարոցեայ: —
Յէջ 3 սող 2րդ. Զոր եկաց նա ի վերայ երկրի (Բ. օր չունի). —
3րդ սողին մէջ. Եւ յետ այսորիկ եղև նեւս. — Գրդ սողին մէջ. Յայն-
ժամ... ցԱրամ հայր իար (Բ. Գ. օր. ունին. Ասէ Սէթ որդիև իար
ցԱրամ). — 12րդ սողում՝ Եւ անհնարիւք. — 14րդ սողում. Չփափկու-
րիան և զվայելչարիան... Աստուածոյ, և զպսպսե զանազանարիան
պտոցն. — 17րդ սողին մէջ. Ո՛վ հայր իմ. — 20րդ սողամիջի՝ ԶՏէր

1. Cod. D ունի ևս յետ քառս էմաղոսն Միչաղլ տփ Տիծ և՛ցոն. C, ունի
ևս քառս էմաղոսն... Տիծ.

Աստուած. — 21րդ տողում՝ Զայնի աղալանաց ծառայի իտոյ... և կա-
տարեցեք զխեղորոշածս իմ. 21-22րդ տողում՝ ի պտոյդ դրախտին կե-
նաց՝ կերակոչոք քեզ, զի ձաշակեալ կերիցես (Բ. և Գ. օր. չունին
քեզ, զի կերիցես բառերը): — Յէջ 4 տող 3րդ՝ Յաչք հիշանդարեան
քոռ պատմեա ինձ, հայր իմ. — 4րդ տողում՝ Լնր ինձ, որդեակ
իմ, հեղոչքեամբ. — 7-8րդ տող՝ ձաշակել և վայելել. — 9-10րդ տող՝
Էջ ասաց ցիս, զի բե ոչտիցեք ի նմանե՝ մահոս մեռանիցիք. — 13-
14րդ տողում՝ Էջ իրրև հրեշտակքն հետացան ի նմանե յայնժամ ե-
կեալ խօսեցառ ընդ նմա (Բ. օր. ունի՝ պատրեաց զնա՝ փոխ. խօսե-
ցաւին): — Յէջ 5, տող 25-26րդ՝ Էջ յաղագս այսորիկ մեք ամե-
նեքեան մահոս մեռանիմք (Բ. յօր. չկայ մահոս): Յէջ 6, տող 5-6՝
Էջ դոս կերար և յակցեար զպատռարանեան Աստուծոյ (Բ. օր. ունի՝
Քանգի դոս յորժամ ձգեցեր զձեան քո և առեր ի պտոյն և կերար
և յակցեար). — 7րդ տողում՝ Յանհնազանդոնքիս մարդիան. — տող
8-9րդ՝ Այլ լեա. — 20րդ տողում՝ վասն խեղորոշածոյդ այդորիկ. —
28րդ տողին մէջ՝ Տեառն. — 30րդ տողում՝ Հիշանդացեալ. — 31 տո-
ղում՝ Ո՛վ Էջայ: — Յէջ 7, տող 2-10՝ Պատասխանի տռեալ — և
որբային յոյժ՝ հատուածն՝ ամբողջապէս կը պակսի յոյն բնագրի մէջ:
Այսպէս նաև 11-21րդ տողերու՝ Զնախանձ և զլարոչքիս — մերձ ե-
ղեալ առ նա՝ 10 տող հատուածն: Յէջ 9, 12րդ տողում՝ Քանգի ար-
տաքոյ՝ կայի յորժամ խօսեցառ ընդ իս օձն. — 14րդ տողին մէջ՝
Ասե ցիս. Ե՛կ զկնի իմ. — 18-19րդ տողում՝ Էջ իմ ոչ իմանալով
զպատրոդական բանս նորս: Յէջ 10, տող 5րդ՝ Ո՛վ ծնունդ չարոչքեան. —
7-8 տողում՝ իսկ նորս զայս յռեալ՝ ելաներ ի դրախտեան, և առ-
ժամայն. — 14րդ տողին մէջ՝ Հօր ձերոռ և առնմ: Յէջ 11, տող
7րդ՝ Էջ զԷջս (Բ. և Գ. օր. չունին). — 19րդ տողում՝ Հօր ձերոռն
Աղամայ. — 21րդ տողին մէջ՝ Էջ կարծես զքեզ բագոցեալ յամենա-
տես աշաց ինոց: Յէջ 12, տող 5րդ՝ Տեր Աստուած՝ ցհայրն ձեր Ա-
ղամ. — տող 22-23՝ Էջ ի մեջ կնոչդ, ի մեջ զաակի քո: Յէջ 13,
տող 7րդ Ողբայար յոյժ և լայար դառնապէս. — տող 23-24՝ Յառա-
ջագոյն քան զեղանելն իմ ի դրախտեան կենաց: — Էջ 14, տող 19րդ Էջ

1. Այս հատուածիս մէջ «վայ ինձ, վայ հօգուր բերուն» բացառանութեան
առկական ձևն, որ կը պակսի Բ. և Գ. օրինակներուն մէջ, կը թուի լինել նայ-
կական գրչի ծնունդ:

2. Նշանաւոր է այս բացառութիւնս այնու՝ զի օտար է Բ. գրոց աւանդութե-
նէ. վասն զի ըստ գրոց յիս պատրիւոյն և պատուիրանագանցութեան՝ արտաքսեցաւ
Էջայ և գտաւ արտաքոյ զբախտին:

հրամայեաց տալ Արամայ խռակս անոշահոտոտրեան ի դրախտէ անտի. — 23-24 տողում՝ Եփեսայ Արամ առաջի Տեառն, և տէր Աստուած հրամայեաց տալ նմա չորք իրք. — 25րդ տողում՝ Որ էն այստղիկ: Ե՛կ 15, տող 2րդ՝ Կարգաւ յաղագս անենայնի և յաղագս խարդահոտրեան բշնանոյն. — 8-9րդ տողում՝ Իսկ Երայ և որդիք իւր սկսան շալ և ողբալ — Եւ Յորժամ շեցին, զարդեաւ Արամ ի քնոյ իւրմէ. — 11րդ տողին մէջ՝ Տէր իմ. — 18րդ տողին մէջ՝ Թորոց քոց: — 30րդ տողում՝ Մեղայ քեզ Տէր, մեղայ քեզ մարդասէր (Բ. օր. Մեղայ և հրեշտակաց քոց). — 32 տողէ Մեղայ և սրբոտրեան սրբոց քոց: — Ե՛կ 16, տող 11-12՝ Քանզի էին այլ նորա այտոշեալք ի շայրոյն. — 16րդ տողում՝ Տանէին զհոգի նորա... Արամ մարմնովն. — 26-27րդ տողս՝ Եղիայի, որ բարգանսի բազաւոր յաշտեմից (Բ. օր. Խշխայի): — Ե՛կ 17 տող 1, բողոտրիս շն. Արամայ. — տող 18, Եւ տես թէ նրպես աղայէն հրեշտակք անենայն զՏէր. — տող 9րդ՝ Պատասխանի ետ նմա մայրն իւր՝ ասէ. — տող 16րդ Տէր՝ Արամայ, որ Աստուածդ ես անոխակալ և Տէր... — տող 23, Արքն այնոքիկ (Բ. օր. Եթովպացիք), զոր տեսանես... անկեալք ի վերայ երեսաց իւրեանց: — Ե՛կ 18, տող 4-6, Վասն զի ծածկի պայծառութիւն նոցա ի փառաց և ի պայծառութենէ յերեսաց Հօրն Աստուծոյ (Գ. օր. Հօրն յուսոյ). — տող 8-9րդ. Թանկարծակի մի ոմն ի հրեշտակացն, և առ ծամայն յարեան հրեշտակք անենայն որք անկեալ դնէին (Բ. Գ. օր. Կային) ի վերայ երեսաց իւրեանց առաջի Աստուծոյ. — 16-17րդ տողում. Եւ յուսաց զնա երիցս անգամ (Բ, Գ. օր. երիցս). — տող 19րդ. Իսկ յետ այնորիկ. — տող 25-26. Թաղագս Արամայ և անենայն ծննդոց իւրոց. — տող 30-31րդ, Զօրհնարանոտրիսն ընդ մարդասիրտրեան Աստուծոյ: Ե՛կ 19, տող 4րդ՝ Վասն Արամայ (Բ. օր. չունի). — տող 6-7րդ՝ Եւ ժողովեցան ամենքեան. — տող 8րդ. Հնչէին (Բ, Գ, օր. չունին). — 13-14րդ տողի՝ Եւ անտի երբեալ Տէրն մտան..., — տող 19րդ. Երաղկանց դրախտին. — տող 23-24րդ՝ Իսկ Տէր Աստուած տրտմեալ յինէր յոյժ մարդասիրտրեանր իւրով. — տող 28րդ՝ Թորժամ փոկոտրիսն իմ յայտնեցի աշխարհի: — Ե՛կ 20, տող 8-9րդ. Թայնժամ առաքել զնոսա՝ ի գեհեն հրոյ, և զարհոտրեցին յոյժ. — 11րդ տող. Եւ իբրև խօսեցաւ Աստուած զբանս զայս ընդ Արամայ (Բ, Գ. օր. ցԱրամ, դարձեալ ասէ). — 15-16րդ տող. Եւ նա երբեալ կատարէ զհրամայեալսն ի Տեառնէ. — 21-22րդ տող. Եւ արարին հրեշտակապետքն Միքայի և Ուրիէլ որպէս հրամայեաց նոցա (Բ. օր. չունի Միքայէլ և Ուրիայէլ). — 24րդ տող. Աքելի աղբարոյ. — տող

ՂԻՐ՝ Երդին առաջի Աստուծոյ, և հրամայեաց Աստուած բերել պատտառ-
 փայ և պատել զմարմին Հարելի արգարոյ: — Յէջ 21, սող 11-
 13Է. Եւ ստեղծեալ զԱբամ. և հրաման ետ հաստանել զերկիրն և բա-
 ղել զեռսս իմիասին. — սող 15. Եւ երբեայ հրեշտակացն բերին որ-
 պէս հրամայեաց Տեր. — սող 21Է. Մարմնոյն Աբամայ: — Յէջ 22,
 սող 2Է. Եւ իբրև կատարեաց զայս ամենայն. — 3-4Է սող. Ու ի-
 մացեայ եթէ ոչր եղաւ մարմին նորս (Բ. օր. ունի՝ եթէ զինչ եղև
 Աբամայ և կամ թէ). — ամենեղին քերեայք էին հանգերձ Երայիս ի
 ժաման յայնմիկ. — սող 27-29Է. Խաղաղարեամբ. և զայս սասցեայ՝
 ննչեաց: — Յէջ 23, սող 5Է. Միասանգամ գալտեան. — սող 10Է.
 Որք իցեն ի վերայ երկրի, և այլն և այլն:

Գիտել կու տանք նախ, որ այս տեղերս ընդհանրապէս հնութեան
 հետք կը կրեն իրենց վերայ, ի բաց առեալ մի քանիսը, որոնք նոր
 կտակարանի ներշնչութիւնք կ'երևին, և մենք յետոյ առիթ պիտի
 ունենանք մատնանիշ ընել նաև անոնց աղբիւրները: Բ. Այդ տեղերն,
 քառ մեծի մասին, Արարածոց գրքին հետ սերտ աղերսներ ցոյց կու
 տան. հետևաբար կարելի է իբրև մնացորդներ համարել զանոնք
 նախկին և կամ գէթ սյոժմեան յունարենէն աւելի կատարեալ բնա-
 գրի մի: Գ. Անոնց ձևքով մարթ է ուղղել այժմեան յոյն բնագրի
 մյս ինչ կամ այն խանգարմունքը, ինչպէս և հնագունին վերայ ալ
 լոյս կը սփռեն:

Նշանակենք այժմ յոյն բնագրի ունեցած առաւելութիւնքը, ո-
 րոնք հայերէն խմբագրութեան մէջ կը պակասին:

§ 3, 6-7 սողի ταῦτα δ Θεός εἶπεν τῷ ἀγγέλῳ αὐτοῦ. — § 5,
 1 սողի καὶ θυματέρας¹ λ'. — 10Է սողի καὶ λέγουσιν αὐτῷ. Τί ἐσ-
 τιν πόνοσ καὶ νόσοσ, — § 9, 7-9 սողի δι' ἐμέ ἐν ἡδρώτητη τοῦ
 προσώπου — δι' ἐμέ πάντα ὑπομένεισ. — § 10, 8-10 սողի πῶσ ἡνοίγη
 τὸ στόμα — ὑπετάγησ τῆ εἰλόνη τοῦ θεοῦ, — § 12, 5Է սողի τότε
 ἔφυγεν τὸ θηρίον καὶ ἀφῆκεν αὐτὸν πεπληγμένον, καὶ. — § 13, 8-14
 սողերու ἔνθα ράδι κζαυուածն², գոր ունին A, B օրինակները միայն
 'Αλλ' ἐπ' ἐσλάτων τῶν καυρῶν — καὶ λατρεύειν θεῷ μόνῳ. — § 14,

1. Cod. B ունի τοὺσ καὶ θυματέρασ ξ. պսիքն է, ուստերս և քստերս 60:
 Այս նշանակոր աւանդութիւնս կը գտնուի Մեթոքիստի, Մեքսչէ Ասորւոյ և ուրիշ
 հին ժամանակաբաց քով իսկ:

2. Այս հատուածս յուն. Cod. B միայն ունի: Լատին խմբագրութեան մէջ ա-
 ւելի որոշ կերպով Քրիստոսի վերայ դարձուած է, նորանոր պարագաներով: Տես Մէ-
 յեր էջ 235-236:

բար մի, այսինքն է հայերէն կամ շատիներէն խմբագրութիւնը իբրև եղբայրացականութեան առած չէ, որով անոր ուղիղ ենթադրածներն՝ կարող են իրօք սխալ լինել: Օրինակի աղագաւ, § 37, 6 սողի օձերուսան բառը կը համարի ուղղագրել ի ցերուսիւս, կամ օձերուսիւս: մինչդեռ Պատարաի Տեղեան մէջ (§ 22) իսկ՝ օձերուսան գրուած է, նման § 37, 6 սողի բացատրութեան, այսպէս παραδίδεται τῷ Μιχαήλ, και βιάλλουσιν αὐτὸν (εἰς τὴν ὀξέρουσαν λίμνην): Սորա հաւասարը ունի և հայն, այսինքն է. « Եւ տարաւ զնա ի ծովն անձեռագործ »: Ուստի մենք հայերէնի պէս՝ յոյն օրինակաց դասաւորութիւնն և անոնց բնագրոց ծագումն որոշելու համար՝ կարևոր կը համարինք համեմատութեամբ երկուստեք եղած այլևայլ օրինակաց, — այսինքն են յու. AB = հայ. Ա, և յու. CD = Բ, յու. ABCD = Ա, Բ. Գ, — նշանակել մնացած բազմաչոժ ասորերութիւններէն մասն մի:

§ 3, 9 սողի ABCD օր. περι' Αβελ τοῦ υἱοῦ αὐτῶν = Բ. օր. « Վասն որչառյե իռչոյ (Գ. օր. իսրեանց) Սրեյի (Գ. Հարեյի, Ա. օր. կայեն): Վերջին ընթերցուածն՝ տարբեր աղբերէ կը յառաջագայի: § 5, սող 5րէ ABCD ունին միօրինակ զի զի εἰς τρία μέρη, գոր Ա, Բ, Գ միաձայն « Առանձինն մի մի յիարարանչիոր տեղիս » կը գրեն: 6րէ սողի εἶπεν δὲ Σήθ· ὁ υἱὸς αὐτοῦ· πᾶτερ Ἀδάμ. ըստ ABI օրինակաց. C օրինակը չունի Ἀδάμ. Բ, Գ « Ասէ Սէթ որդին իւր՝ ցԱդամ » (Ա. օր. Յայնժամ ասէ Սէթ ցԱդամ հայր իոր): Հայ. առաջին ընթերցուածն աւելի կը համաձայնի յունին, բայց զանց ըրած են Բ և Գ. օր. բառս պօտեր. իսկ Ա. օր. Թէ և անհամաձայն՝ բայց կը ըրացնէ C օրինակէն դուրս թողուած Ἀδάμ անունը: — § 10, սող 4-5, ACD πάντες οἱ ἀμαρτήσαντες (B չունի πάντες). Գ « Ամենայն մեղաւորք » (Ա. օր. ամենայն մեղօրս, Բ. օր. մեղաշորաց): § 22, 7րէ սող BD ἐφοβήθημεν δὲ καὶ ἐκρύβημεν (A, καὶ ὡς ἠκούσαμεν — ἐκρύβημεν (C չունի) = Բ, Գ. օր. « Եւ երկեաք յոյժ և թաքեաք » (Ա. օր. եկայք յո՞ թաքեցաք): Վերջին ընթերցուածս խանգարուած է. ուստի կամ այն է, Թէ եկայք բայը՝ երկեաք ուղղագրելի է, և կամ շարունակութիւն ըլլալու է եկայք յոյժ նախադասութեան, որով յոյնէն զատ՝ ուրիշ բնագրի մի առաւելութեան նշան: § 17, սող 10, AB παρὲς ἐνόδς μόνου (D չունի ἐνόδς, C παρὲς μόνου τοῦ ξύλου. Բ. օր. « Բայց միայն ի միոյ » (Ա. օր. = C « Բայց ի միոյ ժառոյ »): Ինչպէս C յուն. օրինակի ξύλος բառն արդիւնք է երրայական բնագրի, վասն զի դասական յունարէնի մէջ այդ բառն կամ փայտ կը նշանակէ սոսկապէս, և կամ խաչափայտ. այսպէս

և Ա. օրինակի ժառ բառն՝ ξύλοσι Թարգմանութիւն չէ, որովհետև դասական Հայերէնի մէջ (Մենդոց) փայտ կը Թարգմանուի: Աւրեմ երկուստեք ցոյց կու տան մի ուրիշ երբայական բնագիր: § 39, 14-15րէ տող, ABCD ունին 'Իաղ ձրւե, սըղաւրսո, ծու Էւաւո սոս, Էստւ կաւ քոլղաա քաւ Խարաւո սոս քաւ աղաւո՝. Բ, Գ. օր. « Իղաղ (Ա. օր. Եղիայի), որ բարգմանի Տեր բագառոյ յաշտեկից, Թողութիւն շնորհեա Ադամայ՝ քանզի պատկեր քո է և գործի անարատ ձեռաց քոց » (Ա. օր. չունի՝ քանզի պատկեր քո, այլ՝ Ադամայ և գործոյ...): Հայերէն խմբագրութեամբ կը սրբագրուի յունարէնի 'Իաղ ձեւն 'Իւաղի. սակայն Ա. օրինակի յԵղիայի ձեւն՝ որ շնորհու ուրիշ՝ բնագրի մի ազատ մնացած է յունարէնի խանգարմունքէն, յայտնապէս ցոյց կու տայ մեզ, թէ ստուգիւ այժմեան յունարէնն սկզբնազիր չէ: Այս մասը վերջէն ընդարձակարար պիտի ապացուցանենք: § 34, 1 տող, A ունի Καὶ αὐθις ἴδον ἐγὼ Εὐὰ δὺο μεγάλα καὶ φοβερά μυστήρια... (C օր. կը գրէ ἐγὼ δε ἡ Εὐὰ, և այլն. Բ, Գ որ. « Տեսանէր Եւա այլ ևս քանչեկիս մեծամեծս և զարմանալիս » (Ա. օր. չունի վերջին երկու բառերը): Բ, Գ, օրինակներն C օրինակին աւելի կը հետևին. Ա օր. ընդհակառակն երկուքէն իսկ կը խստորի: § 36, A օր. Ետ տողի δλων բառէն վերջ՝ Հետեալ տօ՛ւ քատրօ՛ճ քա՛ւ տօ՛ւ սւօ՛ւ քա՛ւ տօ՛ւ աղւօ՛ւ քնեւաթո՛ճ սոն քա՛ւ Էւաւո սոս քա՛ւ աղաւո՛: Ա օր. Ետ տողի յունարէն յերկուստեք չեն՝ իբրև վերջարան, որպէս ես կարծեմ, - նշան է, թէ անոր բնագիրն ևս այս շարքով կը վերջանայ: § 38, 1-4րէ տողերն՝ են ըստ C օր. Μετὰ οὖν ταῦτα πάντα ἐδεήθη ἀρχάγγελος περὶ τῆς κηδείας τοῦ λειψάνου καὶ προσέταξεν ὁ Θεὸς ἵνα συνέλθοσιν πάντες οἱ ἄγγελοι. Իսկ Ամբրոսիան օր. C, 237 ունի՝ Μετὰ δὲ τὴν γεννησομένην χαρὰν τοῦ Ἀδάμ, ἐβόησεν πρὸς τὸν πατέρα Μιχαὴλ ὁ ἀρχάγγελος, ἵνα συναλθῶσιν πάντες οἱ ἄγγελοί. Բ, Գ. օր. « Իսկ յետ այնչափ խնդութեանս, որ լինէր (Ա. օր վստե) Ադամայ, խօսեցաւ Միքայել Հրեշտակապետն ցհայրն լուսոյ (Ա. օր. վստե Ադամայ) և ասէ. Ժողովեցիք չրեշտակք ամենայն »: Այս տեղ Հայերէն խմբագրութիւնն՝ յուն. վերջին օրինակին հետ աւելի մերձաւորութիւն

1. Այս տեղ կը վերջանայ B օրինակն՝ առանց վերջարանի:
 2. Որոշ շարքութեան կը վկայէ Հայերէն երեք օրինակաց մէջ իսկ պատուած Եղիայի անուան մեկնողական այս բացատրութիւնս. « Որ Թարգմանի՛ Բարգառոյ յաշտեկից »:

օրինակին, և միւս կողմէն ալ Ամբրոսեան թիւ 237 Ս օրինակին յաճախ կը համաձայնի, որով կրնանք երեքն այլ՝ մի և նոյն խմբագրութեան պատկանող և իրարմէ աւելի կամ պակաս կատարեալ ներկայացուցիչներ համարել: Գ. անաչառ դատելով, այդ օրինակներէն ոչ մէկն չի ներկայացներ մեզ կատարեալ կերպով նախկին բնագիրը: Այս բանն աներկբայելի է, ինչպէս տեսանք, շնորհիւ հայկական խմբագրութեան, և ի յաջորդն լուսագոյն կերպով պիտի հաստատուի՝ լատին խմբագրութեան հետ ունեցած համեմատութեամբք ևս:

Իսկ նկատմամբ հայերէն խմբագրութեան՝ ինչպէս նախ, այսպէս և յետ համեմատութեանցս՝ կարող ենք ըսել, թէ Բ և Գ օրինակներն՝ Ա օրինակէն աւելի համաձայն կ'ընթանան յոյն խմբագրութեան. վասն զի այս վերջինս յաճախ կը զարտուղի, մերթ յապաւելով, մերթ յաւելլով և մերթ փոփոխելով յոյն խմբագրութեան բառերն և բացատրութիւնքը: Սակայն առաջնոց համաձայնութենէն և վերջնոյս՝ զարտուղութենէն աւելի՝ նշանաւոր է այն մեծ և ընդհանուր աղերսն, որով շատ անգամ, ընդհակառակն, հայերէն երեք օրինակներն իրարու ձեռք ձեռքի տուած կը խոտորին յունարենէ. և այս այնպիսի օրինօք, զորս չէ՛ մարթ պարզապէս դիպաց արդիւնք համարել, այլ ենթադրել կու տան կամ մի ուրիշ հնագոյն թարգմանութիւն ևս, որ իբրև հիմն ծառայած ըլլայ Ա և Գ օրինակներու խմբագրութեանց, և կամ յունարէնէ տարբեր մի այլ բնագիր, որուն էական ուրուագծերը միայն պահուած են՝ մերթ յունարէն և մերթ հայերէն խմբագրութեանց մէջ: Եւ այս կէտով է, որ իրարմէ հեռացած ժամանակ իսկ՝ նոր և մասնական երանգներով նոյնպէս իրարու այնքան մօտ կը տեսնուին ընդհանուր տեսակէտով:

Յունարէն խմբագրութեան նկատմամբ՝ Բ օրինակն, կարծէք, թէ աւելի հին ըլլալու բնորոշ յայտկութիւն ունել կ'երևցընէ. վասն զի ոչ միայն համեմատութեամբ նուազ են անկէ ունեցած զարտուղութիւններն, այլ վերնագրի մէջ իսկ որոշակի կը յիշուի, թէ թարգմանուած է յերուսաղէմ, մինչդեռ Ա օրինակի մէջ խոր լուսութիւն պահուած է: Երկրորդ, դիդել կու տանք, որ Բ օրինակն՝ աւելի հին է քան Ա օրինակն. այսինքն է՝ ԺԴԵ դարում գրուած է. իսկ այս՝ ԺԶ-ԺԷրէն: Երրորդ, Ա օրինակն կը գտնուի Վարդանայ Արևելոյ հաւաքման մէջ, յորում կան նա և ուրիշ անվաւերական գրուածներ՝ հանդերձ մեկնութիւններով կամ յարասութեամբք: Սակայն մենք ներածութեանս մէջ գրուած ծրագրի համաձայն՝ վերջը կը թողունք

որոշել հայկական թարգմանութեան կամ խմբագրութեան ժամանակին և որպիսութեան վերաբերեալ մերձաւոր սահմանքը. իսկ այստեղ կ'ուզենք կանգ առնուլ լատին խմբագրութեան վերայ, — զոր ներածութեանս մէջ արդէն յիշեցինք, — տեսնելու համար, թէ ի՞նչ աղերսներ օւնի հայ և յունարէն խմբագրութեանց հետ, և թէ ի՞նչ շափով կը նպաստէ մեր մինչև ցայժմ պաշտպանած կարծեաց, այն է՝ մի անյայտացած գրութեան բնագրի գոյութեանը:

Կանխաւ ըսինք, թէ մեր ձեռքը հասած Պատմոգրիակ Արամայ և Երայի անվաւեր գրութիւնն՝ ի սկզբան այս մեկնակ դիրքը չունէր, այլ մասն կը կազմէր մի այլ գրութեան, որ ֆոքր Արարածոց կը կոչուէր, և կամ Գիոք Յոսեփի (Βιβλος τῶν Ἰουθηλαων). բայց յետոյ խմբագրուելով՝ ստացաւ աւելի բնագրական ծաւալ և խորագիր: Բայց ի հնագոյն խորագրէս՝ Ἀὐτῆ ἢ δὲ τῆς αἰῶνος Ἀδάμ καὶ Εὐαε, որուն կը համաձայնին հայերէնն՝ զոր յիշեցինք, և լատիներէն Vita Adami et Evae: Այժմ դիտել կու տանք, որ, նախ երեք խմբագրութեանց սկզբնաւորութիւնն ևս նոյն է: Ահաւասիկ. Μετὰ τὸ ἐξέλθειν αὐτοὺς ἐκ τοῦ παραδείσου = Հայ. « Զկնի ելանելոյ նոցա ի դրախտէն » = լատ. Quando expulsi sunt de paradiso. Ինչ ինչ աննշան տարբերութեամբ կը համաձայնին նա և ի վերջաւորութեան. վասն զի երեքին մէջ իսկ Միքայէլ Հրեշտակապետն կու տայ Սեթայ՝ մեռելոց թաղման և շարաթու կամ հանգստեան վերաբերեալ հրահանգները: Այս կերպով ունինք բաւական կոռուաններ կարծելու, որ երեքեան ևս յառաջ եկած են մի ուրիշ նախկին բնագրէ: Սակայն ճշմարիտ է և այս, թէ երեքն այլ իրենց խմբագիրներու քմահաճոյից համեմատ՝ կրած են իրենց մէջ նշանաւոր յաւելումներ և յապաւումներ: Հայերէնի՝ յունարենէն ունեցած այս կարգի տարբերութիւններն՝ արդէն նշանակեցինք, որոցմէ տեսնուեցաւ, թէ հայերենէն աւելի նշանաւոր ներմուծութիւններ կան յունարէն խմբագրութեան մէջ, և թէ երկաքանչիւրն իսկ՝ կատարեալ չեն կրնար համարուիլ նկատմամբ նախկին բնագրին: Այժմ տեսնենք, թէ ի՞նչ նորութիւններ կ'ընծայէ մեզ լատիներէնն՝ զոր հրատարակեց Գուլ. Մեյեր՝ Բազիլերայի Ակադեմիոյ՝ իմաստ. բանասիրական բաժնին մէջ: Բայց կը կանխեմ ասել, թէ ես այն մի քանի նշանաւոր տեղերովը միայն պիտի զբաղիմ այստեղ, որոնք իբր թէ, — վերոյիշեալ հրատարակչի քննութեան համեմատ, — խոր հնութեան տիպ ունին, և կարող են համարուիլ իբրև մնացորդք նախկին բնագրին:

Յունարէն և հայերէն խմբագրութեանց՝ Աւեր. պարբերութիւն.

ներս մէջ՝ վիպաց և գիպաց տեսարաններն՝ այնպէս երագ և կցկուտը կերպով իրարու կը յաջորդեն, որով դժուար է հաւատալ, թէ արեւելեան ոճով գրուած բնագիրն ևս՝ այդպէս եղած լիներ: Առաջին չորս ազգերու, Ադամայ և Սւայի գրախօսէն ելնելէն 18 տարի և երկու ամի վերջ, ուրիշ բան չի պատմուիր, բաց ի ծնանկոյ զՎայէն և զԱբէլ. իսկ երկրորդ պարբերութեան մէջ՝ Սւայ տեսիլ կը տեսնէ, որ Վայէն սպաննելով իւր եղբայրը՝ կը ծծէ նորա արիւնը մինչև վերջին կաթիլն, և կը փսխէ զայն արտաքս. — Սւայ արթնցնելով իւր ամուսինը՝ կը պատմէ անոր եղելութիւնը, որք ի միասին փութալով ի դաշտ՝ մեռած կը գտնեն զԱբէլ: Գրք պարբերութեան մէջ՝ Միքայէլ հրեշտակապետն կը զրկուի Աստուծոյ կողմէն աւետելու տարարագրիկ հօրն՝ Սեթայ ծնունդը: Գրք պարբերութեան մէջ կը ծնանի Սէթ. և հուսկ Եբեթն մէջ՝ Ադամ կը ծնանի 30 ուստերս և նոյնքան զբուսերս, և իւր 933 ամեայ հասակին մէջ կ'իյնայ մահուան անկողինը, և առ ինքն կը կոչէ իւր թոռունքը: Լատին խմբագրութիւնն՝ ընդհակառակն՝ ԱԻԲ պարբերութեանց մէջ՝ այնպիսի նորութիւններ կը ներկայացնէ մեզ, որոնք միւսներուն մէջ կը պակսին. այսինքն է՝ կը պատմէ ոճով նախահարց՝ գրախօսէն ելնելէն վերջ կրած եօթնօրեայ ահաւոր նօթութիւնն և պարէն հայթհայթելու եղանակը. — Սւայի 37 օր Տիգրիս՝ գետին՝ և Ադամայ 40 օր Յորդանանու մէջ մինչև ցպարանոց թաղուած կենալուն և նոր օրինակ ապաշխարելու նկարագիրն. — Սւայի վերատին խարուիլը հրեշտակակերպ երկացող սատանայէն և բերուիլն առ Ադամ ի Յորդանան. — Ադամայ հետ ունեցած երկար խօսակցութիւնն և Աստուծոյ նախատեղծ պատկերին, այն է՝ մարդոյն երկրպագութիւն շմատուցանելուն համար Սատանայի հետ բացած Միքայէլ հրեշտակապետի պայքարն, և այն պատեհաւ սատանային իւր գահէն ինկնալու պատմութիւնն և նախանձը. — Սւայի անտանելի ցաւով երկանց մէջ գտնուիլն. — Ադամայ առ Աստուած ուղղած աղաչանաց համաձայն՝ հրեշտակաց վայրիջումն և Վայնի ծնունդը:

Գիտելու ենք, որ վերջին կէտովս՝ իբրև օղով կու գան կը միանան լատին խմբագրութեան բոլոր նախընթաց կէտերն՝ յայն և լա-

1. Գեոորց անուա՛ք՝ շին գտնուիր Մէլերի հրատարակած Ադամայ գեոորցիան երբ մէջ: Գեթ առաջինը՝ կարելի է իբրև խանգարում համարել մի ուրիշ անուան, ենթադրելով որ Տիգրիս անունն՝ ծանօթ կրնար ըլլալ Հբէից Գիլտ ստորկան յորըջմամբ միայն: Տես Գան. Գլ. Ժ. 4, ուր հայն ունի «Տիգրիս Գիլտ»:

տին խմբագրութեանց առաջին շորս տող պարբերութեան մէջ աւանդածին հետ: Ադամայ՝ Յորդանանու մէջ կրած նորակերպ ապաշխարութեան և անոր յարակից հատուածներուն հին և արևելեան ըլլալն՝ առանց երկրայութեան է. վասն զի գիտենք նախ, որ մինչև Քրիստոսի ժամանակ Յորդանան գետը լուացուելու և ապաշխարելու սովորութիւնն կը պահուէր առ Հրեայս. Բ. վասն զի փոքր ինչ տարբերութեամբ կը գտնուի նոյն իսկ Իիլմանի ձեռքով հրատարակուած Արևելեաց քրիստոնէական Ադամ գրքին մէջ, յէջ 32-33, ինչպէս նաև արարելէն խմբագրութեան և Մինյէի Livre du combat d'Adam հրատարակութեան մէջ, T. 23, p. 310: Գ. նոյնը կը հաստատուի Ուսումնասիրութեանս նիւթ եղող վենետեկեան հրատարակութեան փԱ. գլխում եղած անվաւերականի վերջին պարբերութեան (յէջ 311) ձեռքով, յորում համառօտիւ կ'աւանդուին նախահարց՝ եօթնօրեայ կրած նօթութիւնն և քաշած նեղութիւններն: Հատուածիս վերայ դրուած խորագիրն եղծուած ըլլալով, Ա... մենատառն միայն մնացած է ան. եղծ, զոր մենք կտրող եմք լրացնելով կարգաւ Ադամգիրք: Ուրեմն հատուածս իսկ յայտնի նշան է նախկին բնագրի մի գոյութեան, յորմէ առնուած է և որուն մի մասը կը կազմէր երբեմն:

Լատին խմբագրութեան այս կտորիս մէջ նշանակուած սատանայի անկման աստուածաբանական պատճառն, այն է՝ Աստուծոյ նախաստեղծ պատկերին չուզել երկրպագելն, զորս մենք կրնանք նորամիտ Սկովտի աստուածաբանական դրութեան իբրև նախագաղափար անուանել, կը գտնուի նոյնպէս Տերտուղիանոսի, Նրանոսի, և Ազոստինոսի քով, և նոյն իսկ քիչ յառաջ յիշուած Հայերէն գործի փԱ. գլխու՝ առաջին պարբերութեան մէջ:

Լատ. 32րդ պարբերութիւնն, յորում կ'ըսուի, թէ Ադամ՝ դրախտի արևելեան հիւսիսային մասը կը պահպանէր, իսկ Եւայ՝ Հարաւային արևմտեան մասը, ըստ էականին սերտ աղերս ունի յուն. խմբագրութեան 15րդ պարբերութեան հետ. բայց այս անգամ վերջնոյս մէջ աւելի ընդարձակ պարագաներ կան. այսինքն է՝ արական տունկերն և կենդանիներն՝ Ադամայ ժառանգութեան մասը կը կազմեն, իսկ իգականներն՝ Եւայի: Հայերէն խմբագրութիւնն իսկ՝ լատինի համաձայն չունի այս վերջին տողերս, որով այս անգամ յունարէնն կասկածելի կը դառնայ. այնու մանաւանդ, որ լատինն 7-9րդ պարբերութեան մէջ ընդհակառակն երկրորդ անգամ Ադամայ՝ Հար. արևելեան, և Եւայի՝ հիւս. արևմտեան կողմը կու տայ յածիլ և ապաշխարել, սակայն առանց արական և իգական արարածոց պահ-

պանութեան մասին խօսք ընելու: Ուստի լատին խմբագրութեան 32րդ պարբերութիւնն, եթէ խանգարուած չէ, պէտք է, որ յունարէնի յիշեալ տողերն յետոյ ուրեմն ներմուծուած լինին: Սակայն այսպէս կամ այնպէս՝ կրնանք ըսել, թէ Մենդոցի Գ. զլիւտ 20 տան վերայ ընդերիւրեալ ըլլան այդ տողերն, ուր կ'ըսուի Եւայի համար, թէ «Նա է մայր ամենայն կենդանեաց»: Միով բանիւ՝ թէ հնագիտական և թէ մեկնարանական տեսութեամբ՝ հետաքրքրական է յունարէն խմբագրութեան այդ հատուածն:

Լատ. 41-43րդ պարբերութիւնքն, ուր կ'երևի Միքայէլ հրեշտակապետն՝ Սեթայ, և կ'աւետէ որոշակի 5500 տարիէն վերջ Քրիստոսի գալուստն յաշխարհ, ունի արդարև իսկական նմանութիւն յունարէնի 13րդ պարբերութեան հետ, ուր կ'աւետարանի Սեթայ՝ մարդկութեան վերականգնումը: Այս հատուածն՝ հայկական խմբագրութեան մէջ կը պակսի, և 5500 ամաց թուարկութեամբն՝ յունին անհամաձայն է. ուրեմն, այն է թէ կամ Ադամգրոց նախկին բնագրէն և կամ եփկոյիմուսեան Աւետարանի ԺԹ. զլիւսն առնուած է: Մէյէր՝ առաջին կարծիքն ունի, որով և ջանացեր է պաշտպանել լատին խմբագրութեան հնութիւնը, իւր հրատարակութեան հմտալից ներածութեան մէջ, յէջ 205: Մենք ցոյց կու տանք, առ այս, հայերէն Ադամգրոց՝ Պատմոսրիան երանելոյն Ադամայ ի դրախտէն խորագրուած հատուածը, որ Մէյէրի անծանօթ է: Արդ, այս տեղ բոլորովին նոր և շահագրգիռ պարագաներու հետ լծորդուած մէջ կը բերուի լատին խմբագրութեան յիշեալ տեղին. այսինքն է, նախահարք՝ դրախտէն ելնելէն վերջ՝ երբ առաջին անգամ գիշերն խաւարու վերայ կը հասնի, նոքա սարսափահար եղած կը տառապին երկիւղէն. բայց արշալուստոյն մօտ սատանան կը մօտենայ Ադամայ և կը խոստանայ լոյս բերել, եթէ երդնու ծառայել իրեն՝ բոլոր ծննդովք: Ադամ՝ լոյսը տեսնելուն պէս կ'երդնու. որուն ապա սատանայ վէմ մի ներկայացընելով կը ստիպէ, որ Ադամ ձեռքը դնելով անոր վերայ նորոգէ իւր երդումը, ապա թէ ոչ՝ դարձեալ խաւար կը բերէ: Ադամ ձեռքը դնելով կ'ըսէ. «Մինչև անժինն՝ ծնանի և մահն՝ մեռանի, մեք և ա-

1. Այսինքն են՝ սասանայի արձանն և հրեշտակի Աստուծոյ ձեռագիրն, որոնք սերտ աղերս ցոյց կու տան լատին խմբագրութեան մէջ միայն պահուած Սեթայ քարեղէն և կաւեղէն տախտակաց հետ, որոց վերայ կը գրէ սա՛ Ադամայ և Եւայի պատմութիւնը: Առ Ափրիկանոսի և Մ. Խորենացոյ յիշուած արձանականքն՝ եթէ նայն են սորա հետ, այնուհետև կարելի է Ադամ էն աւելի՛ իբրև Սեթայ պատմութեան հնագոյն գրուածքի մի ֆացորդ ընդունել զայն:

մենայն ծնունդք մեր ծառայ եղիցին քեզ » : Եթե օրէն յետոյ կ'ուզարկուի Հրեշտակն Աստուծոյ, որ բերելով ի կողմանէ Աստուծոյ ձեռնագիր մի՛ կու տայ Ադամայ և կը մխիթարէ զնա Հետեւեալ խօսքերով, — որ լատին խմբագրութեան մէջ աւանդուածի գեղեցիկ ընդլայնումն կրնայ համարուիլ, — այսպէս . « Մի երկնչիր Ադամ, թէ խաբեաց զքեզ սատանայ . վասն այն ասաց քեզ, թէ մինչև անծինն՝ ծնանի, զի անծինն ես եմ (այսինքն է Աստուած) զոր ոչ ոք ծնաւ . անմահն՝ իմ աստուածութիւնն, որ ոչ ունի զմահ . վասն այն այսպէս խաբէութեամբ էառ զձեռագիրն ի քէն, զի մնաս(ցես) դու գերի . բայց ոչ թողում զքեզ գերի ի ձեռն սատանայի, զի դու պատկեր իմ ես Եւ ի մտանել վեցերորդ դարուն՝ (5500) առաքեցից ի շատոյ աստուածոսրեան իմոյ՝ զորդի իմ սիրելի, որ եկեալ մարմնանայ ի զառակէ քռռմէ, ի սուրբ և ՅԱՆԱՐԱՏ ԿՈՒՍԷՆ, զի նա եղիցի որդի՝ որդոյ զո, և որդին իմ ջնջեաց զձեռագիր զո, և ազատեաց զքեզ ի գերութենէ սատանայի, և տաց քեզ զաստիճ փասուն » :

Այս տեղ գիտել կու տանք նախ, որ անվաւեր գրութեանց վեներական Հրասարակութեան, Յաւելուածի մէջ, ԺԱ. զլիում գետեղուած այս և միւս երեք հատուածներն աշխարհիկ ոճերով թարգմանողն և յարասողն՝ ԺԲ դարուն վերջ ծաղկող Վարդան Այգեկցին եղած կ'երևի, վասն զի յամի Տեառն 1366 գրուած անոր Արար. Մեկնութեան օրինակի մի Հետեւեալ հարցուպատասխանին մէջ կը խօսուի Ադամայ այս ձեռնագրի մասին, այսպէս . « Եւ ո՞ր է Չեռագիրն Ադամայ . — Պ. Զոր ասաց Աստուած, թէ մի ուտեր . յանձն առ Ադամ չուտել, և թէ ուտէ՝ մեռանի . զայն գրեալ ունէր սատանայ, և ասէր ցԱստուած . Ինչ ասացեր, և ինքն յանձն էառ և չպահաց, իմ մեղ ի՞նչ է : Զայն ձգմամբ անարատ ձեռացն պատուեաց (Քրիստոս) ի խաչին, ասելով, թէ Ես չմեղայ, ընդէր ետուր խաչել . ահա դու ես պատճառ » (մեղացն) :

Մի և նոյն մեկնութեան 150 իջում կը գրէ Վարդան . « Ասն թէ յերանելն Ադամայ ի դրսխտէն՝ զաւուրս եթն ոչինչ ճաշակեաց, անհարին տրտմութեամբ և սգով ըմբռնեալ, և մահու ակն ունէր, ըստ ասելոյն Տեառն . Մեռանիս, թէ ուտես : Ապա ողորմեալ Աստուծոյ՝ առաքեաց առ նա Հրեշտակ և մխիթարեաց, և խոստացաւ առաքել զՄիածին իւր կեցուցանել զնա . և Հրամայեաց ուտել ի պտղոյ երկրին և չմեռանել, մինչև ծնցի փոխան որդի իւր զաւակս » :

Վարդանայ նմանութիւնն ակներև է, և « ասն » բացատրու-

Թեամբ՝ նա ցոյց կու տայ մի ուրիշ աղբիւր . բայց որովհետև դժուար է, որ նա՝ լատիններէն Աղամգիրը կարգացած ըլլայ, ուրեմն կը հեռակի, թէ նա կամ հայերէն Թարգմանութենէն օգտուած է ուղղակի, և կամ անոր բնագրէն: Սակայն անոր բնագիրն անհամեմատ կերպով աւելի հին ըլլալու էր. վասն զի սատանայի կամ լաւ ևս մարդկային ազգի դատապարտութեան ձեռագրի յիշատակութիւնն՝ շատ հին է, ոչ միայն առ Հրեայս, այլ և քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ: Առաջին գործածողն է Պօղոս Առաքեալն, որ առ Կոռնոպրած թղթի Բ. 14 զլլուամ՝ խօսելով Քրիստոսի տնօրինականաց մասին՝ կ'ըսէ. « Երբորձ գձեռագիր մերոյ հակառակոթեան », այլովքն հանգերձ, որուն ապա հետեւեցան բոլոր սուրբ Հարք իրենց գրուածոց մէջ: Արդ, այս տեղիս եթէ Պաւղոս Առաքելոյ բացատրութեան վերայ յերկրուած չէ, պէտք է որ անկէց աւելի հնագոյն աղբերէ մի յառաջ եկած ըլլայ, որուն նախկին բնագիրն ծանօթ ըլլալու էր նա և Հեթանոսաց Առաքելոյն:

Մէջ բերուած տեղոյն մէջ՝ թէպէտ և Քրիստոսի անուան և Աղամայ մարմնով յարութիւն առնելուն որոշակի յիշատակութիւն չկայ, սակայն մնացած կէտերովը կը համաձայնի յուն. խմբագրութեան 13 և 39րդ պարբերութեանց, և լատին խմբագրութեան 41-43րդ պարբերութեանց մէջ աւանդուածներուն: Երեքեան իսկ ունեցած են, իբրև հնագոյն աղբիւր, Արևելեայց Աղամգիրը: Քրիստոս անունն, որ բացի լատին խմբագրութենէն, Մինչէի յիշեալ հրատարակութեան մէջ ևս (T. 23, էջ 292 կը գտնուի, յետոյ ուրեմն ներմուծուած է. վասն զի յունարէնի հետ՝ հայերէն խմբագրութիւնն ևս չունին զայն: Պէթ լատին խմբագրութեան համար կրնանք ասել, թէ հաւանօրէն նիկողեմոսեան Աւետարանէն իսկ կարող էր առած ըլլալ այդ յաւելուածն, որուն հետ ունի նոյնպէս ուրիշ աղբերսներ: Հայերէն խմբագրութեան « յանարատ կուսէն » բացատրութիւնն իսկ եկամուտ կը թուի ինձ, զուցէ, թէ աւելի մերձաւոր ժամանակի. յամենայն դէպս՝ ամենայայտնի վկայութիւն մ'է անարատ յղութեան վարդապետութեան, զոր ի վաղուց կը ճանաչէր եկեղեցի Հայաստանեայց: Միով բանիւ մեր ցոյց տուած երկու տեղիքն՝ թէ իրենց մանրամասնութիւններովն և թէ՛ բնական և գեղեցիկ նկարագրութեամբը՝ յայն և լատին խմբագրութեանց մէջ պարունակուածին շատ աւելի շահագրգիռ են, վարդապետական տեսակետով. և մասնաւոր լուրջ քննութեան արժանի են սատանայի արձանին, Աղամայ երդման և Աստուծոյ ձեռագրի մանրամասնութիւնքն. այսպէս նաև « ան-

ծիևն՝ ծնանի, անմահն՝ մեռանի, — պատկեր իմ ես, — ի լուսոյ Աստուածոսրեան իմոյ, — եղիցի որդի՝ որդոյ, — ջնջեսցի զձեռագիր, և տացի քեզ զաստուածական փառսն » բացատրութիւններն :

Լատ. խմբագրութեան 45-46րէ պարբերութեանց մէջ՝ Միջայել հրեշտակապետին կանխագեկոյց մարգարէութեան համաձայն՝ վեց օրէն ետքը Ադամ կը մեռնի, թողլով իւր որդւոց հետեւել կտակը . « Sepelite me contra ortum¹ Dei magnum habitationibus » . Եօթն օր կը խաւարին արեգակն ու լուսինն և աստեղք առ հասարակ, որոնք Քրիստոսի մահուան ժամանակ հանդիպած տիեզերական մեծ յեղափոխութիւնը կը յիշեցնեն մեզ : Յունարէն և հայերէն խմբագրութեանց մէջ, ընդհակառակն, կ'ըսուի ի դիմաց Ադամայ՝ առ Եւայ . « Մածկեա զիս, և մի՛ զոք թողոցոս տեսանել զիս յորդոց իմոց, մինչև հրեշտակն հրամայեսցէ », և այլն, և այլն : Իսկ անոր մահուանէն ետքը կը տեսնէ Եւայ երկնից հաստատութեան վերայ « երկուս արս եթովպեացիս », և Սեթէն կ'իմանայ, թէ անոնք արեգակն և լուսինն են, որոնք խաւարած չեն, այլ « վասն զի ծածկի պայծառութիւն նոցա ի պայծառութենէ՛ հօրն յուսոյ (յու. τὸς φῶτος τῶν δλων) : Արդ՝ շնայելով որ լատին խմբագրութեան յաջորդ, այն է 47-51րէ պարբերութիւններն, — յորս կը նկարագրուին Ադամայ և Եւայի և Աբելի մահունքն և յուղարկաւորութիւնքն, — շատ աւելի հակիրճ են քան զհայ . և յուն . խմբագրութեանց 31-43րէ համապատասխանող պարբերութիւնքը, սակայն և այնպէս մէջ բերուած տեղին նշանաւոր է . այնու մանաւանդ, որ ասորերէն թարգմանուած Ադամայ կտակիւն մէջ ևս կը գտնուի, ըստ հրատարակութեան՝ Ռընանի : Իսկ որովհետև լատինն՝ աւելի հին կը համարուի՝ քան ասորին, հաւանաբար վերջնոյս փոխառութիւն չկարէ լինել առաջնոյն աւանդածն, այլ մի ուրիշ և աւելի հին բնագրի . ուրեմն բաց ի հայերէն խմբագրութենէն՝ լատինի քննութիւնը իսկ՝ կ'երաշխատորեն մեզ, ընդունել Պատմութեան Ադամայ և Եւայի այժմեան յունարէնէ կամ ասորիէն աւելի հին բնագրի մի գոյութիւնը :

Գրուածքիս հեղինակն էր հաւանօրէն հելլենացած հրեայ մի, որ

1. Այս տեղիս, զոր Գ. Մէյեր անլուծանելի համարած է, կը մեկնուի հայերէն խմբագրութեան, յէջ 21, նետեւել բացատրութեամբ . « Ի կողմանս զբախտին՝ ի տեղւոյն այնմիկ, յորում առեալ էր Աստուած զհոգն, «տեղիւս վարս» : Լատինն՝ կամ խանգարուած է, և կամ իւր նախկին բնագիրը լաւ նստեցած չէ : Եթազգուած բառերն յունարէնի մէջ ևս կը պահպան :

2. Journal Asiatique, V serie 2, p. 457.

կ'ապրէր փրկչական թուականի սուաջին դարուն մէջ, և քրիստոնեայ համայնքին կը վերաբերէր: Գրած է նա իւր գործը՝ այն ժամանակ Պաղեստինու մէջ սովորաբար գործածական եղող ասորախառն երբայեցեւրէնով: Թէպէտ և իր գրութիւնը Հին երևցնելու համար՝ խոյս տուած է նա, որքան կարելի է, քրիստոնէական արտայայտութիւններ ընելէ, մանաւանդ շանացած իսկ է Հին կտակարանի հեղինակաց ոճերով սեթևեթել իւր լեզուն և գրիչը, սակայն և այնպէս՝ կան այնպիսի գազափարսներ, բառեր և բացատրութիւններ, որոնք, — եթէ ստուգիւ եկամուտ յաւելուած չեն, — միայն քրիստոնէական ոգւոյ և նոր Կտակարանի ներշնչութիւնք կարեն լինել: Առանց մանրամասնութեանց իջնելու՝ կարելի է հետևեալ փաստերով իսկ ապացուցանել մեր ասածները:

Ա. կան սեմական լեզուի և արևելեան գրութեան յատուկ եղող կրկնութեան այլ և այլ ձևեր, որոնք եթէ միայն հայերէն խմբագրութեանց մէջ հանդիպէինք, գուցէ ըսուէր, թէ հայերէնի յատուկ բաներ են. բայց երբ նոյնը կը տեսնենք նա և յոյն խմբագրութեան մէջ, որ ըստ հելլենական լեզուի և գործածութեան՝ չպիտի ունենար այնպիսի ձևեր, բառեր և ասութիւններ, այնուհետև չենք երկբայիր, ըսել, թէ ուղղակի սեմական բնագրի ազդեցութեան արդիւնք եղած ըլլան: Գործս չի ներեր այսպիսի ձևերու սրինակներ բերել կուտակել այս տեղ. սակայն յունարէնի ձեռնհաս ընթերցողք ըսածս պիտի հաստատեն:

Բ. փաստը կը կազմէ մեզ՝ գրութեանս մէջ եղած Հրեշտակախօսաբանութիւն (angéologie). այսինքն է, ստէպ ստէպ կը յիշուին վեցթևեան սերովբէք և քերովբէք, հրեշտակք և հրեշտակապետներ, բայց մասնաւոր կերպով Միքայէլ, որ ամենուրեք կը պատգամաւորի, կը խօսի, կը գործէ, և կը բարեխօսէ նախաստեղծից համար. իսկ արդ, մենք Դանիելէն (զլ. Թ. 13, 21, և զլ. ԹԲ. 1) զիտենք, թէ Միքայէլ՝ էր իշխան կամ պաշտպան Հրէից, որ կայր հակառակ իշխանացն Պարսից և Յունաց, և թէ հրեշտակաց դասակարգութեան որոշ գաղափարն՝ Հրէից մէջ միայն գոյութիւն ունէր, — Դանիելի, Յովհ. Յայտնութեան և ուրիշ երբայական զրոց վկայութեան համաձայն, — իսկ միւս Ժողովրդոց մէջ մինչև կեղծ Դիոննեսիոս, կամ լաւ ևս Յ. դարը, դեռ այնպէս տարածուած չէր. ուրեմն կը հետևի, թէ գրութեանս նախկին հեղինակն իսկ ազգաւ Հրեայ եղած ըլլայ:

Գ. փաստը կ'ընծայէ մեզ եօթն թուի գործածութիւնն: Արդ, 40րդ պարբերութեան մէջ կ'ըսուի այսպէս. « Եւ հրաման ետ Տէր՝ եօթանց արքոց հրեշտակաց (հայն՝ հրեշտակապետաց) զի բերցնն յար-

քայութենէ անտի զանուշահոտութիւնս » : Լատին խմբագրութեան մէջ՝ ուրիշ երկու տեղ ևս գործածուած է եօրն թիւն, գիտելով, որ այս թիւս ընդելական էր և նշանակալից Հրէից մէջ, — ինչպէս sex centum առ Հռովմայեցիս, և հազար և մի թիւն առ Հայս, — վարն զի հնագունէն սկսեալ՝ գրեթէ բոլոր սրբագան հեղինակներ գործածած են զայն : Սակայն ասոր նկատմամբ նշանաւոր է, ըստ իս, Յովհ. Յայտնորեան, զԼ. Գ. 1, հետևեալ տեղին. « Եւ տեսի հրեշտակս եօրն, որ կային առաջի Աստուծոյ » . և այլուր, թէ « Եկն ամն յեօրանց անտի սրբոց հրեշտակապետաց » : Տեղեացս երկուստեք նմանութիւնն՝ առանց երկրայութեան է : Առամայ և Եւայի պատմութեան 38րդ պարբերութեան մէջ՝ կը ժողովին հրեշտակք, ըստ իւրաքանչիւր դասակարգութեան, ոմանք ունելով ի ձեռին սկիզբէն բուրվառներ, և ոմանք փող և քնար . ուր կը համբառնայ Տէրն փառաց՝ չորս հողմերոս վերայ, և « քերորէք՝ բուռն հարեալ ունին զՀողմոց » : Ասոր յար և նմանը կը գտնենք դարձեալ Յայտնորեան Ը. զԽու 3-4 տան և է. զԽու 1 տան մէջ : Ուրեմն պէտք է ըսել, թէ այս գրութեանցս մին՝ ծանօթ ըլլալու էր միւսին . իսկ որովհետև Յայտնութեան մէջ եօթն եկեղեցեաց համաձայն՝ կը նշանակուին նաև եօթն հրեշտակք՝ իրենց յատուկ պաշտօններով, իսկ Առամայ պատմութեան մէջ՝ մասնաւոր հիմ մի չկայ եօթն հրեշտակաց կոչումն ընելու, բայց ի Հրէից մէջ տարածուած աւանդութենէն, հետևաբար՝ այդ տեղերն ևս՝ կամ երբայական բնագրով մի կրնան բացատրուիլ, և կամ Յայտնութեանէն եղած փոխառութեամբ :







Գ. յուն. և հայ. խմբագրութեանց 9րդ և 13րդ պարբերութեանց և լատիներէնի 36րդ պարբերութեան մէջ կը յիշուին մերթ օժոմն կամ ձէթ ողորմորեան = τὸ ἔλαιον τοῦ ἐλέου, և մերթ « ծառն՝ ողորմութեան, յորմէ ելանէ օժումն » = τὸ δένδρον ἐν ᾧ ῥέει τὸ ἔλαιον : Այս օժման կամ իւղոյն ընծայուած է հիւանդութիւններն և ցաւերը մեղմացնելու գորութիւն մի . իսկ արդ այս տեղիս համաձայն է Մարկոսի 9. զԽու 13 տան և Յակ. Կթղ. Թղթի 2. զԽու 14 մէջ աւանդուածին . ուրեմն այս տեղ ևս ոչ միայն երբայական բնագրի հետքն, այլ նոյն իսկ Մարկոսի և Յակորոս առաքելոց հետ

1. Այս ծառն՝ փայտ ինչոց ևս կոչուած է ուրիշ տեղ . իսկ որովհետև այդ ծառն ելած օժումն, ըստ Գրոց, է իւղն կամ ձէթ հիւանդաց, ապա ուրեմն յիշելու ևս կը նամարուի, — ըստ կարծեաց հեղինակի անվաւեր գրութեանս, — շառն ինչոց : Այս ծառիս վերայ տես Գրոք Ենձոյս զԼ. 3, 5, 6, 24, 23 : Եպիփ. Յաղտի Հիւր. 1. Գոտստիկ. զԼ. ԼԱ. 8 :

ունեցած նմանութիւնն անտխտելի է . և որովհետև սոցա աւանդածն Հրէից հնաւանդ սովորութեան վերայ հաստատուած եղելութիւն մ'է, ապա ուրեմն հետևութիւնն յայտնի է :

Ե. Աղամայ և Արելի թաղման արարողութիւնն ևս, յորում կը յիշուին երեք պատաստակար յպիտակք և ծիրանիք, իշղն օծման, անոշաւոտ խնկեկիք և վիմ, որուն վերայ կը հանգչեցնեն Արելի մարմինը՝ դիպպատելէն յառաջ, ուղղակի Հրէից արարողութեան վերայ ձեռուած է, որ ընդհանուր էր Պաղեստինու մէջ, նոյն իսկ Քրիստոսի ժամանակ : Բաւական է կարդալ Մարկոսի գլ. ԺՁ. 1, 'Աուկասուս գլ. ԻԳ. 53 և 56, և Յոհաննու Աւետարանի գլ. ԺԹ. 4) համարն, ուր կ'ըսուի այսպէս . « Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կաւառովք, խնկովք հանդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել » : Յովհաննէս՝ ոչ միայն համաձայն Մատթէոսի յոգնակի կոտաւն կը գրէ, այլ նոյն իսկ Ի. գլխու 7րդ տան և ԺԱ. գլխու 44րդ տան մէջ կը ցուցընէ անուղղակի, թէ այդ կտաւներն՝ թուով երեք էին . մին՝ կը պատէր ոտքերն և իրանը՝ կապանօք . երկրորդն՝ ձեռքերը՝ երիզապնդօք . իսկ երրորդն՝ երեսը՝ վարչամակապատօք : իսկ որովհետև այս տեղ ևս նմանութիւնն ակներև է, ուրեմն :

Զ. Աղամայ կենսագրութեան 42րդ պարբերութեան մէջ կ'աւանդուի թէ, — յետ թաղման Աղամայ, — « Արար Տէր Աստուած նշան եռանկիւնի (= τριγωνον σφραγισα) և կնքեաց զգերեզմանս եոզաս » : Արդ, Մատթէոսէն գլ. ԻԷ. 66 գիտենք, թէ Հրեայք Յիսուսի գերեզմանը կնքեցին, թէպէտ և յայտնի չէ, թէ կնքելու սովորութիւնն առ Հրեայս ընդհանուր էր, և թէ եռանկիւնի նշանով կը կնքէին : Սրբազան Հնախօսութեան մէջ՝ այդ նշանը կը ներկայացնէ մեզ մերթ զմերթ հորհուրդն ամենասուրբ Սրբորգութեան, և մերթ զմերթ զՓրկիչն աշխարհի : Մինչև այսօր Ափրիկէի և Իտալիոյ մէջ գտնուածներէն եօթն միայն ծանօթ¹ են մեզ, որոցմէ ոմանց վերայ յունարէն Ρ, ոմանց Α, և ոմանց այլ Ω մենատառերն զրոշմուած են .

առնց մենատառի : Առաջիններն,    իսկ այլք՝ առնց մենատառի : Առաջիններն,    անտարակոյս, քրիստոնէական ժամանակաց կը վերաբերին . իսկ վերջիններն՝ յայտնի չէ, թէ արդեօք հրէական են, թէ եգիպտական : Մեզ հաւանական կ'երևի, թէ այդ նշանն, ինչպէս նաև . Ես եմ որ եմ (= եգիպտ. Եռք փոռ Եռք) բացատրութիւնն Նգիպտացուցմէ առին Սրբայեցիք, և կը գործածէին իրենց սրբազան արարողութեանց մէջ, իբրև նշանակ անսահ-

1. Martigny, *Dictionnaire des antiquités chrétiennes*, Paris, 1877, p. 766.

ման և յաւիտենական էութեան, որուն կու տային իրարմէ տարբեր երեք անուններ, նկատելով զայն իբրև երբեակ միութիւն, ի դէմս որոյ կ'երգէին երեք Ալեքսիայք, և երիցս Ստարք, սուարք, սուարք՝ Տէր զօրոտեանց: Անվաւեր գրութեանս վերջ՝ Միքայէլ Հրեշտակապետի ձեռքով առ Սէթ տրուած այս պատգամս իսկ. « Այսպէս թաղեսցես զամենայն մարդ վախճանեալ, մինչև յօր միւսանգամ գալստեանն և յարութեան, և այսպէս եղեալ զօրէնս » բացատրութիւնն՝ վերստին կը հաստատէ մեր կարծիքը. ապա ուրեմն:

Է. դիտել կու տանք, որ գրութեանս 49րդ թուահամարն, ուր ի դիմաց Միքայէլ Հրեշտակապետին կ'ըսէ Եւայ իւր որդւոց, թէ Աստուած իր դատաստանը ցոյց տուաւ առաջին անգամ մեղապարտ մարդկութեան՝ ջրհեղեղաւ, իսկ երկրորդ անգամ պիտի ցուցնէ հրով, ըստ իմաստին՝ յար և նման է Պետրոսի Կթղ. Բ. թղթի Գ. գլխու 6րդ և 7րդ համարներում աւանդածին. Հետևաբար այս երկու գրուածներէն որն ևս համարինք սկզբնագիր, կը հետևի, որ երբայցեցերէն լեզուով գրուած էր այն:

Ը. յուն. խմբագրութեան 29րդ և 33րդ թուահամարներում՝ երկիցս կը հանդիպինք յատուկ անուանս 'Ιαήλ, զոր հայերէն օրինակք, — ինչպէս տեսանք, — իրարմէ տարբեր ձևով կը գրեն. այսինքն է, առաջին տեղւոյն մէջ՝ Ա. օրինակն ունի. Ա'յիլ, Ա'յիլ, և Բ. օրինակն իրաի. իսկ երկրորդ տեղում՝ իրարու մերձաւոր ձևով կը գրուի ըստ Ա. օրինակին՝ Եղիայի, իսկ ըստ Բ. օրինակին՝ Իղիայի: Երկուքն այլ միաձայն կը թարգմանեն զայն՝ Տէր քազառք յաշտեկեից: Լատին խմբագրութիւնն ունի՝ Dominus.

Այս սնունս, ըստ կարծեաց Հենր. Հիլգէնֆէլդի, կազմուած է անտարակոյս երբայցեցերէն 'Ιά = ἰη = ἦλ = ἰηἦ = ἦλ = ἰηἦλ. և է միայն երբայական անուն Աստուծոյ, և կը հնչուի իրան(վեի) Աստուած: Հայերէն իրաի՝ է բնականապէս ըստ յունարէն, և ոչ թէ երբայական արտասանութեան. իսկ Այիլ՝ կրճատումն է առաջնոյն: Յամենայն դէպս իղիայի հնչման մէջ կայ ἦλ, յորմէ իբրև յատուկ անուն արտագրուած է 'Ιαήλ: Իղիայի ձևն՝ է մերձաւոր տառադարձութիւն երբայցեցերէն և յունարէն հին ձևին Ελαχιλ = Եղիայի: Ուրեմն եթէ յունարէն խմբագրութիւնն՝ երբայցեցերէնէ փոխ առած է 'Ιαήλ անունն, ինչպէս Բ. օրինակն ալ՝ յունարէնէ, կը հետևի, որ յունարէն խմբագրութիւնն՝ ձանչցած է երբեմն երբայական բնագիրը:

Այսպիսի մի բնագրի գոյութիւնը ներքին փաստերով հաստա-

δοκοῦσιν. Այս և ուրիշ լեզուական փաստերով հաստատած է, ուրեմն, թէ գրուածոցս առաջինն՝ վերջնոյս հետ նոյն էր երբեմն, և թէ Սին գեղոս՝ աւելի առաջինէն, քան թէ Βίος τοῦ Ἀδὰμ կոչուածէն օգտուած է, որ կը կազմէր Ἀέπτῃ Γένεσιςի երկրորդ մասը:

Մանսիի քով պահուած գելասիոսեան վճռոց ձեռագիր մի խորագրուած է. Liber qui appellatur ADAE LEPTO GENESEOS. այսինքն ըսել կ'ուզէ. Liber qui appellatur Adami sive Leptogeneseos (Գիրք որ կոչի Ադամայ կամ Փոքր Արարածոց): Ուրեմն, կը հետևի ըստ վկայութեան գելասեան վճռոց, թէ ստուգիւ մի և նոյն գրութիւնը սովոր էին հինք Պատմաբիւն կամ վարք Ադամայ անուանել, և երբեմն այլ փոքր Արարածոց:

Նոյնը կը հաստատուի երբայական յետին ժամանակի մատենագրութեան վկայութեամբ, զոր Իսկտոր Յելինեկ՝ իւր Բէր-հա-Միդրաշ (Beth-ha-Midrash II. S. VII. Anm. 3) հրատարակութեան մէջ բերած է, Սինգեղոսէն յիշուած գրութեան, այսինքն է, փոքր Արարածոցի այն մասն, որ կը խօսի Ադամայ վերայ, Պատմաբիւն վարոց Ադամայ կոչուած է, և հնոց քով այսպէս յוֹשֵׁעַ בְּרֵאשִׁית אֲדָמָה՝ ձանչցուած:

Իարձեալ, կտակ Նախաստեղծից (Testamentum Protoplastorum) անուամբ 2. դարուն վերջը գրուած անկանոն գրութիւն մի, կ'աւանդէ, թէ Ադամ իւր ստեղծմանէն 40 օր վերջ եկած ըլլալ ի Իրախան: Արդ, այս կը գտնուի փոքր Արարածոցին մէջ. հետևաբար, այն գրուածն ևս կարող էր նոյն ըլլալ կամ ասոր և կամ Պատմաբիւն վարոց Ադամայ հետ, ուր այսօր իսկ կը կարդանք մի և նոյն տեղեկութիւնը Ադամայ գրախտը գրուելու մասին: Սոյնը կ'աւանդէ ըստ Փարբիկիոսի՝ նաև Անաստաս Սինայեցին, այսպէս. Unde Hebraei ex libro qui non est redactus in canoicem, qui quidem dicitur *Testamentum Protoplastorum*, dicunt quadragesima die ingressum esse Adam in paradysum, sicut etiam videtur quidam historico Chronographo Pyrrhoni et quibusdam expositoribus. Գլխակա՞ ևս սոյն տեղեկութիւնը՝ Պիւռոնի կը վերագրէ: Ուրեմն, բոլոր այս վկայութիւններս ուշի ուշով ի նկատի առնելով, այլ ևս չենք վարանիր եղբակացնել, Ա. թէ երբայական նախկին բնագիրն՝ ընդարձակ գրութիւն մ'էր՝ երկու մասէ բաղկացած: Առաջնոյն

4. Zunz, Die gottesdienstl. Vorträge der Juden, S. 128; J. Fürst, im Lbl. des Orients 1848, 589.

2. Ann. I. p. 156 et sq.

մէջ կը խօսուէր ընդհանուր աշխարհագործութեան կամ վեցօրեայ արարչութեան գործոց վերայ, բայց շատ տարբեր մանրամասնութիւններով, քան որ ինչ ի գիրս Մենդոց. մանաւանդ թէ յաճախ սորա լածը կամ լոկ ակնարկածը՝ նա Հրէից մէջ չըլող հինաւուրց նութիւններով կը մեկնէր և կը լրացնէր: Այս պատճառաւ իսկ կոչուեցաւ յարեւելեայց՝ մերթ Գիորք Յորեյիկից, և մերթ փոքր Արարածոց: Իսկ երկրորդ մասն՝ որուն մէջ ընդարձակաբար և վիպասանօրէն կը խօսուէր Ադամայ կամ նախաստեղծից վերայ՝ կոչուեցաւ Պատմոչիան կամ Վլարք Ադամայ: Բ. Այս գրուածքս ծանօթ էր արեւելեայց, մինչև Զ. դար փրկչական թուականին, որուն իրբև նաևուր գրուածքի վերայ եղան յաջորդաբար Հրէից, Փնոստիկեանց, Ֆանիքեցւոց և քրիստոնէից ձեռքով ուրիշ բազմաթիւ խմբագրութիւններ, ըստ ընտրութեան այլևայլ նիւթոց: Այս պատճառաւ իսկ յառաջ եկան դեռ ուրիշ յորժրլուսներ. օրինակի աղագաւ, Ապալ-խարաչիան Ադամայ, Գանճ Ադամայ, կտակ նախաստեղծից, Մահ Ադամայ, Տեսիլ կամ Յայտնոչիան Ադամայ, և այլն և այլն: Գ. Այս տեսութեամբս՝ կրնանք ըսել, թէ այսօր Հրատարակութեամբ ծանօթացած Ադամգրոց բոլոր խմբագրութիւններն ևս՝ քրիստոնեայ գրիչներու արդիւնք են, և թէ իրաւամբ Ազ. Գիւման Արևելից քրիստոնեական Ադամգիրք անուանած է զայն: Գ. Այդ խմբագրութիւններէն ոչ միոյն համար կրնանք ըսել, թէ ըլլայ հաւատարիմ և կատարեալ ներկայացուցիչ երբայական նախկին բնագրին: Ե. Ա. դամգիրքն՝ երբէք կանոնական ընդունուած չէ՝ ոչ Հրէից ժողովաբանէն և ոչ իսկ քրիստոնէական Եկեղեցիէն. սակայն և այնպէս՝ աւոր ազդեցութիւնն՝ խիստ մեծ եղած է նախկին դարերում. բայց քրիստոնեաներէն աւելի՝ Հրէից, հերետիկոսաց և մահմէտականաց վերայ: Այս ազդեցութիւնս ակներև կը տեսնուի նոյն իսկ փրկչական թուականին Ա. և Բ. դարերում յօրինուած անվաւեր Յայտնոչիաններուն և Տեսիլներուն, ինչպէս և Ղուրանի մէջ: Նոր կտակարանի՝ այս ինչ կամ այն գրութեան հետ ունեցած նմանութիւններն, զորս ցոյց տուինք, չեմ կրնար հաստատել, թէ ուղղակի անկէ փոխ առնուած ըլլան. սակայն մերժելու համար այլ փաստեր չունիմ, քանի որ երբայական բնագիրն չէ ի միջի:

Զ. Հայերէն խմբագրութիւնն՝ ամենէն աւելի յունարէնի հետ նմանութիւն ունի. բայց որովհետև այս վերջինս, — ինչպէս ըսինք, — կը տարբերէր փոքր Արարածոցէն և Վլարք Ադամայ կոչուածէն. ուրեմն այժմեան Հայերէն Պատմոչիան վարոց Ադամայ և Երայի նախա-

ստեղծիցն, ինչպէս և Δι' ἡγῆσις, և այլն, չէ կարող երբայական բնագրին հետ նոյն լինել. սակայն և այնպէս Սարկաւազ վարդապետի ցանկի մէջ յիշուած Ադամգիրքն, որոյ անունն՝ մեր ձեռքը հասածէն տարբեր կը հնչէ, իւր քանակովն և այլ հանգամանօք Սինդեղոսի վերը յիշած երկամասն բնագրին հետ նոյն ըլլալու էր, և կամ անկէց հայերէնի փոխադրուած. թէպէտ և չեմ կրնար ըսել, որ Աւսումնասիրութեան Ա. գլխում յիշատակած Ադամայ և անոր որդւոց վերաբերեալ հատուածներն՝ այն թարգմանութենէն ուղղակի եկած ըլլան:

Վենետիկեան Հրատարակութեան մէջ, յէջ 24, ՄԱՀ ԱԴԱՄՍԾ խորագրի ներքեւ երկու էջերէ բաղկացած հատուածն, որուն սկիզբը կը կազմեն թարգմանչի ձեռքով յետոյ ուրեմն իբրև ծանուցումն գրուած չորս տողերն, անտարակոյս յունարէնէ թարգմանուած է. վասն զի զայս կ'ակնարկեն հետեւեալ խօսքերն « Ի պատմութեան Յունաց մնացորդաց գտեալ »: Ինձ յայտնի չէ Պատմաքիչն Մնացորդաց, այն է, Ἰστορία τῶν παραλειπομένων, այսպիսի յունարէն գրուածք մի. բայց կարծեմ, թէ այդու հասկնալի են այն հատուկըտուր հատուածներն, որոնք պահուած էին յոյն Ժամանակագրութեանց կամ Հաւաքումներու մէջ: Այս բանս՝ Հայկական թարգմանութենէն իսկ յայտնի կը տեսնուի. զի անոր մեզ ներկայացուցածն՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ ամփոփումն հատընտիր մասանց Յայտնութեան Ադամայ կոչուած գրուածքէն, որ Բ. դարում կամ Գնոստիկեանի մի ձեռքով խմբագրուած էր, և կամ պարզապէս յունարէնի թարգմանուած: Գրուածքէս հատուածներ կան Մեթոդիոսի Պատարացոյ և Եւտիքիոսի Աղեքսանդրացոյ քով: Ասորի ժամանակագիրներէն Արուֆարած և Միքայել իսկ՝ Մեթոդիոսի անուամբ անկէց հատուածներ մէջ կը բերեն, որոնք նմանութիւն ունին հայերէնի հետ, բայց ըստ ամենայնի նոյն չեն: Հետեւաբար, կամ Մեթոդիոսի ընծայուած՝ Յադագս կատարածի աշխարհի և Նեքիւն գրութիւնն ամբողջութեամբ մեզ հասած չէ, և կամ հայերէնի մէջ յետոյ ուրիշ յաւելուածներ և փոփոխութիւններ ևս մուտ գտած են:

Հայերէն պատուիկս՝ ժամանակագրական կամ պատմական նութիւն մի չի պարունակեր. սակայն հետեւեալ անուանքս՝ Էջանան, Եմա և Եսքերա, որք կը յիշուին իբրև դասերք Ադամայ, նոյն այդ ձեռք չեն գտնուիր վերոյիշեալ հեղինակաց քով: Առաջինն՝ հաւանօրէն նոյն ըլլալու էր, ըստ նախկին ձեւին, Մեթոդիոսի քով յի-

չտասկուած Կարնանայի՝ Հետ, զոր Արուճարած՝ Կլիմա կը գրէ՝
 Համառօտելով. իսկ առ Միք. Ասորոյ՝ Կոռիլուս, Փոքր Արարածոցի
 մէջ, ընդհակառակն, Առան կը կոչուի: Եպիփանու Կիպրացոյ ընծայ-
 ւած գրութեան Հայերէն խմբագրութեան² մի մէջ, Կայենեռնի թարգ-
 մանուած է, նախագրութեամբ անծանօթ բառիս՝ առառ³: Հաւան-
 օրէն անուանս նախկին արմատն՝ աւելի կաշ կամ կայ, քան թէ
 կոչ և Կլի ըլլալու էր: Եման՝ ըլլալու է կրճատումն Առանայ՝ քեռ
 Կայենի, և կամ Առառանայ, զոր կը յիշատակեն Կեղրենոս և Սին-
 զեղոս, իբրև քոյր Սեթայ և ամուսին: Եսրեր՝ նոր ուղղագրութիւն մ'է
 Ասրերա Հնագոյն ձևին, զոր կը յիշէ Միքայէլ Ասորի, իբրև դուստր
 նոյի, Հետեւեալ ակնարկութեամբ, այսինքն թէ, ասկէ կը ծագէր տի-
 կինն Սարայ:

Հետաքրքրական է 25րդ իջի առաջին պարբերութեան մէջ Նւայի
 և Սեթայ երազն՝ Ադամայ մասին, լուսեղէն տաճարի և երեք երի-
 տասարդաց արարուածով: Այս տեղիս Վերացումն Եսայնայ անկանոն
 գրութեան Հետ մերձաւոր աղերս ունի: Թէլ 26 յիշուած գեղեցիկ
 կիճն և իւր գրկին մէջ սեղմած փոքրիկ մանուկն, որոնցմով վերլու-
 ւին կը բերկրի նախամայրն Նւայ, օրինակ են անարատ Կուսին և
 փրկչին Յիսուսի, և բոլորովին քրիստոնէական տիպ ունին:

Վենետիկեան հրատարակութեան Յաւելուածի ՓԱ. գլխում, — յէջ
 307—324, — իրարմէ տարբեր ախտոսներ առած չորս հատուածնե-
 րուն համար՝ արդէն ըսինք, թէ Վարդանայ Այգեկցոյ ձեռքով խում-
 բագրուած են, այլևայլ անկանոն գրութեաներէ. իսկ այս տեղ որոնենք
 անոնց նախնական աղբերքը՝ իրենց յարակից յաւելուածներով:

Ա. և Բ. պարբերութեանց մէջ Աստուծոյ արարչագործութեան, —
 Սաղայէլի ապստամբութեան և կռուին, — այսպէս նաև Գարրիէլ և Մի-
 քայէլ հրեշտակապետաց՝ անոր դէմ տարած յաղթութեան վերաբե-
 րեալ հատուածներն, — ինչ ինչ տարբերութիւններով — նոյն են Եպիփա-
 նու յիշեալ գրութեան Ա. գլխու երկրորդ իջում աւանդուածներուն
 Հետ. միայն թէ վերջնոյս քով՝ Գարրիէլ միայն յանուանէ յիշուած

1. Այսպէս է նաև Մեթոդիոսի հայկական թարգմանութեան մէջ, որ կը զբու-
 նուի մեր մատենադարանի թիւ 170 Ուիթրիէի մէջ, ինչպէս նաև Վարդան պատմչի
 քով. հետեւաբար, խանգարուած չի կրնար ըլլալ:

2. Որուն վերնագիրն է «Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ սասցեալ ի Սլւլ.
 Բնիւր Արարածոց, և այլն»:

3. Այս բառս կը թուի նշանակել նախնայ կամ Գիւլ. իսկ Արեւելուայ՝ տրուած
 է սծականս՝ Էւր-աղու: Երկաքանչիւրին ծագումն ինձ յայտնի չէ. իցեն սեմական:

է: Յէջ 308 Գ. պարբերութիւնն, ուր կ'աւանդուի, թէ օձն ի սկզբան թևաւոր¹ էր և խօսուն, սերտ աղերս ունի Արամայ վարաց լատին խմբագրութեան այն տեղւոյն հետ, ուր Աստուծոյ անէծքով օձի թևերն և ոտքերն կը թափին: Ես չեմ կարծեր, թէ հայն՝ զատինը ճանչցած ըլլայ. հետևաբար, երկուքն այլ փոքր Արարածոցի նախկին բնագրէն փոխ առած են զայն. որովհետև Սինգեղոս, յէջ 8, և Գլիկաս, յէջ 211, փոքր Արարածոցի և Յովսեպոսի անուամբ մէջ կը բերեն զայն տեղի: Յէջ 309 վերջին ընդարձակ պարբերութիւնն, ուր գեղեցիկ կերպով նկարագրուած են Եւայի գեղեցկութիւնն և Ագամայ՝ պտուղը ձեռքն առած ժամանակ մէկ կողմէն անոր օրոյն, և միւս կողմէն այլ Արարչին երկիւղէն կրած ընդդիմամարտ կիրքերն և հոգեկան վարանմունքն, խմբագրողին կողմէն եղած Հանճարեղ յաւելուած մի կը թուին լինել. որովհետև Ագամգրոց միւս խմբագրութեանց մէջ կը պակսի: Յէջ 312-314 հատուածն, ուր կը նկարագրուին Նախաստեղծից դրախտէն արսալքսուելէն վերջ գիշերոյ վերայ հասաննն, — մթութենէն կրած անոնց երկիւղն, — սատանային լուսածագի մօտ զանոնք խարելն, — Ադամայ ձեռնագրով անոր տուած հպատակութեան երդումն և ապաշաւն, — Աստուծոյ կողմէն հրելտակապետի երևումն, — Մեսիայի գալստեան աւետիսն, Առաջառք պահոց հաստատութիւնն, և հոսկ սպա մարդկութեան՝ սատանայի գերութենէն ազատուիլն՝ թէպէտ և զարգարուած են, բայց բոլորովին խմբագրի կողմէն շինուած պարզ յաւելուածներ չեն տեսնուիր: Հաւանօրէն անուած են, ուղղակի կամ անուղղակի, փոքր Արարածոցի երկրորդ մասէն, որ Βίος Αδάμ ևս կոչուած է, ուսկից օգտուած է և՛ եփկողիմունեան Ալեստարանի հեղինակն: Ասոր ապացոյց դիտել կուտանք, որ յիշեալ կէտերն, — ի բաց առեալ Ադամայ առ սատանայ տուած երդումն, — կը գտնենք նոյնպէս կեղծ Եպիփանի ի Սկզբնագիր Արարածոց մեկնութեան հայերէն թարգմանութեան Ա. զլխու մէջ, տարբեր շարաբանութեամբ: Ես չեմ կարող պնդել, որ Սկզբնագիր Արարածոց անուամբ՝ աւելի փոքր Արարածոց = Λέπτογενεσιςը հասկանալի է, զոր դրած ըլլայ Եպիփան կամ անոր ընդարձակողն իբրև բնագիր իւր մեկնութեան, քան թէ Իրենդոք = Γένεσις. իսկ որովհետև մեկնութեան մէջ կը տեսնուին ասոնց նման գեռ ուրիշ այլ-

1. Այսօր իսկ Հայաստանի ժողովրդեան մէջ կենդանի կը պահուի այս աւանդութիւնս, և այդ հիման վերայ կը վիպեն օղոյ մէջ օձերուն իբրբուս զեմ մղած պատերազմներ ևս, զոր մեք իսկ լսած ենք երբեմն:

և այլ հատուածներ ևս՝ առաջինէն փոխ առնուած. ուրեմն կրնանք եզրակացնել, թէ 312-314 իջի հատուածն, ինչպէս և յաջորդն, կամ ուղղակի Փոքր Արարածոցի բնագրէն յառաջ եկած են, և կամ Եպիփանու միջոցով: Սակայն Յառաջաւոր պաշոց վերաբերեալ տողերն անտարակոյս հայազգի խմբագրի գրչէն ելած է, դիտելով, որ Հայոց համար միայն նշանակութիւն ունէր այդ պահքն, և թէ Զենոր Գլակէն սկսեալ ուրիշ մատենագիրներ ևս խօսած են այդ մասին:

Յաջորդ հատուածն, որուն խորագիրն է՝ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՈՐԳԻՒՅՆ ԱԴՄՄԱՅ՝ ԿԱՅԵՆԻ ԵՒ ԱԲԵՒԻ, շարունակութիւն է անմիջապէս իւր նախորդին. վասն զի անոր վերջընթիւ պարբերութեան վերջ ակնարկուած Յառաջաւորաց պահքն՝ ասոր առաջին պարբերութեան մէջ ևս աչքի զարնող կերպով կրկնուած է, և այս անշուշտ մի և նոյն խմբագրողի ձեռքով: Բ. զի նիւթն իսկ այդպէս կը պահանջէ: Այս գրուածքիս, յէջ 315, Ա. պարբերութեան մէջ՝ Նւայի մասին աւանդած արտասովոր տեղեկութիւնն, այսինքն թէ երեսուն տարին մի անգամ կը ծնանէր, և այն իսկ երկուորեակ արու և էգ, կը գտնենք նա և ուրիշ յայն և ասորի մատենագրաց՝ քով: Այս բանս կարող է յառաջ եկած ըլլալ Ադամգրոց (Liber Poenitentiae Adami) մի ուրիշ տեղոյ թիւր հասկացողութենէն, ուր կ'աւանդուի Ադամայ համար, թէ նա ապրեցաւ 950 տարի, և թէ ունեցաւ 30 ուստերս և 30 դատերս. և իրօք ալ 30×30 կ'ունենանք մերձաւոր թիւն 900. և ասկէց 30 տարի վերջ այլ փոխանակ ծննդեան՝ մահը ժառանգեց, որով լինին 930 տարի կենացն Ադամայ: Յէջ 316-317, Աբելի՝ իւր արիւնարբու եղբոր հետ ըրած սրտաշարժ խօսակցութեան և մահուան նկարագրի այն անսովոր մասն, այսինքն է Կայէնէն խաբուելով որթաւրնկի քով երթալն և անոր պարանաձև ճիւղերով վերէն ի վայր պատատիլն և առ Կայէն ուղղած աղաչանքներն՝ ուրիշ տեղ չենք գրտներ, բայց միայն դարձեալ կեղծ Եպիփանի յիշեալ գրութեան Ա. զլստն մէջ, որուն խորագիրն է՝ Յաղագս ապսևսան Աբելի: Բնականապէս, այս տեղ խնդիր կ'ենէ, թէ արդեօք Եպիփանն, թէ մի աւելի հին գրութիւն եղած է աղբիւր այս հատուածիս: Ըստ իս՝ դժուար է, որ Եպիփան եղած ըլլայ նախկին աղբիւր վերջնոյս. վասն

1. Որպիտեք են Միթողոս, գլ. 5, — Եւտիքիոս Աղեքսանդրացի, Տարեգր. Հա. Գ. էջ 15, — Աբուլֆարաձ, Պատմ. հարստութեանց, էջ 4, — Միք. ասորի, Ժամանակագրութեան, — Սինդեզոս և Կեղրենոս: Ասոնց կը համաձայնին և Վարդան, Մեթ. Այրիվանեցի և Սամուէլ ժամանակագիրք մեր: Հետեւաբար, չին է աւանդութիւնս և եզրայական:

զի բաց յընդհանուր նկարագրէն՝ մասնական տարբերութիւնք իսկ աչքի կը զարնեն երկուստեք: Եպիփանի այս բացատրութիւնս, թէ « Եւ գտեալ ծառ մի կիպրեայ ի ձև խայի » կը պակսի միւսոյն մէջ: Եպիփանու քով գրուած է. « Ի սկզբանէ սատանայ ընկէց ի սիրտ նորա (Կայենի), և առեալ գայլախաղ Հարկանէր զոտս և զձեռս նորա » (Աբելի). իսկ Հատուածիս մէջ կ'ըսուի ընդհակառակն, թէ սատանաներէն մին՝ սուր գայլախաղիւ խողխողեց միւսը, և թէ Կայէն անկէց սովրեցաւ սպաննել զԱբել: Այս տեղոյս յար և նմանը կ'աւանդէ Վարդան՝ ի Մեկն. Արարածոց: Աբելի գայլախաղիւ՝ սպաննուելու մասին՝ կեղծ Աթանաս² Եպիփանին կը համաձայնի. Պիրկի³ Հատուածիս մէջ աւանդածը կը Հաստատէ. վասն զի խօսելով Աբելի թաղման վերայ, կ'ըսէ թէ նախածնողք՝ ազուակերպ սատանայէն սովրեցան զայն, որ սպաննելով իւր ընկերը՝ ծածկեց զայն Հողին տակ: Ուրեմն, առանց ուզելու Հայազգի խմբագրին ուղղակի վերագրել զայդ, պէտք է ըսել, թէ կեղծ Եպիփանէն աւելի՝ Հնագոյն մի այլ աղբրէ յառաջ եկած է այդ Հատուածն, որ ծանօթ էր նաև Պիրկէի: Կայենի եօթնաթիւ պատիժներն յիշուած են նաև Մալալասայ քով, բայց տարբեր կերպով. իսկ մեր Հատուածին մէջ անոնց մասին տրուած ընդարձակ մեկնութիւններն ուրիշ հեղինակի քով բնաւ հանդիպած չեմ. հետևարար, Հայազգի խմբագրին՝ այս տեղ ընդարձակ դեր խաղացած է: Այս Հատուածս վերջապէս սերտ ազդերս ունի նաև Ադամայ և Էշայի ապաշխարոտքեան պատմութեան հետ, զոր կանխաւ նշանակեցինք վենետիկեան Հրատարակութեան 325—336 էջերում: Եւ ստուգիւ, Համեմատելով այդ երկու գրուածներն իրարու հետ, տեսանք որ վերջնոյս մէջ Համառօտիւ կը պարունակուին, — բաց ի Աբելի մահուան պարագաներէն, — նաև Կայենի եօթն պատիժներն, յորոց ոմանք Մալալայի քով, իսկ այլք՝ Հատուածիս մէջ յիշուածներուն հետ նմանութիւն ունին: Իսկ այս բացատրութիւնս, թէ « Այլ և եղջիւր բոշաւս ի ձախատն, զի ընդ որ գնայր՝ եղջիւրն գոչէր և աղաղակէր, բէ գայ Կային եղբայրասպանն », 'բառ առ բառ նոյն է Հատուածիս աւանդածին հետ: Յայսմ միայն կը տարբերին, զի ըստ առաջնոյն՝ Կայենի երբեքալ կեանքը կը Հաշուուի 860 ամբ, իսկ ըստ վերջնոյս՝ 800. սակայն այս տարբե-

1. Այս աւանդութիւնս մինչև ցայսօր իսկ կը շրջի ի բերան Հայ ժողովրդեան. և Շիրակի դաւառին մէջ Սարաձէ ըլլանք կ'անուանեն գայլախաղը:

2. Ա. Անտիոքոս, Խնդիր ԾՁ:

3. S. R. Elieseris C. 20,

բութիւնս կարելի է աւելի գրչութեան, քան թէ բնագրաց արդիւնք համարել: Միով բանիւ, այս գրութեանը մին՝ միւսին ծանօթ ըլլալու էր, և կամ լաւ և՛ երկուքն ևս մի և նոյն հնագոյն և հասարակաց աղբիւրը իրենց դիմաց ունեցած են. վերջնոյս շարադրութիւնն իսկ աւելի հին կ'երևի, այսպէս նաև ձեռագիրն յորում կը պարունակուի այս:

Իսկ թէ ո՞րն էր այն հնագոյն աղբիւրն յորմէ երկաքանչիւրն օգտուած են, դժուար է որոշել: Սակայն Երևանի, զլ Պ. 45, ի Կայէն դրած նշանին հին և նոր մեկնութիւնները, — զորս կը համառօտէ Փարբիկիոս¹, — աչքէ անցընելով՝ կը տեսնենք, որ Հրէից բարունիններն² առաջին անգամ հնարեցին եղջիռի գիւտը եղբայրասպանին ճակատի վերայ: Ինձ յայտնի չէ, թէ բարունին Աբբաս Յոշէ ունեցած է արդեօք իրմէն աւելի հնագոյն հեղինակութիւն. սակայն այս իսկ բաւական է եղբայրացնել, թէ ստուգիւ հայերէն խմբագրութեան մէջ աւանդուածն՝ երբայական աղբիւրէ յառաջ եկած է: Այսմ կը համաձայնին Վարդան՝ ի Մեկնոչքեան Արարածոց, և Մխիթ. Արքիվանեցի: Վերջինս « պիտակոտեալ և զողոյշեալ » կը գրէ, խօսելով Կայենի նշանին վերայ. իսկ Վարդան՝ անվաւերականիս վերը ենթագծեալ խօսքերն առ հասարակ կը կրկնէ նոյնութեամբ:

ՎԱՍՆ ԱԻՆՏԵՆԱՅՆ ՍԵԹԱՅ Խորագրուած հատուածը, — յէջ 349-324, — բաղդատելով Գելասիոսէն յիշուած Liber poenitentiae Adae գրութեան³ հետ, որուն ասորերէնը հրատարակեց Ռընան, յամին 1853, տեսանք, որ շատ մերձաւոր նմանութիւններ ունի անոր Բ. մասին հետ, ուր կը խօսուի նահապետաց վերայ՝ մինչև Նոյի մահը. այնպէս որ կրնանք ըսել, թէ հայն՝ ասոր վերայ յերկրուած է, կամ ըստ ասորական և կամ արարական խմբագրութեան, և կամ ուղղակի Գիտնեսիոս Թէլմահարի քով՝ պահուած հատուկիւր հատուածոց վերայ: Հայերէնն՝ տեղ տեղ նորանոր յաւելուածներով ընդարձակուած է, երբեմն այլ բնագրին հակառակ վարուած: Առաջին կէտով նշանաւոր են, յէջ 344, Բրդ պարբերութիւնն, ուր Կայենի ազգի կամ դստերաց մարդկան կարմրագեղով, սպիտակագեղով, ծարի-

1. Տես. Codex Pseudepigraphus Veter. Test. T. I, p. 114-117, Lipsiae.

2. Տես. R. Abba Jose, Zenorena qu. 42.

3. Ըստ հրատարակութեան Migneի. T. 23, p. 342-359.

4. Տես Chronique, զոր յամին 1850 հրատարակեց Տիւրքերդ՝ յՈւզումար: Գիտնեսիոս Թէլմահարը հայազգի եղած կը համարին Աստեմանի և Միսյէ, և արդած Ը. գրում:

րով և ծամերով, և այլն, գեղերեսիլը կը նկարագրուի ճարտար գըր-
չով, որուն համառօտ յիշատակութիւնն կը գտնուի նա և Եւնովքայ
գրքին մէջ, — և 322 իջի վերջնութեբ պարբերութիւնն, յորում ու-
րագն և կացին և փայտը կ'ազաղակեն, թէ ջրհեղեղ պիտի լինի, —
այսպէս նա և Նոյի՝ հրեշտակին հետ ըրած խօսակցութիւնն և իւր
դատեր Նոյեմզարայի հետ ամուսնանայն: Վերջին աւանդութիւնս
կը գտնեմք Մխիթար Այրիվանեցւոյ, և Միք. Ասորւոյ քով: Իսկ
երկրորդ կէտին օրինակ են 320 իջի վերջին պարբերութիւնն, ուր
Ենովքայ համար ըսուած է, թէ 64 տարի այգեգործութեամբ զրա-
ղելով երբէք չճաշակեց ի պտղոց, — թէ երկաթեայ սաղաւարտ կը
կրէր իւր գլխուն վերայ՝ դէպ ի վեր ծառերու պտուղներուն վերայ
չնայելու համար, — թէ Ենովք կուսակրօնութեամբ անցուց իւր
կեանքը, մինչև որ երկինք վերացաւ, մինչդեռ Ենովքայ գրքին մէջ
ասոր հակառակը կը կարգանք. այսինքն թէ, Սեթեանք անուշա-
հոտ պտուղներով միայն կը կերակրուէին, և թէ Ենովք ինքնին ա-
մուսնացած էր: Այսպէս նա և սասանայի՝ խարէութեամբ Յարե-
թին հանդիպած դէպքն, այսինքն, է Կայինեանց քով տարուելն և
Աստուծով պազշտ կանանց ձեռքէն ազատուելն, հարիւր կիներու
մի ուրիշ վէպի փոխուած է հայերէնին մէջ, որոնք « շրջէին և կը-
ուռէին ի վերայ միոյ մարդոյն և խլէին ի միմեանց »: Այս ամե-
նայն համառօտիւ կ'աւանդէ և Վարդան թէ Պատմութեան և թէ
Արարածոց մեկնութեան մէջ, ըսելով. « Զի քառասուն այր մեռանէր
վասն միոյ կնոջ »: Եւ յէջ 323 վերջի պարբերութիւնն, ուր կը յի-
շուին Ակոռի և Նախիջևան, և Նոյի երկու որդիքն՝ Անտոն և Մա-
նիստան՝. մինչդեռ Ենովքայ գրքին մէջ առաջին երկու անուններն
բնաւ չկան, և փոխանակ վերջիններուն կը յիշուին Սեմ, Քամ և
Յարէթ:

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԱԴԱՄԱՅ ԵՒ ԵԻԱՅԻ Խորա-
գրուած խմբագրութիւն, որ գրուած է վենետիկեան հրատարակու-
թեան 325—330 էջերը, թէպէտ և իւր սկզբնաւորութեամբն և այլ
և այլ կէտերով՝ նոյն կը թուի լինել Պատմադրիսն վարդաց Արամայ

1. Այս անունս կը գտնուի նաև Միք. ասորւոյ քով (Chronique, p. 28. Ve-
nise) Մեթոզիոս Դովածոց կը գրէ. Վարդան, յէջ 9, Մուրադ կը գրէ: Այսպէս
ունի և Մխիթ. Այրիվանեցի:

2. Օրինակի համար, յէջ 525, առաջին սողերն, ուր կ'ըսուի նախածնողաց հա-
մար, թէ արտաբուռուէին վերջ՝ քնակեցան հանդէպ զբախտին, նոյն է Պարտ. վա-
րդաց Արամայ և Ենովքայի նախադրէից 1 իջի առաջին սողերուն հետ. — յէջ 526, Գ.

և իշայի նախաստեղծից անվաւերականին հետ, զոր ընդարձակաբար առումնասիրեցիք արդէն, սակայն իրօք մեծապէս կը տարբերի անկէց: Օրինակի աղագաւ, առաջնոյն՝ այն է Ադամայ ապաշխարութեան մէջ, առ Ադամ՝ և առ Սէթ եկող պատգամաբեր հրեշտակն է Գարբիէլ, մինչդեռ վերջնոյն մէջ Միքայէլ կը յիշուի: Սեթայ վերայ յարձակող գազանն՝ Բեհմոթ¹ կը կոչուի ըստ առաջնոյն, մինչդեռ վերջնոյն մէջ գազանին անունն յիշուած չէ բնաւ: Առաջնոյն մէջ, իջ 326, Գարբիէլ՝ Սեթայ ծնունդը Ադամայ աւետելու եկած ժամանակ, դրախտի ծառերէն ճիւղ մի կ'ընծայէ անոր, և ծնանելի որդւոյն անունն իսկ կը յայտնէ որոշակի. իսկ վերջնոյն մէջ՝ այս երկու պարագայքս կը պակասին: Առաջնոյն մէջ, յէջ 327, մի առ մի կը թուարկին Վայենի 7 պատիժներն, զորս նոյնպէս Վարդանայ Արարածոց մեկնոչքեան մէջ կրկնուած կը գտնենք, զրէթէ նոյնութեամբ. իսկ վերջնոյն մէջ անորոշաբար կ'ըսուի միայն, թէ « Զի նա որդի է կորստեան »: Առաջնոյն մէջ, յէջ 329, Գարբիէլ հրեշտակապետն դրախտի սահմանաց վերայ Սեթայ երևնալով, զԱդամ իբրև արդէն մեռած կը յայտնէ: մինչդեռ վերջնոյն մէջ Միքայէլ կ'ըսէ, թէ « զկնի երկց աւուրց փոխեցի »: Այսպէս նաև 328 իջի այն երկու պարբերութիւններն, ուր կը նկարագրուին նախածնողաց տան ցաւերն, դրախտի դիմաց ըրած ողբն ու լացը, և 330 իջի այն պարբերութիւնն, յորս կը բաղդատուին Ադամայ ստեղծման և մահուան ժամերն՝ Նոյի և ջրհեղեղի արարուածոց հետ, և հուսկ ուրեմն 325-

պարբերութեան մէջ, Աբելի մահուան մասին Եւայի պատմած երազն՝ նոյն է 1-2 իջում աւանդուածին հետ. — յէջ 327, Ա. պարբերութիւնն, ուր կ'ըսուի Աբելի մարտնոյն համար, թէ երբ նախածնողք եկան թաղել զայն, չգտան, « վասն զի ամփոփեալ էր հրեշտակաց Աստուծոյ », նոյն է 21 իջում աւանդուածին հետ. — յէջ 327, Բ. պարբերութեան մէջ, ըստ առաջնոյն՝ Գարբիէլ հրեշտակապետն կը յանձնէ նախաստեղծից, որ Աբելի մահուան համար չհարցնեն զկայէն, նոյնը կը յանձնէ և վերջնոյն մէջ, յէջ 2, Միքայէլ հրեշտակապետն. — յէջ 328, վերջի պարբերութիւնէն մինչև 329 իջի վերջի պարբերութիւնն, ուր կը պատմուի Ադամայ հիւանդութիւնն, որդւոց և թոռանց ժողովին իր քով, — նախածնողաց իրարու հետ ունեցած զգարելի խօսակցութիւնն, — Եւային՝ Սեթայ հետ օծումն ողորմութեան ըրելու համար՝ դրախտ երթան, — զազանի հետ ունեցած պայքարն, — հրեշտակին անոնց երկին և Ադամայ մահը դուժելն՝ ինչ ինչ տարբերութիւններով, նոյ, են Պատմ. պարուց, և ույն, գրութեան 2-3, 5-6 և 15-16 էջերում աւանդուածներուն հետ:

1. Որ յիշուած է, երկիցս, Եզրայ Դ. Գրքի 2. գլխում, իբրև ներկայացուցիչ ցամաքային կենդանեաց կամ չըլքոտանեաց, ինչպէս Լէւիտանայ ժողովայնի կենդանեաց: Անուանքս կը գտնուին նաև Բարուքայ Յայտնութեան մէջ, նոր պարագաներով:

326 իջի այն տեղիքն, յորս կը նկարագրուին կենդանի գոյներով նախաստեղծից դրախտը կորսնցնելուն համար կրած դէմ ընդ դէմ ցաւերն և վերահաս գիշերէն ունեցած երկիւղն, այլովք հանգերձ, տարբեր են միւսէն: Արդ, ի նկատի ունելով երկուտեք եղած համեմատութեան իրարու համաձայնող սեղիքը՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ այս և ասոնց նման անհամաձայնութիւնքը, կրնանք եզրակացնել, թէ այս գրուածքիս գէթ հայերէն խմբագրութիւնն համեմատութեամբ Պատ. մոռթիան վարոզն Արաւայ և Եռայի նախաստեղծից խորագրուածին՝ նոր՝

1. Նոր ըլլալու նշան մ'է յէջ 330 վերջնիցեր պարբերութեան՝ մէջ յիշուած Դամայ տան համար եղած այս բացատրութիւնս՝ հանդերձ մեկնութեամբ. « Որ ոչք ևս կոչի Դամայ տուն, այն է՝ Սեմայ տուն »: Հոս, Սեմայ կու տայ թաղել Եւայի նշխարը՝ « ի յայնն Բեթղահեմի, ուր յետոյ ծնաւ Քրիստոս ի սուրբ կուսէն Մարիայ, ի վերայ գերեզմանին Եւայի. և զԱզամայն՝ եւ ի Գողգոթայ, ուր խաչեցաւ Քրիստոս ի Հեբեցն ի վերայ գլխոյն Ազամայ » և այլն: Սակայն աւանդութիւնս, — Դամ տառադարձութիւնն իսկ յայտնի կը տեսնուի, — սեմական է: Մովսէս Բար կեփա՝ (Commentario de Paradiso՝ P. I, C. 14) Յովթայ Ուսուցչոյցոյ կ'ընծայէ զայն. իսկ Բասիլիոս Սեւեկացի (Ճառ ԼԳ) չրեական կը համարի Ազամայ նշխարանց Գողգոթայ լերան վերայ ամփոփելը, զորս կը թուին ընդունել, նաև Տերտուլիանոս, Ոռոգինէս, Կիլարիանոս, Բարսեղ, Եւսեբիոս, Հերոնիմոս, Ամբրոսիոս, Օգոստինոս և Եպիփան' Սիգնֆօլէ Աբուրձոյ մեկնութեան մէջ ըրած ընդարձակ և չայերէնի նոյնանման՝ կոչումներով կը հաստատէ զայս: Գաթի Անուղի՝ Ե. զարում զրած իւր Նիքիոյն մէջ, յետ յիշելոյ Ազամայ նշխարաց Գողգոթայ լերան վերայ թաղուած լինելու աւանդութիւնը, Եբրայեցոց կ'ընծայէ զայն ուղղակի: Ահաւասիկ նորս խօսքերը. « Արդ, ուրեմն ասելով ինչ՝ աստ իմացի Գողգոթայ, և աստէն խաչելութիւն... Չի գտնուի Գողգոթայ, տեղի կառափելոյ, և չիբ՛ ուղի մարտն՝ յեբրայեցոցն ասոցեալ: Եւ ամենայն անդ է, քանզի բերէ զգազաթն բարձրութիւն սորա, և զկառափնատեղին՝ ձև սորա. իսկ զթաղումն՝ քանզի փայտել Ազամայ վերաւորեցելոյ առ ի նմին իսկ այնուհետև անկեալ՝ ի մեռելոյ է ի համարի. յորոյ վերայ հասանելով յերկրի՝ հրկնայինն Ազամ, զթամաքար զփրկութիւն կամեցալ նորագործել աս թաղելոյ շատայն և հօր (Ազամայ), զյաւերանական: բարձեալ բերէ զարդարութիւն », և այլն: Տասներորդ զարու մի ուրիշ պատմաագիր, այն է Թովմաս Արծրունի, Դաւթէն անորոշակի յիշուած եբրայական աւանդութեան զրաւոր աղբիւրն ևս ցոյց կու տայ մեզ, Գողգոթայի նազոյն աւարուածով ի միասին, այսպէս. « Այլ և զփրկունեայն ասացաք երկրորդի զան քաջի և յայժ հմապաշտնի իմաստասիրութեան, որ յետոյ և նետեղ սուրբ առաքելոցն եղեալ՝ զայլում սասանս ի հնոց հրեականոց նպաստաւորեաց եկեղեցւոյ գեղեցիկ օրինօք, որպէս ուսուցանէ զիրք Եւսեբի կեսարացւոյ, զոր ի Միսոսիտան էբրայականոցն անասնոց ասէ Փիլոն, զսիբրան Աբուրձոյ Բարթեղ Միտայ գրաստու՝ աւրա յերկրի ծառանդութեան իւրոյ, և հասեալ ի Գիլի ոպտատի աստուր՝ անդն զԳողգոթայ և զգրաստն: Աստ զիպուածոցն եղելոց և զանունն ասացեալ տեղի մարոյ, զոր բարբառն եբրայական, իբր ծեցելով իմ զգանն, թուեցուցանէ իմ ասելով. օրիլիմ, այսինքն, Երասուղիմ, որ նոյն ինքն թարգմանի՝ աստու խորտեցոց: իսկ

է, ինչպէս շարաբանութենէն իսկ կը տեսնուի. հետեւաբար կամ ասորական բնագրի վերայ կատարուած տարբեր թարգմանութիւն ըլլալու է, և կամ լաւ ևս առաջնոյն վերայ յետոյ ուրեմն յօրինուած խըմբագրութիւն մի, յորում հեղինակն Ադամայ Ապաշխարոտքեան, այն է, Liber Poenitentiae Adami, կոչուած գրութեան ասորական բնագրէն օժանդակուած՝ նորանոր յաւելուածներ ևս ըրած է, այլևայլ տեղեր ալ նախկին խմբագրութիւնը յապաւած և փոփոխած :

ԲԱՆՔ ԱԳԱՄԱՑ ԱՌ ՍԷԹ խորագրուած պատառիկն, որ կը յաջորդէ նախորդին, թէպէտ և տարբեր գրչագրի մի մէջ գրուած էր առանձինն, սակայն անոր հետ սերտ ազերս ցոյց կու տայ : Օրինակի աղագաւ, 331 իջում կը յիշուի ձիռն ողորմոտքեան, զոր հրեշտակն կու տայ Սեթայ, տանելու առ Ադամ՝ իբրև դեղ և դարման մխիթարութեան. այս նաև ի Պատմոտքեան ապաշխարոտքեան Ադամայ և Եշայի, յէջ 326, ինչպէս տեսանք, յիշուած է տարբեր պարագայով մի. այսինքն է, Սեթայ ծնունդն աւետելու ժամանակ Ադամայ կ'ընծայէ : Այս տարբերութիւնքս՝ դիպուածական շնն կրնար ըլլալ, վասն զի առաջնոյն մէջ այդ ճիւղին ընծայուած է ոչ միայն Ադամայ աչքերը բանալու զօրութիւն մի, այլ մանաւանդ նոյն համարուած է գիտութեան բարւոյ և շարի ծառին հետ, որ աւելի հետաքրքրական է : Այս ծառիս համառօտ նկարագիրը կը գտնենք նաև Ենովքայ Գրքին մէջ, 2, 25, 5, 6, և Եպիփանու՝ Յաղագս Հերձ . I . Գնտու . 8 . գրքում . բայց հայերէնի մէջ նշանակուած պարագայք՝ կը պակասին թէ՛ վերջնոցս և թէ՛ մեզ ծանօթ ուրիշ անկանոն գրոց մէջ :

Երեւ շեփն, յորում նախօրն երան սիբր, կատարման և կառուցման, որ նոյն ինքն է՝ Ի-Ի-Բն և Գոգ-Բնոյ՝ ըրտ Իբրոյ-Իանն երկակի ա՛ուամբ, զոր յափշտակեալ ի Սեմայ՝ որդւոյն Քամայ, շինեցաւ քաղաք նովին անուամբ : Վարդան, ի Միսն-Բիտան Արարձոց, կը գրէ. « Քանզի Սեմ ժառանգեաց զոսկերս նախաստեղծիցն, որ էին ի տապանի անդ, և զի նեղէին զնա որպիքն Քամայ, և ծածկեաց զնոսա ի վիճակի ադ կալուածոց իւրոց ի Գողգոթայ և ի Բեթղ-Հեթ » : Իսկ պատմութեան մէջ, յէջ 9, ընդհակառակն Նոյի չորրորդ որդւոյն Մանիտոնի ձեռքով եղած կը համարի Ադամայ սակերաց փոխադրութիւնը, ասելով. « Եւ Մանիտոնի, որ սասն խնդրեաց յոսկերացն Ադամայ, զոր ունէր Նոյ ի տապանն, և ետ նմա զլստոնս ծնւոցն, և զնաց » : Միւրի՝ Այրիվանեցին՝ այս երկու կէտերովս իսկ կը համաձայնի Վարդանայ : Սակայն պէտք է սասել, որ թէ՛ Վարդան և թէ՛ Այրիվանեցին՝ Միջոյն Ատորոյ ժամանակազրուութենէն առած են Մանիտոնին ընծայուած աւանդութիւնը. և թէ այդ խանգարեալ աւանդութիւնն՝ կեղծ Մեթոդիոսին կը վերաբերի : Իսկ առաջինն, Գողգոթայի արարուածով, Փիլոնէն աւելի չին է, և հաւանօրէն Արարոյ Իրաֆ, կամ Գոձնոց գրէն ծագումն առած է : Դիոնիսիոս Թելմասար՝ իւր ժամանակագրութեան մէջ աւելի բարգաւաճած է զայն :

Մի ուրիշ աղերս այլ վասն աշետեաց Սեբայ հասուածին հետ ակն-
 երև կը տեսնուի. օրինակի աղագաւ, 332 իջի վերջի պարբերու-
 թիւնն՝ Ենովքայ ճգնութեան, այգեգործութեան և 542 տարի ձե-
 ուստունկ գրախտի մէջ ապրելու մասին՝ նման է վասն աշետեաց
 Սեբայ խորագրուածի 321 իջում աւանդածին: Բայց ասով հանգերձ՝
 դժուար է, որ առաջինը՝ վերջնոյս իբրև շարունակութիւն եղած ը-
 լայ. որովհետև այն տեղ, յէջ 332, ինչ որ կը պատմուի ի դիմաց Սե-
 թայ՝ Ենովքայ արգելեալ պտուղը ճաշակելու և տրամութեան մա-
 սին՝ նոյնը ընդարձակաբար պատմուած կը գտնենք նոյնպէս վասն
 աշետեաց Սեբայ խորագրուած հասուածի 320 իջում: Ուրեմն կամ
 այն է, որ այս երկու հասուածներս՝ իրարմէ տարբեր բնագրերէ թարգ-
 մանուած են, և կամ վասն աշետեաց Սեբայ խորագրուածն՝ Բանք
 Արամայ աւ Սեբ խորագրուածին վերայ ընդարձակուած է: Առա-
 ջին ենթադրութիւնն աւելի հիմնաւոր կը թուի ինձ, դիտելով նախ,
 որ վասն աշետեաց Սեբայ գրութեան 321-322 իջում՝ Սեթեանց,
 Կայէնեանց և Նոյի պատմութեան առաջին մասն՝ Պատմոռքիւն ապաշ-
 խարոռքեան Արամայ կոչուած գրութենէն օժանդակուած է: Բ. Նա-
 րարանութեամբ իսկ իրարմէ կը տարբերին: Բանք Արամայ աւ Սեբ՝
 թէպէտ և պարունակութեան կողմանէ աղքատ է, սակայն իբրև
 թարգմանութիւն աւելի հին է քան զմիւսն, և կրնանք զետեղել
 Պատմ. ապաշխ. Արամայ խորագրուած հայ. թարգմանութեան 330րդ
 իջում: Մեր մատենագրարանի Ին. Ոսկեփորիկին մէջ կը հանդիպինք
 հորց ու պատասխանի ձևով անանուն գրութեան մէջ, — զոր ես կամ
 Գր. Տաթևացոյ և կամ Վարդանայ կը համարիմ Ադամայ և Ենով-
 քայ մասին հետևեալ հատուածը « Ենովք՝ որդի որդւոյ, որդի չոր-
 րորդ Ադամայ, ետես զԱդամ (դի) աղիողորմ արտասուօք և բարձր ձայ-
 նիւ լայր զանձն իւր, յորժամ յիշէր զգեղեցկութիւն գրախտին և
 զանկարի կեանս, զոր ունէր, ասէ ցԱդամ. Հայր, էր այսպէս կոծիս
 և լաս հանապաղ: Ասէ Ադամ. Որդեակ, մարդ էի՝ անարատ ձեռինն
 Աստուծոյ ստեղծուած, և յաղազս դուզնաքեայ պտղոյն՝ այսպիսի ա-
 նիծեալք դատապարտեցայ: Ասէ Ենովք. Վասն ի՞նչ պատճառի կե-
 րայք: Ասէ Ադամ. Վասն աստուածանալոյ: Ասէ Ենովք, թէ դուք
 վասն պտղոյն դատապարտեցայք, ես յերկրէ պտուղ ո՛չ կերայց. և
 դուք կամեցայք աստուածանալ, ես քանի յերկրի լինիմ՝ աչք իմ
 զերկինս մի՛ տեսցեն: ՅԿԵ ամ յերկրի եղև արգարն, և ոչ ետես
 զերկինս և պտուղ ոչ եկեր »:

Գիտել կու տանք, որ հասուածիս առաջին մասն, որ Ադամայ

վարուց պատմութեան մէջ՝ Յ իջի Սեթայ բերանը գրուած . « Ո՛վ Հայր իմ, զի՛նչ է Հիւանդութիւն խօթութեանս քո », և այլն, Հատուածին Հետ նոյն է . իսկ վերջին մասն՝ Բանք Աղամայ առ Սեթ գրութեան 320 իջի՝ « Ենովք եհարց ի Հօրէն », և այլն, Հատուածին, և Վասն աւետեաց Սեթայ գրութեան 332 իջի՝ « Ենովս խօսեցաւ և ասէ . Այսպէս ասէր Հայրն իմ », և այլն, Հատուածին նման է : Արդ, անանուան մէջ բերուած Հատուածն՝ ըստ քմաց յեղափոխուած չէ, կը թուի ցոյց առ մեզ Ենովքայ Գիրքը իբրև սկզբնական աղբիւր նաև յիշեալ Հատուածոց :

Ուստի Հայերէն Աղամգրոց վերայ մինչև ցարդ ըրած քննութիւններս ամփոփելով ի մի բան, կրնանք եզրակացնել, թէ այդ անվաւեր գրութիւնն, — բոլոր իւր Հին մնացորդներովն և նորակերտ խմբագրութեամբք, — թէպէտև չի ներկայացներ մեզ նախկին Աղամգիրքը, կամ լաւ ևս Սինգեղոսէն յիշուած Δέπτη Γένεσις և Βίος Ἀδάμ երկամասն գրութիւնը ամբողջապէս, սակայն և այնպէս կու տայ շահագրգիռ նորութիւններ, որոնք կը ծառայեն ոչ միայն լուսարանել և պարզել ուրիշ խմբագրութեանց գաղտնիքը, այլ նոյն իսկ չափով մի վերակազմել անյայտացած սկզբնագիրը :

Ուզելով երկու խօսք ալ ըսել Աղամգրոց Հայկական թարգմանութեան և անոր ժամանակի մասին՝ դժուարութեան երկու անանցանելի լեռներ կանգնած կը տեսնեմ իմ առջև . այսինքն են, մէկ կողմէն Բ և Գ . օրինակներուն, և միւս կողմէն այլ Ա . օրինակի ներկայացուցած խմբագրութիւններն, որոնք, արդէն ինչպէս տեսանք, իրարու Հետ ունեցած սերտ աղերսներով Հանդերձ, այնքան և այնպիսի տարբերութիւններ ևս ունին իրարմէ, որով դժուար կը լինի զանոնք մի և նոյն ժամանակի մէջ, մի և նոյն անձի ձեռքով և մի և նոյն բնագրի վերայ կատարուած ընդունել : Ասկէ դուրս՝ մի ուրիշ դժուարութիւն այլ՝ իրարմէ տարբերխորագրերու ներքև ծածկուած այն Հնգաթիւ պատահիկները դիմացնիս կը Հաննն, որոց որպիսութեան և աղբերաց մասին միայն խօսեցանք առանձինն ի վերջ գրութեանս : Սոցա թարգմանութեան ժամանակն, — գէթ Վարդանայ Այգեկցոյ խմբագրութենէն դատելով, — ժԳ—Ժ դար Հազիւ կարելի է դնել : Ուստի մենք մեր ըսելիքը պիտի մասնաւորենք Պատմաբան վարուցն Աղամայ և Եռայի նախաստեղծից թարգմանութեան վերայ :

Արդ, ինչպէս կանխաւ ծանուցինք, Բ . օրինակի մէջ, այս վերնագրիս անմիջապէս կից, կը կարդացուի Հետևեալ յայտարարութիւնն .

« Զոր թարգմանեաց հոգևոր Տէրն Սիմէոն՝ յերուսաղէմ » : Դիտել կու տանք, որ այս նորաձև յիշատակարանն՝ ստուգիւ յիշատակարան չէ, այլ յիշատակութիւն Սիմոնի անուամբ՝ ի վերջ կոյս անվաւերականիս դրուած, և հաւանօրէն աւելի ընդարձակ պարագաներ յայտնող յիշատակարանի մի, — զոր տեսած էր ընթերցողն, — Հնագոյն օրինակին մէջ, ուսկից վերջինս ընդօրինակեցաւ : Անտարակոյս, կարևոր կէտ մ'է մեզ համար գիտնալ, թէ յիշեալ գրութիւնն՝ ստուգիւ Երուսաղէմ կատարուած թարգմանութիւն է, և ոչ թէ ըստ կամս յերիւրուած խմբագրութիւն է : Իսկ թէ ո՞վ էր Երուսաղէմ գտնուող այդ Սիմէոնն, ի՞նչ ժամանակի մէջ կ'ապրէր, և թէ ի՞նչ լեզուէ թարգմանեց զայն ի հայ բարբառ, ահաւասիկ կ'նճիոն, որուն մէջ ծրարուած է թարգմանութեանս տարեթիւն : Զանանք մեր կրցածին չափ լուծել այդ կ'նճիուր :

Արդ, տիտղոսի հոգևոր Տէր բացատրութիւնն՝ բացառութեամբ միայն կաթողիկոսաց կը տրուէր ի հնումն, որուն և մեր նախնեաց քով օրինակներ չեն պակիր¹. Հետևաբար, այդ տիտղոսը կրող Սիմէոնն ևս՝ կաթողիկոս ըլլալու էր : Մեր եկեղեցական պատմութեան մէջ, — մինչև Զուղայեցին, — Սիմէոն անուամբ ուրիշ կաթողիկոս յիշուած չէ, իսկ վերջինս ալ անտեղի կը լինէր ընդունել իբրև թարգմանիչ Պատմաբան վարոց Սիմեոնի : Երայի նախաստեղծից, որովհետև՝ այդ գրութիւնը պարունակող ձեռագիրք իսկ՝ դարեր յառաջ դրուած են քան զՍիմէոն Կաթողիկոս Զուղայեցի :

Ծանօթ են ինձ ուրիշ երկու Սիմէոններ ևս, որոց միոյն անուամբ ունինք. « Ասացեալ պատճառս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և թէ որպէս կարգեաց զյիշատակ սուրբ Մկրտչին և կարապետին Յովհաննու ընդ նմին և զԱթանազիոնէ », խորագրեալ գրութիւնը, յորում ինքն իսկ մակագրուած է այսպէս. Երանեղոյն Սիմեոնի սուրբ և ընտրեալ վարդապետի : Իսկ միւսն՝ Աղձնեցի եպիսկոպոս կը յորդրի, և ծանօթ է մեզ՝ վասն արքեպոստոս գինեմոսոս և պոսեպոս գրած երկու ճառերով, որոնք կը գտնուին մեր մատենադարանի ԼԳ. ձառքնարի մէջ : Այս տիտղոսներէս առաջինն՝ եթէ ունի վաւերական զօրութիւն, պէտք է ըսել, որ վերոյիշեալէն բոլորովին տարբեր է. Հետևաբար, վարդապետ տիտղոսը կրող այս Սիմէոնն՝ չի կրնար նոյն եղած ըլլալ հոգևոր Տէր տիտղոսը կրող Սիմէոնի հետ, այլ Ը. դարէն վերջ ապրող մի այլ վանական վարդապետ է : Ասոր

1. Օրինակ իմ, յամի Տեառն 1284 դրուած Ժամագրի մի յիշատակարանին մէջ կ'ըսուի. « Աւգնեա հոգևոր տիտղոս և թագաւորին մերոյ և զօրաց իւրոց » :

յայնի ապացոյց են՝ մէկ կողմէն անոր գրութեան ոճն, որ ժ. դա-
րու աիպ ունի, իսկ միւս կողմէն այլ Մ. Վաղանկատուացիէն, Խորե-
նացիէն և Զենոր Գլակէն փոխ առեալ տեղիքն, զորս կը գտնենք
անոր մակագրուած յիշեալ գրութեան մէջ: Իսկ գալով երկրորդին,
այն է Աղձնեցի Սիմէոնին, անհիմն չէ նոյն համարել Սիոնի Վաթո-
ղիկոսի հետ, որ վրիպակաւ գրչաց՝ Սիմոնի կամ Սիմէոնի փոխուած
է Ազամգրոց խորագրի մէջ: Եւ ասոր ի հաստատութիւն՝ գիտել կու
տանք նախ, որ ըստ վկայութեան Յովհ. պատմաբան՝ կաթողիկոսի,
Սիոն կաթողիկոս՝ էր յառաջագոյն եպիսկոպոս Աղձնեաց, և իրօք
Միք. Ասորոյ ժամանակագրութեան վերջ զետեղուած եպիսկոպոսաց
և կաթողիկոսաց ցանկին մէջ իսկ Աղձնեցի կ'անուանի: Բ. հոգևոր
Տէր մակդիրն իսկ աւելի Սիոնի՝ քան թէ մի սոսկական Սիմէոն
վարդապետի կը յարմարի:

Սիոն կաթողիկոսին յերուսաղէմ երթալուն և Ադամայ պատ-
մութիւնը հոն թարգմանելուն ի հաստատութիւն՝ պատմական վը-
կայութիւններ չկան. սակայն ունինք հետեւեալ կուուանները, այսինքն
է, նախ պիտակ անունս՝ Սիոն՝ Երուսաղեմի Սիոն լեռնէն առնուած և
ի գործ ածուած, ուր Գ. դարէն ի վեր կը գտնուէին հայ վանորայք
և յետոյ եպիսկոպոսարան ևս, որոնք հաւանօրէն Աղձնեաց թեմա-
կան եպիսկոպոսի հետ, իրրև մերձասահման, սերտ յարաբերու-
թիւններ ունէին: Երկրորդ, գիտել կու տանք, որ Բ. օրինակին, այն
է ԼԳ. ձառընտրի մէջ, Սիմէոնի Աղձնեցոյ վերը յիշուած երկու ճառե-
րուն անմիջապէս կը յաջորդէ Պատմ. վարոց Ադամայ, և այլն, գրուածն
որոյ լեզուն և ոճն՝ նման է նախընթացի լեզուին և ոճին: Իսկ ո-
րովհետև Սիմէոն կամ Սիոն Աղձնեցի կ'ապրէր փրկչական թուականին
758-776 ամաց մէջ. ուրեմն այս անվաւեր գրոց թարգմանութիւն
ևս, ըստ Բ և Գ. օրինակաց, այս ժամանակամիջոցիս կոտարուած
ըլլալու էր, եթէ ճիշդ է Սիմէոն և Սիոն անուանց մասին մեր տուած
մեկնութիւնն:

Միւրթար Այրիվանեցիին մի ուրիշ գաղտնիք ևս կը պարզէ մեզ
այս նկատմամբ, որ արժանի է լուրջ ուշադրութեան: Եւսմանա-
կազիրս՝ ցոյց կու տայ մեզ, ի թուին Հայոց ՆԺ = 961, Սիմէոն
անունով մի ուրիշ վանական, որ Վասպուրականի Սենեքերիմ թա-
զաւորի հրամանով կը յօրինէ 151 զլուիս կամ ճառ Արամգիրքն:
Ահաւասիկ նորա խօսքերն. « Եւ սուրբ Հայրն Աստմ Վարագեցի ըզ-

Հոռոմագիրն (այսինքն է սրբոց օտոները կամ Յայսմաուրբը) կարգաւորէր, իսկ ՀԱՅՐՆ ՍԻՄԷՈՆ՝ արար զԱդամգիրքն՝ ձԾԱ ճառ, ի ինդրոյ Սենեքերիմայ Թագաւորին Վասպուրականի» :

Արդ, Այրիվանեցոյն արար բառովը կարելի է թէ՛ պարզ Թարգմանութիւն հասկանալ և թէ՛ խմբագրութիւն մի Ադամգրոց, այս մեզ համար երկրորդական նշանակութիւն ունի. կարևոր կէտն այն է, որ ինչպէս այստեղ յիշուած 151 գիտուիներէ բաղկացած Ադամգիրքն՝ գլխովին տարբեր է Բ. օրինակի ներկայացուցած Փատմութիւն վարդապետ Ստեփանոսի և Եռայի նախաստեղծից խորագրուածէն, այսպէս և սորա Թարգմանող կամ խմբագրող Սիմէոնը՝ տարբեր ըլլալու է վերը յիշուածէն: Առաջին կէտով՝ Թ. դարում ունեցած ենք Հայերէն խմբագրութեամբ այնպիսի ընդարձակ և ճոխ պարունակութիւն ունեցող մի Ադամգիրք, որ կը ներկայացնէր կամ Ասորիքի սարգէյեան և մանդայեան քրիստոնեայ աղանդաւորաց այն սրբազան գիրքը, զոր յամին 1815-1816 հրատարակեց Մ. Նորբէրը, Սպարապետ Ստեփանոսի խորագրուածին հետ, և կամ լաւ ևս Գեղարտուէն և Սինգեղոսէն յիշուած Liber Adami sive Leptogenesisը՝ իւր ամբողջութեամբ, որոյ որքան ցաւալի է կորուստն՝ այնքան ևս ուրախալի պիտի լինի վերայայտնութիւնն: Այս ըլլալու է հաւանօրէն Սարկաւազ վարդապետի ցանկին մէջ յիշուած Ադամգիրքն, և թէ Այրիվանեցին իսկ զայն տեսնելու բաղղն ունեցած էր. այլապէ՞ զժուար է, որ այն գրութեան 151 ճառերէ բաղկացած լինելը գիտնար:

Այս Թարգմանութեան ձեռքով մասամբ մի պարզուած կը լինի նա և Ա. օրինակի՝ միւսներէն ունեցած այն ամենամեծ տարբերութեանց գաղտնիքը, զոր կանխաւ նշանակեցիքք. այսինքն է, այս սակաւին մեզ անծանօթ խմբագրութեանս, — որ սակայն այժմեան յունարէն Διήγησις πηρι τῆς πολιτείας Ἀδάμ καὶ Εὐδασէն կը տարբերէր ըստ քանակութեան, — իրրև մնացորդ համարելի են, ոչ միայն Ա. օրինակի ներկայացուցած խմբագրութիւնն, այլ նոյն իսկ միւս Հնգաթիւ հատուածներն և այլք, որոնք Վարդանայ Այգեկցոյ և կեղծ Եպիփանի կամ Հայազգի յարասողի¹ քով կը գտնուին, ցիր ու ցան եղած կերպով, և անոնց գրչի ներքև փոփոխուած են՝ երկրորդ անգամ:

1. Որոյ լեզուն՝ մեծ նմանութիւն ունի Սիմոն վարդապետի յեշուայ գրութեան լեզուին նա. ուստի Սիմոնը կարելի է, հեղինակ համարել նաև կեղծ Եպիփանի Արարածոյ Բիւնութեան:

Այսպիսի մի եզրակացութիւն Հանել կարելի էր ըստ ինքեան աւերի ի նպաստ Բ. օրինակի ներկայացուցած խմբագրութեանն, որուն թարգմանիչն ևս Սիմէոն կոչուած է որոշակի. բայց որովհետև այս՝ իբրև թարգմանութիւն կատարուած է յունարէն Διήγησις վերայ, ինչպէս ցուցինք կանխաւ, և միւս կողմէն այլ մեծապէս կը տարբերի Ա. օրինակի խմբագրութեանն, ահա այս պատճառաւ իսկ՝ ինչպէս Բ. օրինակի մէջ յիշուած Սիմէոնն՝ այսպէս և անոր ձեռքով մեզ ծանօթ Պատմ. վարպէ Ստանայ, և այլն, խմբագրութիւնը՝ չենք կրնար Այրիվանեցիէն յիշուած Թ. դարու Սիմէոնի և անոր ձեռքով եղած Արամգրքի ընդարձակածաւալ խմբագրութեան Հետ իբրև նոյն ընդունել, մինչև որ նորանոր յայտնութիւնք ուրիշ կերպով պարզեն ինդիբրը:

Թարգմանութեան լեզուն, — ըստ Բ և Գ. օրինակաց, — թէ և Համեմատարար մաքուր է, և կարծէք թէ մասնաւոր ջանք մ'իսկ եղած է թարգմանչի կողմէն ըստ կարելւոյն Մենդոց գրքի լեզուին նմանեցնել, յաճախ ի գործ ածելով անոր բառերն և բացատրութիւնքը. սակայն և այնպէս այնքան Հեռի է առաջնոյն մէջ գործածուած լեզուն՝ վերջնոյս լեզուական վսեմութեանն, որքան անոր անկանոն բնագիրն՝ Ս. Գրքէն: Նմանողութեան այս վարկպարագի տենչս՝ մղած է զթարգմանիչն՝ ուրեք ուրեք մեղանչել ընդդէմ թարգմանչաց բնագրին, և երբեմն այլ անկէջ զարտուղի՝: Բայց այսու Հանդերձ՝ նա զերծ մնաւ.

1. Այս երկու հետերս իսկ կարելի էր ակներև ընել մանրամասն Համեմատութիւններով, սակայն ի սէր Համոտութեան՝ ևս կը շատանամ այս սեղ մի քանիսը միայն մէջ բերել: Օրինակի աղագաւ, Ս. Գրոց նմանութեամբ է, որ յէջ 1 յոյն բնագրի յատճ ծոպ տիլ նստիլ, թարգմանուած է՝ « ի տեսեան յայտ գիշերի » . — յէջ 2, γυν 'Αδάμ τήν γυναίκα αυτού = « Մերնոս Ալամ յԵս կին իւր » . — յէջ 3, μη ἐμνήσθης τοῦ παραδείσου. = « Միբի գմտաւ ածեալ եցես գլխիւն իւրիւ լաբեան գրախտին Արտոնոյ » . — յէջ 5, "ελαιον = « Օծուած ողորմութեան » փոխանակ չիբոյ, — տիլ ἐντολήν νοῦ Θεοῦ = « Զգահպանութեան Տեառն Աստուծոյ » փոխ. պատուիրանի. — περὶ τοῦ ξύλου ἐν ᾧ ῥέει ἔλαιον = « յաղագս (սանրոյ) յօճմանէ ծառոյն ողորմութեան », փոխ. վանս փայտին՝ յորմէ ելանէ օծուած կամ ձեթ, — ἐπιληρωθή τοῦ μετρον τῆς ξωῆς αὐτου = « Վերժանելու ի ծառանոյս կէնաց իւրոց », փոխ. թարգմանիչու՝ իւր զաւ. — ἐξερχομένης δὲ τῆς ψυχῆς αὐτου μέλλεις θεάσασθαι τήν ἄνοδον αὐτῆς φοβερὰν = « Երբ տեսնես զվերջութեան նոր փոխարէ և սուկալի » . — յէջ 9, κεφαλή ἁμαρτίας = « Առաջարկ մեղաց », — καὶ ἔκλινα τὸν κλάδον ἐπὶ τῆν γῆν = « Եւ իւրեւ նոր գէղոյ ծառոյն փոխութեան, և խնարհեցուցանէր յերկրի », — յէջ 15, μη ἐγκαταλιπεῖν τὸ ἀγαθὸν ἑστραφέν ἔνδερον = « Մի և դուրս զրկուիք ի ծառոյն Արտոնոյ », — ἢ πόσον χρόνον ἔχω ποιῆσαι μετὰ τὸ ἀποθανεῖν σε = « Եւ կամ քանի՞ ժամանակ դուրս գնես վախճանելոյց

ցած չէ յունարանութիւններէ, թէպէտև այդ յունարանութիւններն՝ համեմատութեամբ նեմեսիոսի և Նիւսացոյ Մարդակազմոտքեան թարգմանութեան՝ շատ աւելի նուազ են և ոչ այնքան զգալի: Արդ, մէկ կողմէն այս առաւելութիւնս, և միւս կողմէն այլ նուազութիւնք բարդ և նորակազմ բառից՝ կարծէք թէ Ը. դարէն աւելի հին եղած ցոյց կու տան նորա շարադրութիւնը:

Անվաներական գրոշածքիս ազդեցութիւնն. — Գրութեան մի՝ այս ինչ կամ այն ժողովրդեան վերայ ունենալիք ազդեցութիւնն՝ ընդհանրապէս նիւթէն աւելի՝ գրողի հանճարոյն կ'ընծայուի. սակայն այս տեղ ընդհակառակն բոլորը նիւթին և հնութեան ընծայելի է: Իսկ արդ Ադամգրոց նիւթն կամ դիւցազունքն ըլլալով բովանդակ մարդկութեան նախածնողք, հետևաբար պէտք է, որ այդ գրութիւնն ևս Արևելքի և Արևմուտքի բոլոր ժողովրդոց վերայ աւելի կամ պակաս ազդեցութիւն ունենար, առանց խտրութեան Հրէի և Հեթանոսի, քրիստոնէի և մահմէտականի: Այսպիսի մի ազդեցութեան յայտնի ապացոյց են իրարմէ այնքան տարբեր տիտղոսներով խմբագրուած Ադամգիրքն, որոց մասին փոքր ի շատէ գաղափար տուինք մեր այս Ուսումնասիրութեան մէջ, և բոլոր այն առասպելաբանութիւններն, որոնցմով լի են Թարգմուտի և Թարգումի, Դուրանի և ուրիշ միջնադարեան գրութիւններ և ժամանակագրութիւնք: Այս մասին Փարրիկիոս, Գիլման, Ռընան և անվաւեր գրութիւնն ուսումնասիրող ուրիշ գիտնականներ՝ արդէն պէտք եղած տեղեկութիւնները տուած են, և փափագողք կարեն ուղղակի անոնց դիմել: Իսկ մենք այստեղ կ'ուզենք համառօտիւ նշանակել միայն, թէ որ ժամանակէն սկսեալ և ի՞նչքան ազդեցութիւն ունեցած է նոյն իսկ Հայկական գրականութեան և Հայ ժողովրդեան մէջ:

քում» . — յէջ 16, ἄρμα φωτός = «Կառս հրէի» փոխ. լուսեղիներ, — τὴν δόξαν αὐτῶν = «ԶԼայիլութեան փառաց նոր» փոխ. զփառս նոցա. — յէջ 18 Ատեռնեան լիւր Ἀχέρουσαν λίμην, Գով. Գայանութեան նմանողութեամբ «ժողն անձեռագործ» թարգմանուած է, — δεσπότης քո փոխ. տիրոջ՝ «հայր», — τοῦ οἰκονομίας μου = «Մէջի նորիւն» փոխ. այցելութեան խմում, — Χερουβίμ = «Արուբէք» . — յէջ 20, ἀρχὴν = «Փառս», փոխ. իշխանութեան. — յէջ 21, καὶ ἀπέστειλεν = «Իւ հրաման եւ զի երթեալ», փոխ. առաքեաց ի, — ἐκάλεσεν = «ձայն եւ», փոխ. կոչեաց ի. — յէջ 22, δεσποτά μου, κύριε καὶ Θεὲ πάσης ἀρετῆς = «Տէր Աստուծոյ մերոյ և բարի ամենայն բարեքոյ», — Θεὲ τῶν ἀπάντων = շաղկերասութեամբ «Ո՛վ Տէր ի՛նչ և Աստուած ամենեցուն», — παρέδωκε τῷ Θεῷ τὸ πνεῦμα αὐτῆς = «Աւանդելով զհոգին իւր ի նոր հրէական» փոխ. առ Աստուած կամ Աստուծոյ՝ թարգմանելու:

Քրիստոնեայ Հայաստանն՝ նոյն իսկ առաջին դարերում սերտ յարաբերութիւններ ունենալով Ասորիքի և Պաղեստինու հետ, որոնք ոչ միայն իբրև նախկին խանձարուրք, այլ և վառարաններ էին քրիստոնեական աւանդութեանց, բնականաբար այլևայլ վէպեր և բերանացի գրոյցներ ժառանգած ըլլալու էր անոնցմէ՝ իր եղբմական երկրի նախարանակ նախաստեղծից երջանիկ և ապերջանիկ անցից, ապաշարութեան, ծննդոց և մահուան վերաբերեալ, թէպէտև մենք մինչև այսօր դեռ ժողովրդական այս տեսակ կենդանի գրոյցներու հաւաքողներ և ուսումնասիրողներ չենք ունեցած ղժբաղղաբար: Իսկ գրականութեան մէջ՝ Ն. դարէն սկսեալ մինչև Ը և Թ դարեր տակաւին չեն տեսնուիր Ադամգրքի հետքեր, կամ խիստ ցանցաւ՝ և այն իսկ՝ եկեղեցական Հարց գործերու թարգմանութեանց միջոցաւ, և յաճախ քրիստոնէական կերպարստանաց և հակազդեցութեան ներքև, զորս բազմիցս առիթ ունեցանք նշանակելու: Այս բանիս զլիսաւոր պատճառն այն է, որ Ս. Գիրքն ըլլալով իբրև անսուտ պատգամ յայտնեալ ճմարտութեանց, մատենագիրք աւ հասարակ՝ անով միայն կը զբաղէին և կը զբաղեցնէին զժողովուրդը. և այն ամէն նորութիւն, որ Մենդոց զբէն գուրս և անոր աւանդուածներուն դէմ՝ կ'երևէր, ոչ միայն ներելի չէր, այլ կարի զգուշալի: Սակայն է. դարէն վերջ, երբ ասորի, արաբացի և յոյն ժամանակագրաց ձեռքով սարածուեցան անվաւերական գրութիւնք բոլոր արևելից և բիւզանդական պետութեան ընդարձակ սահմաններուն վերայ, այն օրերէն ի վեր Ադամգրոց ազդեցութիւնն սկսաւ հետզհետէ աւելի զգալի ըլլալ նա և հայկական գրականութեան և ժողովրդեան մէջ: Այնպէս որ, կեղծ Եպիփանու Արարածոց խըմբագրութեան հայազգի հեղինակն, Վարդան Արևելցոյ՝ Արարածոց Մեկնաբան և պատմութեան մէջ, Սամուէլ Անեցոյ, Մխիթ. Այրիվանեցոյ, Միք. Ասորոյ, Մխիթար Անեցոյ, Ստեփանոս Օրպէլեանի, Յայամաւուրքներու² և ուրիշ գրուածոց մէջ ակնկրև կը տես-

1. Եղբէէէ՝ Արարածոց Բեթու-Յեան մէջ օձին համար զբաժն. «Ամլ Բեան սանիբ, որով խոստացաւ չարն՝ որ յերկնից անկաւ, աննել զնա կառք թեւաւորս, և թաւաւորի ի վերայ երկրի. վասն այնորիկ եհատ (Աստուած) զթեւ նորս, զի և նեկան ի նմա նովաւ սողոսկեացի ի վերայ երկրի և կցորդեսցի լիզողին զհող», Առածաբոց ներշնչութիւն է անսարակոյս, զոր նշանակեցիւք կանխաւ 308րդ իշի ստուածին մէջ. վասն զի Մենդոցի մէջ կ'ըսուէր միայն. «Օձն էր իմաստաւազոյն քոն զամենայն զազա ս»: Այսպէս նաև երգեցեցուցչակա՝ գրուածոց մէջ, օջն Բըււււ, օջն Երմոհայեոց, օջն սփոռաւորեոս, և այլն և այլն: Տես ընդարձակազոյն «Եկեղեցիքնք» Հ. Աւիշանի՝ Հին հասարակ Հայոց գրութեան մէջ, յէջ 149—155:

2. Որոց ոմանց մէջ Յունուար 17ին զեանդուած է նախահաբց յեշտակն, և բաւալոց՝ Մարտի 1ին և 14ին:

նուին, իրարմէ աւելի կամ պակաս, փոխառութիւններ Ադամգրքէն: Եւ այդ փոխառութիւնք, մենք ինչ քան դիտեցինք, կը կայանան հետեւեալ նիւթերուն մէջ. այսինքն է՝ Ադամայ իւր ստեղծուելէն 40 օր վերջ դրախտի մէջ գրուիլն, — խարոզ օձին թեւաւոր լինելն, — Եւային՝ խարուելէն յառաջ դրախտէն դուրս դեգերիլն, — նախա-
ծնողաց արտաքսուելէն վերջ 30 տարին միանգամ երկուորեակ ծնա-
նիլն և ապաշխարութիւնն, — 30 ուտերս և 30 դատերս ունենալն. — Արեւի՝ Կայենի ձեռքով ծառին կապուիլն և ագռաւակերպ սատանայի
ցոյց տուած գայլախաղիւ մորթուիլն, — Կայենի եօթն յանցանքնե-
րն և եօթնաթիւ պատժոց թուարկութիւնը, — Կայենի ճակատին
վերայ բուսած եղիւրն, և ամենուրեք անոր հանած աղաղակը, թէ
ահա գայ եղբայրասպանն, — Սեմայ ձեռքով Ադամայ նշխարաց փո-
խադրուիլն ի Գողգոթա, և Եւային՝ յայրն Բեթղէհեմի, այլովք հանդերձ:
Այս նիւթերուս վերաբերեալ հատուածներն կարելի էր մի առ մի
մէջ բերել վերոյիշեալ գրուածներէն և համեմատել Ադամգրոց յի-
շեալ հատուածոց հետ, բայց որովհետև այդու Ուսումնասիրութիւնս
չատ պիտի ընդարձակուէր, ուստի զանց ըրինք:

Նշանաւոր ըլլալու էին, նկատմամբ այս կէտերուս, Ստ. Սիւնեցոյն
Ը. դարում յօրինած Արարածոց Մեկնոտրիւնն, որուն համար կը
գրէ Օրպելեան պատմիչն, թէ « Մեկնեաց զԱրարածքն... որոյ բան-
քն նշանաւոր ի մէջ այլոց մեկնչաց՝ փայլեն որպէս ջահ պայծառ », և Փ. դարու մի ուրիշ համբաւաւոր վարդապետի, այն է, Տիմոթէոսի՝
Արարածոց մեկնոտրիւնն. բայց զժբաղդարար երկուքն ևս ձեռ-
քերնիս հասած չեն: Ադամայ և Եւայի կտակի ներշնչութիւն պէտք
է համարել նոյնպէս Մխիթար Գօշի՝ Ողբ ի վերայ բնոտրեանս՝ ի
դիւնաց Ադամայ առ որդիս իւր, և ի դիւնաց Եւայի առ դուտերս իւր՝
խորագրուած գրութիւնն, զոր կը յիշէ Կիրակոս², անոր անյայտա-
ցած երկասիրութեանց շարքին մէջ. այսպէս նա և Փն, դարում ա-
պրող Առաքել վարդապետի Սիւնեցոյ՝ չափով գրուած Ադամգիրքն³,
զոր աչքէ անցնելով տեսանք, որ վերոյիշեալ և դեռ ուրիշ կէտերու
մէջ լաւ կը համաձայնի մեր ուսումնասիրած հին Ադամգրքին: Եթէ
ուշի ուշով աչքէ անցունին մեր արդիւնաշատ նախնեաց բոլոր զըր-

1. Զոր կը յիշէ վարդան Բարձրբերդցի՝ իւր Հնգամարտի Մեկնութեան մէջ՝ զո-
վեասիւք:


2. Տես սուղագրութիւն վէնեակոյ 1865, յէջ 115:

3. Որ երկու անգամ սուղագրուած է, առաջինն՝ յամին 1721 ի Կ. Պոլիս, իսկ
երկրորդն 1779ին.

չազիրք, ապահով եմ, թէ պիտի գտնուին դեռ ուրիշ փոխառութիւններ ևս անվաւեր գրքէս: Սակայն մինչև ցարդ յիշուածներէն իսկ կրնանք դատել, որ անվաւեր գրքիս ազդեցութիւնն՝ ըստ բաւականին տարածուած էր ի Հոյս. վասն զի Յայսմատարք մէջ բերելով Կայենի վերայ գրուած նշանի մասին՝ հետևեալ տեղին կ'ըսեն. « Եւ այլք ասեն, թէ բուսաւ եղջիւր ի ճակատն, և ընդ որ գնայր՝ գուէր եղջիւրն, թէ գայ Կային եղբայրասպանն »: Այլք ասեն, բացաւ տրութեամբ՝ այլ և այլ հեղինակութիւններ կ'ակնարկուին հոս, յորոց զոմանս արդէն յիշեցինք:



ԿՏԱԿՔ ԺԲ ՆԱՀԱՊԵՏԱՅ



միայն բարոյախօսական և վարդապետական, այլ և պատմական տեսակէտով նշանաւոր այս գրուածս՝ հասած է մեզ յունարէն, հայերէն լատիներէն և սլաւերէն լեզուներով, և բազմիցս հրատարակութեամբ՝ ծանօթացած է գիտնոց, ի բաց առեալ հայերէնն, որ մէկ տարի յառաջ դեռ նոր լոյս տեսաւ: Յունարէն և լատին թարգմանութեանց իբրև հնագոյն ներկայացուցիչներ կը ներկայանան մեզ Կեմբրիճի մէկ ձեռագիրն, որ ժ դարուն գրուած է, վատիկանեանն՝ ԺԳ դարուն, Օքսֆորդին՝ ԺԴին, և պատմութեանն՝ ԺԶ դարուն: Այս և ուրիշ ձեռագրաց մասին ընդարձակ տեղեկութիւններ կարող են գտնել ընթերցողք Տիշենգորֆի, Փաբրիկիոսի, Սինկերի և Ա. Հառնակի քով: Հայերէն թարգմանութիւնը ներկայացնող ութ ձեռագրեր միայն կը յիշէ Սինկեր, որոց հնագոյնն է, կըսէ, Ս. Ղազարու վանաց մատենադարանի թիւ 346 բոլորգիրն (ԺԶ. Հաւաքումն բանից նախնեաց), գրուած յամի տեառն 1220: Արդ, զիտելով, որ

1. *See Grab, Spicilegium Patrum et Hoereticorum*, Oxford 1698. — J. Alb. Fabricius, *Codex pseudepigr. Veteris Test.* T. 1. p. 519, Lipsiae 1713. — Sinker, *Destamenta XII Patriarcharum*, Cambridge 1869. Լատիներէն թարգմանութիւնն, զոր Փաբրիկիոս յունարէնին հետ ապած է՝ յիշեալ դորձին մէջ, յունարենի վրայէն եղած է յամի Տեառն 1241, Ռոբերտ Լինկոլնեցի եպիսկոպոսին ձեռքով: Իսկ սլաւական թարգմանութիւնն, որ դեռ ուսումնասիրուած չէ, առջի՝ անգամ հրատարակեց ուսւ բանասէրն Տիտոնրաւով, յամին 1863, հին մագաթեայ ձեռագրի մի համաձայն: Յետոյ Պիւպինի և Սպերանսկիի ձեռքով լոյս տեսան ռուսներէն և չեխերէնն, որ Կոզակի ըսածին նայելով՝ լատիներենէն թարգմանուած է:

բաց աստի՝ ուրիշ չորս գրչագրեր ևս կը գտնուին միայն մեր մասնագրանին մէջ, հետևարար, Էջմիածնի, Երուսաղէմի և ազգային ուրիշ մատենադարաններում՝ այդ գրութիւնը պարունակող գրչագրերու թիւն՝ Սինկերի կարծածէն շատ աւելի ըլլալու է հաւանօրէն:

Վենետկեան հրատարակութիւնն՝ եղած է ուրեմն հինգ գրչագրաց համեմատ: Թիւ 280 ձեռագիրն, որ գրուած է յամի Տեառն 1/18, իբրև կատարեալ՝ բնագրի տեղ գործածուած է. սակայն դիտել կու տամ, որ թիւ 1270 բոլորգիր օրինակն՝ անկէց աւելի հին է և ուղղագիր: Ասկէց ընդօրինակուած է, յամին 1555 գրուած օրինակն, այն է՝ թիւ 229, զոր բաղդատութեամբ ստուգեցինք՝ գտնելով զանոնք կատարելապէս իրարու համաձայն: Մնացեալ երկու գրչագրերն, այսինքն են թիւ 346, գրեալ յամի Տեառն 1220, և թիւ 679, գրեալ ի ժՅ դարուն, որոնք հրատարակչէն Ա. Բ. օրինակներ յիշուած են յանախ, առանձին խումբ մի կը կազմեն միւս երեք օրինակներէն տարբեր բովանդակութեամբ. այսինքն թէ շատ աւելի համառօտ են և կրնատ: Չեռագրաց այս խումբս՝ այն խոտոր համեմատութիւնը ցոյց կու տայ միւս խմբին հետ, ինչ որ սա ունի յոյն և լատին թարգմանութեանց հետ: Հայերէն գրչագրաց կրկին խմբերուս՝ իրարմէ (ինչպէս նա և յունարենէ) ունեցած այս մեծ զանազանութիւնն, որ ավեանմեծ նշանակութիւն ունի ժԲ նահապետաց Կտակներու նախկին բնագրի ուսումնասիրութեան համար, արդէն ի վաղուց անդրադարձեր էր Փրեդ. Կոնիբեր¹, բաղդատելով վանացս մատենադարանի թիւ 346 հին գրչագրի ընդօրինակութիւնը, զոր իրեն յուղարկած էր Ն. Գար. Զարբհանայեան, Պարիսու ազգային մատենադարանին մէջ գտնուող մի այլ օրինակի² հետ: Կոնիբերի յիշեալ գործն՝ անշուշտ ազգայնոց շատերուն ցարդ անմատչելի եղած է. ուստի նոքա կարող են, — որոշ գաղափար առնելու համար հայերէն կրկին խմբագրութեանցս պատկանող ձեռագրաց տարբեր պարունակութեանը, — կարդալ մէկ կողմէն « Թանգարան հին և նոր նախնեաց » վենետկեան հրատարակութեան 34—74 էջերը, ուր Նմաւոնի և Ալեքսյ Կտակներն համեմատութեամբք զետեղուած են: Առաջին կտակին՝ իբրև բնագիր առնուած է Բ. օրինակն. իսկ վերջնոյն՝ Ա. օրինակն. իսկ միւս կողմէն Յովսեփայ, Բենիամինի և Յուդայի կտակները, զորս կը ներ-

1. See Quaterly Review, vol. V. 1893, I. C. p. 397.

2. Այս գրչագիրս մեզ ծանօթ չէ. բայց հաւանօրէն վերը նշանակած առաջին իմիս կը վերաբերի, այն է՝ ընդարձակ խմբագրութեանն, զոր այնքան տարբեր գրուած կոնիբեր՝ մեր թիւ 346 հին օրինակէն:

կայացընեն մեզ ընդարձակ պարունակութիւն ունեցող միւս երեք օրինակներն :

Ուշադրութեան արժանի կէտ մ'այլ հետեւեալն է . այսինքն թէ , այս երեք օրինակներու ներկայացուցած հայերէն թարգմանութիւնն՝ միւս խմբին պատկանող Ա և Բ . օրինակաց ներկայացուցած հայերէն թարգմանութենէն աւելի՝ յունարենի հետ ընդհանուր համաձայնութիւն ցոյց կու տայ , որով և ասոր վրայէն եղած թարգմանութեան մի հաւանականութիւնը : Այսպէս և Ա , Բ . խմբին վերաբերող համառօտ թարգմանութիւնն՝ թէպէտ և ընդհանրապէս յունարենի հետ անհամաձայն կ'ընթանայ , սակայն առանձին բառերով և բացատրութեամբ շատ անգամ հայերէն միւս խմբէն խոստրած ժամանակ՝ յունարէնին կը համաձայնի :

Արդ , հայերէն զրչագրաց մեզ ներկայացընող այս կրկին երեւոյթներս՝ զրչագրաց մէջ սովորաբար տեսնուող և պատահաբար ներմուծուած տարբերութեամբ միայն չեն մեկնուիր . ուստի իմ կարծիքով՝ կամ յունարէն իրարմէ տարբեր երկու խմբագրութենէ կարող են յառաջ եկած լինել , որոց մին՝ ժԲ՝ Նահապետաց կտակներու նախկին բնագրին աւելի մօտ ըլլալու էր , և հետագար , աւելի համառօտ և ազատ յետագայ ներմուծութիւններէ . և կամ յունարենէ անկախ մի ուրիշ բնագրէ թարգմանուած և խմբագրուած են : Ահաւասիկ երկու կարևոր կէտեր , որոնցմով ընդարձակ ասպարէզ մի կը բանայ մեզ այսօր հայկական թարգմանութիւնն , իւր կրկին տեսակօք , ժԲ՝ Նահապետաց կտակներու նախկին բնագրերն և յետագայ խմբագրութիւնքը ուսումնասիրելու համար : Ատիններէնն և սլաւոկան թարգմանութիւնք , եթէ առաջնոյն կամ մեզ ծանօթ յունարէն խմբագրութեան վրայէն կատարուած են , երկրորդական նշանակութիւն միայն կարեն ունենալ առ այս :

Այս անվաւեր գրութեանս՝ մինչև ցարդ երրայական բնագրի չյայտնուիլն և հնագոյն Հարց գրուածոց մէջ առանց այս ինչ կամ այն բնագրի միայն յիշատակուիլն՝ մէկ կողմէն , միւս կողմէն այլ յունարէն մեզ հասած թարգմանութեան մէջ աչքի զարնող քրիստոնէական բազմաթիւ ներչնչութիւնքն՝ այլևայլ կարծեաց և լուրջ ուսումնասիրութեան առիթ եղան քննադատից , յորոց ոմանք՝ պարզապէս հրէական ծագումն ուզեցին տալ անոր , իսկ այլք բողոքովին քրիստոնէական արտագրութիւն համարեցան զայն :

Գրար՝ առաջինն եղաւ , որ կարծիք յայտնեց , թէ ժԲ՝ Նահապետաց մեզ հասած կտակքն՝ երրայական գրուածքէ մի յառաջ եկած

նն. և թէ այդ բնագիրն Գրիստոսէ քիչ յառաջ գրուած ըլլալու էր, դիտելով՝ որ հին Կտակի նմանօրինակ ուրիշ անվաւերական գրուածքներ իսկ՝ աւելի կամ նուազ՝ այս ժամանակամիջոցիս կը վերաբերին: Բայց գալով այն տեղեաց, զորս ոչ մի Հրեայ չէր կարող գրել, այսինքն է՝ որոնք իսկապէս քրիստոնէական բնորոշ յատկութիւն ունին, յետոյ ուրեմն ներմուծուած կը համարի:

Գիտնականիս յայտնած կարծիքը՝ շատ հիմնաւոր էր. դիտելով, որ քրիստոնէական թուականին առաջին դարերում՝ ոչ մի քրիստոնէայ մատենագրի մտքէն չէր կրնար անցնիլ ժԲ Նահապետաց վերայ գրուածք մի յօրինել, թող թէ հրեական ոգի և վարդապետութիւն արտայայտել. հետեւաբար, սակէց իսկ շատ բնական է դատել, թէ միայն հրէի մի համար կարեւորութիւն ունէր այս բանս, և այդ հրեայ գրիչն՝ այսպիսի ժամանակի մէջ ապրելու էր ըստ իս, երբ երկուսասան ցեղերու մնացորդներն՝ դեռ բոլորովին ցիր ու ցան եղած չէին ի պիլուս հեթանոսաց, հոգովէական բռնութեան և աւերածոց ներքեւ. այլ այն ցեղերուն պատկանող իւրաքանչիւր տոհմի մէջ դեռ կենդանի էին իւր նահապետի արարուածքն և համբաւն, և նոցանէ իւրաքանչիւրն՝ անոնց անցելոյն յիշատակովը կը պարծէր, և կը ջանայր մանաւանդ այս ինչ կամ այն վիպագրի ձեռքով անոր յիշատակը պանծացնել. ինչպէս երբեմն Հայաստանի մէջ՝ Մամիկոնեան, Բագրատունի, Արծրունի, և Սիւնի ազգատոհմեր, որոնց գործերն անմահացուցին Փաւստոս, Մովսէս, Եղիշէ, Ղազար, Թովմաս, և Ստեփանոս Օրպէլեան: Այս մեր ենթադրութիւնն կը հաստատուի եպիփանոս Կիպրացոյ անուամբ միայն հայկական գրականութեան մէջ պահուած Արարածոց մեկնութեան մէկ ճառով, որուն հեղինակն խօսելով Տիրամօր անարատ յղութեան և Հրէից անոր դէմ բացած դատաստանի մասին, կը գրէ այսպէս. «Նւ ժողովեալ զամենայն ծերակոյտան և զպարսն և զփարիսեցիսն ժԲ ցեղիցն իսրայելի, զորոց զբառազանն եղևայ էր յասաջագոյն, սակս կոշսին Մարիամայ, յորում և ել վիճակն արդարոյն Յովսեփայ: Եւ ընթերցեալ զհրովարտակն, զոր եբեր Աննաս դպիր, և գրեցին փութանակի առ Յովսեփ, զի առեալ զՎոյսն Մարիամ՝ գայցէ փոյթ ընդ փոյթ՝ դէմ յանդիման լինել արանց Իսրայելի», և այլն: Կտակաց հեղինակն՝ թէպէտ և ուզած է մէկ գրուածքով զամէնքն ևս շոյել, բայց գլխաւոր կերպով անոր ուշադրութիւնը գրաւողներն էին Յուդա և Ղևի. վասն զի Գրիստոսի մօտ ժամանակներն իսկ՝ այդ երկու ցեղերն էին Հրէաստանի մէջ գերաշխուածութիւն ունեցողներն, և աշխարհական և հոգևո-

րական իշխանութեանց թեկնածուներն: Հեղինակի այն ընդհանուր ձկտումն, որով իւրաքանչիւր ՆաՀապետի կտակի մէջ ուզած է Ղեւեայ ազդեցութիւնը բարձր բռնել, բաւական կուտան մ'է, թէ Նաինքն իսկ Ղևտական դասակարգին պատկանող մին էր: Սակայն այս կէտերը բարգաւաճելն՝ գրուածքիս պատմական տեսութեանը կը վերաբերի ուղղակի:

Նիցըլ¹, յամին 1810, Գրարին հակառակ կարծիք յայտնեց: Հեղինակս հիմնուելով այն ենթադրութեան վերայ, թէ քրիստոնէական ներմուծութիւնք կարծուած տեղիքն՝ այնպէս սերտիւ միացած են ամբողջին հետ, այսինքն է՝ լեզուով և ոճով, որ մի միայն հեղինակութիւն կը կազմեն, հետևեցուց, թէ ուրեմն քրիստոնէացած Հրէի մի ձեռքով պէտք է որ գրուած ըլլայ այն ամբողջովին: Այսու հանդերձ՝ կ'ընդունի Նիցըլ իւր կարծեաց դէմ հակառակորդներէն առարկուած այս մեծ դժուարութիւնը՝ նկատմամբ Պաւղոս առաքելոյն և հեթանոս քրիստոնէից գործածուած լեզուին, որ իբրև պողովատիկ սուր մի կը խզէ ըստ իս Նիցըլի եզրակացութեան ջրղերը:

Ռիտշլ² յամին 1850 նոր վարդապետութիւն մի սկսաւ բարգաւաճել, տարբեր իւր նախորդներէն: Սորա կարծիքով՝ գրութեանս հեղինակն ոչ զուտ Հրեայ մ'եղած ըլլալու է, և ոչ իսկ քրիստոնէացած Հրեայ մի, այլ Պաւղոս առաքելոյն ուղղութեան հետևող քրիստոնեայ մէկն:

Բայց այս վարդապետութեանս դէմ ելաւ Վայսեր³, պաշտպանելով Հինը, այն է՝ Գրարի կարծիքը, և հերքելով ներմուծութեանց դէմ մէջ բերուած հակառակորդաց փաստերը: Սա կը նկատէ, դարձեալ, Կտակաց մէջ յեսսէն-երիոնեան գաղափարաց արտայայտութիւններ ևս:

Վորտմանն՝ յամին 1857 եկաւ ի Հանդէս, պաշտպանելով Ռիտշլի կարծիքը: Սա հերքելով մի առ մի Վայսերի փաստերը, զօրեղ ապացոյցներ մէջ կը բերէ կարծեցեալ ներմուծութեանց հարազատութեանը. ներմուծութիւնք, որք զէնք մ'եղած էին հակառակորդաց ձեռքով՝ ընդդէմ գրութեանս, ծագմամբ պաւղոսեանի մ'ըլլալուն: Բայց Վորդամանի կորովի գրութեամբն հանդերձ՝ Ռիտշլ՝ իր երկրորդ

1. Nitzsch, *Commentatio Critica de Testamentis XII Patriarcarum*, lib. V. T. *Pseudepigrapho*, Wittemberg, 1810.

2. Ritschl, *Die Entstehung der Altkatholischen Kirche*, Bonn, 1850.

3. Kayser, *Beiträge zu den theol. Wissenschaften*, 1851, p. 107-140.

հրատարակութեամբ վերջապէս ընդունեցաւ Կտակաց՝ Հրեայ — քրիստոնէական ծագումը, դնելով անոր իրրեւ հեղինակ Նազովրեցի մէկը :

Ճշմարտութիւնն թէպէտ և հին՝ սակայն միշտ զօրաւոր և յաղթող կը հանդիսանայ, ըստ զօրաբարէշեան առածին : Ահա, այսպէս նորանոր ուսումնասիրութիւններով սկսաւ աւելի ընդհանրանալ Գրարի յայտնած ճշմարտութիւնը : Հառնակ, յամին 1874, և Շնապպ՝ յամին 1884, ալ բոլորովին բացայայտ կացուցին զայն, որոց ըստ ամենայնի համաձայն գտնուեցաւ և Շիւրէր¹ : Արդ, այս գիտնականաց լարլ ուսումնասիրութիւնքն կը հաստատեն, թէ ժի Նահապետաց Կտակներուն մէջ կայ իսկապէս նաև քրիստոնէական արտադրութիւն մի, բայց այդ՝ մնացածին և ոչ իսկ տասներորդ մասը կը կազմէ, որ մի միայն հրէի մի ձեռքով և իրարու կապակցեալ կերպով կարող է գրուած լինել : Քրիստոսախօսական հատուածներն իսկ, որոնք գրեթէ միշտ՝ (բայց ի մասնաւորի Ղևեայ և Յովսեփայ մասին գրածի մէջ) հրեական, մեսիայական և ապագայ ակնկալութեան վերայ հիմնեալ են, ցոյց կու տան մեզ ստուգիւ, թէ այս կերպարանաց մէջ չեն կրնար, աւանց անտեղութեան, քրիստոնէի մի վերագրուիլ :

Շնապպ յառաջ երթալով ուզեց նոյն իսկ ցուցնել, թէ գրուածքն երրայական սկզբնագիրն՝ երկու խաւերէ բաղկացած էր, մին՝ հնագոյն, յորում Նահապետներու կենսագրական նկարագիրներն եղած էին, դնելով անոնց բերանը բարոյական խրատաբանութիւններ. իսկ միւսն համեմատութեամբ նոր, որ կը պարունակէր անոնց ապագայ գուշակութիւնները՝ իրենց ցեղերուն վերայ : Նշանաւոր է գիտնականիս ըրած այս զանազանութիւնս, թէ և ոչ իսպառ ապացուցուած : Ես չեմ կարող համաձայնիլ Շնապպի որամտութեամբ եղած այսպիսի մի զանազանութեան, իրրեւ ստոյգ եղելութեան. սակայն Հառնակի հետ կրնամ ըսել, թէ հնագոյն անուանեալ, այն է՝ կենսագրական մասի աղերսն՝ այնքան սերտ է փոքր Արարածոց զբին հետ, մինչև անգամ կարծել կու տայ մեզ, ասոր առանձին մաս մի ըլլալ : Քասդէր, երրայական սկզբնագրին վերայ ըրած ուսումնասիրութեան մէջ, արդէն բարգաւաճեր է այս կարծիքս, բայց աւանց վերոյիշեալ զանազանութեան վերայ խօսք ընելու : Յամենայն դէպս՝ Հառնակի կարծիքով Կտակաց երրայական սկզբնագիրն՝ փոքր Արարածոցէն աւելի հին չկարէ լինել. այսինքն է՝ նոր թուականի սկզբնաւորութենէն շատ յառաջ : Արդարև, երրայական այս-

1. Schürer, Gesch. des Volks Israel, Bd. II, s. 662.

պիսի սկզբնազրի գոյութենէ զստ՝ քրիստոնէական ներմուծութեանց մասին եղած ենթադրութիւնն իսկ լիովին կը հաստատուի հետեւեալ փաստերով: Սինկէրի մէկ հրատարակութեան՝ համաձայն՝ Կեմբրիջի մատենադարանի չորս յունարէն ձեռագրաց՝ միոյն մէջ կը պակսի գլխովին Պաւղոս առաքելոյն վերաբերեալ նշանաւոր տեղին (այն է Բենիամինի կտակին մէջ): Թերևս դիպուածով դուրս թողուած համարուէր այս, եթէ չունենայինք ուրիշ կուռաններ ևս. սակայն այս հատուածս կը պակասի նա և Հայերէն հնագոյն և համառօտ անուանեալ խմբագրութեան մէջ. այսպէս ըլլալու է անշուշտ սլաւերէն համառօտ խմբագրութեան մէջ, որուն հրատարակութիւնը կանխաւ ծանուցինք արդէն: Նշանաւոր է նոյնպէս այն մեծ զանազանութիւնն, որ կայ, ըստ Բոնվէլի, սլաւական այս և մի ընդարձակ խմբագրութեան մէջ, ուր բաց ի Պաւղոս առաքելոյն վերաբերեալ հատուածէն, ուրիշ քրիստոսախօսական հատուածներ ևս մասամբ բուրովին կը պակսին, և մասամբ այլ այնպիսի կերպարանաց ներքև, որոնք աւելի երբայական բնագրին կը յարմարին, քան թէ յունարէն ծանօթ և ընդարձակ խմբագրութեան:

Քաստերի՝ Երբայական բնագիր միոյ ի կտակաց յԲ Նաևնայեւտաց՝ խորագրուած հրատարակութեամբն՝ յայտնի եղաւ նախ, որ յունարէնն՝ բիրտ թարգմանութիւն մ'եղած է յերբայականէն. Բ. թէ Յերեմիէլի հրէական Ժառանակագրութեամբ պահուած նեփթաղիմայ Կտակն, զոր տպեց յիշեալ հեղինակն, երբայական չորս ձեռագրաց վրայէն, — որոնց հնագոյնն ԹԲ դարում գրուած է, — այնքան և այնպիսի մեծ զանազանութիւններ ունի յունարենէն, որոնք պարզ թարգմանութեամբ բնաւ չեն մեկնուիր, այլ ինքնուրոյն խմբագրութեամբ միայն: Քաստէր կը կասկածի, որ այս յիշատակարանս՝ յունարենի վերայ շարագրուած ըլլայ, իբրև յաւելուած. իսկ մենք համաձայն Հառնակի՝ երբայական այն հին շարագրութենէն իբրև մնացորդ կը համարինք զայն, զոր յիշեալ ժամանակագիրն՝ յունարէն խմբագրութեան մէջ երկու տեղեաց նկատմամբ սխալ հասկացողութիւնքը ուղղելու համար՝ իբրև համեմատութիւն մի արտագրած ըլլալու է անշուշտ: Այսպէս կամ այնպէս՝ շօշափելի յիշատակարանովս իսկ կ'ապացուցուի արդ, թէ սաուգիւ եղած են ԹԲ Նաւապետաց Կտակներու հրեական և երբայական սկզբնազրեր. և թէ

1. S⁴ Testament. XII Patriarch. Cambridge 1869. Appendix 1879.

2. Gaster, The Hebrew Text of one of the Testaments of the XII Patriarchs.

քրիստոնէական կերպարանաց ներքև մեզ հասած գրուածքն՝ անոնց վերայ յօրինուած է ժամանակաւ :

Այսպէս ուրեմն, երբայական սկզբնագրի մի վաղեմի գոյութիւնն մէկ կողմէն, միւս կողմէն այլ յետոյ եղած քրիստոնէական ներմուծութիւնքն ընդունելով իբրև կրկին համարութիւններ, տեսնենք այսուհետև, թէ ի՞նչ փաստեր կան առ այս, ե՞րբ եղած են այդ եկամուտ յաւելուածներն . թէ հայկական թարգմանութիւնն՝ ի՞նչ չափով կը համաձայնի կամ կը հեռանայ երբայական բնագրէն, և թէ ի՞նչ աղերս կամ համեմատութիւն ունի յունարէն խմբագրութեան հետ և կամ անկէ կը տարբերի . միով բանիւ ակներև ընել նորա նշանակութիւնը :

Այնքան դիւրին չէ, ինչպէս կը կարծուի, որոշել քրիստոնէական ներմուծութեանց կամ լաւ ևս երբայական բնագրի վերայ յօրինուած խմբագրութեանց ժամանակամիջոցն . մանաւանդ եթէ ի նկատի առնուինք, որ բոլոր այդ ներմուծութիւններն՝ միտժամանակ եւ զած չեն, ինչպէս կ'ապացուցանեն հայերէն, յունարէն և սլաւերէն կրկնակի խմբագրութիւններն, որոնք նոյն իսկ իրարմէ այնքան կը զանազանին, ինչպէս երկինք՝ յերկրէ : Լաւագոյն միջոցներ պիտի համարուին առ այս՝ առաջին դարուց եկեղեցական Հարց քով գտանելի հատուածներն և վկայութիւններն . սակայն այսպիսի մնացորդներ կամ խիստ ցանցառ են, և կամ անորոշ : Առաքելոց Սահմանորութեանէն, և Տերտուղիանոսի, Հիպոլոդիտեայ և Պրոկոպիոսի քով եղած տեղիքն, զորս յաճախ կոչած են այլք ի վկայութիւն՝ ոչ մի կերպով մեզ ծանօթ զբնիւն չեն վերաբերիր, ըստ նորոգ քննադատութեան . ուստի երկու հեղինակութիւններէ միայն կարենք կոչուամբ ընել այս մասին :

Որոգինէս՝ Յեսուայ Մեկնութեան (ճառ ժՆ. 6) մէջ կը բերէ հետևալն . « Սակայն և յայլում գրութեան, որ կոչի կրակ երկուստսան Նահապետաց և շիցէ ընկալեալ իբրև կանոնական, գտանեմք զայսպիսի միտս բանից, այսինքն թէ՛ անուամբ անձնիւր մեղաւորաց՝ ուրոյն առանձինն սատանայք իմացեալ լինին » : Եւ ստուգել, այս խօսքերս առնուած են Ռուբենի կրակի Գ . թուահամարէն, որ կ'ըսուի ի միջի այլոց . « Վասն զի եօթն շունչք տուեալ են ընդդէմ մարդոյ ի Բելիարայ, և նոքա են զլուիք գործոց մարդկութեան » (Ա, Բ, օր. և յոյն մակնոչքեան) : Ոմանք ի քննադատից՝ կը կարծեն, թէ Որոգինէսի մէջ բերած տեղին՝ ուղղակի երբայական սկզբնագրէն առնուած է . հետևաբար, անոր ծանօթ եղած ըլ-

լայ այս . սակայն Հռոմակի¹ կարծիքով քրիստոնէական խմբագրութիւնը միայն կը ճանաչէր Որոգինէս : Իսկ այն առարկութեան , եթէ այդ այդպէս է , ապա ուրեմն ի՞նչ պատճառաւ ուրիշ կոչումներ ևս ըրած չէ Որոգինէս այդ գրքէն , իրրև փաստ կը պատասխանէ գերմանացի սոստուածաբանն , թէ վասն զի այդ գրոց մէջ եղած քրիստոսախօսութիւնն՝ այնքան ախորժելի եղած չպիտի ըլլար այդ հօր , և թէ նա կը տարակուսէր գրքիս հարազատութեան վերայ : Սակայն , ըստ իս , այս փաստ չէ ընդդէմ առարկութեանն , ինչպէս յարուցուած առարկութիւնն իսկ՝ միայն քրիստոնէական խմբագրութեանը շի վերաբերիր , այլ նոյնը կարելի է շրջել նա և ընդդէմ ծանօթութեան երբայական բնագրին : Այլ բան մի , որ սնծխտելի կ'երևի ինձ՝ այն է , թէ Բ դարուն՝ ժԲ Նահապետաց կտակն ծանօթ էր քրիստոնեայ մատենագրաց , հաւանականաբար ըստ յունարէն տաւջին խմբագրութեան , յորում՝ համեմատութեամբ նուազ էին քրիստոնէական ներմուծութիւնքն : Հառնակ՝ խմբագրութեանս վերջին սահմանը՝ Գ դարէն ասդին չանցըներ , իսկ առաջին սահմանն այլ՝ փրկչական թուականի 480 ամէն անդին : Վերջին տարեթիւն մեզ աւելի հաւանական կը թուի , եթէ Երանոսի ծանօթ տեղին՝ ստուգիւ անոր հարազատ գործ համարուի և ուղղակի՝ Կտակաց այդ խմբագրութենէն օժտուած : Արդ՝ հետեւեալ վերտառութեամբ *ΕΙΣΡΗΓΑΏΣΟΥ* *ΕΠΙΣΧΟΠΟΥ* *ΛΟΥΓΔΟΥΣΩΝ* , այն է *Երանոսի Լուգդոնի եպիսկոպոսի մէկ հատակտորին մէջ* , — որ յամին 1774 տպուեցաւ ի Լայպցիգ՝ *նաթիշեան Շիրայի*² մէջ , — պարիսեան չորս ձեռագրաց համեմատ , — գրուած է այսպէս . « Յորոց (ժԲ Նահապետաց) Քրիստոս ևսխանկարեցաւ և ծանուցաւ և ծնաւ : Նախանկարեցաւ ի *Յովսէփի* (իմս *Գեղեցիկն*) , և ի *Ղևեայ* և ի *Յուդայ*՝ ըստ մարմնոյ ծնաւ , որպէս քազաւոր և քահանայ . ի *ձեռն Շիմոնի*՝ ծանուցեալ եղև ի տաճարին . *Չարոզոնի*՝ հաշտարիմ եղեւ ի հերանաոսս (որպէս ասէ մարգարէն՝ *Երկիր Զարուոնի*) , և *Բենիամինի* (Պաւղոսի) քարոզեալ հաշակեցաւ յամեւայն աշխարհի » :

Հառնակ՝ իւր վերոյիշեալ երկասիրութեան մէջ , էջ 569 , կը համարի , թէ այս տեղոյս մէջ *ἐκ δὲ τοῦ Λαοὶ καὶ τοῦ Ἰουδα τὸ κατὰ σάρκα ὡς βασιλεὺς καὶ ἱερεὺς ἐγεννήθη* բառերէն դուրս՝ ուրիշ ոչ ինչ չկայ վերաբերելի ժԲ Նահապետաց Կտակներուն , և թէ այդ

1 . Karnack, Die Chronologie der Altchristlichen Litteratur bis Eusebius, Leipzig 1897, s. 569.

2 . S^{ts} Harvey, Irenei opp. II, p. 487.

խօսքերն իսկ ուրիշ աղբերէ մի կը յառաջագային. վասն զի Կտակաց մէջ ձեռք խառնողն է, որ իւր հրեական շարագրութեամբ կու գայ տալու այս անսովոր ծանօթութիւնը, թէ Քրիստոս ծագեցաւ ի Յուդայէ և ի Ղեւեայ: Հետեւաբար, Կտակներն ևս եթէ հիմն համարինք այս հատուածիս, սակայն և այնպէս չէ կարելի ապահով կերպով գայն Նրանոսի համարել, վասն զի սա այլուր վարդապետած չէ բնաւ թէ Յիսուս ի Ղեւեայ կը ծագէր. ուստի աւելին քան զայս չէ պարտ ըսել, թէ Կտակաց առաջին քրիստոնէական հրատարակութիւնն ծանօթ էր յամենայն դէպս Որոգինեայ, գուցէ թէ և Նրանոսի: Սակայն մեր կարծիքով ընդհակառակն՝ Յուդայի և Ղեւեայ վերաբերեալ բացատրութենէն աւելի, որ ուրիշ երբայական գրուածոց իսկ յատուկ է, նշանաւոր աղբերս ունին Կտակաց հետ՝ Յովսեփ Գեղեցկի, Զարուղոնի և Բենիամինի (որուն ցեղէն էր Պաւղոս առաքեալ) վերաբերեալ նախադասութիւններն, որոնք Յովսեփ Գեղեցկի, Զարուղոնի և Բենիամինի կտակներէն ներշնչուած են ստուգիւ: Ասոր փայլուն ապացոյցը կու տայ մեզ հայկական թարգմանութիւնն, որ ազատ է յունարէն և լատինարէն ծանօթ թարգմանութեանց աչքի զարկող ներմուծութիւններէն¹: Արդ, դիտելով, որ Նրանոս ԷՖ ճՅ բառերով ժի նահապետները կ'ականարկէ, — որոց մասին նախնաբար խօսած ըլլալու էր, ապա թէ ո՞չ այդ խօսքերն անհասկանալի պիտի լինէին, — հետեւաբար, Յովսեփայ թագաւորութիւնն յնգրիպտոս և իւր եղբարց վերայ՝ իրրև նախանկար օրինակ կը համարի Յիսուսի թագաւորութեան. և ահաւասիկ այդ կէտն, — որ Նից ցրքի մէջ չկայ, — բացատրուած է Յովսեփայ կտակին մէջ՝ աւոր բերանը դրուած խօսքերով՝ Յիսուսի թագաւորի նկատմամբ. « Եւ տեսանէի ի մի յեղջերուացն (իմա՛ Յուդայի) Կոյս մի, որ ունէր արկանելիս ճաճանչաւուխասս (Ա և Բ. օր արկանելի ձանձառոյս) և ի նմանէն ելանէր գառն և յաջմէ կողմանէ նորա արձակէին գազանք... և յաղթեաց նոցա գառն... Եւ դուք, որդեակք իմ, պատուեցէք զՂեւի և զՅուդայ, զի ի նոցանէ ծագեցի փրկոչ ին իսրայելի. վասն զի քազառոյր ին իմ՝ որ ի միջի ձերոսմ՝ վախճաւեցի, իրրև գտաղաւար մրգապաւհաց՝ որ ոչ երևեսցի զկնի ամաբայնոյ (Ա և Բ. օր. ի մարմնի) »:

1. Այս տեղ զիտել կու տանք, որ հետեւեալ երեք տեղերն, զորս երեք տարբեր կտակներէ մէջ պիտի բերենք անմիջապէս, այժմու յոյ և լատին խմբագրութեանց մէջ եկամուտ յաւելուածովք ընդարձակուած են: Այդ ներմուծութիւններն՝ յետոյ ամենատարբեր պիտի նշանակենք:

Մրանոսեան Հատուածին մէջ Զարուզոն, իբրև անպարտ ի յանցանաց և երկիւղած յԱստուծոյ, օրինակ կը բերուի մարդասիրութեան Քրիստոսի առ Աստուած և առ ազգս մարդկան. այս կէտս իսկ Նլից գրոց մէջ լուռած է բոլորովին, և մենք կը գտնենք Զարուզոնի կտակին մէջ, այսպէս. « Ես եմ Զարադոն՝ տոռք բարեաց ծննդոց իմոց... զի ոչ ծանեայ ես քե յանցեայ յառտրս իմ, և ոչ յիշեմ, թէ արարի երբէք անիրաւութիւնս... Պահեցէք զպատուիբանս Տեառն, զոր օրինակ և ես պահեցի, և շնորհս առ յԱստուծոյ. վասն զի ամենայն եղբարք իմ Հիւանդացան, իսկ ես առանց հիւանդութեան անցոյցի գառտրս իմ... Եւ յետ այսորիկ ծագեաց Տէր զոյսն արդարութեան իտոյ, և դարձչիք յերկիր ձեր, և տեսչիք զՏէր յԵրուսաղէմ » :

Մրանոսի քով Բենիամին իբրև օրինակ մէջ կը բերուի քարոզութեան և տարածման Մեսիայի գաղափարին և գալստեան. ահա սոյնը դրուած է Բենիամինի բերանն, անոր Վտակին մէջ, այսպէս. « Բայց սակայն ի բաժնին ձերում եղիցի ժառանգութիւն Տեառն, և տանն (Գ, Դ, Ե, օր. Տեառն) բարձրացոյց զիս Յակոբ՝ զի փառաւորեցայց ի նմա. և երկոտասաներին ցեղքն՝ անդր ժողովեցին և ամենայն հեթանոսք, և Տէր թշնամանեցի և անպատուեցի (Ա. Բ օր. պատեացի) և փոխեցի յերկրէս՝ յերկինս, զի ծանեայ երբ որպէս է յերկրէ և կամ որպէս յերկինս : Զայս տամ ձեզ փոխանակ ամենայն ժառանգութեան, և դուք դուք զայս ի ժառանգութիւն որդոց ձերոց յաշիտեան... միևնիւ յայտնեցէ Տէր զփրկութիւն իտր յամենայն երկրիս... Թայնժամ յարիցոռք և մեք իտրաքանչիտր ի գառազան, և երկիր պագցոռք երկնառք քազառքին... և յանդիմանեցէ զիտրայէ՛ ընտրեալ հեթանոսք, զոր օրինակ յանդիմանեաց դեսու՛ Մազիանացովքն, որք սիրեցին զեղբարս իւրեանց » : Ոմանք Բենիամինի այս տեղիս ուզեցին ի դէմս Պաւղոս առաքելոյն առնուլ՝ իբրև քարոզ ի ցեղէն Բենիամինի. ուստի Մրանոս եթէ ստուգիւ այս տեղէս ներշնչուած է, դա ցոյց կու տայ մեզ միանգամայն, թէ կտակիս 11 Համարի Καί ἐν βίβλοις, ἀγίαις ἔστε ἀναγραφόμενος, և այլն, Պաւղոսի վերաբերեալ տեղին՝ Մրանոսէն յառաջ կար, — տարբեր գոյնով, — նոյն իսկ երրայական բնագրին մէջ, որուն ապա երկրորդ խմբագրութեան ժամանակ՝ բոլորովին քրիստոնէական կերպարանք տրուեցաւ :

Այլ մնայ արդ որոշել գրուածքիս երկրորդ խմբագրութեան կամ լաւ ևս քրիստոնէական ներմուծութեանց ժամանակը. սակայն յայսմ իսկ՝ Հանգոյն առաջնոյն այլևայլ դժուարութեանց կը հանդիպինք :

Մինչև ցարդ քննադատք ուսումնասիրութեան ենթարկեցին զայն, ըստ որում կը գտնուի յունարէն հին թարգմանութեամբ, յորում սակայն քիչ աստեղէն պիտի տեսնենք, որ կոչումներն ընդհանրապէս նոր Կտակարանէն եղած են. այսինքն են՝ Մատթէոս, Դուկաս, Յովհաննէս, Գործք Աւագբայց, Պաւղոսի առ Եբրայեցիս և Յայտնութիւն, որոնք սակայն նոր թուականի առաջին դարէն ասդին չեն անցնիր: Սակայն Վարժիւտ՝ իւր մէկ լուրջ ուսումնասիրութեամբը ջանացեր է գնահատել այդ կոչումներու արժէքը, — որոց և մասամբ կը ձայնակցի Հառնակ, — դիտելով, որ աւետարանական պատմութեան զլեւուոր կէտերն՝ գրեթէ առհասարակ նոր կտակարանական գրութիւններն և նոր Կտակարանքն՝ իբրև հաւաքածոյք ցոյց տրուած են, որոց վերջինն խիստ յայտնի է, երբ նա Պաւղոսէ առ Բենիամին կոչումն կ'ընէ ըսելով. ἐν βίβλοις ἀγίας ἔστε ἀναγραφόμενος καὶ τὸ ἔργον καὶ ὁ λόγος αὐτοῦ, որ 'երբ կամ Երբ դարու ներմուծութիւն է:

Սակայն, ըստ իս, քանի որ պատմական ապացոյցներ կը պակսին այս բանիս, հարկ չկայ ըստ ինքեան Գ կամ Երբ դարու ներմուծութիւն համարել զայն, վասն զի Բ կամ Է դարուն իսկ կարելի է վերագրել զայն, դիտելով մանաւանդ, որ դեռ ասկէց աւելի վերջ կատարուած Հայերէն թարգմանութեան, — ինչպէս նաև յոյն գրչագրի մի մէջ իսկ, — այդ տեղին կը պակսի:

Բողլէեան մատենադարանի յոյն ձեռագրի մի մէջ, թիւ 75, ժԲ նախապետաց Կտակին կը յաջորդեն լատիներէն այս խօսքերը. Testament duodecimum Patriarcarum filiorum Jacob, secundum translationem Johannis Chrysostomi de Hebreo in Grecum², այսինքն է՝ կտակք ԺԲ Նահապետաց՝ որդոց Յակոբայ, ըստ քարգմանութեան Յովհաննէոս Ոսկեբերանի՝ յերայականէ ի յոյն քարքառ: Յայտնի չէ, թէ որո՞ն ձեռքով, երբ և թ՞նչ հիման վերայ գրուեցաւ այս յիշատակարանս: Սինկէր՝ իւր վերոյիշեալ երկասիրութեան Յառաջադրութեան մէջ՝ ժԵ դարում և թղթի վերայ գրուած կը համարի զայն: Յիշատակարանիս աւանդածին համեմատ՝ եթէ ստուգիւ Ոսկեբերան եղած ըլլար թարգմանիչ Կտակաց յերայականէն, այն ժամանակ պիտի հետևէր անտարակոյս, թէ կամ Որոգինէս և Երանոս ուղղակի

1 Warfield, The Apologetical value of the Testaments of the XII Patriarchs, in The Presbyter Review 1880, I, p. 57-84.

2 Տես Կեմբրիճի Համալսարանի գրատան ցուցակը, Catal. vol. II. p. 46, Bernard, 9363.

երրայական սկզբնագիրը ճանաչեր և գործածեր են . և կամ, թէ ոչ միայն յոյն լեզուով, այլ երրայեցերէն իսկ կրկին բնագրեր եղած են ստուգիւ, այն կերպով՝ ինչպէս որ սրամտութեամբ ենթադրեց Շընապպ : Այս պարագայիս մէջ հասկանալի կ'ըլլայ Բենիամինի կտակին մէջ ներմուծեալ պաւղոսեան տեղին, ինչպէս նա և այն ներմուծման համար Վարֆիլդի գծած ժամանակամիջոցն, դիտելով որ Ոսկերեան, որ Պաւղոսի մեծ սիրահարն էր, կը ծաղկէր ի Դ դարուն, և երրայական լեզուին քաջ տեղեակ էր : Սակայն, քանի որ Ոսկերեանի ձեռքով եղած այսպիսի մի թարգմանութեան բնաւ ուրիշ մէկն յիշատակութիւն ըրած չէ այլուր, մենք կարող ենք ըսել այդ յիշատակարանի մասին վերջիլիոսեան առածը, թէ Timeo Danaos et dona ferentes : Այո՛, Ոսկերեանը իբրև մեծ մատենագիր գիտեն ժամանակակիցք, բայց ոչ բնաւ թարգմանիչ : Իսկ եթէ թարգմանած ևս ըլլար ժի՛ նահապետաց Կտակները, սակայն և այնպէս չենք կրնար ընդունիլ մէկ կողմէն, որ անոր պէս անկեղծ և անաչառ Ս. Հայր մի՛ երրայական բնագիրը քրիստոնէական յաւելուածներով խանգարել ուզած ըլլայ, և միւս կողմէն այլ՝ Հրեաներէն և Հեթանոս մատենագիրներէն պախարակուած չըլլայ : Արդ, դիտելով, որ մէջ բերուած յիշատակարանն՝ շատ կը նմանի Ռորերդ Լինկոլնեցւոյ ձեռքով եղած լատին թարգմանութեան մի այլ յիշատակարանի՛ Հետ, զոր պահած է մեզ Մասթէոս Պարիսեցի, բաց ի յեքրայական բառէն՝ պէտք է ըսել, թէ կամ ազէտ մէկն վերջնոյս մէջ յիշուած Magister Johannes de Basingestokes անունը դիտմամբ Johannes Chrysostomusի փոխելով՝ նոր յիշատակարան մի յառաջ բերած է ըստ կամս . և կամ Ոսկերեանի ընծայուած թարգմանութեան բնագրին մէջ արդէն իսկ բոլոր քրիստոսախօսական տեղիքն կային : Ուրեմն Քրիստոսի թուականին Գ կամ Դ դարերում ենթադրուած երրայական կամ յունարէն մի նոր խմբագրութեան գոյութիւնն սպառնուցանելու համար՝ բաւական չեն նոր Կտակարանէն մէջ բերուած տեղիքն, այլ պէտք է՝ ըստ իս՝ մանաւանդ դիտել, թէ այդ տեղիքն ուրիշ ի՞նչ Հայրախօսական կամ վարդապետական և կամ պատմական պարագայից և հանգամանաց Հետ լծորդեալ մէջ կը բերուին . այս կերպով միայն պիտի կարենան անոնք լինել որոշիչ ժամանակաց և գրչաց : Ուստի տեսնենք թէ Հայկական թարգմանութեան համեմատութիւնքն՝ այս տեսակէտով ինչ նոր լոյս կը սփռեն Կտակաց սկզբնագրի քրիստոնէական մասի վերաբերութեամբ :

1. §60 Fabricius, Codex pseudepigr. Weteris Test. T. I. p. 516. Lipsiae.

Ռուբենի կտակին մէջ (զլ. 2.) յոյն՝ և լատին կը գրեն Ղևեայ
 Համար. « Զի նա ծանուցէ զօրէնս Տեառն և կատարեսցէ զարդա-
 բութիւն և զզոհս վասն ամենայն Իսրայէլի; մինչև ի վախճան ժա-
 մակաց քահանայապետին Քրիստոսի, զոր ասաց Տէրն. Երդմե-
 ցուցանեմ զձեզ յԱստուածն երկնի, զի առնիցէք իւրաքանչիւր ոք
 զնմարտութիւն ընդ ընկերի իւրոյ », և այլն: Տեղւոյս առաջին նա-
 խաղասութիւնն մեծ նմանութիւն ունի նոր Կտակարանին վերաբե-
 րեալ գրութեան մի հետ, այն է՝ առ Եբրայեցիս թղթի է զլիւու 14-
 17 Համարներուն, որ յունարէն գրուած և մինչև չորրորդ դար ա-
 ղմտեան եկեղեցիէն կանոնական գրոց ցանկին մէջ գեռ անցած չէր.
 Պաղեստինու քրիստոնէացած հրեական Համայնքին ուղղեալ էր, գա-
 նանք իրենց Հաւատքին մէջ Հաստատ պահելու Համար: Առաջելոյն
 ընծայուած թղթին մէջ (զլ. Ա. 2) Քրիստոս իրրև կատարեալ քա-
 Հանայապետ՝ անցեալ ի վեր քան զհրեշտակս, Միջիսեդեկի տեղ
 առնուած է. իսկ Ռուբենի կտակին մէջ ընդհակառակն՝ Ղևեայ: Այս
 պարագայս յայտնապէս ցոյց կու տայ մեզ, Հակառակ Նիցըլի, թէ
 ենթագծուած խօսքերն բնաւ միութիւն չեն կազմեր մնացածին հետ,
 և Հաւանօրէն Գ դարուն ներմուծուած են աստ: Առ այս դիտել կու
 տանք, որ Հայերէն Ա օրինակն բարբոսի տարբեր կերպով ունի այդ
 խօսքերը, այսինքն է՝ առանց ինչ յիշատակութեան Քրիստոսի՝ Ղե-
 վեայ Համար կ'ըսէ. « Մինչև ի վախճան ժամանակաց քահանայանալ
 ուխտին, զոր ասաց նմա (այսինքն է Ղևեայ) Տէրն. Երդմեցուցա-
 նեմ զձեզ յԱստուածն երկնից », և այլն: Այս Հնագոյն օրինակիս
 Հարազատ ընթերցուածով Ռուբենի կտակէն մէջ բերուած առաջին
 նախաղասութիւնն՝ զեղեցիկ կերպով կը միանայ Հին Կտակարանէն
 առնուած վերջին նախաղասութեան հետ, ուր Քրիստոսի քահանա-
 յապետութեան մասին բնաւ խօսք չկայ, այլ Ղևեայ: Ուրիմն Քրիս-
 տոս անունն զլիւովին յունարէն՞ է, և յիշեալ դարէն վերջ՝ առ Եբ-
 րայեցիս թղթէն անցած է սոյն Կտակին մէջ:

Շմաւոնի Կտակին մէջ, այն է Զբո զլիւսոյն վերջ, յոյն և լատինն
 ունին նախ, — իբրբու Համաձայն, — « Զի Տէր Աստուած՝ մեծն Իս-

1. կը ծանուցանեմ, թէ այս բնագրաց կոչումները Փարբիկիոսի և Սինկերի
 յիշեալ հրատարակութեանց Համեմատ պիտ'ընեմ:

2. Եբրայական ձևն է Մեփ-յ, պն է օյե-ն կամ օծեալ յԱստուծոյ: Արդ, զի-
 տելով, որ անունն Մեփայ՝ Եթանասից թարգմանութեան կամ հին Կտակարանի
 մէջ երբէք Քրիստոս թարգմանուած չէ, ուրիմն կրեանք ըսել, թէ նոր թուականէն
 յոսով գրուած Կտակաց սկզբնագրին մէջ ևս չկար, այլ յետոյ ներմուծաւ:

րայէլի՝ յերկրի երևեսցի որպէս մարդ, և Ադամ փրկեսցի նովառ» . և թէ, « Վասն զի Աստուած մարմին զգեցեալ և կերակրեալ ընդ մարդկան, կեցուցէ զմարդիկ » : Իսկ յաջորդին մէջ՝ այսպէս . « Զի յարիցէ Տէր ի Ղեւեայ՝ իբրև քահանայապետ, և ի Յոզայ՝ որպէս թագաւոր, Աստուած և մարդ, և այնպէս ապրեցոսցէ զամենայն ազիկս և զագգն Խորայիի » : Առաջին տեղւոյն նօտրագրեալ մասունքն, որոնք թէ՛ Ա Կորնթ . ԺԵ գլխու 22 համարին, և թէ՛ Բարուքայ թղթի Գ գլխու 38 համարին հետ սերտ աղերս ունին՝ բնաւ չի միաբանիր վերջին տեղւոյն հետ : Այո՛, Ադամայ փրկուիլն՝ Քրիստոսի ձեռքով՝ հին Կաակարանի ոչ մի գրութեան մէջ որչ կերպով բացատրուած չէ, այլ միայն Ադամկրոց, Բարուքայ Յայտնոսթեան և այլ անկանոն գրոց մէջ : Ուրեմն, հին Կաակարանի՝ « Տէր Աստուած ի յերկրի երևեսցաւ և ընդ մարդկան շրջեցաւ », տեղւոյն մէջ յեռեալ նոր Կաակարանի այս պայծառ բացատրութիւնքս իսկ պէտք է, որ կամ Ա Կորնթացուց թղթէն և կամ լաւ ևս՝ վերջին երկու անկանոն գրութիւններէն մուտ գտած ըլլան հոն, այս գրուածքներէս շատ վերջ ապրող քրիստոնեայ մէկուն ձեռքով : Ներմուծողին՝ կապադովկացի յոյն մ՛ըլլալն իսկ անկէց յայտնի կը տեսնուի, զի մի և նոյն գլխում Քանանացուց, Ամաղեկացուց և Քետացուց կարգին մէջ կապադովկացիներ՝ ևս աւելցուցեր է, որոնք բնաւ պատմական կապ չունին Շմաւոն Նահապետի կամ անոր հօր Յակոբայ հետ : Արդ, դիտելով, որ ոչ Կապադովկիա անուան և ոչ այլ խնդրոյ նիւթ եղող նախադասութեան հետքն կը գտնուի հայերէն օրինակաց մէջ, ուրեմն կարող եմք եզրակացնել, թէ երբայական սկզբնագրին մէջ բնաւ տեղի չունէր այն : Իսկ վերջին տեղին, յորում Որդւոյն Աստուծոյ քահանայապետութիւնն և թագաւորութիւնն՝ Ղեւեայ և Յուզայի ցեղերէն կը յառաջագոյն, սերտ աղերս ունի Ռուբէնի կտակէն քիչ յառաջ մէջ բերուած տեղւոյն հետ . ուստի ուղղակի սկզբնագրին կը վերաբերի, և ծանօթ էր ի վաղուց Երանոսի, ինչպէս տեսանք անոր անուամբ մէջ բերուած հատուածէն, որ այս վերջնոյս համաձայն է, Ղեւեայ և Յուզայի մասին : Ուրեմն այս պարագայիս մէջ իսկ՝ հայն համաձայն է սկզբնագրին :

Ղեւեայ կտակին մէջ ևս, — ուր եօթն երկնից, նահապետիս հրեշտակի ձեռքով յայտնուած տեսլեանց, քահանայական տուչութեան

1. Այս անունս, որ յիշուած է Գանիէլի Էրդ տեսլեան մէջ, ի թիւս այլոց աշխարհաց նման պարագայով մի, կարծել կու տայ, թէ ներմուծողն ծանօթ կրտս ըլլայ ստուգիւ Գանիէլի տեսլին :

և պաշտամանց մանրամասն նկարագիրքն և անոնց հետ կապ ունեցող մեխայական գուշակութիւնքն՝ Յնովքայ Գրքի հետևողութեամբ յօրինուած են, կան, — ըստ յոյն և լատին խմբագրութեանց այնպիսի քրիստոսախօսութիւնք, զորս հայերէն Ա և Բ օրինակներն կամ բարբառային շեն ճանչնար և կամ շատ տարբեր կերպով: Իբրև օրինակ բաւական կը համարիմ հետևեալ տեղեաց վերայ հրահիրել ընթերցողաց ուշադրութիւնը:

Արդ, Կտակիս Փ՛ր զլիսոյն սկիզբը՝ թէ հայերէն և թէ յունարէն բոլոր օրինակաց մէջ կը ծանուցանէ իւր որդոց, թէ «Որդեակք իմ, ծանեայ ի Գրոյն Յնովքայ, զի ի վախճան ժամանակաց անօրինելոց էք դուք, և զձեռս ձեր արկանիջիք ի Տէրն ձեր՝ ամենայն շարութեամբ»: Այս հասկանալի է. զի կը գտնենք յիշեալ գրոց ԽՁ զլիսու 5 համարին մէջ սորա նմանը: Սակայն երբ նոյն զլիսում մի քանի տող վերջ կը յաւելու յայնն. «Զի հայրն մեր Իսրայէլ ոչ հաղորդեցաւ ամպարչութեան քահանայապետաց, որք ձգիցեն ըզձեռս ի Փրկիչն աշխարհի»: և ժԵ զլիսում նորէն կը դառնայ կրկնել, թէ «Եւ այժմ ծանեայ ի գրոցն Յնովքայ... եթէ զայրն՝ որ նորոգէ զօրէնս բարձրելոյն, մոչորնցոցիչ անոռանիցեք, և յետ այնորիկ որպէս կարծիցէքդ՝ պակասեցեք զնա, ոչ զիտելով զյարտարիւն նորա, և զանպարտ արիւն նորա՝ չարտարեամբ ձերով ի գոռիս ձեր աւնոռոցք. և վասն նորա սրբութիւնք ձեր աւերակ դարձցին, և պղծեալ մինչև յատակս, և ոչ եղիցի ձեր տեղի սուրբ, այլ ընդ հեթանոսս եղիլիք յանէծս և ի ցրումն, մինչև նա դարձեալ այց արասցի ձեզ՝ և ընկալցի զձեզ հաշտով և չրով», և մենք կը տեսնենք, որ այս վերջին տեղիս առնուած է Դանիելի մարգարէութեան եօթանասուն եօթներորդէն, բայց ոչ ըստ որում ի կիր արկած է Յնովքայ գրոց հեղինակն, այլ ըստ կատարման իրաց, որք պատմուած են Աւետարանաց մէջ, այնուհետև չենք տարակուսիր ըսել, թէ այդ տեղին ոչ եթէ Յնովքայ գրքէն, այլ Դանիելի Թ. զլիսու 27 համարէն է, ըստ կիրառութեան Մատթէոսեան աւետարանին: Այո՛, բաւական է բաղդատել այս վերջին տեղոյ նօտագրեալ խօսքերը Մատթէոսի ԻԵԿ զլիսու 25 և 63 համարներուն հետ, ուսկից առնուած են անտարակոյս: Իսկ վերջին բառերն՝ ամենամօտ նմանութիւն ունին առ Երբ. Թղթի Ժ զլ. 22, Գործոց Առաք. Ը զլիսու 37-38, և Յովհաննու Ա Թղ. Ե. զլիսու 6-8 համարներում աւանդուածին հետ, յորմէ ես փոխ առնուած կը համարիմ. իսկ մնացածը՝ Մատթ. ԻԴ զլիսու 15 համարին առաջերութիւն է:

Ստուգիւ՛ վերջին երկու տեղեաց եկամուտ լինելոյն յայտնի ապացոյց են դարձեալ հայերէն հին թարգմանութեան Ա և Բ օրինակներն, որոնք չունին բնաւ՝ «Զի հայրն մեր Խորայէլ — Փրկիչն աշխարհի» նախադասութիւններն. և ոչ իսկ վերջին տեղոյն «Եւ այժմ ծանեայ ի գրոցն Ենովքայ, զի եօթանասուն և եօթներեկս մուրիցիք» և «դարձեալ ընկալցի գձեզ ՀԱԻԱՏՈՎ ԵՒ ԶՐՈՎ» նախադասութիւնները: Աբրայն Մարտէն՝ արդէն ապացուցեր է, որ Յովհանու Ա թղթի Ե գլխու 6-8 համարերն չեն գտնուիր բնաւ նոր Կրտակարանի Հնագոյն երկաթագիր օրինակաց մէջ, իսկ միւս օրինակներում՝ Զ դարէն վերջ մուտ գտած են: Ուրեմն վերջին բացատրութիւնս՝ եթէ ստուգիւ այդ թղթէն փոխ առնուած է, այն ժամանակ պէտք է որ Դ դարէն վերջ եղած ըլլայ այդ ներմուծութիւնն Ղեկայ Կտակին մէջ:

Նոյն Կտակի Թ. գլխում, Յակոբայ՝ սու Ղեի ուղղեայ պատուէրներուն մէջ՝ կը գրեն յոյն և լատին հետեւեալը, պատարագաց մատուցման համար. «Եւ յորժամ կատարեսցես զգոհան, սրբեա՛ զանձնքո. և զպտուզս երկոտասան ծառոցն մշտադաշարեաց հան ի նոտեր Աստուծոյ, զոր օրինակ և Աբրահամ եցոյց ինձ»: Այս տեղիս՝ քննադատներէն ոմանք՝ եզեկիելի մարգարէութեան Խէ գլխու 12 համարին փոխառութիւն կարծեցին, իսկ այլք՝ Ենովքայ Գրոց Գ գլխէն: Սակայն ըստ իս ոչ մին և ոչ իսկ միւսը կարելի է դնել իրրև անմիջական աղբիւր այս տեղոյս. որովհետև ասոնցմէ առաջնոյն քով ոչ 12 թուոց յիշատակութիւն կայ և ոչ իսկ նուիրական ծառի մի, այլ «ամենայն ծառ ուտելի»: իսկ վերջնոյն քով ընդհակառակն՝ փոխանակ երկոտասանի՝ չորեքտասան տունկեր կը յիշուին, յատուկ անուանակոչութեամբ, զորս Ա.գ. Գիլման² արդէն ստուգարանած է երկրագործական տեղեկութիւններով, և նոյն գտած է Փաքր Արարածոցի կամ Յորելիեից Գրքի ԻԱ գլխում եղած 13 տնկոց հետ, ի բաց առեալ նշենին, որ կը պակսի վերջնոյս մէջ: Ուրեմն կը մնայ ըսել, թէ յիշեալ տեղին առնուած է ուղղակի Յովհաննու Յայտնութեան ԻԲ գլխու 12 համարէն³, որ յատուկ պարագաներով, այսինքն

1. Տես Յովհ. Աւետարանի Հնագոյն բնագրաց Ուսումնասիրութիւնը, վիճազութեամբ հրատարակուած ի Պարիզ, Պրակ Ա:

2. Տես *Das Buch Henoch übersetzt und erklärt*, Leipzig 1853, s. 1 9.

3. Այս բանս կրկին կը շատատուի նոյն իսկ Նեփթաղեմայ Կտակի, Գ. Ե. էջ 116, ըստ հայերէնի, այս տեղով. «Մինչդեռ ունէր Ղեի գարեգակն, երիտասարդ ոմն ես նմա սորո ելիստոսն արժանեաց», որ համաձայն է Յայտնութեան

է՛ նորոյ քաղաքի և քահանայութեան, ընդարձակուած է: Ստուգիւ,
Ղևեայ բերանը դրուած Յակոբայ տեսիլն ևս՝ իսկապէս նոր քահա-
նայութեան, պատարագի և նուիրաց մատուցման վերայ կը դառ-
նայ, այլարանօրէն: Այո՛, ինչպէս Յայտնութեան, այսպէս և Ղև-
եայ կտակին մէջ այլարանօրէն կենաց անուանեալ ծանն՝ է նոյն
իւնքն Յիսուս Քրիստոս, և 12 պտուղքն կամ տունկքն՝ են 12 Ասաքեալք,
ընտրեալ ըստ երկոտասան ցեղիցն, ըստ այնմ. «Սա եմ որքն, և
գուք ուռ» (Յովհ. Ա. գլ. ԺԵ. 15.):

Մեր կարծիքն աւելի ևս կը հաստատուի Եպիփանու հետեւեալ վկա-
յութեամբը: Ս. Հայրս իւր Յաղագս հերձոռածոց գրքին մէջ (Ա. Գնոստ.
ԱԱ. 8) կը բերէ գնոստիկեան անվաւեր գրութենէ մի այս տեղիս.
«Տեսի ծառ մի, որ ամ ըստ ամէ բերէ երկոտասուն պտուղս. և խօ-
սեցաւ ընդ իս ծառն և ասէ. Այս է ծառն կենաց»: Դիտելով, որ
Եպիփանուս յիշատակած գրութիւնն Յովհաննու Յայտնութիւնն չի
կրնար ըլլալ, որովհետև սա Գ. դարուն հազիւ անցած էր կանոնա-
կան գրոց կարգը և Յովհաննու անուամբ ծանօթացած, մանաւանդ
թէ անկէց յառաջ իսկ Որոզինէս, Երանոս և Հիպպոլիտոս կը յի-
շեն զայն. հետևարար, պէտք է ըսել, թէ Եպիփանոս՝ կամ Ղևեայ
կտակը կ'անկարկէ այդու, ըստ յունարէն երկրորդ խմբագրութեան,
և կամ՝ անկէց աւելի նոր գնոստիկեան մի այլ գրութիւն: Յամենայն
գէշս այս տեղիս յունարէն սկզբնագրին մէջ յետոյ ներմուծուած է.
վասն զի Հայերէն Ա և Բ օրինակաց մէջ դարձեալ կը պակասի:

Բենիամինի Կտակին մէջ, գլ. Թ. կը գրեն յոյնն և լատին. «Նր-
կոտասանեքին ցեղքն անդր ժողովեացին և ամենայն հեթանոսք. միև-
լն քառաձրեայն առաքեաց զառեախն փրկոտրեան՝ այցելոտրեանր միա-
ծնիւն, և մտցէ յառաջին տաճարն, և անդ Տէր անարգեացի և անպա-
տուեացի, և ի խալ ելցէ, և պատուեացի վարագոյր տաճարին. իլցէ
հոգի տեսան ի վերայ ազգաց՝ հեղեալ որպէս ի հրոյ. և իշաներովն
ի դժոխս՝ ելցէ յերկինս ի վեր. և յիշեացի թէ որպէս խոնարհ եղև
յերկրի՝ նոյնպէս և փառաշորեալ ի յերկինս»: Իսկ յաջորդ գլխում
կը խօսուի մարմնացեալ փրկչի երկրորդ զալստեան, մեռելոց յա-
բութեան, ընտրելոց վարձատրուելուն և անարգողաց դատապարտու-
թեան, և Հրէից՝ անհաւատութեամբ Աստուծոյ որդւոց ժառանգու-

ել զիսու 9 Համարին, և կ'ամբողջացնէ իՐ. զլուս 2 Համարի իմաստը: Յերմիելի
քով պաշտած եբբայական ընազրին մէջ, զոր իրատարակից Գաստէր, այս մասը
կը գտնուի, այլ կը յիշուին 12 զաւազանք, որով աւելի կը հաստատուի եկա-
մուս ըլլալն:

Թենէն անկանելուն վերայ: Այսպէս նաև ԺԱ. գլուխն ամբողջովին, ուր է Պօղոս առաքելոյ նկատմամբ այս նշանաւոր տեղիս. « Եւ ի գիրս սուրբս եղիցին գրեալ և գործքն և բանք նորին », և այլն:

Արդ, այս ընդարձակ հատուածներս, որք կը պակասին հայերէնի մէջ, անտարակոյս այնպիսի ժամանակի մէջ ներմուծուած են, երբ նոր Կտակարանին վերաբերեալ գրեանքն՝ ոչ միայն արդէն գրուած, այլ նոյն իսկ իբրև կանոնական ընդունած էին, — գէթ արևելեան եկեղեցւոյ մէջ, — և այն պատճառաւ իսկ անշուշտ գիրս սուրբս կ'անուանին: Նշանակեալ տեղեացս մէջ՝ Հին Կտակարանի ասութիւններն այնպէս խառն ի խառն մէջ բերուած են՝ նորին հետ, որ զը-ժուար կ'ըլլայ իրարմէ զատել. բայց մենք կրնանք ըսել, թէ որդւոյն Աստուծոյ տուած տիտղոսն՝ Միածին առաջին անգամ նոր կտակարանով գործածական եղաւ, ըստ այնմ. « Միածինն՝ որ է՝ ի ծոց Հօր, նա պատմեաց մեզ ». Հին կտակարանին մէջ բնաւ չենք գտներ զայն. հետևաբար, Կտակիս սկզբնագրի հեղինակն չէր կարող զայն գործածած ըլլալ: Այսպէս նաև առաջին տաճար, բացատրութեամբ, — դիտելով որ սողովմոնեան չի կրնար ըլլալ, վասն զի ի վաղուց կործանած էր, — կամ Քրիստոսի մարմինը հասկանալի է, յորում կրեց նա և խաչեցաւ, և կամ Երուսաղէմայ տաճարի Սրբութիւն սրբոց կոչուած վայրը, ուր քահանայապետն միայն կարող էր մտնել: Այս երկու կերպով ևս՝ առ Երրայեցիս գրուած թղթէն ներշնչուած է: Ուրիշ կերպով անհասկանալի է Քրիստոսի մուտն յառաջին խորանը, վասն զի Հրեայք իբրև քահանայապետ չի ճանչցան զայն, քանի որ ի կեանս էր, թող թէ թողուլ որ հոն մտնէ: Նշանաւոր պարագայ մի կը յայտնեն Բենիամինի ցեղին համար ըսուած այս խօսքերս, թէ « Բայց սակայն ի բաժնին ձերոսմ եղիցի ժառանգութիւն նորս »: Այս խօսքերս, ինչպէս նաև Ժ գլխու առաջին երեք էջերն, — ուր կը յիշուին Աբրահամէն սկսեալ յաջորդ Նահապետք, — մեծ ազերս ունին Գ Եզրի Գ գլխում աւանդածին հետ. Հաւանօրէն այս կամ նման գրուած մ'է, յիշեալ տեղէն յառաջ Բենիամինի կողմէն ծանուցածը, թէ « Վասն զի լուայ ես ի բանից Հարցն մերոց, զի պոռնուկեալք դուք զպղծութիւն Սողոմոնոց »: Ասկէց աւելի նոր պարագայ մի կը յայտնեն, Թ. գլխէն քիչ առաջ, մէջ բերուած տեղոյն վերջին խօսքերն. այսինքն են. « Եւ իջանելովն ի դժոխս՝ ելցէ յերկինս . . . և որպէս խոնարհ եղև յերկրի, նոյնպէս և փառաւորեալ յերկինս », Քրիստոսի համար զուրցուած խօսքերն, որոնք ոչ Հին և ոչ իսկ նոր Կտակարանէն, այլ եկեղեցական Հօր մի բացատրութիւն

կ'երևին: Փարրիկիոս¹ այս նկատմամբ Քէոզորեոսսի՝ Սոայ. է. 14 մեկնութենէն հետևեալ հասուածը մէջ կը բերէ. «Ο δὲ Ἐμμανουὴλ καὶ εἰς τὸν ἄδην κατελήλυθεν, καὶ εἰς τὸν οὐρανὸν ἀνελήλυθεν. καὶ εἰς τὸν ἄδην κείμενον Ἀδάμ εἰς οὐρανοῦς ἀνεβίβασεν, αἰσինքն է «Իսկ Էմանուէլ և էջ ի դժոխս, և ել յերկինս. և խոնարհելովն ի սանդարամեոս երկրի, վերացոյց զԱզամ յերկինս»: Այս տեղիս թէպէտև պակասաւոր կերպով մեզ հասած, սակայն Կտակին հետ ունեցած նմանութիւնն անուրանալի է: Արդ, Քէոզորեոսս, գրած և ապրած է 420—458ին. ուստի Բենիամինի Կտակին յիշեալ բացատրութիւնն, եթէ ստուգիւ ասկէ փոխ առնուած է, այսպիսի փոխառութիւն մի յիշեալ թուականներէն յառաջ եղած չի կրնար ըլլալ: Այսպէս ուրեմն Կտակացս մէջ ներմուծուած քրիստոնէական յաւելուածոց իրրև վերջին սահման կարելի է դնել Ս դար. ասկէց վերջ եղածներն պէտք չէ, որ իրրև ընդհանուր նկատուին, այլ այս ինչ կամ այն ընդօրինակողի և յարասողի մասնական գործ: Այսպէս ուրեմն նոյն իսկ Հայերէն թարգմանութեան հրատարակութեամբ, ինչպէս և յառաջ, կ'ապացուցուի Գրաբէն արտայայտուած կարծիքը, նկատմամբ քրիստոնէական ներմուծութեանց. սակայն երբայական սկզբնագրի ժամանակի մասին գծած անոր սահմանքն՝ այլևայլ զժուարտութեանց կ'ընդհարին, նա և այսօր, նոյն իսկ Հայերէնի կողմէն:

Ոմանք 'Աւետայ Կտակի ժն. գլխու հետագայ տեղւոյն վերայ հաստատուած, ուր կ'ըսուի. « Յաղագս այսորիկ տաճարն ճեր՝ զոր ընարեսցէ Տէր լինել տեղի անուան իւրոյ, եղիցի առերակ և ի պղծութիւն ապականութեան, և դուք գերի վարեալիք ընդ ամենայն ազգս », և այլն, համարեցան, թէ հեղինակս՝ Նրուսաղեմի և անոր տանարի վերջին աւերման և կործանման վերայ ուղղակի ուզած է խօսիլ, որ եղաւ Տիտոսի և Վեսպասիանոսի ձեռքով, յամի տեառն 70. Հետևաբար, եզրակացուցին, որ երբայական սկզբնագիրն՝ այս թուականէս վերջ գրուած պէտք է ըլլայ:

Սակայն, ըստ իս, այսպիսի մի մասնական և անորոշ բացատրութենէ, — որով աւելի նարուզողոնոսորայ օրով կատարուած դէպքը կ'ակնարկուի, — անհիմն կ'երևի այս օրինակ հետևութիւն մի հանել: Ուստի, ես կ'ուզեմ այստեղ ընդհակառակն այնպիսի ընդհանուր երևոյթներ ցոյց տալ, որոց մասին տարակուսիլն իսկ դժուար է:

1. Codex pseudepigr. Vet. Testam. Lipsiae T. I. p. 741.

Ա. Կտակացս Հեղինակն Հինգ անգամ յանուանէ կը յիշէ Ենովբայ Գիրքն, և ասկէց տեղեր մէջ կը բերէ, և երկու անգամ ևս առանց անուան: Շմաւոնի Կտակի Ե. գլխում և Նեփթադիմեայ Կտակի Դ. գլխում, Ենովբայ գրոց և Յուզայի Կտակի ԺԸ. գլխու Հեղինակութեամբ կը ծանուցուի այդ ցեղերու ապագային մէջ գործելիք պղծութիւնները: Դանայ Կտակի Ե. գլխոյն մէջ կ'ըսուի. « Կարդացի ես ի գիրս Ենովբայ արդարոյ, զի իշխան ձեր՝ սատանայ եղիցի »: Այս տեղիս՝ նման է Մեթոդիոսի Յաղագս Նեոխն և կատարածի աշխարհիս գրութեանը, ուր կ'ըսուի նոյնպէս նեոխն համար, թէ « ծընանի ի ցեղէն Դանայ »: Ղևեայ կտակի Ե. գլխում յիշատակութիւն կ'ընէ երկնային տախտակաց, զորս կը գտնենք նոյնպէս յիշատակուած առ Ենովբայ: Իսկ Ժ. գլխում կ'ըսէ. « Զի տունն՝ զոր ընտրեաց Տէր, Երուսաղեմ կոչեսցի, զոր օրինակ գրեալ է ի գիրս Ենովբայ արդարոյ »: Ռուբենի Կտակին մէջ, առանց անուան, կը խօսուի զըստերաց մարդկան և զոչարթնոց կամ Սեթեանց վերայ, որոնք խառնակելով անոնց հետ՝ հսկաներ ծնան. սակայն Ենովբայ գրքէն առնուած է:

Բ. կտակաց Հեղինակին ծանօթ եղած կ'երևի Յորեյիկից գիրքն, և ասկէց եղած են բազմաթիւ կերտութիւնք. օրինակի աղագաւ, Ռուբենի կտակի, Գ գլխում, Յակորայ՝ առ Սահակ այցելութեան, Բալայի լոգանալուն և Ռուբենի անոր հետ շնալու տեղեկութիւնքն: Ղևեայ Կտակի Բ, Դ, Ե և Ը. գլուխներում Ղևեայ տեսեանց նկարագիրքն՝ իւր քահանայութեան և նուիրաց մասին, այլովք հանդերձ, Յուզայի կտակին մէջ (գլ. Գ, Է, Թ և Ժ) Յակորայ՝ Եսաւին և անոր որդւոց հետ եղած պատերազմի նկարագիրն, Հանդերձ Ա դուրիմայ, Եղովմացւոց, Բաթսուայ, Թամատայ, Էրայ և Աւնանայ արարուածներով, որոնք Մենդոց գրոց մէջ կամ չկան բնաւ և կամ տարբեր կերպով և համառօտիւ յիշատակուած են: Այս կարգէն են նաև Յուզայի ապաշխարութեան պատմութիւնն, Յակորայ որդւոց՝ Եգիպտացւոց պատերազմի ժամանակ ի Քանան թաղուելու մասին աւանդուած տեղեկութիւններն, որք ստեպ կը յեղյեղուին Ռուբենի Կտակի Է. գլխում, Շմաւոնի Ը. գլխում, Ղևեայ ԺԹ. գլխում, Յուզայի ԻԶ. գլխում, Զարուղոնի Ժ. գլխում, Դանայ Է. գլխում, Գաղայ Ը. գլխում, Ասերայ Ը. գլխում և Բենիամինի Կտակի ԺԲ. գլխում: Այսպէս են նաև Ղևեայ կտակի, Ե և Զ գլուխներուն մէջ, Սիկիմացւոց դէմ գործած պարսաւելի տարաքին համար Յակորայ որդւոց մասին տրուած զրուատիքն, ԺԱ. գլխում Ղևեայ կնոջ՝ Մեղբայի

մասին գրածներն . և Յովսեփայ կտակին մէջ՝ անոր մարմնոյն նկատմամբ՝ Եգիպտացւոց ունեցած նախապաշարումն : Նահապետաց տարեթուոց մասին ևս կատարելապէս կը համաձայնին իրարու կտակաց և Յոբելիեից գրութեանց հեղինակներն : Օրին . աղագու , Վեայ՝ ի Քանան գացած ժամանակ՝ 8 տարեկան ըլլալն , 18 տարեկան Սիկիմացւոց դէմ պատերազմելն և 19 տարեկան հասակին մէջ քահանայանալն . — Յուգայի՝ Ամովրհացւոց դէմ պատերազմած ժամանակ՝ 20 տարեկան ըլլալն , 40 տարեկան հասակին մէջ Եդոմացւոց դէմ պատերազմելն և 46 տարեկան հասակում Եգիպտոս գաղթելն : Քաղայ՝ 127 տարի ապրելն և 5 տարիէն ի Քանան թաղուիլն . — Յակոբայ կենաց 100րդ ամին Բենիամինի ծնանելն , և այլն և այլն :

Արդ , նկատելով մէկ կողմէն , որ ցոյց տրուած տեղեաց նմանութիւնն՝ առանց երկրայութեան և իրական է Յնովքայ և Յոբելիեից գրոց հետ , և միւս կողմէն , թէ սաքա աւելի հին են քան ժԲ Կտակներն . Հետևաբար , վերջնոցս հեղինակն՝ եղած ըլլալու է բանաբաղ առաջնոց , քան թէ նոքա՝ վերջնոցս . ապա ուրեմն յիշեալ գրութիւններէն բաւական տարիներ վերջ գրուած են ժԲ Նահապետաց կտակներն : Բայց պէտք է ըսել և զայս , թէ քրիստոնէական ներմուծութեանց պատճառաւ՝ ինչպէս դժուար եղած է ցարդ որոշել Յնովքայ և Յոբելիեից գրոց սկզբնագրերու ճիշդ ժամանակամիջոցն , այսպէս և ժԲ Նահապետներու Կտակաց տարեթիւն . յամենայն դէպս՝ կրնանք եզրակացնել , թէ ժամանակաւ կրտսեր է քան միւս երկու գրութիւններն , զիտելով , որ ասոնցմէ եղած փոխառութիւններն՝ կը գտնուին նոյն իսկ Կտակաց Հնագոյն կարծուած , այն է՝ պատմական մասին մէջ :

ԺԲ Կտակաց գրիչն՝ մի և նոյն անձն է անտարակոյս . վասն զի մի և նոյն ասութիւնք , մի և նոյն վարդապետութիւնք և մի և նոյն ձկտումն ամենուրեք յայտնի կը տեսնուին : Նորադարձ Հրեայ և բնակութեամբ պաղեստինացի մ'ըլլալն իսկ՝ առանց տարակուսի է . որովհետև մեծ հմտութիւն ցոյց կու տայ այն ազգին գրաւոր և կենդանի աւանդութեանց , արարողութեանց և աշխարհագրութեան և պատմութեան ճիշդ և մանրապատում տեղեկութիւնք իսկ , ինչպէս նաև ստուգարանական մեկնաբանութիւնք անուանց , զայս լիովին կը հաստատեն : Հեղինակիս ոճն՝ թէպէտև միակերպ է և անպաճոյճ , բայց իւր երկատասան դիւցազուններուն բարուց և վարուց վերայ տուած առանձին և բնորոշ նկարագրաց մէջ կիրթ և խորագնին մէկը կը տեսնուի . իսկ Ռուբենի կտակի մէջ վասն եօթն շնչոյ մոլորութեան , Նեփ-

Թաղիմայ կտակի մէջ՝ վասն նմանոչքեան հոգոյն և մարմնոյ՝ յարարչագործոչքեան, Ասերայ կտակին մէջ՝ վասն երկոց շնորհիւնակաց և երկրիմոչքեան և միադիմոչքեան, Յովսեփայ կտակի մէջ՝ Պետափըրեայ վաւաչոտ կնոջ՝ շարարուեստ տափանքներուն սաստկութեան, Յովսեփայ անտեղիտալի կամաց հաստատութեան մասին ըրած հոգեբանական այնքան նրբութեամբ նկարագրութեանց մէջ՝ իբրև նորոմն Փիլոն կամ գնոտիկեան իմաստասէր կը հանդիսանայ մեզ: Յունարէն լեզուով գրուած մատեանք իսկ՝ ծանօթ են հեղինակիս, և ճարտարութեամբ օրինակներ մէջ կը բերէ անոնցմէ. օրինակի աղագաւ, Նեփթաղիմայ կտակի Բ. գլխու այս բացատրութիւնս. « Վասն զի կշառ և չափով և կարգառ (թուով) են ամենայն արարածք բարձրեղյն », իմաստութեան ՓԱ. 21 տանէն է:

Բարոյական տեսակետով շատ հրահանգիչ է այս գրուածքս. վասն զի իւրաքանչիւր կտակի մէջ կը դատապարտուին եօթն ոգիք կամ թելադրութիւնք Բելիարայ, այսինքն են մահուչափ մեղք, և կը յանձնարարուին անոնց հակառակ մարդկային և աստուածային բնութեան արժանավայել լաւութիւնք: Գրուածքիս մէջ՝ հեղինակին տիրող գաղափարն է՝ Ղևտական քահանայութեան կամ հոգևոր իշխանութեան գերիշխանութիւնն, յուզայեան գաւազանի կամ մարմնաւոր թագաւորութեան վերայ, զորս գիտցած է ինքն, կամ լաւ ևս յետագայ մէկն ճարտարութեամբ միացնել յանձին Միածնին կամ Անդրանկին՝ Աստուծոյ մարմնացելոյ, ընդ միով աստուածպետութեամբ: Երրորդութեան, փրկագործութեան, և Հոգւոյն Սրբոյ շնորհաց խորհուրդներն՝ այս տեղ աւելի պայծառ և մեկին նկատուած են՝ քան թէ հին կտակարանի ո՛ր և է գրութեան մէջ. և այս, ինչպէս ըսինք, քրիստոնէական լուսաւորութեան արգասիք համարելի է: Ղևեայ կտակի Գ. գլխում՝ եօթն երկնից և անոր բնակչաց եղած նկարագիրն՝ նմանութիւն ունի Եսայեայ վերացումն է. Ը. և Թ. գլուխներուն հետ. ուստի, կարծուի կը թէ մէկը՝ միւսէն ներշնչուած ըլլայ: Պ. Ռընէ Բասսէ՛ կը համարի, թէ վերջինս՝ Քրիստոսի թուականին Բ. գարուն գրուած է, և հօս կը տեսնէ մոնտանեան հերետիկոսութեան սերմեր, որով կ'ուզէին ընդունելի ընել Պրիսկիլլեանց և Բոկոմիլաց սոյն գրութիւնը: Սակայն դիտելու է, որ կտակի յիշեալ գլխում՝ եօթն երկնից հանգամանքներէն աւելի՝ նոյնաթիւ հրեշտակաց դասակարգութիւնքն և անոնց պաշտամունքը կը նկա-

1. Les Apocryphes etiop. III. L'Ascension d'Isaie, Paris 1894. p. 2.

բարձրուն, որով աւելի Յովհ. Յայտնութեան, քան թէ Եսայեայ վե-
րացման հետ սերտ յարաբերութիւն ցոյց կու տայ :

ԺՅ կտակաց հայերէն թարգմանութիւնն եղած կ'երևի Զ. կամ
Էր. դարուն. և յիրաւի բաց ի շարահանութեան լեզուէն և ոճերէն,
այլ և այլ օրինակաց՝ իրարմէ ունեցած հոծ տարբերութիւնքն իսկ
յայտնի նշան են անոր հնութեան: Գրութեանս ոճէն միայն դժուար
է դատել և յայտնել անոր թարգմանիչը, քանի որ հայկ. մատենա-
գրութեան մէջ յիշուած չէ որոշակի: Ես կ'ախորժէի Աղամգրոց հին
թարգմանչին ընծայել նոյնպէս և այս թարգմանութիւնս, դիտելով
մէկ կողմէն երկուքին մէջ երեցած լեզուին մերձաւորութիւնը, իսկ
միւս կողմէն թարգմանութեանցս անճշդութիւնքը: Բայց գիտնա-
լով քաջ, որ թարգմանչի անուանէն աւելի՝ հայերէն թարգմանու-
թեանս որպիսութիւնն և ներքին հանգամանքներն ուշապրաւ են ու-
սումնասիրաց համար, հետևաբար՝ աւելի այն մասին վերայ կ'արժէ
խորհրդածել, իւր բնագրին հետ ունեցած համաձայնութիւնքը և
կամ անհամաձայնութիւնները գիտնալու համար: Բայց թէ որն է
այդ բնագիրն. ահաւասիկ ուրիշ հարցում մ'ես, որ հետևեալ քննու-
թեամբք միայն կարէ լուծուիլ. վասն զի ոչ մի օրինակի մէջ թարգ-
մանուած բնագրի մասին յիշատակագրութիւն չկայ:

Եբրայական բնագրէն յեղեալ յունարէն թարգմանութիւնն՝ ամե-
նէն հնագոյնն ըլլալով, բնականաբար կը հետևէր, որ հայերէնն այլ՝
փոխադարձաբար յունարէնի վրայէն թարգմանուած ըլլայ Զ-Էր
դարում. որովհետև այդ ժամանակ Հեբրայական բնագիրն արդէն
անհետացած էր, իսկ լատիներէն և եթովպարէն թարգմանութիւնք՝
դարերէ վերջ կատարուեցան: Սակայն խորը քննելով՝ հայերէն թարգ-
մանութեան մէջ կան այնպիսի հանգամանքներ, որոնք մեծ խոչընդ-
ոտներ կը յարուցանեն այդ եզրակացութեան դէմ, և կը ստիպեն
զմեզ ենթադրել այժմեան յունարենէ աւելի հին և համեմատու-
թեամբ եբրայական սկզբնագրին մօտ մի ուրիշ թարգմանութիւն:

Առ այս դիտել կու տանք, Ա. որ հայերէն թարգմանութեան հնա-
գոյն օրինակն միայն՝ ի սկիզբն Կտակաց գրուած ընդհանուր խորա-
գրովը կը համաձայնի յունարենին. իսկ միւս Կտակաց խորագրերն
բոլորովին կը տարբերին ի յունէն. վասն զի այս վերջինս՝ մէն մի
կտակի վերայ նահապետին անունը կ'արձանագրէ և ոչ այլ ինչ:
Այս կողմանէ՝ հայերէն թարգմանութիւնն աւելի լատիներենի հետ
մերձաւորութիւն ցոյց կու տայ. որովհետև Շմաւոնի, Ղևեայ, Յու-
դայի, Նեփթաղիմայ, և Ասերայ Կտակաց խորագրերն՝ վերջնոյս կը
համաձայնին:

Բ. տարածայնութիւն մի կը տեսնուի յատուկ անուանց ուղղա-
գրութեան մէջ: Օրինակի աղագաւ, Ռուբ. Կտակի մէջ փոխանակ
յուն. Βηθλεέμ (Լ. Bethlehem)ի՝ ունի հայն Բեթլեհեմի, — Շմաւ. Կը-
տակի Δοθαΐμ (Լ. Dotsaim) ի տեղ ունի՝ Գորթեհգորայ, և Λιβάνον
(Լ. Libani) լիբանիսի. — Ղեեայ Կտակի մէջ Αβελμαουλ (Լ. A-
belmaul)ի՝ Աբելմաուլ, — Դեβλαϊ (Լ. Gebla) հայն Անդայիս (Ա.
Բ. օր Վեմրողայ), և յուն ʼΑεβιλᾶ (Լ. Abila)ի՝ Աբիւայ. — փոխ.
Γερσάμ (Լ. Gersam)ի հայ. օրինակք ունին Գերսան, Գերսան,
Գեսիս, Գեստան, Գեթսոն և Գերսաւ. — փոխ. յուն. Μεραρι (Լ. Me-
rari) Ա օր. ունի Միարիս, — Իοχαβεδ (Լ. Jochabed) ունին՝ Նարա-
րէք (ըստ Գ, Գ. օր. Յորարէք, ըստ Ա. օր Գեասպատ, ըստ Բ. օր.
Որարէք. — Փոխ. Δομνι (Լ. Lomni)ի՝ ունին փոփոխակի Ղովնի,
Ղուի, Յոնի և Ղուի. — Փոխ... Σεμει (Լ. Semei) Բ. օր. ունի
Սեմի, ըստ Գ. Ե. օր Սեմեի և Սիւ, Ա. օր. Սեմի. — փոխ. Ե.
Αβράμ (Լ. Abram) հայ. Աբրամ. — և Իσαάκ (Լ. Isaar) Ի և Գ.
օր. ունին Իսաքար, իսկ այլք Իսահա: — Յուդայի Կտակի մէջ փոխ.
յուն. ΑΧωρ (Լ. Achor) հայն ունի ըստ Ա, Բ. օր. Գորայ, ըստ այ-
լոց Արնորայ, — Σουρ (Լ. Sur)ի՝ Ծոր, — Βελισαδ (Լ. Beelisa) հայ.
օր. ունին Բելիսաստ (Ա. օր. Բելիսա և Բ. օր. Բելիսաք: Յէջ
79 հայն ունի անուես Արիտա, ըստ Ա. Բ. Գ. Գ. օր Արիտա (Ա.
րեւայ: Յոյնը չունի անունս, այլ ἑτέραν¹ πόλιν. ըստ. Are m կը
գրէ:

Փոխ. յուն. Θαφουε (Լ. Taffi) հայ. Թովկացոցն. ըստ Ա, Բ,
Գ, Գ. օր. Թեովկացոց. — Փոխ. ΜεΧիր (Լ. Machir)ի՝ Մաչիր, —
Ραμβαήλ (Լ. Rambahel)ի՝ Ռամպայի: Βεσσουε (Լ. Bethsue)ի Բեթ-
սուէ, — Χωζήβ (Լ. Horeb)ի Քոզար, ըստ Ա, Բ, Գ, Գ. օր Քոզ-
գար: Իսաքարայ Կտակին վերջ յաւելուածով մ'ունի անուանքս
Մարքիւրայ և Հասկողմայ (Գ. օր Հասկողմայ), որք չեն գտնուիր
յոյն և լատին թարգմանութեանց մէջ: Հայերենի այս յաւելուածս՝
դժուար է, որ ըստ դիպաց կամ ըստ քմաց եղած եկամուտ ըլլայ.
վասն զի ամբողջ կտակն իսկ՝ մեծապէս կը տարբերի յոյն և լատին
թարգմանութիւններէն, իբրու այն՝ թէ մի ուրիշ բնագրէ եղած ըլ-
լար: Չարուղոնի Կտակին մէջ փոխ. յուն. Αινᾶ (Լ. Eva)ի՝ Չեւե-
նա. (Բ. օր. չունի բնաւ). — Նեփթաղիմայ կտակին մէջ, յէջ 117,

1. Այս բառս յատուկ անուն մի խանգարուած չեն է. և Αρέταν կարգալու է:
Այդ խանգարուածը կանուխ եղած ըլլալու է, վասն զի լատին թարգմանն ևս՝ այն
գատնառու անշուշտ այսպէս փոխադրած է:

նանաւոր է այս տեղիս « Ասիացիք և Պարսիք, Պարսիկք և Իլա-
մացիք, Ասորիք և Գաղատացիք » . մինչդեռ յոյնն և լատին ունին
սյոպէս . « Ἀσύροι, Μήδοι, Πέρσοι, Ἑλμαῖοι, Γελακαῖοι (Χελκαῖοι),
Χαλδαῖοι, Σύροι » : Հայերէնի առաջի երկու անուաններն և վերջինն՝
իսկարուած են : Յովսեփայ Կտակի մէջ փոխ : Μεμφίας (Լ. Mem-
phitica) ի՛ Մեփայ, ըստ Ա օր . Բեմքայ, ըստ Բ օր . Մեմքայ, — ի
Տրոփօն (Լ. Se · hon) ի՛ Սաիքոյ : Հաւանօրէն յուն յօդն ի՛ միացնելով
Տրոփօնի հետ յառաջ եկած է հայերենի մէջ սկզբնատառ Ս ձայնա-
ւորն : Փոխ . յուն . Ἰνδοκολπιτάς (Լ. Indocolpitas) ի՛ Հնդկակոպա-
ցիսն, ըստ Ա և Բ օր : Հինգ կապոպացիսն, ըստ Գ օր . Հնդկակոպա-
ցիսն : Յուն . λ ωαռի կորուստն դիպուածով եղած չէ , զի ընդհանուր է :

Գ . Անհամաձայնութիւն մի կը տեսնուի մմաց թուարկութեանց
մէջ : Բուրենի Կտակին սկիզբը՝ յոյնն և լատին ունին . « Յառաջ քան
զեռանելն իւր՝ ի հարիտք քսան և հինգ ամի կենաց իւրոց » , բայց
հայերենի մէջ կը պակսի : Շմաւոնի կտակին սկիզբը՝ յոյնն և լա-
տին ունին՝ 120 ամի կենացն . իսկ հայ . Ա և Բ օր . ունին ընդհա-
կառակն 124 ամի : Յէջ 38, Շմաւոնի ձեռաց ցամաքելոյն կամ պատու-
հասին՝ իբրև ժամանակամիջոց կը նշանակուի ըստ հնագոյն օրինա-
կին՝ 30 օր , և ըստ այրոց 60 . մինչդեռ յոյնն և լատ . ունին « զա-
ւարս եօթն » : Ի վերջ կոյս մի և նոյն կտակին , այն է՝ Ըրբ գլխում
յոյնն և լատին նոյնպէս կը կրկնեն , թէ Շմաւոն մեռաւ ի 120րդ
ամի կենաց իւրոց . իսկ հայ . օրինակք առհասարակ՝ 125 կը գրեն :
Ղեկայ Կտակին Բ . գլխուն սկիզբն՝ անոր իր հօր հետ ի Սի-
կիմ գալու թուականը՝ յուն . և լատ . մէջ նշանակուած չէ . իսկ
հայերենի առաջին խմբի վերաբերեալ երեք օրինակք ունին . « Յետ
որ ամաց » , այսինքն է՝ ծնանելոյն : Նոյն գլխում հայն ընդհակա-
ռակն չուէի յունի և լատինի « գերբորդ » (երկինք) . — Ըրբ գըլ-
խուն սկիզբը՝ յոյնն և լատին ունին զաւուրս 70 . այսպէս ունին
նաև հայ . Ա և Բ . օրինակք . իսկ միւսներուն մէջ՝ 60 օր գրուած է :
ԹԱր . գլխում Կահաթու ծնունդը կը նշանակուի , ըստ յունին
և լատինի , Ղեկայ 35րդ տարւոյն , այսպէս կը գրեն նաև հայ . ե-
րեք օրինակք . իսկ Ա և Բ . օրինակներն ունին 30 միայն : Մերա-
րեայ ծննդեան թուականն է , ըստ յ . և լ . ի 50րդ ամի կենաց
Ղեկայ . իսկ հայ , օրինակք առ հասարակ՝ ունին 40 : Նաբարեթ՝ (Յո-
բարեգի) ամուսնութիւնն՝ 90 ամի կենաց Ղեկայ կը դնէ յոյնն՝ ԹԲ .
գլխում , և լատինն 94 , իսկ հայերէն օրինակք չունին այս թիւե-
րէս ոչ մին և ոչ միւրը : Յովսեփայ մահն՝ 118րդ ամի կենացն հան-

գիպած է, ըստ յոյն և լատին թարգմանութեանց. հայերէն երեք օրինակք ունին ընդհակառակն 110 ամ միայն, իսկ Ա և Բ. օրինակներուն մէջ կը պակսի որ և է թուական: Ի վերջ ժե. գլխոյն՝ հայն ունի՝ « Վեցերորդ մասն զաւակի (Ա. և Բ. օր. ազգի մերոյ) ձերոյ » . մինչդեռ յոյնն և լատին՝ կը գրեն՝ « ոչ ի զաւակէն իմմէ » : Կտակիս վերջը՝ յոյնն և լատին կը գրեն վասն Դևեայ. « Կեցեալ ամս 137 » . հայերէնն, ըստ Ա և Բ. օրինակաց, ունի 135, իսկ ըստ այլոց օրինակաց՝ 138: Յուդայի կտակի Թ. գլխում Գադայ և Ռուբենի կտորած մարդկանց թիւն՝ 6 է ըստ յուն. և հային. իսկ լատիններէնն՝ 60 կը գրէ: Նոյն գլխոյն վերջ՝ յոյնն ունի 500 քոռ ցորենոյ, 500 բէթ ձիթոյ և 1500 շափ գինւոյ, լատինն ունի ընդհակառակն 200, Բ. 500, և գինի 1500. հայն լատինին կը համաձայնի: Զարուզոնի Կտակին սկիզբը՝ հայն կը գնէ. « Ի հարիար ի քսան և ի չորրորդ ամի կենաց իւրոց », և յետ « երկուց ամաց մահուան Յովսեփայ » Զարուզոնի մահը. մինչդեռ յոյնն ունի, ընդհակառակն, առաջնոյն տեղ՝ τεσσαράκοντῶ καὶ δεκάτῳ. իսկ լատինն՝ 114րդ ամի կենաց Զար. և 32 մահուանն Յովսեփայ: Նեփթաղիմայ Կտակին սկիզբը՝ հայն համաձայնելով յունին՝ անոր մահը 130րդ ամի կենացն կը նշանակէ. լատինն՝ 2 տարի աւելի ունի, որ սխալ է, ըստ որում կը նշանակուի առ Փարրիկիոսի: Իսկ գալով օրաթուի ամսոյն, գիտելու է, որ յունի τεταρτῷ (L. quarta die) τοῦ μὴνόςδε տեղ, հայն ունի՝ « Ի գրոշիս ամսոյն », որ կարծես ուրիշ բնագիր մի ցոյց կու տայ: Ե. գլխում՝ տեսլեան զուարակի՝ եղջերաց թիւն է ըստ յ. և լ. 2, որուն կը համաձայնին և հայ. Ա և Բ. օրինակներն. իսկ միւսներն ունին 12, համաձայն Եզրի անվաւեր գրքին մէջ թուարկուած արժուոյ թւոցը: Գադայ մահը՝ հայն յունին հետ 125րդ ամի կենաց նորա եղած կը նշանակեն. իսկ ըստ լատինի՝ 107րդ: Գադ՝ իբրև Բ.րդ որդի Յակոբայ կը նշանակուի՝ ըստ հայ. թարգմանութեան. մինչդեռ յոյնն և լատին ունին Էրդ: Ասերայ մահն՝ անոր կենաց 125րդ ամին կը գնեն յոյնն և հայն. լատինն՝ ընդհակառակն ունի 120րդ միայն: Յովսեփայ Կտակին մէջ, գլ. Գ, յոյնն և լատին կը գրեն, թէ պահեաց 7 ամ. հայն ընդհակառակն « զեօթն աւուրս » : Յովսեփ՝ փոխազանառին տան մէջ ի պահեստի կը գրուի 3 ամիս և 5 օր, ըստ յոյն և լատին թարգմանութեանց. իսկ հայն ունի՝ « աւուրս 95 » : ԺՔրդ գլխում՝ յոյնն և լատին կը գրեն Պետափրեսի համար, թէ երրորդ էր յետ Փարաւոնի. իսկ հայն՝ ունի երկրորդ: Յովսեփ կը գծուի ըստ յուն. և լատ. 80 դահեկանով, և ներքինին 100 ցոյց կու տայ իւր

տիրոջ. Իսկ Հայն՝ փոխանակ առաջին թուոյն՝ ունի 60. և երկրորդին՝ 80: Ըստ Հայ. թարգմանութեան՝ Յովսէփ կը վախճանի ի հասակի 110 ամաց. յոյնն և լատին շունին զայն: Բենիամինի մահը կը նշանակեն Հայն և յոյնն ի հասակի 125րդ ամաց, լատինն ունի ընդհակառակն 120րդ. Իսկ Հայ. Ա և Բ օրինակներն կը գրեն 121րդ: Հայն այս տեղ յաւելուած մ'ունի, որ կը պակսի թէ՛ յուն. և թէ՛ լատ. թարգմանութեանց մէջ, այսինքն է՝ Բենիամին իւր կտակը կ'ընէ, օրինակի մի համաձայն, « ի չորրորդ աւուր հիշանդոտքեանն », իսկ այլք առհասարակ ունին « ի չորրորդ ամի »: Քրք գլխում Յովսէփի ողջագուրելով կը համբուրէ իր եղբայրներն իբրև « Ժաւն երխ » ըստ յուն. և լատիներենի, իսկ Հայն ունի՝ երխ միայն, որ ընդօրինակողին վերագրելի է: Էր գլխում կը գրէ Հայն վասն Կայնի. « Ի հարիշք ամի վրէժած ի վերայ նորա » . մինչդեռ յոյնն և լատին ունին « ըստ եօրանց ամաց »: Ասոր հակառակ քիչ յետոյ, ուր յոյնն և լատին կը գրեն, թէ « յեօրեհարիշքերորդի ամի դատի Կայէն », Հայն ունի՝ եօրն միայն: Այսպէս նաև Ղամբէի մասին, ուր յոյնն և լատին ունին՝ « եօթանասնիցս եօթն », Հայն կը գրէ միայն « եօրանասուն անգամ »: Հուսկ ուրեմն, Բենիամինի Կտակին վերջ՝ կը գրեն յոյնն և լատին, թէ Յակոբայ օրգիքն Եգիպտոսէն ելնելէն 91 տարի յառաջ՝ փոխադրեցին իրենց հօր մարմինը. Հայերէն երեք օր. ունին՝ իններորդ առաջներորդ, իսկ Ա. և Բ. օրինակք՝ տասներորդ առաջներորդ: Հայերէնն խանգարուած կ'երևի, և իններորդն՝ կարգալու է համաձայն յունին՝ իններորդ առաջներորդ:

Դ. Անհամաձայնութիւնք բանից և բացատրութեանց: Ասոնցմէ այն մասը միայն մէջ կը բերեմ, զոր իրարու կատարեալ համաձայնութեամբ ունին Հայերէն գրեթէ ամէն օրինակք, և դժուար է՝ որ լոկ գրչագրի տարբերութիւնք կարենան համարուիլ: Օրինակի սղագաւ, յունի և լատինի *σίστασις καί ζεταί* (*consistentia creatur*) բացատրութեան տեղ՝ Հայն կը գրէ՝ « հաստատեալ եւ արարածք անեկայն » . — *κρίμνος* (Լ. *praesepius*), հ. « մառտ », փոխ. մարոյ. — *ἔκστασις* (Լ. *ecstasis*), հ. « հաստատոտքիւն », փոխ. թմբուութեան . — յէջ 30, *δολογηψία* (Լ. *doli assumptio*), հ. « տոքրևա » . — յէջ 31, *ἐν γράμμασι* (Լ. *in literis*), հ. « ուսմանց » . — յէջ 34, *συνδύαξις* (Լ. *communicari*), հ. « մերկանալ » (Ա և Բ. օր. մերկանալ). երկուքն ևս անհիշգ են, զի յունարէնի բուն իմաստն է զոգոսխառնել. — յէջ 43, *ὅτι αἰροῦ ταυτο τὴν ψυχὴν, καὶ φθείρει τὸ σῶμα* (Լ. *quoniam ipse sylvestram facit animam et corrumpit corpus*), Հայն ունի ընդ-

cis faciei, sed *totum opus bonum est*), Հ. « և այս երկդիմութեան է և է գործ բարի » : Յէջ 133, *Εἰς λάκκον με ἐχάλασαν, καὶ ὁ ὄψιστος ἀνήγαγε* (Լ. in lacum me miserunt, et altissimus reduxit me), Հ. « Ի բանտի երայ և Աստուած իմ շնորհայից արար զիս » : Յէջ 136, *ἐνέκειτο εἰς ἐμὲ πρὸς ἀκολασίαν* (Լ. in me exarserat ad adulterium), Հ. « էր շայնեայ ընդ իս » : Յէջ 139, *ὅτι χάρις ἐκ τοῦ οὐρανοῦ ἔστιν* (Լ. quoniam gratia ex coelo est), Հ. « զի շնորհք ևստաստորեանք են », և այլն : Յէջ 143, *καὶ ἐξ ἀριστερῶ οὐτοῦ* (Լ. et ex sinistris ejus), Հ. « և ի յաջակ կողմանէ նորա », — յէջ 147, *ἐνίκησας τὰ σπλάγχχνα* (Լ. vicisti viscera), Հ. « յաղթեցեր արեացն », և այլն. — յէջ 148, *φύγετε τὴν κακίαν τοῦ Βελιάρ* (Լ. fugite malitiam Beliar), Հ. « փախերուք ի պոսեկոսրենե և ի շարութենէն ». — յէջ 58 և 59, *ὄνομα καινὸν* (Լ. nomen novum), Հ. « անուն նորա » : Երբ անհամաձայնութիւնքն՝ են այն յաւերածներն կամ յաւերած կարծուած տեղիքն, որք կը պակսին յունարենի մէջ : Այս կարգի անհամաձայնութիւնք՝ թէպէտև ըստ բաւականի հոծ են, բայց ոչ այնպէս նշանաւոր : Անոնցմէ գէթ ոմանք՝ լոկ Հայերէն լեզուի պահանջք են՝ ի թարգմանութեան, ոմանք ալ ընդօրինակողք և սպազորութեան վրիպակներ : Այս տեղ նշանաւորները միայն կը նշանակեմ : Օրինակի աղագու, 34 իջում, 18րդ տող. « Այլ թէպէտ և ինդրիցէք », — 35 իջի՝ 8րդ տողի մէջ՝ « Մեր ունիցիք ընդ եղբարս », — 53 իջում, տող 5-6. « Որ եթէ են ի վրանս նոցա սուրբք Աստուծայ ». — յէջ 67, « Զինչ գործեսցեն ամենայն Հեթանոսք », և Տոյն իի « Ի քահանայութեան նորա Հեթանոսք բազմասցին — խաւարեսցի սղով » 4 տողերն¹ : Յէջ 89, « Եւ Իսահակ նմանապէս — թագաւորութիւն » 3 տողերն. — յէջ 101, « Վասն զի և եղբարք — ընդդէմ նորա ». — յէջ 114, տող 3-4, « Ըստ նմանութեան հոգւոյն առնէ զմարմին ». — յէջ 116 « և ունէր երկոտասան », — յէջ 118, « Ես և մեզ արտասուս հեղուլ — դարձեալ ասէ ». — յէջ 119, « Վասն զի ժամանակ է մերձենալոյ ի կին — պատուիրանք են ». — յէջ 131, « և սրբութիւն ձեր ապականեսցի ». — 137, « Սիրես զիս՝ բաւական է ինձ այս », — յէջ 142, « Քան զԼևի և զՅուդա և զՆեփթաղիմ » : Զրբ անհամաձայնութիւնքն՝ են այն բազմութիւ յապաւումներն, որոնք յունարենի մէջ նշանաւոր տեղ գրաւած են, և անոնցմէ

1. Այս տեղւոյ համար արդէն ըսուեցաւ, թէ քրիստոնէական տիպ ունի. իսկ ևս զիսել կու տանք, որ հեթանոսք բազմանալու և Հրէից սղով խաւարելու բարութիւնքն՝ յայտնապէս Հրէից դէմ ուղղեալ են :

մի քանին կը պակասին նոյն իսկ լատին թարգմանութեան մէջ. և զարմանալին այն է, որ յունարէնն՝ Հնագոյն ըլլալով հանդերձ, միւս երկուքէն աւելի ճոխ է և անթերի: Յապամուռք կարծուած այս տեղեացս փոքրագոյնները զանց ընելով, կ'ուզեմ նշանակել հոս մեծագոյնները միայն, երկաքանչիւրին վերայ գաղափար մի տալու համար: 85-ը 32 «ի դժոխս» բառէն վերջ՝ յ. և լ. ունին՝ « յասաչ քան գժամանակսն ». — յէջ 39 վերջին տողի՝ « ոչ տայ » էն վերջ՝ « ոչ ոտեչ և ոչ ընկեչ ». — 48 իջի 4բբ. տողի՝ « նոցա » էն վերջ կը պակսին « միևչև յօրն դատաստանի », և « մինչև » էն վերջ՝ « ողջ և առողջ » խօսքերն. — 57 իջի 17բբ տողի՝ « այնպէս առնել » էն վերջ կը պակսին « որպէս արարիև քեան մերոյ Դիևոյ — զհայրն մեր » 6 տողերն, — 58 իջի 21բբ տողի՝ « գթութիւնս » բառէն վերջ՝ « քահանայոսքիսն նոր ըստ կարգի հերանոսաց », բացատրութիւնն, — և 23 տողի՝ « բարձրելոյ » բառէն յառաջ կը պակսի « Մարգարէ և վերջն՝ նման եփռոսի ». — 61 իջի 7բբ տողի՝ « Եւ » էն յառաջ՝ պակասին « յորժամ եկաք ի Բեթէկ », և 12բբ տողի՝ « Տեառն » էն վերջ՝ « որպէս եցոյց ինձ հրեշտակն Տեառն », բառերն. — 63 իջում 24բբ տողի՝ « ինձ » էն յետոյ՝ « քե և նա ինքն մեռաց ». — յէջ 65 « Ողիէլ » էն վերջ՝ « Եւ որդիք Մերարի՝ Մողթե և Ոմիսե, և յամին իննքսն երրորդի չորրորդի կենաց ինոց ». — 67 իջում 27բբ տողի՝ « և » էն յետոյ՝ « զկոյսս իսրայելի (Լ. Երուսաղեմի) սպականեչիք ». — 81բբ իջի 10բբ տողի՝ « վարեցաք » էն վերջ՝ « Եւ յորժամ հաք առ չրովք Գուգպայ (Գուրնբայ) և նոքս որ ի Յարէլ — նոցա էին » 8 տողեր, — յէջ 81 տող 2. « Գաս » էն յառաջ՝ « քաղաքք երկոց բագասորաց գան ընդ մեզ ի ծանր պատերազմ ». — յէջ 84, 8բբ տողի՝ « քաղաքամիջին » բառէն վերջ՝ « Չի օրենք ևն Անպրացոց պահել զհարսն ի պոսնկոսթեան զծօրն օր, հանդեպ դրանն ». — յէջ 89, տող 15՝ « Հեծութիւնս » բառէն վերջ՝ « անշատեն ի նմանէ գրռն », և 18բբ տողի « դառնայ » բառէն վերջ՝ 6 տող մի ուրիշ հատուած կը պակսի: 90բբ իջի 4բբ տողի՝ « թաթաւեցաք » էն վերջ՝ « Անգիտանայի զտկարոսքիսն իմ, անտեղիտայի զիս ինքն կարծելով ». 13 տող հատուած մ'ալ՝ 18բբ տողին մէջ տեղ կը պակսի. 3 տող՝ 91 իջի 5բբ տողի « Իսրայէլի » բառէն վերջ և 6բբ տողի « ի խաղաղութեան » բառէն վերջ՝ « Եւ յարիցե մարդ ի գառակիև իմնէ որպէս արեգակն արդարոսթեան »: — 92 իջի առաջին տողի « արդարութեամբ » էն վերջ՝ « և մեղք ոչ գրուցիև ի նմա », — 5բբ տողի « յերկրորդս » էն վերջ՝ « Այս է շատանդ Աստուծոյ բարձրելոյ և աղբիւր կենաց ամենայն մարդկան », — 10բբ տողի

« յետ այսորիկ » էն վերջ՝ « Յարիցէ Արրահամ, Իսահակ և » . — և 9 տող ալ վերջի տողի « զարթիցեն » բառէն վերջ, — Յէջ 93 առաջին տողի « ընթացին » բայէն վերջ՝ « Անպարիշտք տիրեացիկն և կոծեացիկն մեղառորք » . — 94 իջում վերջին տողի « Աղամայ » էն վերջ՝ « Ի բարձունս հովտին բարք » . — 95 իջի վերջին տողի « Յակոբայ » բառէն յետոյ՝ « Հրեշտակ Տեսան և սահ » . — յէջ 96, 9րդ տողին մէջ « վասն » էն վերջ՝ « մանրագորաց, յոռա Տեր Հոսքերայ » . — 16րդ տողի « Ժամանակին » բառէն վերջ՝ « և օրհնեաց զիս հայր իմ, և տեսեալ զի պարզմտութեամբ գնամ », — մի և նոյն տողի « Ի գործս իմ » էն վերջ 6 տող կը պակսի, և 11 տող ալ 22րդ տողի « Հայրն իմ » բառէն վերջ :

Յէջ 97 տող 2րդ « Տեսան » էն վերջ կը պակսին . Ի հայն 8 տողեր . Իսկ յաջորդ՝ այն է 2-9 տողերն այլ յուն . և լատ . մէջ՝ Ի դէմս Յակոբայ մէջ կը բերուին և ոչ եթէ Խոսքարայ, 11րդ տողի « պարզմտութիւն » բառէն վերջ կը պակսին 6 տողք, և 7 տող ալ 13րդ տողի « Տեր » բառէն յետոյ : Յէջ 98 առաջին տողի « մեղս » բառէն վերջ՝ « մահացոռս . բաց ի կնոջէ իմեկ զայլ կին ոչ գիտացի » : Յէջ 101 տող 8րդ « յօրէնս նոցա » բառերու տեղ՝ յոյն և լատինն ունին . « Ի գիրս օրհնաց Երեմիայ գրեալ կայ » . 4 տող Հատուած մ՝ ալ 13րդ տողի « յեզիպտոս » էն վերջ . — 102 իջի, տող 5րդ, « յայնմիկ » էն վերջ՝ « Ռոքիկն ոչ եկեր հաց յառար այնմիկ », և 10րդ տողի « Յովսեփայ » էն վերջ՝ « զի հանիկ զպատմուածան հօրն ի Յովսեփայ և զգեցոցին նմա հանքերձ գերայ » . — 103 իջի՝ 12րդ տողի « յեզիպտոս » էն վերջ կը պակսին 17 տողեր . 4 տող յաջորդի « ձկնօրսութիւն » բառէն վերջ, և 44 տողք՝ 14րդ տողամիջի « եղբարս իմ » բառերէն վերջ, այն է յուն . Է-Ըրդ զլուխներն : 117 իջի տող 16րդ « փախուցեալ » էն վերջ՝ կը պակսին՝ « բաժանեցաք և մեք ի տասն տախտակս » . — 119 իջի տող 2րդ, « կրկին են » բառից վերջ՝ « Որ երէ (ոչ) լինիցիկ կարգօք՝ մեղս ծանակին » . — 123 իջի տող առաջին, « մարդկան » էն վերջ՝ « լար է տառնաբիւն » . — 127 իջի 7րդ տողէն վերջ՝ « երկուս գործս, երկուս տեղիս » . — 130 իջի, տող 2րդ, « երևին » էն վերջ՝ « սակայն ամենեկին սոչրք են » . — 13րդ տողի « լուսով է » խօսքէն վերջ՝ « որպէս և ամենայն ինչ ընդ Աստուծով է » : Յէջ 138՝ տող 3րդ « Ի կապանաց » բառէն վերջ՝ կը պակսի 11 տողով բարոյական խրատաբանութիւն մի . — 140 իջի, տող 5րդ « գահ նորա » էն վերջ՝ « զլուխ ամենայն ներքինեաց, ոսկեր կիկն և որդիս և աղախնեայս » : 141 իջի 2րդ տողամիջի « զեղբայր իմ » բա-

ոից վերջ՝ « և սասցի զայդ ոչ գիտեմ, ծառայ եմ » . և 12րդ տողի « զդա » էն վերջ՝ « և ոչ կարացեալ յարևարել՝ դարձաւ յետս — զգինս մանկանն » 7 տողերն : 142 իջի 13րդ տողի « յաւիտեան » էն վերջ՝ « Եշ եք կամիցի որ չար ասնել ձեզ, դուք գրոտրեանք աղօթեցէք վասն նորա, և Տէր պահեսցէ զձեզ յամենայն շարի » : Իսկ 17—24րդ տողերն՝ Հայ. և յուն. Թարգմանութեանց մէջ իրարմէ մեծապէս կը տարբերին . այսպէս և 143 իջում Հայ. Թարգմանութեան կարգը բուրո՞ւմին յեղաշրջուած է : 22րդ տողի « Եւրայելի » բառէն վերջ՝ յ. և չ. ունին . « Գասն Աստուծոյ՝ շնորհօք փրկելով զամենայն ազգս և ազինս և զիսրայիլ . քազատրոտրիան նորա քազատրոտրիան յաշիտնական, որ ոչ անցանկ » : 144 իջի առաջին տողի « ընդ մեզ » էն վերջ « Չի եք տարջիք զոսկերս իմ, Տէրն յոչսով եղիցի ընդ ձեզ և հակասակ Եգիպտացոց, և Բելիար եղիցի ի իսաւար ընդ Եգիպտացոց » : Յաջորդ տողի « դրէք » էն վերջ՝ « սա Բաշա՛ հակերկայ Չիարձակարանին մերձ սա Հոսքել » . իսկ « սուգ մեծ » բառերէն վերջ՝ « Չի սա Եգիպտացիս գրացաւ նա որպէս յազգակիցս ինր, և յամենայն ժամ զամենայն քարիս արար նոցա, խորհրդով և գործով » : Բենիամինի Կտակի առաջին երկու գլուխներն, այսինքն է 145 իջի 6րդ տողէն մինչև 146 իջի 17րդ տողերն՝ բուրո՞ւմին այլակերպուած են Հայերէնի մէջ . 19րդ տողի « և ճմարտի » բառէն վերջ կը պակասի 24 տողով խրատական հատուած մի : 147 իջի 10րդ տողէն վերջ՝ « արեանք ի վկայոտրիան, ի փրկոտրիան հեքանոսաց և իսրայելի, և պարտեսցէ զԲելիար և զորս ծառայեն նմա » . այսպէս կը պակսին 2 տող « մեղաւորք » էն վերջ, 12 տող զկնի բառիս « շարակնէ », 5 տող « պատկառեսցին ի ձէնջ » խօսքէն վերջ : 149 իջի տող 5րդ « նոցա են » բառէն վերջ՝ « ատելոտրեանք և նախանձն նովին պատռահասիան » : 11րդ տողի « տիղմ » էն վերջ՝ « այլ չուրացոտցանէ և բանայ զնեխոտրիան » . 13րդ տողի « ածեմ ես » էն վերջ՝ « ի բանից Ենովքայ » , 22րդ տողի « Հեթանոսք » էն վերջ՝ մինչև բարձրեալն առաքեսցէ զաշետիան ինր՝ այցելոտրեանք միածնի, և մտցէ զասաշին ի տաճար ակերճ՝ ոչր և ծանիցի, քէ որքան խոնարհեցաւ ի յերկրի և որչափ փառատրեսցի յերկինս » : Յաջորդ տողի « անպատուեսցի » էն վերջ՝ « ի իսալ ելցէ և պատասնեսցի վարապոյր տաճարին, և իջցէ հոգին սուրբ որպէս հրով ի վերայ ազգաց » : 150 իջի՝ տող 14րդ « Թապաւորին » բառէն վերջ՝ « որ ի յերկրի երևեցաւ ի մարդկային կերպարանս խոնարհոտրեան, և որք հառատացին ի նա ի յերկրի՝ յայնժամ զնծասցեն ընդ նմա, յարիցեն նոքա ի փասս,

և սորա յանարգոտրիան » : 17րդ տողի « արարին » բայէն վերջ՝ « զի ոչ հաւատացին յեկեալն Աստուած մարմնով » . 20րդ տողի « սիրեցին զեղբարս » խօսքին տեղ՝ « մարտնչոցիս զեղբարս նորա պոռնըկոտեանք և կռակաշոտոտեանք, և օտարացան յԱստուածոյ ի ժառանգութենէն որդոցն, որք ոչ երկնյին յԱստուածոյ » : Յէջ 151, ի վերջ կտակին կը պակսին . « վախճան կտակաց Ք. Բ. ևահապետաց » բառերն :

Ամփոփելով այս և այսքան շոշափելի իրաց վերայ կատարած մեր ընդարձակ ուսումնասիրութեանց սահմանքն, այսուհետև կը համարձակինք եզրակացնել հետևեալը . այսինքն է, կամ հայերէն բարգմանութիւնն՝ այժմեան յռնարեկէ տարրեր բնագրի մի վրայ կատարուած է, որ երբայական բնագրին աւելի մօտ էր և զերծ այն քրիստոնեական տիպ ունեցող յաշնուածներէն, և կամ յռնարեկի նախկին խղճարգոտրեան մի վրային բարգմանուած է, բայց այդ խմբագրութիւնն յետ ժամանակաց դիտմամբ կամ դիպուածով քրիստոնէից ճշգրտով մեծապէս խանգարուած է : Եզրակացութեանս վերջին նախագասութիւնն՝ Հաստատութեան ուրիշ կողման մի շունի, ըստ իս, բայց եթէ ենթադրելով, որ Հայերէն թարգմանութեան նախկին օրինակն եղծուած ըլլալով՝ բոլոր միւս օրինակներն ևս ըստ այնմ գաղափարուած ըլլան յետ ժամանակաց . ուրիշ կերպով անկարելի է ըմբռնել, թէ մէջ բերուած յաւելուածոց և յապաւմանց մասին ի՞նչպէս կարացին անոնք առհասարակ իրարու համաձայն ընթանալ և անհամաձայն յունին : Իսկ առաջին նախագասութեան գաղով, ես չեմ կարծեր, որ այս բնագիրս եթովպերէն կամ ասորերէն և կամ լատիներէն եղած ըլլայ . որովհետև գէթ առաջնոց գոյութիւնն ենթադրական է, և ապագայն միայն կարէ յայտնել մեզ . իսկ վերջնոյս՝ ի բաց սուեալ մի քանի մասնական յաւելուածներն և խորագիրներն՝ մի և նոյն յարբերութիւնը ունի Հայերէնի հետ, ինչպէս յունարէնն . հետևաբար՝ վերջնոյս հետ ունեցած անհամաձայնութիւնքն՝ առաջնոյն ևս դէմ կը զինուին : Ուստի Հայերէն թարգմանութեան մէջ եղած բառաքննութիւնք՝ զիս աւելի կ'երաշխսուորեն ընդունել Հայերէնի համար իբրև

1. Օրինակի ազգաւ, Գանայ կտակի մէջ, յէջ 115, բառս՝ *νεφελη*, որ հիշյալ թարգմանութիւն է *καλοσπουδος* յուն . բառին . վասն զի լատինն ունի *noviter festinans* . և Ռուբենի կտակին, յէջ 33, բառս՝ *թանգ*, որ համաձայն է *γ. ιδν θ.* որ կրկին նշանակութիւն ունի . լատինն ունի *Venenum*, այսինքն է՝ *β. ρ. 34*՝ *Բերանալ իբրև համալոր գրուած է յուն . συδνδασειν* բային, որ սակայն ուրիշ հետ *Բանալ* կամ բնակակից ըլլալ կը ցուցնէ . — յէջ 83 *Թանալայ*՝ յուն .

բնագիր այժմեանէն տարբեր յունարէն նախկին խմբագրութիւն մի, որուն վերայ կատարուած ըլլայ, յետ է. դարու, այժմու ծանօթ խմբագրութիւնն, Բիւզանդական պատմագրաց միոյն ձեռքով, և կրած ըլլայ ինչ ինչ եկամուտ յաւելուածներ: Այս կէտս յունական Հարց քով պահուած վկայութեամբ կարծէք, թէ աւելի ևս կը հաստատուի:

παρέμβαλλον ρ, «ϣ-ϣ-ϣ» ρρ = յուն. καταπτήστοντος ρ որ պահուել կը նշանակէ, — յէջ 63 «ϣ-ϣ-ϣ» = յուն. συμβασμός ρ, որ սակայն «-ն» կամ խաղաղութիւն կը նշանակէ, — յէջ 85 «ϣ-ϣ» (զրիւս) = յ. κόρου ρ, որ «-» կը նշանակէ. — յէջ 133 «ϣ-ϣ» = յ. πηλόν ρ, որ «-» կը նշանակէ:

Այսպէս նաև յատուկ անուանց շտաբն և այլ տարբերութիւնք, զորս մի առ մի նշանակեցինք յառջադոյն, մեծապէս կը տարբերին այժմեան յունարէն և լատին Թարգմանութիւններէն. իսկ որովհետև Հերման Խոնշ (Das Buch der Jubiläen, Leipzig 1874) երկատիրութեան մէջ այժմեան յոյն և լատին ձեւերը անհամաձայն կը գտնէ երբայական չին գրուածոց մէջ գործածուած ձեւերուն, ուրիշ նշանութիւնն յայտնի է:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍԱՆԵԹԱՅ



ին աշխարհէն մեզ հասած և արևելեան մաքի ծնունդ, գեղեցիկ և գրաւիչ վիպասանութիւն մ'է, որուն մէջ կը հանդիսանան իրենց անձնական և կրօնական առանձնայատկութիւններով իրրև կրկին գիւցազունք՝ Ասանէթ և Յովսէփ: Երկուքն այլ կը ներկայանան մեզ աննման գեղեցկութեան և ողբախոհութեան շքեղ տիպարներ: Յովսէփ՝ իւր աստուածաուաք տեսլեամբ և իմաստութեամբ, և Ասանէթ՝ իւր պնուական զարմիւն և բարձրայօն սիգութեամբը բոլոր Եգիպտոսի մէջ առանձին զոյգ մի կը կազմեն, և դիւթական ազդեցութիւն և համբաւ կը վայելեն:

Ասանէթ՝ իբրև կոյս ամենապայծառ՝ քովին Պետափրեայ, — որ թագաւորէն վերջ երկրորդական պատիւն ունէր մարդկան և աստուածոց քով, — ոսկեղէն և բարձրաշտարակ ապարանի մի մէջ կը բնակի՝ իւր եօթնաթիւ նաժիշտներով, որոնք մի և նոյն գիշերը ծնած էին, ինչպէս լուսինն՝ երկնից բեհեզեայ և գմբեթածիզ յարկին ներքև՝ եօթն մոլորակաց մէջ. և այս ապարանքս ամենուստ դրախտանման ծառերով և աղբերահոս շատրուաններով զարդարուած է: Անկողինն և գահոյք, վարագոյր և ամենայն ինչ ոսկի են, և ինքն իբրև մարդագէմ ծիածան մի զարդարուած կը փայլի եօթներփեան ծիրանեօք: Գրեթէ ամատաշելի է ամենեցուն առ հասարակ, և կ'արհամարհէ ամէն մարդ և մարդկային գեղ, որք կը փորձեն հաճելի ըլլալ իրեն և հաճեցնել ի հարսնութիւն: Նորա բնակած վերնատունն՝ յեռակողմն երկրի նայող երեք պատուհաններ ունի, որոց մերթ միոյն և մերթ միւսոյն. դիմաց կ'երևի, համակ սպիտակ, ինչպէս լուսածագող Արուսեակն՝ առաւօտեան շամանդաղի ետևէն: Նորա միակ գա,

ղափարականն է Փարառնի որդին, զոր իրեն սրժանավայել փեսայ կը տեսնէ: Հեթանոսական բարձրայօնութեան հետ՝ կը տեսնուի աւոր վերայ նաև նանրապաշտութեան տանող կրօնական ջերմ ոգի մի:

Օր մի Յովսէփ այցելութեան կ'ելնէ Արեգ քաղաքին, և կը ծանուցանէ Պետափրեսին, թէ իւր տունը պիտի իջնէ: Քրմապետին ուրախութեան հետ՝ պատրաստութիւնքն ևս շատ մեծ են: Կը փութայ նա ծանուցանել իւր միակ սիրելի դստեր, թէ Յովսէփ իրենց տունը պիտի գայ, և թէ ինքն մտադիր է տալ զԱսանէթ անոր կնութեան: Մեծ զայրութով կը մերժէ. սէգն Ասանէթ ամուսնանալ երայեցի գերոյ մի հետ, և Փարառնի որդին միայն, կ'ըսէ, կրնայ ըլլալ ինձ արժանաւոր փեսայ: Մինչ այս մինչ այն՝ կը հասնի չորս սպիտակ ձիերէ լծուած արքայական ոսկիապատ կառքն. Յովսէփ, մանաւանդ թէ բոլոր աշխարհի գեղեցկութիւնն, բազմած է անոր մէջ. ասորական ազնիւ ծիրանին. ձգուած ձիւնաքատակ բեհեզի վերայ՝ ոսկեզէն ճարմանդով անոր ուսէն վար կը կախուի, և ոսկեյեռ աղաւմանդեայ թազն՝ արևու ճառագայթներ կ'արձրկէ ակէն կողմ, մէկ ձեռքին ունելով արքայական գաւազանն. և ի միւսումն ճիւղս արմաւենեաց և ձիթենույ: Կը նայի պատուհանէն Ասանէթ, և իբրև գերմարդկային էակ. մ'է, որ կը տեսնէ իւր առջև յանակնկալս, որուն փայլն և փառք՝ բաւական են իշխել բոլուն զօրութեամբ որ և է սիրատարփ սրտի վերայ և գերել զայն: Կը յափշտակուի վիպասանութեանս նոր Իսիսն՝ այն արեգակնափայլ Ոսիրիսի գրաւիչ գեղեցկութենէն, և իւր խորխտ գոռոզութիւնն՝ շուտով անգիմադրելի գթոյ և գորովոյ կը փոխուի. կը ցանկայ վայրկեան մ'առաջ հասնել և վայելել զնա: Մնողքը շուտով կը ներկայացնեն զնա Յովսէփայ. և երկուստեք ողորունատուութենէն յետոյ, տեղւոյն սովորութեան համեմատ կ'ակնարկուի Ասանէթայ, որ նազելով իւր անհուն սիրոյ համբայրը դրոշմէ իւր փեսայացուին փափկիկ այտերուն վերայ. սակայն երկիւզածն Յովսէփ՝ ձեռքը անոր կուրծքին վերայ դրած, կ'արգելու զնա, ըսելով, թէ երկնից Կենդանի Աստուածը պաշտողմարդն՝ չկարէ ընդունել այն շրթանց համբայրը, որոնք անխօսկոց համբուրիւ պղծուած են: Կը տխրի նոյն հետայն Ասանէթ և կուլայ դառնապէս: Կը խանդաղատի Յովսէփ, և ձեռքն անոր գլխուն դրած՝ կ'օրհնէ, որով կը սփոփուի Ասանէթ: Սակայն առանց խնջոյքին մասնակցելու, կ'առանձնանայ իւր սենեակը. և բոլոր թերափները պատուհանէն վար կը նետէ: Կը խոստանայ Յովսէփ ութ օրէն վերադառնալ յԱրեգ քաղաք: Այդ օրերուն մէջ սևեր հնգած կ'ա-

պաշխարէ Ասանէթ և կը պաղատի զԱստուածն կենդանի, որպէս
 զի որբէ զինքը եգիպտական գարշութիւններէն: Կը տեսնէ Աստուած
 զուրթագեղ կուսի տխուր արտասուքը: Ութերորդ առաւօտու լու-
 սածագին, երբ հաւերը կը խօսին և կը լսուի շներամի հաշիւնն, կը
 դիտէ Ասանէթ արևելեան պատուհանէն և կը տեսնէ հուպ լուսարեր
 ասողը, և կ'իյնայ երեսին վերայ երկիր: Կ'իջնէ երկնքէն հրեշտակ մի,
 կատարեալ տիպար Յովսէփ Գեղեցկին. կը մխիթարէ զնա, ծանուցա-
 նելով թէ ընդունելի եղան Աստուծոյ իւր ապաշխարութիւնքն: Կը
 նաշակեն ի միասին խորիսի մեղու. կ'օրհնէ զկոյսն գեղանի, բա-
 բեմաղթելով անոր ամուսնութիւնն և ապագայ երջանկութիւնը: Այս
 պահուս՝ կու գայ աւետարեր առ Ասանէթ, թէ ահա եկաւ Յով-
 սէփ: Կը փութայ առ նա Ասանէթ, և որդագուրելով կը ծանուցանէ
 հրեշտակին հանութիւնը՝ իւր ամուսնութեան մասին: Կը պսակուին
 արքայական հանդիսիւ. ուրախութիւնն կը տևէ եօթն օր: Փարա-
 ւոն կը կոչէ զՅովսէփ՝ ոչստր Աստուծոյ, և զԱսանէթ՝ զոչստր Բար-
 ճրեղոյ: Սովու Բ. տարին կու գայ Յակոբ յԵգիպտոս և կ'օրհնէ նոր
 ամուսինները: Կը մեկնին Յովսէփ և Ասանէթ զէպ ի տուն, և Ղևի
 և Շմաւոն ի միասին: Տեսնելով որդին Փարաւոնի Ասանէթայ գեղեց-
 կութիւնը՝ կ'ուզէ առնուլ իրեն կին: Առ այս մեծ գումար կը խոս-
 տանայ Ղևեայ և Շմաւոնի, որպէս զի սպաննեն զՅովսէփ, բայց նոքա
 չեն հաւանիր: Ամբաստանութեամբ կը գրգռէ Հարճորդիքը՝ Դան և
 Գադ, և ինքն այլ կը խորհի սպաննել զՓարաւոն, որ կը սիրէր զՅով-
 սէփ իբրև որդի: Գիշերային դաւաճանութիւնն այնպիսի կ'անցնի,
 բայց կը սպանուին 500 հարիւր պահանորդք: Կը խուսէ Ասանէթ,
 ընկերակցութեամբ Բենիամինի, բայց կը պաշարուի ի դաւադրաց.
 Ասանէթ կ'աղօթէ առ Աստուած, և ահա կ'երևի յանկարծ մի և
 նոյն մարդակերպ հրեշտակն, որով թշնամեաց սուրերը վար կ'իյնան
 և կը փշրուին. և Ղևի և Շմաւոն վերայ հասնելով, կը պաշտպանեն
 զնա՝ Դանայ և Գադայ ընկերակցող 500 դաւադրաց զէմ, որոնք ի
 պարտութիւն մատնեալ եղեգնուտի մէջ կը պահուերին: Բենիամին,
 Ասանէթի հետ կառքով փախած ժամանակ, երբ կը հանդիպի Փա-
 րաւոնի որդւոյն, հեղեղատէն քար մի կ'առնու և զանիկայ վիրաւոր
 յերկիր կը կործանէ: Վերայ կը հասնին Ղևի և Շմաւոն, և զանիկայ վեր-
 ցընելով կը տանին առ Փարաւոն: Երեք օրէն կը մեռնի արքայորդին,
 և անոր վերայ ունեցած սաստիկ ցաւէն քիչ ժամանակէն կը մեռ-
 նի նաև Փարաւոն ի հասակի 99 ամաց: Կը թագաւորէ Յովսէփ անոր
 տեղ յԵգիպտոս 48 տարի. յետ այնորիկ կ'աւանդէ զթագն արքա-

յութեան Փարաւոնի կրտսեր որդւոյն, որ հօր մեռած ժամանակ դեռ ստնդիաց էր. իսկ Յովսէփի կը յորջորջի արքայահայր Եգիպտոսի, մինչև ցմահ:

Ահաւասիկ համառօտ բովանդակութիւն հինաւորաց վիպաստանութեան մի, որ հրապուրիչ է՝ առանց լպիրչ կէտ մի պարունակելու, և հրահանգիչ՝ իւր զեղեցիկ բարոյախօսութեան և պարզութեան մէջ: Ասանեթայ և անոր բուրաստանի, — եօթնօրեայ ապաշխարութեան և պաղատանաց, — մարդակերպ հրեշտակի երևման և խորրսխէն հրաշիւք ծնած մեղուաց այլաբանական նկարագիրքն, — նաժշտի ձեռքով վճիտ աղբիւրէն բերուած ջրոյն միջէն Ասանէթայ կենդանագրին տեսնուելուն և զեղեցկութեանն, ինչպէս և Յովսէփայ հետ երկրորդ անգամ ըրած տեսակցութեան և սիրոյ նկարանագիրներն, արևելեան բանաստեղծութեան և ճաշակի իրբև շքեպագգիւս և հրաշարուեստ տիպարներ են արդարև, առանց ինչ բռնադատութեան: Անծանօթ հեղինակին առաջին նպատակն է՝ ցոյց տալ աստուածապշտութեան գերազանցութիւնն՝ եգիպտական նանրապաշտութեան վերայ. իսկ վերջին ձևամամբն՝ հրէական ազգի մեծ աղբեցութիւնը, զոր ունեցան Եգիպտոսի մէջ, Յովսէփայ ժամանակը: Արդ, այս պարագաներս մէկ կողմէն, միւս կողմէն այլ Եգիպտոսի աշխարհագրութեան վերայ ունեցած հարևանցի ծանօթութիւնն, օտարիկ յարուսն երբայական աւանդութեան՝, ինչպէս նաև գրութեան ոճն և այն լեզուին յատուկ ասութիւնքն, այլովք հանդերձ, ցոյց կու տան մեզ անտարակոյս, որ անծանօթ հեղինակս իսկ Հրեայ ոմն էր:

Բայց թէ ո՞վ է այդ անծանօթն, ի՞նչ ժամանակի մէջ կ'ապրէր արդեօք, և ի՞նչ պատմական հիման վերայ յօրինեց իւր վիպաստանութիւնն, այս խնդիրներէս ոչ մէկը տակաւին լուծուած չէ, և դժուար

1. Օրինակի ազգաւ, յէլ 153 Ասանէթը՝ փոխանակ Եգիպտոսի դասերաց, Եբրայեցոց զեղեցկուհեաց՝ Սառայի, Հոպէլի հետ կը բազդատէ: Յէլ 150, 152, 162 և այլն, ստեպ ստեպ Յովսէփայ «այր աստուածապաշտ», «գօրաւորն Աստուծոյ», ուստր Աստուծոյ բարձրելոյ», և այլ տիպարներ արուած են, և այս իսկ ի դիմաց Ասանէթայ և Պետարփրեայ եգիպտական նանրապաշտից: Յէլ 159, Յովսէփայ Թադին վերայ կը յիշուին 12 ակունք, և տանց վերայ 12 պատկերներ, որ կը յիշեցնէ ուղղակի Ահարոնի կրած վակասը և 12 ցեղից նշանադրումը: Յէլ 152, Ասանէթ իբրև կոսապաշտ՝ պիղծ և զարչելի կը համարուի: Յէլ 166, 167, և այլն, Ասանէթ սքրուելու համար, խորզով և մոխրով կ'ապաշխարի և կ'ազօթէ, և կուռքերն մեկզի կը նետէ, որ Յուդիթի և Եսթերայ նմանութիւն է: Այսպէս և յէլ 168, ընդ պատուհանն գէպ յարևելս աղօթելն, — յէլ 173, Աստուծոյ հրեշտակի երևումն, — և այլն:

էի հիմանց լուծել: Եպեա-Յեսու Սովրեցի՝ իւր Հին Կտակարանի վերաբերեալ գրոց ցանկի՝ մի մէջ՝ անկանոն գրուած մ'աւ կը յիշէ, այն է՝ Պատմութիւն Յովսեփայ և Ասանեթայ, զոր և Յովսեփոսի ուրաճ ձեռքով գրուած կը համարի: Սակայն մինք Աստեմանեայ հետ իրաւամբ կը տարակուսինք այսպիսի մի վկայութեան վերայ, եթէ յիշեալ Յովսեփոսի անուամբ՝ կամ Յովս. Փլաւիանոսը կը հասկնայ, և կամ Գորիոնիդացին. որովհետև այս երկու Հեղինակներէն առաջին՝ իւր Հրէական Հնախօտութեանց մէջ (Բ. Գիրք գլ. Բ-Ը) թէպէտև կը պատմէ ինչ ինչ ի յառասպելաց վասն Յովսեփայ, սակայն անոր կնոջ Ասանեթայ մասին չի յօդեր բնաւ այն ինչ, զոր կը գտնենք այժմեան Ասանեթայ պատմութեան մէջ: Իսկ վերջինն, այսինքն է՝ կեղծ Յովսեփոս Գորիոնիդացին, Մովսէս Ազեղացիէն չորս դար վերջ, այն է՝ Ժ. դարում ծաղկեցաւ՝ և գրեց, մինչդեռ Ասանեթայ Պատմութեան ասորերէն թարգմանութիւնն իսկ յամի Տեառն 550 արդէն կատարուած էր յիշեալ Մովսէսի ձեռքով, յոյն՝ բնագրի վրայէն: Բ. Ռոսէն և Յորշալ՝ գիտնականներու ըսածին Համեմատ, եթէ ստուգել Երես-Յեսուայ յիշած գիրքն ուրիշ բան չէր պարունակեր, բայց եթէ այն ինչ, զոր կը ներկայացնէ մեզ լուսինեան Add. 7190 թիւ ասորի ձեռագիրն, այս տեղ կեղծանուն Յովսեփոսն անգամ՝ Ասանեթայ բնաւ յիշատակութիւն չընեն. ուրեմն պէտք է որ ուրիշ անծանօթ մէկն ըլլայ Հեղինակ վիպասանութեանս, Յովսեփոսի անունն ներքև ծածկուած:

Գուստաւ Ոպպէնհայմի⁵ կարծիքով երբայցի մի չի կրնար եղած ըլլալ գրիչ այսպիսի երկասիրութեան մի, որ այնքան հոծ է քրիստոնէական գաղափարներով և աստութիւններով, որոնք քրիստոնէական ծագումն ցոյց կու տան մեզ, թէպէտ և ո՞ր և ե՞րբ ըլլալը չենք գիտեր: Սակայն ես չեմ կրնար բնաւ այս նկատմամբ համաձայնիլ Գ. Ոպպէնհայմի կարծեաց, որովհետև այսպիսի կարծեցեալ քրիստոնէական գաղափարներ՝ ոչ նա ինքն ցոյց տուած է երբէք, և ոչ

1. S^t Assemani, *Bibl. Orient*, T, III, C. I, p. 7. Romae 1725.

2. S^t Zunz I. C. p. 146. — Graetz I. C. T. V. p. 281, 356.

3. Land, *Anecdoton Syriacum* T. III. L. I, C. VI, Lugduni Batav. 1870.

4. *Catalogus cod. Manoscriptorum Orient. Mus. Brit. Londini* 1838, Add. 7190 fol. 319 et Add. 17202 fol. 10, կը գտնուին: Առաջին՝ ԺԲ. դարում գրուած կը կարծուի. իսկ վերջինս Ջոզին վերջ կամ ի սկիզբն է. դարուն: J. S. Assemani *Bibl. Orient* T. II, p. 82, 172. Romae 1721.

5. *Fabula Josephi et Asenethae apocrypha e libro Syriaco latinae verba*, Berolini, 1886. p. 10.

իսկ ես կրկին և կրկին կարգալով գրուածքիս այլ և այլ թարգմանութիւնները կարացի նշմարել: Այլ, ընդհակառակն, ի րաց առեալ 198 իջի մէկ տեղին, — ուր Աւի կը լուանայ և կը պատէ Փարաւոնի սպասամբ որդւոյն վերջերը, և գնելով գրաստու վերայ կը տանի Փարաւոնի տունը, և որ դիտմամբ կամ ըստ դիպաց նմանութիւն ունի Առկ. Աւետ. զլ. Ժ. 33—34 տանց մէջ Սամարացու վերայ պատմուածին, — մնացածն Հին Կտակարանի շրջանակէն դուրս չէլներ բնաւ, և իսկապէս երբայական է: Ոմանք՝ Վինկենտիոս Բէլլովակեցւոյ՝ Հետ՝ Յովսեփայ և Ասանեթայ վիպասանութեան մէջ ուզեցին նկատել զխորին խորհուրդն երկնաւոր փեսային Քրիստոսի, և անոր անբիծ Հարսին Սկեղեցւոյ: Ստուգիւ, յէջ 175 Հայ. թարգմանութեան, հրեշտակի առ Ասանեթ ուղղուած այս խօսքերս իսկ. « Քաջալերեաց, Ասանեթ, կոյս սոսոր, ահա ետոս յեզ այսօր հարսն Յովսեփայ (Հայն՝ յաւելուածով ունի և) յաշտեանս ժամանակաց: Եւ անուն զո ոչ ևս կոչեսցի Ասանեթ, այլ կոչեսցի զաղաք ապաշինի. վասն զի զև ապաշինեսցին ազգք բազումք ի Տէր Աստուածն երկնից. և ընդ հովանեաց զո ծածկեսցին յոսացեալք (Ա. Գ. օր. Ժողովուրդք) ի Տէր Աստուած, և ընդ պարսպաց զո պարսպեսցին հնազանդեալք բարձրեղոյն, անոռամբ ապաշխարոսրեան », կարծէք թէ ի կուպալառութեան առ Քրիստոս Աստուած դարձող և ապաշխարութեամբ սրբուած եկեղեցին կը կերպարանեն: Այսպէս և յէջ 181. « Օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած բարձրեալն. եղիշիք սիւնք եօթն՝ զաղաքին այնորիկ, և ի ձեր վերայ հանգիցէ օրհնութիւն Տեսն յաշտեանս ժամանակաց », տեղով կը ներկայացունին այլաբանօրէն եօթն սննդակից կուսանք և ընկերք Ասանեթայ, իբրև եօթն խորհուրդք եկեղեցւոյ, իբրև եօթն պարգևք շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Այսպէս նաև 179 իջի՝ « կենաց Հացով » և « անմահական բաժակովն », — և եթէ Քրիստոսի կենարար մարմինն և արիւնը Հասկնանք, — և հրաշագործ « խորխորովն » երկնային քաղցրութիւնը, և այն խորխորէն ելած երփն երփն մեղունելով, որոնք Ասանեթայ երեսին վերայ պան կը զործեն և կը թեւածեն յերկինս, եթէ եկեղեցւոյ բաւմապատիկ շնորհքներն և առաքինութիւններն Հասկնանք: Սակայն և այնպէս՝ ոչ ինչ ընդհատ մթին են քան Նրգերգոցի փեսային և Հարսի խորհուրդներն, և չեն կա-

4. Historiali lib. 2, Cap. 118, և այլն, որ ստուած է Ժ. Բ. Նաւապետայ Կտակներուն նա և գերմաներէն իսկ թարգմանուած, որուն խորագիրը միայն մէջ կը բերէ Փաբրիկոս՝ իւր Pseudoeipigraphus. Tet. Test. T. I. p. 774, մէջ:

րոյ ըլլալ յայտնի ապացոյց քրիստոնէական, քան թէ Հրէական հոգւոյ արտադրութեան: Ուստի պէտք է աւելի յայտնի փաստեր որոնել:

Արդ, ժ՛ն Նազապետաց Կտակներու ուսումնասիրութեան մէջ մենք ցուցուցինք, ակն յայտնի փաստերով, թէ անոնց Հեղինակն՝ քրիստոնէայ՝ քան թէ լոկ Հրեայ մ'եղած է. իսկ որովհետև այս երկու Հեղինակութեանցս մին ծանօթ էր միւսին, ուրեմն Հետևութիւնն յայտնի է: Օրինակով ապացուցանենք եզրակացութիւնս:

Ստուգիւ, Համեմատելով Յովսեփայ և Ասանթթայ Պատմութիւնը՝ ժ՛ն Նազապետաց Կտակներուն Հետ, կը Հանդիպինք երկուստեք այնպիսի նմանութեանց, որոնք բնաւ դիպուածոյ արգասիք չեն կարող լինել: Օրինակի աղագու, առաջնոյն մէջ, — յէջ 161, — կ'ըսուի ի դիմաց Յովսեփայ. « Եւ զկերպարանս ձոր խորոյ Յակորայ առաջի աւլոց խորոց կարգեր յամենայն ժամ, վասն զի ասէր Յակոր ցՅովսեփ և ցամենայն որդիսն. Պահեցիք զանձիսն ձեր, որդեակք իմ, ի կանանց օտարաց, առ ի չհառասարեցոյ ընդ նոսա. վասն զի հառասարտքիսն նոցա՝ կորոշատ է և ապականոտքիսն »: Արդ, այս բանքս՝ ակնարկութեան ձևով յառաջ կը բերուին նոյնպէս Յովսեփայ Կտակին մէջ, յէջ 133-134. « Բայց ես յիշէի՝ զբանս Հօր իմոյ Յակորայ », և այլն, և յէջ 142. « Վասն զի նման եղէ ես ամենեւին Յակորայ »: Փոխադարձաբար Յովսեփայ Կտակի այս տեղիս, յորում Ասանթթայ գեղեցկութիւնը կը բաղդատուի Երրայեցւոց դստերաց Հետ, ըսելով. « Եւ երևա գեղեցիկ իրրև զժաղիկ և գեղեցիկագոյն քան զընտիրան իտրայելի », կը գտնենք նաև ի պատմութեան Ասանթթայ, — յէջ 153. « Կոչս գեղեցիկ քան զամենայն կուսանս Եգիպտացոց և այլ անեանիս նմանեալ դստերացն Երրայեցոց »: Ի պատմութեան Ասանթթայ, յէջ 179, Հրեշտակէն առ Ասանթթ ուղղեալ այս խօսքերս, թէ « Ահա յայսմ հետև մարմին քո բողբոջեաց որպէս ժաղիկ, և Հանցէ կրկին զժաղիկ կենդանութեան յերկրէ Բարձրելոյն, և ոսկերք քո պարստացին որպէս զմայրս դրախտին Աստոծոյ, և զօրութիւնք անաշխատք պարփակեսցեն զքեզ. մանկութիւն քո՝ զծերութիւն ոչ տեսցէ, և գեղեցկութիւն քո՝ յաւիտեան ոչ պակասեսցի », նմանութիւն ունին Նմանոնի Կտակի, յէջ 45, առ իւր որդիս ուղղեալ այս խօսքիս Հետ. « Յայսմ հետև իրրև զվարդ ժաղիկացին ոսկերք իմ ի մէջ

1. Այս տեղիս իբրև Համոտոս ակնարկութիւն մի նկատելով առաջնոյն, պէտք է բոլի Հետևաբար, թէ Ասանթթայ պատմութիւնն Յովսեփայ Կտակէն աւելի յառաջ պատ է, և անոր իբրև սղբիւր նիւթ մատակարարած:

Իսրայէլի, և որպէս շոշան մարմինը իմ ի մէջ Յակոբայ, և քաղմացի իբրև զմայրս ստորս առ յինն մինչև յաշխտեանս . և ուտը նորա մինչև ի հետաստան եղիցին: Գարձեալ, Ասանթթայ պատմութեան 191 իջում կ'ըսուի Ղևեայ համար, թէ « Եւ զի էր Ղևի այր մարգարէ (Ա. օր. ծածկատես) և տեսանէր սրբութեամբ մտաց իւրոց և աջօքն իւրովք կարգալը դգրեալն ի սիրտ մարդոյն » . սոյն զաղափարն, ինչ ինչ տարբերութեամբ, արտայայտուած է նաև Ղևեայ Կտակին մէջ, յէջ 53 և 55: Սակայն այս տեղ դիտել կու տանք, որ Ասանթթայ պատմութեան յիշեալ տեղին՝ Ղևեայ Կտակէն փոխ առնուած է, յորում մանրամասն կը նկարագրուին Ղևեայ տեսիլն, յեօթն երկինս վերանալն և Հրեշտակին ձեռքով անոր տրուած նախագիտութեան շնորհքն՝ այսպէս . « Ահաւասիկ Քարձրեալն լուաւ աղօթից քոց և որոշեաց զքեզ յանիրաւութենէ . զի եղիցիս նմա ի ծառայ և յորդի և ազասաւոր երեսաց նորա, և յոյս գիտոտրեան նորա շուսաորեսցի զքեզ՝ յուսաոր... վասն այսորիկ տոռաքնք խորհորդ և գիտոտրիսն, զի խրատեսցես զորդիս վասն նորա... և զխորհորդս նորա պատմեսցես մարդկան », և այլն: Արդ, գիտելով, որ կան ասոնց նման դեռ ուրիշ մերձաւորութիւններ երկաքանչիւր գրուածոցս մէջ, ուրեմն կարելի է հետեցնել, որ երկուքն ևս մի և նոյն անձի ձեռքով գրուած ըլլան . բայց հաւանօրէն նախ Ասանթթայ և Յովսեփայ պատմութիւնն և ապա ժի՛ Նահապետաց Կտակներն: Ուստի, ինչ որ ըսուեցաւ վերջնոյս գրութեան ժամանակին համար, նոյնը կը հաստատուի նաև առաջնոյն:

Գալով այն աւանդութեանց, որոնց վերայ իբրև ի հիման յօրինուած է վիպասանութեանս գեղեցիկ շէնքն, դիտել կու տանք, որ Քրիստոսի թուակառնէն իսկ յառաջ Հրէից մէջ կը շրջէին Յովսեփ Գեղեցկի և Ասանթթայ մասին հանճարեղ գրոյցներ, որոնք յետ Քրիստոսի մուտ գտան նաև Ասորոց, Արաբացոց և արևելեան ուրիշ ազգաբնակութեանց մէջ: Այս գրոյցներէն նշանաւոր է այն, որ Հիւրկանոսի որդւոյն Ռարքի Եղիսազարին ընծայուած է՝, Միգրայի գրոց ԼԻԷ. զխոյն մէջ: Զրուցիս հեղինակն՝ Ամովսայ Մարգ. Ե. զլ. 19 տեղին հակաժամանակագրական կերպով յարմարցնելով Յա-

1. Դիտելու է, որ ըստ քրիստոսեան Զուգի (Die gottesdienstlichen Vorträge der Juden, Berlin 1832, p. 271) և Գրէտցի (Geschichte der Juden, T. V. Magdebourg 1860, p. 222) Ռարքի Եղիսազարին կամ Եղիսազար Պիրիէին ընծայուած այս գրուածն՝ Ըրդ դարուն յետ Քրիստոսի նազու ուրեմն զքի առնուած է, անծանօթի մի ձեռքով . յառաջադէպ բերանացի աւանդութիւն միայն էր:

կոր նահապետին՝ մինչդեռ էր ի Քանան, կ'ըսէ. « Ոչ այլ ինչ էր այն օձն, եթէ ոչ Սիւքէմ որդին Սեմյոյայ », որ առեւանգեց Յակոբայ աղիկը Դինա, որ յղանալով ծնաւ զԱսանէթ: Իսրայէլ յետոյ չհարենալով տանել այս նախատանաց, առաւ թիթեղ մի և անոր վերայ գրելով Սրբոյն Եսայէլի անունը՝ կախեց մանկան պարանոցէն և իւր տաւնէն արձակեց: Ամենայն ինչ յԱտուծոյ նախասուժանաւած էր. և Միքայէ հրեշտակն յափշտակելով զնա՝ տարաւ յԵզրպտոս և Պտառիփարեայ (Պետափրէսի) տանը մէջ դրաւ. վասն զի Ասանէթ սաչմանաւած էր կին ըլլալու Յովսեփայ: Պուտիփարայ կինն՝ սնոյ ըլլալով, սնոյց զայն իբրև որգեգիր. և Յովսեփ յԵզրպտոս գալն վերջ՝ իրեն կնութեան առաւ զնա, ինչպէս որ գրուած է Մննդոց գրոց ԽԱ. գլխու 45 տան մէջ, թէ « Եւ ետ նմա զԱսանէթ դուստր Պուտիփարայ քրմին Հեղիոպոսի »:

Ասանէթայ ծագման վերաբերեալ այս պատմութեան նման տեղեկութիւններ կը պարունակուի նաև Մաշեա Մոփեթիմ¹ գրոց ԽԱ գլխում, և Միդրաշ Յալիգատի² ձևերս գլխում նոյնը կրկնուած է: Ամենուն ծանօթ երուսաղէմեան թարգմանն ևս, — զոր ոմանք սխալմամբ Յովսեփանայ որդւոյ Ողիէլի թարգման կոչած են, — Մննդոց գրոց վերոյիշեալ տեղին այսպէս մէջ կը բերէ. « Ետ նմա զԱսանէթ ի կնութեան, զոր ծնաւ Դինա՝ ի Սիւքէմ, և կինն Պուտիփարայ քրմին Տանիացոց սնոյց »:

Փարրիկիոս եբրայական ուրիշ աւանդութիւն մ'ևս մէջ կը բերէ, ըստ որում՝ իբր թէ երանելին Յոր, — այնքան արկածներէն և կնոջ մահուանէն վերջ, — առած ըլլայ զԴինա դուստրն Յակոբայ, յորմէ և ի Պուտիփարայ ծնած ըլլայ ապա Ասանէթ, որ եղաւ ամուսին Յովսեփայ: Հրէիցմէ Ասորոց անցնելով Ասանէթայ ծագման աւանդութիւնն ինչ ինչ փոփոխութիւններ կրած է, զուցէ եզրպտական աւանդութեան ազդեցութեամբ: Եւ ստուգիւ, Սախաւեայ Հաաքման, թիւ LXX, ասորի գրչագրին մէջ, — որ այս դարուս ընդօրինակուած է, — անծանօթ հեղինակն՝ յետ առարկելոյ, թէ ի՞նչպէս եղաւ Ասանէթ՝ կին Յովսեփայ Գեղեցկի, կը յարէ, թէ « Պատմենք ինչ որ ուսանք յիմաստութենէ իմաստոց: « Երբ Սիւքէմ որդին Միքե-

1 Այս տնուամբ կ'իմացուին օրինական և ծրարական զորոց սյն խորհի Սփիթի, որ ըստ վկայութեան Չուսգի, չի. Ա. էջ 94, Գեոնիմի գարու երկրորդ կիսան սկսաւ գոյութիւն ունենալ:

2 Կամ Գիբբ Յալուա Տմաւոնի, որ հետեոյութեմը կ'իմացարանին կինաւարց Գրուտից կը պարունակէ, զորս նաւարեց Տմաւոն կարա՝ ԺԱրզ զարում:

մայ պղծեց Նմաւոնի և Ղևեայ քոյրը Դինա, սքա վրէժեանգրութեամբ սրէ անցնելով բոլոր Սիւքէժացիները, երգուան շթողուլ բնաւ ժառանգ: Եւ երբ մօտեցան Դինայի երկանց օրերը, նա վախնալով եղբարցմէ՝ անսպասո քաշոսեցա, հօն ծնաւ իր զաւակը, գոր պատեց խանձարուրքի մէջ. և ինքը երբ եղևին ծառի մի ներքև կեցած կ'արատասուէր, իչա աթծիւն, որուն բնակարիւնն յԵգիպտոսս էր, և Եգիպտոսացոց Ուլլի աստածոյն զոհերէն կը կերակրուէր, յափըտակեց, Դինայի աչքին առջև, — մանուկը և թռչելով օդուն մէջ, տարաւ և դրաւ զայն Եգիպտացոց Ուլլի կոոց սեղանիէն վերայ: Պուտիփար՝ ըստ սովորութեան՝ կոոց խունկ ծխելու համար մեհեանը կ'իջնէ, և զայն տեսնելով՝ շփոթած կը փութայ առ կին իւր, կը պատմէ անոր իր տեսած հրաշքը, թէ ինչպէս դռները փակ և սեղանին վերայ մտնուկ մի դրուած կը գտնուի: Կը բանան դռները, կը բարձրանան ի սեղան անգր, և ահա արծիւ մի, որ թևերը բացած կը պաշտպանէր մանուկը: Քրմուհին անորգի՝ մեծապէս կ'ուրախանայ, և դայեկի մի կը յանձնէ զնա: Առջիկն՝ հասակն առնելուն պէս, Պուտիփար փառաւոր ապարան մի կը շինէ անոր ի բնակութիւն, և կուսաններ կը հաստատէ անոր սպասաւորելու համար: Շատ գեղեցիկ ըլլալով աղջիկն, իշխանագունք կ'ուզեն առնուլ ի կնութիւն, բայց նա անոնց չհաւնիր: Եւ երբ Յովսէփ՝ Փարաւոնի առջև ելաւ, և սա իւր կնիքն անոր ձեռքը դրաւ և իր կառքով բոլոր Եգիպտոս շրջեցոյց, և երբ անոր համբաւը տարածեցաւ յայտարհ ամենայն, տուաւ անոր ի կնութիւն Պուտիփարայ քրմին դուստրը. և Յովսէփ չզիտէր, թէ իւր քրոջ Դինայի որդին է:

Երբ Յակոբ կ'իջնէ յԵգիպտոս, Դինա ևս այցելութեան կ'եջնէ իւր Յովսէփ եղբոր, և անոր տիկինն ողջունած ժամանակ, կը շարժի Դինայի սիրտն. և անգէն կը հարցնէ, թէ Որուն աղջիկն էս. — Դուստր կ'ըսէ Պուտիփարայ իշխանին և քրմի Ուլլի կոոց: Նա կը պատմէ, թէ ինչպէս ինքն արծուի ձեռքով հոն բերուած, սեղանի վերայ դրուած և խանձարոց մէջ պատատուած էր. և երբ պատասան ևս բերելով ցոյց կու տայ, այն ատեն կ'իմանայ Դինա, որ իւր աղջիկն է եղբր: Եւ այս բանս լսելով՝ ամէնքը զարմացած փառք կու տան Աստուծոյ, որ կը յայտնէ իւր երկրպագունները. որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն. պարգաւքանոսքիւն է այս գրոցիւն զատերն Դինայի »:

Փարրիկիոսէն մէջ բերուած հրէական գրոյցն՝ ոչ միայն հակաժամանակագրական է, այլ նոյն իսկ հակասական. որովհետև Յոր

ուեի Մովսիսի ժամանակակից էր հաւանօրէն, քոն Յակոբայ: Բ. եթէ Յօր իրեն կին ըլլալու համար ած զԴինա, այն ատեն պէտք է, որ իրմէն և Դինայէն ծնած ըլլար Ասանէթ, և ոչ թէ ի Պուտի-փարայ:

Ուրբի Եղիազարին ընծայուած Միդրաշիմ գրքէն մէջ բերուած աւանդութեանն՝ ստուգիւ երբայական ըլլալու յայտնի նշանն է՝ Հրէից իշխան Միքայէլ Հրեշտակապետի գործակցութիւնն, որ դիտմամբ ներմուծուած է նաև այս գրուցիս մէջ, և մենք կը գտնենք զնա նաև Ասանէթայ պատմութեան մէջ, յէջ 173, այսպէս. « Ես եմ իշխան Իսրայէլի »: Սակայն Դինայի աղջկան հրաջքով յեզիպտոս տաւրուին՝ չի կրնար համարուիլ իբրև ստուգիւ պատմական, այլ այլարանական ակնարկութիւն մ'է պատմական և աւելի հին զէպֆի մի, այն է՝ Յովսեփէն յառաջ Եզիպտոսի մէջ ունեցած երբայական ազգին ինամութիւնն և գաղթական յարաբերութիւնները ցոյց տալու նպատակաւ յերկրուած: Այս՝ կը հաստատուի նոյն իսկ Մենդոց գրոց ծ. գլխու աւանդութեամբը:

Ասորական յաղբերաց յառաջ եկած զրոյցս, զոր կարեմք մեք իսկապէս եզիպտական իսկ համարել, ամենէն հնագոյնն է և կարևոր. վասն զի մէկ կողմէն երբայական, իսկ միւս կողմէն այլ եզիպտական հինաւորց և տակաւին խորհրդական քօղի ներքև ծածկուած պատմական զրոյցներն՝ այլարանական ձևով իրարու հետ կը զուգէ, յանձին Դինայի և Ասանէթայ: Եզիպտական է արդարև Ոյն, զոր ստորի հեղինակն անգիտութեամբ իբրև Հեղիոպոլսոյ, այն է Արեգ քաղաքի կո.ոց անուն մէջ կը բերէ. սակայն եզիպտական Փանթէոնի կամ դիցաբանութեան մէջ այդպիսի անուան հետքն անգամ չկայ. հեռաւարար, այդ տեղ յիշուած Ոյն՝ ուրիշ բան չէ, բայց եթէ նոյն ինքն ստորին Եզիպտոսի մայրաքաղաքն Հեղիոպոլիս¹, ըստ եզիպտական հին անուանակոչութեան, այսինքն է՝ Արեգակն, ուր անյիշատակ ժամանակաց հետէ զոհեր կը մատուցանէին դիցաւորն Ռայի կամ Ռէայ: Այսպէս նաև այլարանական արծիւն, որուն կը տըրուի, — փոխանակ Միքայէլ Հրեշտակին, — յափշտակել Դինայի աղջկին զԱսանէթ և ասանել Հեղիոպոլիս, ոչ այլ ինչ է, եթէ ոչ Արև գիւն՝ անձնաւորեալ ի Մոնթ, զոր յափշտակող թռչնոյ կերպարանօք կը ներկայացնեն եզիպտական հնութիւնք: Այս երկու ազգաց, այս-

1. Նիւտ Գեբե. Գլ. Ա. 11. — Փել. Սիթ. Պ. 7. Արեգակն հին - զգ. 7. Գլ. Բ. §. 7:

ինքն է, երբայականին և եգիպտականին, կրօնական գրոյցներն, որք միացած են քաղաքականի հետ, ոչ միայն խոր հնութիւն ունին իրենք իրենցմէ, այլ անդաին Արրահամու և Յակոբ Նահապետաց ժամանակ՝ Քանանէն դէպ ի յԵգիպտոս կատարուած մեծ դէպք մի կը պարզեն մեր դիմաց, որուն ծանօթ ըլլալ կ'երեւին Հին Կատակարանի հեղինակներն անգամ, թէպէտեւ անոր ինչպէս ըլլալը չեն պատմեր. այսինքն է, սեմականս՝ մեծ ցեղի մի՝ Հիւրսոսներոս՝ յԵգիպտոս արչուելն, և երկար դարեր անոր վերայ թագաւորելն, Տանիս կամ Տայանիս մայրաքաղաքի շինութիւնն և Հիւքսոսներու հարստութեան³ հաստատուիլն, այլովք հանդերձ:

Այս նկատմամբ՝ ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք երուսաղէմեան թարգմտէն վերև մէջ բերած տեղւոյն՝ Սիւրքեմ և Տայանիս ամենահին անուանց վերայ, որոց առաջնոյն ձեռքով ցոյց կու տայ մեզ երբայական աւանդութիւնն՝ Կինայի և Ասանեթայ գրուցի նախկին խանձարուրքն. իսկ երկրորդին ձեռքով, — որ կը յիշուի իբրև տեղի փոխադրութեան Ասանեթայ և բնակութեան Պուտիփարայ քրմին, — Յովսեփայ վէպին և երկու աղագկից, բայց ոչ կրօ-

1. Թէ ստուգիւ Հիւքսոսներու արչուանքն և Տայանիս ինձարկութիւնն և դած է Արրահամու ժամանակ, կը հաստատեն թէ Ս. Գիրք և թէ յետին ժամանակի քննութիւնք եգիպտական ին պատմութեան: Նախ Կինայոց Գրոց ԺԲ զլիւում կ'աւանդուի Արրահամու գողթականութիւնն յԵգիպտոս, և անդորձ ընտանծովք և անոր շինութիւնն, որ համառութեան մէջ շատ բան կու տայ մեզ իմանալ: Բ. Թուոց ԺԳ զլիւում 25 համարին կեղինակն՝ իբրև անտարակուսելի էջմարտութիւն կը հաստատէ, թէ Քիւրթոնի շինութենէն եօթն ասրի վերջ կ'աւ Եգիպտոսի Տայանիս քաղաքի ինձարկութիւնն: Զայս կը հաստատեն նաև Փիւ. Սմիթ, Հին պատմ. Արևելից, գիրք Ա. Գլ. Է. Տ. Բ. — Փուլ, Բառք. Ս. Գրոց (տես Զովան):

2. Այժմ գրեթէ ընդունելի եղած և ընդհանուր կարծիք է, թէ այն նովիւ և վրանաքնակ ժողովուրդք, որք Հիւքսոսք կը յարնորուին, և որք աւուր բազմութեամբ խազայով տիրեցին նախ ստորին Եգիպտոսի և ապա բարձրին, էին սուուգիւ ի Քանան բնակող Գիլձացի և Հիթացի առևարածականք, որոնք մասամբ սեմական և մասամբ ալ քամական ցեղերէ բաղկացած էին և կը յիշուին Քանանացի անուան ներքև Կինայոց ԺԲ. Գլիւում 6րդ համարին մէջ: Յովսեփոս՝ Երբայեցոց նա նոյնը կը համարի, որ ըստ մտայն կարող է սուայդ լինել, այնու մանաւանդ, որ Արրահամ իսկ բնակութեամբ Քանանացի կամ Քաղզէացի էր: Բ. ինչպէս քալ գիտել կու տայ Փիւ. Սմիթ, յիշեալ գործին մէջ, Յովսեփայ ժամանակի և անոր նախորդ Փարաւոններու բռնած քաղաքական ընթացքն իսկ, որոնք սիրայժամբ կը հրաւիրէին սեմական ցեղերը՝ բնակելու յԵգիպտոս, — այս երկրիս բնիկ ժողովրդեան աղիւցութիւնը կորսելու համար, — այսպիսի եղելութիւն մի քալ կը հաստատեն:

3. Հիւքսոսներու արքայականութիւնն՝ կը սկսի ԺԱ կամ ԺԲ հարստութեամբ և ԺԷ. ով կ'աւարտի, տեղի ստով թեքայական հարստութեան:

նակից ժողովրդոց իրարու հետ ձուլման փորձը և երկայն քնակակցու-
թիւնն: Դինա և Տանիս անուանց արտաքին ձևերուն նայելով՝ կարծես
թէ նոյն եղած ըլլան. սակայն դիտելու է, որ Տանիս կամ Տանէս
յունական հնչումն է, իսկ քաղաքիս սեմական և հնագոյն անունն է
Չոան, արարերէն Սոան, այսինքն է՝ տեղի փոխադրութեան: Այս եր-
կու անուանքս՝ որչափ որ իրարմէ տարբեր նշանակութիւն ունին,
նայնչափ ևս առանձին առնելով՝ երկու ազգաց և աշխարհաց մէջ
կատարուած անցից առհասարակեայք են. մինչդեռ Դինա կը նշա-
նակէ երբայեցերէն դատաստան կամ վեճ: Սակայն այսպէս և Ասա-
նէթ անունն, որ ծագմամբ ինձ աւելի երբայական՝ քան թէ ե-
գիպտական ըլլալ կը թուի, կը նշանակէ վտանգ կամ անբաղդա-
քիան, որ շատ լաւ կը յարմարի իրեն տրուած տարաբաղդ ծննդեան
գրուցին, և զայն կը հաստատէ վերտին:

Վերոյիշեալ գրուցաւ՝ մեզի ընծայած մեծ և դժուարակնճիւն առ-
եղծուածի ընդարձակ լուծումը թողլով Ս. Գրոց և եգիպտական հին
պատմութեամբ պարագողաց, մենք կ'ամփոփենք մեր քննութեան
սահմանը՝ դիտելու, թէ ինչ չափով կը համաձայնի Ասանեթայ և
Յովսեփայ վիպասանութիւնն՝ այն երեք ազգաց մէջ և իմաստնոց բե-
րանացի և կամ գրաւոր գրուցաց հետ, և կամ ընդհակառակն, ինչ-
պէս կը տարաձայնի:

Առ այս՝ նախ և առաջ դիտել կու տանք, որ վիպասանութեանս
մէջ՝ Դինայի վէպին և Ասանեթայ ծննդեան քնաւ որոշ յիշատակու-
թիւն չկայ. զի անոր ութ և տասն ամաց հասակէն կը սկսի կեն-
սագրութիւնն: Վիպասանութեանս հիմունքն՝ Մենդոց գրոց ԽԱ. գլխու
45 աան մէջ աւանդուած որոշ և պատմական ճշմարտութեան վե-
րայ հաստատուած է. այս առանց տարակուսի է: Սակայն Ասանե-
թայ ասորի թարգմանութիւնն՝ ի սկզբան պատմութեանս Ովն քա-
ղաքի յիշատակութեամբ՝ իրական առնչութիւն մի կը թուի ցոյց
տալ վերեւ յիշուած ասորական գրուցին հետ: Նկատելով, որ ասորի
թարգմանչին՝ ի ստորեւ դրուած բացատրութեան համեմատ յունաւ

1. *Ses Fabula Josephi et Asenethae Apocypha, e Libro Syriaco latine vertit Dr. Gustav Oppenheim, Berolini 1886, ըստիւր ծանօթութիւններով և բազմաթիւ անհրով յունարենի հետ:*

2. Այսպէս. *Anni primi septem ubertatis annorum, die quinto mensis secundi, Pharao Josephum misit, ut totam Aegypti terram peragraret, et mense quarto anni primi Joseph in fines urbis On, quae Graece Heliopolis appellatur, venit, ect.*

բէն բնագրի մէջ *Ελιόπολις* գրուած էր. ուրեմն կը հետեւի, թէ Զ. դարու ասորի թարգմանչին՝ Մովսէսի Ագեղացոյ ծանօթ ըլլալու էր սեմական լեզուով Ասանեթայ մասին ղեռ աւելի հնագոյն գրոյց մի, յորում փոխանակ յուն. Հեղիոպոլի՝ Ովն գրուած ըլլար: Բայց թէ այդ սեմական գրոյցն՝ նոյն էր արդեօք վերը մէջ բերուած ասորական ձեռագրի մէջ պարունակուածին հետ, թէ ընդհակառակն զլսովին տարբեր, այս՝ քննութեան կը կարօտի: Ասորի թարգմանութեան մէջ եղած ընդարձակ յաւելուածներէն դատելով, — եթէ թարգմանչէն հնարուած չեն, — ինձ վերջին կէտն աւելի հաւանական կերևի, այնու մանաւանդ որ յիշեալ ասորի գրուցին մէջ՝ Ովն իրբև կուռք կը յիշատակուի, իսկ հակառակ պարագայի մէջ՝ առաջին կէտն ընդունելի է. դիտելով որ շփոթմամբ՝ Ովն քաղաքը կարող էր կուռքի փոխուած լինել: Բ. Ասանեթայ ասորերէն պատմութեան մէջ Պետափրէսն ևս համաձայն յիշեալ գրոյցին Պոռտիփար կը գըրուի միշտ. մինչդեռ յոյն բնագիրն ունի Πεντεφρῆ (*Պենտեփրէ*):

Ասորական գրուցին մէջ ըսուած է, թէ Պուափարի կիճն՝ անորդի ըլլալով, որդեգրեց զԱսանէթ. այս աւանդութեան կը թուին համաձայնիլ նոյն իսկ Ասանեթի պատմութեան, յէջ 165 և 169, երկու տեղիքն, որոց առաջնոյն մէջ կ'ըսուի ի դիմաց Ասանեթայ, թէ անոնց կրտսեր որդին մեռած էր, և երէց որդւոյն այլ բնաւ յիշատակութիւն չըլլուիր. իսկ երկրորդին մէջ կ'ըսուի այսպէս. « Փրկեա և ամբարցո զօտարացեալս, վասն զի հայր իմ և մայր իմ ոչրացան զիս, զի ասացին. Ով է մեր դռստոր Սասանէթ, վասն զի կորոյս զաստուածսն: ... Ահա զամենայն զոր ետ ինձ հայրն իմ Պետափրէս ի ժառանգութիւն անցաւոր և տաժամահակեայ: Իրաւ է՝ որ այս տեղ Ասանէթ բազմիցս դուստր կոչուած է Պետափրեայ և Պետափրէս ալ հայր Ասանեթայ. սակայն այդպիսի յորջորջումներ կարող են պիտակաբար իսկ հասկըցուիլ, մանաւանդ եբրայական լեզուին մէջ, հաւասար որդեգրող և որդեգիր բառերու. ինչպէս որ Յովսէփ և Ասանէթ՝ երկիցս իրարու քոյր և եղբայր կ'անուանուին մի և նոյն պատմութեան մէջ, թէ և իրօք չէին:

Յովսէփայ կտակին մէջ ևս, ուր շատ նմանութիւններ կան, կ'ըսուի Պետափրեսի կնոջ համար, թէ արու զաւակ չունէր, և թէ անոր խորթ աղջիկն ալ Ասիթո՝ կը կոչուէր, որ կարծէք, թէ Ասանէթ

1. Այս անունն իսկ, որ զուս եբրայական է, և ոչ եգիպտական, Ա. Մուսորթաց է. զիսում յիշուած Յափաղեթոյ որդւոյն Աօթէ՛ իգականը կը թուի լինել, և կը նշանակէ մերթ ուրբա՛ծ, և մերթ ցոյ հանդերձն:

անուան աղաւաղեալ ձև մ'եղած ըլլայ. սակայն այժմեան տիրող կարծեաց համաձայն՝ այս Պետափրէան, որ յիշուած է Մննդոց Գրոց Ա զլիւու 36 տան մէջ և այլուր, բացարձակապէս չէ կարելի նոյնացնել Յովսեփայ աներոյ Պետափրեայ հետ. որովհետև այս վերջին՝ Հեղինոպոլսեցի է և քրմապետ, իսկ առաջինն՝ Մեմփիսացի¹ և դաճնապետ Փարաւոնի: Այս պատմական ճշմարտութիւնս շտեմելով Յովսեփայ Կաակի անանուն հեղինակը՝ կը թուի հետեւեալ տեղւով նոյնացնել զանոնք իրարու հետ, ըսելով, յէջ 142. « Ահաւասիկ տեսանէք, զի զդուստր տերանց իմաց առի ինձ ի կնութեան, և հարիւր տաղանդ սուկոյ ընդ նմա ետուն ինձ »: Եւ ստուգիւ ենթադրուած բառերս Հեղինոպոլսի քրմէն աւելի, — որ ծառայ էր՝ քան թէ տէր Յովսեփայ, — դաճնապետ Պետափրեային կը պատշաճին: Յամենայն դէպս՝ ասորական գրուցի և Յովսեփայ Կաակի հեղինակներն իսկ՝ յայսմ իրարու ծանօթ եղած կ'երևին: Բայ ի այս կէտերէս, նաև Ասանեթայ գեղեցկութեան, անոր ապարանքի, եօթնաթիւ նաժըշտաց, և այլ պարագայից յիշատակութեամբք իրարու քալ կը համաձայնին Սախաւեայ ձեռագրէն մէջ բերուած ասորական գրոյցն և Ասանեթայ վիպասանութիւնն:

Պալով Գինայի և Ասանեթի նախկին գրուցին, ընթերցողացս ուշադրութիւնը կը դարձնեմ Մննդոց գրքի ԽՁ. զլիւու վերայ, որ ըստ իս մեծ լոյս կարող է սփռել վերայիշեալ երեք գրուցաց և անոնցմէ հանած մեր եզրակացութեան վերայ: Այս տեղ գիտել կու տանք, որ մի առ մի յիշուած են յանուանէ և թուարկուած Յակոբայ որդիքն և թուունք, որոնք Քանանէն ելան և մտին յԵգիպտոս. իսկ Գինա առանձին միայն կը յիշուի՝ առանց որդոյ և կամ ամուսնոյ: Վերջնայս մասին Ս. Գրոց պահած լուծիւնը՝ նոյն իսկ Մննդոցի ԼԵ. զլիւէն կը հասկըցուի, զի անոր փեսայացուն Սիւքէմ՝ Ղևեայ և Նամաւոնի վրէժխնդիր սրոյն զոհ եղաւ. բայց թէ այդ այլազգի անթլլփառէն յղացած մանուկն, զոր լուծ են Ս. Գիրք, Բնչ եղաւ, կը հարցուի բնականաբար: Ահաւասիկ այն մեծ անծանօթն՝ որուն վերայ շատ բաներ ի հարկէ խօսեցան և գրեցին արևելեայք: Ահա այն կէան՝ ուսկից սկսան եբրայական և ասորական գրոյցք և վիպեցին: Ահա Սիւքեմայ կամ լաւ ևս՝ Քանանացւոց մանած կծիկն, որ հո-

1. Թեպէև Յովսեփայ Կաակի նպերէն թարգմանութեան մէջ ՄԵԻ և ՄԵԴ գրքի իբրև յատուկ անուն Պետափրեայ կ'նոյ՞ մէջ կը բերուին, սակայն յայն և լատին թարգմանութեանց մէջ «կին Փեմփիսացի» կը դուրս, յորմէ կը հետեւի, թէ նորա բնակութեամբ Մեմփիսէն էին:

լովելով և հասնելով մինչև ի Ստորին Եգիպտոս և յափունս Նիլոսի՝ կը հիւսուէի Եգիպտացւոց կրօնական և ազգագրական անցից հետ: Միով բանիւ, ահա այս դէպքը ծանօթ էր նաև Ասանեթայ վիպասանին:

Յիրաւի, եթէ խոր կերպով մտածենք, Հիդիոպոլի քրմապետի աղջկան առանց մեծի դժուարութեան աստուածապաշտ դառնալուն, ապաշխարելուն և երկնառաք հրեշտակի միջամտութեամբ Յովնեփայ հետ պսակուելուն, և Եգիպտոսի վերայ ԿՑ տարի թագաւորելուն աւարուածքն իսկ՝ զայն կը հաստատեն: Այո՛, այս պատճառաւ գրուած են, — յէջ 167, — Ասանեթի բերանն հետևեալ խօսքերն. « Յաղագս այսորիկ և զիս ատեաց Աստուած, զի ես պաշտեցի զԽուռն անմըռունչս... և կերայ ի զոհից նոցա...: Եւ արդ յոռայ յամանց՝ զի Աստուածն ճշմարիտ՝ է Երրայեցւոցն » . և յէջ 170. « Առ քեզ, Տէր և Հայրդ իմ, փախստական անկանիմ. զի ահաւասիկ վայրենի դաշտին՝ ծերացեալ առիւծն փախստական առնէ զիս, զի նա է Հայր աստուածոցն Եգիպտացւոց »: Այս պատճառաւ, յէջ 175, կ'ըսուի ի զմնաց հրեշտակին և իշխանին Հրէից՝ առ Ասանէթ. « Բաջալերեաց, կոյս սուրբ, ահա գրեալ է անունն քո ի գիրն կենդանեաց յերկինս... Ահա յայսմ հետէ նորոգեսցիս, վերստին կենդանացիս »: Այս պատճառաւ բազմիցս կը կոչուի Ասանէթ՝ քաղաք ապաշինի, անոր հովանւոյն ներքև կը ծածկուին յուսացեալքն յԱստուած և պարբայաց ներքև պատսպարուիլ կը տրուի ապաշխարողներուն և բարձրելոյն Աստուծոյ հնազանդողներուն: Վերջապէս, այս նկատմամբ նոյն իսկ Յուդայի Վտակի առաջին տեսչեան մէջ, — յէջ 116, — առնուլ կը տրուի Յովնեփայ՝ արժոռոյ նման քուստարած գոռարակն, և անոր հետ եղնելն ի բարձունս և քուստարակն ի դրախտն, և սրբազան գրքից ներսն, յորս գրուած կը յիշատակուին Երրայեցւոց և անոնց գրացի ժողովրդոց ծածկեալ պատմութիւնքն: Այս տեսիլս Յեբրեմիէլ աւելի մանրամասն պարագաներով հասուցած է մեզ, Նեփթաղիմայ կտակին մէջ, ըստ հրատարակութեան Գաստերի, գոր յիշեցինք:

Ասանեթայ վիպասանութեան և անոր բնագրոց գաղտնիքը փոքր ի շատէ վերապահութեամբ պարզելէն վերջ, մի քանի խօսք այլ ըսենք անոր այլ և այլ թարգմանութեանց վերայ: Ասոնցմէ մինչև ցայսօր ծանօթ էին յունարէնն, լատիներէնն և ասորերէնն: Յունարէն թարգմանութիւնն, — որուն առաջին հրատարակութիւնն եղած է Վինկենտինոսի Բելլովակեցւոյ ձեռքով¹, իսկ երկրորդն՝ Յ. Ալ. Փա-

1. Տես Specula Historiali lib. 2. C. 118, seq. Այս հրատարակութիւնն թեպէտև ընդարձակազոյն քան զփարբիկայն, բայց տարակուսական է, որ ամբողջապէս չին թարգմանութիւնն ըլլայ:

բրիկիտսի՝, — ամենէն Հնագոյնն է, բայց պակասաւոր: Քարգմանութիւնս՝ երբայական բնագրի վրայէն կատարուած է հաւանօրէն, նկատելով որ իրմէ Հնագոյն մի այլ Քարգմանութիւն գեռ յայտնուած չէ: Այս Քարգմանութեանս ինչպէս բնագրին՝ այսպէս նաև ժամանակի նկատմամբ՝ պատմական և որոշ տեղեկութիւնք կը պակասին. սակայն այս առանց տարակուսի է, թէ ամենէն Հնագոյնն է, և գուցէ, թէ Ե. դարուն կատարուած:

Լատին Քարգմանութիւնն, — որ արդէն ի վաղուց հրատարակուած է նախ Վինկ. Բելլովակեցոյ Պատմական Հայելի գրոց Բ. Գրքին մէջ, ապա Փարրիկիտսի յիշեալ գործի Բ. Հատորին մէջ, — չի գիտցաւ թէ երբ կատարուած է, որու ձևըով, և ի՞նչ բնագրի վրայէն. վասն զի պատմական ակնարկներ կը պակսին առ այս: Սակայն Համեմատելով զայն ասորի և յոյն Քարգմանութեանց հետ, տեսանք յայտնապէս, որ ասորերէնն՝ անոր բնագիր եղած չի կրնար ըլլար բացարձակապէս. որովհետև բաց ի Ովն անուանէն, կը պակասին լատիններէնի մէջ նաև ամբողջական գլուխներ: Անտարակոյ լատին Քարգմանութիւնս, — ըստ որում կը գտնուի Վինկ. Բելլովակեցոյ վերոյիշեալ Պատմական հայելի կոչուած հաւաքման մէջ, և որ ծառայած է նոյնպէս Փարրիկիտսի հրատարակութեան և անոր հետ բառ առ բառ նոյն է, և ոչ իսկ աւելի կամ պակաս, ինչպէս սխալմամբ կարծեցին ոմանք, — պէտք է ըսել, թէ յունարենի³

1. Տես Codex pseudoepigraphus Vet. Testamenti T. II. Այս հրատարակութիւնս համեմատութեամբ շատ թերատ է. այսինքն է՝ կայրէն հրատարակութեան, յէջ 165, 10րդ տողի՝ «ոսկով ծիրանիս» բացատրութեամբ կ'աւարտի, թողով 16 թերթ պարտով միջոց մի: Յաւախ է այս կորուստս, որովհետև 6 թերթերէ բաղկացած այս հատակտորս՝ աւելի քան զառաջինն՝ կին Քարգմանութիւն ըլլալու կըուաններ ունի, բաղդաստելով կայրէնի հետ:

2. Օրինակի աղաղակ, լատ. Քարգմանութեան Բ և Գ. գլխաւորներուն մէջ ի բաց թողուած են Ա. 14րդ էջի «Fama pulcritudinis» միջև և 16 էջի «ad Putipharem Sacerdotem praemisit» երկու էջ հատուածն. — 27-28 էջի Ասանեթայ ընդարձակ աղօթքն, այլովք կանգերս. — 36-37 էջում Ասանեթայ՝ իւր դանկին հետ ըրած խօսակցութիւնն, սեղանի կանգերմանքը, վհետ աղբերն նածշախ ձևաքով ջուր բերելն, և այն ջրայ մէջ տեսնուած Ասանեթայ գեղեցկութեան մասին տրեւիտան բանաստեղծութեան վեհ նկարագիրն. — 38 և 39 էջերում Ասանեթայ և Յովսէփայ զրեւախոսութեան և սիրայ գողարիկ նկարագիրն. — 40րդ էջում ոտաւաւարէ ձևով եղած Ասանեթայ Օրենբրդութիւնն, և այլն:

3. Բաց յայլոց յայտնի նշան մ'է յունարենէ Քարգմանուած լինելուն յէջ 770 (լատ. Փարբ. հրատ.) այս բացատրութիւնս՝ et nomen tuum non vocabitur amplius Assonet, sed multi refugii, etc. Դիտելու է, որ multi սխալ անակացողու.

վրայէն եղած է. Հետևաբար, բաւական Հին ըլլալու է, այսինքն է ժԳ. դարէն ի վեր, քանի որ յոյն թարգմանութիւնն զեռ ամբողջապէս կայր, և հաւանօրէն Վինկենտինոս իսկ այս դարուս՝ անկէ համառօտեց զիրն, թէպէտ և ուղղակի չյիշատակեր զայն: Այս ևս դիտողութեան կէտ մ'է, զի մեզ հասած յունարէնն՝ Ասանեթայ Պատմութեան քառորդ մասն հազիւ ըլլայ, մինչդեռ լատինն՝ իւր համառօտութեամբ հանդերձ՝ մինչև վերջը կը հասնի, ժԹ գլխահամարներու բաժնուած. բայց այնպէս չոր և ցամաք, զոր այն գեղեցիկ վիպասանութենէն իրրև կմտիք մի միայն կրնանք համարել: Սակայն, դիտելու ենք, որ վերջինս ոչ ամբողջական և ոչ այլ հաւատարիմ թարգմանութիւն կրնայ ըսուիլ, այլ ճարտար գրչով մի համառօտ խմբագրութիւն: Այդ խմբագրութիւնն եղած կրնայ ըլլալ նոյն իսկ Վինկ. Բելլովակեցւոյ ձեռքով:

Ասորերէն թարգմանութիւնն, — զոր Լանդ յամին 1870 հրատարակութեամբ¹ ծանօթացոյց գիտնոց, հանելով զայն մասամբ Զաքարիա Մելիտոնացւոյ Պատմոսթիան եկեղեցոյ խորագրուած գրուած, քէն, և մասամբ այլ Բրիտանական Մուսէոնի ասորական թիւ 7190 ձեռագրէն, — երկրորդ անգամ հրատարակուեցաւ², յամին 1886, Ուս. Գուստաւ Ոպպէնհայմի ձեռքով, ասորերէնէ յեղեալ ի լատին բարբառ: Այս թարգմանութիւնս, ինչպէս կանխաւ յիշեցինք, եղած է յունարենի վրայէն, յամի Տեառն 550: Թարգմանիչն է Մովսէս Ագեղայեցի, — որուն համար կ'աւանդուի, թէ յունարէն քաջ գիտնալով, ուրիշ գործեր ևս թարգմանած էր յունարենէ, — և յորդորմամբ Պափնոտիոսի ուրումն թարգմանած կ'աւանդուի³ զայս: Այս թարգմութիւն մէ է յու. բնագրի πόλις = +ու+ բառին, զոր կը զանկէք թէ ասորի է թէ՛ ևս. թարգմանութեանց մէջ: Լատին թարգմանիչն՝ չգիտեմ թէ Բնչպէս πόλις բառը πολὺς կարգացրեր է:

1. Anecdoton Syriacum, T. III, Պարտաբիւն Յովեթոյ և Ասանեթի Իսկուրի խորագրի ներքև: Լատին հրատարակութեան մէջ՝ երեք կամ չորս էջի շտի գաւազ մի ձեռքեր է:

2. Որուն ընդհանուր սխաղոսն է Fabula Josephi et Asenethae apocripa, e libro Syriaco latine vertit, ect. Lugduni Batavorum 1870. Գիտնական երտարտակիչս՝ Լամոսոս յառաջաբանի մէջ կարևոր տեսութիւններ ըրած է Ասանեթի պատմութեան այլ և այլ զրուցաց, թարգմանութեանց և ձեռագրաց մասին: Իսկ ընդհանուր զորքի մէջ ի ստորև իջիցն շատ օգտակար ծանօթութիւններով նշանակած է մեր յոյն բնագրի՝ մերթ լատ. թարգմանութեան և մերթ այլ ասորի զրուցաց տարբերութիւնքը. երբեմն աստեղանիշերով կը նշանակէ ասորերէնի ուղղագրութիւնքն, երբեմն ալ ծանօթութեամբ կը գնէ Ս. Գրքէն փոխ տուեալ տեղեաց էջերն և գլուխները:

3. Պափնոտիոսի առ Մովսէս և Մովսէսի առ Պափնոտիոս փոխանակուած

մանսութիւնս ոչ միայն հնութեամբ, այլ նոյն իսկ լեզուին կոկոսութեամբն և գեղեցկութեամբ՝ համբաւեալ էր առ Ասորիս: Սակայն մեզ համար անով աւելի մեծ նշանակութիւն ունի, որովհետև յունարէն հին՝ բնագրէ մի թարգմանուած լինելով, ոչ միայն անոր մեծագոյն պակասը կը լրացընէ, այլ նոյն իսկ յաւելուածոց ձևով յաճախ այնպիսի նորութիւններ կը ներկայացնէ, որոնք կարծէք թէ, ուրիշ աղբիւրներէ օժանդակեալ են: Թարգմանութիւններս՝ բաղդատութեամբ հայերենին՝ ոմանք աւելի համառօտ կարծեցին, կամ այն պատճառաւ, որ հայ թարգմանչի ունեցած յոյն օրինակն ամբողջ էր, և կամ ասորին համառօտած է զայն: Սակայն այս ենթադրութեանց ոչ մին կարելի է իբրև ուղիղ ընդունել, որովհետև, — ինչպէս տեսանք քիչ յառաջ, — ասորին՝ 550ին թարգմանուած ըլլալով, բնականաբար, աւելի դիւրութիւն ունէր անոր թարգմանողն՝ կատարեալ յոյն բնագիր մի ձեռք բերելու, քան զհայն. և իրօք ի ստորև յիշուած յոյն ձեռագիրն, զոր գտած կ'աւանգէ անանունն, — Ռեսենայ քաղաքի եզրիկոպոսական գրատան մէջ, — ամենահինն էր և կատարեալ: Գարձեալ, համեմատելով թարգմանութիւնս՝ հայերէնի հետ, ասորին ընդհանրապէս աւելի ճոխ գտանք ի բանս և ի բացատրութեան, քան զհայն: Իբրև է, թէ շատ անգամ հայերենի մի և նոյն իջի մէջ մանր մունր բացատրութիւններն և բառերն կը պակսին ասորւոյն մէջ. սակայն դիտել կու տանք, որ նոյն առաւելութիւնքը յաճախ, և երբեմն աւելի նշանաւոր կերպով, ցոյց կու տայ ասորին՝ նկատմամբ հայերէնին: Պէտք եմ ըսել և զայս, թէ մի քանի տեղ ամբողջական էջեր և պարբերութիւններ ևս կը ներկայացնէ մեզ ասորերէնն, — զորս յետոյ պիտի նշանակենք, — որոնք ի սպառ կը պակսին հայերէնի մէջ. սա, ընդհակառակն, մէկ էջ հատուած միայն ունի աւելի, որ չի գտնուիր առաջնոյն մէջ: Այս և նման ուրիշ դիտողութիւններէս վերջ, աւելի ուղիղ դատած կ'ըլլանք, եթէ ըսենք,

նամակաց մէջ (Sku Wright, Cat. of the Brit. Mus, II 483), և Ասսեսմանի, Bibl. Orient. T. II. p. 82.

1. Անանուն օմ ասորի, որուն նամակն արտատպած է Լանդ (V. Anecd. Syr. T III, p. 15 vers. 24), կ'ըսէ, թէ. ինքն գտած էր, — Ռեսենայ քաղաքի Բերիզ վիճակի եզրիկոպոսաց մասնապարտին մէջ, — յունարէն ամենահին զգրոյկ մի, յարուժ կը գտնուէր Ասանեթայ պատմութիւնն. բայց ինքն անտեղեակ ըլլալով յոյն լեզուին, յիցս զայն առ Մովսէս, խնդրելով որ ասորերէնի զարձնէ: Ախտս որ Մովսէսի առ նա գրած պատասխանին, որ կը գտնուի մի և նոյն զբնագրի մէջ, խանգարուած ըլլալով. շիմացուիք, թէ ո՞վ էր այն անանունն: Ասսեսմանայ վկայութեան նայելով, Պափնոսիս օմ էր՝ այն հին ձեռագիրը գտնողն:

որ ոչ թէ ասորին պակասաւոր կամ համառօտ ըլլալուն պատճառաւ է, որ կը տարաձայնի յաճախ յոյն բնագրէն և հայերենէն, այլ գուցէ թէ ազատ թարգմանութիւն ըլլալուն պատճառաւ: Գուտաւ Ուպէնհայմ կը համարի, թէ անոր թարգմանիչն Մովսէս, ըլլալով ճարտար գրիչ, ուզած է այդ վիպասանական գործին աւելի մատենագրական փայլ տալ, ասորերէն ընդուի պահանջին համաձայն, յետ և յառաջ տեղափոխելով նախադասութիւնները և ճապաղելով զանոնք՝ նորանոր յաւելուածներով: Այս կարծիքս՝ ըստ մասին ճշմարիտ է. վասն զի այսպիսի տեղափոխութեանց հետ՝ յեղափոխութիւնք իսկ գաղափարաց և կարգի յառաջ եկած են, գրէթէ բոլոր թարգմանութեան մէջ, որք մերթ յունարենի, և մերթ հայերենին անհամաձայն կ'ընթանան. բայց յամբողջութեան անդ՝ երկու բնագրերն, այն է յոյնն և ասորին, այնպիսի համաձայնութիւններ ցոյց կու տան, որ իրաւամբ կրնանք ըսել, թէ այժմեան յունարէն հատուածն՝ նախկին թարգմանութեան մնացորդ է: Հայերէն երկու գրչագրաց ձեւքով, — զոր քիչ յետոյ պիտի ներկայացնենք, — ասորայն կարծեցեալ յաւելուածներէն շատերն ստուգիւ յաւելուած չեն. վասն զի համեմատութեամբ տեսանք, որ հայկական թարգմանութեան մէջ ևս կան:

Արդ, Ուպէնհայմի հրատարակութեան մէջ, ինչպէս ըսուեցաւ, ասորայն բանից և բացատրութեանց անհիշող առմունքներն և խանդարմունքը՝ ընդհանրապէս ուղղագրուած են ծանօթութեամբք. ուստի, մենք այսքանս միայն դիտել կու տանք հօս, որ ՅԱԷ իջի առաջին 7 տողերն կրկնուած են, ընդլայնման ձևով. իսկ նոյն իջի վերջի տողի՝ Tuere eum in sapientia, բառերէն վերջ՝ ամբողջ մէկ էջ Ասանեթայ ապաշխարութենէն ընկած է, զոր հրատարակիչն լրացուցեր է, լատին թարգմանութենէն փոխ առնելով զայն, մինչև et invenies favum mellis super mensam tuam.

Հայկական թարգմանութիւնն, որ գրէթէ ասորականին հաւասար հին է և նշանաւոր, արդէն ասկէց 11 տարի յառաջ մեր տպարանի մամլոյն¹ տակէն դուրս գալով, ծանօթացած էր ազգիս: Երկրորդ՝ բայց կիսամասնեայ հրատարակութիւն² մ'ալ հայագէտ գաղղիացւոյն Ա. Կարիբրի ձեւքով եղաւ, որ հայերենէ գաղղիարէն թարգմանելով Ասանեթայ պատմութեան Գ. և վերջին գլուխները,

1. Տես Բազմազէպ 1885-6 ամսոց:

2. Որպ խորագիրն է. Une version arménienne de l'Hist. d'Asseneth. Սրա բնագիրը դրուած է թիւ 812 Ճառքնախի, նստադպր նոր:

Հմտից յառաջարանով մի ուզեց ծանօթացնել Եւրոպացւոց : Գ. Ուլ-
պէնկայմ՝ կ'երևի թէ ճանչցած չէ բնաւ այս Հրատարակութիւններս,
պովհեակ ասորերէն թարգմանութեան Հրատարակութեան մէջ բնաւ
խօսք չըներ Հայկական թարգմանութեան մասին, որ ամենէն աւելի
յիշատակութեան և ուշադրութեան արժանի է : Ուրիշ ոչ մի թարգ-
մանութեան այնքան բազմաթիւ օրինակներ մեզ Հասած չեն, որքան
Հայերէնին : Միայն վանացս մատենադարանին մէջ ունիմք այժմ վե-
ցթիւ օրինակներ, յորոց դժբաղդարար չորք¹ միայն ծառայած են
վերջին Հրատարակութեան, որ 1895ին աւարտեցաւ. իսկ միւս եր-
կուքն՝ գործիս Հրատարակութենէն վերջ յայտնուեցան : Էջմիածին
և Երևասողէմ աւելի պիտի ըլլան անտարակոյս :

Այս Հրատարակութեանս, — որ 47 էջերէ կը բաղկանայ, — իբրև
բնագիր ի գործ ածուած է թիւ 812 ճառընտիրն Ա. որուն վրայէն
երած էր նաև 1885-1886ի Հրատարակութիւնն ի Բազմավիպի. իսկ
Ա, Գ, Գ. օրինակաց տարբերութիւններն ի ստորեւ նշանակուած են,
որոնք ևս քան զևս կը յաւելուն անոր քննական կարևորութիւնն
և յորգը : Այս ճառընտիրս, որ ընդ օրինակուած է Մինէրվայի (Bibl.
Cassanantensi) գրչագրէ մի, ոչ միայն ընտրելագոյնն չէ, այլ նոյն
իսկ կարող եմ ըսել, թէ ամենէն աւելի կը տարածայնի ասորի և
լատին թարգմանութիւններէն. տեղ տեղ ալ ուսմկօրէն բառեր կը
խառնէ, որոնք չեն գտնուիր ուրիշ օրինակներու մէջ : Ուղղագրու-
թեան մասին ընտրելագոյն է Գ. օրինակն և Դրբն, յորմէ մի ան-
գամ միայն տարբերութիւն նշանակուած է ի ծանօթութեան, թէ-
պէտև կան ուրիշ կարևոր տարբերութիւնք ևս : Իսկ ասորերէն թարգ-
մանութեան նկատմամբ՝ ամենէն աւելի կարևորութիւն ունին Ծ. և
Ձ. օրինակներն, որոնք դժբաղդօրէն ի բաց թողուած են : Այս օրի-
նակներս, — որոց երբեմն կը Համաձայնին նաև Ա. և Գ. օրինակ-

1. Ա. օրինակն է թիւ 679, որ գործածուած է իբրև Ռ. օր. ԺԲ Նախապետաց
կտակերու Հրատարակութեան : Գ. օրինակն է թիւ 280 Աստուածաշունչն, զոր
մէջեցիկ իբրև բնագիր կտակաց : Գ. օրինակն է թիւ 1309 Քաղաքաճի Բայաճա-
նաբոյ, և այլն, Ետրապիք ընտիր, որ լաւ կը Համաձայնի Գ. օրինակին, և Հա-
տարեմ անկէց ընդօրինակուած է :

2. Ե. օրինակն է թիւ 398, Գեորգոյ Սկարայոյ Իրաբոյց Հետ միացած է : Նոս-
րագիր նոր և սխալագիր, բայց Հնազոյն և ընտիր օրինակէ մի ընդօրինակուած
ըլլալու է, և ինչպէս պիտի տեսնենք, ունի ընտրելագոյն և նոր ընթերցուածներ :
Ձ. օրինակն է թիւ 229 Աստուածաշունչն, բարբիթ, զոր յիշեցիկք ի վեր անգր իբրև
Գ. օր. ԺԲ Նախապետաց կտակներուն : Այս օրինակս՝ թէպէտև ուրիշ ուրիշ սխա-
լագիր է, բայց Ե. օրինակի պէս ինքն ևս յաճախ նոր ընթերցուածներ կը ներկա-
յօրէ : Գրուած է յամի Տեառն 1855 :

ներն, — կ'ընծայեն մեզ այնպիսի տարբերութիւններ, որոնք ոչ միայն միւս օրինակաց մէջ կը պակսին, այլ մանաւանդ լաւ կը համաձայնին ստորերեւնի մէջ եղած այս ինչ կամ այն յաւելուած կարծուած տեղերէն ոմանց . երբեմն ալ փոխադարձաբար յունարէն կորսուած ճոխ բնագրէն բառեր և բացատրութիւններ կը ներկայացնեն, որոնք վրիպած կ'երևին նոյն իսկ ասորի թարգմանչէն : Լոնտինեան ասորի ձեռագրի կրկին պատմական յիշատակարաններէն, — զորս նշանակեցինք ի վեր անդր, — արգէն կը գիտցուէր, թէ ասորերէն թարգմանութիւնն յունարենի վրայէն եղած էր . բայց երկուտեք տեսնուած այն մեծամեծ տարբերութիւններն, այսինքն է, մէկ կողմէն յունարենի՝ միւս կողմէն ալ ասորերէնի մէջ երեւցած այն կարճ կամ ընդարձակ յաւելուածներն և յապաւումներն, որք զանոնք իրարմէ մեծապէս կը հեռացնեն, պիտի մնային իբրև մի մի անյուծանելի առեղծուածներ, եթէ օգնութեան չհասնէր մեզ բարեբաղդաբար հայկական թարգմանութիւնն, որ իբրև ժամանակակից կամ լաւ ևս մերձաւոր քոյր ասորոյն՝ ցոյց տայր մեզ երկաջանչիւրին իբրև հասարակաց մայր՝ յունարէն ընդարձակ՝ բայց մեծաւ մասամբ անյայտացած հին բնագիրն : Այս մասին հայերէն թարգմանութեան մատուցած ծառայութիւնն անհամեմատ մեծ է : Այո՛, ասկէց վերջ հայերենի բաղդատութեամբ պիտի կարենան ուսումնասէրք դատել նախ, թէ ի՞նչ էր երբեմն յունարէն հին բնագրի պարունակութիւնն և որչափ կը տարբերի անկէց մեզ հասած հատակոտորն . թէ ի՞նչ են այն կէտերն, որոնցմով ասորին խոտորած է անկէց : Այսպէս ուրեմն այս վերջնոյս ձեռքով ալ կարելի է իմանալ հայերէնի մէջ սպրդուած եկամուտ բաներն, որով վերջապէս որոշ գաղափար պիտի ունեցուի Ասանեթայ ընդհանուր վիպասանութեան և նոյն իսկ անոր երբայական բնագրի վերայ :

Արդէն ի վաղուց ենթադրուած էր, որ հայերէնն՝ յունարենէ թարգմանուած ըլլայ . բայց ենթադրութիւն մ'առանց ապացուցի՝ չունի ճշմարտութեան այն հաստատուն կնիքն, որով միայն կրնայ այս ինչ կամ այն ծանօթութիւնն անցնիլ ի կարգ գիտութեան . ուրեմն պէտք է ապացուցանել, թէ սուգիւ ասորականէն աւելի՝ յոյն բնագրին հետեւերը կը կրէ իւր վերայ հայերէն թարգմանութիւնն : Եւ իրարու հետ համեմատելով այդ երեք բնագրերը, տեսանք արդարև նախ, որ հայերէնն՝ յունարենէ թարգմանուած է : Այս աներկբայի ճշմարտութիւնն մեր ընթերցողաց ևս ակներև ընելու համար՝ կը դնենք այստեղ մեր ըրած համեմատութենէն բազմաթիւ օրինակներ, յորս

Հայերէնն՝ որչափ որ կը խոսորի ասորականէն, այնչափ ևս կը համաձայնի յունականին:

ԻՈՐԱԳԻՐՔ՝ ՀՍՑ ԵՐԻՑ ԲՆԱԳՐԱՑ

ՅՈՒՆԱՐԷՆ

ՀԱՅԵՐԷՆ

ԱՍՈՐԵՐԷՆ

Βλος και ἔξομολόγη-
σις Ἀσενῆθ θυγατρὸς
Πεντεφρῆ ἡλιουπόλε-
ως. Διήγησις¹ ὅτε ἔλα-
βεν ἀδτὴν ὁ πάγκαλος
Ἰωσήφ εἰς γυναῖκα.

Պատմութիւն Յով
սէփ գեղեցկանն և
Ասանէթին *

Historia Josephi
justi et Asenethae
ejus uxoris

ՍԿԻՉԲՆ՝ ՀՍՑ ԵՐԻՑ ԲՆԱԳՐԱՑ

ՅՈՒ.

ՀԱՅ.

ԱՍ.

Ἐγένετο ἐν τῷ
πρώτῳ ἔτει τῆς εὐ-
θηνίας ἐν τῷ μηνί τῷ
δευτέρῳ, πέμπτῃ του
ἑξαπέστειλεν Φαραὼ
τὸν Ἰωσήφ του περιλ-
θεῖν πᾶσαν τὴν γῆν
Αἰγυπτου. ἐν δὲ τῷ τε-
τάρτῳ μηνί τοῦ πρώτου

« Եւ եղև յամին
յառաջնումն, որ օր
եօթներորդ (Ա. օր.
հիկգ) էր ամսոյն,
առաքեաց Փարաւոն
զՅովսէփ շրջել ընդ
ամենայն երկիրն Ե-
գիպտացւոց. և եկեալ
հասեալ յութկտանն

«Anni primi, sep-
tem ubertatis anno-
rum, die quinto men-
sis secundi
Pharao Josephum mi-
sit, ut totam Aegypti
terram peragraret
Et mense quarto an-
ni primi Joseph in

1. Ասկէց սկսեալ խորագրիս քննած խօսքերն յետոյ ուրեմն նախկին բնա-
գրի վերայ կատարուած մի նոր խմբագրութեան անթիւ ներմուծուած կ'երևին.
Վասն զի մարմնոյն կամեմատ կարկ էր որ անոր վերայ կեցած գլուխն ևս մեծ ծա-
ւալ ունենար: Ուստի այս պատճառու է որ հայ. և լատին խորագրերէն կը տար-
բերի:

* Ժ. Աստուածաշնչի մէջ ընդհակառակն գրուած է՝ Պարֆուսն Ասանիւս,
Բու՛՛: Այս վերնագիրս յետոյ ուրեմն ընգօրինակողի ձեռքով կամտրոսուած կ'ե-
րևի. հին բնագրի խորագրին՝ Պարֆուսն Յովսէփ, Գեղեցի և Ասանիւս, Բու՛՛
ըլլալու էր:

ἔτους οκτωκαιδεκάτω
τοῦ μηνός...

Θετλ 85 ἦν δὲ τις
ἀνὴρ ἐν τῇ πόλει ἐ-
κείνῃ ὀνόματι Πεντε-
φρής, ἱερεὺς ὧν ἡλιου-
πόλεως, καὶ σατράπτης
τοῦ Φαραῶ

Ἦν δὲ ὁ ἀνὴρ οὗ-
τος πλούσιος σφόδρα,
καὶ φρόνιμος πάνυ καὶ
ἐπιεικής. Ὑπήρχεν δὲ
καὶ σύμβουλος τοῦ Φα-
ραῶ συνιών.

οὐβ (U. op. Ἡφκωι
βουκκιφ ζουαυζήκω
αἱβ, ηρ ορ ἑορβι κ
ουαυβ κρ ωδουζβ)

Ἦε ἔρ αἰρ ἰρ ἰ
φωηωφβὺν ζαῖνῶβι
κ ἔρ ἀνῶκῶ ἀνῶ
αῖνῶβιβι βῆτωαφρῆ,
φουρῶ Ὑρβφ φωηω-
φβὺν, κ ἔρ ἡβαω-
φωρ Φωρωακῶβι.

Ἦε ἔρ (U. op.
αυ) ἰβδωαφβὺν φῶν
φωδῆνῶν ἰβδωαἰβδω
Φωρωακῶβι βουρζφρω
κωῖνῶβιβωἰφρ» :

fines urbis On, quae
in graece Heliopolis
appellatur, venit, ect.

Qua in urbe fuit
vir, unus ex prae-
fectis et magnatibus
Pharaonis, et hic vir
erat ditissimus et sa-
pientissimus, pru-
dens et consiliarius
Pharaonis, et nomen
ejus Putiphar, Sa-
cerdos urbis Helio-
polis» .

ζωγ. θετλ 154, ἀνη 7ρε' « Ἰρηγ οἰ φηρη βῆκ » = ὧ οὐκ ἦν ἀριθ-
μὸς. — Θετλ 154, ἀνη 14ρε « ζωβδωρῶβῆ Ὑαῖνῶβω » = ταμείον
τῆς Ἀσενέθ. — (βωζφρη ρωκῆβὺν ἔχων πάντα τὰ ἀγαθὰ ἡῆς γῆς,
ἠρε κρ φῶνῶβὺν ἡωκ ἡουρῶβὺν ἰβζ, κρ φακῶβὺν ἰ ζαῖν). — Θετλ 154,
ἀνη 16. « ἰ ἰρ φηζβββ ἰβδωαφρ βῆφ Ὑαῖνῶβω » = ἵνα μὴ
νυκτὶ τελευτήσῃ σὺν τῇ Ἀσενέθ. (U. κῶβι' « ἠρε ἰ ἡβὺν ἡουρῶβ
κ ἡουρ, ἵουρῶβ Ὑαῖνῶβ, ἰβδωαφρ βῆβ » : — Σνη 19ρε « ἰβδ » ζαῖν
ἰβωῖν κῶβι, κ αἰυ ἵ. ρῆωφββ βέγαρον = αἰωφῶβ ρωκῆ βῆω
ζωακωφφφφββββζζζ ζωαωζ βκωδ β : Σνη 20 ζ. « Ἦε ἔρ ἰβδ φα-
ωκῶβῶν ἡωαφβὺν ἰβδ ἵουδ » = ἵουκ. καὶ ἡ μὲν μὴ θυρ'ς ἦν
πρῶτι μεγάλη σφόδρα. — Σνη 23 « ἰ ἰβζῶβῶβῶβῶβῶβῶβ ἡβωφ φηρηγ »
(U. op. φῶβφφφφ) = ἵ. ἐπὶ τὸ ἀμφοδόν. (U. in plateam, ut prae-
tereuntes videri possent: Θετλ 155 ζωγ. « ἡρ ἡρ φφφωφφ κ φω-
κῶβῶβ » = ἵ. ὁκτὼ ἀνδρες δυνατοὶ νεανίσκοι ἔνοπλοι. (U. *adolescentes*
duodeviginti armati. (ζωγ. ἰ ρωφ βῆωβ β βῆωβ, ἡῶβζω-
φρῶββωἰφ, ἵ. βρῆωωωωφφφ ρωκῶν. — ζωγ. ρωω β κ ρ. op.
« Ἦε ἔρ ἰ φακῶβὺν ἡρῶα ζαῖνφ κφφῶβῶβ ἡφφβββ ζρῶβ ἰβδωαφκω »
= ἵ. ἦν δὲ καὶ πηγὴ ὕδατος πλουσία ἐκ δεξιῶν αὐτῆς τῆς
ἀδελφῆς. U. Et in dextra avlae parte erat fons aquae vitae. —

բարձունս) : — Յէջ 186 տող 15 Ա. օր = Աս. « զձեզ » : — Յէջ 188 տող 9, Ա. Ե. Զ. օր = Աս. « Այլ ես համարէի զիս հարսն մեծի որդւոյ թագաւորին » . — տող 25. Ա. Ե. Զ. օր = Աս. « յերկրորդ ամի սովոյն յերկրորդունն ամսեան ի քսան և մի (աւուր) ամսոյն » : — Յէջ 189 տող 6, Ա. Զ. օր. = Աս. չունին « մանաւանդ Ասանեթայ » : — Յէջ 103 տող 18 Զ. օր = Աս. « երէց եղբարքն » :

Յէջ 1. տող 11. « Իբրև ութուտասան ամաց » = Աս. Duodevigiinti annos nata : — « Կայս մեծ և գեղեցիկ կերպարանօք յոյժ քան դամեանայն կուսանսն, որ ի վերայ երկրի » = Աս. Pulchrae faciei, cujus facies omnes virgines in illa terra inter filios illius populi superabat. — Յէջ 98, տող 15. « Եւ եղ ի վերայ կրծոց նորա » = Աս. et ad ejus pectus inter duas mammas incipientes posuit :

Արդ՝ այս աչքի զարնոզ երևոյթս, — եթէ յունարէն բնագիրն ստուգիւ խանգարուած չէ, — ուրիշ կերպ չի մեկնուիր, բայց եթէ ըսել, թէ յետ ժամանակաց Հայերէն թարգմանութիւնն անծանօթ մէկու մի ձեռքով ասորոյն հետ բազդատուած և ըստ այնմ ընդարձակուած է տեղ տեղ, որոնք գուցէ խանգարուած ըլլալով՝ անկապ և անհասկանալի դարձեր էին. և թէ այս խնրագրութեանս իրբու ներկայացուցիչք կը հանդիսանան քիչ յառաջ յիշուած օրինակներն, բայց ի մասնաւորի Ա. օրինակն :

Դ. Դիտել կու տանք, որ շատ անգամ այլ ասորին աւելի յունին՝ քան թէ Հայկական թարգմանութեան համաձայն բառեր և բացատրութիւններ կը ներկայացնէ. և այսպիսի պարագայից մէջ՝ երկու բան կարեւր են թագրել. այսինքն թէ, կամ Հայերէնին մէջ այս տեղերս խանգարուած են ընդօրինակողաց ձեռքով, և կամ Հայ թարգմանիչն ինքնին՝ յոյն բնագրի այդ տեղերը լաւ չհասկնալով և կամ իւր լեզուին համաձայն ձևելով՝ ընդարձակած է, որով և յաւելուածի կերպարանք տուած : Ստուգիւ, իբրև նմոյշ այսպիսի վարմանց կարելի է մէջ բերել 164 իջում 9րդ տողի. « Իչ իբրև խաղաղացան անեմեքեան բացատրութիւնն, որ իբրև համեմատ գրուած է յուն. μετὰ δὲ ταῦτα բացատրութեան տեղ, մակարերելով, որ այդ խօսքն քնացողաց մասին է :

Ե. Յունարէնի մէջ կը հանդիպինք երբեմն այնպիսի ընդարձակ տեղեաց, որոնք կը պակսին, թէ՛ ասորի և թէ՛ Հայկական թարգմանութեանց մէջ : Օրինակ ըլլան Դ. գլխում, — յէջ 95 Փարբիկիոսի հրատարակութեան, — Ասանեթայ առանձնախօսութիւնն. — յէջ 96, Ե գլխում, Յովսեփայ խօսակցութիւնն Պետափրեայ հետ՝ ողջախոհու-

թեան մասին, և յէջ 91, Գ. գլխում՝ Ասանեթայ ապարանքի և անոր զարգարանաց հասուածն: Գիտելով, որ ասորի և հայ թարգմանիչք դիտմամբ կամ դիպուածով դուրս թողած չպիտի ըլլան զանոնք, պէտք ենք ըսել ուրեմն, թէ յոյն բնագրի մէջ այս և նման տեղեր յետոյ ուրեմն ներմուծուած են խմբագրողաց ձեռքով. հետեւաբար, այն յոյն բնագիրն՝ որուն վրայէն եղան հայն և ասորին, տարբեր հանգամանքներ ունէր այժմեանէն, որոնք շնորհիւ վերջնոցս՝ մասամբ մի պահպանուած են: Յուսամք, թէ այս և դեռ ուրիշ եղելութիւններ որ մի հաստատուին, ուրիշ հնագոյն յոյն գրչագրաց յայտնուելով:

Չ. Ասորական թարգմանութեան մէջ, — նկատմամբ հայերենին և յոյն բնագրին, — աւելի խանգարումներ տեղի ունեցած են, որոնք խնամքով արդէն նշանակուած են Գ. Ոպպէնհայմի հրատարակութեան մէջ: Իսկ հայկականին մէջ կը նշանակեմք հետեւեալ տեղիքը, որք կը լրացուին յունարենի և ասորերենի միջոցով այսպէս: Օրիւրակի աղագաւ, 153 իլի վերջին և 154 իլի առաջին տողերն ըլլալու են. « Երբ՞ յապարասն Պետափրեայ էր աշտարակ մի մեծ և բարձր յոյժ. և ի վերայ աշտարակին վերնատուն մի՛ յորում էին տասն սենեակք: Առաջին սենեակն էր մեծ և յոյժ վայելչագոյ՛ զարդարեալ գունագոյն քարանքք », և այլն: 161 իլում 3 տողն ուղղագրելու է. « Եւ հայեցեալ Յովսէփ ի վերնատունն՝ ետես զԱսանէք, և ասէ ցՊետափրէս. Ո՞վ է », և այլն: 163 իլի առաջին երկու տողերն ուղղելի են. « Եւ տեսեալ զնա Յովսէփայ յարտատուն՝ գրացաւ յոյժ ի նա, զի և ինքն էր քաղցր, ողորմած և երկիւղած ի Տեսակէ: Յայնժամ ամբարձեալ », և այլն: — 170 իլի 3-5 տողերն ուղղելի են ըստ ասորոյն. « Եւ Ասանէք դուստր Պետափրեայ քրմին, որ երբեմն կոչս անոռանի և քագռահի, և մեծագոյն և երջանկագոյն քան զամենայն մարդիկ, այժմ », և այլն:

Իսկ 164 իլի Բ. պարբերութենէն սկսեալ մինչև ցվերջ պատմութեան, այն է՝ Թ—ԺԹԻԷ գլուխներուն մէջ, որոց յոյն բնագիրը կը պակսի, երթալով հետ զհետէ կ'ածին երկուստեք հային և ասորոյն իրարմէ ունեցած տարբերութիւնքն, այնպէս որ անկարելի է մի առ մի նշանակել անոնց իրարմէ ունեցած յաւելւածներն և յապաւումներն, և ցուցընել թէ որոնք յոյն բնագրի հարազատ ծնունդ են, և որոնք եկամուտ: Սակայն նախընթաց գլխոց բաղդատութենէն դատելով՝ հայն ընդհանրապէս հաւատարիմ մնացած է իւր բնագրին՝ քան ասորին: Երկրորդ՝ հայերենի կարծեցեալ

յաւելուածներն, — ի բաց առեալ զոմանս, զորս¹ կ'ուզեմ նշանակել ի ստորև, — հոծ և համառօտ բացատրութիւնք են, որոց համար կարեմք ըսել, թէ հանգոյն առաջնոց՝ նոյն ըլլալու հաւանականութիւնն ունին, ասորերենէ ունեցած յոյն բնագրի տարբերութեանց հետ. իսկ ասորական յաւելուածոց համար դժուար է նոյնը հետեցնել, վասն զի համեմատութեամբ շատ աւելի ընդարձակ են, մանաւանդ թէ ոմանք² եկամուտ ըլլալու յայտարար նշաններ իսկ կը թուին տալ: Ասանեթայ Օրհնոտրիան խոստովանոտրեան կոչուած մաղթանքն՝ հայերենի մէջ ընդարձակուած է և նոր հանգամանք³ մ'առած. մինչդեռ ասորին ՉԱ տողի մէջ ամփոփած է HYMNUS AC CELEBRATIO ASENETH IN DEUM EXCELSUM խորագրի ներքև:

Ասանեթայ Պատմութեան վերջին մասն, ուր կը նկարագրուին Յակոբայ և բոլոր իւր գերդաստանի գաղութն յԵգիպտոս, անոր ծերութեան գեղեցիկ նկարագրին, Փարաւոնի անդրանիկ որդւոյն՝ իւր հօր և Յովսեփայ դէմ գործած, դաւադրութիւնն, և Գանայ և Գադայ ձեռնառուութեամբ՝ Յովսեփայ և անոր եղբարց դէմ ըրած պատերազմն և պարտութիւնն, թէպէտև իբրև շարունակութիւն առաջին մասին մէջ կը բերուին, սակայն շատ տարակուսական է, որ այդ կերպով գտնուէր նաև յոյն բնագրին, մանաւանդ երբայականին մէջ: Առ այս՝ դիտել կու տանք նախ, որ ոչ Գիթը ծննդոց, և ոչ այլ ժ.Բ. նաւհապետաց Կտակներուն մէջ կարելի է գտնել այսպիսի պատերազմի


1. Օրինակի աղագաւ, յէջ 171-172. « Ահաւասիկ յատակ ասն իմոյ — անսպարհաց » 6 տողերն, — Յէջ 174. « Եւ փութացաւ Ասանեթ » մինչև յէջ 175 « Ծածկեաց զգլուխն իւր » 12 տողերն, և « ահա լուայ բանից քոց — աչաց իմոց » 4 տողերն, — յէջ 176. « Զի նա է տուիչ — անուն քո յաւիտեան » 27 տող ընդարձակ հատուածն, զոր լատինն ևս չունի:

2. Օրինակի աղագաւ, յէջ 46 (ըստ Գ. Ուզպէնհայմի հրատարակութեան) « Dixerunt Nephtali et Aser se in viam suam vertit » 12 տող խօսակցութիւնն, զոր դրած է Նեփթաղիմայ և Ասերայ բերանը. — յէջ 47. « Atque Levi et fratres suos — acceleraverunt » 5 տողերն, և նոյն իջի. « Benjamin autem cum ea incurru fuit » — յէջ 48. « Vivorum illorum fraudulentorum » 23 տող հատուածն, — ուր կու գան ի նանգէս մարտի՝ Յակոբայ միւս որդիքն ևս՝ ընդգէմ Գադայ և Գանայ, հանդերձ իւրաքանչիւրին յատուկ դրուատեօք, — հազիւ թէ տեղ տեղ յարբերութիւններ ցոյց կու տան կայերենի հետ:

3. Այսինքն է, նայի. Թարգմանութեան այլ և այլ օրինակներ՝ 188 իջի. « Մինչ եկն զօրաւորն Աստուծոյ Յովսեփ » բառերով սկսող հատուածին վերայ իբրև խորագիր դրած են կարմրադեղիւ՝ Այլ-փոխ-իւն, զոր կարելի է կամ իբրև օրհներգի տեսակ մի հասկանալ, և կամ իբրև տիպոս Բ. մասին Ասանեթայ վիպասանութեան:

մ'ակնարկութիւնը. մանաւանդ թէ անոնց մէջ առհասարակ, և ի մանաւորի Յովսեփայ կոտակիև մէջ, յէջ 142, ընդհակառակն կ'ըսուի ի դիմաց Յովսեփայ՝ առ եղբարս. «Այլ և զկնի մահուան հօր իմ պիտեցի գոռսա... ետու նոցա զամենայն զոր ինչ և խնդրեցին... Արդիք իմ որդիք նոցա են, և ծառայք իմ՝ ծառայք ողոցա, և անձն իմ անձն ողոցա, և երկիր իմ երկիր ողոցա » : Բ. Մեր թիւ 398 և թիւ 1369 զրչագրաց, այն է Գ. և Ծ. օրինակաց մէջ, Ասանեթայ և Յակոբայ իրարու հետ ունեցած տեսակցութեամբը կ'աւարտի այդ մասն, հետեւալ վերջաբանութեամբ. «Եւ յետ այսորիկ կերան և արքիև և զնացիև Յովսեփի և Ասանեթ ի տռնս իարեանց, փառաշարեշով զԱստուած, որ է օրհնեալ յաշիտեանս յաշիտենից. ամէն » : Իսկ տպագրեալի 190-198 էջերը կը պակսին : Գ. Դիտելու է, որ Ասանեթայ Օրհնաշարեանէն յառաջ, թէ՛ ասորին և թէ՛ հայն վերջ կու տան Յովսեփայ և Ասանեթայ վիպասանութեան, 186 իջի այս խօսքերովս. «Եւ յետ այսորիկ (այսինքն է՝ Հարսանեաց) եմռտ Յովսեփի առ Ասանեթ, և յրացաւ և ծնաւ զՄանասէ ի տռնս Յովսեփայ, ի փառս Աստուծոյ. ամէն » : Մննդոց Գրքէն իսկ զիտենք, թէ երբ Յակոբ մտաւ յԵգիպտոս, արդէն տարիներ անցեր էին Յովսեփայ և Ասանեթայ ամուսնութեան վերայ. և Յովսեփայ յիշեալ երկու որդիքն, զորս խորհրդաբար կ'օրհնէ Յակոբ, զէթ վեցէն եօթն տարեկան ըլլալու էին : Ուրեմն զալով մեր խնդրոյն, երբ կը տեսնենք, որ Ասանեթայ Օրհնաշարեանէն վերջ պատմութեանս երկրորդ մասի անծանօթ հեղինակն՝ դարձեալ կը բերէ Յակոբայ Եգիպտոս մտնելու դէպքն և Փարաւոնի անդրանկի սիրային դաւադրութիւնն և պատերազմը՝ Ասանեթայ ամուսնութեան դէպքին հետ միացնել, չենք կրնար ընդունել ոչ միայն իբրև պատմական, այլ նոյն իսկ իբրև մի և նոյն հեղինակի գործ. այլ դէտք է եզրակացնել, թէ ինչպէս Ասանեթայ բերան դրուած օրհնեքն՝ անոր նախընթացաբար ըրած ապաշխարութեան վերայ յօրինուած է, այսպէս այս վերջին մասն ալ՝ մի ուրիշ հինաւուրց և անկախ գրոյց է, Յովսեփայ և Ասանեթայ ամուսնութեան կամ լաւ ևս Յակոբայ որդւոց և Եգիպտացւոց իրարու հետ ունեցած կռուի մի, որ յետոյ միացած է նախընթաց մասին հետ՝ հակաժամանակազրական և հակասական կերպով : Բայց, թէ ե՞րբ եղած է այդ միացումն, դժուար է որոշել, քանի որ յոյն պակասաւոր է : Սակայն մէկ կողմէն հայկ. Թարգմանութեան մի քանի օրինակներու, միւս կողմէն այլ ասորի և լատին Թարգմանութեանց իրարու համաձայնութիւնն՝ բաւական զօրեղ կռուան մ'է անոր հնութեան :

Երկու խօսք ալ հայերէն թարգմանութեան լեզուի և ժամանակի մասին ուզելով ըսել, նախ դիտել կու տանք, որ այդ լեզուն մաքուր հայերէն է. բայց հայերէն մի, որուն չունինք օրինակ ոչ Ե. դարուն և ոչ իսկ Ը էն և այսր գրուած հայ մատենագրութեան մէջ: Վեցերորդէն մինչև Ե. դարու առաջին կիսուն այդպիսի մի լեզու գործածական էր, երբ դեռ ոչ նոր օրինակ բարդութիւնք բառից և բացատրութեանց սկսած էին Յանեցիներու, Նարեկացիներու, ՔոթեՆաւորի և Գր. Մագիստրոսի ոճով, և ոչ այլ Ե. դարու կորովն և վսեմութիւնն մնացած. այլ Մենդոց գրքի և Աւետարանաց ընտանի և պարզ բարբառն՝ գոգ իմն անչքացած և նուաղած իւր նախկին փայլէն և փառքէն: Լեզուի և ոճոյ լաւագոյն և կատարեալ օրինակներ չեմ կրնար յիշել այս գրուածքիս, բայց եթէ Ադամգրոց և ԹԲՆաՀապետաց Կտակներու թարգմանութիւններն. իսկ որովհետև նախնաբար ցուցինք, թէ անոնք Զ-Է դարուն թարգմանուած են՝ Սիոն կամ Սիմէոն անուամբ մէկու մի ձեռքով, ուրեմն նոյնը կը հետևեցնենք նաև վերջնոյս համար:



ՏԵՍԻԼՔ ԵՆՈՎՔԱՅ ԱՐԴԱՐՈՅ՝

Ե Ի

Դ Ա Ն Ի Ե Լ Ի Է



Այս անվաներ գրուածոց առաջնոյն՝ երկու օրինակներ միայն ծանօթ են մեզ. այսինքն է՝ Էջմիածնի թիւ 924 գրչազիրն և ուրիշ մ՛այլ Երուսաղեմի Ս. Յակոբայ վանաց մատենադարանում: Բայց վերջինս Հ. Գ. Զարբհանալեանի (Հայկ. Բարզմ. Նախնեաց, էջ 189) տուած տեղեկութեամբը միայն յայտնի է, հետևեալ խորագրով. «Ենովթայ արդարոյ տեսիլ». իսկ առաջինն՝ յամին 1894 Էջմիածին հրատարակուող «Արարատ ամսագրի» միջոցաւ ծանօթացաւ: Այս հրատարակութիւնս շատ թերի և վատ կերպով եղած է, որ և ի՛նչ ի՛նչ սրբագրութեամբք նորէն հրատարակուեցաւ Նախնեաց հիւն և նոր քանգարանի մէջ, առ ի չզոյէ ուրիշ օրինակաց: Սորա մասին՝ «Արարատի» մէջ եղած այս դիտողութիւնս, այսինքն թէ այդ երկու գրչազիրներու ներկայացուցածը՝

1. Տե՛իւ Ենովթայ արդարոյ խորագիրն՝ է համաձայն Էջմիածնի ձեռագրին, ըստ որում հրատարակուած է «Արարատ ամսագրի» մէջ, մինչդեռ կարիներանի մայր լուցակին մէջ ունի և յուելուածս՝ «հանդերձ Թեո-թեոմբ հրեշտակն»: իսկ երուսաղեմեան օրինակի մէջ փոքր ինչ տարբերութեամբ՝ խորագրուած է Ենովթայ արդարոյ տեսիլ: Էջմիածնի օրինակի խորագրին վերջին մասն, — եթէ ցուցակի նշանակէն յիշխուած չէ, — քննութեան արժանի եղելութիւն մի ցոյց կու տայ մեզ, զոր յետոյ դեմքի պարզեմք: Կ. Վարդապետ՝ Արարատի 1898, Մարտ ամսաթուոյն մէջ, յէջ 81, կը ծանուցանէ, թէ այդ Տեսիլն արտատպուած է Մեթիթ. Ալբերվանեցոյ նշանաւոր ձեռագրարէն, որ ԺԳ դարուն վերջը գրուած ըլլալու է: Ըստ իս՝ յիշեալ յուելուածն այդ դարէն շատ յառաջ եղած է անտարակցս:

մի և նոյն ըլլալու է, որովհետև նոյնութեամբ կը սկսին, ըստ իմիջ ճշմարիտ է. բայց ըստ իս երուսաղեմեան օրինակն՝ մի ուրիշ քնազրէ՝ ընդօրինակուած լինելով, հետևաբար՝ կարող է ոչ միայն նշանաւոր տարբերութիւններ ունենալ, այլ ընդհանուր պարունակութեամբ և ուղղագրութեամբ իսկ աւելի կատարեալ լինել: Կը ցաւիմ, որ ժամանակին այս օրինակին ընդօրինակութիւն մի չունեցայ՝ էջմիածնի օրինակն ուղղագրելու և լրացնելու համար. յուսամ թէ ուրիշներ կ'ունենան այդ պատեհը:

Դանիելի է. Տեսլեան նոյնպէս երկու օրինակներ՝ միայն ունինք մեր մատենադարանին մէջ. սակայն Տեսլեանս հրատարակչին՝ լամբէթեան ձեռագրի վրայէն եղած ընդօրինակութիւնն միայն ծանօթ եղած է, և այն պատճառաւ իսկ՝ միւսոյն տարբերութիւնքն ի ստորև նշանակուած չեն, որով միոյն թերութիւնք՝ միւսով պիտի ուղղուէին: Բայց Թառնաւորաց կարգին մէջ՝ կրկին տպուած թիւ 935 գրչագիրն, դարձեալ կու գայ լրացնել՝ համեմատել ուղղողաց փափաքը:

Գիտելով որ Էրզ Տեսիլն՝ երկու օրինակաց մէջ իսկ Դանիելի մարգարէութեան Ձրդ տեսիլէն անմիջապէս վերջ գետեղուած է, կրնանք ըսել, թէ կամ այդ գրչագրաց մին՝ հաւանօրէն միւսէն ընդօրինակուած է, և կամ երկուքն և՛ մի և նոյն հնագոյն Աստուածաշնչէն: Յամենայն դէպս՝ լամբէթեան օրինակն՝ աւելի կատարեալ է թիւ 935 օրինակէն, թէ ուղղագրութեամբ և թէ՛ պարունակութեամբ. որովհետև առաջնոյն մէջ կան բառք և բացատրութիւնք, որոնք վերջնոյս մէջ կը պակասին: Բաց աստի, յատուկ անուանք իսկ՝ թիւ

1. Այս ենթադրութեանս իբրև կռուանք են երկու խորագրոցս՝ իրարմէ ունեցած տարբերութիւնքն:

2. Առաջինն է թիւ 1655 Կորագիրն, որ Հ. Ղ. Վ. Ալիշանի ձեռքով ընդօրինակուած է Լոնտոնի Սառաւուրբը թաղի լամբէթեան դրատան ընդօրինակութեանն մի, որ թէ և անթուական, բայց հաւանօրէն վերոյիշեալ դարում գրուած է: Հ. Գր. Գալէօքեարեան՝ ժի. դարուն գրուած կը համարի զայս, հաստատուած գրչագրիս մէջ Սաղմոսաց նախադրութեան ընդօրինակողի մէկ յայտարարութեան վերայ, որ կ'ըսէ. թէ առ թերութեան Սաղմոսաց՝ ինքն Հաղատաց վանքը զնաց առ Սարկաւազ վարդապետն, որպէս զի սրբագրել տայ շքանոնք. իսկ Սարկաւազ կ'պրէր այդ դարում, ուրեմն: Սակայն, ըստ իս, նախադրութեան հեղինակն պէտք չէ շփոթել Աստուածաշնչի ընդօրինակողին հետ, և ոչ այլ անոր ձեռքով գրուած յառաակարանը՝ ասոր վերագրել, որ հաւանօրէն ժի՛ դարում նազուհէ մի այդ զբաղակիրն ընդօրինակած ժամանակ՝ յիշեալ յիշատակարանն ևս արտագրեց անկէ: Իսկ միւսն է Ս. Ղազարու մատենադարանի թիւ 938-այն է՝ Ը. Աստուածաշնչին ընդօրինակը, գրեալ յամի Տեսնո՛ւ 1344:

935 օրինակին մէջ տարբեր ձևով կը գրուին. այս աչքի զարնող երևոյթս իսկ կարծել կու տայ, թէ լամբէթեան օրինակն՝ իւր տեսակին մէջ միակն ըլլալու է. իսկ մեր մատենադարանի թիւ 935 օրինակն և Վիեննայի թիւ 39 և 14 օրինակներն, զորս շ. Գ. Գալէմբեարեան B և C կոչած է, անտարակոյս մի և նոյն խմբին կը վերաբերին: Այս ակներև է շ. Գալէմբեարեանի յիշեալ հրատարակութեան մէջ ի ստորև լամբէթեան օրինակին դրուած տարբերութիւններէն, որոնք, — ի բաց առեալ մի քանիսը, — ընդհանրապէս թիւ 935 գրչագրին լաւ կը համաձայնին: Ուստի, եթէ Վիեննայի շարք մատենադարանի թիւ 39 օրինակն ստուգիւ յամի Տեառն 1337 գրուած է ի Բարձրբերդ, — ինչպէս դիտել կու տայ շ. Գալէմբեարեան, — այն ժամանակ թիւ 945 գրչագրէն՝ աւելի հին և հետևաբար անոր իբրև բնագիր կրնայ լինել, մանաւանդ եթէ վերջնոյս յիշատակարանին մէջ ստացողի անուամբ նշանակուած 1341 տարեթիւն՝ նոյն համարուի գրչութեան տարեթուոյն հետ. իսկ եթէ նոյն չէ, հակառակը պէտք է եզրակացնել:

Գանիելի է. Տեսլեան հայկական թարգմանութիւնն, զոր հրատարակեց նախ շ. Գր. Գալէմբեարեան¹, բաղդատութեամբ վերոյիշեալ երեք ձեռագրաց և գերմաներէն թարգմանութեամբ, ցարդ հրատարակուած² Գանիելի յունարէն Յայտնոսթենեն (*Ἀποκάλυψις τοῦ προφήτου Δανιήλ*, եւն) բոլորովին կը տարբերի իւր յօրինուածութեամբ. տեղ տեղ հազիւ կը հանդիպինք երկուստեք առնչութեանց:

Ենովքայ և Գանիելի Տեսիլներու ներկայացուցիչ գրչագիր օրինակներն և անոնց վրայէն եղած հրատարակութիւններն յիշելէն վերջ, գտնք այժմ քննել անոնց պարունակութիւնը, ծագումը, բարգաւաճիւն և հայկական խմբագրութեան վերաբերեալ խնդիրները: Բայց նախ ըսենք, թէ ի՞նչ պատճառաւ իրարմէ անջատ այս երկու անվաւեր գրուածքը՝ իրարու հետ զուգելով՝ ուզեցինք ուսումնասի-

1. S. Die siebente Vision Daniels, arm. Text mit deutscher Uebersetzung, Wien 1892.

2. Tischendorf, Apocalypses apocryphae, Lipsiae, 1866. Այս հրատարակութիւնս՝ կրտսմանեայ է և եղած է Պարիսու թիւ 947 և 2180 և Վէնետոյ Ս. Մարկոսի գրատան թիւ 125 ձեռագրաց վրայէն. իսկ կտարեալն է յամին 1895 ի Լայպցիգ՝ Կրտսերմանի ձեռքով եղած հրատարակութիւնն (տես Analecta zur Septuaginta, Hexapla und Patristik) խորազրուած զորոնք մէջ: Սլաւերէն լեզուով եղած հրատարակութիւնքն (տես A. Harnack, Geschichte der Alchristlichen Litteratur, Leipzig, 1893, II Häfte. s. 916) ինչ անմասնելի չափին, այն լեզուաց տեղեակ չլինելու պատճառաւ:

րել. վասն զի մեր կարծիքով դոքա ոչ միայն սերտ աղերս ունին իրարու հետ, այլ նոյն իսկ զրէթէ մի և նոյն ժամանակամիջոցին և մի և նոյն անձի ձեռքով խմբագրուած կ'երևին, հիմն ունելով հնագոյնը՝ և կամ երկուքին հասարակ մի այլ աղբիւր:

ԵՆՈՎՔՍՑ ՅԵՍԻՒՆ՝ այն ձևով, զոր կը ներկայացնէ մեզ Հայերէն խմբագրութիւնն, չի գտնուիր ոչ Գիրք Ենովքայ աշխարհածանօթ անվաւերականին մէջ, որ ամբողջապէս հասած է մեզ՝ եթովպական թարգմանութեամբ, և Դիմանի ձեռքով հրատարակուած՝ ի Լայպցիզ, յամին 1851 և 1853, գերմաներենի փոխուած, հմուտ ներածութեամբ և ծանօթութիւններով: Առ Փարրիկիոսի՝ մէջ կը բերուի Գասսանդեայ ձեռքով գրուած Պիրեսկեայ կենսագրութեան մէկ տեղին, ուր Լռքինցի վեղարաւորի կողմէն ըսուած է, թէ իւր եօթնամեայ առաքելութեան ժամանակ յՄգրիպոսս՝ ինքն հանդիպած էր եթովպերէն գրուած Ենովքայ Յայտնութեան կամ Տեալեան մի, յորում կը ծանուցուին այն ամենայն, որոնք պիտի կատարուին վերջին դարերում: Այս ձեռագիրս՝ շատ տարիներէ և երկայն աշխատութենէ վերջ՝ յաղողեցաւ Փարրիկիոս գտնել Պարիսու ազգային գրատան մէջ, և յայտնեց, թէ Միքայել Բահայիայ ձեռօք գրուած է այն: Փարրիկիոս՝ այս գրուածքիս սկիզբը և վերջը միայն մէջ բերած է իր երկասիրութեան մէջ, որոնք սակայն խնդրոյ նիւթ եղող մեր Տեսլեան հետ բնաւ նմանութիւն չունին. հետևաբար, Հայերէն Ենովքայ Տեսլին կը մնայ դեռ իբրև ինքնուրոյն մի գործ, և ուրիշ անվաւեր գրուածոց հետ ունեցած ընդարձակ աղերսներովը մտադրութեան արժանի:

Յայսմ՝ կեղծ Ենովքն՝ Լիբանան լերան վերայ կեցած՝ կը դիտէ արևմտեան ծովը, ուստի կ'եղնէ բարձրաթռիչ սրծիւ մի, որ ունի ութ թևեր և երեք զլուխ: Երկուն վերայ սաւառնելով՝ կը նայի դէպ ի հարաւ. իսկ հարաւային կողմէն յուզուած փրփրադէզ ալիքներ կը կուտակէ, որոնք երիվարի ձայնարկութեամբ կը դիմեն դէպ ի հիւսիս—արևելք, և կը բաղխեն արծուոյն թևերը: Այս պահուս կ'երևի իննայեայ, իննգլխեան վիշապ մի, որուն ոտքերն առիւծու կը նմանին, և ինքն ընձու պէս վաղելով հողոց և ալեաց միջէն, կը հասնի արծուոյն, և կ'ուզէ կլանել զայն: Կը ճչէ արծիւն դէպ առ բարձրեալն, բայց նորա ձայնը լսելի չըլլար. կը փախչի դէպ ի հիւսիսային սահմանները, բայց հանգիստ չի գտներ: Իսկ վիշապն՝ կը կլանէ զգզեր և ժողովուրդներ, և կրակի նման ամենայն ինչ կ'այրէ կը մրկէ. ամենայն ինչ կ'ոչնչանայ անոր փորին մէջ, և 96

տարի անընդհատ կը տիրէ երկրիս վերայ: Յետ որոյ նոյն տեղը կը վերադառնայ արծիւն՝ բուռն զօրութեամբ կռուելու հարաշատ յիւ վիշապին դէմ, որուն գլուխն կանգնած է մոխրակուտի վերայ. իսկ արծիւն՝ ճարմակ ձիերէ լծուած կառքի վրայ կեցած կը հասնի վիշապին, սաստկապէս կը վիրաւորէ զայն, վասն զի չէ նա այնպէս՝ ինչպէս յառաջն: Ար ցրուէ վիշապին գլուխը՝ առ ամենայն ազգս, և ճերմակ ձիանքն՝ իջնելով մոխրակուտին վերայ, կը հոսեն զայն ընդ օդս, որ ամպի նման դէպ յերկինս կը բարձրանայ. իսկ երկրիս վերայ կը տիրեն մէգք և աղջամուղջ խաւարի: Այց մարդիկ նստած են իրենց աթոռոց վերայ, որոց երեքն՝ սև են և զազրատեսիլ, և երկուքն՝ սպիտակ և գեղեցիկ. վեցերորդն նեղուած է, և կը սգայ իւր որդւոց և կանանց վերայ: Ամէնքն առհասարակ ահաբեկեալ մոխրակուտին վերայ կեցող վիշապէն՝ կը գոչեն, թէ ահա հուր կ'ելնէ անկէ և կ'այրէ զերկիր:

Ահաւասիկ ննուվբայ տեսլեան այլաբանական մասն, որ իրրև հիմունք ծառայած է ամբողջին, որ ընդ հուպ անոր կը յաջորդէ պատմական արարուածներով: Քայց թէ այսպիսի մի այլաբանական ձև արդեօք ուղղակի հնութեան նշան համարելի է, թէ ընդհակառակն նորակազմ գրութիւնը՝ հին երևցնելու համար հնարուած, ահա յայսմ կը կայանայ կնիռն: Հարցմանս առաջին կէտը կարելի էր ճշմարիտ համարել, եթէ այդ հատուածին ինչպէս սկիզբն՝ այսպէս և վերջն ի հանդէս չգայր մեզ երկոտանի հրեշտակն, — զոր ես կ'ախորժեմ բոլորովին մարդ անուանել, — և իւր մեկնաբանութիւններով միջին դարու պատմական անցքեր չի ներկայացնէր մեզ: Այո՛, այդ հրեշտակական դիմակի ներքև ծածկուած կեղծ հեղինակն՝ եթէ չժանուցանէր մեզ, թէ արծիւն՝ է հոովմէայունական թագաւորութիւնն, և հարաւային հողմով ներշնչուած վիշապն՝ արաբական իշխանապետութիւնն, այլովք հանդերձ, սակայն և այնպէս հեշտ էր այդպէս հասկանալ: Քայց նա՛ հինը նորին հետ խառնելով, ուզած է է — Թու դարու բիւզանդական կայսրութեան և Արաբացւոց մէջ կատարուած մեծ պայքարն և փոփոխակի յաղթութիւնքն և պարտութիւնները՝ իրրև հինաւուրց զուշակութիւններ ներկայացնել, իր ժամանակակիցները սթափեցնելու նպատակաւ:

Չարմանալի զուգադիպութեամբ նոյն դերն խաղացուած է նաև Դանիելի Էրզ Տեսլեան մէջ, միայն թէ այստեղ ընդհակառակն փոխանակ Արաբացւոց՝ Պարսից հետ ունեցած քաղաքական յարաբերութիւնքն, առտնին պատահաբար և պատմական անցքերն կը բերուին ի հանդէս, —

միշտ գուշակութեանց մութ ամպերու ներքև, — թէ և ի սկզբան այն պետութեան պատկանող աշխարհաց և քաղաքաց հինաւորց արարուածները կը յիշատակէ, բայց գլխաւոր նիւթ և նպատակ դրած է Բիւզանդիոնը, մեծն Կոստանդիանոսէն սկսեալ՝ մինչև Թրք դար հանդիպած պատահարներով: Թէպէտ և առաջինն՝ Ենովքայ բերանը դրուած է, և վերջինս՝ Դանիելի, սակայն, ըստ իս, մի և նոյն անժանօթ հեղինակի մտաց և գրչի ծնունդ համարելի են երկաքանչիւրն ևս. վասն զի մի և նոյն ոգևով ներշնչուած են, և մի և նոյն ոճոյ արտայայտութիւնք և նմանութիւնք ակնբեր են երկուստեք:

Դանիելի տեսիլն, — դէթ ըստ կարգի ժամանակագրութեան, — յառաջ գրուած է, իսկ Ենովքայն՝ քիչ յետոյ, և իբրև աղիւս ի մէջ որմոյ՝ այնպէս շարայարեալ է անոր հետ, մերթ յետախաղաց և մերթ գուգահաւասար ընթանալով: Ասածս ապացուցանելու համար, բաւական է դիտել, որ Դանիելի Տեսլեան մէջ՝ հռովմէական պատմութիւնն՝ անոր նորոգողին, այն է ամենայաղթ Կոստանդիանոսի ակնարկութեամբ մի կը սկսի, հանդերձ խաչի գիւտով. մինչդեռ Ենովքայ Տեսլեան մէջ, — յէջ 380, — առաջին անգամ՝ ակնարկուած հռովմէական արծիւն, կամ լաւ ևս կայսրն՝ է Յուստինիանոս Բ. որ իւր քաջարի և քաղաքագէտ կնոջ Թէոդորայի ձեռքով կը խիղախէ Բուլղարաց, Գոթաց և Արաբացւոց դէմ՝ իր արքայութիւնը տարածելու Ափրիկէի և Իտալիոյ վերայ և ըլլալու իբր միահեծան տէր կորուսած սահմաններուն: Նոյն իջում կ'ակնարկուի Արաբացւոց նաւական արշաւանքն՝ բիւզանդական ծովեզերեայ սահմաններուն վերայ՝ այսպէս. « Յետ հարիշոյ և ոչք Յոթելենի՝ յարիցէ ազգն յետին հարաւոյ, որդիքն Իամայելի, բնակեալքն ի ծովեզերին Արաբիայ... և մարտիցեն առ ափն ծովոռ, լուծանել զիշխանութիւն Հռովմայեցւոց « (իմս՝ Հոռոմոց): Այս տեղ. յիշուած 108րդ Յոթելեանն՝ ինձ յայանի չէ՝ թէ ինչ թուականի համաձայն հաշուած է. սակայն հետեւեալ տողերն՝ քողարկուած կերպով կը թուին հաւանօրէն ցոյց տալ մեզ կամ յամի Տեառն 648 Մուսուլայ ծովամարտը, յորում Կիպրոս անկաւ Արաբացւոց ձեռք, և փոխարքայն Գրիգոր սպանուեցաւ. կամ յամին 651 Արաբացւոց՝ Հռոդոսի տիրելն, և կամ 655են Կիկիոյ ծովամարտը. յորում Մուսուլի յաղթեց Կոստանդին կայսեր:

1. Այս տեղ յիշուածն՝ եթէ աշխարհի արարութեան թուականն է, կը հետեւի թէ հեղինակին ծանօթ էր Գիրքն Յօբիլէնից, կամ Փղք Արաբածոց կոչուած զբութիւնն:

Յիշեալ իջի վերջընթեր տողերում՝ վիշապին համար կ'ըսուի, թէ « նա է առաջին իշխանն՝ ի վերայ ազգին Իսմայելի », այսինքն է՝ Մահմէտ. իսկ վիշապի ինն աչաց համար ըսելն. « Յարիցեն ինն թագաւորք յետ նորա և կալցեն զերկիր », անտարակոյս արտաբան այն ինն ամիրաները կը նշանակէ, որոց վերջինն է Մրուան Ա. որոյ ամիրապետութիւնն եղաւ 683-704^է: Կեղծեալ հրեշտակն՝ իւր տեսեան նորութիւնը շմատնելու համար՝ խոյս կու տայ ժամանակագրական կարգաւ եղելութիւնքն յիշելէ. ուստի Մուսուհայ ձեռքով Արարացուոց ծովային աշխարհակալութիւնը յիշատակելէն վերջ՝ դարձեալ անոնց առաջին իշխանը (Մահմէտ) մէջ կը բերէ. սակայն պատմութեան քննադատութիւնն անաչառ կերպով հետեւելով անոր քայլերուն, այն դիմակն ևս վար կ'առնու, դիտելով որ Մահմէտի ժամանակ, այն է 622-632, Արարացիք տակաւին ծովային զօրութիւն չունէին, թող թէ միջերկրականին տիրելու չափ:

Յէջ 381 հռովմէական Գարծիւն՝ հարաւային վիշապէն դարձեալ յաղթուած, հիւսիսային երկիրները կը փախչի, և անոնց թագաւորին Բերքեայ հետ խնամութեան դաշն կը կռէ. բայց իւր իշխանութիւնն կ'անցնի ժառային ձեռքը: Արդ, այս տեղիս՝ կ'ակնարկէ մեզ յամին 695 Յուստինիանոս ԲԻ՝ հակակայսր Աւստրիոսէն յաղթուիլն, գահէն ինկնալն, Բուլղարաց և Սև ծովու հիւսիսային երկրքը բնակող Խազրաց քով ապաւինիլն, և Աւստրիոս Պատրըլի՝ դաւաճանութեամբ իւր տիրոջ գահը կորզելն: Յաջորդ տողերն աւելի կը լուսաւորեն այս պատմական ակնարկութիւնս, յասելն. « Ապա եղև դարձ արժւոյն ի հիւսիսոյ՝ գալ ունկ զնոյն տեղի սաստիկ զօրոտքեամբ... որք յարեան ի վերայ նորա՝ սաստակեցիկն ». այսինքն են՝ յամին 705 կայսեր վերադարձն ի Կ. Պոլիս և իւր թշնամեաց դէմ գործած ահաւոր վրէժխնդրութիւնքն, օգնականութեամբ Բուլղարաց և Սլաւաց, զոր Կեղրենոս և Միք. Գլիկաս իսկ կը յիշեն: Մի և նոյն իջի յաջորդ տեղին. « Եւ արծուին կայր ի վերայ ճարմակ ձիոյ և հասանէր առ վիշապն. եկեցէ ևս ի վերայ իշխանիկն հարառոյ՝ սաստիկ զօրոտքեամբ հիւսիսային ազգաւ և ամենայն ժողովրդովք մնացորդաց, և հարցէ զնա անհնարիկ հարոռածովք, և ոչ գտցի զօրոտքիւն ի վիշապն իրրև զառաջիկն, այլ լքեալ պարտեցցի յերեսաց քազառորիկն հիւսիսոյ », կը թուին, — ըստ ոմանց, — կրկնել Յուստինիանոսի, Աւստրիոսի և Տիբերիոսի արարուածներն յամին 695-705: Սակայն այս մութ կէտս աւելի կը պարզուի յաջորդով, այսինքն է՝ 382 իջի Բ. պարբերութեամբ, ուր ակնարկելով Մահմէտի

յաջորդ երեք կուսակցութեան յարող երեք տանուտեարքը, — այսինքն են Ամրուն, Մուսախն և Ալին, — կու տայ նոցա իւրաքանչիւրին 30 տարի, « որ լինի 90 ամ, և այլ ևս 6 ամ (96) իշխանութեան վիշապին », այսինքն է արաբական իշխանութեան. յետ որոյ վերայ կը բերուի այսպէս. « Զի յորժամ սպառեցցեն Հոռովմայեցիք զազգն հարաւոյ, զառաջին պատերազմն հարցնե ի ժողոս. և հողմ ի Տեասնե ընկղմեցե զնա »: Արդ՝ աւելցնելով այս 96 տարիներս Մահմէտի թուականութեան 622 ամաց վերայ, կ'ունենանք ստուգիւ 718 տարեթիւն, այն է Սիւլէյմանայ նաւատորմոյին խորտակման, յաւուրս Աւոնի Իսաւրացւոյ:

Յէջ 384 յիշուած Տիրերն՝ է մականունանեալն Ապսիմարոս, որ յամին 695—698 Աւոնդիոսի Հետ յափշտակեց Յուստինիանոս Բի զահլը. իսկ Հրձիքն՝ է Թէոդոս Գ. որ յամին 701 յաջորդեց Յուստինիանու Բողոնատեայ: Հինգերորդ տանուտիրութեամբ կ'ակնարկուին հաւանորէն հերակիեան հարստութեան, իսկ վեցերորդին՝ Խաաքեան թագաւորաց ժամանակներն: Նոյն իջի 19րդ տողին մէջ յիշուած Հիւսիսային իշխանն՝ մեզ յայտնի չէ: Այս տեղիս ու մանք ուզեցին դարձեալ Յուստինիանոսի վերայ առնուլ. սակայն անոր հարաւայնոց դէմ ըրած յաղթութիւնն և մարը Հետ գերի տարած մանուկն, որուն համար կ'ըսուի. « Մնեալ ի քաղաքին Բիշաւայ¹ և անուն նորա Ոյադ », Յուստինիանոսի չեն յարմարիր. վասն զի նա իւր վերադառնալէն վերջ՝ Արարացւոց չի յաղթեց, այլ մանաւանդ յամին 709 Տիրանա քաղաքն ևս անձնատուր եղաւ անոնց: Այսպէս նաև յաջորդ իջում նկարագրուած ապստամբին անորէնութիւններն և անոր ժամանակ հանդիպած երկնասաստ պատուհասներն՝ կը թուին ակնարկել մեզ զԱւոն Իսաւրացին, զոր հաւանորէն Թէոդոս Գ գերելով՝ ած ի Կ. Պոլիս, և կամ լաւ ևս նորա որդւոյն Կոստանդին Կոպրոնիմոսի արարուածները, զոր բիւզանդական պատմիչք Կարապետ Գերաբրիստոսի անուանած են: Այս անկէց իսկ յայտնի է, զի « թագաւոր ի նոռաստ ազգե » կ'անուանէ զնա, մինչդեռ Յուստինիանոս Հերակիեան տանէն էր և յոյն:

Յիրաւի, Ագադրոն փիլիսոփայի անուամբ մեզ հասած հայերէն Տեսիլն² ըստ բաւականին կը պարզէ այս մութ կէտերս և վերըս.

1. Այս և յաջորդ անունն՝ Ուժդ՝ ուրիշ երեք յիշած չեն բիւզանդական պատմաբարք. ուստի կամ զըշաբարաց ձեռքով աղաւաղուած համարելի են, և կամ յուսականէն փոխ առեալ սեմական ձեւեր:

2. Այս Տեսիլն՝ ըստ մասին բանաբաղութիւն կ'երեւի Հիպոպոլիտեայ Բոստրաց.

տին կը հաստատէ մեր կարծիքը: Սա, յէջ 150—151, յետ յիշելոյ Թէոդոս Գի Արաբացւոց դէմ տարած նշանաւոր յաղթութիւնը և գերեվարութիւնը, կը թուէ անկէց վերջ կատարուած դէպքերը, — համաձայն Ենովբայ Տեսլեան, — այսպէս. « Իսկ թագաւորն Թէոդոս մտանէ յԱրաբիա՝ բազում զաւրաւք իւրովք, և սրով և հրով՝ այրէ գերկիր նոցա, և գերի գժանտն զորդին կորստեան՝ մարբն իռք հանդերձ. բերէ ի Բիւզանդիոն, որ է Կոստանդնուպոլիս: Եւ լինի երկիրն Մակեդոնիա սասանու մն և խառնակումն մեծ: Իսկ որդին կորստեան՝ զաւրականն սատանայի զարգանայ հասակաւ. և առհասարակ մարդասիրութիւն ցուցանէ, և յայտնի ի մեծազգի թագաւորական տոհմէ. գամրագեղ, խոյաքիթ, կորովի, մեծաձայն, և անուն նորա գեղեցիկ՝ Կոստաս (Կոստանդին)... Եւ Կոստաս նստի յաթոռ թագաւորութեան Հոռոմոց ի տասն գաւազան, յորոց մին՝ Նեոին լինի. իսկ ի սոցանէ գեւաթն հնազանդեցուցանէ, և գերիսն սպանանէ ձեռամբ իւրով, և ինքն թագաւորէ զաւուրս ՄՀԷ (277)»: Կոստասը՝ ոմանք Աւոն Խաւարացւոյ մկրտութեան անուն եղած համարելով, այս տեղիս ևս անոր վերայ կ'աւանդեն. սակայն ասոր հակառակ կ'ենէ « Եւ յայտնի ի մեծազգի թագաւորական տոհմէ » բացատրութիւնն, զիտելով, որ Աւոն սոսկական վիճակէ յառաջ եկած էր: Յէջ 150, Ագադրոն կուտայ մեզ Նեոի մօր նկարագիրն ևս, ըսելով. « Եւ ի սորա (այսինքն է Թէոդոս Գի) ժամանակս յայտնի որդին կորստեան՝ արբանեակն սատանայի Նեոնն, ուստի կամ յոր ժողովրդենէ Պոնտոսի...: Լինի կին մի յազգէն Դանայ... և նշան կնոջն այսպէս. լինի գեղեցիկ, դարաճակատ, բարձրաքիթ: Սա կացցէ յարբանեակութիւն վաճառականի յունի, և նա մարտիցէ ապականել զկինն, և ոչ ունի զօրութիւն առն, զի ներքինի է. այլ խառնակին ընդ իրեարս, և շնութեամբ ոճիրս գործեն. և առնու կինն յղութիւն ի սերմանէ սատանայի, և յայնժամ փախստական լինի յերկիրն Արաբիա, և անդ ցնկնի կինն այն պիղծ և զազրալի՝ գնեունն, զորդին սատանայի »:

Արդ՝ Ագադրոնի Տեսլեան այս տեղիս ոչ միայն սերտ աղերս ունի Ենովբայ Տեսլեան հետ, այլ և կը ներկայացնէ մեզ զԿոստանդին Կոպրոնիմոս իբրև նեոն, զոր գերի բերուած կը համարի իւր մօր հետ Արաբիայէն ի Բիւզանդիոն: Ոմանք՝ ընդհակառակն՝ Աւոն

այ ընծայուած տեսլեան, ըստ հայկական թարգմանութեան, զոր յետոյ պիտի շանայ համեմատութեամբ ակներև ընել:

1. Ըստ Ագադրոնի՝ Հրձիք անուանեալն է Թէոդոս Գ, զոր վաղանորայ ուրումն յաշորդել կուտայ:

Իսաւրացւոյն՝ վերայ կը յարմարցնեն զայս, ծանուցանելով միանգամայն անոր կախարդ լինելը. սակայն Ագաղրոն՝ նորա կնոջ Մարիամայ ազգաբանութիւնն ևս կ'ընէ և ապօրինի խառնակութիւնը, — անշուշտ անելով ի ժողովրդական զրուցաց, — ուսկից կը ծնանի Կոստանդին. կէտ մի, որ այլուր յիշուած չէ որոշակի՞: Մեթողիտսի հայ. խմբագրութիւնն իսկ, — ինչպէս պիտի տեսնենք, — ուրիշ պարագայիւք կը հաստատէ այս բաներս:

Ենովքայ Տեսլեան մէջ, յէջ 385, Հրձիք թագաւորի մահուանէ 51 տարի վերջ կը զրուի նեռի թագաւորութիւնը, և ըստ Ագաղրոնի Հըրձիքն՝ է նա ինքն Թէոդոս Գ, վասն զի անոր անմիջապէս կը յաջորդէ Տիբեր Բ. իսկ սրովհետեւ Թէոդոսի թագաւորութիւնն եղաւ 701—704, ուրեմն ասկէց մինչև Կոստանդինի թագաւորութեան շորրորդ տարին, այն է 741—744, երբ սկսաւ իւր ամպարչտութիւնքն ընդդէմ Եկեղեցւոյ, կ'ունենանք մօտ 51 տարիներ: Հետևաբար, ուրեմն Ագաղրոնով բոլորովին կը պարզուի Ենովքայ Տեսլեան ոչ միայն Հրձիք թագաւորին, Ումդի և Նեռին, այլ նոյն իսկ Տեսլեանս գրութեան ժամանակն՝ մերձաւորապէս. և որովհետեւ Կոստանդին Կոպրոնիմոսի թագաւորութիւնն եղաւ ի միջոցի 741—775 ամաց, ուրեմն այս տեղիս իսկ Ընդարու վերջին քառորդէն յառաջ գրուած չէ, այլ գուցէ թէ անկէց շատ ետք:

Ենովքայ Տեսլեան 385 իջում՝ շարունակելով հեղինակն բիւզանդական կայսրութեան թելը, կ'ըսէ. «Յետ այսորիկ ապա յարիցէ թագաւոր բարեպաշտ ի Հոովմ, և ժողովեցին առ նա ամենայն մնացորդք ուխտին Աստուծոյ. և յարուցեալ խաղասցէ և եկեսցէ ի վերայ ապստամբին և զօրաց նորա, և խնդրեսցէ Տէր ինքնին վրէժ ի նմանէ »: Այս տեղ յիշուած Հոովմն՝ անտարակոյս նոյն է, այն է՝ Կ. Պոլիս, իսկ բարեպաշտ թագաւորն՝ է հաւանորէն կամ Կոստ.

1. Ըստ Կ. Շէնկի (տես Byzant. Zeitschrift. 1896. s. 296 ff.) Լեոն ծնած է ի Գերմանիկա, և ազգաւ ասորի. անոր համար և Իսաւրեանք կը կոչուին յարգեաց նաև ասորական կայսերք:

2. Իսկ անորոշակի կերպով Հիպոդոլիտ, Մեթողիտս և այլք իսկ աւանդած են արդէն, թէ նեռնն պիտի յղանայ ի սպտանայէ և ծնանի ի Քորագին, Դանայ ցեղին վերաբերող կուսէ մի. բայց թէ ո՞վ էր այդ պիղծ կոյսն և երբ, լուծ են: Հետևաբար, Ագաղրոն՝ կամ Հիպոդոլիտոսէն զուրս ուրիշ աղբիւր մ'ևս ունեցեր է, և կամ մերձաւոր գտնով ժամանակաւ Կոստանդինի՝ Ենովքայ տեսլեան յիշեալ տեղին անոր ուղղակի պատշահեցուցեր է, հետեւելով ժամանակակից բերանացի զրուցաց: Այս կէտս յետոյ պիտի պարզենք:

Կոպրոնիմոսի որդին Լեւոն Գ, որ թագաւորեց յամին 775-780, և Գերմանիկեայ քով խորտակեց Արարացւոց զօրութիւնը, և կամ լաւ ևս Կոստանդին ԶԷ, որ իւր մօր Իրենեի հետ թագաւորելով, յամին 787 գումարեց ի Նիկիա ազգային ընդհանուր Սինոդը, չաստեց պատկերաց յարգութիւնն և ուղղափառութիւն. դարձոյց յետ յաքսորանաց՝ Ուխտի մանկունքը, այլովք հանդերձ: Ահաւասիկ ենովքայ Տեսլեան պատմական բովանդակութիւնն:

ԳԱՆԻՆԼԻ Է. ՏԵՍԻԼՆ. — Տեսնենք այսուհետև Դանիելի Է. Տեսլեան պատմական նշանակութիւնն և սորայս հետ ունեցած աղերսը:

Յէջ 239, Գ. պարբերութեան մէջ կ'ըսուի Հոովմայ համար, թէ « Երեքփոռոցեան եղիցի »: Անտարակոյս՝ այս անսովոր բացատրութեամբ աւելի Եռասպետոսեան ժամանակն՝ քան թէ նիւթապէս Հոովմ քաղաքի բաժանումը կ'ականարկուի: Այս բանս նոյն իջի Ա. պարբերութեան մէջ Նիկոմիդիոյ մասին ըրած այս բացատրութենէս իսկ, այսինքն է. « Կերար զմարմինս սրբոց... և ապականեցլիր արեամբ արդարոց », յայտնի կը տեսնուի, որ կը յիշեցնէ նախ Դիոկղետիանոսի և ապա Մաքսիմիանոսի ձեռքով այն տեղ քրիստոնէից դէմ յարուցուած հալածանքն և անթիւ մահունքը¹, և յետոյ այս կայսերանիստ քաղաքիս անկումն և աղէտները:

Վերջին պարբերութեան մէջ՝ Եօթնարորորն՝ ուր կ'երթայ այրն Բիւզացի և կը « հաստատէ զհիմունս », է քաղաքն Բիւզանդիոն: Այս մասին Ազադորն խիստ որոշ է. իսկ « այրն նշանագործ », որ կը ծնանի « ի կնոջէ բարենշանէ », այսինքն է ի Հեղինեայ, է նա ինքն Մեծն Կոստանդիանոս, որ կը նորոգէ զնա վերստին, կոչելով Կոստանդնուպոլիս: Ասոր յայտնի ապացոյց են անմիջապէս յաջորդ տղերն, ուր կ'ականարկուին Ս. Խաչափայտին և Բևեռաց գիւտն, ի սանձս ձիոյն անոնցմէ միոյն դրուիլն, անով թշնամեաց դէմ ըրած յաղթութիւններն՝ այլովք հանդերձ, զորս կը յիշեն յայտնապէս նաև Սոկրատ և Սոզոմէն պատմիչք:

Յէջ 240, երրորդ գաւազանն, որուն համար կ'ըսուի, թէ « Կարգայցէ զպատուիրանս և ոչ գիտիցէ զԱստուած, և շօշափեսցէ զգիրս սուրբս կուրացեալ մտօք », է կայսրն Կոստանդիոս արիոսեան, որուն համար կ'ըսէ Ամմիանոս պատմագիրն, թէ « Շփոթեաց զկրօնս քրիստոնէից. փոխանակ մեծարանօք և ըստ արժանաւորութեանն առաջ-

1. Տես Եւսեբիոսի Պատմ. Եկեղ. Դպր. Ը. Գլ. Ե, Զ, և այլն, ուր բաց յայլոց կը յիշատակուի Նիկիոյ մօտ աւանի մի ամբողջ բնակչաց նահատակութիւնն:

նորդելոյ կրօնիցն այնոցիկ, արկ զանձն քննասիրութեամբ ի խոյզ և ի խնդիր նորա, և յարոյց բաժանմունս բազում... յորս ինքն իրաւունտիր աստուածեղէն պաշտամանն և վարդապետութեան կամէր շինել » : Այլն ինաստասեր, որուն համար կ'ըսուի անմիջապէս. « Եկեացք ի քեզ եօթնարուորդ Բարելուն, և պատկեր կանգնեացք ի քեզ », և Կոստանդինոսի յաջորդն՝ Յուլիանոս Աւրացողն, որուն համար կը գրեն բիւզանդական պատմագիրք, թէ. « Չիւր իսկ բուրաստանն ի Կոստանդնուպոլիս յամենադից մեհեան փոխեաց, պատկերս խիտ առ խիտ կանգնեալ, և ի պաղատանն ունէր տեղի պաշտաման առանձին աստուածութեան արեգականն՝ որում զոհէր յելսն և ի մուսս. որպէս ի գիշերի՝ գիշերական աստուածոցն » :

Նոյն իջում. « Եւ զկնի այսորիկ յարիցեն եղջիռք քարձոռք և գառագանք մեծամեծք », և այլն, բացատրութեամբ կ'ակնարկուին Յովիանոսէն սկսեալ մինչև Վաղենտինոս Բ. իրարու յաջորդող կայսերքն : Իսկ միւս գաւազանն, զոր « բարձր և սքանչելի » կը յորջորջէ՝ է նախնին Մեծն Թէոդոս, որոյ անունը թարգմանաբար միայն մէջ կը բերէ, ըսելով. « Վասն զի Աստուծոյ տոչր՝ էր ի նմա ». յաջորդ տողերում տրուած նկարագիրն իսկ՝ անոր թագաւորութեանը կը պատշաճի :

Մի և նոյն իջի՝ « Եւ ելցեն երկոռ գառագանք ի միոյ գաւազանէ » բացատրութեամբ՝ Հռովմէական պետութեան երկուքի բաժանուիլը կ'ակնարկուի, այսինքն է Անորիոսի՝ յարեմուսս, և Արկադիոսի՝ յարեւելս վարած թագաւորութիւնքը, որոց մինը՝ գազանի կը նմանեցուի, իսկ միւսն անասնոյ : Առ այս նշանաւոր է « յերկուսեան ի փողոցսն յօթնարորոսն » յոգնակի բացատրութիւնն, որով կը նշանակուին Հին և նոր Հռովմներն կամ Եօթնարուորքն, իրարու հետ ունեցած « իմաստասիրական երգերով և Հարստութեամբ » :

Յաջորդ տողերն նուիրուած են փոքր Թէոդոսին, որոչակի յիշատակութեամբ, և հակիրճ՝ բայց հարկաւոր յառաջբերութեամբք նորա բարեպաշտութեան, երկայնորեայ և փառահեղ թագաւորութեան, յաղթող աշխարհակալութիւններուն և ահեղ անուան : Նշանաւոր է Թէոդոսի անուան յարակից. « Եղեալ ի սրբոշքեան (օր. մի՛ ի սրբոշքեան) և անուն նորա ոչխտաշորեալ ի քեզ, Եօթնարորոչ » բացատրութիւնն, որ կը թուի ցուցնել, թէ տեսեան գրութեան ժա-

1. Այս բառն հաւասար է յունարէն θεοιος բառին, որ յառաջ կ'ու գայ θεωμի բայէն, և θεός բառին վերայ կազմած է անունս Θεοδοίος, այսինքն է՝ Գոթիկ լուրսբ Արքեպիսկոպոս :

մանակ Թէոդոս իբրև սուրբ կը յարգուէր ժողովրդեանն Բիզանդիոնի մէջ :

Յէջ 241, Բ. պարբերութեան սկիզբը՝ Բիզանդիոնի եօթնադար կոչուելուն իբրև պատճառ կը արուի. « Վասն զի Պարսկաց ամենայն ազգք մտցեն ի քեզ ». և Մարկիանոսի թագաւորութիւնը նըկարագրելէն յառաջ կը գնէ արևմտեան թագաւորութեան անկումը, ըսելով. « Եւ Հռովմէ մի թագաւորեացէ մինչև ի կատարած յաւիտենից » : Այս տեղեկութեանց առաջնոյն համեմատ Թէոդոս Բէ օրով Բիզանդիոն սկսած է կոչուիլ Եօթնարարուր և Բարեյուն, երբ Պարսիկք և ուրիշ պարտեալ ժողովուրդներ գերի բերուելով հոն բնակութիւն հաստատեցին, և այնու յաճախեցին հարստութիւնք և զեղխութիւնք : Իսկ երկրորդ տեղեկութիւնն անճիշտ է, վասն զի արևմտեան պետութեան կործանումն և մեծին Թէոդոսի տան բնաջինջ բարձումն եղաւ յամի Տեառն 480, Բոսնոսոս Մոսիոսի և Յուլիոս Երեսնի մահուամբ Ազոսկրի ձեռքով :

Յաջորդ սողերում շատ բնորոշ կերպով նկարագրուած է ծերոյն Մարկիանոսի սակաւօրեայ թագաւորութիւնն, զոր՝ « ոմանց ի բարի, և ոմանց ի չար » եղած կը համարի հեղինակն : « Առ ինքն վերացուցէ զրով հաւատոյն, և եղիցի հերձուած մեծ ի թագաւորութեան նորա » և այլն, բացատրութեամբք՝ Քաղկեդոնի ժողովը կ'ակնարկուի և այն պատճառաւ յառաջ եկած կրօնական և քաղաքական յուզումներն : Մարկիանոսին յաջորդող գաւազանն մեծ և զօրաւոր, զոր գազան կ'անուանէ, կամ Անաստաս կայսրն հասկանալի է, և կամ լաւ ևս Յուստինիանոս : Յիրաւի, դիտել կու տանք նախ, որ այս տեղ յիշուած նշանները, բնութեան արկածներն, քաղաքաց կործանումն, ոչովք հանդերձ, Միք. Գլիկաս ևս Յուստինիանոսի ժամանակ հանդիպած կը պատմէ, որով միայն Անտիոքայ մէջ 5,000 անձինք աւերակաց տակ կը թաղուին : Բ. Արաբացուց երևումը, զորս Տեսլեանս հեղինակն՝ « Ազգք վիշապաձևք » կ'անուանէ :

Յէջ 242, Բ. պարբերութենէն մինչև 243 իջի վերը՝ այլարանական ձևոց ներքև մէջ բերուած գազանն, շունն, առիւծն, վիշապն և կորիւնք, որոնք սրով և հրով իրարու հետ կը մրցին, ոչ այլ ինչ են, բայց եթէ մէկ կողմէն Մօրիկ, Փոկաս, Հերակլ կայսերաց, և միւս կողմանէ այլ Պարսից Խոսրով Ապրուէզի և յաջորդաց ժամանակ իրարու հետ ըրած պատերազմաց և անցից գոց ականարկութիւններ :

Թէ ստուգիւ գազանն է Փոկաս, բաւական է ուշ դնել հետևեալ

բացատրութեան. « Ոչ յուժեքէ թագաւորեալ, այլ յանձին բռնութենէ » : Առաջին շունն՝ է Մօրիկ, որ կը սպաննուի իւր կորիւններով ի միասին գազանէն, ըստ այնմ. « Գազանն շնջելով շնջեսցէ գլխատակ շանն » : Առիձեմ, որոյ համար կ'ըսուի. « Գոչեսցէ ի գոչումն մեծ » է Խոսրով արքայն Պարսից, որ ուզելով իւր մեծ բարերարին Մօրկայ մահուան վրէժը լուծանել, կ'արշաւէ բիւզանդական տէրութեան սահմանաց վրայ : Երկրորդ շունն, որ կը « խաղայ մինչև ցգառինս առիւծոյն », այսինքն է Պարսից և Տիգրոնի վերայ, է Հերակլ կայսրն :

Հ. Գր. Գալէմքեարեան¹ մինչև Հերակլ կատարուած պատմական գիպաց այս ակնարկութիւնքը միայն ի նկատի առնելով, եզրակացոյց, թէ Գանիելի է Տեսիլն՝ Էբե դարուն գրուած ըլլալու է : Այս կարծեաց հետևած կ'երևի իւրիք նաև գերմանացի գիտնականն՝ Թէոդոր Ձազն² հիմնուելով մանաւանդ հայկական խմբագրութեան ՉԿԻ իջում յիշուած Որլոդիոս անուան վերայ, զոր ինքն Ուիլհելմիոսի ազաւորութիւն մ'ըլլալ կ'ենթադրէ : Սակայն մենք ուշի ուշով հետևելով տեսչեանս պատմական ընթացքին՝ ակներև կը տեսնենք, որ նա Հերակլէտով զկայ չառնոյր, այլ կը շարունակէ այլաբանօրէն ոչ միայն Հերակլեան հարստութեան՝ այլ և իուաւրեան կամ ասորական կայսերաց արարուածները՝ առտնին, Գթաց, Աւարաց և Սլաւոնաց հետ ունեցած վերաբերութիւններով, ինչպէս նաև այն ժամանակամիջոցին բիւզանդական կայսրութեան քաղաքական, կրօնական և բարոյական կացութիւնքը :

Ստուգիւ, յէջ 244, Ա. պարբերութեան մէջ կ'ըսուի. « Վայ քեզ յայնմ ժամանակի, Եօթնալուրդ Բաբելոնի, յորժամ այրի թագաւորեսցէ » : Այս ակնարկութիւնս՝ զուտ պատմական է, և Հերակլ կայսրէն բոլորովին տարբեր և մանաւանդ թէ իզական էութիւն մի կը յարաբերէ, որ Հերակլեսէն վերջ թագաւորելով բիւզանդական կայսրութեան մեծամեծ և ծանր աղէտներու պատճառ պիտի լինէր : Ուստի այդ այրիով՝ կամ Հերակլեսի անհարազատ կիներ Մարտինէ կ'ակնարկէ Տեսչեանս հեղինակն, որ թագաւորութեան տենչով կուրացած՝ Պիլոսոսի թելադրութեամբ թունաւորելով մեռցուց Հերակլէսի անդրանիկ ժառանգը՝ Կոստանդին, և յետոյ ուզելով թագաւորել իւր որդւոյն Հերակլէոնասի հետ՝ շարժեց մեծամեծաց զայրոյթը, որոնք գահընկէց ընելով զինքը որդւոյն հետ լեզուն

1. Die Siebente Vision Daniels, Wien 1892, s. 6.

2. Forschungen zur Geschichte des neutest. Kanons. Erlangen und Leipzig, 1893, s. 118,

և կտրեցին և աքսորեցին, թագաւորեցնելով Կոստանդին Գ. կամ Քէոփիլոս կայսեր ամուսինը՝ Թէոդորա, որ 14 տարի թագաւորեց իւր որդւոյն Հետ, և որուն ժամանակ քաղաքական պատերազմներով և խռովութիւններով տագնապեցաւ բիւզանդական պետութիւնն, և 100,000 Պաւլիկեան աղանդաւորք կոտորեցան անխնայ. և կամ լաւ ևս Կելոն Իսաւրացոյ կինը Մարիամ:

Դիտելով, որ «Վայ յորժամ այրին թագաւորեացէ, և նենգութեամբ խաղասցէ ի վերայ այլազգեացն» բացատրութիւնն՝ վերստին կրկնուած է նաև 246 իջում, և կրկնուած է այնպիսի դիպաց ակնարկութիւններէ յետոյ, որոնք աւելի Քէոդորայի կամ Մարիամու քան թէ Մարտինայի մօտ են ժամանակաւ, Հեսևարար յիշեալ այրին ևս այս երկուքէն մին ըլլալու է Հաւանօրէն: Օրինակի աղագաւ, յէջ 244, ուր կը նկարագրուի վիշապին տիրապետութիւնը, կ'ըսուի. «Նւ զառաջնորդութիւն հայրապետացն խախանեցէ»: Արդ, այս բացատրութեամբ կամ Կելոն Իսաւրացի կայսեր պատկերաց և կրօնից դէմ յարուցած Հալածանքներն և Գերմանոս պատրիարքին աթոռէն վար ձգուին կ'ակնարկուին, կամ Միքայէլ Գ կայսեր օրով, այն է՝ յամին 857 Իգնատիոս պատրիարքին իւր Հայրապետական աթոռէն ի Հռովմ աքսորուիլն, և կամ Քէոփիլոս պատկերամարտ կայսեր ժամանակ Քէոդորոսի և բարձրաստիճան եկեղեցակաւնաց և վանականաց աքսորն, և ապա վերադարձն ի Կ. Պոլիս, ինչպէս կը ծանուցուի նոյն պարբերութեան մէջ յետագայ խօսքերով. «և որ ի ծերպս և ի յայրս և ի փապարս երկրի ընկեալք իցեն՝ եկեցցեն առ քեզ յԹնրլուրդ, բռնաւորեալ ի վիշապէն»: Այս անորոշ կէտս՝ Մեթոդիոսի Հայկական խմբագրութեամբ կարելի է լուսարանել: Այս տեղ խմբագիրն խօսելով Նեոին այդ այրի մօր մասին, զանիկայ իբրև կին կը Համարի բարեմիտ մակագրած թագաւորին, որ կը թագաւորէ Բիւզանդիոսի մէջ 32 տարի: Սորա մահուանէն վերջ՝ ապա 3 տարի թագաւորել կու տայ անոր չար, անօրէն և պիղծ այրւոյն, զոր և կը նկարագրէ տայպէս. «Գործէ չարիս մեծամեծս, և ուսուցանէ գործել նախ պղծութիւնս յարականս և իգակտնս անյագս, ուսուցանէ մինչև այնպիսի թագաւորացն այնպիսի սրբել ժողովն. այնչափ խոտորին մինչև զարուամելութիւն և զբականութիւն իբրև զանասունս յաւուր ի Հրապարակի գործեցցեն, և կախարդութիւնս և դիւթութիւնս. մինչև ուրանալ տայ զԱստուած, և զինքն աստուած տայ խոստովանել և ապականութիւնս բազումս. և զնոռ զառազանս ջրով և յռանայ զպղծութիւնս իար տե՛»

աստեանքեան, և սրակէ ի վերայ ժողովրդեանն և նշխարաց սրբոց, և ուխտից և սուրբ սեղանոց և պղծէ գնոսա, և քարոզել տայ զինքն Աստուած. և մտեալ ի մեծ եկեղեցոյն՝ և Հանդերձ երգչաքն և կաքաւորաւքն. և արբեալ ժողովոյն, և ինքն նստի ի վերայ սեղանոյն և խօսի Հայհոյութիւնս յԱստուած Հայր, և յՈրդի նորա և ի Կոյսն Մարիամ և ի սուրբս. և ժողովուրդն գործեն զանօրէն խառնակութիւնս: Յայնժամ Հրամայէ Տէր սուրբ Հրեշտակապետին և շարժէ երիցս անգամ զՔարելոն մեծն, այսինքն է՝ զԿոստանդինուպաւլիս. և ընկղմի քաղաքն և ծածկէ զնա ծովն շար ժողովրդոյն »: Ապա անմիջապէս վերայ կը բերէ Դանիելի յիշեալ տեղին, ըսելով. « Եւ լինի մարգարէութիւն Դանիելի, որ ասէ, թէ վայ քեզ, Եօթնաբարոյ Բռնագնդիա, յորժամ այրիկ ի քեզ քաղաքոյնսցէ: Եւ այս լինի զի ծնառ մայրն Նեախնն. և յայնմ Հետէ յինի քաղաքն ծով, և երևի խաչն յեկեղեցոյն միայն և սիւնն Կոստանդինոսի մեծի »:

Այս տեղ ամենայն ինչ պատմական է. թագաւորն է Լեռն ի սաշրացիկ, որ յամին 717 կայսր պատկուեցաւ ի « մեծ եկեղեցոյ » Ս. Սոփիայ. կինն պիղծ կամ այրին՝ է նորա ամուսինն՝ Մարիամ, որ ծնաւ զնեռնն Կոստ. Կոպրոնիմոս՝ որ և պղծեց մկրտութեան աւազանը: Հայրապետն են Գրիգոր Բ. պապն և Գերմանոս Կ. Պոլսի պատրիարքը, զորս ուզեց Կեռն նենգութեամբ սպաննել: Հրեշտակապետին ձեռք յառաջ եկած ծովային երկրաշարժն է՝ յամին 740 Հանդիպածն, որ Կ. Պոլսէն սկսեալ մինչև Ասորիք ծովեզերեայ քաղաքները ջուրի տակ ծածկեց: Ուրեմն, տեսեանս մէջ բերուած տեղւոյն Հետ՝ անոր գրութեան ժամանակի խնդիրն ևս այսու կը պարզուի: Իսկ այն, թէ Դանիելի է տեսիլն արդեօք Մեթոդիոսէն փոխ առած է այդ տեղին, թէ սա՛ անկէց, վերջ կը լուծենք: Այս միայն դիտել կու տանք Հօս՝ որ Մեթոդիոսի խմբագրութեան մէջ Կեռն կայսեր կնոջ Մարիամու մասին ընծայածն յոյժ նոր է և անսովոր, վասն զի բիւզանդական ծանօթ պատմագրաց քով չկան այսպիսի տեղեկութիւններ:

Յէջ 244 և 246 երիցս յիշուած առաջին գաւազանը՝ Սաղամանդար, զոր այրագրի և որսորդական գաւազանաւ իշխած կը Համարի Հեղինակ Տեսլեանս, և որ Պղակիտասայ ձեռքով սպանուած կը Համարուի, յայտնի չէ մեզ. Հետևարար, դժուար է որոշել անոր ո՞վ ըլլալը, այնու մանաւանդ որ կարծէք թէ Տեսլեանս Հեղինակն՝ յանկարծական ընդոստիւնով մի Թէոդոսի կարծեցեալ դասեր Պղակիտասայ ժամանակին և արարուածոց կը վերադառնայ նորէն՝ յետադէմ ընթացքով պատմութեան: Անմիջապէս յաջորդ պարբերութեան մէջ

յիշուած Որլոդիոսն, զոր եթէ Թէոդոր Զահնի հետ Ոլիւրրիոս փոր-
 ձնք կարդալ, այսինքն՝ թէ նոյն համարինք հոռովակական պատրըկին
 հետ, որ Արեւմտեան կայսրութիւնը ձեռք բերելու համար ամուսնա-
 ցու Պղակիտասայ հետ, բայց շուտով մեռնելով՝ զրկուեցաւ երկուքէն
 իւրի է, և պէտք է տեղափոխել զանոնք ՂԱ իջում, ուր, — ինչպէս
 տեսանք, — կը խօսուի Մարկիանոսի և մանաւանդ արեւմտեան կայս-
 րութեան անկման և Թէոդոսեան ազգատոհմի դադարման վերայ:
 Սակայն ուշի ուշով դիտելով այն պարագաները, որոնք միացած են
 այդ հատուածոց մէջ՝ Պղակիտաս և Որլոդիոս անուանց հետ, այս-
 պէս նաև անմիջապէս քիչ յետոյ յաջորդող ուրիշ պատմական և ժա-
 մանակագրական ակնարկութիւնները՝ հաստատուն կուռան մի չենք
 գտներ Թէոդոր Զահնի կարծեաց, այսինքն է յիշեալ ազաւաղ ա-
 նուանց յառաջբերութեամբ ստեղծել այս տեղ Ե դարու առաջին կի-
 տում ապրող Պղակիտասայ և Ոլիւրրիոսի պատմութիւնը: Առ այս
 դիտել կու տանք նախ, որ Գանիելի Տեսիւան օրինակներէն ոմանք
 (BC) Պղակիտասը՝ Ղակիտա կը գրեն, և Որլոդիոսը՝ Ղոպիոս: Բ.
 Պղակիտասայ համար ըսուած է հօս « հասցէ նմա (այսինքն է Սա-
 դամանդարի) և սպանցէ զնա ». սակայն պատմութիւնն երբէք ըսած
 չէ, որ Թէոդոսի դուստրն սպաննած ըլլայ այլազգի թագաւոր մի.
 մանաւանդ մենք գիտենք, թէ նա Ոլիւրրիոսի վաղահաս մահուանէն
 վերջ՝ եղաւ խաղալիկ Ոդոակրի և այլոց բարբարոսաց: Գ. ՂԱ7 իջի
 առաջին պարբերութեան մէջ կ'ըսուի Որլոդիոսի համար, թէ նա պի-
 տի տիրէ ոչ թէ Հռովմայ, այլ Եթովպիոյ, այսինքն է՝ Կ. Պոլսոյ
 մէջ, և թէ նա է « այր աղբատ որ ոչ ձանաչիցի զընորնս. հպարտ,
 ոսկեւեր, քարկացող, պատերազմասէր, և եղիցի անուն նորս Որլոդիոս.
 և մեծամեծք նորս առեցեւ զնա, և քաղաքացիքն նորս նեղեալք ի
 նմանէ », և այլն: Արդ՝ այս պարագաներէս ոչ մէկը կարելի չէ
 պատմականօրէն պատշաճեցնել ազնուազգի, իմաստուն և քարեքարոյ
 Ոլիւրրիոսի անձին, որուն վերայ դրած էին արեւմտեայք իրենց ակն-
 կալութիւնը, և յետ Վաղենտիոս Գի անով կ'ուզէին նորոգել Թէո-
 դոսեան թագաւորութիւնը յԱրեւմուտս: Արդ, եթէ անունս Որլոդիոս՝
 խանգարումն է յունարէն Οὐροφλόγοςի, այն է Արքրիս, այն ժամա-
 նակ կրնանք եզրակացնել, որ այստեղ մէջ բերուած թագաւորն ըլ-
 լալու է Հաւանօրէն Միքայէլ Գրե մականուանեալն Արքրիս, որ իւր
 անմիտ վարուքն և Բարդասայ թելադրութեամբը նորոգեց Իսաւրացի
 կայսերաց Հակակրօն քաղաքականութիւնը, որ իւր մայրը աթոռակ-

ցութենէ զրկելով՝ մեծամեծաց անբաւ աղէտներու և տտելութեան առիթ եղաւ. և երբ կը պատրաստուէր զՎասիլ Հայկազն ևս դաւով սպաննել, ինքն սպաննուեցաւ անկէց:

Յաջորդ պարբերութեան մէջ ստորագրուած միւս թագաւորն, որուն համար կ'ըսուի, թէ « յանդիման պատերազմեալ՝ հալածեցէ զնա, և բազում տրտմութեամբ և հեծոռքեամբ հանցէ զհոգի նորա », և այլն, Վասիլ Հայազգի կայսրն է ըստ ամենայն հանգամանաց, որ սպաննելով զՄիքայէլ Արքշիռ՝ վերջ կու տայ Բիւզանդիոնի աղետից և սկիզբն հզօր և փառաւոր թագաւորութեան: Չայս ուզելով ակնարկել Տեսլեանս հեղինակն, կը շեշտէ. « և եղիցի մեծ յաթոս մեծամեծս և պայծառ, և այրն կորովի յաջմէ և յահեկէ »: Մեծ սովի և ուրիշ բնական հարուածոց թուարկութիւնքն իսկ, զորս կը յարէ անմիջապէս՝ քաջ կը յարմարին այս ժամանակամիջոցիս: « Պակասեցին աւուրք, և եղիցի օրն վեց ժամեան » բացատրութեամբ՝ կ'ակնարկուի արեգական այն բուրբական խաւարումն, որ ըստ Միք. Գլխկասայ¹ հանդիպեցաւ Լեւոն Խմաստասէր կայսեր ժամանակ, այնպէս որ աստեղք առհասարակ իբրև ի գիշերի կը փայլէին:

Անմիջապէս վերջը յիշուած երիտասարդ թագաւորն, որուն համար վայ կը կարգայ մեր տեսանողը՝ Եսթնարբեր Բիւզանդիոնի, յիշելով մի առ մի անոր ժամանակ եղած մերձաւոր ամուսնութեանց զեղծումներն, անբարոյականութիւնքն « և հեղումն արեան ի տաճարի սրբոց սպասաւորաց », և այլն, Լեւոն Խմաստասէրն ըլլալու է վասն զի Բիւզանդական ժամանակագիրք՝ զայս ամենայն այս կայսերս ժամանակ և անձին վերայ կատարուած կը պատմեն, դիտել տալով, որ այս մեղկ կայսրս՝ չորս կին ունէր, և թէ ինքն կառափնահար արիւնահոս սպաննուեցաւ յանուն Ս. Ղազարու կառուցած տաճարին մէջ:

Ի վերջոյս 247 իջին կը յիշատակուի Բիւթանիոյ ծովեզերեայ քաղաքաց և Նիկովիդիոյ երկրաշարժիւ կործանուիլն և ծովու բարձրացեալ ալեաց տակ ծածկուիլը: Այս դէպքս՝ երկիցս հանդիպած կ'աւանդեն պատմիչք, մէկ մի Լեւոն Խաւարացոյ ժամանակ, այն է յամին 740. երկրորդ անգամ՝ Լեւոն Խմաստասիրի օրով, ըստ Միք. Կլխկասայ: Տեսլեանս բնագրի կարգն եթէ խանգարուած չէ, վերջին կէտն աւելի հաւանական կ'երևի. վասն զի 248 իջում կը յի-

1. Annalium Pars IV. Venetiis 1729, p. 230 «Extitit iis temporibus tanta solis sub horam diei sextam eclipsis, ut ipsa etiam sidera conspicerentur.

լուի ի թիւս բնական արկածից « և երևեսցի սիւսն հրեղին յերկնից ի յրկիր », այսինքն է սրաձև գիտաւորն, զոր Միլիկաս՝ իմաստասիրի որդոյն Կոստանդինոսի ժամանակ երևցած կ'աւանդէ, և կ'անուանէ զայն չւփօսն. Յիրաւի, բնագրի քիչ վերջ յարած այս խօսքերս իսկ, թէ « և յայնժամ փոխեսցի թագաւորութիւն քո » (Յօթնարբուր) զայս կը թուին հաստատել, այսինքն է Կեոն իմաստասէր թագաւորի յաջորդին թագաւորութիւնը: Միայն թէ միջանկեալ թագաւորն, զոր տեսանողն « յայլմէ պաշտամանէ և Արիանոս » կ'անուանէ, կարծէք թէ Կոստանդինոսէն տարբեր մէկն ըլլալու է և տարբեր ժամանակի մէջ ապրած. վասն զի Ա օրինակն ունի փոխանակ « յայլմէ պաշտամանէ » յայրագգեաց, որ օտար ազգ կամ ազգատոհմ աւելի կը նշանակէ՝ ըստ դասական լեզուին, քան թէ աղանդ: Նշանաւոր է առ այս և որոշիչ երկու տող վերջ եկող այս ակնարկութիւնս. « Եւ յայնժամ այսպէս պատահեսցի (թագաւորութիւնն) և քերցի գերկորդ գառազանն ի միշտ քաղաքն յոյիսն յիշխանեն » (Ա. օր. իշխանեաց), յորում կը ծանուցուի Ստորին կայսրութեան՝ առժամանակեայ պատահումն և թագաւորական գահուն՝ մի ուրիշ քաղաք փոխադրուիլն: Իսկ որովհետև մենք Կետրենոսէն գիտենք, որ այս հակաթոռ իշխանս էր Ալրոնմիոն, որ վեց ամսի շափ թագաւորեց ի Նիկիա, զոր ապա պաշարելով առաւ յամին 713-717 թէոդոս Գ. և ահագին կոտորածներ եղան. ուրեմն ասկէց իսկ կը տեսնուի, թէ Տեալեանս բնագրի կարգը խախտուած է երբեմն, միջանկեալ յաւելուածներով: Հետևաբար, Դանիելի տեսլեան նախկին բնագրի պատմական բովանդակութիւնն ևս հերակլեան հարստութեան պատկանող թագաւորաց արարուածներով կը գոցուէր. իսկ խաւերեան (ստորական) և վասիլեան (հայկական) ազգատոհմին վերաբերեալ կայսերաց մասին եղած ակնարկութիւնքն՝ յետոյ ուրեմն, այն է Թ. գարուն հիւսուած են անոնց հետ: Ուստի դիտելով մէկ կողմէն Ենովքայ և Դանիելի Տեսլեանց մէջ եղող պատմական ակնարկութեանց մերձաւորութիւնը, իսկ միւս կողմէն շարաքանութեան և ինչ ինչ տեղեաց նմանութիւնը¹, դարձեալ այն եզրակացութեան կը յան-

1. Այսպիսի նման տեղերը յետոյ ուրեմն կը համեմատենք. այստեղ օրինակ մի միայն մէջ բերենք.

ՏԵՍԻԼ ԵՆՈՎՎՔԱՑ

Յէլ 384. « Եւ յայտ Գերե... ելէցէ
 « Երեւի, և արեւելի ելիք, և ու յայտ
 ելիք զպտու իւր » .

ԴԱՆԻԵԼԻ Է. ՏԵՍԻԼ

Յէլ 249. « Յօթնամ ամ ելէցէ մեծ
 յղժ, մէ Գերեւոյն ելիք, և ու զանցիւ, և
 ելիք մէ Բոսորոցի զպտուր » .

գինք, թէ գրեթէ մի և նոյն ժամանակամիջոցին և հեղինակի ձեռքով գրուած ըլլալու են: Մին՝ այսինքն է վերջինս՝ աւելի բիւզանդական կայսրութեան առտնին և Պարսից հետ ունեցած յարաբերութիւնները ուզած է ներկայացնել յետագայից, իսկ առաջինն՝ Արարացուց հետ լարուած յարաբերութիւնները: Բայց երկաքանչիւրին մէջ ևս հեղինակիս գլխաւոր և տիրող գաղափարն է ակներև ընել իւր ժամանակացաց նախ նեռի գալստեան և բիւզանդական պետութեան կործանումը, և ապա անոր վերականգնումը՝ իբրև աստուածապետական իշխանութիւն:

Տեսիլներուս պատմական ակնարկութիւնը ժամանակագրական կարգաւ պարզած ժամանակ, ըստ իմիք պարզեցաւ նաև անոնց գրութեան ժամանակն: Քննենք այժմ անոնց աղբիւրները:

Որչափ որ ալ ծնովբայ տեսիլն հայերէն դպրութեան մէջ միայն գոյութիւն ունի, սակայն հայագրուոյ մի սեփհական գործ չէ այն և չկարէ լինել, թէև « Արարատի » հրատարակիչներն այնպէս կարծեցին երբեմն՝ զայն ի լոյս ընծայած ժամանակ: Ստուգիւ, նախ զըրուածքիս ընդհանուր ոճէն և աստիճաններէն զատ՝ յատուկ անուանքն¹ իսկ հայկական չեն, և ոչ իսկ յունական, այլ սեմական ձևեր: Բ. հայագրուոյ մի համար նշանակութենէ զուրկ և անհասկանալի բան մի պիտի լինէր այսպիսի գործի մի ձեռք զարնելն, պարզապէս բիւզանդական պատմութեան մի քանի անցեալ յիշատակները զարթուցանելու համար, մանաւանդ թէ առանց յիշատակելու բնաւ Հայոց հետ ունեցած ամենաբարդ յարաբերութիւններն և հայազարմ կայսերաց և զօրավարաց՝ գրեթէ մէկ ու կէս դար բիւզանդական պատմութեան մէջ խաղացած մեծագոյն դերը:

Անյայտացած բնագրի որպիսութիւնն և որքանութիւնն տակաւին մեզ յայտնի չէ. սակայն հայերէնն՝ ասորականէ թարգմանուած կ'երևի մեզ, վերոյիշեալ պատճառներով: Մեզ հասածն՝ հաւանորէն մասն ևեթ ըլլալու է հին բնագրին, բայց նորանոր պարագաներով կեր-

1. Օրինակէ աղագաւ, Բերլու, Բելու, Փուլի, Հընիէ և Ուր: Անուանցս առաջինն՝ ոմանք Բուլգարիոյ կրճատուած ձև մի կը նամարին. բայց ըստ իս՝ կամ կարգալու է զայն Բարդանուս և կամ Բայանի, որ է անուն իշխանին Աւարաց: Բիշանը՝ կարգալու է Բիլան = βύσας և կամ ըստ Ազադրոնի՝ Վիլանդ, զոր կը յիշէ իբրև յաջորդ Տիբեթիոսի Ափսիմարոսի: Փուլիով խանգարուած ձև մ'է Տիբեթիոսի իշխանակից Փիլիպպիկոս անունան: Հընիզն՝ է պիտակ անուն, զոր պատշաճեցուցեր է Թեոդոսի Գ անուանս ևեղինակն, անոր նշանութեանց և իսպ. մարզարէութեան Ա. 7, և ԽԲ. 23 տեղեաց նամածայն: Իսկ Ուր՝ կամ Լիւոն Իսաւրացուց և կամ անոր Նորինական ասորի անունն է, զոր գերեց Թեոդոսի Պարսից:

գաւորուած : Այս բանս գրուածքիս սկզբնաւորութենէն իսկ՝ որ կը սկսի . « Երևեցաւ ինձ այր մի յանդիման Ղիբանան շերիկ » բառե՛ թով յայտնի կը տեսնուի . որովհետեւ նախ առանց նախապատրաստութեան է , երկրորդ զԼիբանան կը դնէ իբրև թատր և դիտարան՝ բիւզանդական արարուածոց . արդ , ասորի մէկն կրնար այսպէս խորհել և խօսել :

Տեսլեանս Հնագոյն մասն , այն է արծուի երևումն՝ որ ծառայած է իբրև Հիմն մեկնողական մասին , կը գտնենք նաև աւելի Հնութիւն ունեցող ուրիշ անկանոն գրուածքի մի՝ այն է Գ . Եզրի մէջ (զ . Ը .) , ինչ ինչ տարբերութիւններով : Ենովքայ տեսլեան մէջ Հոովմէական արծուն , որ ծովէն կը բարձրանայ դէպ ի վեր , Յ՝ գլուխ ունի և Տ թուեր . Եզրի քով ընդհակառակն . « Թևքն երկոտասան և զուխքն երեք » են դարձեալ : Հետեւեալ բացատրութիւնն , որ դրուած է կեղծ Եզրի բերանն , իրական առնչութիւն մի կու գայ Հաստատել երկու տեսիլներու մէջ , ըսելով . « Եւ թուեցի գառնորդ քև նորա (արծուոյն) , և այն է ոչ » :

Ենովքայ տեսլեան կեղծ հրեշտակն ուղելով մեկնել երեքգլխանի արծուոյն նշանակութիւնը , կ'ըսէ . « Արծիւն՝ զոր տեսանէիր և որաւ քաիլ՝ նա է թագաւորն Հոռոմոց » . արդ՝ նոյն մեկնութիւնը կու տայ նաև Եզրի երեցող հրեշտակն , ըսելով . « Արծիւն՝ որ ելանէր ի ծովն՝ չորրորդ քազառորդքիսն է » (այն է Հոովմէականն) : Գարձեալ , Եզրի քով արծուոյ տեսլեան կը յաջորդեն ուրիշ երկու տեսիլներ , մին Ը . զլխում , ուր նման Ենովքայ տեսլեան վիշապին՝ առիշտ մի կ'ելնէ անտառէն , որ կը հալածէ զարծուին . իսկ միւսն ժԱ . զլխում , ուր մարդադէմ էութիւն մի կ'ելնէ ծովու և հովերու միջէն , և կը գողացնէ զարծուին :

Ինչպէս Ենովքայ տեսլեան մէջ վիշապին համար կ'ըսուի թէ . « Զի որպէս բոց հրոյ բղխէր ի բերանոյ նորա և կլանէր զազգս ամենայն և կիզոյր որպէս հրով , և ոչինչ գտանէր յորովայնի նորա , և տիրէր ի վերայ երկրի » , այսպէս նաև Եզրի քով կ'ըսուի մարդադէմ գազանին համար , թէ « Կիզոյր յանկարծակի գամեկեւեան առաւարակ , առ ի չգտանել քնառ ամեկեկն յայնչափ քազմորքեկն » : Ենովքայ տեսլեան մէջ կ'ըսուի վիշապի մասին , թէ « Կայր ի վերայ մտրակոյտ հողոյ , և արծուին Հասանէր առ վիշապն ի վերայ մտրակուտին » . արդ՝ նման գործողութիւն մի ընծայուած է Եզրի տեսլեան մէջ նաև մարդադէմ կենդանւոյն , այսպէս . « Եւ տեսանէի թէ որպէս կոփէր իւր զրեան մեծ , և մտանէր ի ևս , ես խըն-

դրէի գտանել զտեղին՝ ուր փորեցան, և ոչ կարացի... ըսյց միայն աշխան մոխրոյ և հոտ ծխոյ» : Այսպիսի նմանութիւնք դեռ աւելի զգալի են երկուստեք, մանաւանդ այն էջերում, ուր կը նկարագրուին Նեռի գալստեան և բնական և բարոյական արկածից և սրբոց և Քրիստոսի յաղթող թագաւորութեան պատկերներն :

Որպէսզի մեր համեմատութեան եղբրքը գահավիժաբար դատած չըլլանք, դիտել կու տանք նաև երկաքանչիւր տեսլեանց բնադրոյմբը : Եզրի յիշեալ տեղեաց մէջ՝ թէ՛ արծիւն և թէ՛ զանիկայ հալածող առիւծն և մարդադէմ կենդանին բոլորովին տարբեր նշանակութեամբ առնուած են . այսինքն է, երեքզլխեան արծիւն՝ 12 թևերով՝ կը ներկայացնէ Հնոյն Հոովմայ եռապետական կայսրութիւնը իւր 12 կայսերօք . իսկ մարդադէմ կենդանին կամ առիւծն՝ է նա ինքն Քրիստոս, զոր Հեղինակն ուզած է ներկայացնել իբրև նորոգիչ Յուդայի կործանեալ թագաւորութեան, և կամ ըստ Դանիելի՝ է « Հինաւորցն ի կատարածի աշխարհի » : Ենովքայ տեսլեան մէջ ութթևեան արծիւն՝ ընդհակառակն կը ներկայացուի մեզ իբրև նորոյն Հոովմայ կամ յունահռովմէական կայսրութիւնը . իսկ վիշապն՝ որ կը պատերազմի սնոր դէմ և կը նեղէ, է Դոմայելայւոց կամ արարական նորախայծ իշխանութիւնն : Արդ, այս այսպէս ըլլալով հանդերձ, ըստ իս՝ գաղափարական կարգի զանազանութիւն մի արգելք չէր բնաւ, որ Ենովքայ տեսլեան կրտսեր Հեղինակն՝ Եզրասայ Հինաւորց գրքէն ներշնչուած՝ նմանօրինակ մի ուրիշ տեսիլ յօրինէր՝ տարբեր պարագաներով . այնու մանաւանդ, որ տարբեր ժամանակի և քաղաքական հանգամանաց մէջ կը գտնուէր, և հոովմէական արծիւն դեռ իւր համատարած թևերով և թռչանօք կը մրցէր յարևելս և յարևմուտս Մահմէտականութեան դէմ :

Բաց աստի, ուրիշ յարմար պատեհ մ'ևս կար Ենովքայ տեսլեան Հեղինակին՝ դիմելու առ այն իբրև աղբիւր, այսինքն է՝ Եզրի Գ գրքի լատիներէն Հին թարգմանութեան¹, ուր Գլ. ԺԵ. 74-79 էջերում, վիշապ անուանակոչութեամբ կու գան ի հանդէս Արարացիք ընդ ծով և ընդ ցամաք, և հրով և սրով կը սպառնան տիրել Ասիոյ և նորոյն Բաբելոնի, այն է յունահռովմէական տէրութեան : Այս էջերս, որք ըստ իմաստից նման են Ենովքայ տեսլեան 380-381 էջերում աւանդուածներուն, մի մի զօրեղ կուռաններ են եզրակացը նելու, թէ Ենովքայ տեսլեան Հեղինակն ստուգիւ ճանչցեր է Եզ-

1. See J. Armitage Robinson, *Texts and Studies*, ect, Vol. III. N^o. 1. *The fourth Book of Ezra*, Cambridge 1895, p. 74-79.

բասյ Դ գրոց Ե. դարու խմբագրութիւն մի և անկէց օգտու
 Ար, սուաջնոյն 382-386 էջերն, որոնք իբրև հրեշտակի... էն
 որուած մեկնութիւններ մէջ կը բերուին, ժամանակագրական և պատ-
 մական ակնարկութիւններով ի միասին, ուրիշ բան չեն, բայց եթէ Եզրի
 քով հոռովէական արծույն երեք գլուխներուն և ութ աւելորդ թեւերուն
 որուած մեկնութեանց բռնի ընդլայնումներ՝ նորանոր հանգամանաց
 և պարագայից ներքև: Այսպիսի մի եղելութեան ակնյայտնի ա-
 պացոյցը կը մատուցանէ մեզ իւր ձեռքը նոյն ինքն ինովքայ տես-
 լեան կեղծ հեղինակն, երբ իւր հնարած, այսինքն է հոռովէական
 հինաուրց արծուը՝ յանկարծ «նորաթախ» կ'անուանէ, ինչպէս
 Բիւզանդիոնն այլ՝ Հոռով: Ուրիշ գուգադիպութիւն մ'այլ կը տես-
 նուի Ենովքայ տեսլեան 380 իջում, ուր նմանողութեամբ Եզրի Ը.
 և ԺԱ գլխոց երկու տեղեաց՝ բիւզանդական տէրութիւնն իբրև
 աստուածպետական կը նմանեցուի Քրիստոսի յաղթող թագաւո-
 րութեան. և Արարացոց կամ վիշապի ձեռքով խափանուած ներ-
 կայացնելէն վերջ, դարձեալ վերականգնել կու տայ անոր, ըսե-
 լով. «Մարտիցեն առ ափն ծովուն՝ լուծանել գիշխանութիւն Հոռով-
 մայեցոց, և ոչ կարիցեն, զի տեղապահ է մեծի արքայի... և փոխա-
 նորդի զնա բագաւորութիւնն աննահ»: Վասն զի Եզրի մէջ (զլ. 2-Ե.
 մայր Սիոնը կ'երևի տեսանողին՝ իբրև այրի և վշտահար կին մի,
 բայց յետոյ յանակնկալ ժամու փոխակերպուելով՝ կը ստանայ գերբ-
 նական վիճակ մի:

Այժմ մի ուրիշ հարց ընդառաջ կ'ելնէ մեզ. այսինքն է՝ Եզրա-
 սայ Դ. գրքէն դուրս՝ ուրիշ գրաւոր աղբիւրներ ևս ունեցած է ար-
 գեօք Ենովքայ տեսլեան հեղինակն, թէ անոր վերայ միայն ըստ
 կամս յերիւրած է գիւրն: Այս հարցիս առաջին մասն՝ ինձ համար ոչ
 միայն հաւանական է, այլ և կատարուած եղելութիւն: Մեթո-
 դիոսի Պատարացոյ անուամբ այլևայլ լեզուներով մեզ հասած Յայտ-
 նարիչն ևս իբրև աղբիւր ծառայած է մեր հեղինակին. և ստուգիւ
 համեմատութեան ձեռքով երկուստեք տեսնուած մէկէն աւելի տե-
 ղեաց նմանութիւնքն լիովին կը հաստատեն մեր կարծիքը: Յիրաւի,
 ուշի ուշով կարդալով Մեթոդիոս՝ կը տեսնենք Պախ մանրապատում
 նկարագիր մի դանիէլեան չորրորդ գագանին, այն է հոռովէական
 կայսրութեան, — որ հայկական թարգմանութեան մէջ նոյնպէս արժոյ
 փոխուած է, — զօրանալուն և բոլոր աշխարհիս տիրապետելուն վե-
 բայ: Բ. Պարսկական տէրութեան անկմամբ՝ արարականին յանկար-
 ծական զօրանալն ցամաքի և ծովու վերայ, և յունահոռովէական

ընդարձակածաւալ սահմաններու վերայ անոր գործած կոտորածներն և ակերմունքն: Գ. Հռովմէական արժւոյն 3 թագաւորներու հետ դաշամբ միանալով՝ վերստին Արաբացոց վերայ դիմելն և տարած յաղթութիւնքն: Դ. Նեոի գայտեան և աշխարհիս կատարածին լինելիք աղետից նկարագիրքն, այլովք հանդերձ: Արդ, այս և նման կէտերու մէջ Մեթոդիոս ևս սերտ աղերս ցոյց կու տայ Եզրասայ հետ. բայց և այնպէս՝ կան Խամայելացոց և յունահռովմէական տէրութեան, և այլն մասին՝ այնպիսի մանրամասնութիւններ, որոնք յառաջնոյն միայն յատուկ են. իսկ որովհետև, որքան որ մենք կարողացանք դիտել, նոյն իսկ այդ կէտերու մէջ զգալի կերպով կը տեսնուի Մեթոդիոսի աղերսն Ենովքայ և Գաննիի տեսլեանց հետ, զոր համեմատութեամբ ակներև պիտի ընենք, ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Այս տեղ ի դէպ է ըսել, որ Մեթոդիոսի տեսլեան նման մի ուրիշ տեսիլ ևս ունինք հայկական թարգմանութեամբ, որ Հիպպոդիտեայ Բոստրացոյ անուամբը մակագրուած է: Եղան ոմանք, որք այս գրութիւնս առաջնոյն հետ նոյն համարեցան, և ըստ դիպաց միայն երբեմն ասոր և երբեմն անոր ընծայուած յետագայ գրիչներէն: Սակայն ըստ իս՝ Հիպպոդիտեայ ընծայուածն աւելի հնութեան բնադրուցը կը կրէ իւր վերայ. իսկ Մեթոդիոսին՝ անոր վերայ յետոյ ուրեմն կատարուած երկրորդ խմբագրութիւն մ'ըլլալու է. որովհետև սա ոչ միայն աւելի ընդարձակ է քան զայն, այլ և այնպիսի պատմական և ժամանակագրական պայմաններ և պարագաներ կ'ընծայէ մեզ, որոնք առաջնոյն մէջ չեն գտնուիր, և գուցէ թէ Էբէ դարում հազիւ թէ գոյութիւն ունեցած ըլլան: Բամենայն դէպս՝ երկուքն ևս մասնաւորապէս ուշադրութեան արժանի կէտեր կը ներկայացնեն մեր ուսումնասիրած Տեսիլքներու վերաբերութեամբ, և ինքեանք իսկ առանձին ուսումնասիրութեան առարկայ:

Մեթոդիոսի հետևողութեամբ ուրիշ երկու հայկական խմբագրութիւններ ևս հասած են մեզ, որոց մին ընծայուած է Եպիփանոս Կիպրացոյ. իսկ միւսն՝ կը կրէ Ազարոնի անշարժ ֆիլիսոփայի ասացեալ վասն բարի ժամանակիև և վասն սուրբ քազառուացն որ յայտնելոց են, և վասն ազգիև Նետողաց կործանման, և դարձեալ վասն ԻԴ. քազառուացն որ արձակելոց են իբրեւ զլար և զարիւնարբոս գազանս, և ապականելոց զերկիր, որ են Բաձնաձք և Քոռչանք և Կոյիև Լեկք. և վասն պիղծ և անմարտը Նեսիևն, որ յայտնելոց է և դարձեալ կործանելոց զօրոշքեամբ սուրբ խաչիև. և վասն անեղ և սու-

իսկ գայտեան Որդոցն Մատոժոյ և հատուցման արդարոց և մե-
շարաց : Այս գրուածքս՝ այնքան և այնպիսի նման աղերսներ ու-
նին ծնովքայ և Դանիելի տեսիլներուն հետ, զորս անկարելի է պար-
զպէս դիպուածոյ արդիւնք համարել, այլ պէտք է ըսել, թէ ի-
բարձէ օգտուած են : Բայց թէ Թնչպէս և Թնչ պարագաներու մէջ,
այս դժուար է որոշել այժմէն, քանի : Նոցա իւրաքանչիւրի գրիչն
և գրութեան ժամանակն տակաւին լսնդրական են, քանի որ մա-
նուանդ Հայերենէ դուրս ուրիշ բնագիր գեռ յայտնուած չէ մինչև
շատր : Ըստ իս՝ Եպիփանու և Ագադրոնի տեսլեանց սկզբնագրերն
գէթ ծնովքայ Տեսիլէն աւելի հին ըլլալու են . բայց նկատելով որ
գրա Հայագրի գրիչներու ձեռքով վերստին խմբագրուած են, հե-
տեաբար, այս տեսակէտով հաւանական է որ նորագոյն յաւելուա-
ծոց և յապաւմանց ենթարկուած ըլլան : Այս կէտերս Դանիելի տես-
լեան վերայ վերստին խօսած ժամանակ կը յուսանք պարզել, հա-
մեմտելով իբրարու հետ չորս գրուածոց նման տեղիքը :

Այս տեղ խօսքերնիս մասնաւորելով եպիփանեան անուանեալ
Հայկական խմբագրութեան մասին, պէտք է ըսել առանց երկբայու-
թեան, թէ նորա հեղինակն այնպիսի մէկն է, որ անվաւեր գրութեանց
վերայ ունեցած հմտութեամբն և սրամիտ մեկնարանութիւններով՝
գուչակողի Համբաւ ունէր իր ժամանակակցաց քով . սորա շարաբա-
նութեան լեզուն ևս աւելի մաքուր է քան զԱգադրոնին : Այս բա-
ցարութեամբս նա ցոյց կու տայ մեզ արդարև իւր գրութեան
«կրնագիրը, ըսելով . « Արդ, զառանցելոց ժամանակաց և զեղելու-
թիւն իրաց որ ի նոսա (այսինքն է շրէից կամ Ասորոց) ի հեա-
բան մատեանս գտանելով պատմագրաբար՝ ընթեռնուն ի լուր իմաս-
տուն լսողաց . և նոցա ընկալեալ զայն օրհնութեամբ, իսկոյն բա-
ղամ օրհնութիւնս մատուցանեն բարձրելոյն Աստուծոյ » : Իսկ ի հե-
տեալն կը յայտնէ նա իւր խմբագրութեան շարժառիթն և որպի-
սութիւնը, ըսելով . « Ուստի և ես բանադատեալ եղի յաւեր, զի թե-
րև կարացից յայտնի առնել ոչտուրմասիրացն զեղելոցն և որ յապայն
յնելոց ևս է . . . և որպէս վերագոյն ասացի՝ այժմ սկսեալ պատ-
մեցից գապագայիցն : Քանզի յետ պակասելոյ Թագաւորութեան
Հայաստանեայց՝ պատմաւանօք անհնազանդութեան », և այլն : Իը-
ժուարին է որոշել, թէ կեղծ Եպիփանս՝ հնարուն մատեան ըսելով
արեօք Մեթոդիոսի կամ Եզրի գրութիւնը կը հասկնայ, թէ ընդ
հակառակն Ագադրոնի կամ Ծնովքայ տեսիլն, որոնք անոր հետ մեծ
ողբս ունին : Ես այս տեղ կը հրաւիրեմ ընթերցողաց ուշադրու-

Թիւնը եպիփանեան խմբագրութեան երեք տեղեաց վերայ, որոնք նոյն են Եննովքայ տեսչեան վերջին իջի հետ. այսինքն է, երկու գըրուածոց մէջ իսկ կը նկարագրուի աստուածային վրէժխնդրութեան հուրն, որ ի կասարածի աշխարհիս շրջապատելով պիտի այրէ և հալեցնէ լեռանց և ըրոց հետ նաև նեւը՝ իւր հետևողներով, իսկ ընտրեալքն անվնաս պահելով պիտի սրբէ և նրբէ: Բ. Ս. Խաչին վերջստին երևումն՝ զուգագիպութեամբ Քրիստոսի խաչելութեան օրուան՝ կը դուռի, « յառար մեծի ոչորաբոս՝ յերորդ ժամոս », երկու գրուածոց մէջ իսկ բառ առ բառ: Գ. Եպիփանեան խմբագրութեան հեղինակն խօսելով, — յէջ 234-235, — յունահռոմէական կայսրութեան վտանգաւոր կացութեան մասին, կ'ըսէ. « Թէպէտև ոչ իսպառ բառնի թագրութիւն նոցա... Իրն տեղապահ գոչ յԱստուծոյ »: Արդ, այս տեղույս յար և նմանը կը գտնենք Եննովքայ տեսչեան 380 իջում, այսպէս. « Եւ ոչ կարիցեն (Արարացիք) լուծանել զիշխանութիւն Հռոմէայեացոց, զի տեղապահ են մեծի արքայի »: Տեսչեանս նոյն իսկ վերջարանի « Եւ տարցեն զնա նիւթ անշէջ — և ոչ շիջանիցին » չորս տողերն անգամ՝ բառացի կերպով նոյն են եպիփանեան խմբագրութեան 252 իջի տեղոյն հետ: Վերջընթեր տեղին միայն կը գրուի նաև Հիպպոլիտեայ տեսչեան մէջ, իսկ նախընթացն և վերջին տեղին՝ ոչ սորա և ոչ իսկ Մեթողիտոսի քով. ուրեմն կը հետևի, որ կամ եպիփանեան խմբագրութեան հեղինակն փոխ առած է գայս՝ Եննովքայ տեսչինէն, և կամ վերջնոյս հեղինակն՝ առաջինէն: Ենթադրութեանցս վերջինն եթէ ճշմարիտ է, պէտք է որ Եննովքայ տեսչին նախ է-Ը դարուն խմբագրուած ըլլայ, որովհետև ըստ տոհմային աւանդութեան հայագի Եպիփանն՝ որուն կ'ընծայուի այս խմբագրութիւնս՝ է-Ը դարու գրիչ մ'էր: Սակայն Ստոյն-Եպիփանու աւանդութեան մեզի հասած այս վեցօրեայ կամ Փոքր Արարածոցին, — յորում կը գտնուին Յաղագս Նեախն և վերջին առարկն ճառերն, — աւրարական և եթովպական թարգմանութիւններ ևս պահուած են: Վերջինս հրատարակած է արդէն Երնեստ Տրուպ՝ Բաւիերայի արքայ. Ակադեմիոյ գիտութեանց քննախօսութեան Ա. դասի՝ ԺՁ կարգի Բ հատորին մէջ, հետևեալ խորագրի ներքև. Das Hexaämeron des Pseudo-Epiphanius. München 1882: Ուստի, ասկէց իսկ կը տեսնուի թէ բոլորովին հայագլույ մի գործ չէ այն: Մենք Տրուպի հրատարակութիւնը շունչելով ի ձեռին, Ստոյն-Եպիփանու գրութեան ժամանակը և ոչ իսկ հայերէն բնագրին հետ ունեցած կատարեալ կամ անկատար նմանութիւնը կարեմք դատել. սակայն և այնպէս՝ դժուար է, որ է դա.

բէն աւելի հին ըլլայ : Իսկ եթէ առաջին ենթադրութիւնն ուղիղ է, այն ժամանակ այդ խմբագրութիւնն ոչ թէ էրզ դարու հայագրի նախնի, այլ Ը դարէն վերջ ծաղկող մէկու մի ձեռքով, նորէն ընդարձակուած և նոր պարագաներ առած ըլլալու է : Այո՛, զայս կը թուին հաստատել Յպոփանու Կիպրացոյ ընծայուած Արարածոց Մեկնոսքեան շարայարեալ ՉՂ հառերն, — յորոց մին է և այս Տեսիլս, — որոնք անտարակոյ նախընթացներէն մեծապէս կը զանազանին շարագրութեամբ, և է դարու բնադրոշմ՝ շունին բնաւ՝ թէ լեզուին և թէ պարունակութեան կողմանէ, այլ Փ-ՓԱ դարու գրչի գործ, որ անտարակոյ իր հայրենիքէն դուրս կ'ապրէր, և յոյժ ծանօթ էր անօրինական տեղաց : Խմբագրիս ծանօթ են Հիպոպոլիտեայ, Մեթոդիոսի և Ագապրոնի Տեսիլներն : Վերջնոյս քով հայագրի Վաղարշակի վերայ պատմածները՝ խմբագրիս դարձուցեր է Տրդատ անուամբ մի այլ արշակունւոյ վերայ, և Յունաց հետ ունեցած քաղաքական և կրօնական թշնամական յարաբերութիւններն այլ՝ միշտ բարեկամականի փոխած է, որով կը յիշեցնէ մեզ ՓԱ. դարը, յորում կ'ապրէր նա, թէպէտ և ինքն իբրև ապագայ լինելիքներ կը մարգարէանայ : Վրաց՝ Անոյ վերայ տիրապետելն անգամ յիշուած է :

Գառնանք այսուհետև քննել Դանիելի է. տեսլեան ծագումն և անոր կրած կերպարանափոխութիւնը, յիշեալ զորոց հետ ունեցած իր ընդարձակ վերաբերութիւններով :

Հայկական քարգնանոսքիսնք նախնեաց երկասիրութեան մեծարգոյ հեղինակն, յամին 1889 խօսելով Տեսլեանս մասին՝ կարծիք յայտնեց՝, որպէս թէ ըլլայ այն մասն ինչ Հիպոպոլիտեայ կամ Անթիպատրոսի Բոստարացոյ անհարազատ երկասիրութեան, որ խորագրուած է. Αποδιξις περὶ τοῦ Χριστοῦ καὶ τοῦ Ἀντιχριστοῦ. Կ'երևի թէ հեղինակս

1. Անուամբ նորա խօսքերն « Այս գրուած (այն է Դանիելի է. տեսլի) մի անծանօթ է, և կը կասկածիք որ Հիպոպոլիտեայ կամ Անթիպատրոսի Բոստարացոյ ընծայուած անհարազատ երկասիրութեան մէկ մասն ըլլայ » : Հ. Գ. Գալէօքարեան՝ Դանիելի տեսլեան գերմաներէն լրատարակութեան մէջ, որոյ խորագիրն է Die Apokryphe bei den Armeniern, Wien 1892. s. 2 զարմացականով մի այսպէս կը ծանօթագրէ Հ. Գալէօքարի այս տեղիս. « Ein Verschmelzung des heil. Hippolytus mit dem Antipater Bischof von Bostra = Չուլում մ'է Ս. Հիպոպոլիտեայ գործին՝ ընդ Անթիպատրոսի եպիսկոպոսին Բոստարայ » : Այս ծանօթութեամբ Հ. Գալէօքարեանն եթէ իւր նախորդին կարծիքն ուզած է ներկայցնել, այս ըստ քմաց է և թիւր. զի Հ. Գալէօքար ըսածն այդ չէ : Իսկ եթէ իւր կարծիքն է, այն ասին իրուացի է այդպիսի մի զարմացական յիշեալ բացատրութեան գերմաց. որովհետև այդ կարծիքն յէջ 3 արտայայտուածին հակառակ է :

Դանիելի տեսիլը Հիպպոդիտեայ ընծայուածին հետ բազմաթիւ չէ, ապա թէ ոչ անկարելի է առաջինը՝ վերջին գրութեան իբրև մասն համարել. որովհետև նախ պէտք է գիտել, որ այդ երկու գրութիւններն իրարմէ տարբեր առանձնայատկութիւններ ունին, և թէ դանիելի տեսիլն ըստ հայկական խմբագրութեան՝ աւելի ընդարձակ և բազմակողմանի նիւթեր կը պարունակէ իւր մէջ, զորս չէ մարթ Հիպպոդիտեայ տեսլեան մասն համարել. վասն զի սա յատկապէս Նեոին և ի կատարածի աշխարհիս հանդիպելիք նեղութեանց վերայ կը դառնայ իբրև յառանցքի, իսկ Դանիելի տեսիլն՝ ընդհակառակն յունահռոմէական կայսրութեան բարի և չար ժամանակները կը գծէ՝ արտաքնոց հետ ունեցած յարաբերութիւններովն ի միասին, որոնք աւելի Մեթոդիոսի և Ագադրոնի տեսիլներուն հետ սերտ աղերսներ ունին: Այս իսկ պէտք է ըսել, որ Դանիելի է տեսիլն՝ թէ իրօք Հիպպոդիտեայ ընծայուածին մասն մի եղած ըլլար, այն ժամանակ ոչ թէ « անծանօթ », այլ ծանօթ ըլլալու էր այն մեծագոյ հեղինակին: Այս նկատմամբ՝ անդրագոյն գիտողութեանց պէտք չկայ, ըստ իս:

Ուրիշ երկու քննադատներ, այն է Մովէրս¹ և Կաուլէն կարծիք յայտնեցին, թէ Դանիելի է տեսլեան հայկական խմբագրութիւնն՝ նոյն եղած ըլլայ անոր անուամբ ծանօթ Յայտնորքեան հետ, զոր ըստ մասին ևեթ հրատարակեց Տիչէնդորֆ², վնեստկեան թիւ 125 և պարիսեան թիւ 947 և 2180 ձեռագրաց վրայէն՝ հետեւեալ խորագրով. Ἀποκάλυψις τοῦ προφήτου Δανιήλ περὶ τῆς συντελείας τοῦ κόσμου: Յիշեալ գիտնականներն այսպէս դատեցին, ենթադրելով թերևս որ այս յունարէն տեսլեանն անտիպ մնացած մասն հրատարակուածին հետ՝ գուցէ թէ հայերէնին հաւասար ամբողջ մի կազմեն, և կամ հայերէնը՝ յունարէնին հետ լաւ համեմատած չըլլալով: Սակայն Դոկտոր Էրիխ Կրոստէրմանի ձեռքով յամին 1895 եղած ամբողջական հրատարակութիւնն³ իսկ՝ այլևայլ օրինակաց բաղդատութեամբ՝ այդ ենթադրութիւնն ի դերև հանեց. որովհետև մենք համեմատելով նոյն իսկ այդ հրատարակութիւնը՝ վերջերս մեր հրատարակած երկու օրինակաց հետ, դարձեալ բոլորովին տարբեր գրտանք զանոնք իրարմէ, ի բաց առեալ Նեոին վերաբերեալ մի եր-

1. S^{tes} Movers-Kaulen, Wetzer u. Welter *Encyclopedie*, 2. Aufl. 1882: *Apokryphen*; - Dilleman, Herzogs Real-Encyklop. 2 Aufl: *Pseudoepigraphen*.

2. *Apocalypses Apocryphae*, Leipzig 1866. s. XXX.

3. *Analecta zur Sept. Hexapla und Patristik*, Leipzig 1895, s. 115,

կու տեղերը, մնացածին մէջ հազիւ թէ գաղափարական կէս ի կէս համաձայնութիւն մի գտանք երկուստեք: Յատուկ անուանքն իսկ՝ գաղափարական յառաջբերութեանց կարգին հետ՝ բոլորովին կը տարբերին երկու խմբագրութեանց մէջ: Հետևաբար, յիշեալ գիտնականներէն ենթադրուած նոյնութիւնն, եթէ կարելի է ընդունել, այդ ըլլալու է անյայտացած յունարէն մի ուրիշ բնագրի հետ, որ սակայն այժմեանէն շատ տարբեր ըլլալու էր ըստ իս:

Գիտնականներէն ոմանք կեղծ Աթանասի (Սիւնուփսիսի) և Նիկիփորի անուամբ ծանօթ Ստիխովետոյի մէջ յիշատակուած Դանիելի անկանոն գրութեան հետ նոյն համարեցան. սակայն անոնցմէ ոչ ոք քոյց տուաւ մինչև ցարդ հաստատուն հիման վերայ, թէ ի՞նչ էր այդ անկանոն գրութիւնն, և ինչպիսի՞ պարունակութեամբ: Ըստ իս՝ այս չեղինակաց քով յիշուած անկանոն գրութիւնն, եթէ նոյն և եթէ իւր տարբեր ևս համարինք վերը յիշուած Ἀποκάλυψις, և այլն, ծանօթ երկասիրութենէն սակայն և այնպէս՝ անոր նկատմամբ աւելի կարող է նշանակութիւն ունենալ, քան թէ հայկական խմբագրութեան. որովհետև, — ինչպէս տեսնենք, — ասոր մէջ կան այնպիսի պատմական և ժամանակագրական որոշ ակնարկութիւններ, որոնք նոյն իսկ կեղծ Աթանասէն և Նիկիփորէն դարով վերջ հանդիպած են. հետևաբար, անոնցմէ նոյնչափ և աւելի յառաջ գոյութիւն ունեցող գրուածքի մի մէջ չէին կարող գտնուիլ: Ուստի, եթէ հայերէնն այժմեան յունարենէ բոլորովին տարբեր բնագրի վերայ եղած Թարգմանութիւն է, այն ժամանակ կը հետևի, որ Դանիելի տեսլիան մի ուրիշ խմբագրութիւն ևս եղած ըլլայ ժամանակաւ, որ յետոյ անյայտացած է: Այս տեսակէտով հայերէնի մեզ մատուցած ծառայութիւնն յոյժ գնահատելի է. վասն զի ասով կարելի է ցուցանել մինչև անգամ, թէ ի՞նչ լեզուով գրուած էր այն խմբագրութիւնն, ի՞նչ ժամանակի մէջ, և հուսկ ուրեմն, թէ ի՞նչ էր անոր բովանդակութիւնն:

Քէոզոր Զահն¹ մէկ կողմէն ի նկատի առնելով այժմեան յունարենի Հանգամանքը, և միւս կողմէն այլ ասորերենէն մնացած հասկոտորները, կ'ըսէ, թէ եղած է ստուգիւ Դանիելի անկանոն գրքի մի հնագոյն և թերևս եբրայական քնագիր, ինչպէս կը յիշէ Աստմանի (Bibl. Orient. III. 15), որուն վերայ ապա ընդարձակաբար խմբագրած է Հիպպոդիոս գիւրն, ինչպէս կարծել կու տան

1. Sieh Forschungen zur Gesch. des neutest. Kanons und der altkirchl. Literatur, Erlangen und Leipzig, 1893, s. 120-120.

Աթանասի և Նիկեոսի ընծայուած ցուցակներն. բայց բիւզանդական ժամանակամիջոցին երկիցս, առ նուազն, նորոգուած է կամ լաւ ևս նորանոր խմբագրութեանց ենթարկուած: Այս խմբագրութիւններէս մին անցաւ յետոյ Հայոց ձեռք, և առիթ տուաւ դնելու «Դանիէլ» ընդհանուր տիտղոսը՝ այդ նորակերտ գրուածին վերայ, — անվաւեր գրուածոց ցանկի մի համեմատ, — և իրենց հայկական թարգմանութիւնն ի գլուխ հանեցին:

Գերմանացի գիտնականէս արտայայտուած այս կարծիքս՝ ճշմարտանման կ'երևի մեզ, և կրնանք ըսել, թէ՛ նա արդէն յաջող քայլ մ'առած է հայկական թարգմանութեան աղբերակին մօտենալու. բայց ի դէպ առ այս պէտք է կրկնել և դաւթեան առածը, թէ՛ Ի քէն և անդր է փոխինդ: Յիբաւի, եթէ Հայերէնն՝ լոկ թարգմանութիւն մ'է, այնուհետև դժուար է, որ նորա թարգմանիչն ըստ քմաց «Դանիէլ» անունը մակագրած ըլլայ անոր վերայ, այնու մանաւանդ, որ այդ թարգմանուած բնագիրն՝ ի հարկէ իր յատուկ խորագիրն ունենալու էր: Բ. խորագրի վերայ այդ յաւելուածն ընողն, կարող էր բնականապէս ուրիշ նման յաւելուածներ ևս ներմուծել ամբողջ գործին մէջ, որով Հայերէնն պիտի լինէր ոչ լոկ թարգմանութիւն, այլ խումբագրութիւն: Եւ սակայն այս կէտերս առանց ապացուցի թողած է Թէոդոր Չաչն: Ապացուցած չէ դարձեալ, թէ ազատ կերպով կատարուած այն կրկին խմբագրութիւններն, յորոց մին ծառայեց Հայերէնին իբրև բնագիր, յոյն թէ ասորի լեզուով էին: Ահաւաստիկ կարևոր կէտեր, որոնք դեռ պարզաբանութեան կարօտ են:

Հ. Գալէմբեարեանն և՛ յիշեալ հրատարակութեան մէջ ըրած համառօտ դիտողութիւններով՝ փոքր ի շատէ նման մտքեր յայտնեց, ըսելով (յէջ 3), թէ համեմատելով իրարու հետ երկու բնագրերը՝ (յուն. և հայ.) կարեմք հաստատել երկուստեք անոնց հաշտասարտութիւնը (!), թէպէտև ոչ ուղղակի քառական հաւանձայնութիւն. բայց երկու կամ աւելի խմբագրողներ դեր խաղացեր են հոն: Իր նախկին ձևին մէջ՝ գուցէ թէ նոյն եղած ըլլայ (Դանիէլի տեսիլն) կեղծ Աթանասի և Նիկեոսի ցանկերու մէջ յիշուածին հետ, բայց Հայերէն բնագրի այժմեան վիճակին մէջ երևցող ժամանակագրական և ղեկութիւնքն թոյլ չեն տար նոյնը հաստատել:

Հ. Գալէմբեարեանի վերապահութեամբ արտաբերած վերջին խօսքերը՝ մենք իբրև ստոյգ եզելութիւն կը համարինք. բայց մնացածներն խիստ անորոշ և իրարու հակասական կը թուին լինել: Այո՛, մեզ յայտնի չեն, թէ հեղինակէս շեշտուած այդ երկուքէն ա.

նի խմբագրողներն՝ արդեօք իրարու հետ բաղդատուած և հաւասար գտած ծանօթ երկու բնագրաց մէջ ևս զորժ տեսած են, թէ ընդ հակառակն յունարէնի մէջ միայն: Յայտնի չէ դարձեալ, թէ «Im ursprünglichen Zustande և die besprochene Schrift» բացատրութեամբք Դանիելի այժմեան բնագիրը հասկըցնել ուզած է, զոր նոյն եղած կը համարի ինքն աթանասեան և նիկեփորեան ցանկերու մէջ յիշուածին հետ, թէ հայերէնն ևս՝ զոր կ'ուզէ օտարաց ծանօթացնել: Արդ, եթէ յունարենի նկատմամբ եղած են այդ դիտողութիւնքն, ըսել է, թէ հայերէն խմբագրութեան գաղտնիքը դեռ ծայրի մատին պարզած չէ՝ զայն հրատարակած ժամանակ, և երկուստեք նոցա մէջ գտած հաւասարութիւնն իսկ անճիշդ է. վասն զի իրօք գոյութիւն չունի այդ, ըստ իս, կամ խիստ քիչ անգամ նկատելի: Դարձեալ, թէ ե՛րբ կամ ուստի՞ յառաջ եկած են երկու բնագրաց մէջ բառական անհամաձայնութիւնքն՝ պարզուած չէ այս կէտս: Արդ՝ այսքան և այսպիսի բազմակնճիռն դժուարութեանց և անորոշութեանց մէջ՞ ես իսկ չեմ համարձակիր մեծամեծ բաներ խոստանալ ընթերցողացս, այլ պիտի ջանամ իմ համեստ տեսութիւններս ըստ կարեւորոյն պարզել այս տեղ՝ բաղդատութեանց վերայ հաստատուած:

Այո՛, մանրազնին բաղդատութիւններէ և դիտողութիւններէ վերջ, զոր կատարեցինք Դանիելի տեսլեան հայերէն խմբագրութեան վերայ, տեսա՞նք արդարեւ, որ այս տեսլեանս ինչպէս յոյն՝ այսպէս և հայկական բնագրերն՝ այլևայլ խմբագրութեանց բովերէն անցնելով մեզ հասած են, կամ լաւ ևս այլևայլ խմբագրութիւններէ օժանդակուած՝ այժմեան ձևն և որպիսութիւնը ստացեր են: Յունարէն խմբագրութիւնն, նոյն իսկ ըստ կատարեալ հրատարակութեան Կոստանի, շատ անկատար է՝ բաղդատմամբ հայերենին: Մեր ասածին յայտնի ապացոյց են անոր սկզբնաւորութեան հետեւեալ խօսքերն՝ Οὐ αὖ σοί γῆ, ὅταν τὸ τῶν ἀγγέλων σκῆπτρον βασιλεύσει ἐν σοί, որոց կը հանդիպինք առաջին անգամ հայերէն խմբագրութեան եօթներորդ երեսին մէջ, յէջ 244, փոքր ինչ տարբերութեամբ այսպէս. « Վայ քեզ, յայնժամ ժամանակի, Եթովպացորդ Բարեշունի, յորժամ այդի թագաւորեսցէ », և երկրորդ անգամ 246 իջում: Հայերէն խմբագրութեան պիղքն, յորում, իբրև ի յառաջարանի, կը ծանուցուին տեսլեանս նիւթերն, պարագայք և նպատակն, կը պակասին նոյնպէս ի յոյն: Սրեսնիւ կեայ և այրոց ջանիւք եղած սլաւական հրատարակութիւններն, զորս

կը յիշէ Ադորֆ Հառնակ¹, ինձ անմատչելի մնալով, չգիտեմ, թէ ԲՆՆ Համեմատութիւն ունին յոյն բնագրի և Հայերենի հետ. սակայն իմ բարեկամս Ուս. Էրմիտաժ Ռորինսոն ինձ երաշխաւորեց, թէ անոնք ևս յունարենէն մեծապէս կը տարբերին: Հետևաբար, այս իսկ յայտնի ապացոյց է քիչ յառաջ ըսածիս, եթէ ստոյգ է բարեկամիս հաղորդածն:

Յունարէնը բաղդատելով Հայկական խմբագրութեան հետ, Հազիւ գտանք ինչ ինչ թերակատար նմանութիւններ, զորս կը դնենք այստեղ Համեմատութեամբ, նոցա որպիսութեան մասին ընթերցողաց գաղափար մի տալու համար:

ἘΠΟΚΑΛΥΨΙΣ

ՏԵՍԻԼ

« Οὐαὶ σοὶ γῆ, ὅταν τὸ τῶν ἀγγέλων σκῆπτρον² βασιλεύσει ἐν σοὶ ».

Τότε ἐρεῖ κύριος παντοκράτωρ ἐνὶ τῶν ἀγγέλων λέγων· Κατέλθε καὶ ἄρον τὴν ἀλήθειαν καὶ τὴν εἰρήνην ἀπὸ τῆς γῆς... Κάτελθε ἐπὶ Ἀσίαν, Φρυγίαν, Γαλατίαν, Καππαδοκίαν, Συρίαν καὶ εἰς αὐτὴν τὴν μητέρα τῶν πόλεων ».

« Καὶ ἡ γῆ ἤσσσα ἀνοικοδο-

« Վայ քեզ, յայնմ ժամանակի Երթնարդոր Բարիդն, յորժամ այրի թագաւորեացէ »:

« Եւ ասաց ցիս (Տէր). Յետ կատարելոյ զամենայն բանս մարգարէականս վասն ամենայն քաղաքաց և գաւառաց Ասիաս, Պոնտոս, Փոնդգրաս, Գաղատիաս, Կապադովկիաս, Կարպաթիաս, Չմիտնես, Սևտիոքիաս, Սիքրասևդիոքիաս, Եգիպտոս, Եթիպիաս, Եթիովիսիս, Կարկեդովնոս, Բիզոքս և Բարելովնաս, Հոսովնոս³ »:

« Եւ ծով եռացուցէ զալիս իւր

1. Տես Geschichte der altchristf. Litteratur, Leipzig 1893, I. Theil, 2. Hälfte, s. 895.

2. Այս բազմաթիւ յէջ 119 տարբեր պարագաներով կրկնուած է, այսպէս. « Καὶ ἐν τῷ μὴ εἶναι ἀνδρα Χρησιμον βασιλεύσει γυνή μισρά ἐν τῇ Ἐπιταλόφω », այսինքն է. « Առ ի չգոյէ անձ՝ թագաւորեացէ ի քեզ, Եթմարուր, ինձ փ ապականալ », որ հայերէնի այսինքն կը համապատասխանէ:

3. Ինքնագծուած անուանքս, որոնք յունարենի մէջ կը պահուին, հայերէնի մէջ ընդհակառակն երկրորդ անգամ ևս մէջ կը բերուին՝ իրենց հինաւորք արարուածներով առանձինն, գրաւելով 237-239 էջերը. սակայն դիտելու է, որ այս սեղ ուղղագրուած ձևերն՝ առաջիններէն կը տարբերին:

μήσει τὴν θάλασσαν καὶ ἐπιβή-
σεται ἐπὶ τὴν γῆν Ἐπτάλοφον
καὶ στρέψει τὸ πρόσωπον αὐτῆς
ἐπὶ τὴν δύσιν τοῦ ἤλου».

« Οὐαὶ σοὶ Ἐπτάλοφε ἐκ τῆς
τοιαύτης ὀργῆς, ὅταν κυκλωθῆς
ὑπὸ στρατοπέδου πόλλου, καὶ κυ-
ριεύθῃς ὡς διὰ μικροῦ πράγμα-
τος καὶ τὰ ἠραιὰ σου τείχη
πεσσῶνται ὡς συκῆ ἡλάτω ».

« Τὸ σκῆπτρον θήσει, ἐν αὐτῷ
οὐ μείνη καὶ βάλῃ τὰ χεῖρας
αὐτοῦ εἰς τὰ ἄγια τοῦ θεοῦ θυσα-
στήρια ».

« Καὶ οὕτως δώσει ὁ ὄφις ὁ
κοιμημένος θάνατον ὀσίων καὶ
κροτήσῃ ἐπὶ τὴν Ἐπτάλοφον τὸν
ξάνθον γένος ἔτι ἕξ¹ καὶ πέντε ».

ἢ վեր, և ծածկեսցէ զմարդիկ...
և դարձուցէ գերեսս իւր թագա-
ւորն յարևմուտս, յայնժամ վայ-
քեզ Յօթնարուրդ » :

« Պատերազմուք եղիցին ի
նմա և ի քեզ, յՅօթնարուրդ,
և յայնժամ հրով այրեսցին շի-
նուածք վայելութեան քո, և բար-
ձրութիւն քո յերկիր յատակես-
ցի » :

« Եւ գաւազանն որսորդական,
որ էր ի գազանէն միարանեսցի
ընդ շան, ... և զտեղի սրբութեան
հալածեսցէ » :

« Եւ սաստեսցէ վիշապն լե-
զուաւ իւրով ի վերայ արանց
սրբոց և ի վերայ նշխարաց սրբ-
բոց. և մի ոմն փախուցեալ երի-
տասարդ՝ պատճառանօք որսոր-
դական գաւազանան, բերել զա-
ռաջին գաւազանն՝ որ անուանեալ
Սաղամանդար » :

Մէջ բերուած տեղերս՝ թէպէտև ունին իրարմէ նշանաւոր տար-
բերութիւններ, սակայն և այնպէս ցոյց կու տան մեզ երկուստեք
եղած իրական աղերս մի: Յունարէն բնագիրն ընդհանուր կերպով
նկատուած՝ աւելի հնութեան երևոյթ ունի քան թէ հայերէնն. սա-
կայն անոր մէջ կան և այնպիսի մասնաւոր կէտեր, որոնք այլազգ
չեն կրնար միարանիլ այնպիսի հնութեան հետ, առանց նորագոյն
խմբագրութիւն մ'ենթադրելու: Օրինակի աղագաւ, նախ անուանքս
Խաւայեղացի և Արարացի, որոնք կը պակասին¹ հայերէնի մէջ, և
միայն Եզրի Դ գրոց լատին թարգմանութեան և Մեթոդիոսի քով
կը գտնուին: Ենովքայ Տեսիլն ևս՝ յէջ 380. « Յարիցէ ազգն յետին
հարաւոյ՝ որդիքն Խաւայեղի բնակեալքն ի ծովագերին Արարիայ »

1. Այսինքն է՝ որոշակի յիշուած չեն. բայց հայերենի 244 իջում բառս՝ աչ-
պէի, եթէ դաւանանքի կամ դէնի իմաստով առնուած չէ՝ զխամայեղացիս կը նշա-
նակէ. այսպէս նաև 242 իջի « ազգք վիշապաձեք երևեսցին » բացատրութիւնն:

բացատրութեամբ՝ Դանիելի յոյն բնագրին հետ ունեցած խնամու-
թիւնը ցոյց կու տայ: Արդ, այս և ուրիշ մերձաւոր տեղիք, որով
իրրև արիադնեան թելով կը միանայ Դանիելի տեսլեան յոյն բնա-
գիրն՝ մէկ կողմէն Ենովքայ տեսլեան հայկական խմբագրութեան
հետ, և միւս կողմէն այլ Եղրասայ Դ. զրբին և Մեթողիոսի տեսլեանց
հետ, կը կազմեն այն բազմակնճիռ հանգոյցը, որոյ լուծմամբը՝ պիտի
լուծուի նաև Դանիելի տեսլեան յոյն բնագրի ծագման գաղտնիքն:
Այո՛, շարունակելով մեր քննադատութիւնը յոյն բնագրի վերայ,
ուրիշ նոր յարաբերութիւններ ևս կը յայտնուին Մեթողիոսի հետ:
Հետևեալ տեղին « Καί ἐν τότε βασιλεύσουσιν οἱ τέσσαρες υἱοὶ αὐτοῦ¹, ὁ
μὲν πρῶτος ἐν Ρώμῃ, ὁ δεῦτερος ἐν Ἀλεξανδρίᾳ, ὁ τρίτος ἐν Ἐπι-
ταλόφῳ καὶ ὁ τέταρτος ἐν Θεσσαλονίκῃ », այսինքն է. « Եւ յայն-
ժամ թագաւորեացեն չորեքին որդիքն նորա, մին ի Հռովմ՝ եր-
կրորդն յԱղեքսանդրիա, երրորդն՝ ի յԵթնաբլուրն և չորրորդն ի
Թեսաղոնիկէ », ուր կ'աւանդուի Հռովմուսի առասպելեալ չորս
որդուց՝ չորս այլևայլ քաղաքաց մէջ թագաւորելն, բառ առ բառ
նոյն է Մեթողիոսի² մէկ տեղւոյն հետ, և անտարակոյս անկէ
առնուած, միայն թէ հայերենի մէջ երեք են որդիքն և յանուանէ
յիշուած. յոյն բնագրի չորրորդն, որ կը թագաւորէ ի Թեսաղոնիկէ՝
նոր պարագայ մի կը յայտնէ, հետևաբար կասկածի կ'ենթարկէ
յոյն բնագրի հնութիւնը: Յէջ 118, ըստ Կրոստերմանի՝ հրատարա-
կութեան, կը յիշուին Φράγχους = Փռանկք և Ταρτάρους Թաթարք
կամ Թուրք անուանք. վերջին անունն առաջին խաչակրաց ժամա-
նակ հազիւ կարէ ծանօթ լինել աւ Յոյնս: Այս իսկ կը գտնենք Մե-

1. Այսինքն է Հռովմուսի, որոյ մասին խօսած է անմիջապէս քիչ յառաջ և
բոց կերպով:

2. Այստեղ դիտել կու տանք, որ զրուածիս գէթ հայկական խմբագրութեան
մէջ աւելի մանրամասն պարագաներով աւանդուած է այդ, և պատմականօրէն իսկ՝
արժեք ունի Բուզանդիոնի և Հռովմայ ամենահին յարաբերութեանց նկատմամբ: Ա-
հաւաստիկ այդ տեղին. « Զայս Բուզանդիաս (Βύσαζ) արար կին Հռովմոս, որ շինեաց
զՀռովմ, թագաւորն Հռովմայեացոց. և վասն անման գեղեցկութեան իւրոյ այնչափ
սիրեաց զնա, մինչև զՀռովմ քրով իւր շնորհեաց. քանզի այր էր առաւ յոյժ:
Ծնաւ Բուզանդիայ, ի Հռովմոսէ, երիս որդիս. անուն առաջնոյն՝ Արմալէոն, յանուն
Հռովմոսի, և երկրորդն՝ Ուրբանոս, և երրորդն Կլոդիոս. և երեքեան սոքա թա-
գաւորեալ կալան գերկիր. զի Արմալէոն՝ թագաւորեաց ի Հռովմ, յաթոռ նոր իւրոյ՝
և Ուրբանոս՝ ի Բուզանդիայ, յաթոռ մօր իւրոյ. իսկ Կլոդիոս՝ ի յԱղեքսանդրիա:
Եւ այսպէս ըմբռնեաց ազգն Խուսիթայ՝ զստերն Փուլայ թագաւորին Թեոպոստոյ
զԹագաւորութիւնս Հռովմոց, Մակեդոնացոց և Հելլենացոց »:

թողնուի Հայկ. խմբագրութեան մէջ, աւելի նոր պարագաներով: Թէ 120 հետեւեալ տեղին *Τότε ο χρόνος ως μὴν διαβήσεται, ὁ μὴν ὡς ἔβδομάς. ἡ ἔβδομάς ὡς ἡμέρα, ἡ ἡμέρα ὡς ὥρα, ἡ ὥρα ὡς στιγμή* διὰ τοὺς ἐκλεκτοὺς τοῦ θεοῦ καὶ δοῦλους αὐτοῦ, կը գտնուի բառ առ բառ նաև Ազգադրոնի տեսչեան մէջ, զոր յիշեցրինք յառաջագոյն: Արդ, եթէ Դանիելի յունարէն տեսիլն և Ազգադրոն՝ Մեթոդիոսէն բողոքովին անկախ գրուածներ ըլլային, թերևս ըսուէր, թէ սոցա մին՝ միւսէն փոխ առած է այս տեղիս. բայց որովհետև երկաքան չիւր իսկ, ինչպէս տեսանք և պիտի տեսնենք, Մեթոդիոսէն շատ կէտերու մէջ կախուսն ունին, ուրեմն կը հետևի, որ վերջինս իբրև աղբիւր ծառայած ըլլայ առաջին երկուքին:

Այս խիստ որոշ և վճռական ճշմարտութեանս դիմաց դժուարութեան մեծ լեռան մի կը հանէ նոյն իսկ Մեթոդիոսի Հայկական Թարգմանութիւնն իւր հետեւեալ տեղով. «*Եւ լինի մարգարէութիւն Դանիելի, որ ասէ. վաչ քեզ Եօրեարդար Բռազանդիայ, յորժամ այրին ի քեզ քազաշորեաց: Եւ այս լինի, զի ծնաչ մայրն Նեախնն, և յայնմ հետեւ շինի քաղաքն ժով, և երևի խաչն յեկեղեցւոջն միայն և սիւնն Կոստանդիանոսի մեծի.*»: Արդ, ինչպէս կանխաւ տեսանք, այս տեղւոյս առաջին երկու տողերն կը գտնուին իրօք բառ առ բառ Դանիելի տեսչեան յոյն բնագրի մէջ. ուստի եթէ Մեթոդիոսն է ստուգիւ Դանիելի տեսիլն յիշատակողն, իւր այս ծանօթ տեղով, ապա ուրեմն դժուար է, որ նոյնն իբրև աղբիւր ծառայած ըլլայ տեսչեանս:

Ըստ իս՝ ուրիշ կերպ կարելի չէ հարթել այս դժուարութիւնս, բայց եթէ ըսել, որ Մեթոդիոսի այս խմբագրութիւնս՝ Դանիելի տեսչեան վերջին խմբագրութենէն իսկ վերջ կատարուած է: Եւ ստուգիւ այս բանիս ունինք, — բաց ի այս տեղ յիշուած Բռազանդիա անուանէն, որ կը պակսի Դանիելի յոյն բնագրի մէջ, — այնպիսի զօրեղ փաստեր նոյն իսկ Մեթոդիոսի այս խմբագրութեանս մէջ, որոնք հետքն անգամ չենք գտներ նոյն հեղինակի միւս՝ այն է լատին և յոյն խմբագրութեանց մէջ: Օրինակի աղագաւ, այն տեղ ուր անորոշ կերպով և համառօտաբար կը խօսուի բիւզանդական այն կայսերաց մասին, որոնք կը պատկանին հերակլեան և իսաւրեան հարստութեանց, Հայկական խմբագրութեան մէջ՝ ընդարձակ գլուխներու բաժնուած յաւելուածներ եղած են՝ հետեւեալ այլաբանական մակագրութեանց ներքև, «*Այս է Արժիս քազաշորն, — Թազաշորն րրովնայ Չի, — Մանգաղ քազաշորն, — Եզն քազաշորն, — Մերկ քա-*

բաւորն, — Բարեմխո բազաւորն, — Քարց բազաւորն, — Չորաւոր
բազաւորն, — Վասն պիղծ կնոջն, — Վասն պիղծ Նեաիւն », և այլն :

Ես վերջը կը թողում լուծել Մեթողիոսի այս խմբագրութեան
մանր պարագաները և ժամանակը. այլ այստեղ դիտել կու տամ
միայն, թէ Դանիելի է. տեսլեան հայկական թարգմանութիւնն իսկ՝
այսպիսի այլաբանական ձևոց գործածութեամբ որչափ որ յոյն բնա-
գրէն կը տարբերի, նոյնչափ ևս կը թուի մերձենալ Մեթողիոսի
վերև յիշածս հայերէն խմբագրութեան : Օրինակի աղագաւ, գա-
զանն, — որսորդական գաւազան, — վիշապն, — առիածն, — շռանն, —
կորիանն, — այրիսն, այլագգիսն, — Սաղամանդար, — ժերն, — Որդո-
ղիոս, — Եթրևարդար, — կիկնն երկրակոխեալ, — կոյսն պիղծ, — Նեան,
և այլն : Արդ, դիտելով մէկ կողմէն, որ այս այլաբանական ձևերէն
չատերն կը պակասին այժմու յունարէն բնագրի մէջ, և միւս կող-
մէն այլ՝ որ ասոնք յատուկ են սեմական լեզուով մեզ հասած ուրիշ
անվաւերական գրութեանց, որպիսիք են Նորայ Դ գիրքն և Դիլմանի
հրատարակած Ենովքայ գիրքն¹. ուրեմն կրնանք հետևեցնել աստի,
թէ այժմու յունարէնն՝ կամ բոլորովին տարրեր ըլլալու է այն խմբ-
ագրութեանն, զոր հայ թարգմանիչն ունէր ի ձեռին, և կամ եր-
կուքին իսկ ծանօթ էր սեմական լեզուով գրուած Դանիելի տեսիլ
մի, յորմէ օգտուած ըլլան, իրարմէ աւելի կամ նուազ չափով ըստ
քմաց խմբագրողաց :

Այս երկու կէտերուս նկատմամբ մեծ նշանակութիւն ունի Լուիս-
պրանդ Սարկաւազի վկայութիւնն, զոր մէջ կը բերէ Փարբիկիոս՝
իւր հմտալից երկասիրութեան մէջ. այսինքն է, Լուիսպրանդ՝ յամի
Տեառն 968, Ռթոն կայսեր կողմէն առ կայսրն Նիկեփորոս Փոկաս
ի Կ. Պոլիս դեսպան գացած ժամանակ, յետ ծանուցանելոյ, թէ
ինչո՞ւ համար կայսրն Նիկեփոր՝ Հանդերձ բանակով մտաւ յԱսորես-
տան, կը յաւելու, թէ խնդրեմ ուշ դնել, զի Յոյնք և Սարակինոք
ունին գիրս, զոր Օրձսեւս = Գուշակս կամ Տեսիլ Դանիելի կ'անուա-
նեն, իսկ ես Սիբիլիանս կ'ախորժիմ կոչել զայն : Յայսմ գրուած է, թէ
բիւզանդական կայսրներէն իւրաքանչիւրն՝ որչափ տարի պիտի թա-
գաւորէ, և թէ Ի՛նչ պիտի Հանդիպի անոր թագաւորութեան ժամա-
նակ, խաղաղութիւնն արդեօք, թէ կռիւ : Ուստի Նիկեփորի համար

1. Ուր յաւտի պատմական անձեր և ժողովուրդներ, գոխանակ իրենց յատուկ
անուանք՝ այլաբանորէն ցլոս, իոյի, քոյլոս, իլոս, սոլթոս, սրձոս, և այլն, կէ՞ծ
անուններով կը յիշուին, իրենց առանձնապատկութեանց համաձայն :

2. Տես Codex pseudoepigr. Vet. Test. T. I, p. 1136.

գրուած է, թէ անոր ժամանակ Ասորեստանեայք¹ չպիտի կարենան դէմ դնել Յունաց, և թէ կայսրն՝ Կասարիէն Կասարիէն պիտի մեռնի, և անոր յաջորդին օրով Ասորեստանցիք պիտի զօրանան և մինչև Քաղկեդոն պիտի գրաւեն. Դիալիսիմ² կը համարի թէ Լուսիտպրանդէն յիշուած գուշակութիւններն՝ նոյն ըլլալու էին անոնց հետ, որոնք կը գրուուին, Լեւոն Իմաստասէր կայսեր ընծայուած Քոռալկոռքեանց³ մէջ, ի մասին կայսերաց: Նոյն հեղինակն, Զոնարասայ 12 իջի ծանօթութեան մ'առթիւ, կը գրէ թէ Պարիսու Ազգ. Գրատան մէջ գտնուող Զոնարասայ նշանաւոր հատակտորի մի համաձայն Դանիելի գրութիւնն, որ սակայն օպտասիւն կը կոչուի, Ծօթանասնից ձեռքով յունարենի թարգմանուած է, և թէ կ'ըսուի ի դիմաց Զոնարասայ, թէ « Ի սրբազան գիրս այս գտանէր ևս և Տեսիլն Դանիելի մարգարէի (Δανιήλ τοῦ προφήτου ὀπτασιών). գրութիւն կիրթ և հրաշքան, յորում պատմին և սքանչելիք, որ լինելոց են մինչև ի կատարած. այսպէս և Հերակլեայ թռին Կոստանդեայ կայսեր ընդդէմ Մուսվեայ ծովամարտն և պարտութիւնն: Յայսմ ժամանակի թարգմանեցաւ գրութիւնս նաև ի լեզու արաբական, զոր ասպա, յամի Տեառն 1114, Ալեքսիս ոմն Բիւզանդացի թարգմանեաց ի հռովմայեցի (այսինքն է յոյն) բարբառ »:

Այս հատակտորս, — ըստ որում մէջ բերուած է Փարրիկիոսի յիշեալ երկասիրութեան 1117—1119 էջերում, — եթէ ստուգիւ Զոնարասայ համարիւք, կը ցուցնէ մեզ, թէ ԺԱ դարուն Դանիելի Տեսիլեան կարծեցեալ երրայական բնագիրն և կամ անոր վրայէն եղած յոյն թարգմանութիւնն արդէն անյայտացած էին, որով Ալեքսիս բիւզանդացին ստիպեցաւ յարարեանէ յեղու ի հռովմայեցի, այսինքն է՝ ի յոյն բարբառ: Սակայն՝ ըստ իս՝ յամին 1114 կատարուած յունարէն թարգմանութիւնը յիշող հատուածի հեղինակն՝ դժուար է որ Զոնարաս ըլլայ, այլ անկէց շատ վերջ եկող անծանօթ մէկն: Իսկ Լուսիտպրանդ Սարկաւագի վկայութիւնն մեծ նշանակութիւն ունի Դանիելի տեսիլեան նկատմամբ, բայց այդ տեսիլն չկարէր նոյն ըլլալ ոչ այժմու յունարենի և ոչ այլ Քէդորը Զահնէն ենթադրուած սեմական բնագրի հետ: Եւ յիրաւի, նախ դիտել կու

1. Այս անուամբ հասկանալի են կամ Աբաբացիք կամ Սիւնուքեանք:

2. Այս գրուածիս խորագիրն է, Վենետիկ Ս. Մարկոսի Զեռագրատան յոյն օրինակին (Clas. VII. 3) մէջ. Το σοφωτάτου βασιλέως κυρίου Λέοντος οτίχοι ιαμβικοί Χρησώδεις επί τῆ μεγάλοπολει Κωνσταντινίου ληφθέντες ἐκ τῶν τοῦ προφήτου Δανιήλ Ὀρασιών.

տանք, որ Դանիելի Տեսլեան սեմական բնագիր մի, իբրև ինքնուրոյն գրութիւն, — եթէ երբեմն գոյութիւն ունեցած և Սօթանասնից ձեռքով թարգմանուած ըլլար, — նոյնն ի հարկէ ծանօթ ըլլալու էր նաև Հիպպոդիտեայ բոստրացոյ. սակայն վերջինս՝ բնաւ չիշեբր Դանիելի անվաւեր Տեսիլ մի, այլ մանաւանդ թէ նա որոշակի իւր Տեսլեան մէջ չորից գազանաց մասին տուած մեկնութիւնքն իսկ՝ Դանիելի կանոնական տեսլեան վրայ կը յօրինէ, մէջ բերելով բնագիրը. « Սո Դանիէլ տեսանէի ի տեսլեան գիշերոյ, և ահա չորք հողմք երկնից բաղխէին զծովն մեծ », այլովքն հանդերձ: Երկրորդ, Դանիելի մեզ ծանօթ տեսլեան մէջ ո՛չ Քաղկեդոնի յիշատակութիւն կայ և ոչ այլ նիկեփոր կայսեր: Ասոր թագաւորութեան ընծայուած եօթն տարիներն, և յետ այնորիկ բարբարոս ազգաց արշաւանքն՝ հռովմէական արծուոյն վերայ՝ որոչ կերպով կը գտնենք ոչ թէ Դանիելի, այլ Մեթոդիոսի քով միայն, այսպէս: « Յելանելն է. դարուն էձ. ին և ի սկսանել Ըձ. ին՝ յայնժամ պակասէ թագաւորութիւն յազգէն Հռոմոց՝ յաճն եօթն. յայնժամ երանկ բարբարոս բռնորդն, և աշերնկ գերնկ զամենայն երկիր »: Ուստի յայսմ ևս Մեթոդիոս կու գայ ի հանդէս իբրև ներկայացուցիչ Դանիելի տեսլեան: Հետևաբար, մէկ կողմանէ ի նըկատի առնելով Դանիելի տեսլեան այլևայլ լեզուներով եղած խմբագրութիւններուն, և նոյն իսկ յունարէն օրինակաց, իրարմէ տարբեր մակագրութիւններն, իսկ միւս կողմէն այլ անոր միջնադարեան առանձնայատկութիւնքը, կրնանք ըսել, թէ անոնցմէ հնագոյն կարծուածն՝ է դարէն անդին շանցնիր, ինչպէս նորագոյնն այլ՝ խաչակրաց ժամանակէն ասդին: Դանիէլ տիտղոսն՝ ուրիշ աւելի բան չէր նշանակեր՝ բայց եթէ սոսկ յարաբերութիւն մի, այսինքն թէ՛ Դանիելի մարգարէութեան է. գլխոյն¹ վերայ ըստ կամս յերկրուած է այն:

Տեսլեանս իբրև սկզբնագիր եղած է, ըստ իս, երբայցեբէն լե-

1. Յերաւի, համեմատելով Դանիելի մարգարէութեան է գլխու էական կետերը՝ Եզրի Դ. զբէի և Դանիելի է. Տեսլեան գլխաւոր առաջինն ինտ՝ բոլորովն նոյն կը գտնենք. այսինքն է, իւրաքանչիւրի մէջ ևս հռովմէական արծուոյն բարձրանալուն և անկման՝ կը յաջորդեն նախ Կեռին թագաւորութիւնն և ապա Մեսիայի գալուստն և անանցանելի թագաւորութիւնն: Իսկ մնացեալ մանրամասնութիւնքն, զորս կը գտնենք վերջնոցս մէջ միայն, սեփական արգելեք են այն ժամանակի քաղաքական կացութեանց, որոց մէջ կը գտնուէին Եզրի և Դանիելի է տեսլեանց հեղինակներն, և զորս իբրև ապագայ լինելիք բաներ՝ գուշակութեան կերպարանօք ներկայացուցեր են: Նաև ըստ բազում գլխոց երկուստեք եղած համեմատութիւնն կատարեալ է, և չկայ բնաւ պատճառ տարակուսանաց:

զուով գրուած Եզրասայ Դ. գրոց՝ Թ և ԹԱ գլուխներն, որուն Հրեայ հեղինակն առաջին անգամ փորձ փորձեց Դանիէլեան չորրորդ դազանին կամ Թագաւորութեան նոր մեկնութիւն մի տալ, ազգասիրական մասնաւոր ձկտումով մի, խօսեցնել տալով հրեշտակին առ ինքն՝ այսպէս : « Արծիւն, որ ելանէր ի ծովէն, չորրորդ Թագաւորութիւնն է, որ յայտնեցաւ եղբօր քում Դանիելի, այլ ոչ յայտնեցաւ ննա այսպէս՝ որպէս և ես յայտնեմ քեզ » : Այո՛, հեղինակիս հետեւալ բացատրութենէն իսկ, ուր կ'ըսուի . « Յերրորդ ամի, զկնի ամենայն յայտնոչքեան, որ տուան Դանիելի մարգարէի, առաքեցաւ ի Տեառնէ Դարբիէլ հրեշտակն, առաքեալ առ նա յառաջագոյն... ցուցանել զկատարումն աւուրցն, որ յինեղոց եւ զկնի գալստեան Բաբելոն », յայտնի կը տեսնուի, թէ ինչպէս տեսչեանս հրեշտակն՝ յառաջագոյն և առ Դանիէլ զրկուած էր, այսպէս և տեսիլս՝ « զկնի ամենայն յայտնութեանց Դանիելի », այսինքն է, յետ գալստեան Քրիստոսի և Դանիելի մարգարէութեան է՞ր զլիսում յայտնուածին վերայ ըստ կամս յօրինուած է անտարակոյս : Սակայն և այսպէս՝ նա յաջողեցաւ իւր ձեռնարկած գործին մէջ, և մեսսիական յոյսերով խրախուսեց հռովմէական Աջ կայսերաց բռնակալութիւններով հարստահարուած իւր ժողովուրդը : Այս գրուածքս, որուն ամպ անծանօթ գրիչներ՝ նորանոր յաւելուածներով քրիստոնէական կերպարանք և գոյներ տուին, ունեցաւ ծանրակշիռ հեղինակութիւն և ազդեցութիւն յաջորդ դարերուն վերայ, և հնագոյնք անգամ եկեղեցական Հարց՝ ի կատարածի աշխարհիս գալիք նեղութեանց, Նեոխի Թագաւորութեան և Քրիստոսի գալստեան մասին գրած ճառերու մէջ՝ այս գրուածքիս հետեւեցան : Այս կէտս յայտնի կ'ըլլայ համեմատութեանց ձեռքով :

Եկեղեցական հարց անուամբ ինձ ծանօթ գուշակական գրութեանց մէջ՝ Հիպոպոլիտեայ բոստրացւոյ Վլասն կատարածի աշխարհիս, վասն Նեախնն և երկրորդ գալստեան Տեառն մերոյ Թիսուսի Քրիստոսի = Περὶ τῆς συντελείας և περὶ Χριστοῦ καὶ Ἀντιχριστοῦ մակագրուած գրուածոց հեղինակին ծանօթ կ'երևի նաև Եզրի Դ գրոց մէջ եղող դանիէլեան տեսիլն . մանաւանդ թէ այս, արդարև, հնութեան բնորոշ յատկութիւններ ունեցող գրուածքիս հեղինակն՝ առաջին անգամ ընդարձակած և նոր ձևի վերածած է Եզրի Թ և ԹԱ գլուխները : Ասոր յայտնի նշան է Եզրի քով յիշուած փոքր եղլիւրին, առիծին, մարդակերպ կենդանւոյն և ընտրելոց Աստուծոյ՝ Նեոխ կողմէն կրելիք նեղութեանց մասին եղած նկարագիրքն, որոնք յաճախ բառական կերպով իսկ իրարու կը համաձայնին : Խարեպա-

տիր Նեոին, — զոր Հիպպոլիտ ուղղակի սատանայ կ'անուանէ, — և անոր գործոց և կեղծ առաքինութեանց ըրած զուգակշիռն՝ Քրիստոսի և անոր տնօրինական գործոց հետ՝ բողոքովին նոր է Հիպպոլիտեայ քով. և այս խոտորումս դիտմամբ ըրած է Հեղինակս՝ սպառազինելու համար իր ժամանակի հաւատացեալ ժողովուրդը՝ Մանիքեցոց և Գնոստիկեան կախարդասարաց ձեռքով՝ աչք խաբող հրաշագործութեանց դէմ: Քաղաքական պատճառք և պատահարք այնքան ի նկատի առնուած չեն, մանաւանդ թէ յաճախ կրճատուած են: Բ. դիտելով, որ Դանիելի է. Տեսլեան հետ աղերս ունեցող տեղիքն՝ Հիպպոլիտեայ քով իսկ կը գտնուին, և աւելի ընդարձակագոյն պարագաներով կու գան և Դանիելի տեսլեան Ետեղեաց հետ կը նոյնանան, այլ ևս չենք տարակուսիր եզրակացնելու, թէ ստուգիւ Հիպպոլիտեայ գրուածն՝ եղած է իբրև երկրորդ խմբագրութիւն մի եզրի քով եղած Դանիելի անվաւեր տեսլեան, ինչպէս մաթեմատիկոսն չի տարակուսիր հետեցնելու, թէ ուղիղ եռանկեան մի՝ երկու անկիւնքն հաւասար են իրարու, որովհետև կը հաւասարին երրորդի մի:

Ինչպէս եզրի ընծայուած դանիելեան տեսլին՝ Հիպպոլիտեայ գործին մէջ աւելի մանրամասն և ընդարձակ ծաւալ ստանալով՝ ընդարձակագոյն աղերսներ ևս ցոյց կու տայ Դանիելի է Տեսլեան հետ, այսպէս այլ բաղդատմամբք արդէն տեսանք և պիտի տեսնենք ակնբերև, որ սորա մէջ եղած ուրիշ շատ պատմական քաղաքական և այլ նորութիւններն¹, որոնք առաջնոց մէջ կը պակսին, կը գտնուին ընդհակառակն Մեթոդիոսի անուամբ մեզ հասած և բազմիցս հրատա-

1. Այո՛, նոր յաւելուածներ են՝ ըստ իս՝ Արաքացոց և խուժաղուժ ազգերու յունահռոմէական արժուոյն հետ ունեցած կոնկրետ և իրարու դէմ ունեցած դարձադարձ յաղթութիւններն և պարտութիւնքն, ծովու և ցամաքի վերայ: Նոր են այն կայսրութեան վերաբերեալ գաւառաց և քաղաքաց, այսինքն են, կիլիկիոյ, Թրակիոյ, Իտալիոյ, Հայոց, Ափրիկէի, Ասորիքի, Սիկիլիոյ, Սարդիւնիոյ, Բիւլթանիոյ աւերմունքն: Նոր են Բիւզայ և Բիւզանդիոնի արարուածոց յիշատակութիւնքն: Նոր են չորից ազգաց և ինքնակալութեանց, այն է՝ Եգիպտոս-եթովպականին, Պարսից, Հռովմայեցոց և Յունաց ազգախառնութիւնն և անոնց արարուածոց մասին եղած աւանդութիւնքն: Նոր են Աղեքսանդրի դրան բացման (այսինքն է պահակին ձորայ) և 12 մարդակեր ազգաց (այսինքն է Գթաց, Ալանաց, Աւարաց, և Նեոտոլաց) յարձակումն յարեմուսս, այլովք հանդերձ: Նոր են Հռովմուլուսի երեք որդւոց մասին աւանդուածներն, այսինքն է Արժալտի՛ որ կը թագաւորէ ի Հռովմ, Ուրբանոսի՛ ի Բիւզանդիա: Նոր են Տիբերիոս խաղաղասէր թագաւորի՛ Ս. Խաչափայտն ըրուած դէմ տանելուն և հոն մեռնելու արարուածներն: Նոր են կոմսենեան հարստութեան պատկանող թագաւորաց և անոր դադարման մասին աւանդուածներն, և մինչև անգամ Խաչակրաց՝ Ոսկեղջիւրէն ներս մտնելն:

րակուած Տեսլեան մէջ: Արդ, այստեղ ևս բաղդատութեան միջին եզրը պիտի ունելով ի ձեռին՝ կարծեմ թէ չենք սխալիր եզրակացը նելու, թէ Մեթոդիոսի Պատարացոյ ընծայուած գրուածն եղած է իբրև երրորդ խմբագրութիւն դանիելեան անվաւեր տեսլեան, և թէ այժմու է. Տեսիլն՝ այս խմբագրութենէս իսկ մեծապէս օգտուած է, ինչպէս նաև Ենովբայ տեսիլն:

Սակայն կարևոր կէտ մի, որոյ մասին այլևայլ դժուարութիւններ ընդ առաջ կ'ելնեն, այս է. Արդեօք Մեթոդիոսի ընծայուած Թայտնոքթիանն՝ ի սկզբանէ ի վեր այս կազմութիւնն ունէր, թէ ընդհակառակն բոլորովին տարբեր: Հայերէն խմբագրութենէն նախաբար նշանակած հատուածներով արդէն ցուցինք, որ դոքա յոյն և լատին բնագրաց մէջ կը պակսին, հետևաբար՝ յետոյ ներմուծուած են: Սակայն այժմ յառաջ երթալով, կը վստահիմ ըսել, թէ գրութեանս նոյն իսկ յունարէն սկզբնագիրն՝ այժմեան պարունակութիւնը չունենալու էր, այլ կը կայանար գուշակութեան ձևով ներկայացնել միայն Հոնաց կամ Հեփթաղաց հռովմեայունական սահմաններուն վերայ արշաւելն, և քրիստոնեայ ազգաբնակութեանց վերայ հասուցած անլուր նեղութիւններն և աւերմունքը, որոնցմով այս միահեծան կայսրութեան վերջն եկած հասած կը համարուէր՝ ըստ հասարակաց կարծեաց, և յուզուած մտքերն՝ պէսպէս տարակուսանաց մէջ կը ծփային, յիշելով մանաւանդ Իանիելի մարգարէութեան անուտ պատգամը չորրորդ գագանին, այն է հռովմէական կայսրութեան կատարածի մասին: Հետևաբար՝ գրուածքիս գէթ հնագոյն մասին հեղինակն պէտք է, որ Փ-Երէ դարում ապրող մէկն ըլլար, վասն զի է դարուն կամ անկէց վերջ ապրող մէկու մի համար նշանակութիւն չունէր՝ այնքան խնամքով բանալ Աղեքսանդրի առասպելեալ դոններն և նկարագրել բարբարոսաց յարձակմունքը դէպ յաբեմուտս, որոնք արդէն դարեր յառաջ կատարուած էին և արևմտեան կայսրութիւնն իսկ կործանած և ամբողջ Իտալիա գրաւած էին:

Մինչև է դար Մեթոդիոսի այս գրուածս՝ սոյն վիճակին մէջ կը չրջէր արևելեայց մէջ, իբրև դանիելեան տեսիլ, և ամենուն ուշադրութեան առարկայ դարձած էր. վասն զի նորա կարծեցեալ գուշակութիւններն պատմականօրէն իսկ կատարուած էին, ի բաց առեալ յունահռովմէական կամ արևելեան պետութեան կործանումն և Նեոի գալուստն, որոց դեռ սրտատրոփ կը սպասուէր: Բայց երբ, Էրէ դարուն, մէկ կողմէն Արաբացիք ասպարէզ եկան, և հետ զհետէ տիբելով Եգիպտոսի, Ափրիկէի, Պաղեստինու, Ասորիքի, Միջերկրական

կղզեաց, և Հասան մինչև ի Բիւթանիա և Քաղկեդոն, իսկ միւս կողմէն այլ թուրքեր՝ Փորուն Ասիոյ և Սև ծովի կողմէն խուժեցին Կ. Պոլսոյ վերայ, և Ստորին կայսրութիւնն՝ իւր բարոյապէս և կրօնապէս ապականեալ մթնշորտով գլխովին նեղը մտած՝ յուսահատարար կը մրցէր, այն ժամանակ դարձեալ յիշելով դանիելեան մարգարէութիւնը՝ սկսաւ բազմանալ զուշակութեանց թիւն. մանաւանդ երբ քրիստոնէական սրբութիւնները պաշտպանելու Համար խաչակրաց պատրաստութիւնք իսկ ամէն կողմ լսելի եղան: Այս դարերուս մէջ և այսպիսի առիթներով կրկին և երեքկին խմբագրուեցան մեթոդիստեան Գուշակութիւնքն, որով կազմուեցան իրարու նման, բայց իւրարմէ աւելի կամ նուազ պարունակութեամբ զուշակական գրուածներ, որպիսիք են, օրինակի աղագաւ, Մեթոդիոսի այժմու հայկ. խմբագրութիւնն, զոր կը ներկայացնէ մեր մատենադարանի ի Ոսկեփորիկն, Ենովջայ, Դանիելի Է Տեսիլն, Լեւոն Խմաստասէր կայսեր, Ագազրոնի և Յովհ. Կոզոն վարդապետի Տեսիլներն և Յայնտութիւնքն:

Մեր այս կարծեաց ի Հաստատութիւն՝ ունինք ընդարձակ ապացոյցներ, զորս կը ջանանք ըստ կարելոյն ամփոփ կերպով մէջ բերել: Ա. Ուշի ուշով ուսումնասիրելով այս գրուածներս, տեսանք արդարև, որ նոցանէ իւրաքանչիւրն գլխաւորապէս երեք որոշ շրջանի բաժնուած է, այսինքն Գ-Դ դար, Դ-Էրդ, և Հուսկ ապա Է-Թրդ դարու վերջերս: Առաջին շրջանին մէջ բոլոր ակնարկութիւնները կը դառնան մեծն Կոստանդինոսէն և Կոստանդնուպոլսի շինութենէն սկսեալ անոր յաջորդ կայսերաց և կայսերութեան՝ բարբարոսաց Հետ ունեցած պայքարներուն և ունեցած յաջողութեանց և ձախորդութիւններուն վերայ, առտնին եղած պատահարներով և խռովութիւններով հանդերձ: Երկրորդ շրջանի մէջ բիւզանդական կայսրութեան մրցութիւնքը կը նկարագրուին Պարսից վերջոտնեալ և արաբական անվերջ յարձակմանց դէմ, որ մերթ յաղթող և մերթ յաղթուած՝ կը տարուբերի դանիելեան մարգարէութեան նժարի և բիւր անձկութեանց մէջ: Երրորդ շրջանին մէջ՝ կը ներկայացուի երերեալ և ապականեալ կայսրութիւնն՝ այլազգիներէն նեղուած և Հարստահարուած, իշխանական գաւազանը առտնին վէճերով պատառուած և թագաւորութիւնն ի վերջ կործանման հասած, ըստ այնմ. « Եւ յայնժամ փոխեցի թագաւորութիւն քօ, և եղիլիր մնացեալ յապականութեան ախտից և ի սովոյ »: Ապա վայեր միայն կը կարգացուին Եսթնարուր Բիւզանդիոնի վերայ, և նեոի բռնական տիրապետութիւնն առ դուրս հասած: Այս տեղ է, որ ըստ Մեթոդիոսի, ըստ Ագազրոնի

և նայն իսկ ըստ Դանիելի տեսլեան յոյն բնագրին՝ կը լսուին Դա-
 տարոյս = Թաթարք և Փոթարոյս = Փռանկը անուանեան, այսինքն՝
 Իաշակիբը՝ որք կը պատրաստուին ընթանալու զինու զօրութեամբ
 այլազգեաց դէմ, և ազատելու քրիստոնէութիւնը իր մօտալուս
 վտանգէն:

Բ. Դանիելի Տեսլեան չճշտէ և Մեթոդիոսի քով յիշուած Մրդ-
 չապ և այլ արաբական անուանքն իսկ՝ երկրորդ շրջանը կը յիշեցը-
 նեն մեզ:

Գ. Լուիսպրանդէն յիշուած գրութեան՝ նիկեփոր Փոկաս կայսեր
 և Թրքաց արշաւանքին վերաբերեալ տեղոյն մէջ իսկ, — զոր գտանք
 Մեթոդիոսի քով բառ առ բառ, — որոշակի նշանակուած թուականն,
 այն է՝ ամն Տեսուն 800, կը հաստատէ թէ այդ գրութեան վեր-
 ջին խմբագրութիւնն սոյն թուականէն այլ շատ վերջ կատարուած
 է. վասնզի այդ տարին ապրող մէկն՝ չպիտի կարենար գիտնալ անկէց
 7 տարի վերջ « յազգէն Հոռոմոց պակասեալ թագաւորութիւնն »,
 և ոչ իսկ յետ ժամանակաց՝ « բարբարոս Թուրքին ելքն և բոլոր եր-
 կիրը աւերելն և գերելն »:

Այս այսպէս ըլլալով հանդերձ, թերևս առարկուի դարձեալ.
 Արդեօք, Ենովքայ և Դանիելի Տեսիլներն ևս այլևայլ ժամանակաց
 մէջ յաջորդաբար խմբագրուած և այդ ծաւալն ստացած են, թէ
 ընդհակառակն մեթոդիոսեան վերջին խմբագրութենէն վերջ և անոր
 վերայ շարադրուած: Հարցմանս առաջին մասի նկատմամբ՝ ես չկա-
 բեմ Թէոփոր Զահնի և Հ. Գալէմբեարեանին համաձայնիլ, դիտելով,
 որ Տեսլեանս յոյն բնագիրն՝ եթէ այժմ իսկ հազիւ թէ երեք թերթ
 քանակութիւն ունի, ապա ուրեմն որքան աննշան եղած պիտի լի-
 նէր ի սկզբան անդ, եթէ յետոյ կրկին և կրկին խմբագրու-
 թեանց ենթարկուած համարինք. հետևաբար, այնպիսի մի աննշան
 պատառիկ՝ ոչ ինքնուրոյն գոյութիւն ունենալու էր, և ոչ իսկ
 նախնեացմէ իբրև գուշակութեան գիրք մի՝ ի շարս անկանոն
 գրուածոց յիշուելու: Ուստի նոքա Մեթոդիոսի, Հիպպոդիտեայ և
 Եզրի Դ. զրքէն իբրև բոլորովին անկախ և ինքնուրոյն գրութիւն-
 ներ եղած չեն, ըստ իս, գէթ Է-Ը դար յառաջ, այլ այս ժամա-
 նակամիջոցիս նոր յօրինուած: Նոյն իսկ կեղծ Աթանասէն և Նի-
 կեփորոսէն յիշուած Դանիելի Տեսիլն իսկ՝ ուրիշ բան չէ ըստ իս-
 կութեան, բայց եթէ Մեթոդիոսի նախկին խմբագրութիւնն, որ
 Դանիելի ևս կը կոչուէր իբրև անոր մարգարէութեան վերայ տրուած
 նոր մեկնութիւն մի:

Դ. Մեթոդիստի և Ազադրոնի Հայկական խմբագրութիւններն¹, զորս ես կ'ախորժեմ յոյն բնագրին իբրև կատարելագոյն և վերջին ներկայացուցիչ անուանել, դեռ աւելի վճռական կերպով կու գան Հաստատել իմ այս կարծիքս, և բիզանդական կայսերաց և նոցա արարուածոց վերաբերեալ մանրամասնութիւններով՝ կը պայծառացընեն նոյն իսկ Ենովքայ և Դանիելի Տեսլեանց ստուերակողմանքը:

Խմբագրութեանցս առաջինն, որոյ սկզբնաւորութիւնն իսկ Մեթոդիստի մեզ ծանօթ յունարէն բնագրէն կը տարբերի, ես չեմ կարծեր, որ Հայազգւոյ մի ձեռքով և ըստ քմաց այդ կերպարանքն առած ըլլայ, վասն զի Հայ ազգին և պատմութեան վերաբերեալ նշանաւոր բան մի չընծայեր. այլ ընդլայնեալ թարգմանութիւն մ'եղած կ'երևի՝ կամ սեմական և կամ լաւ ևս յունարէն մի այլ բնագրէ, ինչպէս ցոյց կու տայ մեզ անոր խորագրի մէջ՝ « Մեթոդիոս Պատրիստիոս եպիսկոպոսի », և այլն, յունաձև սեռականն: Այս տեսլեանս Հնագոյն մասն՝ Ը դարուն թարգմանուած է Ստ. Սիւնեցւոյ ձեռքով, և Մեսրոպ Երէց Ժ. դարուն անկէց ընդարձակ քաղուածներ ևս ներմուծած է Ներսիսի տեսլեան մէջ. այս մասին բնաւ տարակոյս չի վերցներ: Տարակուսական մասն կը սկսի 39 իջում, յիսկնփոթիկն ի: Այս մասին յետնութիւնն՝ առանց երկբայութեան է, զի 49 իջում կը յիշուին որոշակի կովնենեան Հարստութեան վախճանը և թագաւորութիւնն ի « Նիկոմիդիա », այսինքն՝ ի Նիկիա փոխադրուիլն, որ եղաւ յամի Տեառն 1204: Մանգաղ թագաւորի յիշատակութեամբ, որ կը թագաւորէ միայն 3 ամիս, և որուն թագաւորութեան օրը կը կոտորուին 42000 հոգիք, ցոյց կու տայ մեզ ըզրարդան կայսրը: Ասկէց վերջ գոց կերպով եղած թագաւորաց նկարագիրներն՝ մթին են և մեկնութեան կարօտ, մանաւանդ բարեմիտ թագաւորին, որ կ'ունենայ « կին չար և պիղծ և այրի », որ կ'առնու

1. Խմբագրութեանցս առաջինն, այն է Մեթոդիստին, ըստ որում կը գտնուի ի Ռօմիոսի մէջ՝ հետեւեալ խորագրաւ. « Սուբ հոն Ժրոյ Մեթոդիոս Պատրիստիոս եպիսկոպոսի: Ի Մեթոդիոսի Դանիելի Լուսարեմի, զը սուրբ յեթ Բանից Էւրոց, Ի Ռիւսթիէի տեսլեանն լըրից հոգւոցն և լըրից Բաղնաշն, սոյնի պատրիստիոսի լըրից Բուսլու Բագաւորացն, և լուսն Բրիւլայ հիմնադրացն և յեթն յամանայն և Երեւանիոցն որ լինելոց է, և լուսն Բագաւորացն որ գոթոգրեցան, և լուսն Բալտիան Բրիւստիոսի Արաբոյ Ժրոյ », երկրորդէն աւելի նոր կ'երևի. որովհետև որոշակի կը յիշուին « Փռնանկը » և խաչակիր իշխանք արևմտից, որոնք միաբանելով Յունաց կայսեր նա կը մտնեն ի կ. Պոլիս « ընդ Ռսկեղուսն », որ նոյն և ընդ այժմու Ռօմիոսի հոշուած նաւահանգստին. մինչդեռ Ազադրոնի խմբագրութեան մէջ, մեր թիւ 102 դրչագրի Համաձայն, խօսք չկայ այդ մասին:

գթագաւորութիւն և կը ծնանի զՆեոն : Յամենայն դէպս՝ այս գրուածիս մէջ այն այլաբանական խորագրաց ներքև, — զոր յառաջագոյն յիշեցինք, — ներկայացուած կայսրներն՝ իրենց վերաբերեալ արարուածներով՝ քաջ կը համաձայնին Տնովքայ և Դանիելի տեսեանց մէջ ակնարկուածներուն . և որովհետև այսպիսի համաձայնութիւնք բնաւ դիպուածի արդիւնք չկարեն լինել, ուստի կը հետևի, որ երկուտեք եզած ըլլայ հասարակաց աղբիւր մի : Այս աղբիւրս ըլլալու է, ըստ իս, կամ Լեւոն Իմաստասէր կայսեր անուամբ ճանչցուած, և ըն ՏՕՄ ՏՕՍ բրօքիտու Δανιηλ δπάσεωv, այսինքն է՝ ի գոռչակոթեանց Դանիելի յորջորջուած գրուածն, և կամ Լուիսպրանդէն յիշուած Սարակինոսաց ծանօթ գուշակական գրութիւնն : Վերը յիշուած չճնճօճ, Միշապ¹ անուններէն զուրս՝ ուրիշ սեմական առանձնայատկութիւնք և, որ կը տեսնուին հայկական թարգմանութեանս մէջ, նպաստաւոր կ'երևին աւելի եզրակացութեանս վերջին մասին : Այս տեսակետով իսկ, — ըսելն աւելորդ է, — կարի մեծ ըլլալու է, ի հարկէ, թարգմանութեանս նշանակութիւնն . վասն զի կը ներկայացնէ մեզ անուղղակի Մեթոդիոսի յայտնութեանց և կամ Ք դարու խմբագրութիւն մի, որ ժ դարուն վերջերը դեռ կը շրջէր ի ձեռս Սարակինոսաց, և հաւանօրէն օժանդակուած էր հետևեալ գրութեանէն, որուն վերայ պիտի խօսինք անմիջապէս՝ ընդարձակաբար :

Իսկ գալով երկրորդին, այն է Ագադրոնի մակագրուած գրութեան, որուն ընդարձակ խորագիրն արդէն մէջ բերինք ի վեր անդր, յամին 1343 գրուած մեր մատենադարանի թիւ 1002 ձեռագրի համաձայն, յայտնապէս կը տեսնենք դարձեալ զարմանալի համաձայնութիւն մի՝ մէկ կողմէն Մեթոդիոսի, իսկ միևս կողմէն այլ Դանիելի և Տնովքայ տեսեանց հետ : Անշուշտ կը յիշեն ընթերցողք այն նշանաւոր տեղին, զոր յառաջագոյն մէջ բերինք Մեթոդիոսի հայկական խմբագրութեանէն, այսինքն է. « Յելանել է դարուն... և ի սկսանել ութհարիւրին » յազգէն Հոռոմոց թագաւորութեան պակասիլն, — զոր ըստ Լուիսպրանդի՝ նիկեփոր կայսրն իւր թագաւորութեան համար ըսուած կը հասկնար, — և բարբարոս թագաւորաց արշաւանքն : Արդ, Ագադրոնի խմբագրութիւնն՝ այս կետէս կը սկսի . « Արդ ի ընու յետին դարոցն՝ յոթհարիւր ամին յայնժամ թագաւորեսցէ մեծն Կոստանդիանոս հզօրն » : Հաւանօրէն այս տեղ յի-

1. Ագադրոնի խմբագրութեան մէջ Ջ-հո-ի գրուած է. նոյն ձևով կը գրուի և Յով. Կողոն Վի տեսեան մէջ : Այս ձևս, եթէ Միշապ արաբական ձայնի թարգմանութիւն չէ, աւելի 'ին ըլլալու է :

շուած « յետին դարն » նոյն է Մեթոդիոսի լրացած « Է դարուն » հետ, միայն թէ Ը դարու առաջին տարին՝ մեծին Կոստանդիանոսի և անոր ամենայաղթ տէրութեան յարմարեցուած է, մինչդեռ Մեթոդիոսի քով Թագաւորն յիշուած չէ, իսկ Թագաւորութիւնն այլ բարձուած « յազգէն Հոռոմոց » : Ազադրոնի քով շփոթութիւնն մի կայ անտարակոյս, բայց այդ շփոթութիւնն կը կայանայ՝ ոչ թէ տարութուի, այլ պատմական անձանց մէջ : Ըստ իս, այս տեղ մեծ տխրոսի ներքև յիշուած կայսրն՝ է Հերակլի թոռը՝ Կոստանդիանոս, և ոչ թէ Կոստանդնուպոլսոյ Հիմնադիրն . վասն զի մի և նոյն գրութեան մէջ նախ այս կայսեր ժամանակ պատմուած Հոռոմոց և Հայոց պատմութեան վերաբերեալ դէպքերն՝ ամէնքն այլ է-Ը դարուն կը վերաբերին : Բ. կայսերս համար կ'ըսուի, թէ « Էր (յազգէ) սուրբ և անուանի Թագաւորաց », և թէ անոր յաջորդել կը տրուի Տիբերիոսի Բէ, ըսելով այսպէս : « Յետ սորա Թագաւորեսցէ Տիբերիոս, ամս ԺԶ, ի յաթոս սուրբ Թագաւորին Կոստանդիանոսի » :

Գրութիւնս ներկայացնող այլ և այլ օրինակներ՝ իրարմէ տարբեր խորագիրներ կը կրեն : Մեր մատենադարանի թիւ 1002 բոլորգիր օրինակի խորագիրն արդէն մէջ բերինք, որ ամենէն ընդարձակագոյնն է : Ի Ոսկեփորիկի մէջ առանց հեղինակի անուան կը կարդանք հետևեալ խորագիրը . Պատմութիւն վասն զօրանաչոյցն Հայոց ազգին և բագաւորելոյ ի զարմից ևոցա և յերկիրն Հռոմայ (Հոռոմոց), որ և ևոր Կոստանդիանոս (Կ. Պոլիս) անուանի, որոյ ի ձեռն փրկութիւն յիցի ամենայն քրիստոնէից : Իսկ մի այլ օրինակի մէջ Ազադրոնի հայրապետին ասացեալ . վասն յարոցման առաջիկայ բագաւորաց Գրանգաց, մակագրուած է :

Անշուշտ շատեր ի մերասեր և օտարազգի բանասիրաց հանդիպած են այս գրուածիս, ոմանք՝ օրինակած իսկ . սակայն ոչ ոք մինչև ցայսօր ուսումնասիրած է զայն՝ ինչպէս որ պէտք է : Միաբանութեանս մեծարգոյ Հ. Գարեգին Վ. Զարբհանալեան տուած է ինչ ինչ շահեկան տեղեկութիւններ, բայց առանց գոհացուցիչ եզրակացութեան մի յանգելու : Մեր կարծիքով, իրարմէ տարբեր այս երեք խորագիրներու համեմատ՝ երեք այլևայլ մասերէ բաղկացած ըլլալու է նաև այս գրուածս, որոնք իրարմէ տարբեր ժամանակ գրուած են և տարբեր զրիչներէ :

Թիւ 1002 ձեռագրի խորագիրն՝ կը ներկայացնէ մեզ խմբագրու-

1. Այսինքն է՝ Փ. Կոնիբեր ընդօրինակել տուա վանացս մէկ ձեռագրէն՝ Ի՛ր բարեկամին համար :

թեանս հնագոյն մասը, որ կատարուած է Հիւպպոդիտեայ և Մեթոդիոսի տեսիլներուն վերայ: Սորա հեղինակի գլխաւոր նպատակն էր, զուշակուութեանց ձեռով ներկայացնել սկիզբակաւ ազգաց ահաւոր արշաւանքը՝ յունահռոմէական պետութեան սահմաններուն վերայ, և քրիստոնեայ դաշնաւոր թագաւորաց զանոնք վանելն և վկանգելը. և այս պատեհաւ է, որ կը յիշուին Մեծն Կոստանդիանոս և Տրդատ, իբրև առաջին քրիստոնեայ և վերամարտիկ վեհապետք, թէպէտև վերջինս՝ իւր այն տեղ մէջ բերուած հնագոյն արարուածներով՝ դժուար է որ հնագոյն բնագրին մէջ ևս գտնուէր, այլ — ինչպէս պիտի տեսնենք — յետոյ ուրեմն ներմուծուած է անդ Դ-ն դարու Հայոց պատմական աւանդութիւններէն քաղուած: Այս խմբագրութիւնս — սոյն չափով՝ թէ աւելի ընդարձակուած, փոյթ չէ — նոյն իսկ ԺԳԷ դարուն շատ հանրացած և մեծ ազդեցութիւն ունէր նաև Հայաստանեայց մէջ. զի ժամանակակից սպանիացի ճանապարհորդ մի՝ Ռուբրիկէզ կ'աւանդէ իւր Տեղագրութեանց մէջ, թէ իր Նախիջևան եղած միջոցին՝ Հայազգի եպիսկոպոս մի պատմեր է իրեն, թէ Ակակրոն¹ ոմն մարգարէ՝ զուշակած էր Նետոդաց ազգին (Nation des Archers) վերայ, և անոր մարգարէական կարծուած խօսքերէն իսկ մէջ բերելով՝ կը յաւելու, թէ ինքն իսկ ի Կ. Պոլիս եղած ժամանակ տեսեր էր զայն՝ հայու մի քով և կարդացեր: Այս վերջին խօսքն, եթէ ստոյգ է, պէտք է որ այդ գրութիւնն օտար լեզուով գրուած ըլլար. վասն զի դժուար է, որ յիշեալ ճանապարհորդն՝ Հայերենի այնքան տեղեակ լինէր: Նշանաւոր է Ագադրոնի գրութեան սկիզբը Որմանք² կոչուած քաջարանց մասին աւանդած վէպը, որ կը յիշեցնէ մեզ Մեթոդիոսի քով մէջ բերուած Արմայրոնի հինաւորց զրոյցը, որ կը ծնանի յամուսնութենէ Բուզանդիայ և Հոռոմոսի, և կը թագաւորէ ի Հռովմ: Հեղինակս հաստատուած Ազաթանգեղեայ քով յիշուած դաշանց թղթի մի վերայ, — զոր ինքն « մեծագահ նամակ՝ քաջ և ռամիկ ազատաց Հայոց » կ'անուանէ, — կ'աւանդէ, թէ այն 65,000 զօրքերէն, « որ զկնի Տրդատայ և Գրիգորի երթեալ էին ի մեծ և հոշակաւոր քաղաքն » (?), առաւ Կոստանդիանոս « արս երկերիւր զօրս, յաղթանդամս և անուանիս... և ի սոցանէ զարգացեալք և անցեալք, որք

1. Այս ձևս՝ թէպէտև սպանիացի ճանապարհորդն չկարելով հնչել՝ աղաւաղած է, բայց Ագադրոնի կամ Ագադրոնի աւելի մօտ է, քան թէ Ազաթոնի, ինչպէս կարծեն ոմանք:

2. Այս անունս անծանօթ է մեզ, ուստի կամ Արմանք և կամ Ալմանք կարգալու է:

կոչին Որմանք», և թէ «ի սոցանէ յառնէ մեծ թագաւորն Կոստանդիանոս» : Այս տեղոյս նման վէպ մ'այլ կը պատմուի եթովպական անվաւեր գրութեան¹ մի մէջ, — զոր յամին 1893 նախ հրատարակեց Քալման¹ ի Լայպցիգ, և ապա յամին 1894 գաղղիերենի թարգմանելով Ռընէ Բասսէ՝ հրատարակեց ի Պարիս, հետեւեալ խորագրի ներքև. Les légendes de S. Têrtag et de S. Sousnyos, այսինքն թէ, Հայոց թագաւորին Տերտագայ, որոյ արքունիքն է թաւրիգ, և Հոռովմայ կայսեր մէջ դաշինք մը կնքուեցաւ, որ երբ մէկն յարձակումն կրէ թշնամիներէն, միւսն զօրօք անոր օգնութեան հասնի : Յետո՛ր բազում ժամանակաց պատերազմի ելաւ բարբարոսաց թագաւորն՝ Հոռովմայ թագաւորին դէմ ամբաւ բազմութեամբ, և սա դիսպան զրկեց առ Տերտագ թագաւորն Հայոց, խնդրելով զօրս յօգնութիւն : Սա ունէր 40 դիւցազունս՝ զօրաւորս ի պատերազմ, որոց զլուին էր անպարտելին Սարգիս. զասոնք զրկեց առ թագաւորն իւր դաշնակից, երդուեցընելով Խաչի և Աւետարանի վերայ, որ առանց թշնամույն գլուխը կտրելու՝ չի վերադառնան առ ինքն : Լուր հասաւ Հոռովմայ թագաւորին, թէ Հայոց թագաւորն Տերտագ՝ քառասուն դիւցազուններ զրկած է քեզ օգնելու : Կանչելով զանոնք իւր առջև, ըսաւ. Ես առ նուազն 50,000 զօրաց կը սպասէի և ոչ թէ ձեզ. դարձէք ձեր տեղը : Ըսին քառասունքն Հայոց. Տէր մեր թագաւոր, մենք կը խորհինք ջնջել քու թշնամիներդ, եթէ անոնց գլուխները քեզ չի բերենք՝ սպան զմեզ : Թագաւորն չզիջաւ, և երբ նոքա մեկնեցան քաղաքէն, խորհուրդ ըրին և ըսին. Եթէ այսպէս դառնանք մեր երկիրը, թագաւորն զմեզ պիտի սպաննէ, ուրիմն վստահացած յԱստուած յարձակինք թշնամեաց վերայ : Հասան հոն, ուր էր թագաւորն բարբարոսաց, և երդուան, որ բնաւ չթողուն զիրար ի կեանս և ի մահու : Շուտով համբաւը կը հնչէ թշնամույն բանակին մէջ, թէ ահա եկան քառասուն դիւցազունքն : Թագաւորն կը հանէ անոնց դէմ նախ 1000 ձիաւոր, ապա կրկին, ապա 10,000, և սակայն կը կոտորուին : Վերջապէս թագաւորն մնացած զօրքով կը խիզախէ քառասնից դէմ. ոչ ոք կարէր ընդդիմանալ անոնց յարձակման, որոնք իբրև հուր ընդ եղեգն կ'ընթանային. սպաննեցին թագաւորը՝ զօրաց հետ ի միասին. առին անոր գլուխը և բերին առ թագաւորն Հոռովմայ : Զարմացաւ սա՛ անոնց քաջութեան վերայ,

1. Այս գրութիւնը կը վերաբերի, ըստ Ռընէ Բասսէի, գեհեպոս մատենագրութեան երկրորդ շրջանին, և հաւանօրէն զպտերէն հնագոյն յեշտակարանէ մի թարգմանուած է ի լեզու եթովպական :

տեսնելով իւր Թշնամւոյն և անոր 39 սպայից գլուխները: Բայց չհամարով մարդ զրկեց Թշնամւոյն բանակը, և երբ տեսաւ անոնց սիկիւնները զինուք և զբազիւք հանդերձ ի դաշտին, հիացաւ: Այն ժամանակ խորհեցաւ իւր մեծամեծաց հետ. Եթէ սոքա միայն կրցան պատել բարբարոսաց բանակը, ուրեմն ի՞նչ պիտի ընեն մեզ, եթէ պատերազմ բացուի մէջերնիս: Ես զանոնք կը հրաւիրեմ իմ ապա-
 բանքս՝ երեքօրեայ խնջոյքով. այս պատեհաւ բաժնեցէք զանոնք ձեր տներու մէջ և սպաննեցէք: Կատարեցաւ խորհուրդն. բոլորն ևս այս կերպով սպաննուեցան, բաց ի Սարգսէ, որ կնկան մի օգնութեամբ ալտանակեց իւր երիվարը, և շրջագայութիւն մ'ընելու պատրուակաւ՝
 էլաւ քաղքէն դուրս և փախտեամբ հասաւ իր երկիրը: Հոն պատմեց Սարգիս՝ Տերտազայ բոլոր եղելութիւնը, որ ցաւէն սկսաւ լալ դառնա-
 պէս և ըսել. վայ ինձ, վայ ինձ. ահաւասիկ կորեան իմ քաղազունք, սինք իմոյս աշխարհի՝ առանց պատճառի. ուրեմն ո՞վ պիտի լուծանէ անոնց վրէժն Հռովմայ անիրաւ թագաւորէն: Իցս, կ'ըսէ, Սարգիս, որքան և կ'ուզես, արքայ: Այն ժամանակ առաւ Հայոց թագաւորն բոլոր իւր զօրքը և յարձակեցաւ Հռովմայ վրայ: Հասնելուն պէս՝
 յայտարարեց, որ բոլոր ձերբակալուած Հռովմայիցիներն իւր առջև բե-
 բուին, որպէս զի իւր ձեռքով սպաննէ զանոնք: Ասկեց վերջ մկսառ արշաւել Սարգիս ամենուրեք և կոտորել Հռովմայ թագաւորին զօրքը: Ինաց բուն բանակետողը, ուր էր անոնց թագաւորն. սկսաւ ճակա-
 տամարտն: Սարգիս սպաննեց զթագաւորը՝ իւր զօրօք ի միասին, և յաղթական վերադարձաւ իւր աշխարհը: Բայց երբ կը ննջէր, խո-
 բտուզուած կը տեսնէր զինքը արեան ծովու մէջ, և չէր կրնար քնանալ, մինչև որ եպիսկոպոսաց խորհրդով 40 եկեղեցիներ շինուե-
 ցան Սարգսի անուամբ, և որոշուեցաւ, որ այնուհետև ընդ միշտ՝ Հայեր
 եւօրեայ պաւհք պահեն:

Այս գրուածս, որոյ մասին երկու տարի յառաջ Քաղապիպի մէջ յօդուած մի հրատարակուեցաւ, որուն յօդուածագիրն, սակայն, կարեւո-
 րութենէ զուրկ կը համարէր զայն, Ազգագրոնի նկատմամբ մեծ նշա-
 նակութիւն ունի: Երկուքին քով իսկ խօսքը քրիստոնեայ Հայաստանի
 և անոր քաջայաղթ թագաւորի վերայ է, որ Հռովմայ թագաւորին
 մատուցած ծառայութեանն ի վարձ՝ կը թագաւորէ իւր հօրենական
 գահուն վերայ, որ ըստ Ազգագրոնի՝ է « սաւ » ի գաւակաց և երկրորդ
 թագաւորութեան » թագաւորին Հռովմայ, իսկ ըստ անանուն հեղի-
 նակին՝ իբրև որդեգիր և ժառանգ կիսոյ թագաւորութեան: Երկու-
 քին ևս նախ կը խօսին Հոռոմոց և Հայոց մէջ հաստատուած հին-

աւուրց դաշանց և բարեկամութեան, և ապա թշնամութեան և պատերազմաց վերայ: Երկուստեք իսկ կը հռչակուին քաջազունք Հայոց՝ եկած յարևելից յարևմուտս, զորս Ազադրոն Որմանք կ'անուանէ, իսկ եթովպական յիշատակարանն Արմէնք: Ըստ վերջնոյս՝ անոնց զլիաւորին անունն է Սարգիս, իսկ ըստ առաջնոյն՝ Վաղարշակ, որք կը պատերազմին նախ բարբարոսաց դէմ ի պաշտպանութիւն ձառովմայ, և ապա իբրև թշնամի կ'աւերեն կոտորածիւ զաշխարհն Հռոմոց « վասն վրիժուց հարցն իւրոց, քանզի բազում չարիս անցուցին նախ ազգն Հռոմոց ընդ աշխարհիս Հայոց »: Երկուստեք նոյն նկարագիրն ունին Սարգիս և Վաղարշակ, այսինքն է « հզաւր, յաղթահաակ, կորովի և պատերազմող »: Երկոքեան ևս զլուխ անցած են հայազունդ զօրաց, որոնք, ըստ Ազադրոնի, են 200, իսկ ըստ անանուն գրութեան՝ 40: Երկաքանչիւր գրուածոց մէջ իսկ այդ քաջերն ընտրուած են Հայոց ազնուական կամ նախարարական¹ գրնդերէն, որք կ'առաջնորդեն Տրդատայ և Գրիգորի ի մայրաքաղաքն Հռոմոց: Անտարակոյս՝ երկու գրուածոց մէջ իսկ պատմական կերպով, այսինքն է, Դիոկղետիանոսի, Մաքսիմիանոսի և Կոստանդիանոսի ժամանակ կատարուած զէպքերն՝ չարաչար կերպով յեղաշրջուած են. այսինքն է՝ եթովպական յիշատակարանի անանուն հեղինակն՝ կրօնական տեսակէտով Սարգսի զօրավարի և նորա որդւոյն Մարտիրոսի վերայ դարձուցած է, զոր յետոյ կը յիշէ իբրև գտիլ՝ տասն տաւից, որոնք Թադէոսի ձեռքով նախնարար գտած 12 տաւից վերայ յաւելնալով՝ կը կազմեն 22 տաւերէ բաղկացած Հայոց այրբենական գրութիւնը². իսկ Ազադրոն՝ յետս նահանջելով՝ դարեր վերջ և քաղաքական հայեցակէտով առած՝ կը պատշաճեցնէ Վաղարշակ անուամբ առասպելեալ թագաւորի մի վերայ, զոր մեծն Տրդատէն սերած և « երկրորդ արշակունի » կ'անուանէ: Սակայն դիտելով, որ առաջին գրութեան մէջ պահուած գէթ ժամանակագրա-

1. Այս նախարարութիւններէս մի քանին կը յիշէ Ազադրոն՝ իրենց ընտրւ յատկութիւններով, զորս այլուր չենք գտներ. « Յայնժամ ժողովին առ մեծն կոստանդիանոս ազգն Հայոց՝ հանդերձ զաւրավարան իւրեանց, որ լինի յազգն Մամիկոնէից, և յայնժամ զան առ նա Բժ ազգն Մամիկոնէից, ազգն զաւրի՞ Ամատունեաց, ազգն Բաւաւա՞ր՝ Խորխոռունեաց, ազգն Բարձրա՞սա՞ր՝ Արծրունեաց, ազգն հզաւր՝ Բզնունեաց, ազգն զաւրաւոր՝ Գալջերունեաց, ազգն դարասալան՝ Համազասկանց »:

2. Այս տեղիս ունի կարևորութիւն սեմականէ փոխ առեալ Հայոց ստուեր նկատմամբ, այնու մանաւանդ, որ անոնց գտիլ կը նամարուի Թադէոս (Առաքեալն): Առաջին անգամ այս տեղ կը նանդիպինք այսպիսի մի աւանդութեան:

կան կարգն ճիշդ է, վասն զի նոյն իսկ Սարգսի զօրավարի գործերն, յարևելս գալն ու նահատակութիւն, ինչպէս և անոր ի պատիւ պահոց Հաստատութիւնն՝ Տրդատայ մօտ ժամանակներ հանդիպած են, կրքնանք եզրակացնել, որ կամ այս գրուածս, — յայտ է թէ իր սկզբնագրի Համաձայն, — ծառայած է Ագաղրոնի գրութեան վերոյիշեալ մասին, և կամ երկուքն ևս անկէց աւելի Հնագոյն գրուածէ մի իբրև Հասարակաց յաղրերէ օժանդակուած են: Նկատմամբ վերջին կետիս՝ նշանաւոր է Ագաղրոնի հետեւեալ ակնարկութիւնն. « Եւ յայնժամ կատարի Տեսիլ րազատրոսրեան կոստանդիանոսի, զոր հրեշտակն եցոյց, եթէ ի գառանալ զեդիև Հայոց՝ յայտնեցիև նըշխարք Քաշիցեմ¹ (Սուքիասանց), և առաւել զաւրանան երկրորդ Արշակունիքն ի վերայ աշխարհիս Հայոց »: Արդ, առ Փաւստոսի և Ագաթանգեղայ և Ս. Յակոբայ Մծրնացւոյ վկայարանոսրեան մէջ Մեծին Կոստանդիանոսի նկատմամբ հրեշտակական տեսիլ մի կը յիշատակուի, այո՛, բայց ոչ բնաւ Քաշից նշխարաց յայտնուելուն և ոչ այլ Հայոց գնդին և երկրորդ Արշակունիներու զօրանալուն վերայ խօսք մի կայ. ուրեմն, ինչպէս այստեղ յիշուած Կոստանդիանոսն՝ այսպէս և անոր վերաբերեալ զբաւոր տեսիլն՝ ուրիշ ժամանակի գործ է:

Իսկ գալով Ագաղրոնի երկրորդ խորագրին, մենք այն համոզումը ունինք, թէ այդ գրուած է Հայոց պատմութեան վերաբերեալ ներմուծութեանց առթիւ, թէպէտև յայտնի չէ, թէ արդեօք Հայազգի մէկու մի, թէ օտարի ուրումն ձեռքով եղած են ասոնք՝ յապա ժամանակի. վասն զի երկու կողման իսկ կը գտնենք ակն յայտնի և նպաստող նշաններ: Օրինակի աղաքաւ, Ի և յաջորդ դարուց Հայոց պատմութեան մէջ աւանդուած ծանօթ դէպքերուն՝ այսբան յեղաշրջեալ և այլընդայլոյ կերպով յառաջբերութիւնքն՝ հայազգւոյ մի հա-

1. Այս նախադասութիւնս բառ առ բառ փոխ առնուած է Անթոն Կոստանդիանոսի ընծայուած համառօտ գրուածի մի հայկական թարգմանութենէն, որ կը գտնուի մեր մասնենագարանի Բ և Ե. Ճառընտիրներու մէջ, հետեւեալ խորագրերով. Տեֿիլ Կոստանդիանոսի Ռաֆասի՝ վասն Սաֿիսիանոսի, և կամ Տեֿիլ Կոստանդիանոսի ապաստանէր Ռաֆասի՝ յաղափո ֆրանկայ զնշխարս երանելոսն. ուր կ'աւանդուի, թէ Մեծին Կոստանդիանոս՝ տեսեամբ հրեշտակին հրաման ընդունած ըլլալ՝ անձամբ երթալու ի Սուկաւէտ լեռան ի Հայս և հանած ըլլալ սրբոց Սուքիասանց նշխարքը. (տես Ն. ՄԿ. Ագգերեան, Լեւիտար Լորտ և վոյսթանոսիտն որբոց, Վիեննայի 1811, Հտ. Բ. հր. 119—120): Այս գրուածս բաւական չին է. Յովհ. Պատմաբան կաթողիկոսն՝ թ' զարուն վերջերք կը անաչէր զայն, բայց գոչաղագար գրութեան թուականն նշանակուած չէ Յեշտատկարանին մէջ, որով պիտի իմանայինք նաև Ագաղրոնի տեսեան երբ գրուիին:

մար անհասկանալի են . բայց օտարի մի համար այլ ոչ այնքան նպատակայարմար, եթէ դա չունենար այն ազգի և աշխարհի հետ կապող յատուկ շահեր: Ներմուծութեանց հեղինակի զլխաւոր նպատակն եղած կը տեսնուի, ոչ միայն ցոյց տալ երկու ազգաց, այն է՝ Հռոմոց և Հայոց մէջ ի վաղուց հետէ եղած քաղաքական և ազգագրական յարաբերութիւնքը, այլ նաև ի գրի յաւերժացնել Հայ ազգին բիւզանդական կայսրութեան՝ միջնադարեան պատմութեան մէջ խաղացած այն նշանաւոր դերը, այսինքն է, Մեծին Կոստանդիանոսի դաստակերտին և անոր գահուն վերայ գրեթէ մէկ ու կէս դար իշխող կայսրներն և զօրավարները: Այո՛, այս նպատակաւ ստեղծած է Կոստանդիանոս զոմն մեծ՝ Տրդատայ հետ երբեմն ի նորն Հռովմ առ Կոստանդիանոս գացող 200 Հայազուն քսիչրու կամ Որմանիներու՝ 1 ցեղէն, ըսելով. « Ի սոցանէ յառնէ մեծ թագաւորն Կոստանդիանոս »: Այս նպատակաւ ստեղծած է « ի տոհմէ թագաւորին Տըրդատայ » յաղթահասակ և պատերազմող Վաղարշակ մի, իբրև « երկրորդ քաղաքաբնական Կոստանդիանոսի » և հիմնադիր՝ երկրորդ Արշակունիաց, որով սոքա կը տիրեն « ի Կուր գետէն » մինչև « եօրևարոյն Բիւզանդիոն »: Այս կէտս՝ արժան է որ գրաւէ բիւզանդական պատմութեամբ պարապող հնասիրաց ուշադրութիւնը, վասն զի բիւզանդական ժամանակագիրներէն ոչ ոք այսպէս խօսած և գրած է: Վաղարշակ երկրորդ արշակունւոյն ընծայուած պատերազմներն՝ ընդդէմ Հռոմոց և այլազգեաց, եթէ Որմանաց և Տրդատայ և Հռովմայ թագաւորի մասին՝ ի սկիզբն գրութեան պատմութեան հետ սերտիւ միացած և անոր իբրև լրացուցիչ մասն համարուի, այն ժամանակ կը հաստատուի նաև Կոստանդիանոս մեծի և նորա մօր Հեղինէի Ստասպելի (!.égende) և Մ. Խորենացոյ հնութիւնն. վասն զի, — ինչպէս տեսանք եթովպական յիշատակարանի համեմատութեամբ, — մէկ կողմէն այն պատմութեան հնագոյն աղբիւրն մինչև Ե դարու գործ իսկ կրնայ համարուիլ, և միւս կողմէն այլ, ի ստորև ծանօթութեամբ ըրած դիտողութեան համաձայն, այս տեղ Կոստանդիանոսի մասին աւանդութեան՝ այն է Որմաններէն սերիլն՝ ա-

1. Այս տնուան նկատմամբ՝ երկրորդ անգամ դիտել կու տանք, որ նման է Վրաց հին մասնակարգութեան մէջ պահուած Արման և Էնի, որով շէշայս կ'իմանային ընդհանուր առմամբ: Հետեւաբար, Որմանքն այլ՝ Արման կը կարգացուէր, և օրինակողաց ձեռքով Ա տանն՝ Որ փոխուած է:

2. Այս բացատրութիւնս կը յիշեցնէ մեզ Մեծին Կոստանդիանոսի Առաջիկը, որ ծանօթ էր նաև Յակ. Սրբեցոյ ի սկիզբն 2 դարու և մերոյս Մ. Խորենացոյ:

նոր ծագման և դարձի վերաբերեալ առասպելն կ'ակնարկուի, ըստ որում Հեղինէ՝ ի Բիւզանդիոն պատերազմի գացող քաջ զօրականէ մի կը յղանայ և կը ծնանի զՎոստանդիանոս :

Սակայն ուշի ուշով քննելով Ագադրոնի գրութիւնը, կը տեսնենք ակներև, որ Վաղարշակ արչակունւոյն և Վոստանդիանոսի վերայ պատմուած առասպելներն՝ թէպէտև արտաքսապէս նոյն կ'երևին հնագոյն աղբեր հետ, բայց իրօք տարբեր ժամանակի և տարբեր անձնաւորութեանց կը վերաբերին: Ներմուծութեանցս հեղինակն թէպէտ և անդէն ի սկզբան մեծ ճարտարութեամբ ջանացեր է է-Ք դարում կատարուած եղելութիւնները՝ Դ գարու սկիզբը պատմականօրէն կատարուածներուն հետ հիւսել մարգարէարար, սակայն և այնպէս անոնց մէջ եղած անյրպետն խիստ զգալի է: Յիւրաքանչեւ, Վոստանդիանոս մեծ թագաւորի ժամանակակից և Բիւզանդիոնի վերայ արչաւող թագաւորին Վաղարշակայ՝ կը տրուի յանկարծ պատերազմել Իսմայելացւոց դէմ, որոնք առաջին անգամ կը մտնեն « ի քաղաքն՝ որ կոչի թեոդոսուսպոլիս » , կը բնակին հօն երեք ամիս, կ'ելնեն և կը բնակին ի վտակն աղբերն, կը կանգնեն զերիս պատկերս, այսինքն է՝ զԳիոս, զԱլմես և զՀերմիևս¹, և կը զոհնեն կոոց: Իսկ երկրորդ անգամ կը յարձակին Հայոց ամբողջ երկրին վերայ, կը նեղեն և կը կոտորեն քրիստոնեաները, այնպէս որ՝ հեղինակի ըսածին նայելով՝ « ոչ ուրեք գտանին քրիստոնեայք, բայց միայն ի ճորն Մանանադոս և ի յերիևս Սաննոյ² » : Նշանաւոր է գարձեալ Վաղարշակայ, Բիւզանդիոնէն դառնալէն վերջ, յաղթանակաւ Եկեղեաց գաւառի ճմիւն³ աւան մտնելն, ուր էր, կ'ըսուի. « տեղի շիրմին հարցն իւրեանց՝ Տրդատայ և Հայրապետացն, զի այն է տեղի գերեզմանաց իւրեանց », և հօն Ս. Գրիգորի կաթողիկոսական գահուն վերայ

1. Այս անուանքս, բաց ի Դիոսէն, որ Յունաց Ջևսի սեռականն է, յունական նշան չունին: Արաքացւոց իսկ յատուկ չեն կարող լինել, վասն զի Մանանադ տիրապետութենէն վերջ արգելուած էր անոնց կոապաշտութիւնն. նեաւաբար, կամ պարտիկ և կամ սկիւթական ուրիշ ժողովուրդ մի ըլլալու էին ողբա, զորս անյատուկ կերպով իսմայելացի անուանած է հեղինակս, նեաւորութեամբ Մեթոդիոսի:

2. Անուանս մանր պարագայիւք յիշատակութենէն, — որ ամենէն նազոյնն կը տեսնուի, — կարծէք թէ գրուածիս հեղինակն իսկ ականատես և է-ժ դարում ապրող մէկն էր:

3. Այս անուանս նեաքն, այլուք, չի գտայ Եկեղեաց կամ Երզնկայ գաւառին մէջ, ուր չիբանտ ինչ նիման վերայ նստատուած հեղինակս՝ կը գնէ Հայոց թագաւորներու և կաթողիկոսներու շիրմերը, մինչդեռ պատմագիրք Հայոց սակասաբակ՝ յամբարն Անի կամ Թորգան եղած կը պատմեն:

մէկը բազմեցնեն, որուն համար կ'ըսուի, թէ էր « Այր մի մեծագեղ և շանաձակատ, խոսաղիք (խոյաքիթ) ի յազգէ սրբոյ Լուսաւորչին » : Իսկ կարծեցեալ Մեծին Կոստանդիանոսի՝ քիչ յետոյ յաջորդել կուտայ Տիրերիոսի Բէ 16 տարիներ, որուն ժամանակ զարձեալ կը զօրանայ առաւել արքայն Հայոց Վաղարշակ : Տիրերի կը յաջորդէ Վիշապան ոմն, այր խաղաղարար, ամս 16, որուն համար կ'ըսուի, թէ « լինի այր պարկեշտ և յաղթանդամ, և խնամակալ ազգին քրիստոնէից » : Սորա ժամանակ իսկ դեռ ողջ է Վաղարշակ, և անոր հետ միացած՝ կը « ժողովէ զզօրս իւր և յարձակին ի վերայ ազգին Հազարու, իբրև հոռ քորքորեալ յեղեգն »² : Վիշապանայ կու տայ յաջորդել Թէոդոսի Գե 12 խաղաղական տարիներ, որուն ժամանակ ապա կը « յայտնուի օրդին կորստեան՝ Նեոն » : Արդ, այս և այսպիսի նշաններ՝ ցոյց կու տան մեզ, թէ Ը-Թ դարու պատմական եղելութիւններ են դժբա, որիչ մնացեալ մասէն : Հետևաբար, կեղծ Վաղարշակն ըլլալու է կամ Թէոդորոս Ռըշտունին, որ Աբաբազուց կողմը բռնելով պատերազմեցաւ Յունաց դէմ, և կամ անոր մօտ ժամանակ և կայսեր զինուորական ծառայութեան մէջ ապրող և կայսերութեան թեկնածու մէկն : Խոյաքիթ, և այլն, կաթողիկոսն՝ կարող է լինել և Ներսէս Շինող, իսկ նորա ժամանակակից կայսրն է Կոստանդինոս թուն Հերակլի :

Ազգորոնի մի ուրիշ խմբագրութիւն, որ սակայն առանց անուան գրուած է ի Ոսկեփորիկին մէջ՝ Մեթողիոսի հայկական խմբագրութենէն անմիջապէս վերջ, ինչպէս նաև կեղծ Եպիփան՝ կու տան մեզ բանալին՝ բանալու այդ Վաղարշակ Արշակունւոյ հետ՝ նաև Ազգորոնի հնագոյն աղբիւրը : Արդ, այս օրինակիս մէջ, Վաղարշակ անուան տեղ դրուած է ընդհակառակն Տրդատ ոմն Արշակունի, որ նոյն մեծ դերը կը կատարէ : Սակայն, ո՞վ է այդ արքայակերպ Տրդատն. գուցէ այն քաջարի պատրիկն, որ յամի Տեառն 741-742 Արտաւազդ հայազգի հակակայսեր կողմանէ պատերազմելով Կոստանդին Կոպրոնիմոսի դէմ՝ մեռաւ ի ճակատամարտի : Այս՝ ըստ ինքեան շատ հաւանական է, բայց Զուանբեր որ կ'ապրէր այդ ժամանակէն տարիներ յառաջ և զրեց Վրաց պատմութիւնը մինչև իր ժամանակակից Վախթանգ մեծի գործերը, բոլորովին մի ուրիշ

1. Այս նկարագիրս կամ Յո՛ւ. Օմնեցւոյն և կամ Գրիգորիս կաթողիկոսին եւ թուի պատշաճիլ :

2. Այս տեղիս բառ առ բառ նոյն է Տերտուլիոսի եթովպական առաքելին մէջ Սարգսի մասին ըրած մէկ բացատրութեան հետ, զոր ի վեր անդր մէջ բերինք :

ժամանակի և պատմական անցքի հետ կապելով՝ կ'ընէ նորա պատմութիւնը, որ Ազադրոնին աւանդածին հետ քաջ կը նոյնանայ: Արդ, պատմիչս Պարսից Որմիզդ Շահեջանայ առ Վախթանգ Վարն-Իսորով-Քանգ գրած մէկ նամակը մէջ բերելէն յետոյ, որով կը հրաւիրէր զինքն յօգնութիւն ընդդէմ Լեւոն կայսեր, կը գրէ հետեւեալ նշանաւոր դէպքը. « Արար Վախթանգ հանդես զօրաց երկոսհարիչը հազարաց, և ել ընդ Հայս. գի և Լոքս ևս ասեալ էին զեռն պատուէր: Եւ ելին նախարարն Հայոց, ընդ Լոսս ՏՐԻԱՏ ԱՐՇԱԿՈՒՆԻ, և Արև՝ Սիանեսց Տեր, և Զոռաներ՝ Վասպուրականի, և Հաւագասայ Զարօնոյ, և Գրիգոր և այլք ընդ Լոսս: և չորսն ի Էյարախպոչս, և բողիւն ի վերայ Լորս իշխանս երկոսս՝ երկոստասան հազար հեծելոք՝ պատերազմել ընդ Լեւոն (այս ինքն է՝ Լեւոնի) որ ի Էյարնոյ քաղաք: Եւ չորսն ընդ Միջերկրեայս՝ միւլն ի Պոնտոս, և ասին երկս քաղաքս »: (Տես և տպ. Վենետկոյ 1884, էրես 78):

Այս տողերս, եթէ ստուգիւ Վախթանգայ ժամանակակից մէկուն գրչէն ելած են, ինչպէս կը ծանուցուի, կարեմք աղբիւր Համարել Ազադրոնի տեսլեան մէջ Վաղարշակայ մասին պատմուած ընդարձակ արարուածոց ի Կարին և ի Պոնտոս: Իսկ հակառակ պարագայի մէջ՝ առաջնութիւնը պէտք է տալ Ազադրոնի, որ իբրև ակնատես կը նկարագրէ, աւելի մանրամասն պարագաներով, Է դարում արևելեան Հայոց կռիւներն և յաղթութիւնքը՝ մերթ Իամայելացոց և մերթ Յունաց դէմ: Յամենայն դէպս՝ Ազադրոնի Տեսլեան մէջ Հայոց մասին աւանդուած այս տեղիքս՝ հնագոյն խմբագրութեան կը վերաբերին:

Սակայն Ազադրոնի գուշակութեանց մէջ կը գտնենք ցայս վայր մէջ բերուածներէն աւելի նորագոյն տեղիս իսկ, յորս կը խօսուի փռանգաց յարեւելս գալուն կամ Խաչակրաց վերայ: Անտարակոյս, այս մասին կը վերաբերի երրորդ խորագիրն, զոր ի վեր անդր ի մէջ բերինք բայց թէ այդ ներմուծութիւնքն արդեօք տարբեր ժամանակի և անձի ձեռքով եղած են, թէ մի և նոյն, այս կէտս դժուար է որոշել: Այս միայն դիտելու կէտ մ'է, որ Մեթոդիոսի հայկ. խմբագրութեան միջանկեալ դրուագին մէջ՝ այս պատմական կէտս աւելի բարգաւաճուած է՝ դեռ յետին ժամանակի, այն է՝ ժի դարուն վերջ Հանդիպեալ պարագաներով, այն է՝ Կոմնենեան Հարստութեան անկման որոշ յիշատակութեամբն և այլովք Հանդերձ, զոր յիշեցինք: Բայց դիտելով, որ փռանկը՝ յիշուած են նաև Ս. Ներսիսի ընծայուած տեսլեան մէջ, որ գրուած է ժ դարում, Մեսրոպ Երիցու ձեռքով, հետևաբար՝ այս անուանս յիշատակութիւնն արգելք մի չէ, որ Ագա-

գրոն ըլլայ գրիչ մ'այս դարուս, զուցէ թէ աւելի կանուխ իսկ. վասն զի Մեսրոպէն յառաջ՝ Մեթողիոսի տեսեան գրչին և Սոկրատայ ևս աշխարհաճանութ էր այդ անունն: Ոթոն Փրիզիկայ եպիսկոպոսն՝ կը պատմէ, թէ Հայոց առ Եւզբինէոս Դ զրկուած նուիրակութեան ժամանակ, երբ Բաշակիրներ հանելու հրաւէրք իսկ եղան, մարգարէական գրուած մի ի հրապարակ ելաւ Փռանգաց Լուդուիկ էի թագաւորութեան վրայ, որուն մեծ հաւատք կ'ընծայէին սոքա. ոմանք Սիբիլլեան գրոց մէջ գտնուած է կ'ըսէին, ոմանք այլ, թէ « *Quidam armenio divinitus revelatum affirmatur* », այսինքն հայագոյ մի յաստաժոշտ յայտնուածը կը հաստատէին: Յիրաւի, հայութեան բնադրոյժ աւեր բաց յայլոց՝ և այս տեղիս. « Եւ է գրեալ. Յորժամ ասենս հրափորձաբեամբ զքննորթանն որդոց մարդիսն », որ Աեսրոս Գետադարձ կաթողիկոսին կամ Ն. Շնորհաւոյ ընծայուած թագաւոր փառաց ֆրիստոս որ ժամանեայ գաս ի յերկնից, ննջեցելոց շարականէն փոխ առնուած է: Արդ, փոխառուն՝ եթէ նոյն ինքն ներմուծութեանց հեղինակն է, այն ժամանակ կ'ունենանք յայտնի ապացոյց մ'այլ անոր հայագրի և Գետադարձ կաթողիկոսին ժամանակակից ըլլալուն, և կամ անկէց աւելի կրտսեր ժամանակաւ: Ն. Շնորհաւի՝ յՈղորմ Յրեախոյ կը գրէ. « Զի եկն եհաս աւարց մերոց — Զոր ասացին ամաց թուոց — Եւ ի տուեալ նշանս ի գրոց »: Արդ՝ եթէ Հայրապետիս այս տողերն Ագադրոնի գրուածին վերայ առնուք, անով՝ անմիջապէս քիչ յառաջ ըսածնիս աւելի կը հաստատուի, և կ'որոշուի միանգամայն, թէ յիշեալ շարականի հեղինակն՝ Աեսրոս Գետադարձն է ստուգիւ, և ոչ եթէ Շնորհաւին:

Ագադրոնի բնագրի և խմբագրութեան գաղտնիքը պարզելն վերջ, անով կը պարզուին նաև Ենովքայ և Դանիելի տեսեանց գաղտնիքն: Տիրեր, Աիւզանդ, և Թէոդոս Գ կայսերաց մասին աւանդուածներն — ինչպէս տեսանք — յար և նման՝ են Ենովքայ տեսեան մէջ

1. Այսինքն է՝ յէջ 146-147 տեղիքն, ուր կը խօսուի Տիրեր կայսեր և անոր խաղաղաւէտ ժամանակի մասին, նոյն է Ենովքայ տեսեան 383 իջով վերջին պարբերութեան մէջ փուլիվ թագաւորի մասին աւանդուածներուն հետ: Ագադ. յէջ 141-151, Թէոդոս կայսեր ժամանակ եղած խառնակութեան, տասն դաւաղանոց բաժնուելուն և մի քանի պատահարաց նկարագիրն՝ նոյն է Ենովքայ տեսեան, 384 իջում, Հրէիչ թագաւորին և անկէց վերջ պատահած իրաց մասին աւանդուածներուն հետ: Ագադ. 147-148 էջերուն մէջ Թէոդոսէն 51 տարի վերջ երկոցոյ Նեոէին, այն է կոստ. կոպրոնիմոսի, իսմայելացոց ի Պաղեստին արշաւելն և անոնց յաղթելն, — Երուսաղեմի մէջ աստուածապէս ինք զինքը պատուելն, այլովք հանդերձ, նոյն է Ենովքայ տեսեան 388 իջում պատմածներուն հետ:

աւանդուածներուն հետ, և վերջնոյս մութ կէտերը կը պարզեն: Նեոի և անոր արարուածոց մասին տեսանք սրղէն Հիպպոլիտեայ և Մեթոդիոսի աղբրաները՝ Դանիելի և Ծնովքայ տեսլեանց հետ. սակայն այդ աղբրաներն ստուար քօղով մի ծածկուած լինելով, տակաւին կը ձայր տարակուսական, այսինքն է, դե՞նչ զտաւջինը՝ իրրև անմիջական աղբրը վերջնոցս. այժմ այդ տարակոյսն իսկ բոլորովին կը փարատի Ագաղթոնի խմբագրութեան ձեռքով: Կնովքայ տեսլեան խմբագրողն, ինչպէս տեսանք, թէ՛ Նեոին և թէ՛ անոր թագաւորեալ քաղաքին անունը որոշակի յիշած չէ, բայց կը դնէ զայն Հրձիգէն 51 տարի վերջ: Առաջին կէտն՝ համաձայն է Հիպպոլիտեայ և Մեթոդիոսի յոյն խմբագրութեան, իսկ վերջինն՝ ուղղակի Ագաղթոնի վերայ մատնանիչ կ'ընէ, ըստ որում ինչպէս տեսանք, Հրձիգի, այն է, Քէտոս Գ. 51 տարին՝ կը հանդիպի Կոստանդին՝ Կոստանդինոսի թագաւորութեան տարիներուն, որուն անունն և թագաւորութիւնն իսկ որոշակի յիշուած են՝ « Ծօթնաբլուրն Բիւզանդիոնի » մէջ, զոր նոյնպէս կը գտնենք Դանիելի տեսլեան մէջ: Նեոի մօր անունն՝ ուղղակի յիշուած չէ Հիպպոլիտեայ և Մեթոդիոսի հայկական թարգմանութեանց մէջ, սակայն վերջինս՝ այն պիղծ այրւոյն և անոր գահակալութեան վերայ ընդարձակ պարագայիւք նկարագիր մ'ըրած է, մեկնելով Դանիելի տեսլեան այրւոյն գաղտնիքը: Իսկ Ագաղթոն՝ համաձայն Կեղերնոսի՝ Մարիամ կ'անուանէ զնա, ըսելով. « Անուռ կինն յղութիւն ի սերմանէ սատանայի... և ասէ (Կոստանդին) զինքն ծնեալ ի կուսէն Մարմնայ », և կու տայ մեզ այդ պիղծ կնոջ անձնական նկարագիրն ևս, զոր կանխաւ մէջ բերինք: Այս՝ թէպէտև բազմաք կը զանազանի Մեթոդիոսի հայկ. խմբագրութեան մէջ եղած նկարագրէն, բայց սերտ աղբրս ունի անոր հետ: Ինչպէս Նեոի ծննդեան և կենսագրութեան զուգակշիռն մէջ՝ Ագաղթոն հետևած է՝ Հիպպոլիտեայ և Մեթոդիոսի հին խմբագրութեան, այսպէս այլ անոր անձնական նկարագրի մանրամասնութեանց մէջ՝ Դանիելի տեսլեան մէկ տեղին, յէջ 249, Ագաղթոնէն օժանդակուած է. վասն զի միւսներուն քով

1. Այս անունս Ագաղթոնի քով սխալմամբ կ'ստուար գրուած էր, բայց մենք ուղղագրել տալու համարեցանք՝ համաձայն Կեղերնոսի, որ Լեոն իսաւրացոյ որդւոյն Կոստանդինի մասին կը գրէ այսպէս. « Ex semine serpentis aspis et anguis volans... idoneum se Antichristi instrumentum praebuit, վասն զի, — կը յաւելու նոյն տառմագիրն, — թէ սա Քրիստոսի աստուածութիւնը ուրանալով կ'ըսէր նեղնելով. « Ita enim eum Maria peperit, ut et me mater mea Maria » ,

կը պակսին՝ « Զօդեայ անկրկնելի ի ծնգաց, հաշմ ակամբ », և այլն, տողերն: Ազադրոնի տեսլեան մէջ Նեոին գալստենէն յառաջ կը յիշուի Թագաւորութեան պատառուձն՝ ի տասն գաւազանս, որոց մին կը լինի Նեոին, որ սպաննելով միւս տասն Թագաւորները՝ ինքն լինի բացարձակ տէր. արդ այնը կը գտնենք, tale quale, Ենովքայ, Դանիելի տեսլեանց և Մեթոգիոսի քով: Աւելորդ կը համարինք նշանակել այստեղ երկուտեք եղած նմանութեանց անդրազոյն մանրամասնութիւնները, յորս Մեթոգիոսէն խտտորած ժամանակ՝ Ենովքայ և Դանիելի տեսլիներն Ազադրոնի հետ կը պահեն զգալի աղերսներ: Օրինակի աղագաւ, 383 իջի վերջին տողերն, յորս կը նկարագրուին Տիրերիոս Բի խաղաղական Թագաւորութիւնն և նիւթական և կրօնական բարիքն, նոյն են Ազադրոնի տեսլեան 146-147 էջերում նոյն Թագաւորի ժամանակ և նոյն կէտերով աւանդուածին հետ: Ենովքայ տեսլեան մէջ, յէջ 385, Նեոին՝ յաջորդել կը տրուի բարեպաշտ և խաղաղարար Թագաւոր մի, որուն ժամանակ կը լինի ապա գալուստ Տեառն, և հուր ելնելով յարևելից՝ կ'այրէ զՆեոնն և զամենայն ինչ. նոյնը կ'աւանդուի նաև Ազադրոնի տեսլեան 155 իջում, և այս Թագաւորս վիրիոն կը կոչուի որոշակի: Յամենայն դէպս, այս իսկ պէտք է ըսել, որ Մեթոգիոսի հայ. խմբագրութեան միջանկեալ մասէն աւելի հին է Ազադրոն, և հաւանօրէն անոր իսկ իբրև աղբիւր ծառայած:

Առ այժմ հնասիրաց ուշադրութիւնը կը հրաւիրենք մի ուրիշ մարգարէական գրութեան վերայ, որ կը թուի լինել ժամանակակից կամ ժամանակաւ մերձաւոր Ազադրոնի խմբագրութեան: Գրուածքս, զոր երկու տարի յառաջ հրատարակեց¹ Պետերբուրգի հայագէտ Ուս. Ն. Մառ, խորագրուած է Տեսիլ սոչրք վարդապետին Յովհաննիսի, որ մականունն կոզեռն կոչի: Տեսիլս ծանօթ էր Արիստակէս Լաստիվերացի և Մատթ. Ուռհայեցի պատմագիրներուն: Վերջինս՝ արտագրելով զայն իւր բնագրէն ի Պատմագրութեան՝ հասուցած է մեզ իբրև ի թուին հայ. ՆՁԵ = 1036-1037 յայտնեալ մի նոր բան, որ կը համապատասխանէ Մառի հրատարակութեան 23-26 էջերուն: Սակայն մենք

1. Հրատարակութիւնս եղած է ի թու. հայ. ՉկԹ = 1520 զրուած բուրգի ձեռագրէ մի, որ կը պարունակէ Մատթ. Ուռհայեցւոյ Պատմութիւնն և զեռ ուրիշ գրուածներ: Հրատարակչի զիտոզութիւններն ոռուրէն լինելով որոշ յիմացոյթէ արդեօք կոզեռն Վի տեսիլն տասնմինն գոյութիւն ունի յիշեալ ձեռագրի մէջ: Թէ ընդհակառակն Մատթէոսի պատմութեան ընդմէջ, ինչպէս է Երուսաղեմի յամի 1869 եղած հրատարակութեան 76-78 էջերում:

գիտել կու տանք, որ տգիտաբար Յոհ. Կոզեան վարդապետին ընծայուած այս տեսիլս, որ մի ուրիշ տեսլենէ 14 տարի վերջ գրուած կ'աւանդուի, ոչ այլ ինչ է, բայց եթէ յարասութիւն մի Հիպպոլիտեայ և Մեթոդիոսի տեսիլներուն, ըստ հայկական խմբագրութեան: Այսու աւելի բաղդաւոր է Կոզեան Վ. տեսիլն, զի կը պարունակէ հատուածներ ևս, որոնք բառական մեծ նմանութիւն ունին Ագադրոնի խմբագրութեան հետ, և շարաբանութեամբ իսկ համանման:

Ի թու. ՆՂԸ (1029) Կոզեան Վ. ընծայուած Ա. տեսիլն, որուն ոչ միայն յիշատակութիւնն՝ այլ և հատուած մ'իսկ կը գտնենք Մառի հրատարակութեան մէջ, յէջ 21-22, ստուգիւ շատ հետաքրքրական կ'երևի ինձ՝ փոքր մի յառաջ յիշուած գրութեանց նկատմամբ: Այս տեղ Մատթ. Ուռհայեցիին՝ թէ ուրիշ մէկն, յայտնի չէ, Կոզեան Վ. առաջին տեսլեան մի քանի տողերն անցողաբար արտագրելէն յետոյ, կը ծանուցանէ մեզ, հետևեալ նշանակալից խօսքերով, նաև ամբողջ անոր նիւթն այսպէս. «Ձայս այսպէս խօսեցաւ սուրբ վարդապետն Յովհաննէս՝ վասն կատարածի եղանիև և այլ ինչ ձառեաց... և զոր ասաց ամենայն կատարեցաւ մի առ մի՝ զեղիցն կատարի ազգին թողորաց՝ անաշոհն որդեղն ֆանայ»: Ենթագծուած նիւթերուն առաջինն՝ Հիպպոլիտեայ քով իսկ ընդարձակաբար ճառուած է, իսկ վերջինն, այն է քելիցն Թրքաց՝ մասամբ Մեթոդիոսի և երկայնօրէն Ագադրոնի քով միայն կը կարդանք: Թէ մէջ բերուած տեղիս և թէ Ա տեսլեան վերաբերեալ ակնարկութիւնքն՝ կը պակսին Ուռհայեցոյ պատմութեան երուստղեմեան հրատարակութեան մէջ. սակայն այդ հրատարակութիւնն, — ինչպէս ժամանակագրութեան յառաջխաղաց թուահամարներէն կը տեսնուի, — թերի է. զի ՆԿԷ թուահամարին անմիջապէս կը յաջորդէ ՆՂԹ թուահամարն՝ փոխանակ ՆԿԸ ին, և այլն, թուահամարներուն: Այս, — եթէ տպագրութեան սխալ չէ, — յայտնի նշան մ'է, թէ ստուգիւ ՆԿԸ-ՆՂԸ թուահամարներուն մէջ պատմուելիք նիւթերն ամբողջապէս անկեալ են, զորս բարեբաղդաբար կը լրացնէ այժմ Մառի գտած մեծայարգ ձեռագիրն: Մեր մատենագրարանի թիւ 986 գրչագիր մի, այն է Մովս. Եզնկացոյ ձեռքով հաւաքուած Ոսկեփորիկն յի՛ կը պարունակէ, յէջ 150, Յովհաննէս ձգնազգեաց և քսնիրոսն վարդապետի մակագրուած տեսիլն, որ նոյն է Մառի հրատարակածին հետ: Չնայելով, որ գրչագիրս հազիւ թէ Փն դարուն վերջը գրուած ըլլայ, սակայն և այնպէս անոր մեզ ընծայածն աւելի կաւարեալ է: Այս գրչագրիս մէջ՝ թէպէտև Մառի հրատարակութեան համեմատ, յիշեալ գրութիւնն՝ ՆՂ թուահամարով

կը սկսի, ըստ յամանակագրութեան Մատթէոսի, սակայն Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հրաշքը պատմելէն վերջ, խօսքը կը փոխուի գետադարձ Ս. Նշանի պատմութեան վերայ, ուր կը ծանուցուի նախ, թէ Տրդատայ և Գրիգորի ի Հռովմ եղած ժամանակ՝ Ս. Սեղբեստրոս ընծայ տուած էր զայն, ապա կը պատմուին անով գործուած անթիւ հրաշքներն: Ս. Արիստակէս՝ Նիկիոյ ժողովը գացած ժամանակ՝ անով արօրադրեց, կ'ըսուի, Բիւթանիոյ ժովը. անոր կը արուին Մեծին Ներսիսի, Պարսից՝ Հայոց դէմ տուած Զիրաւի պատերազմին և աքսորավայր կղզւոյն մէջ, գործած սքանչելիքն: Կը ծանուցուի, թէ այդ Ս. Նշանն կը գտնուի այժմ Կոստէնոյց դաւառի՝ Զազափանքի մէջ, ի սաՀմանս գիւղաքաղաքին Գառնոյ: Յետ որոյ կը շարունակուի Մատթ. ՈւռՀայեցւոյ պատմութիւնն և Կողեան Վէ տեսիլն ի թու. ՆՀԸ, Մառի հրատարակածին պէս, բայց ինչ ինչ տարբերութիւններով:

Կը ցաւինք որ Մատթ. ՈւռՀայեցին՝ երկայնութեան պատճառաւ՝ ամբողջապէս ընդօրինակած չէ Կողեան Վէ Ա տեսիլն, որ կը յիշուի երկրորդին սկիզբը, յէջ 78, որով պիտի կարենայինք պարզել Մեթողիոսի Հայկ. Թարգմանութեան մէջ ներմուծուած յաւելուածոց և Ազազրոնի ընծայուած խմբագրութեան և խմբագրողի ինչ և և ո՞վ ըլլալն: Սակայն, ըստ իս, Մառի հրատարակութենէն՝ մէջ բերուած ակնարկութիւնն՝ բաւական կուտան մ'է կարծելու, որ Յովհ. Կողեան կարող է եղած լինել Ազազրոնի և Մեթողիոսի տեսլեանց գէթ ընդարձակողն: Այս նկատմամբ՝ ուշադրութեան արժանի է հետեւեալն. այսինքն է, Կողեան Վէ առաջին տեսլեան իբրև շարժառիթ կը յիշուի, Մառի հրատարակութեան 20 իջում, ի թագաւորութեանն Հռոմոսոց Վասիլ Հանգիպած ահաւոր նշան մի. այսինքն է, ըստ բնագրին. « Յերրորդ ժամուս վերին հաստատոսթիան երկնից՝ յարևելից միևնչև յարևմտոս ընդ երկոս հերձառ երկնիքն, և համատարած յոյս սուկապէս հոսեալ եղև յերկիր ի հիսուխոյ կողմակև. և յահե քար կոսթեանև երեքեայ դոդմամբ դոդաց ամենայն տարասժք. և յառաջ քան զեռասղոյ յոսոյն՝ եղև գոլիան և բեղիան ահասոր ի վերայ ամենայն արարածոց, և աստեղքն երևեին որպէս ի մէջ գիշերի, վասն զի խառար կարազ գերկիր »: Մատթէոս՝ ի թու. ՆՀԹ եղած կ'աւանդէ զայս, սակայն յոյժ անյարմար, զի խօսքը Վասիլ Աէ վերայ է, որ յամին 886 մեռաւ. իսկ Կետրենոս և Գլիկաս մերթ Կոստ. Կոպրուհիոսի և մերթ Կեռն Իմաստասիրի ժամանակ նման նշան մի Հանգիպած կը պատմեն: Յամենայն դէպս, մեզ Համար Հետաքրքրական

այս է, որ այս տեղույս յար և նմանը կը գտնենք նաև Ագադրոնի և Դանիելի տեսլեանց մէջ: Առաջինն՝ այսպէս կը գրէ. « Հրօր երանե յարեւից, և հաստատի իրրև զսիան հրամանաւ անեղին Աստուծոյ... և փայրատակունց, ձայրմունց և որոտմունց, իսաար աղբաւղիին և մէք մասախոռոչ պատե զերկիր » . իսկ երկրորդին մէջ, յէջ 238. « Ի Դաղատիա յերկնից հոռ երևեսցի, և որոտմունց և փայրատակունց տախեսցեն զնա... և հարառային կողմն նորա արիան և ի հոռ այրեսցի » . և յէջ 248, « բարկութիւն յերկնից եղիցի ի քեղ (Յօթնաբարգ) և Հարումն յոյժ . և երևեսցի սիան հրեղէն ի յերկիր » : Քայց այսու Հանգերծ, քանի որ դեռ Կոզեռն Վի մակագրութեամբ ազազրոնեան տեսլեան Համանման Ա տեսիլը պարունակող ձեռագիր մի յայտնուած չէ, չենք կրնար վերապահութեան սահմանէն անդին անցնիլ և որոշ եզրակացութեան մի յանգիլ :

Ընովքայ և Դանիելի տեսիլները իրենց աղբիւրներով ուսումնասիրելէն վերջ, դնենք Հոս Համեմատութեամբ նաև ի կատարածի աշխարհիս և Նեոին վերաբերեալ նման տեղիքը, զորս նախընթացաբար՝ իրրև ոչ պատմական՝ առիթ չունեցանք նշանակելու, որպէս զի այնու ևս ցոյց տուած ըլլանք ընթերցողաց՝ անոնց մասին յայտնած մեր կարծեաց ճշմարտութիւնը :

« Մարտիցեն մարդիկ ընդ միմեանս, որդիք՝ ընդ հարս, և հարք՝ ընդ որդիս. մարք՝ ընդ դստերս, հակառակք ընդ միմեանս. եղբարք՝ ընդ եղբարս, սիրելիք՝ ընդ ծանօթս. ազգք ընդ ազգս, ժողովուրդք՝ ընդ ժողովուրդս, և քահանայք ընդ քահանայս » ...

« Զի ամենայն մարդկան շինի ընդդեմ միմեանց դարձուն... ժնողքն՝ ատեն զորդիս իշրեանց, և որդիք՝ ձեռն արկանեն ի ծնողս իշրեանց. կանայք՝ զարս իշրեանց մատնեացեն ի մահ, և այր՝ զկիև իշր ի դատաստան արկանե, որպէս պարտաւոր. տեսարք՝ զժառայս իշրեանց անմարդոշ, բիշն ստանան, և ծառայք առ տեսարս անկարգ բանս ցոռցանեն. ծերոց պլեաց ո՛չ ոք ակն ածէ, և ի մանկանց գեղեցկութիւն ո՛չ ոք խնայէ* :

« Ի յետին ժամանակս քակեսցին ի հաւատոցն, և հայեսցին յայսս մոլորութեան, ի վարդապետութիւնս դիւաց մոլորեալք. ստարանք, և միտք նոցա թըմբեալք. զի ասէ եղիցին մարդիկ անձնասէրք, փափկասէրք և արծաթասէրք, հըպարտք, հայհոյիչք. անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, աննուէրք, անգութք, բանս արկուք, անժուժք, վէսք », և այլն

« Երբժմունք տեղեաց տեղեաց, նենգութիւն առաջնորդաց, տատանումն սրբոց, հալածանք քա-

« Տահարքն** Աստուծոյ՝ որպէս ըստուերք լինին, և կործանումն եկեղեցեաց... գրեանք արհամարհին,

« Բարձրի պատիւ քահանայից, և բիծ մտցէ ընդ սպասաւորս Աստուծոյ, դարարեսցին անեանայն կարգք և

* Յովհ. Կողբ. « Բառնալոց են զօրութիւնք սրբոցն յերկրէ, և քակին բազում եկեղեցիք... զբռնին որդիք՝ ընդ հարս, ատեցողք լինին հարք առ որդիս. յարիցեն եղբարք՝ ի վերայ միմեանց, և ջանան կորուսանել զիրեարս. ուրանան զգութ եղբայրսիրութեան », և այլն :

** Յովհ. Կողբ. « Ի հակառակութենէ առաջնորդաց և ի շխանաց փակելոց են զբունք եկեղեցեաց, և վերանայ սրբութեանն կարգ... լինելոց են մարդիկ ցանկասէրք և ախախց փափազողք, որոճալով որոճան զերգս դիւականս. կրօնաւորքն փախին յանապատէ յգլխանաւք, և առաջնորդքն աշխարհի արծաթսիրութեամբ » :

ԻԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԴ .

« Ի ժամանակին
 յայնմիկ եղիցի քեզ
 (Եօթնարուր) նեղու-
 թիւն մեծ, այր որ ու-
 նիցի զկին եղբոր իւ-
 բոյ, որդի՝ զմայրն իւր,
 և դռստր՝ ելցե՛ յան-
 կողինս հօր իւրոյ, եղ-
 բայր՝ զքոյր իւր. և քա-
 գատրք ընդ քազաւորս,
 իշխանք՝ ընդ իշխանս,
 հզօր յաղքատոյն վի-
 բայ յարիցէ, և ան-
 կումն եղիցի հարստին
 և աղքատին :

Եւ յուրվեսցին հայ-
 հոյոսքիւնք, մարդա-
 սպանոսքիւնք, երդ-
 մոնք, չարախօսոս-
 քիւնք, ստոսքիւնք,
 պղծոսքիւնք, ցաւք,
 յափշտակոսքիւնք, եղ-
 բայրատեցոսքիւնք,
 խռովութիւնք, հե-
 ղումն արեան ի տա-
 ճարի սրբոց սպասա-
 ւորաց » :

« Չի ոչ գտանի յայն-
 ժամ արդարութիւն ի
 մարդիկ, այլ եղիցին
 ամենեքեան որպէս
 փուշք ի կիզնուլ յա-
 նօրէնութեանց իւրա-
 քանչիւր » :

« Ընդ նմին վառեալ
 բորբոքեսցին վրէժ-
 խընդրութիւնք ի մար-
 դիկ, և սովք և սուրք
 և հրկեղութիւնք » :

« Հանայից , խոտո-
րումն սուրբ հաւատոց
և երկմտութիւն ժո-
ղովրդոց » :

« Սիրեսցի ստու-
թիւն և ծնցինախանձ,
զրգոեսցի անօրէնու-
թիւն , և ատեսցի ար-
դարութիւն . յաճա-
խեսցէ անժուժկալու-
թիւն , և խափանեսցի
զգաստութիւն » :

« Շարժմունք տե-
ղեաց , նեղութիւն քա-
ղաքի , բորբոքումն հրոյ
ի տեղիս տեղիս , սա-
սանութիւն բազում...
Եւ եղիցի անհանգիստ
և անճանապարհ և ան-
ապատ այս երկիր...
Եւ ի ժամանակին յայն-
միկ ծով բազում ան-
զամ տեղիս փոխես-
ցէ , և վիհք եղիցին . և
օղք փոխեսցին , և

« և երգս թշնամոյն
ընդ ամենեւեան եր-
գեն » .

« Յաճախեն պոռ-
կերկոտիւնք , շնորհանք ,
երդմնագանցոտիւնք ,
ամբարհաւանութիւնք ,
աղանդութիւնք . մար-
դիկ աղանդաւորք , ա-
պականագործք , առ
միմեանս սոռտք , ա-
զաւք , յափշտակողք ,
մատնողք , հովիւք որ
զայլք լինին , կրօնա-
ւորք՝ ըստ աշխարհիս
ձեանան ցանկու-
թեամբ , զինչս և փափ-
կութիւնս սիրեն , մե-
ծատունք՝ անգթու-
թիւն զգենուն » ... :

« Այլ և տարեբք
զկարգս թողուն , քան-
զի շարժի ամեկայն
երկիր . անչափ որոտ-
մունք , անեղակերպ
կայծակոռնք , որ զա-
գարախս և գտունս կի-
զոռ : Մրբիկ հողմոյ ,
որ զծով և զցամաք
այնչափ խռովեցուցա-
նէ . երկիր անպտռոյ ,
ծով գոչէ , և սասա-
նունն անձանց անբա-

« ընծայք պատարա-
գաց եկեղեցեաց , եղի-
ցին քահանայքն իբրև
աշխարհականք » :

« Անդ ժողկի անգր-
բոտիւն

և գոռանաց սէր բու-
սանի » ...

« Բազմանան նե-
ղութիւնք ի վերայ եր-
կրի եօթնպատիկ Հինգ
անգամ նեղութիւն
սաստիկ և անբաւելի .
անչափ սով և կոտո-
րումն և փոյթ ընդ
փոյթ խորտակումն
մարդկան և անաս-
նոց... : Անկանին հա-
րուածք ի վերայ եր-
կրի և մարդկան... »

ԴԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԿ .

« Եւ ի ժամանակս նորա՝ առջ մեծ եղիցի և ոչ փոքր, և ապա կանեսցի երկիր ի մարդկանէ. և հոսանք ջրոց հոսեսցեն, և օդք սևաքոյրք խառնակեսցի. և այգիք քո սահաւացին, և վայելչութիւնք քո նեղեսցին, և պակասեսցին աուբք, և եղիցի օրն վեցժամեան » . . .

« Եւ այլ ևս ամբ վեց իշխանութեան նորա, որ լինի նեղութիւնք ի վերայ նեղութեանց. անբերոշքիանք անդաստանաց, նոռագոռքիանք աղբերաց, երաշտոռքիանք երկրի, անպտղաբերութիւնք տնկոց, գօսուամն անտառաց, անկուամն մայրից, խամբուամն ծաղկանց, բոր-

« Յառաջ հոռք երանե յարևելից և հաստատի իբրև գսիշև՝ հրամանաւ անեղին Աստուծոյ . . . Գետք հրեղեք երանեն յարևելից՝ հրոյն չափ՝ սրբէ և մաքրէ զամենայն երեսս երկրի ի չարութենէ . . . կարկուտ հրեղէն և հեղեղ բոցեղէն յարձակին ի վերայ երկրի . . .

« Թռչունք երկնից տեղափոխեսցին, և Սոդոմացւոց ծովն՝ ըզձկունս եռացուցէ. և հուր բազում անգամ առաքեսցէ... և երևեսցի արեգակն ի գիշերի և լուսինն՝ ի տուընջեան. և ի փայտէ արիւն կաթեսցէ, և ի քարէ բարբառ լուիցեն » :

« Եւ եկեսցէ յայտնի ապտամբութիւն, զայլով եկեսցէ անուն իմ՝ նոր նորոգմամբ անճառ փառաց իմոց և դօրութեան, և ըզբազումս զայթակղեցուցէ, և զօրասցի » ...

« Ժանելի, կորոշստ մարդկան.

երան
յարեգակն և ի լռսին. կորուստ և խաւարումն աստեղաց. կափկափումն հեթանոսաց. յօրս շամանդադ, իջումն կարկտի, տապալումն անմիութար. քաղաքաց և շինից այրեցումն յանկարծակի անկասկածից » ...

« Զի որպէս ի ցեղէն Յուդայի ծնաւ Քրիստոս, այսպէս և ի ցեղէն Դանայ ծընանի Նեոնն » ...

« Քանզի փրկիչն աշխարհի կամեցով կեցուցանել զազգս մարդկան, յանարատ կուսէն Մարիամայ ծնեալ մարդ ճշմարիտ... տանայ ծնանի ի մոլեգիս և պիղծ կեղծի » ...

« Յայնժամ Հրամայէ Տէր Հրեշտակին և շարժէ երիցս անգամ զԲաբելոն մեծն, այսինքն է, զԿոստանդնուպոլիս. և ընկղմի քաղաքն, և ժածկեցնա ծովն՝ չար ժողովրդովն » ...

« Յայնժամ յայտնեսցի մարդն անօրէնութեան և որդին կորըստեան » ...

« Զի որպէս Քրիստոս ի պակասել իխանութեան Յուդայի եկն, նոյնպէս և Հասկառակն նորա՝ ի պակասել քաղաքորոշեան Հռովմայեցոց » ...

« Արդ մի կարծէք թէ սատանայ է նա կամ դև, այլ մարդ է՝

ԳԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԴ .

« Երկիր շարժեցի ,
և անկցին մեհեանք :
Եւ ծով եռացուցե գա-
լիս ի վերայ , և ժած-
կեացե զմարդիկ . . .

« բորոզմն և տոչորոզմն
կրոյ , ցեղոզմն օդոյ ,
ման՝ բռչնոց , պակա-
սոզմն ձկանց , կործա-
նոզմն երեոց , անբե-
րութիւնք անձրևի և
զեանք եղեման և
կարկտի , մարդկան
անծնելութիւն և ամ-
լութիւն և կարճակե-
ցութիւն , և ամենայն
իրաց պակասութիւն ,
և ապականոթիւնք ծո-
վոչ և ցաւաքի » . . .

« Ամպք և փայլատա-
կունք , ճայթմունք և
որոտունք , խաշար
աղջարդջիկ և մեզ մա-
ռախոշոյ պատե գեր-
կիր . . երկինք պղըն-
ձանան և երկիր չորա-
նայ . ժառք գաշա-
նան , և ամենայն գե-
ղեցկոչքիւնք մարդկան
ապականիկ » . . .

« Եւ յայնժամ տի-
րեսցէ՛ Նեոնն , և մար-
դիկ յաստուածպաշ-
տութենէ խոտորեա-
ցին՝ յանհաւատ ի
զալստենէն , զոր ոչ
խնդրէին և ոչ ակն
ունէին . այն՝ որ ոչ
հաւատային ի նա՝ որ
ամենայնի ընդդիմա-
կացն էր » :

« Եւ զկնի ԾԱ (ա-
մաց) քազառորեացե ա-
պրստաւրն ,

« Եւ ի սորա ժա-
մանակն յայտնի որ-
դին կորստեան՝ ար-
բանեակն սատանայի՝
Նեոնն » . . .

ԵԶԲ

ՀԻՊ.

ՄԵԹ.

« Եւ որք չհաւատանն ի նա՝ հնազանդեցուցէ... »

և մոլորեցուցէ զնոսա հոգին մոլորութեան »...

« Նախկին՝ գերեական ազգն սիրեցէ, և զկնի այսր ամենայնի նշանս կատարէ, բայց ոչ ճշմարիտ, այլ մոլեգնաբար, զի խաբեացէ զնմանն իւր զամպարիշտս, այլ թէ հնար իցէ և զընտրեալս ի բաց ընդենու ի սիրոյն Քրիստոսի »...

« ապականեալ մտօք, ի տոհմէ մարդկան, ի սերմէ հօր, յորովայնէ մօր. ծնանի ի Քորագին, և սնանի ի Բեթսայիդայ, և զարգանայ ի Կափառնաում՝ ի վերայ տասնց յշխանաց, որ քաժակեալ յիցի: Յայնժամ ի մին ինքն քազաորեցէ, և զերխն սպանանէ և զայլն զքառք ածէ, և քազաորէ ժամանակս երիս և կես ժամանակի: Էշ ծնանի սա ի կնոջէ յագգէն Դանայ... զի գայ և զօրանայ ի սատանայի, յորում ծնունդն նորա զօրութեամբնորա է... »

Ծնեալ ասէ յագգէն Դաւթի »:

« Զինքն Քրիստոս զոլ ասէ, և ժողովին առ նա Հրեայքն և հաշտտան նմա... Այսպէս ստուծեամբ պատրէ զթեթեամիտ Հրէայսն և, եթէ հնար է, զընտրեալսն »...

« Եւ կերպարան »

« Նախ զառաջինն »

ԴԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԴ .

« Սա յղասցի և ձեցի, զոր ոչն խընդրեին, ի կռահ պիտոյ . և կալցի գառազանն զագ մարդկան՝ ի ժամանակս երիս և ի կես ժամանակի » ,

« Թոյ է նշանս
« Թոյ է նշանս » :

« և զօրասցի ի վերայ տասն բազառոսացն , և հարցե զկրկիկն ի ևնցանկ , և քակեալ կործանեացէ զիշխանոսիան տասանցն , և ասեալ յիկըն զբազառոսիանն՝ խաղասցէ ի վերայ Պաղեստինի և ի վերայ իշխանոսիանն որդոցն իսմայելի . և դարձեալ յաղթութեանք և բազում աւզնականօք հարաւային ազգին՝ ի վերայ Պաղեստինայ եկեացէ և հարցէ ըզնա . և բորբորեացի սրտմտորիան և որսորպէս առձի ընդ ամենայն երկիր » ...

« Լինի կին մի յազգէն Իսմայ . . . ասնոս կիկն յորոսիան ի սերմանէ սաստանայի, և յայնժամ փախստական լինին յերկիրն Սարթիս՝ ի քաղաքն Քորագիկն , և անդ ցնկնի զպիղծն և զաղտեղին զՆեռնն՝ զորդին սատանայի . . . Ետտի յարոս բազառոսութեան՝ ի տասն գառազան , յորոց մինն Ենթիկն լինի . ի սոցանկ զեքսն հնազանդեցոսցանկ , և զիրիսն սպանանկ ձեռամբ իորով , և իկըն բազառոսէ գառոսս ՄՀԷ(Ե) » ...

« Եւ այս են կեր-

« գիմաց նորա մթա-
զին, հերք գլխոյ նո-
րա սրեաք իբրև ըզ-
սլաք. յօնք նորա իբ-
րև. գդաշտ (ողորկ),
ակն նորա աջ՝ իբրև
զաստղ, որ ծագիցէ
յառաւօտու, և միշն
անքրիք (հաշմ). բե-
րան նորա կանգնա-
լափ, ատամունք նո-
րա իբրև զմանգաղ,
հեաք ոտից նորա իբ-
րև երկուց թղաց, և
ի վերայ ճակատու նո-
րա գիր՝ Նեռնն* » .

« լինի հեզ, հանդարտ,
սիրական, պարկեշտ,
խաղաղարար, իրաւ-
ատեաց. գարշի ի կա-
շառուց, հեռանայ ի
կռապաշտութենէ, սի-
րէ զգիրս, ի քահա-
նայս խնայէ, զալիս
ծերոց պատուէ, ի
շնութենէ գարշի, ըզ-
պոռնկութիւն ոչ ըն-
դունի, զմատնութիւն
ոչ կամի, օտարասէր,
աղքատասէր, ողոր-
մած »¹ . . .

* Այս նկարագիրս Եզրի ընծայեալ մի ուրիշ գրուածէ, այն է Ἀποκάλυψις = Յայտնութեան՝ յոյն բնագրէն թարգմանելով զբինք աստ, ըստ հրատարակութեան Տիշենդորֆի (Apocalipses Apocryphae, Lipsiae 1866. p. 28-29), որ ունի ինչ ինչ նմանութիւն Գանիելի տեսեան նկարագրածին հետ, զոր պիտի տեսնենք:

1. Հոս գիտել կու տանք, որ Հիպոլոլիտ այս նկարագրես վերջ կը յարէ ապա հետեանալը. « Ապա զկնի այսր ամենայնի բարձրացուցանէ զսիրտ իւր, և որ յառաջ հեզն էր՝ լինի զժնիկ. և որ զհետ երթայր սիրոյ, լինի անողորմ. և որ խոնարհ էր սրտիւ, լինի ամբարտաւան և ամարդի. և որ ատէր զանիրաւութիւն՝ զարդարն հալածէ: Եւ իբրև բարձրանայ ի թագաւորութեան իւրում, յարուցանէ պատերազմ, և հարկանէ սրտմտութեամբ զմեծամեծ թագաւորսն զԵգիպտոսի, զԼիբիոյ և զՀընդ-կաց: Եւ զնի յայտիկ լինիցի զհաճախ յերսասողեր՝, և զայն գալիս ի սոյ ի յեր- Հրեից, և ապա ի վերայ ամենայն մարդոց վերացուցանէ զսիրտ իւր. և ոչ այսչափ միայն, և Աստուծոյ ընդդէմ հայտնութիւն խաւսի » . . . Այս նկարագրիս ենթազօժուած խօսքերն պատմական կերպով արդէն կատարուած են Յուլիանոս Ուրացոյի ձեռքով. հետեալբար, տողերս զրոյն ևս կամ անոր ժամանակին և աղե-տից ակնատես, և կամ անկէց վերջ ապրող մէկն ըլլալու էր:

ԻԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԴ .

« այս Զօդեալ անկըրկ
նելի ի ծնդաց , հաշի
ախար , պորկայօն ,
մանգարաւաւուն , սրա-
գրոշխ * , շնորհաւոր ,
մեծարան , իմաստուն ,
քաղցրածաղր , տեսա-
նող , խորհրդական ,
սթափ , հեզ , հան-
գարտ , նշանագործ

« պարանք որդւոյն
կորստեան . Զախ ակն՝
խաժ , ներքին շուրթն
սուզ , ձախ ձեռն՝ եր-
կայն , աջ ձեռն կարծ :
Ի ձակասն նշան ունի
ՈկԶ , որ քարգմանի
ուշրացող Քրիստոսի՝ :
Քանզի որովայն ոչ
ունի , այլ արտաքսի
և ընդ բերանն ելա-
նէ : Խածանաւզ աւձն՝
որդին կորստեան՝ և
զկանայս ստնդիայս
բերէ , և ծծէ զստինս
նոցա՝ զազանն մար-
դակերպ ... մինչև մե-
ռանին կանաքն ի
չար թիւնից ժանդին :
Զարգանայ հասակաւ ,
և ամենեցուն մար-
դասիրութիւն ցուցա-
նէ : Եւ յայտնի ի
մեծազգի ի թագա-
ւորական տոհմէ , զամ-
բազեղ , խոյաքիթ ,
կորովի , մեծաձայն և
անուն նորա զեղեցիկ՝
Կոստաս » ...

* Ենթադրուած խօսքերս՝ անտարակոյս Եզրի Յ-յրևո-թեան յիշեալ տեղէն փոխ
անուած են , և մնացածն՝ նոյն է Հիպոլոդիտեայ նկարագրին հետ . իսկ որովհետեւ
Եւրի պղ զբութիւնն , ըստ կարծեաց զիտնոց , Ը դարուն խմբագրուած է , ուրեմն
կը հետեւի , որ Դանիելի տեսչեան հայկական խմբագրութիւնն այս ժամանակէս այլ
վերջ կատարուած ըլլայ :

1. Այս տեղիս փոխ անուած է Հիպոլոդիտոսէն , որ առաջին անգամ Յովհ .

« Եւ յայսր վերայ նշանս և արուեստս առնէ. զանդամալոյժըս յարուցանէ, ըզդեա հալածէ, զհեռաւորս՝ որպէս ի մօտոյ պատմէ. զհեռի ոսկերս կանգնելով յարուցանէ, զմեռեալս յարաջանէ, զայրիս պատուէ, որբոց տիրապետէ, զամենեսեան սիրէ... ի վերայ ծովու գնայ, ի յօգս վերանայ: Եւ զայս ամենայն առնէ խորամանկելով և նենգաւոր... և զամենեսեան կամի պատրել, առ ի յառնել զնա թագաւոր »...

« Նա է, որ ասիցէ. Ես եմ որդի Աստուծոյ, և զքարինս արարի հաց և զջուրն գինի... Եւ ասէ մարգարէն. Տէր ծանոխնձ, որ է կերպարան նորին, և ես յայտնեցից մարդկան, զի մի հաւատասցեն ».

« Փոփոխէ զօգս, կանանչեցուցանէ ըզչոր փայտն, յարուցանէ զմեռեալս, յուսառոթէ զկոյրս, ըզկաղս, զմիակողմանիս, զբորոտս, զգրեալս արս բժշկէ, ջուր քիսէ, հաց անձրևէ ».

« Եւ այնպէս առաջի աչաց տեսողաց փախադրէ զյերիս, ի ջուրս և հողի յերկնից,

« Շարժէ զերկիս և զերկիր. և հոռ

Յայտ. Ժ. Ի. 9 « որով նշանէ » բացատրութիւնը փոխեց ՊԵՏԻ = 666, և մեկնեց ἀποθνήσκω, այսինքն է՝ « մեռնում », կամ ուրացող Քրիստոսի: Ազադրոն՝ կոստանդին կոպրոնիմոսի յարմարեցուցած է, հետեւեալ արարուածովքն. որով կը մեկնուի և կոպրոնիմոս անունն, այն է աղբարոյն:

ԴԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԴ .

« Մօտ ունեւորվ զո-
գիս կորուսելոցն, ի
քարանց հաց հանել,
կոշրաց՝ տեսանել, կա-
ղաց՝ գնալ, և գրերինս
տեղադրէ ի տեղի փո-
խել *... »

« Եւ նա կախար-
դութեամբ և շարեօք
ցուցանէ ամենեցուն
ըստ պիտոյից իւ-
րեանց .

և յորժամ ըմպել կա-
մին զչորոն՝ արիւն յի-
նի, նոյնպէս և զհացն
ի յռատելն՝ քար յի-
նի... »

« Սուտ նշանք և
արուեստք, որովք
զարհուրեցուցէ զեր-
կըրպագուան իւր, և
չարչարանօք կատա-
րեսցէ զսուրբս բար-

« Եւ նա ոչ լե-
րանց և ոչ կղզեաց
փոփոխումն գործէ, և
ոչ չոր փայտին կա-
նաչ և ծաղկաբեր առ-
նել, և ոչ աստեղաց

* Այս տեղիս, յայտնապէս կը տեսնուի, թէ մեթոզիոսեան, այն է վերջի
խմբագրութենէն փոխ տոնուած է:

« արասցէ գտի՞ն՝ գիշեր, և զգիշերն՝ տիւշարեգակն դարձոցաւ, և նոր և խորհի, և միանգամ (այն) զամենայն տարերս, դերկիր և դժով՝ զաւրութեամբ երևմանց իւրոց տեսողացն ցուցանէ, ի ծառայութիւն իւր » ...

« Իսկ որ կարօտին կերակրոյ՝ ամենեքեան եկեալ երկրպագեն նըմա, և ևս տացէ նրա շան գրոյ յաջ ձեռն և ի ձակատս, զի մի՛ որքնաւ զպատուական խաչն նշանիցէ աշոյ ձեռամբ ի դէմս իւր, այլ կասկեցի ձեռք նորա. և յայնմ հետե, ոչ ոռնի իշխանոչիւն կնքէ զանդաւն իւր, այլ պատրոդի զիցէ զանձն իւր՝ » ...

« Բայց կնիքս այս՝ համար թուոյ, վեց հարիւր վաթսուն և վեց. և որպէս ինձ թուի գիրս այս, բազում անուանք ի թիւս յայս գտանի. այլ ասեմք

« արկանէ յերկնից, և խաւարեցոցանէ զարեգակն և զոռնիս, քորաիէ զաստեղս » :

« Այլ ամենայն առաջօք է և ոչ ճշմարտութեամբ » ...

« Յայնժամ մտանէ որդին կորստեան յնորուսողէմ, և նստի ի տանարին Աստուծոյ, պատուեալ յամենեցունց՝ իբրև զԱստուած. և որք հաւատան ի նա՝ ընկալցին նշան ի ձակատս իւրեանց » ...

1. Նշանաւոր են նաև Հիպոդոդիտեայ յետադայ տողերն, Նեոխն կնքոյ նկատումք:

ԴԱՆ .

ԵՆ .

ԱԳԱԴ .

« Առաջօր արասցի
զայն ստեճայն, և բա-
զումք հաւատասցեն ի
նա... »

« Վայ այնոցիկ որք
հաւատայցեն ի նա,
և առնուցուն զնշանն
նորա .

« աջ նոցա կայտեալ՝
ոչ դասնայցի անդրեմ՝
յոր յոչսացանն յա-
ռաջագոյնն* » :

« Ճրեւոյն, որք ոչ հա-
մարեցան նմա պաշ-
տօն տալ իրրև Աս-
տուծոյ » ...

« Ապա անուանես-
ցէ զանձն իւր Աս-
տուած, և խօսեսցի
ամբարհաւանութիւն
առաջի բարձրելոյն և
երկիրպագցեն նմա ա-
մենայն անօրէնք » :

« քաշրափել և քաշրա-
փիլն... գետ հրեղին
յարոռցանէ, և ոչ այն
է ճշմարիտ .

զամենայն զոր առնէ
նշանս՝ առաջօք է, և
թուլասիրաքն հաւա-
տան նմա » :

« Եւ նա դեկ ըզ-
նշանն ոչսացոթեան¹
յաջ ձեռնն և ձակատն,
առ ի ոչրանալ զՔրիս-
տոս . և ոչ հաննէ խաչ
յերեսս իարեանց » .

* Տեղիս, անտարակոյս, կամ Հիպպոլիտոսի խմբագրութենէն առնուած է, և
կամ լաւ ևս Ագապրոնէն :

1. Գրանիւրի մարգարէութեան Է զլիսու 26 համարին և Յոհ. Յայրնա-Ռիտն յԳ
զլիսու 9 տան մէջ ևս նման բացատրութիւն մի կայ, այսպէս . « Ով ոք երկրպա-
գեսաց գազանին և պատկերի նորա, և կամ զքրոջ՝ նշանն նորա առ ի ճակար իւր և
իւր ի վերայ ովոյ յերթն իւրայ » : Սակայն Ագապրոն, յայտնապէս կը տեսնուի, որ
Հիպպոլիտոսէն ուղղակի փոխ առած է, ինչպէս ցոյց կու տան « ուրանալ զՔրիս-
տոս » և « ոչ հաննէ խաչ յերեսս իւրեանց » բացատրութիւնքն . զի Յայտնութեան
մէջ գրուած է պարզապէս . « Որ ոչ իւրտոյցի քնիւ և վաճառել, եթէ ոչ ունիցի զգրոջմ
զրոյն և զանուն գազանին » :

Եթէ գիր կնքոյս այս
 ոչրանամ ասէ, քան-
 զի ըստ յունական
 գրոյն՝ ուրանամն (ἀρ-
 νοσμαι) եօթն բան
 խաւտի. առաջինն՝ մի
 ասէ, երկրորդն՝ հա-
 րիւր, երրորդն՝ յի-
 սուն, հինգերորդն՝
 չորս հարիւր, վեցե-
 րորդն, քառասուն, և
 եօթներորդն՝ հինգ,
 որ է՝ վեց հարիւր վաթ-
 սուն և վեց. քանզի
 յառաջագոյն ի ձեռն
 սպասաւորացն իւրոց,
 որ էին կռապարիշտք,
 դատախազ թշնամին
 հրաման տայր. Ու-
 բացիր, ասէ, զԱ-
 տուած զխաչելիալն :
 Սոյնպէս լինի և բա-
 րիատող կնիքն, ասէ .
 Ուրանամ զհաւատս
 իմ, և ի քեզ դաւանեմ
 և ի քեզ հաւատամ » :

1. Տառն α երկիցս հաշուելով. այսինքն է, $\alpha = 1 \times \alpha = 1$, և վրան աւելցնե-
 լով $\alpha = 10$ որ հաշուած չէ, կունենանք ճիշդ 666 թիւը: Կանոնիկոսն Մէմէն (No-
 tice sur le Calendrier Pascal, Paris 1897) Դանիելի է գլ. և ցու. ցայտ. Ժ.Գ
 գլխու դազանը փոխանակ ἀρνοσμαι բային՝ μαρομετις անուան պատշահեցնելով, և
 հաշուելով ըստ թուոյ յունական նշանագրաց՝ նոյնպէս 666 թիւը գտած է: Հեղի-
 նակին կարծիքով, Դանիելի մէկ և կէս ժամանակն՝ ըստ մեկնաց՝ է մէկ արեգակ-
 նային տարի = 365 օր և մէկ քառորդ տարւոյ, այն է երեք ամիս. ուստի օրն՝ ըստ
 տարւոյ հաշուելով, կու տայ 1,278 տարի, զորս աւելցնելով Հեկերէի 622 թուա-
 կանին վերայ՝ կունենանք 1900 տարին, յորում պիտի լինի դանիելեան դազանին
 կամ ուրացողի թագաւորութեան վերջը:

իսկ վերջի էջերն, ուր կ'աւանդուին 'Նեոին' խարեպատիր հնա-
բիւք իր հետևողներուն վերայ բռնակալելէն վերջ՝ անոնց վերայ
հասած բնական և բարոյական չարիքներն, ընտրելոց՝ քարանձաւ-
ներու և ծերպերու մէջ փախստեամբ ապաստանին, Աստուծոյ վրէժ-
ի նդիր հրոյն յայտնուիլն, այլովքն հանդերձ, Ծնովքայ և Գանիելի
տեսիլներն մասնաւոր կերպով Հիպպոլիտեսէն փոխ առած են միայն :
Ահաւասիկ օրինակներ .

ՀիՊ .

ՏԵՍ . ԴԱՆ .

ՏԵՍ . ԵՆ .

« Եւ ապա զկնի
այր ամենայնի՝ եր-
կինք ոչ տան զանձրև .
երկիր ուրանայ ըզ-
պտուղ իւր, և ծով՝
ի ժանտահոտութիւն
դառնայ . գետք ցա-
մաքին, ձկուռք ծովու
ստակին, ծովակք
ցամաքին, աղբերք և
լուրք պակասին . գա-
ղանք ի վերայ մարդ-
կան յառնեն . անա-
սուռք և չորքոտանիք
մեռանին, մարդիկ ի
սովոյ և ի ծարաւոյ
վախճանին . հայր՝ որդ-
ւոյ գիրկս արկանէ,
և ի միասին մեռա-
նին . այնպէս և մայր՝
դստեր, և ոչ ոք է
որ թաղէ զնոսա, այլ
ամենայն երկիր ի
մարմնոց դիականց
անկելոցն լցեալ լինի
ի ժանդահոտութենէ .
և ծով՝ զի ոչ ընդու-

« Յայնժամ սով ե-
ղիցի մեծ յոյժ, մի՛
տիրեսցեն երկինք տաշ
զանձրև և երկիր մի՛
բոռսուսցէ գրաչարի .
եղիցին չորացեալ ա-
մենայն պտուղք . . . ա-
մենայն ինչ յառող
այրեսցեալ չորասցի . . .
մկռռք հրաձևք և պր-
դրնձիք եղիցին . . . և
գագանք գիշակերք ի
չերանց իջցեն » . . .

« Սրք՝ տղայովք, և
կանայք՝ ստնդեսացք
հանդերձ կորնչիցին . .

« Եւ յայնմ հետէ
եղիցի սով յերկրի ըզ-
հինգ ամ, և արգելցեն
երկինք զանձրև, և ոչ
տացէ երկիր զպտուղ
իւր . և ոռակեսցի ծով,
և սատակեսցի գա-
ղանք և անասունք . և

անկցին մարդիկ և
մեացին ի մէջ քաղա-
քաց,

և ոչ ոք իցէ, որ քա-
ղիցէ . . . »

նի զգնացս գետոց,
մաւրակաս տղմոյն նը
մանիցի, և այնչափ
գարչելի հոտովն ընու-
ցու: Յայնժամ սովն
զաւրանայ ի վերայ
ամենայն երկրի »:

« Յայնժամ լաց
անչափ, յայնժամ
հառաչանք անլուելիք.
մարդիկ երանեն զյա-
ռաջագոյն մեռեալսն,
և ասեն... »

Երանի՛ ձեզ, զի ոչ
հասէք յաւուրս յայ-
սոսիկ. երանի՛ ձեզ,
զի ի կոծական կեն-
ցաղս ոչ տեսէք զան-
միսիթար սուգս զայս
և նեղութիւնս, որ պա-
տեալ է զանձամբս »:

« Իսկ որ աստուա-
ծաշունչ գրոց ունկն
գիրլինին, և ի ձեռս իւ-
րեանց ունիցին միշտ
քննել և իմանալ...
փախչին ի լերինս և
ի փապարս երկրի թա-

« Եւ յայնժամ ա-
մենայն գառառք ի քա-
ղաքք ողբասցեն զիւ-
րեանս... Եւ կիև մի
երկրակոխեալ յարեւ-
ելս, յարեմուտս, ի
հիւսիս և ի հարաւ,
և մի՛ գտցէ պտուղ,
բայց միայն գտցէ ձի-
թենի մի, և գիրկս
արկեալ ձիթենւոյն՝
յոգոց հանցի, և ա-
սիցի. Երանի՛ այնմ
որ տնկեալ է զձիթե-
նիս զայս: Եւ ոգի եռ-
րա վերասցի ի նմանե-
անդէն ի տեղառջն »:

« Իսկ որք թնակեալ
իցեն ի յերիւս և

ՀԻՊ .

ՏԵՍ . ԳԱՆ

ՏԵՍ . ԵՆ .

« քուցեալք , հանդերձ արտասուօք և բեկեալ սրտիւք աղաչեն ըզմարդասէրն Աստուած , և նա փրկեսցէ զնոսա ի չարաչար գայթակղութենէ նորա » :

« Որպիսի չար ժամանակք և աւուրք լինիցին նոցա . քանզի յարևելից մինչև յարևմուտս ժողովին , և յարևմտից մինչև յարևելս եկեսցեն , և լան մեծապէս : Ընգեցեալ լինի ոսկին և արծաթն յանցս և ի փողոցս , և ոչ ոք իցէ , որ ժողովիցէ . և զամենայն ինչս պիղծ և ատելի համարեսցեն . և ամենեքեան ի փախչելն և ի թաքչելն փութան » . . .

« Թառամի տեսիլ երեսաց և գեղեցկութիւն կանանց , և լինի կերպարանք նոցա որպէս մեռելոյ , և ամենայն մարդկան ցանկութիւն անցանէ : Իսկ բարեգութն և մարդասէրն Աստուած յայնժամ ոչ ի բաց

« յայրս և ի ծերպս և ի փապարս երկրի , և ոչս միայն կարասցեն փախչել՝ միևչև ցերկրորդ գաղաւթն , որ ծնաւ ի սրբոյ կոռսն .

« փախչելով փախիցեն , և մի՛ փախիցեն յարևելից յարևմուտս , և յարևմտից յարևելս .

« Արհամարհեսցի ոսկի և արծաթ , և ոչ ոք իցէ՝ որ ժողովիցէ ըզնոսա .

« արհամարհեսցի գեղեցկոսքիս կանանց :

« Յայնժամ ընտրեալքն նորս յայտնի եղիցին , և տեսանելով զյաշիտե-

« Եւ լինի ողորմութիւն բարձրելոյն ի վերայ երկիշխածաց իւ-

« Թողու զազգս մարդկան առանց մխիթարութեան, այլ կարճէ զաւուրսն զայնուսիկ՝ վասն ընտրելոցն, որոց թաքուցեալ լինին ի լերինս, և ի յայրս և ի մացառս խորածորոց.. զի մի սրբոցն այնոցիկ ապաւէն յուսոյն նուազեացի »...

« Եակեան զՏեաան գառաւստն » :

« րոց... և ժողովեացին ամենայն մեացորդք յուխտէն Աստուծոյ. զի որչափ առաւել շարչարեացին, ևս առաւել պայծառացին »...

Երկու խօսք ևս ըսենք տեսլեանցս Հայկական թարգմանութեանց մասին, այսինքն թէ, ի՞նչ բնագրէ և ե՞րբ կարեն եղած լինել :

Այս կէտերս որոշելու համար մեծ դժուարութիւններ ընդառաջ կ'ելնեն մեզ, վասն զի Դանիելի տեսլեան ծանօթ յունարէնն՝ գլխովին անման է Հայերենին, ինչպէս տեսանք. իսկ ննովքայն՝ Հայկական թարգմանութեամբ միայն հասած է մեզ, և բաղդատութեան ուրիշ եզր մի չունինք առջևնիս, բաց ի այն աղբիւրներէն, զորս ցոյց տուինք. իսկ այդ աղբիւրներն՝ անդատին ի վաղ ժամանակաց ոչ միայն յունարենի, այլ և սեմական լեզուներու թարգմանուած՝ գոյութիւն ունէին :

Տեսլեանցս այլաբանական ակնարկութիւնքը՝ պատմական տեսակէտով վերլուծած ժամանակ՝ տեսանք այնպիսի ձևեր և առանձնայատկութիւններ, որոնք աւելի սեմական՝ քան թէ յունական աղբիւրներէ կը յառաջագային : Սակայն դիտելով մէկ կողմէն՝ որ այլ ինչ է գրութեան մի բնագիրն և այլ առանձին աղբերքն, յորոց կը կազմուի այս. և միւս կողմէն այլ, թէ տեսիլներս ուղղակի բիւզանդական կայսրութեան և անոր պատմական և կրօնական յեղափոխութեանց վերայ կը դառնան, և թէ այս բանս աւելի յունի մի՞ քան օտարի համար նշանակութիւն ունի, զի ինչպէս տեսանք բիւզանդական ժամանակագիրք առհասարակ նման տեղեր յեղյեղած են. հետևարար, այդ տեսլեանց բնագիրքն իսկ յունարէն լեզուով

խմբագրուած են ըստ իս, և անկէց յեղան ի Հայ բարբառ: Բ. Ակերև տեսանք, որ տեսչեանցս պարունակութիւնն, ըստ մեծի մասին, Համաձայն է Հիպոպոդիտեայ և Մեթոդիոսի խմբագրութեանց. իսկ որովհետև սոցա բնագիրքն յունարէն լեզուով գրուեցան, և գիտնք, թէ Հայերէն թարգմանութիւններն իսկ ուղղակի յունարենի վերայ կատարուած են. ուրեմն նոյնը կարելի է եզրակացնել նաև Կանիելի և Մնովքայ տեսչեանց Համար:


Դանիելի է տեսչեան, նոյն իսկ հայկական թարգմանութեան մէջ ունինք մենք ներքին և աւելի շոշափելի փաստեր՝ յունարենէ թարգմանուած լինելուն: Լամբէթեան ընտիր օրինակի մէջ կը հանգիւնք Հետեւեալ անուանց, որոնք սովորականէն տարբեր ձևերով ուղղագրուած են. այսինքն են՝ Ասիաս, Փոիւգիաս, Գաղատիաս, Կազդովիաս, Կարպաթիաս, Զմիւռնես, Անտիոքաս, Ալեքսանդրիաս, Նիկես, Նիկոմեդիաս, Կարկեղովոս, Բիւզես, Բարելովոս, Հոովմաս. այսպէս նաև Պոնտոս, Անտիոքոս, Եգիպտոս, փոխանակ Պոնտոսի, Անտիոքայ, Եգիպտոսի: Արդ, այս երևոյթս ոչ դիպուածական ինչ է, և ոչ այլ թարգմանչին քմահաճոյ գիւտ, — զի Ե գարու թարգմանչաց քով իսկ օրինակներ ունինք, ինչպէս Դիոս ուղղականն, որ է սեռական Զեւսի՝ ի յոյն, — այլ ուղղակի յառաջ եկած են յոյն բնագրէ՝ մի, յորում սեռական հոլովով գրուած էին այդ անուանքն, և Հայ թարգմանչին՝ հաւատարմութեամբ պահած է զայն, լռելեայն ենթադրելով յետ սեռականացն՝ այսինքն նև, որ կ'ընէ զանոնք իբրև ուղղական: Եւ ստուգիւ, այսպիսի եղելութեան մի յայտնի ազատց է, այդ անուններէն անմիջապէս յառաջ, այս նախադասութիւնս. « Եւ ասաց ցիս վասն ամենայն քաղաքաց և գաւառաց՝ (այսինքն են) Ասիաս », և այլն:

Ես այս մասին վստահ եմ. բայց տարակուսելով, որ յիշեալ անուանց աւ, էս, ա, ու, ոս վերջաւորութիւնքն զուցէ թէ գոյութիւն ունենան նաև ինձ անծանօթ սեմական այս ինչկամ այն լեզուին մէջ, և անկէց իսկ յառաջ եկած ըլլան, դիմեցի Մնայի լեզուաքննին և բանասէր Ուս. Հէնր. Հիլգէնֆելդին, որ իւր առ իս գրած շնորհարան նամակով մը իմ կարծիքս բողորովին հաստատեց. այսինքն թէ բացարձակապէս յունարէն բնագրէ մի և սեռական հոլովէ ածանցեալ համարելով յատուկ անուանց այդպիսի ձևերը:

1. Աս այս գիտել կու տանք, որ այժմեան յոյն բնագիրն ունի այդ անուանքն ի նոյնպէս եղով, այսպէս. Καταλας επί 'Ασίας, Φρυγίας, Γαλατίας, Καππαδοκίας, Συρίας.

Այդ նամակէն կ'արտադրեմ հոս թարգմանաբար խնդրոյս վերաբերեալ մասը միայն¹. « Գանիելի է Տեալենէն ձեր ձեռքով արտագրուած Հայկական անուններն՝ յոչ մի դէպս սեմական յառաջածէ մի ծագած չեն. նոքա բարբոզիին յոնական բնադրոշմ կը կրեն իրենց վերայ, և մանաւանդ թէ՛ իսկապէս յոնարեն սեռականի վերջաւորութիւնը կը պահեն: Ուստի ես կը համարիմ, թէ ոչ միայն աւ = ἄς և եւ = es ով ձևերն. օրինակ իմն, Ասիաս = *Asias*, Գաղատիաս = *Galatias*, Ձմիւռնէս = *Smyrnes*, և այլն, որոց ուղղականն սակայն պիտոր լինէր Գաղատիա = Γαλατία, Ասիա = Ἀσία, Ձմիւռնէ կամ Ձմիւռնէ = Σμύρνα, Σμύρνη, և այլն. այլ ամենահաւանօրէն նաև միւս երկու ձևերուն վերայ իսկ, Քաղկեդոնոս = *Chalkedonos* և Բաբելոնոս = *Babelonos*, յորս ուղղականն՝ Χαλκηδών և Βαβυλών, դարձեալ ամբողջական վանկ մի (ոս = os) իբրև սեռականի վերջաւորութիւն յաւելցուած է: Սակայն, նոյն իսկ բացառութեամբ հորովմանց վերջաւորութեան, կարելի չէ ընդունել, որ այդ անուններն

1. Աստի ստորեւ ծանօթութեամբ կը զննէք նորա բնագիրը: «Die 7te Offenbarung Daniels von Ihnen herausgeschriebenen armenischen Namen stammen auf keinen Fall aus einer semitischen Vorlage. Sie tragen durchaus griechisches Gepräge und haben sogar meist die *griechische Genitivendung* *beibehalten*. Dazu rechne ich nicht bloss die Formen auf *ās* und *ēs*, wie *Asias*, *Galatias*, *Smyrnes*, u. s. w. zu welchen der Nominativ doch lauten musste *Γαλατία*, *Ἀσία*, *Σμύρνα* = *Σμύρνη* u. s. w., sondern mit noch viel grösserer Wahrscheinlichkeit die beiden Formen *Chalk'edōnos* und *Babelōnos*, in denen zum Nominativ *Χαλκηδών* und *Βαβυλών* noch eine ganze Silbe (*os*) als Endung des Genitivs hinzugekommen ist.

Aber auch wenn man von den Kasusendungen absieht, kann man nicht annehmen, dass die Namen aus einer semitischen Sprache stammen, dem *Βαβυλών* ist nur die griechische Form. Zwar heisst die Stadt in den Keilinschriften *Bāb-ilu*, aber Hebräer, Araber und Syrer lassen die Endung *u* fort und nennen die Stadt am Euphrat *Babel*. *Balulon*  nennt nur Barebräus in seiner Chronik, (ed. Bedjan, Paris 1890, p. 10,¹²), eine vom Pharao Apintus von Abrahamszeit gegründete Stadt in Egypten. Die Araber kennen offenbar denselben Ort mit demselben Namen in der Nähe von Kairo, nennen ihn aber meist *Fostat*. Am meisten beweist aber die Form *Egyptos*, denn die Semiten nennen das Land durchweg *Misrajim* (= מִצְרַיִם hebräisch), *Misr* (= مِصر arabisch), *Meşren* (ܡܫܪܝܢ Syrisch) u. s. w. Nur die Griechen sagen *Αἴγυπτος*, die Römer *Aegyptus*.

սեմական լեզուէ մի յառաջ եկած ըլլան. վասն զի Բաբելոնը = Βαβυλών է միայն յունական ձև: Այս քաղաքս թէև սեպաձև արևանագրութեանց մէջ է Βάβ-ίλι, բայց Երրայեցիք, Արարացիք և Աորիք ձգելով անոր ու վերջաւորութիւնը՝ կ'անուանեն զայն Բաբել = Babel: Միայն Բար-Երրէոս (Փամանակագրութիւն, սոյ. Բէնանի, Պարիս 1890, էջ 10, 12) Բաբուլոն = Babulon կ'անուանէ Արազամու ժամանակակից Փարաւոն Ապիւտոսի ձեռքով եգիպտոսի մէջ կառուցած քաղաք մի: Արարացիք իսկ յայտնապէս կը ճանաչին նոյն տեղը՝ մի և նոյն անուամբ Գայիրէի մօտ, բայց Փոստատ = Fostat կը կոչեն զայն աւելի: Ամենէն աւելի ապացուցական է ձևս՝ Եգիպտոս = Egyptos, վասն զի Սեմացիք (Երրայեցիք) Միծրայիմ = Misrajim կ'անուանեն այս երկիրս. Արարացիք՝ Միծր = Misr, Աորիք՝ Մեծրեն = Mesren, և այլն. Յոյնք միայն կ'ըսեն Αίγυπτος, Հռովմայեցիք՝ Aegyptus.

Արդ, այսպիսի պարագայից մէջ միայն կարելի է Հարցնել. Արդեօք

Unter diesen Umständen kann man nur fragen: War die Grundschrift lateinisch oder griechisch? Ich entscheide mich ohne jeden Zweifel für das letztere, denn die Formen sind eben griechische Genitive und abhängig von der Präposition περί ὃ gen = über, während man in Lateinischen, abgesehen von anderen Schwierigkeiten, de mit dem Ablativ erwarten müsste. Freilich vermutet Th. Zahn, (*Forschungen zur Geschichte des Neutestamentlichen Kanons*, V. Theil, Erlangen und Leipzig 1893, p. 118—120), beide Offenbarungen Daniels, sowohl die Armenische (herausgegeben und übersetzt von Kalemkiar in der *Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes*, VI. Band) als auch die Griechische (im Bruchstück herausgegeben vom Tischendorf (*Apocalypses apocryphae*, Lipsiae 1866, XXX—XXXIII), vollständig später vom Dr. Erich Klostermann (*Analecta zur Septuaginta, Hexapla und Patristik*, Leipzig 1895, p. 113—120), seien zwar inhaltlich von einander verschieden, gingen aber auf eine gemeinsame Wurzel zurück, das heisst auf ein recht altes, vielleicht jüdisches apocryphes Danielbuch, das mit einer bis jetzt bruchstückweise veröffentlichten von Assemani (*Bibl. Orient.* III, 15), erwähnten *syrischen Daniel-Offenbarung* verwandt sei. Wie weit diese Vermutung richtig ist, weiss ich nicht... Jedenfalls sind die von Ihnen aufgeschriebenen Namen *aus dem Griechischen* einfach abgeschrieben. Dabei nehme ich an, dass die beige-schriebenen griechischen Formen von Ihnen berrühren. Sollten Sie dieselben in einer griechischen Schrift gefunden haben, dann wäre die Frage recht in meinem Sinne entschieden. Der armenische Schreiber hat gar nicht erkannt, dass er Genitiv-Formen vor sich hatte».

գրութեանս սկզբնազիրն լատիներէն էր, թէ յունարէն: Ես առանց ինչ տարակուսի վերջնոյս կողմն եմ. վասն զի ձևերս ճիշդ յունարէն սեռականք են, և անկախ ամենեկին նախադասութենէս *περι δ gen = über*, մինչդեռ լատիներենի մէջ, ի բաց առեալ ուրիշ դժուարութիւնները, յի բացառական հոլովով ըլլալու էր: Իրաւամբ կը կարծէ Քէոզ. Ձազն (Քննութիւն պատմութեան կանոնաց նոր կտակարանի, Ե Մասն, Երլանգէն և Կայսցիզ 1893, էջ 118-120), թէ Դանիելի երկու տեսիլներն իսկ, այսինքն է՝ թէ՛ հայկականն, հրատարակեալ ի Գալէմքեարեանէ (Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes VI. Band) և թէ՛ յունարէնն, զոր հրատարակեցին Տիշէնդորֆ՝ մասամբ, և Էրիխ Կոստերման՝ բովանդակապէս, իրարմէ տարբեր ըլլան, բայց երկուքն ևս հասարակաց աղբրէ մի կը յառաջագային. այսինքն է, Դանիելի անվաւեր գրքի մի ստուգապէս հին և գուցէ երբայական բնագրէն, որ մինչև ցայսօր դեռ իբր հատակոտորներ Աստեմանիէն հրատարակուած Դանիելի ասորերէն Յայտնութեան հետ ազգակից ըլլայ: Թէ՛ որքան ճշգումբիւս ունի այս վարկածս՝ ես չգիտեմ... Յամենայն դէպս, Ձեր առ իս յղած անուններն՝ պարզապէս յունարենէ արտագրուած են. հետևաբար, ես կը համարիմ, որ Ձեր ձեռքով առնթներ արտագրուած յունական ձևերն իսկ հիմնաւոր են: Նոյները եթէ գտած ըլլայք դուք ուրիշ գրուածի մի մէջ, այն ատեն խնդիրն, իմ մտաց համաձայն, ուղղապէս որոշուած պիտի լինի: Հայագրի գրիչն բնաւ անդրադարձած չէ, թէ իւր դիմաց եղածն՝ յունարէն սեռական ձև մ'է »:

Գալով Դանիելի և Ենովքայ հայկական թարգմանութեան ժամանակին, նախընթացաբար տեսանք, որ սոցա խմբագրողաց ծանօթ էին նաև Հիպպոդիտոսի Մեթոդիոսի և Ագադրոնի տեսիլներն. իսկ որովհետև Մեթոդիոսի տեսլեան գէթ հնագոյն խմբագրութիւնն թարգմանուած է Ը դարում, Ստեփանոսի Սիւնեցոյ ձեռքով, ուրեմն ասկէց կը հետևի, ըստ ինքեան, որ տեսլեանցս թարգմանութիւնքն ևս այդ դարուն վերջերը կատարուած ըլլան մերձաւորապէս: Բայց թէ իրօք իսկ այդպէս է, այս նկատմամբ ընդ առաջ կ'երևնայ և այլ դժուարութիւններ: Նախ և յառաջ, Հիպպոդիտոսէն և Մեթոդիոսէն փոխառեալ տեղիքն, թէպէտև ըստ իմաստից՝ նոյն են իրենց աղբրաց կամ բնագրի հետ, բայց քանի որ անոնց մէջ ամբողջական և ընդարձակ տեղի մի չկայ, որ շարաբանութեամբ իսկ ըստ ամենայնի համաձայնի Հիպպոդիտոսայ և Մեթոդիոսի հայկական թարգմանութիւններուն, անաչառ քննադատութիւնն չի ներքեր եզրա-

կացնել, թէ Ծնովքայ և Դանիելի տեսլեանց խմբագիրներն՝ անոնց հայերէն թարգմանութիւններէն օգտուած են, քան թէ յունարէն բնագրերէն: Բ. Մեթոդիոսի տեսլեան այն մասը, զոր հասուցած են մեզ ժ դարում ապրող և գրող պատմագիրներ, այսինքն են՝ Սա. Ասողիկ (Փամանակագրութիւն) և Մեսրոբ Երէց (Պատմ. Մեծին Ներսիսի), մեծապէս կը տարբերին Մեթոդիոսի անուամբ մակագրուած ամբողջական երկասիրութենէն, զոր համառօտիւ քննեցինք. այսինքն է՝ առաջնոց քով ամենայն ինչ կատարածի աշխարհիս, Իսմայելացւոց և Նեոսի վերայ կը դառնայ, Բիւզանդիոնի և անոր կայսերաց մասին խօսք չկայ. մինչդեռ վերջինս՝ մանրամասնօրէն յետնոցս արարուածներով կը զբաղի, Նեոսի մասն այլ ամենահամառօտ է: Տարակոյս չկայ, որ Մեսրոբ Երէցն և Ասողիկ՝ Սա. Սիւնեցւոյ ձեռքով եղած թարգմանութեան կատարեալ և ճիշդ ներկայացուցիչներ չեն. սակայն և այս առանց երկրայութեան է, ըստ իս, որ Ծնովքայ և Դանիելի տեսլեանց մէջ Բիւզանդիոնի և անոր կայսերաց մասին աւանդուածներն չէին գտնուիր Սիւնեցւոյ թարգմանած յոյն բնագրին մէջ, այլ Մեթոդիոսի և Ագադրոնի հայկական խմբագրութիւններէն օժանդակուած են, ազատ շարագրութեամբ, որոնք, ինչպէս ցուցինք, Թ դարուն վերջեր և կամ ժի առաջին քառորդին մէջ յօրինուեցան, իրրև յարասութիւնք: Մանաւանդ Մեթոդիոսի տեսլեան 39-50 էջերում աւանդուածներն՝ 1204 փրկչական թուէն յառաջ չեն կարող գրուած լինել, զի կոմնենեան վերջին թագաւորն ևս յիշուած է հոն: Ուստի, ըստ այսմ կրնանք ըսել, — վերապահութեամբ ի հարկէ, — թէ Ծնովքայ և Դանիելի նախընծայ հայկական թարգմանութիւններն Ը դարէն յառաջ եղած չեն, իսկ վերջին յաւելուածներն այլ ժ դարէն յառաջ: Մեր այս կարծեաց ի հաստատութիւն ունինք կրկին կուռաններ ևս սոյն թարգմանութեանց մէջ. այսինքն են՝ նախ, զանազանութիւն լեզուի և ռոճոյ գրութեան, որ զգալի է այդ գրութեանց հնագոյն և նորագոյն հատուածոց մէջ. երկրորդ, մի և նոյն անուանց՝ իրարմէ տարբեր ձևերով գրուիլն, ըստ այլ և այլ օրինակաց:

Գ. Փաստ մ՝այլ կ'ընծայեն մեզ, մէկ կողմէն Եպիփանոս Կիպրացւոյ Արարածոց մեկնութեան հայազգի յարասողն, և միւս կողմէն այլ Յովհ. Սարկաւազ վարդապետն: Հեղինակացս առաջինն՝ որ կ'ապրէր Ը-ժ դարամիջոցում — ինչպէս տեսանք — առանց անուանակոչութեան կը յիշատակէ իր ատեն հոչակ ունեցող անվաւերական գրուած մի՝ աշխարհիս կատարածին և Նեոսի վերայ, և ըստ այնմ՝ ինքն ևս

կը յարասէ իւր ճառը: Իսկ երկրորդն, որ կ'ապրէր ժԱ դարում, Միսիթ. Այրիվանեցւոյ Ժամանակագրութեան մէջ պահուած իւր կանոնական և անկանոն գրոց ցանկին մէջ որոշակի կը յիշէ նաև Դանիելի Է տեսիլն: Հաւանաբար, ինչպէս վերջինէս յիշատակուածն՝ չենք տարակուսիր, թէ եղած ըլլայ այժմու մեզ ծանօթ խմբագրութիւնն, այսպէս ըստ ինքեան և առաջնոյն յիշատակածն. բայց որովհետև, մեր ըրած դիտողութեանց համաձայն, այս տեղ աւանդուած գուշակութիւններն Է-Ը դարու շրջանէն ասդին չեն անցնիր. ուրեմն աւելի ճշմարտանման կը լինի ըսել, թէ վերջինս՝ էր իրօք Դանիելի տեսլեան մի Հնագոյն խմբագրութիւնն: Եւ այս անկէց իսկ յայտ է, զի Հեղինակս իւր յանուն Նպիփանու յարասած ճառերուն մէջ ուրիշ անկանոն գրութիւններէ ևս յաճախ կիրառութիւններ կ'ընէ, որոնք Է-Ը դարում ծանօթ էին այն պարունակութեամբ, և անկէց ետքը կամ անյայտացան և կամ տարբեր կերպարանք առին: Դարձեալ, համարելով որ Դանիելի Է տեսիլն՝ Սարկաւազ վարդապետին ժամանակ իսկ արդէն նոյն ձևի մէջ կը գտնուէր, որ ինչ այսօր, ուրեմն կը հետևի, թէ անոր հայկական խմբագրութեան կամ թարգմանաբար յորինուածութեան վերջին սահմանն է ժ դարէն ժԱրե՛ սկիզբը, իսկ նախկին սահմանն՝ Ը դարէն անդին չանցնիր:


Այս տեսիլս ամենամեծ ազդեցութիւն ունեցած է ոչ միայն արևելքի քրիստոնեայ և մահմէտական ժողովրդոց, այլ և միջնադարեան արևմուտքի վերայ. բայց ոչ իրև անկանոն գրուած մի նկատուած, այլ իրև յաւելուած մեկնութիւն Դանիելի մարգարէութեան Է գլխոյն: Եթո՞նք որդ դարէն և այսր՝ քանիցս անգամ յունահռովմէական կայսրութիւնն ենթարկուելով բարբարոսաց և Հագարացոց խուռնընթաց արշաւանքներուն և ներքին խռովութեանց՝ կը վտանգուէր, ամէնքն առհասարակ անոր կործանումը վերահաս կը համարէին սարսափազար, յիշելով որ հռովմէական արծուոյն համար Դանիելէն գծած « երեք ժամանակք և կէս ժամանակի » արդէն լրացած է: Քանիցս անգամ չար և անօրէն կայսրներ բռնակալելով Բիւզանդիոնի վերայ՝ քրիստոնէական սրբութիւններն և բարոյականը ոտնկոխ կ'ընէին, Նեոի գաղափարն ևս կ'արթըննար ժողովրդեան մէջ. և այսպէս Յուլիանոս Աւրացողէն մինչև ցՊոտամոսի Կոպրունիմոս՝ չարքն Նեոն անուանեցան: Նշանաւոր է առ այս Հիպպոլիտեան տեսլեան մէկ տեղին, յորում Հեղինակն Դանիելի և Յովհաննու Յայտնութեան համաձայն, յետ նկարագրելոյ Նեոին գործելիք խաբէութիւններն և բռնութիւնքը, կը յաւելու ապա. « Եւ այժմիկս, որ

ոչ երևի որդին կորստեան՝ առ ի տեսանէջ զմեզ, երևելի պատերազման և մարտս գրգռէ. իսկ յայնժամ հանդերձեալ է, այսինքն՝ ինքնակերպ գալ, և տեսանեն զնա մարդիկ ճշմարտութեամբ. զի՞նչ է, զոր ոչ գործէ մեքենայս և նենգութիւնս և երևմունս՝ առ ի մոլորեցուցանել և ի բաց հանել յուղիղ ճանապարհէն և ի դրանէ արքայութեան » :

Արդ, Հիպպոդիտեայ ապագայն նշանակող յայնժամն՝ նոյն իսկ Դանիելի է տեսլեան մէջ բազմիցս իրրև եկած հասած կը նկատուի :

Իսկ Ենովքայ ընծայուած տեսիլն՝ այդ անուամբ բնաւ ճանչցուած չէ բիւզանդական մատենագիրներէն. սակայն իրրև մի նոր ճիւղաւորութիւն կամ խմբագրութիւն Եզրի անկանոն գրքի մէջ եղած Դանիելի մարգարէութեան, կրնանք ըսել, թէ հաւասար ազդեցութիւն ունեցեր է : Այ՛, գրուածիս մէջ իրրև դանիելեան անսուտ պատգամ տրուած այս տեղոյս, — այսինքն է՝ Իսմայելացւոց մասին, — թէ « մարտիցն առ ափն ծովուն լուծանել զիշխանութիւն Հռովմայեցւոց և ոչ կարիցեն, զի տեղապահ է մեծի արքային. զի թէպէտ և լինի ի վերայ նորա յարուցմունք պատերազմաց և ալեկոծութիւնք՝ շարեաց՝ ընկնէ զնա ոչ կարեն, այլ խափանեալ՝ փոխանորդէ զնա. բազառութիւնս անեւան » վերայ հաստատուած և քաջալերուած՝ դիւցազնական ճիգեր թափեցին միշտ Յոյնք վանելու մահճետական Թրքաց և Սարակինոսաց յարձակումները : Հերակլեան, Իսաւրեան, Կոմնենեան, Պալէոլոգեան և Կաթարիսեան հարստութեան կայսերք առհասարակ՝ այս գեղեցիկ գուշակութեամբ կանգնեցին իրենց կործանուած և շարունակեցին իրենց ընդհատուած թագաւորութիւնները : Այս գրաւոր աւանդութիւնս սարսափ ազդած է նաև մահմէտական ժողովրդեան վերայ, թէ պիտի գայ օր մի, որ պիտի յաղթանակէ Քրիստոսի տեղապահ յունահռովմէական թագաւորութիւնն՝ կիսալուանին վերայ, պիտի յառնէ Ս. Սոփիայ հրապարակին մէջ Կոստանդիանոսի կամ թէոդոսեան սեան վերայ ննջող վիշապն, և կլլէ Ոսկեղջեր և Բոսփորոսի մէջ բնակող մայրաքաղաքը : Քանիցս անգամ, — ծանօթ է ամենուն, — երբ վտանգուած է տաճկական տէրութիւնն, նորոգուած են ժողովրդեան մէջ նման գուշակութիւններ : Այս աւանդութեանս վերայ վստահացած դեռ այսօր իսկ Յոյներ և Սլաւք կը յուսան դարձեալ օր մի, Դանիելի տեսլեան յունարէն բնագրի մէջ յիշուած՝ Ἀγλα Σοφιαի մէջ պսակել Կոստանդնուպոլսի նոր թագաւորը, ըստ այնմ՝ « καὶ λαβόντες αὐτὸν τέσσαρες ἄγγελοι ἑσσηφόροι καὶ εἰσενεγκόντες εἰς τὴν Ἀγλαν Σοφίαν στέφουσιν αὐτὸν βασιλέα καὶ διδοῶσιν αὐτῷ εἰς τὴν δεξιᾶν αὐτοῦ χεῖρα ῥομφαίαν λέγοντες αὐτῷ· Ἄνδρῖζου καὶ ἰσχε » :

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ւ Ի Ն Մ Ո Վ Ս Ի Ս Ի ¹



Մոսկովի նախամարզարէի մակագրութեամբ՝ բազմաթիւ ան-
 յայտն վաւեր գրուածներ կը շրջէին արեւելեան ազգաց մէջ,
 որոնցմէ սակաւք Հասած են առ մեզ: Կղեմէս Աղեքսանդրա-
 ցիէն և Ռոզինեսէն սկսեալ յունական Հարք և ժամանակա-
 գիրք երկու նշանաւոր գրուածոց վերայ մասնաւորապէս դար-
 ձուցած են իրենց ուղագրութիւնը, որոնցմէ Հասակատորներ ևս պա-
 Հուած են բարեբաւարք, այսինքն են՝ Μωυσέως Ἀποκάλυψις
 (Յայտնութիւն Մովսիսի) և Ἀνάβασις կամ Ἀνάληψις Μωυσέως
 (Վերացումն Մովսիսի): Վերջին գրուածէն փոխ առնուած կը Հա-
 մարին Հին Հարք և արդի գիտնականներէն ոմանք, Յուդայի Առա-
 քելոյ Թղթի մէկ տեղին, (այն է 9 Համարն) ուր կ'ըսուի, թէ «Մի-
 քայէլ Հրեշտակապետն յորժամ բանսարկուն սատունայի (Սամայե-
 լի) վիճեալ՝ տայր պատասխանի վասն մովսիսեանն մարմնոյ, ոչ
 ժպրհեցաւ Հայհայութեան դատաստանի Հանդուրժել, այլ ասէ. Սաւ-

1. Խորագիրս առնուած է ժՁ գարում գրուած Ի՛Ի Ճորճուրէն, որ ունի նաև
 յաւելուածս «Մովսիսի մարգարէին և Անարոնի և քուրց նորս»: Միւս օրինակներէն
 ոմանք Յիւդայի Մովսիսի մարգարէի, ոմանք այլ՝ Տասն Մովսիսի մարգարէի և Ահարոնի
 կը խորագրեն: Անվաւերական գրութեանս վննեակեան նոր հրատարակութեան իբրև
 բնագիր առնուած է թիւ 1369 ետարագիր օրինակն, որ նոր է և սխալագիր. իսկ սոր-
 բերութիւնքն, որք նշանակուած են ի սարեւ, են թիւ 1447 Ճարճուրէ մի, որ թե-
 պէան ընտիր գրչապրէ մ'ընդօրինակուած է, բայց ազէս գրչի նկարով և ստղծեմ
 ունիլի գրչապրական սխալներ ունի: Ուսումնասիրութեանս ժամանակ ուրիշ երկու
 ընտիր օրինակներու ևս հանդիպեցայ. այսինքն է, թիւ 279 Յայտնութեան, որ
 գրուած է յամի Տեսուռ 1441, և թիւ 742 Ճորճուրէն 1ԼԲ, որ ընդօրինակուած է
 Պարիսու ազգ. մատենադարանի Հնագոյն գրչապրէ մի: Երկուքին մէջ իսկ կ'ս

տեսցէ ի քեզ Տէր » : Այս տեղւոյս վերայ մասնաւոր կերպով կը նախանայ նաև մեր Հին մեկնիչներէն մին, որուն տուած մեկնաբանութիւններէն այնպէս կ'երևի, թէ նա ծանօթ էր բաց ի Յուդայի Ասաքելոյն՝ նաև Վերացոսն Մովսիսի անվանակալանին հետ : Արդ, դիտել կու տանք աստ, որ Մովսիսի պատմութեան հայերէն հրատարակութեան մէջ այս տեղւոյս հետքն անգամ չիկայ, բնականաբար ասկէց կը հետևի, որ այդ թարգմանութիւնն կամ խմբագրութիւնն, կամ բոլորովին մի ուրիշ գրուածէ յեղեալ է ի հայ բարբառ, և կամ լաւ ևս՝ վերոյիշեալ գրուածներուն միոյն վրայէն համառուած :

Կետրե՛նոսի վկայութեան նայելով՝ անոր ժամանակակիցներէն ուսնց Յայտնեարհն Մովսիսի կոչուած գրութիւնն՝ ուրիշ բան չէր, բայց եթէ Փոքր Արարածոց (μικρά Γένεσις), այսպէս այլ 'Ανάβασις և 'Ανάληψις կոչուածներն մի և նոյն գրութիւնը կը կազմէին, և ոչ եթէ իրարմէ անկախ երկու տարբեր գրուածներ, ինչպէս կարծեցին Լամբրիկոս, Գամբատոս և ուրիշներ : Յոյն ժամանակագրի յաւաթ բերած առաջին կարծեաց ճշդութիւնն՝ արդէն տեսանք, հայերէն Արամգրոց վրայ խօսած ժամանակ, և Տիշնեդոքի իսկ այդ պատճառաւ անշուշտ իր հրատարակած յունարէն բնագրին վերայ, — որ նոյն է հայերէն թարգմանութեան հետ՝ այլ և այլ տարբերութեամբ, — 'Αποκάλυψις Μωυσέως խորագրած է : Իսկ երկրորդին գալով՝ մենք այն կարծիքն ունինք, թէ 'Ανάβασις և 'Ανάληψις այլ և այլ տիտղոսներ ըլլալու էին՝ մի և նոյն գրութեան մէջ պարունակուած այլ և այլ մասանց կամ նիւթերու վրայ գրուած :

Նիկիոյ Ս. Ժողովոյն Գործոց (Գիրք Բ. գլ. Ի, էջ 33) ական յայտնի վկայութեան համաձայն՝ Յուդայի Ասաքելոյ յիշեալ փոխառութիւնն անտարակոյս երբայական բնագրի այն մասէն առնուած ըլլալու էր,

նախաւոր տարբերութիւններ, որոնք սակայն յիշեալ հրատարակութեան մէջ անուած չի : Պժշտագրար : Վերջին գրչագրին մեզ ընծայածը մանաւանդ ինքնուրոյն խմբագրութիւն մ'է Մովսիսի Պատմութեան, աւելի մաքուր շարադրութեամբ և միջակակալ մեկնութիւններով, որոնք եկեղեցական հմուտ գրչի մ'արդիւնք կը տեսնուին, և նուրբած են նմազոյն մասանց հետ : Խմբագրողին ծանօթ էր Մովսիսի Պատմութեան վասն զի ի վերջ խմբագրութեանս, որ ի և Սեպտեմբերի կատարուող Յիւլիանի Մովսիսի առթիւ գրուած է, կը ծանուցանէ, թէ « Ե ուր » (Սեպտ.) և Տարածել ընդ Ահարոնի եղբորն իւրոյ ի Ժ ուրիշ տեղս, բայց կատարուած մտնուն նոր այս է » : Ընթերցողի ուշադրութիւնը կը դարձնենք նոյնպէս վերջին խօսքերուն վերայ, որոնք ինչպէս պիտի տեսնենք թարգմանած բնագրի այն մասը կ'ակնարկեն, որ Մովսիսի մահուան նուիրուած էր :

ուր Մովսիսի մահուան կամ լաւ ևս փոխման վերայ կը խօսուէր. Հե-
տեաբար յունարէն Ἀνάληψις տիտղոսն իսկ ասոր վերայ գրողմուած
էր: Այդ երբայական բնագիրն անյայտացած ըլլալուն և կամ յու-
նարէն Հին Թարգմանութիւն մի դեռ կատարուած չլինելու պատ-
ճառաւ, բնական էր, որ երկրորդ դարու Հարթ և մատենագիրք ի-
րարմէ տարբեր, բայց փոքր ի շատէ նոյն նշանակութիւն ունեցող
տիտղոսներու ներքե անկէց կոչումներ ընէին:

Յամին 1629, երբայական Հնութեամբ պարապող գիտնականն Գիլ-
բերտոս Գաուլմինի գտաւ բարեբաղդաբար և հրատարակեց ի Պա-
րիս գրուածիս երբայական բնագիրն, Հանդերձ լատին Թարգմանու-
թեամբ և Հմտալից ծանօթութիւններով, որ մեծ առաւելութիւններ
ունի յամին 1517 կոստանդնուպոլսեան հրատարակութենէն: Արդ,
այս բնագիրս՝ ըստ գաուլմինեան մի ուրիշ, այն է յամին 1714 Համ-
բուրգում եղած հրատարակութեան, զոր ունէինք ի ձեռին, բաղ-
կացած է ստուգիւ երեք գրքերէ կամ դպրութիւններէ: Առաջինն՝
խորագրուած, Վարդ կամ կենսագրոգրիւն Մովսիսի (Vita Moysis),
զոր Փարբիկիոս՝ երբայականին Համաձայն՝ Մովսիսական ժառանգ-
կագրոգրիւն կը Թարգմանէ այլուր: Երկրորդին վերայ՝ Յաղագս ելից
կամ մահուան Մովսիսի խորագրուած է. երրորդին խորագիրն ևս
նախորդի նման է, բայց մի այլ ձեռագրի Համաձայն, որ Վինետ-
կոյ Ս. Մարկոսի գրատան և Կ. Պոլսի օրինակներէն կը տարբերի,
ըստ յայտարարութեան հրատարակչին, և որ ըստ կարծեաց Փարբի-
կիոսի՝ առաջիններուն չափ Հին չէ:

Երբայական բնագրի առաջին մասի խորագիրն՝ որքան որ յու-
նարէն Ἀνάληψις տիտղոսէն կը տարբերի, այնքան ևս Հայերենին
քաջ կը Համաձայնի. ուստի ինձ կ'երևի, թէ յունարէն տիտղոսն՝
առաջ եկած է ուղղակի անոր Բ գրքի պարունակութենէն. Հետեա-
բար, այն մասին Հետ իսկ գրեթէ Հարթ Հաւասար: Իսկ Հայերէն
խմբագրութիւնն, գրեթէ բացառութեամբ, Ա գրքի վերայ յօրինուած
է, գէթ յ'ժԸ Սեպտեմբերի Մովսիսի և Ահարոնի յիշատակին առթիւ
Յայամաւորաց մէջ զետեղուածէն դատելով. իսկ պարսեան օրինակի
ընծայածն, այսինքն է. Վասն մահուան Մովսիսի խորագրուածն՝
երկրորդէն իսկ չափով մի օգտուած կ'երևի: Յունարենի նկատմամբ
ըրած մեր ենթագրութիւնն՝ կը Հաստատուի այնու մանաւանդ, որ
Նիկիոյ ժողովոյն գործոց մէջ Ἀνάληψις գրուածէն Յուդայի Առաքե-
լոյ քով փոխառեալ տեղոյս, այսինքն է Մովսիսի մահուան և մար-
մնոյն վերայ Սամայիլի և Միքայէլ հրեշտակապետին մէջ եղած վի-

նարանութեան նման տեղի մ'այլ, — փոքր ինչ տարբերութեամբ, — կը գտնուի երբայական բնագրիս՝ Յաղագս մահոռան Մոփսիսի խորագրուած Բ. գրքին մէջ: Յովսեփոս իսկ (Գ. 8) յետ ընծայելոյ զայն **תרי"ב תרמ"ד** գրոց գրչին, անդէն կը յաւելու, թէ զոր և Յօյնք **Ἀνάκλησις** Μωυσέως անուանեն: Հայկական խմբագրութեան մէջ ընդհակառակն կը պակսի այդ նշանաւոր տեղին, բայց այդ իսկ աւելի կը նպաստէ մեր ըսածին, թէ Հայերէնն Համառօտութիւն մ'ըլլալու է երբայական բնագրին, քան թէ ճիշդ թարգմանութիւն:

Արդ, կրկին և կրկին բաղդատելով Հայերէնն՝ Համբարգեան Հրատարակութեան՝ լատին թարգմանութեան հետ, տկնեք ատենուեցաւ եղելութիւնն. վասն զի երբայական բնագրի Ա մասով կ'աւարտի, ուր Համառօտիւ Մոփսիսի մահն ևս կը պատմուի: Գէթ ի Ս. Ղազար Հրատարակուած Հայկական խմբագրութեան մէջ՝ բաց ի Յուդայի Առաքելոյ փոխառեալ տեղէն, դուրս թողուած են դիտմամբ նոյն իսկ երբայական բնագրի Ս. գրքի այն մասունքն, որոնք իբրև Քարգուժէն և Թալմուդէն յառաջ եկած առասպելաբանութիւններ նկատուած են, և չեն միաբանիր Ս. Դրոց մէջ Մոփսիսի մասին աւանդուածներուն:

Որոշ գաղափար մի կ'ազմելու համար Հայ. և երբ. բնագրաց փրարու հետ ունեցած աղերսին, նշանակենք Համառօտիւ երկաքանչիւր կողման համաձայն և անհամաձայն տեղերը: Նախ երկուքին սկզբնաւորութիւնքն ևս իրարմէ կը տարբերին. այսինքն է, երբայական բնագրին կը սկսի Եգիպտոսի մասին ձախորդ գուշակութեամբ, որ և հանդիպած կը համարուի Իսրայելացոց՝ յԵգիպտոս մտնելուն 130րդ և Յովսեփայ մահուան 10րդ տարին թագաւորող Փարաոնի օրերը. որուն կ'երևի յերազի մանուկ մի, որ ունելով մէկ ձեռքին՝ մէջ կշիռք մի՝ կը չափէ Եգիպտոսի բաղդը. իսկ միւս ձեռքով՝ սլաքը բռնած, կը սպառնայ Փարաոնի: Կը պատմէ Փարաոն դիտնոց՝ իւր երազը, որոնք կը մեկնեն, թէ այն մանուկն ըլլալու է երբայեցի, որ տէրութեան ծանր հարուած պիտի պատճառէ: և խորհուրդ կու տան թագաւորին, որ բոլոր երբայեցի մանուկներն սպաննել տայ: Կը հաւանի թագաւորն, և զործն անողորմ ի գլուխ կ'եղնէ Եգիպտոսի ծնուցչաց ձեռքով: Այս և յարակից խորհրդածութիւնք, որք երկու երես գրուած են, կը հակասեն Ելից գրքի Ա զիտոյն, ուր ընդհակառակն Յովսեփայ մահուան 65 տարին և բոլորովին տարբեր, այն է՝ քաղաքական պատճառներով տրուած կ'աւանդուի մանկասպանութեան հրամանն: Ուստի, Հայկ. խմբագրութեան Հեղինակն,

իրբև հաւատարիմ աւանդապահ Ս. Գրոց, հարկադրուած՝ դուրս թողած է այս մասը, և անոր տեղ զետեղած Մովսիսի և Ահարոնի քահանայապետութեան վերաբերեալ 6 տող հատուածն, որ ըստ ինքեան անյարմար է Մովսիսի կենսագրութեան, և անոր յիշատակին միայն ձօնուած: Մովսիսի կենսագրութիւնն, որ զուգուած է Ահարոնի հետ, Դբ տողով կը սկսի, որ և կը համապատասխանէ երրայ. բնագրի կբ իջի վերջին պարբերութեան, ըստ համբուրգեան հրատարակութեան Գառլմանի. ուր սակայն « որդւոյն Սահակայ որդւոյն Աբրահամու » բացատրութիւնն կը պակսի, և անոնց տեղ « որդւոյն կահարոս որդւոյն Ղևեայ » գրուած է, հետևողութեամբ Ղևեայ կտակիկ: Մովսիսի ծննդեան համար կ'ըսուի, հայերենի մէջ, թէ « Գէտք Եգիպտացոց ասացին Փարաւոնի... թէ փրկիչ ծնցի Իսրայելի », և այլն. երրայ. բնագիրն հակառակն ունի, այսինքն թէ՛ Մովսիսի քոյրն Մարիամ է, որ կը տեսնէ այդ երսոցն և կը հաղորդէ Փարաւոնի: Այս ոչ միայն հակառակ է առաջին իջում աւանդուածին, ուր Փարաւոն ինքնին կը տեսնէ Հրէից փրկիչ Մովսիսի ապագայ ծնունդն, այլ նոյն իսկ պատմութեան. վասն զի նոյն իսկ երբայական բնագրի ասելով՝ Մարիամ 6 տարի յառաջ ծնած էր ի Յոջարեթայ. հետևարար, նա չէր ենթակայ այնպիսի մի գուշակութեան, թող թէ հաղորդել Փարաւոնի: Ինծ յայտնի չէ, թէ հայագգի խմբագիրն այս և նման փոփոխութիւններ՝ պարզ գերզգոնութեան համար ըրած է, թէ ընտրութեամբ մի ուրիշ բնագրի. այս վերջին պարագայիս մէջ՝ անկէց ներմուծուած բարեփոխութիւնքն կարող են երրայ. բնագրի ուսումնասիրութեան նկատմամբ մեծ կարևորութիւն ունենալ:

Հայերենի առաջին իջում Փարաւոնի մասին մէջ բերուած այս տեղիս. « Զայս իրբև լուաւ Փարաւոն՝ զգուշացաւ խորհրդոյն. և ի նոյն ամեանն էառ զամենայն արսն Իսրայելի և զնաց յորս երէոց, և մնաց ի դուրս ամիսն ողջոյն », խանկարուած կը տեսնուի և անհասկանալի դարձած. հետևարար, կամ երբայական բնագրի, Ծբ իջում, Ամրամայ նախկին բացակայութիւնն, և ապա յիշեալ տեսլեան զօրութեամբ՝ իւր Յոջարեթ կնոջ քով վերադառնալը կ'ակնարկուի, և կամ մի այլ միջադէպ: Յիրաւի, այս մասին մենք կը հանդիպինք Մխիթ. Այրիվանեցոյ Ժամանակագրութեան մէջ (ՎՅԳ) նման տեղւոյ մի, որ աւելի կատարեալ աղբերէ մի կը յառաջագայի և կը պարզէ մանր պարագայիւք առաջնոյն խանգարմունքը, այսպէս. Մովսէս տասնամեայ տոռա յոռոռմն ի Յանես և Յամրես,

որք առին գորդիսն իսրայելի և տարան ժիջորեայ ձևնապարհ ընդ անապատ. և շինեցին դրախտ ինքնանց ժիջ ամ, և յիսրայելի գՁ տղայս գոհեցին դիաաց, և հնագանդեայ զնոսա՝ եղին պահակս դրախտին. և Ն, դեռք ոչ հնագանդեցան, մինչև կրկին գՁ տղայ այլ գոհեցին, և ապա հնագանդեցան, քայց ի Լրատդ ամսոյ » :

Մխիթար իւր աղբիւրն յիշատակած չէ դժբաղդարար. Լրատդ ամսոյ կրճատ յիշատակութիւնն իսկ՝ ուրիշ բաներ ենթադրել կու տայ : Ըստ իս այդ ամիսն է, յորում գուշակեցին գէտքն Եգիպտացւոց Մովսիսի ծնունդը, և անունս իսկ եգիպտական Հնչումն ունի՝ Վարդան վարդապետ, Ելից մեկնութեան մէջ, Մխիթարէն տարբեր աւանդութիւն մի մէջ կը բերէ յիշեալ տեղոյ նկատմամբ, ուր Մովսիսի ծննդեան մասին եղած գուշակութեան և Եսրայելացւոց յանապատ օտարութեան նկատմամբ՝ մասամբ հայերենին կը համաձայնի և մասամբ այլ երբայական բնագրին. իսկ Այրիվանեցիէն՝ Յանեսի և Յամբեսի ձեռքով տղայոց արարուածի մասին աւանդածը՝ ուրիշ տեղոյ և ժամանակի մէջ եղած կը պատմէ, այսինքն է՝ ի Քաղդէաստան : Մէջ բերենք Վարդանայ այդ հետաքրքրական հատուածը, ի թու. հայ. 26 — 1261 գրուած թիւ 999 բողոքի գրչագրին համաձայն. « Ասեն յաւանդից, երկ գուշակեցին դիտքն Եգիպտոսի՝ Փարառնի գամիսն, յորում ձնցի մանուկն փրկիչն իսրայելի. և արձակեաց Փարառն ի յանապատ գամեանցն արոս մանուկ՝ յորդոց իսրայելի, ի ժամեանից ի վեր, յամիսն՝ գոր. նշանակեցին : Եւ յռեայ կիկն Ամրամայ, զգեցեաց ասն հանդերձ և ի յոյսն յեցեալ՝ չոգառ զկնի ասն, և յոսցառ յայնմ ժամոս, տալով ննա գոյսն իւր՝ փրկիչն, յոր հաշտացեալ կենջն՝ փոքրայ ի հնարս որքան յիերենկ կարն է, ակն ունելով ակնեագորիսն Աստուծոյ : Վասն որոյ ընկեցեալ զմանուկն՝ դիտեր քոյրն տեսանել զանցն » : Քիչ յետոյ, մեկնիչս հաստատուած Գործոց Առաքելոց այն վկայութեան վերայ, ուր կ'ըսուի, թէ « Վարժեցաւ Մովսէս ամենայն գիտութեամբ Եգիպտացւոց », կը յարէ հետեւեալ Հեռաքրքրական հատուածը, զոր Այրիվանեցին դուրս թողուցեր է, այսպէս. « Զոր ասեն տռեայ զնա ի դպրոց Յակն և Յամրիսն, որք էին յագգէ Բարքարայ ունեւն Քաղդէացոյ, որ եկեալ էր ակն (յեգիպտոս) փախստական՝ վասն գողանալոյ զտղայս Քաղդէացոց, ի զոն կռոց հառք իւրոյ պատկերի, որ պահանջեր ի նմանէ ի ձեան դիտին՝ որ բնակեալ էր ի ննա և իսառեք նովառ : Եւ էր վարժ քաղդէացի և հեղէն դպրաբան, և յեգիպտոս եկեալ՝ ոռառ զայն և սարտարոսբիսն, յորոց բռնանց ընտրեցան այս երկորին՝ վարժապետք անեանցն

հնարից, յորոց և Մովսէս վարժեցաւ ի տղայորեան տիս» : Ապա, յէջ 225, իբրև շարայարութիւն մէջ կը բերէ Մխիթարայ աւանդածը, գրեթէ բառ առ բառ, այսպէս. « Եւ ի փախչելն Մովսիսի ի Մադիամ, Յանէսն և Յամբէս առին զորդիսն Իսրայելի և տարան յանապատ Հնգետասան աւուր ճանապարհ Հեռի. և շինեցին դրախտ մի՝ զամս տասն, և յոյժ ամրացուցին. և ի կատարմանն՝ արարին նաւակատիս տղայոց Իսրայելի զՁ, և զոհեցին դիւաց, և անդ կոչեցին զիշխանն դիւաց, և եդին պահապան դրախտին. և յայնմ՝ Հեոտ առաւել Հնազանդեցան դիւացեալ կախարդաց » :

Հաւանորէն, թէ՛ Այրիվանեցին և թէ՛ Վարդան ունեցած են գրաւոր աղբիւր մի, և այդ աղբիւրն էր ուղղակի Յանեսին և Յամբեսի ընծայուած ծանօթ գրուածն և կամ Մովսիսի պատմութեան մի ուրիշ խմբագրութիւն : Գր. Նարեկացին ևս Թոնդրակեցւոց դէմ գրած թղթին մէջ, այսպէս և այլք ժ դարում՝ իբրև ծանօթ կը յիշատակեն Յանեսի և Յամբեսի գրութիւնը. և Հաւանական է կարծել, թէ՛ Թոնդրակեան Հայ պանդուխտէ մի, այն է՝ Սմբատայ ձեռքով, Հայերենի իսկ թարգմանուած ըլլայ այն : Յամեսայն դէպս Այրիվանեցւոյ և Վարդանայ աւանդածներն՝ Մովսիսի Պատմութեան Հայերէն և երբայեցերէն բնագրաց Հետ սերտ աղերս ունին և անոնց՝ երբեմն միոյն և երբեմն միւսի խանգարմունքը կը լրացնեն :

Մովսիսի ծնանելուն, երեք ամսէն Նեղոսի մէջ ձգուելուն, Փարաւոնի դատեր ձեռքով Հանուելուն, իր մօրը Յոջարեթին յանձնուելուն, և անկէց երկու տարի վերջ արքայադատեր քով ժողովելուն մասին՝ երկու բնագրաց մէջ եղած համաձայնութիւնն կատարեալ է, վասն զի այդ կէտերն Ս. Գրոց ևս կը համաձայնին. միայն թէ արքայադատեր այն նաժիշտն, որ կը կոչէ զՅոջարեթ, ըստ երբայական բնագրին՝ Ամիտա կոչուած է, մինչդեռ Հայերէնն ունի Մադիամ, ըստ Ս. Գրոց : Երկու բնագրաց մէջ իսկ Մովսէս՝ ջրէն հանուած կը թարգմանուի. բայց երբայականն կը յաւելու, թէ « Իսկ Հայր նորա՝ Հապար անուանէր զնա, որովհետև ըստ այդ գուշակութեան՝ մանուկը ծնանելու համար միայն՝ վերստին մերձեցաւ նա առ կինն իւր Յոջարեթ » : Նշանաւոր են Հոս նոյնպէս Յեքթիէլ, Ամիտա, Յարեդ, Ամրամ, Կահաթ, Աբիգեղուր և Աբիսուկ անուանց մասին տրուած մեկնութիւններն, որոնք վերոյիշեալ պատճառով դարձեալ Հայերենի մէջ մէկդի թողուած են :

Մովսիսի, արքունիքը տարուելէն 3 տարի վերջ, Փարաւոնի ներկայանալն, և մեծամեծաց առջև Հանդիպած դէպքն՝ ըստ էական մար-

սին երկու բնագրաց մէջ իսկ նոյն է . այսինքն է, ըստ Հայերէն խմբագրութեան՝ Փարաւոնի գիրկն ելած՝ կ'ըսուի, թէ « Եւ նոյնժաւայն բուռն եւ հար տասն մատամբ զճօրոշացն Փարաւոնի » . մինչդեռ երբայցին կը գրէ, թէ ամենուն ներկայութեամբ կորգեց քազը Փարաւոնի դիւէն Մովսէս և դրաւ իր գլուխը : Այս բանիս վերայ շփոթած և զայրացած սնտոհապաշտ թագաւորն, կը հրամայէ անդէն սպաննել զողայն : Ըստ Հայերէն բնագրին՝ իշխաններն կ'արգելուն զՓարաւոն, աննդ տղուն անգիտութիւնը ի բարին մեկնելով . իսկ ըստ երբայականին՝ Գարբիէլ հրեշտակն կը զրկուի Աստուծոյ կողմանէ, և իխանի մի կերպարանօք և խորհուրդ կու տայ թագաւորին չի սպաննել զաստողութենէ զուրկ մանուկը, այլ բերել սկուտեղք կրակ և սկի, և փորձել այնու տղուն անմեղութիւնը : Այս պարագայիս մէջ իսկ՝ երկու բնագրաց տարբերութիւն մի կը տեսնուի . այսինքն է, ըստ Հայոյն՝ Մովսէս մէկ ձեռքը կրակին մէջ խօթելով կ'այրէ մատը, զոր և կայծով Հանդերձ բերանը տանելով կ'այրէ նաև լեզուն . և այս է պատճառ անոր թլուատ և ծանրալեզու մնալուն : Իսկ ըստ երբայականագրին՝ կ'ըսուի թէ, մինչդեռ կ'ուզէր ոսկւոյն տանել իր թաթիկը, անդէն հրեշտակն բռնի կրակին կողմը ձգեց զայն : Երբայական բնագրին 8—10 էջերում կը պարունակէ Բաղամուռ՝ Փարաւոնին տուած տեղեկութիւնները՝ Երբայեցոց ազգին վերայ, Արրահամէն սկսեալ, զնա Իսրայելացոց դէմ զրգուելու Համար . — Յեթրոյ կամ Յեթրոյ Մադիանացոյ՝ առ Փարաւոն ուղղած շատագովական խօսքերն և այն պատճառաւ Եգիպտոսէն աքսորուիլն, — Երբայեցոյ մի կնկան պատիւը բռնաբարող Եգիպտացոյն՝ Մովսիսի ձեռօք սպաննուիլն, — սորա գլխապարտութեան դատապարտուիլն և Միքայէլ հրեշտակի առաջնորդութեամբ փախչիլն, որ զօրավարի կերպարանօք կ'երևի անոր, և երեքօրեայ ճանապարհաւ հեռի աշխարհ մի կը տանի զնա, — Բաղամուռ՝ իր որդւոց՝ Յանեսի և Յամրեսի հետ Եթովպացոց Նեկան՝ թագաւորին վերայ յարձակիլն, — այն ժամանակ Եթովպացոց և Արաբացոց իրարու դէմ ունեցած պատերազմն, — Լաբանայ Ասորայ Նեկանի կողմէն քաղաքին վերայ պաշտպան կարգիլն, — Յանեսի և Յամրեսի՝ մոզական օձերուն և Նեղոսէն ածած ջրերու, և Նեկանի 130,000 զօրաց ջարդի մասին եղած արարուածներն . արդ, այս ամենայն, որք առասպելի երևոյթ ունին, դարձեալ կը պակասին Հա-

1. Նեկան՝ եթէ Հնագոյն ձև մի համարինք այժմու Նեկոսի, դա ընդհանուր կերպով թագաւոր կը նշանակէ, և չէ յատուկ անուն՝ այս ինչ կամ այն թագաւորին Եթովպոյ :

յերենի մէջ: Հոս նշանակելի կէտ մ'է Մովսիսի անուանեալ մօր, այն է Փարաւոնի դստեր՝ Մատի յորջորչին, այսպէս նաև Եթովպացւոց Թագուհւոյն՝ Թեաթի, զոր Մովսէս գերի կը վարէ յԵգիպտոս, յիշուած չեն յանուանէ երբայական բնագրի մէջ: Անուանցս յառաջինը կը գտնենք նաև Սինգեղոսի ժամանակագրութեան մէջ՝ (յէջ 120) տարբեր ուղղագրութեամբ. այսինքն է, Փարա, որ և յաջորդ էջերում Թերմոսթիդ ևս կոչուած է: Իսկ երկրորդն՝ Եւսեբիոսի քով (Praep. Evan, IX, 27) Թարթի կը գրուի, և ըստ Յովսեպոսի (De Anti. Jud. II, p. 10) Թարթի: Մեր Ին Ոսկեփորկի անանունն հեղինակն, որուն ծանօթ էին Մովսիսի պատմութեան այլ և այլ աղբիւրներն, մէջ բերով նորա սնուցչի վերաբերեալ զրոյցները, կ'ըսէ. « Մովսիսի սնուցանողին անունն Հաքոնայի է, այլք Թերմոսթիս կոչեն, և այլք Թեմնադիաս, և կէսք Մատի, ըստ չեզուաց փոփոխեալ են »: Այս վերջին խօսքերէս կը հետևի, ըստ իս, որ այդ յատուկ անուանքը մէկ հասարակ անունն մի յառաջ եկած ըլլան, այն է՝ սևնոցիչ, որ այլ և այլ լեզուաց համեմատ՝ նոյնպէս այլ և այլ ձայներ և ձևեր սուած է: Երախտապարտ ենք անանունն հեղինակիս, որ մեզի կու տայ Հաքոնայ իբրև նհագոյն ձև մի, որուն այլուր բնաւ հանդիպած չենք. սակայն, ինչպէս պիտի տեսնենք յետոյ, Մատի կամ Մէթիւս ձևն գուցէ թէ աւելի հին է:

Հայերէն խմբագրութեան 203 իջի այն հատուածն, ուր կ'աւանդուի Մովսիսի տասնամեայ պատերազմն՝ Եթովպացւոց դէմ, և օձակեր եղանց և արագիւններու միջոցով այն երկիրը զրաւելն և Թագուհւոյն յԵգիպտոս գերի վարելու միջադէպն՝ անտարակոյս կամ դիպուածով և կամ խանգարմամբ բնագրին հոս փոխուած է. հետևաբար, նորա բուն տեղին է 201րէ իջի 18 տողամէջն, ուր կ'ըսուի. « Եւ յորժամ գերեցին Եթովպացիքն զՄատի՝ զանուանեալ մայրն Մովսիսի, վասն որոյ և տասն ամ պատերազմեցաւ Մովսէս »: Այս բանս կ'ուզողի ստուգիւ երբայական բնագրաւ, ուր յէջ 9 կը յիշուի նախ, Մովսիսի՝ Փարաւոնի արքունեաց մէջ դաստիարակուիլն և փախուստն յԵթովպիա իբրև միջադէպ, և ապա 11րէ իջում կ'աւանդուի Եգիպտացւոց՝ Եթովպիոյ նեկան Թագաւորի հետ բացած պատերազմը, որուն դէմ կ'ուզարկուին ընդ հակառակն Փարաւոնի խորհրդակաճն՝ Բաղամ մոզն, իւր Յանէս և Յամրէս որդիներով, և մոզական արուեստով օձեր կ'եռացնեն և անոնցմով կը պաշտպանեն ամբողջ տարիներ իրենց ամրոցներն և քաղաքը թշնամիէն: Պատերազմիս կարծեցեալ պատճառն, այն է՝ Փարաւոնի դստեր գերութիւնն իսկ

բնաւ յիշուած չէ երբայական բնագրին մէջ. յայսմ մեծ առաւելու-
թիւն ունի հայերէնն, իբրև ներկայացուցիչ մի ուրիշ աղբեր:

Մեծ տարբերութիւն մ'այլ պատմութեանս շարունակութեան մէջ
կը տեսնուի. իբրև է թէ նեղոսի ջրապատնէշներով և փոսերով ամ-
բացուած քաղաքին անունն և ուր ըլլալն յիշուած չէ, բայց ինն
տարի զայն պաշարմամբ նեղողներն՝ են Եթովպացիք, ըստ երբայական
բնագրին, և ոչ թէ Եգիպտացիք: Ճիշդ այս ժամանակիս կը պատմուի
այս տեղ Մովսիսի աքսորական գալուստն՝ առ Նեկան, և անոր կող-
մանէ գօրավար ընտրուիլն: Ուր 13 տարի մեծամեծ ծառայութիւն-
նր կը մատուցանէ թագաւորին, և անոր մահուանէն վերջ Եթով-
պացւոց այրի թագուհւոյն հետ կ'ամուսնանայ. իր սնուցած եղանց
և արագիւղներու օգնութեամբ՝ օձուտ ճահիճներէն անվնաս անցնելով
եթովպական բանակը, արձակմամբ կ'անուռ այնքան ժամանակ պա-
շարման դիմացող քաղաքը, և Բաղասամ մոգը՝ իր որդւոց հետ յեգիպտոս
կը փախցնէ: Ժամանակ անցնելէն վերջ Եթովպացի թագուհին կը ծա-
նուցանէ իր մեծամեծներուն, թէ Մովսէս՝ որուն հետ ամուսնացայ,
այս 40 տարի է, որ ինձ չմերձեցաւ. ուստի լաւ է, որ ի յիշատակ
Նեկանի՝ նորա որդին թագաւորէ փոխանակ օտարազգոյ: Ահա այս
պարագայիս մէջ է, որ Մովսէս կը ստիպի երթալ ի Մադիամ: Իսկ
ըստ հայկական խմբագրութեան, ընդհակառակն, Եգիպտացւոց կող-
մանէ յԵթովպիա ըրած արշաւանքէն և Մառեսայ մահուանէն վերջ
կը պատմուի Մովսիսի փախուստն ի Մադիամ, և հոս 40 տարի կե-
նալէն ետքը՝ կը զրկուի յԱստուծոյ առ Փարաւոն:

Յուզընելու համար, թէ մի և նոյն իրաց՝ այլքան տարբեր կեր-
պով պատմուիլն երկու բնագրաց մէջ՝ լոկ հայերենի խանգարման կամ
դիպուածի արդիւնք չէ, այլ բնագրի, մէջ բերենք Վարդանայ յի-
շեալ մեկնութեան մէջ պահուած մէկ կատարեալ տեղին, որ հայե-
րէն խմբագրութեան աւանդածը կը հաստատէ. «Եւ ԻԸ ամաց ե-
ղեալ իշխան գաշարալար Եգիպտոսի, յորում ժամանակի Եթովպացիք
հարկատուք Եգիպտոսի, և սպասարեալ՝ եկին և գերեցին զԵգիպ-
տոս, և զՄասի առին՝ գանուանեալ մայրն Մովսիսի, որ էր կին Քա-
նարայ թագաւորին Մեմփիս քաղաքի: Իսկ Մովսէս սնուցեալ ճագ
արագրաց և որքս եղանց՝ գնաց յԵթովպիա ընդ օձուտ անասպտն,
և տասն ամ պատերազմեալ՝ աս զքաղաքն և գաշխարհն և զթէրաս¹
բազուռի նոցա, և զՄասի զմայր իւր ասեալ՝ դասնայր յԵգիպտոս.

1. Այս ձև կը տարբերի Եւսեբիոսի և Յովսեպոսի քով եղած ձևերէն, զորս
մէջ բերինք:

և շինե գրադարն Հերմոսպառնիս¹, կոչելով յանոսն անոսանեալ մօր իւրոյ » : Յայսմ հայերէն խմբագրութեան կը համաձայնի նաև Մխթ. Այրեւմանեցին, ըսելով. « Գնաց Մովսէս երկոտասան հազար զաւրօք, արագօք և այծեմօք յԵթովպիա², և տասն ամ պատերազմեալ էառ զաշխարհն և զթագուհի նոցա Թերբաս » :

Մովսիսի՝ Մադիամ երթալու պատմութեան մէջ ևս մեծապէս կը տարբերին իրարմէ երրայական և հայերէն բնագրերն : Ըստ առաջնոյն՝ ուղղակի Եթովպիայէն կը լինի այդ երթն ի Մադիամ, միացեալ 12-13 էջերում աւանդուած դիպաց հետ. այսինքն է, Մովսէս այստեղ ծանօթանալով Յոթորայ հետ, մտերմաբար կը յայտնէ անոր իր խորհուրդը, որ յետ ծանօթանալու Մովսիսի ազգին և երկրի հետ, կը խորհի մատնել զնա Փարաւոնի ձեռքը. և ապա տեղեկանալով, թէ նա է՝ որ երբեմն կորզած էր թագաւորի թագը, կը բանտարկէ իսկոյն : Իսկ նորա դուստրն Սեփորա, որ կը սիրէր ըզ-Մովսէս, հակառակ իր հօր հրամանին՝ ամէն օր հաց կը բերէ անոր : Օր մի լսելով Յոթոր իւր դստերոյ բերնէն, թէ բանտարկեալն Մովսէս՝ աստուածապաշտ է և առաքինի, կ'ազատէ զնա : Ղիշդ այդ ժամանակին կը յայտարարուի Յոթորայ կողմէն, թէ անոր պիտի տայ իւր դուստրը, ով որ կարենայ յասալ կորզել անոր պարտիզին մէջ տեսնուած գառազանը : Թագազունք և իշխանք կ'ընթանան առ այս, բայց ի զօր, վասն զի Մովսէս այն պարտիզին մէջ շրջագայած ժամանակ կը գտնէ բաղդի՝ գաւազանը, և կը հասցնէ զայն առ Յոթոր. կ'առնու զսիրելին իւր Սեփորա ի կնութիւն, ուսկից ապա կը ծնանի զԳերսոն, իւր բանդէն ազատուելուն 77րդ տարին : Իսկ ըստ վերջնոյն՝ ընդհակառակն՝ Եգիպտոսէն ուղղակի կը չուէ Մովսէս ի Մադիամ, ուր և 40 տարի կը կենայ : Այսքան ժամանակի մէջ ուրիշ բան չի պատմուիր անոր մասին, բաց ի ծնանելէն երկուս որդիս, այն է՝ Գերսոն և Եղիազար, որ նոյնպէս յիշուած չէ յիշեալ երրայական բնագրին մէջ, այլ համաձայն է Ելից Գրոց ԺԸ գլխու 4 համարում աւանդուածին : Այս մասին Վարդան դարձեալ կը գրէ համաձայն

1. Անուան սկզբնատան խանգարուած է ըստ իս, և համաձայն Վարդանայ 225 իջում յիշուածին՝ ուղղագրելի է « Թերթապառնի », յանուն ուսուցչին իւրոյ « Թերթառնի » : Սակայն այս խանգարումն շատ հին է, և նայազէ խմբագրողին չի վերաբերի, զի Եւսեբոս իսկ ունի Հերմոսպառնիս :

2. Գիտելով որ թէ Մխթ. Այրեւմանեցին և թէ Վարդան այս ձեռք կը գրեն միշտ, կարելի է ըսել, որ հայերէն բնագրին մէջ երկիցս զործածուած « Հաղա-աստան » յետոյ ուրեմն ներմուծուած ըլլայ ընդօրինակողաց ձեռքով :

Հային, փարստելով որ և է կասկած խանգարման մասին. « Եւ Խ ա-
մաց ելեալ Մովսէս՝ (յՅգիպտոս) և գնացեալ ի Քուչացիս առ Հուազուէլ,
որդի Իսադանայ՝ որդւոյ Յեկտանայ, որդւոյ անտի Արրահամու, որ ի
Կենտուբայ, յորոց ի դատեացն առեալ զՍեփովբայ ի կնութիւն՝ ծնաւ
երկուս որդիս, զԳերսամ և զՆդիագար » : Արդ, այս այսպէս լինելով,
չենք կրնար այս անգամ երբայական բնագրի յիշեալ արարուածներն
Հայերէնի մէջ դուրս թողուած լինելուն, ինչպէս և տարբերութեանց,
իբրև միակ պատճառ համարել անոնց առասպելայօդ և Ս. Գրոց
մէջ լուռուած ըլլալը. վասն զի Հայկ. խմբագրութիւնն անկէց խտու-
րած Ժամանակ՝ ինքն իսկ Ս. Գրոց աւանդածին հաւատարիմ կե-
րած չէ. այլ կ'աւանդէ նաև այնպիսի բաներ, որոնք ուղղակի Ս.
Կրքին կը հակառակին : Օրինակի աղագաւ, անոր 202 իջում, Մով-
սէս իր կենաց 70րէ տարին ուղղակի մորենուոյն միջէն Աստուծոյ հրա-
մանն ընդունելէն վերջ՝ դեռ 10 տարի կը յապաղէ իր երթն յՅգիպ-
տոս, պատճառելով զնրբութիւն ձայնին և զծանրութիւն » . 80րէ տա-
րին նորէն հրաման կ'ընդունի առ այն, բայց նորէն չկամութիւն
ցոյց կու տայ, մինչև որ Աստուած անոր հրաջք գործել կու տայ :
Յէջ 18, փոխանակ Ելից Ե գլխու 10. « Իմաստունքն և կախարդքն »
բացատրութեան՝ կը յիշուին Յանէս և Յամբէս դիւթեքն : Ուրեմն,
այս խոտորումն ևս մի ուրիշ աղբեր հետևողութեամբ եղած է :

Երբայական բնագրի 15րէ իջի ընդարձակ հատուածն, ուր կ'ա-
ւանդուի Մովսիսի և Ահարոնի առ Փարաւոն մտնելու ժամուն՝ ապա-
րանից առջև կապուած զոյգ մ'առիւծներուն Բաղամ մոզի զրգումամբ
անոնց վերայ յարձակելն, բայց Մովսիսի հրաշագործող զաւազանէն
ամբագած՝ շան կորիւններու նման անոնց ոտից առջև քծնելն, — այս
բանիս վերայ զարմացած թագաւորին՝ իր գիտունները խորհրդի կան-
չելն, այսպէս նաև 20րէ իջի հատուածն, ուր կ'աւանդուի Փարաւոն
(Կենքերեսի) Կարմիր ծովէն միայնակ գերծանիչն¹, և Միքայէլ և Իս-
րրիէլ հրեշտակաց ձեռքով ի նենուէ տարուիլն և հոն 40 ամ թագա-
ւորելն, չեն գտնուիր Հայերէն խմբագրութեան մէջ : Փոխադարձա-

1. Այս տեղիս եգիպտական աղբերէ մի յառաջ եկած է, վասն զի Հրէից կա-
նոնական դրոց մէջ ոչ միայն այդպիսի մի աւանդութիւն կը պահուի, այլ որոշակի
Փարաւոն Կենքերէս ի խորս ծովուն ընկղմած ևս կ'աւանդուի : Ստուգիւ, վերջին
ժամանակներս դստուեցան եգիպտական յիշատակարաններ, որոնք, ըստ արդէ դիտ-
նականաց (Փիւ. Սմիթ, Հին պատմ. Արևելից, Գիրք Ա. Գլ. 2), կը հաստատեն
ծովամայն եղած Փարաւոնի, այն է Իսամէս Բի յաջորդին՝ Մերթիթի Բի գերծանիչն
և Եգիպտոսի մէջ դեռ տարիներ թագաւորելն վերջ՝ բնական մահուամբ մեռելն և
իւր թագաւորական շիրմին մէջ թաղուելն ի Թեբէ, որ է մին ի չքեղապոյն շիրմաց :

բար նշանաւոր են վերջնոյս հետեւեալ տեղիքն, որոնք կը պակասին երբայականին մէջ, այս ինքն է՝ յէջ 203, կ'ըսուի Մովսիսի համար, թէ « պահեաց երեք քառասուն, և ընկալաւ յԱստուծոյ զտախտակս քարեղէնս » : - յէջ 203-204, կ'ըսուի եթովպացի թագուհոյն համար, թէ « Զայն թագուհին, զոր գերեալ էր Մովսէս՝ դեռ ևս յՊգրիպտոս էր, յետ քառասուն և երկու ամաց գերութեան, և ի հանել ժողովրդեանն յՊգրիպտոսէ՝ զնա ևս եհան անտի, իբրև թէ ի գութ և ողորմութիւն առնել նմա : Եւ սոյնպէս մեծարանօք շրջեցուցանէր զնա յանապատին ընդ ժողովրդեանն Իսրայելի, վասն այնորիկ բամբասեցին զՄովսէս՝ Մարիամ և Ահարոն, և պատուհասեցան »¹ : Յէջ 204, կ'ըսուի Մովսիսի լուսափայլութեան համար, թէ « Եւրբն քո ձգէին ի վերայ երեսաց նորա, և ապա կարէին խօսել ընդ նմա որդիքն Իսրայելի », և թէ « մօրոս ոչ ոսնէր Մովսէս՝ ի պայծառ լուսափայլութենէ դիմացն » : 205-206րդ էջերում աւանդուածներն մասամբ Բ Օրինաց ԼԴ գլխէն, և մասամբ այլ անկանոն գրուած է մի քաղուած են : Վերջին աղբեր կը վերաբերի Մովսիսի թաղումն, որ Միքայէլ Հրեշտակապետին ձեռքով եղած կ'աւանդուի : Այս տեղիս՝ երբայական բնագրին հետ աղերս ցոյց կու տայ, ուր սակայն երեք հրեշտակապետք կը յիշուին, այն է Միքայէլ, Գարրիէլ և Զենգիէլ, հետեւեալ յաւելուածովն՝ ի դիմաց Աստուծոյ. « Ես իջից և թաղեցի զքեզ », որ Աշամգիրքը կը յիշեցնէ մեզ, ուր նախածնողաց յուղարկաւորութիւնը ընդարձակաբար կը նկարագրուի Աստուծոյ և երեք հրեշտակապետաց ձեռքով :

Հայկական խմբագրութեան վերջնութեւր էջերում եղած հետեւեալ չորս տեղիքն ևս չեն գտնուիր երբայականին մէջ. այսինքն են, Ա. Մովսիսի մահուան վերայ կատարուած 30 օրեայ սուգն, որուն իբրև պատճառ կը նշանակուի լուսնական ամիսն, ըսելով. « Զի թիւ լուսնին երեսուն օր է, և արդ նոր ծնանի և ցուցանէ զյարութիւն մեր ի հողոյ և զվերստին նորոգումն յանմահութիւն » : Բ. Մովսիսի քառասունակ ծնունդն, որք են ըստ բնագրին. « Առաջին ի մօրէն Յո-

1. Այս աւանդութիւնս համաձայն է Թուոց գրքի ԺԲ գլխու 4 տան, ուր կ'ըսուի. « Եւ բամբասեցին Մարիամ և Ահարոն զՄովսէս վասն կոնոյն եթովպացոյ, զոր առ Մովսէս, զի կին եթովպացի առ » :

Ս. Գրեքն հաստատուած այս պատմական էջմարտութիւնս ի նկատի առնելով, այնուհետև դժուար է եթովպոյ մէջ Մովսիսի ձեռքով կատարուած միև արբուածները իբրև լոկ առասպելներ համարել, պարզ այն հիման վերայ, որ անկանոն գրուածոց մէջ միայն կը պատմուին. վասն զի նոյն իսկ հանոնական գրքում շատ ուրիշ պատմներ ևս կը յիշուին, որոնք մեզ հասած չեն :

բարեթայ, երկրորդ՝ ի ջրոյ, երրորդ՝ ի հրոյ, չորրորդ՝ ի վիմէն: Գ. Բաղդաստութիւնն Մովսիսի երեք քառասուն, այսինքն է, 120 օր պահուն և անոր կենաց 120 տարիներու, « օր ընդ տարւոյ » հաշուելով ըստ բնագրին: Գ. Այն տեղին, ուր Մովսիսի յարութիւնն իբրև սրգէն մի կատարուած իրողութիւն կը համարուի, այսպէս. « Եւ նորա կատարեալ յարութիւն եղեալ է, որ յարուցեալ եկն ի Թափո, վկայ աստուածութեանն Յիսուսի Քրիստոսի՝ որդւոյն Մարիամու »: Այս տեղիքս աւելի եկեղեցական հարց խորհրդածութիւններ կ'երևին, քան թէ հրէական աւանդութիւններ:

Մովսիս բնագրաց մասին ըրած այս ընդհանուր քննութիւններէն իբրև, դժեմք երկուստեք համեմատութեամբ մի քանի տեղեր միայն, որոնք իրարու հետ նմանութիւն ունին:

VITA MOSIS

ՊԱՏՄ. ՄՈՎՍԻՍԻ

Յէջ 4. « Erat in Ægypto vir Levita, nomine Amram, filius Kehat, filii Levi, filii Jacob ».

« Hic Jocebed sororem fratris uxorem duxerat, ex qua... concepit peperitque Amram filium: (Moses). »

Յէջ 5 « Spiritus Domini super Mariam effusus est, quae prophetizans, ecce, inquit, patri et matri meae filius nascetur, qui Israel de manu Ægypti liberabit ».

Յէջ 5. « Amram... concepit, peperitque partus, prodit formosissimus infans, atque in conclavi tres menses absconditur... »

Յէջ 6. « Postquam tertium mensem Jocebed partum Rex

Յէջ 200. « Սոքա էին յազգէն Ղևեայ, որդիք Ամրամայ, որդւոյն Կահաթայ, որդւոյն Ղևեայ, որդւոյն Յակոբայ ».

« Մովսէս ծնաւ որդի Ամրամայ՝ Յոգարեթայ մօրէ, որ էր դուստր Ղևեայ ».

« Գէտքն Եգիպտացոց ասացին Փարաւոնի, թէ յայս նիշ աւուրս, յայս քանիս, այս անուն ամսոյ փրկիչ ծնցի Խարայէլի, և նա ազատեսցէ զԽարայէլ ի ծառայութենէ քումմէ ».

Յէջ 200. « Եւ յորժամ ծնաւ Մովսէս՝ Թաքուցին ի տան ամիսս երիս. և զի էր կայտառ մանուկն և Թաքուցանել ոչ կարէին »...

« Վասն որոյ պրտուեայ տապանաւ ի գեան ընկեցին ի յազէ »

intelligit, illa subito puerum contextae ex juncis arcae impositum Nili ripae credit».

« Hinc Regina virgo magna puellarum caterva ad flumen lavatura descendit, aliaequae de more gentis sequutae, inspicit aquis innatantem arcam, adferri jubet, aperit, puer Ægyptiarum ubera rejicit».

« Amita, quae aderat, reginam virginem de advocanda Hebraea nutrice monuit. Mater Jocebed puerum duobus in diem argenteis alendum suscepit».

« Biennio post Pharaonis filiae sistitur, ab eaque adoptatur».

ՅԷՂ 7. « Tertius a nato Mose annus fluxerat, Pharaeo conjugiam praebebat, uxor dextram, laevam cum Mose filia tenuit, proceres ante regem sedere jussit. Moses in omnium oculis sublatam a Pharaonis capite coronam suo imposuit».

« Balam Magus idemque regius eunucus stipendibus caeteris, Domine rex, inquit, revoca in memoriam somnium illud, cujus olim interpretatio te docui... si Ægyptum deleri

Փարաւոնի. յորժամ զգացաւ ըզ-
ճնունդ փրկչին Խարայելի » .

« Եւ յիջանեղն դստերն Փարաւոնի առ ափն գետոյն, տեսեալ նաժշտացն զտապանն առին ի խաղէ՝ պտուտին, և տարան առ ռաջի դստերն թագաւորին, և տեսեալ խանդաղատեցաւ զնովաւ, և ասաց. Ի մանկանց Եբրայեցւոցն է դա » .

« Իսկ Մարիամ՝ քոյրն Մովսեսի, որ մի և նա էր ի նաժշտաց զըստերն Փարաւոնի, առ զմանուկն և տարեալ ետ ի մայրն իւր Յոզաբեթ, իբր ի դայեակ, սնուցանել վասն դստերն Փարաւոնի » ...
« Զոր և սնոյց և երբ առ դուստրն Փարաւոնի .

« Եւ նա առեալ տարաւ զնա առ հայրն իւր Փարաւոն... Եւ էր Մովսէս մանուկն կայտառ և բարետեսակ. ընդ որ դիւր թուեցաւ Փարաւոնի, և առ զնա ի գիրկն իւր՝ և համբուրեաց: Եւ նոյնժամայն բուռն եհար Մովսէս տասն մատամբ զմօրուացն Փարաւոնի » ...

« Ընդ որ բարկացեալ թագաւորն » .

non sinis, capite plectendus est, placuit consilium.

« Confestim Deus Gabrielem angelum misit, qui suscepta principis viri persona, regem sic adoravit. Ego insontem minime damnandum censeo, multo magis puerum iudicii expertem. Verum agite puerum gemmam et carbonem proponamus, si carbonem elegerit, puerilis ignorantiae iudicium erit, at si gemmam ceperit damnandus est ».

« Nulla mora et gemma et carbo pueri oculis subjiuntur. Moses gemmam auferre parabat, sed coactam ejus manum angelus carboni imposuit, raptamque ori intulit, etiam ex-

tremam linguæ partem adusit; unde postea tardiloquus evasit, ipse ore linguaque gravem se fuisse testatur ».

ՅԷՂ 12. « Dum haec geruntur, Moses Ægypto profugus Necani regis Ætiopum castra pervenit.

ւորն կամեցաւ սպանանել ըզտողայն » :

« Իսկ իմաստունքն՝ որ անդ կային,

ոչ թողին զարքայն նենգել տըղային, ասելով, թէ ի տխմարութենէ արար զայն և ոչ զիտութեամբ, արքայ. և թէ կամիս՝ փորձեսցուք, ասեն » :

« Եւ բերեն առաջի տղային ըսկուտեղ մի ոսկի կարմիր՝ որպէս զհուր, և սկուտեղ մի կայծակուն հրոյ, ասելով, եթէ զոսկին առցէ՝ յայտ է զի խորամանկութեամբ էարկ զձեռն իւր ի մօրուան արքայի. իսկ եթէ զհուրն առցէ, երևի թէ անմեղութեամբ արար վասն տխմարութեան » :

« Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի հուրն, և կափուցաւ կայծակն ի մատն տղային, և նա տարաւ վաղվաղակի լալով ի բերանն, և եդ ի վերայ լեզուին, և լեզուն ևս այրեցաւ. վասն այնորիկ ծանրալեզու և թոթովախօս ասէր (զինքն) » :

ՅԷՂ 201. « Նախանձեցան Եգիպտացիքն, և փախեաւ ի Մադիամ »

« Adeoque proceribus statim ac regi carus, qui exercitus ducem elegit...

« Assumptus paribus sententiis in regem Moses, cui est concessa Necani uxor »...

« Tertio post inaugurationem die, proceres Mosen de obsidione interrogant, qui novem jam annos duraverat uxorum pignorumque carissimo aspectu viduatis »...

« Moses obsenquentibus omnia prospera promisit... inquit ciconiarum pullos vobis parate: dictum, factum »...

« Tandem omnes loriceis armatos, equos consedere ac se ducem sequi jubet, eam in partem, quam serpentes tutabantur, quibus obviis ciconias immitterent, quæ illos occiderent... Res imparata, res acta, civitatem ingressi ferro vastam fecerunt »...

Այս կերպով կը շարունակուին, երկու բնագրաց մէջ, Մովսիսի պատմութեան միւս պարագաներն ևս: Սակայն երբ կը տեսնենք ակնյայտնի նմանութեանց հետ՝ նոյն իսկ իսկական և նշանաւոր տարածայնութիւններ ամբողջական տեղեաց՝ ոչ միայն պատմական յառաջընթացներ, այլ և յատուկ անուանց և թուոց մէջ, չենք վարանիր ըսել, որ հայկական խմբագրութիւնն՝ ոչ միայն լոկ թարգ.

« և եղև զօրավար Եգիպտացոցն (Եթովպացոց) »:

« Առ գերի և զթագուհին նոցա զԹեաբի »...

203 « Եւ զի պատուէր զթագուհին Եթովպացոց մեծարանօք, զոր գերեւին էր անտի .

« տասն ամ պատերազմեցաւ ընդ Եթովպիա »:

« և սնոյց եղունս և ձագս արագլաց,

և նոքօք պատերազմեցաւ ընդ Եթովպիոյ (Եգիպտոսի) և էաւ զնա »:

« Զի օձուտ էր ճանապարհն որ մտանէր ի Հապաշաստան, և նոքա եղունքն և արագիւլքն՝ զօձն սատակեցին, և ապա կարաց մըտանել. Մովսէս ի Հապաշաստան և գերել զնոս »:

մանութիւն մի չէ երբայական ծանօթ բնագրէն, այլ և ոչ իսկ անոր պարունակին մէջ սահմանափակուած համառօտագրութիւն: Անտարակոյ չայ խմբագրին ծանօթ եղած է և՛ մի ուրիշ բնագիր, որ իւր պարունակութեամբն և ժամանակագրական կարգաւ և բունած ուղղութեամբն՝ մեծապէս կը զանազանէր Գառլմիհեայ հրատարակած բնագրէն: Բայց թէ եթովպացերէն էր արդեօք այդ բնագիրն, թէ սորերէն կամ յունարէն, այս կէտս որոշելն դժուար է այժմու հնգամանաց մէջ, միայն հայերէն խմբագրութեան ներքին փաստերէն առաջնորդուած. որովհետև այդ ներքին փաստերէն ոմանք նաստաւոր կ'երևին սեմական աղբերաց, մանաւանդ ի նկատի առնելով Մխիթ. Այրիվանեցւոյ և Վարդանայ քով պահուած շահագրքիւ հատուածքը, և ոմանք այլ՝ յունական և քրիստոնէական աղբերաց:

Մովսիսի պատմութեան միւս հրատարակութիւններն, զորս համառօտիւ յիշած է Հառնակ¹, գրեթէ բացառութեամբ սլաւական լեզուով են և ինձ անմատչելի: Սակայն դիտելով մէկ կողմէն, որ դրքա աւելի յունարէն, քան թէ ուրիշ որ և է սեմական լեզուէ մի Թարգմանուած լինելու առիթ և դիւրութիւն ունէին, այս ազգիս և դպրութեան հետ ի վաղուց ունեցած յարաբերութեանց պատճառաւ. ուստի, կը հետևի Մովսիսական պատմութեան յունարէն բնագրի մի բոյութիւնն նոյն իսկ Թ-ժ դարում: Հառնակէն յիշուած խմբագրութեանց վերջինն՝ որոյ խորագիրն է. Յադագս կենաց սուրբ մարգարէին Մովսիսի, և փախստեան նորա յեգիպտոս և տերտրեանն ի վերայ Արարացոց, կը թուի լինել լաւագոյն ներկայացուցիչ անյայտացած յոյն բնագրին, որ, — խորագրէն դատելով, — բովանդակութեամբ իսկ նման կը տեսնուի երբայական ծանօթ բնագրին. այնու մանաւանդ, որ Արարացոց մասին ևս կը խօսուի հոն, որոց անունն անգամ յիշուած չէ հայկական խմբագրութեան մէջ:

Մովսիսի կենսագրութեան հնագոյն խմբագրութիւնն յունարէն թէ սեմական լեզուով գրուած — դեռ յայտնի չէ — է Արտառանիս (Αρταράνους) ընծայուածն, ուսկից ընդարձակ հատուածներ պահած են մեզ Եւսեբիոս² և Սինգեղոս³, թէ և վերջինս՝ Եւսեբիոսէն ուղղակի կը ճանաչէր զայն: Յովսեպոսի⁴ աւանդածն ևս սերտ ա-

1. Geschichte des Aethiost. Litteratur, Leipzig 1893, I. Theil, 2 Hälfte s. 915.

2. Praeparationis Evang. Liber IX. 27, p. 431-436, Ed. Coloniae 1688.

3. Georg. Syncellus, Chronologia, p. 120, seq.

4. Antiq. Jud. Lib. II. C. VIII-XVI, p. 97-115, Ed. 1726,

դերս ունի Արտաւանի գրութեան հետ, մանաւանդ թէ էական կէտերու մէջ իրարու համաձայն են, թէպէտ և տեղ տեղ երբայեցի պատմագիրն կը խոտորի անկէց, վերադասելով իմն հրէական գրաւոր և կանոնական աւանդութիւնները :

Այս նկատմամբ դիտել կու տամ, — իբրև ճշմարիտ եղելութիւն, — որ հայկական խմբագրութիւնն՝ այն վիպաց յառաջբերութեան և յատուկ ածուանց մէջ, զորս արդէն մատնանիշ ըրինք մասամբ, և պիտոր ընենք, երբայական ծանօթ բնագրէն խոտորած ժամանակ՝ մերձաւոր նմանութիւններ ցոյց կու տայ Եւսեբիոսի և Յովսեպոսի քով աւանդուածներուն հետ : Օրինակի աղագու, համաձայն է պատմական մասին մէջ, երբ Փարաւոնի ծառայութեան մէջ և յօգուտ Եգիպտացւոց կեալ և գործել կու տայ Մովսեսի, մինչև անոր երթալն ի Մադիամ. մինչդեռ ըստ երբայական բնագրին՝ ընդհակառակն 40 տարիներ անցնել կը տրուի անոր յԵթովպիա և նեկանի ծառայութեան մէջ, ի վիսս Եգիպտացւոց : Իսկ ածուանց նկատմամբ՝ Փարաւոնի դստեր, այն է Մովսեսի ածուանեալ մօր անուանն, որ յիշուած չէ երբայական բնագրի մէջ, հայերէնն՝ Մառի կ'անուանէ, որ կը գտնենք Արտաւանի պատմութենէն քաղուած Եւսեբիոսի յիշեալ գրուածին մէջ, յէջ 432, այսպէս. « Τούτου δέ γεννησai θυγατέρα Μεθρίων¹ » . Նոյնն երկրորդ անգամ յիշուած է 433 իջում, այնպիսի մի ընդարձակ պարագայով, որով այլ ամէն տարակոյս կը փարատի. այսինքն թէ՛ հայերէն խմբագրութիւնը՝ երբայականին հետ բաղդատած ժամանակ՝ ըսինք, որ յէջ 201. « Եւ յետ մահուան Մառեայ՝ անուանեալ մօրն Մովսեսի՝ նախանձեցան Եգիպտացիքն » և այլն տեղին՝ չի գտնուիր վերջնոյն մէջ. արդ նոյնը կը գտնենք առ Եւսեբիոսի, այսպէս. « Υ'πό δέ τούτον τόν καιρόν τῆς Μεθρίδος τελευτησάσης, ὑποσχέσθαι τόν Χενεφρῆν τῷ δὲ Μωϋσῃ καὶ τῷ Χανέθωθ τὸ σῶμα ὥστε διακομίσαντας εἰς τοὺς ὑπὲρ Αἴγυπτον τόπους θάψαι, ὑπολαβόντα τὸν Μωϋσῶν ὑπὸ τοῦ Χανέθωθ ἀνερεθίσσεσθαι. Πορευομένων δὲ αὐτῶν, τὴν ἐπιβουλὴν τῷ Μωϋσῃ συνειδότων ἐξάγατελλαι τίνα » .

Արտաւանեան հասողածիս և հայկական խմբագրութեան իրարու հետ ունեցած աղերսն միտխտելի լինելով, այժմ ընդառաջ կ'ելնէ

1. Եւսեբիոս Անտիոքացի և Սինկեդոս փոխադարձաբար Փարա և Փարից ևս կը գրեն, որ Եգիպտական Փարաւոն ածուան իգական ձև մ'ըլլալ կ'երևի. վասն զի ինչպէս զիտել կու տայ, Յովսեպոսի հրատարակութեան ծանօթութեանց մէջ, Բեռնարդոս, կը նշանակէ Բարահի Տր, ինչպէս Փարաւոնի պիլ Թաւուս :

մեզ հետեւեալ հարցն. Արդեօք Հայերէն խմբագրութեան հեղինակն՝ միայն Նւսերիօսէն և Յովսէպօսէն կը ճանչնար Արտաւանի պատմութիւնը, թէ ընդհակառակն՝ ուղղակի և ամբողջապէս ունէր գայն ի նեւին: Առ այս դիտել կու տանք, որ Հայկական խմբագրութեան մէջ կան բաներ, որոնք բոլորովին Նւսերիօսի և Յովսէպօսի ընծայած հատուածներու շրջանակէն դուրս են. օրինակի աղագաւ, Մովսիսի մանութեան հասակին վերայ Փարաւոնի դիմաց ըրած փորձն, զոր յիշցինք: Կան դարձեալ ուրիշ բաներ այլ, որոնք կը գտնուին նաև որ հեղինակացս քով, բայց Հայերենէն շատ տարբեր կերպով: Օրինակ իմն, Նւսերիօս՝ Մովսիսի արագիլներ սնուցանելու և Յթովպիոյ փրայ արշաւելու պատմութիւնը այսպէս կ'ընէ Համաձայն Արտաւանի. « Մովսէս յետ առնելոյ զօրաժողով զօրաց բազմաց, քաղաք և, ասնն, շինեալ ի տեղւոյ այնմիկ, զանուանեալն Հերմոպալիս, յորմ յախ իրպեայ (արագլի), որ զվնասակարս մարդկան՝ զտղոռնս իտորէ, նռաբոս մատոյց », և այլն: Իսկ Յովսէպօսի քով (Յաղագս հր. հնախ. Գիրք Բ դ. Ժ) այդ արշաւանքի և արագիլներու նկարագիրն աւելի մանրամասնօրէն եղած է: Անանուն քաղաքն, զոր կը պաշարէ, է Յթովպիոյ սահմանակիցն Սարա. արքայադուստրն Յթովպացւոց, որ ծածուկ կերպով դաշն կը կոէ Մովսիսի հետ և կ'առանանայ, կը կոչուի Թարրիս: Արդ, դիտելով որ մի և նոյն դեպոց պատմագրութեան մէջ Նւսերիօս և Յովսէպօս իսկ ոչ միայն Հայերէն խմբագրութենէն, այլ և իրարմէ կը տարբերին. ուրեմն անկէց կը հետեւի, ըստ ինքեան, որ եղած ըլլայ Հասարակաց հնագոյն պատմութիւն մի Արտաւանայ, յորմէ իրարմէ աւելի կամ պակաս բաղուածներ ըրին՝ ոչ միայն այդ ծանրակշիռ հեղինակութիւններն, այլ նոյն իսկ մեր խմբագրութեան հեղինակն: Բայց, ըստ իրին՝ դժուար է որ Հայերէն խմբագրութիւնն անմիջապէս այդ գրուածէն կարենար օգտուիլ, դիտելով որ խմբագրութեանս ժամանակ՝ արդէն իսկ անյայտացած էր Արտաւանի պատմութիւնն: Այսպիսի մի եղութիւն՝ Հայերէն խմբագրութեան սկզբնազրի Համար միայն կարելի է. իսկ մեզ տակաւին ծանօթ չէ նմանօրինակ սկզբնազրի մի, բաց ի վերոյիշեալ երբայական պատմութենէ, որուն աղբրներն յայտնի են, մէկ կողմէն Հայկական խմբագրութեան, և միւս կողմէն այլ Յովսէպօսի հետ:

Գիրք. Գաուլմիրի՝ Համբուրգեան Հրատարակութեան Հմտալից Ծանօթութեանց մէջ ցոյց կու տայ մեզ Մովսիսի պատմութեան ուրիշ աղբիւրներ և, որոնք երբայական բնագրի նմանաձայն բաներ

կ'աւանդեն: Օրինակ իմն, մէջ կը բերուի Ոգիի ֆաղդեացին, որուն քով նոյնպէս կը գտնուի երբայական բնագրի սկիզբներն աւանգուած Փարաւոնի երազն՝ Մովսիսի ծննդեան մասին. այսպէս կը յիշուին Եգեկիաս ոմն մեկնիչ գրոց, Սողոմոն Եարբի, Աբին Եգրա և այլք, որոնք աւելի հին ըլլալով քան զՅովսեպոս՝ աւելի երբայական բնագրին կը համաձայնին: Ասկէց կը հետևցնէ Գաուլմինի, թէ սաքա առ հասարակ՝ իր հրատարակած երբայական բնագրէն օգտուած են. հետևաբար, սա ամենէն աւելի երիցագոյն է: Սակայն, Բեռնարդոս¹ ընդհակառակն դիտել կու տայ իրաւամբ, թէ Գաուլմինեայ հրատարակած եռամասն Պատմութիւնն, եթէ ամբողջ համարենք և եթէ յապաւեալ, կիսով չափ բարելոնական թալմուտ Սեփրեի ընծայուած հնագոյն գրուածներէն, բայց ի մասնաւորի Դեբարիմ՝ րաբունիէն հաւաքուած են:

Վերոյիշեալ աղբերաց նմանութենէն, — զորս եթէ հնագոյն ևս համարինք քան զՅովսեպոս, — չի հետևիր, որ Գաուլմինեայ հրատարակած բնագիրն ամենէն երիցագոյնն եղած լինի, և իբրև միակ աղբիւր ծառայած ըլլայ ամենուն. վասն զի գէթ Յովսեպոսի քով Մովսիսի Եթովպիոյ մէջ մղած պատերազմներն՝ երբայական բնագրի մէջ պատմուածներէն յաւանդուին տարբեր քաղաքական նպատակ ունին, ինչպէս տեսանք. այսինքն է, նա կը ծանուցանէ այն զլիսաւոր պատճառը, թէ ինչ նպատակաւ Եգիպտացիք զօրավար կարգեցին զՄովսէս Եթովպացուց դէմ եղած արշաւանքին, այսինքն է՝ որպէս զի սպաննուի, և Իսրայելացիք զրկուին իրենց նախագուշակեալ փրկչէն: Սաբա քաղաքի պաշարումը՝ Մերիսի, Կամբիւսեսի և եթովպացի արքայադստեր արարուածներովն՝ որք ուղղակի եգիպտական աղբերէ յառաջ կու գան, քաջ կը համաձայնին Արտաւանի պատմութեան, և են արժանահաւատ բաներ. երբայական բնագրի մէջ պատմուածներն՝ ընդհակառակն՝ մասամբ րաբունական, և մասամբ այլ եթովպական աւանգութիւններէ հաւաքուած են, որոնք ինչպէս իրենց աշխարհական իշխանութիւնը Դաւթէն ծագած կարծեցնելու համար հնարեցին Սողոմոնի և Սաբա տիկնոջ ամուսնութիւնը, այսպէս այլ հոգևորական իշխանութիւնը բարձրացնելու դիտամբ՝ հնարած են Երբայեցուց առաջին օրէնսգրի և նախամարգարէի վերաբերութիւնները՝ Սաբա քաղաքի տիրուհւոյն՝ Քարբիւ թագուհւոյն հետ, հակաժամանակագրական և հակապատմական վիպասանութիւններով հանդերձ, որոնք իրարու իսկ յաճախ կը հակասեն յայտնապէս:

1. Տես Chronicon Mosaicum ad Josephum, p. 311.

Մինք կը Հանդիպինք Գաուլմիենայ Հրատարակութեան մէջ այն-
 զիս տեղեաց, որունք ոչ միայն Արտաւանէն Հին շին, այլ նոյն իսկ
 Գրիտոնէական Թուականէն վերջ կամ մերձաւորապէս նոյն ժա-
 մանկները Հազիւ գրուած անկանոն գրութիւններէ փոխ առնուած
 են: Օրինակի աղագաւ, Բ գրքին սկիզբը, յէջ 22, բարունի Թան-
 դմայէն առնելով, այսպէս կը գրէ, Մովսիսի պատմութեան անա-
 նան Հեղինակն՝ Մովսիսի Եգիպտոսէն ելնելուն և Յովսեփայ ոսկե-
 րաց Համար. « Ceteri Israëlitae Ægypto jam egressuri duce
 Moese... ille urbem Josephi feretro investigando, tres totas dies
 octesque circuire non destitit, nec enim Ægypto egredi poterant,
 nisi ejus ossa deferrent... ex magorum sententia, qui regem mo-
 nuerunt. Judaeos sacramenti religione impeditos, nisi Josephi ossa
 deferrent, nunquam Ægypto egressuros ». Այս տեղիս՝ փոքր ինչ
 փոխակերպեալ յառաջբերութիւն մ'է 12 նահապետաց (Նմաւոնի) Կը-
 տակէն, ուր գրուած է այսպէս. « Եւ հանին զնա ի ծածոակ ի պա-
 տրագմէ Եգիպտացոցն. Վասն զի զուկերսն Յովսեփայ պահէին ի
 լոննարանս քազաշորացն, զի ասէին կախարդքն և դիշքքն, երբ յե-
 լուննն ոսկերացն Յովսեփայ յԵգիպտոսէ՝ եղիցի ամենայն Եգիպտոս
 իսւար և մրրիկ և Հարուածք մեծամեծք յոյժ ամենայն Եգիպտոսի,
 մինչև երազօք ևս անգամ տեսանել ոչ կարացեն իւրաքանչիւր զեղ-
 րոյր իւր »: Երկու տեղեաց էական նմանութիւնն յայտնի լինելով,
 նպատմամբ մոգուց, ուրիշ մեկնութիւն չի վերցնենք, այնու մանա-
 ւանդ որ ուղղակի բարբի Թանգումայէն առնուած է:

Նոյն գրքի 48 իջում Մովսիսի Թաղման կամ յուղարկաւորու-
 թեան նկարագիրն, գործակցութեամբ երեք հրեշտակաց, « Tres an-
 geli, Michael, Gabriel et Zinghiel, cum Deo descenderant. Ga-
 briel feretrum curavit, Michael purpuram expendit, Zinghiel
 vestem ad cervices et ad pedes », և այլն, նմանութիւն է Արամ-
 քոց մէջ, յէջ 20, Արամայ յուղարկաւորութեան նկարագրին. և այս
 անտի իսկ քաջ կը տեսնուի, զի առաջնոյն մէջ՝ ի կէտ մահուն
 Մովսիսի բերանն ևս դրուած է պաղատախառն և ընդարձակ աղերս
 մաւ Աստուած, նման վերջնոյս մէջ Արամայ բերան դրուածին:
 71 իջի մէկ տեղին, ուր « Magna tibi merces justisque in futuro
 saeculo parata est; lignum vitae, paradisi terrestres delitiae, la-
 ctis, olei, balsami fluvii, vini pigmentati, cupediarum, aroma-
 tum behemot in montibus mille » երկրաւոր դրախտի բոյսերն և
 բարութիւններն կը խոստացուին Աստուծոյ կողմէն իբրև ի վար-

ձատրութիւն Մովսիսի Կօմմեայ ծառայութեանցը, նմանողութիւն է Սեփորայի 14 իջի տեղւոյն, ուր Ադամայ աղաչանաց Համաձայն՝ Աստուած դրախտի անուշահոտ տունկերն, այլովք Հանդերձ, կը շնորհէ ի վայելս իրեն և իւր ապագայ սերնդոց :

Յէջ 85 միւս տեղին, ուր Հետեւեալ բառերն գրուած են Մովսիսի բերան՝ ուղղեալ առ Եսրայելացիս, որպէս զի. աւետեաց երկիրը մտնելէն վերջ յիշեն իւր սկրտտիքը. « Unum a vobis postulo, subjecit, Moses, ingresso terram, mei ossiumque mearum mementote » առնուած են բառ առ բառ ժՔ Նահապետաց (Յովսեփայ) կտակէն :

Յէջ 14 Մովսիսի պատմութեան, երբայական գրիչն խօսելով Մահիանացուց իշխանի դատեր Սեփովրայ մասին՝ կ'ըսէ. « Saphora interea Saraae, Rebecca, Rachelis et Liae virtutes atque optima facta imitatur ». Այս՝ նմանութիւն է Սաաներայ պատմաբան, 153 իջում, եգիպտուհւոյն Համար ըսուած այս խօսքերուս. « Մեծահասակ էր իբրև զՍառա, և զեղեցիկ որպէս Հռեքեկա, և վայելուչ քան զՀուսքէլ » :

Այս փաստերու վերայ կարելի է աւելցնել և այն, որ ոչ Յովսեփոս, ոչ Արտաւան, և ոչ այլ ողբերգակ բանաստեղծքն Յգեկիէլ և Տրիտոն, որոնցմէ շատ վկայութիւններ մէջ կը բերէ Նւեբրիոս¹, առիթ ունելով խօսել Եսրայելացուց և Մովսիսի վերայ, բնաւ յանուանէ չեն յիշատակեր Գառլմինեայ Հրատարակած Մովսիսի պատմութիւնը : Այս իսկ ուրեմն յայտնի նշան է, թէ այս գրուածս՝ անոնց ժամանակ զեռ գոյութիւն չունէր, այլ յետոյ ուրեմն խմբագրուեցաւ անանուն հրէի մի ձեռքով, որ հաւաքեց իւր և դրացի ազգաց մէջ Մովսիսի մասին շրջող գրաւոր և անդիր գրոյցները : Հաւանորէն այս պատճառաւ իսկ իւր անունը դրոշմած չէ գրութեան վերայ :

Երկու խօսք այլ գրուածիս հայերէն խմբագրութեան և Թարգմանութեան ժամանակի վերայ ըսենք : Մինչև ցարդ եղած քննութեամբ տեսնուեցաւ, որ մէկ մէկէ տարբեր բաներ են Մովսիսի պատմութեան հայերէն թարգմանութիւնն և այժմուս Հրատարակուածն. այսինքն է՝ մին կը ներկայացնէր, երբեմն, աւելի մի ընդարձակ գրութիւն, որ ուրիշ տիտղոսով յիշուած է միայն Սարկաւագ վարդապետի ցանկին մէջ, այն է՝ Վերացոսմե Մովսիսի, որ կը յիշեցնէ

1. S^{tu} Praep. Evang. Ed. Coloniae 1688, p. 436-446.

մեզ ուղղակի յոյն ժամանակագիրներէն յիշուած Ἀνάληφης Μωσέωςը, իսկ միւսն՝ անկէց տարբեր և վերջէն կատարուած խմբագրութիւն մի: Այս վերջինս՝ այժմեան ձևով դժուար է որ ժԳ դարէն յառաջ գոյութիւն ունեցած ըլլայ: Այս կարծեաց ի հաստատութիւն ունինք այլ և այլ կուռաններ: Ա. Գրուածիս լեզուն, համեմատութեամբ միւս անվաւերականաց, խիստ հետևակ է և անհարթ, ասութիւններն՝ անյատուկ և տեղտեղ մինչև քերեկանութեան ամենայայտնի կանոնաց դէմ¹: Բ. Խմբագրութեանս զլիւսուր ներկայացուցիչքն են Յայամաւուորք և Ի՛ր ձառնտիրն, որոնք ի վերջ ժն դարուն և կամ ի սկիզբն ժՁ. ին հազիւ գրուած կ'երևին: Գ. Անունս Հապաշասան, որ երկիցս գործածուած է — բոյր օրինակաց մէջ — փոխանակ Եթովպոյ, և ոչ իսկ ժԳ դարու հեղինակաց քով գործածուած է: Անունս Հարէշի նոր պարսկերենէ ծագած է, որ կը նշանակէ ըստ Վիվիէն դը Սէն Մարտէնի (Nouveau Dict. de Géogr. universelle, T. I. p. 9, Paris 1879) les *mélanges convenus*, այսինքն է՝ ըստ ժողովրդական բարբառոյն՝ խաննորդ ազգաց, իսկ պատմականօրէն՝ կը նշանակէ Եւրոպացւոց հետ ունեցած յարաբերութիւնները, որոց իբրև առաջին ներկայացուցիչք եղան Պորտուգալիք կամ Լուսիտանացիք ի վերջ ժն դարուն: Այս առանց երկրայութեան է, որ գէթ արևմուտքի մէջ՝ ժՁ դարուն սկիզբը հազիւ ծանօթացաւ այս անունս: Ի հարկէ Հայոց քով աւելի կանուխ մուտ գտած ըլլալու էր անունս Հապէշ կամ Խապէշ, դիտելով որ սոքա աւելի կանուխ ծանօթ էին արաբացի պատմագրաց Խտախրի, Էդրիսի, Աբու-Ֆէդայի և Մաքրիզիի հետ: Յիրաւի, անունս Խափշիկ, որուն գործածութիւնն աւելի հին է, արաբական Հարէշի ձևին մերձաւոր է և զայն կ'ենթադրէ, թէպէտև Հայք տարբեր նշանակութեամբ գործածած կ'երևին զայս: Յամենայն դէպս՝ Հապաշաստան ձևն՝ դժուար է որ ժն դարէն յառաջ գոյութիւն ունեցող անվաւեր գրուածի մի մէջ կարենար մուտ գտնել, ուրեմն կը հետևի սակէց, որ կամ խնդրոյ նիւթ եղող անունն՝ խմբագրութեանս մէջ յետոյ ուրեմն ներմուծուած է, և կամ խմբագրութիւնս ինքնին՝ այդ ժամանակ կատարուած է, Մովսիսի պատմութեան մեզի չհասած հայկական հին թարգմանութեան վերայ:

Իսկ հին թարգմանութիւնն, որոյ գոյութիւնը կը թուին հաստատուել Մխիթ. Այրիվանեցի և Վարդան, իրենց ի վեր անդր ըն-

1. Օրինակէ աղաքաւ, յէջ 203 կ'ըսուի. «Ձ-ն ի-գու-հի, զոր գերեալ էր Մովսէս, դեռ ևս յԵփրպոսս էր»:

դարձակագոյն պարագաներով մէջ բերուած տեղերովն, ժԱ դարուն արդէն ծանօթ ըլլալու էր՝ վերացումն Մովսիսի տիտղոսով, որ ըստ վկայութեան Այրիվանեցւոյ՝ յամի Տեառն 1290 կը գտնուէր վիժի (Վաճն) քաղաքում, հնագոյն յիշատակարանի մի մէջ, որ Սարկաւագ վարդապետի անունը կը կրէր, և ինքն անձամբ զայն ընդօրինակելու բաղդը ունեցեր էր :

Ոմանք համարեցան, թէ այդ յիշատակարանն դժուար է, որ Այրիվանեցւոյն քով յիշատակուած կանոնական և անկանոն գրուածոց ընդարձակ հաւաքում մ'ըլլար, այլ Նիկեփորի Stischometrie կամ Անյայտից կոչուած ցուցակի պարզ թարգմանութիւն մ'էր թէնդ . Ջահն՝ համեմատելով Այրիվանեցւոյն ընծայածը եօթանասնից և Նիկեփորի ցանկին հետ՝ մեծաւ մասամբ իրարու համաձայն կը գտնէ, բայց որովհետև կան գրուածներ վերջնոց քով, զորս առաջինը չյիշատակեր, կան նոյնպէս յառաջնումն Երդադն և Մովգադն և Սիբիլլայք, որոնք չեն գտնուիր վերջնոց քով, ուստի գիտնականիս կարծիքով՝ յիրաւի Այրիվանեցւոյն գտածն ցանկ մ'էր, բայց այդ ցանկն ոչ Հայաստանի մէջ և ոչ այլ Ասորիքէն, այլ ուղղակի Պարեստինէն ծագած է . այսինքն է, Երուսաղեմէն իւր հայրենիքը վերադարձող ուխտաւորներէն մին հոն բերած էր, որ և ապա հայերենի թարգմանուեցաւ : Գերմանացի քննադատիս կարծիքը դրականապէս հերքելու շօշափելի փաստեր կը պակսին մեզ, սակայն կան այնպիսի կուուաններ, որք կը թուին ցուցնել, թէ ստուգել Այրիվանեցւոյ գտածն՝ ոչ Նիկեփորի և ոչ այլ Երուսաղեմէն բերուած պարզ անուանական ցանկի մի թարգմանութիւն էր, այլ՝ այլևայլ անվաւեր գրոց հաւաքումն մի : Ա. Վասն զի մենք կը տեսնենք որ Այրիվանեցիէն յիշուած անվաւեր այդ գրուածոց մի մասն՝ բաւական հին թարգմանութեամբ արդէն առ մեզ հասած է, և ժ դարէն սկսեալ մինչև ժՊ դարու մատենագիրք մեր գանոնք ճանչցեր և գործածեր են . իսկ մնացած մասն թէ և անյայտացած՝ սակայն և այնպէս մեր գրականութեան մէջ որոշակի կը յիշուի : Բ. Այրիվանեցւոյն, այսպէս նաև Վարդանայ և կեղծ Սպիփանու քով, անվաւեր գրուածներէն փոխ առեալ տեղիքն՝ ըստ էութեան և երբեմն բառ առ բառ իսկ կը համաձայնին մեզի հասած հայկ . խմբագրութիւններուն : Գ. Մխիթար կ'աւանդէ, թէ իւր յիշած գրեանքը ընդօրին

1. Forschungen zur Gesch. des neutest. Kanons, s. 117-118, Erlangen-Leipzig 1893,

նակելու համար, հարկ եղած էր դնել 170 օր: Թէոդ. Ջաչն՝ Այրիվանեցւոյն այս խօսքերը՝ Սարկաւազ վարդապետին վերաբերելով, ամբողջ հին և նոր կտակարանաց՝ և ոչ թէ այն տեղ յիշուած նուրբ կամ անկանոն գրքերը կարգի դնելու համար կ'առնու: Ըստ իս, ինչպէս պարզ ցանկ մի օրինակելու համար՝ այդ 170 օրերն չափազանց շատ են, այսպէս այլ ամբողջ հին և նոր կտակարանը կարգի դնելու համար խիստ քիչ: Արդ, դիտելով որ Ե դարէն սկսեալ՝ Հայաստանեայք արդէն ի վաղուց եկեղեցական ժողովներով կանոնած էին երկու կտակարաններն, և նոր կարգաւորութեան պէտք չկար, պէտք է ըսել, թէ Սարկաւազի նոր կարգաւորութիւնն եղած է նկատմամբ այն անկանոն գրոց, որոնք ընտրանօք զետեղուեցան Ս. Գրոց սարկաւազեան օրինակին մէջ ընթերցանութեան ճիշդ այն կարգաւը, զոր հասուցեր է մեզ Այրիվանեցին, և կամ բոլորովին տարբեր կերպով. այսինքն է՝ միայն անկանոն և նուրբ գրոց: Բայց որովհետև երկու պարագայից մէջ ևս իբրև կարգադրելի նկատուած է յանուանէ վերացումն Մովսիսի. ուրեմն կը հետևի, թէ ԺԱ դարուն ծանօթ էր դորա հայկական թարգմանութիւնն՝ այժմեան հրատարակուած պատմութենէն տարբեր կերպով:

Սարկաւազայ ձեռքով աւելի հեղինակութիւն ստացաւ այս գրուածս Հայաստանեայց քով. յաջորդ դարերու մատենագիրք աւելի յաճախութեամբ սկսան անկէց իբրև արժանահաւատ գրուածէ վըկայութիւններ բերել Ս. Գրոց պատմութեան և մեկնութեանց մէջ, մինչև անգամ անկէց համառօտ խմբագրութիւնք իսկ յօրինուեցան Յայսմաւուրաց մէջ, Մովսիսի, Ահարոնի և Մարիամու յիշատակութեանց օրերում կարգաւը համար:



Մ Ա Հ Ք Մ Ա Ր Գ Ա Ր Է Ի Ց

Պրուածիս՝ ամենէն աւելի հայկական գրականութեան մէջ
 հունիւք բազմաթիւ ներկայացուցիչներ. այսինքն է՝ Հնա-
 գոյն Աստուածաշունչներէն սկսեալ՝ մինչև ժէ դարու Յայմ-
 աւուրաց մէջ կարելի է դտնել զայն: Այս երևոյթս՝ յայտնի
 նշան մ'է ոչ միայն գրուածիս կարևորութեան, այլ և հայկա-
 կան թարգմանութեան հնութեանն և տարածուած լինելուն: Ասկէ
 առած են իրենց պատմական թելը մարգարէից խմբագիր մեկնիչ-
 ներն և ժամանակագիրներ: ասոր լուսովը պատուած և պարգած են
 անոնց կեանքն և գործունէութիւնը պատող դարական քողին հետ՝
 նաև գրուածոց ստուերակողմանքը: Ս. Ղաղարու Հրատարակու-
 թեան մէջ երեք գրչագրաց տարբերութիւնքն միայն նշանակուած
 են՝ բնագիր գրուածին ի ստորև. այսինքն են՝ Զ, ԺԸ և ԺԹ Ա-
 տուածաշունչներն: Յայմաւուրաց մէջ կան, արդարև, նշանաւոր տար-
 բերութիւններ¹: որոնք նկատուելով իբրև այլևայլ խմբագրաց ձեռ-

1. Այս տարբերութեանց մասին զազափար մի աւլու համար՝ կը գնենք այ՝
 տեղ, համեմատութեամբ, յամի Տեառն 1441 գրուած Յայմաւուրքէն միայն Եսայիայ
 մարգարէի յիշատակին նուիրուած մասը:

ՅԱՅՄՄ. 4.

ՄԱՀ. ՄԱԳ.

« Եսայիայ մարգարէն, որդի Ամով-
 սիայ, ծնեալ ի ցեղէն Յուդայ, և սնեալ ի
 ի քաղաքն Երուսղէմ, յամս թագաւո-
 րացն Յուդայ՝ Ողիայ, Յովթամու, Ա-
 քազու, Եղեկիայ և Մանասէի: Սա մար-
 գարէացաւ յամս Ողիայ, ամս 17: Եւ ի

« Սա էր որդի Ամովսայ, ի Թեկուայ: »

քով և այլևայլ ժամանակաց մէջ եղած քմահաճոյ յաւելուածներ և յազաւումներ՝ Հրատարակչի կողմէն դուրս թողուած են, իբրև նշանակաւոր բաներ: Սակայն, ըստ իս, դժբա ևս ունին իրենց կարևորութիւնը, գէթ աղբերաց ուսումնասիրութեան համար. հետևաբար, լաւ կը լինէր որ նշանակուէին անոնք ևս առանձինն՝ երկու կամ աւելի խմբի վերածուելով. ուստի մենք պիտի ջանանք ըստ կարելւոյն և ի դէպս այս թերին ևս լեցնել:

Գրուածիս Մահ՝ մարգարէից տիտղոսն՝ շատ սեղմ է ըստ ինքեան, վասն զի անոր ներքև եղած մարմինն՝ մարգարէից մահուան զարգ յիշատակութիւն մի չէ, այլ երբեմն անոնց ընդարձակ և երթն հակիրճ կենսագրութիւնն ևս կու տայ մեզ. հետևաբար, յուսարէն բնագրի Περι τῶν ἀγίων προφητῶν = Յաղագս սրբոց մարգարէից տիտղոսին լաւ չի համապատասխաներ, որուն կը համաձայնի նաև լատինն: Այս տիտղոսներու գանազանութիւնն իսկ նշան է ըստ ինքեան երկու բնագրաց իրարմէ ունեցած տարբերութեան, եթէ այդ բնագրերն ամբողջապէս ևս անյայտացած լինէին, սակայն բարե-

տիւնի արկանելն Ողբայ՝ ճարկացաւ Աստուած, և լուեաց Եսայի ի մարգարեանաւ: Եւ զի արգել Աստուած զբանս պատգամաց մարգարեանութեան՝ վասն մեղացն Ողբայ. լուեաց մարգարէն ամս իՐ: Եւ յետ մեռանելոյն Ողբայ՝ զարձեալ մարգարեացաւ ամս կԳ, որ բովանդակին ոմք մարգարեութեան Եսայի ՂԳ*: Եւ Մանասէս ողոցեալ զմարգարէն Եսայի, վասն յանդիմանելոյն զնա ի մեղս կրատալութեանն, և եղաւ ի դասն Գրածին՝ Բրք է Սելււմ, վասն պրանչելեացն՝ զոր արար Աստուած ազաւթիւք մարգարէին: Զի յաւուրս պաշարմանն Ռոմականաց զԵրուսաղէմ, ժողովուրդ քաղաքին նեղեալ ի ծարաւոյ, զորս առեալ ընդ իւր Եսայի և եկեալ անդ՝ աղաթիւր աւ Աստուած, և ել ջուրն: Զոր սրբին ժողովուրդքն և լցին զամանս իւրեանց, և անդէն վազվազակի հասին ի վերայ Քաղզէեացիքն: Եւ ժողովուրդքն մարգարէին զերծեալ՝ մտին ի քաղաքն:

և և մեռաւ ի Մանասէս, ողոցեալ յերկուս. և եղաւ է ներքայ խղճոյն Ռոմիոյ, Բրք յանոյ Լուք, զոր կորոյս Եղեկիա թագաւոր՝ խցեալ զնա. Լուսն արեւի ընդունն է Սելււմ Աստուած լուսն արեւի թոր, զի յառաջ քան զմեռանելն ժողովուրդն ի ծարաւոյ, յաղթաւ եկաց, զի պարեն ջուր ըմպելոյ. և վազվազակի առաքեցաւ նմս յԱստուծոյ: Եւ առ Եղեկիայիւ՝ յառաջ քան զամենն զԻնորոսն և զաւազանսն, աղբիւր Եսայիոյ սակաւ է Լուր Բրքիոց, յորժամ էր ժողովուրդն պաշարեալ յայլազգեացն. ունէին զՍելււմ, զի մի ապականեսցի ժողովուրդն

*. Նսայ. Նախարարութեան մէջ «ԻԾՈՐԱՍԾ և ՌԻՈՋ» թիւ Ծ սիւսէ, և ըստ այսմ ուղղագրելի է՝ Բնասան և Եթն:

բաղդարար ունենալով այսօր զանոնք ի ձեռին, տեսանք ստուգիւ, որ հայկական թարգմանութիւնն՝ շատ համապատ է ի սկզբան, այնպէս որ յունարենի երկրորդ մասն հազիւ կը կազմէ :

Հայազգի խմբագրողն կամ թարգմանիչն՝ շատ վատ ծառայութիւն մի մեր գրականութեան մատուցած, որով և մեղադրութեան արժանի պիտի համարուէր, եթէ պարզ քմահաճօքի համար և առանց ինչ բանաւոր պատճառի այդպէս վարուած լինէր իւր բնագրին հետ. բայց դիտելով, որ այդ անտես եղած կտորներն՝ են մասնաւորապէս այն տեղիքն, յորս կը ծանուցուին իւրաքանչիւր մարգարէի մարգարէութեան նիւթը, և թէ այդ բանն արդէն կը գտնուի Ս. Գրոց հայկական թարգմանութեան նախադրութեանց մէջ իսկ, առաջի մասով մի կ'արգարանայ անոր աւելորդ ժամանակի և աշխատութեան համար ի գործ դրած խնայութիւնն, բայց ոչ նոյնպէս փութաշան թարգմանի մի ճշգրութեամբ կատարելիք պարտականութիւնն : Այս, այս պարագայիս մէջ միայն պիտի կարենայինք, բաղդարարելով, իմանալ յոյն բնագրի դուրս թողուած մասին և Աստուածաշնչի մէջ եղած նախադրութեանց իրարու հետ ունեցած աղերսը, այլ նոյն իսկ եր.

« և ցամաքեցաւ շուրհ : Եւ Քաղզէացիքն փոշեմանեալ յետս դարձան ի Կանգրուանս իւրեանց : Եւ զարձեալ ի հասարակ աւուրն ել մարգարէն ի քաղաքէն՝ ժողովըզեամբն իւրով, և առաքեաց նմա Աստուած զՂուրն, և ել ըսեաց աղբիւրն. լածս որչ խոյցս Սելււմ, որ Բարբաձի առաքեալ : Զի առաքել Աստուած զՂուրն ի պարտաբարբեքն, և իբրեւ յամաքել ի յամաքն Բաբելոնացոցն. և յիմ առբե սովորութիւնս իւրս զանգամ բղխել, և Գ հետ ցամաքել : Անչ եղին զմարգարէն Եսայի՜ ի վկայութիւն սքանչելեացն այսոցիկ, որ թէ յերմէ իսկ եղեալ » : Տես Մարբէի Եսայիս ժԱ :

« առ ի չզդէ շուրհ. և պատեալ զքաղաքն պատմելոց, նստելին շուրջ պատերազմոցն աւուրս բազումս. և հարցեալ, թէ ուստի ըմպեն շուր քաղաքացիքն, և ուստեալ քննասանս այլազգիքն առ Սելււմ » :

« Վասն այնքի խոյցս Սելււմ, որ Բարբաձի առաքեալ : Եւ յորձա՜ Գայթ Զրեայձ՝ հանգրեյ Եսայեա, Գայթ յանգրեմէ իւրն եր Ղուրն. և յորձա՜ աղազելին Գայթ՝ ու իւրեք, լածս որչ փնչե յայսօր իւրն Եսայի՜ զի ցուցցի խորհուրդն : Արդ, վասն զի Եսայեայ աղազաւ եղև այն, լածս յիւրաքի՜ նորն թուլուորդն մօր ի Սելււմ՝ երբն վն փառաւորապէս, զի ի ձեռն աղօթից նորս, և յես մահուան նորս ունեցին վկայ զՂուրն. քանզի և Եսայեան իսկ աուուա նոցա այնպէս ասեալ : Եւ է զերեզման նորս մօտ ի զերեզմանս թաղաւորացն յետուս կուսէ առ զերեզմանս քանանայիցն, ի հարաւայ կողմանէ : Եւ է մինչև ցայսօր աչայս ի բազմաք՝ ի քանանայից անաք, և յամենայն ժողովրդեանն » :

կազանիւր կողման ծառայած աղբիւրքը, անոնց պատմական կամ ոչ արժէքն և գուցէ թէ գրութեան ժամանակամիջոցը: Բաց ի վերը յիշուածն՝ ուրիշ պատճառ մ'կա կայ Հայկական խմբագրութեան համառութեան և յունարենի հետ ունեցած անհամաձայնութեան, որ յետոյ ցոյց պիտի տանք:

Գրուածիս յոյն և լատին խմբագրութիւններն, որոնք արդէն ի վաղուց հրատարակուած են այլևայլ տպագրութեամբ¹, ձեռագիրներէն ոմանց մէջ՝ Դորոթէոսի² Տիրացւոյ, ոմանց մէջ Եպիփանու կիպրացւոյ անուամբ մակագրուած են, և հուսկ ոմանց մէջ այլ անանց հեղինակի անուան: Հայկական հրատարակութիւնն, ինչպէս քան գրուած ատողոսէն իսկ կը տեսնուի, վերջնոյս պէս է՝ ամէն պիակաց մէջ: Ծանօթութեան մէջ յիշուած մեր թիւ 731 ձառընտիրն ուրիշ երկու գրութիւններ ևս կը ներկայացնէ մեզ, այսինքն

1. Առաջինն է Բասիլեայի՝ յամին 1557, Եւսեբիոսի և այլոց Եկեղ. Պատմիկոնց հետ ի միասին: Երկրորդ անգամ տպուած է յամին 1641 ի Մատենագ. Հոգ (Bibl. Patrum, T. VI): Երրորդն՝ յամին 1714, Գիւլք. Գառլմիհեյ անուամբ: Չորրորդն՝ յամին 1729 ի Վինետիկ: Հինգերորդն՝ լոյս տեսաւ ի Բոն. Չառակոն ժամանակագրութեան (Chron. Pascalis) մէջ: Ուրիշ երեք տպագրութիւնք ևս կան են Եպիփանու անուամբ, մին 1829 ի Տուրին՝ Ալքանիի Նանիւք, միւսն յամին 1812՝ Յովակիմ Զէնեքի ձեռքով, և երրորդն՝ յամին 1622, Դիոն Պետաւիոսի թարգմանութեամբ:

2. Չորի. Եւսեբիոսի մէջ (Արմ. 271) կը յիշուի Դորոթէոս իբրև ծանակակից Դիոկղեախանոսի, որ Ս. Գորգանիոսի և ուրիշ բազմաթիւ ընկերաց նա նահատակուած կ'աւանդուին ի Նիկիոմիդիա, յիշեալ կայսեր հրամանով և անոր խորթեան 19րդ տարին: Մեր թիւ 731 գրչադրի. Յաւադ. ՀԲ (յոյն և լատին ձևի 70) ալիֆբայի Տեառն գրուածի ներածութեան մէջ կը յիշատակուի, — նա իբրև կենսագրութեամբ, — մի ուրիշ Դորոթէոս Տիրացի, որուն նամար կ'ըսուի, թէ նաև լինելով յոյն և լատին լեզուաց՝ այլ և այլ գրութիւններ շարագրեց այն լեզուներով, և թէ Դիոկղեախանոսի և Լիկիեիոսի մատուանէն վերջ՝ Տիրոսի եւ Եպիփանոս անուանուած, և ապա Յուլիանոս Ուրացոյի հրամանով ձերբակալուած և Ողիտացոց քաղաքին մէջ տանջանք նահատակուած, ի նասակի 107 սանց իւր թէնփանէն և Գեուորդիոս Աշեքանագրի՝ ընդհակառակն Գրատիանոս կայսեր որով նահատակուած կ'աւանդեն զԴորոթէոս, և կ'ըսեն, թէ նա ի Հոովմ ապրելով՝ առիճներէն զոնց իւր զործերը, որոնք ապա յունարենի թարգմանուեցան: Այս վերլինի, ինչպէս նաև առաջին Դորոթէոսներուն ընաւ յիշատակութիւն չկայ հայկական յիշատակարանաց մէջ, այլ միջնոյն միայն: Դան. Հուստիոս (Demonst. Evangel.) երկասիրութեան մէջ և Բուլլանտեանք ընդարձակ քննութեամբ ի սուսած են ուրիշ Դորոթէոսի վերայ, շանտով որոշել ըստ կարելոյն անոր ծննդեան տեղն և ժամանակը, ուստի մենք ուրիշ բան ըսելիք չունինք. նեակաբար, խնդրոյ նիւթ կը թայ անոր անուամբ եկած գրուածի շարագրութիւնն:

են՝ Յաղագս ԺԲ Առաքելոց Տեսան և միւսն՝ Յաղագս ՀԲ Աշակերտաց Քրիստոսի, կրկին խմբագրութեամբ: Առաջիններն՝ Եպիփանու Կիպրացոյ անուամբ մակագրուած են և խիստ համառօտ. իսկ վերջին երկուքն, որոնք թէ ընդարձակ պարունակութեամբ և թէ լեզուի մաքրութեամբ աւելի հնութեան բնադրոյմ ցոյց կու տան, վեհմական Դորոթեոսի ընծայուած են: Եթէ Մահ մարգարէից համագրութիւնն՝ անմիջապէս ասոնցմէ վերջ և մի միայն այս գրչագրիս մէջ գրուած լինէր, գուցէ կուռան մ՝ ունենայինք կարծելու, թէ այս սուրբ Հայրերէս միոյն կամ միւսոյն հարազատ գործ եղած լինի, և նոյն իսկ այդ պատճառաւ հարկ համարուած չէ վերստին մակագրել Հեղինակի անունը. սակայն այդպէս կարելի չէ խորհիլ, քանի որ այս գրուածս նախաշիշեալներուն հետ բնաւ վերաբերութիւն չունի, և բազմաթիւ գրչագրաց մէջ առանձին տեղ գրուած է: Իսկ այն՝ թէ գէթ յոյն և լատին գրչագիրք կարո՞ղ էին նման երևութէ մի մղուած՝ յիշեալ հարց ընծայել Յաղագս մարգարէից գրուածը, կրնայ խնդրոյ նիւթ ըլլալ:

Դորոթէոսի մասին տրուած իրարու հակասող տեղեկութիւններն՝ մէկ կողմէն, և միւս կողմէն այլ անոր անուան բացակայութիւնն հայերէն գրչագրաց մէջ՝ իրաւամբ տարակուսել կու տան որ Դիոկղետիանոսի ժամանակ ծաղկող մէկն՝ մինչև Յուլիանոսի, թող թէ Կրտտիանոսի ժամանակ ապրած և Յաղագս սրբոց մարգարէից համագրութիւնը գրով թողուցած ըլլայ: Մինչէ՛ ընդունելով որ Դորոթէոս վկայն իրօք գրած է Յաղագս ԺԲ Առաքելոց և Հ Աշակերտաց համագրութիւն մի, սակայն անոր անուամբ մեզի հասածները գլխովին անհարազատ կը համարի, դիտելով որ Տիւրոսի եպիսկոպոսին գործերն՝ ԺԱ գարում ապրող Պրոկոպի միոջ ձեռքով փոփոխուած և խանգարուած են: Իսկ Հայկ. քարգմանեռքիւնք Նախնեաց երկասիրութեան յարգելի Հեղինակն, յէջ 186, ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելով ոչ միայն ԺԲ փոքր մարգարէից, այլ և Յսայեայ, Երեմիայ, Եզեկիելի և Դանիելի յիշատակին ձօնուած հայերէն Աստուածաշունչներու և Ճաչոցներու և Յայսմաւուրներու մէջ զետեղուած այն կենսագրական ընթերցուածոց վերայ, կ'ենթադրէ, թէ սոքա առհասարակ Հայոցմէ յօրինուած ըլլան և չեն գտնուիր՝ ուրիշ ազգաց քով: Հեղինակներէս առաջնոյն, այն է՝ Մինչէի խօսքն ուղղակի մեր քննութեան ենթարկուած գրուածին չի վերաբերի. սակայն և այնպէս եթէ

1. S^{tes} Diction. des Apocryphes, T. II, p. 207.

Մինչէ լուերեայն զայն ևս կը հասկընայ, այդպիսի մի կարծիք՝ հաստատուն հիմն չունի. մանաւանդ, ինչպէս պիտի տեսնենք, կան ժԱ դարէն յառաջ գտուած գրչագրեր, որոնք նոյն ձևով կը ներկայացընեն մեզ յիշեալ գրուածը, ինչպէս այդ դարէն վերջ եկող գրչագրերն ևս: Իսկ զալով վերջնոյն՝ դիտել կու տանք, որ այդ գրուածներն, այսինքն են՝ Մահք մարգարէից՝ Գորոթէոսի և Եպիփանու անուամբ եկած ծանօթ Սերլ տճն ճրկան թրօփտայէն բոլորովին անկախ և տարբեր բաներ չեն. հետևաբար, և ոչ իսկ կարող են պարզապէս հայկական մտաց ծնունդ համարուիլ:

Այս երկու տեսակետովք իսկ մեր ասածը կը հաստատէ հոովմէական հնագոյն ձեռագիր մի, որ գրուած է յամի Տեառն 759, և կը պարունակէ յիշեալ համագրութիւնները: Բ. Գորոթէոսի՝ Յաղագս ստրք մարգարէից, ինչպէս նաև Առաքելոց և այլն երկասիրութեանց յոյն թարգմանիչն կամ խմբագրողն՝ կ'ըսէ որոշակի, թէ ինքն՝ յունարէնը՝ լատին՝ բնագրի վրայէն յեղեալ է, ճիշդ այն տարին, երբ Յովհաննէս Պապն կը դեգերէր ի Կ. Պոլիս. այսինքն է՝ Յուստինոս Ա կայսեր և Փիլոսոփոսի և Պոռոսի բղիչխութեան ժամանակ: Գ. Չատկ. Ժամանակագրոսիանէ, որուն երկրորդ մասն՝ Հերակլ կայսեր քսաներորդ տարին գրուած է, իսկ առաջինն աւելի հին է, թէպէտև առանց հեղինակի անուան՝ բայց այնպէս կը ներկայացնէ մեզ Յաղագս ստրք մարգարէից համագրութիւնը, ինչպէս կը գրանուի այսօր Գորոթէոսի անունը կրող գրուածն՝ ուրիշ սեռի ձեռա-

1. Այս վկայութեանս կը համաձայնին և նոյ գրչագրեր, և ի մասնաւորի թիւ 751 ձեռագրին, երբ Գորոթէոսի կենսագրութիւնն ըրած ժամանակ, կը յարէ նետեալը. « Չայս անս երիցս երանեալ և ամենափարթեամի Գորոթէոս ի Հռօմ՝ Եղևու է յետև հոովմէական գրոյ (խմս գրով) յիշատարանս Երևոյ. յոյս և մի յեղատիւտս է յիշատարանս յայն փոթարեփանս՝ յայտնի բոլորիցս արարաք Ութանանից (զեթանանիցն) աշակերտացն զկարգ և զհաւաստ, և համարութեամբ զայս առնկալեալք»: Այս տեղ որոշակի կը տեսնուի, թէ Գորոթէոսի լատին լեզուով թողած գրութիւնն է՝ Յաղագս Հաղկերտաց խորագրուածն, որ յետոյ յեղաւ ի յոյն, և յունէն ուղղակի թարգմանեցաւ ապա հայն: Սակայն մի և նոյն յիշատակարանի նախընթաց խօսքերն. « Այս ծերս՝ Տր զհամբարսնս մի ի Երևոյսն Երևոյ, յորս վասն եւթանասուն և երկու աշակերտաց փոխին պատմագրեաց՝ թէ ո՛ր իւրաքանչիւր ոք ի հօրեփոխիցն և յառաքելոցն զկեսնս իւրեանց կատարեցին»: Մօրեփոխիցն բացատրութիւնն անյարմար կ'երևի Երևոյսն և Երևոյսն Երևոյ նախադասութեան, որոց վարքն և մտնը պատմագրեաց նա. սակայն եթէ գրչութեաց սոսկ վրիպակ մի չէ այս՝ կը հաստատէ մեր նախընթացաբար յայտնած ենթադրութիւնը, թէ այդ Տր զհամբարսնս մէջ կը բովանդակուէր երբեմն նաև Յաղագս հօրեփոխիցն պատմագրութիւնն:

գրոց մէջ: Ուրեմն, այս և նման փաստերու վերայ հաստատուած՝ կարող ենք եզրակացնել, թէ այս երկասիրութիւնս՝ նոյն իսկ Է-Ը դարում յայտնի էր շատերուն՝ իբրև մի հեղինակաւոր և նուիրական գրութիւն, և հաւանորէն փոքր ինչ տարբերութեամբ գրեթէ մի և նոյն գրութեան մէջ, որ ինչ այսօր:

Այժմ կը մնայ գիտնալ, թէ արդեօք այդ գրութիւնն՝ է դարու առաջին քառորդին սկսաւ առաջին անգամ գոյութիւն ունենալ, թէ ընդհակառակն անկէց յառաջ իսկ կար և կը կրէր Գորոթէօսի անունը: Եւսեբիոս¹ կեսարացի, որ գրեթէ ժամանակակից էր մեծ վկայիս, խօսելով նորա մասին հետևեալը կ'աւանդէ. « Առ սովաւ (այսինքն է Կիւրդի Անտիոքացւոյ) ծանեաք զԳորոթէօս երեց Անտիոքացոց եկեղեցոյն, զայր քանիքոս և զի փոյր էր նա և սիրող աստուածեղէն տասից և կիրք յերաշխակահին՝ վասն որոյ և քաղաւ զիտոսքեամբ զնոցին իսկ զքնագիրան աստուածաշուռեչ մատենիցն ընթեանոյր անսայթաք: Ազատական առեալ էր նորա դաստիարակութիւն, և ի մանկութենէ հետէ յոստոռն մակաղոսքեան հեղինականին ոչ ինչ անմասն, այլ ի բնէ անտի և ի ծնէ ներքինի էր... Չսս յոսաք մեր շատ իսկ հետոսքեամբ մեկնելով զգիրս սոսրս՝ յեկեղեցոց »:

Մեծ պատմագրիս այս վկայութենէն կը տեսնուի, թէ Գորոթէօս իբրև քաջածանօթ երբայական և հելլէն լեզուաց՝ Ս. Գրոց մեկնութիւններ ևս ըրած էր. մանաւանդ թէ Հառնակ՝ հաստատուած եւս սեբիոսի այս վկայութեան վերայ, զԳորոթէօս կը համարի իբրև հիմնադիր անտիոքեան դպրոցի և վարդապետութեան: Սակայն մեզ համար դիտողութեան արժանի կէտն այս է, որ Եւսեբիոս բնաւ չյիշեր, թէ նա ի Հոռով բնակած և Հոռովմէական լեզուով գրուածներ թողուցած ըլլայ. նոյն իսկ նորա յարքունիս Գիոկղետիանոսի ծիրանեօք պատուիչն, և ապա Գորգոնիոսի հետ նահատակուիչն՝ ի Նիկովիդիա եղած կը պատմէ, մի և նոյն գրոց յաջորդ գրութիւններուն մէջ: Չատկական ժամանակագրոսքեան անանուն հեղինակն ևս՝ Եւսեբիոսի այս արժանահաւատ վկայութիւնը մէջ բերելէն վերջ, նորա նահատակութեան մասին, անոր գրուածոց վերայ զարձեալ լուութեամբ կ'անցնի: Իսկ որ աւելի զարմանալին է, այլուր առիթ ունենալով ամբողջապէս արտագրելու Յաղագս սոսրք մարգարէից գրուածը, բնաւ չի յիշատակեր անոր հեղինակը: Արդ, այս պարագայս՝ ակներև ցոյց կու

1. Պատմ. Եկեղ. Գիրք է, Գլ. ԼԲ. էջ 895, վէսեակ 1877:

տայ մեզ, թէ է դարուն առաջին քառորդին այդ գրութիւնը կար, բայց անոր վերայ Իորոթէոսի անունը կը պակսէր. հետեւաբար, այս ժամանակէն վերջ կատարուած խմբագրութեան մ'առթիւ աւելցուած ըլլալու է այս տիտղոսի հետ՝ նաև Իորոթէոս անունն: Իսկ այդ խմբագրութիւնը կը գտնուէր այն յունարէն մեծ համագրոգրեան կամ Հաւաքածոյի մէջ, որ շեշտուած է մեր թիւ 731 ձեռագրին մէջ, որուն և մեծապէս պարտական ենք՝ մեզ տուած այս շահեկան ծանօթութեան համար, որով պիտի պարզուին դորոթէոսեան լատին ընագրի և յունարէն խմբագրութեան մութ կողմերը:

Այսպիսի մի քաղուածոյ համագրութիւն՝ կարո՞ղ էր արդեօք այլ և այլ հնագոյն աղբիւրներ պարունակել իւր մէջ՝ բազմատեսակ նիւթերու, թէ ո՛չ. գայս դժուար է որոշել, քանի որ այդ գործն անյայտացած է: Սակայն գալով ուղղակի դորոթէոսեան Յաղագս տորք մարգարէից խմբագրութեան, դիտել կու տանք, որ արդէն ծանօթ են փոխադարձաբար Եպիփանու Կիպրացոյ անուամբ հրատարակուած այս տեսակ երկու գրութիւններ, որոց միոյն խորագիրն է (in Cod. Regio MDCCCCLI) Τοῦ ἁγίου Εἰσαφανίου ἐπισκόπου Κύπρου περὶ πῶν προφητῶν, πῶς ἐκοιμήθησαν καὶ τοῦ κεῖνται. Իսկ միւսոյն է (Cod. Regio, II, MDCCCX) Περὶ τῶν δέκα ἐξ προφητῶν, πόθεν ἦσαν, καὶ ποῦ ἔτελειώθησαν. Այս գրուածներս՝ ինչպէս կը ծանուցանէ Գիւր. Գաուլմինի՝ Cod. II, MCDXXXI օրինակին մէջ առանց հեղինակի անուան են: Արդ, այս փոխադարձ ընծայութիւնս՝ բաւական կռուան մ'է կարծելու, որ յիշեալ գրութիւնն՝ դժուարաւ կրնայ լինել հարազատ գործ միոյն կամ միւսոյն. սակայն բազդատելով Եպիփանու ընծայուածը՝ դորոթէոսեան խմբագրութեան հետ, կը տեսնենք երկու բացորոշ կէտեր, այսինքն թէ, նախ որ երկու խմբագրութիւններն՝ էական կէտերու մէջ այնպէս կը համաձայնին իրարու, որով չենք կրնար երկրայիլ, որ մին անպատճառ ծագած ըլլայ միւսէն, կամ եղած ըլլայ երկաքանչիւրին հասարակաց աղբիւր մի: Բ. Կան նաև այնպիսի տարբերութիւններ, զորս չէ կարելի այլ սազ մեկնել, բայց եթէ յետոյ եղած խմբագրութեան մի ներմուծութիւններով:

Իսկ թէ երկուքէն ո՞րն արդեօք միւսին վերայ խմբագրուած է. առ այս դիտել կու տանք, որ դորոթէոսեան խմբագրութիւնն՝ իւրաքանչիւր մարգարէի կենսագրութեան սկիզբն՝ ունի մերթ ընդարձակ և մերթ համառօտ խորհրդածութիւններ, որոնք յաճախ կը պակասին Եպիփանեան խմբագրութեան մէջ. յետ որոց կը սկսի երկուստեք բառ առ բառ համաձայնութիւն մի, որ երբեմն կը շարունակ

կուրի մինչև վերջ, իսկ երբեմն այլ մասնական պարագաներով կը տարածայնի: Երկու յոյն բնագրաց տիտղոսներն ինչպէս տեսանք՝ իրարմէ զգալի կերպով կը տարբերին: Տարբեր կերպով դասաւորուած են մարգարէից կենսագրութիւնքն ևս. այսինքն է, դորոթէոսեան բնագրի մէջ՝ Յաղագս (այս անուն) մարգարէի գրեցէն վերջ՝ կը դրուի անոր առընթեր նաև անուան մեկնութիւնն. օրինակի աղագաւ, *Εἰς τὸν Ἄμωσ, στερέωσις (հաստատորիւն)*, մինչդեռ եպիփանեան բնագրի մէջ միշտ մի և նոյն ձևն պահուած է՝ մէն մի մարգարէի անուան քով. օրինակ իմն, *Ὁ Βῶδς τοῦ Ἄμωσ ὠροφήτου, καὶ τοῦ κεῖται*, այսինքն է՝ Վարդ Ամովսայ մարգարէի և հանգստեանն: Դեռ աւելի աչքի զարնող և նոր կէտ մ'է դորոթէոսեան խմբագրութեան մէջ Հեռեհալն, զոր կը ներկայացնէ մեզ *Չառկ*. Ժամանակագրութեան պարիսեան հրատարակութիւնն. այսինքն է, երկու անգամ կը հանդիպինք այստեղ Նիլա մարգարէի կենսագրութեան, որոց վերջինն՝ Համաձայն է եպիփանեան խմբագրութեան: Այսպէս նաև Չաքարիա մարգարէին երկու կենսագրութիւններ ձօնուած են, և այս՝ նմանողութեամբ եպիփանեան խմբագրութեան. սակայն, մինչդեռ այստեղ վերջինն է կրտսերն Չաքարիա՝ որդի Յոյեղեայ կամ որ նոյն է՝ Յովհաննու Մկրտչի Հայրն, այն տեղ՝ այսինքն է դորոթէոսեան խմբագրութեան մէջ ընդհակառակն՝ Յովաս Թագաւորի ձեռքով տանարին մէջ սպանուած Չաքարիան կ'աւանդուի: Արդ, այս և այսպիսի պարագաներ եթէ հրատարակողի կողմէն և ուրիշ տեղէ ներմուծուած չեն, յայտնի ապացոյց են դորոթէոսեան խմբագրութեան յետնութեան. ուստի կարեմք եզրակացնել, թէ եպիփանեան խմբագրութիւնն, որ աւելի Համառօտ է, ժամանակաւ իբրև Հիմն ծառայած է դորոթէոսեան ընդարձակուած խմբագրութեանը:

Այս խմբագրութիւնս՝ եթէ ստուգիւ է դարուն կատարուած է, և եթէ Դորոթէոս անունն այդ ժամանակէն ի վեր մակագրուած էր արդէն անոր ճակատին վերայ, ինչպէս կ'ենթադրեն յունարէն զրագիրներէն ոմանք, մի ուրիշ Դորոթէոսի ձեռքով կարող էր կատարուած լինել, այն է սրբակեաց Դորոթէոսի աշխատանքատի պաղեստինացոյ, որ կը ժողկէր Չ դարուն վերջերը կամ ի սկիզբն էին (620-630)¹ ըստ Նիրլլի: Հիներէն Թէոդոր Ստուդիտ միայն կը

1. Թուականաց առաջինը կ'ընդունին Բուլանդեանք (Acta Ss. Iun. T. I. p. 592) իբրև սուրբ, և Փաբրիկեոս (Bibl. gr. T. VI). Իսկ Ուզէն (Comment. de Script. eccl. T. I), Գալլանդեոս (Prolegomena) և Բուսէ՝ երկուսն էլ կողմ են:

յիշէ զնա իւր գրուածներով, որոնք διδασκαλῆαι ψυχωφέλεις διάφοροι կը կոչուին: Նա մարգարէի համբաւ ունեցող հռչակաւոր Յովհաննէս արքայի աշակերտ էր՝ նախ մոնազն և ապա կարգեցաւ արքայ Պաղեստինու վանքերէն միոյն մէջ:

Քաւրով հայկական թարգմանութեան՝ համեմատութեան ձեռքով տեսանք, որ իւր համառօտութեամբ աւելի եպիփանեան բնագրին համաձայն է. վասն զի երկուքին մէջ ևս չկան դորթթեսեան խըմբագրութեան մէջ՝ մարգարէից մահերու սկիզբները ներմուծուած յաւելուածներն: Դիտելով որ երկուստեք աչքի զարնող այս երևոյթս դիպուածի արդիւնք չէ, կը հետևի որ կամ հայերէնն՝ եպիփանեան խմբագրութեան վերայ կատարուած է, և կամ երկուքն ևս դիտմամբ դորթթեսեան բնագիրը համառօտելու ղուած են ժամանակաւ. բայց որովհետև այս վերջին կէտս, ինչպէս տեսանք, պէս պէս դժուարութեանց կը բաղխի, ուրեմն առաջինը կը մնայ իբրև հաւանական:

Սակայն բան մի, որ խոչընդակն լինելով՝ կը թուի յետս ընկրկել զիս այս կարծիքէս, է հետևեալն. այսինքն է՝ հայկական խմբագրութիւնն՝ եպիփանեան բնագրի հետ ունեցած ընդհանուր համաձայնութեամբ հանդերձ, երբեմն անուանց ուղղագրութեան և երբեմն պատմական իրաց մէջ խոտորելով եպիփանեան բնագրէն՝ դորթթեսեանին համաձայն¹ կ'ընթանայ: Մենք այս բանս երկու կերպով կը

1. Օրինակի աղաղակ, Յովսէպ մարգարէի համար կ'ըսուի եպիփանեան խմբագրութեան (edit. Coloniae) մէջ՝ թէ էր սὸς Βεηթε. իսկ հայն՝ համոձայն Չատկ. ժամանակագրութեան (edit. Venet.) իսպառ զանց ըրած է յիշել զայն: Ամսօրայ համար կ'ըսուի, թէ οὐτως ἐγγενήθη ἐν Θεουε ἐν γ. Ζεβουλων, իսկ հայն և Չատկ. ժաման. չունին ընդհակառակն վերջին տնուը, և աւելի համառօտ են: Սակայն առ այս դիտելու կու տանք, որ Եպիփանու աւգուստինեան գրչագիրն ևս երկու կէտերով իսկ վերջնոցս կը համաձայնի: Մերջայ մահուան վերջ կը գրուի առ Եպիփանու, թէ «Տեղի շրժի նորս Կաթանոսի Բնիչ ցոյսոր». զոր չունին հայն և միւս յոյն բնագիրն: Արդիտ համար՝ կը գրէ հայն՝ Չատկ. ժամանակագրութեան նոսի սիւղըան, թէ «Ս Եր աւլիւր Եղիւս». այս բացատրութիւնս Եպիփանու քով ընդհակառակն մի քանի տող վերջ և սարքեր յաւելուածով մի կը գտնուի, այսինքն թէ «Հրատարեալ պալատական դիմուորութիւնէն՝ յարեցաւ առ Եղիս Թեաքացի և աշակերտեցաւ նոս»: Յովնանու համար կը գրուի առ Եպիփանու, թէ «Էր որբի Աթոբիւս». հայերենի և միւս յոյն բնագրի մէջ չկայ այս բացատրութիւնս: վերջնոցս մէջ ընդհակառակն կը գտնենք հետևեալը. «Յայրին կենեղայ՝ Գորտորբի Եղիւս է շեղի Բնիչ ցոյսորս անիւսանութեան», որ կը պակսի առաջնոյն քով: Նաևուսայ համար կը գրուի առ Եպիփանու, թէ էր յԵղիկայ... է Բեթաթարս Երգաթարս. մինչդեռ միւսներն ունին է Բեթաթարբի, է Բեթաթարբի Երգաթարս: Առ Եպիփանու՝ է վերջ գրութեան վերատին կը յիշուի Երգաթարս իբրև տեղի թաղման մարգարէի:

փորձենք մեկնել. Ա. այն է, թէ Մահ մարգարեից գրուածի խըմբագիրն կամ Հայկական թարգմանութենէն վերջ ապրող մէկն՝ բաղդատելով զայն իւր ձեռքն ինկած դորոթէոսեան յոյն բնագրի հետ, ասկէց լաւագոյն երևցած փոփոխութիւններ ներմուծած է անոր մէջ, կարծելով թէ այդ բնագրի վրայէն ուղղակի և անճիղ կերպով եղած ըլլայ թարգմանութիւնս. և կամ այն է, որ ժամանակաւ կրկին թարգմանութիւններ ըրած ըլլան մեր նախնիք, մինը՝ հին բայց համառօտ բնագրի մի վերայ, զոր կարեմք եպիփանեան կամ նախկին բնագրի անուանել, իսկ միւսն՝ համեմատութեամբ վերջը և դորոթէոսեան ընդարձակ բնագրի համաձայն եղած: Հաւանական է, թէ ժամանակաւ այդ կրկին թարգմանութիւններն՝ ոչ իբրև ինքնուրոյն գրութիւններ ծանօթ եղած ըլլան շատերուն՝ նիւթոյ նոյնութեան պատճառաւ, որով Յայսմաւուրներու և ձառընտիրներու հաւաքողներն ևս առանց ուշ դնելու այս բանիս՝ կարող էին փոխն ի փոխ երկուքէն ևս քաղուածներ ընելով, կազմած ըլլալ յետոյ այսպիսի խմբագրութիւններ, որոց մին ըլլայ և վեներական հրատարակութիւնս՝ Մահ մարգարեից:

Եւ ստուգիւ, նախկին և համառօտ բնագրի մի վրայէն եղած հնագոյն Հայ թարգմանութեան Մնացորդ կ'երևի Անտառք մարգարեից և կարգ, և թէ յոր ժամանակս էին խորագրուած Հակիրճ՝ բայց ընտիր գրուածն, որ կը գտնուի վանացս մատենադարանի ԺԳ դարում գրուած ձեռագրի մի մէջ: Ըստ իս՝ կամ սորա բնագիրն իբրև հիմն ծառայած է այժմու եպիփանեան և դորոթէոսեան ծանօթ խըմբագրին:

Եպիփանու քով կը յիշուի Քոստաս Խոսով իբրև կայր Սոփոսիայ մարգարէի. նայ՝ համաձայն միւս յոյն բնագրին չունի զայն: Անգեայ համար կը գրուի առ Եպիփանու, թէ «Ըստ զատօջիս երբիցս ՎԱԽԼԵԱՆՆԵՆ և այլն, զոր նայն և միւս յոյն բնագրին չունին: Զարարիցս մահուան մէջ, ըստ եպիփանեան բնագրին, կը յիշուին Կիսոս Լիսարցիս և Միսարցիս Արարացի. իսկ նայն՝ միւս յոյն բնագրի համաձայն չունի այս անուններս: Երեմիայ մարգարէի նշխարաց յԱղեքսանդրիս փոխադրուիլն, Աղեքսանդր մահեղանացւոյ ձեռքով, զոր Պաղոմէոսի ժամանակակիցներու բերնէն լսած կը պատմէ նայն՝ համաձայն Զատկ. ժամանակագրութեան, եպիփանեանին մէջ կը զոգտի՝ Եղեկիցս մարգարէին համար կ'ըսուի առ Եպիփանու, թէ «Էր որդի Բոսփոս Բոսփոսի. նայն ընդհակառակն համաձայն միւս յոյն բնագրին չունի: Կ'ըսուի դարձեալ, թէ «Յերբիս Քոստասոց յափշտակեցաւ և եկն յԵրուսաղէմ». նայն և միւս յոյն բնագրին ունին ընդհակառակն անոր՝ «ἐκστῆσεν».

Այս մի քանի տարածայնութիւնները նշանակելէն յետոյ՝ դարձեալ կը կրկնենք, թէ Մարգարեից Ժհերթոս նայերէն թարգմանութիւնն ընդհանուրին մէջ՝ միշտ եպիփանեան բնագրի հետ աւելի համաձայն կ'ընթանայ, քան թէ Զատկ. ժամանակագրութեան մէջ պարուածին:

բազրութիւններուն, և կամ սա ինքն եպիփանեան խմբազրութենէն յտոյ քաղուած Համառօտագրութիւն մ'ըլլալու է Հատնօրէն. վասն զի երկաքանչիւրի մէջ կատարեալ Համաձայնութիւն կայ: Տիտղոսն ինքնին՝ մերձաւոր նմանութիւն ունի յոյն բնագրին, քան թէ Մահ մարգարէից տիտղոսին հետ: Պատառիկս նոյնութեամբ կ'արտագրեմ այս տեղ, զիտնալով որ կարող է ծառայել այժմու յոյն բնագրի և հայկական խմբազրութեանց ուսումնասիրութեանն՝ իրրև աղբիւր. բայց առ այս պէտք եմ նախ ծանուցանել, թէ Հատուածիս առաջին տողերն՝ տեղ տեղ եղծուած և անընթեռնի դարձած են. ուստի սր պակասաւոր տեղերը կը լրացնեմ, փակագծիւ, թիւ 176 զրչալրէն, այն է՝ Ոսկեփորիկն Ե, ուր ժԲ մարգարէից անուանքը միայն ընդօրինակուած են նոյն կարգաւ, բայց ասարբերութիւններով, այս իորագրի ներքեւ. Պարտ է գիտել, թէ յորձով ժամանակի եղեն ԵԲ մարգարէքն:

« Թովսէ՛ ի սկսման ժԲիցն՝ ի ցեղէն Իսաքարայ (յաւուրս Ուզիայի և Յովաթամու, և Աքազու և Եզեկիէլի): Անովս՝ ի ցեղէն Զարուղոնի, (յաւուրս Ոգիայ՝ արքայի Հրէաստանի, և յաւուրս Յովաթամայ որդւոյ Յովասայ արքայի Հրէաստանի, Բ ամօք յառաջ քան զգեանաշարժն Երուսաղեմի): Միքիաս՝ ի ցեղէն Եփրեմի, (յաւուրս Յովաթամու և Աքազու և Եզեկիայ թագաւորաց Յուդայի՝ ի վերայ Սամարիայ): Թովի՛ ի ցեղէն Բենիամինի, յագարակէն Բեթարրովրայ, (յաւուրս Եզեկիայ արքայի Յուդայ): Արդիաս՝ ի Սուքեմայ, և թէ յորմէ՛ ցեղէ՛ չէ գրեալ, այլ զի երրորդ յիմնապետ էր Աքաբու. սա էր աշակերտեալ Եղիայի: Մարգարէացաւ Թռանակ՝ ի Կարիաթմու(ղ), որ է մերձ յԱզովտոս, և սա յաւուրս Եղիայի արտաքս ելեալ ի կիտէն, չոքաւ քարոզել ի Նինուէ: Նառոմ էր յԵզեկեսայ՝ յայնկոյս Յորդանանու՝ ի ցեղէն Նմաւոնի: Ամբակոմ ևս ի նմին ցեղէ... քարայ, և էր սա յաւուրս գերութեան Բաբելացւոց, որ և տարեալ զճաշն յԵրուսաղեմէ ի Բաբելոն Իանիելի՛ ի միում վայրկենի, Հրեշտակաւ Աստուծոյ, մինչ էր նա ի գուրն առիւծուց: Իսկ Սոփոնիաս ևս ի նմին ցեղէ յագարակէ Սարաթայ, և մարգարէացաւ սա նախ քան զգերութիւն Երուսաղեմի յաւուրս Յովսիայ արքայի, յորում և Երեմիաս՝ յերեքտասան ամին Յովսիայի բարեպաշտի: Անգեաս՝ էր ի ցեղէ Ղևեայ, և ծնաւ ի Բաբելոն. մինչ մանուկն էր եղև դարձն ի Բաբելոնէ յԵրուսաղէմ, և մարգարէացաւ վասն դարձին և շինութեան տաճարին: — Զաքարիաս ևս յազգէ Ղևեայ, ծընեալ ի Գազգի յերկիրն Քաղդէացւոց. սա մարգարէացաւ ևս վասն

Յովսեփեկեայ, թէ ծնցի նմա որդի Յեսու և քահանայացի Աստուծոյ, յաւրինակ ճշմարիտ քահանայապետին: Մաղաքիա՝ յետ դարձի գերութեանն՝ ծնանի ի Սովիերա յազգէ Ղևեայ. սա թարգմանի հրեշտակ, զի անսրատ էր և վայելուչ տեսեամբ: Այսոքիկ ի մի զիրս բովանդակեալք, երկոտասան անուանքն. թէպէտև ոչ ի միում ժամանակի մարգարէացան սոքա, այլ զի համաձայնք և խորհրդականք են, ըստ երկոտասան որդւոցն Յակորայ, և նոյնքան զլիաւորք առաքելոցն Քրիստոսի՝ ի չափս երկոտասան կենդանակաց աստեղատանցն և նոյնքան ժամուց հասարակաւրէիցն զուգմանց: Իսկ առանձնակ այսոքիկ. Երայի՝ որդի Ամովսայ, ի ցեղէ Յուդայ և ի գեղէ Թեկուայ: Երեմիաս՝ յԱնթովթայ, ի ցեղէ քահանայից: Եզեկիէ՝ ի Սարիբայ, ի քահանայիցն: Դանիէլ՝ ի ցեղէ Յուդայի, յիշխանացն ի թագաւորական սպասաւորութենէն: Նաբան մարգարէ յաւուրս Դաւթի, ի ցեղէ Ղևեայ: Իսկ Հեի, որ ի Սելովն ծնաւ՝ ի Սելով քաղաքի, ուր և խորանն Տեառն հարաւ զառաջինն ի մուտս երկրին. և սա քահանայ ի քահանայիցն անտի: Յովսա մարգարէ՝ ի Սամարիայ. սա է զոր երեկ առիւծն և սպան ի ճանապարհին, զի ստունգանեաց Աստուծոյ: Մեծն Եղիա՝ էր ի Քեսրայ և ի ցեղէն Ահարոնի: Եղիսն յԱբեղմաուդայ՝ ի ցեղէ Ռուբենի: Եղիա, հրեղէն կառաւք յերկինս վերացաւ, և կրկին հոգի ընկալաւ Եզիսէ բարեգործակ և պատժողական, և երկօքին սքանչելագործք առաջի Աստուծոյ: — Մանուէլ մանուկն ուխտին, մեծ տեսանող յիսրայելի և աւժանաւք թագաւորաց. սա ի ցեղէն Ղևեայ, սենալ ի տանն Աստուծոյ: Չաքարիաս, հայրն Յովհաննու, ի ցեղէ քահանայից. որդի Աղգովայ, և կին նորա Եզիսաբեթ՝ ի դատերացն Ահարոնի. աւետ(եօք) հրեշտակապետ(ի)ն Գաբրիէլ(ի) ընկալան ի ծերութեան և յամլութեան զԿարապետ բանին Աստուծոյ յորովայնէ և յանապատէ՝ զՅովհաննէս, այն որ զմարգարէութիւնս բոլոր մարգարէից երբ մերձեցոյց առ Տէրն մարգարէիցն. զոր և առաջինն զեկոյց մարգարէ և առաջնորդ Երուսաղեմի: Մովսէս՝ թէ մարգարէ ձեզ յարուցէ տէր Աստուած ձեր յեղբարց ձեռոց, որ և յովակի իրօք նման օրինակ է Աստուծոյ Տեառն իւրոյ. վասն որոյ ոչ ի թիւս այլոց մարգարէից վերագրեալ եղև, իբրև աւելի և գերագոյն պատուով արժանաւորեալ. որում և ինքն Աստուած..... և այլոցն տեսեամբք իւրք երևեցոյց, և ծառային..... Մովսէսի բերան ի բերան խաւսեցայց, որպէս և Դառիթ՝ թէպէտ և զատ մարգարէացաւ յերգս սաղմոսաց, սակայն ընդ թագաւորս յիշատակի: Գոն և այլ մարգարէք ոչ յուզեաբանին, այլ ի միում

նուագի և վասն միոյ իրաց (մարգարեացան) դիպողաբար, որպէս ոչ սակա Սաւուղայ թեապարելով ասէին. Եւ ինքն Սաւուղ ընդ նոսա ի հանդիսամանն (sic): Աքիա Սիլոնացի, որ զՆորոգմամբ անծանօր և երկոտասան ծուէնս զկապերան իւր պատուէր. և որդիք մարգարէիցն, ոչք յՆրիքով և ի Բեթէլ ասացին առ Նդիսէոս վասն վերացման Նդիայի, և որպէս այն, որ յորդոց մարգարէիցն, հրամանաւ Նդիսէի չոգաւ և ած զԷռ թագաւոր Իսրայելի, և վրէժխնդիր տանն Աքաարու, և այն՝ որ կոր սաղմոսարանաւն նուագէին և գայր ոգի մարգարէութեան ի վերայ Նդիսէի, վասն յաղթութեան պատերազմին: Էին և կանայք մարգարէք, Մարիամ՝ քոյրն Ահարոնի ի յելւն, և Դեքովրա կին Քարբերայ, յաւուրսն Բարակայ մարգարէանային ի վերայ ժամանակին դիպուածոյ ի խորհուրդ ասպազայիցն յորում աւրհնէին զամենաւրհնեայն Աստուած գոհութեամբ: Սա այսպէս և խոդդի՝ յաւուրս Ուսիայ բարեպաշտի, վասն ճշգրտելոյ անիծից արինացն Աստուծոյ ի վերայ ասպրասանիցն և ի վերայ աւերմանն Երուսաղեմի և գերութեանն ի Բաբելոն: Իսկ ի նորումս Եղիսարէք, որ զմարգարէ մանուկ յորովայնի ունելով, և ինքն իսկ գոչեաց զյայտնի մարգարէութիւնն՝ առ Կոյսն սուրբ, թէ Աւրհնեալ ես դու ի կանայս և աւրհնեալ է պտուղ որովայնի քո. ընդ որում և զնա մայրն Տեառն անուանեաց: Ընդ սմա և բարեպարիշտ ծերունին Սեննա՝ ի տանարին ընդ Սիմէոնի քահանայի մարգարէացաւ ի վերայ քառասնաւորեայ մանկանն՝ զակնկալութիւն Երուսաղեմի և զնոր փրկիչն Իսրայելի և հեթանոսաց, որպէս զի ազգ արանց և կանանց հասարակ՝ (չն)որհի փրկութեան արժանաւորք եղեն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ ընդ Հաւր և ընդ ամենասուրբ Հոգւոյն յաւիտեան յաւիտեանս. ամէն » : Դառքայ գտեալ :

Մեր տուած մեկնութեանց առաջինն այնքան հիմնաւոր է, որքան Միխիթար Այրիվանցեոյ աւանդածն, թէ Սարկաւագ վարդապետ ստուգիւ կատարած էր ժամանակաւ այսպիսի մի բաղդատութիւն և կարգաւորութիւն, նկատմամբ անվաւեր գրոց, զոր կ'ընդունին նոյն իսկ Բրոսսէ և Թէոդ. Չալն և նոյն ինքն Ապարանեցին՝ մեզի ներկայացուցած ցանկովը, յորում յիշուած է և՛ Միս մարգարէից գրութիւնն: Իսկ երկրորդին ի հաստատութիւն՝ բաւական է նախ աչք մի տալ, յիշեալ հրատարակութեան մէջ, Դանիելի և Եզեկիելի մահերուն վերայ, որոնք, ըստ Ա. և ԺԸ Աստուածաշնչերուն, իրարմէ այնքան կը տարբերին, զոր չինք կարող պարզապէս գրութեան արգասիք համարել. վասն զի բաց ի լեզուի և շարադրութեան տարբերութենէն՝

կը տարբերին նաև քանակութեամբ. այսինքն է, մին՝ Համառօտ է և միւսն ընդարձակ: Երկրորդ փաստ մ'ալ կ'ընծայեն մեզ՝ Յայամաւուբաց և ձաշոցներու մէջ՝ մարգարէից յիշատակին նուիրեալ ընթերցուածներն, որոնք անով աւելի կը տարբերին Մահ մարգարէից հին թարգմանութենէն, զի եպիփանեան և դորոթէոսեան բնագրաց յիշեալ թարգմանութիւններն յաճախ իրարու հետ խառնուած մէջ կը բերուին՝ անծանօթ գրչաց ուզածին պէս: Եւ ստուգիւ, այսպիսի միացումն մի որոշ կերպով կը տեսնուի մասնաւորապէս Յովնանու, Ամբակումայ և Չաքարիայ Յիշատակաց մէջ: Ըստժա ակներև ընելու համար նաև այլոց՝ կը դնենք այս տեղ միայն վերջին մարգարէին վերաբերեալ մասը, — ի թու. հայ. ՊՂ = 1441 գրուած Յայամաւուբէն, — հանդէպ վենետիկեան տպագրութեան, նշանակելով եւ պիփանեան և դորոթէոսեան բնագրաց այն տեղերէն մի քանին, որոնք տպագրեալէն կը տարբերին, հաւանօրէն յիշեալ պատճառաւ:

ՅԱՅՄՄ. ՄԱՐԵՐԻ Թ

ՄԱՀ ՄԱՐԳ. ԷՁ 216

« Մարգարէն Չաքարիաս՝ որդի էր Բարեքայ՝ որդոյ Ադգուվայ: Սա եկեալ ի Բարեղոնէ ի դարձ գերոյ յԵրուսաղէմ, և մարգարէացաւ առ ժողովուրդն Իսրայէլի, անենլով սքանչելի նշանս և արուեստս: Եւ առէց յՎսեղեկիս, թէ ծնցես որդի, և կոչեսցես զանուն նորա Չաւրաբաբէլ:

[Եպիփ. Ζαχαρίας ὁ προφήτης. οὗτος ἦν υἱὸς Βαραχίου¹. οὗτος ἦλθεν ἀπὸ γῆς Χαλδαίων ἦδη προβεβηχώς, καὶ ἐκεῖ ὦν πολλὰ τῷ λαῷ προεφήτευσεν, καὶ τέρατα πολλὰ ἔδωκεν εἰς ἀπόδειξεν].

Սա ասաց զՅովսեղեկեայ, թէ ծնցի որդի, և յԵրուսաղէմ քահանայացի [անարատութեամբ յօրինակ ճշմարիտ քահանայապետին²]: Սա զՍաղաթիէլ վան

1. Այս եկեղեցուած անոս չի գրուուիր Չաուկ. ժամանակագրութեան կամ դորոթէոսեան խմբագրութեան մէջ:

2. Փոխազօի մէջ նշանակուած բաներն՝ յուսարէն երկու բնագրաց մէջ իսկ կը պակսին: Իսկ Անտուէտ Գորգորէից և Կորէ Համառօտագրութեան մէջ լուսագրոյ կերպով կը գրուի. « Սա մարգարէացաւ և վան Յովսեղեկեայ, թէ ծնցի որդի Յուսու, և քահանայացի Ասաուծոյ՝ յորինակ ճշմարիտ քահանայապետին »:

« Եւ յոյժ ծերացեալ՝ մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ մերձ Ենգէաս մարգարէ » :

« Սա էր յազգեն Ղևեայ* , ուս-
տի Ենգէասն էր : Ծնեալ ի Կադ-
դի** յերկրին Քաղզէացոց : Այս
Զաքարիա մարգարէ շատ մարգա-
րէացաւ վասն ժողովրդեանն դար-
կի , և նշան ետ ի Հաստատու-
թիւն բանիցն : Եւ առ Կիրոս-
տի*** ետ նշան ի յաղթութիւն .
և վասն սպասաւորութեան նորա
ի դարձի գերութեան յառաջա-
դոյն ասաց , զոր առնելոց էր յԵ-
րուսաղէմ , և արհնեաց զնա յոյժ ,
և զհանդերձեալսն մարգարէացաւ
յերուսաղէմ , և վասն կատարածի
նորին և սկզբան մտին Հեթանո-
սաց , և վախճանի տաճարին և

որդոյն արհնեաց և անուանեաց¹ .
Զօրաբարէլ » :

« Եւ մեռաւ խաղաղութեամբ և
բարեւը ծերութեամբ , և թաղե-
ցաւ մերձ Ենգէ » :

« Զաքարիա էր յազգէն Կե-
եայ , և
ծնաւ ի Քաղզի յերկրին Քաղ-
զէացոց :
Երիտասարդ Հասակաւ՝ շատ մար-
գարէացաւ
վասն ժողովրդեան , և
նշան ետ ի Հաստատութիւն բա-
նիցն : Եւ առ Կիրոստի՝ ետ նշան
ի յաղթութիւն . և վասն սպա-
սաւորութեան նորա յառաջագոյն
ասաց , զոր առնելոց էր յԵրու-
սաղէմ .
օրհնեաց զնա յոյժ , և զհանդեր-
ձեալսն մարգարէացաւ յԵրուսա-
ղէմ , և վասն կատարածի նորին ,

* Այս տեղեկութիւնս՝ միայն Անտանտ
Տորթրից , և այլն , կամստատարութեան
մէջ կը գտնուի :

** Եղիփանեան և զորթէոսեան ընա-
պերուն մէջ կը պահուին ենթագծուած
բառերը . միայն Անտանտ Տորթրից կա-
մստատարութիւնն ունի . « Ենեալ ի Քաղ-
զի » :

*** Կիրոստի վերաբերեալ ակնար-
կութիւններն , ըստ որում երկրորդ մա-
տի մէջ կը գտնուին , կամսայն են զո-
րթէոսեան ընապերին վասն զի եղիփա-
նեան ընապերի մէջ՝ « ի յաղթութիւն »
εις νίκην բառերէն վերջ , περί Κροίσου τοῦ
Δουλοῦ բառերն ունի , ուր և Աժդահակ
Մեղաց թագաւորն կը յիշատակուի : Աս-
կից կը տեսնուի , թէ այդ մասը զորթէո-
սեան ընապերէն թարգմանուած է :

1. Այս և նախորդ բառերն՝ Զառի-
թամանակապարութեան կամսայն են , որ
ունի οδτος και τον Σαλαδιήλ επί υίφ
εὐλόγησεν , και τὸ ὄνομα Ζοροβὰβελ ε-
πέθηκε . Իսկ առ Եղիփանտ՝ այսպէս գը-
րուած է . Οὐτ.ς και τον Σαλαδιήλ εὐ-
λόγησεν ἐπὶ υίφ , λέγων , ὅτι γενηῖσαι
υἱον , και καλέσει τὸ ὄνομα αὐτοῦ Ζο-
ροβὰβελ .

աւերածոյն, և դատարկութեան մարգարէիցն և շարթուցն, և վասն կրկին գալստեանն Քրիստոսի, և արդար դատաստանին նշանակեաց, և ապա Հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս » :

« և ի սկզբան Հեթանոսաց և վաճանի տաճարին և աւերածոյն, և դատարկութեան մարգարէիցն և շարթուցն, և վասն կրկին դատաստանի նշանակեաց » :

Սրկու խօսք ալ ըսեմք Հայերէն թարգմանութեան և անոր կարևորութեան մասին: Մարգարէից մահերու Հայկական թարգմանութիւնը բաղդատելով յոյն բնագրի հետ, տեսանք որ ընդհանրապէս Հաւատարմութեամբ եղած է, ի բաց առեալ մի քանի անհամաձայնութիւնները, զորս կարելի է յոյն կամ Հայ գրչագրաց և կամ նոյն իսկ վերջին կատարուած խմբագրութեան արդիւնք համարել: Լեզուն ազատ է յունարանութենէ և պարզ. բան մ'որ է և Ը դարուց թարգմանչաց համար՝ խիստ Հաղուադէպ է: Գրութեանս Հայկական թարգմանութիւնն, որուն օրինակներն աւելի բազմաթիւ են՝ քան թէ յունարէն և լատիներէն բնագիրներուն, մեծ կարևորութիւն ունի վերջնոցս ուսումնասիրութեան համար. այսինքն է, սորա ձեռքով կարելի է ուղղել յոյն և լատին բնագրաց մէջ գրչագրաց կամ տպագրողաց ձեռքով սպրդուած յատուկ անուանքը, սխալ ընթերցուածներն և յետին ժամանակի ներմուծութիւնքը, և վերականգնել Հին բնագրի խանգարմունքը: Այս կետիս վերայ աւելորդ չեմք համարիքի մի կանգ առնուլ և մի քանի բաղդատութիւններով խօսիլ:

Օրինակի աղագաւ, Յովսեօյ մարգարէի ծննդավայրն, ըստ եպիփ. խմբագրութեան, է Βελεμῶδ. իսկ դորոթէոսեան խմբագրութիւնն ունի Βελεμῶν. Հայերէնը կը գրէ Բե(ե)րեմով՝: Հայն՝ ուղղակի յառաջ եկած է եպիփ. բնագրէն, որուն հնագոյն ձևն ըլլալու էր Βεηλωμῶ. իսկ միւսն՝ ծագած է ընդհակառակն լատին բնագրէն, Վուլգատայի աղգեցութեամբ, և ըստ երբայական բնագրին Ս. Փրոց՝ առնուանս հնագոյն ձևն էր Beelmaon, կամ Baalmeon = Βααλμεῶν (տես Մնաց. 5. 8): Հայերէն թարգմանութեան, յէջ 208, վերջին երկու տողերն. Իք զհետ երթիցեն և հնազանդեսցին երևելոյն Աստուծոյ, և նովաչ կեցցէ ամենայն երկիր՝ կը պակսին եպիփանեան հրա-

1. Չ օր. Բեթրեմովթ, ԺԸ օր. Բեթսամովթ, ԺԹ օր. Բեզդեմովթ: Այս ձևերէն ոչ մին ուղիղ չի կրնար ըլլալ, եթէ յիշեալն է Ռուբենի ցեղին այն նշանաւոր քաղաքը, որ կը գտնուէր Առնոթայ Հեղեղատին մօտ, և յիշուած է նո՛ւ թոսոց, 32. 38 և 1. Մնաց. 5, 8, 8Խ. 13, 17 տեղերում:

տարակութեան մէջ, բայց հնագոյն բնագիրն ունենալու էր. և աւոր ապացոյց է հետեւեալ բացատրութիւնն οὕτως καὶ ἐγένετο, որ չի գտնուիր Հայերենի մէջ:

Ամոփս մարգարէին սպանողն՝ առ Եպիփանու Ἀμασσίας¹ δὲ ὁ ἱερεὺς Βεδθῆλ կը կոչուի. իսկ Չատկ. Ժառ. մէջ պարզապէս Ἀμεσσίας: Հայն ըստ Զ օր. « Ամասիա քոչրով Բերեղիայ » կը գրէ, այսինքն է Բեթելայ, որով կը հաստատուի առաջնոյն ճշգրութիւնն և երկրորդ բնագրին՝ գուցէ լատինէն յառաջ եկած՝ վրիպակ ձևը: Սակայն Հայն՝ ինչպէս համաձայնութեամբ եպիփ. բնագրին լրացոյց և սրբագրեց դորոթ. բնագիրն, այսպէս այլ ի հետեւեալն ընդհակառակն համաձայնելով վերջնոյս՝ կ'արտաքսէ առաջնոյն մէջ ներմուծուած՝ երկրին Ջարուղոնի, և Ամոփսայ որդւոյն՝ Ծսայի մարգարէի վերաբերեալ հատուածներն, որոնք կը պակսին նոյն իսկ աւզուտեան օրինակին մէջ: Միջիայ մահուան մէջ կը գրէ եպիփ. բնագիրն անոր ծննդավայրը Μωράθει (ըստ աւզուտ. օր. Μωρασθίτης). վերջին ձևով գրուած է նաև դորոթ. խմբագրութեան մէջ. Հայերէնն՝ ընդհակառակն ունի Մոսորով (ըստ Զ, ԺԹ օր. Մոսովեր): Եպիփանեան գրչագրաց առաջին ձևն, այսպէս և Հայերէններն՝ յայտնապէս խանգարուած են. վասն զի Միջիաս. Ա. 1, և Երեմ. ԻԶ, 18, Μωρασθίτης = (հ. Մորատացի) գրուած է: Այսպէս է և երբայական բնագրի մէջ Միջիայ Հայրենի քաղաքին անունն, որ ըստ Հերոնիմոսի՝ Ելեթբուրպուսի արևելեան կողմը կ'իսկնայ: Գարձեալ, շիրիմն՝ որուն մօտ թաղուած էր Միջիաս, կը գրուի ըստ Եպիփանու Εναχελμ. իսկ ըստ Չատկ. Ժառ. ἐν Ἀχελω: Հայ. Ա օր. համաձայն եպիփ. բնագրին ունի՝ Ենիակիմ. իսկ ըստ ԺԸ օր. Անակիմ: Վերջին ձևս անճիշդ է, և յառաջ եկած է Չատկ. Ժառնանկագրոտրեկեկ, որով կ'իմացուի թէ պարզ տպագրի սխալ չէ, այլ յոյն բնագրի: Վեցերորդ ծանօթութեան մէջ գրուած հատուածն, ըստ Զ օրինակին, համաձայն է երկու յոյն բնագրաց, և դիպուածով դուրս թողուած է Ա օրինակէն: Յովելայ մասին՝ երեք բնագրերն իսկ իրարմէ կը տարբերին: Հայերենի մէջ թէպէտև կը պակսի եպիփ. բնագրի սիծε Βαθουήλ բացատրութիւնն, այսպէս և անունս Βεδθορών, զոր Եպիփանու գրչագիրներէն ոմանք սխալմամբ Βηθθώμ և ոմանք այլ Θεθοράν կը գրեն: Մնացած կետերով Հայն նոր պարագաներ կը յայտնէ, որոնք յուն. երկու բնագրաց մէջ իսկ չեն գտնուիր: Չատկ. Ժառ. Βεδθουωτ յայտնապէս

1. Տես Ամոփս է, 10, 12:

սխալ է, վասն զի խօսքը վերին և ներքին Բեթորոնի վերայ է (տես Մնաց. Է, 24. Ը, 5. և Գ Թագ. Թ, 17): Անուանք մարգարէից համառօտագրութիւնն՝ « ի ցեղէն Բենիամինի և ի քաղաքէն Բեքարովնայ » կը ղնէ զՅովէլ: Արդիւ ծննդավայրն՝ կոչուած է Եղծաչաբ առ Եպիփանու. իսկ Չատկ. Ժամ. մէջ Եւծաչաբս. հայեբէնն՝ ունի Բեքարայ. իսկ ըստ 2, ԺԸ, ԺԹ, օրինակաց Բեքարեմայ: Վերջին ընթերցուածովս կ'ուղղուին նախորդ երեք ձևերն ևս. վասն զի խօսքն այն քաղաքին վերայ է, որ կը գտնուէր ի վիճակի ցեղին Յուդայ, Բենիամինի սահմանին մօտ. և ըստ երրայական բնագրին (տես Երեմ. 2, 1. և Եզր Գ, 14) Եւծաչաբս = Բեքարեմա, կամ Եղծաչաբս կը գրուի: Ամբողջութեան մէջ երեք բնագրերն իսկ իրարու կատարեալ կերպով կը համաձայնին, միայն թագաւորին անունն ի բաց թողուած է դիպուածով առ Եպիփանու, որ մեր ԺԸ օրինակին համաձայն՝ էր Աքաս. 2 և ԺԹ օրինակներն՝ Չատկ. Ժամ. համաձայն՝ Ոքոզիա կը գրեն: Յովնանու մարգարէի հայրենիքն կը գրուի Եպիփանի քով Կարածաբսս. ըստ Չափ. Ժամ. Կարածաբս. հայ. խմբագրութիւնն՝ ըստ Ա օրինակին ունի համաձայն վերջնոյ՝ Կարիարմառս¹. ԺԸ օր. Կարիարարիմ: Վերջինովս կ'ուղղագրուին առաջին երեք ձևերն. դիտելով որ խօսքն է կամ Փարաւոնացոց այն քաղքին վերայ, ուր մնաց տապանակն Աստուծոյ, և կամ Փառայ ցեղի բաժնին մէջ եղածին վերայ, որք ըստ երրայական բնագրին Ս. Գրոց (տես Յես. ԺԸ, 14. Դատ. ԺԸ, 12. Գ, 2, 16) Կարիարիմ = Carithiarim = Կարիաթարիմ կը գրուին: Մարգարէիս կենսագրութեան մէջ իսկ՝ երեք բնագրերն իրարմէ նշանաւոր տարբերութիւններ կը ներկայացնեն: Հայերենի մէջ, 211 իջի 10րդ տողի. « Եւ զԵզաբէլ կին նորա », 14րդ տողի « վասն օտարընկալութեանն — ի վաղուց հետէ », 212 իջում 4րդ տողի. « Եւ զբոտտա (ԺԸ. օր. բորտա) ի փայտի — զփրկութիւն », երկու տողերն, և 7րդ տողէն « յերկրպագութիւն Տեառն — կատարած ամենայն երկրի » 5 տողերն կը պակսին յուն. երկու բնագրաց մէջ իսկ. Հետևաբար, եկամուտ յաւելուած կը տեսնուին: Եպիփանեան բնագիրն՝ թէպէտև ի սկզբան կատարեալ, բայց յետոյ խանգարուած կ'երևի. վասն զի կը պակսի այս տեղ Յովնանու մօր մահն և առ կաղնեանս² Դեբոյիայ թաղուիլն, զոր Չատկ. Ժամ. սխալ-

1. Կարիաթարիմ կոչուած է (Յես. Թ, 17. ԺԵ, 9, 60. — Մնաց. ԺԳ, 5) նաև Կարիաթ — Բառ և Կարիաթ — Գորոն. Հետևաբար Կարիաթ — Մասս կարող էր կոչուիլ տարբեր նշանակութեամբ, բայց մեզ ծանօթ չէ այսպիսի յորջորջում մի:

2. Դատ. Գ, 4, 8 կը կոչուի ընդհակառակն Արմաթի Դեբոյիայ:

մամբ Λιβάνου βαλάνου կը գրէ: Հայ. ժԸ օր. «Սարեփթա Սիրո-
նացոց» բացատրութիւնն՝ համաձայն է եպիփանեան բնագրի Σα-
ραφθά τῆς Σιδωνιασῆν, որ դուրս թողուած է միւս յոյն բնագրի
մէջ:

Նաւումայ մարգարէի կենսագրութիւնն՝ երեք բնագրաց քով իսկ
նշուածութեամբ պահուած է, ի բաց առեալ ի սկզբան երկու սողերն,
որ ըստ Չատկ. ժամ. են՝ Ναούμ ἦν Ἐλκέσεε πέραν τῶν εἰς Βητα-
βαρῆν ἐκ φυλῆς Συμεῶν: Եպիփան. ἦν ἀπὸ Ἐλκεσεὶ πέραν τοῦ Ἰορ-
δάνου εἰς Βηγαβάρ և այլն գրուած է. հայն. «Նաւում էր յԵղ-
կայ (Ձ և ժԸ օր. յԵղիւեայ որ է) յայնկոյս Գորդանանոս, ի
Կարբէէ (Ձ, ժԸ օր. Բերարի): Անունս Եղիկա՝ երեք բնագրաց
մէջ անորոշ կերպով յիշուած է, որով կրնայ թէ՛ անուն տեղւոյ և
թէ՛ անձի իմացուի: Եպիփանու աւգուստեան օրինակն ունի սիծ
Ἐλκεσσαίου, որ Յուդ. Ը. 1 համարին մէջ յիշուած եղեկայ աղաւաղ
ձեն ըլլալու է, և կամ բոլորովին տարբեր անուն մի: Յամենայն
դէպս, ըստ այսմ՝ ուղղագրելի են միւս բնագրերն ևս, հանդերձ յա-
ւուածովս որդի: Հայերենին՝ եպիփանեան բնագրի հետ ունեցած
համաձայնութիւնն՝ ցոյց կու տայ, որ Չատկ. Ժամանակագրութեան
միջէն տօ՛ւ Ἰορδάνου բացատրութիւնն՝ դիպուածով դուրս թողուած
է. վան զի Անասիք մարգարէից համառօտագրութիւնն ևս այսպէս
ունի « յայնկոյս Գորդանանոս »: Եպիփանու Βηγαβάρը՝ սխալ է, և
ըստ Աւետ. Յովհ. Ա. 28 ուղղագրելի է Βηθ-αβάρ, կամ լաւ ևս
Βηθαβρα = Բերարա:

Ամբակումայ կենսագրութեան մէջ՝ նորա ծննդավայրն կը նշա-
նակուի ըստ Չատկ. Ժամ. Βηθ-η τῶν Χάρ. ըստ Եպիփանի՝ Βηθ-
ζοχρή և Βεθζεχάρ. հայն ունի Բերսուքարայ (Ձ և ժԹ օրինակը
ունին՝ Սոքարայ. ժԸ օր. Սարսիս): Այս ընթերցուածներէս ոչ
մին ուղիղ չերևիր ինձ. ուստի առհասարակ ուղղագրելի են Beth-
zacharam = Βηθζαχαράμ = Բեթսաքարամ, որ նոյն ըլլալու է կամ
Ա Մակ. 2, 32, 33 համարներում յիշուած Բերսակարիս քաղաքին
հետ, որ ի հիւսիսակողմն Յուդայաստանի, և կամ Երեմ. 2, 1 տան
մէջ յիշուած Բերսարունան: Եպիփանեան բնագիրն՝ Ամբակում մար-
գարէի փախուստը կը դնէ եւ՛ս Օստրակնոյն եւ՛ս γῆν Ἰσμαήλ. հայն
համաձայն այսմ ունի « փախեալ յՈստրակիկէ (ժԸ օր. Ոստրա-
րակիկա)... յերկրին Իսուայէի. որով կարելի է ուղղել Չատկ. Ժամ.
եւ՛ս γῆν Ἰσραήλ վրեպակը: Սակայն Ոստրակիկէ = Օստրակնոյ ձևը
պէտք է ուղղել ըստ Ողբոց (Երեմ. Դ. 11, — Յոր. ԼԲ. 2, ԽԲ. 16)

Πλατυγαστος = Αυστίδος. վասն զի խօսքը Երջանիկ Արարիոյ կամ Եղումայ վրայ է, որ կը գտնուէր Պաղեստինու Հարաւակողմը: Հայոյն Հեռուեալ բացատրութիւններն՝ երկու յոյն բնագրաց մէջ ևս չեն գրուուիր. այսինքն է՝ յէջ 214. « Ի կատարածի՝ մարգարէ որդի Աստուծոյ յարիցէ... և որք ոչ լսեն նմա՝ եղիցին ի խաւարի... և ելեալ սրբոյ Հոգւոյն ի տաճարէն »: Հայերէն թարգմանութեան և Չասկ. Ժամ. այս բացատրութիւնս՝ « Եւ տարեալ ճաշ Դանիէլի » պակասաւոր է, պէտք է յաւելուի Համաձայն եպիփանեան բնագրին եւս τὸν λάκκον τῶν λεόντων = ի գոռն առիճոսց. վասն զի այսպէս ունի և Անուանք մարգարեից Համառօտագրութիւնն:

Սոփոնիայ կենսագրութեան մէջ՝ անոր ծննդավայրը իրարմէ տարբեր ձևով կը գրեն երեք բնագիրներն. ըստ Չասկ. Ժամ. Տաթա: Թաթա. ըստ եպիփ. բն. Տարάβαθα և Βαράβα. Հայն ունի Մարա¹ (ըստ ԺԼ օր. Մանարա): Ուղղագրելի են ըստ Իքնն. ԺՁ. 14, Βαράδ = Բարադ, որ կը գտնուէր յանապատին Բերսարեայ, այն է՝ Եամաւնի ցեղի վիճակին Հարաւակողմը:

Նշանաւոր է Հայերենի Հեռուեալ բացատրութիւնն, որ կը պակսի յոյն երկու բնագրաց մէջ իսկ. « Եւ վասն դատաւորին ամենայն շնչոց՝ որդւոյն Աստուծոյ », որ երբայական ծագումն ցոյց կու տայ:

Անգեայ կենսագրութեան սկիզբն՝ երկու յոյն բնագրերն իսկ պակասաւոր կ'երևին, և այս պակասս կը լրացնէ Հայն. « Էր ի ցեղեմ Ղևեայ, ծնառ ի Բարեղոն » բացատրութեամբ, որուն Համաձայն է և Անուանք մարգարեից Համառօտագրութիւնն: Եպիփանեան բնագրի մէջ καὶ αὐτος ἔψαλχεν ἐκεῖ πρῶτος ἀλληλουῖα — γένοιτε չորս տող Հատուածն՝ եկամուտ յաւելուած կ'երևի. վասն զի միւս երկու բնագիրներուն Հետ՝ Անուանք մարգարեից և վարք Համառօտագրութիւնն իսկ, որ յայտնապէս եպիփանեան բնագրէն թարգմանուած է, զայն չեն ճանչար:

Չարարիայ մարգարէի կենսագրութեան սկիզբը կը պակսին, երկու յոյն բնագրաց մէջ իսկ, նորա ցեղին և ծննդեան տեղւոյ անուններն: Արդ, այդ պակասը կը լրացնէ Հայ թարգմանութիւնն. « Եր յազգէն Ղևեայ, և ծնաւ ի Փարդի՝ յերկրին Քաղէտացոց », որուն բառ առ բառ կը Համաձայնի և Անուանք մարգարեից Հին գրութիւնն: Եպիփ. բն. Περὶ Κροίσου τοῦ Αὐδίων βασιλέος — Ἀστύαγους τοῦ τῶν Μηδῶν βασιλέος միջանկեալ Հատուածն՝ կամ խան-

1. Անուանք մարգարեից Համառօտագրութեան մէջ Սարա-ն գրուած է:

գարուած է, և կամ գլխովին եկամուտ յաւելուած մ'է. վասն զի ոչ միայն միւս երկու բնագրերն չունին զայն, այլ նոյն իսկ Անուանք մարգարէից Համառօտագրութեան և Սպիփանու աւգուստեան օրինակին մէջ ևս չի գտնուիր: Ըստ Հայկական խմբագրութեանն՝ այդ ամբողջ նախադասութիւնը « Առ Կիւրոսի » ուղղագրելի է. վասն զի Կրեսոս՝ Ափղազակին հետ գործ չունի, հետևաբար՝ և անհասկանալի է:

Մաղաքիայ կենսագրութեան սկիզբը՝ Զատկ. Ժաման. բնաւ չյիշիր անոր ազգատոհմը. ըստ եպիփ. բնագրին՝ Զարուղոնի = Ζαβουλον ցեղէն էր. իսկ Հայն ունի. Ի ցեղէն Ղևեայ, որուն քաղ կը հանձայնի նաև Անուանք մարգարէից Համառօտագրութիւնն¹: Հետևաբար, Հայ Թարգմանութեամբ կարելի է լրացնել առաջնոյն պահան և ուղղել երկրորդին սխալը. դիտելով որ Զարուղոն իբրև երկիր նշանակուած է երկրորդ անգամ առ Սպիփանու, յորում կը գտնուէր Մաղաքիայ ծննդավայրը՝ Սովփեր, զոր յոյն բնագրին ունի տարբեր ձևով Տօփօ: Հայերենի Սովփերն՝ ուղղելի է ըստ Թոռոց ԼԲ. 35, Սոփար, իսկ յոյնը՝ Տօփօր, որ է Դանայ ցեղէն շինուած այն քաղաքը, որ երբայական բնագրի մէջ կը գրուի Ստրոք կամ Ստրեր Սոփար, որ տարբեր ըլլալու է ոսկեհան Սովփերէն: Հայերէն 217 թի. « Սև գհրեշտակն ոչ ոք — լսէին », երկու տողերն՝ կը պակսին յոյն բնագրաց մէջ, ուստի և եկամուտ. 12րդ տողամիջի Սիփրասփատեիմն (Զ և ԺԹ օր. Սփորսփոտիկ), այսպէս և Զատկ. Ժամանակագրութեան Տփերեթելեյմ ձևերն սխալ են. հետևաբար, եպիփ. բնագրի Տիփօթելեյմ = Եփփիթիմ, Տի = շ = Մ, կամ ձայնաւոր տառից ընթերցմամբ՝ Եփփիթիթիմ ուղղագրելի են. վասն զի խօսքը Դատուարաց (Գրքի) վերայ է, որ երբայեցերէն ԻՄԹՃՄ կը գրուի:

Իսայեայ կենսագրութեան սկիզբը՝ Զատկ. Ժամ. պակասը — նկատմամբ Ամովս մարգարէի ծննդավայրին և ցեղին — կը լրացուի միւս երկու բնագրաց և Անուանք մարգարէից Համառօտագրութեան համաձայն՝ այսպէս. « Եր որդի Ամովսայ ի Թեկուայ, ի ցեղէն Յուդայ »: իսկ վերջաբանութեան այն 8 տող հատուածն, այսինքն է՝ Έχει εἶχεν ὁ βασιλεὺς Σολομῶν — ἀπὸ τῆς ἡμέρας ἐκείνης իբրև յետին ժամանակի եկամուտ յաւելուած ի բաց բառնալի է. վասն

1. Նշանաւոր է գրութեանս՝ ի վերջոյս ժի կամ փոքր մարգարէից բրած նուեայ յայտարարութիւնը. « Այսօրիկ ի 4 գիրք բնագրութեայ », որ ցոյց կուտայ մեզ, թէ մէջ բերուած պատասխին, զոր մեզ ներկայացնել ուզած է խմբագիրը, մի այլ ընդարձակ գրուած է, համաձայն թիւ 721 գրչագրի յեղատու կարանին:

զի եպիփ. բնագրի Հեո՝ Հայերէնն և Անուանք մարգարէից Համա-
նօտագրութիւնն իսկ զայն չեն ճանչնար:

Եզեկիայ կենսագրութեան մէջ՝ անոր ծննդեան տեղւոյ անունը՝
Արիօ կը գրէ Չատկ. Եանանակագրոսրիւնն, զոր պէտք է ուղղա-
գրել Համաձայն եպիփ. բնագրին Տարիօ կամ Տարիօձ, և ըստ ըն-
թերցման Գ թագ. ԺԱ, 26 երբայական բնագրին. վասն զի խօսքը
Եփրեմի ցեղի այն քաղաքին վերայ է, ուստի էր Յերոբոամ արքայն
Իսրայէլի: Քուցէ այս պատճառաւ Հայերէն թարգմանութեան Զ
օրինակն կը գրէ յերկրէն Իսրայէլի: Միւս օրինակներն և Անուանք
մարգարէից Համառօտագրութիւնն, այսպէս և Եօթանասնից Հայկ.
Թարգմանութիւնն ունին Սարիտա: Մարգարէիս թաղման տեղն՝ ե-
րեք բնագրաց մէջ իսկ Մառար = Μαοδρ կը գրուի, որ ըստ իս յա-
նաջ եկած է երբայական Մառա ձևէն, փոփոխմամբ չ տառին ի ր:
Ուստի, կամ ըստ Դատ. Ե, 23, և Գ թագ. Դ, 12՝ յայնկոյ Յորդա-
նանու կիսոյ ցեղին Մանասէի Արիւնառ ջաղաքն է, և կամ Գ
թագ. Դ. 31 տան մէջ յիշուած Մառա, որ կը նշանակէ սաղմո-
սանուագաց (դաշտ): Քերրոնի այրի նկատմամբ՝ Հայ. գրչագրերն՝
Թէ՛ յոյն բնագրաց և Թէ՛ իրարու Հակառակ կը գրեն. վասն զի Ա
օր. ունի. « Եւ կրկին յայն սակս ասի, զի չըջանակաւ է և յայտ:
վեց՝ կրկին վերնատուն և կախեալ զվիմէ »: Իսկ ԺԸ օր. « Կրկին
ասի, զի չըջանակաւ էր և ծածոակ ի ներքնատանն՝ վերնատուն, և
յերկրի ի վիմի ծածկեայ »: Հետևաբար, գրչագրաց ձեռքով խանգա-
րուած է, և ուղղագրելի ըստ եպիփանեան բնագրին: Քորար գե-
տոյն նուագման և անման մասին եղած գուշակութիւնն իսկ՝ ԺԸ
օր. մէջ խանգարուած է. իսկ ի վերջ՝ գրութեան՝ օրինակս ունի
Բարեղոն, Հակառակ միւս բնագրոց, որոնք ի Մարս կը գրեն: Առա-
ջինն՝ աւելի ճիշդ է:

Երեմիայ մարգարէի կենսագրութեան սկիզբն՝ յոյն բնագրերն
չունին՝ Բենիամինի. այս՝ Հայերէնին յատուկ յաւելուած մ՝ ըլլալու
է, ցուցնելու համար՝ Թէ Բենիամինի ցեղի վիճակին մէջ կը գտնուէր
այդ քաղաքն (տես Մնաց. ԺԱ. 28, Երեմ. Ա. 1, ԻԹ. 27, Ա Եզր
Ե, 18). վասն զի Անուանք մարգարէից Համառօտ գրութիւնն ևս չու-
նի, այլ անմիջապէս կը յարէ յԱնաթովթայ՝ « ի ցեղէ քահանայից »:
Այս ընթերցուածս նախադասելի է Հայերէն բնագրի « յաւուրս քա-
հանայիցն » ընթերցուածէն, և ըստ այսմ լրացնելու յոյն բնագրոց
պակասը: Յէջ 228, Երեմիայ մարգարէի նշխարաց փոխադրութիւնն
յԱղեքսանդրիա՝ որ Աղեքսանդր Մակեդոնացւոյ ձեռքով եղած կ'ա-

անդուի, փոխ առնուած է Չատկ. Ժամանակագրութենէն: Այս հաս-
տուածս կը պակսի թէ՛ եպիփ. բնագրին և թէ՛ Անտանք մարգարէից
համառօտագրութեան մէջ. հետևաբար, եկամուտ յաւելուած մ'է, յե-
րիւրեալ կամ ուղղակի. Եպիփանու մէկ տեղւոյն վերայ, ուր յետ
յիշելոյ Երիվիայի մէկ գուշակութիւնն առ քուրմս եգիպտացոց,
այսինքն թէ, բոլոր իրենց դրօշեալները պիտի կործանին, երբ Կոյսն
մանկածին՝ իւր որդւոյն հետ Եգիպտոս ոտք կոխէ, կը յաւելցուի՝
փակագծի մէջ. « Վասն այնորիկ մեծարեն ցայսօր ժամանակի զԿոյսն
մանկածին, և պաշտեն զմանկիկն եղեալ ի մարի: Սակս այսորիկ,
իրբե հէարց Պտղոմէոս (գնոսա) ետուն պատասխանի, թէ « Խոր-
խոր իմն է այս, զոր ընկալաք ի ծերոց, յայտնեալ նոցա ի ձեռն
ուրբ մարգարէին, որոյ մնամբ կատարման ելիցն »: Ասոր յայտնի
պատգոյց է հայերենին, ինչպէս և միւս յոյն բնագրաց հետեւեալ
բացատրութիւնն. « Լուաք մեք ի ծերոց արանց » (Չատկ. ժամ. յա-
րոբաց Անտիգոնոսի և Պտղոմեայ). որով ցոյց կը արուի իրբե աղ-
իւր անգիր աւանդութիւն մի, որ է դարուն կը չըլէր ի բերան քրիս-
տոնէից: Ասոր կուտան մ'է, Չատկ. Ժամ. մէջ Աղեքսանդրի յիշեալ
աւանդութեան անմիջապէս վերջ եկող 8 տող մի ուրիշ հատուածն,
Արգոսեան օձերու մասին, որ հայերէնի մէջ անգամ չկայ, և դեռ
ակի նոր ըլլալու էր: Երկրորդ՝ Վասն Երեմիայի մարգարէի ի գրոցն
Բարդաքայ խորագրուած գրուածքին վերջն ևս ասոր նման բան մի
կ'աւանդուի, այն է՝ մարգարէիս նշխարաց փոխադրութիւնն՝ աղեք-
սանդրացի Նեփթաղիմ Թազաւորի մի ձեռքով:

Հայերէն Թարգմանութիւնն՝ եգիպտացերէն կոկորդիլոս անունը՝
եպիփ. բնագրի մերձաւոր ձևով մի՝ Նեփոս (Νεφώθ = Նեփովթ)
կը գրէ. Չատկ. Ժամ. ունի ընդհակառակն Μενεφώθ = Մենեփովթ,
որ անճիշդ է, և ուղղագրելի համաձայն առաջնոյն: Վեց տող յաւե-
լուած մ'ալ ի վերջ գրութեան ունի Չատկ. Ժամ. Ժամանակագրութիւնն,
որ կը սկսի. Διά τοῦτο ἔδωκεν ὁ Θεός — ἐκ σπέρματος ἱερατικοῦ,
որ կը պակսի միւս երկու բնագրաց մէջ:

Դանիէլ մարգարէի ծննդեան քաղաքը՝ Չատկ. Ժամ. Ժամանակագրու-
թեան մէջ Βεδερῶν գրուած է. Եպիփանու մէկ օրինակն ունի՝ Βε-
δεβορών, իսկ միւսն Βεδερών. իսկ ըստ հայերէն խմբագրութեան՝
Բեթրա (ԺԸ օր. Բեթրորովն, Զ օր. Բեթրով): Դանիելի կենսա-

1. Այս տողերս իսկ եկամուտ յաւելուած ըլլալու են ստուգելու, վասն զի ա-
նոցմով աչքի զարնող կերպով ընդհատուած են Եպիփանու նախորդ և հետևորդ
խոսքերն:

գրութեան մէջ յիշուած անունն՝ եթէ վերին Բեթորոնի = Βεδερών ανωτέρα, այն է Եփրեմի ցեղի վիճակին մէջ եղած քաղաքին հետ նոյն համարինը ըստ Եպիփանի, այն ժամանակ երկրորդ ձևն ուղիղ է, և կը սրբագրէ միւս երկու բնագրերը: Սակայն ինձ այնպէս կ'երևի, թէ խօսքը Յուդայի ցեղի վիճակին վերաբերեալ քաղաքին վերայ է, յորմէ ցեղէ էր և ինքն Դանիէլ. և այս քաղաքս կը կոչուի (Յես. փ. 59) Բեթեր. ըստ երբայ. ձևին թեքեր: Յէջ 219, երկրորդ սեան 19րդ տողի. «Քանզի զայս ունէին բռնաւորքն — դատաւորէն Աստուծոյ» 9 տող հատուածն, որ կը պակսի հայ. խմբագրութեան և օրինակին մէջ, յաւելուած չէ, այլ թարգմանուած է դորոթէոսեան բնագրէն, ըստ Չատկ. Եւանկակագրոտրեան. այսպէս նաև 221 իջի 3րդ տողի. «Խոստովանելով Տեառն — հաշտեցուցանել զԱստուած» 6 տող հատուածն, և 222 իջում 3րդ տողի. «Եւ յինքն առցէ զամենայն անօրէն — ի ծերոց ժողովրդոցն Իսրայէլ» 5 տող հատուածն: Նոյն իջի. «Յայնժամ սպանումն եւ զիցի — սրբոյն Աստուծոյ» 16 տողերն ևս յիշեալ բնագրէն օժանդակուած են, բայց ետև փոխադրուած են և կրկնուած:


Յէջ 220, առաջին սեանն 3րդ տան մէջ կը յիշուի հայ. բն. Բեւ. մոտ՝ իբրև շաստուած, յորմէ Նարսեզդոնոսոր օրուան մէջ քառասնիցս խնդրուածներ կ'ընէ. բայց նշանակուած չէ, թէ որուն աստուածն էր այդ: Եպիփանեան բնագրի մէջ կը յիշուի նա իբրև աստուած Իսրայէլի, և կը գրուի տարբեր ձևով Βεημων, ὅ ἐστιν τοῦ Θεοῦ Ἰσραήλ: Հայերէն ձևն շատ նմանութիւն ունի Սչաւայ ապաշխարոտրեան մէջ յիշատակուած Բեհմովֆին հետ, որ ընդհակառակն իբրև գազան՝ կ'ընդդիմարանէ Ադամայ: Հայերէն բն. անտարակոյս թարգմանուած է եպիփ. բնագրէն, ընդհանուր համաձայնութիւնն իսկ զայս կը ցուցնէ. սակայն երկու ձևերն իսկ հեռացած են երբայական հին ձևէն, որ է Βααλ կամ Βεηλμαών, որ ըստ թոռոց Լթ. 38, Մնաց. Ե. 8, Յես. փ. 17 է անուն այն հրշակաւոր քաղաքին, որ էր յերկրի ցեղին Ռուբենի, մօտ հեղեղատին Անտոֆնայ, ուր և կուստուն Բեղայ և Մաւոֆնայ դրօշելոցն Գդդէացւոց, զոր եմոյժ Իսրայէլ, և առ մերս կը գրուի նաև սոռն Բեւրոֆայ, Թ = Վ: Սակայն եպիփանեան բնագրի մէջ անուանս անմիջապէս յաղորդող տողն՝ կամ յետոյ ներմուծուած է, զի Չատկ. Եւանկ. չունի. և կամ հայերենի այս տեղիս պակասաւոր համարելի է: Նշաւաւոր է, յէջ 221, Դանիէլի համար ըրած. «Եւ առ այլովք թագաւորօք Պարսից բազում նշանս արար, որք ոչ են գրեալ» բացա-

արութիւնն, որ կը գտնուի երկու յոյն բնագրոց մէջ ևս. սակայն Հե-
փեալ բառերը, զորս անմիջապէս առաջիններուն կը յարէ (ԺՎ
օրինակն). « Ի գիրս տեսչեանց նորա », եկամուտ կը տեսնուին: Այս
ակնարկութիւնս, յամենայն դէպս, կամ այն է թէ շարժառիթ եղած
է Գանիէլի անվաւեր տեսչեան գրութեան, և կամ առաջնոյն խըմ-
բագրոյին ծանօթ ըլլալու էր վերջին գրութիւնս ևս:

Թէպէտև մենք եպիփանեան և դորոթէոսեան բնագրաց այլևայլ
հաստարկութիւնները չունէինք դիմացնիս, այլ Կոլոնիոյ յամին
1682, և Վիենտոյոյ 1729ին եղածները միայն. սակայն հայերէն
Թարգմանութեան՝ ասոնց հետ եղած բաղդատութիւններէն — ինչ-
դէս և Անռանք մարգարէից գրոածով իսկ տեսնուեցաւ, որ եպի-
փանեան բնագրի մէջ հնագոյն ձևերն՝ համեմատութեամբ միւսնե-
րուն՝ աւելի լաւ պահուած են և ճիշդ. և թէ ասոր մէջ այնքան
եկամուտ յաւելուածներ չկան, որքան ակներև կը տեսնուին դորո-
թէոսեան բնագրի մէջ: Ուրեմն ասկէ իսկ կարեմք եզրակացնել, թէ
եպիփանեան բնագրին համեմատ դորոթէոսեանին կամ որ նոյն է,
Զատի. Ժամանակագրութեան ներկայացոյցածին՝ առջի հետքեան տիպ
ունի. քէ վերջինս՝ առաջնոյն վերայ խմբագրուած է՝ կամ ըստ շա-
տիկ բնագրի և կամ յռանարեակի մի համաձայն, և քէ հայերէն
նիկ բարգմանութեան՝ եղած է Է-Ը դարու, յորով քաղուած կ'ե-
րևի և ԱՆՈՒԱՆՔ ՄԱՐԳԱՐԷԻՑ ԵՒ ՎԱՐՔ համաստագրութեան, որ-
ինչպէս տեսանք — ըստ ամենայնի համաձայն է եպիփանեան բնա-
գրին և հայերէն Թարգմանութեան:


Սակայն պէտք եմ ըսել, թէ վերոյիշեալ գրուածոց բաղդատու-
թիւններէն ցոյց տրուած Ման մարգարէից հայկական Թարգմանու-
թեան ժամանակի նկատմամբ գծուած մերձաւոր սահմանն՝ դժուար
է պատմականօրէն որոշել, զի առ այս՝ հարկաւոր էին ազգային գըր-
չագրաց մէջ ծածկուած աւելի յայտնի վկայութիւններ: Անռանք
մարգարէից գրուածի մաքուր շարադրութեան — ինչպէս նաև պատ-
մական իրաց մէջ — վերինի հետ ունեցած նմանութիւնն՝ զոր տեսանք,
նշան է, թէ երկուքն ևս փոխադարձաբար իրարու ծանօթ էին և
հին: Արդ, վերջին գրուածիս համար՝ զկնի ամենայն բանից գրուած
է, իբրև յիշատակարան, այսպէս. Դաքայ գտեալ: Բառս գտեալ՝
կարելի է՝ թէ գտեալ եղած ըլլար հին օրինակին մէջ, սակայն եր-
կու պարագայից մէջ ևս նպատաւոր է մեզ. վասն զի եթէ գրեալ
հասկընանք, կը հետևի, թէ նա այդ համաստագրութիւնը գրած
ժամանակ՝ արդէն Ման մարգարէից հայկական Թարգմանութիւնն

ի գոյութեան էր. իսկ եթէ գտնայ կարգանք, ինչպէս որ է, կը
 Հետևի, թէ նորա գտածն ըլլար յոյն կամ սեմական բնագիրը, զոր
 Դաւիթ այդ ժամանակին փոխեց ի Հայ բարբառ: Աւրեմն բոլոր խըն-
 դիրն կը ծանրանայ այս միակ կետիս վերայ. այսինքն թէ, ո՞վ է
 այդ Դաւիթն, և ի՞նչ ժամանակի մէջ կ'ապրէր նա: Գժարողաբար
 անծանօթ Հեղինակս՝ իւր ազգանունով յիշուած չէ, որով Հեշտ պիտի
 լինէր մեզ՝ որոշել զինքը միւս բազմաթիւ Դաւիթներէն. սակայն և
 այնպէս, նա պարզ ընդօրինակող մի չէր, այլ զրիչ կամ թարգման:
 Արդ, այս տիտղոսով ծանօթ են մեզ երկու Դաւիթներ. այսինքն է՝
 Դառիթ քարգմանիչ Տարօնեցի, որ կ'ապրէր Է դարում, և Համա-
 զասպայ Մամիկոնէից իշխանի խնդրանօք թարգմանած կը յիշուի
 վերստին նաև Ս. Բարսղի՝ ի ժնռանդ Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի
 ճառը, և Դառիթ Հիւպատոս Կոստանդնուպոլսի, որ կը յիշուի նե-
 մեսիոսի Հայկ. թարգմանութեան վերջ դրուած յիշատակարանին
 մէջ՝ զոյգ ընդ Ստ. Սիւնեցւոյ, իբրև թարգմանիչ Ը դարու: Բայց
 իմ կարծիքով այս վերջինս չէ կարող լինել գրիչ կամ թարգմանիչ
 վերոյիշեալ գրուածներուն, դիտելով որ սոցա շարադրութիւնը բո-
 լորովին ազատ է նեմիսիոսի թարգմանութեան մէջ աչքի զարնող
 յունարանութիւններէն, և է մաքուր Հայերէն. Հետևաբար, պէտք
 է վերագրել զայն Դաւիթ Տարօնեցւոյն: Այս ենթադրութիւնս եթէ
 ստոյգ է, կը Հետևի ուրեմն, որ Մահ մարգարէից գրուածի Հայկական
 Հին թարգմանութիւնն եղած ըլլայ Է դարու առաջին կիսում: Այս
 Դաւիթը կը թուի ակնարկել Ղազար Բարեբոցի, որ ԺԵ դարու ա-
 ռաջին քառորդին ցանկելով զՍ. Գիրս, կը գրէ. « Թէպէտ գոյր մեզ
 յառաջագոյն կարճառօտ ցանկեր ի նախնեացն մեր և ի Տէր Դառիթ
 իմաստուն քահանայէ, բայց ցիր և ցան գոլով յայլևայլ տեղիս, մեզ
 աշխատութեամբ ժողովեցաք »:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՏ ԵՂԻԱՅ

Մ Ա Ր Գ Ա Ր Է Ի Ն



Մյս գրուածս՝ որ թանգարան հին և նոր նախնեաց հրատա-
րակութեան մէջ, յէջ 333, կը կազմէ ժԳ գրուիւք, և կը
ներկայանայ իբրև բոլորովին անկախ գրուած, ամենամեծ
աղերս ունի՝ Ման մարգարէից մէջ գտնուած՝ Եղիայի կենսա-
գրութեան հետ. և կարելի է ըսել մինչև անգամ, թէ կամ եպիփա-
նեան բնագրի, և կամ ուղղակի անկէջ եղած Հայկական թարգմանու-
թեան վերայ կատարուած մի նոր խմբագրութիւն ըլլայ: Ստուգիւ,
բաղդատելով իրարու հետ՝ տեսանք որ գրուածիս Ա պարբերութիւնն՝
«Եղիա թեսբացի էր (յ)ազգէ քահանայիցն — և հրաման նորա՝ վճիռ
Հաստատուն», բառ առ բառ թարգմանութիւն է եպիփանեան բնա-
գրի մէջ եղող Եղիա մարգարէի կենսագրութեան: Անշուշտ խմբա-
գիրն Հայկական Հին թարգմանութենէն փոխ առած է այդ Հատուածն,
քան թէ ինքն նոր թարգմանած, վասն զի այդ Հատուածին և ամ-
բողջի շարագրութեան մէջ ահագին տարբերութիւն կայ:

Գրուածիս լեզուն՝ տեսակ մի աշխարհիկ¹ բարբառ է, որ որչափ

1. Իբրև նմոյշ յառաջ կը բերենք Աքաբուր և Եղիայի խօսակցութիւնն ևե-
տեալ տողերը. «Եւ ասէ Եղիա. Ընդէր տաս շինել զանիծեալ քաղաքն (Երե-
քով). — Ասէ Աքաբը. Շատ մի խօսիւ, ձեր մեծն և առաջնորդն Մովսէս, նորա
անէծքն ինչ զօրութիւն ունի, որ աշակերտին ինչ զօրութիւն ունենայ: (Եղիա).
Մովսէս ասաց, թէ երբ կուռք պաշտէք՝ զերկինքն քանց զերկաթ, զգետինն՝ քանց
զգինն՝ կպահեմ. ոչ թողում երկինքն ցօղ սայ, և ոչ երկիր պտուղ: Ասաց Աքաբը.
Թէ ես լա՛մ կուռք պաշտեմ, թէ ձեր հաւատող զօրութիւն ունի՝ թող այլ չէ՛ գայ
սննիւք > ...:

որ օտար¹ տարրեր կը պարունակէ իր մէջ, սակայն ժԳ դարու գաւառաբարբառին հետ մերձաւոր նմանութիւններ ևս ցոյց կու տայ: Ունի հրապոյր մի ճկուն դարձուածներու և գեղեցիկ ասացուածոց:

Գրուածս ծանօթ է մեզ մեր մատենադարանի մի միայն գրչագրի միջոցով, որ գրուած է ի թու. Հայոց ՌՂՁ = 1627: Արդ, եթէ ասկէ աւելի հին օրինակներ չկան, այս իսկ յայտնի նշան է, թէ խմբագրութիւնս իսկ հաւանօրէն այդ ժամանակէն շատ յառաջ կաւ տարուած ըլլալու չէ: Յամենայն դէպս՝ պէտք է ըսել, թէ այս գրուածս ինքն յինքեան պատմականէ և մատենագրականէ աւելի՝ լեզուաբանական տեսակետով շահագրգիռ է, ըստ որում կը ներկայանայ մեզ իբր ժԳ-ժՁ դարու աշխարհիկ բարբառ մի Հայակիլիկիոյ կամ Մեծին Հայոց գաւառներէն միոյն. բայց մտածելով, որ դա կարող է նոյն իսկ մասն լինել մի ուրիշ անյայտ և ընդարձակ գրութեան, այն ժամանակ կ'ունենայ մասնաւոր կարեւորութիւն մ'ալ, իբրև աղբբացոյց Նդիայի մարգարէի անուամբ մակագրուած մի այլ գրութեան: Ի դէպս Փ. Վոնիբեր՝ առ իս գրած մէկ նամակին մէջ՝ կը ծանուցանէ, թէ Վոնի մատենադարանին մէջ ինքն տեսած է Հայերէն գրչագիր մի, յորում կը գտնուի Նդիայ մարգարէի ընդարձակագոյն կենսագրութիւն մի. բայց թէ որ թուականին գրուած է այդ ձեռագիրն, կամ թէ անոր պարունակած գրուածն ինչ և ինչպիսի տարբերութիւններ ունէր ի Վենետիկ հրատարակուածէն, այս մասին բան մի չըսեր. միայն այսքանս դիտել կու տայ, որ տարբեր է նոյն իսկ Նդիայի Յայտնութիւն կոչուած գրուածէն: Վոնիբերի ցոյց տուած օրինակը չունելով ի ձեռին՝ չենք կարող անոր որպիսութիւնը դատել, այլ այսչափ միայն կ'ըսենք, որ բոլորովին տարբեր պիտի չլինի մեր հրատարակածէն, այլ սորա մի կատարեալ և գուցէ հնագոյն օրինակը:

Գալով ուղղակի ի Վենետիկ հրատարակուածին, կը շարունակենք մէկ կողմէն՝ ցոյց տալ եպիփանեան յիշեալ գործին հետ ունեցած միև աղբբաները, որով պիտի ուղղուին երկուստեք ի ներքս սպրդած անճշդութիւնքն, իսկ միև կողմէն՝ յայտնել գրուածիս իբրև ձեռագրուած միև աղբբանները:

1. Օրինակի ազգաւ, յէջ 333, Գ-ի(ո) (վեհ, զբոսի (վատուծ). յէջ 339, «եյրան» (գրաստեք), լաւ՝ (ական), Ի-նուր (գաշոյն): Հետադրբական է առաջին երկու թրգական բառերու է վերջաւորութիւնն, որ կարծէք թէ վրացերենի ազգեցութեան հետեանք ըլլայ: Կո, իք մասնիկն՝ բնաւ դործածուած չէ սամանական ներկայի դիմաց. իսկ Գ՝ Ի-նուր հրամայական երկրորդ դեմքն՝ աներկութիւն գէս վիճի փոխուած է:

Խմբագրութեանս հեղինակն՝ մէջ կը բերէ Սոսրաքա՝ իբրև մայր Եղիայ մարգարէի, և Ասուն՝ իբրև հօր անունն: Եպիփանեան և դորթէոսեան բնագրաց մէջ՝ վերջին անուան բնաւ յիշատակութիւն չկայ. իսկ առաջին անունն է ըստ դորթէոսեան բնագրին Տβαχαδ, իսկ ըստ եպիփանեանի Տωβαχ (աւգուստեան օր. ունի Տοβοχαδ): Եպիփանու առաջին ձևն՝ Համաձայն է Բ. Թագ. ԻԱ. 18, և Ա Մնաց. ԺԱ. 29 մէջ գործածուած Սովրաք ձևին, որ էր մին ի գօրավարաց Կաթի. Հետևաբար, ըստ այնմ ուղղելի են Հայն և դորթէոսեան բնագրին: Բայց թէ իրօք Եղիայ մարգարէի Հայրն ևս այդպէս կ'անուանէր, բնաւ յիշատակութիւն չկայ ի Ս. Գիրս և ոչ այլ նորա օր անուան. ուրեմն երկու գրութիւնքն ևս Եպիփանէն առած են զայն:

Յէջ 337, Բ պարբերութիւնն յերկրուած է Յոֆնանու մարգարէի կենսագրութեան վերայ, ինչպէս յաջորդ երեք պարբերութիւնքն այլ՝ Արդիու մարգարէի կենսագրութեան վերայ, ըստ որում կը գըտնուին եպիփանեան Յաղագս սոչոր մարգարէից գրուածին մէջ: Իսկ մնացեալն՝ ըստ մեծի մասին՝ յառաջբերութիւնք են Գ Թագաւորութեան ԺԶ, ԺԷ, և ԺԸ գլուխներում աւանդուածներուն՝ նորանոր յաւերածներով: Եւ այս յաւերածներս՝ եթէ ըստ քմաց հնարուած չեն, ունին Հետաքրքրական կէտեր՝ Հնագիտական տեսակիտով: Օրինակի աղագաւ, 334 իջի վերջի պարբերութիւնն, « Եւ գնացեալ (Եղիա) եմուտ (ի) փոքրիկ այր մի » մինչև յէջ 335, « Կտրեաց ըզհացն և ցամաքեցոյց զլուրն » հակիրճ հատուածն, յորում կը նկարագրուի ագուաներու ձեռքով մարգարէիս կերակրուին, թէպէտև ունի իբրև Հիմն Գ Թագ. ԺԷ գլխու 3-8 համարները, սակայն խմբագիրն ուրիշ գունագեղ քարեր ևս շարեր է այդ պատմական Հիման վերայ, որոնք կամ գրաւոր և կամ ժողովրդական աւանդութեան բովերէն հանած կ'երևի: Այս տեսակ նորութիւններէն է մասնաւորապէս 335 իջի վերջի պարբերութիւնն, ուր ճարտար վրձինով նկարագրուած է Եղիայի տագնապն և տարակոյսը, թէ ինչպէս գտնէ Սարեփթա գիւղն և Սիդոնացի այրին՝ առ որ ուղղեալ էր յԱստուծոյ: Այս բանիս համար Աստուծմէ նշան խնդրելուն, — հիւծած և ոգեսպառ այրոյն բամբասակ զգեստուք կրկուտ քաղելուն, — Եղիայի՝ սովաւրով մարգարէին՝ անոր հանդիպելուն, և ամաչելով՝ փոխանակ հացի՝ մէկէն ի մէկ ջուր խնդրելուն, վերաբերեալ հատուածներն՝ իսկական աղերս մի միայն ունին Գ Թագ. նոյն գլխու 10-12 համարներուն հետ, բայց ամբողջութեան մէջ տարբեր յաղբերէ կը թուին յառա-

լազայի, որ եպիփանեան բնագրին ևս ծանօթ էր: Այսպէս նաև 337 իջի վերջընթեր պարբերութիւնն, ուր կ'ըսուի Աքաաբու աստուածապաշտ յիսնապետին Արդիու համար, թէ Հարիւր մարգարէներ ծածկելով այրի մի մէջ կը կերակրէր, և թէ Յեզգարելի վախէն՝ յետոյ զանոնք դեռ աւելի անմատոյց այրի մի մէջ փոխադրեց, այլովք Հանդերձ, ի սկզբան Գ թագ. ժԸ զլիսու և համարը կը յիշեցնեն մեզ. սակայն պէտք է ըսել, որ Կարմեղոս լեբան վերայ հաւաքուած Նդիայի դպրոցին վերայ յօրինուած ուրիշ արարուածներէն¹ փոխ առնուած են. վասն զի Ս. Գրոց յիշեալ տեղում աւանդուածն՝ համեմատութեամբ շատ պարզ է, և առանց այսպիսի մանրամասն յիշատակութեանց: Հուսկ ապա, 339 իջի Բ պարբերութենէն՝ մինչև 340 իջի Բ պարբերութիւնն, ուր կ'աւանդուի Բահաղու սուտ մարգարէներու Նդիայի դէմ հնարած նենգութիւնն, այսինքն են, սեղանոյն տակ ական բանալն, իրենցմէ մին այն տեղ թաղցնելն՝ ծը-

1. Առ այս զիտել կու տանք, որ արդէն ի վաղուց այս երկնակենցաղ մեծ մարգարէիս անուամբ՝ ո՛չ միայն Հրէից՝ այլ և մանկէտական ժողովրդոց և Պարսից մէջ կրօնական հաստատութիւններ կային, պէտքէս զըոյններով: Պետրոս Բեղիոս (Nouvelles de la Rep. des Lettres A. 1684 Mars, p. 71) կը պատմէ, թէ Սպահանի մէջ ինքը տեսած էր իմաստնոց պարագլուխ Կըանուոր զերվիշ Մո֊Հիւր, որ կը հաստատէր, թէ իրենք ծագումն առած էին Կարմեղոս լեռնէ և Եդիպէն. և թէ անոր նուիրուած էին նաև այլ և այլ ազօթատեղիներ: Սգամբասան՝ (Lib. 2. Archivorum V. T. p. 320) կը յիշէ եբրայեցիներէն լեզուով երկք զբերբ ևս. որոնք Նդիա մարգարէի անունը կը կրէին, և խորագրուած էին Մէշ և Փո֊ր Կոբիւր Եդիպէ և ուրիշ Եդիպէ: Իսկ Բարադուկիոս՝ (Bibl. Rabbin. T. I. p. 133, 182) հաստատէ թէ ինքն տեսած էր Վատիկանի գրատան Մէշ և Փո֊ր Եդիւ մտկադրուած երկու զբերբը միայն. մագաղաթի վերայ գրուած (A. 4833. C. 1073) որոնք կը ներկայացնէին Նդիայի այլևայլ տեսիլները և երևումները ամբողջապէս: Հրեայք՝ Նդիայի վաւերական գործեր կը համարին զասոնք, և Քիթո֊բ֊ի պատճառն ևս ցոյց կու տայ՝ բար. Անանի՝ Նդիայի ձեռքով դարձի գառուն և անոր քարոզութիւնը ըսելու արարուածներով: Փաբբիկիոս (Codex pseudepigraphus Vet. Test. Hamburg-Lipsia, 1713, p. 1086) Բարելոնի գերութենէն վերջ և Քրիստոսէ քիշ յառաջ ապրող Նդիայի մի կ'ընծայէ այդ գրութիւնները, որ կը մականուանէր Հոն Կո֊ի, այսինքն է՝ Կո֊ի: Բենիամին Տուղելիցի՝ իւր Ուղեորութեան 66րդ էջում կը խօսի Նդիայի այրին և սեղանոյն վերայ. հաւանօրէն՝ Լեդիտակիս ծանօթ ըլլալու էր վերոյիշեալ զբերբէն վերջինն ևս: Կրտսեր անուանեալ Նդարաց կարգի մեծաւորն՝ Եդիկիոս Կամբարոսն՝ 400 էջերէ բաղկացած հատոր մի կրտաարակած է ի Պարիս, յամին 1631, որուն համար կ'ըսուի, թէ կը պարունակէ Նդիայի բոլոր արարուածները, բայց ևս դժբաղդաբար զանոնք չունէի ի ձեռին՝ նայկական խմբագրութեանն ևնս բաղդաստելու համար. սակայն և այնպէս հաւանական է, որ վերջնոյս խմբագրին ծանօթ եղած և իբրև աղբիւր ծառայած ըլլան այդ տեսակ գրուոր զըոյցներ, մանաւանդ վերջ յիշուած եբրայական երեք զբերբն:

ճամբով և կրակով, որպէս զի Բազաղը կոչած ժամանակ՝ նա ի ներ-
քուտ կրակ տայ փայտակուտին, — Եղիայի մասնաւոր տեսեամբ
դոյն իմանալն, աղօթիւք թագնուած անձը մեռցնելն, և Աքաբը
այն գետնափորին մէջ մտցնելով եղածն ստուգելը՝ այնպիսի նորու-
թիւններ են, զորս չենք դտներ ոչ Գ Թագ. ԺԼ. գլխու 26—29 հա-
մարներում, և ոչ իսկ Եղիայի և Աբդիու մարգարէից կենսագրութեան
մէջ. Հետևաբար, դոքա կամ Դանիելի մարգարէութեան ԺԳ գլխու
կտուողութեամբ, — ուր Դանիէլ խայտառակելով Բելայ քուրմերու
խորդախուժիւնը՝ զանոնք սպաննել կու տայ, — Հայազգի խմբագրէն
յօրինուած են, և կամ Եղիայի վերաբերեալ մի ուրիշ անկանոն գրու-
թենէ թարգմանուած է, զորս տեսանք նախորդ իջին ստորև գրուած
ճանթութեան մէջ:

Որոգիներէս՝ (Մեկն. Մատթ. Իէ, 9), Եւսեբիոս (Պատր. Աւետ.
Թ, 30), Հերոնիմոս (Epis. CXX), Եպիփան և այլք կը յիշեն
Եղիայի անվաւեր գրուած մի, ուստի փոխ առած կը համարէին
հինք Պաւղոս առաքելոյն առ Ա Կորնթացիս գրած թղթի գլ. Բ. 9
համարը, այն է՝ «Ձոր ակն ոչ ետես», ևն, և Հերոնիմոս բոլոր ու-
ժով կը մերժէ, ընծայելով զայն Եսայեայ մարգարէութեան Կ՛ի գլ.
4 համարին. բայց այդպիսի մի հին գրուածի տիտղոսը մէջ բերած
լինելով, չենք գիտեր, թէ վերոյիշեալ երբայական երեք գրքերէն
տարբեր էր բոլորովին, թէ ընդհակառակն անոնց հետ նոյն: Աղոյփ.
Հաւնակ (տես Die Chronologie der altchristl. Litteratur, s. 571,
Leipzig. 1897) նոյնը կը համարի Եղիայի Յայտնութիւն (Apo-
calypse Eliae) կոչուած գրուածին հետ, որուն դժբաղդաբար Հայերէն
թարգմանութիւն մի ունեցած չէ Հայկական գրականութիւնն, վասն
զի Սարկաւազ վարդապետի ցանկին մէջ չենք դտներ զայն: Յամե-
նայն գէպս, Եղիայի Համառօտ Պատմութիւնն՝ Սարկաւագէն շատ վերջ
խմբագրուած է և Ոսկեփորիկներու մէջ անցուած: Դիտելով, որ
Հայաստանեայց եկեղեցին Եղիայ մարգարէին առանձին տօն հաս-
տատած չէ, և եկեղեցական մատենանք անգամ, ինչպէս օրինակի ա-
ղագաւ՝ Ճաշոցք և Յայտնաւորք անգամ չունին յիշատակ, կը հե-
տևի, թէ այդ խմբագրութիւնն մի ուրիշ առթիւ եղած ըլլայ, այս-
ինքն է՝ Գ. Թագաւորութեան գրոց մեկնութեան: Եւ իրօք այս բանս
յայտնի կը տեսնուի նոյն իսկ այդ խմբագրութեան 334, 335, 337
340 էջերէն, ուր խմբագիրն յանկարծակի խզելով պատմութեան
կապը, կը սկսի մեկնել Համառօտիւ, թէ ազուաներուն առ Եղիա
բերած Հացն և միսը՝ յԱստուծոյ կը պատրաստուէր մասնաւոր տեղ

մի, — թէ պիղծ ազուան՝ զոր Եղիա կը կերակրէր փշրանօք, Հեթանոսաց օրինակ էր, — թէ մեռած տղուն յարութիւն տալն՝ օրինակ էր Քրիստոսի, որ ի ձայն փողոյ պիտի դարձնէ հոգիները մարմնաց մէջ, — թէ Բահազու սուտ մարգարէք նախագիտութիւն չունէին, ապա թէ ոչ՝ պիտի չգային ի կօչն Եղիայի, — թէ առ Աստուած աղօթեց Եղիա՝ ուսուցանելու համար, թէ առ ո՛վ պէտք է աղօթել, և եօթն անգամ աղօթեց՝ ցուցնելու համար, թէ չէ պարտ յուսահատիլ, երբ առաջին անգամ չլինին լսելի, և այլն:

Իսկ թէ ո՛վ էր այս խմբագիրս, դժուար է որոշել: Վարդան կամ Եզնկացին իսկ կարող էին աշխարհիկ բարբառով խառն լեզու մի գործածել, ժողովրդեան մատչելի ըլլալու համար, և այսպիսի լեզուի և շարադրութեան մէկէն աւելի օրինակներ ունիք, անոնց անուամբ կեած այլ և այլ խրատական և մեկնողական գրուածներու մէջ. բայց թաթարերէն մի քանի բառեր և նորակերտ ասացուածներ՝ աւելի անոնցմէ վերջ եկող դարուց յատուկ կ'երևին: Այս միայն կրնանք ըսել ամենայն հաւանականութեամբ, թէ այդ անծանօթ գրչէն եւ լած է նաև անմիջապէս յաջորդ գրուածն. այն է՝ Քարոզ Յովնանու Վարդաբէի: Անոր յայտնի ապացոյց են, նախ որ, յէջ 337, Եղիայի ձեռքով ողբացած մանկան համար կ'ըսուի, թէ « Յունան մարգարէն էր մանուկն այն զոր յարոյց Եղիա », և այս պատճառաւ իսկ՝ Յովնանու մարգարէին նուիրուած գրութեան մէջ՝ այլ ևս անոր ազգաբանութեան մասին խօսք չըններ: Այս տեղիս հաւանօրէն ուրիշ աղբիւրէ աւնուած է, ինչպէս անոր « Ասեն թէ » նախընթաց յայտարարութենէն կը տեսնուի. բայց նա դիտմամբ մէջ բերած է գայն Յովնանու քարոզին անցնելու համար: Բ. Այս քարոզն առ Նինուէացիս՝ գրուած է մի և նոյն գրչագրին, այն է յամի Տեառն 1623 գրուած Ի՛ր Ոսկեփորիկի մէջ, անմիջապէս զկնի Պատմութեան Եղիայի: Գ. Մի և նոյն աշխարհիկ բարբառոյ խառնուրդք և նման բացատրութիւնք կը գտնուին նաև այս տեղ:


Յովնանու քարոզն՝ իսկութեամբ նոյն մարգարէի անուամբ ընդունուած մարգարէութեան վերայ շինուած է, յորմէ յաճախ ամբողջ հատուածներ ևս մէջ կը բերուին, հին թարգմանութեամբ. հետևաբար, առանձին ուսումնասիրութեան հարկ չկայ: Հանդերձ այսու՝ ուշադրութեան արժանի են, յէջ 343, Ա պարբերութիւնն, ուր՝ Նինուէ քաղաքին իբրև հիմնադիր՝ Նինոսի մասին կ'աւանդուի, թէ իւր կնոջ Շամիրամայ անյապ պոռնկութենէն վախնալով՝ ձգեց Ասորեստանի թագաւորութիւնը և փախաւ յԵլլադա, թէ Շամիրամ թա-

գաւորեաց ամս Հնգետասան, և յետոյ սպանուեցաւ իր որդւոց ձեռքով: Յէջ 345, Բ պարբերութիւնն, ուր կը նկարագրուի զՅովնան կլլող ծովային վիշապին ենթածովային ճանապարհորդութիւնն, բնելով. « Եւ առեալ վիշապն զՅունան՝ էջ ի խորս երկրի. և պատեաց լայնարձն Խափշկաց, և Հնդկաց գետովն՝ եբեր ի Պարսից ծովն. և Պարսից ծովն՝ եհան ի գետն Սարանկաս յականթարթի, (որ) ճգետուսն առար ձանապարհ եր հետեակի » . . . և երեք օրէն վերջ Հասնելով Նինուէի դիմաց՝ կը թքնէ զՅովնան ի ցամաք, և ինքն կը դառնայ իւր տեղ: Յէջ 348, վերջի պարբերութիւնն, ուր կ'ըսուի թէ Յովնան քարոթենէն վերջ 6 ամիս մնացած ըլլայ ի Նինուէ, և ապա բնակլաց գաղթել ուզելն յերկիրն Իսրայելի, մարգարէի կողմէն Հանած արգելքներն և իր մօր հետ միայնակ մեկնելն, ճանապարհին մէջ Յովնանու մօր մեռնելն և Ռոնքերայ կաղնւոյն մօտ թաղուելն: Այս գրուածիս խմբագրութեան պատեհն և պարագայք ևս նոյն եղած են: Այս բանս լաւ կը տեսնուի քարոզէն վերջ խմբագրողի կողմէն եղած Յովնանու և Քրիստոսի ընդարձակ զուգակշիռէն, զոր հրատարակելն դուրս թողուցեր է:



Վ Ա Ս Ն Ե Ր Ե Մ Ի Ա Յ Ի Մ Ա Ր Գ Ա Ր Է Ի

Ի Գ Ր Ո Ց Ն Բ Ա Ր Ո Ւ Ք Ա Ց



Սյուս խորագիրս՝ թէպէտ և այնքան նորութիւն չի հնչեցնէր մեր լսելեաց մէջ՝ իր ներքև կեցող գրուածին համեմատ, բայց որովհետև Հիև և Նոր Ասիանեաց քանգարանին մէջ, յէջ 349-357, առաջին տեղին գրուած է նոյնանիւթ ուրիշ երկու գրուածոց նկատմամբ, կազմելով ժեզլուխը, ուստի մենք ևս նոյնը պահեցինք անփոփոխ: Սակայն պէտք եմ ըսել, թէ այս խորագիրը կրող գրութիւնն կը գտնուի մեր մատենադարանի հնագոյն գրչագրաց միոյն մէջ, որ գրուած է ի թու. Հայ. ՈԿԹ = (1220), որուն նոյնպէս կը համաձայնի¹ նաև Էջմիածնի մատենադարանի թիւ 920 բոլորգիր Տօնակաւն ևս, գրեալ ի թու. ՁԵ = 1456: Վերջինս՝ թանկագարանի հրատարակիչն անուանած է Բ օրինակ²: Կ. վարդապետ Տէր-Մկրտչեան, որ առաջին անգամ հրատարակեց զայս 1895 ամի Արարատ ամսագրի Գ թուոյն մէջ, առանձին յաւելուածով (տեղեկութիւնքը տես յէջ 81) կը ծանուցանէ, թէ կը գտնուի նոյնպէս

1. Այսինքն է՝ Յելարայ Երեմիայի Դարգարէի է քրքոյ Բարսեղայ: Յիշատակ բանցոյց կու տայ մեզ, թէ Յայտնաւորաց մէջ անցած էր այդ և կը կարդացուէր մարգարէիս տօնին օր:

2. Այս տեղ աւելորդ չէ ծանուցանել, որ Մխիթարեան հրատարակչին թէ ևս և թէ յառաջարանի ժՁ Իջուժ Ա, Բ, Գ օրինակ բացատրութեամբն՝ առանց բացատրութեան գրչագիրներ կը հասկըցուին ընդհանրապէս, և ոչ թէ այս ինչ կամ այն խորագրի վերաբերեալ պատմութիւնները. իսկ Գ օրինակի համար, թէ « Ունէր Երեմիայի պատմութիւնն նովին պարունակութեամբ և այլազգ շարադրութեամբ », յայտնի չէ, թէ յիշեալ երկը տեսակներէն որուն նկատմամբ է: Ուստի մենք բաց

Մխիթ. Այրիվանեցոյ նշանաւոր Ճատընտրի մէջ, — որ էջմիածնի մայր ցուցակին համեմատ է թիւ 926, — բայց բոլորովին տարբեր խորագրով, այսինքն է՝ Ողորջ Երեմիայի՝ ի Բաքերուն: Արդ, խորագիրս եթէ իրօք Մխիթարայ գրչէն ևս ելած համարուի, սակայն և այնպէս կամ Ողոր բառն անճիշդ կերպով գրուած է հոս, փոխանակ Պատմոսրեան և կամ Յաղագսի: Ենթադրութիւնս կը հաստատէ Մխիթար Այրիվանեցի ինքնին, որ իւր Ժամանակագրոսրեան մէջ (տես յօրինակն Պետերբուրգի) յառաջ բերելով այդ տիտղոսը, կը գրէ՝ փոխանակ Ողոր՝ վասն Երեմիայ ի Բաքերուն:

Տէր — Մկրտչեանի՝ յիշեալ թերթի Յաւելուածին 3-8 էջերում՝ հրատարակած երկրորդ տեսակն, որ ապա արտագրութեամբ և սրբագրութիւններով կրկին լոյս տեսաւ. Հիւն և. նոր նախնեաց քանգարանիս մէջ, — յէջ 364-377, — ի Ս. Ղազար, խորագրուած է ի Մնացորդաց գրոց ॥. գոր գտի ի գիրս Հոռոմոց ॥: Այս նկատմամբ՝ ի ստորև Արարատի 3րդ իջի գրուած ծանօթութեան մէջ յոյժ շահագրգիռ տեղեկութիւն մի կու տայ մեզ Տէր — Մկրտչեան. այսինքն թէ այս գրուածս կը զանուի ի թու. Հայ. 88 գրուած ճառընտրի մի մէջ ևս, որ ի ժամ տպագրութեան ծառայած է թիւ 920 գրչագրի մի քանի թերութիւններն ուղղելու: Իսկ մեր մատենադարանի թիւ 1441 գրչագիրն, այն է ԻՊ ճառընտիրն, մի ուրիշ խորագրի ներքեւ կը ներկայացնէ Երեմիայի պատմութիւնը, որ գլխովին տարբեր կ'երևի նախընթացներէն. այսինքն է՝ Պատմոսրիս Սրբոյն Երեմիայի մարգարէի և աշակերտաց նորա Բաքերոսայ և Արղանեղոսայ:

Ուրեմն այս տեղ կը ներկայանայ մեզ Երեմիայի պատմութիւնն 3-4 իրարմէ տարբեր խորագիրներով, որոց վերջինն՝ ամենէն աւելի ընդարձակ պարագաներ ցոյց կու տայ մեզ, և իրօք այդ խորագրի ներքեւ եղած մարմինն իսկ՝ մեծագոյն ըլլալու էր երբեմն և ըստ իւրիք կատարեալ քան միւսները, իբրու այն՝ թէ անոնց միացումն եղած ըլլայ: Հնագոյն գրչագրի կամ ներկայացուցչի մի գոյութիւնն՝ աւելի ևս պիտի յաւելոյր անոր արժէքը, սակայն մեզ դեռ ծանօթ չէ այն, և այդ իսկ պատճառաւ խնդրոյ նիւթ է:

գտաւով զայն՝ առաջին տեսակին համաձայն գտանք, բայց ի խորագրէն, որ ի Մնացորդաց քոջ խորագրին կը նմանի: Շարադրութիւնն իսկ հրատարակչի կարծածին չափ տարբեր չէ յառաջնոյն, ըստ որում կը ներկայանայ մեզ այս հնագոյն օրինակին, այն է ԺՁ Հաւաքման մէջ: Մի քանի տեղ դաւառական բառեր, օրինակ իմ, քիտոյ փոխանակ կ'ընդի, գրուած են, որք ըստ իս ընդօրինակողէն իսկ կարող են սարգուած լինել: Առաջնոյն վերջի երկու պարբերութիւնքն ևս ՚ի օրինակին մէջ կը պակսին:

Այժմ բնականաբար այս հարցերս կ'ելնեն մեզ ընդառաջ, այսինքն թէ, Ա. յիշեալ խորագիրներէն, — հետևաբար և անոնց ներքև պարունակուած գրուածներէն, — որն արդեօք աւելի հին է, որ և ծառայած ըլլայ միւսներուն իբրև աղբիւր. Բ. թէ դժբա առ հասարակ ծագումով զուտ հայկական են, թէ ընդհակառակն օտար բնագրերէ թարգմանուած:

Առաջին հարցի նկատմամբ դիտել կու տանք, թէ Սարկաւազայ ցանկի աւանդապահն՝ Մխիթար Այրիվանեցի՝ խօսելով հին Կտակի կանոնական և անկանոն գրոց կարգաւորութեան մասին, կը յիշէ « Մնացորդքն՝ Գ » և « Վասն Երեմիայ ի Բարելոն »: Գրոցս վերջինն՝ անտարակոյս նոյն է Էջմիածնի թիւ 926 գրչագրի, այն է՝ Այրիվանեցու նշանաւոր ճառընտրի մէջ խորագրուածին հետ, զոր քիչ յառաջ ուղղեցինք. իսկ առաջինն, որ յիշուած է նոյնպէս ի շարս անկանոն գրոց, ուրիշ բան չէ, բայց եթէ Արարատի մարտ ամսաթուոյն և Հիմ և նոր նախնեաց քանգարանի 364-377 էջերում՝ ի Մնացորդաց գրոց խորագրուածն: Այս բանս անկէց իսկ յայտնի է, զի Այրիվանեցին ասկէց յառաջ կը յիշէ որոշակի կանոնական գրոց մէջ Ա և Բ Մնացորդքն. որով այլ ևս չենք տարակուսիր¹, որ Դանիելէն անմիջապէս վերջ յիշած Երբորդ Մնացորդովքն՝ թէ՛ Այրիվանեցին և թէ՛ Սարկաւազ վարդապետն՝ կը հասկընային ուղղակի մեր անկանոն գիրքը, որ կը գտնուի նաև յամի Տեսառն 901 գրուած Էջմիածնի մէկ ճառընտրի մէջ, և որոյ մասին, ըստ վերոյիշեալ վկայութեան Տէր-Մկրտչեանի, դժբաղդաբար պէտք եղած ձեռագրական տեղեկութիւններ տրուած չեն: Ուստի այս կրկին հնազոյն յիշա-

1. Վասն զի եղան ոմանք, որք Բրտսէի և Թէոզ. Չանի նեա կարծեցին թէ Այրիվանեցուց ցանկին մէջ Յօբայ, Առակաց, Դանիելի, Մնացորդաց, եւն, գրոց վերջ գրուած թուահամարներն՝ ուրիշ բան չեն նշանակեր, բայց եթէ այն օրերը: զորս անցուց Մխիթար անոնցմէ Իւրաքանչիւրը կամ բաղաձայնու և կամ ընդօրէնակելու համար: Այսպէս կարծեցին, հաստատուելով ժամանակագրի այս խօսքուն վերայ, թէ « Եւ զրեցան յինէն, ի Տէր Մխիթար վարդապետս պատմագրէ ի մի տուի յառաջ ՃՀ »: Բացարձակ սխալ է Մխիթարայ միանգամ ընդ միշտ և հաւաքաբան նշանակուած թիւերը՝ վերստին և բաժանաբար պատշաճեցնել՝ վերջիշեալ մի քանի գրոց վերջ տարբեր նպատակաւ գրուած տառաթիւերուն: Ասոր տեսելութիւնն անկէց իսկ կը տեսնուի, զի օրինակի ազգաւ, թէ՛ Մահ Ժաբրէի: անվաւեր գրուածին և թէ Եզեկիելի մարգարէութեան վերջ ի՞՞ նշանակուած են, մինչդեռ առաջինն վերջնոյս քառորդ մասն հազիւ թէ կը կազմէ, հետևաբար չէր կերտար նոյնչափ օրեր պահանջել: Ուրեմն այս թիւերս ուրիշ բան կը նշանակեն քան թէ օրեր. այսինքն է՝ կամ այն գրոց էական բաժանումը և կամ Սարկաւազայ ցանկին մէջ բռնած քանիւրորդ կարգը:

տակարանաց վերայ հաստատուած՝ այժմ կարեմք վստահութեամբ եզրակացնել, թէ վլասն Երեմիայ ի Բաբելոն, և ի Մնացորդաց գրոց խորագրուած երկու գրութիւններն՝ ծանօթ էին ոչ միայն ժԱ դարուն Յարկաւագ վարդապետին, այլ նոյն իսկ 901ին գրուած ճառընտրի հաւաքողին. հետեւաբար, միւսներէն աւելի հին և իբրև աւելի հեղինակաւոր գրուածներ յարգուած, և Մխիթար Այրիվանցին նոյն իսկ այդ պատճառաւ հաւաքեց զասոնք « ի մի տուփ », այսինքն է՝ Ս. Գրոց առանձին օրինակի մի մէջ, ի շարս կանոնական և անկանոն գրուածոց: Որքան ցաւալի է Մխիթարայ ձեռագր և քրտամբք՝ 170 օրուան մէջ գրուած այդպիսի մի անգին զանձի խրուստը. անոր վերայայտնութեան անուշակ յոյսն միայն կրնայ մեզմը հնասիրաց ցաւը. այո՛, կը յուսանք դեռ, թէ անկիւն մի թագնուած ըլլայ այն, քան թէ Կոնստսի գիշատիչ ժանիքներուն բոլորովին զոհ եղած: Իսկ մնացած երկու գրուածներն, այսինքն են՝ վլասն Երեմիայի մարգարէի ի գրոցն Բարոաքայ, և միւսն՝ Պատմոտքիս սրբոյն Երեմիայ մարգարէի և աշակերտաց նորա Բարոաքայ և Արդամեկերայ խորագրուած՝ զոգցես իմն անծանօթ կ'երևին զէթ Սարկաւագին և Այրիվանեցւոյն:

Այս միակ երևութէս կարելիք է արդեօք հետևցնել, թէ դժբա՛ աւաջիներէն իբրև անկախ գրուածներ՝ մինչև Այրիվանեցւոյ ժամանակ իսկ դեռ գոյութիւն չունէին, այլ անկէց վերջ գրուած կամ թարգմանուած ըլլան: Ոչ բնաւ. վասն զի Բարոաքն, — ինչպէս դիտեցինք, — նախ կը գտնուի մեր յամին 1220 գրուած ժՁ Հաւաքման մէջ, որ Այրիվանեցւոյ գրեթէ ժամանակակից է: Բ. Տէր-Մկրտչեանի ստածին Համեմատ, Բարոաքն՝ նոյն է իսկապէս Այրիվանեցւոյ ճառընտրի մէջ Ողբք (վասն) Երեմիայ ի Բաբելոն խորագրուածին հետ. խորագիրն միայն կը տարբերի անկէ, և իրօք մենք ևս բաղդատելով իրարու հետ՝ նոյնպէս գտանք: Ի բաց առեալ երկուստեք աչքի զարնող մեծ և փոքր տարբերութիւններն, ընդհանուր կերպով երկուքն ևս իրարու այնպէս համաձայն կ'ընթանան, իբր թէ ըլլային հասարակաց գրուածի մի վերայ տարբեր ժամանակներու և տարբեր լեզուով կատարուած կրկին խմբագրութեանց թարգմանութիւններ: Այո՛, այս խորագրաց տարբերութիւնքն իսկ դժուար է որ բոլորովին ընդօրինակողաց քմահաճոյքին արդիւնք եղած լինին, այլ պէտք է վերագրել այն բնագիրներուն, որոց վրայէն թարգմանուած են և կամ ազատ կերպով խմբագրուած:

Կ. Վ. Տէր-Մկրտչեան՝ Բարոաքայ և Մնացորդաց Հրատարակու-

Թեան առթիւ՝ Համառօտ և Հարեանցի տեսութիւն մ'այլ ըրաւ 1895 ամի Արարատ ամսագրի Մարտի պրակին մէջ, յէջ 81, այդ գրոց որպիսութեան և ծագման մասին: Հրատարակչի կարծիքով՝ գրուածոց առաջինը « յիշուում է միայն Նիկեփորի և Աթանասի անուամբ մնացած ցուցակների մէջ, և դեռ մինչև այժմ ոչ մի տեղ յայտնի և տպագրուած չէ եղել »: Բայց անհաւանական չի Համարիր, որ նա նոյն իսկ նախադրիստոսեան ժամանակներում գրուած լինի՝ Հրէից մէջ, և յետոյ քրիստոնէից ձեռքով փոփոխութեան ենթարկուած: Իսկ երկրորդն՝ Թարգմանուած կը Համարի Սարգիսազ վարդապետի ձեռքով « ի Հռոմոց գրոց » (ինչպէս ունի խորագիրն), որ յունարենի մէջ նկատուել է իբրև շարունակոչիան Մնացորդաց (Բ) գրքի, պարզ այն պատճառաւ, որովհետև Հին Կտակարանի մէջ Մնացորդաց գիրքն կը վերջանայ այն տեղ, ուր Երեմիայի գուշակութիւնն՝ գերեզարծի մասին կը կատարուի: Կիրոսի ձեռքով: Վերջապէս, բառս Մնացորդ՝ կարող էր ի սկզբան իբրև ածական գործածուած լինել և յետոյ մեզ ծանօթ գրոց պատշաճեցուցած: Բարոնըն, այսինքն է՝ Վասն Երեմիայ մարգարէի ի գրոցն. Բարոնըն խորագրուածն, Համեմատութեամբ Մնացորդացին՝ աւելի նախնական տիպ ունի: Վերջինս՝ իբրև շարունակութիւն Համարուել է անոր, յունարէն բնագրի մէջ, և այլն:

Սակայն մեր գիտցածին Համեմատ՝ Բարոնըն ընծայուած սյգ գրուածն՝ Մնացորդացէն բոլորովին անկախ մի բան չէ. և թէ յունարէն և եթովպարէն բնագրերն ևս կան, և Տէր-Մկրտչեանէն տարիներ յառաջ արդէն մի քանի տպագրութիւններով իսկ, յայլևայլ լեզուս, գիտնոց քաջածանօթ: Յունարէնն Հրատարակեց յամին 1868 Ամբրոսեան գրատան վերատեսուչ Հ. Կերիանի¹, Բրայդէնի արքունի գրատան կատարեալ ձեռագրին (A.F. IX, 31) վրայէն, որ գրուած է ԺՁ դարուն, նշանակելով ի ստորև՝ յամին 1609 ի Վենետիկ հրատարակուած և Ամբրոսեան գրատան մէջ նոր գտած՝ երկու յոյն Յայմաուուրաց տարբերութիւններն ևս: Ասկից աւելի նշանաւոր է յամին 1889 Յ. Ռէնդէլ Հառուսի ձեռքով և բազմաթիւ գրչագրաց բաղդատութիւններով եղած Հրատարակութիւնն²: Իսկ եթովպարէնը առաջին անգամ Հրատարակեց Ա. Դիլման³: Հառնակ⁴ ուրիշ հրա-

1. *Stu Monumenta sacra et profana*. Tom. V, Fasci. I, p. 11-24, Mediolani 1868.

2. *Stu. The Rest of the Words of Baruche*. London 1889.

3. *Stu Chrestomathia aetiopica*. Lipsiae 1886.

4. *Stu Geschichte der Altkristl. Litter.* Leipzig 1893, 2. Hälfte. s. 812.

տարակուսութիւններ¹ ևս եղած կը յիշէ գերմաներէն լեզուով, առանց նշանակելու սակայն՝ թէ ինչ բնագրէ։ Սլաւերէնը հրատարակեց Նովակովիչ, յամին 1886 յԱզգամ, « Ստարիևի » ժԸ հատորին մէջ (էջ 203, 205-209), և գերմաներէն թարգմանութիւնն ասոր վրայէն եղած է։ Զարմանք է, որ Տէր-Մկրտչեան այս հրատարակութիւններէս և ոչ մին ճանչցած է. իսկ եթէ ճանաչէր և բաղդատէր, այն ժամանակ հայերէնը՝ բուրգովին տարբեր մի գրութիւն պիտի չհամարէր, և ոչ իսկ նախաքրիստոսեան, վասն զի Հառնակ² կը տարակուսի մինչև անգամ, որ Քրիստոսի թուականին Բ կամ Գ դարում գրուած ըլլայ. իսկ Հառուս, յիշեալ գրութեան մէջ, և Շիւռէր (տես Theol. lit. Ztg. 1890 Col. 83) Քրիստոսի 136 ամէն մնացած քրիստոնէական երկասիրութիւն մի կը համարին զայն։

Մնացորդացը՝ Բարուքին իբրև շարունակութիւն չի կրնար համարուիլ այն պատճառաւ, զոր ցոյց տալ ուզած է Տէր-Մկրտչեան. վասն զի երկուքն ևս Երուսաղեմի պաշարման դէպքով կը սկսին՝ նարուզողո՞ոնսորայ ձեռքով, նպատակ ունելով պատմելու գերութեան ժամանակամիջոցին հանդիպած եղելութիւնքը, և Հրէից գերեղաթձին և Երեմիայի քարկոծմամբը կ'աւարտին. և թէ առաջինը՝ ըստ աւելի ընդարձակ է և հեռի շարունակութիւն ըլլալէ։ Գրուածիս՝ Սարկաւազ վարդապետի ձեռքով թարգմանուած լինելն՝ եթէ իբրև ստոյգ համարուի, այն ժամանակ անհասկանալի կը մնայ մեզ համար Տէր-Մկրտչեանի քիչ յետոյ յայտնած այն կարծիքը, թէ « Թերևս այդ Չ կտորները (այսինքն է Բարուքայ և Մնացորդաց) իբր մօտ գտել է Այրիվանեցին՝ այն յունարէն օրինակի մէջ, որից իր բարգմանութիւնն արեւ է »։ Ինչ հարկ կար Այրիվանեցոյն նորէն թարգմանել զանոնք՝ իւր ճառընտրի մէջ գետեղելու համար, եթէ սուղիւ անոնց Սարկաւազէն արդէն թարգմանուած ըլլալը գիտէր Միթար։ Ո՛ւր թողունք որ Միթար « գրեցան » կ'ըսէ, և ոչ թէ թարգմանեցան։

Արդ, ինչպէս հայերէն խորագրոց՝ այսպէս և անոնց ներքև եղած գրուածոց ծագման վերաբերեալ գաղտնիքը՝ յոյն և եթովպական բնագրաց միջոցով միայն կարելի է յաջող կերպով լուծել, ըստ իս։

1. Զես Klostermann a. a. O. s. 32 = Cod. Laur. Plut. IV. 5. — Ph. Meyer, *Jahrb. fur protest. Theol.* 1886, s. 373. Bonwetsch, *Nachrichten der. K. G. der Wissensch.* Göttingen 1896. — Prätorius, *Zeitsch. fur Wissen. Theol.* 1872, s. 230 f. — König, *Studien und Kritik*, 1877, s. 318 f.

2. Զես *Die Chronol. der Altchr. Litteratur*, s. 566, Leipzig 1897.

Նախ և յառաջ, Տէր-Մկրտչեանի և վենետիկեան հրատարակութեան ի Մնացորդաց գրոց խորագիրն՝ հայ թարգմանչէն և ըստ քմաց գրուած է¹, և ոչ թէ յոյն բնագրին յատուկ՝ յորմէ թարգմանած է, վասն զի յոյն ունի ընդհակառակն. Τὰ Παραλειπόμενα Ἱερεμιοῦ τοῦ προφήτου. Հետևաբար, երբեմն էր և պէտք է ըստ այսմ վերակազմել զհայն. Մնացորդք² Երեմիայ մարգարեի: Եթովպական թարգմանութիւնն, որ առանց երկբայութեան յոյն բնագրի վրայէն կատարուած է նոյնպէս, կը ներկայանայ մեզ Հետևեալ խորագրով. Մնացորդք քանիցն Բարոտքայ վաշերահանք, || որք հային ի ժամանակն գերտարեան ի Բարեդուն ||: Ինչպէս կը տեսնեն ընթերցողք, եթովպական խորագիրս աւելի ընդարձակ է քան զհայն և պոյնրայո՛, նորա առաջին մասն կը պարունակէ Մնացորդքն Երեմիայ կամ Բարոտքայ, իսկ երկրորդն՝ Միւթար Այրիվանեցւոյ ճառընտրի և սարկաւագեան ցանկի՝ վասն Երեմիայ ի Բարեդուն:

Արդեօք ասորի թարգմանիչն ըստ քմաց այդ երկու տխողոսները միացուցած է իրարու. Հետ, թէ ստուգիւ այդպէս գտած էր իւր թարգմանած Հինաւուրց բնագրին կամ մի ուրիշի մէջ: Առաջին կէտը չէ կարելի ընդունել իբրև ճշմարիտ, դիտելով նախ թէ ամենադժուար է, որ այսպիսի թարգմանութիւն մի, որ ըստ որոշակի յայտարարութեան Դիլմանի և Ն. Կերիանիի, ըստ ամենայնի համաձայն և հաւատարիմ՝ կ'ընթանայ յոյն բնագրի, — ի բաց առեալ ի հարկէ մի քանի աննշան տարբերութիւններն, որոնք երկար դարերու ընթացքում և ընդօրինակութեանց առթիւ կարող էին սպրդիլ ի ներքս, — խորագրի մասին անհաւատարիմ գտնուէր: Իսկ թէ իրօք անհաւատարմութեամբ և ըստ կամս վարուած չէ ասորին՝ նոյնպէս յոյն բնագրի խորագրին հետ, յայտնի առհաւատչեայք են Սարկաւագայ ցանկին և Այրիվանեցւոյ քով պահուած խորագրերն, որոնք եթովպականին՝ փոքր ինչ տարբերութեամբ՝ կը համաձայնին: Ուստի վերջին կէտը կը մնայ ընդունել իբրև ճշմարիտ:

Այժմ կը մնայ գիտնալ, թէ ի՞նչ հիման վերայ եթովպական թարգմանութիւնն յիշեալ երկու տխողոսներն ի միասին մէջ բերելով, Գ. Մնացորդքը՝ փոխանակ Երեմիայ՝ Բարուքին ընծայած է:

1. Չայս կը հաստատեն յաջորդ խօսքերն, այսինքն թէ, « զոր դառի ի գրոց Հոռոմոց »: Բ. Սարկաւագայ ցանկի մէջ իսկ Մնացորդք կը գրուի, որ կ'ենթադրէ նաև ըստս՝ Բարոտայ:

2. Այս տեղ պէտք է գիտել, որ խորագիրս համառոտուած է, նապոյն բնագրին ունենալու էր եթովպականի նման բառերն էս:

և թէ յոյնն՝ ընդհակառակն Բարուքը դուրս թողլով՝ անոր տեղ Երեմիայն փոխանակած է :

Գիտելով որ անուշա Մնացորդք՝ չէ կարող Բ Մնացորդէն ուղղակի յառաջ եկած լինել՝ իբրև շարունակութիւն, վասն զի այդ կանոնական զրբքին մէջ արդէն պատմուած է համառօտիւ Հրէից գերութիւնն ի Բարելոն, տաճարի կործանումն՝ այլովք հանդերձ, այսպէս նաև Կիրոսի ձեռքով եղած գերեզարձն և տաճարի վերաշինութիւնն. Հեռաբար, թէ յոյն բնագրին և թէ եթովպական և հայկական թարգմանութեանց մէջ Մնացորդք բառով կը հասկցուին ուղղակի Երեմիայի և անոր աշակերտաց վերաբերել այն մնացած գործերն և պատահարներն, որոնք հանդիպեցան յիշեալ գերութենէն սկսեալ մինչև գերեզարձը, և Բ Մնացորդաց մէջ չգրուեցան, կամ լաւ ևս, այս անկանոն գրուածիս մէջ միայն պահուած մնացին: Յայտնի է դարձեալ, թէ Բարուք եղած չէ Հեղինակ կամ գրիչ Մնացորդաց Ա և Բ զրբերուն, վասն զի նոցա մէջ պատմուած դէպքերն և պատմագրողքն՝ Բարուքէն շատ և շատ տարիներ յառաջ ապրած են: Այո՛, կարող էր, ըստ ինքեան, Բարուք գէթ իւր ժամանակի պատահարներն առանձինն ի գրի առած լինել, որ Ս. Գրոց մէջ անցած շըլլայ, ինչպէս ուրիշ սրբազան Հեղինակաց շատերուն. սակայն մեր ձեռքը հասած գրութիւնն, որուն մէջ հրէական առասպելներու հետ կը վրիտան նաև քրիստոնէական յաւելուածներ, ոչ ոք ի զիտնականաց կարէ ընդունել իբրև հարազատ գործ Բարուքայ, բաց ի եթովպացի թարգմանչէն: Ուրեմն ի՞նչ հիման վերայ Բարուքին վերագրեց զայն՝ անձանօթ Հեղինակն. թերևս Բարուքայ կանոնական թղթին հետ ունեցած մէկ հեռաւոր աղերսի՞ն համար: Ոչ բնաւ, այլ այն պատճառաւ՝ որ այդ գրութեան իբրև գլխաւոր աղբիւր և հիմն ծառայած է Բարուքայ ընծայուած մի ուրիշ անվուեր՝ բայց աւելի հին՝ գրութիւն, որ պահուած է ասորի թարգմանութեամբ, և ըստ հրատարակութեան Հ. Կերիանեայ՝ Բարուքայ որդոյն Ներեայ, կամ Տեպի Բարուքայ: Այս գրուածս ձանօթ էր եթովպացի խմբագրին, բոցէ և յոյն թարգմանչին Մնացորդաց Երեմիայ. բայց ամենէն աւելի օգտուած է անկէ հայերէն առաջին խմբագրութեան, այն է վասն Երեմիայ մարգարէի՝ ի գրոցն Բարուքայ խորագրուածի հեղինակն: Այս պատճառաւ է, որ այս հայկական խմբագրութիւնս՝ այնքան կը տարբերի միւսներէն. և որ զարմանալին է՝ սա այդ նշանաւոր տարբերութիւններով հանդերձ՝ յաճախ շարաբանութեան նոյնութիւններ ևս ցոյց կու տայ միւսներուն հետ, որ կարծէք թէ դի-

պուածէն աւելի Հին և Հասարակաց Թարգմանութեան մ'արդիւնք լինել կ'երևի: Պատմութիւնն Երեւիայի մարգարէին, ևն, չի կրնար լինել իբրև ներկայացուցիչ այսպիսի մի թարգմանութեան, վասն զի նա՝ միև երկուքէն միոյն վերայ խմբագրուած կ'երևի, եթէ անոր մէջ երեցած ռամկօրէն բառերէն և բացատրութիւններէն ուզուի դատել. Հետևաբար, նախնութիւնը առաջնոյն պէտք է տալ, այնու մանաւանդ, որ սա՝ յաջորդ երկուքէն ևս Համառօտ է, և սեմական բնագրի մը վերայ կատարուած, ըստ որում կը Հաստատեն Բարուքայ տեսիլներէն եղած բանաբաղութիւններն: Այսպիսի բանաբաղութիւններ և Τὰ Παραλειπομένα Ἱεργημειοῦ τοῦ προφήτου գրուածէն ունեցած տարբերութիւնները յետոյ ցոյց պիտի տանք. այժմ տեսնենք նախ թէ Հայերէն Մնացորդին ինչ Համեմատութիւն ունի յունարէն և եթովպական բնագրաց հետ, որով միայնգամայն պիտի յայտնուի երկուքին Հասարակ սեմական Հին բնագրի որպիսութիւնն, որուն ես՝ իբրև ազգակից ներկայացուցիչ կը Համարիմ վասն Երեւիայ մարգարէի, ևն, խմբագրութիւնը: Ահաւասիկ մեր ծրարներն, որուն Համեմատ պիտի կատարուին քննութիւնք:

Դեննք այս տեղ Համեմատութիւն մի Հայ. Մնացորդաց, անոր յոյն բնագրի և վասն Երեւիայ մարգարէի սկզբան և վերջաւորութեան Հատուածներով, որպէս զի ամէն ոք ակներև տեսնէ ըսածնու ճշմարտութիւնը, այսինքն թէ իրարմէ բոլորովին տարբեր գրուածներ չեն դաքա, ինչպէս ենթադրեցին ոմանք: Հայկական խմբագրութեանց այն բառերն և բացատրութիւնքը միայն կը նօսրագրենք, որոնք չարաբանութեամբ նոյն են: Եթովպականը հարկ չհամարեցանք դնել առնթեր, զի, — ինչպէս ըսուեցաւ արդէն, — հաւատարիմ թարգմանութիւն է յունէն, և խնդիր չի վերցնել: Հառուի կատարեալ և նորագոյն հրատարակութիւնը չունելով ի ձեռին, Հ. Կերիանիի յիշեալ հրատարակութեան Համաձայն պիտի կոչուին տեղիք՝ աստ և ի յաջորդն:

Ի ՄՆԱՅ ԳՐ. ΤΑ ΠΑΡΑΛΕΙΠΟΜΕΝΑ ՎԱՄՆ ԵՐԵՄ. ՄԴԳ.

<p>Սկիզբ. « Եւ եղև յորժամ գերեցան որդիքն Իսրայելի ի ձեռս Թագաւորին Քաղդէացոց, խօսեցաւ Աս-</p>	<p>I, 1 Ἐγένετο, θὴν-κα ἡχμαλωτεύθησαν οἱ υἱοὶ Ἰσραὴλ ἀπὸ τοῦ βασιλέως τῶν Χαλδαίων, ἐλάλησεν δὲ Θεὸς</p>	<p>« Գործամ Հանդեր ձեալ էին Քաղդէացիքն պաշարել գերուսաղէմ, խօսեցաւ Տէր ընդ Երեւիայի, և ա-</p>
---	---	---

լի, զիս քարկոծ առնէք և համարիք երկ իրեմիաւ նւ, ահա իրեմիա կանգնեալ կայ ի միջի ձերոս: Յայնժամ տեսիւն զնա. ընթացան ի վերայ նորա բազում քարիւ, և կատարեցաւ կանք նոցա: Իւ եկին Բարուք և Արամելէք, և բարեցին զնա, և առին զքարն և եղին ի վերայ գերեզմանին, և գրեցին ի վերայ. Սա է օրհնակն իրեմիայի:

Իւ զայլ խօսքն Երեմիայի և զօրութիւն մնացորդաց բանիս՝ չէ գրեալ ի թղթի Բարուքայ: || Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն || :

բօլեւէ մե, νομίζοντες ծու էγώ Իερεմίας. Իծօս Իερεմίας են մէսփ ծմօն Ետատաւ. 31. Ձճ ծճ էԻծօն աւտօն, Եծճէօճ Եծրաւոն քրօճ աւտօն աւտօն քրօճ միա, ղիւնցիկ առ հասարակ ի վերայ նորա, քարկոծեցին զնա: Իւ կատարեցաւ ի նոցանէ, [որ օր մի էր Մայիս ամսոյ]: Իւ բարեցին զնա Բարուք և Արամելէք, և կանգնեցին զվէմն, Թէ Այս վէմն օգնական եղև Երեմիայի*, և քարկոծեցաւ ընդ նմա»: [Եւ նեփթաղիմ Թաւառն Աղեքսանդրացի տարաւ զոս կերսն Երեմիայի ի քաղաքն Աղեքսանդրիա պատուով, և Թաղեաց մի մի ոսկր շուրջ զպարսպոյն քաղաքին. և սատակեցան զնաս արարողքն. և փաստ մատուցին տեսանողքն Աստուծոյ. ամէն »]:

Օտճօճ էօտին ծ Լիծօճ ծ Բօղիծօճ տօճ Իերեմիօս. Կալ տա Լուիտա տօն Լօղօն Իերեմիօս. Կալ քաճա ղ ճնաւաւաւս ծօճ Ենտաճա. Եղլլգրաքալ Են տղ Եքիստօղղ Բարօղ.

1. Գրեալ կու տանք, որ այս բարեարութիւնս օտար է այժմու յոյն ընաքին, վասն զի ծ Լիծօճ ծ Բօղիծօճ բառ առ բառ կը նշանակէ իճն օթնական կամ իւրի, և ոչ Թէ օրիւն. Կետեալբար այս բառս կամ ուրիշ ընաքը յառաջ եկած է, և կամ Թարգմանչիկն անհասկացողութե՛ն:

* Այս բարեարութիւնս՝ որ անկրնկայ կերպով կը համալայնի յունիկ, յոյժ կու տայ միանգամայն, Թէ իրեն ծանօթ ընաքիրն ունէր նաև « և քարկոծեցաւ ընդ նմա » բառերն:

Այս կերպով կը շարունակեն նաև յամբողջութեան: Երրորդ սեան՝ յունարենի հետ ունեցած նմանութիւնն բառական է, ի բաց առեալ ծանօթագրեալ և գաւազանաձևերու մէջ առնուած բացատրութիւնները: Իսկ առաջին սիւնը՝ ոչ միայն ընդհանուր կազմութեամբն՝ այլ և քառակուսի փակագծերու մէջ տրուած մանրամասնութեամբն իսկ՝ յաջորդ երկու սիւներէն ևս զգալի կերպով կը տարբերի: Հանդերձ այսու՝ աչքի կը զարնեն այս տեղ երկու բաներ. այսինքն են՝ նախ որ, ինչպէս ծանուցեր էինք կանխաւ, հայկական երկու բնագրաց մէջ կայ նոյնութիւն բանից և բացատրութեանց նոյն իսկ ըստ հայերէն շարադրութեան, զորս նօտագրեցինք. Բ. Որ միակ պատճառ այդպիսի իրական նոյնութեանց ոչ թէ երկաքանչիւրին իբրև հիմն ծառայող մի և նոյն յոյն բնագիրն է, այլ զի Մկացորդաց Բարուքայ ընդարձակ խմբագրութեան հայագրի հեղինակն՝ անտարակոյս իւր առջև ունեցած է նոյն իսկ համառօտը, և այն տեղեր, ուր վերջինս՝ իւր թարգմանած յոյն բնագրի պատմածին համաձայն էր, փոքր ինչ փոփոխութեամբ արտագրած է, առանց բոլորովին նորէն թարգմանելու: Այս բանս ըրած է բնականաբար, զուցէ թէ և առանց իր ուզելուն: Գ. Այն աչքի զարնող երևոյթն, որով մերթ յոյն բնագիրն կը խոտորի ընդարձակ պարագաներով հայկ. համառօտ խմբագրութենէն, և մերթ այլ հայերէն ընդարձակ թարգմանութիւնն՝ իր յոյն բնագրէն, յայտնի նշան է, թէ այժմեան յունարենը՝ վերստին խումբագրուած է, խոտորելով սեմական նախկին բնագրէն՝ և ընդարձակելով իւր սահմանները. այսպէս վարուած է նաև հայկ. ընդարձակ թարգմանութիւնն՝ իր թարգմանած այդ յոյն բնագրի նկատմամբ: Այս ամենայն պիտի տեսնենք յունարենի այն ընդարձակ տեղերու համեմատութեամբ. որոնք հայկ. համառօտ խմբագրութեան մէջ գրեթէ իսպառ չեն գտնուիր, և այն տեղերով, յորս յունարենի վրայէն եղած ընդարձակ թարգմանութիւնն այլ՝ իր բնագրէն կը տարբերի մեծապէս:

Յոյն Բն. III, 4. Ἐως ἄν λαλήσω μετὰ τοῦ Θεοῦ τοῦ ὀψίστου. հայն ունի. « Մինչև հարցանեմ գՏէր բանս » փոխ. Թարգմանելու ընդ Աստուծոյ բարձրելոյ. — 8. Ὁ σφραγίσσας ἐν ἑπτὰ σφραγίσιν, ἐν ἑπτὰ καιροῖς, հայն. « Որ կնքեաց գեօրն դարև », փոխանակ ըսելու՝ Որ կնքեաց եօրն կնքօր՝ յեօրն ժամանակս: Յուն. բնագրի այս տեղիս՝ Յովհ. Յայտնութեան Ե զլիւոյն 1 համարին համաձայն է և անշուշտ անկէց առնուած: Թիւ 8. Φύλαξον τὰ σκεύη τῆς λειτουργίας τοῦ ἱερατικῆμένου, հայն՝ « պահեա զսպաս պատարագի՝ մինչև ի գաղափար »

սիրելոյն» (Գ. օր. երևեալոյն Երեւեալոյ. մինչև ի գարուստ բառերը
կը պակասին ի յոյնն). — IV. 3. Տօւ λέγω, ήλια. Հայն. « Գեղ ա-
սեմ երկիր », փոխ. արեգական. — V. 16. Եως δ Κύριος άρη την
έκστασιν ταύτην άπ' έμου, Հայն. « Մինչև վերանայ այս գարնաշունն
յինէն ». — V. 5. Εί μή γάρ έσπούδασεν, Հայն. « Եւ եթէ ոչ եր-
կարես այսր իրաց ». — 6. Ού γάρ καύμα, ου κόπος έστι καδ' ήμέ-
ραν, Հայն. « Եւ ոչ արգելու զիս խորշակ աւուրս և ոչ դատունն »,
փոխանակ տապի, վաստակի. — 18. Καί ποϋ έστιν ο Ίερεμίας ο
Ιερ υς του Θεου. Հայն ունի. « Ուր է Երեւեա քահանայ այն » : Այս
ընթացումս գրչագրութեան սխալ է ըստ իս, և ոչ թէ բնագրի
տարբերութիւն, և ըլլալու էր Աստուծոյ : — 33. Νισάν ο έστι δω-
δέκατος, Հայն. « Նիսան՝ որ է առաջին¹ » : — VI. 4 Έν τή παρθε-
νικῃ σου ποίμνη, Հայն. « Եւ կուսական հաստից քոց » փոխ. հաս-
տից. — 13. Καί ποιήσωσι ιέ ήμέρας καί μετά ταυτα εισάξω ύμας
εις τ ν πόλιν ύμών, Հայն. « Զի զկնի յիսուն և հինգ աւուր արկա-
նեմ զձեզ ի քաղաքս ձեր » : Գժուար է որ Հայ թարգմանինչն. յուն.
Γ' θουαίνων ερ Ν' կարծած ըլլայ. Հետեւարբ' 50 թիւն բնագրի
տարբերութիւն է : — VII, 13. Άνεπαύσατο έπι τι Ξύλον, Հայն. « Հան-
գեաւ ի վերայ սեան միոյ » : Սիւն բառս գժուար է որ յուն. Ξύλονէն
ուղղակի յառաջ եկած ըլլայ, վասն զի այս վերջինս՝ բնաւ սիւն չի
նշանակեր, այլ ժառ կամ փայտ և կամ խաչ : — IX, 3. Περ! τής
φωνής τής γλυκείας των δύο Σεραφίμ. 4. παρακαλώ ύπερ άλλλης
εύωδίας θυσιάματος² ». 5. καί ή μελέτη μου Μιχαήλ ο άρχάγ-
γελος τής δικαιοσύνης, έως άν είσενέγκη τους δικαίους, Հայն. « Վասն
քաղցրարարառ սառք Սերափելիցն . . և կարդամ առ Միքայել
հրեշտակապետն արդարութեան, մինչև արկանե զիս ի տեղի արդա-
րոցն », փոխ. հանգուցե գարդարան թարգմանելու. Հային սառք ա-
ծականն ևս բացարձակապէս յուն. δύο (երկու) թուական անուան
սխալ Հասկացողութեան արդիւնք չի կրնար ըլլալ : — 13. Δοξάσχετε τον

1. Գիտելու է, որ Հրէից Նիսան միսին՝ ըստ քաղաքական տուժարին՝ ոչ եր-
տասաներորդ և ոչ այլ առաջներորդ էր, այլ եօթներորդ : Իսկ ըստ եկեղեցականին՝
կամ սրբազան տուժարին էր սուուգիւ առաջին, ինչպէս ունի Հայն : Բայց եթէ մը-
տածենք որ այդ ամսով՝ մեր Նոստարդի պէս ընթացող տարին կը փակուէր և նորը
կը սկսէր, այն ժամանակ երաւամբ յոյն թարգմանին կարող էր թիբը կոչուի զայն :
Յասկանայն զէսս թէ Հայն և թէ յոյն սեմական ընտելը ճանչցած են :

2. Այս տեղ զիտելու կու տանք, որ կրք թուականարով մէջ չեղուած ածքող
այդ խօսքերն կը պակասին Հային մէջ :

Θεόν, πάντες δοξάσατε τὸν Θεόν, καὶ τὸν Υἱὸν τοῦ Θεοῦ τὸν ἐξυ-
 ψίζοντα ἡμᾶς Ἰησοῦν Χριστὸν τὸ φῶς τῶν αἰώνων πάντων, *Հայն ունի*. « *Փառս սուք Աստուծոյ և որդւոյ նորա, որ յարոյց զիս, Յի-
 սուսի Քրիստոսի, որ է յոյս յաշխտեանական* » : *Հայն շատ Համառու*
 է, *բայց դժուար է՝ որ դիտմամբ եղած ըլլայ*. ուստի կամ խան-
 գարուած է այս տեղիս, և կամ յունէն անկախ Համարելի: — 13. Ի
 Հօղ տից քիստեաց, *Հայն՝ փոխ. հեանքի՝ « կնիք Հաւատոյ » ունի*: —
 14. Գնետա՞յ ձեռն մետա՞ տոց քաւոց, *Հայն ունի փոխ. այսց
 ժամանակաց՝ « եւ զկնի այսր անաց »*. — Էթօմոնոնտա քտա, *Հայն՝
 « Եթանասուն և հինգ »*. — 17. Են տփ Լոյփ տօ ստօմատօ տօ
 Քրիստօս աճտօս, *Հայն փոխ. Քրիստոսի՝ ունի « Բանիւ բերանոյ Ա-
 ստուծոյ սօերոյն »*: — 18. Ծոն Էցօ Էօրաքա քեոսսմոյմեոն. *Հայն՝ փոխ.
 յուն. գոր ես տեսի կազմեալ, ունի՝ « Զոր տեսեալ և կազմեալ »*:

Հետեւեալ երկու տարբերութիւններն՝ դեռ աւելի նշանաւոր են. այս-
 ինքն նախ յուն. եւ ի լատին. ի լատին. ի լատին. ի լատին. ի լատին. ի լատին.
 « *Յագարակն Յագրիպայ* », և յատուկ անունս *Ղաւմեւեչ, Հայն կը
 գրէ միշտ « Արգամելէք »*: Տարբերութեանցս առաջինն՝ կարելի է
 որ գրութեան վրիպակ մ'ըլլայ, վասն զի երրորդ անգամուն՝ յոյն
 բնագրի Համաձայն Արգիպայ ուղղագրուած է. իսկ երկրորդն՝ բաց-
 արձակապէս ուրիշ մի բնագրի կամ ազդեցութեան հետեւեալ է ըստ
 իս: Արգ, բանալով Երեմիայի մարգարէութեան Հայկ. թարգմանու-
 թեան ԼԶ և ԼԹ գրութիւնները, ուր կը յիշատակուի նորա եթովպացի
 աշակերտն, մենք կը տեսնենք, որ այս տեղ իսկ չորիցս Արգամելէք
 գրուած է, Համաձայն Մեցարոյացն Բարոքայ, և երիցս այլ Արգի-
 մելէք. մինչդեռ Եթանասնից յոյն թարգմանութեան և Հերոնիմեան
 Վրլպատայի մէջ միշտ *Ղաւմեւեչ = Abdemelech կը գրուի, որք
 վերոյիշեալ անկանոն գրութեան հայերէն խմբագրութեան մէջ եղած
 ձևին աւելի կը Համաձայնին*:

Արիմելէք ձևն՝ պատմականօրէն իսկ չէ ուղիղ. վասն զի Ս. Քրքէն
 յայտնի է, թէ այս անուն կրողն՝ է Դաւթի զօրավարն, և ոչ թէ
 Երեմիայ աշակերտն: Տարակոյս չկայ, թէ Դ Մնացորդաց յոյն բնա-
 գրի այդ ձևն՝ գրութեան նոր սխալ մի չէ, այլ հին. վասն զի ա-
 նոր եթովպական թարգմանութեան Զ դարու օրինակին մէջ իսկ
 (III, 15, V. 1, 17, 18), չորիցս նոյնը պահուած է ճշգրտեամբ:
 Ուստի կը հետեւի, թէ անոր Հայ թարգմանիչն կամ Երեմ. ԼԶ, ԼԹ,
 7, 8, 9, 10, 11, 12, 16, Համարներու հետեւողութեամբ յունարե-
 նէն խոտորած է, և կամ մի և նոյն գրոց, այն է Մնացորդաց Բա-

րուքայ, մի ուրիշ խմբագրութեան, որ յունարենէն կը տարբերէր. յամենայն դէպս՝ սեմական բնագրի մի գոյութիւնն անփխտելի է:

Այս բանս կը հաւատարման նշնայէս յունարէն և հայերէն խմբագրութեանց մէջ եղած փոխադարձ յաւելումներն և յապաւումներն: Յիրաւի, նշանակե՞նք նախ յունի հետեւեալ տեղերը, որոնք կը պակասին ի հայն: Օրինակի աղագու, II, 4. Կրօնացիք δὲ αὐτὸν ὁ Βαροῦχ, λέγων· Τί ἐστὶ τοῦτο. — 6. Καὶ εἶπε Βαροῦχ· Πάτερ Ἰερεμία, τί γέγονε. — 10. Καὶ ἡ γῆ ἐπὶ τὰς κεφαλὰς αὐτῶν. — III, 15. Ὅτι ἐπὶ σέ ἡ εὐφρασία τοῦ Κυρίου. — IV, 4. Διότι ἡμεῖς οὐχ εὐδρέθημεν ἄξιοι τοῦ φυλάξαι αὐτάς, ὅτι ἐπίτροποι φεύδους ἐγενήθημεν. — 6. Διὰ τὰς ἁμαρτίας ἡμῶν καὶ τοῦ λαοῦ. — V. 1. Ἐκ τοῦ ὕπνου αὐτοῦ κατὰ πρόσταξιν Θεοῦ διὰ τὸν λόγον, ὃν εἶπε τῷ Ἰερεμία, ὅτι ἐγὼ αὐτὸν σκεπάσω. — VI, 8. Ταῦτα εἰπὼν ὁ Βαροῦχ. — 11. Ἰδοῦ ἄγγελος Κυρίου ἦλθε, καὶ λέγει τῷ Βαροῦχ ἀππαντας τοὺς λόγους τούτους. — VII, 22. Καὶ εἶπε πρὸς αὐτοὺς· Πάντα ὅσα ἠκούσατε, φυλάξατε, καὶ εἰσάξει ἡμᾶς Κύριος εἰς τὴν πόλιν ἡμῶν. — IX, 7. Ἐγένετο ὡς εἰς τῶν παραδιδόντων τὴν ψυχὴν αὐτοῦ.

Իսկ հայերէն թարգմանութեան մէջ կը նշանակե՞նք այս տեղիքս, որոնք չկան ի յոյն: Յէջ 365 տող 9րդ. « Եւ պատահաց զհանդերձ իւր Երեմիա և արկ մտիւր զգլխով իւրով » . — Յէջ 366. « Եւ հրամայեաց Տէր Հրեշտակին — ընտրեալդ իմ Երեմիա » 2 տողերն նոյն իջում. « Արպէս և խօսեցեալ էր — եկուլ սպասն » 2 տող: — Յէջ 373 Գ. պարբ. « Կամ որպէս տեսանէին զհարս իւրեանց և մտիթարէին » բացատրութիւնը. — 375 իջում 7րդ տողամիջի՝ « Եւ ոչ լսիցեն նմա » . — նոյն իջի « Եւ մինչդեռ անկեալ կայր — Արդամելէք » 2 տողերն: Ասոնցմէ դուրս կան նաև մի քանի բառական յաւելումներ, օրինակ իմն, յէջ 367, « Արք ծաղկեալ են », — « Եւ ստորասուզեաց », — յէջ 377. « Յայնժամ », — յէջ 175. « Այրն », — յէջ 366. « ծառայք քո », և այլն:

Արդ, մինչև ցարդ եղած գիտողութիւններէն երկու բան որոշ կը տեսնուին. Ա. թէ Մեցարդաց յոյն բնագրին՝ գէթ 2 դարէն սուղին ուրիշ խմբագրութեանց ենթարկուած չէ, և ոչ իսկ մեծամեծ փոփոխութիւններ կրած. վասն զի ինչպէս ըսուեցաւ, Հ. Կերիանի և Դիլման այս դարում գրուած եթովպական թարգմանութեան և յոյն բնագրի մէջ եղած կատարեալ համաձայնութիւնն տաւանց երկրայութեան կը համարին: Բ. թէ հայկական թարգմանութիւնն՝ ունի ստուգիւ այդ բնագրէն նշանաւոր տարբերութիւններ. և թէ այդ

տարբերութիւններն գէթ մասամբ մի արդիւնք են հայկական հին խմբագրութեան մի գործածութեան, այսինքն է՝ Վասն Երեմիայ մարգարէի՝ ի գրոցն Բարուքայ, կամ որ նոյն է՝ Վասն Երեմիայ ի Բարեղոն խորագրուածին: Այժմ տեսնենք, թէ այս վերջին գրուածս ինչ համեմատութիւն ունի Մնացորդաց ընդարձակ գրուածին հետ, և թէ ուստի յառաջ եկած է այն:

Նախ և առաջ դիտել կու տանք, որ վերջաբանի վերջին հինգ տողերն, զորս կանխաբար մէջ բերինք Երեմիայի ոսկերաց փոխագրութեան մասին յԱղեքսանդրիա, կը պակսի ընդարձակին մէջ: Այս տեղիս, որ կը գտնուի Դորոթէոսի περὶ Ἱερεμίου τοῦ προφήτου խորագրուած գրուածին և Մահ մարգարէից հայկական թարգմանութեան մէջ (տես Մահ Երեմ. մարգ. յէջ 223), կասկածի կ'ենթարկէ գրութեանս հնութիւնն և անկասութիւնը, այնու մանաւանդ, որ նոյն տեղին կը գտնենք բոլորովին տարբեր պարագաներով նոյնպէս Փատմ. Մրրոյն Երեմիայի մարգարէի, եւայլն, երկրորդ խմբագրութեան մէջ, որուն համեմատութեամբ Մնացորդացին նոր ըլլալն և մերինին հետ ունեցած սերտ աղերսն՝ առանց երկբայութեան է: Բայց նշանուոր պարագայ մի՝ որ մեր խմբագրութիւնը Դորոթէոսեան Մահ մարգարէից գրուածէն աւելի հին և անկէց՝ անկախ կ'երևցնէ, այս է՝ որ Երեմիայի ոսկերքը փոխադրող թագաւորն Նեփթաղիմ կոչուած է ըստ առաջնոյն, իսկ ըստ վերջնոյն Աղեքսանդր Մակեդոնացի: Իրաւ է, որ Եգիպտոսի թագաւորաց ցանկին մէջ այդ անունն բացառութիւն մ'է, Նեկտաներոս անուան իսկ խանգարուած ձև մի չկարէ լինել. սակայն և այնպէս երբայական և աւելի հին աղբերէ յառաջ եկած է, ըստ իս, դիտելով որ Նեփթաղիմ՝ նոյն է Մննդ. փ. 43 և Ա. Մնաց. Ա, 11, մէջ յիշուած Հեփթաղիմ = Ἰ. Νεφθου-χέμ, Νεφθορέμ = Լ. Nephthaim անուան հետ, որ իբրև ընդհանուր ազգանուն կը տրուէր Մեստրեմէն սերած Եգիպտոսի ազգաբնակութեանց: Եգիպտական հին աւանդութիւնն իսկ (տես Paulus Lucas, *Itinerarius*, T. I. p. 37) Գահիրէի մօտ թաղուած կը համարէր զԵրեմիա և կը յարգէր զնա, իբրև սպաննող կոկորդիլոսաց և օձից:

Եգիպտանու Վարք մարգարէից գրութեան յոյն օրինակն ևս, յորմէ Փարրիկիոս հասուած մի մէջ կը բերէ (Codex Pseudepigraphus. V. Test. T. I. p. 1410-14), պատմելով Երեմիայի քարկոծումն ի Տափնաս, թաղումը Փարաւոնի դաստակերտին մէջ, և իբրև պահպանող կոկորդիլոսաց և օձից Եգիպտացւոցմէ յարգուիլը, բնաւ չյիշեր նո-

րա նշխարաց փոխադրութիւնն յԱղեքսանդրիա և Աղեքսան. Մակեդոնացոյ ձեռքով: Ուստի շենք երկրայի բերակացնելու, թէ այս վերջին աւանդութիւնս մի միայն քրիստոնեայ աղեքսանդրացոյ մի գիւտ է պարզապէս. և եթէ եղած է երբէք փոխադրութիւն մի Երեմիայի ոսկերաց, այդ փրկչական թուականին առաջին շորս դարերում միայն կրնայ կատարուած լինել, և ոչ թէ Աղեքսանդր Մակեդոնացոյ ժամանակ: Արդ, ժամանակէն վերջ անցաւ աւանդութիւնս Գորթոթոսի և Զատկական ժամանակագրութեան և այլ գործոց մէջ, աւելի կամ պակաս փոփոխութիւններով: Ասոնցմէ Հնագունէն կարող էր փոխ առնուլ նաև Հայագգի խմբագիրն: Սակայն ես աւելի հաւանական կը համարիմ ըսել, թէ Վասն Երեմիայի մարգարէի ի գրոցն Բարոռքայ խմբագրութիւնն՝ ի սկզբանն խնդրոյ նիւթ եզող տեղին շունէր, այլ կ'աւարտէր « Այս է վէմն որ օգնական եղև Երեմիայ » բառերով: Եւ ստուգիւ եթէ եղած ըլլար, այն ժամանակ երկրորդ խմբագրութեան հեղինակն, որ գայս քաղ ճանաչէր և գործածեր է, այն տեղին ևս ասկէ պիտի արտագրէր անշուշտ. և սակայն նա ընդհակառակն՝ Մահ մարգարէից գրութենէն առած է բառ առ բառ, « Այս Երեմիա՝ ետ նշան քրմացն — ի մտուր աստուածացուցեալ », 3 ու կէս տող յաւելուածով ի միասին: Այսպէս ուրեմն գրուածիս Հնութեան դէմ ելած դժուարութիւնն կը հարթուի:

Ի վերջ կոյս համառօտ խմբագրութեան, այն է յէջ 357, Երեմիայի քարկոծուելէն անմիջապէս յառաջ կը ծանուցուի, թէ գրուածս եղած է Բարուքայ ձեռքով, այսպէս. « Եւ Երեմիա պատմեաց զամենայնն, և գրեաց Բարոռք ի գիրս իւր » . իսկ ընդարձակն՝ ասոր հակառակը կ'աւանդէ մեզ, վասն զի յետ յիշելոյ սոյն դէպքս՝ « Եւ Երեմիա աշարտեաց զխորհուրդն, զոր տեսեալ էր, Բարուքայ և Արդամելեքայ » նման բացատրութեամբ, կը պատմէ անմիջապէս անոր քարկոծումն և թաղումը, և կը կնքէ իւր ճառն այսպէս. « Եւ զայլ խօսքն Երեմիայի և զգորոտքիսն Մնացորդաց բանիս՝ չէ գրեայ ի բրդին Բարոռքայ »: Այս տեղ բնագրաց տարբերութիւնն ամենայայտնի կը տեսնուի, և անծանօթ խմբագիրս՝ ակամայ կերպով երկու ամենակարևոր և պատմական ճշմարտութիւններ կը պարզէ մեր առջև. Ա. թէ Մնացորդացն՝ ունէր համեմատ յոյն բնագրին և յաւելուածս, Երեմիայ մարգարէի. Բ. թէ զայլ խօսքն, այսինքն է՝ Երեմիայի և իւր երկու աշակերտաց վերաբերեալ պատմութիւնքն, զորս կ'ընծայէ Գ Մնացորդացն, Բարուքայ թղթին մէջ գրուած չկայր:

Արդեօք խմբագրի այս վերջին բառերովս՝ կարելի՞ է Բարուքայ

կանոնական թուղթը հասկնալ, ինչպէս նա ուզած է, ուր գրուած չեն ստուգիւ Արդամելեքայ վերաբերեալ նորութիւններն: Ո՛չ բնաւ. վասն զի համառօտ խմբագրութեան հեղինակն այլ հակառակը կը հաստատէ, թէ « և գրեաց զամենայն Բարուք ի գիրս իւր »: Ուրիշ Բարուքայ անուանեալ թուղթն ուրիշ բան չէ, բայց եթէ համառօտ խմբագրութիւնն, զոր անտարակոյս կը ճանաչէր ընդարձակին յոյն հեղինակն իսկ, և անոր հիման վերայ կատարած է իւր խմբագրութիւնը, աւելցնելով այն ամենայն՝ որոնք ստուգիւ գրուած չեն առաջնոյն մէջ և չէին կարող գրուած լինել, զի մասամբ քրիստոնէական ոգիէ թելագրուած են, և մասամբ այլ հրէական վէպերէ հաւաքուած և ձևի գրուած են՝ յոյն խմբագրի ձեռքով: Ըստ իս, երկու զլիտց կարելի է վերածել այդ նորութիւնները, այսինքն է՝ յաւելուածք և փոփոխութիւնք:

Առաջին տեսակէն՝ նշանակեմք հետեւեալները: Յէջ 365, Գ պարբերութեան մէջ՝ « Եւ ետես Բարուք — որպէս ասացեալ էր Տեառն Երեմիայի » 23 տող հատուածն, ուր Բարուք և Երեմիա կը խօսակցին Երուսաղեմի առման և շրէից գերութեան վերայ, — յէջ 366. « Եւ աղաչեաց Երեմիա զհրեշտակն — խօսեաց ընտրեալդ իմ Երեմիա » 7 տողերն, — « վկայութեամբ չրոյ — առնու զգարդ քո » 2 տողերն, — « Կաց առ նոսա — դարձուցանեմ զնոսա ի քաղաքս » 2 տողերն: Յէջ 367, Բ. պարբ. « Վասն այտորիկ ապականեցաւ Երուսաղեմ — վասն քո, Երուսաղեմ, ելի՛ ի քէն » Բարուքայ բերանը գրուած 12 տող աղօթքն և առանձնախօսութիւնն: Յէջ 368, Բ. պարբ. « Եւ կրկեալ՝ անդրէն եմուտ ի քաղաքն — վերանայ զարհուրմն յինէն » Արդամելեայ բերանը գրուած առանձնախօսութիւնն՝ կրկնութեան ձևով: Յէջ 369, « Զմարդ Աստուծոյ՝ մեծ ծաղր արարեալ էի զքեզ — եթէ գերեցաւ ի Բաբելոն » Արդամելեայ կողմէն՝ առ այլաբանական արևորն ուղղեալ 6 տող կշտամբանքն: Յէջ 370, « Աստուած լուսաւորէ զքեզ ի վերին² Երուսաղեմ » բացարկութիւնն, որուն առաջին անգամ կը հանդիպինք Պաւլոսի Առաքելոյ (առ Գաղ. Դ, 26) քով, և այն իսկ մասամբ միայն: Նոյն իջում

1. Այս ընթերցուած ունի բառ առ բառ նոյնպէս յոյն բնագիրն. հետեւաբար, Տեւ-Մկրտչեանի կողմէն Արարարի մէջ գրուած ծանօթութիւնն և յայտնած կատարած բարբոթիւն աւելորդ է:

2. Առաջնայն իսկ երկնից արքայութեան իմաստով առած է այս յորշորշումս. « Իսկայն « Աստուած լուսաւորէ զքեզ » բառերն՝ ոչ թէ հրէի, այլ զուս քրիստոնէի փյտուկ բացատրութիւն է, ըստ իս:

Բ. պարբ. « Եւ ասա մարմնական տան քօ — և կուտական Հատից քոց, և Հաւատաւ և կեցցես » 5 տողերն. — « Այսպէս լինին մարմին քօ — պահեաց զքեզ զօրութեամբ իւրով » 3 տողերն, որոնք քրիստոնէի մի, մանաւանդ հգնասուն հոգւոյ ներշնչութիւնք են, քան թէ Բարուքայ կամ Քրիստոսէ յառաջ ապրող հրէի մի. վասն զի Հաւատոյ, յարութեան և Հանդերձեալ կենաց վերայ այսպիսի բացորոշ արտայայտութիւնք Հազուադէպ են Հրէից մէջ: Իսկ կուսութիւնն՝ որ մինչև Եղիսաբեթի ժամանակ իսկ անարգ և անիծապարտ Համարուած էր, մեր անծանօթ հեղինակին քով, ընդհակառակն, իրրև առհաւատչեայ Հանդերձեալ կենաց կը շեշտուի: Նոյն իջում. « 2օ. բութիւն իմ, Տէր Աստուած — յԵրեմիա զաւետիսս զայս » Արզամելեքայ բերան զրուած 7 տող աղօթքն, — յէջ 381, Ա. պարբ. « Եւ մինչդեռ կայր Բարուք յաղօթս — յայտ առնէ նշան մեծ կնքոյ » 33 տող ընդարձակ Հատուածն, որուն մէջ կը ծանուցուի առ հրեշտակն տրուած հրահանգը, արծուոյ երևումն, Բարուքայ կողմէն ի սփիւռս հեթանոսաց մարդ յուղարկելն՝ թռչոք բերելու և առ Երեմիա նամակ գրելու համար, և զրուած նամակի տեսակ մի պատճէնն և պարունակութիւն, ընդ մեծ կնքով, որուն համար զուրցուած չէ թէ ինչ էր: Սակայն թղթի կամ քարտեսի յիշատակութիւնն՝ մէկ կողմէն, միւս կողմէն այլ՝ Երեմիայի խօսքին շանսացողները Յորդանանուռ չրով փորձելու¹ սպառնալիքն՝ ցոյց կու տան, թէ կարծուած ժամանակէն շատ և շատ ուշ զրուած է այդ նամակն:

Յէջ 372. « Դու միայն խօսող յամենայն թռչունս երկրի — ի Բաբելոն առ Երեմիա » 6 տողերն, նոյն իջի. « Քեզ ասեմ, որ թագաւորդ ես թռչնոց — աւետիս երբը արդարոցն » 6 տողերն, — « Եւ եթէ պատեսցեն զքեւ ամենայն ազգք թռչնոց — իճանապարհդ յոր գնաս » Բարուքայ արծուոյն հետ ըրած 7 տող խօսակցութիւնն, որոց մէջ կը տեսնուի յայտնապէս աւելի յունական մտաց և մատանց՝ քան թէ սեմական² վիպասանութեան արուեստակութիւնն: Յէջ 373. « Եւ այս եղև վասն այնր, զի Հաւատացեն », — « Եւ լացին և առին մոխիր և արկին ի վերայ զլիտյ իւրեանց », — « կամ

1. Այս տեղիս կը յիշեցնէ մեզ Ս. Գրոց Լուրն յանրիմանութեան կամ փորձութեան, որով կը փորձուէին կասկածաւոր առնականայք. սակայն այս բացորոշ զարագայս, այսինքն թէ՛ այդ չուրն Յորդանանէն առնուած ըլլալու էր, այս նոր է և բարունական զրուածոց գիւտ:

2. Վասն զի այս ամենայն պատմուած են նաև Բարուքայ Երեմիայի ասորական թարգմանութեան մէջ, բայց բոլորովին անարուեստ և ամենապարզ կերպով:

զիւրդ մտանել ի քաղաքն մեր» բացատրութիւններն, և վերջին պարբերութեան. «Կամ որպէս տեսանէր ամենայն ոք զհայր իւր ի սանջանս — զիւրդ գիտեմք օրհնել զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար» Երեմիայի կողմէն առ Բարուք և Արզամելէք գրուած նաևակի պատճէնն, յորում կը լինի այս նշանաւոր ակնարկութիւնս՝ թէ Բարեւազիք կը նեղէին զՀրէայս, ըսելով, թէ «Օրհնեցէք զմեզ օրհնութեանց՝ Սիոնի», որ Բարուքայ կանոնական թղթի Ա զլիսու 10-11 համարները կը յիշեցնէ մեզ: Յէջ 374. Երեմիայի ողջերթ մաղթելն արժուոյն. «Երթ ի խաղաղութիւն. հոգասցէ զմեզ և զձեզ Տէր». — Նոյն իլում. Բ. պարբ. «Խօսեցաւ Աստուած ընդ Երեմիայի» մինչև յաջորդ իջի «և ոչ լսեցին նմա» 33 տող ընդարձակ հատուածն, յորում կը նկարագրուին, հակապատմական պարագաներով, Բարեւոնէն Հրէաները հանելու համար Աստուծոյ պատգամն, — նոցա Յորդանանէն անցնելն, — Բարեւազուց հետ ազգախառնուող ժողովրդեան մի մասին ըմբոստանալով յետ դառնալն, — Բարեւազուցմէ լինուածուիլն՝ անապատին մէջ Սամարիա քաղաք շինելն և հոն բնակիլն, և Երեմիայի՝ զանոնք ի զեղջ և յապաշաւ յորդորելու համար մարդ յուղարկելն:

Ինչպէս նախընթաց յաւելուածոց մէջ՝ այսպէս և հոս ստոյգ է, թէ հայն աննշան տարբերութիւններով կը խտտորի յունէն. սակայն զլիսաւոր դեր խաղացողն վերջինս է: Սա՛ իւր սկզբնագիրն ընդարձակած ժամանակ՝ անգիտութիւն ևս ցոյց կու տայ հրէական աւանդութեանց. վասն զի յիշուած շին այս տեղ ոչ Պարսից թագաւորն կիրոս, որուն կը հրամայէ՝ Աստուած դարձուցանել զգերին Հրէից, և ոչ այլ գերեզարձին ժամանակն կը նշանակէ. հետևաբար, հետևանսաց հետ խնամեցող ժողովրդեան ի Բարեւոն վերադառնալն՝ կամ մի ուրիշ՝ գերեվարութիւն ըլլալու է, և կամ Ա Եզրի Ը զլիսու

1. Այս բացատրութեամբս կամ պաշտաման տուլութիւն կը հասկցուի և կամ որդազն նուիրաց հաղորդութիւն կամ բաշխումն:

2. Տես Երեմ. Գլ. ԽԴ, 15-20, — Ա Եզր Գլ. Բ:

3. Ի զէպս Յովսէփոս (Հն. Ի. Հրէեց. Գիրք Ժ. Գլ. Թ). Կ'աւանդէ, թէ ի Թաւուրութեան Ոչիւայ, երբ տասն ցեղք թողին զՍամարիա և Նաբոզոզոնոսորայ մեքով գերի վարեցան ի Բաբելոն, անոնց տեղ Ասորեստանեայց Սաղմանասար թագաւորն Բաբելոնէն իտեթացիները բերաւ և բնակեցոյց Սամարիոյ մէջ, որոնք յիսայ Սամարացիք անուանեցան: Պատմիչս յանուանէ ծանուցած չէ մեզ իւր այդ սանգութեան աղբիւրը. սակայն մենք կը զստենք զայն Գ Թա. Ժ. Ը զլիսու 24-29 համարներում, նոր պարագայով մի. այսինքն թէ՛ Ասորեստանեայց թագաւորն երբ ինքաւ, թէ Սամարիա դաղթող այդ ազգաբնակչութիւն թողուց զԱստուած, և թէ

69-72 և Թ զլիու 9-37 համարներում աւանդուած դէպքն՝ բոր-
րովին յեղաշրջուած է ըստ կամս: Սամարիա, որ ըստ հրէական
ծագման Սեմերոն կը կոչուի, գիտենք թէ Իսրայելի առաջին Թա-
գաւորին Ամրի ձեռքով կառուցաւ՝ դարեր յառաջ, և թէ այդ գա-
ւառն ոչ թէ « անապատ » էր, ինչպէս կ'ենթադրուի, այլ արգաւան-
դագոյնն ըստ ճանապարհորդաց: Գիտենք դարձեալ, թէ այդ քա-
ղաքն այլևայլ անգամ աւերուած և վերականգնուած է, Հետևաբար
և նորանոր անուններ առած է ըստ Յովսեփոսի, այսինքն են Սա-
մարիտիս, Էխտիկիաս, Մարեովնէ և Սեքաստէ. բայց Գ Մնացոր-
դաց ընդարձակողին՝ այդ անուններէն ոչ մին ծանօթ չերևիր, և կամ
նա ինքն այնպէս կեղծեր է:

Յէջ 375, Բ պարբ. « Խունկս ի ծառոց կենդանի » բացատրու-
թիւնն՝ Երեմիայի մատուցած երեքարբեան փառաբանութեան մէջ, —
նոյն իջում. « Վասն ողորմութեան քո աղաչեմ զքեզ — յառաջ քան
զամենեսեան եղեալ էիր » 7 տող հատուածն, ուր Միքայէլ հրեշտակն՝
պաշտօնեայ արդարաբեան կ'անուանի. այսպէս և՛ « մինչև արկանէ
զիս ի տեղի արդարոցն » բացատրութիւնն՝ անտարակոյս քրիստո-
նէական գրչի ծնունդ են. որովհետև Միքայէլ հրեշտակապետն քրիս-
տոնէական եկեղեցւոյ մէջ միայն իբրև հոգաբարձոս և պաշտպան կը
սօնուի. իսկ Ս. Գրոց մէջ՝ իշխան հրէից կ'անուանի միշտ: Մի և նոյն
իջում Գ. պարբ. « Մինչդեռ կանգնեալ էր ի խորանին — և դիմե-
ցին ի նոսա ամենեքեան » 6 տողերն, — « Մինչդեռ անկեալ կայր
իբր զմի ի մեռելոց, ի մօտ եկին Բարուք և Աբդամելէք » 2 տո-
ղերն, — « Եւ լսեցին և ոչ թաղեցին զնա — յորում աւուր յառնէ »
2 տողերն, — յէջ 376 տող 11. « Աճին և ծաղկին — ծառն հաս-
տատուն » 4 տողերն: Նշանաւոր են այս իջում հետևեալ յաւելուած-

այն պատճառաւ անոր Թշուտութեամբ առիւծներ զրկուեցան, որոնք մեծ ջարդ
կու տային անոնց, ուստի հրամայեց որ նախնաբար Սամարիայէն ի Բաբելոն գերի
տարուած քահանաներէն մին՝ հոն երթայ և այն երկրին բուն կրօնքը ուսուցանէ
նոցա: Միեթար Այրեփանեցի ժամանակագր. ՏՆԻՎ) մէջ բերելով սոյն զէպքը.
քահանային անունն և Մովսիսի նշամատենան ևս կը յիշէ, այսպէս. « Առաջեայ
Սաղմոսասար չորս ազգս՝ կոց իւրեանց՝ պահապանս երկրին Սամարիայ: իսկ ի
սատակել զնոսա զազանացն, առաքեաց զքահանայն Ելք և զՏէֆ փրն Մովսիսի՝
առիւրի »: Միեթարայ ուրիշ անվաւեր գրութիւն մ'ևս ծանօթ ըլլալու էր, ուր
յիշուած էին Եզր և Հնգամատենը: Յամենայն զէպս ասկէ կը տեսնուի, թէ Մնացորդաց
յայն խմբագիրն Յովսեփոսէն վերջ ազրոզ մէկն էր. և թէ անոր որով ծա-
մանակի վերաբերեալ պատմական վէպն՝ ինչպիսի՞ փոփոխութեանց ենթարկած է:

1. Տես Գ թԹԳ. ԷԼ. ԺԶ. 24, 29:

ներն մանաւանդ. « Եւ զքաղցր ջուրսն՝ աղիասնէ մեծ յռասառորու-
րանք¹ Աստուծոյ » : Նօտրազրուած առաջին բառերն կարծէք թէ
կը յիշեցնեն Դ թագաւորութեան Բ զլ. 21 համարը, ուր կ'ըսուի
Նրիսի համար, թէ « Եւ յականս ջրոցն, և արկ անդ աղ », որ ըստ
երբայական լեզուին կը նշանակէ փրկական, պահպանողական : Սա-
կայն մեծ յռասառորութեանն Աստուծոյ բացատրութիւնն զուտ քրիս-
տոնէական է և Մկրտաւորեան սուրբ խորհուրդը կ'ակնարկէ, որ ի
հումն բաց ի այլեայլ յորջորջմանց՝ կ'անուանուէր նաև φῶτισμα =
illuminati, ըստ Մաշտոցին մերոյ՝ յոյս շնորհաց, կամ յռասառորու-
րիւն (տես Կղ. Աղեքսանդրացւոյ կոչումն ընծայութեան Ա. 6) :

Արդ, բոլոր այս ընդարձակ յաւելումներս՝ լիովին կը հաստա-
տեն Մնացորդաց խմբագրութեան վերջ ըրած յայտարարութիւնը,
թէ « Զէ գրեւա ի թղթին Բարուքայ » . վասն զի իրօք այլ չեն գրու-
ած ի վասն Երեմիայ մարգարէի կամ Բարուքայ համառօտ խմբա-
գրութեան մէջ : Այժմ դառնանք երկրորդ տեսակին, այսինքն է նշա-
նակեմք այն տեղիքը, յորս այս խմբագրութիւնս կը տարբերի ընդ-
արձակէն :

Համառօտին մէջ, յէջ 350, կ'ըսուի ի դիմաց Երեմիայի. « Տուք
առաւ Աստուծոյ և որդոյ իւրոսմ օծելոյ » . ընդարձակին մէջ, յէջ
70, ընդհակառակն այնպիսի կերպարանափոխութիւն մի կրած է
այս տեղիս, զոր կարեմք զուտ քրիստոնէական անուանել՝ առանց
փրկարութեան. այսինքն է. « Փառս սուք Աստուծոյ և որդւոյ նո-
րս, որ յարոյցն զիս, Յիսուսի փրկատուի » : Տեղեաց առաջնոյն
նախնութիւնը՝ հին կտակարանով² իսկ կը հաստատուի. իսկ վերջինն՝
ըստ որում նօտրազրեցինք, բացարձակապէս Մատթէոսի, Աուկասու և
Յովհաննու աւետարաններէն վերջ միայն կրնայ գրուած լինել. վասն
զի առաջինն երկու աւետարանիչները կը վկայեն, թէ Գաբրիէլ
կեղտակի ձեռքով առաջին անգամ Աստուածորդին՝ Յիսուս աւետե-
լու. իսկ երրորդին մէջ (զլ. ԹԱ 25) որոշակի կը ծանուցուի Յի-
սուսի կողմէն, թէ « Ես իսկ եմ յարտաթիւն և կեանք, թէպէտ և

1. Եւնջ բնագիրն ունի Τὰ γλυκέα ὕδατα ἀλυρά γυνήσονται ἐν τῷ μεγάλῳ
ῥωτί τῆς εὐφροσύνης τοῦ Θεοῦ. այսինքն է, Գաղաթ Լուսի աղիցի օր լուսնի
հոգ Աստուծոյ :

2. Զի սաղմոսերգուն Դաւիթ կը գրէ ի դիմաց Աստուծոյ. « Որդի է՛ տ' դու, և
ես այսօր ծնայ զքեզ ». և իմաստութեան Բ զլիւում, 13. « Յոսասանայ ունել զգի-
տութիւն Աստուծոյ, և որդի Տե՛տն զանն իւր անուանէ » :

մեռանի՝ կեցցե՞¹ : Անյարմար է Երեմիայի բերանը դնել այնպիսի բացատրութիւն մի, որուն կանոնական գրքին մէջ և ոչ իսկ մի անգամ կը հանդիպինք Յիսուս կամ Քրիստոս անուանց . և ոչ այլ Քրիստոսէ յառաջ ապրող հրէի մի, որոց գործածական ձևն էր Մե. սիա կամ Օծեալ Տեառն :

Համառօտին մի և նոյն իջի Զբա տողին մէջ խօսելով Քրիստոսի գալստեան ժամանակի վերայ, կ'ըսուի . « Որ և զկնի այլ ևս աւուրց և ամաց . երկերիսք եւթանասուն և հնգից եկեսցէ յերկիր » . Իսկ ընդարձակն ունի ընդհակառակն « Եւ զկնի այսր ամաց , այլ ևս երեք հարիսք եոթանասուն և հինգ ամ , գայ յերկիր » : Երկուստեք նշանակուած թուականներէն ոչ մին չյարմարիր Քրիստոսի ծննդեան, որ Երեմիայէն գրեթէ հինգ ու կէս դար վերջ կատարուած ճշմարտութիւն է . ուստի եթէ երկրորդ գալստեանը վերաբերենք , առաջնոյն 275 թուականն՝ առնուած ըլլալու է մի ուրիշ անվաւեր Տեւրենէ , զի Ագադրոն և Հիպպոլիտոս կը նշանակեն գայս՝ իբրև ժամանակամիջոց Նեոի թագաւորութեան , յետ որոյ կու գայ Քրիստոս : Իսկ վերջին տեղին այս տեսակէտով իսկ անճիշտ է : Եւ այս անճշտութիւնս , եթէ գրչութեան վրիպակ չէ՞ , առաջ եկած է Եգրի անկանոն գրքի ծառայական նմանութենէն , ուր Մեսիայի երկրաւոր թագաւորութեան 300 տարիներ տրուած են :

Նոյն իջում 17րդ տողին մէջ Համառօտն ունի վասն Քրիստոսի . « Գալոց է յերկիր » . ընդհակառակն՝ ընդարձակն կը գրէ . « Ի յետն Զիթենեաց » : Քրիստոսի գալուստն ի Սիոն լեռնէ գիտեն միայն հրէական ականջութիւնք , ուր էր դաւթեան կամ երկրաւոր թագաւորութիւնն . այսպէս է և Գ Եգրի ԺԱ գլխում . « Ի Սիոնէ եկեսցէ և երեւեսցի ամենայն պատրաստողաց » և այլն : Հետևաբար՝ այսպիսի փոփոխութիւն մի՝ քրիստոնէական ծագումն ունեցող անվաւեր գրուածի՞ մի սզղեցութեան վերագրելի է : Յէջ 353 , տող 9րդ , Համ . կը գրէ Երեմիայի Համար . « Եւ պատուէր տայր ժողովրդեանն հրաժարել ի

1. Երկրորդ Համառ . խմբագրութիւնն , որ միւս երկու տեղիքը միացուցեր է , Աւետարանչիս մօտ ձևով մի կը գրէ այսպէս . « Տուք փոռս Աստուծոյ և որդւոյ նոր օծելոյն , որ դարթուցանէ զմեզ , զի նա է ինչն ի Քրիստոս » :

2. Եւ իբրք գրչութեան վրիպակ ըլլալն կը հաստատուի միւս Համառօտ խմբագրութեամբ , որ ունի . « Եւ արդ , այլ ևս երեք հարիսք և եոթանասուն և հինգ ամ » :

3. Մեթոդիոսի տեսիան հայկական խմբագրութեան մէջ կը յիշուի Զիթենեաց լեռն , ուր կ'իջնէ և կը թագաւորէ անժամանակ թագաւորն խաղաղութեան :

գարշէյի կերակրոց հերանոսաց», որ հրէական տիպ ունի. իսկ ընդարձակն ունի ընդհակառակն, յէջ 374, «Եւ ուսուցանէր զնոսա ի բաց կալ ի միարանոթնէն ազգին Բարեշացոց» : Համառօտի 354 իջում Բարուքէն արծուի ձեռքով առ Երեմիա յուղարկուած խորհրդական թուգերն՝ 17 կը հաշուին. իսկ ընդարձակին մէջ ընդհակառակն՝ 15 : Առաջնոյն մէջ, յէջ 353 կը գրուի. «Որ թզոյ աւուրք չեն, և դեռ ոչ ծառք տերևս իսկ ունին, զի Նիխան ամիս է» : իսկ երկրորդն ունի. «Որ չեն նոցա ժամանակ պտղոյ և գիտասցես... ստէ ցծերն. Ո՞ր ամիս է այս : Ասէ ծերն. Նիսան, որ է առաջին» : Վերջին նօտրագրուածն, յայտնապէս կը տեսնուի, թէ է մեկնուած թիւն մի՝ յաւելելալ ի խմբագրէն : Յոյնն ևս, ինչպէս տեսանք, թէ պէտև տարբեր կերպով՝ բայց և այնպէս ունի՝ զայն. Հետևաբար, սկզբնագրին մէջ չկար այն, զի ամենայն հրեայ գիտէր, թէ քանի-երրորդ ամիսն է այդ :

Եւ 352, տող 9րդ, Արդամելեքայ մասին կը գրէ Համառօտն. «Եւ ոչ եգիտ զտունն Երեմիայի» . իսկ ընդարձակն՝ ունի բոլորովին սորա հակառակը. «Եւ ոչ ճանաչէր զնա (զՆրուսաղէմ) և ոչ տուն իւր և ոչ գտեղի իւր, այլ և ի յազգի իւրմէ ոչ զորք եգիտ» : Համառօտի 351 իջում կ'ըսուի Բարուքայ Համար. «Եւ հրեշտակ Տեառն երևէր նմա յամենայն օր և միթարէր զնա» . իսկ ընդարձակն կը գրէ. «Եւ հրեշտակք գային և պատմէին նմա զամենայն զոր ինչ Տէր հրանայէր նմա» :

Վերջապէս նշանաւոր տարբերութիւն մ'է և Հետևեալն, յայտնւքն է Համառօտ խմբագրութիւնն՝ Երեմիայի աշակերտը միշտ Աքիմելիք կ'անուանէ. իսկ ընդարձակն՝ միակերպ Աքդամելիք կը գրէ : Ստոյգ է, թէ այս տարբերութիւնս ուղղակի Հայ թարգմանչէն ներմուծուած է՝ Ս. Գրոց ազդեցութեամբ, ինչպէս տեսանք, զի Գ Մնացորդաց Երեմիայի յոյն և եթովպական թարգմանութիւնքն ևս՝ Համառօտին պէս Աքիմելիք կը գրեն, գիտնալով Հանդերձ, որ Սօթանանից և Վուլգատայի մէջ իսկ հակառակ ձևն միշտ ի գործ ածուած էր, այն է՝ Ἀβδεμέλεχ = Abdemelech : Ուստի Համառօտ խմբագրութեան կանոնական գրքէն ունեցած այս խոտորումս՝ դարձեալ յառաջ եկած է ուղղակի անկանոն գրութեան սեմական սկզբնագրէն, որուն հայկական թարգմանութիւնն՝ Համեմատութեամբ յունականին՝ շատ աւելի հաւատարիմ մնացեր է, թէպէտ և բոլորովին իսկ ազատ չէ քրիստոնէական ներմուծութիւններէ :

Հասարակաց սկզբնագրի մի վաղեմի գոյութեան ակն յայտնի

ճշան է նաև հետևեալ տեղին, յորում կը համաձայնին իրարու ոչ միայն հայկական համառօտ խմբագրութիւնն և ընդարձակն, այլ և վերջոյս յունարէն բնագիրն. այսինքն են՝ Երեմիայի ի կենդանի արձան փոխուիլն, քարկոծումն և մահը, որ հակառակ վաւերական պատմութեան եղած կը համարուի Երուսաղեմի մէջ և Հրէից ձեռքով. մինչդեռ մենք գիտենք նոյն իսկ Երեմիայի մարգարէութեան ԽԳ և ԽԴ գլուխներէն, թէ Երեմիա՝ Կարէի որդւոյն Յովհաննու բռնադատութեամբ՝ վարեցաւ մնացած ժողովրդեան հետ յԵգիպտոս, և թէ Տափնաս քաղաքէն էր, որ կ'որոտար Աստուծոյ սպառնալեաց պատգամները Եգիպտացոց կողմ և իւր խտտասիրտ ժողովրդեան վերայ, և կը յայտնէր ապագայ լինելիքները: Բարուք իսկ, որ իւր կանոնական թղթին մէջ շարունակեց նորա պատմութիւնը, բնաւ յիշատակութիւն չըներ երեմիական Արձանի և քարկոծման վրայօք: Այս վերջին մանրամասնութիւնքս, ստոյգ թէ անստոյգ, համառօտի յիշատակուած կը գտնենք քրիստոնէական բնագրոջմ՝ ունեցող երկու յիշատակարանաց, այն է՝ Մահ մարգարէից անկանոն գրուածին և Երեմիայ մարգարէութեան Նախադրոտքեան մէջ, որոնք Եգիպտոս Կիպրացոյն կ'ընծայուին: Այս յիշատակարանաց վերջինն՝ անտարակոյս առաջինէն ուղղակի առնուած է: Եթէ Եգիպտոս եղած համարուի աղբիւր վերոյիշեալ վիպասանութեան, այն ժամանակ կը հետեւի, թէ Մնացորդք Երեմիայի՝ երկու խմբագրութիւններն ևս 'Պարէն յառաջ չկային՝ այս պարունակութեամբս: Սակայն կարելի չէ ընդունել, որ Եգիպտոս կամ անկէց աւելի մի հնագոյն մատենագիր՝ պարզապէս իւր կողմէն հնարած ըլլայ այսպիսի մի վէպ, առանց պատմական հիման, և այդ վէպն իբրև պատմական առհասարակ ընդունուած ըլլայ եկեղեցւոյ մէջ. հետևաբար, պէտք է ըսել, թէ Մնացորդաց յունարէն թարգմանութենէն յառաջ՝ ծանօթ էր Մահ մարգարէից գրութեան հեղինակին՝ սեմական լեզուով գրուած սկզբնագիրն, որուն հեղինակն Բաբելոնի գերութիւնը միայն ի նկատի առնելով՝ անկէց ի Հրէաստան վերադառնալէն վերջ ալ կը պատմէր վիպասանօրէն Երեմիայի քարկոծումը: Եգիպտոս ուրիշ բան ըրած չէ, բայց եթէ ուղղել իւր սկզբնագիր վրիպակը՝ համաձայն Երեմիայի մարգարէութեան ԽԳ և ԽԴ գլուխներում աւանդածին, այսինքն է փոխադրելով մարգարէիս ողբերգական մահուան տեսարանը ի Տափնաս¹:

1. Այս վէպն իբրև ի թիւ ծառայած կ'երևի Երեմ. մարգ. գլ. ԽԳ. 9 համարի այս բացատրութիւնս. « Աս դու քեզ տարին Գոթմիթ, և իւրեւ զնոս յԱլլու-

Պատմ. Սրբոյն Երեմիայ մարգարէի, եւ այլն, խորագրուած երկրորդ խմբագրութիւնն, յէջ 362, յետ պատմելոյ Երեմիայի դարձն ի Բաբելոնէ՝ յերուսաղէմ, և անոր պատարագ մատուցած ժամանակ ունեցած յափշտակութիւնը և երեք օրէն վերջ յառնելը, անդէն կը խզէ յանկարծ պատմութեան թելը, և կ'ըսէ. « Եւ ընդ այն աւուրսն իյին շատք ի մնացորդացն ժողովրդեանն յԵգիպտոս, էջ ընդ նոսին և Երեմիա մարգարէն, և րնակեցաւ ի Տափնաս » . և թէ հոս մարգարէացաւ, թէ « եկեացէ Տէր յերկնից՝ յերկիր », և թէ ժողովուրդն բարկացած՝ ուզեցին զինքը քարկոծել, այլովքն հանդերձ: Արդ՝ այս տեղոյս վերայ հաստատուած՝ կարելի՞ է արդեօք ըսել, թէ Մնացորդաց Բարոռքայ սեմական սկզբնագրին մէջն ևս եղած ըլլար այս կամ նման տեղի մի, որ յետոյ յոյն թարգմանչէն և առաջին հայկ. խմբագրութենէն դուրս ձգուած ըլլայ: Այս ըստ ինքեան անկարելի չէ, եթէ երկրորդ հայկ. խմբագրութիւնն, որ զայս կ'աւանդէ, միւս երկուքէն բոլորովին մի անկախ գրութիւն ըլլար. սակայն նա, — ինչպէս յետոյ պիտի տեսնենք, — ուրիշ բան չէ՝ բայց եթէ նախընթացներուն համառօտ ծաղկաբաղ՝ մի: Իսկ վերոյիշեալ տեղին առնուած

ազրանն ի Թաքստեան՝ ի մուսս ազարանիցն Փարաւոնի ի Տափնաս, որով ընդ Յոգայ: Եւ հաւանօրէն՝ Այս է վիճի, որ օթալան եւն Երեմիայ վերջին բարութիւնն իսկ՝ այդ քարանց վերայ գրուած չին արձանագիրն ըլլալու է, որուն նա ծանօթացաւ վիզպազիրն յԱղեքսանգրիս:

1. Այս էջմարտութիւնս երկայն ազացուցի կարօտ չէ. բաւական է այս ինչ կամ այն էջը միայն բազդատել միւսներուն հետ՝ համոզուելու համար: Իսկ անոնց նամբ, որոնք առիթ չունին անձամբ բազդատել, կը զնենք սոսա հետեւեալ համատարութիւնը՝ համաձայն երեք ընտրաց: Առաջին սեան հետ ունեցած նմանութիւնները՝ բոլորգրով կը նշանակենք, իսկ երկրորդ սեան հետ եղած նմանութիւնք նորագրով:

ՎԱՄՆ ԵՐԵՄ՝

Ի ՄՆԱՅ. ԳՐՈՑ

ՊԱՏՄ. ԵՐԵՄ՝

Յէջ 350. « Ասէ Երեմիայ. Աստ ինձ եթէ զինչ որոհից զԱւրամիւրէք եթո՞վ զայնի, զի յոյժ երախտաւոր է առ իս, զի նա եհան զիս ի ազմոյն, և ոչ կա մի՞ զի տեսցէ զաւերուածս որք քաղաքիս քո և արբա մայի: Ասէ Տէր. Առաջին զիս զիս յազարանին Ա-

« Եւ խօսեցաւ Երեմիա և ասէ. Ազաչեմ զքեզ, Տէր, ծանօ՞ զիս, եթէ զինչ աւանիմ զԱւրամիւրէք եթէ ուզացի, զի բազում բարեգործութիւնս արարեալ է ծառայի քո Երեմիայի. և նա եհան զիս ի զքոյ ազմոյն, և ոչ կամիմ եթէ տեսանիցէ նա զաւերուածս քաղաքիս և

Ասէ Երեմիայ. Ազաչեմ զքեզ, Տէր, ցոյց ինձ թէ ի՞նչ արարից զԱբիդիմիտ Գառար ի քնչ, և նա եհան ի քեզ արժնի, և ոչ խօսի տեսանիլ նմա զաւերուածս որք քաղաքիս և արբա մայի: Ասէ Առաջին զիս զիս յազարանին Ա-

է Եպիփանուս վերոյիշեալ գրուածէն, որուն յայտնի ապացոյց են վերջին երեք պարբերութիւններն, որ բաւական կերպով նոյն են եպիփանեան բնագրի մէջ աւանդածներուն հետ :

Մեր մատենադարանի ԻՅ Ոսկեփորիկին մէջ անանուն պատառիկ մի, — զոր ես Վարդան պատմչին գրուած կը համարիմ, — պատմելով Երեմիա մարգարէի մահը ի Տափնաս Եգիպտոսի, մէջ կը բերէ և հետեւեալ նոր պարագայն, որ բոլորովին կը պակսի Եպիփանուս

զրիւս, և ծածկեցից զնա՝ մինչև դարձուցից ի գերութենէ զժողովուրդն ի քաղաքս : Եւ զու երթիչիբ զհետ ժողովրդեանն ի Բաբելոն. իսկ զԲարուք թողցես ի քաղաքս, և ես այց արարից նմա :

զազականութիւն սորա. այլ ողորմեցես նմա, որ ոչ արամի :

« Եւ ասէ Տէր. Առաքեալն յազարակն Յազրիւս պայի, և ի նովանի լերինն ևս ծածկեմ զնա, մինչև դարձուցանեմ զժողովուրդն ի քաղաքս : Եւ ասէ Տէր ցԵրեմիա. Գնա զու զհետ ժողովրդեանն ի Բաբելոն. կաց առ նոսա և աւետարանեաց մինչև դարձուցանեմ զնոսա ի քաղաքս. և թող զԲարուք աստ՝ մինչև խօսեցայ ընդ զնա » :

նախնայն զնա անդ, Գնա դարձցի ժողովուրդն ի գերութենէ անտի ի քաղաքս : Եւ որո երբ գնա զհետ խազարեանն և ի Բաբելոն. և զԲարուք թողցես ի քաղաքս, և ես այց արարից նմա » :

Յէջ 333. « Սուրբ, սուրբ, սուրբ, լոյս էջմարիտ, որ լուսաւորեաց զիս ի դալս իմում առ քեզ » :

« Սուրբ, սուրբ, սուրբ, խունկս ի ծառոց, կենդանի, լոյս էջմարիտ, որ լուսաւորեցեր զիս, մինչև նամ բանամ առ քեզ » :

« Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, ծառկեն զանի և լոյս էջմարիտ. որ լուսաւորեալ զնա՝ ի գալս ինձ առ ինձ » :

Յէջ 336. « Փառս առք Աստուծոյ և որդւոյ իւրում օծելոյ, որ զարթուցանէ զմեզ. զի նա է անշէջ զամբար, որ զկնի այլ ևս աւուրց և ամաց երկերիւր եւթանասուն և հնգից՝ և կեսցէ յերկիր. ծառն կենդանի, որ տնկեցաւ ի մէջ զբախտին, և արասցէ զան պտուղ ծառս՝ պտղաբերս » :

« Փառս առք Աստուծոյ և որդւոյ նորս, որ յարոյցն զիս, Յիսուսի, որ է լոյս յաւիտենական, ամենեցուն անանց չրազն, կնիք նաւատոյ. և զկնի այսր ամաց երեքհարիւր եօթանասուն և հինգ ամ և զայ յերկիր, որ է ծառ կենաց բուսեալ ի մէջ զբախտին և աննէ զամենայն ծառ անպտուղ՝ պտղաբեր » :

« Ամենեցեան միտքան որոս գորս Աստուծոյ և որդւոյ նորս օծելոյն, որ զարթուցանէ զմեզ. զի նա է կեանք մեռելոց : Եւ արդ այլ ևս երեք հարիւր եօթանասուն և հինգ ամ, և կեսցէ ծառն կենաց յերկիր, և որոսցի զանպտուղ ծառս՝ պտղաբեր » :

Այս կերպով կը շարունակուի նաև ամբողջն, խանգարեալ լեզուաւ և գրութեամբ :

գրուածին մէջ. կը գրէ նա. «Այլ գնաց նա ընդ մնացեալ տողու վըրդեանն յԵգիպտոս, և ի Տափնաս քաղաքի քարկոծեցին կանայք երրայեցիք, յանդիմանեալք ի նմանէ, վասն ընծայելոյ նոցա Տիկնոջն երկնից՝ յռանին, և անդէն մեռաւ և թաղեցաւ»: Արդ՝ կարելի է աստի հետեցնել, թէ նոտրադրեալ տեղեկութիւնը անյայտացած սեմական սկզբնագրէն առած ըլլայ Վարդան: Ոչ բնաւ. վասն զի Վարդան նախ կը հերքէ այն կարծիքը, թէ «Այն որ ասին, թէ Երեմիայ ի Բաբելոն է գնացել՝ չէ իրաւ: Երկրորդ, առանց երկրայութեան կարող եմ ըսել, թէ Վարդանայ այդ մակաբերութիւնն՝ Հաստատուած է ուղղակի Երեմ. մարգ. ԽԳ գլխու 15—19 համարներում աւանդուածներուն վերայ, ուր կանայք Երրայեցւոց կ'ընդդիմանան Երեմիայի, ըսելով. «Բանիդ՝ զոր խօսեցար առ մեզ՝ ոչ լուիցուք, զի առնելով արասցուք զամենայն բան որ ելանէ ի բերանոյ մերմէ, արկանել խռնիս Տիկնոջն երկնից, և նոռիք նմա նոռերս»: Ուստի այս այսպէս լինելով, կը մնայ հետեցնել, թէ Երեմիայի՝ Բաբելոնէն ի Հրէաստան դառնալուն և հոն քարկոծուելու վիպասանութիւնն՝ Մնացորդաց Բարուքայ սեմական սկզբնագրին յատուկ մի բան համարելի է, յորմէ յոյն ևս քան զևս խոտորած է:

Վասն Երեմիայ մարգարէի՝ ի գրոցն Բարուքայ, կամ ի Բաբելոն, Հայկական Համառօտ գրուածին, և Մնացորդաց (Երեմիայի) = Τὰ Παράλειπομένα Ἱερουσαλὸς τοῦ προφήτου, ընդարձակ խմբագրութեան իրարմէ ունեցած ամենամեծ տարբերութիւնը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ անոնց իրարու հետ ունեցած հասարակաց ազերան՝ ըստ բազում գլխոց՝ ցոյց տուին մեզ, թէ արդարեւ եղած է երկաքանչիւրին իբրև սկզբնագիր ծառայող սեմական գրուած մի: Այսուհետև կը մնայ ցուցնել այդ սկզբնագրի հնութիւնը կամ գրութեան ժամանակը, ուսկից կախուած է նորա արժէքն և կարևորութիւնն:

Նախնարար առիթ ունեցանք յիշելու այս գրուածիս ուսումնասիրութեամբ պարագոյ մի քանի գիտնականաց, այն է՝ Իրլանդի, Շիւոբրի, Հաունկի և Ռէնդէլ Հառուիսի կարծիքը, որով դորա հնութիւնը փրկչական թուականի Բ-Բ դարու սահմանէն անդին չանցնիր: Սակայն այս տեղ պէտք եմ յաւելցնել և զայս, թէ այդ գիտնականները՝ սեմական սկզբնագրէն աւելի յունարէն և եթովպարէն թարգմանութեանց պարունակութենէն դատելով այդպիսի եզրակացութեան յանգեցան. մինչդեռ մենք Հայկական Համառօտ խմբագրութեան ձեռքով պարզեցինք, որ յունարէնն՝ բնագիր չէ, այլ հնագոյն բնա-

գրի մի վերայ շատ վերջ կատարուած մի նոր խմբագրութիւն՝ մեծաքանակ ներմուծութիւններով լի. հետևաբար, անոր քրիստոնէական յաւելուածներուն վերայ հիմնուած վճիռն ևս՝ չկարէ լինել հիմնաւոր:

Թէոդոր Զաչն, յամին 1893, Հետազոտութիւնք¹ Նոր կտակարանի կանոնաց պատմութեան վերայ մակագրուած հմուտ երկասիրութեան մէջ, յէջ 137-157, բաղդատելով Սարկաւազ վարդապետի անուամբ Մխիթ. Այրիվանեցւոյ Ժամանակագրութեան մէջ պահուած կանոնական և անկանոն գրոց ցուցակը՝ կեղծ Աթանասի և Նիկեփորոսի ցանկերուն հետ, ըստ անուանակոչութեանց և ըստ կարգի ընդհանրապէս իրարու համաձայն գտաւ. որով հետևեցուց, թէ սարկաւազեան ցուցակն ընդօրինակուած ըլլալու է այնպիսի մի հնագոյն սեմական ցուցակէ, որ ծանօթ էր նաև Աթանասի, Նիկեփորոսի, Գելասիոսի և զուցէ թէ Նևսադիոսի, զոր մէջ կը բերէ Նիկեփորոս՝ անոր պատրիարքական և գրախօսական ժամանակագրութեամբ հանդերձ: Սարկաւազայ ցանկի բնագիրն՝ է դարում Պաղեստինէն կամ Ասորիքէն ի Հայս բերուած էր, ուխտաւորի մի ձեռք: Սակայն այդ սեմական ծագումն ունեցող ցուցակէն իսկ՝ խնդրոյ նիւթ եղող մեր գրուածի աւելի հին լինելուն ի նպաստ՝ փաստ չի գտներ գերմանացի քննադատն: Գիտելով նա մէկ կողմէն, որ այդ ցուցակի համաձայն՝ Յովհաննու Յայտնութիւնն, Կորնթացւոց Գ թուղթն և Յուդայի թուղթն ևս անցած են ի շարս կանոնական գրոց. իսկ միւս կողմէն այլ՝ կը յիշուին Գիտնեսիոսի Արիսպագացւոյ գործերն, որոնք Քրիստոսի 450 թուականէն յառաջ գրուած չեն կարող լինել, ըստ այժմու քննութեան. ուրեմն կը հետևցնէ, թէ 544-556ին խմբագրուած էր այն:

Այո՛, այս կարող է ուղիղ լինել, և մենք Թէոդորոս Քոթենաւրէն գիտենք, որ Զ դարուն վերջեր իսկ Հայ ազանդաւորաց ծանօթ էին այդ ցուցակն և անոր մէջ յիշուած անկանոն գրեանք. բայց բնաւ չհետևիր, որ այդ ցուցակին ժամանակակից ըլլային նոյնպէս այն տեղ մէջ բերուած անկանոն գրութիւնքն ևս, և ի մասնաւորի վասն Երեմիայ մարգարէի ի Բաբելոն, գիտելով նախ, որ Ս. Նիկեմ ասորի Գ դարում և մերս Գր. Լուսաւորիչ՝ Կորնթացւոց Գ թղթէն բացորոշ վկայութիւններ բերած են՝ ըստ ասորական բնագրին: Այս բանս շօշափելի փաստերով ապացուցած է արդէն Ուս. Ֆէտտէր²:

1. Forschungen zur Geschichte des neutest. Kanons, Erlangen.

2. Տես Ա. Կրիսթի. Գ ուղեւորութեան լուսն, Վիեննա 1894.

Ուրեմն՝ ինչպէս այս, այսպէս նաև սոյն ցուցակին մէջ մտած Երեմիայի անկանոն գրուածի սեմական բնագիրն իսկ՝ շատ յառաջ գոյութիւն ունէին: Ուստի, ինչպէս ըստ պարունակութեան՝ հայկ. համառօտ խմբագրութիւնն տարբեր է յունարէն Երեմիայի Մնացորդացէն, այսպէս ևս անհրաժեշտ հարկաւոր է մեծ տարբերութիւն մի դնել վերջնոյ խմբագրութեան և անոր սեմական սկզբնագրի նկատմամբ: Ես իսկ համոզեալ եմ, թէ յոյն խմբագրութիւնն՝ փրկչական թուականի Ի-Գ դարերում հազիւ կարէ խմբագրուած լինել, իսկ սեմական սկզբնագիրն՝ անկէջ շատ յառաջ: Այս տեսակէտս ի նկատի ունելով, տեսնենք թէ հայկ. համառ. խմբագրութիւնն ինչ ներքին փաստեր կ'ընծայէ մեզ:

Յէջ 356, Աստուծոյ օծելոյն, այսինքն է Քրիստոսի, աշխարհ գալու մասին Երեմիայի մէկ գուշակութիւնը մէջ կը բերուի. այսպէս. «Որ այլ ևս աւուրց և ամաց երկերիչք երթանաւն և հնգից եկեսցէ յերկիր»: Նախնարար դիտել տուինք, թէ յունարէն խմբագրութիւնն ունի ընդհակառակն չորեքհարիչք եօթանասուն և եօթն, և անոր վրայէն եղած հայկ. ընդարձակ թարգմանութիւնն ունի երեքհարիչք եօթանասուն և հինգ, զոր միւս համառօտ խմբագրութիւնն ևս նիւթապէս ընդօրինակած է: Արդ՝ այս տարբերութիւնն որն ևս ճիշդ համարինք, սակայն և այնպէս չի գար չհանդիպիր Քրիստոսի ծննդեան թուականին. վասն զի Երեմիայի գերութիւնն ի Բաբելոն՝ դնելով յամին 588 նախ քան զՔրիստոս, եթէ ասկէջ հանենք 475 տարին՝ կ'ունենանք 113, եթէ հանենք 375 թիւն՝ կ'ունենանք 213, և եթէ 275 թիւը՝ կ'ունենանք 313: Ուստի, ըստ հայ. համառօտ խմբագրութեան՝ Քրիստոսի գալստեան թուականը կը կանխէ քան զսովորական թուական ծննդեան 313 տարի, ըստ ընդարձակին՝ 213 տարի, և ըստ յունարէն բնագրին՝ 113 տարի: Բայց որովհետև այսպիսի տգիտութիւն և խոշոր սխալ չէին կարող ընել այդ երկու գրուածոց հեղինակներն, ուրեմն պէտք է ըսել, թէ այդ թիւերն ոչ թէ Քրիստոսի գալստեան, այլ մի ուրիշ թուականով հաշուած այն տարեթիւերը կը ցուցնեն, յորս այդ գրեանքը խմբագրուեցան. այսինքն թէ յունարէն խմբագրութիւնն՝ յամին 475, կամ լաւ ևս, 375ին կատարուած ըլլայ, ինչպէս ունին հայկական երկու թարգմանութիւններն, համառօտ հին խմբագրութիւնն՝ 275ին. իսկ սեմական անյայտացած սկզբնագիրն՝ Քրիստոսէ շատ յառաջ:

Իսկ թէ որն էր այդ թուականն, ըստ որում հաշուած են յիշեալ տարեթիւքն, այս դժուար է որոշել: Վերջնօր թուանշանքն

275, եթէ ըստ սելեկեան թուականին հաշուենք, որ կը սկսի 312 Ն. Ք. կ'ունենանք Երեմիայի գերութեան ամենամօտ տարեթիւն 587: Ասկից հանելով 312ը, կը հասնինք փրկչական թուականի 37 տարին, յորում գրուած կը համարուի խմբագրութիւնս կամ հայերէն Բարուքայ անկանոն գիրքը՝ սեմական սկզբնապիւն հետևողութեամբ: Բայց թէ իրօք կարո՞ղ էր արդեօք գրուածս այդքան հին լինել. առ այս պէթ ժամանակագրական ուրիշ արգելք չկան, բաց ի քրիստոնէական մի քանի ներմուծութիւններէն, զորս քիչ յետոյ պիտի ցոյց տանք՝ թէ ինչ աղբիւրներէ յառաջ եկած կրնան ըլլալ: Իսկ գալով յոյն խմբագրութեան և անոր հայկական թարգմանութեան թիւերուն, կը տեսնենք՝ որ աւելցնելով առաջնոյն 475 թիւն սելեկեան թ. 312ին վերայ՝ կ'ունենանք 767 տարի Ն. Ք., իսկ երկրորդով՝ 687 տարի, որոնք սակայն կ'անցնին անդր քան զանդր Երեմիայի գերութեան 588 տարեթիւէն: Հետևաբար, յիշեալ թիւերէն ո՞րն ևս ուղիղ համարուի, չի կրնար սելեկեան թուականին համաձայն հաշուած լինել, այլ փրկչական թուականով. ուրեմն ասկէց կը հետևի, որ յուն. խմբագրութիւնն կատարուած ըլլայ յամի Տեսուն 475, կամ աւելի ճիշդ՝ 375ին մօտերը, յետ Քրիստոսի:

Որոգիներսի քով (De princip. II, 3, 6) կը գտնենք հետևեալ կոչումը ի գրոցն Բարուքայ, այսպէս. «Denique etiam Iaruch prophetae librum in assertionis hujus testimonium vocant, quod ibi de VII mundis vel caelis evidentius indicatur», Առանց երկարութեան է, ըստ իս, որ Որոգիներսի այս կոչումս՝ Մնացորդաց Բարուքայ յոյն բնագրէն չէ. վասն զի այս՝ բացէ ի բաց ծանօթ չէր կարող լինել՝ ոչ Որոգիներսի և ոչ այլ անոր ակնարկած մատենագիրներուն. ուստի կը մնայ ընդունել, թէ յոյն հօրէս յիշուածն՝ կամ Բարուքայ խնդրոյ նիւթ եղող սեմական բնագիրն ըլլալու է, և կամ անկէ յառաջ եկած ասորերէն մի ուրիշ գրութիւն, զոր հրատարակեց Հ. Կերիանի¹, և կը կրէ Գիրք Բարուքայ որդոյ Ներեայ խորագիրը, և հնոց քով Տեսիլ Բարուքայ = Ἀποκάλυψις τοῦ Βαρούχ ևս կը կոչուի. Որոգիներսի Librum prophetae Baruch բացատրութիւնն՝ կը համաձայնի արտաքսապէս ասորականին, ի բաց առեալ վերջնոյս Որդոյ Ներեայ յաւելուածն, որ հաւանօրէն Ա գլխու 9րդ տողէն առնուած է: Արդ՝ Բարուքայ գիրքն կամ տեսիլն,

1. Saeu Monumenta Sacra et profana, Mediolani 1866, T. I, Fasc. II, p. 73-98. Apocalypsis Baruch, լատին թարգմանութեամբ:

որոյ Հնութիւնն՝ Եզրի Գ գրքի վերայ խօսած Ժամանակ պիտի ապացուցանենք, և Բոնվէջ՝ նոյն իսկ Ենովքայ գրքին շտի Հին և Պաշտօնի տեսչեան իսկ սկզբնաղբիւր եղած կը համարի, — ոչ միայն իւր ԻԱ գլխում կը խօսի ստուգիւ եօթն երկնից և եօթնօրեայ արարչութեան վերայ, այլ և ամենամեծ աղերսներ ունի Մնացորդաց Բարոքայ կամ Երեմիայի խնդրական գրուածիս հետ. այնպէս որ՝ այլ ևս չենք տարակուսիր ըսելու, թէ Բարոքայ որդոյ Ներեայ գիրքն՝ (ըստ եբրայական սկզբնագրին) որ անշուշտ ազատ էր այժմու քրիստոնէական ներմուծութիւններէն, ունէր ստուգիւ վերոյնշանակեալ Հնութիւնը, և վերջնոյն իբրև Հիմն ծառայած է:

Յիրաւի, բանալով ասորական գրուածիս Հ. Կերիանեայ ձեռքով եղած Հրատարակութիւնը, անդէն Ա գլխու 6Ե համարէն կը սկսի նմանութիւնն՝ Հայկական թարգմանութեան հետ. վասն զի Երուսաղեմի՝ Քաղաքացուցմէ պաշարուելն, առումն և կործանումն, և անկէց վերջ Բարուքայ՝ քաղքէն դուրս ելնելով՝ կաղնոյն տակ նստելն, այլովք հանդերձ, ըստ իմաստից նոյն է մեր խմբագրութեան մէջ աւանդածին հետ: Ասորին շատ աւելի ընդարձակ է, ունի նոյնպէս նշանաւոր տարբերութիւններ. օրինակի աղագաւ, այս տեղ տաճարի սրբութիւններն յանուանէ մի առ մի նշանակուած են, մինչդեռ յոյն և հայն ընդհանուր կերպով « զանօթս սպասու » կամ զսպասս պատարագի յիշատակութեամբ կ'անցնին: Յուդայի թագաւորին՝ Յեքոնիայ օրով՝ Երուսաղեմի կործանման մասին Աստուծոյ կողմէն աւ Բարուք եղած պատգամն, և ի մասնաւորի Աղամայ, Աբրահամու և ուրիշ նախահարց մասին եղած խորհրդածութիւնքն, որ ըստ ասորւոյն՝ Ա գլխու 1-5 համարներում՝ կը կանխեն քան զպաշարումն քաղաքին՝ յոյն և հայ խմբագրութեանց մէջ, տեղափոխուած են զկնի առման Երուսաղեմի, և այլակերպուած: Այսպէս նաև 10-76 գլխահամարներում պարունակուած Բարուքայ և Երեմիայի եօթնօրեայ պահեցողութիւնն, Բարուքայ ողբերն, տեսիլներն, աղօթքն և գրած նամակներն, եւ այլն, յոյժ այլափոխուած և տարբեր պարագաներով մէջ կը բերուին միւս խմբագրութեանց մէջ, բայց իսկապէս նոյն են: Ա. 77 համարին մէջ՝ Բարուք կը ժողովէ մնացած ժողովուրդը, կը յանձնարարէ նոցա գնալ ըստ օրինացն. Աստուծոյ և հարց, և առանձնանալով ընդ հովանեաւ կաղնոյն՝ երկու թուղթեր կը գրէ, որոց մին արծուի ձեռքով կը յուղարկէ յԵգիպտոս՝ առ ինն և կէս ցեղս Իսրայելի, իսկ միւսն՝ ի Բաբելոն. յոյն և հայկ. խմբագրութիւններն ևս սոյն կարգը ունին, բայց թուղթերէն վեր-

լինը միայն պահած են. իսկ միւսը, որ 5 մեծագիր երեսներէ բաղկացած է, այսինքն 78-86 համարներում, և աւելի պատմական արժէք ունենալ կ'երևի, զանց ըրած են: Ասորոյն քով Արդամելեքայ բնաւ յիշատակութիւն չկայ. մինչդեռ միւսներուն մէջ վիպասանութեան ընդարձակագոյն դեր մի անոր սեփականուած է, այսինքն է՝ 66 տարի Ագրիպպեան ազարակի մէջ քնանալն, որ կը նշանակէ Երեմիայի նոյնչափ ժամանակ Բաբելոնի երեւակայեալ գերութեան մէջ անցընելն, — Նիսան ամսոյն մէջ դաւար թուզեր քաղելն և արծուի հետ ի Բաբելոն աւաքելն, և Արդամելեքայ անոր հետ ըրած երկար խօսակցութիւնն, որոնք չեն գտնուիր ասորի Բարուքին մէջ: Սորա 87 թուահամարին մէջ կ'աւարտի մեր խմբագրութեանց հետ ունեցած աղերսն, իսկ մնացածն՝ գլխովին տարբեր:

Առ այս դիտել կու տանք, որ ասորոյն մէջ չեղած ընդարձակ առասպելներն, հայերէն համառօտ խմբագրութեան մէջ ևս, ինչպէս կանխաւ ցոյց տուինք, մերթ բոլորովին կը պակսին, մերթ ալ ամենահամառօտ կերպով մէջ բերուած են: Այս վերջին պարագայս կարծել կու տայ, թէ կամ Արիմելեքայ ձոնուած վիպասանութիւնը՝ Բարուքայ գրքին կամ անսլեան գէթ երրայական բնագրի մէջ ևս համառօտիւ ըլլալու էր, և կամ այդ մասն՝ իսկպէս յոյն խմբագրէն յերիւրուած է, ուսկից ապա համառօտ քաղուածներ ըրած ըլլայ հայագրի խմբագիրն: Նկատելով, որ Նովակովիչի՝ « Ստարինի » մէջ հրատարակած Բարուքայ տեսլեան սլաւերէն թարգմանութիւնն՝ քանակի կողմէն շատ կը տարբերի ասորականէն, այսինքն՝ համառօտ է, կարելի է որ այսպէս եղած ըլլայ և վերջինս՝ նկատմամբ երբայական սկզբնագրին: Բ. Սիմոնի և Թէոփիլոսի վիճարանոսքեան և Կիպրիանոսի վիպադարձիւնք (Գ. 9) երկասիրութեան մէջ Բարուքէն եղած անտէրունչ կոչումներն ևս զայս կը թուին հաստատել, որոնց վրայ հաստատուած՝ կը հետևեն Բոնվէլ (Text und Untersuchung I, 3. S. 25) որ այդ գրուածն՝ մի ուրիշ աւելի հնութիւն ունեցող գրուածքէ համառօտուած ըլլայ:

Այսպէս կամ այնպէս Մնացորդաց Բարուքայ սեմական սկզբնագրի հնութիւնն անժխտելի է, և կրնանք մինչև փրկչական թուականի Ա դարը վեր հանել:

Մի ուրիշ զօրեղ փաստ ևս ունինք՝ սեմական անյայտացած սկզբնագրի հնութեան ի նպաստ: Համառօտ խմբագրութիւններէն երկրորդին մէջ, յէջ 359, կ'աւանդուի, թէ Երեմիա, Երուսաղէմը վերջին անգամ թողած ժամանակ, տաճարի ուրիշ սրբութեանց հետ՝

նոյնպէս « ընկէց զհոռոյ տաճարին ի շրհորն¹, և զբանային յարե-
զակն », ըսելով, թէ « Առէք պահեցէք զայդ հրամանաւ արարչին
ձերոյ » . իսկ գերեզարձէն վերջ՝ թէ յունարէն և թէ հայերէն խմ-
բագրութիւններն, բնու յիշատակութիւն չեն ըներ այդ սուրբ հրոյ
և սպասուց հանման, և առանց ազոր տասն օր զոհեր և պատարագ-
ներ մատուցանել կու տան Երեմիայի : Այս աւանդութեանց մէջ կայ
մի խոշոր հակասութիւն, յորմէ կարեմք դատել, թէ առաջին աւան-
դութիւնն վերջնոյն հետ բնաւ կապ չունի, որուն կը միաբանի նաև
յոյնն . այսինքն՝ թէ սուրբ հրոյ աւանդութիւնն մի ուրիշ աղբերէ յա-
ռաջ եկած է : Սակայն բանալով Բ Մակարայեցոց Բ գլուխը, մենք
կը գտնենք ոչ միայն տեղիա² յանուն Երեմիայի՝ ընդարձակ պա-
րագաներով, այլ նաև ակնարկութիւն՝ պատմական և հնագոյն յի-
շատակարանի մի, զոր կ'անուանէ մատեան, ասելով . « Եւ գտանի
այս գրեալ ի մատեանս առաջինս » . այսինքն է աւելի Հին՝ քան զԲ
Մակարայեցիս : Ելպիսնու և Դորոթէոսի ընծայուած Մահ մարգա-
րէից գրուածին մէջ միայն կը գտնենք զայս, Ս. Գրոց մէջ այլուր
բնաւ յիշուած չէ . իսկ որովհետև այս տեղ Երեմիա մարգարէի մա-

1. Ընդարձակ խմբագրութեան մէջ թեպէս և սուրբ հրոյն յիշատակութիւն չը-
կայ, բայց շուրջ յիշատակուած է, յորում կըրելով կը պահէ Երեմիա տաճարի
սրբութիւնները, և բանալին կը յանձնէ արեգական, « մինչև ի գալուստ սիբե-
լոյն » , այն է՝ ըստ Գ օրինակին՝ « Երեմիայի » : Տեղւոյս խանգարուած լինելն յոյն
բնագրէն իսկ յայտնի է :

2. Չոր մէջ կը բերենք ամբողջովն . « Եւ գտանի այս գրեալ ի Դորոթէոս
պատմիչս, եթէ Երեմիա մարգարէ հրամանս ասնուլ ի հրոյ առտի յայնմանէ՝ յետոյ
նոցա՝ որպէս ցուցանի... Եւ եր գրեալ ի Դորոթէոս առտի այսպէս . իբրև զի զվրան
ժամուն և զտապանակ կտակարանացն հրամայեաց մարգարէն ըստ երկնաւոր հրամա-
նին ընդ իւրեանս շրջեցուցանել, իբրև ելանէր Մովսէս ի լեանս անգը տեսանել
զժառանգութիւնն Աստուծոյ : Արդ՝ եկն եհաս Երեմիա մարգարէ ի տեղի անդր . և
անդ եգիտ այրս ամուրս անտառախիտս . զբան իման և զտապանակն իտախտանոց
և զԵրեմիայի ինչ անդ տարեալ զնէր ի ներքս, և զգրուանս ինքնին առականէր : Եւ
անպէս մատեանս որ ընդ նմայն էին՝ նշանակել զտեղին . և ամենեկն ճանապարհ ի տեղի
անդր ոչ կարացին գտանի : Իբրև զպայ Երեմիա, պատուհասել սկսաւ զնոսս, և
ասէ . Ի՞նչ որ ոչ գտնէիք եթէ անմասն, հրաման է, գտեղիք կայուցանել՝ մինչև հա-
մարտի Տեր ընդ որբուն իւր, և իողովիլ հրամայեոցի Աստուծոյ զիտալս ինչ զիտալս
իւրոյ, և ոչ Տեր յայտնեոցի զայս, և երեւոցին փառքն Տեսան ի սխան ուղոյ, որ-
պէս ի ժամանակն Մովսէսի... Յայտ իմի այսպէս ասնէր, թէ իմաստութեամբ
խորհրդով Դորոթէոսն զպատարբար նառախտեոցն և զտարբերեոցն քանարին » :

Դիտել կու տանք՝ որ այս տեղ, ինչպէս բովանդակ պատմական կարգն, այսպէս
այլ նօտրագրուած պարագաներն քաջ կը համաձայնին մեր անկանոն զբնի մէջ ար-
տայալուածներուն, համաձայն յոյն և հայկ . խմբագրութեանց : Իսկ ընդարձակ

սին աւանդածները հակիրճ ակնարկութիւններ են միայն առանց յիշատակութեան հրոյն, և ամբողջ գրութիւնն իսկ քրիստոնէական ժամանակի ծնունդ է, և Մակաբայեցւոց գրքի աւանդածէն բոլորովին տարբեր, այն է՝ այլարանական հանգամանք ունի. ուստի կը հետեւի, թէ նոյն իսկ Բ Մակաբայեցւոց գրութեան ժամանակ իսկ, — եթէ յիշեալ տեղին յետոյ ներմուծուած չէ, — կար մի ընդարձակ գրութիւն, յորում գրուած էին ստուգիւ ընդարձակաբար Երեմիայի՝ Բարեցունի գերութեան ժամանակամիջոցին՝ կատարած գործերն և քարկոծումն, զորս Ս. Գիրք լուծ են: Եւ յիրաւի, առանց այսպիսի մի գրաւոր յիշատակարանի՝ կարելի չէ ըմբռնել թէ Ս. Գրոց խոր լուծութեամբ հանդերձ, ինչպէս տարածուեցան արեւելքի մէջ այսքան և այսպիսի արարուածներ, և անցան, — ուշ թէ շուտ՝ փոյթ չէ, — մինչև Մակաբայեցւոց կանոնական գրքին մէջ: Հետևաբար, այդ յիշատակարանը կամ մատեանն՝ ստուգապատում և միանգամայն հեղինակաւոր ըլլալու էր:

Այս սեմական գրուածս՝ ծանօթ ըլլալու էր և՛ առ Եբրայեցիս գրուած թղթի սրբազան հեղինակին, այն է Պաւղոս առաքելոյն. վասն զի, ժԱ գլխու 37 համարում, խօսելով նահապետաց և մարգարէից վերայ, կը գրէ « Քարկոծեցան, սղոցեցան », և այլն, ուղղակի Երեմիա և Յսայի մարգարէից մահերը ակնարկելով: Այս, Տերտուղիանոս (տես Scarpinace c. 8) և Որոզինէս իսկ (Մեկն. Մատթ. ճառ ԻԶ) առաքելոյն այդ խօսքերը՝ Երեմիայի և Յսայիայ համար ըսուած հասկցան. զի առաջինը կը գրէ. « Hieremias lapidatur, Isaias se-

պարազաններն, ինչպէս օրինակ իմն, լքան խման, քաղանակ իրաւանաց և սիւնն ինչոց, որք յանուանէ յիշուած չին Մնացորդաց Երեմիայի գործիս մէջ, յանուանէ կը յիշատակուին Բարսաբայ կրօն ասորերէն խմբազրութեան մէջ, անգերձ Մովսիսի և տապանակի ին արարուածներով, որուն համար ըսուեցաւ թէ մերիինն նա ամենասերտ աղերսներ ունի, և եբրայական անյայտացած ճնազբին կրնայ ամուստութեամբ աւելի հաւատարիմ ներկայացուցիչ լինել:

Զմտնանք մէջ բերել այստեղ մեր ին Ոսկեգործիկի մեկ նատուածն ևս, որով կը պարզուի Մակաբայեցւոց գրքին մէջ անորոշ թողուած տապանակի թաղանթն տեղւոյն ուր լինելու: Արդ, անտունն ներկեակս՝ (Մարկաւազ վարդապետան) մէջ բերելով Մակաբայեցւոց « Ելին եկաւ Երեմիա մարգարէ ի անդի անդ » խօսքերը, կը նարցնէ. « Եւ արդ ուր կայ տապանակն. — Պ. Նախ քան զաւերն Երուսաղեմի՝ Նաբուզոդոնոսորայ, Երեմիա մարգարէն տարաւ զտախտակն, յորում զղնակեալն պանակս ի մէջ Իբրոց յարնոյ՝ Բորիթայ և Սիւայի »: Այս բացորոշ վկայութիւնս է. թէ նախնեաց տեղւոյն « Իբրեւ կրնանք Մովսէս ի լեռնն տեսանել զժառանգութիւնն Աստուծոյ » բացատրութեան վերայ յերիւրուած չէ. զէտք է որ մեր անանն գրքին նման ննազոյն գրուածէ մի ներշնչուած ըլլայ:

catur » : Իսկ վերջինն՝ իւր խօսքն ուղղելով առ որս կը գրէր, կ'ըսէ . եթէ չէք հաւատար անկանոն գրոց, հաւատացէք բղթին առ Եբրայեցիս, ուր գրուած է վասն Երեմիայ, թէ « Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան », և այլն :

Գալով ուղղակի Մնացորդաց Երեմիայի կամ Բարուքայ մեզ ծանօթ յունարէն, եթովպարէն և հայկական խմբագրութիւններուն, մեռք կը գտնենք անոնց մէջ՝ իրարմէ աւելի կամ պակաս՝ այնպիսի պարագաներ, որոնք կը ցուցնեն՝ թէ դոցա հնագուսին անգամ գրութեան անդրազոյն սահմանը՝ փրկչական թուականի Գ-Բ դարէն անդին չի կրնար անցնիլ : Ահաւասիկ մեր փաստերը .

Ա. Գրուածիս մէջ Քրիստոսի գալստեան մասին Երեմիայի բերան գրուած մէկ գուշակութիւնը մէջ բերուելէն անմիջապէս յետոյ՝ կը դիմուի Տեսիլ Եսայեայ՝ կոչուած անվաւեր գրութեան, այսպէս . « Եւ յորժամ լուան ժողովուրդն զբանս զայս, բարկացեալ ասեն . Այս բանքս են, զոր Եսայի՝ որգի Ամովսայ՝ խօսեցաւ և ասէ . Տեսիլ զԱստուած և զորդին իոր », և այլն : Արդ՝ այս տեղիս իրօք ամենամօտ բառերով կրկնուած կը գտնենք յիշեալ տեսիլեան Թ և Ժ գլուխներուն մէջ . Իսկ որովհետև տեսիլեանս այս գլուխներն, — ինչպէս նաև Զ, Է և Ը գլուխներն և ԺԱ գլխու 4-4A համարներն, — արդէն ապացուցած է Ռընէ Բասսէ, թէ մնացածէն բոլորովին անկախ և փրկչական թուականի Բ-Գ դարերում խմբագրուած են քրիստոնեայ մէկուն ձեռքով, որ հաւանօրէն Մոնտանեանց աղանդին կը վերաբերէր, և այդ աղանդը՝ Պրիսկիլլեանց և Բոգոմիլաց մէջ տարածելու նպատակաւ հնարած է Եօթն երկնից նկարագիրն, որոց վերջնոյն մէջ Եսայեայ տեսնել կու տայ զԱստուած բարձրեալն և զՈրդի նորա սիրելի, այսպէս . « Je vis mon Seigneur et l'ange de l'Esprit saint » . և ուրիշ տեղ մի՝ « Le Seigneur Dieu, et Christ, qui doit être appelé Jésus dans le monde » . ուրեմն կը հետևի, որ տեղեացս բանաբաղն ևս այդ ժամանակամիջոցին կամ քիչ վերջ ապրած և գրած ըլլայ յիշեալ տողերը :

Բ. Ագարակն Ագրիպպայ, որ անկանոն գրուածիս մէջ կը յիշուի երկեցա՝ իբրև թատր Աբղամելեքայ վիպասանութեան, յունահռովմէական ծագումն ունի, և Քրիստոսէ յառաջ չէր կարող ծանօթ ըլլալ չրէից . վասն զի առաջին սնգամ այսպէս կոչուած կը գտնենք Ա-

1. Տես René Basset, Les Apocryphes étiopiens, traduits en français — III, L'Ascension d'Isaïe, Paris 1894, ch. IX, X.

րիստոսրուղեայ և Բերինիկեայ որդին, որ յամի Տեառն Կ1 յաջորդեց
 Հերովդէս մեծին՝ իբրև Թագաւոր Յուդայաստանի, և յամին Կ4 մե-
 աւա: Ասոր յաջորդեց իւր որդին Ազրիպպաս Հերովդէան, որ Վես-
 պասիանոսի և Տիտոսի մեծամեծ ծառայութիւններ մատոյց, և Նրու-
 սաղեմի կործանմանէն վերջ քաշուեցաւ ի Հռովմ, ուր և մեռաւ յա-
 մի Տեառն 90: Բայց որովհետև Ազրիպպաս ազարակն անոնցմէ միոյն
 կամ միւսոյն անուանէն ընդունեցաւ այդ յորջորջումը. ուրեմն անոր
 ականատես եղող անծանօթ գրիչն իսկ՝ Կ4-90 թուականէն առաջ
 չէր կարող գրել, այլ անկէց վերջ:


Պ. Երեմիայի յափշտակութիւնն և անշնչանալը պատմելէն վերջ,
 կ'աւանդուի գրութեանս մէջ, թէ « Թեա երից առաջ յարոյցեայ
 կանգնեցաւ »: Այս սեղ ամենամեծ նմանութիւն մի կայ Մատթէոսի
 ԻԷ. 63 տեղոյն. բայց որովհետև Երեմիա՝ Նոր Կտարարանին մէջ
 իբրև օրինակ Քրիստոսի յարութեան յիշուած չէ բնաւ, ուրեմն պէտք
 է ըսել իրաւամբ, թէ Երեմիայ կարծեցեալ այդ յարութիւնը՝ ուղ-
 դակի Քրիստոսի երեքօրեայ յարութենէն ներշնչուած է, հաւանօրէն
 Սաղուկեցւոց կամ անկէ ծնունդ առած մի ուրիշ յետնագոյն աղանդի
 դէմ: Մի և նոյն իջում ըսուած է ապապայ օծելոյն համար. « Լցցէ
 զքաղցեալս բարութեամբ », որ նոյն է Առկ. Ա. 53, « Զքաղցեալս
 լցոյց բարութեամբ » տեղոյն: Այսպէս նաև Նրուսաղեմի պաշարման
 ժամանակ հրեշտակներուն լամբար ի ձեռին պարսպաց վերայ կե-
 ցած գռչելն առ Երեմիա, և սորա անոնց ուղղած աղաչանքն, որ
 պէս զի խնայեն մինչև որ ինքն խօսի առ Աստուած՝ Յովհաննու
 Յայտնոգրեան Է. 1-2 նմանողութիւն է. իսկ որովհետև Մատթէոսի
 աւետարանն փրկչական թուականի Ա դարու սուղին կիսում գրուած
 է, Առկասուն՝ 61-63ին, և Յայտնութիւնն՝ 96ին. ուրեմն մեր գրուա-
 ծին յիշեալ տեղիքն ևս այդ ժամանակէն վերջ պէտք է որ մուտ
 գտած ըլլան:

Բ. Ամենամեծ նմանութիւն մ'ևս յայտնի կը տեսնուի Աբիմելե-
 քայ 66 տարի ընդ կաղնեաւ, կամ ըստ հայուն՝ գերեզմանոցին մէջ
 քնանալուն, և նախապէս քաղած թուզերու դալար մնալուն, անոնց-
 մով քաղաք մտնելուն և ոչ զոք ճանչնալուն և ծերուկին հետ ըրած
 խօսակցութեանն վերաբերեալ վիպաց և Եփեսոսի Էթրև մանկանց
 պատմութեան մէջ. այնպէս որ՝ Ամբղիքոսն և Աբիմելէք կը ներկայա-
 նան մեզ՝ մին միւսոյն իբրև ճշգրիտ նախագաղափար. բայց որովհետև
 գրուածոցս վերջինն՝ համեմատութեամբ աւելի հաւատարիմ վկայու-
 թիւններով իսկ հաստատուած է և ծանօթ ժամանակի մէջ կատա-

բուած իրողութեան մի պատմութիւն է՝ ըստ էական մասին. իսկ միւս կողմէն կը գիտցուի՝ թէ այդ վկայաբանութիւնն գրուած է յաւի Տեառն 386, Քէտզորոս և Քայիոս ազանդաւորաց ղէմ, որոնք Սաբակեցւոց պէս կ'ուրանային մեռելոց յարութիւնը. ուրեմն շատ հաւանական է հետեւցնել, թէ Աբղամելեքայ վէպն՝ այս ժամանակէս վերջ և այս հիման վերայ յերկրուած է և Բարուքայ գրքին մէջ ներմուծուած: Այս փաստս, չգիտեմ որ ուրիշներ ևս մէջ բերած ըլլան, բայց յամենայն ղէպս շատ վճռական է, և այնպիսի որոշ սահման մի կը գծէ յունարէն խմբագրութեան, որ ինչպէս տեսանք, անոր մէջ նշանակուած գրութեան վերաբերեալ տարեթուով իսկ, — զոր կանխաւ նկատեցինք, — կը հաստատուի: Ուստի մեր ընդարձակ քննութիւնըր ամփոփելով մէկ խօսքի մէջ՝ վերստին կը կրկնենք, թէ Մնացորդաց Բարուքայ երայական սկզբնագիրն՝ գրուած էր մերձադրասպէս յամիկն 150-100 Ն. Ք. հայկական համառօտ խմբագրութեան ընդգիրն՝ գրուած ըլլալու էր յամի Տեառն 275. իսկ յունարէն ժաւոր խմբագրութեան կատարուած է 383-475 տարիներու մէջ, յետ Գրիստոսի, առաջնոյն հիման վերայ:



Ե Զ Ր Ե Ր Ր Ո Ր Գ՝



յս անկանոն գրուածս՝ ոչ միայն իւր կարծեցեալ հնու-
թեան, այլ և վարդապետական ճոխ պարունակութեան
և ծանրակշիռ հեղինակութեան համար՝ ամէն ժողովրդոց
յարգանաց արժանացեր է, առաջին դարերէն ի վեր, և Ս.
Գրոց մէջ մուտ գտեր է, իրրև նուիրական գիրք: Այսպիսի մի
գրուած բնական է որ իւր վրայ դարձնէր նաև նոր ժամանակի քննա-
դատութեան խստապահանջ հայեացքը: Այս՝ վերջերս եղան այլ և
այլ լուրջ ուսումնասիրութիւններ, զորս առիթ պիտի ունենանք յի-
շելու, բայց գրոցս գաղտնիքն տակաւին լուծուած չեն վերջնակա-
նապէս, հետևաբար ընդարձակ ասպարէզ կայ նորանոր ուսումնասի-
րութեանց. այնու մանաւանդ՝ որ այդ գրութեան արևելեան թարգ-
մանութիւնք, բայց ի մասնաւորի հայկականն, իւր վերջին խօսքն
ըսած չէ դեռ: Ենովքայ և Գանիելի տեսիլներն ուսումնասիրած ժա-

1. Այս խորագիրս ունին մեր գրչագրերն, Վուլգատայի մէջ ընդհակառակն « Գ
գիրք Եզրայ » խորագրուած է: Խորագրաց տարբերութիւնքն՝ անտարակալս յառաջ
եկած են այն գիրքէն, զոր գրուած է այս գրուածս՝ Ս. Գրոց այլևայլ թարգմա-
նութեանց մէջ. այսինքն է՝ հայերէնի մէջ Գ Եզրի կոչուած է, որովհետև գէթ մեր
մասննադարանի բոլոր Աստուածաշունչներուն մէջ Բ Եզրէն վերջ զետեղուած է:
Լատին թարգմանութեան մէջ՝ Գ գիրք կոչուած է այն, որովհետև բաց ի երկու կա-
նոնական Եզրներէն՝ երրորդ անկանոն մ'էս, այսինքն են Ա և Բ գրութիւններն,
որք չեն գտնուիր հայկական, ասորական և այլ խմբագրութեանց մէջ, յառաջ
զետեղուած են քան զայն: Անկանոն գիրքս՝ Ս. Գրոց ասորի թարգմանութեան մէջ
Ա գիրք Եզրի կը կոչուի, վասն զի երկու կանոնական Եզրներէն յառաջ զետեղուած
է: Ըստ այսմ՝ յորջորջուած է նաև եթովպական և արաբական թարգմանութեանց
մէջ:

մանակ, արդէն իսկ գաղափար մի տուինք անոնց՝ այս գրուածիս հետ ունեցած աղերսի մասին. իսկ այժմ պիտի ուսումնասիրենք զայս իւր ամբողջութեամբը կամ էական խնդիրներով ի միասին:

Գրուածիս նախկին բնագիրն անյայտացած է, զոր քննադատներէն ոմանք երրայեցերէն լեզուով գրուած կը համարին, իսկ այլք՝ յունարէն: Երկաքանչիւր կարծեաց իսկ ի նպատակ՝ բացորոշ վկայութիւններ կամ շօշափելի յիշատակարանք չկան. սակայն մէկ կողմէն՝ յունական հայրերէն ոմանց անկէջ ըրած կոչումներն, և միւս կողմէն՝ այլ՝ յունարէն թարգմանութեան մի մինչև ցայսօր չերևին՝ կը թուին հաստատել վերջնոց կարծիքը, այսինքն թէ՛ բնագիրն ըստուգիւ յունարէն ըլլալու էր, և թէ այդ պատճառաւ է որ սոյն լեզուով թարգմանութիւն մ'ունենալու պէտքն զգացած չեն Յոյնք: Ահա այս տեսակէտով է, որ մեծ նշանակութիւն կը տրուի այլևայլ ժամանակներ կատարուած և այլևայլ գրականութեան մէջ պահուած թարգմանութիւններու, որոցմէ չորսը միայն հրատարակութեամբ ծանօթացած են գիտնոց և քննութեան ենթարկուած, զորս պէտք է համառօտիւ ծանօթացնել նաև մերայնոց. իսկ հայկականն՝ ոչ ըստ արժանւոյն ամենուն ծանօթացած է և ոչ իսկ ուսումնասիրուած. հետևաբար, մենք այլ նպատակ ունինք վերջնոյս միջոցով ջանալ պարզել նախկին բնագրի և անոր ծագման, և այլն, վերաբերեալ խնդիրները:

Ա. Ասորական թարգմանութիւնն, որ ցայսօր եղած քննութեանց համեմատ ամենէն հնազոյնն է, հրատարակուեցաւ՝ նախ, յամին 1868, Մեղիտլանու Ամրոսեան մատենադարանի տեսուչ Հ. Կերիանիի նախաձեռնութեամբ: Հրատարակութեանս, ինչպէս և ասորական թարգմանութեան, իբրև միակ ներկայացուցիչ կարծուած է յիշեալ մատենադարանի թիւ B. 21 (inf.), այն է Ս. Գրոց՝ ասորալեզիչնակ (Syro-Hexaplati) կոչուած օրինակն, զոր գիտնական հրատարակիչն Ջ. դարուժ գրուած կը համարի: Թարգմանութիւնս կը կրէ հետևեալ խորագիրը. Գիրք Եզր գրչի, որ կոչի Սաղաթիէ: Հ. Կերիանի՝ ասորի բնագրի հրատարակութենէն երկու տարի յառաջ ի լոյս ընծայած էր արդէն յիշեալ գործին (Հատ. Ա. Պրակ Բ) մէջ. անոր լատին թարգմանութիւնը: Ասորական խմբագրութիւնն, շոյլօրէն և կրկնարանութեամբ շարագրուած լինելով, միւսներէն աւելի ըն-

1. Տես Monumenta Sacra et profana, Tom, V, Fasc. I, p. 45-106. Mediolani 1868,

դարձակուած կ'երևի. բայց հանդերձ այսու կարելի է ըսել՝ թէ սա միւս թարգմանութիւններէն նուազ խանգարմանց ենթարկուած է, և հետևաբար՝ աւելի հասկանալի:

Բ. Արարական թարգմանութիւնն, որուն կրկին խմբագրութիւնը հասած են մեզ: Առաջինը Սիմոն Ոկքելի, յամին 1354 գրուած, Ոքոֆորդի Բողլէեան գրատան թիւ 251 ձեռագրէն անգղիարէն թարգմանելով հրատարակեց. իսկ բուն բնագիրն այլ, յամին 1863, լոյս տեսաւ Հենր. Էվալդի¹ ձեռքով, որ բաց ի Բողլէեանէն՝ Վատիկանի գրատան մի ուրիշ ևս ի գործ ածեց: Այս խմբագրութիւնս յունարէն բնագրի հետքեր ցոյց կու տայ: Արարական Բ խմբագրութիւնն, որ ընդհակառակն մեծապէս կը տարբերի առաջինէն և յունարենէ անկախ կ'երևի, կը զտնուի Բողլէեան թիւ 260 և վատիկանեան թիւ 462 գրչագրաց մէջ: Էվալդ, յամին 1865, գայս ևս ի լոյս ընծայեց: Սոյն՝ յամին 1877 վատիկանեան ձեռագրի համաձայն լատիներենի թարգմանուելով՝ նորէն հրատարակուեցաւ Գիլդեմայստէրի աշխատասիրութեամբ²: Այս հրատարակութեանս մէջ՝ ի փակագծի նշանակուած են նաև 1, 6, 7 օրինակաց տարբերութիւններն, ինչպէս և ենթադրուած յոյն բնագրի համաձայնող ինչ ինչ ընթերցուածներ: Այս խմբագրութիւնս, զոր ունէինք ի ձեռին, աւելի համառօտարան է քան զասորի և լատին թարգմանութիւններն, բայց յաճախ աւելի ասոնց հետ կը համաձայնի՝ քան հայերենին: Լատին թարգմանութեան ԺԵ և ԺԶ գլուխներն՝ ասոր մէջ ևս կը պակսին: Ասոր մէջ ըստ մեծի մասին կը պակսին այն կասկածելի տեղիքն, որոնք յետ ժամանակաց ներմուծուած կը համարուին Եզրի անկանոն գրոց մէջ: Եթէ հաւատարիմ թարգմանութիւն մ'եղած համարինք գայս, բաւական կուտաններ կու տայ կարծելու՝ թէ նորա նախկին բնագիրն ևս այժմու ասորի և այլ թարգմանութիւններէն շատ տարբեր եղած ըլլալու էր. սակայն ինձ հաւանական կ'երևի, թէ դորա խմբագրողն և ոչ իսկ յոյն բնագիրը տեսած է, այլ կամ ասորուոյն կամ արարական առաջին թարգմանութեան վրայ յօրինած է գայն՝ զեղչելով և փոփոխելով իրեն լաւագոյն երևցած կերպով:

Գ. Եթովպական Հին թարգմանութիւնն, զոր առաջին անգամ հրատարակեց Ռիչարդ Լորանս՝ Բողլէեան թիւ 7 ձեռագրի վրայէն.

1. S^h Abhandlung der Königl. Geselsch. der Wissensch. zu Göttingen 1863. XI. Bond.

2. Որ Կը Կըէ այս Խորագիրս. Esdrae liber quartus arabice e cod. Vaticano, Bonn 1877.

իսկ Գիլգաման վերստին տպագրեց զայն եթովպական հին կտակարանի ընդարձակ հրատարակութեան մէջ, ի դորժ ամեկով ուրիշ օրինակներ ևս: Էվալդ, Հիլքէնֆէլդ¹ և Պրետորիոս ևս կարևոր սրբագրութիւններ և նշանաւոր գիտադոժիւններ ըրած են առանձինն այս Թարգմանութեան մասին, որոց վերայ կը գարձնենք և մերայոց ուշագրութիւնը:

Գ. Լատին Թարգմանութիւնն, որ հաւասար ասորականին և գուցէ թէ աւելի հին է քան զայն, այլևայլ անգամ հրատարակուած է, մերթ այս ինչ և մերթ այն ձեռագրի վրայէն: Այս Թարգմանութիւնս ծանօթ ըլլալու է և մեր տգգայնոց, զի Ոսկան Վ. ձեռքով հայերենի փոխուելով հրատարակուած է նախ, յամին 1666, յԱմբաստերդամ Աստուածաշնչի մէջ, և ապա յամին 1705 ի Կ. պոլիս, Պետրոս լատինացւոյ ջանիւք եղած Ս. Գրոց Բ տպագրութեան մէջ: Վերջինն և ամենէն աւելի նշանաւորն է Յ. Էրմիտաժ Ռոբինսոնի աշխատասիրութեամբ յամին 1895 եղած հրատարակութիւնն², բաղադատութեամբ վեց օրինակաց³, զոր նաև մենք ի ձեռին ունենալու և հայերենին հետ բաղդատելու բաղզն ունեցանք:

Ե. Հայկական Թարգմանութիւնն, որ միւսներէն երեցագոյն է, ի բաց առեալ ասորին և լատինականը, հրատարակուեցաւ առաջին անգամ, այն է յամին 1805, ի Վինետիկ՝ Հ. Զօհրայեան բանիբուն միթարեան վարդապետի աշխատութեամբ կատարուած՝ հայերէն Աստուածաշնչի մեծայարգ տպագրութեան մէջ, առանձին յաւելուածով անկանոն գրոց: Այս հրատարակութեանս մէջ Հ. Զօհ-

1. Տես Messias Judaeorum ընդարձակ և շահագրգիռ երկասիրութիւնը:

2. Տես Texts and Studies, Vol. III. N^o. 2, The fourth Book of Ezras, Cambridge, 1895.

3. Այս գրադրերն են Ա. Տ. այսիւքն է՝ Cod. Sangermanensis, որ այժմ կը գտնուի Պարիսու ազգ. մասնենադարանին մէջ, երկնասոր, թիւ 14504, 14505: Գրչագիրս գրուած է յամի Տեան 822: Սաբատիէ իսկ գործածած է զայն, իւր Bibliorum Sacrorum latine versionis antiquae, Reims, 1743-1749, գործին չամար: Բ. Ա, այսիւքն է՝ Cod. Ambianensis, թիւ 10, որ կը գտնուի Ամիենն քաղաքի տասարեակոց գրատան մէջ: Բերթեր (Notice sur quelques textes latins inédits de l'A. T. 1893) Թ գարուն գրուած կը համարի այս ձեռագիրս: Գ. C, այսիւքն է՝ Cod. Complutensis, որ կը գտնուի Մադրիդի Կեդր. Համալսարանի գրատան մէջ, և է թիւ 21: Գ. M, այն է՝ Cod. Mazarineus ի Պարիս, և է թիւ 5, 4: Ե. V, այն է՝ Cod. Abulensis, որ կը գտնուի Մադրիդի ազգ. գրատան մէջ: Զ. L, այսիւքն է՝ Cod. Legionensis, թիւ 1-3, որ կը գտնուի Ս. Իսիդորի գրատան մէջ, և ըստ Բերթերի գրուած է յամի Տեան 1162:

րապեանն՝ յոյժ իմաստութեամբ Գ Եզրը գլխակարգութեանց և թուահամարներու վերածած է; Համաձայն լատին թարգմանութեան (թէ և շատ տեղ գլխովին անհամաձայն կ'ընթանան իրարու), որոնք մեծ դիւրութիւն կը պատճառեն ուսումնասիրաց՝ ի մասին բաղդատութեան: Առ այս յոյժ պարտական եմք Հ. Զօհրապեանին. սակայն դիտել կու տանք և զայս, որ Զօհրապեանի հրատարակութեան Ա գլուխն կը համապատասխանէ լատին թարգմանութեան Գ գլխոյն. վասն զի վերջնոյս Ա և Բ գլուխներն կը պակսին նաև հայկական թարգմանութեան մէջ: Այս պատճառաւ իսկ զօհրապեան հրատարակութեան մէջ Ա գլխոյն անմիջապէս կը յաջորդէ Դ գլուխն: Բ. սա ժԻ գլխով կ'աւարտի, իսկ լատինն ունի և ժԵ-ժԶ գլուխներն աւելի, որոնք Ա և Բ գլուխներուն հետ կը կազմէին երբեմն Եզրի Գ գիրքը, համաձայն Օ և Մ օրինակաց, ինչպէս Գ-ժԻ գլուխներն այլ կը կազմէին Գ գիրքը: Լատիներէն A օրինակն առկէ տարբեր բաժանումն ունի ըստ Երմ. Ռորինսոնի, այսինքն է, Գ Եզր = գլ. Ա-Բ, Դ Եզր = գլ. Գ-ժԻ, Ե Եզր = գլ. ժԵ-ժԶ: Այս նախագիտելիքս, զոր դիտմամբ մէջ կը բերենք, յետոյ պիտի ծառայեն իբրև բանալի՝ Եզրայ անկանոն գրքի բնագրին և թարգմանութեանց գաղտնիքը բանալու:

Քաջով ուղղակի վեներտկեան վերջին հրատարակութեան, դիտել կու տանք, որ կատարուած է ըստ ամենայնի համաձայն Հ. Զօհրապեանի հրատարակութեան, առանց կարևորութիւն տալու կամ նշանակելու ուրիշ գրչագրաց դուզնաքեայ կարծուած տարբերութիւնքը, որոնք անծանօթ էին թերևս գիտնական Մխիթարեանին: Այս բանս ակներև է ի ստորև 25 իջի դրուած ծանօթութենէն, որ նոյն է Զօհրապեանի հրատարակութեան 13 իջում տրուած տեղեկութեան հետ: Սակայն կայ տարբերութիւն մի նկատմամբ գլխակարգութեանց, և երանի թէ բնաւ չլինէր. այսինքն է, Ա գլխով կը սկսի և ժԲ գլխով կ'աւարտի. որովհետև նոր հրատարակիչն՝ Զօհրապեանի հրատարակութեան Դ գլխոյն տեղ՝ զԲ գլուխը կարգած է: Այս բանս եղած է կամ Զօհրապեանի միտքը լաւ չհասկանալէն և կամ փոքրիկ անուշադրութեամբ մի, որով սպրդած է մի ուրիշ տպագրական վրիպակ. այսինքն է, Գ գլուխն կրկնուած է և Թ այլ բնաւ նշանակուած չէ: Իսկ թուահամարները բառնալու միակ պատճառն եղած է, հաւասարութիւն պահել անվաւերական գրոց բոլոր հրատարակութեան մէջ. այսինքն է, զի միւս գրուածներէն ոչ մին թուահամարներու կամ տանց բաժնուած չէ դժբաղդաբար, որ եթէ հոգացուէր՝ մեծ դիւրութիւն պիտի պատճառէր:

վերոյիշեալ թարգմանութիւններէն ոչ մին ունի այնքան օրինակներ, ինչպէս Հայկականն. միայն մեր մատենադարանին մէջ ունինք յոր ընտիր օրինակներ¹, նոյնքան և աւելի օրինակք² կան Ելմիածնամ. այսպէս և յԵրուսաղէմ և ուրիշ ձեռագրատանց մէջ ըլլալուն ոչ ինչ նուազ օրինակներ: Այս իրողութիւնս ցոյց կու տայ մեզ, թէ Գ Եզրն՝ իբրև լոկ Հնութեան յիշատակարան մը պահած չեն չաք, այլ իբրև Հրահանգիչ գրութիւն ի գործ ևս ածած եկեղեցւոյ մէջ: Ասոր արդիւնք Համարելի է և Հետևեալ երևոյթն. այսինքն է, այբան և այսպիսի ներկայացուցիչք հաւատարմութեամբ պահպանած են զայն, առանց փոփոխութեան և յաւելումաց ենթարկելու. վասն զի սոցա իբրամէ ունեցած տարբերութիւնքն՝ նկատմամբ միւս թարգմանութեանց ներկայացուցիչներուն՝ գրեթէ ոչ ինչ են³, գէթ մեր ունեցած օրինակներէն զատելով: Կարելի՞ է արդեօք իբրև պատճառ Հայ գրչագրաց այսպիսի զարմանալի միօրինակութեան համարի՞ կամ Գ Եզրի Հայկական թարգմանութեան՝ կարծուած ժամանակէն շատ վերջ թարգմանուած լինելն, և կամ ըսել՝ թէ յիշեալ օրինակներն բոլորն ևս մէկմէկէ ընդօրինակուած ըլլան: Առաջին կետի նկատմամբ մեր գրատան Աստուածաշունչներն նպաստաւոր կ'երևին,

1. Այսինքն են, Գ Աստուածաշունչն. զրեալ յամբ Տեան 1648, Դ Աստուածաշունչն, զրեալ 1653ին, Է Աստուածաշունչն, գրուած յամբն 1651, և Թ Աստուածաշունչն, որ ԺԷ զարում գրուած կ'երևի:

2. Որոնք են ըստ Գալուստ Տեր-Մկրտչեանի՝ Ա. Թիւ 31 Աստուածաշունչն ՚հին Բուկան, — Բ. Թիւ 29 Աստուածաշունչն՝ գրուած ի Թուրն Հայոց 242 = 1517, — Գ. Թիւ 27 Աստուածաշունչն, զրեալ ի Թու. 4. Ռիլ = 1619, — Դ. Թիւ 20 Աստուածաշունչն, զրեալ ի Ծօշ ի Թու. ՌձԹ = 1660:

3. Ար նշանակենք այս տեղ թ և Դ Աստուածաշունչներու տարբերութիւնքը, որ յիշած չէ Ջօնապետան ի շարս իւր գործածած օրինակաց: Գլ. Ա. 8, թ Աստուածաշունչն ունի՝ « ի նմանք », — 13. « անօրէնութիւնք », — նամ. 14. թ և Դ օրինակներն ունին: « Աքրամ » , — 34. Գ օրին. « գտի », — 35. Դ. 1. ունի Դ օրին. « որոյ անուն նորա », — 13. « ի դարձի », — 17. ունի Դ, թ օր. « երթեալ կուեալ », — 37. ըստ Դ օր. « փութաց », իսկ ըստ թ օր. « փութաց », տպգ. « փութաց չիք ուրեք ». — 39. թ օր. ունի՝ « որ քարկուծեանց են պտուղք ». — 38. թ. 18. օր. « խնդրեսցես ». — 51. Դ օր. « ո՞վ ի ձեռն » կը գրէ վրիպակաւ. — 41. Ե. 18. թ օր. « չարաց », — 36. թ օր. « և ասացի ասս ինձ. Եւ ասէ. ասս ինձ », — 43. թ օր. « նամբորիցե » . — 33. թ, Դ օր. « աստացին զքեզ » : Գլ. Է. 35. թ օր. « և հետ դործոց ». — անդ. « նարաւոյ ». — 40. թ օր. « Սենեքերեմի ». — Առօթը 33. նամ. « սրբովք քովք կամօք ունին », — անդ. « յիւրեանց գործոց » : Գլ. Թ. 15. ունին « զիւր Թուեսցի », — 23. « երթեալ ». — 26. « Արլոփ ». — Գլ. ԺԲ. 46. ունին « ասեմ զնոսա » : Գլ. ԺԴ. 26. « մինչև ի կարելի ». — 47. « չարաթիւն ամաց » ունի թ օրինակն:

վասն զի Գ Եզրը պարունակող օրինակներն ժն դարէն վերջ ընդ-
հանրապէս գրուած կ'երևին, իսկ ԺԻ-ԺԵ դարու սկիզբները գրուած-
ներն՝ չունին զայն: Սակայն այս մասնական երևոյթ մ'է, ըստ իս,
յորմէ չենք կրնար հետևցնել՝ թէ ժն դարուն առաջին անգամ սկը-
սած ըլլան Հայք՝ Գ Եզրը Աստուածաշունչ մատենին մէջ անցընել: Եւ
յիրաւի, եթէ ճիշդ է Գալուստ Տէր-Մկրտչեանի էջմիածնէն ինձ Հա-
ղորդածն, այն վանաց Հարուստ գրատան թիւ 29 Աստուածաշունչն,
որ գրուած է յամի Տեառն 1317, և թիւ 31 Աստուածաշունչն ան-
թուական, որ նոյնչափ և աւելի հին է, կը պարունակեն նոյնպէս
Գ Եզրը՝ յետ գրոցն նէեմեայ: Բ. Մխիթար Այրիվանեցոյ ժամա-
նակագրութեան մէջ պաշտօնած Սարկաւագ վարդապետի ցանկին Հա-
մեմատ, « Եզր Սաղաթիէլ » նոյն իսկ ԺԱ-ԺԲ դարում հին կտակա-
րանի մէջ անցուած էր, և այժմեանէն բոլորովին տարբեր տեղ կը
գրաւէր, այսինքն է՝ ընդ մէջ գրոցն Եսթերի և Յոբայ: Այս պատ-
ճառաւ անուշտ « Եզր երրորդ » մակագրուած չէ հոն, այլ Եզր Սա-
ղաթիէլ պարզապէս:

Սակայն ուշադրութեան արժանաւոր և միանգամայն դժուարա-
լուծելի կնիւնն է Հետևեալն. այսինքն է՝ իւր ներկայացուցչաց հետ
կատարելապէս համընթացող Հայկական Թարգմանութիւնն՝ ասորի,
լատին և արաբական Թարգմանութիւններէն ընդ Հակառակն այնքան
և այնպիսի հոծ տարբերութիւններով կը խոտորի, որ յաճախ ան-
կարելի կը լինի իւրաքանչիւր երեսի մէջ կարենալ նշանակել այդ տար-
բերութիւնները, վասն զի դոքա լոկ բառից և բացատրութեանց մէջ
չեն կայանար, այլ ամբողջական տուներու, ընդարձակ պարբերու-
թեանց և երբեմն ամբողջական էջերու մէջ, որոնք երբեմն յաւելուա-
ծի կերպարանք ունին և երբեմն այլ յապաւմանց: Կան դարձեալ
տեղեր, որոնք կամ այլ ընդ այլոյ Թարգմանուած են՝ անհասկացու-
ղութեամբ Թարգմանչին, կամ խանգարմունք են գրչագրաց և կամ
արդիւնք մեզ անյայտ բնագրի մի: Լաւ կը լինէր որ Հ. Զօհրապեան
կանոնական գրոց Հրատարակութեան մէջ իւր գործածած դրու-
թիւնը՝ Հօս ևս ի գործ ածէր. այսինքն է՝ Հայ գրչագրաց տարբե-
րութենէն դուրս՝ գէթ լատին Թարգմանութեան հետ ունեցած տար-
բերութիւնքն ևս Հանդերձ պատճառօք դնէր ի ստորև. սակայն նա
այս բանս ըրած չէ: Բայց Հանդերձ այսու պէտք է ըսել, թէ նա
բաղդատած էր զհայն լատին Թարգմանութեան հետ և իրեն լաւ

տեղեկացած, ինչպէս որ ինքն անձամբ կը տեղեկագրէ զայս համառօտիւ՝ Յաւելուածի նախադրութեան մէջ¹,

Զօհրապեանի հրատարակութենէն, այսինքն է՝ 1805էն՝ մինչև 1864՝ Եզրի անկանոն գրքի հայկական թարգմանութիւնն, կ'երևի թէ, դեռ ծանօթացած չէր այս մասնագիտութեամբ պարապող եւրոպացի գիտնականներուն. վասն զի Էվալդ², դեռ 1863ին խօսելով այս գրուածիս մասին, կը յայտարարէր՝ թէ անոր լատին, եթովպական և արաբերէն թարգմանութիւնքը մեզ ծանօթ են: Հ. Մ. Կերիանի³ գրեթէ առաջին անգամ յամին 1864 առիթ ունեցաւ խօսելու Զօհրապեանի հրատարակութեան վերայ: Հեղինակիս այն բանախօսութիւնը առ ձեռն չունենալով, ես կը բաւականանամ անկէ քաղուածաբար մի այլ գրութեան⁴ մէջ բերուած խօսքերով: Աստ՝ հե-

1. Ան նորա խօսքերն. « Այլ, ևս անգամանօք շարադրութեան ոճոյն՝ յայտնադէտ երևէր, յետոյ ուրեք (այսինքն է՝ յետ Բ զրոցի Եզրի) թարգմանեալ է և մուծեալ ի կանոն գրոց. այլ թէ յորմէ սկզբնազօրէ, և երբ կամ ո՞ր ձևուամբ, չուիմ ինչ ասել ստուգութեամբ: Քանզի Վաչեղի Վաչեղի մը Բաղրատի զորս զայն՝ ընդ լատինացիս, զոր թարգմանեաց Ոսկան, ասկի զանգունութեան ցրտանիս՝ է նոստ, միշտ Բաղրատ՝ ուրիս զմիտ իս Բնասի համեմատութեան. թէպէտև այնու ամենայնև լանցաբար ըստ կարի զամառայնութիւն զլսոց և ասոց լատինականին՝ առնթեր նշանակել, զոր և երկու ի վերջասացեալ օրինակացն սկսեալ էին ասնել, և անկասոր թողեալ »:

2. Որ Abhandlungen der Königl. Gesellsch. der Wissensch. zu Göttingen. XI. Band, Hist. — Philos. classe, s. 136 շարքին մէջ հրատարակած իւր երկին մէջ կ'ըսէ, թէ « Անորոջ գրուածիս սկզբնազօրն՝ մինչև ցայսօր մեզ համար բարբոթիս անյայտ ձեացած է, և անոր նախկին պարունակութիւնը՝ միայն մեզ համար անստուգութեամբ վերականգնելն՝ ունի իւր մեծազոյն գծուարութիւնքը »: Հայերենի մասին ընաւ խօսք չկայ:

3. Այս ինքն է՝ *Sul Das vierte Esrabuch del Dr. Enrico Ewald, Osservazioni*, հրատարակեալ ի Sessione Reg. Ist. Longob. Scienze e Letteratura կոչուած զարծոց մէջ:

4. Այն է *Liber IV Esdrae syriace*, որ գրուած է այսպէս, ըստ ընալքին. « Questa versione (այսերենն) confrontata colle altre, latina, siriaca ed araba, e colla recensione (etiopica) di Ewald, ha varie trasposizioni e lacune ed anche dilungamenti; e dall'esame comparativo di varii passi, rende in generale più il senso, abbreviando, che non il testo letterale, quale più o meno fedelmente è riportato dalle altre versioni. Յետոյ խօսելով, յէջ 42, ասորի ընալքի մասին, զոր ինքն թարգմանեց ի լատին լեզու, կը յաւելու այսպէս. « Atque a nostra (ասորականէն) fortasse fluxit et armena (թարգմանութիւնն) edita in Bibliis vulgatis a Zohrab, quacum nondum contuli ». այսինքն է, « ասորիէն յառաջ եկած է Թերեւս նաև հայկական թարգմանութիւնն, հրատարակեալ ի Զօհրապեանի, թէպէտև դեռ ստուգած չիմ զայն »:

զինակն կը ծանուցանէ, թէ բաղդատելով Հայկական խմբագրութիւնը՝ լատին, ասորի և արաբական թարգմանութեանց հետ, գրտած էր անոր մէջ այլևայլ տեղափոխութիւններ, յապաւումներ և ընդդայնումներ: Միով բանիւ, այլևայլ տեղեաց քննութենէն կը տեսնուի, թէ Հայկական խմբագրութիւնն ընդհանրապէս բնագրի իմաստը կը ներկայացնէ մեզ, համառօտելով, քան թէ զբնագրին ինքնին նիւթապէս, որուն սակայն իրարմէ աւելի կամ պակաս հաւատարիմ մնացեր են յիշեալ թարգմանութիւններն:

Ի ստորև դրուած ծանօթութիւններէն կը տեսնուի, թէ Խնչպէս Զօհրապեանին՝ այսպէս և Մ. Կերիանեայ դիտողութիւններն ճիշդ են. բայց այդպիսի յայտարարութեամբ մի միայն՝ յիշեալ թարգմանութեանց և բնագրին վերաբերեալ կնճռոտ խնդիրներն բնաւ լուծուած չեն կրնար համարուիլ. վասն զի բաղդատութեան նպատակն ըլլալու է, գիտնալ թէ որո՞նք են Հայերէն խմբագրութեան այն տեղիքն, ոչք բոլորովին անհամաձայն կ'ընթանան ասորի, լատին և այլ խմբագրութեանց. Խնչ պատճառներէ յառաջ եկած և ինչպիսի առանձնայատկութիւններ ունին. նա մանաւանդ որ աւելի զարմանալին է, այսպիսի հանգամանաց ներքև զանուող Հայկական խմբագրութիւնն՝ Խնչպէս կարէ ասորականէն ծագումն առած լինել, ինչպէս կ'ենթադրէ Կերիանի: Այսպիսի պարագայից մէջ աւելի բանաւոր չէ, որ Հայկական թարգմանութիւնն մանաւանդ ուղղակի յունարէն կամ երբայեցերէն հին բնագրին հետ աղերս ունենայ: Ահաւասիկ կարևոր և էական կէտեր, զորս ապացուցած չեն Զօհրապեան և Կերիանի, առաջնոյն՝ ասորական, եթովպական և արաբական թարգմանութեանց հրատարակութիւններն դեռ ծանօթ չլինելով, իսկ վերջնոյս՝ Հայերէն լեզուն: Ուստի այս նպատակաւ ուզեցինք մենք նախ Հայերէնը ծայրէ ի ծայր բաղդատել լատին, ասորի և արաբական Բ թարգմանութեանց՝ հետ. նշանակելով անոնց իրարմէ ունեցած նշանաւոր տարբերութիւնքը, հանդերձ կարևոր դիտողութեամբք:

Ասորւոյն տարբերութիւնն զրոց տիտղոսէն կը սկսի, որ է Գիրք Եզրի գրչի, որ կոչի Սաղաթիէի. Արք. տիտղոսն է ըստ վատիկանեան ԱԲ. 462 (V) ձեռագրին Համաձայն, Գիրք Եզրի մարգարէի:

1. Ճշմարտութեան համար կը ծանուցանեմ, թէ ասորերէնի և արաբերէնի տեղեակ չլինելու պատճառաւ, համեմատութիւններն ուղղակի այն բնագրոց հետ չկարացի ընել, այլ անոնց վրայէն Կերիանեայ և Գրիգորիոսաբեի ձեռքով կատարուած լատիներէն հրատարակութեանց հետ, զորս կանխաւ յիշատակեցի:

դր Ուզայր կուեն. լատին S օրինակն՝ Համաձայն արարացւոյն ունի՝ Liber Ezrae prophetae, etc. Հայն՝ ոչ ասորւոյն գրիչ և Սաբրէի բառերն ունի, և ոչ իսկ լատինի և արարացւոցն մարգարե յաւելուածն. ուստի, եթէ թարգմանիչն ըստ կամս Համառօտած չէ այս տիտղոսը, պէտք է որ ուրիշ բնագրէ մի յառաջ եկած լինի:

Ասորին՝ Գլ. Ա. 1. ի սկզբան երկու նշանաւոր տարբերութիւններ ունի. այսինքն է՝ « Յամին երեսներորդի կործանման Երուսաղէմի... և տեսանէի զչքուսն Սիոնի և զլիութիւն այնոցիկ՝ որ քնակէին ի Բաբելոն »: Արք. փոխանակ առաջին ենթագծուած բառերուն՝ ունի « յետ շինութեան քաղաքին մերոյ Բաբելոնի », և փոխանակ վերջնոց՝ « և անկաւ ի միտս իմ աւերումն Սիոնի և լքումն նորին ». լատինն՝ ըստ ամենայնի կը Համաձայնի ասորւոյն, գրելով. « Anno tricesimo ruinae civitatis... vidi desertionem Sion et abundantiam eorum qui habitabant in Babilone ». Հայն՝ նկատմամբ առաջին տեղւոյն՝ երեք թարգմանութիւններէն ևս կը տարբերի. վասն զի « Յամին երեսներորդ » էն վերջ չունի ասորւոյն կործանման Երուսաղէմի բառերը. սակայն « վասն շինածոյն Բաբելոնի » և « վասն աւերածոյն Սիոնի » բացատրութեամբք՝ աւելի արարացւոյն կը համաձայնի, որ յայտնի նշան մ'է; թէ ըստ քմաց յառաջ եկած չէ ասորիէն և լատինէն ունեցած տարբերութիւնն, այլ այնպիսի բնագրէ մի, որ ծանօթ ըլլալու էր նաև արարական Բ խմբագրութեան հեղինակին:

Գլ. Գ. 17-23 Հատուածն՝ « Et cum educeres semen ejus ex Egypto et finitae sunt horae », յորում ասորւոյն հետ՝ լատինն ևս կատարեալ Համաձայնութեամբ կը պատմեն (Ինաստոյրեան Սողոմոնի ժե և ժԸ գլուխներուն վերայ յերիւրուած) Աստուծոյ սքանչելիքն և փառաց անցքը՝ չորեքկերպեան յայտնութեամբ, այսինքն է. հրով, երկրաշարժիս, հողմով և կարկտառ. երկինքը խոնարհեցնելն, գերկիրս Հաստաաեղն և փոփոխելն, անդունդները սասանեցնելն, դարերը յեղափոխելն, օրինաց տուութիւնն և Եսայեցւոց խառատութիւնը, այլովք Հանդերձ, Հայերենին մէջ բոլորովին տարբեր կերպարանք առած է. այսինքն է, Հոս փոխանակ այլաբանականին՝ Արրաւհամէն սկսեալ մինչև Սողոմոն նահապետները կը յիշատակուին յանուանէ, իրենց վերաբերեալ պատմական գէպքերով, որ իբրև շարայարութիւն մ'առաջին տանց՝ մէջ կը բերուին: Արք. Բ խմբագրութիւնն՝ թէ և փոքր ինչ Համառօտ՝ բայց բառական կերպով ասորւոյն և լատինի ընթերցուածը կը Հաստատէ. միայն թէ

փոխանակ Աս. և Լատ. portas quatuor^{or}ի՛ ունի, ըստ Թարգմանութեան Գիլգեմայսերի, super quatuor animalia, (այսինքն է, per ignem, terraemotum, ventum, gelu), յորում հրատարակիչս կը գտնէ, թէ փոխանակ Յիթասի Յիթաս ըլլալու էր յունարէն անյայտացած բնագրի մէջ: Հայն՝ ոչ մի յիշատակութիւն չունի այս մասին՝ հին բնագիրը լուսաբանելու համար, և այնպէս կ'երևի՝ թէ Եզրի անվանք բնագրէն աւելի՛ ըստ կամս յորինուած ըլլան Թարգմանչէն. հակառակ դէպքում՝ յոյժ հետաքրքրական պիտի լինի այսպիսի մի խոտորում յիշեալ երեք Թարգմանութիւններէն:

Գլ. Դ. 28-32 «Seminatum est enim malum — magnam arcam incipient facere» համարներն, յորս ասորին, լատինն և արաբացին միաբան և պայծառ կերպով կ'աւանդեն, թէ մեղք և չարիք, Ադամէն սկսեալ, մարդկային բոլոր բնութեան մէջ սփռուած է՝ որպէս սերմն չար ընդ բարւոյն. ուստի, մինչև որ չար սերմն չըհնձուի՝ ագարակն բարւոյն չի յաջողիր. այսպէս նաև չարիք ամբարշտաց՝ մինչև որ արդարոց վրայէն չանցնին, սոքա չեն կարող վարձուց արժանանալ: Հայերէնն այնքան անորոշ է և խառնակ, որուն համար կարող ենք ասել, թէ կամ Թարգմանիչն առանց լուհակնալու համառօտել ուզած է իր բնագիրը, և կամ ըստ դիպաց խանգարուած է: Նոյն գլխոյ 35 համարին մէջ, խօսելով արդարոց հատուցման մասին, կը գրեն միաբան Աս. և Լատինն. «Nonne enim de his interrogaverunt animae justorum in *Promptuariis suis?*» (ի կայանս իւրեանց). Աբբ. կը գրէ նոյն բանը՝ բայց նշանաւոր տարբերութեամբ մի, այսպէս. «Impatientes *diuturnitatis* (տևողութեան) justorum animae dixerunt», etc: Հայն ենթագծուած խօսքերէն ոչ մին ունի և ոչ այլ միւսը, այլ կը գրէ. «Քանզի վասն նորա խնդրեցին ի Բարձրեշոյն անձինք արդարոց, և ասեն»: Աբբ, դիտելով որ է գլխու 32 համարում ևս հայն՝ հակառակ ասորւոյն և լատինին, որոց այս անգամ կը համաձայնի և՛ արաբացին, զեղչած է բառն *promptuarium* = կայան, կրնանք ըսել թէ դիպուածի արդիւնք չէ այս, այլ կամ դիտմամբ զայն՝ Բարձրեշոյն փոխած է, Կայանադրաց մոլորութենէն խորշելու համար, և կամ Ծօթանասնից Կփստօցի համաձայն, որուն հետ ծանօթ ըլլալու էր Եզրի յոյն բնագիրն:

36 համարին մէջ Աս. ունի *Ramiel angelus*. Լատինն ունի *Hieremiel archangelus* ըստ S. օրինակին, *Uriel* ըստ C. օր. և *Remihel* ըստ M. օրինակին. Աբբ. ունի *Erêel angelus* (I. *Erémil*, b

Uriel). Հայն միայն ունի ընդհակառակն, Տէր: Լատին M օր. և Ար. 1 օրինակն կը հաստատեն ասորւոյն ընթերցումը. սակայն այս նա յունարենի յատուկ շերեւոր: 41 Համարն, ուր կը յիշուին, ըստ ասորւոյն և լատին և արբ. Թարգմանութեանց, « դժոխք և կայանք հագոց », բողոքովին կը պակասի Հայերենի մէջ:

Ե զլիու 15 Համարին մէջ Հայն ունի Որդիէջ անունը՝ « մի տըրտմիր — գտեր շնորհս յԱստուծոյ » 3 տող պատգամով ի միասին, որ կը պակսի միւս Թարգմանութեանց մէջ. այս յայտնի նշանն է, թէ Կ զլիու 36 տան և այս տեղւոյս մէջ փոխադրութիւն մի կրած է Հայերէնն: Այս բանս կը հաստատուի 20 Համարէն, ուր միւս Թարգմանութիւնը վերստին կը յիշեն նոյն անունը, մինչդեռ Հայն պարզապէս « Հրեշտակն » ըսելով կ'անցնի, մտաւարապէս յիշատակելոյն պատճառաւ:

35 Համարին « Որ ի վեր քան զքեզ — գաղտնեաց » հինգ տողերն՝ միւս Թարգմանութեանց մէջ կը պակսին. իսկ 36 և 37 Համարներն այլ ամենահամառօտ կերպով մէջ կը բերուին. մինչդեռ Հայերենի մէջ եռապատիկ աւելի է, Յորայ գրոց 14 զլիոյն վերայ բնագնին նուրբ խորհրդածութիւններով ընդլայնեալ: Այս մասունքս յոյժ հետաքրքրական են Յորայ գրոց բնագրի նկատմամբ, եթէ Հնազայն աղբերէ մ'առնուած են. և շատ հաւանական է որ այդպէս եղած լինի, որովհետև միւս Թարգմանութիւններն ևս այդ կէտերէն մի քանիոսն յիշատակութիւն կ'ընեն: 39 Համարը Հայ Թարգմանիչն դիտմամբ զեղջած է, վասն զի այս տեղ եղած Եզրի Հարցումն՝ 38 Համարին մէջ լռելեայն կը պարունակուի արդէն:

Նշանաւոր է նոյնպէս Հայերենի և միւս Թարգմանութեանց մէջ եղած տարբերութիւնն 45 Համարում. զի ուր Ա. և Լատինն՝ միայն ներկայից և կենդանեաց վերայ ունեցած աստուածային տեսչութեան մասին կը խօսին, և Հայն Հանդերձեալ աշխարհի և մեռելոց վերայ ևս կը շեշտէ զայն, նշանաւոր պարագաներով. օրինակի աղագաւ, « Et iterum respondi et dixi: Et quo modo dixisti servo tuo, quoniam vivificans vivificabis a te creatam creaturam in unum? Si ergo viventes vivent in unum, et sustinebit creatura, poterat et nunc portare praesentes in unum ». Հայն ունի այսպէս. « Եւ ես ետու պատասխանի, թէ զիւրդ ասաց Բարձրեալն դարձուցանել զամենայն զմարդկեղէն արարածս. զի եթէ ասաց Բարձրեալն զամենեսեան միանգամայն յարուսցէ, զոր և գտցի յայնմ ժամանակի, զկենդանիս՝ մեռելոց հանգերձ. և յորժամ յարիցեն և նորոգեսցի

զամենեսեան, և ընկայցի զամենեսեան յայնմ աշխարհ, և համբարիցե. ընդէ՛ր այժմ այս աշխարհս ոչ կարաց ընդունել զամենեկեան միանգամայն» : Այս տեղոյս « յարուսցէ, զորս և գտցէ յայնմ ժամանակի, զի ենդանիս՝ մեռելօք հանդերձ », յոյժ շահեկան է Պաւղոսի առաքելոյ (առ Քես. Ա. գլ. Դ. 16, և առ Ա. Կրթ. գլ. ժԵ. 54-53) տեղեաց նկատմամբ : Դժբաղդարար Արք. ամենահամառօտ է և լոյս չի սփռեր տեղեացս միայն կամ միւսոյն աւելի հաւատարիմ լինելուն վերայ. զի այսչափ միայն կ'ըսէ. « Dixi ei: quomodo Domine, mihi dixisti, te eum esse, qui cunctas res a te creatas sustentet ». սակայն լատին օրինակաց իրարմէ և յատրուոյն ունեցած ահագին տարբերութիւնքն, զոր նշանակած է Երմ. Ռորինսոն, ցոյց կու տան՝ թէ հայերէնն միւս թարգմանութիւններէն աւելի կատարեալ կերպով պահած է բնագրի սոյն տեղին, որ եթէ Պաւղոսի յիշեալ տեղերէն ներշնչուած չէ, ունենալու է մեծ կարևորութիւն :

Չ. գլխու 1-6 համարներում ամենամեծ անհամաձայնութիւն մի կայ հայերենին և միւս թարգմանութեանց մէջ : Սորա 1-2 համարի 34 տող հատուածն, « եւ ասէ ցիս. հարց — պատրաստեաց Բարձրեալն », յորում երկայնմտութեան իբրև օրինակ նախ կը յիշուին Ենովքէն սկսեալ մինչև Ահարոն սուրբ նահապեալք և յետոյ այլ և այլ հարց և պատասխաններ կը լինին չրէից թերահաւատութեան և մոլորութեանց, և Մեսիայի գալստեան և ուղղութեանց մասին, բոլորովին կը պակսին ասորի, լատին և արաբացի թարգմանութեանց մէջ : Թէ այս բանս դիպուածական խանգարման արդիւնք չէ, յայտնապէս կը տեսնուի Ե գլխու վերջին, այն է 55 համարին մէջ՝ դիտմամբ առ հրեշտակն ուղղուած այս հարցումն. « Խնդրեմ ի քէն, տէր, մի՛ դարձուցաներ գերեաս քո յինէն. որ հարցանեմ քեզ վասն բազմաց, զայս հրամայեա ինձ ուսանել ի քէն, վասն որոց կամիս հարցանել » . մինչդեռ Աս. և Կատինն ունին. Et dixi: rogo, Domine — demonstra servo tuo per quem visitas creaturam tuam » . Արք. ևս՝ փոքրիկ տարբերութեամբ նոյն հարցումը կ'ընէ : Արդ զիտեւրով որ per quem visitas creaturam? Հարցման ենթադրուած իսուքով Մեսիայն կ'ակնարկուի, որուն վերայ սակայն խօսք մ'անգամ չկայ միւս թարգմանութեանց յաջորդ գլխում 1 համարի պատասխանոյն մէջ, այլ ժամանակի սկզբնաւորութեան և վախճանի մասին, կրնանք ըսել որ հայերենի մեզ ընծայուած հատուածն ըստ կամս յաւելցուած չէ թարգմանչէն, այլ հին բնագրի մասն, որ չնոր-

հիւ հայոյն պահուած է, և « յառաջ քան զլինել բնակութեան երկրի », և այլն, մասին հետ կը միանայ, յորում կը միարանին նաև միւս թարգմանութիւնք :

Նոյն գլխու 7-10 համարներն, յորում Յզր կը հարցնէ հրեշտակին հրէական ազգին ժամանակին բաժանման մասին, այսինքն թէ երբ պիտի ըլլայ վերջ առաջին դարուն, և կամ որն է սկիզբն երկրորդին. իսկ պատասխանի կը արուի, թէ « Արբահամէ ցԱրբահամ ». և կը մեկնուի Սաւալայ ծննդեամբ և գարչապարաւ առաջին դարուն (այսինքն է ներդայ ժամանակիս) վերջը, և Յակոբայ ծնընդեամբ և ձեռաց օրինակով, որ ունէր զգարչապարէ եղբօրն. երկրորդին (այն է հանդերձելոյն սկիզբը) : Այս նշանաւոր հատուածը կը պակասի հայերէն խմբագրութեան մէջ. բայց որովհետև արբաբային ևս ունի զայն, հետևաբար հայերենի մէջ խանգարում մի եղած ըլլալու է : Եւ իրօք 1-2 համարներն, որոց համար ըսուեցաւ թէ միւս թարգմանութեանց մէջ կը պակսին, այս տեղ, այսինքն է 7-10 համարներում, զետեղուելու յարմար են :

Աս. 17 համարն : « Et factum est cum audissem, surrexi super pedes meos, et audiui: ecce vox loquens, et sonus ejus, sicut sonus aquarum multarum », etc. Հայն շարաչար կերպով խառնափնդորած է 13-16 համարներու հետ հետևեալ բացատրութիւնքը, (16-17). որք չեն գտնուիր միւս թարգմանութեանց մէջ. « Եւ յետ խօսելոյն իմոյ զայս՝ ահա փառքն տեսան յուսասորէին գտեղին՝ յորում կայի. և անդէն ձայն եղև խօսելոյ և բարբառ իրբև զձայն անթոխի յոյժ, կամ որպէս ջուրց հոսանաց բազմաց հեղեղատեայ զառիվայր ընթանայցե » : 34 համարն. ամբողջապէս կը պակասի հայերենի մէջ. իսկ 38-40 համարներում հեռաւոր աղերս մի հազիւ կը նկատուի միւս թարգմանութեանց և հայուն մէջ : Վերջինս բնազրէն աւելի՛ կարծէք թէ Բարսղի Վեցօրէից հայկ. թարգմանութեան կը հետևի, ըստ քմաց աւելցնելով և յապաւելով արարչութեան նըկարագիրը : 47-52 համարներն, ուր Աս. կատ. և Աբբ. խօսելով Հինգերորդ օրուան արարչութեան մասին, իրարու համաձայն՝ երկրարանական և բնարանական նշանաւոր կէտեր կը շօշափեն, երկրիս ջրային և ցամաքային մասանց իրարու հետ ունեցած, այսինքն է 7/1 համեմատութեան, — ջրոց ոգեւորեալ և անոգի լինելուն, — Բեհմոտքի, որ կը հանդիսանայ իբրև ներկայացուցիչ ցամաքային կենդանեաց և կը բնակի հազար չորանց (montes mille) վերայ, և լեվիաբանի՛ որ կը բնակի յեօթներորդ մասին, այն է՝ ջրոց մէջ, և այլն, իրաց

նկատմամբ. Հայերէն խմբագրութեան մէջ ընդհակառակն բոլորովին կը պակասին: 54-56 համարներում միւս թարգմանութիւններն առ հասարակ երկիցս կը յիշատակեն զԱդամ անունը իբր գլուխ արարածոց. Հայն միայն ունի « գտէրն՝ զմարդ »: Դիտելով որ անունս Ադամ՝ ըստ եբրայեցւոյն՝ կը նշանակէ մարդ, կարելի է եբրայական բնագրէ մի յառաջ եկած համարել այսպիսի մի տարբերութիւն, քան թէ ըստ քմաց: Ք. միւս թարգմանութիւնքն՝ Յոբայ Ժ գլխու 20 տան վերայ բարգաւաճեր են յիշեալ տեղիքը. իսկ Հայն՝ Երևընդոց Բ գլխում աւանդուածին հետ սերտ աղերսներ ցոյց կու տայ, բայց այնպիսի նշանաւոր պարագաներով, որոնք առաջնոց մէջ բուրովին կը պակասին. օրինակի աղագաւ, 54 տան մէջ, դրախտին Համար կ'ըսուի, թէ « ի նման քաղաքի տնկեցեր, և ամենայն կերպարանօք զարդարեցեր ». նախամարդը որդւոյ մի կը նմանցէ՝ խօսելով առ Աստուած. « և որպէս ոք որդոյ իարձա՞մ զամենայն ինչ առաջի արարեր նմա վայելել ». — Եւայի Համար կ'ըսուի. « և խօսակից յարգահատել ազգի մարդիակն ». — « զարդարեցեր զնա կամօք սզատուրեան, և յօժարոտրեան » բացատրութեամբ՝ մարդկային անձնիչիւան կամքն և բնական յօժարութիւնները ցոյց կը տրուին. — Աստուծոյ պատուիրանը՝ պատուոյ և ընտրութեան գրքի մի կը նմանցուի, այսպէս. « Եւ իբրև զգիրս պատուոյ և ընտրութեան ետուր նմա ըզպատուիրանն, զոր ընկէց ի ձեռաց, և ել ի դրախտէն », — « օտարացաւ յանապահանօտրեանն » բացատրութեամբ՝ մարդկային սկզբնական վիճակը ցոյց կու տայ ». — և հուսկ մարդկային ազգի միակ ծագումը յԱդամայ՝ այսպէս. « Եւ ի նմանեկ ամենեցեան մեք մարդիկ սերմանեցաք »: Դիտելով որ այս կէտերս Ք Եզրի ուրիշ էջերում ևս յեղյեղուած են, շատ հաւանական է որ հին բնագրէն իբրև լրացուցիչ մասեր պահուած ըլլան:

Է գլխում, 28-29 համարներում, Աս. երկիցս ունի Մեսիաս. Լատինն՝ առաջին անգամ կը գրէ Jesus, որ հաւաստար է Մեսիայի, իսկ երկրորդ անգամ ունի Christus, որ յոյն բնագիրը կը յիշեցընէ: Հայն ունի՝ « Օծեալն Աստուծոյ », համաձայն յունի. այս ընթերցուածս կը հաստատուի նաև Աբբ. unctus բառով: 28 համարին մէջ Աս. ունի triginta annos, Լատ. quodringentis (A օր. trecentis). Աբբ. mille annos. Հայն ունի անորոշաբար « յայնժամ »: Այս ընթերցուածս աւելի հին և հարազատ կը տեսնուի, վասն զի քաջ կը համաձայնի 26 տան « ահա՛ եկեցէ՛ ժամանակ, յորում եղիցի նշանն » բացատրութեան: Այս կը հաստատուի նաև լատին A օրինակովն, ուր զանց եղած է տարբերութիւն:

35-36 երկու և կէս էլ ընդարձակ միջոցն, զոր Զօհրապեան ան-
 Համաձայնութեան պատճառաւ առանց անհատման թողուցած է,
 Հայն, — Հակառակ բոլոր միւս թարգմանութեանց, — երկու երևոյթ-
 ներ կը ներկայացնէ մեզ, և երկուքն իսկ ունին կարևորութիւն՝
 Հնախօսական տեսակետով. Ա. Մեռնելէն վերջ արդարներուն եօթն
 ճանապարհաւ ունեցած վայելից, և մեղաւորաց եօթն ճանապարհաւ
 ունենալիք տանջանաց մասին լրացած նկարագիրներն. որք ըստ Հայուն
 այս թուահամարներում զետեղուած են, ոչ միայն խոստոր Համեմա-
 տութիւն ունին լրատին և արարական թարգմանութեանց նոյն զլխում
 81-87 և 91-99 համարներում եղած նկարագրաց հետ. այսինքն է՝
 արդարոց նկարագիրը կը կանխէ քան զմեղաւորացն, այլ և տարբեր
 գրից մէջ զետեղուած են, և այնպիսի Հարց և պատասխաններու և
 առանձնախօսութեանց հետ միացած, որոնք միւս թարգմանութեանց
 մէջ կամ կը պակսին և կամ բոլորովին տարբեր կերպով կը գրու-
 նուին: Բ. Հայերենի մէջ կը պակսին ինչ ինչ նշանաւոր պարագա-
 ներ, որք կը գտնուին միւս թարգմանութեանց մէջ աւելի կամ պա-
 կաս շտիով: Առաջին տեսակետով՝ Աս. Աբբ. և Կատինն խօսելով դա-
 տաստանի օրուան եղանակաց և բնական երևութից մասին, կը գրեն
 միտքան 40-43. « Quo non erit nec luna, nec nox, nec dies,
 nec ventus, nec nubes, nec tonitru, nec fulgor, nec pluvia, ne:
 grando, nec estus, nec hiems », և այլն. Հայն ունի յաւելուա-
 ծովք. « Եւ եղիցի օրն դատաստանի այսպէս. ոչ արեգակն կացցի
 շատատոս և ոչ լուսին, և ոչ աստեղք պայծառացեալք, և ոչ ամպք
 ճովանառոք, և ոչ որոտումն նշանատր ժամանակաց, և ոչ հողմ՝ գո-
 վացիկ և ջուր՝ ի ծարառ հանգստեան, և ոչ հողմ՝ քաղցրախտան և
 ջուր՝ ի ծարառ հանգստեան, և ոչ երեկոյ՝ ի հանգիստ վաստակոց, և
 ոչ գիշեր՝ ի դադարել աշխատոտեանց, և ոչ աշողութիւն գործոց՝ ի
 յօծարոտոտեան, և ոչ հասարակ օր՝ ի ձաշակումն կերակրոց, ոչ ձմեռն՝
 ի գործ երկրի պատրաստութեան, ոչ գարուն՝ ի ծնունդ երկրի պա-
 րարտոտեան, ոչ յամառն տօք, և ոչ աշուն՝ ի խնամ ամեյ պտղոյ,
 ոչ կարկուտ՝ ի բռնոտեան օդոց, և ոչ անձրև՝ յամառն ծառոց, ոչ
 ցօղ՝ ի մխիթարոտեան տնկոց, և ոչ առաւօտ՝ որ նշանակի զբոյս տառն-
 ջեան, և ոչ դամբար գիշերոյ խաւարի յայտնիչ. քայց միայն պսակ
 փառաց արգարոցն ոտախոտոտեան »: Իսկ երկրորդին՝ օրինակ ըլլայ
 յաջորդ համարի այս բացատրութիւնս. « Longitudo (Լ. Spatium)
 autem ei erit sicut hebdomada annorum Hoc. est iudicium meum
 et constitutio ejus » (Աբբ. Et iudicium durabit septuaginta au-

nos), բորորովին կը պակասի հայումս . և 100 համարում (Աս . 61 համար) մեռնողաց հոգւոյն համար Եզրի ըրած այս հարցմանս՝ թէ « Dabitur tempus animabus, postquam separatae fuerint, ut videant de quo mihi dixiti ? » տրուած նշանաւոր պատասխանը . « Septem sunt dies libertatis eorum, in quibus septem diebus vident verba illa, quae dicta antea fuerunt, et postea colligentur in promptuaria sua » . Հայն կը գրէ ընդհակառակն . « Տացի Ժամանակ՝ ոչ անդորոտքեան, այլ տանջանաց, զի ի տեղիս խոշտանգանաց արգելեալ են մեղատորաց ոգիք, և պահին ի տանջանս անատոյ հրեշտակաց միևչև յօրն յանդիմանոտքեան և դատաստանաց և հատոցումն բարոյ և չարի » , ուր բառ մ'անգամ նոյն չէ : Արդ, Հայերենին միւս Թարգմանութիւններէն ցոյց տուած բոլոր այս զանազանութիւնքս՝ կամ ձեռագրի խանգարման արդիւնք կրնան ըլլալ, կամ տարբեր բնագրի մի, և կամ ի քմահանոյից խմբագրողին : Պատճառներէս առաջինն՝ զժուար է որ իրօք եղած լինի . վասն զի վերոնշանակեալ բոլոր հատուածին մէջ՝ նիւթերն աւելի զիրար կը բռնեն, քան թէ միւս Թարգմանութեանց մէջ : Է գլխում Աս . Թուահամարներն և՛ լատինէն և արաբացւոյն շատ տարբեր կերպով դասաւորուած են, և հայուն պէս 69 համարներով կ'աւարտի այդ գլուխն . մինչդեռ լատինն՝ 139 տանց բաժնուած է : Հետևաբար, կը մնան իբրև աւելի հաւանական վերջին երկուքն : Սակայն դիտելով՝ որ Ս . Գրոց չարքին մէջ արդէն ի վաղուց անցուած և սուրբ հարցմէ իսկ իբրև Եզրի մարգարէի այնքան յարգուած գրուածի մի հետ՝ զժուար է որ հայ Թարգմանիչն համարձակած ըլլար այդպիսի կերպով վարուիլ, այսինքն է, ըստ քմաց յաւելուլ և յապաւել, ուրեմն կը մնայ ընդունել իբրև ճշմարտանման երկրորդ ենթադրութիւնն, որ կրկին կը հաստատուի նաև հետևեալ պարագայից մէջ . այսինքն է, ինչպէս տեսանք և պիտոր տեսնենք, Հայերենին կարծեցեալ յաւելուածներն կամ խոտորմունքն յասորականէն՝ կը գտնենք նաև արաբերենին կամ լատիներենի մէջ . օրինակի աղագաւ, 39 տան . « Եւ Եղիս՝ վասն զարյ անձրևին, և Եղիս՝ վասն կենաց մեռելոյն » յաւելուածն՝ կը գտնենք տարբեր պարագայով մի՝ նաև արաբերենին մէջ, այսպէս . « Eliam de siccitate et filio, quem Bliseus cum eum mortuis suscitaret » .

Ը գլխու 26 համարում, « Լուր ձայնի Ժառայի քո — առանց մեղաց » 7 տող հատուածն, զոր կ'ընծայէ մեզ հայկ . խմբագրութիւնն Եզրի բերան դրուած աղօթքին մէջ, կը պակասի ասորւոյն և միւս

Թարգմանութեանց մէջ. Իսկ 46-49 և 56-58 համարներն, յորս հրեշ-
տակն դիտողութիւններ կ'ընէ առ Եզր, ներկային և հանդերձեալ աշ-
խարհի, արդարաց և մեղաւորաց մասին՝ ըստ ասորւոյն և լատինի,
հայերէն խմբագրութեան մէջ չեն գտնուիր ընդհակառակն, կամ բա-
լորովին այլ ինչ փոխուած են: Արդ, դիտելով որ արաբացին ևս այս-
տեղ բոլորովին կը տարբերի ասորի և լատին թարգմանութիւններէն
նկատմամբ առաջին տեղւոյն, զի փոթ. « Quae sunt praesentia
praesentibus et quae futura futuris », etc, ունի. « Seminata et
plantata, quae enascuntur, aequant eos, qui officio suo satisfac-
ciunt, et quae emoriuntur eos, qui inertes sunt », etc, իսկ վերջինը,
այն է՝ 56-59 համարները բնաւ չունի. ուստի կրնանք ըսել, թէ
հայոյն և արաբացւոյն այս պակասս՝ դիպուածական չէ, այլ հասա-
րակաց բնագրի մի արդիւնք: Բայց ասկէ աւելի շահագրգիռ է հե-
տեւեալն, այսինքն է 61 համարի՝ 41 տող հատուածն, ուր, ըստ
հայոյն, նշանաւոր խորհրդածութիւնք կը լինին Եզրի և Աստուծոյ
մէջ՝ մարդկային ազգի անձնիշխան ազատութեան և գերագոյն վախ-
ճանին, բարւոյ և չարի, Աստուծոյ մարդասիրական այցելութեանց
և մարդկան խստատարութեան մասին: Ասորին և լատինն՝ այս հա-
մարս հետեւեալ 2 տողի մէջ կը պարունակեն. « Quapropter iudi-
cium meum modo appropinquat; quod non omnibus demon-
stravi, nisi tibi et tibi similibus paucis ». Իսկ յիշեալ նիւթերուն
վերայ ընդ հակառակն 56-59 համարներուն մէջ կը խօսին, և այն
ինն տողի վերածած: Բնագրի այս մեծ տարբերութիւնս չենք կրնար
լուծել, վասն զի Գիլգեամայտերի հրատարակութեան մէջ 51-63 հա-
մարներն ինկած են, ինչպէս ցոյց կու տան... կէտերս: Սակայն, դի-
տելով որ սորա նախընթաց համարներում ևս մէջ բերուած չէ հայե-
րենի յիշեալ հատուածն, ուրեմն հաւանական է որ 61 համարում
գետեղուած ըլլար նման հայուն. հետեւաբար, հայկական խմբագրու-
թեան յիշեալ հատուածն դժուար է որ ըստ կամս յերկրուած ըլ-
լայ խմբագրէն, այլ մեզ անծանօթ բնագրի մի մնացորդ է հաւան-
օրէն:

Թ զլիու 5-7 և 10-12 համարներն, զորս ունին ասորին և լա-
տին իրարմէ փոքր ինչ տարբերութեամբ, դարձեալ կը պակասին
հայոյն և արաբականին մէջ: Այսպէս նաև 17-23 համարներն, ուր
ըստ Ա. Լատ. և Աբբ. երկրի և երկրագործի, սերման և հնձոց օրի-
նակք կը բացատրուին ընտրելոց և անարգելոց գործերն և հատուց-
մունքն, հայերենէն բոլորովին կը տարբերին, թէպէտ և Եզրի կող-

մէն 15 համարում եղած հարցումն երկուստեք նոյն է: Հայերենին մէջ իմաստ մի միայն պահուած է նկատմամբ նիւթոյն, իսկ մէջ բերուած օրինակներն բոլորովին ուրիշ են, այսպէս նաև Աստուծոյ խօսեցէն վերջ՝ անոր փառաց երևման շորս տող հատուածն՝ ի սպառ կը պակսի առաջնոց մէջ:

26 համարին մէջ յիշուած գաշան, ուր Եզր առանձնացած կը պահէ և տեսիլներ կը տեսնէ, ըստ ասորւոյն կը կոչուի Arphad, հայն ընդհակառակն ունի՝ Արդար. արարերէն օրինակք կը գրեն Արծաւ և Արաւ, իսկ Արբ. փոխանակ անուան՝ ունի «In loco plautis virente». Տ օր. Ardat, Adar, A. Ardad, G. Ardas, M. *Arday*: վերջին ձևն համաձայն է հայոյն և անոր ընթերցուածը կը հաւատարմացնէ: 29 համարում ասորին ունի in deserto Sinai. հայն ընդհակառակն ունի պարզապէս «յերկիրն անապատ». «Լատինն՝ in deserto quod non calcatur», և արարերէնն՝ «per terram nondum calcatam» բացատրութեամբք՝ Հայոյն ընթերցուածը կը հաստատեն:

Ժ գլխու 7 համարում միւս Թարգմանութիւնք առ Հասարակ Միոն միայն կը յիշեն յանուանէ, հայն միայն պահած ունի նաև Երուսաղէմ, և այս ըստ հին բնագրին. վասն զի 20 համարի մէջ Աս. Լատ. և Արբ. ևս համաձայն հայոյն՝ Սիոնէն վերջ կը յիշեն և Երուսաղէմ: 22 համարում հայն ունի. «Եւ քահանայք մեր լացեալ են». մինչդեռ ասորին կը գրէ. «Sacerdotes nostros succensos in igno». Լատինին մէջ «in igno» բառերը զանց եղած են, բայց հանդերձ այսու succensos անցեալ գերբայով պէտք է ուղղել հայերենի «լացեալը» լոցեալ (ի հուր): 45-46 համարներուն մէջ տաճարի շինութեան և զոհից մատուցման սկզբնաւորութիւնն կը գրուի յերեքհարար ամի ստեղծագործութեան մարդոյ, ըստ Աս. Եթ. և Աբար. Թարգմանութեանց. «Quoniam fuit in saeculo tria millia annorum», հայն ունի. «Զի ամս րազոանս ունէր յայսմ աշխարհի», և փոխանակ «Post tria millia annorum aedificavit Salomon civitatem», ունի. «Յետ այնորիկ շինեաց Սողոմոն զքաղաքն և ըզտաճարն». Լատին օրինակներէն ոմանք կը գրեն annos triginta և ոմանք այլ anni saeculo tres. Հայերենի մէջ տարեթուոց զանցառութիւնն դիպուածական չէ նաև հոս. այլ կամ այն է՝ թէ նորա բնագրի մէջ իսկ կը պակասէր ի սկզբանէ, և կամ եղծուած էր ի ժամ Թարգմանութեան. Լատինի տարածայնութիւնն կարելի է նպաստաւոր լինել առաջին ենթադրութեան: 51 համարում Աս. և Կ. ու.

ինն Ubi domus non est ædificata, Հայն ընդհակառակն կը գրէ. « Ուր տունն չիներ » . այս վրիպակ մ'է, որ 53 Համարում՝ Համաձայն ասորոյն ուղղուած է այսպէս . « Ուր ոչ էր շինուած հիման » : Տե-
րեաց առաջինն Աբբ. մէջ բոլորովին կը պակտի. իսկ վերջինն՝ բո-
լորովին տարբեր : 60 Համարում, ուր Ա. ունի, Et dormivi illic noc-
tem aliam sicut præcepit mihi, Հայն գրէ . « Եւ մտի ի տուն
վերուս՝ գիշերս, որպէս Հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն » : Հայն-
րենի՝ գերկոռս գիշերս ընթերցուածն կը Հաստատուի լատինով իսկ,
որ կը գրուի, Et dormivi illam noctem *et aliam* :

ԺԱ գլխու 7-8 Համարում, ուր Ա. կը գրէ, *Ite dominamini
universæ terræ, nunc autem quiescete, et nolite vigilare omnes
simul.* Հայն՝ ենթագծուած բառերը՝ չունի, այլ 8 տան . « Միանգա-
զամայն զամենեսեան կամիցիք արթուն կալ . այլ ի քուն մտցէ իւ-
րաքանչիւր ի տեղով իւրում, և ի ժամանակի իւրում զարթիցէ » :
Աբբ. մասնաւորապէս և Լատ. Հայոյն ընթերցուածը կը Հաստա-
տեն՝ այսպէս . *Nolite omnes simul vigilare, sed quovis tempore
suo quæque vestrum loco dormiat et vigiletis.* 20-21 Համա-
րում Ա. Համառօտարար կը գրէ . *Et ex eis (alæ) surgebant, sed
tenebant dominatum.* Հայն ունի ընդարձակօրէն . « Եւ տեսի զա-
մենայն թևան, և զայն ի ժամու իւրում կանգնեալ յաջմէ կողմանէ՝
ունել զիշխանութիւնն . ունէր ի նոցանէն և վաղվաղակի կորնչէր .
և մն ի նոցանէ կանգնէր և շկարէր ունել զիշխանութիւնն » : Ա-
սորին պակասաւոր է, և այս յայտնի կը տեսնուի անտի իսկ, զի
լատին և Աբբ. խմբագրութիւնք իսկ Հայերենին կը Համաձայնին :

ԺԳ գլխու 16-19 Համարներն, ուր Ա. Լատ. և Աբբ. իրարու
Համաձայն՝ ընդարձակ խորհրդածութիւններ կը պարունակեն ի կա-
ռարածի ժամանակաց թէ մնացողաց և թէ մեռնողաց կրելիք ցաւոց
վրայ . Հայն՝ միայն առաջնոց մասին և Համառօտու կ'անցնի, վերջ-
նոց նկատմամբ բնաւ խօսք չընէր : Այս տեղիս անտարակոյս խան-
գարուած է, ինչպէս կ'երևի 21 Համարէն, ուր որոշակի մնացելոց
իսկ յիշատակութիւն կայ՝ այսպէս . « Այլ վասն մնացելոցն և վասն
որոց խօսեցաւ նա ի վախճան ժամանակաց՝ այս բանք են » : 23
Համարին մէջ խօսուելով մնացողաց Հուշատոց և բարի գործոց մա-
սին, Ա. կը գրէ . *Hic custodiet eos qui in periculo jacent, eos
qui habent opera et fidem apud Altissimum et Fortem.* Լատինն՝
ունի *ad fortissimum.* Աբբ. կը գրէ . *Quibus fides erga Deum est
et facinora apud Altissimum.* Հայն միայն՝ ենթագծուածներէն ոչ

մին ունի և ոչ միւսը, այլ « Եւ որ պահէցին ի համբերոսքեան ըզհաւատան և զձշմարտոսքիան և զողորմոսքիան » : Այս մի ուրիշ բնագրի արդիւնք է, որ միւսներուն ծանօթ չէր : 32-38 Համարներում, ուր կը խօսուի ծովէն ելնող մարդադէմ կենդանւոյն, այն է՝ Մեսիայի գալստեան և Գողգոթայ լեռան վերայ մեղաց դէմ ըրած յաղթանակին վերայ՝ Արք. միայն կը համաձայնի Ասորւոյն. իսկ հայն և լատինը՝ Գողգոթայի բնու յիշատակութիւն չեն ըներ, այլ միայն Սիոն լեռուն : Ուստի հաւանական է՝ որ Գողգոթայն եկամուտ յաւելուած մ'ըլլայ, որ հին բնագրին մէջ չկայր, և ասորւոյն քրիստոնեայ խրմբագրողի ձեռքով ներմուծուած է՝ առընթեր Սիոնի. այս բանս Արք. Բ. Խմբագրութենէն իսկ յայտնի կը տեսնուի, որ կը գրէ. *Tum surget homo super Golgotham, quæ est Sionis (B. in Sione).* 40-47 Համարներն. *Hæc sunt novem tribus et dimidia — Collectam in pace*, ուր ըստ Աս. կը խօսուի մարդադէմ կենդանւոյն քով հաւաքուող բազմութեան վերայ, Յեսուայ՝ ինն և կէս ցեղից և Ասորեստանեայց Սաղմանասար = Salbanasar թագաւորի հինաւորաց արարուածներովը. այսինքն է՝ գլբեայս Եփրատ գետէն անդին գերի վարելը, անոր նեղուցին մէջէն կրկին երթեկած ժամանակ՝ Բարձրելոյն գործած մէկ հրաշքն, որով գետս կ'ոտնակառի մինչև որ Խորայելացիք կ'անցնին, անոնց մէկ ու կէս տարւոյ չափ Արզափ = Arzaph երկրին մէջ դեգերիլն, որ ըստ Աս. բնագրին *finis mundi* կը կոչուի, այս ամենայն կը պակսի հայերենի մէջ, սոսկ ակնարկութիւն մի միայն պահուած է հոս : Բայց դիտելով մէկ կողմէն որ Լատինն և Արաբականն ևս ունին զայն, իսկ միւս կողմէն այլ հայոյն այս նշանաւոր տարբերութիւնս. « Զի ժողովէր այլ բազմութիւն խաղաղութեան, եռքս են՝ որ յանարգ հեքանուսաց ծողովեալ վարեցան, և ի գառակեկ Արախանուռ խառնեցան ընդ նոսա », կը հետևի թէ, կամ յիշեալ տեղին ասորի թարգմանիչն յետոյ աւելցուցեր է, և կամ հայն գիտմամբ կրճատած է զայն : Արք. թարգմանութիւնն ենթադրութեանցս առաջինը կը թուի հաստատել, զի ինն և կէս ցեղից գերեվարութեան տեղին՝ համեմատ Ասորւոյն՝ Arzaph գրելէն զուրս, կը յիշէ զՍաղմանասար՝ իբր թագաւոր Ասորոց = *rex Syrorum Salmanasar*. Հաւանորէն այսպիսի մի բացատրութիւն ասորերենէ յառաջ եկած ըլլալու է, և ոչ թէ յոյն կամ լատին բնագրէն, զի վերջինս ունի *Assyrorum*.

ԺԳ զլիու 1 Համարում, ուր Աս. ունի *Et factum est post hæc*, հայն կը գրէ. « Եւ եղև յետ երրորդ առարկն ». Հայոյն ըն-

Քերցուածին հղութիւնը կը հաստատեն լատին և արար. թարգմանութիւնքն, Et factum est tertio die, և կամ ըստ վերջնոյն, Et post tertium diem բացատրութեամբ:

10 Համարում այս յաւիտենիս կամ ժամանակի 12 մասանց բաժանման մասին եղած այս նշանաւոր հատուածս, XII enim partibus divisum est saeculum, et transierunt ejus X jam et dimidium Xmae partis, superant autem ejus duae post medium decimae partis, զոր ունին լատին և արր. թարգմանութիւնքն, բարդիին կը պակսի հայոյն և ասորւոյն մէջ: Այս յաւելուածս յետոյ ուրեմն ներմուծուած է այս տեղ: Բարոնաքայ տեսչեմէն փոխ առնելով հաւանօրէն:

24 Համարին մէջ, Սաղաթիէլ Եզրի 84 գրքերը գրող հինգ անձիւնքն են, ըստ ասորւոյն, Saria, Daria, Salemia, Helcana, Sciel. Իսկ ըստ լատին թարգմանութեան՝ Sarea, Dabria, Selemia, Ethanus, Asihel. Արարական ք. խմբագրութիւնն ոչ մի անուն չի յիշեր, այլ արք ինք միայն ունի: Հայն՝ կը գրէ. « Եւ առ ընդ քեզ գԳարիան և գԳարիան և գՂերմիան և գՂեղկանա և գՂթեն »: Վերջին երկու անունքն ճիշդ լատինին համաձայն են. Գարիան նոյն է Darianի, որ վրիպակաւ գրչագրաց Դ տառն Գ ի փոխուած է. Իսկ Հերմիան՝ դժուար է որ Salernianի սխալագրութիւն մ'ըլլայ: Յամենայն դէպս՝ Հայն լատինի կամ նորա բնագրի հայցական կազմող և պահելով ի վերջ անուանց, յայտնապէս ցոյց կու տայ թէ այդ անունքն իւր կողմէն հնարած չէ, այլ հին բնագրէ մի ծառայարար թարգմանած: 44-45 Համարներում, յիսուն օրուան մէջ յիշեալ անունաց ձեռքով գրուած գրոց թիւն՝ լատիներէն օրինակաց մէջ անհաւատալի կերպով աղաւաղուած է, այսինքն է՝ մինչև 90004ի կը հասնի: Հայն ունի 94, համաձայն ասորւոյն, եթովպացւոյն և արարականին: 47ր համարում, Եզրի մահուան թուականը, զոր կը նշանակէ ասորին In anno septimo in hebdomada sexta post quinque mille annos creationis, et menses tres, et dies duodecim, Հայն ունի ընդհակառակն. « Յամին չորրորդի շաբաթիւն () ամաց, յետ ամաց հինգ հազար արարածոց աշխարհի, և երկոց ամսոց աւուրց »: Լատին խմբագրութիւնը՝ դիտմամբ գանց ըրած է յիշեալ թուականը, որովհետև ԹԵ և ԹԶ գլուխներով մի ուրիշ յաւելուած ևս ներմուծած է՝ իբրև Եզրի շարունակութիւն: Սակայն արարական խմբագրութիւնն՝ ասորւոյն ընթերցուածն աւելի կը հաստատէ. և միանշամայն ցոյց կու տայ մեզ, թէ Հայն խանգարուած է. վասն զի

ըստ ամենայնի առաջնոյն կը համաձայնի, ի բաց առեալ *dies duos et viginti* փոքրիկ տարբերութիւնը :

Արդ, ամփոփելով մեր ըրած ընդարձակ համեմատութեան սահմանըը, կարեմք եզրակացնել, ա. քե մեզ հասած Եզրայ անկանոն գրոց յիշեալ բարգմանութիւններէն ոչ մին կարող չէ հիւն բնագրին կատարեալ ներկայացուցիչ լինել, որովհետև սուկենքն ևս իրարմէ առջի կամ պակաս յաւելումներ և յապառումներ կրած են քրիստոնէից ձեռքով : Բ. Հայկական խմբագրութիւնն՝ բաց ի յռնարեանէ՝ մի ոտիչ բնագրի հետ ևս ժանօք է, որ այժմուս ասորիէն և արարականէն առջի կատարեալ էր, և ժառայած է հայերենի վերանորոգութեան : Գ. քե հայն ստուգիչ վերանորոգուած է, յայտնապէս կը տեսնուի ոչ միայն այն սլէքի զարնող յաւելումս ձևով ընդշայնումներէն, որոնք միշտ բարգմանութեանց մէջ չեն գտնուիր, ինչպէս նաև այն յապառումներէն և քռահամարներու յետ և առաջ փոխադրութիւններէն, զորս ցոյց տուիւք, այլ նոյն իսկ երբեմն ասորոյն և երբեմն այլ արարականին և շատին խմբագրութեանց հետ ունեցած աղբիւրներէն, երբ ասուք իրարու անհամաձայն կ'ընթանան : Դ. ասորի, շատին և արարացի բարգմանութիւններն ընդհանրապէս, — ի բաց առեալ ինչ ինչ մասնական տարբերութիւնքը, որոնք բարգմանչաց կամ գրչագրաց ձեռքով իսկ կարող են ներս սպրդած կամ յապառուած լինել, — իրարու համաձայն կ'ընթանան երբեմն կատարեալապէս և երբեմն աննշան զանազանութեամբ, այնպէս որ համեմատողն չի տարակուսիր բնաւ եզրակացնելու, քե շատին և արարականն՝ ասորոյն վրայէն բարգմանուած ըլլան, կամ շատ ևս երեքն այլ մի հասարակաց բնագրի : Այս ճշմարտութիւնս ստուգիչ անով աւելի կը հաստատուի, զի ինչ որ ասորին ընդարձակաբար ունի՝ նոյնն յաճախ նոյնութեամբ և երբեմն համառօտիւ կը գտնուի միւս երկու թարգմանութեանց մերթ այս և մերթ այն օրինակի մէջ : Իսկ ինչ որ ասորոյն մէջ կը պակսի, նոյնը ընդհանրապէս միւսներն ևս չունին կամ քիչ անգամ ունին : յայտ է թէ խօսքերնիս ասորոյն այն տեղեաց վրայ է, որոնք անխանգար մնացած կը համարուին :

Թարգմանութեանցս և Հայկական խմբագրութեան իրարու հետ ունեցած աղբիւրն մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ ամենամեծ գանդանութիւնքն այսպէս ակնհերև ընելէն վերջ, դժուար է համաձայնիլ չ. Կերիանեայ վերը յայտնած կարծիքին, այսինքն թէ, հայերէնն՝ գէթ իւր այժմեան ձևին մէջ, ասորերէնէ թարգմանուած ըլ-

լայ, այնու մանաւանդ որ երկուստեք չենք տեսներ մենք, ընդհան-
րապէս, հաւատարիմ թարգմանութեան մի և բնագրի մէջ պահանջ-
ուած էական հանգամանքները: Հետևաբար, կամ պէտք է նկա-
ռել զայն իբրև ասորոյն հետևողութեամբ եղած բողոքովին մի ինք-
նուրոյն և ազատ խմբագրութիւն, և կամ ընդունել ուրիշ մի հայ-
կական Հին թարգմանութեան գոյութիւնը, որ թարգմանուած ըլ-
լար երբեմն անյայտացած յոյն կամ անկէ աւելի Հին՝ երբայական՝
բնագրէ մի ուղղակի, և թէ այդ թարգմանութիւնն յետ ժամանա-
կաց նորոյս հետ միացած է անծանօթ խմբագրողի ձեռքով. որ ոչ
միայն վերանորոգել ուզած է զայն՝ ասորի կամ արաբական բնա-
գրի մի համաձայն, այլ անոր Ս. Գրոց տարաձայն տեղերէն զո-
մանս և տարբերութիւնն իսկ կրճատած է, որով այժմու խմբագրու-
թիւնն՝ ոչ Հին բնագրից կը ներկայացնէ մեզ կատարելապէս և ոչ
իսկ զասորականը, այլ երկուքէն ձուլուած մի խմբագրութիւն:

Վերջին ենթագրութեանս իբրև Հիմնաւոր կուռաններ են՝ նախ
այլ և այլ հատուածոց այն յետ և առաջ փոխադրութիւններն, ու-
րոնք, — ինչպէս տեսանք, — կամ յաճախ կը պակասին ասորի,
լատին և արաբական թարգմանութեանց մէջ, և կամ անոնց հետ
խոտոր համեմատութիւններ ունին: Բ. Այն աչքի զարնող խոտոր-
մունքն, որով այլ և այլ տեղեր՝ բաղդատմամբ միևս թարգմանութեանց՝
անհասկանալի մնացեր են, մինչդեռ այլուր, օրինակի աղագաւ,
այրի կնոջ երևման, Եզրի աղօթքին, ծովէն ելնող արծւոյն և մար-
դակերպ գազանին վերաբերեալ դրուագներն՝ ասորոյն հետ աւելի
քիչ տարբերութեամբ կը զուգընթանան: Գ. Խմբագրութեանս իբրև

1. Պիկուս Մերանզայի՝ (Apolog. p. 82. Opp.) չեղինակ ժի դարու՝ նման
երայական բնագիր մի կը յիշէ. զոր ինքն նոյն կը համարի Հրէեց Ծ-ձ-ուլ (Cab-
balaie) կոչուած զբոց նեա, որոյ մասին կ'ըսէ, թէ զեռ իւր ժամանակն իսկ խիստ
յարգէ եր առ Հրէայս, և 40 տարեկան մարդոց միայն թոյլատրուած էր կարգալ
ւոյն: Ինքն իսկ տեսած և հիացմամբ կարգացած էր անոր ին բնագիրը՝ Մերան-
ւոյ ինքնին քով. և թէ Պապն Բահաստոս Դ անգամ հաւնած ըլլար այն գրուա-
կին մինչև փափաք յայտնել, որ թարգմանուի: Իսկ Պետրոս Գաղատացի, Arcanis
Catholicæ veritatis կոչուած երկասիրութեան մէջ, կ'ըսէ, թէ իւր օրերն ընդհա-
նուր լուր տարածուած էր, թէ ի կ. Պոլիս գտնուած է Եզրայ Դ զբոց եբրայա-
կան բնագիրն: Վերջին վկայութիւնս նատաստելու կամ մերժելու փաստ մի չու-
նի. սակայն Պիկուս Մերանզայցւոյ յիշածն՝ էր, ըստ Փաբրիկիոսի, Եզրի յիշեալ
ըրթեան վերջը յեղատակուած Եօթանասան զբոց համառոտութիւնն, և զբուած
յարտի բարբառ, զոր Պիկուսի մահուանէն վերջ ժառանգեց Եուլ. կեսար Սկալի-
տեր (սես անոր Exercit. CCCVII Contra Cardanum, երկասիրութիւնը):

յատկապէս յաւելուած կարծուած տեղիքն, յորս սակայն կան այնպիսի բառեր և բացատրութիւններ, որոնք որոշ չափով մի կը գրտնուին մերթ արարերէն և մերթ լատին թարգմանութեան օրինակաց մէջ իսկ: Այս վերջին երևոյթս՝ մասնաւոր ուշադրութեան արժանի կէտ մ'է:

Հ. Կերիանի ըստ բաւականին ի նկատի առած չլինելով յիշեալ եղելութիւնքը, այն կարծիքը յայտնեց, թէ Հայկական թարգմանութիւնն՝ իւր այժմեան վիճակին մէջ՝ չկարէ այնքան նպաստամատոյց լինել նախկին բնագրի քննադատութեան համար. ահաւասիկ նորա խօսքերն. Questa versione per la sua condizione, che già ho accennata, non potrà dar molto per la critica del nostro libro. Սակայն, ըստ իս, այնքան աւելի նշանակութիւն պէտք է տալ Հայոյն, որքան սա աւելի տարբերութիւններ կ'ընծայէ մեզ միւս թարգմանութիւններէն. և մանաւանդ երբ այդ տարբերութիւններէն ոմանք համաձայն են հնագոյն հարց քով պահուած եզրի անկանոն գրքէն եղած կիրառութիւններուն: Եւ ստուգիւ, Կղեմէս Ա. ղեքսանդրացի¹ Դ եզրի Ե դիտու 35 համարէն հետևեալ տեղին մէջ կը բերէ. Διά τὴ γὰρ οὐκ ἐγένετο ἡ μήτρα τῆς μητρὸς μου τάφος, որ միւս թարգմանութիւններէն² աւելի Հայերենի այս նախադասութեան կը համաձայնի. « Այս ընդհր ոչ եղեւ ինձ գերեզման արգանդ մօր իմոյ »: Արդ, յունարէն շողկապն γὰρ = ապա՝ հայերենի մէջ միայն ճշգրտութեամբ պահուած է. ուստի եթէ Կղեմեսի գործածած բնագիրն յունարէն եղած համարինք և եթէ երբայական, Հայն անոր հաւատարիմ թարգման հանդիսացած է այս տեղ: Լատինի fiebat անհամաձայն է յուն. ἐγένετο ին, ինչպէս նաև ասորոյն et և լատինի aut շողկապներն չեն նոյն ընդ γὰρ մասնկան: Յաջորդ տողին մէջ ընդհակառակն Հայերէն թարգմանութեան « գիրոստոն Յակորայ և մահն Իսրայելի » բացատրութիւնն չի համաձայնիր Կղեմեսի μὲν γὰρ τοῦ Ἰακώβ, καὶ τὸν κόπον τοῦ γένους Ἰσραὴλ = Աս. Լատ. laborem Iacob et defatigationem generis Israël.

Ս. Ամբրոսիոս ամենէն աւելի կիրառութիւններ ըրած է եզրի անկանոն գրքէն գրուածք՝ իւր այլ և այլ երկասիրութեանց մէջ.

1. S^t Stromatum, lib. IV, C. XVI.

2. Ասորի կը գրէ « Et quare non facta est matrix matris meæ mihi sepulcrum ». Նոյնը լատին ունի. « Aut quare non fiebat matrix », etc. Ար. « Et cur uterus matris meæ mihi non factus est sepulcrum ».

De bono mortis գրուածին մէջ (զլ. 10. Թ. 45 և զլ. ԺԱ Թ. 51) Եզրի է գլխէն բերուած երկու տեղիքն՝ շարաբանութեամբ մեծապէս կը տարբերին ոչ միայն յասորոյն, այլ նաև լատին հին թարգմանութենէն: Այս յայտնի նշան է, թէ սուրբ Հայրս յիշեալ երկու թարգմանութիւններէն տարբեր մի ուրիշ բնագիր ունեցած է ի ձեռին, այն է՝ յունարէնը կամ եբրայականը, և թէ Դ դարուն վերջերը լատին խմբագրութիւնն դեռ ծանօթ չէր արևմտեայց: Ս. Հերոնիմոսի ծանօթ էր գրուածս, բայց հաւանօրէն եբրայական լեզուով, վասն զի իբրև հրէական գործ կը նկատէ զայն և սաստիկ լեզու մի կը բանեցնէ անոր նկատմամբ: Հետևաբար, ասորի և լատին խմբագրութիւններն եթէ յունարենէ իսկ թարգմանուած համարինք, սակայն և այնպէս լոկ թարգմանութիւններ չեն, այլ կրած են իրարմէ աւելի կամ պակաս յաւելուածներ և յապաւումներ, այն ժամանակի ոգւոյն համեմատ: Լատին խմբագրութեան Ա-Բ, և ԺԵ-ԺԶ գլուխներն, որոնք միւս թարգմանութեանց մէջ բոլորովին կը պակսին, — անշուշտ նոյնպէս հին բնագրին մէջ, — են ակնյայտնի ապացոյց մեր ըսածին, վասն զի գէթ նշանակուած գլուխներէն վերջինքս՝ է դարէն վերջ ներմուծուած կ'երևին, այնու զի Աբաբացուց և անոնց ծովային արշաւանաց վերայ բացայայտ ակնարկութիւններ կը պարունակեն, համաձայն Մեթոդիոսի տեսլեան մէջ աւանդուածներուն, իսկ առաջին երկու գլուխներն այլ Բարուքայ Յայտնոչքեան (Apocalypsis Baruch) հետ սերտ աղերսներ ունին:

Յովհ. Գրիգորիոս¹ խօսելով Եզրի անվաւեր գրոց մասին, դիտել կու տայ, որ թէպէտև լատին թարգմանութիւնն հին է և հեղինակաւոր, բայց և եկամուտ յաւելուածներով նախկին բնագրէն շեղուած: Իսկ արաբերէն թարգմանութեան համար — ըստ Բողղէեան օրինակին — գոր ինքն տեսած էր և բաղդատած լատիններէն հետ, կ'ըսէ, թէ կը պարունակէ նա Եզրի երկու գրքերը, որոց առաջինն՝ զերծ է բոլորովին այն կասկածաւոր տեղերէն, որոնք կը կը գտնուին լատին և նոյն իսկ ասորական խմբագրութեանց մէջ. օրինակի ազգաւ, այն տեղ չկայ ընաւ յիշատակութիւն կենդանեացն Յնովքայ (այսինքն է՝ Բեհմովթայ և Կաթաթանի) որոնք կը յիշուին Գ Եզրի՝ 2 զլխու 49 համարին մէջ, և ոչ այլ ԺԴ զլխու 11 տան մէջ՝ ժամանակի երկոտասան մասանց բաժանուելուն վերաբերեալ աչի զարնող հատուածն: Ապա կը յաւելու, թէ այս պատճառաւ

1. Տես Praefatio ad observationes sacras խորագրուած երկը:

իսկ կը հաւատամ, որ այս ըլլայ մեզի հասած Թարգմանութեանց ամենէն հարստատն:

Արդ, մենք ևս նախընթացաբար ըրած ընդարձակ համեմատութիւններով ցոյց տուինք արդէն, թէ այս և ուրիշ կէտերով հայերէնն ևս արաբական Թարգմանութեան Բողբէեան օրինակին համաձայն կ'ընթանայ յաճախ. ուրեմն կը մնայ եզրակացնել, որ եթէ այսպիսի յապաւումներ յետոյ կատարուած չեն, հայերէնն եւս մեծ նշանակութիւն ունի Եզրի Դ գրոց անյայտացած բնագրի քննադատութեան և վերակազմութեան նկատմամբ, այնու մանաւանդ զի փոխանակ միոյն՝ ունինք այժմ երկու հինաւուրց և միաբան վկաներ: Ուստի այս ամենակարևոր կէտս ապացուցանելու համար է, որ մենք ընդարձակաբար պարապեցանք այլևայլ Թարգմանութեանց համեմատութիւններով: Քննենք այսուհետև գրուածիս բնագիրն՝ իւր անգրագոյն աղերսներովը, այսինքն է, պարունակութեամբ, արժէքով, և ծագման վերաբերեալ կարևոր խնդիրներովը:

Գրուածիս ծանրակշիռ հեղինակութիւնն ոչ միայն առ հրէայս, այլ նոյն իսկ առ քրիստոնեայս անվիճելի է. վասն զի նոր կտակարանի այն սրբազան հեղինակներէն սկսեալ, որոնք փրկչական թուականի առաջին դարուն վերջերը գրեցին, այսպէս նաև անվաւեր Տեսլեանց գրիչներն և ոմանք ի հնագոյն Հարց Եկեղեցւոյ կոչումներ ըրած կը կարծուին անկէց, իբրև Եզրի մարգարէաշունչ գործէ մի: Այս ամենայն բաւական առհաւատչեայ է նոյն իսկ անոր հնութեան. բայց թէ այս ձևով և տեսակով եղած գրուած մի, որ Եզրի կանոնական գրքերէն բոլորովին կը տարբերի, կարէր արդեօք — գէթ ըստ սկզբնական մասին — լինել ստուգիւ արդիւնք Եզր Դրչին. ահա հին մատենագրաց և արդի քննադատից մէջ եղած մրցութեան առաջին կէտն: Բայց ինչ որ աւանդութեան վրայ հաստատուած՝ առաջիններէն ոմանք իբրև վաւերական ընդունած են, նոյնը անաչառ քննութեամբ վերջինքս առհասարակ կը մերժեն: Սակայն Կղեմէս Աղեքսանդրացին և Ամբրոսիոս, մին՝ արեւելեան և միւսն՝ արևմտեան եկեղեցւոյ պատգամներ, յառաջ երթալով դեռ՝ իրենց ժամանակին ծանօթ և այժմ մեզ անծանօթ բնագիրը ամբողջապէս իսկ իբրև Եզրի մարգարէի գործ կը հռչակեն: Առաջինն՝ իւր Ստրոմատ կոչուած երկասիրութեան մէջ (Գ. 16, էջ 556) Եզրի անկանոն գրոց Ե գլխու 35 համարէն երեք տող մէջ բերելով՝ կ'ըսէ՝ Ἐσδρας δ προφήτης λέγει, այսինքն. «Ասէ մարգարէն Եզրաս»: Իսկ վերջինն՝ իւր Յաղագս բարի մահոռան խորագրած ճառի ԺԱ գլխում

ընդարձակ հատուածներ քաղելով Դ Եզրի Է գլխու 91 - 101 և ժԴ գլխու 9րդ համարէն իբրև աստուածաշունչ գրուած է, կը գնէ զնա իբրև աղբիւր Պաւղոսի առաքելոյն, ուղելով ցուցնել, թէ սա հոգւոց յարութեան ձեռնարկութեան մէջ՝ Եզրի հետեւած է, և ոչ թէ Պղասոսի: Ահաւաստիկ նորա խօսքերը. «Unde ait Propheta ad angelum... Quis utique prior, Esdras an Plato? Nam Paulus Esdrae, non Platonis, secutus est dicta. Esdras revelavit secundum collatam in se revelationem justos cum Christo futuros, futuros et cum Sanctis». Նոյնն և առ Հորնտիանոս գրած թըղթին մէջ (թղ. XXXIV) ի վկայութիւն կոչելով Դ Եզրի գլ. Գ. 5 և գլ. Է. 78 համարները՝ ի մասին հոգւոյ անմահութեան, խորհուրդ կու տայ անոր, որ կարդայ այդ գրուածը, որ կ'ըսէ. «Illas philosophorum nugas despexerit, et abditiore prudentia, quam collegerat ex revelatione, perstrinxerit eas (animas) substantiæ esse superiores». Այսպէս նաև Երանոս և Առիանոս իբրև մարգարէութիւն ի վկայութիւն կը կոչեն¹ Եզրի անկանոն գրուածը: Հերոնիմոս² յիշեալ Հարց հակառակ կարծիք ունի Եզրի այս գրուածին նկատմամբ, զի գրելով ընդդէմ Վիգիլանտոսի պրիսկիլլեան աղանդաւորին, որ Դ Եզրի 2 գլխու 35 համարը մէջ բերելով իբրև հին և հեղինակաւոր գրութիւն, կ'ուրանայր, ըստ այնմ, սրբոց բարիօտութիւնը վախճանելոց համար, կ'ըսէ. «Tu vigilans dormis, et dormiens scribis, et proponis mihi *librum apochryphum*, qui sub nomine Esdrae a te et similibus tuis legitur: ubi scriptum est, quod post mortem nullus pro aliis audeat deprecari: quem ego librum nunquam legi. Quid enim necesse est in manus sumere, quod *Ecclesia non recipit*».

1. Հեղինակներէս առաջինն՝ իւր երկասիրութեան մէջ (VI, 31. I) մէջ բերելով Դ Եզրի Բ գլխու 16 համարը մեռելոց յարութեան մասին, կը գրէ այսպէս. «Propheta ait de eo. Commemoratus est Dominus Sanctorum suorum, eorum qui ante dormierant in terra sepellitionis... salutare suum extrahere eos et salvare eos». Այս խօսքերս, եթէ ստուգիւ Երանոսի են՝ մեծ նշանակութիւն ունին: Իսկ երկրորդն (Opus imperf. in Mattheum, Homel. XXXIV) մէջ բերելով Դ Եզրի Ե գլխու 42 համարը, կ'ըսէ. Dicit enim Propheta Ezras... Omnium Sanctorum numerum esse quasi coronam; sicut enim in corona, cum sit rotunda, nihil invenias quod videatur esse initium aut finis, sic inter sanctos, quantum ad tempus in illo sæculo nemo novissimus dicitur, nemo primus».

2. Contra Vigilantium (Opp. ed. Vallasius II. col. 392, 393).

Դիտելու ենք որ Հերոնիմոս միակ այն պատճառաւ անկանոն և անհարազատ կը համարի Եզրի Դ գիրքը, որովհետև այն ժամանակ եկեղեցիէն իբրև կանոնական գրուած ընդունուած և Ս. Գրոց մէջ անցած չէր: Դժբաղդաբար նա քննադատօրէն ուսումնասիրած չէ զայն, որով յոյժ շահագրգիռ տեղեկութիւններ թողած պիտի լինէր յետնոցս. սակայն յարգելով հանդերձ մեծ վարդապետիս ծանրակշիռ հեղինակութիւնը, պէտք է ըսել՝ թէ անկանոնականութենէ ձեռնարկած նորա փաստն ի նպատտ գրուածիս անհարազատութեան՝ ըստ ինքեան եզրակացուցիչ չէ, որովհետև ըստ վկայութեան Եւսեբիոսի՝ առաջին երեք դարերում Յովհաննու Յայտնոտրիոն և դեռ ուրիշ սրբազան գրուածներ իսկ կանոնական գրոց ցանկի մէջ եկեղեցիէն ընդունուած չէին, և սակայն էին հարապատ: Բ. Ս. Գրքէն գիտենք թէ առ Հրեայս կային ի հնումն ուրիշ մարգարէական և վաւերական գրութիւններ ևս, որոնք սակայն ոչ հին կտակարանի կանոնական գրոց ցանկի մէջ անցած են և ոչ այլ ժողովարանէն ճանչցուած: Հետևաբար, արդի քննադատութիւնն՝ ուրիշ աւելի դրական և շօշափելի փաստերու վրայ հաստատուած՝ կը վստահի այսօր ցոյց տալ, թէ այդ գրուածն՝ իւր այժմու կազմակերպութեամբն չէ և չկարէ լինել հարազատ գործ Եզր գրչի, այլ անոր անուան ներքեւ ծածկուած մի անծանօթ գրչի, որ ապրած ըլլայ կամ Քրիստոսէ մէկ դար յառաջ և կամ փրկչական թուականին առաջին դարում: Այլ թէ որքան ճիշդ են կամ անճիշդ այս եզրակացութիւնք՝ յետոյ ուրեմն ակներև պիտի ընենք փաստերով. այժմ տեսնենք համառօտիւ գրուածիս նիւթը, պարունակութիւնը և նպատակը:

Սաղաթիէլ՝ Եզրի անուան ներքև ծածկուած հեղինակն՝ իբրու այն թէ Բաբելոնի գերութեան մէջ և Նաբուգոդոնոսորայ ձեռքով Երուսաղեմի և անոր տաճարի կործանումէն 30 տարի վերջը կը գրէ իւր այս գիրքը, ըսելով. «Ես Սաղաթիէլ որ և Եզր կոչեցայ, և ի Բաբելոն յամին երեսներորդի», և այլն: Գրուածիս և անոր մէջ նկարագրուած գէթ առաջին երեք տեսիլներուն իբրև հանդիսավայր կը ներկայացուի Բաբելոն, թէպէտև ըստ իրին անոր այնքան ծանօթ կարող էր լինել Հինաւուրց Բաբելոնն, որքան մեզ այսօր: Իսկ Դ-է տեսիլներն կատարուած կ'աւանդուին այս քաղաքէս դուրս անմարդաբնակ դաշտի մի մէջ, որ կը կոչուի Արփադ կամ ըստ հայոյն Արդաբ, ուր ծաղկամբք միայն կը կերակուի տեսանողն: Իւրաքանչիւր տեսլենէ յառաջ՝ Հրեշտակի պատուիրելովը՝ զեօթն օր պահօք և աղօթիք կը պատրաստուի:

Տեսանողին կամ լաւ ևս գրոցս Հեղինակի բոլոր սրտնեղութեան և վշտաց միակ աղբիւրն, ինչպէս և գրութեան գլխաւոր շարժաւիթն է այս անողոք զաղափարս, թէ Իսրայէլի Աստուծոյ կամ Ենովայի արդարութիւնն ինչպէս թոյլ տուաւ իւրաքանակ տաճարի կործանումն և ընտրեալ ժողովրդեան գերութիւնն և տառապանքը, իսկ միւս կողմէն այլ անօրէն հեթանոսներու ամենայն բարութիւններով երանկանալը, որոնց մեղքն առ Աստուած աւելի մեծ էր քան թէ Իսրայէլացւոցը: Ուստի աստուածային արդարութեան և նախախնամութեան վրայ ունեցած՝ անտարակոյս իր ազգին և լքեալ ժողովրդեան, քան թէ իրեն սեպչական եղող այսպիսի թիւր տարակոյսները լուծելու նպատակաւ՝ կ'իջեցնէ նա յերկնից Ուրիէլ Հրեշտակապետը, որուն հետ կ'ունենայ ամօրեայ Հաղորդակցութիւն. և տիեզերական կարգին մէջ տիրող բնաբանական, բնազանցական, աստուածաբանական և քաղաքական նիւթերը շօշափող խորիմաստ տրամախօսութիւններով կը ձկտի պարզել, որոնք ճարտար արուեստով բաժնուած են եօթնաթիւ տեսիլներու կամ յայտնութեանց, իւրաքանչիւրն լի արեւելեան վառ երևակայութեամբ և կենդանի գոյներով: Իւրաքանչիւրն աղօթքով մի կամ առանձնախօսութեամբ կը սկսի, որուն մէջ լուելեայն կը պատրաստուին և տեսլեան նիւթերն: Սաղաթիէլ Եզր կու գայ ի Հանդէս՝ իրրև մարդկային սահմանափակ մտաց և վըրտացեալ սրտերու ներկայացուցիչ՝ իւր նուրբ առարկութիւններով, որոնց ծածկեալ պատճառները անյագ ծարաւով մի կ'ուզէ քննել և իմանալ. իսկ Ուրիէլ՝ իրրև անքննելի խորհրդոցն Աստուծոյ երկնառաք պատգամաբեր՝ պէս պէս օրինակօք կը մեկնէ զանոնք, և կը յայտնէ աշխարհիս արարչութենէն սկսեալ՝ մինչև փրկագործութեան, Քրիստոսի գալստեան և Հատուցման խորհուրդները: Ահաւասիկ գրուածիս Համառօտ ծրագիրն:

Արդ, ասկէ յայտնի կը տեսնուի Հեղինակիս առած կեղծ անունն պէս՝ գրուածին ևս կեղծուած լինելը: Եւ յիրաւի պատմական ճիշդ եղելութիւնն այն է, թէ Նարուզոզոնոսորայ ձեռքով Երուսաղեմի կործանումն եղաւ յամին 588 նախ քան զՔրիստոս, իսկ Եզրի և գերուած ժողովրդեան գերեզարձն ի Հրէաստան յամին 459-458, Արտաշէսի Հրամանաւ. այսինքն է՝ 100-127 տարի վերջ, Հակառակ վերը նշանակուած սահմանին: Թերևս ասով կարելի լինէր մեկնել գրուածիս այն զգալի Հակասութիւնը, իրրու այն թէ սորա սկիզբն յիշուած « երեսներորդ » տարին Եզրի տեսլեանց և անոնց գրուած լինելու ժամանակին միայն վերաբերի, և ոչ թէ գերեզարձին: Այլ

այս ենթադրութիւնս այն ժամանակ միայն հիմնաւոր կը լինէր, եթէ կանոնական գրոց մէջ ևս՝ ստուգիւ ճիշդ այդ ժամանակամիջոցին՝ իւր կամ այլոց գործերն ի գրի առած և գրիչ յորջորջուած լինէր Եզր. սակայն ընդհակառակն հոս գերեզարձէն վերջ գրած և Գրիչ անուանուած կ'աւանդուի. հետևաբար, անվաւեր գրոց կեղծ հեղինակն Սաղաթիէլ՝ Եզր գրիչը չէ, և դիտմամբ այդ վրիպակը գործած է, ցուցնելու համար իւր ժամանակակցաց, թէ այս գրուածըս յառաջագոյն գրուած էր ի գերութեան, քան թէ Եզրի միւս երկու վաւերական գրեբը. և կամ, ինչպէս կ'ըսէ Վիսլէր¹, դժուար է որ գրոցս կեղծեալ Սաղաթիէլն՝ գիտակցաբար ի նկատի աւած լինի, որ հինաւորոց Եզր գրիչն այն ժամանակ ի Բաբելոն եղած լինէր. այլ մանաւանդ թէ նա ուզած է ըստ կարելոյն նոյնացնել զինքը Զօրաբարեղի հօր՝ Սաղաթիէլի հետ, որ ճիշդ այն ժամանակին կը վերաբերի, և Եզրի՝ որ 100 տարի վերջն է, թէ և իրօք ինքն անոնցմէ ոչ միոյն հետ կարէ նոյնանալ: Այս ճարտար արուեստ մ'է իւր գրութիւնը հեղինակաւոր գործելու, և անով իւր ըզձացեալ նպատակին հասնելու: Ռիշար Վապիշի² կարծիքով՝ հաւանորէն գրոցս հեղինակն մի ուրիշ Եզրի անուամբ դիմակաւորել ուզած է, և զնա Զօրաբարեղի հօր Սաղաթիէլի հետ նոյնացուցած, իբր թէ երկուքն ևս մի և նոյն ժամանակի մէջ ապրած ըլլային: Եւ իրօք Նեէմեայ գրքին մէջ, զԼ. ԺԲ. 1, Եզր անուամբ քահանայ մի կը յիշուի, առանց Գրիչ տիտղոսի, որ Յեսուայ և Զօրաբարեղի հետ յԵրուսաղէմ կը վերադառնայ: Սակայն Վապիշ ինքնին Դ Եզրի ԺԴ գլխում՝ վերջաբանի մէջ աւանդուածին անյարմար կը համարի զայս, ուր ընդհակառակն մեզ ծանօթ Եզրն՝ Գրիչ օրինաց՝ ներկայացուած է, իբրև հեղինակ և զլիւսուոր դեր խաղացող ի պատմութեան: Չինչ և իցէ, ըստ գիտնականիս դիմսկաւորեալն՝ Եզրաս է, և ոչ թէ Սաղաթիէլ, զի վերջինս պարզապէս ազգանուն մ'է և ոչ թէ բուն անուն հեղինակին:

Այս մեկնութիւնս ըստ իմիք բանաւոր է, դիտելով որ տեսեանց մէջ Ուրիէլ հրեշտակապետն միշտ Եզր կամ Եզրաս անուամբ կը կոչէ զնա, և ոչ երբէք Սաղաթիէլ. սակայն Վապիշ չի ցուցներ մեզ, թէ ի՞նչ հիման վրայ Եզրի դիմակն առած է կեղծ հեղինակ գրոցս: Ըստ իս՝ այսպէս հեշտ է մեկնել զայն. այսինքն է, հեղինակ գրոյս՝

1. S^t Studien und Kritik, 1870. II. S. 265.

2. Das Vierte Buch Ezras, Göttingen 1889, s. 9.

նախապէս գիտնալով Եզրի Ա զրբէն, զլ. Ը, 9, 10, թէ Եզր՝ Աստուծոյ օրէնքը ի գրի առնելով կամ ժողովրդեան քարոզելով՝ Գրիչ կամ պատմիչ օրինաց Տեառն անուանուեցաւ. ուստի ինքն ևս, — որ ըստ իս Սաղաթիէլ կը կոչուէր, — աւելի Եզր Իրիչ անունն՝ քան ուրիշ մի այլ անուն յարմար դատեց իւր վրայ առնուլ, վասն զի ինքն ևս նախնոյն պէս ի Հոովմայեցւոց Հալածեալ և բքեալ ժողովրդեան Հոգը իւր վրայ առած՝ կ'ուզէր Բարձրելոյն օրինաք և վարդապետութեամբք սրտապնդել զանոնք, և իրենց Հայրենի օրինաց և կրօնից մէջ պահել: Այս բանս ակներև պիտի տեսնուի յետոյ՝ գրութեան ներքին փաստերէն իսկ:

Մեր տուած այս մեկնութեանս գրեթէ իր է, և կը հաստատուի ոչ միայն անվաւեր գրութեանս առաջին համարով, ուր Հեղինակն ինքնին յետ յիշելոյ իւր բուն անունը՝ Սաղաթիէլ, անդէն յաւելուածով վրայ կը բերէ և կեղծ անունը, ըսելով. «Որ և Եզր կոչեցայ», այլ նոյն իսկ գրուածին Դ գլխով, ուր աւանդուած է անոր գրուելուն եղանակն և նպատակը, զոր կեղծ Հեղինակն ուզած է ճարտարութեամբ շփոթել Եզր գրչի ձեռքը նորոգուած կամ լաւ ևս Հրէից կանոնական 20 (24) գրոց հետ. սակայն վերջաբանին մէջ մի և նոյն Հեղինակի կամ անոր յոյն խմբագրողի ձեռքով բարեղղաբար վար առնուած է կեղծ Եզրի դիմակը, վասն զի երբորդ դէմքով մէջ բերուած այս նախադասութիւնս. «Եւ ինքն Եզր վերացաւ և համբարձաւ ի գունդ նմանեաց իւրոց», և այլն, բնաւ կապ չունին վերջին նախադասութեան. «Գրեցի զայս ամենայն, և յորջորջեցայ զպիտր Բարձրելոյն» խօսքերուն հետ, որոնք սերտիւ կապուած են 47 համարի՝ «Արարի այնպէս», այսինքն՝ գրեցի «յամին յորրորդի» նախադասութեան հետ, ուր նշակուած է գրութեան տարեթիւն: Արդ, վերջին նախադասութիւնս որքան բնական է և բանաւոր, այնքան և անբնական է առաջինը, դիտելով թէ որ և իցէ գրիչ կարող է ծանուցանել յետնոց իւր ըրած գրութիւնը, բայց ոչ նոյնպէս մահը և յերկինս վերանալը. ուրեմն գրութիւնը ծանուցանողն բոլորովին տարբեր է մեռանողէն: Բ. Կեղծ Հեղինակն չէր կարող գործածել զանունս Սաղաթիէլ՝ իբրև ազգանուն Եզրի, գիտնալով որ Բ Եզրի է գլխու 1 համարում՝ Եզր կոչուած է արդէն որդի Սարուայ, ըստ այնմ. «Ել Եզր որդի Սարուայ, որդւոյ Ազարիայ»: Եզրի անվաւեր գրքի լատին խմբագիրն արդէն ամբողջապէս արտագրած է յիշեալ տեղին՝ իւր նորահնար յաւելուածին, այն է՝ Ա գլխու 1-3 համարներում, այսպէս. «Liber Ezræ prophetæ secundus, filii Sarei, filii Azarei», ect.

Այժմ մի ուրիշ խնդիր կ'ելնէ մեզ ընդ առաջ, այսինքն թէ արդեօք Եզր անուան, — այսպէս նաև անոր ընծայուած այս գրքիս, — յաստուածուստ ներշնչուած լինելու կեղծիքն՝ Սաղաթիելէն կամ լաւ ևս գրուածիս հնագոյն մասի հեղինակէն յառաջ եկած է ուղղակի, թէ ընդհակառակն յետ ժամանակաց և անոր սկզբնազրի վրայ կատարուած յոյն խմբագրութեան ընծայելի է: Ռիչար Կապիշ նախադասութեանցս վերջինն ընդունած է իբրև ճշմարիտ, իւր յիշեալ ընդարձակ ուսումնասիրութեան մէջ, զի վերլուծելով այդ անվաւեր գրութիւնը՝ իրարմէ տարբեր անձանց ձեռքով և ժամանակաց մէջ գրուած վեց աղբիւրներ գտած է, ըստ թուոյ տեսլեանց որք կը պարունակուին այն տեղ, այնու մանաւանդ որ սաղաթիելեան հատուածներէն աւելի բազմաթիւ են խմբագրական հատուածքն:

Ըստ մեզ՝ աղբերաց այդ այլևայլութիւնքն եթէ ճշմարիտ իսկ համարուին, — դատելով գրքիս մէջ եղած քրիստոնէական յատկութիւն ունեցող հատուածներէն, — սակայն և այնպէս Սաղաթիել անուան հետ բնաւ գործ չունին դոքա. և ասոր պատճառն իրիստ յայտնի է: Յիրաւի, այդ աղբիւրներն կամ յաջորդաբար կատարուած, ասորի, լատին, հայ, ևն, խմբագրութեանց ձեռքով ներմուծուած են, և կամ գրքիս սկզբնազրի հեղինակէն հաւաքուած: Առաջին կէտն ընդունելով իբրև հիմնաւոր, սակայն և այնպէս մենք կը տեսնենք որ բոլոր խմբագրութիւններն ևս միակերպ ունին անունս Սաղաթիել. և լատինն անգամ, որ ի սկզբան զանց ըրած է զայն՝ ի շարունակութեան ապա կը յիշատակէ յայտնապէս. ուրեմն այս ընդհանուր երևութէս կը հետևի, որ անյայտացած յոյն խմբագրութիւնն ևս ունեցած ըլլար զայն, բայց ոչ եթէ նոր ինչ հնարած. զի այսպիսի մի կեղծիք անհասկանալի պիտի լինէր յունի մի համար, ինչպէս Հրէից այլ դժուար կամ բոլորովին անընդունելի: Հետևաբար, Սաղաթիել անուան ծագումը երբայական բնազրի մէջ որոնելու ենք քան թէ յունարենի, և թէ դա է յասուկ անուն անվաւեր գրոցս հեղինակին: Սա գրեց իւր այդ գիրքը, օգտուելով Հրէից գրաւոր կամ անգիր աւանդութենէ մի, որ գուցէ թէ Եզրի անուամբ կը չրջէր Հրէից մէջ, նոյն իսկ փրկչական թուականի առաջին դարուն:

Իսկ գալով ուղղակի աղբերաց՝ յարգելով հանդերձ Կապիշի սըրամիտ դիտողութիւնները, մենք մեր ըրած քննութեան համեմատ չենք կրնար համաձայնիլ իրեն ըստ ամենայնի: Այս ճշմարիտ է՝ որ գրութեանս մէջ հրէական որոշ ձկտման և բնորոշ յատկութեանց առընթեր՝ կը տեսնուին զգալի կերպով նաև քրիստոնէական հոգւյ

և աստուածաբանութեան ակն յայտնի ներշնչութիւններ, զորս դը-
ժուար է մի և նոյն զրչին ընծայել, առանց ենթադրելու՝ որ նա
ազգաւ հրեայ եղած լինի և կրօնիւք քրիստոնեայ: Սակայն այս-
պիսի մի ենթադրութիւն՝ իրեն ի նպաստ փաստեր չունենալէն
չուր՝ Հակառակ ևս կը թուի երբայական տիպ ունեցող Հատուա-
ծոց կամ լաւ ևս մեծագոյն մասին գրութեանս, որ առանձինն
առնուած՝ այնքան կը տարբերի միւսներէն, որքան Հին կտակարանին
վերաբերեալ զիրք մի՝ նոր կտակարանի այս ինչ կամ այն զրքէն:
Քրիստոնէական տիպար ունեցող Հատուածներն՝ առաջին անգամ
յոյն խմբագրի ձեռքով ներմուծուած են, ըստ իս, զրքիս մէջ, և
Հետհետէ կերպաւորուած միւս խմբագրութեանց ձեռքով: Իսկ մնա-
ցածն ամբողջ՝ երկու աղբիւրներէ կազմուած է, այսինքն են սաղա-
թիկեան և եգրեան, կամ լաւ ևս՝ Հինաւուրց և հնագոյն: Ահա այս
հիման վրայ պիտի լինին մեր քննութիւնքն և ապացուցութիւններն:

Առաջին տեսլեան վերջը, գլ. Ե, 13, Ուրիէլ Հրեշտակապետի
կողմէն կը պատուիրուի առ Սաղաթիէլ Եզր, թէ «Դարձեալ միս-
անգամ պահօք և արտասուօք խնդրեսցես ի Բարձրելոյն իբրև զա-
ռարս եօթև, և լուիցես քան զայս մեծամեծս», մինչդեռ նոյն տես-
լեան սկիզբը մենք բնաւ նման պատուէրի մի չենք հանդիպիր,
զրբիս բոլոր թարգմանութեանց մէջ: Սակայն եօթնօրեայ պահեցո-
ղութեան սոյն պատուէրն՝ կրկնուած է և երեքնուած նոյնպէս եր-
կորդ տեսլեան վերջը, գլ. 2. 31, և զկնի երրորդ տեսլեան թ
զլիու 23 համարում. բայց տարբեր պարագայ մի կայ այս տեղ,
որ նախընթացներուն մէջ կը պակսի, այսինքն է՝ ըստ ասորի, ա-
բարական և լատին թարգմանութեանց՝ կը հրամայուի եօթն օր ա-
ռանձնանալ, բայց ոչ պահել. «Tu autem separaveris septem
dies, sed non iterum jejunabis in eis». Հայն միայն ունի «Պա-
հեա դու այլ ևս աւուրս եօթն»: Արդ, այս կոչմանցս մէջ դիտու-
ղութեան արժանի երկու կէտեր կան, այսինքն է, նախ առաջին
տեղոյ «դարձեալ միսանգամ» բացատրութենէն, — որ չորս թարգ-
մանութեանց մէջ իսկ նոյնութեամբ պահուած է, — յայտնապէս
կը Հետևի, թէ Ա տեսլենէն յառաջ ևս անտարակոյս եօթնօրեայ
պահեցողութեան պատուէր մի տրուած էր տեսանողին, որ դժբաղ-
օրէն իւր յարակից Հատուածով ի միասին ինկած է: Այս պա-
կան, առանց որոյ Գ զլիու 13 համարէն մէջ բերուած բացատրու-
թիւնն անհասկանալի կը մնայ, Էվալտ, Յօլզմար և Կապիշ իսկ
անդրադարձան: Լատին խմբագիրն ևս, այս առթիւ, կարծէք թէ՛ Բ

գլուխն ուզած է ընծայել մեզ, բայց կասկածելի է որ գրոցս ըսկըզբնագրէն առած ըլլայ զայն: Բ. Յիշեալ տեսիլներում հրամայուած եօթնօրեայ պահեցողութեան պատուէրն՝ բոլորովին տարբեր հանգամանքներ ունի յաջորդ, այն է Դ, Ե և Զ տեսիլներում նկարագրուածին, նկատմամբ տեղւոյն, աւուրց և եղանակի պահեցողութեան, զորս յետոյ պիտի պարզենք:

Իրարու, — գէթ արտաքուսպէս, — Հակապատկեր այս և բոլոր միւս տեղիքն մանրագնին խուզարկութեանց ենթարկելէն վերջ՝ Հետևցուց Կապիչ, թէ ինչպէս Ուրիշէլ հրեշտակագետի երևմանց նկարագիրն՝ Դանիելի Ը գլխու 15 համարում աւանդուածին վրայ ձևացած է, այսպէս այլ առաջին երեք տեսիլներում եղած երեք եօթնեակ պահոց պատուէրն՝ Դանիելի մարգարէութեան ժ գլխում աւանդուածէն ուղղակի փոխ աւանդուած է, վասն զի Դանիելի և ոչ թէ Յզրայ բերնով կրնան ըսուած լինել անկանոն գրքիս Զ գլխու, — 35 համարում, — պահեցողութեան վերաբերեալ խօսքերս. « Ut suplerem tres hebdomadas quæ dictæ sunt mihi », զի նա՛ աստուածային յայտնութենէ առաւ այսպիսի պատուէր մի, և ոչ թէ Յզր Սաղաթիշէլ. Հետևաբար, երեք եօթնեակց վերաբերեալ Հատուածներն, որոնք կը զանազանին միւս տեսիլներում յիշուած հանգամանքներէն, ոչ եթէ հնագոյն Յզրի՝ այլ խմբագրութեան յատուկ ներմուծութիւնք են:

Մենք ընդունելով հանդերձ տեղւոյս Դանիելի Հետ ունեցած նմանութիւնը, չենք կրնար համաձայնիլ անկէց հանած եզրակացութեանը. դիտելով նախ, որ ինչպէս յետագայ խմբագիրն՝ այսպէս և դիմակաւոր Յզր Սաղաթիշէլն կարող էր հաւասարապէս Դանիելի Հետեիլ: Բ. ըստ իս՝ ինչպէս բնագրին՝ այսպէս ևս մեր դիտողութեան էական կէտն է եօթնօրեայ՝ պահեցողութեան պատուէրն, որ կը վերաբերի ուղղակի հնագոյն աղբերն, այն է Յզրի. իսկ երեք եօթնեակքն ուրիշ բան չեն ըստ ինքեան, եթէ ոչ երեքնութիւն առաջնոյն. և այս երեքնութիւնս՝ արդիւնք են Սաղաթիշի գրչին, որ իւր հնագոյն աղբիւրը ուզելով ուրիշ տեսիլներով ընդարձակել,

1. Եօթն թիւը Հրէից մէջ ամենազործածականն է, և Ս. Գրքէն դիտենք, որ Դանիելէն դուրս ուրիշներ ևս եօթնեակ մի կը պահէին մեծ զործ մի ձեռարկելէ յառաջ: Իսկ անվաներ գրոցս հեղինակն՝ բաց ի յիշեալ տեղերէն՝ Զ գլխու 42, Ը գլխու 30, 31, 80 և Ա գլխու 91 և 101 համարներում ևս զործածած է այդ թիւը, ուրիշ իրաց նկատմամբ. ուրեմն այս ամենայն սեմական տիպ ունին, քան թէ յունական:

անկէ նշանակուած պահեցողութեան եօթն օրերն ևս երեքլնած է նոյն կերպով, իւր զործը չմատնելու համար: Եւ ստուգիւ, այսմ կը նպաստեն յոժ նաև հայկական և արաբական խմբագրութիւնքն, որոնք, 2 զլիսու 35 համարում, չունին բնաւ ասորոյն և լատինի «tres hebdomadas» բացատրութիւնը. և նոյն իսկ վերջնոցս՝ մի և նոյն զլիսու 36 համարին. «Cum esset nocte octava» բացատրութիւնն, որուն կը միարանին հայն և արաբացին իսկ, աւելի եօթն օրը ցոյց կու տան մեզ, քան թէ 35 համարի՝ «tres hebdomadas = երեք եօթնեակքն»: Ուստի այս մեկնութենէս վերջ՝ կարծեմ թէ այլ ևս անհրաժեշտ հարկ չկայ Դանիելի մարգարէութեան կոչումն ընել, և կամ խմբագրական աղբիւրներ մակարերել:

Աղբերաց զանազանութեան ստոյգ նշաններ կը նկատուին իրօք Թ զլիսու 23, Ժ զլ. 58 և ԺԳ զլ. 39 համարներում. վասն զի այս տեղերէս առաջինն՝ նոյն պահելով պահոց օրերուն թիւը՝ եօթն, սակայն փոխանակ Բարելոնի՝ Արդար դաշտին մէջ փոխադրուած կը տեսնեմք յանկարծ զպահեցողն, որ ըստ արաբացոյն՝ թարգմանուած է՝ դաշտագետին ձոխ բոսակահոռքեան, ուր տեսանողին կը պատիրուի՝ ծաղկամբք միայն կերակրի: Երկրորդին մէջ՝ երկու օրուան վերածուած են պատրաստութեան օրերն. իսկ երրորդին մէջ՝ երեք օրերու:

Տեղեացս առաջնոյն եկումուտ լինելն՝ սակէ իսկ կը տեսնուի, զի 23-25 համարներում, ուր Ուրիէլ հրահանգ կու տայ Եզրի դաշտն երթալ, դաշտին անունը բնաւ չյիշուիր. իսկ յաջորդ (26) համարում տեսանողի բերանը դրուած առանձնախօսութեան մէջ միայն և առաջին անգամ կը կոչուի այն Արդար¹: Այս անունս եթէ նոյն է Երմ. ԽԹ, 23 և Ես. 12, 19 քով յիշուածին հետ, կը գտնուէր Պաղեստինու Հիւսիսային սահմանագլուխը, այն է՝ Եմաթայ և Դամակոսի գաւառին մէջ, և ոչ թէ Բարելոնի քով, ուր կը հանդիպին առաջին երեք տեսիլներն: Արդ, բաղդատելով այս հատուածս՝ Ե զլիսու 16 համարին և ԺԲ զլիսու 40-45 համարներուն հետ՝ անհամաձայնութիւնն դեռ աւելի յայտնի կը տեսնուի. զի վերջնոյս մէջ՝ ժողովուրդը տեսնելով Եզրի յամենալը՝ ինքն կու գայ առ Եզր, և կ'աղաչէ, որ չի բռանէ զիրենք օտարութեան մէջ, ըսելով. Nec enim

1. Բ. կապէջ՝ Երուսաղեմի մօտերն եղած կը համարի այս տեղիս, բայց առանց ոչխորագրակտն կամ պատմական փաստ մի մէջ բերելու անոր ի նպաստ. սակոյն դրուածիս ներքին փաստերը, զոր մէջ բերինք և զլիսի բերինք՝ սորա նախակէ կ'ելնեն:

sumus meliores iis qui ibi¹ mortui sunt, որ համաձայն է աւելի Ա տեսլեան վերջն եղած հատուածին, ուր ժողովրդեան առաջնորդն Փաշտիէ² գալով առ Եզր՝ նմանօրինակ արդես մի կը մատուցանէ անոր. իսկ որովհետև ինչպէս առաջին տեսլեան՝ այսպէս և ԺԲ գլխու 40-45 համարներում պատմուած դէպքն՝ ի Բարեւոն կը կատարուի. իսկ ըստ Ժ գլ. 26 համարում աւանդուածին՝ Պաղեստինու սահմանաց վերայ, ուրեմն պէտք է ըսել, թէ վերջին հատուածս՝ Արդար անուամբ, ինչպէս նաև Ժ և ԺԳ գլուխներու նոյնասեր հատուածներն, տարբեր յարբերէ կը յառաջագային, որուն ո՛վ ըլլալը Դ տեսլեան վերայ խօսած ատեն պիտի պարզենք:

ԵՐԿՐՈՐԻ ՏԵՍԻԼՆ՝ սերտիւ կապուած է առաջնոյն հետ, այնպէս որ՝ տեղին, անձն, հրեշտակն և այլ ամենայն հանգամանք նոյն կ'երևին. սակայն և այնպէս կան տեղեր և աստ, յորս աչքի կը զարնեն իրարու տարբեր ձկտումներ: Օրինակի աղազաւ, Ծ գլխում՝ Եզրի աղօթքին կամ առանձնախօսութեան մէջ (էջ 23-26), յետ յիշեցնելու Աստուծոյ, թէ « Դու Տէր, յամենայն նիւթոց փայտոց ընտրեցեր քեզ զորթ ծառ, յամենայն ծաղկանց՝ զշուշան ծաղիկ, յամենայն թռչնոց՝ աղաւնի, և յամենայն շորքոտանեաց՝ ոչխար, և յամենայն բազմութեան ջուրոց՝ Յորդանան » . և ապա յիշելով ընտրեալ ժողովրդեան՝ հեթանոսներէն կրած Հայածանքը և սոցայս՝ երկանկանալը, անդէն վրայ կը բերէ, 27 համարում, նշանաւոր խօսքերս. « Եւ յամենայնէ ընտրեալք առ ի քէն՝ օրենք, զորս շնորհեցեր ցանկաշի ժողովրդեանն » : Իսկ 28 և 35 համարներում՝ գայրացմամբ « ամբարիշտ և անօրէն » կը կոչուին ամենայն ազգք հեթանոսաց, այնու զի « ոչ ճանաչեն զԱստուած » (Իսրայելի):

Արդ, մէջ բերուած առաջին երկու տեղեաց մէջ շեշտուած է Հրէից գերազանցութիւնը՝ շնորհիւ օրինաց, և հեթանոսաց նկատմամբ ալ չափաւոր լեզու մի գործածուած. իսկ վերջնոյն մէջ, ընդհակառակն, ցոյց տրուած է սաստիկ և անհաշտ ատելութիւն մի առ հեթանոսս, զոր դժուար է միաբանել առաջնոյն հետ և մի և նոյն

1. Բոլոր միւս թարգմանութիւնք՝ ունին այս մակարայս. « այն մէայն կը քրէ քան զհի՞ մեռեալս նորա » : Ժողովրդեան խօսքն՝ հինաւուրց վախճանելոց մասին է, բայց յայտնի չէ, արդեօք Երուսաղեմի, թէ ընդհակառակն, Բաբելոնի մէջ: Հայն՝ առաջնոյն աւելի կը թուի նպաստել:

2. Այս անունս՝ Թասոց ԼԳ գլխու 26 համարին մէջ ևս յիշուած է, իբրև էշտան և առաջնորդ ցեղին Իսաքարայ: Հաւանական է, որ փոխառուն ևս այդ ցեղին կը վերաբերէր. բայց այս բանին չունիմ ի ձեռին շօշափելի փաստեր:

հոգւոյ թելադրութիւններ համարել: Զօլլմար՝ Պաւլոս առաքելոյն առ Հռովմայեցիս գրած թղթոյն (Ա. 32 և Բ. 16) գլխոց մէջ բերուած տեղեաց հետ նոյնութիւն մի նկատելով՝ հետևեցոյց, թէ դոքայն կրնար սաղաթիէլեան հին բնագրին վերաբերիլ, որ միշտ հաշտարար հոգեով կը խօսի հեթանոսաց մասին, այլ քրիստոնէի մի: Սակայն, ըստ իս, պէտք է դիտել, որ Պաւլոս առաքեալն՝ յիշեալ տեղեաց մէջ բնական օրինաց վերայ կը խօսի, զոր ունին և՛ հեթանոսք. իսկ Սզրի տեսլեան մէջ, ընդհակառակն, խօսքն բացառութեամբ Սինայ լեռան վերայ տրուած աստուածատառ օրինաց վերայ է, որ չբէից միայն սեփհական էր. հետևաբար, Պաւլոս առաքելոյն կոչումն ընկրով՝ խնդիրը լուծուած չի համարուիր:

Ու. Կապիչ ընդունելով Հանդերձ մեր նշանակած զանազանութիւնը, սակայն և այնպէս ինքն հաստատուած միայն 28 և 35 համարներում արտայայտուած իրողութեան, այն է՝ առ հեթանոսսոց տրուած ատելութեան վերայ, կ'ըսէ՝ թէ այդ տեղիքն սերտ կապ ունին Գ գլխու 36 համարին հետ, և երկոքեան իսկ՝ յոյն խըմբագրին անկ են: Գիտնականս՝ իւր այս կարծեաց ի հաստատութիւն՝ ցոյց կու տայ մեզ Յալկոստ—Քաղաչի՝ մէկ վկայութիւնը, ուր ըսուած է, թէ այն ժամանակէն ի վեր՝ երբ Խարայեղացիք ընդունեցան Աստուծոյ օրէնքը, զրգուեցան հեթանոսք անոնց դէմ. և թէ ինչո՞վ և ի՞նչպէս Խարայեղացիք՝ հեթանոսներէն յառաջ եղան ժողովուրդ Աստուծոյ և աստուածամերձք, իսկ հեթանոսք՝ զուրկ յօրինանց՝ և ոչ իսկ մարդ անուան, կամ որդիք Ադամայ արժանի եղան կոչուիլ (ի չրէից), այլ հեթանոսք, անօրհնք, այրագգիք: Հետևաբար, ըստ Կապիչի՝ Յալկուտ—Քաղաչի եղած է աղբիւր յոյն խմբագրի ձեռքով եղած յաւելուածին: Յիրաւի, այս հեղինակիս և Սզրի անվաւեր գրոց յիշեալ տեղեաց նմանութիւնն՝ առանց երկբայութեան է, բայց այն փաստն որով յիշեալ տեղին յոյն խմբագրին աւելի կու տայ Կապիչ՝ քան թէ Սաղաթիելի, Յալկուտէն մէջ բերուած տեղուովն իսկ կ'ոչնչանայ, դիտելով որ՝ սա ոչ եթէ առանկին առ հեթանոսս տաժած ատելութեան պատճառաւ հնարեց «անօրէն, այլազգի» և այլ բացատրութիւնները, այլ իւր ազգին նուիրական, այն է՝ Ս. Գրոց և ընդհանուր աւանդութեանց համեմատ, ուր ստեպ յեղեղուած կը գտնենք զայնս: Ուստի, ես աւելի հաւանական կը համարիմ Սաղաթիելի ընծայել խնդրոյ նիւթ եղած տե-

1. Տես Eisenmann. a. a. O.

դին, քան թէ յոյն խմբագրին: Եւ ստուգիւ, նախ որ Յորդանան, Սիռն, ստարք երկիր և ընտրեալ ժողովորդ, գործածուած ձևերն՝ աւելի Հրէի մի բերանը հասկանալի են, քան թէ Յունի: Բ. Նոյն իսկ Սաղաթիելին յատուկ հաստուածոց մէջ կը տեսնուի ամենուրեք ճիգն մի՝ Թևակոխելու միշտ նուազէն առ սաստիկն և անորոշէն որոշագունին:

Ե գլխու 41 — 2. 10 համարներն, ուր Եզրի կողմէն այս հարցս կ'ուղղուի առ Ուրիէլ. « Ո՞չ կարէ առնել (Բարձրեալն) արդեօք, որք անցինն, և որք կան, և որք լինելոցն իցեն միանգամայն, զի վաղ-վաղակի անցցէ աշխարհս և եկեցցէ դատաստան, » և այլն, և Ուրիելի տուած այս պատասխանն. « Զի որոշեաց Բարձրեալն՝ ըստ ժամանակի և ի ժամանակի առնել որ ինչ լինելոցն իցէ, և ոչ կարեն փութալ արարածքն ». այսպէս և 45 համարն, ուր կը հարցնէ Եզր. « Զիարդ ասաց Բարձրեալն՝ դարձուցանել զամենայն մարդկեղէն արարածս » մեծ նմանութիւն ունին Դ գլխու 51—52 համարներու հարց ու պատասխաններու հետ, բայց կայ զգալի հակասութիւն մի երկուտեք. վասն զի որ ինչ անլուծանելի թողուած է այն տեղ՝ Ուրիելի կողմէն, այն է՝ մարդկային կենաց և մահու գաղտնիքն, ըսելով. « Վասն նշանացն կարեմ ասել քեզ, իսկ վասն կենաց ձերոց՝ ոչ առաքեցայ ասել ինչ », հոս, ընդհակառակն, կը լուծուի այն՝ երկրի և ծննդական մօր և այլ նրբին օրինակներով: Ուստի այսպիսի մի խոշոր հակասութեան հանդէպ՝ անաչառ քննադատութիւնն չվարանիր եզրակացնելու, թէ Ե գլխու հարցուպատասխանիքն հնագոյն աղբեր չեն վերաբերիր, և ուրիշ բան չեն, բայց եթէ Դ գլխու 51—52 համարներն, որ յոյն խմբագրի ձեռքով ընդարձակուած են՝ առ Ա Կորնթացիս գրուած թղթի ԺԵ (Բ) գլխու վարդապետութեամբ. որով հին Կտակարանի անորոշ և մթին աստուածաբանութիւնն՝ նոր Կտակի կամ քրիստոնէական վարդապետութեան լուսով բարգաւաճուած է:

Զ գլուխն, ինչպէս որ կանխաւ նշանակեցինք, հայերենի մէջ մեծապէս խանգարուած է, և 6—10 համարներն այլ բոլորովին կը պակսին, որք միւս թարգմանութեանց մէջ կը ներկայացնեն՝ ժամանակի սկզբան և կատարածի և յաւիտենականութեան մասին՝ Եզրի և Ուրիէլ հրեշտակապետի մէջ եղած խօսակցութիւնը. « Et respondi et dixi: Quid erit separatio temporum? aut quando prioris aut sequentis initium? — Et dixit ad me: Ab Abraham usque ad Abraham, quoniam ab eo natus est Jacob et Esau: manus enim Jacob tenebat ab initio calcaneum Esau, Finis enim

hujus sæculi Esau, et principium sequentibus Jacob, ... Homi-
nis manus... inter calcaneum et manum, aliud noli querere;
Esra » .

Ռ. Կապիչ Ուրիելի բերանը դրուած, Ab Abraham usque ad
Abraham խօսքերը՝ իբր անիմաստ կը նկատէ . իսկ ամբողջ տեղին
օտար ի սկզբնագրէն Սաղաթիելի, և է գլխում եղած միւս աղբիւ-
րէն յառաջ եկած, ուր Իսրայելի թագաւորութիւնն՝ իբրև սահմա-
մանաւոր տւեղութիւն մ'առնուած է այս կենցաղոյ մէջ : իսկ մեր
կարծիքով, այդ տեղին՝ է գլխոյն հետ մերձաւոր կապ չունի, վասն զի
չոս վերջին ժամանակի նշանաց վերայ կը խօսուի, իսկ նախընթա-
ցին մէջ ընդհակառակն ներկայ կենաց վերայ, որ պիտի վերջանայ
Եսաւով, այսինքն է՝ աշխարհական իշխանութեամբ, և Հանդերձե-
լոյն՝ որ պիտի սկսի Յակոբով, այն է՝ հոգևոր թագաւորութեամբ .
հետևաբար, աւելի Ե գլխու 51-52 համարներուն վերաբերելի է :
Այ՛ իսկապէս երբայական այլաբանութիւն մ'է և յունի մի հա-
մար նշանակութենէ զուրկ, ուղղակի սկզբնագրի գրոցս կը վերա-
բերի : Ոչ միայն անիմաստ մի բան չէ յիշեալ նախադասութիւնն,
այլ Մենդ. ԺԷ, 4-8 տեղեաց համաձայն, ուր Աբրահամ Աստուծոյ
կողմէն և ուխտիւք կը դրուի հայր ազգաց բազմաց և տէր աշխար-
հաց, յորմէ կը ծնանին ապա Եսաւ և Յակոբ : Սա կը նկատուի
սկիզբն Հանդերձեալ ժամանակի կամ աշխարհի, վասն զի ինքն եղաւ
ժառանգ Աստուծոյ ուխտին և արբահամեան անվերջ թագաւորու-
թեան, ինչպէս Մեքքիսեդեկն այլ յաւիտենական քահանայութեան .
իսկ Եսաւ՝ կը դրուի իբրև վերջ այս ժամանակիս, որովհետև կոր-
սրնցնելով անդրանկութեան հետ՝ նաև Աբրահամու աւետեաց ժա-
ռանգութիւնը, անցաւորօքս պատահեցաւ և այլազգեաց հետ ազգա-
խառնեցաւ : Ուստի Եսաւայ, — որ ըստ Հիլզենֆելդի՝ հոմանիշ է
Եզովայ, — այլաբանութեան նպատակն էր, կազմել աշխարհական
թագաւորութիւն մի, որ պիտի տիրէր վերջին ժամանակներում .
այսինքն է՝ թագաւորութիւն Հերովդիանոսաց՝ հռովմէական կայսե-
րութեան ներքոյ : Ըստ Այսենմանի՝ (II, 787) բարունեաց աւանդու-
թեան համեմատ՝ Հրէից ներկայ ժամանակի թշնամին՝ միշտ Եզով-
մայեցի անուան ներքև կը ներկայանար, ըլլար այն հռովմէական
գետութիւնն, ըլլային քրիստոնեայք կամ Պարսիկք : Ուստի, այսպէս
կամ այնպէս, Յակոբ՝ նշանակ էր բոլոր հանդերձեալ աշխարհին,
բոս Սաղաթիելի, իսկ Եսաւ՝ այս աշխարհիս, և երկաքանչիւրն՝ ընդ-
դիմամարտ կ'ընթանան, առանց միջնորդի : Այ՛, Մուրթքէի և Հա-

մանայ պատմութիւնն իսկ՝ ի գիրս Եսթերայ, այսպէս և Հրէից հա-
մալինջ կորստեան պատմութիւնն՝ առ Բ Անտիոքոսիւ՝ (Բ. Մակա-
բայեցեաց) այս կրկին կենցաղից և իշխանութեանց իրարու հետ
ունեցած բուռն մրցութեան առհաւատչեայք են: Գրոցս մէջ բե-
րուած տեղին՝ աւելի գեղեցիկ կերպով ընդլայնուած է և մեկնուած
նոյն իսկ Պաւղոսի առ Գաղատացիս գրած թղթոյն մէջ (զլ. Գ. 21-31),
ուր օրինակաւ Սահակայ և Իսմայելի կը մեկնուին Արրահամու երկու
ծննդոց, այսինքն է՝ ապատէն և աղախնէն ծնուած որդւոց նշանա-
կութիւնքը, որով կը ջրին այլ ամենայն վարկածք. հետեւաբար, և
աղբերս հնութիւնն աներկբայելի է, և ուրիշ յոյն աղբււր մ'երա-
զելն իսկ ոչ հիմնաւոր: Այս միայն կը մնայ խնդրոյ նիւթ. այսինքն
է, արդեօք առ Գաղատացիս գրուած թղթոյն հեղինակն՝ փոխեց Եզրի
անկանոն գրոց յանուն Յակոբայ և Ծաւալայ աւանդուածները՝ Սա-
հակայ և Իսմայելի վերայ, թէ ընդհակառակն: Մենք, առանց ուրիշ
տեղեաց համեմատութեան՝ առ այժմ դեռ վաղածամ կը համարինք
միոյն կամ միւսոյն ի նպաստ վճիռ տալը:

ԵՐՐՈՐԻ ՏԵՍԼԵԱՆ մէջ՝ Սաղաթիելի առանձնախօսութիւնը (զլ. 2.
38). «Տէր Աստուած իմ, դու արարեր զերկինս և զերկիր», նոյն է
առաջին տեսլեան առանձնախօսութեան, այսինքն է Գ զլխու 4-9
համարներուն հետ: Սակայն, անմիջապէս անոր յաջորդող համարնե-
րում, աչքի զարնող երևոյթ մ'ընդ առաջ կ'ելնէ մեզ, խորհրդաւոր
կրկնութեան ձևի ներքև. այսինքն է, դիտելով որ գրուածիս Գ
զլխու 10 և հետեւեալ համարներում, արդէն համառօտած էր ստեղ-
ծագործութեան և Ադամէն սկսեալ մինչև Սողոմոն Երբայեցեաց նա-
խահարց արարուածները, 2 զլխու 40-55 համարներում՝ վերստին
կը սկսի նկարագրել, մի առ մի, վեցօրեայ արարչութեան գործերը,
բայց բոլորովին նոր և ընդարձակ պարագաներով: Երրորդ օրուան
գործոց մէջ՝ նշանաւոր է այս յայտարարութիւնս, թէ ծովն՝ աշխար-
հիս $\frac{1}{7}$ մասը գրաւած է, իսկ ցամաքն՝ $\frac{6}{7}$ մասը: Նշանաւոր է մա-
նաւանդ, հինգերորդ օրուան գործոց մէջ, Բեհեմոթ ցամաքային և
Լեվիաթան ծովային սոսկավիթխար գազանաց մասին աւանդուածն:
Այս երկու կէտերս իսկ՝ հայերէն խմբագրութեան մէջ կը պակսին:
Լատինն՝ փոխանակ Բեհեմոթի՝ ունի վիթխարի կով Ենոպթայ, սա-
կայն այս՝ կամ մեկնողական յաւելուած մ'ըլլալու է յիշեալ անուան,
և կամ պարզ գրչութեան վրիպակ մի, վասն զի բաց ի միւս թարգ-
մանութիւններէ՝ Բարոտթայ Յայտնոտթեան մէջ ևս (29, 4) Բեհեմոթ
գրուած է:

Այս անուամբս, որ ծագմամբ զուտ երրայական է, մեկնիչներէն մանք՝ ընդհանուր առմամբ՝ զլուս չորքտանեաց կը հասկանան, իսկ այլք՝ կը մասնաւորեն ի փիղ: Զինչ և իցէ, զմեզ հետաքրքրողն ոչ այնքան անուան է, որքան աղբիւրն՝ ուսկէ յառաջ եկած է անունս: Ի. Կապիչ՝ Սաղմոսի Ծ գլխու՝ 10 համարը, ըստ երրայական բնագրին մէջ բերելով, կ'ըսէ. թէ՛ բարունիք՝ թարգմանած են զայն Բեհեմոթի ի վերայ հազար շերանց, որ կը մօտենայ անվաւեր գրքիս Զ գլխու 51 համարի այս խօսքերուս. «Et dedisti Behemoth... ut inhabitet in ea (terra), ubi sunt montes mille»: Մենք ընդունելով հանգերձ տեղւոյս զանագանութիւնը, սակայն և այնպէս աւելի հաւանական կը համարինք զայն ուղղակի Յորայ Խ գլխու 10 և 15 համարներուն վերայ յերիւրուած ընդունել, ուր ըսուած է այսպէս. «Զի գազանք իբրև զարչառ խոտ ձարակին. և հասեալ ի վերայ առապար շերին, արար խնդութիւն չորքտանեաց ի տարտարուն», ըսն թէ Սաղմոսի յիշեալ տեղւոյն վերայ, ուր ըստ Եթանասնից բառ մ'անգամ չկայ նկատմամբ Բեհեմոթի:

Եւ ստուգիւ, Վարդան իւր Արարածոց մեկնոթեան հետեւեալ տեղովը կը պարզէ մեր ասածն, ըսելով. «Ի Յորն՝ զԼեվիթայն սոէ սկիզբն արարածոց իրայնոց, զօր ասնն մի է, և պատեալ է զամենայն երկիր, զտուտն մօտ եղեալ գլխոյն. և պորտովն՝ ընդդէմ կայ անհուն յորձանացն ովկիանոսի. այնչափ թողացուցանէ զլուրն ի վեր, մինչև բաւական գոյ ծածկել զիւր մարմինն, և զայն արգելու, զի մի՛ կլանիցէ զաշխարհ: Այլք երկոռ ասնն (գազանս), և թէ փոխեն գիրեարս. այս չէ նման»: Վարդան լուծ է ուղղակի յիշել այս տեղ իւր բնագիրը, սակայն իւր յիշեալ Մեկնոթեան ըսկիզբը խօսելով Եթանասնից վերայ, կ'ըսէ. «Իսկ Արգար արքայ և Քաղէոս առաքեալ բերին զգրեանն յերուսաղեմէ, և հաւատացեալ նորայեցիք որ թարգմանեցին յասորի գիր և ի լեզու, յայն թարգմանութեան այսպէս կայ. Ի սկզբանէ արար Աստուած գեոթիան երկնի և գէութիւն երկրի: Եւ այս գեղեցիկ է, զի ցուցանէ թէ յոյժից արար»:

Արդ, Վարդանայ առաջին տեղին՝ եթէ հին ասորի թարգմանութենէն առած համարինք և եթէ բարունական մեկնութիւններէ, այս յայտնի է, որ Յորայ գրքի վերայ մատնանիչ կ'ընէ մեզ, և ոչ

1. Բարունին Յորանան կը համարի գրեհեմոթ իբրև մի միայն գազան, որ կը ստի հազար շերանց վրայ, որք կը մատակարարեն անոր արօս ի հարակ:

թէ Սաղմոսին: Վարդանայ այս խօսքերս. « Այլք երկու ասեն, և թէ փոխեն զիրեարս » հաւասարագործն են Յորայ մէջ բերուած տեղւոյն. « Զի գազանք իբրև արձառ խոտ ճարակին » բացատրութեանը, ինչպէս և վերջնոյն յաքնակի գազանք բացատրութիւնն այլ՝ նոյնանիչ է Եզրի գրոց (Ձ. 54) Բեհեմովթ և Լեվիաքսան անուանց: Միակ դիտելու կէտն այս է, որ Յորայ քով « գազանք », այսինքն է, Բեհեմովթ և Լեվիաթան, զուգարար կամ իբրև մի և նոյն նկարագրուած են, և մանաւանդ անմարմին Բելիարայ հետ նոյնացուած, համաձայն Վարդանայ՝ « Մի է, և պատեալ զամենայն երկիր » բացատրութեանը, որ ջրային էութիւնը կը յիշեցնէ մեզ, պատեալ զցամաքաւ հողագրնդոյս: Ուստի, եթէ բարունւոյն Յոքանանու՝ այս կրկին անուանքը Յորայ յիշեալ տեղւոյն վերայ ըրած մեկնութենէ մի առաջին անգամ ծագած համարինք, այն ժամանակ Սաղաթիբէն աւելի վերջ եկող և կապալիստիկական ուսմանց տեղեակ մէկունն, այն է՝ յոյն խմբագրին ընծայելի է:

Բ. Կապիչ՝ դիտելով, որ Դ Եզրի Զ գլխու 56 և յաջորդ համարներն, ուր Հրէայք՝ Ադամայ բուն սերունդներ և ժառանգներ կ'աւանդուին, իսկ հեթանոսք « չեն ինչ և յոչինչ համարեալ », նմանութիւն ունին նախընթաց տեսչեան վերջաբանին հետ, եզրակացոյց, թէ Զ գլխու 35-36 համարներն ևս՝ Եզրայ սկզբնագրին անկ են, և ոչ թէ յոյն խմբագրութեան: Սակայն, մենք նկատելով, որ այդ համարներն՝ ոչ մի էական կապ չունին Կապիչէն իբրև բաւական փաստ մէջ բերուած համարներուն հետ, որոնք, ըստ մեզ, աւելի նախընթաց տեսչեան կը վերաբերին, հաւանօրէն յոյն խմբագրողի կողմէն ներմուծուած կը համարինք, բարունեաց վերոյիշեալ երկու աւանդութիւնները հաղորդելու և անկէց Ադամին և հրեական ազգին՝ յաստիս կրած նեղութեանց և անդին պատրաստեալ բարութեանց անցնելու նպատակաւ: Եւ իրօք այս բանիս յայտնի ապացոյց են՝ նախ 56 համարի. « Զայս ասացի առաջի քո », և այլ խօսքերն, որոնք ուղղակի Ե գլխու 23-30 համարները կը յարաբերեն, և ոչ թէ Զ գլխու 35-55 համարներն: Բ. դիտել կու տանք, որ այս համարներս՝ բնաւ նիւթ եղած չեն հրեշտակապետին ձեռքով յետոյ տրուած մեկնութիւններուն, այլ ընդհակառակն, ինչպէս այլուր Սաղաթիբելի առանձնախօսութեանց մէջ, առ Աստուած ուղղեալ հարցերուն՝ այսպէս այլ այս տեսչեանս 56-59 համարներում շօշափուած նիւթերուն վերայ կը դառնան Ուրիելի մեկնութիւններն և ըրած յայտնութիւնքն:

Է գլխու 1-25 համարներն, ուր կը ձգուին աշխարհիս կործանման վերաբերեալ գործողութեանց հիմունքն, Ուրիչը երրորդ անգամ կու գայ ի հանդէս՝ լուծելու Սաղաթիելի այն դժուարութիւնները, որոնք Դ գլխու 1-26 համարներում անլուծանելի թողուած են, և Ե գլխու 31-40 համարներում՝ վիճաբանութեամբ աւելի խորթնացած: Նախ և առաջ, 12 համարին մէջ, ամենահամառօտ մեկնութիւն մի տրուած է Ուրիելի կողմէն՝ 3-9 համարներում՝ այլաբանօրէն մէջ բերուած ծովու նեղուցին և քաղաքը հանող նրբուղոյն. իսկ, 14 համարներում, նորէն կը խօսուի նոյն նիւթին վերայ, բայց ընդարձակելով օրինակներով անոնց միտքը. այսինքն է՝ կը բաղդատուի այս անգամ ներկայս = αἶων οὐτος ծովանեղուցի մի և նրբուղոյ հետ, որ լի է վշտօք և վտանգօք, և հանդերձեալն = αἶων ἐκείνος ընդարձակ ծովու և երանաւէտ քաղաքին հետ, յորս հասնիւ համար՝ հարկ է անցնել այդ նեղուցէն և նրբուղիէն, այն է՝ աշխարհիս նեղութիւններէն: Այս աշխարհս՝ Ադամայ և անոր սերընդոց համար ըրած էր Աստուած. իսկ որովհետև Ադամ և Իսրայել չպահեցին Աստուծոյ օրէնքն և պատուիրանքը՝ մեղանշելով, ուրեմն անդին պատրաստուած բարութեանցը հասնելու համար՝ պէտք է, որ այս տեղ նեղուին և վշտակրին:

Հատուածիս գէթ առաջին մասն՝ հաւանօրէն երբայական սկզբնադրին վերաբերելի է, զի այդ լեզուով եղած կանոնական գրուածոց իսկ յատուկ է, վերջին ըսելիքը՝ յառաջագոյն յիշատակել, յոյն մտածութենէ և տրամաբանութենէ օտար է այս ձև. բայց թէ ամբողջն ևս Սաղաթիելի՞ գրչէն ելած է արդեօք և միայն երբայական ժողովուրդը սրտապնդելու նպատակաւ, թէ ընդհակառակն՝ ամէն մարդու համար է և քրիստոնէական սկզբանց թելադրութեամբք. ահաւասիկ լուծանելի կնճիռն:

Յովկմար՝ վերջին ընդհանուր ձկտումը կը նկատէ հատուածոյս մէջ. իսկ Ռ. Կապիչ՝ միայն Իսրայելացւոց մասին գրուած կը համարի զայն, դիտելով, որ 17-18 համարներում եղած հարցմանը պատասխանի մ'է այն, ուր Սաղաթիելի՞ Իսրայելի համար կ'ըսէ առ Տէր. « Ecce disposuisti in lege tua — spatiosa non videbunt », և կը յաւելու, թէ նախընթացաբար Իսրայելի՞ և ոչ թէ հեթանոսաց համար ըսուեցաւ, թէ են ժառանգ հանդերձեալ աշխարհին:

Սակայն, ըստ իս, Կապիչի ենթադրութիւնն ուղիղ չէ, վասն զի՝ նախ որ Ուրիելի կողմէն տրուած մեկնութիւնն՝ Է գլխու 17-18 համարներուն պատասխանի մի չէ, այլ 2 գլխու 56-59 համարներում

եղած խորհրդածութեանց, ուր Եսրայելացիք և Հեթանոսք Հասարակա-
բար նկատուած են Աստուծոյ օրինաց և դատաստանին առջև: Բ.
Վերոյիշեալ նրբուղոյ և այլ օրինակներն՝ ուղղակի յարասութիւն
են Մատթէոսի է գլխու 13-14 համարներու՝ «Մտէք ընդ նեղ դուռն»
և այլ խօսքերուն, որք Հասարակաբար առ ամենայն հաւատացեալս
ուղղեալ են ի Քրիստոսէ: Գ. Եթէ ուշի ուշով դիտելու ըլլայ Կա-
պիշ՝ պիտի տեսնէ, որ է գլխու 21 համարէն վերջ՝ ինչպէս Սաղա-
թիելի ընծայուած հարցերն, այսպէս ևս Ուրիելի պատասխանիքն՝
երթալով հետ զհետէ կ'ընդհանրանան և մարդկային անհատները կը
շօշափեն, այնպիսի պարագաներով, զորս կարելի չէ բացառութեամբ
միայն Սաղաթիելի կամ նորա սկզբնագրին իբրև յատուկ մի բան
համարել. այլ յոյն խմբագիրն ևս ունեցել է իւր յատուկ դերը,
քրիստոնէական հոգևով ընդարձակելով՝ ի սկզբան Հրէից մասին
միայն և համառօտաբար իւր դիմաց ունեցած եբրայական սկզբնա-
գրի յիշեալ տեղեաց սահմանները: Ստուգիւ, այսպիսի մի եղելու-
թեան յայտնի ապացոյց համարելի է և այս տեսիւնան սովորակա-
նէն աւելի ունեցած ընդարձակութիւնը:

Նոյն գլխոյ 26-31 համարներն, որք Ե գլխու 1-13 համարներու
Ուրիելի կողմէն աշխարհիս կատարածի մասին տրուած նշանաց մեկ-
նութեան՝ «Ահա եկեցէ ժամանակ, յորում եղիցին նշանք, որ յա-
ռաջն առացան չեզ» ականարկութեամբ կը սկսին, բոլորովին տար-
բեր բնոյթ ունին նախընթաց միւս համարներու պարունակութենէն.
այսինքն է, հոն կը ծանուցուի նախ սուրբ քաղաքին և հարսիև
յայտնուիլն, որ երկրիս տակը ծածկուած էր. ք. անոնց ամենուն, -
որոնք զերծան յիշեալ նշաններով կատարուած շարիքներէն, - սքան-
չելահրաշ տեսութեան արժանանալն. գ. Մեսիայի՝ իւր ընտրելոց
հետ յայտնուիլն և զանոնք ուրախացնելը, ոչք ժուժկայեցին աստ
ի համբերութեան, 400 տարի. այսպէս և 400 տարիներէն վերջ՝
Աստուածորդոյն Մեսիայի և անոր հետ կենդանի մնացողներուն մեա-
նիլն, աշխարհիս՝ իւր սկզբնաւորութեան եօթներորդ օրուան լու-
թեան վերադառնալն, առ ի չգոյէ մարդկան, և հուսկ ուրեմն մե-
ռելոց յարութիւնն և վերջին դատաստանն:

Արդ, Սաղաթիելի, 2 գլխու 56-59 համարներում, ըրած հարց-
մանց, այնքան անկապ, այսպիսի յայտնութեանց հանդէպ՝ կը ստի-
պուիմք հարցնել, թէ կարո՞ղ են արդեօք դոքա սկզբնագրին իբրև
հարազատ մասունք համարուիլ, թէ ընդհակառակն յոյն խմբագրին՝
Նկատմամբ վերջնոյս՝ այս հարցս ընդ առաջ կ'իջնէ մեզ. Եթէ յայտ-

նույիք քաղաքն՝ ստուգիւ վերինն Երուսաղէմ է, ինչո՞ւ համար ուրե՛ն ներկայապէս հողին տակ ծածկուած կը յայտարարէ զայն՝ կարծեցեալ հրեշտակն. ի՞նչ պատճառաւ Մեսիայի Թագաւորութենէ 400 տարի յառաջ յայտնուիլ կը տրուի անոր, և այնքան հարևանցի կերպով: Իսկ եթէ Սազաթիելին՝ ապա ինչպէս մեկնենք անոր այս մտին մինչև այս տեղ պահած խոր լուսթիւնը, կամ մանաւանդ և զլուս 52 համարին մէջ իբրև նոր ինչ յիշատակուիլն՝ « շինեալ քաղաքն » բացատրութեամբ, որ նկատուած է Եզրի և անոր նմանեաց համար պատրաստուած բարեաց իբրև հանդիսավայր մի:

Կապիչի կարծեօք՝ անկարելի է, որ զրոցս հեղինակն՝ այդ քաղաքով հասկնար թէ՛ երկնային Երուսաղէմը և թէ՛ երկրաւորը միանգամայն. զի այս՝ թէ՛ հակասական է և թէ՛ հակառակ երբայական դրութեան, ուր, ամէն անգամ՝ երբ խօսքն երկնային Երուսաղեմի վերայ է, միշտ գերաշխարհիկ և անանցական յայտուութիւններ կը տրուին անոր: Այսպէս է Բարոչքայ Յայտնութեան 4 համարում. Դ Եզրի Ժ գլխու 51-54 համարներում, Յովհաննու Յայտնութեան (Spitta J²) և Ծնովքայ զրոց մէջ: Հետևաբար, 26 համարի ամբողջօղջիչ այս խօսքերուս. « Ostendetur quæ nunc subducitur terra » իմաստն իսկ՝ այս է, թէ՛ Երուսաղէմ՝ իւր ծածկութենէ յայտնուելէն վերջ, պիտի լինի անանցական. ուստի այս գաղափարիս համաձայն՝ զայն ներկայացնող յաւելուածն իսկ՝ ոչ թէ՛ Եզրի, այլ վերտին իմբազրոցէն ներմուծուած է: Այսպէս է նաև 27 համարն, որ արդէն նախընթաց տեսչեան մէջ աւանդածին կրկնութիւն է:

Գիտնականիս մէջ բերած փաստերն և անոնցմէ հանած եզրակացութիւնը՝ կարելի չէ ընդունել իբրև բացարձակ ճշմարտութիւններ, այնու մանաւանդ, որ հրէից նախաքրիստոսեան զրոց կամ հին կտակարանին մէջ՝ երբէք երկնային Երուսաղեմ բացատրութեան հանդիպած չենք. զի անոնց անդրերկրային ժառանգութիւնն՝ կը կոչուէր կամ երկիր կենդանեաց, կամ գոգն Արրահամոս, և կամ դրախտ ամենայն բարութեանց: Այսպէս նաև Մեսիայի հոգևոր և յաւիտենական Թագաւորութեան գաղափարն՝ գրեթէ միշտ երկրաւոր Երուսաղեմի և անոր փառաւորութիւններուն հետ անբաժան և զուգարար նկարագրուած է՝ բոլոր մարգարէութեանց մէջ. որով և թանձրամիտ Հրեայք յաճախ նիւթականը և զգալին միայն ի նկատի կ'առնուին: Քրիստոս Տէրն մեր՝ առաջինն եղաւ, որ այս շիտթ գաղափարիս դէմ մաքառեցաւ, զատելով և գտելով երկնային արքայութեան և վայելից գաղտնիքը՝ յերկրաւորէն, որուն ապա պայծառ քա-

րող Հանդիսացան Առաքեալք և Ս. Ստեփանոս՝ իւր Հրաշալի ատե- նախօտութեամբ :

Չարմանալի է, որ գաղափարաց այսպիսի մեծ յեղաշրջութենէ վերջ իսկ՝ քրիստոնէական թուականին առաջին դարում գրուած Յայտնութիւնքն առՀասարակ, որոնք Հին Կտակարանի Հետևողութեամբ յօրինուեցան, դարձեալ հոգևոր և երկնային Երուսաղէմը՝ երկրաւորին Հետ զուգելով կը ներկայացնեն մեզ : Բարոնաքայ Յայտնաբեան՝ յիշեալ տեղւոյն մէջ ըսուած է . « Illa est quæ revelabitur apud me, quæ hic præparata fuit, ex quo cogitavi ut facerem paradysum... sublata est ab eo ut etiam paradysum ». Յովհ. Յայտնութեան մէջ (ԻԱ, 1-2) . « Եւ տեսի երկին նոր և երկիր նոր... և զքաղաքն սուրբ՝ զնորն Երուսաղէմ, զի իջանէր յԱտուծոյ և յերկնից (իմա յերկիր), զարդարեալ և պատրաստեալ որպէս Հարսն՝ առն իւրոյ : Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր . Ահաւասիկ խորանն Ատուծոյ՝ ի մէջ մարդկան, և քնակեցք ընդ նոսա » :

Գիտեալու ենք, որ ինչպէս Յովհ. Յայտնութեան սոյն տեղւոյ վերջին բացատրութիւնն՝ նման է Բարուքայ Յայտնաբեան 4 Համարի . « Etiam Moysi ostendi eam (urbem) quando ostendi ei imaginem tabernaculi » բացատրութեան, այսպէս ևս Եզրի 26 Համարի . « Et apparebit sponsa¹, et apparescens civitas et ostendetur, quæ nunc subducitur terra² » բացատրութիւնն՝ նման է Յովհ. Յայտնութեան 2 Համարին : Երկաքանչիւրին մէջ իսկ, Ատուծոյ քաղաքն՝ զարդարուած և պատրաստուած Հարօի նմանեցուցուած է . երկուքին մէջ ևս երկնային է՝ բայց երկրիս վերայ և մարդկանց մէջ կը բնակի . երկաքանչիւրին մէջ իսկ այդ քաղաքն՝ իբրև այս աշխարհիս վերայ Քրիստոսի Հաստատած զգալի Թագաւորութիւն, կամ լաւ ևս՝ Եկեղեցի³ նկատուած է, որուն վախճանը սակայն երկնային է և յաւիտենական : Ուստի, ոչ Հակասական է և ոչ այլ Հակառակ երրայական աւանդութեան, որ երկնաւորն և իմանալին՝

1. Այս բառս կը պահասի նայերէն խմբագրութեան մէջ, բայց արաբականն ունի coronatam.

2. Ասորին չունի այս բառս, այլ nunc մտկբայն. որ նախորդ subducitur բային նետ՝ նայերէն « Որ այժմ ոչ երեւի » բացատրութեան լաւ կը համահայնի :

3. Արաբական խմբագրութիւնն, որ ուղղագոյն է, այս մտքով կը ներկայացնէ յայտնուելիք քաղաքը, ասելով (26 նամ.) : « Et cognosces coronatam (sponsam) quæ existit, et congregabitur quod dispersum et perditum erat, et conspicietur fundus » .

երկրաւոր և զգալի պատկերօք նկարագրուին. Հետևաբար, այս կողմանէ արգելք մի չկայ, որ զայն նկարագրող Հատուածքն ևս Սաղթիկի ըլլան՝ քան թէ յոյն խմբագրին :

Բայց դժուարութեան մեծագոյն կնճիռն՝ կայացած է, ըստ իս, անվանք գրուածիս՝ նոր Կտակարանին և ի մասնաւորի Յովհ. Յայտնութեան Հետ ունեցած սերտ առնչութեան և նմանութեանց մէջ, որ Եզրէն վերջ գրուած կը Համարուի: Այո՛, Եզրի 32 Համարն, ուր երկիր և ծով կու տան իրենց մեռեալները, բառ առ բառ նոյն է գրեթէ Յայտնութեան յիշեալ զլիսու 13 Համարին Հետ. և 36 Համարն, ուր չարք կը պատժուին անշէջ հրով և բարիք կը վարձարուին՝ Քրիստոսի Հետ թագաւորելով, նման է Յայտնութեան 14 Համարին: Այսպէս ևս Եզրի 39-42 Համարներն՝ նման են Յայտնութեան 23-26 Համարներուն: Միով բանիւ՝ քրիստոնէական գաղափարաց փոխանակութիւնն՝ առանց երկբայութեան է նաև այս տեղաց մէջ, եթէ փոխառուն կեղծ Եզրն եղած Համարինք և ոչ թէ Յայտնութեան Հեղինակը: Բարուքայ Յայտնութեան Գ զլիսու այս տեղիս. « Et sæculum redibit ad silentium pristinum, et recipiet se multitudo animarum, et natura hominum iterum non nominabitur », որ գրեթէ բառ առ բառ կը գտնուի Եզրի է զլիսու 30 Համարում, կը թուի Հաստատել մեր եզրակացութիւնը. այսինքն թէ՛ այս գլուխս այլայլուած է նորանոր յաւելուածներով, և յայտ իրաւացի է Կապիշի ենթադրութիւնն: Սակայն պէտք է ըսել և զայս, թէ նոյն իսկ Յովհաննու և Բարուքայ Յայտնութեանց Հետ ունեցած աղերսներու մէջ՝ յայտնապէս կը տեսնուի նոյնանիւթ նիւթոց տարբեր կարգաբանութիւն մի երկուստեք. այսինքն է, Յով-

1. Բայց նորանոր պարագայիւք, պսպէս. « Revelabitur filius meus Jesus cum his, qui cum eo, et iucundabit qui relictis sunt annis quadringentis. — Et erit post annos et morietur filius meus Christus et omnes qui spiramentum habent homines. — Et convertibitur sæculum in antiquam silentium, diebus septem, sicut in primis initiis, ita ut nemo derelinquatur ».

Յետև անունն՝ միայն լատին թարգմանութեան մէջ կը գտնուի, զոր Կապիշ ըստ վերջ եղած յոսի սրբագրութեան մ'արգիւնք կը Համարի. սակայն Ս. Ամբրոսիոս (Մեկն. Ղուկ. Ա. 60) նոյնպէս ունէր՝ իւր առջև եղած յոյն կամ լատին թարգմանութեան մէջ, զի կը գրէ բառ առ բառ. Revelabitur enim, inquit (Ezra), filius meus Jesus » . Diebus septem, նոր պարագայն՝ յոյն խմբագրէն յաւելեալ է, Բարուքայ յիշեալ տեղւոյն վերայ, զոր ասորին ևս Հաւատարմաբար պահած է: Հոյերենի մէջ ամբողջ նախադասութիւնս կը պակսի. արաբացին կը գրէ՝ Et mundus erit silens quietus, qualis erat die septimo.

Հաննու և Բարուքայ քով, կը պատմուի նախ մեղաց և մոլորութեան՝ արդարոց վերայ գործած բռնութիւնն, յետոյ Քրիստոսի յայտնուիլն և յաղթանակն, Հուսկ ուրեմն՝ անոր արքայութեան և սուրբ քաղաքին՝ մարդկանց մէջ երևիլն: Իսկ Եզրի յիշեալ գլխում՝ բոլորովին ասոր հակառակ կ'ընթանայ. այսինքն է, նախ քաղաքին և Հարսին յայտնուիլն, յետոյ Մեսիային՝ իւր ընտրելոց Հետ երկրիս վերայ 400 տարի թագաւորելն և մեռնիլն, ապա աշխարհիս՝ իւր սկզբնական լուսեան և ունայնութեան դառնայն, և Հուսկ ուրեմն՝ Մեսիայի վերջին գալուստն և յաւիտեանական թագաւորութիւնն: Արդ, աստի կարեմք Հետեցնել, թէ սուրբ քաղաքին և Հարսին յայտնուելուն, այսպէս նաև վերջին կէտերը շօշափող Հատուածներն՝ յետոյ ուրեմն Յովհաննու և Բարուքայ Յայտնութեանց վերայ յերկրուած են, որոնք Հին բնագրի գէթ այս գլխոյս մէջ չկային: Իսկ 400 ամեայ՝ թագաւորութեան (որ ըստ իս ուրիշ բան չէ, բայց եթէ դանիւլեան եօթներորդաց գումարումն) վերաբերեալ Հատուածքն՝ բուն Սաղաթիելի են, և յաջորդ գլխոց մէջ աւելի ևս բարգաւաճուած պիտի տեսնենք՝ այրի կնոջ կամ մայր Սիոնի տեսլեամբը:

Է գլխու 32 Համարն, յորում կայանի Հոգւոց՝ ի կեանս վերադարձի մասին կը խօսուի. «Et promptuaria reddent quæ eis commendatæ sunt animæ», և այլն, Կապիչի կարծիքով՝ յոյն խմբագրողէն ներմուծուած է, և ոչ թէ Սաղաթիելի գրչէն: Ստուգիւ, այսպիսի մի գաղափարի արտայայտութիւնն աւելի քրիստոնէական է՝ ըստ ինքեան, քան թէ Հրէական, վասն զի խօսքը պարզ Հոգւոց մասին է, զոր բաժանարար առած է, Հեղինակն, երկրէս և անոր ծոցն ամփոփուած մարմիններէն: Եզեկիելի քով եղած մեռելոց յարու-

1. Ասորի թարգմանութիւնն՝ փոխանակ 400ի՝ triginta = երեսուն կը գրէ. իսկ արաբականին մէջ՝ mille annos (1000) գրուած է, համաձայն Յովհաննու Յայտնութեան ի գլխում աւանդուածին, որով հնարեցաւ Հազարամեայ (Millenarisme) վարդապետութիւնն, փրկչական թուականի Ա գարէն՝ սկսեալ, կերթիթոսի ձեռքով:

Սակայն Հրէից մէջ շատ աւելի ՚ին է դոմ-իտն կամ Մեսիայի երկրիս վերայ թագաւորութեան աւանդութիւնն և դաւանանքը. մանաւանդ թէ կարծելի իսկ է. թէ Յովհաննէս ինքեին այդ աւանդութիւնն օժանդակուած է, փոխելով սակայն մարմնաւորը՝ հոգեկան թագաւորութեան, ինչպէս յայտնի կը տեսնուի հետեւի տեղերէն: Եւ յիբաւի, նա ժիթ գլխում, Բանին Արփաձոյ՝ Արմաքեղոնի քով, մեղաց և մոլորութեան դէմ ապրած յաղթութիւնը պատմելէն վերջ, ի գլխոյն մէջ կը գրէ. «Ընտրեալ զհոգիս շարժարեւոց վասն Յիսուսի... և կացին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հոգւոց ու՛ »: Եւ Յ համարում՝ կը յաւելու. « Եւ յես այնորիկ է Կրիստոս »: Եւ « Կոչ, մինչև ի կատարել կազար ամին »:

թեան նկարագիրն՝ ցոյց կու տայ մեզ, թէ Հրէից իսկ ծանօթ էր յարութեան գաղափարն. սակայն այս տեղ յիշուած հանգամանքները՝ բոլորովին կը տարբերին մերինէն. այսինքն է, Եզեկիելի քով՝ ոչ կայանք կը յիշուին և ոչ այլ հոգիք, այլ շունչն աստուածային՝ որ շնչելով ի չորից հողմոց՝ կը կենդանացնէ ցամաքեալ ոսկրոտիքը: Հատուածիս մերձաւոր աղերսը կը գտնենք Մատ. Ինչ. 52, Ղուկ. ԺՁ. 27. Բ. Թես. Գ. 13, Ենովքայ գրոց 22 և Բարուքայ Յայտնութեան ԺԱ, 4, 49 և 51 տեղեաց հետ: Հատուածիս պակասութիւնն իսկ, հայերէն խմբագրութեան մէջ, կարծէք թէ աւելի կասկածելի կ'ընէ անոր հնութիւնը: Բայց որովհետև միւս Թարգմանութեանց մէջ ուրիշ երկու տեղ ևս կրկնուած է նոյնը, տարբեր պարագաներով, որոց՝ հայերէնն իսկ իւրք, — ինչպէս կանխաւ տեսանք, — կը համաձայնի. ուստի գէթ առաջին տեղին՝ կարէ գրոցս սկզբնազրին յատուկ և հին լինել: 37-40 համարներն, ուր զատուելով մեղաւորք արդարներէն՝ կ'երթան ի հուրն յաւիտենական, իսկ արդարքն՝ ի կեանս, անտարակոյս փոխառութիւնք են Մատթ. Ին զլսու 34-41 համարներուն: Այս բանս՝ հայերէն խմբագրութենէն աւելի որոշ կը տեսնուի, ուր աչքի զարնող նմանութեամբ ընդարձակուած են:

Նոյն զլսու 75 համարին մէջ, — բարեաց և չարաց հատուցման վերաբերեալ նկարագրէն վերջ, — հետևեալ նշանաւոր հարցն ուղղեալ է Եզր Սաղաթիելի կողմէն առ Տէր, այսինքն թէ՛ հոգիք մարմնէն անջատուելէն վերջ՝ արդեօք զձերկ յերանութենէ պիտի պահուին մինչև ցժամանակ հասարակաց յարութեան, թէ ընդհակառակն պիտի մտնեն իսկոյն ի փառս, կամ ի տանջանս: Առ որ պատասխանուած է այսպէս. « Դու մի՛ հաշուեր զքեզ ընդ մահապատան, զի քեզ և նմանեաց քոց պատրաստեալ է գանձն՝ լի բարեօք, որ ոչ յայտնեցին քեզ մինչև ի վախձան ժառանգակաց »: Այս պատասխանիս՝ կը պատշաճի քաջ Եզրի ըրած հարցի առաջին նախադասութեան: Սակայն յաջորդ համարներում, Ուրիել կամ Հրեշտակն Տեսան, իբրև թէ նախնարար բան մ'ըսած չըլլար բնաւ, կը յարէ. « Լրւար այսուհետև վասն որոց հարցերդ », և կը յայտարարէ այս անգամ, թէ հոգին՝ հասարակարար մարմնէն անջատուելէն անմիջապէս վերջը՝ կը դառնայ ըստ ինքեան զինքն արարչագործող Աստուծոյն քով՝ զնա փառաւորելու համար. բայց ի մասնաւորի այն հոգիներն, որոնք ամպարշտելով չպահեցին Աստուծոյ պատուիրանները և զանոնք պահողները անարգեցին, պիտի չմտնեն ի տեղի

հանգստեան, այլ վաղվադակի պիտի մատնուին տանջանաց, եօթնեակ ճանապարհաւ. իսկ որոնք ամբօութեամբ ծառայեցին Աստուծոյ, մեծաւ ցնծութեամբ պիտի վայելեն Բարձրելոյն փառքը, որ պիտի իւր քով առաւ, և պիտի ուրախանան ի հանգստեան, եօթնեքանեան ճանապարհաւ :

Այս տեղ մեծ զանազանութիւն կայ, մանաւանդ հակասութիւն, մէկ կողմէն՝ Եզրի հարցման առաջին նախադասութեան և անոր վերաբերեալ պատասխանւոյն, իսկ միւս կողմէն այլ՝ երկրորդ նախադասութեան և անոր տրուած վերջին պատասխանւոյն մէջ. վասն զի յառաջին դէպքում՝ իբրև որոշ սկզբունք դրուած է, թէ նոյն իսկ Եզրի նման պատուիրանապահաց համար յետ մահուան անմիջապէս հատուցումն չկայ, այլ ի ժամ հասարակաց յարութեան, և այս համաձայն է երբայական նախաքրիստոսեան աւանդութեան¹ : իսկ երկրորդին մէջ, ընդհակառակն, արդարք անմիջապէս կը տեսնեն Աստուծոյ փառքը և կ'ուրախանան եօթն երանութեամբ, և մեղաւորք կը տանջուին եօթն վայիւք : Այս վարդապետութիւնս՝ ոչ Եզրի և ոչ այլ անկէց դարեր վերջը ապրող Սաղաթիելիին կամ ուրիշ որ և է Հրէի մի, այլ Քրիստոսէ վերջ ապրող մէկուն, այն է՝ յոյն խրմբագրին է, որ հիմն դնելով իրեն, հաւանօրէն, Ղուկասու և Պետրոսի յիշեալ տեղիքը, ապա Պաղեստինու Հրէից նորադարձ եկեղեցւոյ քրիստոնէական վարդապետութեան համաձայն բարգաւաճած է զայն : Յայտ է թէ մասնաւոր ձկտմամբ և նպատակաւ ջանացեր է անծանօթ գրիչն՝ հրէական հին աւանդութիւնը՝ նորին հետ միացնել, սակայն անաչառ քննադատութեան կանոնաց համաձայն՝ մենք մեծ խորոց մի կը տեսնենք այդ և յարակից հատուածոց մէջ : Այո՛, այդ

1. Ըստ որում Աբամայ յանցանք կամ սկզբնական մեղօք վաբաղուած նահապետաց և արդարոց հոգիք իսկ, ինչպէս Սահակայ և Յակոբայ, զէտք էին սպասել (ի զոգն Աբրահամու) մինչև ցզալուստ Մեսիայի և վերանորոգութեան ազգի մարդկան : Այս աւանդութիւնս յայտնապէս կը տեսնուի մեծատան և Ղազարու առակէն իսկ, զոր պահած են մեզ Ղուկաս՝ ԺԶ գլխում, իբրև օրինակ հանգստեան արդարոց և տանջանաց մեղաւորաց, նախ քան զհասարակն փրկադործութեան, և Պետրոս առաքեալ՝ Ա Կաթողիկէայց Թղթոյն Գ գլխում, 19, բարեփոխելով զայն ընդարձակ առմամբ :

Արդարոց՝ ի զոգն Աբրահամու ունեցած իօթն երանութեան և մեղաւորաց ի դժոխս կրելիք իօթն տանջանաց մասին իսկ հաւաքական մի աւանդութիւն հին կտակարանին մէջ ինձ յայտնի չէ : Այլ կարեմ ասել, թէ իօթնալան թիւն՝ առ Հրեայս՝ բազմաւորական իմաստիւք աւելի զործածուած է, փոխաբերաբար. օրինակ ի՞նչ « Եթմն չարիք են ի սրտի նորս », այսինքն է՝ բազում :

հատուածներն իրենց բռնադատորէն ընդմիջելովը՝ բաժնած են 44 համարի՝ «Tibi solo autem ostendi hæc» վերջին դատաստանի վերաբերեալ յայտնութեան վերջին խօսքը, 116րէ համարէն, ուր Եզր կը սկսի իւր նոր առանձնախօսութիւնը՝ համաձայն 34-38 համարներում արտայայտուած գաղափարաց, և ոչ թէ 45-115 համարներում աւանդուածին, որոնք անյարմար են և օտար նախընթացէն:

100-103 համարներում՝ երկու նշանաւոր հարցեր յարուցուած են և լուծուած, Ուրիելի ձեռքով. այսինքն թէ՛ ննջեցեալ հոգւոց անկատմանէն վերջ՝ եօթն օր ազատ ժամանակ պիտի տրուի, — նախ քան իրենց հանգստեան կամ տանջանաց կայանները մտնելը, — տեսնել ի կատարածի աշխարհիս՝ իրենց համար պատրաստուած եօթն վայելքն և կամ տանջանքը. ք. թէ իւրաքանչիւր ոք՝ վերջին դատաստանին օրը՝ իւր բարի կամ չար գործոց համեմատ միայն պիտի դատուի, և թէ ազգականաց աղօթք և պաղատանք պիտի չօգնեն այնուհետև:

Վարդապետութեանցս վերջինն՝ զուտ քրիստոնէականն է՝ իւր ներկայ վիճակին մէջ. իսկ առաջնոյն՝ ուրիշ օրինակ չունինք երբայական աւանդութեան կամ եկեղեցական պատմութեան մէջ, բաց ի Ս. Կալիստրատոսի վկայարանութենէն¹, ուր, ըստ հայկական թարգմանութեան, առաջին անգամ կը ներկայանայ վեց Կայանադրաց վարդապետութիւնն: Եօթնական թիւն՝ մատնանիշ կ'ընէ Եզրի Է գլխու 31 համարի. «Et erit post dies septem» բացատրութիւնը. իսկ մնացածն՝ սերտ կապ ունի նոյն գլխու 80 համարի. «Hæc inspirationes (հոգիք) in habitationes non ingredientur, sed vagantes erunt a modo in cruciamentis» մէկ տեղւոյն և 32 համարներուն հետ, և հաւանորէն ըստ այնմ բարգաւաճուած:

Տեսլեանս վերջին, այն է՝ Ը գլխու 63 — Թ գլ. 13 համարներն ևս նոր ներմուծութիւններ ըլլալու են. ահաւասիկ փաստերը: Նախ որ 62 համարով կը կնքուին վերջին դատաստանի մասին՝ Ուրիելի առ Եզր ըրած յայտնութիւններն, և կը հրամայուի անոր՝ վերջ դնել իւր հարցմանց, ըսելով. «Իսդարեաց այսուհետև, և մի՛ ինչ հոգար վասն նոցա», այսինքն է՝ կորուսելոց: Արդ, չնայելով այս խիստ որոշ պարագայիս՝ դարձեալ, 63 համարին մէջ, հետեւեալ հարցն

1. Տես Վարդապետութեան վերջինն 1874, հտ. Ա. էջ 670-673: Ս. Կալիստրատոսի բերանը դրուած այս անտվոր վարդապետութեան՝ զժողով է որ հարգատ լինի, թէպէտև կ'ըսուի որոշակի, թէ նա յաւանդութենէ հաւոյն իւրոյ Ուրիել լսած էր զայն, որ էր իբր թէ ժամանակակից Առաքելոց:

ուղղուած է անոր կողմէն՝ առ Տէր. « Վասն այսորիկ յաճախեցեր ինձ գրագնորիսն նշանացն, և ոչ ասացեր ինձ՝ թէ երբ իցէ կամ յորում ժամանակի », որուն ապա իբրև պատասխանի կը տրուին այսպիսի նշաններ, օրինակի աղագաւ. « Բռովութիւնք ժողովրդոց, շարժմունք տեղեաց հեթանոսաց », և այլն, համաձայն Մատթ. ԻԳ, 7. Մարկ. ԺԳ, 8. և Ղուկ ԻԱ, 10-11 տեղեաց: Բայց դիտելով որ գրուածիս Ե գլխու 2-10 համարներում սրուած են արդէն պէտք եղած յայտնութիւնք այս մասին, և տրուած տարբեր պարագայիւք, ինչպէս կը ցուցնեն նաև նօտրագրեալ խօսքերն: Ուստի, եթէ հրէական ազգին՝ Ս. Գրոց մէջ յաճախ տեսնուած յամառութեան և կրկնաբանութեան արդիւնք մի չէ այս թախանձանքս, և չեմ այլ կարծեր որ լինի, այնուհետև կարեմք իրաւամբ հետևցնել, թէ յոյն խմբագրէն և դիտմամբ ներմուծուած են այդ հարցուպատասխանիքն, մէկ կողմէն Սաղաթիելի՝ Ե գլխում աւանդած նշաններուն քրիստոնէական գոյն տալու, և միւս կողմէն այլ՝ յաւելու այն մի քանի խրատները, ի զգուշութիւն և ի խրախոյս հաւատացեալ ընթերցողաց, որք հայերենի մէջ կը սկսին. « Բայց ասեմ քեզ համառօտիւք », և կ'աւարտին Մատթէոսի վերոյիշեալ գլխու 35 համարի համանման այս նախադասութեամբս. « Եւ ոչ ինչ ի նոցանէ (այսինքն բանից իմոց) անցցե, մինչև եղիցի դատաստան »: Թէ իրօք քրիստոնէական գոյն ունին այդ հատուածներն, բաւական է ընթեռնուլ. « Նենգութիւն առաջնորդաց, հալածանք քահանայից, խտորումն ի սուրբ հաւատոց », և այլն, տողերը, որոնք բոլորովին անյարմար են Եգրի ժամանակի Հրէից կացութեան, և ուղղակի փրկչական թուականի առաջին դարերում ապրող և կրող եկեղեցւոյն կը վերաբերին: Բ. Այս հատուածս կը գտնուի նոյն իսկ Է-Ը դարում գրուած Ենովքայ, Դանիելի և այլ տեսիլներու մէջ, ինչպէս ցոյց տուինք կանխաւ:

ՁՈՐՐՈՐԻՒ ՏԵՍԻՆՆ՝ մէկ կողմէն սերտ կերպով միացած կ'երևի Ը գլխու 16-18 համարներում ըրած Սաղաթիելի առանձնախօսութեան հետ, որ կը կանխէ Եգրի բերանը դրուած ընդարձակ աղօթքը, և կը կազմէ՝ ըստ իս՝ նախընթաց տեսլեան վերջաբանը, իսկ միւս կողմէն այլ Թ՝ գլխու 29-36 համարներուն հետ, որոնք են իբր նախաբան այս տեսլեանս: Ել ստուգիւ, Սաղաթիել կ'աղաչէ այս տեղ դուտուած՝ մասնաւոր կերպով իւր ազգին և Երուսաղեմի համար. « Ուղորմեա՛ և առեյի՛ ևս քոսմ՝ ժողովրդեան, վասն որոյ ես սգամ... զի լուայ՝ ես զանխայութիւն մեծ, որ առ յապայն լինելոց է » (Երու-

սաղեմի)։ Եւ իրօք, տեսլեանս բովանդակ առարկայքն են Երուսաղէմ եւ ազգն Իսրայելի, որուն նախկին թշուառութիւնքը ուզած է հեղինակն նկարագրել՝ ի դէմս որդեկորոյս այրի մօր, իսկ ապագայ փառաւորութիւնն այլ՝ Հաստատուն Հիման վերայ շինուած եւ փառազարդեալ քաղաքի մի, ուր կը մատչին պատարագք Իսրայելին Աստուծոյ։

Այս տեսիլս՝ Համեմատութեամբ նախընթացին՝ շատ աւելի միապաղաղ է, Հետեւարար՝ եւ եկամուտ Հատուածներէ ազատ կ'երևի, ըստ արտաքին երևութիւն. սակայն ըստ իրին կան նաև յայսմ պարագաներ, որոնք կասկածել կու տան մեզ գէթ, թէ նախնթաց տեսիլները գրողն՝ ըլլայ Հեղինակ նաև ստոր։ Ինչպէս կանխաւ ծանուցինք, տեսլեանս Հանդիսավայրն՝ փոխադրուած է ի Պաղեստին, անմարդաբնակ եւ ծաղկալից դաշտի մի մէջ, ուր տեսանողն՝ երկնային տեսլեան արժանանալու. Համար, փոխանակ եօթնօրեայ պահեցողութեան՝ ձաշակուար ծաղկանց կը պատրաստէ գինքը։ Արդ, այս նոր օրինակ պարագաներս՝ պէս պէս ենթադրութեանց պատճառ սուին քննադատից՝ նաև աղբերաց նկատմամբ. ուստի վերը կախ թողած խնդիրն՝ ժամանակ է որ այժմ բոլորովին պարզենք։

Հիլզէնֆելդի կարծիքով՝ ծաղիկներով կերակրուելն ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ զգուշանալ ի կերակրոց։ Ֆօլկմար կը Համարի, թէ որովհետև նոր յայտնութիւնն, որուն կը պատրաստուէր տեսանողն, էր ուրխալի, անոր Համար պէտք չկար պահեցողութեան։

Սակայն, այս երկու կարծիքս ևս անբաւական են և անընդունելի. որովհետև մենք ուրիշ յայտնութիւններ և պատմական դէպքեր ևս կը ձանաչենք կանոնական գրոց, որոնք թէպէտև նոյնպէս ուրխալի են, սակայն և այնպէս տեսանողքն միշտ պահեցողութեամբ կը պատրաստուին անոր ընդունելութեանը. այս ընդհանուր սովորութիւն մ'է առ Հրեայս։ Այո՞, այսպէս կը գտնենք Դանիելի մարգարէութեան, Բարուքայ Յայտնութեան և Ասանեթայ պատմութեան մէջ։ Այսպէս կ'ընեն Սամսոնի ծնողքը (Դատ.), Իսրայելի ուղատարարին ծննդեան աւետիսն առնելէն յառաջ. այսպէս կը պահեն Յուդիթ և Սսթեր. այսպէս մանաւանդ Քրիստոս Տէրն մեր, և ուրիշ շատեր։ Մաղիօք կերակրուելու բնաւ օրինակ չունինք ի Ս. Քրիստոսով։ Մկրտիչ իսկ՝ մարախ և մեղր կը ճաշակէր անապատին մէջ։ Իսկ անկանոն գրոց գալով՝ առաջին անգամ կը Հանդիպինք Ենով-

քայ և Արամգրոց մէջ, և այն իսկ, ինչպէս տեսանք Ա. գլխում, բուրովին տարրեր հանգամանքներով¹:

Ռ. Կապիշի կարծիքով՝ ծաղկամբ կերակրուելու բուն պատճառն և նշանակութիւնը՝ որոնելու է կրօնական այն դրութեանց մէջ, որոնք խաւարաւ պատեալ այս աշխարհիս և լուսաւոր երկնից մէջ առկայացեալ բնազանցական հակադրութեանց վերայ հաստատուած են, և այս կը գտնուի Եասեանց քով, որոց աւանդական պատկերն անցաւ ապա, ըստ վկայութեան Եպիփանու, առ Եբրուսեանս, Գնոստիկեանս և հուսկ ուրեմն անապատական ուրիշ ճգնաւորաց: Արդ, Եսսէեանց սկզբունքով, — որ Երկոռոքեան կը տանի, — երկրիս վերայ գտնուող ստեղծուածոց մէջ՝ ամենէն աւելի բոյսերն, բայց ի մասնաւորի ծաղկունք, կը մօտենան երկնային գոյացութեան, վասն զի նոքա աւելի կամ պակաս լուսանիւթով կազմեալ են. Հետեւաբար, ասոնց ճաշակմամբ՝ լուսանիւթն թանգուզեալ կ'ընդմտանէ մարմնաւորութեան խորը. որով մարմինն՝ ազատուելով իւր զգայական թանձր սպաւորութիւններէն՝ կը լինի ընդունակ՝ ձկտելու դէպ ի լոյսն, քան թէ լոկ պաշօք, որ մարմնական կարողութեանց հետ հոգեկանն ևս կարէ տկարացնել երբեմն: Յետոյ իւր խօսքը մերձեցնելով ուղղակի տեսեանս հեղինակին՝ կը յարէ գիտնականս. Յայտնի բան է, որ պահեցողութեամբ՝ մարմինն, որ անօթ է հոգւոյն, ընդհանրապէս կը նրբի և սրբի՝ իւր մէջ ընդունելու երկնային լուսաւորութիւնը, և մէկն որչափ ընդերկար պահէ, այնչափ ևս ընդունակ կը լինի Բարձրելոյն յայտնութեանցը: Բայց որովհետև մեր պահեցողն երկնային Երուսաղէմը պիտի տեսնէր և անոր դերաշխարհիկ փառքը, Հետեւաբար՝ բաւական չէր որ նա անցաւոր նիւթերէն դատարկանայր, ըստ սկզբան վերոյիշեալ աղանդին, այլ և թեւակոխէր առ լուսանիւթն. և ահա այս պատճառաւ է, որ այս անգամ փոխանակ եօթնօրեայ պահոց՝ հրաման կ'ընդունի եօթն օր ծաղիկ միայն ճաշակել:

Այս երկու կէտերս ջանացեր է ապացուցանել գերմանացի գիտնականս, Եզրի գրոց ուսումնասիրութեան Բ մասին մէջ, խօսելով անոր աստուածաբանական արժեքին վերայ: Անտարակոյս Հանճարեղ է Կապիշի դրութիւնն, բայց քանի որ ուրիշ ներքին կամ ար-

1. Այս ինքն են՝ զրախտի երկոտասան բոյսերն, որոնք նկատուած են իբրև վարձք և վայելք երանացուցիչք, զորս հրեշտակն կը շնորհէ Արամայ և անոր ժառանգաց՝ զկնի արտորման և ապաշաւանաց:

տաքին փաստեր չկան Սաղաթիելի, — ևս առաւել Ուրիէլ հրեշտակապետին՝ որ կը պատուիրէ անոր այդ տեսակ պահեցողութիւն մի, — Եսսէեան կամ Եբրոնեան լինելուն, մանաւանդ թէ՛ քանի որ բոլոր գրուածքի մէջ եղած վարդապետական այլ և այլ կէտերն իսկ՝ իբրև ճշգրիտ հակապատկեր կը ներկայանան մեզ յիշեալ աղանդոց վարդապետութեան, դժուար է ընդունել գայն իբրև ճշմարիտ, և այնու լուծուած համարել աղբերս վերաբերեալ հանգոյցը: Բ. տեսլեանս տեղւոյ անակնկալ փոփոխութիւնն ապա ի՛նչպէս մեկնենք, որ յայտնապէս կը տեսնուի դարձեալ գրոցս ներքին փաստերովը: Ուստի՝ ըստ իս՝ ինչպէս Արփադ կամ Արդար դաշտին, այսպէս և ծաղկամբք կերակրուելուն վերաբերեալ երկու նախադասութիւններն, 24 և 26 համարներում, որոց մին կը սկսի. « Եւ մի՛ ինչ ճաշակեսցես, բայց միայն ի ծաղկանց » և այլն, և միւսն՝ « Ի տեղին որ անուանեալ կոչի Արդար — և լինէր ճաշակն նոցա ինձ ի քաղցրութիւն և ի յագումն և ի կարողութիւն գորտաբեան իմոյ », բոլորովին տարբեր աղբերէ կը յառաջագային: Ասոր յայտնի ապացոյց է նախ՝ յիշեալ համարներէն առաջնոյն մէջ պահուած. « Պաննա՛ դառ այլ ևս առարս եօթն » նախադասութիւնն, որ դարձեալ սաղաթիէլեան աղբիւրը կը յիշեցնէ մեզ, կամ լաւ ևս միւս տեսլեանց մէջ գործածուած սովորական ձևը: Դժուար է, այո՛, այդ երկու հակառակ ձևերը՝ մի և նոյն հեղինակին ընծայել, առանց հակասութեան: Գ. 24 համարին մէջ՝ ծաղկալից դաշտն միայն կը յիշուի հրեշտակին կողմանէ, առանց անուան. իսկ 26 համարում, ընդհակառակն, կեղծ Եզր՝ Արդար կը կոչէ գայն: Արդ, այս անունս եթէ նկատուի իբրև լոկ այլաբանութիւն մի, և եթէ աշխարհագրական անուն, ըստ Կիւբէի և Յովկմարի, արարական խմբագրութեան մէջ կը պակսի, իսկ միւսներուն մէջ՝ Արդարեք ևս կը գրուի, որ կը յիշեցնէ ԺԳ զլիւում յիշուած Արզափ = Arzaph երկիրն, — որ ըստ ասորի բնագրին՝ finis mundi թարգմանուած է, — ուր, ինչպէս տեսանք, կը դեգերին Նարուգոզոնսորէն առաջին անգամ գերուած ժողովուրդն. հետևաբար, շատ հուանական է, որ երկուքն իսկ՝ մի և նոյն աղբերը վերաբերին: Ուստի, ինչպէս Յովհաննէս Մկրտիչն՝ իբրև անապատի քարոզ՝ մեղրով կը կերակրուէր, որուն ապա հետևեցան և Հարթ անապատաց, այսպէս և ծաղկալից դաշտին մէջ բնակող տեսանողն, բնական էր որ ծաղկամբք կերակրուէր, բառիս ընդարձակ նշանակութեամբ, — որով բոյս իսկ կը հասկցուի, — վասն զի ուրիշ բան չէր գտնուեր հոն: Արդ, այս պարագայիս մէջ՝

եթէ կայ մեկնութեան կէտ մի, դա այն է, թէ հատուածոցս հեղինակն ներշնչուած է մէկ կողմէն՝ Եզրի ԺԳ գլխում աւանդուածէն, իսկ միւս կողմէն այլ Մատթէոսի Գ. գլ. 4 համարէն, տալով անոնց արուեստական միութիւն մի:

Ի նկատի առնելով տեսլեանս Հիմնական և գլխաւոր մասը, ըստ նկարագրին, որ կը դառնայ Երուսաղեմի վերաշինութեան և Իսրայելի կրօնական նուիրապետութեան վերանորոգութեան վրայ, որոնք քրիստոնեայ կամ հեթանոս մէկու մի համար բնաւ նշանակութիւն չունին կամ խիստ երկրորդական, կարելի է ըսել, թէ ուղղակի և ամբողջապէս Սաղաթիելի և միայն Սաղաթիելի մտաց և գրչի ծնունդ եղած լինի: Բայց, եթէ դիտենք անոր այլաբանական ձևը, որ կարող է և ուրիշ նշանակութիւն ունենալ, այն ժամանակ խնդիրն կը փոխուի:

Եւ իրօք գրուածիս ուսումնասիրութեամբ զբաղուող երկու գիտնականներ, Ֆոլկմար և Ռ. Կապիշ, իրարու հակառակ կարծիքներ յայտնեցին այս մասին, հաստատուած մի և նոյն ներքին փաստերու վերայ: Առաջինն՝ տեսլեանս նիւթ եղող քաղաքը՝ Դաւթի ձեռքով Հիմնուած Երուսաղէմը կը հասկնայ, որ առաջինէն աւելի մեծափառ կը կանգնի, ապա, Սաղաթիելի որպէս Ջօրաբարելի ձեռքով, ինչպէս աւանդած են մեզ Հրէից կանոնական գրքերն: Այս կարծեաց նպաստաւոր են ստուգիւ հետևեալ պարագաներն, այսինքն՝ նախ որ գրոցս կեղծ հեղինակն իսկ՝ այն ժամանակի և դիպաց հետ կապ ունեցող և ծանօթ անունը՝ Սաղաթիէլ՝ իւր վրան առեր է: Բ. Ուրիելի բերանը դրուած մեկնութեան այս խօսքերս. « Այս կին՝ այն Սիոն է, զոր տեսանէիր, զոր և այժմ տեսանես քաղաք շինեալ »: Արդ, եթէ տեսանողին այժմ, այսինքն է՝ յետոյ տեսածն՝ յառաջագոյն տեսածին հետ նոյն է. կը հետևի ապա, թէ ինչպէս այն՝ այսպէս և այս քաղաքս և Սիոն՝ երկրաւորն ըլլան ուղղակի, և ոչ եթէ երկնաւորն:

Իսկ ըստ կարծեաց Կապիշի ընդհակառակն՝ բացարձակապէս երկնաւոր և յաւիտենական Երուսաղէմն է այդ, զոր, Սաղաթիէլ այնքան պատրաստութենէ ետքը, սքանչելահրաշկերպով կերպարանափոխուած կը տեսնէ, և երկրաւորէն տարբեր հանգամանքներով կը ներկայացնէ մեզ: Գիտնականս՝ այլևայլ մեկնութիւններով ուզած է հաստատել զայս. սակայն մենք ուշի ուշով քննելով այդ նախապատրաստութիւնքն և տեսիլն ինքնին, երկու տեղեր կը գտնենք միայն, որոնք կը թուին նպաստել Կապիշի պաշտպանած կարծեաց, բայց իրօք

երկուքն իսկ յոյժ առաձգական են և երկդիմի: Նախ 45 համարին մէջ, Ուրիէլ յիշեցնելով տեսանողին՝ այլաբանական այրույն խօսքը. « եւ զի ասաց ցբեզ, ամուլ եղէ ամս երեսուն », կը մեկնէ զայն այսպէս, ըստ ասորի թարգմանութեան. *Quoniam fuit in sæculo tria millia annorum, quando¹ non offerebatur in ea oblatio. Et factum est post tria millia annorum ædificavit Salomon civitatem, et obtulit in ea oblationem: tunc ipsum fuit quod peperit sterilis filium*»: Արարականն՝ համաձայն է այսմ. լատինս ունի ընդհակառակն. « *anni sæculo tres* ». Հայկականն՝ անորոշ կերպով կը գրէ. « Զի ամս քազոսմս ունէր յայսմ աշխարհի »: Արդ, այրի կնոջ բերանը դրուած ամուլութեան յայտարար 30 տարիներն, որք յետոյ Ուրիելի մեկնութեան մէջ 3000 տարուան փոխուած են, եթէ խանգարուած չեն, անտարակոյս աւելի երկնային Երուսաղեմին կը պատշաճին՝ քան թէ երկրաւորին: Վասն զի այս միայն կարող էր սողմոսնեան տաճարի շինութենէն 3000 տարի յառաջ, — այսինքն է՝ արարչագործութեան թուականին սկիզբը, — գոյութիւն ունենալ, և ոչ թէ երկրաւորն: Սակայն, այս այսպէս ենթադրելով, այն ժամանակ անոր անդոքիանն կը մնայ մեզ համար բութովին անհասկանալի և հակասական: Յիրաւի, ինչպէս կրնար երկնային Երուսաղէմն մնալ այնչափ դար ամուլ, այսինքն է՝ առանց նուիրաց և բանաւոր պատարագաց, զոր դիտմամբ շէշտած է հեղինակն: Ի՞նչ եղան ապա Ադամայ, Աբելի, Ենովքայ, Նոյի, Աբրահամու, և ուրիշ նահապետաց կատարած զոհերն և նուիրագործութիւնքն: Ի՞նչպէս մեկնենք, Տորիթայ գրոց մէջ, Ռափայելի՝ առ նա յայտնած այս ճշմարտութիւնս. « Յորժամ կացեր դու յաղօթս և նուն քո Սառայ, ես մատոցի գյիշատակս աղօթից ձերոց առաջի Սըրբոյն », և թէ. « Ես եմ Հոսափայէլ յեթեանց անտի... որք հանեն մատոցսանն զաղօթս սրբոցն, մտանեն առաջի փառաց Սրբոյն »: Ի՞նչպէս մեկնենք Մեքիսեդեկի մշտնջենաւոր քահանայութեան մեծ խորհուրդը, որուն համար կը գրէ Պաւղոս. « Որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած »; և թէ « Աստ իբրև մարդ մահկանացու տասա-

1. Հայերէնն՝ նշանաւոր տարբերութեամբ մի կը գրէ. « Եւ յորժամ ելն և լիեցաւ, ժողովս ի նա պարբերակ », որ սողմոսնեան տաճարն և նոն կատարուած զոհեր կը յիշեցնէ, մինչև ցկործանուի Երուսաղեմի ի Նաբուզոդոնոսորայ: Ուստի, 45 համարին մէջ յիշուած երեսնամեայ ամուլութիւնն իսկ՝ որ քաջ կը համաձայնի Երբ զորոց սկիզբը շէշտուած երեսներորդ ամին, այն է՝ յետ կործանման Երուսաղեմի, կը ցուցնէ յայտնապէս, թէ խօսքն երկրաւոր Երուսաղեմի վրայ է:

նորդս սունու, բայց անդ (յերկինս) վկայեցաւ թէ կենդանի է » : Ինչպէս մեկնեմք հրէական ազգին աւանդական հաւատքը, զոր Երկոտ Նահապետաց (Ղեեայ) կտակին հեղինակն այսպէս կը ներկայացնէ. « Հրեշտակք են երեսաց նորա պաշտօնեայք, քառարանք առաջի Տեառն՝ ի վերայ գիտոսրեան արդարոց, և մատուցանեն հոտ անուշից Տեառն՝ բանական և առանց արեան պատարագ » : Իարձեալ, ինչ բանաւոր պատճառ մի կայ ենթադրելու, որ բոլոր Նահապետաց և արդարոց պատարագօք հանդերձ՝ 3000 տարի ամուլ մնացող երկնային Երուսաղէմն՝ յանկարծ Սողոմոնի մատուցած պատարագաւն յղացած և ծնած լինի զորդի այրոյն : Ուստի, Եզրի առաջին տեղին բնաւ նպաստաւոր չէ Կապիշի կարծեաց : Տեսնեմք երկրորդը :

Տեպեանս 50-56 համարներում կ'ըսուի, Ուրիելի կողմէն՝ առ Սաղաթիէլ. Propterea dixi tibi, ut expectares me in campo ubi domus non¹ esset ædificata... ubi non est fundamentum ædificii. Nec enim poterat opus hominis manere in loco, ubi futurum erat, ut Altissimi civitas ostendetur... Ingredere et vide claritatem gloriæ ejus et magnitudinem ædificii ejus, quantum capax est visus oculorum tuorum videre, et post hæc audies quantum capit auditus aurium tuorum audire ».

Կապիշ՝ բաղդատելով այս տեղիս՝ Ը գլխու 52 համարին հետ, ուր ըսուած է, առ Սաղաթիէլ-Եզր. « Ի բաց կայ քեզ ճշմարիտ դրախտն և տնկեալ ծառն ճշմարիտ դրախտին, և պատրաստեալ են կեանքն՝ հանդերձեալ փափկութեան. շինեալ է քաղաքն, յօրինեալ է հանգիստն », կ'ըսէ թէ, որովհետև առանց երկբայութեան այս վերջին խօսքերս՝ սաղաթիելեան աղբեր կը վերարերին, և ուղղակի հանդերձեալ աշխարհը = αἰὼν ἐχελνός, և ոչ թէ այս = αἰὼν οὐτός կը նշանակեն. ուրեմն այսպէս և 50-56 համարներն՝ մի միայն երկնային Երուսաղէմը ցոյց կու տան մեզ, անշէն դատարի, հիմն չունեցող տան և Բարձրեղոյն քաղաք և այլ բացատրութեամբը :

Սրբ, ընդունելով հանդերձ 52 համարի հարազատութիւնն՝ իբր ճշմարիտ, սակայն և այնպէս մենք ոչ կապակցութիւն կը գտնենք այդ երկու տեղեաց մէջ և ոչ իսկ նոյնութիւն գաղափարաց : Եւ ստուգիւ, եթէ նոյն էին, ուրեմն ինչ հարկ մի կար, որ հեղինակն այս տեղ որոշակի ծանուցանելէն վերջ « ճշմարիտ դրախտն, տնկեալ

1. Այս տեղ ևս, - ինչպէս ի վեր անդր, - հայերէնն՝ ունի ասոր հաստատականը, այսինքն է, « Ուր տունն չիներ » :

ծառն ճշմարիտ դրախտին և շինեալ քաղաքն » այլովք հանդերձ, դառնայր վերստին և ծանուցանէր զայն իւրայոց, իբրև անակնկալ նորութիւն մի. և որ զարմանալին է, նախընթացէն աւելի աղօտ և քողարկուած կերպով, որով մեզ հետ՝ իւր ժամանակակիցներն ևս վարանէին իմանալ զայն: Այո՛, բաց աստի՛ գրութեանս ներքին փաստերու վերայ հաստատուած կրկին անտեղութիւնք իսկ՝ Կապիշի կարծեաց դէմ կը զինին: Նախ, որ անծանօթ հեղինակս՝ Եզրի անուան հետ՝ նորա ժամանակն և պարագաներն ևս ի հարկէ ջանացեր է իրեն յարմարեցնել. արդ, Բնչ յարմարութիւն կարող է լինել աստ, որ Բաբելոնի գերութեան մէջ ինք զինքը կեղծող մէկն, որ այլուր միշտ երկրաւոր Երուսաղեմի անցեալը կը յիշէ, ներկայ աղէտները կ'ողբայ, և Իսրայելի գերութեան վերադարձը և քաղաքի և տաճարի վերաշինութիւնը կ'երագէ՛, յանկարծ խօսքը փոխէ երկնային Երուսաղեմի վերայ. և խօսի մանաւանդ առ այն ժողովուրդն, որ ըստ կանոնական գրոց՝ առ զեսոս Բաբելացւոց նստած՝ կը յիշէր միշտ իւր ամայացեալ մայրաքաղաքը, կը յիշէր իւր մայր Սիոնը, որ մի յառաջ Հոն վերադառնալու և բնակելու մեծ յուսով: Ուստի, եթէ Հրէից ակնկալածն այն չէր, այլ Դաւթի քաղաքը. եթէ մեր Սազաթիէլն Զօրաբարելի հայրը չէր, այլ անոր օրով և ձեռքով կատարուած մեծ գործին, այն է՝ տաճարի շինութեան նկարագրողն, ուրեմն, անոր մեզ նկարագրած Երուսաղէմն ևս՝ երկնայինը չէ, այլ Զօրաբարելեանն:

Ստուգել, մեր կարծիքն կը հաստատուի նախ այն ընդհանուր երևութովն՝ որ ի յաջորդն, այն է՝ ՓԱ գլխու 42 և ՓԲ գլխու 48 համարներում, դարձեալ տեսանողն կը շարունակէ խօսել երկրաւոր Երուսաղեմի վերայ, և անոր վերաշինութեան յուսովն կը մխիթարէ անմխիթար ժողովուրդը: Բ. սրբաական թարգմանութեան հետեւեալ խօսքերով, որք աւելի բացայայտ են և կործանուած քաղաքի վե-

1. Յերաւել, բաւական է առ այս՝ բաճալ ժ գլխու 6-11 համարները, ուր հեւտեալ խօսքերն ուղղուած են առ լքեալ և պրիացեալ Սիոնն՝ ի զէմս պրի կնոջ. « Ո՛չ տեսնես զսափո՛ւ Ժր, ո՛ր եհո՛ւ է վրայ Սիւնի, որ է մայր մեր ամենեցուն. հիծելով հիծի Երուսաղեմ, և որքո՛ւմ է և որքո՛ւմ է յոյժ... զի սիւտէ՛ թիւ է Կնիկն Բազմութեան՝ յազմութեան Գորշան »: Արդ, ինչպէս այս տեղ և 21-23 համարներում եղած նկարագիրն՝ միայն երկրաւոր Երուսաղեմին կրնան պատշաճիլ. այսպէս ուրեմն և 25-34 համարներում եղած նկարագիրն՝ ուրիշ բան չէ, բայց եթէ պլաքանական անցք մի, այն է՝ երկրաւոր Երուսաղեմի տխուր կործանումն՝ տես ուրախաւէա վերականգնումը:

րաշինութիւնը կ'ակնարկեն ուղղակի. « Hanc tibi pulcram et decoram monstravit, qualem vidisti mulierem effulgentem, et fundamenta ejus (այսինքն է Երուսաղեմի) denovo extracta ». Գ. բաղդատելով տեսեանս մէջ նկարագրուած Երուսաղէմը՝ Եսայեայ Կ զլխու, Բարուքայ Յայտնութեան, Զաքարիայ մարգարէութեան և Յովհաննու Յայտնութեան մէջ նկարագրուածին, այն է՝ վերին Երուսաղեմի հետ, երկուստեք ամենամեծ տարբերութիւնն յայտնապէս կը տեսնուի: Թէ՛ Սաղաթիելի (՛ տեսեան) և թէ՛ Յովհ. Յայտնութեան մէջ կին մ'է՛ որ կու գայ ի հանդէս՝ իբրև ներկայացուցիչ Սիոնի կամ Եկեղեցւոյ. առաջնոյն քով, իբրև վաղամեռիկ որդւոյ սգաւոր և այրիացեալ մայր, կ'ողբայ անխիթար, իսկ վերջնոյն քով՝ իբրև անդրանկածին որդւոյ ծնող՝ կը ճշէ և կ'երկնէ ի ծնանելն: Ըստ առաջնոյն՝ փոխակերպուածն է ամայացեալ Սիոն լեռան, որ վերստին փառահեղ քաղաքի մի կը վերածուի, առանց անդրագոյն գերաշխարհիկ ձրից. իսկ ի վերջնումս՝ է վշտակիր Եկեղեցին՝ Քրիստոսի, որ յետոյ կը փոխուի յաղթականի, այսինքն է, « յաւիտեանական արքայութեան սրբոց Աստուծոյ, և անմահ գառին », յորում ամենայն հանգամանք տարբեր են երկրաւորէս: Այո՛, ըստ իս, կայ երկուքին մէջ հասարակաց նմանութիւն մի. և ինչպէս Յովհ. Յայտնութեանն՝ իբրև հիմն և սկզբնական աղբիւր ծառայած են Զաքարիա և Դանիէլ, այսպէս և Յովհ. Յայտնութիւնն ծանօթ ըլլալու էր Եզրի գրոց խմբագրին, որուն կը վերաբերին բաց ի վերը նշանակուածներէն, նոյնպէս և 57 և 55 համարներն, որք կրկնութիւնք են Զ զլխու 30 և 33 համարներուն և դիտմամբ տեսեանս մէջ ներմուծուած են. հետեւաբար, հաւանական է՝ որ Սաղաթիելի այս տեսեանս իսկ՝ ուրեք ուրեք գերբնական գոյն տուողն նա՛ եղած ըլլայ:

Հուսկ ի վերջոյ, կարևոր կը համարիմ ուղղել վերը ասորի բնագրէն մէջ բերուած տեղեաց մի քանի անճշդութիւնքը, որոնք զարտուղելու պատճառ եղան Կապիշի: Դիտել կու տանք նախ, որ Ժ զլխու 45 համարի « in saeculo » բացատրութիւնն՝ ըստ հայերէն խմբագրութեան « յայսմ աշխարհի » ἄλων οὐτος պէտք է հասկանալ և ոչ թէ ἄλων ἕκελτος. ք. Aedificavit Salomon civitatem բացատրութիւնն՝ խանգարուած է յայտնապէս, վասն զի Սողոմոն ոչ թէ Երուսաղէմ քաղաքին, այլ տաճարին միայն հիմնադիր եղած է. հետեւաբար, հայկական և արաբական խմբագրութեանց համաձայն՝ կարդալու է այն. « Սողոմոն շինեաց և գտաձարև »: Գ. Et

obtulit in ea, ասորին միայն ունի, որ Երուսաղէմ քաղաքը կը յարարէր. իսկ ըստ Հայերենին և արաբականին՝ ուղղելի է « ի նմա » = in eo, այսինքն է ի տաճարին :

Հին ԳԵՐՈՐԻ ՏԵՍԻՒՆ՝ անսովոր կերպով մի կը սկսի, որ միայն իրեն յատուկ է, քան թէ ընդհանուր գրուածին : Այս տեղ՝ չկայ բնաւ յիշատակ Սաղաթիելի եօթնօրեայ պահոց, չկան անոր սովորաբար առանձնախօսութիւնքն՝ Իսրայելի կամ Երուսաղեմի մասին : Կեղծ Ուրիէլ՝ նախընթաց տեսիլը կնքելէն անմիջապէս վերջը, այս տեսլեանս կը պատրաստէ գՍաղաթիէլ, պատուիրելով 58-59 համարում. « Մնա՛ դու աստ՝ զվաղուեան գիշերն, և ցուցից քեզ ո՛րչափ Բարձրեալն ի տեսիլ երազոյ ցուցցէ քեզ, որ լինելոցն իցէ ի վերայ բնակչաց երկրի առարս վախճանի » :

Արդ, տեսանողին մտքէն շանցած և աղօթիւք շինդրած այս անակակալս, այսինքն է՝ ԺԱ գլխու 1 համարով, — որ կը յաջորդէ նախընթացի 60 համարին, — անմիջապէս Ե տեսլեան փոխուիւն, այսպէս. « Եւ եղև յերկրորդումն գիշերին՝ ահա երանէր ի ծովէ արծուի », և այլն, շատ կասկածելի է և պէսպէս դժուարութեանց կը բաղխի, որոց մէջ պահուած խոր լուծեան՝ կը յաջորդեն բնականաբար քննադատական այս հարցերս. Ո՞րն է արդեօք « աստ » բառով արտայայտուած տեղին, ուր երկիցս կը գիշերօթէ տեսանողն. Ի տեսլեան Արդար դաշտն, թէ նախընթաց երեք տեսիլներուն թարր եղող Բարելոնն, կամ բոլորովին մի ուրիշ տեղի : Առաջինը չկարէ լինել, վասն զի այս հնարուած է միայն, ինչպէս տեսանք, իբրև Հիմն ծառայելու վերականգնելիք Երուսաղեմին, որոյ մասին իբ խօսքը աւարտեց Հեղինակս Ի տեսլեամբը : Չկարէ լինել նաև Բարելոն, վասն զի նկարագրելիք տեսլեանս նիւթն չունի, ինչպէս պիտի տեսնենք, որ և է վերաբերութիւն Բարելոնի կամ այն ժամանակի դիպաց հետ : Հայկական խմբագրութիւնն՝ Ժ գլխու 60րդ համարի հետեւեալ նշանաւոր տարբերութեամբ. « Եւ մտի ի տուն գերկռս գիշերս, որպէս և հրաւնայեաց ինձ հրեշտակն Տեան », ըստ բաւականին կը պարզէ այդ մթութիւնը, որով մենք կը տեսնենք 58 և 60 համարներու մէջ երեցող խոշոր հակասութիւնը : Ես չեմ կարծեր, որ այսպիսի մի տարբերութիւն դիպուածով սպրդած լինի հայկական թարգմանութեան մէջ, այլ, կամ այն է թէ թարգմանիչն այսպէս գտած էր նաև հին բնագրին մէջ, և կամ յարմար չդատելով աստ բառը վերաբերել դաշտին, ի տան փոխած է զայն : Յամենայն դէպս, կը հետևի, թէ ոչ միայն տեսլեանս նախընթաց,

այն է 51-58 համարներն՝ եկամուտ նախադասութիւններով խար-
դախուած են, այլ թէ նոյն իսկ Թ զլխու 60 և ԹԱ զլխու 1 հա-
մարներուն մէջտեղ եղած ըլլալու էր և մի ուրիշ հատուած, որ պա-
րունակէր Սաղաթիելի առանձնախօսութիւն մի՝ կատարուելիք յայտ-
նութեան մասին, որ ապա յոյն խմբագրի կողմէն դուրս թողուած
է դիտմամբ:

Տեսլեանս զլխաւոր նիւթն է՝ նախ հռովմէական պետութեան
բունակալութիւնն, գործած անօրէնութիւնքն և ապա Մեսիայի ձեռ-
քով անոր վերայ տարած աստուածային յաղթանակն, զոր նկարա-
գրած է անծանօթն՝ այլաբանական ձևոց ներքև: Այս բանս՝ յայտնի
կը տեսնուի ԹԲ զլխու 11 և 32 համարներում, Ուրիելի բերանը
դրուած մեկնութենէն, ուր կ'ըսուի. « Արծոռն, որ ելանէր ի ծու-
վէն, չորտոր քազառորոքիանն է, որ յայտնեցաւ եղբոր քում Դա-
նիելի: Ասիածն, որ խօսէր ընդ արծուոյն և յանդիմանէր զանիրաւու-
թիւնս նորա, ևս է Օծեալն՝ զոր առաքեսցի Ռարձրեալն ի Ժամանակս
վախձանի յազգէ Դառթի »:

Այս և ուրիշ բացայայտ վկայութիւններ, որք կը տրուին Մե-
սիայի աստուածութեան վերայ այս տեսլեանս մէջ, ամենամեծ կա-
րևորութիւն պիտի ունենային քրիստոնէութեան պատմութեան նը-
կատմամբ, եթէ ստուգիւ Քրիստոսէ յառաջ ապրող հրէի մի մտքէն
և գրչէն ելած լինին, այն է Սաղաթիելի. սակայն, դժուար է որ
այդ այդպէս եղած լինի, դիտելով որ նախընթաց տեսիլներում,
այսինքն է Ծ, Զ, Է գլուխներում, արդէն կրկին և կրկին դարձաւ
նա վերջին ժամանակները հեթանոսաց տիրապետութեան նկատմամբ
կատարուելիք նշանաց, Օծելոյն երկրաւոր թագաւորութեան և վեր-
ջին գալստեան վերայ, և ինչ որ պէտք էր ըսել՝ ըսաւ, և անոր ա-
սածներն ուղղակի Հրէից գերութեան վերաբերելով մեզ վստահու-
թիւն կը ներշնչէին: Իսկ այս տեսլեանս մէջ յայտնուած գաղա-
փարներն և նկարագիրքն՝ թէ պատմականօրէն և թէ վարդապետա-
կան տեսակետով բոլորովին տարբեր բնաւորութիւն ունին. այսինքն
է, սորա հեղինակի բուն նպատակն է՝ ոչ թէ Ասորիստանեայց կամ
Պարսից՝ Հրէից դէմ, այլ ընդհակառակն փրկչական թուականէն մի
դար յառաջ և վերջ հռովմէական արծուոյն՝ նախ ընդհանուր արևելքի
և ապա քրիստոնէութեան դէմ գործած հայածանքները տեսա-
րանի վերայ աւնուլ, և յետ այնորիկ քրիստոնէութեան ձեռքով
կրած նորա պարտութիւնն և կործանումը: Սա՝ աւելի աշխարհա-
քաղաքացի՝ քան թէ հրեայ, աւելի ջատագով լինելով քան պատ-

մի՛ պատմական անձինքն և անցքերն իսկ քողարկած է, և ամե-
նայն ինչ կրօնական երկու տեսակետի վերածած. այսինքն են՝ Ռե-
թեռնադրիան և Մեսիականութիան, մին՝ աշխարհական և միւսն՝ հո-
գեար և աստուածային զօրութեամբ զինաւորուած :

Տեսիլս՝ Դանիելի մարգարէութեան է գլխոյն վերայ յօրինուած
է՛ ըստ Հիման և ըստ գաղափարին. բայց անոր պարագաներն և աղ-
բիւններն՝ բոլորովին անկէց տարբեր են և նոր: Ստուգիւ, այս երկու
կէտերս իսկ՝ մէկէն ի մէկ կը տեսնուին, 11 համարում, Ուրիելի բե-
րանը դրուած այս խօսքերէս. « Արծուին՝ որ ելանէր ի ծովէն՝ չոր-
բորդ թագաւորութիւնն է, որ յայտնեցաւ եղբոր քոսմ Դանիելի,
այլ ոչ յայտնեցաւ նմա այսպէս, որպէս ես յայտնեմ քեզ » :

Հեղինակս՝ ինքզինքը Դանիելի « եղբայրակից », այսինքն է՝ ազգա-
կից կ'անուանէ. և այս կարելի է, եթէ ԺԲ գլխու 34 համարում ար-
այայտուած՝ « Եւ զմնացեալս ժողովրդեան նորա փրկեցէ գթու-
թեամբ » և այլ խօսքերով՝ հրէական ժողովուրդը կ'ակնարկէ, ըստ
Ռ. Կապիչի: Սակայն, իմ կարծիքով՝ այդ ազգակցութիւնն՝ Դանիելի
յիշեալ գլխոյն և իւր տեւեան պարզ նմանողութեան մէջ կայացած
է, քան թէ՛ յայլ ինչ: Դարձեալ, ստոյգ է և այն յայտարա-
րութիւնն, թէ՛ Դանիելէն տարբեր յայտնութիւններ պիտի ընէր,
վասն զի ընդհանուրէն՝ անոր մասնականին պիտի անցնէր, Հե-
ւուրէն՝ մերձաւորին, և զուշակութիւններէն՝ պատմական կերպով
որդէն կատարուած մեծ յեղափոխութեան: Եւ իրօք, նա արծուոյն 3
զլոց, 12 թևոց և 8 աւելորդ կամ ստորակայ թևերու այլաբա-
նական նկարագրով՝ կը ներկայացնէ մեզ այն ինչ, զոր ի զուր է
որոնել Դանիելի քով. այսինքն են՝ Կեսարէն սկսեալ մինչև վերջին
հեթանոս կայսրը, մասնաւոր թէ կայսերական իշխանութեան ներքոյ
բանարարող թագաւորաց իսկ արարուածքը, քրիստոնէից դէմ յա-
րուցած հալածանքով և արիւնհեղութիւններով հանդերձ: Այս խիստ
յայտնի պարագաներս, որոնց նա ինքն, հաւանօրէն, ոչ միայն ական-
ջալուր, այլ և ականատես եղած էր՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն
այլ՝ չրէից մասին պահած լուութիւնն և կայսերաց հպատակ հեթա-
նոս ժողովրդեան մի մասին՝ Մեսիայի ձեռքով փրկուելն և հոով-
մէական սահմանաց վերայ անդորր ապրիլն մինչև ցերկրորդ գա-
լուսը ցոյց կու տան մեզ, թէ՛ նա՛ կամ քրիստոնէութեան հաս-
տատուելէն և հեթանոսաց մի մասի դարձէն վերջ ապրող քրիստո-
նէացած հրեայ մ'էր, և կամ քրիստոնեայ մէկն յետոյ այն գրուա-
ծին մէջ ձեռք խառնելով՝ այն կերպարանքը ստուած է :

Այս տեսլեանս՝ միւսներէն ունեցած մեծ զանազանութիւնն ընդունեցան նաև Կապիշ և Գըֆրէորէր: Գիտնականներէս առաջնոյն կարծիքով՝ տեսլեանս Հեղինակն տարբեր ոմն է ոչ միայն Եզրէն և Սաղաթիբէն, այլ նոյն իսկ զանոնք ի մի խմբագրողէն, այնու զի վերջինս՝ ոչ հրեայ է և ոչ քրիստոնեայ, այլ հեթանոս մէկն, մինչդեռ Ա (Արծուի) աղբիւրն՝ է նախանձայոյզ հրեայ մի, հին գաղափարներով և սովորութեամբք տողորեալ: Սակայն, մենք քննելով զիտնականիս 95 իջում և ուրիշ տեղ մէջ բերուած կռուանները, ոչ միայն խախուտ կը գտնենք զանոնք, այլ նոյն իսկ այլուր անոր ըրած դիտողութեանցը հակասող. հետևաբար, ըստ մեզ՝ ոչ առաջին երկու աղբերքը խմբագրողն հեթանոս մէկն կարող է լինել և ոչ այլ տեսլեանս Հեղինակն՝ անկէց բոլորովին տարբեր մի անձն, այլ մի և նոյն, և կրօնիք իսկ քրիստոնեայ. վասն զի մի և նոյն ատելութիւնն կը տեսնուի, երկուքին ընծայուած հատուածոց մէջ իսկ՝ հեթանոսաց դէմ, և մի և նոյն համակրութիւնն առ հաւատացեալս Օծելոյն կամ մարդգակերպ կենդանւոյն քով ժողովեալ հօտին նկատմամբ: Ուղիղ չէ Կապիշի նաև այս դիտողութիւնս, այսինքն թէ տեսլեանս Հեղինակն՝ ինչպէս արծույ ուլարանութեամբ՝ հռովմէական պետութիւնը, այսպէս այլ առիծի նկարագրով՝ շրէից աշխարհական թագաւորութեան վերջնական յաղթանակն ուզած ըլլայ ներկայացնել: Սակայն, ինչպէս դիւրաւ կարեն տեսնել ընթերցողք, 31-34 համարներում՝ բառ մ'անգամ չկայ յայտարարող աշխարհական թագաւորութեան, այլ ամենայն ինչ Քրիստոսի մարմնաւոր կերպով աշխարհ գալը ցոյց կուտայ մեզ, համաձայն Յովհ. Յայտնութեան, ուր Քրիստոս նոյնպէս յազգի Դաւթի անուանուած է:

Տեսլեանս բազմակնճիւղն հանգուցին հետ՝ անոր աղբեր ժամանակն ևս մերձաւորապէս որոշելու համար՝ պէտք էր մանրամասնաբար վերլուծել զայն. սակայն, այս՝ շատ հեռու կը տանէր զմեզ. ուստի, մենք՝ ըստ կարելոյն՝ յեականս պիտի համաուտենք մեր սահմանը: Երկու նշանաւոր մեկնութիւններ տրուած են ծովէն ելող արծուոյն, անոր թևոց և գլուխներուն. որոց միոյն ներկայացուցիչք են Կիլման և Ֆոլկմար, իսկ միւրոյն՝ Կապիշ և Գըֆրէորէր: Առաջինն՝ աւելի ժամանակագրական հիման վերայ հաստատուած է. իսկ երկրորդն՝ աստուածաբանական և մեկնաբանական: Կիլման նկատելով որ, ինչպէս բնական արծիւն՝ այսպէս և հռովմէական պետութիւնը ներկայացնողն՝ ոչ թէ մէկ, այլ երկու թևօք միայն կարող է թռչել. հետևաբար, եզրակացոյց թէ տեսլեանս մէջ յիշուած

արծույն 12 թևերը զոյգ զոյգ առնելով 7 կայսերը հաշուելու է, և ոչ եթէ 12. և այս կայսերքս են Յուլեանք, այսինքն է՝ Յուլ. Կեսարէն սկսեալ մինչև Ներոն: Ութ աւելորդ թևքն՝ ըլլալու են (նոյն հաշուով) երեք Զինուորական կայսերքն, այսինքն են Դադրա, Ռթոն, Վիտեղիոս և անոր նախորդն Ներոս՝ ընկերակցութեամբ Գոմետիանոսի: Իսկ երեք գլուխներն՝ են Փղառեանք, — որ Տիտոս Փղառիոս Վեսպասիանոսով կը սկսի և կը վարի յառաջ:

Ռիշ. Կապիշ անյարմարութիւններ նկատելով Դիլմանի և Յոլկմարի այս գրութեան մէջ, ինքն՝ Փրֆրէորերի համաձայն մեկնեց զայն. այսինքն, նա կ'ընդունի թէ 3 գլուխներն են ստուգու Փղառեանք, բայց 12 թևերն առանձին առմամբ՝ Կեսարին յաջորդող նոյնաթիւ կայսերքը կը նշանակեն. դիտելով սակայն, որ սոցա մէջ եղան ոմանք, ինչպէս Գադրա, Ռթոն և Վիտեղիոս, որոց թագաւորութիւնն եղաւ սակաւօրեայ, և այլք՝ որք միայն ձկտեցան թագաւորել՝ բայց չի հասնելով թագաւորութեան, լոկ թեկնածուք անուանեցան կամ յափշտակողք, որպիսիք են ըստ Փրֆրէորերի՝ Վինգիլիոս, Նիմփիդիոս և Պիտոն Կիկինիոս: Աւելորդ 8 թևերով հոովմէական կայսերք չեն հասկցուիր, այլ անոնց ստորակարգեալ օտար իշխեցողներ, որոնք այն ժամանակի պատմութեան վերաբերեալ Հրէաստանի թեկնածու իշխաններ նկատելի են:

Չնայելով որ այս գրութիւնքս իրարու հակառակ են, սակայն և այնպէս նոցա հեղինակներն՝ գրեթէ փոքր ի շատէ մի և նոյն եզրակացութեան յանգեցան՝ նկատմամբ տեսլեանս գրութեան ժամանակին. այսինքն է Գոմետիանոս կայսեր ժամանակ, որ է՝ յամի Տեսաւն 90 գրուած: Նոցա իրարմէ ունեցած տարբերութիւնն այս է, որ ըստ Դիլմանի՝ յոյն խմբագրողի ձեռքով գրուած է առաջին անգամ տեսիլս, և ներմուծուած Սաղաթիելի գրութեան մէջ. իսկ ըստ Կապիշի՝ նախանձայոյզ հրէի մի ձեռքով, որ թշնամի էր հըռովմէական իշխանութեան և պաշտպան Իսրայելի կրօնական շահերուն և անկախութեան. հետևաբար, յոյն խմբագիրն՝ զայն այնպէս գտած էր տեղ մի, և ոչ եթէ յօրինած: Կապիշի գրութիւնն ըստ իմիք աւելի հիմնաւոր է, ըստ որում՝ արծույն թևերը առանձինն մի մի կայսեր պատշաճեցուցած է. այս մասին ըսելիք չկայ: Բայց ստորակարգեալ թևոց և երեք գլուխներուն տուած անոր մեկնութեանց մէջ՝ թէ Կապիշ և թէ Դիլման գոհացուցիչ չեն. որովհետև երկուստեք Փղառեան կայսերաց սահմանն որոշուած չէ. այսինքն թէ, բնագրի « գլուխք երեք » բացատրութեամբն՝ երեք կապ-

սերք կամ եռապետք հասկանալի են, թէ ընդհակառակ երեք հարըստութեանց պատկանող 15-23 կայսերք, որոց թագաւորութիւնն կը հասնի մինչև փրկչական թուականի Գ դարը: Այս վերջին կէտս Դիմանի տեսութենէն վրիպած չէ, ստոյգ է, բայց դժուար էր՝ որ նա կարենար միարանել զայն՝ յոյն խմբագրին համար իւր վերջ գծած ժամանակին հետ: Իսկ Կապիչ՝ առարկելով հակառակ Դիմանի, Գ դարու սկիզբն եղած քրիստոնէական յաւելուած մի կը համարի զայն: Յամենայն դէպս, Կայսերաց ժամանակին վերաբերեալ անորոշ — մեկնութենէ մի՛ տեսլեանս գրութեան որոշ ժամանակը գծող տարեթիւն՝ դեռ ստոյգ չէ կարելի համարել: Ստոյգ չէ, դարձեալ, մեզ համար, որ յոյն խմբագիրն՝ Դոմետիանոս կայսեր ժամանակ ապրած և գրած ըլլայ, և կամ կայսերաց վերաբերեալ մասը միայն, — ինչպէս Կապիչ ենթադրած է, — Գ դարուն սկիզբը ներմուծուած ըլլայ: Ուստի, իմ կարծիքով՝ ամբողջ տեսիլն ինքնին չէր կարող քրիստոնէական թուականին Գ դարէն յառաջ գրուած լինել. և թէ կանխաւ ըրած մեր գիտողութեանց համեմատ՝ նախանձայտոյզ հրեայ մի չէ տեսլեանս հեղինակն, այլ կայսերաց հալածանքներէն նոր ազատուած և քրիստոնէութեան բերած խաղաղութիւնը տեսնող քրիստոնէայ մէկն, և քրիստոնէական ձկտումով գրած է զայն: Դա կարող է լինել նոյն ինքն յոյն խմբագիրն՝, եթէ նկատենք, որ նա այնքան հին չկարէր լինել, որքան ենթադրած են Դիման և Կապիչ. այսինքն է յամին 90, և ոչ այլ հեթանոս, զի հեթանոսի մի համար բնաւ նշանակութիւն չունէր՝ ձեռք զարնել չրէից պատմութեան կամ քրիստոնէութեան վերաբերեալ նիւթի մի, և հեթանոսաց հակառակ լեզու մի դործածել անոր մէջ: Ապացուցանենք այժմ այդ եղելութիւնքը թէ արտաքին և թէ ներքին փաստերով:

Ինչպէս մեր տեսլեան՝ այսպէս և Յովհաննու Յայտնութեան ԺԳ և ԺԷ զլիտոց մէջ նկարագրուածին իբրև հիմն ծառայած է, անտարակոյս, Դանիելի մարգարէութեան է գլուխն, ուր չորրորդ գագանին տրուած են տասն եղջիւրք, յորմէ ապա կը յառնէ միւս այլ՝ որուն

1. Թերևս առարկուի, թէ յոյն խմբագիրն Բնչպէս կարէր Գ դարում ազրոյ մէկը լինել, քանի որ Բ դարուն Կղեմէս Աղեքսանդրացւոյ քով (Stromat. III, 16) Եզրի անկանոն գրոց է գլխու 33 համարն մէջ բերուած է, որուն բառ առ բառ կը համաձայնին բոլոր թարգմանութիւններն: Սակայն, այս առարկութիւնս՝ անգոր է, ըստ իս, քանի որ ազացուցուած չէ գլխովին, թէ Կղեմեսի գործածած՝ Եզրի յունարէն խմբագրութիւնն էր. կարող էր զա նոյն իսկ եբրայական սկզբնազերն լինել: Բ. Կղեմեսի քով եղած տեղին՝ մեր տեսլեան հետ վերաբերութիւն չունի:

2. Տես ա. ա. Օ. 8. 363 ff. 385 ff.

համար կ'ըսուի, թէ « Առաւել իցէ չարեօք քան զամենայն առաւիկան, և զերիս թագաւորս խոնարհեցուցէ » . սակայն Յայտնութեան Հեղինակն՝ նոյնը պահելով իւր բնագրի եղջերաց, այն է՝ թագաւորաց թիւը, ահագին կերպարանափոխութիւն մի ըրած է չորրորդ գագաւնի նկարագրին մէջ, իւր ժամանակի հռովմէական պետութեան կացութեանը և իր դրած նպատակին համեմատ : Այ՛, այդ գագաւնին մէջ անձնաւորած է նա (ԹԳ. 2) 'Գանիելի չորս գագաւնները, այսինքն են՝ վիշապն, ինձն, առիւծն և արջն, ըստ որում նա իրեն իւրացուցած էր իւր նախորդ չորս թագաւորութիւնները : Կարմիր է նա՝ արեւալ սրբոց արիւնով, կարմիր զգեցած է նաև անոր վրայ նստող կինն . այսինքն է քաղաքն մեծ (Հռովմ), որ լուաց իւր պատմունհանը բիրաւոր մարտիրոսաց անմեղ արիւնով : Եթէն գլուխներն են ծանօթ եօթն բլուրներն, որոց վերայ շինուած էր, և այն « քաղաքորդ եօթն » . տասն եղջիւրքն՝ « տասն թագաւորք, որոց չև ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնունն ղքա զիշխանութիւն ընդ պագաւնին », որուն պատերազմն է Գառին դէմ, որ երկու եղջիւր ունի, և Գառն է որ կը յաղթէ անոնց, վասն զի « Տէր է նոցա և թագաւոր թագաւորաց » և այլն : Սպիտա՝ արդէն ապացուցած է, թէ Յայտնութեան եօթնազլխեան գագաւնն՝ ի դէմս Կալիզուլայի հնարուած է, որ կը յաջորդէ եօթներորդ թագաւորին . մանաւանդ թէ ըստ կարծեաց գիտնականիս՝ անկէ ստեղծուած են հռովմէական եօթն կայսերքն (որիչ ի տասանց), որոց յիշատակութիւն չկայ Գանիելի քով . այսպէս նաև 616 թուէն շինուած է թիւս 666 : Արդ, եթէ փրկչական թուականին 90 ամին գրուելով Յայտնութիւնն՝ այսքան փոփոխութիւն կրեց, և այդ փոփոխութիւնքն արդիւնք են ժամանակին և պարագայից, ուրեմն նոյնը պէտք ենք խորհել նաև եզրի Ծ տեսլեան նկատմամբ, որ Յայտնութեան հետ ունեցած առնչութեամբ հանդերձ՝ ուրիշ նորութիւններ ևս ցոյց կու տայ մեզ, որոնք անկէց շատ վերջ հանդիպած ըլլալու էին . և այդ նորութիւններն ոչ եթէ մասնական տեղեաց, ինչպէս կարծեց Ռ. Կապիչ, այլ բոլոր տեսլեան մէջ կայացած են . հետևաբար, այդ հանգոյցը լուծել պէտք է, և ոչ թէ կտրելով անցնել :

Նախ և առաջ, տեսլեանս հեղինակն՝ 'Գանիելի Եօթներորդներէն գիտէր, թէ Քրիստոսէ յառաջ արդէն դադարած էր Հրէից թագաւորութիւնն՝ ի տանէն Յուդայ և քահանայութիւնն՝ ի ցեղէն Ղևեայ . թէ քիչ ատենէն պիտի գար պղծութիւն աւերածոյն տաճարին վերայ, և անոր յաջորդէր Բարձրելոյն հոգևոր արքայութիւնն, ըստ

Դանիելի « արքայութիւն յաւիտենական և ամենայն իշխանութիւնք նմա ծառայեսցեն և Հնազանդեսցին » : Գիտէր նա արտաքին պատմագրութենէ ապացուցած, թէ նոր թուականէն յառաջ իրօք ժողովեցան Հրեայք յերուսաղէմ և սկսան Հաստատել տեսակ մի իշխանութիւն, սակայն այս եղաւ Կեսարու և Օգոստոս կայսեր գերիշխանութեան ներքեւ, և ոչ թէ Մեսիայի ձեռքով կատարուած յաղթութեամբ և կամ Հռովմէական արժւոյն բնաջինջ բարձմամբ, որ շեշտուած է տեսլեանս մէջ : Գիտէր թէ Հերովդէսեանք իսկ՝ ոչ այլ ինչ էին, բայց եթէ ազգապետք և չորրորդապետք՝ Հռովմայեցւոց գերիշխանութեան ներքեւ. և այս՝ Արքեղայոսի պատմութենէն իսկ յայտնի է, որ թեկն ածելով անկախ թագաւորութեան՝ մէկէն ի մէկ ի Հռովմ կանչուեցաւ և աքսորուեցաւ ի Վիեննա Գաղղիացւոց, և այնուհետև Հռովմայեցւոց կողմէն դրուած Դատաւորներով կը կառավարուէր Հրէաստան : Իսկ փղաւեան կայսերաց ժամանակ՝ Երուսաղէմ ի Հիմանց կործանուեցաւ և արօրադրեցաւ, և Հրեայք ցրուեցան ի սփիւռս Հեթանոսաց, առանց մարմնաւոր և հոգեւոր իշխանութեան : Ուրեմն, այս ամէն բանով Հանդերձ՝ երբ տեսլեանս Հեղինակն կը պնդէ դարձեալ արդարութեան և խաղաղութեան և փրկութեան բերող թագաւորութեան մասին, որ կը Հաստատուի Հռովմէական արժւոյն բնաջինջ բարձմամբն, դա մարմնաւոր չկարէ լինել, այլ հոգեւոր, դա հրէական աշխարհահամարի մ'առթիւ և հրէի մի ձեռքով չէ կարող գրուած լինել, այլ քրիստոնէի. միով բանիւ՝ դա փղաւեան կայսեր Դոմետիանոսի Հետ գործ շունի առանձինն, այլ Չիկնոռարական կայսերաց, որոնք եղան ռեբրիմ հալածիչ քրիստոնէից. ուրեմն, ուղղակի այդ ժամանակին պէտք է վար իջնել և ատոր մէջ որոնել տեսլեանս գլխաւոր նպատակը :

Ուստի, մենք հետեւեալ կերպով կը մեկնենք արժւոյ տեսիլը : Արժիւն՝ է Հռովմէական պետութիւնն, երկոտասան թեւերն՝ են Յուլեան 12 կայսրներն, Յուլիոս Կեսարէն մինչև Ներվաս, և ասոր յայտնի ապացոյց են 15 համարի. « Իսկ երկրորդն ի թագաւորաց առջի ժամանակս կայցի քան զերկոտասանն » . այս ինքն է Օգոստոս, որ երկրորդ է ի Յուլիոս, և ամենէն երկայն թագաւորողն եղաւ, այն է՝ 30 տարի ն. զՔրիստոս և 14 յ. Ք. = 44 :

ԺԻ գլխու 17-18 համարներն, ուր արժիւն « ոչ ի գլխոյն, այլ ի միջոյ մարմնոյն » կը խօսի, և թէ « որ ի մէջ ժամանակի այնր արքայութեան եղիցին յուզմունք ոչ սակաւք » խօսքերով կ'ակնարկուին յոռեան հարստութեան վերջն և փղառեանց սկիզբն եղող պա-

րազ միջոցն և շփոթութիւնքն. այսինքն է՝ 63-79 տարիներն, երբ Պաղեստինու մէջ պայթեցաւ Հրէից ապստամբութիւնն՝ իւր տխուր հետեանքներով, և առ տնին՝ Գաղթա, Ողոն, Վիտեղիոս և Վեսպասիանոս կը ջանային իրարու ձեռքէ կորզել կայսրութիւնը. բայց փղաւեան առաջին կայսեր՝ Տիտոս Փղաւիոս Վեսպասիանոսի ձեռքով կը նորոգուի հարստութիւնն, և ըստ տեսեանս՝ վտանգուած պետութիւնն կը «կանգնի յառաջին իշխանութեան», այն է՝ կայսրութեան մէջ: ԺԲ գլխու 20 համարի համաձայն՝ ութ աւելորդ թեւորմն ոչ թէ Հրէից պատմութեան վերաբերեալ օտար թեկնածուներ կամ Հերովդէսեանք՝ այլ ուղղակի հռովմէական արծուոյն վերաբերեալ կայսրներ կը հասկացուին, ինչպէս ցոյց կու տայ. «Յարիցենն ի նմանէ ութ թագաւորք» բացատրութիւնն: Խնդրական կը մնայ միայն այս կէտս թէ, արդեօք այդ ութ թագաւորներն, Փղաւիանոս Վեսպասիանոսէն մինչև Կոմոդոս, անընդհատ իրարու յաջորդող կայսերքն հասկնալի են, թէ ընդհակառակն: Վերջին կէտն՝ ինձ աւելի հաւանական կը թուի, ըստ որում ԺԲ գլխու 21 համարում երեք իրարմէ տարբեր միջոցք ժամանակի նշանակուած են: Ա. Փղաւեան հարստութեան սկիզբն, կամ ըստ քնազրին՝ «ի հասանել իշխանութեան», որում յիշեալ թեւերէն երկուքն կը թագաւորեն և կը կորուսին. Բ. միջին ժամանակ, յորում ըսուած է, թէ «չորքն պահեսցին». Գ. կատարած կամ վերջ հարստութեան, երբ մնացած երկու թեւերն կամ կայսերքն կու գան ի հանդէս և յետոյ կը կորուսին: Ըստ այսմ մենք կը տեսնենք, որ Փղաւեան կայսերաց հետ միացուած են նաև Չինոտորական անուանեալքն. հետեաբար, չենք սխալիր ըսել, թէ ութ աւելորդ թեւոց կամ կայսերաց կարգին և շարքին մէջ նկարուած են ոչ եթէ անպայման կերպով Փղաւեանք աւհասարակ, այլ Զինուորական կայսրներէն անոնք միայն, որոնք իրենց յարուցած տմարդի հալածանքներովն ահագին հարուած եղան ոչ եթէ Հրէից, այլ քրիստոնեայ ժողովրդոց: Եւ իրօք, ասոնց շատ լաւ կը յարմարի պատուաստեալ թեւոց նմանութիւնն, վասն զի տարբեր ծագումն ունէին բուն հռովմէական արիւնէն, բայց ըստ քնազրին ի նմանէ, այսինքն է՝ հռովմէական արծուէն կը համարուին, որովհետև յաճախ արծուէնչանը կրող հռովմայեցի զօրքէն կ'ընտրուէին և ժառանգական չէին: Նոյն գլխու 20րդ համարի. «Ուրոց եղիցին ժամանակք թեթեք և ժամք փութով» բացատրութիւնն իսկ՝ աւելի Դիոկղետիանոսի նախորդ Չինոտորական այն կայսերաց կը պատշաճի, որոնք կարճ ժամանակամիջոցում թագաւորեցին և կորեան, առանց վնասելու քրիստոնէութեան:

րաշինութիւնը կ'ակնարկեն ուղղակի. « Hanc tibi pulcram et decoram monstravit, qualem vidisti mulierem effulgentem, et fundamenta ejus (այսինքն է Երուսաղեմի) denuso extracta ». Գ. բաղադատելով տեսեանս մէջ նկարագրուած Երուսաղէմը՝ Սայեայ Կ գլխու, Բարուքայ Յայտնութեան, Զաքարիայ մարգարէութեան և Յովհաննու Յայտնութեան մէջ նկարագրուածին, այն է՝ վերին Երուսաղեմի հետ, երկուստեք ամենամեծ տարբերութիւնն յայտնապէս կը տեսնուի: Թէ Սաղաթիելի ('Ւ տեսեան) և թէ Յովհ. Յայտնութեան մէջ կին մ'է՝ որ կու գայ ի հանդէս՝ իբրև ներկայացուցիչ Սիոնի կամ Եկեղեցւոյ. առաջնոյն քով, իբրև վաղամեռիկ որդւոյ սգաւոր և այրիացեալ մայր, կ'ողբայ անմխիթար, իսկ վերջնոյն քով՝ իբրև անդրանկածին որդւոյ ծնող՝ կը ճչէ և կ'երկնէ ի ծնանելն: Ըստ առաջնոյն՝ փոխակերպուածն է ամայացեալ Սիոն լեռուն, որ վերստին փառահեղ քաղաքի մի կը վերածուի, առանց անդրագոյն գերաշխարհիկ ձրից. իսկ ի վերջնումս՝ է վշտակիր Եկեղեցին Քրիստոսի, որ յետոյ կը փոխուի յաղթականի, այսինքն է, « յաւիտեանական արքայութեան սրտոց Աստուծոյ, և անմահ գառին », յորում ամենայն հանգամանք տարբեր են երկրաւորէս: Այո՛, ըստ իս, կայ երկուքին մէջ հասարակաց նմանութիւն մի. և ինչպէս Յովհ. Յայտնութեանն՝ իբրև հիմն և սկզբնական աղբիւր ծառայած են Զաքարիա և Դանիէլ, այսպէս և Յովհ. Յատնութիւնն ծանօթ ըլլալու էր Եզրի գրոց խմբագրին, որուն կը վերաբերին բաց ի վերը նշանակուածներէն, նոյնպէս և 57 և 55 համարներն, որք կրկնութիւնք են Զ գլխու 30 և 33 համարներուն և դիտմամբ տեսեանս մէջ ներմուծուած են. հետեւաբար, հաւանական է՝ որ Սաղաթիելի այս տեսեանս իսկ՝ ուրեք ուրեք գերբնական գոյն տուողն նա՛ եղած ըլլայ:

Հուսկ ի վերջոյ, կարևոր կը համարիմ ուղղել վերը ասորի բնագրէն մէջ բերուած տեղեաց մի քանի անճշգուծիւնքը, որոնք զարտուղելու պատճառ եղան Կապիշի: Դիտել կու տանք նախ, որ ժ գլխու 45 համարի « in saeculo » բացատրութիւնն՝ ըստ հայերէն խմբագրութեան « յայսմ աշխարհի » ἄλων οὐτος պէտք է հասկանալ և ոչ թէ ἄλων ἕxελvos. ք. Aedificavit Salomon civitatem բացատրութիւնն՝ խանգարուած է յայտնապէս, վասն զի Սողոմոն ոչ թէ Երուսաղէմ քաղաքին, այլ տաճարին միայն հիմնադիր եղած է. հետեւաբար, հայկական և արաբական խմբագրութեանց համաձայն՝ կարգալու է այն. « Սողոմոն շինեաց և զտաճարն »: Գ. Et

obtulit in ea, ասորին միայն ունի, որ Երուսաղէմ քաղաքը կը յարարերէ. իսկ ըստ Հայերենին և արարականին՝ ուղղելի է « ի նմա » = in eo, այսինքն է ի տաճարին :

ՀինԳԵՐՈՐԻ ՏԵՍԻԼՆ՝ անսովոր կերպով մի կը սկսի, որ միայն իրեն յատուկ է, քան թէ ընդհանուր գրուածին : Այս տեղ՝ չկայ բնաւ յիշատակ Սաղաթիելի եօթնօրեայ պահոց, չկան անոր սովորաբար առանձնախօսութիւնքն՝ Իսրայելի կամ Երուսաղեմի մասին : Կեղծ Ուրիէլ՝ նախընթաց տեսիլը կնքելէն անմիջապէս վերջ, այս տեսլեանս կը պատրաստէ զՍաղաթիէլ, պատուիրելով 58-59 համարում. « Մնա՛ դու աստ՝ զվաղուեան գիշերն, և ցուցից քեզ որչափ Բարձրեալն ի տեսիլ երազոյ ցուցցէ քեզ, որ լինելոցն իցէ ի վերայ բնակչաց երկրի առաջս վախճանի » :

Արդ, տեսանողին մտքէն չանցած և աղօթիւք չխնդրած այս անակնկալս, այսինքն է՝ ԺԱ գլխու 1 համարով, — որ կը յաջորդէ նախընթացի 60 համարին, — անմիջապէս Ե տեսլեան փոխուիլն, այսպէս. « Եւ եղև յերկրորդումս գիշերին՝ ահա ելանէր ի ծովէ արծուի », և այլն, շատ կասկածելի է և պէսպէս դժուարութեանց կը բաղխի, որոց մէջ պահուած խոր լուծեան՝ կը յաջորդեն բնականաբար քննադատական այս հարցերս. Ո՞րն է արդեօք « աստ » բառով արտայայտուած տեղին, ուր երկիցս կը գիշերօթէ տեսանողն. Ի տեսլեան Արդար դաճտն, թէ նախընթաց երեք տեսիլներուն թատր եղող Բարբելոնն, կամ բոլորովին մի ուրիշ տեղի : Առաջինը չկարէ լինել, վասն զի այս հնարուած է միայն, ինչպէս տեսանք, իբրև Հիմն ծառայելու վերականգնելիք Երուսաղեմին, որոյ մասին իւր խօսքը աւարտեց Հեղինակս Ի տեսլեամբը : Չկարէ լինել նաև Բարբելոն, վասն զի նկարագրելիք տեսլեանս նիւթն չունի, ինչպէս պիտի տեսնենք, որ և է վերաբերութիւն Բարբելոնի կամ այն ժամանակի դիպաց հետ : Հայկական խմբագրութիւնն՝ Ժ գլխու 60-րդ համարի հետևեալ նշանաւոր տարբերութեամբ. « Եւ մտի ի տուն գերկոսս գիշերս, որպէս և հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն », ըստ բաւականին կը պարզէ այդ մթութիւնը, որով մենք կը տեսնենք 58 և 60 համարներու մէջ երեցող խոշոր հակասութիւնը : Ես չեմ կարծեր, որ այսպիսի մի տարբերութիւն դիպուածով սպրդած լինի հայկական թարգմանութեան մէջ, այլ, կամ այն է թէ թարգմանիչն այսպէս գտած էր նաև Հին բնագրին մէջ, և կամ յարմար չդատելով աստ բառը վերաբերել գաշտին, ի տան փոխած է զայն : Յամենայն դէպս, կը հետևի, թէ ոչ միայն տեսլեանս նախընթաց,

այն է 51-58 համարներն՝ եկամուտ նախադասութիւններով խար-
դախուած են, այլ թէ նոյն իսկ ժ գլխու 60 և ժԱ գլխու 1 հա-
մարներուն մէջտեղ եղած ըլլալու էր և մի ուրիշ հատուած, որ պա-
րունակէր Սաղաթիելի առանձնախօսութիւն մի՝ կատարուելիք յայտ-
նութեան մասին, որ ապա յոյն խմբագրի կողմէն դուրս թողուած
է դիտմամբ:

Տեսլեանս գլխաւոր նիւթն է՝ նախ հռովմէական պետութեան
բռնակալութիւնն, գործած անօրէնութիւնքն և ապա Մեսիայի ձեռ-
քով անոր վերայ տարած աստուածային յաղթանակն, զոր նկարա-
գրած է անծանօթն՝ այլաբանական ձևոց ներքև: Այս բանս՝ յայտնի
կը տեսնուի ժԲ գլխու 11 և 32 համարներում, Արիելի բերանը
դրուած մեկնութենէն, ուր կ'ըսուի. « Արժոռիկ, որ ելանէր ի ծո-
վէն, չորրորդ քազառորտաբիւնն է, որ յայտնեցաւ եղբոր քում Գա-
նիելի: Առիձն, որ խօսէր ընդ արձուոյն և յանդիմանէր զանիրաւու-
թիւնս նորա, ևս է Օժեալն՝ զոր առաքեսցէ Բարձրեալն ի ժամանակս
վահաձանի յագգէ Դաւթի »:

Այս և ուրիշ բացայայտ վկայութիւններ, որք կը տրուին Մե-
սիայի աստուածութեան վերայ այս տեսլեանս մէջ, ամենամեծ կա-
րևորութիւն պիտի ունենային քրիստոնէութեան պատմութեան նը-
կատմամբ, եթէ ստուգիւ Քրիստոսէ յառաջ ապրող հրէի մի մտքէն
և գրչէն ելած լինին, այն է Սաղաթիելի. սակայն, դժուար է որ
այդ այդպէս եղած լինի, դիտելով որ նախընթաց տեսիլներում,
այսինքն է Ե, Զ, Է գլուխներում, արդէն կրկին և կրկին դարձաւ
նա վերջին ժամանակները հեթանոսաց տիրապետութեան նկատմամբ
կատարուելիք նշանաց, Օժեւոյն երկրաւոր թագաւորութեան և վեր-
ջին գալստեան վերայ, և ինչ որ պէտք էր ըսել՝ ըսաւ, և անոր ա-
սածներն ուղղակի շրջից դերութեան վերաբերելով՝ մեզ վստահու-
թիւն կը ներշնչէին: Իսկ այս տեսլեանս մէջ յայտնուած գաղա-
փարներն և նկարագիրքն՝ թէ պատմականօրէն և թէ վարդապետա-
կան տեսակետով բոլորովին տարբեր բնաւորութիւն ունին. այսինքն
է, սորա հեղինակի բուն նպատակն է՝ ոչ թէ Ասորեստանեայց կամ
Պարսից՝ շրջից դէմ, այլ ընդհակառակն փրկչական թուականէն մի
դար յառաջ և վերջ հռովմէական արժուոյն՝ նախ ընդհանուր արևելքի
և ապա քրիստոնէութեան դէմ գործած հալածանքները տես-
րանի վերայ առնուլ, և յետ այնորիկ քրիստոնէութեան ձեռքով
կրած նորա պարտութիւնն և կործանումը: Աս՝ աւելի աշխարհա-
քաղաքացի՝ քան թէ հրեայ, աւելի շատագով լինելով քան պատ-

միջ՝ պատմական անձինքն և անցքերն իսկ քողարկած է, և ամենայն ինչ կրօնական երկու տեսակետի վերածած. այսինքն են՝ հեթանոսաբխան և Մեսիականաբխան, մին՝ աշխարհական և միւսն՝ հոգեոր և աստուածային զօրութեամբ զինաւորուած :

Տեսիլս՝ Իանիելի մարգարէութեան է զլիտյն վերայ յօրինուած է՝ ըստ Հիման և ըստ գաղափարին. բայց անոր պարագաներն և աղբիւրներն՝ բոլորովին անկէց տարբեր են և նոր : Ստուգիւ, այս երկու կէտերս իսկ՝ մէկէն ի մէկ կը տեսնուին, 11 համարում, Ուրիելի բերանը դրուած այս խօսքերէս. « Արծուին՝ որ ելանէր ի ծովէն՝ չորրորդ թագաւորութիւնն է, որ յայտնեցաւ եղբոր քոսմ Դանիելի, այլ ոչ յայտնեցաւ նմա այսպէս, որպէս ես յայտնեմ քեզ » :

Հեղինակս՝ ինքզինքը Իանիելի « եղբայրակից » , այսինքն է՝ ազգակից կ'անուանէ. և այս կարելի է, եթէ ժԲ գլխու 34 համարում արտայայտուած՝ « Եւ գմնացեալս ժողովրդեան նորա փրկեսցէ զթութեամբ » և այլ խօսքերով՝ հրէական ժողովուրդը կ'ակնարկէ, ըստ Խ. Կապիչի : Սակայն, իմ կարծիքով՝ այդ ազգակցութիւնն՝ Իանիելի յիշեալ զլիտյն և իւր տեսիւնն պարզ նմանողութեան մէջ կայացած է, քան թէ յայլ ինչ : Դարձեալ, ստոյգ է և այն յայտարարութիւնն, թէ Իանիելէն տարբեր յայտնութիւններ պիտի ընէր, վասն զի ընդհանուրէն՝ անոր մասնականին պիտի անցնէր, հեռաւորէն՝ մերձաւորին, և զուշակութիւններէն՝ պատմական կերպով արդէն կատարուած մեծ յեղափոխութեան : Եւ իրօք, նա արժւոյն 3 զլիտց, 12 թևոց և 8 աւելորդ կամ ստորակայ թևերու այլաբանական նկարագրով՝ կը ներկայացնէ մեզ այն ինչ, զոր ի զուր է որոնել Իանիելի քով. այսինքն են՝ Կեսարէն սկսեալ մինչև վերջին հեթանոս կայսրը, մանաւանդ թէ կայսերական իշխանութեան ներքոյ բռնաբարող թագաւորաց իսկ արարուածքը, քրիստոնէից դէմ յարուցած հալածանքով և արիւնհեղութիւններով հանդերձ : Սյս խիստ յայտնի պարագաներս, որոնց նա ինքն, հաւանորէն, ոչ միայն ականջալուր, այլ և ականատես եղած էր՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ՝ Հրէից մասին պահած լռութիւնն և կայսերաց հպատակ հեթանոս ժողովրդեան մի մասին՝ Մեսիայի ձեռքով փրկուիլն և հովմէական սահմանաց վերայ անդորր ապրիլն մինչև ցերկորդ գալուատը ցոյց կու տան մեզ, թէ նա՝ կամ քրիստոնէութեան հաստատուելէն և հեթանոսաց մի մասի դարձէն վերջ ապրող քրիստոնէացած հրեայ մ'էր, և կամ քրիստոնէայ մէկն յետոյ այն գրուածին մէջ ձեռք խառնելով՝ այն կերպարանքը տուած է :

Այս տեսլեանս՝ միւսներէն ունեցած մեծ զանազանութիւնն ընդունեցան նաև Կապիշ և Գըֆրէորէր: Գիտնականներէս առաջնոյն կարծիքով՝ տեսլեանս Հեղինակն տարբեր ոմն է ոչ միայն Սզրէն և Սաղաթիւիէն, այլ նոյն իսկ զանոնք ի մի խմբագրողէն, այնու զի վերջինս՝ ոչ հրեայ է և ոչ քրիստոնեայ, այլ հեթանոս մէկն, մինչդեռ Ա (Արծուի) աղբիւրն՝ է նախանձայոյզ հրեայ մի, հին գաղափարներով և սովորութեամբք տոգորեալ: Սակայն, մենք քննելով գիտնականիս 95 իջում և ուրիշ տեղ մէջ բերուած կռուանները, ոչ միայն խախուտ կը գտնենք զանոնք, այլ նոյն իսկ այլուր անոր ըրած դիտողութեանցը հակասող. հետևաբար, ըստ մեզ՝ ոչ առաջին երկու աղբերքը խմբագրողն հեթանոս մէկն կարող է լինել և ոչ այլ տեսլեանս Հեղինակն՝ անկէց բոլորովին տարբեր մի անձն, այլ մի և նոյն, և կրօնիք իսկ քրիստոնեայ. վասն զի մի և նոյն ատելութիւնն կը տեսնուի, երկուքին ընծայուած հատուածոց մէջ իսկ՝ հեթանոսաց դէմ, և մի և նոյն համակրութիւնն առ հաւատացեալս Օծելոյն կամ մարդդակերպ կենդանւոյն քով ժողովեալ հօտին նկատմամբ: Ուղիղ չէ Կապիշի նաև այս գիտողութիւնս, այսինքն թէ տեսլեանս Հեղինակն՝ ինչպէս արծույ այլբարանութեամբ՝ հռովմէական պետութիւնը, այսպէս այլ առիւծի նկարագրով՝ Հրէից աշխարհական թագաւորութեան վերջնական յաղթանակն ուզած ըլլայ ներկայացնել: Սակայն, ինչպէս դիւրաւ կարեն տեսնել ընթերցողք, 31-34 համարներում՝ բառ մ'անգամ չկայ յայտարարող աշխարհական թագաւորութեան, այլ ամենայն ինչ Քրիստոսի մարմնաւոր կերպով աշխարհ գալը ցոյց կուտայ մեզ, համաձայն Յովհ. Յայտնութեան, ուր Քրիստոս նոյնպէս յագգէ Գառթի անուանուած է:

Տեսլեանս բազմակնճիռն հանգուցին հետ՝ անոր աղբեր ժամանակն ևս մերձաւորապէս որոշելու համար՝ պէտք էր մանրամասնաբար վերլուծել զայն. սակայն, այս՝ շատ հեռու կը տանէր զմեզ. ուստի, մենք՝ ըստ կարելւոյն՝ յէականս պիտի համառօտենք մեր սահմանը: Երկու նշանաւոր մեկնութիւններ տրուած են ծովէն ելնող արծուոյն, անոր թևոց և գլուխներուն. որոց միոյն ներկայացուցիչք են Իլիման և Ֆոլկմար, իսկ միւրոյն՝ Կապիշ և Գըֆրէորէր: Առաջինն՝ աւելի ժամանակագրական հիմուն վերայ հաստատուած է. իսկ երկրորդն՝ աստուածաբանական և մեկնաբանական: Գիլման նկատելով որ, ինչպէս բնական արծիւն՝ այսպէս և հռովմէական պետութիւնը ներկայացնողն՝ ոչ թէ մէկ, այլ երկու թևօք միայն կարող է թռչել. հետևաբար, եզրակացոյց թէ տեսլեանս մէջ յիշուած

արժւոյն 12 թւերը զոյգ զոյգ առնելով 7 կայսերք հաշուելու է, և ոչ եթէ 12. և այս կայսերքս են Յուլիանք, այսինքն է՝ Յուլ. Կեսարէն սկսեալ մինչև Ներոն: Ութ աւելորդ թւքն՝ ըլլալու են (նոյն հաշուով) երեք Զինուորական կայսերքն, այսինքն են Գաղթա, Որոն, Վիտելիոս և անոր նախորդն Ներոսա՝ ընկերակցութեամբ Դոմետիանոսի: Իսկ երեք գլուխներն՝ են Փրոքսէսանք, — որ Տիտոս Փղուսիոս Վեսպասիանոսով կը սկսի և կը վարի յառաջ:

Ուիշ. Կապիշ անյարմարութիւններ նկատելով Դիւմանի և Յուլիանորի այս դրութեան մէջ, ինքն՝ Փրօքրէորերի Համաձայն մեկնեց զայն. այսինքն, նա կ'ընդունի թէ 3 գլուխներն՝ են ստուգիւ փրոքսէսանք, բայց 12 թւերն առանձին առամար՝ Կեսարին յաջորդող նոյնաթիւ կայսերքը կը նշանակեն. դիտելով սակայն, որ սոցա մէջ եղան ոմանք, ինչպէս Փաղթա, Ոթոն և Վիտելիոս, որոց թագաւորութիւնն եղաւ սակաւօրեայ, և այլք՝ որք միայն ձկտեցան թագաւորել՝ բայց չի հասնելով թագաւորութեան, լոկ թեկնածուք անուանեցան կամ յափշտակողք, որպիսիք են ըստ Փրօքրէորերի՝ Վինգիլիոս, Նիմփիդիոս և Պիսոն Լիկինիոս: Աւելորդ 8 թւերով հոռվմեական կայսերք չեն հասկցուիր, այլ անոնց ստորակարգեալ օտար իշխեցողներ, որոնք այն ժամանակի պատմութեան վերաբերեալ հրէաստանի թեկնածու իշխաններ նկատելի են:

Չնայելով որ այս դրութիւնքս իրարու հակառակ են, սակայն և այնպէս նոցա հեղինակներն՝ գրեթէ փոքր ի շատէ մի և նոյն եզրակացութեան յանգեցան՝ նկատմամբ տեսլեանս գրութեան ժամանակին. այսինքն է Դոմետիանոս կայսեր ժամանակ, որ է՝ յամի Տեառն 90 գրուած: Նոցա իրարմէ ունեցած տարբերութիւնն այս է, որ ըստ Դիւմանի՝ յոյն խմբագրողի ձեռքով գրուած է առաջին անգամ տեսիլս, և ներմուծուած Սաղաթիելի գրութեան մէջ. իսկ ըստ Կապիշի՝ նախանձայոյզ հրէի մի ձեռքով, որ թշնամի էր հրոզմէական իշխանութեան և պաշտպան Իսրայելի կրօնական շահերուն և անկախութեան. հետևաբար, յոյն խմբագիրն՝ զայն այնպէս գտած էր տեղ մի, և ոչ եթէ յօրինած: Կապիշի դրութիւնն ըստ իմիք աւելի հիմնաւոր է, ըստ որում՝ արժւոյն թւերը առանձինն մի մի կայսեր պատշաճեցուցած է. այս մասին ըսելիք չկայ: Բայց ստորակարգեալ թւոց և երեք գլուխներուն տուած անոր մեկնութեանց մէջ՝ թէ՛ Կապիշ և թէ՛ Դիւման գոհացուցիչ չեն. որովհետև երկուստեք Փղուսեան կայսերաց սահմանն որոշուած չէ. այսինքն թէ, բնագրի « գլուխք երեք » բացատրութեամբն՝ երեք կայ-

սերք կամ եռապետք հասկանալի են, թէ ընդհակառակ երեք հարըստութեանց պատկանող 15-23 կայսերք, որոց թագաւորութիւնն կը հասնի մինչև փրկչական թուականի Գ դարը: Այս վերջին կէտս Դիլմանի տեսութենէն վրիպած չէ, ստոյգ է, բայց դժուար էր՝ որ նա կարենար միաբանել զայն՝ յոյն խմբագրին համար իւր վերջ գծած ժամանակին հետ: Իսկ Կապիչ՝ առարկելով հակառակ Դիլմանի, Գ դարու սկիզբն եղած քրիստոնէական յաւելուած մի կը համարի զայն: Յամենայն դէպս, Կայսերաց ժամանակին վերաբերեալ անորոշ — մեկնութենէ մի՝ տեսլեանս գրութեան որոշ ժամանակը գծող տարեթիւն՝ դեռ ստոյգ չէ կարելի համարել: Ստոյգ չէ, դարձեալ, մեզ համար, որ յոյն խմբագրին՝ Դոմեստիանոս կայսեր ժամանակ ապրած և գրած ըլլայ, և կամ կայսերաց վերաբերեալ մասը միայն, — ինչպէս Կապիչ ենթադրած է, — Գ դարուն սկիզբը ներմուծուած ըլլայ: Ուստի, իմ կարծիքով՝ ամբողջ տեսիլն ինքնին չէր կարող քրիստոնէական թուականին Գ դարէն յառաջ գրուած լինել. և թէ կանխաւ ըրած մեր դիտողութեանց համեմատ՝ նախանձայնոյզ հրեայ մի չէ տեսլեանս հեղինակն, այլ կայսերաց հալածանքներէն նոր ազատուած և քրիստոնէութեան բերած խաղաղութիւնը տեսնող քրիստոնեայ մէկն, և քրիստոնէական ձկտումով գրած է զայն: Իսկ կարող է լինել նոյն ինքն յոյն խմբագրին¹, եթէ նկատենք, որ նա այնքան հին չկարէր լինել, որքան ենթադրած են Դիլման և Կապիչ. այսինքն է յամին 90, և ոչ այլ հեթանոս, զի հեթանոսի մի համար բնաւ նշանակութիւն չունէր՝ ձեռք զարնել Հրէից պատմութեան կամ քրիստոնէութեան վերաբերեալ նիւթի մի, և հեթանոսաց հակառակ լեզու մի գործածել անոր մէջ: Ապացուցանելք այժմ այդ եղելութիւնքը թէ արտաքին և թէ ներքին փաստերով:

Ինչպէս մեր տեսլեանն՝ այսպէս և Յովհաննու Յայտնութեան ժԳ և ժԷ գլխոց մէջ նկարագրուածին իբրև հիմն ծառայած է, անտարակոյս, Դանիելի մարգարէութեան Է գլուխն, ուր չորրորդ պազանին տրուած են տասն եղջիւրք, յորմէ ապա կը յառնէ միւս այլ², որուն

1. Թերևս առարկուի, թէ յոյն խմբագրին ինչպէս կարէր Գ դարում ազրող մէկը լինել, քանի որ Բ դարուն Կղեմէս Աղեքսանդրացւոյ քով (Stromat. III, 16) Եզրի անկանոն զորոց Ե գլխու 33 համարն մէջ բերուած է, որուն բառ առ բառ կը համաձայնին ըստը թարգմանութիւններն: Սակայն, այս առարկութեան՝ անզոր է, ըստ իս, քանի որ ապացուցուած չէ գլխովին, թէ Կղեմեսի գործածածն՝ Եզրի յունարէն խմբագրութիւնն էր. կարող էր զա նոյն իսկ եբրայական սկզբնազերն լինել: Բ. Կղեմեսի քով եղած տեղին՝ մեր տեսլեան հետ վերաբերութիւն չունի:

2. Sicut a. a. O. s. 363 ff. 385 ff.

համար կ'ըսուի, թէ « Առաւել իցէ շարեօք քան զամենայն առաւլինսն, և զերիս թագաւորս խոնարհեցուցէ » . օսկայն Յայտնութեան հեղինակն՝ նոյնը պահելով իւր բնագրի եղջերաց, այն է՝ թագաւորաց թիւը, ահագին կերպարանափոխութիւն մի ըրած է չորրորդ գագաւնի նկարագրին մէջ, իւր ժամանակի հռովմէական պետութեան կացութեանը և իր դրած նպատակին համեմատ : Այո՛, այդ գագաւնին մէջ անձնաւորած է նա (ԺԳ. Չ) Դանիելի չորս գագաւնները, այսինքն են՝ վիշապն, ինձն, առիւծն և արջն, ըստ որում նա իրեն իւրացուցած էր իւր նախորդ չորս թագաւորութիւնները : Կարմիր է նա՛ արբեալ սրբոց արիւնով, կարմիր դպեցած է նաև անոր վրայ նստող կինն . այսինքն է քաղաքն մեծ (Հռովմ), որ լուաց իւր պատմութեանը բիւրաւոր մարտիրոսաց անմեղ արիւնով : Էջօթն զլուսններն՝ են ծանօթ եօթն բլուրներն, որոց վերայ շինուած էր, և այն « քաղաքառք եօթն » . տասն եղջիւրքն՝ « տասն թագաւորք, որոց չև ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն նոքա զիշխանութիւն ընդ գագաւնին », որուն պատերազմն է Գառին դէմ, որ երկու եղջիւր ունի, և Գառն է որ կը յաղթէ անոնց, վասն զի « Տէր է նոցա և թագաւոր թագաւորաց » և այլն : Սպիտտա՛ արդէն ապացուցած է, թէ Յայտնութեան եօթնազխեան գագաւնն՝ ի դէմս Կալիգուլայի հնարուած է, որ կը յաջորդէ եօթներորդ թագաւորին . մանաւանդ թէ ըստ կարծեաց գիտնականնրո՛ւ անկէ ստեղծուած են հռովմէական եօթն կայսերքն (որիչ ի տասանց), որոց յիշատակութիւն չկայ Դանիելի քով . այսպէս նաև 616 թուէն շինուած է թիւս 666 : Արդ, եթէ փրկչական թուականին 90 ամին գրուելով Յայտնութիւնն՝ այսքան փոփոխութիւն կրեց, և այդ փոփոխութիւնքն արդիւնք են ժամանակին և պարագայից, ուրեմն նոյնը պէտք ենք խորհել նաև յզրի Ծ տեսչեան նկատմամբ, որ Յայտնութեան հետ ունեցած առընչութեամբ հանդերձ՝ ուրիշ նորութիւններ ևս ցոյց կու տայ մեզ, որոնք անկէց շատ վերջ հանդիպած ըլլալու էին . և այդ նորութիւններն ոչ եթէ մասնական տեղեաց, ինչպէս կարծեց Ռ. Կապիշ, այլ բոլոր տեսչեան մէջ կայացած են . հետևաբար, այդ հանգոյցը լուծել պէտք է, և ոչ թէ կտրելով անցնել :

Նախ և առաջ, տեսչեանս հեղինակն՝ Դանիելի Եօթներորդներէն գիտէր, թէ Քրիստոսէ յառաջ արդէն դադարած էր Հրէից թագաւորութիւնն՝ ի տանէն Յուդայ և քահանայութիւնն՝ ի ցեղէն Ղևեայ . թէ քիչ ատենէն պիտի գար պղծութիւն աւերածոյն տաճարին վերայ, և անոր յաջորդէր Բարձրելոյն հոգևոր արքայութիւնն, ըստ

Դանիելի « արքայութիւն յաւիտեանական և ամենայն իշխանութիւնք նմա ծառայեսցեն և Հնազանդեսցին » : Գիտէր նա արտաքին պատմագրութենէ ապացուցած, թէ նոր թուականէն յառաջ իրօք ժողովեցան Հրեայք յերուսաղէմ և սկսան հաստատել տեսակ մի իշխանութիւն, սակայն այս եղաւ Կեսարու և Օգոստոս կայսեր գերիշխանութեան ներքեւ, և ոչ թէ Մեսիայի ձեռքով կատարուած յաղթութեամբ և կամ հռովմէական արժւոյն բնաջինջ բարձմամբ, որ շեշտուած է տեսլեանս մէջ : Գիտէր թէ Հերովդէսեանք իսկ՝ ոչ այլ ինչ էին, բայց եթէ ազգապետք և չորրորդապետք՝ Հռովմայեցւոց գերիշխանութեան ներքեւ. և այս՝ Արքեղայոսի պատմութենէն իսկ յայտնի է, որ թեկն ածելով անկախ թագաւորութեան՝ մէկէն ի մէկ ի Հռովմ կանչուեցաւ և աքսորուեցաւ ի Վիեննա Գաղղիացւոց, և այնուհետեւ Հռովմայեցւոց կողմէն դրուած Դատաւորներով կը կառավարուէր Հրէաստան : Իսկ փղաւեան կայսերաց ժամանակ՝ Երուսաղէմ ի հիմանց կործանուեցաւ և արօրադրեցաւ, և Հրեայք ցրուեցան ի սփիւռս հեթանոսաց, առանց մարմնաւոր և հոգեւոր իշխանութեան : Ուրեմն, այս ամէն բանով հանդերձ՝ երբ տեսլեանս հեղինակն կը պնդէ դարձեալ արդարութեան և խաղաղութեան և փրկութեան բերող թագաւորութեան մասին, որ կը հաստատուի Հռովմէական արժւոյն բնաջինջ բարձմամբն, դա մարմնաւոր չկարէ լինել, այլ հոգեւոր, դա հրէական աշխարհահամարի մ'առթիւ և հրէի մի ձեռքով չէ կարող գրուած լինել, այլ քրիստոնէի. միով բանիւ՝ դա փղաւեան կայսեր Դոմետիանոսի հետ գործչունի առանձինն, այլ Չինոռարական կայսերաց, որոնք եղան ոխերիմ հալածիչ քրիստոնէից. ուրեմն, ուղղակի այդ ժամանակին պէտք է վար իջնել և ասոր մէջ որոնել տեսլեանս գլխաւոր նպատակը :

Ուստի, մենք հետեւեալ կերպով կը մեկնենք արժւոյ տեսիլը : Արծիւն՝ է Հռովմէական պետութիւնն, երկոտասան թեւերն՝ են Յուլեան 12 կայսրներն, Յուլիոս Կեսարէն մինչև Ներվաս, և ասոր յայտնի ապացոյց են 15 համարի. « Իսկ երկրորդն ի թագաւորաց աշխի ծառանակս կայցի քան գերկոտասանն » . այս ինքն է Օգոստոս, որ երկրորդ է ի Յուլեայ, և ամենէն երկայն թագաւորողն եղաւ, այն է՝ 30 տարի ն. գՔրիստոս և 14 յ. Ք. = 44 :

ԺԲ գլխու 17-18 համարներն, ուր արծիւն « ոչ ի գլխոյն, այլ ի միջոյ մարմնոյն » կը խօսի, և թէ « որ ի մէջ ժամանակի այնր արքայութեան եղիցին յուզմունք ոչ սակաւք » խօսքերով կ'ակնարկուին յոչեան հարստութեան վերջն և փոշաշեանց սկիզբն եղող պա-

բազ միջոցն և շփոթութիւնքն. այսինքն է՝ 63-79 տարիներն, երբ Պաղեստինու մէջ պայթեցաւ Հրէից ապստամբութիւնն՝ իւր տխուր հետեանքներով, և առ տնին՝ Գաղբա, Ողոն, Վիտեղիոս և Վեսպասիանոս կը ջանային իրարու ձեռքէ կորզել կայսրութիւնը. բայց փղաւեան առաջին կայսեր՝ Տիտոս Փղաւիոս Վեսպասիանոսի ձեռքով կը նորոգուի հարստութիւնն, և ըստ տեսիւնս՝ վտանգուած պետութիւնն կը «կանգնի յառաջին իշխանութեան», այն է՝ կայսրութեան մէջ: ԺԲ գլխու 20 համարի համաձայն՝ ութ աւելորդ թեւերով՝ ոչ թէ Հրէից պատմութեան վերաբերեալ օտար թեկնածուներ կամ Հերովդէսեանք՝ այլ ուղղակի հռովմէական արծուոյն վերաբերեալ կայսրներ կը հասկացուին, ինչպէս ցոյց կու տայ. «Յարիցեն ի նեանէ ութ թագաւորք» բացատրութիւնն: Խնդրական կը մնայ միայն այս կէտս թէ, արդեօք այդ ութ թագաւորներն, Փղաւիանոս Վեսպասիանոսէն մինչև Կոմոդոս, անընդհատ իրարու յաջորդող կայսերքն հասկնալի են, թէ ընդհակառակն: Վերջին կէտն՝ ինձ աւելի հաւանական կը թուի, ըստ որում ԺԲ գլխու 21 համարում երեք իրարմէ տարբեր միջոցք ժամանակի նշանակուած են: Ա. Փղաւեան հարստութեան սկիզբն, կամ ըստ բնագրին՝ «ի հասանել իշխանութեան», որում յիշեալ թեւերէն երկուքն կը թագաւորեն և կը կորսուին. ք. միջին ժամանակ, յորում ըսուած է, թէ «չորքն պահեցին». գ. կատարած կամ վերջ հարստութեան, երբ մնացած երկու թեւերն կամ կայսերքն կու գան ի հանդէս և յետոյ կը կորսուին: Ըստ այսմ մենք կը տեսնենք, որ Փղաւեան կայսերաց հետ միացուած են նաև Չինոռոսական անուանեալքն. հետևաբար, չենք սխալիր ըսել, թէ ութ աւելորդ թեւոց կամ կայսերաց կարգին և շարքին մէջ նկարուած են ոչ եթէ անպայման կերպով Փղաւեանք առհասարակ, այլ Չինոռոսական կայսրներէն անոնք միայն, որոնք իրենց յարուցած տմարդի հալածանքներովն ահագին հարուած եղան ոչ եթէ Հրէից, այլ քրիստոնեայ ժողովրդոց: Եւ իրօք, ասոնց շատ լաւ կը յարմարի պատուաստեալ թեւոց նմանութիւնն, վասն զի տարբեր ծագումն ունէին բուն հռովմէական արիւնէն, բայց ըստ բնագրին ի նեանէ, այսինքն է՝ հռովմէական արծուէն կը համարուին, որովհետև յաճախ արծուէնչանը կրող հռովմայեցի գօրքէն կ'ընտրուէին և ժառանգական չէին: Նոյն գլխու 20րդ համարի. «Ուրոց եղիցին ժամանակք թեթևք և ժամք փութով» բացատրութիւնն իսկ՝ աւելի Դիոկղետիանոսի նախորդ Չինոռոսական այն կայսերաց կը պատշաճի, որոնք կարճ ժամանակամիջոցում թագաւորեցին և կորեան, առանց վնասելու քրիստոնէութեան:

22-23 համարներն, ուր արժուի 3 գլուխներուն իբրև մեկնութիւն կը յիշուին իրարմէ անկախ երեք թագաւորներ, որոնք կը յուզեն բոլոր արևելքն և արևմուտքը իրենց գործած անօրէնութիւններով, սերտիւ միացած են Զինուորական կայսերաց իշխանութեան վերջին ժամանակի մասին աւանդածին հետ, ինչպէս ցոյց կու տան բնագրի « ի վախճանի նորա » խօսքերն: Այս, ժԲ գլխու 25 համարի համաձայն՝ հռովմէական արժույ տիրապետութիւնն արդէն երեքի բաժնուած կը նկատուի. և այդ երեք գլուխքն են, ըստ իս, Քաղերիոս, Մաքսիմիանոս և Սևերոս: 26 համարին մէջ առանձնաբար շեշտուած մեծ գրոյթն, որ կը « մեռանի շարչարանօք », այսինքն է՝ եղիփանդական ախտիւ որդնտած, չէ բարեբարոյն Դիոկղետիանոս, այլ բուն հեղինակ ամենայն շարեաց Քաղերիոս. այս յայտնի է նաև Եւսեբրիոս Կեսարացւոյ Եկ. Պատմութեան: Իսկ միւս երկուքն, որոնք սրով կը մեռնին և անոնց հետ կը կորնչի նաև գլուխն, այդու հասկանալի է Մաքսիմիանոսի և Մաքսիմոսի մահը, ընդ որս և Դիոկղետիանոսին, զոր լաւ կերպով նկարագրած է Լակտանտիոս՝ իւր De morte persecutorum կոչուած երկասիրութեան մէջ: Նոյն գլխու 27 համարում յիշուած երկու աւելորդ թւերն, զորս հեղինակն « ի յաջակողմն կոյս գլխոյն », այն է արժուոյն, փոխուած և « ի վախճանի նորա », այսինքն է՝ հեթանոս Հռովմայ իշխանութեան, պահուած կը նկատէ, են Մաքսենտիոս և Լիկինիոս, որոնք Կոստանդիանոսի ձեռքով հասուցած մահուամբ՝ Բարձրեալն կը « կորուսանէ զնա », այսինքն է արժիւն: Իսկ Օծելոյն, այսինքն է Քրիստոսի Տեառն մերոյ թագաւորութիւնն, որ ի սկզբանէ ցվերլ տեսչեանս ներկայացուած է իբրև հակապատկեր մի հռովմէական թագաւորութեան, կը տիրէ վերջապէս արդարութեամբ աշխարհիս վերայ, բերելով փրկութիւն, ուրախութիւն և խաղաղութիւն հալածանքներէն նեղուած և աստուածապաշտ ժողովրդոց: Այս թագաւորութիւնս՝ մի միայն Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն համար հասկանալի է, վասն զի անոր թագաւորել կը տրուի « մինչև եկեսցէ վախճան դատաստանի », այսինքն է՝ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստն, համաձայն Դանիելի և Յովհաննու Յայտնութեան:

Արդ, բնագրին և արտաքին պատմագրութեան համաձայն տուած մեր այս մեկնութեամբս՝ կը վերցուին այլ ամենայն տարակոյսք, և մենք կարող ենք եզրակացնել վստահութեամբ, զոր յառաջագոսն ենթադրեցինք ի սկզբան. այսինքն թէ, տեսիլս՝ Սաղաթիելի կամ մի այլ հրէի հետ գործ չունի, այլ յետոյ յօրինուած և ներմու.

ծուած¹ է Եզրի անկանոն գրոց մէջ: Այս բանս կատարուած է Հաւանորէն Դ դարու առաջին քառորդին, Մեծին Կոստանդիանոսի յաղթութենէն և բարենորոգութենէն անմիջապէս վերջ, այն է՝ 313-324 ամաց մէջ:

Տեսիլս՝ Համեմատութեամբ Ենովքայ Տեսչեան շատ աւելի հին է սուուգիւ, և անոր իրրև աղբիւր ծառայած: Յիրաւի, վերջնոյս անծանօթ Հեղինակն՝ քրիստոնեայ Հռովմի արծույ նկարագիրը առաջինէն փոխ առած է, այնպիսի պարագաներով, որով ամէն տարակոյս կը փարատի. այսինքն է՝ նա Հռովմէական արծուեզրօշին զէմ կռուել կու տայ ո՛չ եթէ քրիստոնէութեան Հեղինակին, կամ Յուդայի առիւծին, այլ Արարիոյ ծովափնեայ վիշապին, այն է Իսմայելացւոց. և թէ յայսմ՝ մանաւանդ Հռովմէական արծիւն է, որ կը պաշտպանէ քրիստոնէութեան շահերը՝ Մահմէտականութեան զէմ: Դարձեալ՝ այն տեղն, ուր կ'աւարտի մեր տեսիլն, դարձիւ Հռովմէական արծուոյն ի քրիստոնէութիւն, անտի կը վերսկսի և կը շարունակուի Ենովքայ տեսիլն: Տեսիլս ծանօթ էր նաև Մեթողիոսի:

ՎԵՑՅԵՐՈՐԻ ՏԵՍԻԼՆ, յորում կը ներկայացուի դարձեալ նախորդ տեսչեան մէջ ի հանդէս բերուած Մեսիայն, արտաքին ձևով բուրովին կը տարբերի անկէց. որովհետև անտաւէն ելնող կամ յազգէն Դաւթի տիրող առիւծին տեղ՝ այսմ Մարգարէիմ է, որ ծովէն կ'եղնէ ահեղ յուզմամբ, և հողմի և ամպի մէջ ծրարուած՝ կը թռչի արագութեամբ աշխարհիս չորս կողմը, դողացնելով զամէնքն առ Հասարակ: Այս տեղ այլ ևս Հռովմէական իշխանապետութիւնն չէ՝ որ կը կռուի անոր դէմ, այլ « ժողով բազմութեան մարդկան՝ ի չորից կողմանց երկրի », այսինքն են՝ Հեթանոսք և մոլորեալք առհասարակ: Նա կը կռփէ այնպիսի մեծ շեան մի, որուն տեղին ոչ ոք գիտէ: Հոն կ'ամրանայ, և անտի կ'ոչնչացնէ իւր զէմ՝ պատերազմող ժողովուրդները. և կ'ոչնչացնէ ոչ թէ զինու զօրութեամբ, այլ իւր բերնէն տեղացող հրովն և հողմով, այն է աստուածային օրինաց: Նորա քով կը ժողովի մի այլ խաղաղական բազմութիւն, որոնք ըստ բնագրին՝ են անոնք, « որ յանարգ հեքանուսաց ժողովեալ վարեցան, և ի գառակէն Աքրահաւոն խառնեցան ընդ նոսա »: Նախընթաց տեսչեան մէջ առիւծակերպ երևցող Միսիային տրուած

1. Դիտել կու տանք, որ այս ներմուծումս զիւրացնելու համար՝ անյայտ գրիչն՝ Սաղաթիւի յաճախակի կրկնուած առանձնախօսութիւններէն փոխ առած է ժբ. զիսու 7-9 համարները. այսպէս նաև 33-58 համարներն փոխառութիւնք են ժԻ զիսու 8-9 համարներուն:

է, — իբրև քաղաքական և ընկերական գործ, — ազատել զաշխարհս հոովմէական արծուոյն բռնութենէն, բայց անոր աստուածպետական արքայութեան հաստատութիւնն թողուած է ի կամս թագաւորաց թագաւորին Եհովայ. իսկ հոս, ընդհակառակն, ներկայացուած է նա իբրև աստուածային Որդի մարդոյ, ճոխացեալ հոգեղէն հրով և սքանչելագործ զօրութեամբ: Նախընթացին մէջ բոլոր աշխարհ նկատուած է իբրև աշխարհ Աստուծոյ, և թատր պատերազմական հանդիսից մէկ կողմէն հոովմէական արծուոյն և անօրէնութեան, իսկ միւս կողմէն այլ արդար վրէժխնդրութեան Բարձրելոյն: Այս տեղ՝ ընդհակառակն՝ Պաղեստին միայն կը ներկայացուի իբրև միակ երկիր երջանկութեան, զայն միայն կը ճանաչէ հեղինակն իբրև երկնային Երուսաղէմ, բայց ոչ եթէ ի յաւիտենական յերկինս, ինչպէս տեսանք Սաղաթիելի քով, այլ Մեսիային հետ միաժամանակ իջած յերկիր: Բոլոր ազգաց դիմեցման և շփոթից նպատակակէտն՝ նա է. նա դարձած է ասպարէզ նոյնպէս աստուածային Մեսիայի բուրբ գործառնութեանց, որուն արգասեաց մեծագոյնն է՝ ի սփիւռս ցիրուցան եղող Իսրայելի տասն ցեղերու ժողովուրդն և վերադարձն ի սուրբ տեղիս. մինչդեռ մնացեալ երկու և կէս ցեղից հոն դասնալու պէտք չի նկատուիր, իբրու այն թէ վերջինքս բնաւ ի Բաբելոն գերի տարուած չըլլան, այլ միշտ հանգստեամբ բնակած սուրբ քաղաքում և անոր շրջակայքը: Ահաւասիկ զայդ աւանդող տեղին՝ ըստ ասորական թարգմանութեան. « Sed et qui derelicti sunt de populo tuo, salvabuntur illi, qui invenientur in terminis meis sanctis ».

Այս կէտս՝ յոյժ նշանաւոր է, զի կը թուի ցուցանել, թէ յամին 70 Հրէից ունեցած կացութենէն յառաջ գրուած է, երբ անոնց մէջ այն գաղափարն կը տիրէր, թէ գերեվարութիւնն և ցրումը՝ 40 ցեղերուն միայն հանդիպած էր մասնակի, իսկ ժողովրդեան մեծամասնութիւնն՝ միշտ իւր բնակավայրին մէջ մնացած էր: Իբրև ծանօթ եղելութիւն՝ կը կարծուի, թէ երկու ցեղերու կացութիւնն 70էն վերջ և յայտնութիւնական գրուածոց, — որպիսիք են Բարուքայ և Սաղաթիելի Յայտնութիւնքն, — ազդեցութեամբ յաճախ բաբելոնական գերութեան հետ նոյնացուած է, ուրեմն ըստ այսմ հիմնական և մեծ զանազանութիւնք կան ոչ միայն նախընթաց տեսլեան և ասոր, այլ և ասոր և Սաղաթիելի ընծայուածին հետ:

Ռիշ. Կապիշ, ԺԳ գլխու 39-48 համարներում, տասն ցեղից վերաբերեալ այսպիսի մի աւանդութեան վերայ հաստատուած, այսինքն

է, գիտնականիս կարծիքով M (Որդւոյ մարդոյ) տեսիլն՝ բոլորովին անկախ է E (Եզրի), S (Սաղաթիբի) և A (Արծուոյ) անուանեալ աղբիւրներէն, և թէ գրոցս խմբագրին չէ կարելի վերագրել զայն: Տեսիլս այնպիսի ժամանակի մի մէջ յօրինուած ըլլալու է, երբ երկիրս ամբողջապէս իբր պատերազմական դաշտ մի դարձած էր, և հռովմէական պետութիւնն այլ ոչ այնքան զօրեղ. պարագայ մի, որ փղաւեան շրջանը մատնանիչ կ'ընէ մեզ:

Գերմանացի քննադատն՝ այսպիսի մի անկանոն գրուածի մէջ ամենայն ինչ լուրջ կերպով և ըստ պատմական կամ ժամանակագրական եղելութեանց գրուած կը դատի. սակայն դիտելու է, որ յաճախ անգամ դարեր վերջ ապրող կեղծ գրիչներուն յատուկ է՝ իրենցմէ դարեր յառաջ գրուած վիպօք և դիպօք հօխանալ: Հետեւաբար, 39—48 համարներում մէջ բերուած աւանդութիւնն իսկ, որ Ուրիբի բերանը դրուած է՝ իբրև նոր յայտնութիւն, խիստ անյարմար է և կասկածելի. այնու մանաւանդ, որ հայկական խմբագրութիւնն՝ փոխանակ այն ընդարձակ հատուածին՝ ունի հետեւալ տողերը, որոնք բոլորովին տարբեր բաներ կը նշանակեն: Ահա այդ տեղին. « Եւ զի տեսեր զնոսա զի ժողովէր այլ թագմութիւն խաղաղութեան, նորա են որ յանարգ հերանոսաց ժողովեալ վարեցան, և ի գառակէն Արրահամոռ խառնեցան ընդ նոսա. այս է թագմութիւնն ժողովեալ և խաղաղական, և որք համբերենն ի նոցանէ՝ ցուցցէ նոցա Բարձրեալն աւելի նշանս. և պաշտպանեսցէ նոցա: Եւ ասացի՝ թէ երանի՜ իցէ այնմ ազգի, քան այժմոռ ժողովորդեանս »: Արդ, այս տեղ՝ ինչպէս կը տեսնէ ամենայն ոք, չկայ բնաւ յիշատակութիւն ոչ գերի գացող տասն ցեղերու առանձինն, և ոչ բնիկ հայրենիքում մնացող երկու ցեղերուն, այլ հետնոս ազգերէն և Արրահամու գաւակներէն անխտիր առ Քրիստոս կոչուած և ժողովուած թագմութեան, այն է՝ հաւատացեալ Եկեղեցւոյ վերայ է խօսքն, զորս կեղծ Եզրն՝ իբրև ապագայ լինելիք մի բան կը նշկատէ, և աւելի երանիկ և երջանիկ կը համարի զանոնք, քան իւր ժամանակակից Հրեայքը. և անոնց երանութեան բուն պատճառքն իսկ կը նշանակուին (23 համարում) Բարձրելոյն կողմէն առաքուող փրկչին վերայ ունեցած հառատքն, ձրմարտոթիւնն և քարնգործութիւնքն:

Մէջ բերուած տեղիս, նկատմամբ երկոտասան ցեղից, միւս թարգմանութեանց մէջ ևս կը տարբերի: Արարական ք. խմբագրութիւնն՝ երկիցս յիշելով անորոշակի Իսրայելի գերութիւնը՝ բնիկ երկրին

մէջ մնացողները միայն երկու ցեղերուն չի սեփականներ, ինչպէս կ'ենթադրէ Կապիշ, այլ ամենուն առհասարակ: Նախ ժԳ գլխու 40 համարին մէջ կը գրէ նա. « *Et populus peregrinus, quem vidisti ad pacem vocasse, reliquiae sunt tribuum novem* ». և 47-48 համարներում. « *Et multitudo, quam vidisti, ordinatum consistere in quiete, ei sunt, qui e populo meo superstites erunt in monte sancto* »: Իսկ որովհետև երկու ցեղերն առանձինն չէին Աստուծոյ ժողովուրդը կազմուք, այլ միւսներուն հետ ի միասին. հետևաբար՝ ինչպէս իրենց բնիկ երկրին մէջ մնացողներն՝ ամէն ցեղերէն ևս էին անխտիր, այսպէս և գերի գացողները. ուրեմն նոյն իսկ արարական խմբագրութենէն չի հետևիր այն ինչ, զոր Կապիշ հետևեցուցած է:

Արդ, տեղեացս առաջինն՝ ըստ իմաստին աւելի մօտ լինելով հայկական խմբագրութենէն քիչ յառաջ մէջ բերուած տեղւոյն առաջին մասին, կրնանք ըսել, թէ այս վերջինն՝ ըստ քմաց հայ խմբագրին շինուած չէ, այլ հաստատուած մի ուրիշ հնագոյն աւանդութեան վերայ, որ եղած ըլլայ աղբիւր նաև անյայտացած յոյն խմբագրին:

Յիրաւի, Դ թագ. Ժէ գլ. 6 և 24 համարներում, սրբազան գրիչն նախ կը պատմէ Իսրայելի գերեզմարութիւնը, այսպէս. « Յամին իններորդի Յովսիա՝ ա՛ռ արքայ Ասորեստանեայց զՍամարիա, և խաղացոյց զԻսրայէլ յԱսորեստանեայս, և բնակեցոյց զնոսա յԱլաթ, յԱրովթ և զգետովն Գովզանայ և զԵրամրք Մարաց »: Իսկ յետոյ կը յարէ ուրիշ հեքանոս ժողովրդոց գաղութն ի Սամարիա, և անոնց հետ ունեցած բնակակցութիւնը, այսպէս. « Եւ ամ արքայն Ասորեստանեայց Սաղմանասար ի Բաբելոնէ, և ի Գութայ, և յԵմաթայ և ի Սեփարուիմայ, և բնակեցան ի քաղաքս Սամարիա՝ փոխանակ որդւոցն Իսրայելի »: Յովսեպոս՝ (Հնախ. Հր. Գիրք Ժ. գլ. Թ.) Սաղմանասարայ ձեռքով կատարուած այս դէպքս՝ տասն ցեղից Նարուգոզոնսարայ ձեռքով ի Բաբելոն գերի տարուելէն վերջը եղած կը պատմէ: Արդ, եթէ ուզենք ըստ Կապիշի պատմական նըշանակութիւն տալ մեր տեսլեան մէջ տասն ցեղերու մասին պահուած հրէական աւանդութեան, պէտք է ըսել, թէ Դ թագաւորութեանց զրբէն յառաջ եկած է այն, իրբև հնագոյն յաղբրէրայց որովհետև այս տեղ որոշակի յիշատակութիւն չկայ տասն ցեղերու մասին՝ բացառութեամբ երկու ցեղից. ուրեմն այդ զանազա-

նութիւնն ևս յետոյ ուրեմն ներմուծուած է՝ և ոչ այնքան եզրակացուցիչ:

Այս քննութենէս վերջ յայտնապէս կը տեսնուի նոյնպէս, թէ երկու ցեղից՝ երենց բնիկ երկրին մէջ մնալու հրէական աւանդութիւնն՝ 70էն վերջ գրուած անկանոն գրուածոց լոկ հնարագիտութիւն մի չէ. և թէ տեսլեանս 48 համարի. « Qui derelicti sunt de populo tuo salvabuntur, illi qui inveniuntur in terminis meis sanctis » խօսքերն՝ Դ Թագ. Ին գլխու 22 համարում աւանդուածին համաձայն՝ Պաղեստինու մէջ թողուած ազգաբնակութիւնքն հասկանալի են, առանց բացառութեան այս ինչ կամ այն ցեղերու: Այսպէս հասկացուած է նաև Բարոնաքայ Յայտնոտրեան ԻԲ գլխում:

Արդ, ԺԳ գլխու 39—48 համարներում աւանդուածին, այն է չրէից և հեթանոսաց իրարու հետ ազգախառնուելով՝ մի ժողովուրդ կազմելուն, — ըստ հայկական խմբագրութեան, — պատմական հին աղբիւրը ցոյց տալէն վերջ, ժամ է արդ՝ ցուցնել նաև անոր նոր աղբիւրն ևս՝ որուն ազդեցութեան ներքև Դ Թագաւորութեան յիշեալ տեղին՝ բոլորովին այլաբանական և քրիստոնէական կերպարանք առած է տեսլեանս մէջ: ՌԻՉ. Վապիչ՝ այս ամենայայտնի եղելութիւնս կ'երևի թէ անդրադարձած չէ, որ սակայն ճշմարիտ է և բաւական՝ յեղաշրջելու տեսլեանս աղբեր մասին նորս արտայայտած կարծիքը: Յովհաննու Յայտնութեան, 2 գլխու 15 համարին մէջ, հեղինակն յետ նկարագրելոյ ամենայն ազգաց, թագաւորաց և իշխանաց երկրի մեծ շարժումն և շփոթութիւնքը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ Բարձրերոյն մեծ բարկութեան և յաղթութեան վերահաս ժամը, նախ կը կնքէ (է գլխում) Աստուծոյ ծառայից կամ ժողովրդեան թիւը, թուելով մի առ մի Խորայելի 12 ցեղերու մնացորդքը: Ապա 9 համարում կը յարէ այս նշանաւոր խօսքերս. « Եւ յետ այտորիկ տեսի՝ և անա ժողովոտրդ քազոտմ, որոց ոչ գոյր թիւ, յամենայն հերանոսաց և յամենայն ազգաց և յամենայն շեզոսաց, որք կային առաջի արոտոյն և առաջի Գառիկ » այլովքն հանդերձ:

Արդ, այս տեղ մենք աւելորդ կը համարինք որոնել, թէ ինչ

1. Այս նկատմամբ ուշադրութեան արժանի է Մտիթար Ալբրիանիցոյ քով գտնուած մէկ տեղին, ուր յիշեալ դէպքին մէջ՝ Եզր ևս բերուած է ի հանդէս: Հեղինակս՝ ակնարկութեամբ Դ Թագ. ԺԷ. գլխու 28 համարին՝ կը գրէ այսպէս. « Իսկ ի սատակել զնոսա գազանացն՝ առաքեաց (ի Սամարիա) Սաղմանասար զԿահուի Եզր և զԲեբ գիրու Մուլտիս՝ սարերէն »:

պատճառաւ Յայտնութեան Հեղինակն Իսրայելի 12 ցեղերէն թուարկեալ բազմութեան մէջ՝ յանկարծ կը յիշէ ապա նոյնպէս և ամենայն հետեան ազգեր և լեզուները. այլ այս միայն դիտել կու տանք, որ ինչպէս Յայտնութեան 2 գլուխն եղած է ստուգիւ աղբիւր Եզրի ժԲ գլխում յիշուած Հեթանոսաց կողմէն չիփթից և պատերազմաց, և Որդւոյ Բարձրելոյն՝ անոնց դէմ տարած յաղթանակին, այսպէս այլ է գլուխն՝ Եզրի ժԳ գլխում նկարագրուած խաղաղական բազմութեան, որոնք « յանարգ հետախուսաց... և ի զառակէն Արտահանոչ » խառնուած՝ կը ժողովին յաշիտեակական շեռնէն իջած Մարդոյն քով և կը փրկուին Որդին մարդոյ կամ Աստուածամարդն, որ Յովհ. Յայտնութեան մէջ (գլ. Դ) Հաւաքաբար չորս ստորոգելիօք կ'երևի և կը սրբաբանուի, ըստ չորից աւետարանական ծանուցմանց. այսինքն՝ աշիտոչ, զոչարակի, մարդոյ և արժոռոյ, Եզրի քով առանձնաբար առնուելով՝ Մարդադեմի և աշիտակերպի և այլ, տեսիլներու վերածուած է: Ուստի, ըստ այսմ կ'իմացուի թէ ինչ հիման վերայ և ինչպիսի կրօնական ձկտումով յերիւրուած կամ ձևակերպուած է տեսիլս: Այժմ կ'ուզենք համառօտիւ ապացուցանել Հակառակ Կապիչի, թէ տեսիլս նոյն իսկ իւր ամբողջութեամբն առած, ինքնուրոյն մի գործ չէ, այլ սերտիւ կապուած է Դ տեսլեան հետ, և Հետևաբար՝ մի և նոյն աղբիւր վերագրելի ըստ սկզբնական մասին:

Արդ, Դ տեսլեան վերայ խօսած ժամանակ՝ տեսնաք արդէն, որ սորա Հեղինակն՝ ի դէմն այլաբանական այլոյն, ցոյց տուաւ մեզ Երուսաղեմի սքանչելահրաշ հիմնարկութիւնն և ապագայ փառաւորութիւնը: Տեսնաք դարձեալ, թէ անակնկալ կերպով խզուեցաւ այնուհետև այդ նկարագրի թելն՝ յաջորդ տեսլեան, այն է հոռովմէական արժոյ միջանկեալ այլաբանութեամբ, թողլով ընթերցողաց հետ՝ նաև շատ մի իրեր անհետևանք: Սակայն 2 տեսլեամբ կը պարզուի այն ամենայն. վասն զի այժմ մենք կը տեսնենք այս և այն տեսլեանց մէջ այնպիսի աղբրսներ, որոնք փոխադարձաբար զիրար կը զրկեն և կը լրացնեն, այնպէս որ մենք այլ ևս չենք վարանիր եզրակացնելու, թէ 2 տեսիլն՝ շարունակութիւն եղած ըլլար, — ի սկզբնագրին, — Դ տեսլեան, ինչպէս և Ե տեսիլն՝ վեցերորդին: Այժ, այսպիսի մի նշանաւոր տեղափոխութիւն անծանօթ էր գրոցս եբրայական բնագրին, Հետևաբար յոյն խմբագրութեան և խմբագրի ձեռքով առաջին անգամ կատարուած ըլլալու է: Եղելութեանս բուն շարժառիթն յայտնի չէ, սակայն դիպուածական պատ-

նառնելու աւելի խմբագրի որոշ ձկտման մէջ որոնելու ենք զայն: Եթէ քրիստոնեայ մէկն էր այն, ինչպէս ես կը կարծեմ, շատ բնական է, որ նա Դ տեսչեան մէջ Սաղաթիելի նկարագրած երկրաւոր երուղեմին և զօրարարելեան տաճարի վերաշինութեան՝ գերբնական և համաշխարհի նշանակութիւն տալէն վերջ, անմիջապէս անցնէր ցոյց տալու, թէ ոչք են այն համաշխարհական քաղաքի քաղաքացիներն, յորում կայացած է նոցա ազատութիւնն և կոչումն. որո՞նց հետ է նոցա պատերազմն և կրած հալածանքներն. ո՞վ է նոցա ամենայաղթ թագաւորն և ինչպիսի թագաւորութիւնն: Արդ, այս ամենայն իրօք կը գտնենք նախ Զ տեսչեան և ապա հինգերորդին մէջ կարգաւ. և կը գտնենք իրարու հետ ունեցած այնպիսի մերձաւոր աղերսներով, որոնցմով ամէն տարակոյս կը փարատի:

Խմբագրի այս կերպ վարուիլն իւր բնագրին հետ, այս ինքն է՝ Ե տեսիլը՝ վեցերորդին տեղ փոխադրել և Զրդը՝ հինգերորդին, ժամանակական մեծ պահանջի մի վերայ հաստատուած է. այսինքն է՝ Դանիելի մարգարէութեան յիշեալ տեղերն, — որոց վերայ ինչպէս ըսինք բարգաւաճուած է Զ տեսիլն, — քրիստոնէութեան առաջին դարերում կամ մանաւանդ չորրորդին ամենամեծ նշանակութիւն ունէր քրիստոնեայ հասարակութեան համար, նկատմամբ չրէից իշխանութեան բարձմանն և Քրիստոսի նորայաղթ թագաւորութեան հաստատութեան. զի չրեայք կը պնդէին, թէ Դանիելի (է զլ. 13) նկարագրեալ Որդին մարդոյ և անոր ընծայուած անեղծանելի և անանջանելի թագաւորութիւնն՝ ըլլալու էր դաւթեան¹, զուտ ազգային և երկրաւոր: Ուստի, խմբագիրն՝ հրէական աւանդութեան այս ցնորքը փարատելու համար, հարկ համարած է զուգել նախ հռովմէական արժւոյն տիրապետութեան պատկանող արարուածքը՝ հանդերձ Փղաւեան կայսերօք, որոնք ըստ նախագուշակութեան Դանիելի, Երուսաղէմը ի հիմանց կործանելով՝ չրէից կարծեցեալ աշխարհական իշխանութիւնն իսկ բարձին իսպառ. և թէ ազգաց և աշխարհաց տիրապետող այդ արծիւն՝ ոչ թէ դաւթեան աշխարհական իշխանութեան և զինու զօրութեան, այլ աստուածային զօրութեան առջևը միայն, որ կը « տիրէ թագաւորութեանց », խոնարհեցաւ ինկաւ:

Թէ ստուգիւ այս այսպէս եղած է, ունինք մենք զօրեղ կուռան.

1. Դեռ Ե դարում այս աւանդութիւնս տիրած էր, թէ ի վերջ ժամանակաց Դանիէլ պիտի գայ և չրէից աշխարհական թագաւորութիւնը նորոգէ, Եզնիկ իսկ իւր Ենչ — ակոբոսն մէջ կը յիշէ զայն, զինի առասպելին Արտաւազդայ:

ներ նոյն իսկ գրոցս մէջ: Ա. Վեցերորդ տեսչան նախերգանքի մէջ, նախ 39 համարում կ'ըսուի Ուրիելի կողմէն առ տեսանողն. « Բայց դու կայ մնա աստէն այլ ևս առաջս եօթե, զի ցուցից քեզ զայն՝ զոր կամի Բարձրեալն յայտնել քեզ », և 51 համարին մէջ կ'երկրորդէ տեսանողն ինքնին, թէ « Եւ ես նստայ ի դաշտին զեօթև օր որպէս հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն, և ոռոտի ի ծաղիկաց և ի բանջարոց դաշտին »: Դիտել կու տանք, որ եօթնօրեայ պահոց վերաբերեալ այս տեղիքս՝ յայտնապէս կը հակառակին անմիջապէս նախորդ՝ այն է Ե տեսչան սկիզբն եղած յայտարարութեան, ուր (58 համ.) գրուած է ընդ հակառակն. « Մնա՛ դու աստ զվաղոտեան գիշերն ». . և թէ « Մտի ի տուն զերկոռս գիշերան, որպէս հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն »: Իսկ բաղդատելով Դ տեսչան նախերգանաց 23-24 համարները՝ Ե տեսչան նախերգանքի յայտարարութեան հետ, կը տեսնենք որ յար և նման են իրարու: Ուստի այս տեղիքս եթէ բնագրին յատուկ մասն համարի ոք, և եթէ խումբագրէն դիտմամբ կրկնուած, ցոյց կու տան մեզ մէկ կողմէն Դ և Զ տեսիլներու, և միւս կողմէն այլ Ե և Է տեսչանց իրարու հետ ունեցած աղերսն և նոյնութիւնը: Բ. վեցերորդ տեսչան մէջ (ԺԳ. 45) յիշուած երկիրն Արգափ, ուր կը բնակին գերի վարեալ Իսրայելի ցեղերն՝ մինչև ցգալուստ Մեսիային, նոյն է Դ տեսչան նախերգանքի մէջ (Թ. 26) յիշուած Արդար դաշտին հետ, ուր ինքզինքը գերութեան մէջ կեղծող Եզր-Սաղաթիէլն եօթնեակներ կ'անցնէ՝ յայտնութիւններ ընդունելու աստուածային Մեսիայի և անոր հոգևոր թագաւորութեան նկատմամբ:

Գ. Վեցերորդ տեսչան փակման մէջ՝ առ տեսանողն ուղղուած այս բացատրութիւնս. « Եւ վասն այսորիկ քեզ միայնոյ յայտնեցաւ այս յերկրի, զի զկեսնս քո վարեցեր իմաստութեամբ և գիտութեամբ » և այլն, նման է Դ տեսչան վերջարանի. « Զի դու երանելի եղեր քան զբազումս, և հաճոյ եղեր Բարձրելոյն որպէս սակաւք » բացատրութեան: Դարձեալ Թ գլխու 7-8 համարներու հետեւալ տողերն. « Et erit omnis qui salvus fuerit... ipse relinquetur de predicto periculo, et videbit salutare meum in terra mea, et in finibus meis quæ sanctificavi mihi a sæculo », զորս Դ տեսչան իբրև նախապատրաստութիւն կրնանք համարել, նոյն են Զ տեսչան (ԺԳ. գլ. 48). « Sed et qui derelicti sunt de populo meo, salvabitur illi, qui invenientur in terminis meis sanctis » տեղւոյն հետ: Այսպէս Դ տեսչան վերջ (Ժ. գլ. 59) Ուրիելի պատրաս-

տելով զՍաղաթիէլ յաջորդ տեսեան՝ կը ծանուցանէ Համառօտիւ կա-
տարուելիք իրաց ընդհանրականութիւնը, այսպէս. « Et ostendit tibi
Altissimus visionem revelationum quas faciet *habitatoribus*
terrae in novissimis diebus ». Արդ, ենթագծուած խօսքերս՝ որ-
քան անյարմար են Ե. տեսեան, այնքան ևս լաւ կը պատշաճին վեցե-
րորդին. դիտելով որ՝ առաջնոյն ենթակայն կազմողն՝ է Հոովմէական
արծիւն միայն, որ կը պատերազմի Աստուծոյ սրբոց դէմ. իսկ վերջ-
նոյն մէջ ընդհակառակն, ազգեր և թագաւորութիւններ երկրի առ-
հասարակ յուզուած են և կը պատերազմին Որդւոյ մարդոյ դէմ.
Հետևաբար, ուրեմն այն նախապատրաստութիւնն՝ սկզբնազրին մէջ
Ձ տեսեան մասը կը կազմէր երբեմն, և ոչ թէ Հինգերորդին:

Գ. Զօրեղ կռուան մ'այլ կ'ընծայէ մեզ է տեսեան մէջ (զլ. ԺԴ.
15-17) Հետևեալ տեղին, ուր հրեշտակն յետ յիշեցնելու տեսանո-
ղին, ԺԱ գլխում, Հոովմէական արծուոյն գործելիք շարիքը, վրայ կը
բերէ այս նշանաւոր խօսքերս. « Ահաւասիկ փոքրայ արծուիև գայ,
զոր տեսեր ի տեսչեան ». այսինքն է՝ նախընթացին մէջ. իսկ որով-
հետև այժմեան բնագրի Համաձայն՝ այս ակնարկութիւնս անյար-
մար է անմիջապէս նախընթաց, այն է Ձ տեսելուն, վասն զի Հոս
ոչ թէ արծուոյ, այլ Որդւոյ մարդոյ վերայ կը դառնայ բովանդակ
նաւն. ուրեմն...:

ԵՕԹՆԵՐՈՐԻ ԵՏՍԻԼՆ՝ բառին բուն նշանակութեամբ չի կրնար
տեսիլ ըստելի, վասն զի յերիւրուած է Ելից գրքի Դ, Ի՛Ե և ԼԴ.
27-28 գլխոց մէջ Մովսիսի Համար աւանդուած ծանօթ եղելու-
թեանց, այսինքն է մորենւոյն միջէն առած պատուերին և Սիոն լե-
րան վերայ 40 օր և 40 գիշեր նօթի մնալուն և Աստուծոյ կողմէն
զբաւոր պատգամներ գրելուն վերայ: Էվալդի կարծիքով՝ այդ տե-
սիլն, այն է ԺԴ գլուխն, որով վերջ կը տրուի անկանոն գրուա-
ծիս, նշանազուրկ և աւելորդ յաւելուած մ'է Հինաւուրց Եզրայ
կեանքէն ինչ ինչ մէջ բերելու և գրութիւնը հաւատարիմ և Հին
ցուցանելու սին նպատակաւ: Ռիչ. Կապիչ, ընդհակառակն, այն հա-
մոզումն ունի, թէ տեսիլս՝ բացառութեամբ այն մի քանի տեղեաց,
որոնք գրոցս խմբագրէն ներմուծուած են, մնացածն ամբողջ բոլո-
րովին տարբեր ազրիւր մի է, այնպիսի բնորոշ յատկութիւններով,
զոր անկարելի կ'ընեն միւս չորս ազրիւրներէն միոյն կամ միւսին
հետ նոյնացնել: Եւ այս տեղ յիշուածն՝ ոչ եթէ կեղծ Եզրն է, այլ
պատմականն՝ իւր վերայ շինուած Հին՝ բայց առասպելայօղ վի-
պօք: Այս աղբիւրս կոչած է Ռիչ. Կապիչ՝ E². այսինքն է՝ Եզր Գ:

Մեր կարծիքով՝ այս ենթադրութեանց ոչ մին և ոչ միւսն կրնայ ընդունուիլ իբրև ուղիղ, առանց ինչ ինչ բացառութեան: Իրաւ է թէ որոշ ձկտում մի կը տեսնուի այս տեղ մէջ բերուած Եզրի գրուածքը իբրև Աստուծմէ ներշնչուած, և Հետևաբար՝ ամէն հաւատարմութեան արժանի ցոյց տալու: Բայց թէ այդ յիշատակուած գրոց մէջ կը հասկացուին արդեօք նաև այն վեց տեսիլներն, որոց վրայ արդէն խօսեցանք, թէ ընդհակառակն՝ այնու հին կտակարանի 24 կանոնական և 70 անկանոն գրքերը, այսինքն են Միշնայք և Հագգադադայք միայն պէտք է հասկանալ, որոնցմէ առաջիններուն նորոգութիւնն, ըստ Ս. Գրոց, Եզրի ձեռքով եղած կ'աւանդուի: Առաջին կէտն ի նկատի առած՝ աւելորդ կը թուի ինձ Տոլկմարի դիտողութիւնն, վասն զի վերոյիշեալ տեսիլներում արդէն կրկին և կրկին ջանք եղած է անծանօթի կողմէն ցոյց տալ նոցանէ իւրաքանչիւրի հեղինակութիւնը, Աստուծոյ և անոր պատգամաւորին Ուրիելի բերանը գրուած յայտնութիւններով: Հետևաբար, նոր ճիգն թափելու պատճառ չկար: Իսկ երկրորդ տեսակետով անհասկանալի պիտի մնան այն խիստ աչքի զարնող տեղերն, որոնք կամ մասամբ յառաջընթացութիւնք են յիշեալ տեսիլներէն, և մասամբ այլ այնպիսի կրօնական հայեացներով լի, որոնք բնաւ չեն յարմարիր Կապիչի ենթադրած աղբեր և ոչ նորա ժամանակի ոգւոյն, թէև գերմանացի դիտնականն՝ իւր գործադրած դրութեան համաձայն և՛ հասկացած և՛ մեկնած կը համարի զանոնք: Ուստի, ըստ մեր առանձին կարծեաց և ըստ իրին այս վերջին տեսիլս՝ բոլորովին մի անկախ աղբիւր չէ և չկարէ լինել, վասն զի բոլոր գրուածին հանգոյցն՝ այդ տեղ հանգրիմեալ է և այդու կը լուծուի, այլ կամ Եզրի ընծայուած աղբեր (E) կը վերաբերի, կամ (S) Սաղաթիելի և կամ լաւ ևս գրոցս խմբագրողին: Ահաւասիկ մեր փաստերը:

Ա. Մենք կանխաւ դիտեցինք արդէն, որ Թ զլխու 58-60 համարներու մէջ, փոխանակ առաջին եօթնօրեայ պահոց՝ յանկարծ հրեշտակի պատուէրն երկու գիշերներու կամ եօրեայ հսկման փոխուած է, իբրև պատրաստութիւն Գ տեսլեան և յայտնութեան, և թէ առանց այլուր տեսնուած սովորական առանձնախօսութեան կամ աղօթից՝ անմիջապէս կ'ունենայ մեր տեսանողն խոստացուած տեսիլն և յայտնութիւնը: Արդ, մի և նոյն երեւոյթն՝ կրկնուած է նաև վերջին (Է) տեսլեան նկատմամբ, ԹԳ զլխու 56 և 58 համարներում, այսպէս. « Զի յետ այլ երից առօրց ասացից քեզ », և թէ « Կացի անդ գերիս առօրս ». և ասպա անմիջապէս կը սկսի տեսիլս: Բաւա-

կան չէ առարկել, թէ այդ տեղերն՝ հաւանորէն խմբագրէն ներմուծուած լինին, վասն զի այն ժամանակ հարկ պիտի լինի տարակուսի նաև այն տեղեաց վերայ, ուր կը յիշուին ուրիշ տեսլանաց ժամագրութեան եօթն օրերն. այլ պէտք է խորհել, թէ կար բանաւոր պատճառ մի, որուն համար խմբագիրն (եթէ իցէ իրօք խմբագիրն) դրաւ այդ զանազանութիւնը, ինչպէս կար պատճառ 3 եօթնեկաց ներմուծման՝ առաջին երեք տեսիլներու մէջ: Հետևաբար, այդ պատճառն, ըստ, իս ուրիշ բան չէր, բայց եթէ կամ նոյնութիւն աղբեր, զոր Սաղաթիէլ բաժանարար իսկ տրամագրած ժամանակ՝ պահած է անոր յատուկ այդ պարագայն, և կամ նոյնութիւն խմբագիրն, որ ուզած է հաւատարիմ մնալ իւր խմբագրած աղբիւրներուն, և կամ իւր յառաջին էջերում սկսած դերը՝ մինչև վերջ շարունակել մեծ ճարտարութեամբ:

Բ. Տեսլանան 28-33 համարներն, — ուր կը յիշուին Հրէից յնգիպտոս պանդխտելն, անկէց ելնելն, անապատին մէջ Աստուծոմէ օրէնք ընդունելն, և իրենց պարգևուած բարիքէն ապաշնորհութեամբ զրկուիլն, — կը գտնենք աւելի ընդարձակ նոյնպէս Ա զլխու 17-19 համարներում: Ուրեմն, այս մասին ոչ մի նորութիւն չկայ հակասող իրարու և ոչ այլ տարբերութիւն աղբերաց: Այսպէս և 7-8 համարի. « Եր այժմ քեզ ասեմ զխորհուրդս զայս՝ զոր յառաջ նշանակեցի, և զեղազն՝ զոր տեսեր, և զմեկնոսքիանն՝ զոր իմացար » բացատրութիւններն՝ բացարձակապէս նախընթաց տեսիլները կը յարաբերեն, զորս տեսլանան հեղինակն չէր կարող յիշել, եթէ նա իրօք միւսներէն բոլորովին մի անկախ գրիչ եղած ըլլար: Այս բանս անկէց իսկ յայտնի կը տեսնուի, զի 17 համարին մէջ՝ տեսլանան գրիչն յետ կրկնաբանելոյ Դ զլխու 2 և 10 համարներուն մէջ վերջին ժամանակները կատարուելիք նշանաց մասին ասելիքը, կը շեշտէ Ծ տեսիլը. « Ահաւասիկ փութայ արծուին գալ, զոր տեսեր ի տեսլանն »: Դարձեալ, 35 համարին մէջ յարութեան մասին եղած այս նշանաւոր նախադասութիւնս. « Զի դատաստան յետ մահու եկեսցէ. յորժամ դարձեալ կենդանացոսք՝ յայնժամ արդարոցն անունն յայտնեսցի », զոր Կապիշ յետագայ մեկնչի մի գրչէն ներմուծուած կը համարի, մեք ընդհակառակն համաձայն կը գտնենք Ե զլխու 32, 35, 49-50 համարներում աւանդուածին: Կ'երևի թէ Կապիշ տեղեացս նոյնութիւնը չկարենալ ուրանալուն համար է, որ կը յայտարարէ ապա, թէ իւր նշանակած հնգաթիւ աղբիւրներէն Ե (Եզր) միայն է որ կը հաւատայ յարութեան: Եթէ այդ այդպէս է, աբիւնքն է 32, 55,

49-50 E աղբեր կը վերաբերին, և մեր տեսլանքն 35 տեղին նոյն է դոցա հետ. սպա ուրեմն բանաւոր պատճառ մի չկայ ամէն մի քայլափոխին մի նոր աղբիւր յայտնել. ուստի, և բողոքն Կապիչէն առ Կապիչ ըլլալու է: Հուսկ սպա դիտել կու տանք, որ 9-14 համարներն, ուր Աստուծոյ կողմէն կը ծանուցուի առ Եզր. « Հրատարեա՛ ղու այսուհետև յապականացու կենաց, և մերժեա ի քէն զչփոթեալ միտս, և հեռացո ի քէն զմարդկեղէն խորհուրդս — զի դու համբարձցիս ի մարդկանէ, և ընդ իս (Աս. Լատ. Աբր. ընդ որդոյ իմոյ) լինիցիս այսռահետև, և որ քեզ նման ոչ իցի, մինչև ի կատարումն ժամանակաց » համաձայն են Ը գլխու 51-54, Է գլխու 15, 16 և 28 համարներուն, ուր ունին ասորին և լատինն համաձայն սոյն ենթագծուած տողերուն, այսպէս « Revelabitur enim filius meus Christus cum his, qui cum eo, et jucundabit », օտ. Այսպէս նաև 20-21 համարներն, ուր Եզր կ'ողբայ զբաւոր օրինաց կորստեան և իւր ժողովրդեան առանց լուսոյ մնալուն վերայ, նոյն են Դ գլխու 20-24 համարներում Սաղաթիբելի բերանը դրուած այս խօսքերուս. « Եւ մոռացան օրէնք հարցն մերոց և գրեալ կտակարանք ոչ ոտրեք գտանին, և կամք աստ իբրև զմարախ, որոց ոչ գոն օրէնք, ոչ հրամանք, ոչ կտակարանք, և գնամք յաշխարհէս չեղեալք արժանի քո ողորմութեանդ »: 45-47 համարներն, ուր կը պատուիրուի Եզրայ՝ իւր զրուածոց մի մասը դնել « յայտնի տեղուոջ » հանրամատչելի ըլլալու համար, իսկ միւսը ծածուկ պահել՝ իմաստնոց միայն ուսուցանելու համար, նոյն են ԺԲ գլխու 37-38 համարներուն, ուր կ'ըսուի. « Գրեա՛ զայդ ի գիրս, զոր տեսեր. և դիպ զգա յանքոյք տեղաոջ (ըստ Աս. և Լատ. in loco abscondito), և ռառացես զիմաստունն ժողովրդեան քո » այլովք հանդերձ: Ուստի, այս և նման համեմատութիւնք՝ յայտնապէս ցոյց կու տան, թէ վերջին տեսիլն, այսինքն է ԺԴ գլուխն՝ ոչ միայն անկախ և ինքնուրոյն լինելու բնորոշ յատկութիւն չունի, այլ, ինչպէս տեսանք, անոր ազդեան կարծուածէն աւելի է միւս տեսիլներուն հետ:

Տեսնենք այժմ, թէ այս տեսլեանս էութիւնն ինչ բանի մէջ կայացած է, և թէ ինչ պատմական արժէք ունի: Առաջին անգամ զայն ընթերցողին թերևս այնպէս թուի, թէ անոր խմբագրողի նպատակն եղած լինի յայտնել նախ Եզրի՝ իւր մտալուստ մահը. ք. պատուէր տալ անոր, որ զրի առնու մինչև այն ժամանակ իւր վերայ կատարուած տեսիլներն և յայտնութիւնքը: Սակայն, ըստ իս, այս կետերէս վերջինն՝ անյարմար է և նշանակութենէ զուրկ, բայց ոչ եթէ

ԺԻ գլխու 8 համարում աւանդուած . « Այժմ ասեմ գխորհուրդս զայս, զոր յառաջ նշանակեցի, և զերազս՝ զոր տեսեր, և զմեկնութիւնն՝ զոր իմացար, ի մտի քում պահեա » բացատրութեան համար, որուն վերայ ուշադրութիւն դարձուցեր է Կապիշ . այլ ժԻ գլխու 37-38 համարներում արդէն իսկ աւանդուածներուն համար, զոր քիչ յառաջ մէջ բերինք : Նոյնը կարող ենք ըսել նաև առաջին կէտին համար . որովհետև յինքեան հարազատութեան դրոշմն չունի, այլ յերկրուած է Երկրորդ Օրինաց գրքի 18 գլխու 48-50 համարներու նմանողութեամբ, նպատակ ունենալով պարզապէս զուգակչիւ մ'ընելու առաջին գրչին, այն է Մովսիսի, և Եզրի մազը յիշատակող երկրորդ գրչին : Այս կէտս՝ իբրև բուն պատճառ դրուած է տեսլանա մէջ . սակայն դա լոկ պատրուակ մ'է, ըստ որում նախընթաց տեսիլներուն ի գրի առնուելու յիշատակութիւնն իսկ պատահաբար կրկնուած է հոս՝ անոնց և վերջնոյս մէջ միութիւն մի և նոյնութիւնը երաշխաւորելու դիտմամբ : Իսկ անոր իսկական և բուն նպատակն է, ըստ իս, 94 գրոց կամ նորոգութեան մեծ դէպքն, որոց ամենեւին յիշատակութիւն եղած չէր նախընթաց վեց տեսիլներու մէջ . ինչպէս նաև լուելեայն ծանօթացնել ընթերցողին՝ այն հնագոյն աղբիւրը, որուն՝ իբրև հիման վերայ շինուեցան այն տեսիլներն : Սակայն այդ նպատակներէն առաջնոյն նկատմամբ՝ պէտք է զանազանել հինը՝ նորէն : Բ Եզրի 2 գլխէն և Նեեմեայ Ը գլխէն ծանօթ է մեզ, որ հինաւորց Եզրն է գրիչ կամ նորոգող օրինացն Մովսիսի . բայց Բ Մակարայեցոց Բ գլխէն կ'իմանանք, թէ Նեեմեայ ժամանակ Եզր Դրչի ձեռօք վերակազմուած գրեանն միայն Մովսիսի նգամատեանն չէր, այլ « և զայլ մատեանս թագաւորաց, և մարգարէից և զ'աւթի ինքն գլխովին », ըստ հայկական թարգմանութեան, որ ըստ մասին կարող է ճշմարիտ լինել : Այսու հանդերձ կանոնական գրոց թիւն, զոր չրէից ժողովարանն ի վաղուց հետէ իբրև սրբազան ճանչցած էր և կը գործածէր, 22-24ի հազիւ կը հասնէր . հետևաբար, ասոնց համար կարելի է առնուլ տեսլեանս 26 համարի՝ « Ե՛ ինչ ի նոցանէն, զոր յայտնեցես » բացատրութիւնը, և կամ ըստ 45 համարին՝ « Զառաջինն՝ զոր գրեցեր յայտ զիջի » նախադասութիւնն : Իսկ մնացած 70 գրքերն, որոց համար կ'ըսուի, թէ « Ե՛ ինչ՝ զոր գաղտնի ի ծածուկ իմաստնոց ուսուցես », և կամ « Զերկրորդն պահեսլիր՝ ուսուցանել զիմաստունս ժողովրդեանն » ոչ իբրև աստուածուատ ներշնչեալ ճանչցուած են առ չրեայս հոյ ուխտին, և ոչ իսկ պատմական Եզրի գործ, այլ կամ Եզրի

կարծուած և 70 հատածներէ բաղկացեալ անանուն գրուած մ'էր, յորմէ յետոյ փոխակերպուելով ձևացաւ այժմեան Եզրի անկանոն գիրքն, և կամ կապալիստներո՞ւ յրածուիչ կոչուած գրութիւնն հասկանալի է: Զինչ և իցէ, այս կարգի գրուածքը Աստուծմէ ներշնչուած ցոյց տալու և նոցա վարկը բարձրացնելու համար նուիրուած է վերջին տեսիլս. ահա նորա բուն նպատակն:

Սակայն, այսու ամենայնիւ անոր մէջ երևցող հակապատմական պարագաներն՝ զայն մեծապէս կասկածելի կ'ընեն մեզ: Յիրաւի, ինչպէս տեսանք, գրոցս Թ զլիու 57 համարին և ուրիշ տեսիլներու մէջ՝ հեղինակն բազմիցս յիշելով Եզրի դաշտին մէջ օթելը՝ բնաւ յիշատակութիւն չըներ կաղնոյ մի կամ արմաւենոյ. յաջորդ համարին՝ այն է վերջին տեսիլեան պատրաստութեան մէջ ընդհակառակն յանկարծ մէջտեղ կու գայ նշանաւոր կաղնիք, որոյ սակ նստած մեր խորհրդաւոր տեսանողն՝ անմիջապէս հանդիպակաց մորեկիկն կը լսէ « այլադէմ » բարբառը, որ կը կոչէ. « Եզրա, Եզրա »: 37 համարին մէջ դարձեալ սովորական դաշտն միայն յիշուած է. « Եւ գնացի ի դաշտն, և եղէ անդ ». հոն կ'ըմպէ իմաստութեան բաժակը և կ'անցնէ 40 օր և 40 գիշերներ, գրելու համար յիշեալ 94 գրքերը, սակայն առանց յիշելու զկաղնին: Արդ, այս երեք տեղերու բաղդատութենէն ակներև կը տեսնուի, թէ կաղնոյն և մորենույ վերաբերեալ հատուածն՝ (58 համարը) բոլորովին միջանկեալ բան մ'է, որ միւս երկու տեղեաց և նախորդ երեք տեսիլներուն իբրև թատր նկատուած դաշտին հետ բնաւ ազգակցութիւն չունի. այլ սխալ հասկացողութեամբ կամ ծառայական նմանողութեամբ մի ուրիշ պատմական աւանդութեան՝ մէջ մերուած է հոս, գրոցս խրճրագրողի կողմէն:

Այս ամենայն կը պարզուի ասորական թարգմանութեամբ մեզ հասած Բարուքայ Ցայտնութեամբն, որ շատ կը տարբերի Պատմութիւն Երեմիայ և Արդամեյիցայ կոչուած գրուածէն, զոր արդէն սուսնասիրեցինք: Գրութեանս Զ զլ. 1 համարին մէջ՝ խօսելով Քաղդէացուց ձեռքով Երուսաղեմի պաշարման մասին, կ'ըսէ կեղծ Բարուք. « Reliqui populum ego Baruch, et exivi et steti apud quercum »: Երկրորդ անգամ անորոշ կերպով նոյնը կ'ակնարկէ տեսանողս (ԾԵ. 4) այսպէս. « Sedi subtus arborem »: Իսկ երրորդն՝ բացորոշակի կը յիշատակէ (ՀԵ. 18). « Et sedi subtus quercum.. et scripsi has duas epistolas », այսինքն է, մին՝ ինն և կէս ցեղերուն, իսկ միւսն՝ առ Հրեայս, որոնք էին ի Բաբելոն: Արդ, վերջին տեղէս

կը տեսնուի յայտնապէս, որ Բարուք Երուսաղեմէն կը գրէր իւր Թըղթերը. Հետևաբար, նաև այդ Համբաւաւոր կաղնին՝ Երուսաղեմի մօտերը լինելու էր, և ոչ թէ ի Բաբելոն: Եւ իրօք, այս ամենայն որքան Հասկանալի է Բարուքայ Համար, այնքան ևս անյարմար և անհասկանալի է կեղծ Եզրի նկատմամբ, որ թէ նախընթաց երեք տեսիլներուն և թէ վերջնոյն մէջ ինք զինքը Բաբելոնի գերեալ ժողովրդեան Հետ լինել կը ներկայացնէ տակաւին: Եւ որ աւելի զարմանալին է՝ նոյն գերութեան մէջ գրած կը կեղծէ նոյն իսկ վերոյիշեալ 94 գրքերը. մինչդեռ ըստ վկայութեան կանոնական գրոց՝ յետ գերութեան նորոգած կամ ի գրի առած կը Համարուի Եզր Հնգամատեանը և ուրիշ գրքերը: Եզրի տեսլեան մէջ՝ բաց ի ծառայ յիշատակութենէն՝ ուրիշ բան չկայ, առ Բարուքայ ընդհակառակն կը տեսնուի, որ թէ՛ այդ կաղնին և թէ տեղին՝ ուր կը գտնուէր, էր ոչ միայն պատմական, այլ և յոյժ նուիրական, որպէս հինաւորք կաղնին Արրահամու, այն է Մամրոք: Բարուքայ Յայտնութեան Խէ պիտու 1 Համարէն այնպէս կ'երևի, որ այս տեղիս էր Քերոն, զի զայն կը ցուցնէ մեզ տեսանողն՝ իբրև Հանդիսավայր իւր եօթնօրեայ պահպնողութեան և ունեցած տեսիլներուն, այսպէս. « Et cum exissem ac dimissem eos (ժողովուրդը), abii et dixi eis: Ecce, ego vado Hebron... et veni ad eum locum, ubi sermo factus fuerat a me, et sedi ibi, et jejunavi septem diebus ».

Ռիշ. Կապիշ, Հաստատուած Բարուքայ Յայտնութեան, Զ. 3 Համարին « Et ecce, subito spiritus fortitudinis sustulit me, et extulit me supra murum Jerusalem in altum » վրայ՝ կ'ըսէ, թէ յիշեալ կաղնին Քերոնի մէջ չկարէր լինել, այլ Երուսաղեմի մօտ, պարսպի ներքսակողմը՝ առանձնափակ տեղում. վասն զի դուրսը նարուզողոճոսորայ զօրքով պաշարուած էր: Այս տեղ է, որ գրել կու տայ մեր տեսլեան Հեղինակն՝ Եզրայ իւր 94 գրքերը:

Այս ամենաստոյգ կ'երևի նաև ինձ, այսինքն թէ, դուրս ըլլալու էր այդ տեղին և Հաւանօրէն Ե և ԼԱ գլուխներում յիշուած Cedron = Կեղրոնի հովիտն ըլլալու է, որ վրիպակաւ Hebronի փոխուած է: Ուշի. ուշով քննելով Բարուքը, կը տեսնենք յիրաւի, որ կաղնին կը գտնուէր հոն, ուր Բարուք առանձնանալով տեսիլներ կ'ունենար. իսկ որովհետև Թ և ԼԳ գլուխներում՝ այդ առանձնավայրը նշանակուած է Սիոն լեռան վերայ, ուր էր յայնժամ աւերեալ տաճարն և այժմ ընդարձակ դաշտագետին մի. Հետևաբար, սորա հիւսիս արևելեան կողմը կ'իյնար նաև մեր ասպնջականող կաղ-

նին, որ կը նայէր կեդրոնեան ձորին վերայ: Բարուք իսկ ստուգիւ Ե գլխոյն վերջը կը ծանուցանէ, թէ ինքն մինչև իրիկուն կեդրոնեան հովտին մէջ էր իւր ընկերաց հետ և կը պահէր. իսկ Զ գըլխում, թէ ի ժամ երեկոյին անկէց ելաւ և նստաւ ընդ կաղնեաւ, երբ Ասորեստանեայց զօրքն աւելի մօտեցաւ և պնդեց քաղաքի պաշարումը:

Պալով Կապիչի յայտնած այս կարծեաց, այսինքն թէ այս նըմանութենէն պէտք չէ հետեւցնել, որ մեր տեսիլը՝ Բարուքի Յայտնութենէս կախումն ունեցած լինի, որովհետև ուրիշ հեղինակներ ևս հոս կը դնեն յիշեալ կաղնին, չենք կարող համաձայնիլ, նկատելով որ ուրիշ աղբւրներէն ոչ մին չյիշեր զկաղնին՝ Եզրի վերջին տեսլեան հետ այնքան մերձաւորութիւն ունեցող այն պարագայով, ինչպէս կը յիշէ Բարուք. այսինքն է՝ որոյ ներքև. նստած նաւակահներ և յայտնորիսներ գրած ըլլան առ գերեալ ժողովորդն Բարեբեռի. հետևաբար, մեր կարծեօք՝ ընդհակառակն՝ Բարուքէն դուրս ուրիշ աղբւր ունեցած չէ տեսլեանս անծանօթ հեղինակն:

Տեսլեանս վերջին, այն է՝ 47 համարին մէջ, որով կը կնքուի Եզրի անկանոն գիրքն, կը նշանակուին իրրև տարեթիւք ոչ միայն գրութեան եօթն տեսիլներուն, այլ մանաւանդ որ զարմանալին է Եզրի մահուան, ըստ հայերենի. « Յամին չորրորդի շարաթիւն ամաց, յետ ամաց հինգ հազար արարածոց աշխարհի և երկուց ամսոց աւուրց »: Ասորին ունի աւելի որոշ կերպով. « In anno septimo, in hebdomada sexta post quinque millia annos creationis, et menses tres, et dies duodecim »: Հայկական խմբագրութեան մեզ ընծայածը խանգարուած է. հետևաբար, անոր վերայ հաշիւ ընել չըլլար. իսկ ասորոյն՝ anno septimo բառերն՝ Արտաշէս Երկայնաբազուկի թագաւորութեան եօթներորդ տարին կ'ակնարկեն, յորում եղաւ Հրէից գերեզարդն: Իսկ hebdomada sexta, այն է եօթներորդ վեցն, ըստ դանիելեան թուարկութեան առնելով 7×6 , կ'ունենանք արարածոց աշխարհի 5042 թիւը: Արդ, տարեթիւս չմիարանիր ամենեւին ոչ հինաւուրց Եզրի, ոչ Սաղաթիելի, — որ Կաթի գահակալութիւնը կը դնէ յամի 3000 արարչութեան աշխարհի, — և ոչ իսկ Ս. Դրոց երբայական բնագրի և Եօթանասնից թարգմանութեան: Եւսեբիոս, համաձայն Եօթանասնից, Արտաշէսի գահակալութիւնը կը նշանակէ յամին 4680 ար. աշ. իսկ Քրիստոսի ծնունդը՝ 5228ին, որով Արտաշէսի 7րդ տարին կ'իյնայ 458 նախ քան զՔրիստոս: Ուստի ըստ այսմ, — եթէ խանգարուած չէ Եւսեբեայ

այս տեղիս, — Եզրայ Բարեւոնէն դառնալն և գրութեան ժամանակամիջոցն է՝ մերձաւորապէս 4770—4763 ամբ աշխարհի, և ոչ թէ 5042. Իսկ ըստ երբայականին՝ կու գայ 3721—3714 ամի աշխարհի: Ուրեմն՝ տեսլեանս վերջն եղած Եզրի Դ գրքի գրութեան, ինչպէս և անոր մահուան տրուած թուականն՝ պատմարանորէն ոչ ինչ է և բնաւ անյարմար. ուստի, կամ Եզրէն 279 տարի վերջ, կամ Մակարայեցեաց ժամանակը շօշափող մէկու մի ձեռքով և ըստ կամս յերիւրուած է:

Ի զուր ջանացեր է մերժել զայս տեսլեանս Հեղինակն, ի վերջ գրոցս շեշտելով ուժգնակի. « Եւ ինքն Եզր վերացաւ և համբարձաւ ի դունդ նմանողաց իտրոց ընդ սուրբս և ընդ արդարս », և թէ « Գրեցի զայս և յորջրջեցայ դպիր Բարձրելոյն »: Նախադասութեանց գէթ առաջինն՝ միջանկեալ է և յոյժ կասկածելի, զի գրիչն, — եթէ իրօք Եզր եղած լինէր, — չէր կարող իւր գրոց գրութեան ժամանակին աւելնթեր յիշատակել նաև մահը. Հետևարար, ոչ այլ ինչ է այդ՝ բայց եթէ կրկնութիւն մի Ծու համարին, ուր ըսուած է անորոշակի առ Եզր, թէ « Զի դու համբարձցիս ի մարդկանէ, և ընդ իս լինիցիս այսուհետև, և որ քեզ նման որ իցե »: Միով բանիւ, գրոցս Հանգոյցն ոչ ինչ նուազ կնճռոտ է և կասկածելի վերջաբանին մէջ, որքան ի սկզբնաւորութեանն:

Ուզելով ամփոփել գրոցս և անոր աղբերաց ուսումնասիրութեան ընդարձակ սահմանքը մէկ գլխաւոր կետի վերայ, կը նշանակենք նախ Ռիչ. Կապիչի վերլուծութեանց արդիւնքը: Գիտնականիս կարծիքով՝ Եզրի անկանոն գիրքն բաղկացած է Հետևեալ վեց ազրիւրներէն. այսինքն են E (Esdras Apoc. 1.) Եզրայ Յայտնութիւն, գրուած մօտ ամին 31 յետ Քրիստոսի. S (Salathiels Apocalypse) Սաղարիելի Յայտնութիւն, գրուած յամի Տեառն 100 ի Հոովմ. A (Adlergeschichte) Ալթաշայ պատմութիւն, գրեալ յամն 90 յետ Քրիստոսի ի Զեալոտ. M (Menschensohn) Որդոյ մարդոյ տեսիլն, գրուած յերուսաղէմ, Պոմպէոսի ժամանակ. E² (Erzastück) Եզրեան հատակադրոք, գրուած յամի Տեառն 100 և ժամանակակից Սաղարիելի. R (Redac.) Խմբագրական հատուածք, գրուած յամի Տեառն 120 ի Զեալոտ:

Առաջնոյն տրուած են գլ. Դ. 52— Ե. 13^m, Զ. 11—29, Է. 26—44, Ը. 63— Թ. 12:

Երկրորդին տրուած գլ. Գ. 1—31, Դ. 1—51, Ե. 13², Զ. 10, և Զ. 30— Է. 25, Է. 45— Ը. 62, Թ. 13— Ժ. 57, ԺԲ. 40—48, ԺԳ. 28—35:

Երրորդին զլ. Ժ. 60- ԺԲ. 40:

Չորրորդին ընծայուած են ԺԳ զլուխն՝ հանդերձ խմբագրական բազմաթիւ յաւելուածներովն:

Հինգերորդին ԺԴ. 1-17m, 18-27, 36-47:

Վեցերորդին՝ զլ. Գ. 1, 32-36, Ժ. 58, 59, ԺԲ. 9-34, 37-39 (°), 49-51, ԺԳ. 139-15 (°), 16-20m, 21-24, 26^a, 29-32, 54-58, ԺԴ. 8, 17^a, 48-50:

Մենք մեր ցայս վայր ըրած ուսումնասիրութեանց և ցուցմանց համաձայն, երեք զլիւսուր աղբիւրներէ բազկացած կը տեսնենք այս անկանոն գրութիւնս, այսինքն են՝ ա. Եզրի անուամբ Հրէից մէջ շրջող նախաքրիստոսեան աւանդութիւններ, որոնք մինչև Մակարայեցոց ժամանակը կարող են հասնել. ք. Սաղաթիելի ձեռքով Երուսաղեմի կործանմանէն անմիջապէս վերջ, կամ Դոմեախանոսի Հրէից դէմ յարուցած հալածանքէն ետքը կատարուած խմբագրութիւնն. գ. յամի Տեառն 120-314 յունարէն խմբագրութիւն մի, որոյ հեղինակի խաղացած դերն՝ Սաղաթիելեանէն ոչինչ նուազ ընդարձակ է:

Աղբերացս առաջինն՝ ինքնուրոյն գրուած մ'եղած չէր կարող լինել, որոշ ժամանակի մի կամ գրչի ծնունդ. վասն զի անոր անուան վերագրեալ հատուածքն՝ մերթ կանոնական ծանօթ գրոց և մերթ հակապատմական և հակաժամանակագրական եղելութիւններ կը պարունակեն, որոնք առանց միւսներուն՝ ամբողջ մի չեն կազմեր: Երկրորդն՝ աւելի ինքնուրոյնութիւն կազմող բնութիւն մ'ունի, թէ՛ ձևակերպուած տեսլեանց նիւթոց և թէ՛ որոշ ձկտման համար, որոնք վերջ նշանակուած ժամանակի հրէական ազգին և պատմութեան ոգւոյն համաձայն են: Երրորդն՝ ձուլումն է հրէական Հին աւուրց աւանդութեանց և Գ դարու քրիստոնէական եկեղեցւոյ միատիկական վարդապետութեանց, այլաբանական ձևոց ներքև, որոց գրիչն իսկ սարտամ և շփոթ գաղափար ունի: Բան մի, որ ընդհանուր կերպով երեքին մէջ ևս ակնեքև կը տեսնուի, է այն հասարակաց աղբիւրն, որուն վերայ առանց երկրայութեան ձևուած և կազմուած է ամբողջ գրութիւնն կամ Եզրի Դ գիրքն. և այս աղբիւրս է, ըստ իս, Բարդաքայ Յայտնոչիանն¹, որուն յունական թարգ-

1. Այս գրուածս, որուն ասորերէն Հին Թարգմանութիւնն միայն ծանօթ է այսօր, զոր Հ. Կերիանի՝ Ամբրոսեան գրատան մէջ Չ զարուժ մագաղաթի վերայ գրուած ձեռագրի մի (B. 21 inf.) համեմատ լատին թարգմանութեամբ հրատարակեց, յամին 1866, պէտք չէ շփոթել ոչ Բարուքայ երկրորդականոն թղթին և ոչ

մանութիւնն, և որ աւելի ցաւալին է՝ երրայական բնագիրն, արդէն ի վաղուց անյայտացած են:

Ինձ յայտնի չէ, որ Եզրի Դ գրքին և Բարուքայ Յայտնութեան ուսումնասիրութեամբ պարապող քննադատներէն մին, դրականապէս պաշտպանած ըլլայ Հոս արտայայտած մեր կարծիքը, թէպէտև շատեր նկատած են այդ երկու գրուածոց մէջ եղած սերտ աղերսն և նմանութիւնները: Գուցէ իմ առած այս քայլս՝ ոմանց յանդիմանական երևի. բայց ես՝ յետ կրկին և կրկին բաղդատելոյ այդ գրուածներն իրարու հետ՝ ենթադրութիւնս կատարեալ համոզման փոխուեցաւ, այնու մանաւանդ՝ երբ տեսայ, որ Եզրի Դ գրոց մէջ որքան որ նման տեղեր և տեսիլներ՝ իրարու անկապ և հակասական են, և յաճախակի կրկնաբանութիւններով և հակապատմական յառաջբերութեամբք կասկածելի, նոյնքան ևս ընդհակառակն Բարուքայ Յայտնութիւնն՝ իւր միօրինակ ոճով, սերտ կապակցութեամբն և պատմական ակնարկութեանց մասին եղած համեմատական ճշդութեամբն՝ աւելի բնագիր լինելու առաւելութիւններ ցոյց կու տայ: Այս ամենայն մեր մինչև ցարդ մէջ բերած մասնական օրինակներէն և դիտողութիւններէն իսկ փոքր ի շատէ տեսնուեցաւ. բայց այժմ՝ այդ ճշմարտութիւնը հաստատուն և ընդարձակ հիման վերայ բարձրացընելու համար, կ'ուզեմ ընդհանուր համեմատութիւն մ'ընել, ըստ

այլ. Պարթ. Բարուքայ և Աբդուլուսայ — Τα Παρζλειτόμενα Ἰσραήλιου τοῦ προφήτου կոչուած առասպելալոյզ երկասիրութեան հետ, որուն վերայ խօսեցանք նախորդ գլուխներուն մէջ: Դարձեալ, այս տեղ ես կ'անջ պիտի շտառնում ընդարձակաբար ապացուցանելու, թէ այս երկու գրուածներէս ո՞րն արդեօք իբրև սկզբնաղբիւր ծառայած է միւսին. փոփոքոջ կարող են այս մասին կարելի Դիմանի, Պրեհորիսի, Քեռիկի, Ռենգել Հաոխի, Շիւրերի և Բոնդէյի ուսումնասիրութիւնք: Այլ առանձնաբար ըրած քննութեանցս համաձայն՝ ինձ հաւանական կ'երևի, որ վերջինս, զէթ ըստ այժմեան ձեռն, զոր ընծայեն մեզ յուշարէն և հպկական թարգմանութիւնք, առաջնոյն վերայ յետոյ ուրեմն ձեացած է, յոյն խմբագրի ձեռքով: Հաոխ՝ նկատելով իբրք որ անոր մէջ 12 Առաքելոց և 2 իթենեաց լեբան յիշատակութիւն կայ, կ'սակօծեցաւ թէ քրիստոնէի մի ձեռքով գրուած ըլլայ, Աբրեհասու կայսեր ժամանակ. այն է յամի Տեանն 130, ի բաց առեալ անոր Ե դիտու 30, և 9 դիտու 4 համարներն, որոնք 66-70ին թերևս գրուած ըլլան: Իսկ Շիւրեր (ձ. ձ. Օ. cal. 82) քննելով գրուածիս 6, 15, 14, 8, 2-3 և այլ տեղերը, զլիտվին հրեական ծաղումն ցոյց կու տայ: Բարուքայ Յայտնութիւնն՝ ընդհակառակն՝ բացութեամբ մի քանի քրիստոնէական ներմուծութեանց, ամբողջապէս հրեական ծաղումն ունի, և զիանականներէն ոմանց կարծիքով Տիտոսի ձեռքով կոտորուած Երուսաղեմի կործանմանէն անմիջապէս վերջ գրուած ըլլալու է: Յամենայն դէպս, սա բնագիր ըլլալու ամէն յատկութիւններ ունի իւր մէջ, քան զայն:

կարելոյն համառօտ, բոլոր այն նմանութեանց՝ որք աչքի կը դարնեն երկուստեք, ցոյց տալով, յամենայն դէպս, Բարուքայ Յայտնութեան առաջնութիւնը:

Յայտնութեանս Հեղինակն՝ Յուդայի Թագաւորին Յեքոնիայ, այն է Յովակիմայ, 30-35 տարին հանդիպած կը պատմէ Յրուսաղեմի պաշարումն և կործանումը, և ինքզինքը ականատես կը ներկայացնէ. զի գրութեան սկիզբէն մինչև վերջ հոն է, որ կը տեսնէ անոր մասին կատարուելիք յայտնութիւնները և ի գրի կ'առնու: Իսկ Եզր Սաղաթիէլ՝ այդ դէպքէն ետքը, կամ լաւ ևս գերութեան 30րդ տարին կը ներկայացնէ ինքզինքը Բաբելոնի մէջ, և հոն կը տեսնէ իւր առաջին երեք տեսիլները: Չարմանալի է երկու կողմէն 30րդ թուի զուգահիշակութիւնն, զոր ես դիտմամբ և պատճառի մի վերայ հաստատուած կը համարիմ, որով Բարուք գերութեան սկիզբը, իսկ Եզր՝ մէջը ուզած են նշանակել: Տարակոյս չկայ, թէ Բարուքէն Յովակիմայ Թագաւորութեան համար գծուած յիշեալ տարեթիւն՝ անճիշդ է, որովհետև նա 10-11 տարի հագիւ Թագաւորած է և գերութիւնն այլ անոր զահակալութեան երկրորդ տարին հանդիպած. բայց Եզրի գրոց Հեղինակն՝ առանց ուշ դնելու այդ պատմական սխալին, իւր նախորդին 30րդ թիւը ծառայական նմանողութեամբ ի գործ ածեր է, մի ուրիշ աւելի մեծ անտեղութիւն յառաջ բերելով, այսինքն է՝ դնելով Հրէից առաջին գերութիւնն ի Բաբելոն, յամին 588 և վերջինը՝ յամին 606, նա պիտի չկարենար այլ ևս որդի Սարեայ գինքը անուանել, զի նա 588ին գերելոց մին էր, և ոչ 458ին Յրուսաղէմ դարձած լինել կարէր, — ինչպէս ինքն ուզած է հաւատացնել, վերջին չորս տեսիլներուն մէջ, — և ոչ այլ յամի 5042 արաշխարհի այդ գիրքը գրած լինել: Ուրեմն, Եզրի գործածած ինչպէս 30 տարեթիւն, այսպէս և տեսլեանց հանդիսավայր եղող տեղոյն՝ Բաբելոնէն յԵրուսաղէմ փոխուիլն՝ Բարուքայ Յայտնութեան հետևողութեան ուղղակի արգիւնք համարելու ենք:

Բարուքայ Ժ-ԻԵ գլխահամարներու մէջ կը խօսուի ամպարիչս և անօրէն Բաբելոնի բարձր ի գլուխ երջանկանալուն և Սիոնի՝ բարձի թողի լինելուն վերայ, հանդերձ գանգատանօք առ Աստուած, կը լսուի Բարձրելոյն աներևոյթ ձայնն, որ կը մեկնէ տեսանողին իրաց բուն պատճառքը: Հեղինակն՝ Ադամէն կ'իջեցնէ իսրայելեան ժողովուրդը և Ադամայ մեղօքը վարակուած. կ'երանէ մեռելները, որոնք չտեսան Յրուսաղեմի անարգութիւնը. կ'ողբայ մնացողաց հետ նա և ինք զինքը, որ անոր վերջին ժամանակի աղետիցն ականա-

տես եղաւ, կը խօսի ի կատարածի կատարուելիք նշանաց վերայ, այլուք հանդերձ: Արդ, այս ամենայն կը գտնենք նոյնպէս Եզրի դրոց Գ-Ն գլուխներուն մէջ, բայց այնպիսի նորանոր պարագաներու հետ լծորդուած և այնպիսի հանգամանօք¹ ընդարձակուած, զորս ի զուր է որոնել առ Բարուքայ: Սորա հեղինակին եթէ ծանօթ եղած լինէր Եզրի այդ գրուածն, կարելի չէ, որ նա այդ պարագաներէն մին կամ միւսը յիշած չըլլար. ուրեմն պէտք է եղրակացնել, թէ կեղծ Եզրն է հետևողն և յարատողը: Այս բանս բաց ի այն երկուստեք եղած բազմաթիւ նախադասութիւններէն², որոնք իրարու հետ բառական կերպով իսկ նման են, յայտնի կը տեսնուի նաև հետևեալ ընդհանուր երևութէն. այս ինքն է՝ քիչ յառաջ նշանակուած գլուխներուն մէջ՝ Ուրիել հրեշտակի բնաւ յիշատակութիւն չկայ Բարուքայ քով, և ոչ իսկ յատուկ տեսլեանց. այլ ուղղակի Աստուծոյ հետ կը խօսակցի նա: Եզրի քով ընդհակառակն, Ուրիել ներմուծուած է, անոր յայտնութիւններուն՝ տեսլեանց ձև տալու համար. և Աստուծոյ համար առ Բարուքայ Dominus dominator գործածուած տիտղոսն իսկ՝ առ Եզրի անյարմար կերպով յաճախ հրեշտակին յարմարցուած է:

Բարուքայ Ե զլխու մէջ, Հրէից հինգ պատուաւորներուն՝ Կեդրոնի հովտին մէջ ժողովուրին, Երուսաղեմի պաշարուած ժամանակ, և Բարուքայ հետ վերահաս վտանգի վերայ խորհրդակցելն՝ տեղւոյն ամենայարմար և ամենաբնական բան է. բայց երբ նոյն ան-

1. Օրինակի աչազաւ, Գ զլխու 3 համարին մէջ՝ հրոյ, հովի և անցեալ ժամանակի նմանաբանութիւններն, — 13-16 համարներում՝ անտառի և ծովու իրարու տեղ փոխանակելու այլաբանութիւնն, — 31-34 համարին մէջ՝ ցորենի օրինակաւ շաքիսց սերմանելուն և աճեցման, և 40-42 համարներում՝ ծննդական արզանդի և սողմի, այսպէս և զծոխաքնակ հոգւոց վերաբերեալ նմանաբանութիւններն. Ե զլխու 24-27 համարներում՝ որթի, շուշանի, աղաւնոյ, ոչխարի, Յորդանանու և իւրայելի օրինակներն, և այլք բազումք:

2. Ինչպիսիք են, օրինակի աչազաւ, Գ զլխում՝ աշխարհի վերածուիլն իւր նախկին լուծեան, — ԺԻ զլխում՝ աշխարհս իւրայելեան ժողովրդեան համար ստեղծուելուն, սոցա ազատման անցնելուն, — ԻԲ զլխում զծոխոց և կայնից՝ իրենց մէջ ընդունած հոգիները և մարմինները վերադարձնելուն. երկրի և սերման՝ մօր արզանդի և ժամանակաւոր ծննդեան հետ, այսպէս նաև ծովու նեղուցի՝ կամ նաւահանգստի աղցաւոր նեղութեանց և զիւրից հետ եղած բազմաթիւններն, — ԺԳ զլխում ազամածնաց թուլոյ որոշման և լրանալուն, — կենդանեաց և մեռելոց բնակութեան, — զատաստանի յազաղման և Աստուծոյ երկայնմտութեան. — հուսկ ապա ԻԵ զլխում՝ ի վերջ աշխարհիս նորա բնակչաց վերայ զալիք նշանաց և նեղութեանց վերաբերեալ առանձնախօսութիւնքն, և այլն:

ձիւնը՝ աղաւաղ ձևով մէջ բերուած կը տեսնենք նաև Եզրի ԺԴ գլուխում, ԶԿ գրքերը ընդօրինակելու համար, և այն իսկ բացական դաշտի մի մէջ, մանաւանդ թէ ճիշդ մի և նոյն կաղնոյն ներքև, ուր Բարուք իւր երկու թղթերը գրած կ'աւանդէ, այլ ևս չենք տարակուսիր, թէ այդ տեղին ըլլայ բանաբարութիւն Բարուքայ: Այս՝ անկէջ իսկ յայտնի է, զի Բարուքէն յիշուած Երեմիա ծանօթ առնունը՝ Սեղամիայի փոխեր է՝ իւր հակապատմական գործը չմատնելու նպատակաւ:

Բարուքայ ԻԶ գլխում, կը հարցուի առ Բարձրեալն՝ գալիք նեղութիւններու ի՞նչ ժամանակ հանդիպիլն և որքան տևելն, և ի՛չ գլխում՝ անոր կը պատասխանուի, թէ ժամանակն 12 մասունքներու բաժանուած է. և թէ անոնց իւրաքանչիւրն վերապահուած է անոր՝ որ ժամանակի մէջ կազմուած է: Ապա մի առ մի կը թուարկին այդ մասունքն. առաջինն՝ պիտի լինի սկիզբն խոսովութեան և աղէտից, իսկ վերջինն՝ իբրև շփոթ պարաուութիւն մի բոլորին միանգամայն: Ժամանակի աղիտարեր այս մասունքս՝ մին միւսոյն հետ խառնուած է և իրարու կը սպասահարկեն. իրարմէ կը ծագին և ուրիշներէ կ'առնուն, և երկդումբքս կը կատարելագործուին, այնպէս որ՝ այն օրերուն մէջ երկրիս վերայ բնակողներն պիտի չիմանան այն ժամանակաց կատարածը: Ի՛նչ գլխում կը նշանակուին, — իբրև չափ համարոյ այն ժամանակին, — երկու մասունք՝ եօքներորդք եօքն եօքներորդաց: Ի՛թ գլխոյն մէջ լուծումն կը տրուի նախընթացին մէջ եղած հարցին, թէ այն ամենայն պիտի կատարուին երկրիս վերայ՝ ո՛չ եթէ այս ինչ կամ այն որոշեալ տեղոյ մէջ, այլ ամենուրեք, և թէ կենդանի մնացողք առհասարակ պիտի կրեն զայնս. բայց անոնք միայն պիտի պաշտպանուին, որոնք ստոր երկրին մէջ կը գտնուին այն ժամանակ: Ժամանակի այդ 12 մասունց կատարմանէն յետոյ պիտի յայտնուի Մեսիայն. պիտի յերևան գան նոյնպէս իրենց բնակութենէն Բեհեմոտք և Լեվիաթան վիշապներն, զոր ստեղծեց Աստուած հինգերորդ օրը և պահեց մինչև այն ժամանակ, յորում նոքա կերակուր պիտի լինին անոնց անուռն, որոնք ողջ մնացին (աս. residui fuerint): Լ գլխոյն մէջ կ'աւանդուի յետ լրման ժամանակաց Մեսիայի գալուստն՝ փառօք, անոր յուսով բոլոր մեռնողներուն յարութիւնն, մեռելոց կայաններու բացուիլն, յորոց դուրս պիտի գան արդարոց հոգիներն և մեղաւորացն՝ յոյժ բազմութիւ, « միանգամայն իբրև ի միում խմբի և միոյ հոգւոյ ». առաջիններն՝ պիտի հրճուին և վերջիններն՝ հեծեն

սարսափով, տեսնելով իրենց վերահաս տանջանքը, և այլն և այլն:

Արդ, դառնալով առ Եզր՝ մենք կը գտնենք զայս ամենայն, ի հարկէ տարբերութիւններով. բայց ուշադրութեան արժանին այս է, որ վերջին գրութեանն հեղինակն՝ առաջնոյն համառօտիւ յիշատակած նիւթոց վերայ ահագին տիեզերք մի ստեղծած է տեսիլներու, միշտ իւր երեակայեալ Ուրիելի կամ երեակայութեան օժանդակութեամբ: Չ գլխու 7-10 համարներում՝ այս հարցմանս. « Quæ erit separatio temporum, aut quando prioris finis, aut sequentibus initium? » կը պատասխանուի. « Արրահամէն մինչև Արրահամ »: Վասն զի աստի ծնան Եսաւ և Յակոբ. առաջինն՝ է վերջ այս ժամանակիս, իսկ երկրորդն՝ սկիզբն հանդերձելոյն: Պատճառն. որովհետև Յակոբ ծնանելուն ժամանակ՝ ունէր Եսաւայ զարչապարէն, և թէ զարչապարի և ձեռաց միջև ուրիշ բան պէտք չէ որոնել:

Կանխաւ մենք ցոյց տուինք, թէ այս տեղիս՝ յետին ժամանակի բարձունական աւանդութիւն մ'է, և ուրիշ բան նշանակելու է՝ քան թէ նիւթապէս ժամանակ. այսինքն է՝ անդրանկութեան և կրտսերութեան խնդիր է: Իսկ ԺԴ գլխու 11-12 համարներում՝ յայտնապէս կը տեսնուի Բարուքայ Հետ ունեցած աղբսն, ուր անմիջապէս 12 մասանց բաժնելով ժամանակը, կ'ըսուի, որ անոր տասն և կես մասունքն՝ արդէն անցած են, բայց կը մնան դեռ երկու մասունքն՝ յետ միջեոյ տասներորդ մասին: Տեղւոյս յետաձգումն Եզրի քով՝ անով միայն հասկանալի է, որովհետև Բարուքայ Յայտնութեան ԻԶ գլխում նշանակուած 12 շարիքն՝ սա՛ վեց տեսիլներու մէջ, կրկին ուրիշ դիպաց Հետ զուգել ուզած է, զանիկայ թիւր կերպով հասկանալով. սակայն Բարուքայ այդ տեղւոյն միտքն այլ ինչ է, այսինքն են՝ տասն և կէս ցեղերու գլխէն անցած աղէտներն. և մնացած երկու մասունքն, որոնք Եզրի մեկնութեամբ՝ իբր թէ երկու և կէս ցեղերուն վերապահուած են, որոնք բնաւ զերի դացած չեն ի Բարեղոն, այլ իրենց հողին վրայ մնացած. մինչդեռ, ըստ Բարուքայ՝ սոցա զերութիւնն ևս իբրև արդէն կատարուած իրողութիւն նկատուած է, ԿԴ գլխու Հետևեալ բացատրութեան համեմատ. « Sed etiam contro duas tribus et dimidiam exiit sententia, ut etiam ipsæ captivæ abducentur ».

Իսրձեալ, ըստ Բարուքայ՝ ժամանակի 12 մասանց մէջ զալիք շարիքն ընդհանուր նկատուած են, այսինքն է՝ աշխարհիս ամէն կողմ, և ոչ թէ Իսրայելի 12 ցեղերուն համար միայն: Կեղծ Եզրն՝

հակառակ Բարուքայ և տարբեր մտքով իր գրոց վերջին գլխում փոխադրած է ժամանակի 12 մասանց բաժանման խնդիրը, բայց այդ գործողութիւնն իսկ կը մատնէ գործողին ձկտումը. վասն զի 2 գլխու 12 համարին մէջ կը խնդրէ իմանալ այն նշանաց կատարումը, և 20-28 համարներում՝ մէջ կը բերէ զանոնք, սկսելով ճիշդ Բարուքայ Ի՛ի գլխու 1 համարի այս նախադասութեամբս. « Et aperiunt libri » և այլն, կ'աւարտի ԻԹ գլխու 3 համարի համանման այս նախադասութեամբս. « Et erit omnis qui derelictus fuerit (ըստ Բարուքայ in illis diebus in terra ista) salvabitur », և այլն:

Եզրի 2 գլխու 35-59 համարներում՝ վեցօրեայ արարչութեան ընդարձակ նկարագիրն իսկ՝ ընդլայնումն է Բարուքայ ԻԱ գլխու աղօթքին մէջ եղած հակիրճ ակնարկութիւններուն: Եւ ահաւասիկ ապացոյցներն. Ի գլխոյն մէջ Աստուած կը պատուիրէ Բարուքայ, որ առանձնանայ եօթն օր և պահօք պատրաստէ զինքը, և թէ այնուհետև պիտի գայ և յայտնէ իրեն ժամանակաց գաղտնիքը: Այս պատուէրս կատարած ժամանակ, կը յիշէ տեսանողն, — իւր առանձնախօսութեան մէջ, — Աստուծոյ ամենակարող զօրութիւնն և արարչագործութիւնքը: Արդ, սոյն պարագաներս կը գտնուին ճիշդ նոյնպէս Եզրի 2 գլխու 31 համարին մէջ: Ըստ Բարուքայ՝ ժամանակն աշխարհիս արարչութեամբ կը սկսի և կատարածովը կ'ըստ պատի. այս ամենաճշմարիտ է և ըստ ինքեան Հասկանալի: Իսկ ըստ Եզրի՝ Աբրահամով, որ ոչ է ուղիղ, այլ բարունական զառանցանք: Բարուքայ քով ժամանակի 12 բաժանմունքն՝ անմիջապէս անոր ծանուցած տեսլեան մէջ կը յայտնուին և իրենց բուն նշանակութեամբ. իսկ առ Եզրի՝ ընդհակառակն՝ Ժ՛ի գլխում, որ բնաւ չյարմարի 2 գլխու 20-34 համարներուն: Թերևս կարծուի, թէ այս անգամ Բարուք ըլլայ բանաբաղն, դիտելով որ, սա ԻԹ գլխում Բեհեմովթ և Կեվիաթան գազանները յիշելով հինգերորդ օրը ստեղծուած կը դնէ զանոնք, այսպէս. « Quæ creavi in die quinto creationis, et reservavi eos usque ad illud tempus, et tunc erunt in escam omnibus, qui residui fuerint », որ Եզրի 47 համարին մէջ ևս կը գտնուի: Սակայն պէտք է ըսել, թէ Բարուքայ այդ տեղին՝ ուղղակի Մենդոց գրքի Ա. գլ. 21 համարում աւանդածին համաձայն է, քան Եզրի. վասն զի վերջինս՝ Բեհեմովթը իբրև ցամաքաբնակ չորքոտանի մի նկատած է որջակի, ուր են montes mille, որ Մենդոց յիշեալ գլխու 21-24 համարներուն կը հակառակի, զի աստ չորքոտանիք և գազանք՝ վեցերորդ օրը ստեղծուած կ'աւանդուին: Ուստի, Եզրի այս

ախալն ուրիշ կերպով չի մեկնուիր, այլ ուղղակի Բարուքայ յիշեալ տեղւոյն կոյր հետևողութեամբ և թիւր հասկացողութենէն յառաջ եկած է ուղղակի: Այժմ, այս անկէց իսկ կը տեսնուի, զի Բարուք՝ Ենովջայ գրոց ՄԷ գլխու 7-8 համարներու և Յորայ Խ գլխու համաձայն՝ այլաբանօրէն իբրև երկակենցաղ և երկասեռ, այսինքն է՝ ջրային և ցամաքային արու և էգ վիշապներ նկատած է Բեհեմովթը և Լեվիաթանը, որոնք կը շրջին աներևութաբար մերթ ծովու անդնդոց խորը և մերթ ցամաքի վերայ՝ յետ ջրհեղեղին, « արարեալ խաղալիք հրեշտակաց », և թէ անոնցմով պիտի « կերակրին ագիւք »: Արդ, ծանրակշիռ այս երկու հեղինակութեամբք կը կործանին ի հիմանց նաև Հերման Ռէննչի ենթադրութիւնքն, որ Բարուքայ ի՞նչ գլխու մէջ բերուած տեղին՝ յորում ըսուած է, թէ այդ երկու վիշապներն Մեսիայի ժամանակ պիտի յայտնուին և ըլլան կերակուր մնացողաց ժողովրդեան, Թարգումէն ներշնչուած և նոր համարեցաւ:

Յորայ տեղին ամբողջ և անոր բուն իմաստը ցուցած ենք արդէն. այժմ դնենք թարգմանաբար նաև Մնովքայն, որոյ հեղինակն խօսելով վերջին դատաստանի օրուան վերայ՝ կըսէ. « Յաւուր յայնմիկ հանցէ (Տէր) ի սևռանդ չարաց երկոսս հրէշս, մին արու և միւսն էգ: Էգն կոչի Լեվիաթան, որ բնակի ի յարձանս ծովոս, ի վերայ ջուրցն վտակաց. իսկ արուն անուանեալ Բեհեմովթ, որ գալարէ զպատուածս իւր խոտորականս՝ յանտեսանելի ոտեք յանապատի »: Նոյն իսկ Եզրի. « Et tunc conservasti duo animalia... et servasti ea ut fiant in devorationem quibus vis et quando vis » խօսքերն՝ զոր Հերման Ռէննչ զուրս թողած է, ըստ իս՝ նոյն և նման են Բարուքայ վերը մէջ բերուած տեղոյ ենթագծուած խօսքերուն, և հետևաբար, անկէ ներշնչուած: Իսկ հազար յերանց, երկրիս ջրային և ցամաքային մասանց իրարու հետ ունեցած համեմատութեան վերաբերեալ մասն՝ հաւանօրէն բարունական և նոր յաւելուած մ'է, և է նշան յետնութեան Եզրի գրոց:

Անդրագոյնս յառաջելով կը տեսնենք, որ Եզրի է գլխու 1-16 համարներն, ուր առակաւ նեղուցի և ծովու, նրբուղոյ և քաղաքի՝ կը խօսուի Իսրայելի ժամանակաւոր նեղութեանց և հանդերձեալ վայելչութեանց վերայ, շինուած է Բարուքայ ի՞նչ գլխու 1-2 համարներուն վերայ. 26-44 համարներում՝ Մեսիայի յայտնուելուն և աշխարհիս վերայ հաստատած թագաւորութեան մասին եղած մանրամասնութիւնքն՝ մեկնաբանութիւններ են Բարուքայ ի՞նչ և Լ գլխոց, ուր համառօտիւ կը նկարագրուին երկրիս բարութիւնքն՝ գալստեամբ

Որդւոյ Բարձրելոյն, զոր կեղծ Եզրասն՝ թիւր մեկնութեամբ 30 (00) երեսնամեայ երկրաւոր թագաւորութեան փոխած է, այնպարմար կերպով միացնելով անոր հետ նաև մեռելոց յարութիւնը: Փոխառութեանս ապացոյց են Եզրի 27 համարին մէջ մնացողաց կամ փրկելոց վերաբերեալ նախադասութիւնն, որ կը համապատասխանէ Բարուքայ այն գլխու 3 համարի նախադասութեան, ուր կը յիշուի Մեսիայի թագաւորութեան պատկանող ժողովուրդն. դարձեալ, յիշեալ գլխու 75-116 համարներն, յորս կը խօսուի ընդարձակաբար հոգւոց երեք վիճակաց վերայ ընդհանուր կերպով և ի մասնաւորի մեղաւորաց՝ եօթն ճանապարհով տանջուելուն, և արդարոց՝ եօթներանեան վայելքն. հոգւոց՝ մարմնէն բաժնուելէն վերջ դեռ ի վայելք կամ ի տանջանս չմտած՝ եօթն օր ժամանակ ունենալն, տեսնելու նախապէս իրենց համար պահուած վայելքը կամ տանջանքը. և հուսկ այնուհետև ազգականաց և բարեկամաց իրարու չկարենալ օգնելն, եթէ կը պակասին գործք բարիք. այս ամենայն յերկրուած են Բարուքայ ԾԱ գլխում աւանդուածներուն վերայ, ինչպէս 34-37 համարներն այլ՝ Բարուքայ Լ գլխու 2-5 համարներում աւանդածին վերայ: Սակայն պէտք է դիտել, որ Բարուքայ ԾԱ գլխում աւանդուածներն՝ որքան որ ըստ կարգի են և կը համապատասխանեն նախընթաց գլխոյն, այնքան ևս Եզրի քով տեղէն դուրս են և Մեսիայի 30 (00) ամեայ թագաւորութեանն այնպարմար: Բարուք՝ նախընթացաբար, այն է՝ ԼԲ գլխում, յետ յայտարարելոյ թէ երկրաւոր Սիոնն կրկին պիտի կանգնի և կործանի, և թէ Բարձրեայն պիտի նորոգէ իւր արարածը, 49 համարին մէջ կը հարցնէ, թէ «*In quam forma vivent viventes in die tuo? aut quomodo permanebit splendor, qui post illud tempus?*» այսինքն է՝ յետ յարութեան. ապա ԾԱ գլխում կը նկարագրէ երանական հոգւոց վիճակը, զորս աւելի գերազանց կը գտնէ իւրք քան զհրեշտակս, բայց մեղաւորաց մասին՝ թեթև ակնարկութեամբ և եթ կ'անցնի: Ուստի, այս իրողութեանց հանդէպ կրնանք ըսել, թէ Եզրի գէթ այս մասին եղած 81-89 և 100-115 համարներն՝ յետոյ ներմուծուած են, և այդ պատճառաւ է, որ Բարուքայ ԾԱ գլուխն՝ Եզրի քով շատ յառաջ մղուած է: Ասոր յայտնի նշան է և Բարուքայ ԽԸ գլխու, «*Oh, quid fecisti Adam omnibus, qui a te geniti sunt?*» նախադասութիւնն, որ Եզրի քով կը գտնուի բոռ առ բոռ, բայց յետաձգուած է 118 համարներում մէջ. և յետաձգուած է՝ մեղաւորաց մասին հնարած եօթն պատժոց նկարագիրը ընդ մէջ զետեղելու պատճառաւ, և իւր ձեռնմխութիւնը զգալի չընենելու:

Բարուք՝ իւր առաջին տեսիլէն վերջ՝ ԼԲ գլխում, կը ժողովէ ժողովրդեան ծերերը Կեղրոնի հովտին մէջ, և կը յիշեցնէ անոնց, որ շմոռնան Սիոնը և Երուսաղեմի աղէտները. վասն զի Բարձրեալն քիչ ժամանակէն պիտի կործանէ զանիկայ և վերստին շինէ. բայց այդ շինութիւնն դարձեալ պիտի աւերի և Երուսաղէմ մնալ լքեալ, մինչև որ վերանորոգուի ի փառս և պսակուի յաւիտեանկան պսակաւ: ԼԴ գլխում կը յորդորէ զանոնք, որ հեռանան իրմէ, մինչև որ ինքն երթայ առ Սուրբն սրբոց և խնդրէ Սիոնի համար նոր յայտնութիւններ: Արդ, սոյնը կը գտնենք նոյնպէս Եզրի քով, Ծ գլխում. ուր յետ առաջին տեսլեան՝ ժողովրդեան գլխաւորն Փարթիէլ կու գայ առ Եզր ի դաշտ անդր, և կը յորդորէ զնա, որ չլքանէ զիրենք ամպարչտաց ձեռքը. իսկ Եզր յետ կը դրկէ զնա մինչև երկրորդ տեսլեան կատարումը: Այո՛, այս ղուգադիպութիւնս դիպուածական չէ՝ այլ դիտմամբ, ինչպէս յաջորդին մէջ ակներև պիտի տեսնուի Եզրի նմանողութեան հետ՝ նաև խաղացած դերն:

Բարուք՝ ԼԵ գլխում կ'ողբայ մայր Սիոնի և տաճարին վերայ, և հոն կը գիշերօթէ, ուր էրն. ԼԶ գլխում կ'ուռնենայ հետեւեալ տեսիլը. ընդարձակ անտառ մի տնկուած կ'երևի դաշտին մէջ, զոր կը շրջապատեն բարձրաբերձ շենքեր, — անտառին դիմաց կը բարձրանայ որքատոռակ մի, որուն ներքեւէն կը ըզլտէ հեզասահ աղբիւր մի, որ հասնելով անտառը՝ կը փոխարկուի ահագին ծովոռա՝ մ'ալիքներոռ, որոնք կ'ողողեն զանտառը, արմատախիւ կ'ընեն ծառերը և կը տապալեն լեռները. ամենայն ինչ հարթայատակ կը լինի, բաց ի նռձիւք մի: Եւ երբ այս իսկ կը խոնարհի, ալիքներն հասնելով որթատնկոյն՝ անդէն կը փոխուին հեզիկ աղբեր մի: Այն ժամանակ որթատուկն կը բարբառի առ նոճին. Ո՞չ դու ես այն նոճին, որ մնացեր չարաշուք անտառէն և քու ձեռքովդ չարունակուեցաւ չարութիւնն. ուրեմն՝ լեր վիճակակից անտառիդ, մինչև որ գայ վերջին ժամանակն և դու մեծապէս տանջուիս: Թեո այնորիկ կ'այրի նոճին, իսկ որթատնկոյն՝ կ'անի դաշտին մէջ եղող ժաղիկներոռ և տռակներոռ հետ ի միասին: ԼԸ գլխում կը խնդրէ տեսանողն Աստուծմէ այս տեսլեանս մեկնութիւնը, և յաջորդ չորս գլխահամարներուն մէջ կը մեկնուին անոր գաղտնիքը: Անտառը լեռներով ի միասին՝ է Սիոնը կործանող Բաբելացոց թագաւորութիւնն, որ ժամանակաւ տեղի պիտի տայ ուրիշ թագաւորութեան մի՝ ինչպէս սա այլ երկրորդի մի, երրորդն չորրորդի մի, որ ամենէն հզօրագոյնն պիտի լինի և չարագոյնն. որ պիտի բարձրանայ Լիբանանու մայրիի մի պէս: Անոր մէջ ծած-

կուած են ամէն անօրէնութիւնք, և անօրէնք առ հասարակ անօր քով պիտի ժողովին, ինչպէս գազանք՝ յանտառի: Այն ժամանակ պիտի յայտնուի Մեսիայի իշխանութիւնն՝ նման աղբեր մի և որթատնկոյ, և պիտի կործանէ անօրէն բազմութիւնը: Իսկ անտառէն մնացած նոճին, այն է՝ վերջին իշխեցողն, ամենէն վերջը պիտի յաղթուի և տարուի Սիոն լեռան վերայ, ուր Մեսիայն անոր գործած անօրէնութիւնքը յանդիմանելէն վերջ՝ զինքն ևս պիտի սպաննէ, և պաշտպանէ այն տեղ մնացող հաւատարիմ ժողովուրդը: Իւր իշխանութիւնն պիտի տէէ յաշխարհի, մինչև որ վերջ տրուի այս ապականեալ աշխարհիս և լինի լրումն ժամանակաց: Խթ զլիւում կը մեկնուին, թէ ո՞ք են որք հաւատարիմ մնացին Մեսիային և անկէց բարիս պիտի ընդունին և ո՞ք անհաւան գտնուեցան և պիտի տանջուին. այսինքն են, անոնք որ ի սկզբան հպատակեցան, բայց յետոյ դասալիք եղան և հեթանոսաց հետ խառնակեցան, և անոնք՝ որք նախ անգէտք էին, և յետոյ ձանլցան որբատունկը և խառնուեցան օտարածնաց հետ: Հուսկ ապա, ասոնցմով կը մեկնուին Իէ և Ի՛՛՛ զլուխներու նախընթացաբար մէջ բերուած ժամանակի 12 մասանց իրարմէ յառաջանալու և լրանալու, և անոնց համարոյ չափ եղող մասանց « *Daæ partes hebdomadæ τῶν septem hebdomadarum* » նշանակութիւնքն:

Արդ, Բարուքայ բոլոր այս թուարկեալ գլխոց և անոնց մէջ պարունակեալ նիւթոց իրարու հետ ունեցած գեղեցիկ կապակցութիւնն ակներև է, որ յայտնի նշան է անկախութեան և միաձոյլ գրչութեան: Գրիչս համեմատութեամբ Եզրի՝ աւելի հաւատարիմ մնացեր է դանիելեան եօթներորդաց, մինչդեռ սա՝ իւր իսկ խոստովանելով՝ թէ « ոչ որպէս յայտնեցաւ եղբոր քում », ընդարձակած է ամենուրեք անոր սահմանքը: Այո՛, դառնալով առ Եզր, կը տեսնենք, որ Բարուքայ հիման վերայ բոլորովին տարբեր շէնքեր շինուած են հոս. մի և նոյն չուակիտէն մեկնած՝ բայց տարբեր ուղղութեամբք և ձկտումով շարունակուած են, որոնք ծամածուռ ուղիներու նման՝ մի և նոյն իրաց ընթացից մէջ՝ մերթ զիրար կը կտրեն և մերթ իրարու կը հակադրին. երբեմն մեծ խտրոցով իրարմէ կը հեռանան, և երբեմն խրթնանալով ընթերցողին առջև անելանելի բաւիղներ կը ներկայացնեն: Արդ, Բարուքէն համաօտուած նիւթերը դնելով հոս իբրև համեմատութեան ընդհանուր կէտեր, — զի մասնական նմանութիւններն խիստ շատ են, — դիտել կու տանք, որ Եզրի անյայտ գրիչն՝ Բարուքայ Յայտնութեան յիշեալ անտառի և ծափոս

այլաբանութիւնը իբրև անջատ առած՝ մէջ բերած է, Գ զլիու 13-21 համարներում, ղենելով զայն Ուրիելի բերանը: Բայց անոր հետևեալ եզրակացութենէն, ուր կ'ըսուի. « Որպէս երկիր տռաս անտառոց, և տեղի աւազոյ (Սա. և լատ. mare = ծով) պնացն, սոյնպէս և որ յերկրի են՝ տուեալ են զերկրաւորս գիտել, և որ յերկինս են՝ զերկնաւորն ճանաչել » յայտնապէս կը տեսնուի, թէ իրն այդպէս չէ. որովհետև անտառէն և ծովէն ձեռնարկած այդ օրինակն՝ ապագայ լինելիքը գիտնալու կամ ոչ գիտնալու համար անյարմար է և գլխովին անհասկանալի. հետևաբար, պէտք է առնուլ ճիշդ այն մտքով՝ ինչպէս աւանդուած է Բարուքայ քով, և ինչպէս Եզրի Գ զլիու 31-32 համարներում, որով սա կը գանգատի՝ իւր առանձնախօսութեանց մէջ՝ այսպէս. « Numquid meliora facit Babilon quam Sion? Aut alia gens cognovit te præter Israel? Ուրեմն անտասն՝ որուն տրուած էր տիրել երկրիս՝ էր ստուգիւ Բաբելոն, — որուն պէմ Յովհաննէս ևս կը գանգատի ի Յայտնութեան, ինչպէս Բարուք, — որ կործանեց Սիոնը. իսկ ազգերն՝ որոնք Իսրայելի շափ չէին ճանաչեր զԱստուած՝ նոյն են Եզրի քով յիշուած Հեթանոսական բազմութեան հետ: Եզրի Ե զլիու 1 համարին՝ « Ecce dies venient — a fide regis » նախադասութիւնն՝ նոյն է Բարուքայ 1Թ զլիու 3 և 5 համարներուն հետ. նոյն զլիու 23 համարի, « Ex omni silve terræ elegisti vineam unam », և 25 համարի՝ « Ex omnibus civitatis sanctificasti sibi metipsi Sion » նախադասութիւններն՝ Բարուքայ վերը յիշուած որթատնկոյն, այսինքն է՝ յայտնուելիք Մեսիայի իշխանութեան համաձայն է: Թ զլիու 21 համարին մէջ՝ Արդար կոչուած ծաղկաւէտ դաշտն, ուր կը մեկուսանայ Եզր՝ տեսիլէն յառաջ, հնարուած է Բարուքայ 1Է զլիու 1 համարի՝ « Campum plenum floribus immarcescibilibus » երազարանական դաշտին հետ, ուր կը տեսնէ տեսանողն, « Vitem crescentem », այսինքն է Մեսիայն՝ իւր աթոռանիստ Սիոնով: Արդ, այս և ուրիշ մանրամասնութիւններ, զորս համառօտութեան համար զանց կ'ընենք, ցոյց կու տան նմանապէս, թէ Եզրի անմիջապէս յաջորդ, այն է՝ այրիացելոյն մայր Սիոնի վերաբերեալ տեսիլն ևս Բարուքայ վերայ ձևուած է: Յիրուի, Եզր Ժ զլիու 7 համարին մէջ ուղղելով իր խօսքը առ այլաբանական այրին՝ կ'ըսէ. « Quoniam Sion mater nostra omnium in tristitia contristatur et humilitate humiliata est » և այլն, որ կը յիշեցնէ մեզ ճիշդ Բարուքայ 1Ա. 4 և Գ. 1 և 4 համարները: Ուշադրութեան ար-

ժանի կէտ մ'է և այս, որ վերջինս՝ իւր մօր վերահաս կործանուելու վտանգը կ'ողբայ, մինչդեռ Եզր՝ զայն արդէն իբր ի վաղուց կործանուած:

Եզրի Դ տեսիլն (Թ. 28— Ժ. 57) իբրև միջանկեալ յաւելուած մ'է, ինչպէս տեսանք, Բարուքայ այլ և այլ տեղեաց վերայ ընդարձակուած. իսկ Բարուքայ յիշեալ տեսլեան հետ ամենամօտ նմանութիւն ունեցողներն են Հինգերորդ տեսիլն, որ ձօնուած է հռովմէական արժւոյն և անօր ընդդիմամարտող յուգայեան առիւծուն (Ժ. 60— ԺԲ. 35), և վեցերորդն, այն է Որդւոյ — մարդոյ տեսիլն (ԺԳ. 1—53): Այս երկու տեսլեանց՝ Եզրի գրոց մէջ գրուած տեղւոյն և իրարու հետ ունեցած խոտօր համեմատութեան մասին՝ արդէն ի վեր անդր պարզեցինք մեր միտքը, ապացուցնելով, թէ վերջինս՝ Դ տեսլեան հետ աւելի քան թէ նախորդին հետ սերտիւ կապուած է, և անոր իբրև լրացուցիչ մասն համարելի. հետևաբար, դիտմամբ անջատուած է անտի: Արդ, այժմ բաղդատելով զանոնք Բարուքայ հետ՝ ըսածնուս հշմարտութիւնն արեւու պէս պայծառ կը փայլէ: Այո՛, Բարուք՝ յիշեալ տեսլեան մեկնութեան մէջ (ԼԹ. 5) համառօտակի յիշելով դանիելեան տեսլեան չորս թագաւորութիւններն, որոնք յաջորդաբար զիրար կը կործանեն, աւանձին կերպով կ'երկարէ իւր խօսքը չորրորդին վերայ, զոր Կրանանու մայրւոյ կը նմանցնէ՝ իւր բարձրութեան համար, և ապա Աստուածորդւոյ ձեռքով սպաննել կու տայ զայն: Արդ, Բարուքայ այս տեղիս՝ ներշնչել է կեղծ Եզրին կամ նորա գրոց խմբագրողին՝ Արծուէտեսիլն այս տեղ փոխադրելուն և նոր ձևի վերածելուն, մինչդեռ ըստ պահանջելոյ իրաց՝ Որդւոյ մարդոյ տեսիլն՝ պիտի յաջորդէր անմիջապէս չորրորդին կամ լաւ ևս այրիացեալ մայր Սիոնի վերականգնուելուն:

Երկու գրուածոց մէջ ևս այլ և այլ կուտաներ կանց այսպիսի մի եղելութեան, բայց ես հետևեալները բաւական կը համարիմ բերել ի հաստատութիւն: Ա. Եզրի Զ տեսլեան, այն է ԺԳ գլխու 33—38 համարներն, ուր կը նկարագրուին Որդւոյ մարդոյ՝ (filius meus) Սիոն լերան վերայ յաղթական կերպով բարձրանալն, Երուսաղեմին՝ իբրև « քաղաք պատրաստեալ և կանգնեալ » ամենուն երևնալն, Որդւոյ մարդոյն՝ իր հակառակամարտ բազմութիւնը յանդիմանելն և հոն սպաննելն և երկրիս վերայ իւր բարձրագոյն իշխանութիւնը հաստատելն՝ կը համապատասխանեն գրեթէ բառ առ բառ Բարուքայ Խ գլխում աւանդուածներուն, որոնք ընդհակառակն բուն իրենց բնական տեղւոյն և կարգին մէջ են: Բ. նոյն տեսլեան, այս-

ինքն ժԳ զլիու 13, 30-40 համարներն, ուր կը նկարագրուին Որդւոյ մարդոյ քով ժողովուած խաղաղ բազմութիւնն, նոյն են Բարուքայ ԽԲ զլիու 2-4 համարներում աւանդուածներուն հետ. միայն թէ Եզրի քով դիտմամբ այն տասն ցեղերուն վերայ յարմարցուած են, զորս Սաղմանասարի ձեռքով գերի տարուած կը համարի, նուիրելով անոնց 41-48 համարներում՝ Եփրատայ վերայ գործուած զարմանալքանչ արարուածները, որոց իրենց սկզբնաղբիւրէն, այն է՝ Դ Թագ. ԺԷ. 6, Ղ4 համարէն ունեցած ամենամեծ տարբերութիւնքն իսկ կասկածելի են: Արդարև իսկ, եթէ Եզրի այդ մասն Բարուքէն աւելի հին լինէր, կարելի բան չէ, որ սա յարմար առթին իսկ ի լուսեան թողած ըլլար զայն: Ուստի, Եզրի քով որչափ որ անճաշ կ'երևի այդ հատուածն՝ նախորդ տեսիւան, այնքան ևս գեղեցիկ ճահաւորութեամբ և կապակցութեամբ կը կնքէ Բարուք իւր տեսիլն, այսպէս. « Et commisti sunt semini populorum, quod se segregavit, horum tempus prius. Et tempora hereditabunt tempora, et horæ horas, et unum ab altero accipiunt, et tunc fini adæquabitur omne, sicut temporum et sicut horæ (τῶν κχιρῶν) ».

Գ. Այս տեսիլէս վերջ, ԽԳ զլիում, Ատուած կը յայտնէ Բարուքայ հետևեալը, « Abibis enim de isto loco, et transibis de regionibus, quæ apparent tibi nunc, neque recordaberis iterum eorum, quæ inter mortales sunt », այսինքն թէ, « Այս տեսիլս ուրիշ աշխարհ մի պիտի փոխուիս, որ այժմ կ'երևի քեզ. այլ ևս չպիտի յիշես այն ապականացու բաները, որոնք կը կատարուին մահկանացուներուն մէջ »: Ապա կը յանձնէ Բարուքայ, որ երթայ առ ժողովուորն՝ յայտնելու իւր տեսածները, դառնայ այն տեղ, պահէ եօթն օր, և յետ այնորիկ ինքն պիտի գայ և խօսի իւր հետ: Արդ, դառնալով առ Եզր, զայս ամենայն կը գտնենք Զ տեսիւան սկիզբը գետեղուած (այսինքն է ժԲ զլիու 38-51 համարներում), որ ըստ ինքեան յետադարձ ընթացքով՝ վերջն ըլլալու էր, այն է ժԳ զլիու 13-14 համարներում, որոց երբեմն կը յաջորդէր անմիջապէս, — ի հարկէ այժմեանին հետ ունեցած խոտոր համեմատութեամբ, — հինգերորդ տեսիլն, դիտելով մանաւանդ՝ որ այդ զըլիու 10-12 համարներուն մէջ՝ ժամանակի 12 1/2 մասանց (կամ ցեղից) վերաբերեալ տեղեկութիւնն՝ Բարուքայ ԽԲ զլիու հետ ըրած համեմատութեան համաձայն՝ Որդւոյ մարդոյ տեսիւան մասն համարուելու էր, և ոչ թէ Էզրին, ուր դիտմամբ փոխադրուած է և կղզիացած դիրք մ'առած:

Վերջապէս, ԽԸ-ԾԲ գլխոց ընդարձակ պատրաստութենէն վերջ, — որոնք Եզրի Ե և Զ տեսիլներուն հետ դարձեալ մերձաւոր ազգակա- նութիւններ ունին, — կը տեսնէ Բարուք իւր վերջին տեսիլը. և ահա ամպ մի կ'եղնէ անծայրածիր ծովէն, որ լի է սպիտակ և սև ջրերով, որոնց մէջ կը նշմարուին բազմազան երանգներ: Ամպին վերջա- կողմը՝ կայծակի նման փայլակնացայտ է, որ արագութեամբ ընթա- նալով՝ կը ծածկէ բովանդակ երկիրս: Կը սկսի տեղալ երկրիս վե- րայ, և այդ տեղացած ջրերն աննման են իրարու. այսինքն է՝ ի սկզբան խիստ սև են, և յետոյ շոշափայլ, որոնք երկուսուսանիցս կը յաջորդեն իրարու: Սևերն՝ միշտ աւելի են սպիտակներէն: Յե- տոյ ամպին յետակողմն երեցող կայծակն՝ քարշելով կը խոնարհեցնէ զինքը մինչև յերկիր, որ կը լուսաւորի անոր փայլունով. և այն գա- ւառներն մասնաւորապէս, որոնք նեխեալ ապականուած էին սև ջրերով՝ կը բուժին: Կը գրաւէ նա բոլոր երկիրս և կը տիրապետէ: Ապա կ'ընթանան ծովէն 12 գետեր և կը պաշարեն այն փայլակ- նացայտ կայծակը: Արդ, զայս ամենայն տեսնելով Բարուք՝ երբ կը զողայ և կ'աղօթէ, անդէն կ'երևի Բամիէյ Հրեշտակն, « qui praest visionibus veritatis » ըստ հեղինակին, և կը մեկնէ, թէ ծովէն ելնող և երկիրս ծածկող ամպն՝ է տևողաբիանն կամ ժամանակ, որ արար Աստուած: Ի սկզբան տեսնուած սև ջուրն՝ է պատռախրանա- գանցոթիանն Ադամայ, որով յառաջ եկան մահ, վիշտք, ցառք և վաս- տակք...: Ասոր յաջորդող պայծառ ջուրերն կը նշանակեն Արքանա- մոռ ծնունդը և անոր յաջորդ սերունդը...: Երրորդ սև ջրերն՝ են խառնուած ամեն մեղաց, զորս յետ այնորիկ գործեցին ազգեր և ժո- ղովուրդներ, Եգիպտոսի մէջ և ուրիշ տեղ, որուն համար և կորսուե- ցան: Չորրորդ պայծառ ջրերն են գալուստն Մովսիսի, Ահարոնի, Մարիամու, Յեսուայ որդւոյ Նաւեայ, Քաղերի և նմանեաց... Հին- գերորդ սև ջուրերն են կախարդական և կոսպաշտական գործք Ա մովրհացւոց, որոց հետ հաղորդեցաւ Իսրայել...: Վեցերորդ պայ- ծառ ջրերն՝ կը նշանակեն այն ժամանակը, յորում ծնան Դաւիթ և Սողոմոն, և կանգնեցաւ Սիոն...: Եօթներորդ սև ջրերն կը նշա- նակեն Յերոբոամայ ապստամբոթիանն և որդապաշտութիւնը: Յե- զարելի պղծութիւնքը և Իսրայելի գերութիւնը՝ Սաղմանասարի ձեռ- քով: Ութերորդ պայծառ ջրերն՝ կը նշանակեն Յուդայի թագաւորին Եզեկիեայ խմաստաբիանը... որով ազատեցաւ Սիոն...: Իններորդ սև ջրերն՝ են Մանասէի ժամանակ կատարուած անպարտաբիանքն, որոց համար կործանեցաւ Սիոն: Տասներորդ պայծառ ջրերն կը նշանա-

կեն Յուդայի թագաւորին Յովսեայ սրբոճիւնը, որով սրբեցաւ երկիրն կուսպաշուութենէ, և Հաստատեցան տօնք և շաբաթք...: Մետասաներորդ սև ջրերն՝ են աղէտքն, որոնք այժմ՝ եկան Սիրոնի վերայ...: Երկոտասաներորդ պայծառ ջրերն՝ նշանակք են այն ժամանակին, յորում Սիրոն վերստին պիտի կանգնի, և նորոգուին քաջանայութիւնն և պատարազք, յետ որոյ պիտի լինի մեծ կործանումն ազգաց բազմաց: ԿԹ գլխում, կը շարունակուի՝ թէ այն ջրերն, որոնք ամենէն աւելի պղտոր էին և սևագոյն, և յաջորդելով ԺԲին՝ մեռցին զամէնքը՝ կը նշանակեն բովանդակ աշխարհի վերապահուած աղէտներն և շարիքը: Բարձրեալն՝ կը նախատեսէ այն 6 եղանակները, որոնցմով արդարոց բարի գործերն պիտի կատարուին, և այն 6 եղանակները, որոնք պիտի կատարուին ի վախճան ժամանակաց: Հ գլխում կը յայտնուին երկրիս բնակչաց մէջ ծագելիք խռովութիւններն, պատերազմներ և կոտորածներն, որոնցմով զիրար պիտի կործանեն և իրարու յաջորդեն: Սրէն ազատուողներն՝ երկրաշարժով պիտի կորսուին, և ասկէ ազատուողներն՝ հրով պիտի այրին, և հուրէն մնացողք՝ սովով պիտի մեռնին. միով բանիւ՝ այս ամէն շարիքներէն ազատուողք, թէ ի պարտելոց և թէ պարտողներէն, Մեսիայի ձեռքը պիտի ինկնան: ՀԱ գլխում կ'ըսուի, թէ այն ժամանակ սուրբ երկիրն պիտի գթայ անոնց վերայ և պաշտպանէ իւր բնակիչները: ՀԲ գլխում մեկնելով սեւ ջրերուն յաջորդ պայծառ ջրոց ընդհանուր միտքը, կ'ըսուի, թէ բոլոր նախընթաց նշաններն կատարուելէն վերջ՝ պիտի գայ իմ Մեսիաս, և այն պղբերէն զոմանս պիտի կենդանացնէ և զոմանս սպաննէ. և թէ պղողներն անոնք են, որոնք ոչ ծանօթութիւն ունեցան Իսրայելի մասին և ոչ այլ Յակորայ զաւակը հարստահարեցին. իսկ անոնք, որք տիրեցին սոցա վերայ, սրոյ պիտի մատնուին: Հուսկ ապա ՀԳ և ՀԴ գլուխներում կը նկարագրուի Մեսիային աշխարհիս վերայ ըրած բոլորական յաղթութենէն վերջ՝ անոր յաւիտենական թագաւորութիւնն, Համաձայն Սայեայ մարգարէութեան ՀԶ գլխուն. կը ծանուցուի ապա տեսանողին, որ ի տար աշխարհ վարուելէն յառաջ՝ բարձրանայ այն (Սիրոն) լեռան վերայ, ուր իր աչաց առջևէն պիտի անցնին ամենայն աշխարհք և տիեզերք առհասարակ, բարձր լեռներ, հովիտներ և ծովեր, որպէս զի տեսնէ՝ եթէ քինջ բան պիտի թողու և ուր պիտի երթայ: Բայց որովհետև այս պիտի հանդիպի 40 օրէն վերջ, ուստի կ'ըսուի անոր, որ այդ օրերուն մէջ երթայ և ուսուցանէ ժողովուրդը: ՀԷ գլխում կը հաղորդէ Բարուք բոլոր իւր

տեսած յայտնութիւնքը 12 ցեղերէն մնացած ժողովրդեան, և նստելով կաղնուոյն ներքև կը գրէ իւր երկու թղթերը, որոնց մին կը կոչուի « Epistola doctrinae et volumen annuntiationis », զոր կը յղէ առ գերեալսն Բաբելոնի, և միւսն՝ արծուի ձեռք առ ինն և կէս ցեղս :

Բարուքայ այս տեսիլս կը պարունակէ 5228 ամաց ահագին միջոցը և ընտրեալ ժողովրդեան վերայ կատարուած շարեաց և բարեաց 12 դարապաշտները՝ իւր դրացի ազգաց հետ ունեցած արարուածներով : Ես չեմ ուզեր այս տեղ կանգ առնուլ և քննել, թէ արդեօք այդ տեսիլեան հեղինակն՝ նոյն եղած է առաջինները գրողին հետ, թէ ընդ հակառակն յետագայ մէկն է, որ կամ Բարուքայ առաջին գլուխներու և կամ Եզրի հետևողութեամբ այս տեսիլս յօրինած ըլլայ : Այսպիսի երկրայութիւն մի, եթէ այլք ունեցած են երբէք, հիմնաւոր չերևիր ըստ իս. զի ամենուրեք մի և նոյն ջերմ շրէի վշտաց և կենդանի հաւատքին և յուսոյ ցաւագին բարբառն է՝ որ կը հնչէ և մնչէ, որ օտարի մի համար ըստ ինքեան անհասկանալի է : Այլ կ'ուզեմ միայն հաստատել, թէ Եզրի գրոց վերջին երեք տեսիլներն, այսինքն են Ե, Զ և Է՝ եթէ ոչ իրենց արտաքին ձևովն, այլ անտարակոյս իրենց ներքին պարունակութեամբն՝ յեականս, Բարուքայ հետևողութեամբ յօրինուած են՝ և հետ զհետ բարգաւաճուած, որուն համար և կրկնարանութիւնք այնքան զգալի են, բայց ի հարկէ բոլորովին նոր և տարբեր քաղաքական և պատմական հանգամանաց ազդեցութեան ներքև, զոր ճանաչած չէ և չէր այլ կրնար ճանաչել Բարուք : Այո՛, չէ կարելի այլ ևս երկրայել, որ Եզրի ԺԱ գլխում նկարագրուած ծովէն ելնող արծիւն՝ իւր 12 բուն թևերովն և 6 աւելորդ թևերովն՝ ուրիշ բան չէ ըստ էութեան՝ բայց եթէ այլափոխութիւն իմն Բարուքայ. յիշեալ տեսիլեան մէջ ծովէն ելնող ամպին, անոր՝ երկրիս վերայ տեղացած 12 սև և սպիտակ գետերուն և 6 եղանակաց, որոնց համաձայն՝ Բարձրեալէն սահմանուած չարիքն եկան Իսրայելի և երկրիս բնակչաց վերայ : Այս այլափոխութիւնս՝ բնական է կեղծ Եզրի կամ Սաղաթիելի համար. վասն զի ինչպէս Բարուքայ Յայտնութեան անյայտ գրիչն՝ ԿԸ գլխով իւր ազգին հին ժամանակաց պատմութիւնը համառօտելէն վերջ, կ'անցնէր այնուհետև անոր ապագայ պատմութեանը, այն է գերեզարձին և տաճարի և Սիոնի վերականգնման, խոստարանեալ Մեսիայի թագաւորութեան և նոյն իսկ այն ժամանակի վերաբերեալ հանգամանացը, յորում ինքզինքը ապրել և գրել կեղծած է, ինչպէս և

այն ժամանակին, որուն մէջ իրօք այլ ինքն ապրեցաւ և գրեց. այսպէս ըրած է, անտարակոյս, և՛ Եզրի Դ գրոց. հեղինակն: Կեղծ Բարուք՝ որովհետև Երուսաղեմի վերջին կործանմանէն և հռովմէական արժւոյն Պաղեստինու վերայ բոլորական տիրապետութենէն յառաջ կ'ապրէր¹, այն պատճառաւ իսկ փոխանակ արժւոյն՝ ամպի, այն է՝ բարի և շար ժամանակաց այլաբանութիւններով կը վարուի: Այս ամենաբնական էր, զի նա արժւոյն՝ սուրբ երկրին մէջ գործած աւերմունքը դեռ աչօք տեսած չէր, այլ այնչափ կը ճանաչէր զայն, որքան Դանիէլ գուշակած էր: Իսկ կեղծ Եզրն՝ որովհետև Երուսաղեմի՝ Հռովմայեցոց ձեռքով կրած վերջին կործանմանէն և արօրադրուելէն և հրէական ազգին ցիրուցան լինելէն վերջ կ'ապրէր²: ուստի ըստ այսմ ևս նա կարևոր համարած է իւր նախորդին տեսլեան նիւթը այլափոխել, պահելով անոր 12 և 6 թիւերը, այլովք հանդերձ: Այո՞, կը կրկնենք և կ'երեքկնենք, թէ կեղծ Եզրն այլափոխած է զԲարուք, դուրս թողլով, իբրև ծանօթ բաներ, Հրէից նախկին պատմութեան վերաբերեալ սև և պայծառ ժամանակները, որովհետև ուրիշ մերձաւոր ցաւեր և աղէտներ կը նեղէին Հրէաստան ազգն և աշխարհը. որովհետև ինքն ևս աղետից ականատես էր: Երկոտասան թեւերն և 6-8 աւելորդ թեւերն, այսինքն է՝ հռովմէական արժւոյն վերաբերեալ իշխանապետաց յիշատակութիւնն՝ պատրուակ մ'է՝ պարզապէս կարգը պահելու իւր և իւր աղբեր աւանդածին մէջ. այլ ազգ իսկ կարող էր նա անդրազոյն տարածել այդ թիւերը մինչև իւր ժամանակ, և իրօք իսկ տարածած է լուեխայն, — ինչպէս ցոյց տուինք, — բովանդակելով իւր գրութեան մէջ նաև զինուորական կայսերաց սկիզբն և վերջին արարուածքը:

Առիւծն Յուդայի, զոր հանել կու տայ անտառէն Եզր, ուրիշ բան չէ՝ ըստ էութեան, բայց եթէ Բարուքայ քով (12, 1է, Ի զլուխներում) անտառի մէջ աճեցուն Որթատունկն, կամ լաւ ևս Մե-

1. Այս բանն առանց տարակուսի է Բարուքայ 16 գլխէն, ուր առիթ ունենալով խօսել Դանիէլեան չորրորդ թագաւորութեան մասին և միև թագաւորութեանց ղե՛մ տարած յաղթութեան վրայ, բնաւ ակնարկութիւն չընէր Երուսաղեմի մասին անոր գործած չարեաց, այլ՝ ընդհակառակն՝ անոր նկարագրած բոլոր պայքարն՝ է ասուածպետական ազգին և հեթանոսաց մէջ առհասարակ:

2. Իրօք, այս բանն յայտնի կը տեսնուի Եզրի գրոց ժԱ գլխու 42 համարէն իսկ, ուր խօսելով զբիւն չորրորդ թագաւորութեան, այն է՝ Հռովմայեցոց և անոց հատուցած աղետից մասին՝ կը գրէ. « *Et destruxisti habitationem (Երուսաղեմը) eorum, qui fructificabant, et humiliasti muros eorum, qui te non nocuerunt* »; այսինքն են Հրեայք:

սիայն : Ասոր յայտնի սպացոյց են նաև Հետևեալ համաձայնութիւններն . այսինքն է, Եզրի ԺԱ գլխու 38 համարին մէջ՝ առիւծն կը խօսի դատաստանաւ արծուոյն հետ, և յանդիմանելով անոր անօրէնութիւնքը՝ կը սպաննէ զայն՝ սուրբ լերան վերայ . նոյնը կ'ընէ նաև Որբատռակն՝ Բարուքայ 19 գլխում : Դարձեալ, Եզրի ԺԲ գլխու 28-33 համարներում՝ մնացած գլուխն, — իւր աջակողմը փոխուած 2 թևերովը, — նոյն է Բարուքայ Խ գլխում յիշուած վերջին իշխանին « Dux ultimus » կոչուածին կամ հպարտ մայրւոյն հետ, զոր կը սպաննէ Որթատունկն ի վախճանի : Եզրի քով արծուէտեսութեան հեղինակն՝ թէև ջանացեր է ինքզինքը Բարուքէն անկախ և աւելի հեղինակաւոր ցոյց տալ, սակայն բաց ի մինչև ցարդ եղած դիտողութիւններէն՝ հետևեալքն իսկ կասկածելի կ'ընեն զայն . և այդ կասկածն այնքան աւելի հիմնաւոր է, որքան որ նա այլ և այլ իրարու անյարիր աղբիւրներէ ձևացուցած է : Յիրաւի, նա արդէն խոստովանեցաւ, թէ իւր այդ տեսիլն՝ թէպէտ և Դանիելի է գլխում աւանդուածին վերայ հիմնած է, բայց անկէ տարբեր բաներ պիտի յայտնէ . արդ, մենք կը տեսնենք, որ թէ՛ ըստ Դանիելի և թէ՛ ըստ Բարուքայ անծայրածիր ծովն, ուսկէ կ'ելնեն (ըստ առաջնոյն) չորս գագաններն, և ըստ վերջնոյս՝ տեղացող ամպն, է տևողոքիանն կամ յաւիտենականութիւնն, յորմէ կը յառաջագայի ժամանակն, և որուն մէջ կը կատարուին վէպք և դէպք աշխարհի . ուրիշ կերպով անկարելի էր ըսել Ասորեստանեայց, Մարաց և Պարսից պէս ցամաքային պետութեանց համար, թէ ծովէն կ'ելնէին : Իսկ արծուէտեսութեան հեղինակն՝ նիւթապէս կրկնած է Դանիելի խօսքը, առանց մեկնելու անոր ծովի նշանակութիւնը : Բ. Դանիելի՝ յիշեալ գլխու 24 համարին մէջ արդէն յիշուած է . « Եւ տասն եղջիւրք՝ տասն քսագառոք յարիցեն, և զկնի նոցա յարիցէ այլ... որ խոնարհեցուցէ զերիս թագաւորս » և այլն . ուրեմն ի՞նչ էին նորա աւանդելի նորութիւններն . ոչ այլ ինչ՝ բայց եթէ Բարուքայ ԽԸ գլխէն և անդր ակնարկած Մեսիայի և հեթանոս թագաւորութեանց իրարու հետ ունենալիք ընդհարումներն, զորս նա հռովմէական արծուոյն վերայ կեդրոնացուցեր է՝ իրեն մօտ օրերը կատարուած դէպքերու զոց և մթին այլաբանութիւններով : Սակայն, նա այս տեղ իր վերայ առած մարգարէական դիմակը՝ Զ տեսլեան մէջ իւր իսկ ձեռօքը վար առած է . որովհետև հոս կը թողու մասնականը՝ և խօսքը կը դարձնէ երկրիս ընդհանուր բնակչաց վերայ կատարուելիք նշաններուն . և առ ժամս Բարուքէն հեռացած կարծուած ժամանակ, յանկարծ անոր

մտ կը գտնուի, և իւր խզած թելը՝ վերստին ձեռք կ'առնու՝ յաւաթ վարելու, մերթ քակելով մերթ կնճռելով իւր աղբեր հիւսածը: Այժմ, նա ժ գլխու 50 համարին մէջ՝ արծույ տեսիլէն անմիջապէս երկու տող յառաջ կը մտնայ, կարծէք, Բարուքայ գծած որոշ սահմանը, և առ ընդհանուր կը ձկտի, ըսել տալով իւր հրեշտակին.

« Et ostendet tibi Altissimus eas visiones somniorum quæ faciunt Altissimus his, qui habitant super terram ». Ուշ դնենք այս խօսքերու, որոնք հաւասար են Բարուքայ ԻԹ գլխու 1 համարի՝ « Tunc erit terræ, quod eveniet tunc; propterea omnes, qui vivent, sentient ». Ուստի, երբ կը տեսնենք՝ որ կեղծ Եզրի այս յայտարարութիւնս փոխանակ արծույն՝ Որդւոյ մարդոյ տեսլեան հետ կ'երթայ կը միանայ, ինչպէս գլուխն՝ իւր իրանին հետ. երբ կը տեսնենք, որ ինդիրն այլ ևս այս ինչ կամ այն թագաւորութեանց վերայ չէ, այլ ընդհանուր մարդկային անօրէնութեանց, որոնք անխըտիր ամենայն ազգերէ, աշխարհներէ միահամուռ ժողովուած կը կառն ծովէն ելնող կամ Սիոնի վերայ բարձրացող Աստուածամարդոյն դէմ. միով բանիւ, երբ կը տեսնենք, որ սորա առանց զէնքի տարած յաղթութիւնն և կանգնած թագաւորութիւնն՝ Բարուքայ նկարագրութեան և մտաց համաձայն է, բնաւ չենք տարակուսիր հետեցնելու, թէ արծուէտեսիլն՝ միջանկեալ բան մ'է, և թէ Որդւոյ մարդոյ տեսիլն՝ Բարուքայ հետևողութեամբ յօրինուած է: Անտառակոյս, Եզրի ԺԳ գլխում՝ ծովէն բարձրացող և ամպերու մէջ ծրարած մարդակերպեան կենդանին, որ ուր կը դիմէ՝ հուր և կայծակ կը ցայտեցնէ, և իւր ընդդիմակացները կ'այրէ կը մրկէ, նոյն է Բարուքայ ԾԱ գլխում ծովէն ելնող ամպին յետակողմը ծածկուած կայծակին հետ, որ արագ ընթանալով՝ կ'այրէ հեթանոսական ազգաց անտառն և անկէ կանգուն մնացող բարձրացեալ մայրին. որ իննելով երկրիս վերայ՝ կը լուսաւորէ զայն և կը բուժէ սև ջրերէն սողողած և պղծուած անդաստանները. միով բանիւ՝ իսկական մանր պարագաներով երկուքն ևս իրարու կատարեալ կերպով կը համաձայնին:

Անցնելով Եզրի Ե տեսլեանէն՝ եօթներորդին, դարձեալ ամենայն ինչ յարմարուած կը գտնենք Բարուքայ 29—28 գլուխներուն և Իէ գլխում աւանդուածներուն վերայ: Այս տեսլեանս պարունակութիւնն և անոր նպատակն արդէն ակներև դրինք կանխաւ, ուստի աւելորդ է այս տեղ վերստին կրկնել. այլ բանասիրաց ուշադրութիւնը կը հրաւիրենք միայն հետեւեալ կարևոր կետին վերայ, որ

լուծումն պիտի լինի մինչև ցարդ մեր պաշտպանած կարծեաց : Եզրի ԺԴ գլխու 44-46 համարներում, ինչպէս տեսանք, կը յայտարարուին 40 օրուան մէջ գրուած 94 գրեանք : Նախընթացաբար խօսելով այս տեղոյս վերայ, ցոյց տուինք անոր անտեղութիւնը, դիտելով որ ոչ պատմական և ոչ կեղծ Եզրի Ժամանակ կարէր Հրէից կանոնական գրոց թիւն հասնել 24, թող թէ 94ի : Երկրորդ, այդ տեսլեան 7-8 համարներում խօսքն միայն Եզրի տեսած և լսած յայտնութեանց վերայ է, և ոչ թէ 22 համարին մէջ խնդրուած գրաւոր օրինաց կամ կանոնական գրոց մասին, որոց թիւն անգամ որոշակի յիշուած չէ : Արդ, այս այսպէս լինելով, ըստ իս, Բարուքայ Յայտնութեամբն՝ Եզրայ գրոց այս վերջին հանգոյցն ևս կարելի է լուծուած համարել, Եւ ստուգիւ, նախ որ Բարուքայ այդ գրուածի մէջ իսկ, նման Եզրի յիշեալ տեղոյն, կ'ըսուի իբր յԱստուծոյ. « Scribe in memoria cordis tui omne quod disces ». Իսկ չէ գլխում ժողովրդեան կողմէն կը յանձնարարուի՝ « Scribe etiam fratribus nostris ad Babilonem epistolam doctrinae et volumen annuntiationis, ut eos quoque confirmes, priusquam discedes a nobis ». Հուսկ ապա՝ Բարուք ինքնին կ'ըսէ՝ « Et fuit in prima et vigesima in mense octavo, veni ego Baruch, et sedi subtus quercum... et scripsi has duas epistolas, unam misi per aquilam ad novem tribus et dimidiam, et alteram misi ad eos qui erant in Babilone per tres homines ». Արդ, նկատելով՝ որ այս երեք յայտարարութիւնքս յար և նման են Եզրի ԺԴ գլխու 8, 22, և 42 համարներում եղած յայտարարութիւններուն. նկատելով որ Եզրի ԺԴ գլխուն 21 համարին մէջ ենթադրածին հակառակ՝ Բարուք գրաւոր օրէնքը իսպառ այրուած և անհետացած չհամարիր¹, ըսելով՝ « Et si nos abeamus, attamen lex stat; si ergo respexeritis in legem... non deficiat lucerna », հետևաբար՝ և ոչ իսկ զանոնք ամբողջապէս նորէն գրելու յիշատակութիւն : Վերջապէս, նկատելով որ, ըստ Բարուքայ՝ յիշեալ գլխում գրութեան վերաբերեալ խօսքն՝ ոչ եթէ կանոնական և կորսուած գրոց, այլ իրեն եղած առանձին յայտնութեանց մասին է, կարեմք ամենայն իբրև.

1. Յայտնութեանս մեր ձեռք հասած միակ ասորի թարգմանութիւնն՝ 87 զՍԽահամարով կաւարտի, որովհետև շէ գլխու մէջ յիշուած երկու թղթերէն մին միայն, այն է՝ արժւոյ կամ լաւ ևս իւսիսային սուրհանդակի միջոցով յուղակուածն մեզ հասած է, համառօտութեամբ. իսկ Բաբելոնի գերեւաններուն գրածն՝ կը պակսի, որով կը լրանային հաւանօրէն 94 գլուխներ :

ամբ եզրակացնել թէ, ապա ուրեմն, կեղծ Եզրի Ժ՛Ի գլխում յիշուած 94 գրքերն՝ ուրիշ բան չեն նշանակեր, բայց եթէ Բարուքայ Դ՛Ի գլուխներէ բաղկացած Յայտնութեան երբայական բնագիրն, որ մեր ձեռքը հասածէն շատ տարբեր ըլլալու էր, և զոր իբրև սկզբնագիր գործածած է Եզր-Սաղաթիէլ կամ նոցա յոյն խմբագրողն:

Այսպէս ահա, Բարուքայ Յայտնութեան համեմատութեան ձեռքով՝ մենք կ'ունենանք Եզրի անկանոն գրոց աղբերաց լուծումը, զոր Կապիչ՝ անտես ընելով, ստիպեցաւ իւր աստուածաբանական հրութեամբ հնգէն մինչև վեցի վերածել, սակայն առանց ցոյց տալու մեզ համոզիչ փաստելով, թէ որոց ձեռքը և ի՞նչ պատեհաւ յօրինուեցան իրարմէ տարբեր այդ գրութիւններն, կամ թէ ի՞նչ նպատակաւ և որո՞ւն ձեռքով այդ անջատ աղբիւրներն՝ իրարու հետ միացան: Այս, ըստ իս, աւելի անլուծանելի կնճիռ մ'է, այնու մանաւանդ, որ մինչև ցայսօր այդ տեսիլներէն ոչ մին չյայտնուեցաւ առանձինն, որ հաստատէր Կապիչի վարկածը: Իբրաւ է, որ Դանիելի և Յնովքայ մեզ հասած երկու անկանոն տեսիլներն՝ ունին ինչ ինչ նմանութիւններ արժուէտեսլեան հետ, բայց դժբա՛ է դարէն վերջ յօրինուած են, ըստ այժմեան ձևոյն և պարունակութեան. ինչպէս Բարուքայ և Արդամելեքայ Պատմութիւն կոչուած միւս գրութեանն այլ՝ Բարուքայ Յայտնութեան վերայ:

ԵԶՐԻ ԱՆԿԱՆՈՆ ԳՐՈՑ ԱԶԻԵՏՈՒԹԻԻՆ. Հիլզէնֆէլդ, իւր «Esras profeta II» խորագրած հրատարակութեան մէջ, բազմաթիւ կոչումներ ցոյց տուած է այս գրքէս, բայց մասնաւորապէս Գ և Ժ՛ գլուխներէն, որոնք նոյն և նման են հետեւեալ անկանոն և կանոնական գրուածոց մէջ նշանակուած տեղերուն. այսինքն են՝ Սիրիլեան Պատգամք՝ Գ. 46-52. — Վերացումն Մովսիսի՝ Ժ. 28, — Պաղոսի առ Ա. Թես. Գ. 15-17, — Առ Հռոմ. Ժ. 78, ԺԱ. 17 և այլուր. — Գաղ. Գ. 25, — Ա. Կորնթ. Բ. 9, — Մատթ. Է. 13, 14, Ժ. 16, ԺԳ. 3, ԺԶ. 28, Ի. 16, ԻԴ. 2, 23. — Յովհ. Յայտ, Ա. 15, Զ. 9, ԺԻ. 1, 2, 6, 13, ԺԹ. 6, Ի. 12, ԻԱ. 2, 23. — Գործ. Առ. Ա. 3, — Համբարձումն ֆրիստոսի Ժ՛Ի. 23. — Պետր. Ա Կաթ. Ա. 13. — Բարուքայ Յայտնութիւն ծայրէ ծայր. — Թղթ. բառն. Գ. 7, 8 (14), Զ. 20, 21 (13), ԺԲ. 1. — Շէփերդ և Հերմաս՝ ընդհանուր նմանութիւններ ունին Ա-Դ տեսիլներու հետ. — Վերացումն Եսայեայ գլ. Գ. 5:

Գիտնականիս նշանակած այս տեղիքս՝ եթէ ստուգիւ Եզրի Դ գրքէն եղած բանաբաղութիւններ համարինք, ոչ միայն մեծ ապացոյց են

նորա հնութեան, այլ նոյն իսկ ծանրակշիռ հեղինակութեանն: Սակայն, մենք մեր ցարդ ըրած ուսումնասիրութեան համաձայն, չենք կրնար ընդունել զայս ընդհանուր կերպով իբրև ճշմարիտ, քանի որ յիշեալ տեղեաց ոչ միոյն մէջ յանուանէ յիշուած չէ Եզր Սաղաթիէլ: Բ. Դիտելու ենք, որ այս անկանոն գրութիւնն՝ այժմեան ձևով փրկչական թուականի 100-120էն յառաջ չկարէ գրուած լինել, մինչդեռ վերոյիշեալ հեղինակներէն դէթ կանոնականքն՝ 60-100ին ոչ միայն գրուած, այլ և ի սփիւռս տարածուած և ամենուն քաջածանօթ էին: Գ. Հելլգենֆելդի ցոյց տուած տեղիքն՝ կարող են, հաւանօրէն, առնուած լինել փոքր արարածոցէն, Ենոյքայ Գրքէն և Բարաքայ Յայտնաբեկէն, որուն Եզրի հետ ունեցած ամենամեծ աղերսին հետ՝ առաջնութիւնն իսկ յայտնի եղաւ: Հերման Ռէտնչ¹ իսկ խօսելով վերջնոյս՝ Եզրի հետ ունեցած նմանութեանց մասին, կը նշանակէ հետևեալ տեղիքը զլ. ԺԵ. 8, — ԺԶ. 3, — ԻԴ. 1, — ԻԷ. 2-14, — ԻԱ. 6, — ԾԱ. 11, — ԽԸ. 10, — ԾԱ. 3, — ԾԲ. 7, — ԾԶ. 10-14, — ԾԷ. 2, — ԶԴ. 9, — Զ. 2-10, — ԶԵ. 10, — ԶԶ-ԶԴ, որոնք, կ'ըսէ, մասամբ սերտ աղերս ունին փոքր արարածոց կամ Յորելիսից գրքին, և մասամբ Ենոյքայ և Եզրի գրոց հետ. իսկ որովհետև այս գրուածներս աւելի հին են քան զԵզր. ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Գալով Եզրի գրքէն եղած այն կիրառութեանց, զորս գտած և մէջ բերած է Էրմիտաժ Ռորինսոն² Կղ. Աղեքսանդրացիէն սկսեալ՝ մինչև Լեոն Ալլատիոս, հին մատենագրաց քով, կրնանք ստուգիւ Եզրի Դ գրքէն փոխ առնուած ընդունել. վասն զի այդ մատենագիրներն՝ յանուանէ կը յիշեն Եզրը: Այս կոչումներէս յայտնապէս կը տեսնուի, թէ փրկչական թուականի Բ դարուն հազիւ ոմանց ծանօթացեր էր այս գրուածս, և այն իսկ՝ հաւանօրէն՝ այժմեանէն շատ տարբեր ձևով: Ս. Ամբրոսիոսի օրերն աւելի տարածուած և հռչակ ստացած էր նաև յԱրևմուտս, զի այս վարդապետս իր ժամանակի մոլորութիւններուն դէմ մրցելու համար՝ յաճախ, ինչպէս ըսուեցաւ, ի վկայութիւն կոչած է զայն՝ մարգարէի տիտղոսով:


Մեր դասական գրականութեան մէջ Եզրի անկանոն գրքին բնաւ յիշատակութեան հանդիպած չեմ. իսկ միջնադարեան մատենագրութիւնք՝ ըստ մեծի մասին դեռ անտիպ մնալով՝ դժուար է որո-

1. Das Buch der Jubiläen oder Kleine Genesis. Leipzig 1874. S. 412.

2. S^{tes} The fourth Book of Ezras, Cambridge 1895, p. XXVIII-XLIII,


չել, թէ ի՞նչ կիրառութիւնք եղած են անտի և ի՞նչ չափով: Գրուածիս յիշակութեան կը հանդիպինք առաջին անգամ Սարկաւազ Վե՛ Ս. Գրոց կարգաւորութեան ցուցակին մէջ, զոր պահած է մեզ Մխիթար Այրիվանեցի. բայց այս ըսել չէ, թէ Թ-ԹԱ դարէն յառաջ եզրի անկանոն գիրքն՝ դեռ ևս թարգմանուած չէր ի հայ բարբառ: Եւ յիրաւի, կան այդ ժամանակէն յառաջ թարգմանուած Հիպպոգրտեայ, Մեթոդիոսի, Գանիելի Է տեսիլն և Ծնովքայ տեսիլն, յորս կը գտնենք Եզրի այդ գրքէն եղած փոխառութիւններ, որոնք բաւացի կերպով նոյն են հայկական թարգմանութեան հետ. հետևաբար, այս և նման ուրիշ լեզուական կռուաններու վերայ յեցած, զորս կ'ընծայէ մեզ Եզրի հայկական թարգմանութիւնն, կարեմք եզրակացնել ամենայն հաւանականութեամբ, որ դա թարգմանուած ըլլայ Զ-Է դարում՝¹, և թէ Մեթոդիոսի թարգմանիչն՝ Ստեփաննոս Սիւնեցի, ինչպէս նաև Յովհ. Կողեռն, Վարդան և այլք, օգտուած ըլլան անկէ: ԹԱ դարում՝ Աստուածաշնչի մէջ ընդօրինակութեամբ մուտ գտնելէն վերջ՝ անտարակոյս եթէ ոչ Հայաստանեաց եկեղեցւոյ բնէն հրապարակաւ, այլ գէթ առանձնականաց կողմէն հաճութեամբ կը կարդացուէր և՛ այս գրուածս, իբրև օգտակար և հրահանգիչ. մնացածն այլոց կը թողունք ուսումնասիրել:

1. Հայկական թարգմանութեան լեզուն և ոճերն իսկ՝ զայս կը հաստատեն, վասն զի ո՛չ Ե դարու հայ լեզուի և գրականութեան վսեմական յատկութիւնքն կը նշմարուին նոս, և ոչ այլ Թ-Թ դարու անկեալ լեզուն՝ կապարեայ գունով, այլ երկուքին միջասահման առանձնութիւն մի՛ Ս. Գրոց ծառայական նմանողութեամբք զորդարար պահոււնեալ:



ՀԱՐՑՄՈՒՆՔ ԴՇԽՈՅԻՆ

ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԻՔ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐԴԻՈՅ ԳԱԻԹԻ



Հայկական գրականութեան մէջ խնամքով պահուած այս
 շքնաղաղիւտ պատառիկս, զոր անցեալ տարի ի լոյս ըն-
 ծայեց Նախնեաց հիւն և ետր քանգարանն ի Վենետիկ, մինչև
 ցայսօր դեռ ուրիշ լեզուով յայանուած չէ: Այն բազմաթիւ
 անվաւեր քրուածքն¹, որոնք Սողոմոնի անուան վերագրուած
 են և ըստ մասին հրատարակուած՝ բնաւ նմանութիւն չունին մեր
 պատառիկին հետ, որ ամենայն ուշադրութեան արժանաւոր հնու-
 թիւն մ'է: Գրուածիս մաքուր և կոկ շարաբանութիւնն իսկ՝ յայտնի
 նշան մ'է Հայկական թարգմանութեան հնութեան. հետևաբար, նաև
 անոր վաղեմի բնագրին գոյութեանն:

Առ ի չգոյէ ուրիշ թարգմանութեանց՝ թերևս ըլլան ոմանք, որ
 լոկ հայկական մտաց և գրչի ծնունդ համարին զայս. բայց ես հա-
 մոզուած չեմ այս բանիս, դիտելով՝ որ ուրիշ այսպիսի շատ գրա-
 կան գանձեր ևս պահուած են հայկական գրականութեան մէջ միայն,

1. Որպէսիք են, օրինակի աղազաւ, Թասալն աւ Վափրիս Խափասըն Եփեղրոտ
 և աւ Քերտ՝ արտայ Տերտոտ. — Տրամախոսութեան Վրէնայ Խափասընի հետ. — Յու-
 զափս Բահան Սողոմոնի. — Հրահանի Խնասաղափութեան աւ իւր արքիս Ռաֆաւմ. —
 Գիւրտ Բաղարիւտայ 12 Բարձրութեանց. — Բանալի Երբժնիցութեան Գիւտայ. — Ճար-
 յաղափս ուլանց. — Արտի 5000. — Պարտութեան Բայ Սողոմոնի. — Ժամանակագր-
 ական Սողոմոնի. — Տաղիւրթութեան, Սողոմոտ Սողոմոնի. — Եղանակ աղբից. — Կտ-
 Սողոմոնի. — Հարցմանտ աւ Խոսարտիւր. — Հարցմանտ Սողոմոնի աւ Քերտ և
 Քերտայ աւ Սողոմոն, և Հարցմանտ Գլխայն Սաբայ աւ Սողոմոն:

և սակայն նորա բնաւ հայկական ծագումն չունին: Դարձեալ, մենք բնաւ միտք չունինք այս տեղ աշխատել ցոյց տալու, որ գրուածս՝ Սողոմոնի կորսուած և վաւերական երկասիրութեան մի մնացորդն եղած ըլլայ. դա կը լինէր մի բունագրօսիկ և անպտուղ ճիւղն. այլ ընդունելով զայն իբրև անվաւեր մի յիշատակարան, որոնել ըստ կարելոյն նորա ծագումը, ունեցած արժէքն, և հուսկ ապա՝ հայկական թարգմանութիան ժամանակամիջոցը:

Ինչպէս որ և է անկանոն գրուած, այսպէս և առաջիկայս՝ կանոնական ճանաչուած գրոց՝ այս ինչ կամ այն տեղոյն վերայ յօրինուած և ձևացած է անշուշտ: Եւ ստուգիւ, բանալով Գ. Թագաւորաբեանց ժ զուտը, կը գտնենք նորա հիմնաքարը, այսպէս. « Եւ տիկինն Սարայ լուաւ զանուն Սողոմոնի... և եկն փորձել զնա առաւոր՝ Եւ եմուտ առ Սողոմոն, և խօսեցաւ ընդ նմա զամենայն ինչ, որ էր ի սրտի իւրում, և մեկնեաց նմա Սողոմոն զամենայն բանս նորա, և ոչ էր բան սխալեալ յարքայէ, զոր ոչ մեկնեաց նմա »: Սոյնն աւանդուած է նաև Բ. Մնացորդաց Թ զլսու 1-2 համարներուն մէջ:

Ի ստորև՝ ծանօթութեան մէջ յիշատակուած գրուածոց վերջինն՝ զէթ ըստ խորագրին համաձայն է մեր պատարիկին. բայց ըստ իրին՝ զլսուվին կը տարբերի անկէց: Գրուածս՝ Յովսէպոսի բնաւ ծանօթ եղած չերևիր. զի հրէական հնութեանց սիրահար պատմիչս խօսելով Եթովպացի² թագուհւոյն՝ Սողոմոնի հետ ըրած տեսու-

1. Այս տեղոյս համաձայն արաբէին պատմագրութիւնն իսկ կ'աւանդէ, որ յովսէպոս արևելքի ուրիշ թագաւորներ ևս ընդհանրապէս զժուարացոյց անդժուածներով իրարու հետ կը մրցէին: Փիւնիկեցի պատմիչներն՝ մէկէն աւելի օրինակներ կուտան մեզ այս բանին. Աբաբացիք, — ուստի էր և Սարայ տիկինն, — արդէն հայկաւոր էին յայտ մասին: Յօրայ և իւր բարեկամաց արամաթսութիւնքն, Սամոնի և Փշտացոց առակն և լուծումն, զոր կը պատմեն զիբը Դոդոսորոց, և առ Խիկարայ՝ Եգիպտոսի թագաւորին և Սենեքերիմայ Ասորեստանեայց թագաւորին մէջ անցած բանազնացութիւնքն իսկ՝ զայս կը հաստատեն: Պորֆիւր (տես Կիւրիշ ժ Գրք Էթիոպի Եթովպացի), և Պլուտարքոս (in Convivio.) նոյնը կ'աւանդեն Եգիպտացոց և Եթովպացոց մասին:

2. Յովսէպոս՝ ոչ միայն Եթովպիոյ, այլ և Եգիպտոսի վերայ թագաւորած կը համարի զաիկինն Սարայ, 530րդ Փարաւոնէն վերջ, և կը կոչէ զնա Նիւալ: Ասոր կը համաձայնի մասամբ նաև Եթովպական աւագութիւնն, որ Նիկաւոյ յաջորդել կուտայ նորա որդին, որ, ըստ առասպելին, Սողոմոնի հետ ունեցած ամուսնութենէն ծնած էր: Սորա առաջին անունն էր՝ Մելի կամ Միելի, բայց յետոյ կոչուեցաւ Դաւիթ, և սկիզբն դրաւ Եթովպիոյ թագաւորութեան: Եթովպացիք զեռ ուրիշ շատ առասպելներ ևս կը պատմեն Սարայ տիկնոջ և Սողոմոնի վերայ, զորս հաւաքած

Թեան և խօսակցութեան մասին, Գ Թագաշորոսքեանց և Բ Մնացորդաց յիշեալ տեղեաց մէջ աւանդուածէն բան մ'աւելի չի պատմեր, մինչդեռ Քիրամայ հետ փոխանակուած նամակազրոյց մասին՝ Մենանդրէն և Դիոնէն կրկին հատուածներ մէջ կը բերէ (Հրէ. Հնախ. Ը. Գրքք, գլ. Ե-Զ), զորս վերոյիշեալ պատմագիրներն՝ Տիւրացւոց դիւաններում և փիւնիկերէն լեզուով գրուած յիշատակարաններէն՝ յունարենի թարգմանած կ'աւանդեն: Այս հատուածոց մէջ՝ որոշակի յիշուած են Երուսաղեմի թագաւորին զարմանալի հանճարն և Արիբալոսի որդւոյն Քիրամայ հարցումներուն տուած յաջող լուծմունքն, բայց Սարայ տիկնոջ հարցմանց նկատմամբ՝ լուռ թիւն է: Ուստի, Յովսեփոսի այս լուռ թեմէս ըստ ինքեան այնպէս կը հետևի, թէ Հարցմունք ղշխոյիկն և պատասխանիք Սողոմոնի մեր գրուածն՝ կամ Քիրամի անուամբ միայն յիշատակուած հարցուպատասխաններուն մէջ լռելեայն հասկանալի է, և կամ Յովսեփոսէն վերջ՝ սեմական լեզուով գրուած մի ուրիշ գործ: Սակայն, ըստ իս, այս դրական հետևութիւն մի չէ, ընդունելով իսկ, թէ կարող է դա կարծուածէն բոլորովին տարբեր ժամանակի ծնունդ լինել: Հետևաբար, յարգելով հանդերձ հնախոյզ պատմագրիս լուռ թիւնը, պէտք չէ՝ որ մենք անով բաւականանանք՝ իրբև բացասական փաստիւ, զի լուռ թիւնն միշտ բացասութիւն չէ. այլ հարկ է ուրիշ հեղինակութեանց դիմել:

Յոյն ժամանակագիրն Գէորգ Կեղրենոս¹, որուն կը միաբանի

են Պետրոս Կոմեստոր, Դամիանոս (De Fide et moribus Aethiopum), Յով. Բառիոս (Decade 3. lib. 4, e. 2) Գինքրագրոս (Cronographiæ lib. 1. p. 121) և Մալկէնդա (De Antichristo, cap. 28):

Իսկ Արաքացւոց աւանդութեան համեմատ, զոր մէջ բերած է Հէրբլոս (Bibl. orientale, p. 183) Սաբա՝ էր Երջանիկ Արաբիոյ դաւառն մի, որուն մայրաքաղաքն էր Մարիթ. իսկ թագուհին, որ եկաւ առ Սողոմոն՝ կը կոչուէր Բալթե ըստ ոմանց, և էր նա զուսար Հաբահաբայ՝ Եմէնի ի թագաւորին. իսկ ըստ այլոց՝ էր զուսար Սաբահիլայ, որ իշանէր ուշիղ զծովի Սարայ՝ որդւոյն Յախ-շահայ, որւոյ Յասարայ, որդւոյ Յովսեփոսայ:

Հարց և մեկնիչներէն ոմանք ևս Յովսեփոսի հետեւելով Եթովպացի կը նամարին զԷջնոյն Սարայ, բայց նասարակաց կարծիքն՝ Արաբիոյ վերայ թագաւորած կը նամարի զնա, որոյ մասունք կը կազմէին և՛ Սարա և Եթովպիա դաւառք. ի հարկէ որիչ ըուն Եթովպիայէն: Այս կարծեաց ստուգութիւնն՝ Մասթէոսեան աւետարանէն (ԺԲ. 42) իսկ յայտնի է, զի կը կոչէ զնա « Էջնոյն նարաւոյ », և Արաբիա իրօք կ'իչնայ Պաղեստինու նարաւակոյմը:

1. Historiarum compendium, Bonnæ, T. I, p. 166-167.

նակ Միք. Գլիկաս, կ'աւանդէ, թէ այն ժամանակ արևելքի մէջ գիտութեան մեծ համբաւ ունեցող Թագուհին Սարայ, զոր Յոյնք՝ Սիրիլոյ կ'անուանեն, լսելով Սողոմոնի համբաւը՝ եկաւ յԵրուսաղէմ, որպէս զի հարցափորձիւ անոր իմաստութիւնը վտանգի ենթարկէ: Եւ երբ Սողոմոն հանձարեղ բանիւք լուծեց բոլոր անոր աւարկութիւններն և հարցումները, նա այնուհետև հետևեալ փորձին դիմեց. այսինքն է, երկու սեռերէ գեղեցիկ մանուկներ՝ մի և նոյն համազգեստուք և զարդուք զարդարած՝ Սողոմոնի դիմացը հանեց, հարցանելով, թէ ո՞ք են արուք և որո՞նք՝ էգ: Թագաւորն իմաստուն՝ առանց վարանելու հրամայեց անոնց, որ երեսնին լուանան. և այս կերպով որոշեց սեռից զանազանութիւնը, դիտելով որ արուք՝ ուժով և խիզախ շփամաբ երեսնին կը սրբեն, իսկ էգերն մեղմով և զգուշութեամբ: Թագուհին՝ բոլորովին զարմացած թազաւորին՝ նակ իւր ընտանեաց և անձին ծածուկ գործերու մասին ըրած յայտնութեանց վերայ, գոչեց մեծածայն. « Ճշմարիտ էր բանն, զոր լուայ յերկրին իմում՝ վասն բանից քոց և իմաստութեանդ » (Գ Թագ. Ժ. 7):

Յոյն ժամանակագրի աւանդածն՝ անով աւելի հետաքրքրական է, զի Ս. Գրքէն դուրս՝ մի այլ գրաւոր աղբիւր ևս ցոյց կու տայ մեզ, ուր Սարայ տիկինն՝ իբրև Սիրիլոյ ներկայացուած է. բայց թէ այդ աղբիւրն երբայակամ էր արդեօք, թէ եթովպական կամ յունական, այս կէտս անորոշ թողուած է: Հովիւ Հերմասէն, Յուսինոսէն և Պաւղոսի անվաւեր գործերէն գիտենք, թէ կային երբայական, պարսկական և ասորական և այլ Սիրիլեան գրուածներ, որոնք փրկչական թուականի Բ և Գ դարերուն մէջ և յաջորդարար քրիստոնէից ձեռքով հետ զհետէ եկամուտ յաւելուածներով ճոխացան: Այսպիսի գրուածոց հաւաքմունքն՝ ժԱ գրքերէ կը բաղկանայ, որոց մէջ՝ նահապետներէն սկսեալ՝ մինչև ի վերջին աւուրս կատարուելիք իրաց մասին չքնաղ գուշակութիւններ կը պարունակուին: Թէոդ. Զահն¹ արդէն ապացուցած է, թէ Սիրիլեան հաւաքման Գ գիրքն՝ շարադրուած է յամին 80, փոքր Ասիոյ մէջ բնակող Հրէի մի ձեռք, և թէ ազատ է քրիստոնէական խանգարմունքէ: Իսկ Գ գիրքն (համար 97-828) [807, 817], որ կը կազմեն՝ ըստ Հառնակի² հաւաքման հնագոյն մասը, կը յառաջագային Քրիս-

1. Zeitschrift für Kirchl. Wissensch. u. Kirchl. Leben, 1886 S. 33-37.

2. Die Chronologie der Altchristl. Litteratur, Leipzig 1897, Erster Band, S. 582.

տոսէ 140 տարի յառաջ եղած գրուածէ մի: Սիրիլեան Հաւաքման մեր գործածած Հրատարակութեան մէջ՝ գէթ Սարայ տիկնոջ Հարցմանց և Սողոմոնի պատասխաններուն վերաբերեալ բան չկայ, այլ միայն սողոմոնեան տաճարի շինութեան մասին համառօտ ակնարկութիւններ: Սակայն, ինչ որ այսօր մեզի հասած Հաւաքման մէջ չի գտնուիր, չենք կրնար ըսել, թէ չէր գտնուեր նոյնպէս վաղեմի Սիրիլեան կոչուած գրոց մէջ. վասն զի Կեղրենոսի վերը պատմած դէպքն ևս՝ այսօր կը պակսի այդ գրութեան մէջ, և սակայն, ըստ վկայութեան յոյն ժամանակագրին, երբեմն ծանօթ էր ամենուն:

Կեղրենոսէն անցնելով Միք. Գլիկասայ, կը հանդիպինք Հետեւեալ տեղւոյն¹, որ ստուգիւ սիրիլեան Հնագոյն աղբիւրէն յառաջ եկած է և մեր ենթադրութիւնը կը հաստատէ: Արդ, պատմիչս խօսելով Սարացւոց վերայ, կ'ըսէ. « Եւ թագուհի նոցա եկաց զարմանալին այն Սիրիլայ, որ զօրէնս ոչ ճանաչէր, այլ և ոչ զգուշակա հարցանէր. նա ինքն՝ ի ձեռն Սողոմոնի՝ իմաստութեան մատակարարի՝ խոստովանեցաւ զԱստուած »: Այս այնքան աւելի հիմնաւոր է, զի սորա յար և նմանն կ'աւանդուի 'Ի դարում ապրող ասորի մի սուրբ Հօր և պուետի քով. այսինքն է՝ Ս. Եփրեմի Խուրին ասորւոյ Գ Թագաւորութեանց մեկնութեան² մէջ, մանր պարագայիւք: Ահա նորա խօսքերն. « Ազդ եղև, լուաւ դշխոյն հարաւոյ ի վաճառապետացն Սողոմոնի և Խիրամայ զլուր Սողոմոնի և զԱստուածոյն իարոյ. և կամեցաւ գալ բազում զօրօք և պատարագօք յԵրուսաղէմ: Եւ իբրև եկն եհաս յԵրուսաղէմ, և ետես զամենայն ինչ՝ զոր լուաւ, ետես այլ ևս բազումն՝ զոր ոչ էր յոնեալ, փորձեաց զնա հարցոռածովքն իմաստութեան. խոստովան եղև զի վասեր եղև փորձն՝ քան զլուրն: Ոչբացաւ ի կոտցն օտարոտոցն. խոստովան եղև յԱստուած, և ասաց, եթէ վասն զի սիրեաց Տէր՝ զԽարայել, և արար զքեզ արքայ՝ առնել զիրաւունս և զարդարութիւն առաջի նորա: Եւ դարձեալ խունկս առ ի պատիւ Աստուծոյ որում խոստովան եղև »:

Տարակոյս չկայ, որ Եփրեմի « փորձեաց զնա հարցուածովք իմաստութեան » և թէ « խոստովան եղև յԱստուած » բացատրութիւնքն՝ ուղղակի Գ Թագաւորութեանց Թ զլիւում աւանդուածին յառաջընթացութիւնք են. բայց, ըստ իս, առանց տարակուսի է և այս, որ « խոստովան եղև, զի վասեր եղև փորձն » խօսքերն՝ Կեղրենոսի

1. Annalium, p. 182.

2. Տպ. Վենետիկ 1836, 4տ. Ա. էջ 425:

յիշեալ տեղում՝ մանկանց վերայ կատարուած փորձը կ'ակնարկէ, որուն աղբիւրն ծանօթ ըլլալու էր և Եփրեմի. իսկ, « ուրացաւ ի կողմն օտարոտացն » բացատրութիւնն այլ՝ ցոյց կու տայ մեզ, թէ այդ աղբիւրն էր խնդրոյ նիւթ եղող մեր պատառիկն, որուն վերջին տողերում կ'ըսէ իրօք դշխոյն այսպէս. « Եւ արդ հաւատամ եթէ Աստուածն քո՝ նա է ճշմարիտ Աստուած, Աստուած երևելեաց և աներևոյցից » : Այո՛, ճշմարիտ Աստուծոյ դաւանութեան այս վերաբերեալ վերջին խօսքերս՝ են յայտնապէս ուրացումն դշխոյին ի կողմ օտարոտաց, զորս շեշտած է սուրբ Հայրս :

Թէ ողորբեսոս ¹, Ս. Պաւլինոս ², Գր. Նաղիանդացի ³, Գր. Նիւսացին ⁴, Կիւրեղ Աղեքսանդրացի ⁵, Որոգինէս ⁶, Հերոնիմոս և մեր Գր. Նարեկացի ⁷ ընդունելով իբրև ճշմարիտ Սարայ տիկնոջ դարձն յաստուածպաշտութիւն, ուրիշ բարձրագոյն գաղափար մ'ևս նկատած են անոր մէջ. այսինքն է՝ իբրև նախատիպ օրինակ մ'առած են զնա Քրիստոսի աստուածութեան հաւատացող Հեթանոսներէն կազմուած Եկեղեցւոյն : Եւ Որոգինեայ վարը նշանակուած տեղւոյն այն խօսքերը միայն կ'ուզեմ հոս դնել, որոնք մեր գրուածին հետ ազերս մ'ևս ցոյց կու տան. « Եկն ուրեմն (տիկինն Սարայ), մանաւանդ թէ ըստ օրինակի նորին եկն եկեղեցի ի Հեթանոսաց՝ լսել զիմաստութիւնն՝ Սողոմոնի, ճշմարիտ և խաղաղաւէտ Տեառն մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի : Եւ եկն, նախ քան զամենայն, փորձելով զնա ասակօրն և հարցոյնածովքն, որք բռնէին նմա ցայնվայր անշոժանէլիք, և նովաւ դարձաւ ի ժանօրոյսն Բանիկ Աստուծոյ, արարչոյ թաւ աշխարհի, անմահոյքեան հոգոյ և հանդերձեայ դասաստանի, որ նմա և իմաստնոց ազգի նորուն Հեթանոսականի կամ մնացեալ էին միշտ անծանօթք, և կամ ընդ երկրայութեամբք և աղօտ իմն ևեթ ծանուցեալք : Քանզի չէր բան ծածկեալ՝ զոր ոչ յայտնեաց թագաւորն խաղաղութեան՝ թագուհւոյն Սարայ, այն ինքն է՝ եկեղեցւոյն, որ ժողովեցաւ ի Հեթանոսաց » :

Արդ, բաղդատելով Որոգինեայ մէջ բերուած տեղւոյն ենթագծուած խօսքերը՝ մեր հարցուպատասխանիներուն հետ՝ երկուստեք համաձայնութիւնն ակներև կը տեսնուի. վասն զի իրօք հոս իսկ կը գտնենք երեք հարց և պատասխանիներ՝ Աստուծոյ մշտէութեան,

1. Quest. 33 in lib. Regum.

2. Epistola I.

3. Oratio 40 in sanct. Baptisma.

4. Homel. 7 in Canticum.

5. Lib. 5 Comment. in Isaiam.

6. Homel. 2 in Canticum canticorum.

7. Մեկն. Երգոց Երգոյն :

աշխարհիս արարչագործութեան և շարժման, հոգւոյ անմահութեան և անոնց զԱստուած փառաւորելոյն և Աստուծով փառաւորուելոյն վերայ: Իսկ 231 իջի հարց ու պատասխանիքն, որոնք կը ներկայացնեն մեզ առակաւոր կերպով հրէական և արարական ազգաց, ինչպէս նաև Սողոմոնի և Սարայ տիկնոջ և ազգատոհմին արարքը, քաջ կը համաձայնին Կերթնոսի յիշեալ տեղոյ՝ սոյն նախադասութեանց. *Ως την βασιλισσαν καταπλαγείσαν πάnu ἐκ τῶν αὐτοῦ καὶ τῶν περὶ αὐτὸν καὶ ἔξ γενομένων և այլն:*

Բոլոր այս վկայութիւններէս կը տեսնուի, թէ ոչ միայն Կերթնոսի, այլ և Եփրեմի և Որոգիմեոսի ծանօթ ըլլալու էին Սարայ տիկնոջ և Սողոմոնի արարուածները պարունակող ուրիշ գնտօտիկեան և գրաւոր յիշատակարաններ, և թէ մեր ձեռքը հասած հարց ու պատասխաններն՝ ըստ իսկութեան այդ յիշատակարաններէն մնացորդ լինելու յարմարութիւն ունին:

Գրուածիս բնագիրն՝ հաւանօրէն սեմական լեզուով գրուած ըլլալու էր. և ասոր յայտնի պայցոյց են, ըստ իս, հետևեալներն. նախ որ, սորա Գ հարցի պատասխանւոյն մէջ՝ խօսելով գրիչն անծանօթ՝ մոլորակաց դրութեան և շրջագայութեան վերայ, կ'ըսէ. « Ըստ ընդարձակութեան և ըստ նեղութեան՝ գօտեացն կատարեն զշուրջն իւրեանց՝ յամաց երեսնից մինչև աւուրս երեսուն, ի կոնոսէս մինչ ի Սահր, || որ է յԵրևակէն մինչև ի Կուսին » || : Վերջին խօսքերն՝ անտարակոյս հայ թարգմանչէն ներմուծուած են՝ իբրև մեկնութիւն Կոնոսս և Սահր անուանց, զորս տառադարձութեամբ պահել ուզած է նա, իւր բնագրին հաւատարիմ մնալու կամ մի ուրիշ պատճառաւ: Անունս Կոնոսս՝ թէև ասորերենի մէջ ևս գործածական է, բայց անոր ծագումն յունական է, զի ժամանակ կը նշանակէ անժամանակաբար. իսկ Սահր՝ բացառութեամբ ասորաբարայկան է, և համառօտուած է **ՌԴԾ** = Սահրս ձևէն:

Այսպէս նաև յէջ 232, վերջին հարցման պատասխանւոյն մէջ, կը յիշուի որոշակի թրանէ թոչունն, որ՝ ըստ բնագրին՝ կը պաշտուէր առ Սարայեցիս իբրև աստուած. իսկ որովհետև այս անուանս յեղաշրջեալ ձևն՝ յառաջ եկած է ասորերէն **ՌԴԾ** = Թերս կամ Թայիրս = Taïra անուանէն, ուրեմն...

Բաց ի այս մասնական պարագաներէս՝ գրութեանս ընդհանուր պարունակութիւնն իսկ սեմական տիպ ունի. վասն զի, ի բաց առեալ լուսաւորաց շարժման և հնդուի ամլութեան վերաբերեալ հարց ու պատասխանիքը, միւսներն առհասարակ Հրէից և ֆիւնիկեցւոց

ազգին, անոնց աստուածութեանց և հաւատարեաց յատուկ և յարմար նիւթերու վերայ կը դառնան: Այո՛, առաջին պատասխանւոյն մէջ՝ յայժ Եղութեամբ սահմանուած հրէական Աստուածն՝ է ճիշդ արարածոց պատմութիւնն ի գրի առնող Մովսիսի « որ Էնն », որ ամէն արարածներէն վերագոյն է և ստեղծող ամենայն էից: Անվաւեր գրուածոց մէջ դժուար է գտնել մէկը, որ այնպէս լաւ ցուլացնէ իւր վերայ, — գէթ արտաքսապէս, — նախաքրիստոնէական ժամանակի և ոգւոյ արտայայտութիւնքն և զերծ երևի քրիստոնէական ներմուծութիւններէ, ինչպէս է այդ գրուածն: Գ հարցման պատասխանին, որ նկարագրուած է Աստուծոյ ինքնագոյ և երանաւէտ գոյութիւնն, մի քիչ կասկածել կու տայ, թէ Յովհաննու աւետարանի ԺԵ գլխու ՉՁ համարի ներշնչութեան ներքեւ գրուած ըլլայ: Այս հակիրճ՝ բայց ամենախորին և ճշմարիտ վարդապետութիւնս, եթէ իրօք իսկ քրիստոնէութենէ հին համարինք, ամենէն աւելի պայծառ և զօրեղ փաստը կու տայ մեզ հրէական ազգին՝ այդ ժամանակամիջոցում հոգւոյ անմահութեան և աստուածային էութեան մէջ յաւիտեանս երջանիկ լինելու գաղափարի զարգացման, ընդդէմ Սազուկեցւոց: Այս տեղ՝ հերքուած է նաև Հնդկային համայնաստուածութեան վարդապետութիւնն՝ « Յայնժամ իցեն ի նմա մաքրոցն հոգիքն », զեղեցիկ զանազանութեամբ, որով կ'արտաքսուի հոգւոց առհասարակ յեղափոխումն յԱստուած. և Աստուծոյ համար կ'ըսուի, թէ « Եւ նա՛ ի նոսա... անյեղարար և նոյնապէս »: Սողոմոնի վերջին առակն՝ նմանութեամբ աշտարակի՝ որով կը յաղթահարուի տիկինն հանճարեղ, իսկապէս արևելեան բնաւորութիւն ունի, և կը թաւ պարունակել տիկնոջ սէրն և սրտի բոլոր գաղտնիքը՝ դէպ ի Սողոմոն. մեզ համար թէև բոլորովին անլուծանելի կ'երևին այդ ակնարկութիւնքն, սակայն տիկինն լաւ հասկացած է նոցա միտքը, և այդ պատճառաւ իսկ կը գոչէ, « Այլ թէ խորհրդոց ծածկատեսն ո՛չ կարծէաք »: Dialogus Salomonis et Marculphi գրութիւնն, որ միջին դարուն մէջ շառաչ հանեց և շատ անգամ հրատարակուեցաւ, մեծապէս կը տարբերի և զուրկ է դորա հնութեան յայտարար յատկութիւններէն: Մեր ուսումնասիրած գրուածն՝ եթէ իւր ամբողջութեամբն ձեռքերնիս հասնէր՝ անհամեմատ մեծ պիտի լինէր անոր յարգն. սակայն, այդ պատուովն իսկ՝ թանկագին հնութիւն մ'է անտարակոյս, որուն համար պարտական ենք հայկական գրականութեան, որ յարգեր և պահպաներ է զայն գիշատիչ Վառնոսի ժանիքներէն: Ուստի, հետևութիւնն անժխտելի է:

Այս ներքին փաստերէն անցնելով արտաքինոց՝ զտանք, ստուգիւ, պատառիկս՝ ամբողջապէս՝ ասորական միջնադարեան մատենագրութեան, այն է՝ Միքայել Ասորոյ յամանակագրութեան¹ հայերէն թարգմանութեան մէջ։ Բաղդատելով ժամանակագրութեանս մեր մատենադարանի երեք օրինակները պատառիկիս հետ՝ երկաքանչիւրին նոյնութիւնն առանց երկրայութեան հաստատուեցաւ, թէպէտ և երկու կողմէն իսկ կան նաև նշանաւոր տարբերութիւններ։ Նախևեկաց հիւն և ևոր քանգարանիս մէջ հրատարակուածն՝ թէ՛ լեզուի համեմատական մաքրութեան և շարագրութեան և թէ պարունակութեան կողմանէ՝ Միքայելի ժամանակագրութեան մէջ եղածէն աւելի կատարեալ կը տեսնուի. սակայն այս վերջինս՝ անով աւելի բաղդաւոր է, զի կ'ուղղագրէ մեր վերջին հրատարակութեան մէջ ներմուծուած կամ խանգարուած անուանքը, ընծայելով մեզ անոնց սեմական և վաղեմի ձևերը։ Միքայելի յամանակագրութեանն՝ կ'ուղղէ մի ուրիշ նշանաւոր խանգարումն ևս, այսինքն է՝ Նախևեկաց քանգարանի 231 իլում՝ Սարայ գլխոյին բերանը դրուած՝ « Լուեալ էաք զիմաստից քոց — Աստուած երևելեաց և աներևութից » պարբերութիւնն, որ խիստ անկապ և անյարմար կերպով այդ տեղ փոխադրուած է, բայց երբեմն էր ի վերջ կոյս գրութեանն, կամ լաւ ևս Սողոմոնի վերջին առեղծուածին. վասն զի յամանակագրութեանն Սողոմոնի. « Եւ պահանորդք նորա ո՛չ երևին » խօսքէն անմիջապէս վերջը կը յարէ. « Եւ սաէ գլխոյն. Լուեալ էաք զքեզ իմաստուն, այլ ծածկատես ոչ կարծէաք. և արդ գիտեմ եթէ Աստուածն քո՛ միայն է Աստուածն երևելեաց և աներևութից »։ Տեղւոյս խանգարումն՝ այնքան զգալի էր, որ Միքայելի յամանակագրութեան մէջ գրուածս յայտնելէն յառաջ իսկ՝ մենք դիտած և նշանակած էինք, ոչ միայն անոր այժմու գրուած տեղւոյն անյարմարութիւնը, այլ նոյն իսկ նորա բուն տեղին, ուր կը գտնուէր երբեմն։

Նախևեկաց քանգարանի հրատարակչին ծանօթ չլինելով Միքայելի յամանակագրութեան մէջ պահուած այս գրուածս, կարևոր կը համարինք դնել ամբողջ դիմացէ դիմաց երկու բնագրերը, նշանակելով նօտարգրով երկու կողմէն եղած տարբերութիւնքը։ Իսկ յամանակագրութեան այլ և այլ օրինակներու իրարմէ ունեցած տարբերութիւնները կը նշանակենք ի ստորև՝ ծանօթութեամբ, որոնք,

1. *Œuvres Chronique de Michel le Grand, traduite par Victor Langlois, Venise, p. 58-60.*

ըստ իս, կարող են լոյս սփռել մի ուրիշ կէտի վերայ, զոր յետոյ պիտի բարգաւաճենք:

Սակայն, յառաջ քան որ և է համեմատութիւն՝ յարմար կը թուի ինձ՝ նշանակել այդ համեմատութեանց իբրև եղերք ծառայող յամանակագրութեան գէթ մեր մատենագարանի օրինակներն, որոնցմէ չորք միայն ամբողջ են. այսինքն են, Ա օրինակն, թիւ 1326, որուն մէջ սակայն կը պակասին դշխոյին և Սողոմոնի ընծայուած չարց ու պատասխանիքն: Բ օր. է թիւ 662, բոլորգիր թղթեայ, գրեալ ի Թու. Հայ. ՌԾԹ = 1610, ի Շօշ քաղաք: Գ օր. է թիւ 1023, նօտրագիր նոր և անթուական, չունի յիշատակարան գրչութեան, բայց ժԸ դարուն վերջերը գրուած կ'երևի: Ե օր. է բոլորգիր՝ թղթեայ, յորում թէպէտ և գրչութեան յիշատակագրութիւնն կը պակասի, բայց հաւանօրէն ժն դարուն վերջը և կամ ի սկզբան ժՁին գրուած լինելու է: Հին օրինակն առինք իբրև բնագիր մեր համեմատութեանց, թէպէտև անոր ընթերցուածքն իսկ ընտրելագոյն և ճշգրտոյն ըլլալէ հետի են, և երբեմն Բ օրինակէն աւելի ստորին. զի վերջնոյս ընթերցուածներէն ոմանք, — ինչպէս օրինակի աղագաւ, անոսագայտոքիսն, որ միակ ուղիղն է, աւանդոյն մէջ « անուանագայութիւն » եղած է, վրիպակաւ գրչի:

ՀԱՐՑՄ. ԴՇԽՈՅԻՆ

ԺԱՄԱՆԱԿԳ. ՄԻՔԱՅԵԼԻ

ԴՇԽՈՅԻՆ. « Զբնչ է Աստուածն քո, և ո՛ւմ նման է, և որո՞վ կերպարանի:

ՍՈՂ. « Աստուածն իմ է է, և ամենայն է՛ ի նմանէ է, և ամենայն էից վերագոյն է, և յինչ ոչ կերպարանի. զի ամենայն ինչ յեղուճն և հակառակ ունի, և իմ տերն անյեղ* և անհակառակ է:

ԴՇԽ. « Ո՞րպէս շարժի գունդն երկնից. յա՛յ թէ յահեակ, և ի շրջագայութեան իջրո՞ւմ՝ բոլորութի՛ւն շրջագայի, թէ մասամբ:

ՍՈՂ. « Երկուս ունի օրինակ շրջագայութեան**:

ԴՇԽ. « Ո՞րպէս:

ՍՈՂ. « Երկրորդն հաստատութեան՝ յարեւելից յա՛ջակողմ՝ շարժմամբ՝ ընդ հարաւ յարեւմուտս կոյս գնացեալ, դառնայ ընդ հիւսիսիւ ի նոյնն, և այնպէս սրահաց եղեալ հրամանաւ հարկի՝ ընդ տիւ և ընդ գիշեր շուրջ մի կատարէ:

« Իսկ մոլորական կոչեալ լուսաւորեղ՝ շրջագային յարեւմտից

ՀՐՑՄ. « Զբնչ է Աստուածն քո և ո՛ւմ նման է, և որ կերպիւ՞ կերպարանի:

ՊԱՏ. « Եւ ասէ Սողոմոն. Աստուածն իմ է է, և ամենայն էից վեհագոյն² է, և յինչ ոչ կերպարանի, զի ամենայն ինչ եղեալ է և հակառակ ունի, և իմ Աստուածն անեղ է և աննեքհակ է:

ՀՐՑՄ. « Ո՞րպէս շարժի գունդն երկնից, յա՛յ թէ յահեակ.

և բոլորի՛ւն շրջի՞³, թէ մասամբ »:

ՊԱՏ. « Երկուս օրինակս ունի անուանագայութեան⁴:

.

ՊԱՏ. « Զի շրջաբոլորն երկնից՝ յարեւելից յա՛ջակողմն շարժմամբ ընդ հարաւ յարեւմուտս գընացեալ, դառնայ ընդ հիւսիսի ի նոյնն, և այսպէս հրամանաւ հարկի ընդ տիւ և ընդ գիշեր շուրջ մի կատարէ՝ անմոյար գեղիւն աստեղաց⁵:

« Իսկ մոլորակեղ կոչեցեալ յումանց՝ շրջագային յարեւմտից⁶ ձա-

* Այս ընթերցուածս՝ ակելի հիշդ է, վասն զի խնդիրն ո՛չ թէ Աստուծոյ ինքնագոյութեան, այլ անփոփոխութեան կամ կերպարանակցութեան վերայ է:

** Այս բառս՝ յաւախ գործածուած է մեր դասական հեղինակաց քով. իսկ բառն անուստիտայութեան՝ կը գտնենք միայն Դիոնիսիոսի՝ Յազաֆո երկնից թարգմանութեան մէջ:

1. Բ օր. Որ՞վ կերպարանի: Գ օր. Ո՞ր կերպիւ:

2. Բ օր. նոյն: Գ օր. վերեւի:

3. Բ օր. նոյն: Գ օր. շարժի:

4. Բ օր. անուստիտայութեան:

5. Այսինքն է՝ արեգակն: Գծուար է որ այս բառերս՝ նորամուտ յաւելուած լինին, վասն զի կը գտնուին ժամանակագրութեան բոլոր օրինակաց մէջ:

6. Բ և Գ օր. ընդ ձախակողմն:

ՀԱՐՑՄ. ԴՇԻ.

ԺԱՄ. ՄԻՔ.

ընդ ձախակողմ՝ յարևելս կոյս, և իւրաքանչիւր ոք ի նոցանէ ըստ բարձրութեան և ըստ ցածութեան, ըստ ընդարձակութեան և ըստ նեղութեան գօտեացն կատարեն ըզլուրջն իւրեանց, յամաց երեսնից մինչև յաւուրս երեսուն, ի Կոտնոսէ մինչև ի Սահր, որ է յերևակէն մինչև ի լուսին » :

ԳՇԽ. « Նախ քան զէանալն ամենայնի՝ ո՛ւր կայր ամենարարն, և զկնի լուծմանն ամենեցոանց՝ յորո՞ւմ տեղոջ կացցէ անշարժականն » :

ՍՈՂ. « Նախ քան զգոյանալ եղակեանացս՝ կայր արարողն յինքեան, և լի էր յէական բնութեանն, և զուարճանայր յանեղրական բարիսն : Եւ յորժամ ոչ իցեն կացեալքս, նոյնպէս կայ յիշտում անշարժութեանն * . և այժմ՝ ի նա են ամենայնք, և յայնժամ իցեն ի նա սրբոցն հոգիքն, և նա ի նոսա : Փառաւոր է և փառաւորի՝ անյեղարար և նոյնպէս :

ԴՇԽ. « Չի՞նչ է պատձառ կնոջ հնդկայնոյ, զի յետ ուտելոյ նուռն ոչ եւս յղանայ :

խակողմն յարևելս կոյս . և իւրաքանչիւր ըստ բարձրութեան, ըստ նեղութեան, և ըստ ընդարձակութեան գաւտեացդ կատարեն ըզլուրջն իւրեանց, յամաց երեսնից մինչև աւուրս երեսուն, ի Կրանեայ ¹, որ է Երեւակն, մինչև ի Սահրա՝ որ է Լուսին » :

ՀԱՐՑՄ. « Նախ քան զէանալն ամենայնի՝ ո՛ւր էր ամենարարն, և զկնի լուծմանն ո՞ւր դարարէ անշարժականն » :

ՊԱՏ. « Յառաջ քան զգոյանալն ամենայնի՝ կայր միշտ են ի յինքեան, և լի էր յէական բնութեան ², և զուարճանայր յանեղրական բարիսն :

Եւ այժմ՝ ի նա են, և կան արարեալքս . և յետ շո՞ւմանն՝ մնայ նոյնպէս ի յինքեան, և ի սրբոցն հոգիս, և սորոքն ի նա . փառաւոր է և փառաւորի :

ՀՐՑՄ. « Կի՞ն հնդկացի յետ ուտելոյ նուռն՝ ոչ ևս յղանայ :

* Նօտաբար լուծած խօսքերն յարմար են տեղոյս . նետեալքս զժուար է, որ նորմուտ յաւելուած լինին, այլ մասն բուն ընազրին, որոնք զուրս թողուած են յամենակազրութեան մէջ, մեզ անժանօթ պատահառաւ : Չինչ և իցէ, ցոյց կու տան մեզ, որ այս ընազրիս՝ Միք. ժամանակազրութեանն ոչ միայն անկախ է, այլ և անկի էին :

1. Բ և Գ օր. Կրանեայ : Այս և սորա յարակից անունն՝ Սահրա՝ անկի ստորական ձև ունին՝ քան թէ Կոտնու և Սահր :
2. Բ օր. բնութիւն :

ՀԱՐՑՄ. ԴՇԽ.

ԺԱՄ. ՄԻՔ.

ՍՈՂ. « Նուռն հոյ է և գէճ,
և Հնդիկն ջերմին է և չորին. իսկ
կինն՝ գիջին է և ցրտին. և բնու-
թիւն կնոջ խառնեալ ընդ նռան՝
ընդդէմ բնութեան երկրին ոչ լինի
յլութիւն:

ԴՇԽ. « Ձինչ է, զի այր հընդ-
կացի գինըմպու՝ անպտուղ է սեր-
մամբ:

ՍՈՂ. « Բնութիւն գինոյ յա-
ւելու ի քուն, և առաջի ի Հըն-
դիկը * և է ջերմին և չորին, գի-
նին և երկիրն միառորեայ ի միա-
սին՝ առեկն անքեղմնառոր:

ԴՇԽ. « Իմաստութիւնն ընդ-
հանճուր է, թէ մասնական. բնու-
թեամբ է թէ պարզւօք:

ՍՈՂ. « Ընդհանոր է և մաս-
նական՝ տեսակօք: Եւ բնութեամբ
է և պարզւօք. բնութեամբ՝ հասա-
րակ է գոյեղինաց կենդանականաց
մասանց, և պարզւականն՝ ոչ է
հասարակական, այլ յատկական.

* Այս տեղիս խանգարուած կը տես-
նուի. մասն զի խօսքն հնդիկ վերայ է,
և ոչ թէ Հնդկաստանի. « ջերմին և չո-
րին » բառերն իսկ ժողովրդիկն են առա-
ջին տողի « բնութիւն գինոյ » խօսքին
քով:

ՊԱՏ. « Նուռն ցրտին է և գի-
ձին և Հնդկաց երկիրն՝ ջերմին է
և չորին. և կին հնդկացի ցրտին
է և գիջին. և բնութիւն նռան
և կնոջ խառնեալ իմիասին՝ հա-
կասակ բնութեան երկրին ոչ յրա-
նայ:

ՀՐՑՄ. « Այր հնդուի¹ գին-
ըմպու՝ անպտուղ է սերմամբ:

ՊԱՏ. « Բնութիւն գինոյ ջեր-
մին է և չորին, և յաւելու ի
քուն, և բնութեան առն նոյնպէս.
և յաճախեչ առն ի հակասակն²
չինի անսերմն:

ՀՐՑՄ. « Իմաստութիւնն ընդհա-
նուր³ է, թէ մասնական և բը-
նութեամբ է, թէ ռասմայր:

ՊԱՏ. « Իմաստութիւնն՝
ընդհանուր է՝ սեռիւ, և մասնա-
կան տեսակաւք. և է բնութեամբ
գոյիցս շնչառորաց և տնկոց և բոռ-
սոց. իսկ մարդկան ազգի⁴ է բնա-
կան ի խառնառոց, և է ռա-
մայր աշխատանաց գոյացեայ ի

1. Բ օր. Այր հնդուի: Գ օր. Այր
հնդի:
2. Բ օր. յաճախեչ: « Ի հակասակն »
բառի նշանակութիւնն յայտնի չէ, որով
և անհասկանալի: Խանգարուած կ'երեւի:
3. Բ և Գ օր. ընդհանուր:
4. Այս և յաջորդ բառերն՝ եթէ եկա-
մուս չեն, աւելի կատարելութեան նշան
են բնազբին:

ՀԱՐՑՄ. ԴՇԽ.

ԺԱՄ. ՄԻՔ.

և ընտրութիւնն՝ առ տուողին է,
և նորին է բնութեամբ*:

ԴՇԽ. « Մայր օտար, և որդիք
օտար, սպանող և սնուցանող ան-
օրինաց, յայտնեալ գողութիւնն՝
և ապրեալ գողն, սնոյց թագա-
ւորս արատով:

ՍՈՂ. « Զհայրն իմ և զիս նա-
խատես. զի Քամար՝ կարծողն
սպանող արանցն, գողութեամբ
ի Յուդայէ սնոյց զհարսն մեր:

ԴՇԽ. « Ո՛ր է գազդիւն, որ փոխ-
մամբ սնուցանէ զթագաւորս, և
պատռանալ ամպօք յանդատանս՝
կայանօք երբայ**:

ՍՈՂ. « Ի դաշտանէ կանանց
փոխեալ ի ստինս ամպոց՝ թագա-
ւորք և աղքատք սնանին:

ԴՇԽ. « Խորտկարար թագաւո-
րի՝ յաճախեալ զխաւարարսն, յա-
ղաքս զանազանութեան համոցն
աշխատի և աշխատէ, և մի է
ճաշակն:

* Այս բաներս անյարմար կ'երևին
և պակասաւոր, զի զանազանութիւն մի
չեն զներ Աստուծոյ և կենդանական էա-
կաց զիտութեան մէջ:

** Այս վերջին խօսքերս՝ յաւելուած
ըլլալու են, վասն զի լուծման մէջ անոնց
վերաբերեալ մեկնութիւնն կը պակսի:

բնութեանց գիշտից. և է պարզեա-
կանք՝ ի փաստ տուողին Աստու-
ծոյ. և այս ոչ է հասարակ, այլ
ընտրութեամբ արժանեացն:

ԱՌԱԿ. « Մայր աւտար և որդիք
պղծութեան, սպանող և սնուցա-
նող անօրինացն՝, յայտնեալ գո-
ղութիւն և ապրեալ գողն՝, թա-
գաւորն՝ արատովք:

ԼՈՒԾ. « Զհարքն իմ և զիս
այպտես, զի Քամար կարծողն՝
սպանող արանցն, սնոյց զհարքն՝
իմ՝ գողացեալ ի Յուդայէ:

ԱՌԿ. « Ո՛ր է գարշն և զագ-
րելին, որ փոփոխեալ ամպովք
սնուցանէ զթագաւորս*:

ԼՈՒԾ. « Ի դաշտանէ կանանց
թագաւորք և աղքատք սնանին,
պատռանալք ի ստինս ամպոց:

ԱՅԼ. « Խորդկացն՝ պահանջո-
ղն՝ յաճախեաց զխոհակերսն՝,
յաղաքս զանազանութեան հա-
մոցն աշխատի և աշխատէ, և մի
է ճաշակն:

- 1. Բ և Գ. օր. պարբնաստ:
- 2. Բ օր. ասբնոյն: Գ օր. ասբնոյն
Աստուծոյ:
- 5. Բ և Գ օր. չունին:
- 4. Բ և Գ օր. Բեֆաստ:
- 5. Բ օր. Խորթութի:
- 6. Բ օր. զհարսն ի:
- 7. Գ օր. զԲեֆաստ:
- 8. Բ օր. Խորթութի:
- 9. Բ օր. Խոհակերսն:

ՍՈՂ. « Թէ ունիս ազնիւ խո-
հագործ յերկրեւ ջո, յաւել ի հա-
զարս մեր. այլ որպէս և ասեսդ՝
մի է ճաշակն. բայց դառն է ան-
օրէնն և հետի Տեառնէ իմէ, և
մնայ ի դատաստան:

ԴՇԽ. « Փեսայն ոչ երևի, և
հարսանիքն ոչ փոփոխին և սե-
նեակն անախտ կայ. և կատա-
ղեալ հարսինն՝ ամաչէ:

ՍՈՂ. « Մի՛ նախատեր զժողո-
վուրդս մեր, հարսնացեալ անմա-
հապէս Աստուծոյ՝ անճառելի խօս-
մամբ, և ոչ պոռնկիմք ընդ օտար
աստուածս, որ թէ անաչեմք, և
դուք ամաչէք պաշտելով զԹրանէ՝
Թռչունն:

ՍՈՂ. « Բայց ա՛ն ի մէնջ և դու
առակ մի, ասէ. Աշտարակ մի զօ-
րաւոր, և անօթ վիրաւորութեան.
տաճար երեքանկիւնի, քարինք
նորա ցնծութիւն և հիմն նորա՝

* Այս համոռոտուած ձևս՝ աւելի տար-
բեր ընազրէ մի յառաջ եկած ըլլալու է,
քան թէ ընդօրինակողաց անուշադրու-
թենէն, վասն զի Միքայելի ժամանակա-
զրութեան մէջ՝ ոչ միայն Թռչուն բառէն
վերջ դրուած է, այլ և բացատրուած. « Որ
է արժա՛ » պատիւն է՝ փրկելի հաւն:

ԼՈՒԾ. « Եթէ ունիս ազնիւ խո-
հագործս, յաւել ի հազարս մեր.
սակայն, որպէս թռչի ջեզ, մի է
ճաշակն. բայց աշտար է անօրէնն
ի Տեառնէ իմէ¹, և դառն է և
մնայ ի դատաստան:

ԱՌԱՎ. « Փեսայն աներևոյք և
հարսանիքն անփոփոխ, և սենեակն
անարատ, և կատաղեալ հարսինն՝
դիպի անօրոյ մեծի:

ԼՈՒԾ. « Մի՛ նախատեր զժո-
ղովուրդս մեր, անմահապէս հարս-
նացեալ Աստուծոյ՝ անճառելի խօս-
մամբ, և ոչ դիպիմք անաշոյ, պոռնկելով
յաւտար աստուածս. և ձեզ է ամաչելն
պաշտողաց ըզ-
թռչունն թրիակէ² որ է արմառն:

... Բայց ա՛ն ի մէնջ առակ մի.
Աշտարակ մի զաւրաւոր և անօթ
վիրաւորութեան, և ի նմա տա-
ճար եռանկիւնի, որոյ քարինքն
ցնծութիւն, և հիմունք նորա՝ սէր,

- 1. Գ օր. ի-բժի:
- 2. Բ և Գ օր. Թրայիանի: Այս ձևս՝
ընտրելագոյնն է, և կը համաձայնի ասորի
Traiane կամ Tairane հնադրն ուղղա-
գրութեան: Վ. Լանդլուտ անհիշող կեր-
պով Թարզմանած է... « l'oiseau Pheni-
x, appelé Thraiane ». մինչդեռ ըստ
ընազրին Թարզմանելի էր. « C'est vous
qui la méritiez pour avoir adoré l'oi-
seau Thraiane, appelé Phenix. պատիւն
է՝ արժա՛, ըստ մեր գասական հեղինա-
կաց (տես Պղատ. Յուդեո օրհնաց ԺԱ,
— Եպիփան, — Միսիթ. Գօշ, Ա—ի+
— Միսիթ. Այրիվանեցի):

ՀԱՐՑՄ. ԴՇԻՍ.

ՃԱՄ. ՄԻՔ.

սէր. և շինուած նորա՝ ջուր. հիմնարկութիւն նորա՝ գգուանք, և ձեղուանք նորա կաքաւք, սիւն նորա ուրախութիւն, և գիւտ սորա օտար. և բնակողաց նորա ոչ գոն անձինք. և հետևող սորա ընդ վայր է և անհաստատ, և մարդակաջ ի նմանէ յինքն. և լուսամուտք նորա՝ առանձնականք են և մեկնակք, և գործիքն՝ հակառակք են շինմանն, և պահանորդք նորա ոչ երևին:

ԴՇԻՍ. « Լուեալ էաք զիմաստից քոց, այլ քէ խորհրդոց ծածկատես ես՝ ոչ կարծէաք. և արդհաւատամ եթէ Աստուածն քո՝ նա՛ է ձշևարիտ Աստուած, Աստուած երևելեաց և աներևութից * »:

և շինուած՝ նորա՝ ջուր. սկզբունք արձակմանն՝ գգուանք, ձեղունք նորա՝ կաքաւք, սիւնք նորա ուրախութիւն, գիւտ նորա աւտար. և բնակչաց նորա գոն անձինք, և հետևող նորա ընդվայր. և

մահարձանք նորա՝ ի նմանէ և յինքն, և պատուհանք նորա՝ մեկնակք, և գործիք նորա՝ հակառակք են կազմուածոյն, և պահանորդք նորա՝ ոչ երևին:

« Եւ ասէ զշխոյն. Լուեալ էաք զքեզ խնատուն, այլ ծածկատես ոչ կարծէաք. և արդ գիտեմ, եթէ Աստուածն քո՝ միայն է Աստուած երևելեաց և աներևութից »:

Այս համեմատութենէս ակնյայտնի կերպով կը տեսնուին հետևեալ եղելութիւնքն. այսինքն են, ա. Միքայելի յաճանակագրութեան օրինակներն, — ի ըստ առեալ մի քանի աննշան տարբերութիւնները, — ընդհանուրին մէջ աւելի իրարու կը համաձայնին. բ. Նախնեաց հին և նոր քանգարանին մէջ հրատարակուածն՝ որչափ որ այլ ընդհանուր աղերս ունի առաջնոց հետ, սակայն և այնպէս առանձին կարց ու պատասխաններու մէջ նշանաւոր տարբերութիւններ կը ներկայացնէ մեզ. զորոնք չէ կարելի պարզ ընդօրինակողին կամ մի այլ պատահական պատճառի վերագրել. հետևաբար, կը մնայ ասել թէ՛ կամ այն է որ պատահիկ ուղղակի Միք. Աստուայ յիշեալ

* Այս պարբերութիւնս՝ մենք փոխառեցինք այս տեղ, համաձայն Միքայելի ժամանակագրութեան երեք օրինակներուն. ընազրի մէջ տարբեր տեղ գրուած էր:

1. Գ օր. շինուած:

գրուածէն թարգմանուած չէ, այլ մի ուրիշ և աւելի հին բնագրէ, որ և յետոյ ինչ ինչ փոփոխութիւններով ներմուծուած է, — ի հարկէ հայ թարգմանչի ձեռքով, — ժամանակագրութեան մեզ ծանօթ թարգմանութեան մէջ. և կամ եթէ ժամանակագրութենէն թարգմանուած համարուի, պէտք է որ այդ թարգմանութիւնն ուրիշ աւելի վաղ ժամանակի մէջ և ուրիշ անձի ձեռքով կատարուած լինի, քան թէ Վարդանայ և Իշողայ ձեռքով ՓԳ դարում:

Ենթադրութեանցս առաջնոյն նկատմամբ, — որ մեզ աւելի հաւանական կ'երևի, — դիտել կու տանք որ, ստուգիւ, Միք. Ասորիէն յառաջ լինելու էր Սաբայ տիկնոջ և Սողոմոնի վերագրուած հարց ու պատասխանի ձևով մի վաղեմի գրուած, յորմէ այսքանս միայն ՓԳ դարում զետեղուած է Միք. ժամանակագրութեան մէջ. զի հոս ժամանակագրական կարգաւ խօսուելով Սողոմոնի և զայն յանդիմանող Աքեաս մարգարէի մի վերայ, կըսուի, — ներմուծողի կողմէն, — թէ « Առ սա (Սողոմոն) եկն դշխոյն հարաւոյ, զոր ասեմ յագգէ դստերն Եդի յԱստղկանէ սերեալ, որ և իշխեմ կանայք կողմանցն հարաւոյ, ժառանգութիւն առեալ ի նահապետէն Նոյի՝ մինչև ցայսօր, և անուն դշխոյին Եսայ, որ եկն ի համբաւ իմաստութեան նորա, և փորձեաց զնա բանիւք ի հարցուածս ասակաց, զորս տակաւ ինչ կարգեսցոչք աստ »: Այս տեղ յիշուած հարաւային տիկնոջ անունն և ծագումն՝ եթովպական և արարական աւանդութիւններէն բողոքովին տարբեր աղբիւր մի կը թուին ցուցանել, վասն զի, — ինչպէս տեսանք Յովսեպոսի վկայութեան համաձայն, — Եթովպացիք Եթիպաղ կ'անուանեն գտիկինն Սաբայ և ոչ թէ Նսայ, իսկ Արարացիք՝ Բալքիս կամ Բելքիս, ըստ Հերրլոտի: Միքայելի ժամանակագրութեան ասորի բնագիրն, զոր գտաւ մի քանի տարի յառաջ Հալպայ ասորի եպիսկոպոսն Գերպ. Ռիհմանի, դեռ հրատարակուած չլինելով՝ նորա հայկական թարգմանութեամբ միայն չէ կարելի երաշխաւորել Աստղիկ և Եսայ ձևերու ճշդութիւնը. այնու մանաւանդ, որ դձրաւ ևս, — ինչպէս ուրիշ շատ բաներ, — կարող են հայ թարգմանչի ձեռքով փոփոխուած լինել: Չինչ և իցէ, մէջ բերուած տեղւոյն հեղինակն, ո՛վ որ լինի, անով աւելի բողոքաւոր է, զի գէթ արիադնեան թելը ձեռքերնիս կու տայ ուրիշ գրաւոր

1. Երուսաղեմեան 1870 հրատարակութեան մէջ, յէջ 63, Եսայ գրուած է, որ Եսայիւն ընթերցուած մի ենթադրել կու տայ, զոր կը յիշեն Վարդան և այլք իբրև կէն Եսայի:

և աւելի ընդարձակ աւանդութեան մի հասնելու, այն է քաղզէական կամ Բիւռոսեան Սիրիլլայի անուամբ հնոց ծանօթ հինաւորց գրութեանն, որ փոփոխակի նաև պարսկական և երբայական ևս յորջորջուած է մատենագրաց քով: Արդ, Բիւռոսի և Աղքսանդր Մակեդոնացւոյ ժամանակակից և անոր վարքը գրող Նիկիանորի հեղինակութեան վերայ հաստատուած Յուստինոս վկայն, Տատիանոս, Սուրբաս և ուրիշ ծանրակշիռ մատենագիրք ¹ կ'աւանդեն նոյնպէս տիկնոջ՝ նոյնն սերուած լինելն, այսպէս. « A beatissimo Noè oriunda, nomine Sambetha dicta », այսինքն է « յերջանկէն նոյայ սերեալ և Սամբեթա անուանեալ » Սիրիլլայն, որուն իբրև հայր կը նշանակուի Բիւռոս և իբրև մայր Երիզանթի, գրած էր 24 գիրք, որոց մէջ կը խօսուէր ամէն ազգաց և աշխարհաց մասին: Իրաւ է, որ այժմեան ծանօթ սիրիլլեան հաւաքման ² մէջ Միք. Ժամանակագրութեան էջերում համառօտուած յիշեալ հարց ու պատասխանիքն կը պակսին, բայց հաւանօրէն հնագոյն հաւաքման մէջ ըլլալու էր անթերի:

Բիւռոսեան Սիրիլլայի երկասիրութիւնն՝ ծանօթ էր Եւսեբիոսի. սակայն մենք երախտապարտ ենք մեր պատմաճօր Մ. Խորենացւոյ, որ իւր Պատմագրութեան Ա զրքի 2 գլխում, ուր նոյայ երեք որդւոց, այն է՝ Զրուանայ, Տիտանայ և Յարեթոսթէի վերաբերեալ կուռի և երկրի բաժանման մասին շահագրգիռ վէպերը պահած է, Բիւռոսեան Սիրիլլայի անուամբ, կը յիշէ և Աստղիկն իբրև դուստր նոյի՝ այսպէս. « Աստ ի մէջ անցեալ ջոյր նոցա Աստղիկ, համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն »: Խորենացին՝ Բիւռոսեան Սիրիլլայի այդ առասպելը հաստատելու համար, կը կոչէ Նպիւիան Կիպրացւոյ Յաղագս հերձուածոց գրութեան մէկ տեղին ³, որ քաջ կը համա-

1. Sive Sibyllina oracula, Paris 1599.

2. Անդ:

3. Հ. Գար. Զարբանաւան՝ իւր Թարգմանութիւնս Եւսեբիոսի երկասիրութեան մէջ, յէջ 403, այս տեղիս կեղծ Եպիփանոս՝ ի սկիզբս արարածոց մեկնութեանն առած կը համարի: Այս բանս եթէ ստույգ է, այն ժամանակ Մ. Խորենացւոյ պատմագրութիւնն պէտք է որ է գարուն վերջերը գրուած լինէր: Այլ երօք այդպէս չէվասն զի մենք բաղդաստելով Խորենացւոյ յիշեալ տեղին՝ Եպիփանոս Կիպրացւոյ Յաղագս Հերձուածոց Բ Գրքի Բ նո. 27 գլխոյն նեա աւելի յար և նման գտանք, յորմէ քաղած է և կեղծ Եպիփանոս՝ Նոյայ որդւոց Սեմի և Քամայ վերաբերեալ նառուածը. ուստի, քանի որ Խորենացւոյ որոշակի յիշած գրութիւնն կեցեր է, աւելորդ է զիմի կեղծ Եպիփանի մի ուրիշ գրութիւնն:

ձայնի յոյն բնագիրին¹, ըստ որում կը նկարագրուին Նոյայ որդւոց իւրաքանչիւրին ժառանգութիւնն և ազգասերին, Քամայ ձեռքով սեմականաց երկրին գրաւուիլն և արդարադատին Աստուծոյ՝ այն ցեղի տաան ազգերը ջնջելով՝ վերստին անոնց երկիրը Երբայեցւոց վերադարձնելն, սակայն Աստղայ առասպելի մասին խօսք մ'անգամ չկայ Եպիփանու քով. հետեւաբար, ինչպէս Մովսիսի մէջ բերած տեղէն կը տեսնուի՝ Եպիփան այս վերջին կետով սղբիւր եղած չէ Խորենացւոյն. այլ սորա սղբիւրն է՝ ուղղակի կամ անուղղակի կերպով Բիւռոս, որուն Քաղդէական պատմութեան երեք գրքերն ծանօթ էին նաև Յովսեփոսի, Ն. Դամասկացւոյն և այլոց: Խորենացւոյ Աստղիկն իսկ՝ ուրիշ բան չէ, բայց եթէ քաղդէացւոյն Աստարտեան = Լուսին, զոր Միք. Ասորի 2 և ուրիշներ՝ Աստիւր ևս կը գրեն: Յամենայն դէպս, կարող եմք ասկէց հետեցնել, թէ Հարցմունք դիտոյին և այլն, գրութիւնն՝ Միք. Ասորիէն աւելի հին և անկէց բոլորովին անկախ մի բան է, նոյն իսկ ըստ հայերէն թարգմանութեան:

Ստուգել, իմ այս կարծիքս գրականապէս հաստատուեցաւ, երբ ներկայ տարւոյս Մայիս ամսոյն մէջ գործի համար ի Հռոմով. եղած միջոցիս՝ անձամբ տեսայ Միք. ժամանակագրութեան՝ ասորի բնագրի գոտիը՝ Գերպ. Բիւզմանի, որ իմ ջերմ խնդրանացս զիջանելով՝ ծանոյց ինձ յայտնապէս, թէ իւր քով եղած ասորի քնագիրն աչքէ անցնելով՝ Սարայ տիկնոջ և Սողոմոնի Հարցաքննութեան հետքն անգամ չի գտնուիր հոն, և կը յուսանք թէ քիչ ատենէն այդ ժամանակագրութեան հրատարակութիւնն իսկ՝ հրատարակողին երաշխաւորածը պիտի հաստատէ լիովին:

Քարով երկրորդ ենթադրութեանս՝ պէտք է դիտել, որ Միք. ժամանակագրութեան երկու հայկական թարգմանութիւններ եղած կ'աւանդուին, մին՝ նախկին, իսկ միւսն՝ յամի Տեսաւն 1248, Կոստանդին. Բարձրբերդցի կաթողիկոսին հրամանով: Այս թարգմանութիւնս՝

1. Տես Epiphani, Opera, Coloniae 1682, *Adversus Hæreses Liber II*, Tom. II, C. LXXXIV, p. 704.

2. Տես Chronique, Venise, p. 28. — Գեսենիոս, *Thesaur.* p. 1083, Աստղիկ կամ Աստարտը պարսկական Եսթերին (Esther) հետ նոյն կը համարի. իսկ Նիկէս, *De Esther lib. 1.* p. 301, ցոյց տուաւ վերջերս. թէ Աստարտն՝ ծագումով պարսկական անուն չէ, այլ սեմական, և կազմուած է ՄՄՆ = Ast = կս և ՂՆ = Or — լոյս բառերէն, այսինքն է ՂՆՄՄՆ = Լոյս Լուսակալ: Հենդէն (Suppl. Or, n. 6145) ունի « Avilia Aster iudea ». — Մոմսըն (n. 1647) « Claudia Aster ierosolymitana », և այլք յովովք:

զոր ունիւք ի ձեռին նաև զաղղիարէն թարգմանութեամբ, ոմանք Իշողայ կամ Իսահակ ասորի երիցուն կու տան և ոմանք Վարդա- նայ Արևելցոյ, զոր սխալմամբ յարգեաց ոմանք Բարձրորդցի կ'ա- նուանեն: Վարդանայ պատմութեան վեներտկեան հրատարակութեան Յառաջաբանի մէջ ծանօթագրուած է ի ստորև, թէ « Ի յիշատա- կարանի թարգմանութեան (Միք. Ժամ.), զոր ի ձեռին ունիւք, չիք անուն Վարդանայ, բայց վկայէ այնմ Վազար կաթողիկոս »: Իսկ Հայկական բարգմանոթիանք նախնեաց երկասիրութեան մէջ, յէջ 565 և 567, արտասուրուած յիշատակագրութեանց մէջ ընդհակա- ուակն՝ կը յիշուի յանուանէ Վարդան վարդապետ: Սակայն մեր ինչորոյն վերաբերմամբ աւելի նշանակութիւն ունենալու է նախկին թարգմանութիւնն, որուն իբրև թարգմանիչ յիշատակուած է Միք. Ժամանակագրութեան մեր մատենադարանում եղած Բ օրինակին մէջ « Դաւիթ վարդապետ ոմն տիեզերահռչակ »: Բայց թէ ո՞վ էր այդ Դաւիթ վարդապետն, որուն կը տրուին այս տեղ նաև ուրիշ թարգմանութիւնք ևս « Հին և նոր պատմութեան գրոց », կ'ըր ար- դեօք թարգմանեց նա Ժամանակագրութիւնը, և եթէ ստուգու թարգ- մանած էր, ապա ուրեմն ի՞նչ պատճառաւ վերստին թարգմանեցին զայն Վարդան և Իշող: Ահաւասիկ մութ կէտեր, որոնք տակաւին պարզուած չեն: Յիշեալ Դաւիթը յիշող յիշատակարանն՝ ըստ ին- քեան բաւական կուտան մի պիտի չհամարուէր Ժամանակագրու- թեան 1248էն շատ յառաջ կատարուած մի ուրիշ թարգմանութեան, եթէ հետեւեալ փաստերն ևս չիսօսէին անոր ի նպաստ. այսինքն է՝ յամին 1871 եղած սաղիմեան հրատարակութեան Յառաջաբանէն կ'իմանանք, որ այդ վանաց մատենադարանում կայ եղեր Միք. Ժա- մանակագրութեան հնագոյն օրինակ մի, որ թէ՛ շարաբանութեամբ և թէ՛ ներքին պարունակութեամբ շատ կը տարբերի միւս տասն օրի- նակներէն: Այսպէս նաև Էջմիածնի 12 օրինակաց մէջ կը յիշուի հնագոյն օրինակ¹ մի, գրեալ իբր թէ ի Թու. Հայոց ԾՂԵ = 1146:

Այս վերջին տեղեկութեան համաձայն՝ Դաւիթի ձեռքով կատա- րուած թարգմանութիւնն ևս, ուրեմն, 1146ին կ'իյնայ: Բայց այս անկարելի է, ըստ իս, գիտելով որ Միքայէլ՝ յամի Տեառն 1196

1. Այս օրինակէս Հայկական Թարգմ. Նախնեաց երկասիրութեան մէջ, յէջ 570, արտագրուած յիշատակարանն, որ կը գտնուի Ժամանակագրութեան 75 իջում, Անաստաս կայսեր վերաբերեալ մասէն անմիջապէս վերջ « Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս » փոքրիկ յաւելումը՝ չունին միւս օրինակներն:

դեռ նոր աւարտած կը համարուի, ըստ Վիկ. Կանգլուայի¹, իւր ժամանակագրութիւնը: Եւ ստուգիւ, այս անտի իսկ յայտ է, զի Արուլֆարաժ՝ իբրև շարունակող Միքայելի, այդ ամէն կը սկսի՝ յառաջ վարել իւր ժամանակագրութիւնը. ք. Միքայել եթէ յամին 1126 ծնած էր, 1146ին հազիւ 20ամեայ լինէր, որով և դժուարին յոյժ այնպիսի հմտական գրուած մ'երկասիրելու: Ուստի, կամ այն է՝ թէ էջմիածնի հնագոյն օրինակի գրութեան տարեթիւն ՇՂԷ՝ խանդարուած է, և պէտք է կարդալ ՈՂԷ, և կամ առ առաւելն ՈԽԵ = 1196: Այս սահմանէս անդին ուրիշ տարեթիւ կարելի չէ ընդունել, առանց ենթադրելու, որ յամին 1146 Միք. ժամանակագրութեան գէթ առաջին մասն, — որ կը հասնի մինչև Յուստինիանոս թրակացւոյ գահակալութիւնը, — աւարտած ըլլար, և Դաւիթ այնչափը միայն թարգմանած: Բայց այսպիսի մի ենթադրութիւն՝ հիմանէ զուրկ կ'երևի ինձ, վասն զի այդ մասի շարադրութեան լեզուն և ոճն իսկ՝ նոյն է մնացածին հետ. հետևաբար, կը մնայ ըսել թէ՛ կամ խընդրոյ նիւթ եղող Դաւիթն՝ Միքայելի մի այլ գրուածի թարգմանիչ եղած է, և կամ 1196 թուականէն վերջը նա կարող էր թարգմանել ժամանակագրութիւնը, որուն վերայ ապա Վարդան և Իշող յաւելուածներ և յապաւումներ ընելով՝ նոր խմբագրութիւն մի ընծայեցին ազգիս, շատ աննման առաջնոյն:

Թէ Վարդանայ ձեռքով Միք. ժամանակագրութեան մէջ ներմուծուած յաւելուածներէն մին էր և Սարայ տիկնոջ և Սողոմոնի անուամբ եկած հարցուպատասխանիքն՝ այլ ևս տարակուսելու պատճառ չկայ. բայց թէ ուսկից և ինչ կերպով եզաւ այդ ներմուծումն, դժուար է որոշել: Տարակոյս չկայ, թէ այս գրուածո՝ իւր լակոնական սղարանութեամբն և յստակ շարաբանութեամբ՝ Վարդանի գրչէն շատ վեր է, և աւելի հնութեան բնադրոյշմը կը կրէ իւր վերայ: Միւրթ. Այրիվանեցին՝ Սարգաւազ վարդապետի անվաւեր գրոց ցանկին մէջ որոշակի կը յիշէ նաև Սիրիշայն՝ առընթեր Սողոմոնի Սազմոսին. իսկ որովհետև այդ ցանկին մէջ յիշուած գրուածոց շատերն հայկական թարգմանութեամբ հասած են մեզ, ապա ուրեմն կարելի է ըսել, որ Սիրիլայն ևս կամ Սարկաւազ վարդապետի ձեռքով, և կամ անկէ շատ առաջ իսկ թարգմանուած լինէր, — ինչպէս շարաբանութեանէն կը տեսնուի, — յորմէ դժբաղդաբար մասն մի միայն, այն է՝ Հարցմունք Դշխոյին, հասած է մեր. ձեռքը: Այն


1. S^h Chronique de Michel le Grand. Venise. Préface. p. 9.

պարագայն, որ Վարդան այդ պատուիկը Միք. Ժամանակագրութեան հայկ. թարգմանութեան մէջ ներմուծած ժամանակ Բորենացւոյ պատմագրութեան յիշեալ տեղումն, — ուր յիշուած է Ասողիկ իբրև դուստր Նոյայ, — յօդած է զայն Սողոմոնի պատմութեան հետ, կարելի է արդեօք մինչև Հայոց պատմութեան կասկածելի հեղինակին վերագրել Բիւռոսեան Սիրիլլայի ոչ միայն այդ պատուիկին՝ այլ նոյն իսկ ամբողջ գործի թարգմանութիւնը: Այս՝ ոչ միայն կարելի, այլ և հաւանական իսկ է, դիտելով մէկ կողմէն՝ որ Մովսիսի Սիրիլլեան գրոց մասին ունեցած և իւր պատմագրութեան մէջ յայտնած տեղեկութիւնքն՝ յիշեալ պատուիկի պարունակածէն շատ աւելի ընդարձակ են և բազմակողմեան. իսկ միւս կողմէն այլ Վարդանայ այն որոշ բացատրութիւնն, թէ ինքն « սակաւ ինչ » (այսինքն է՝ ի բազմաց), կը կարգէ հոս, նա մանաւանդ նորա կարգածն իսկ կամ մէջ բերածն ի ժամանակագրութեան Միքայելի՝ նշանաւոր տարբերութիւններով պարզուած և ընդարձակուած է. ուրիշ դրական կուռան մի չունինք Հարցմունք դշխոյին և պատասխանիքը: Մովսիսէն թարգմանուած լինելուն, բայց խնդիրն արժանի է լուրջ քննութեան:



ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵԶՐԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ

ԸՆԴ ՀՐԵՇՏԱԿՆ ՏԵԱՌՆ՝ ՎԱՍՆ ՀՈԳԻՈՑ ՄԱՐԳԻԿԱՆ՝



Սյալիսի մի ինքնուրոյն գրուածի անունն անգամ յիշուած չէ օտար ազգի դպրութեանց մէջ. ի Վենետիկ հրատարակուած Հիւն և ևոր քանգարան ևսխնեացն է՝ որ կու գայ ընծայել հնասիրաց հայկական մատենագրութեան մէկ անկիւնը պահուած սեփհականութիւնը: Բայց թէ ուստի՞ և կրբ ունեցաւ նա այդ բացառիկ հնութեան պատառիկը, և թէ ի՞նչ արժէք կարող է ունենալ անկանոն գրոց ուսումնասիրութեան համար, այս բանս հետագայ քննութեամբ պիտի պարզուի:

Պատառիկս, եթէ վերջին էջերէն միայն ուզենք դատել, քրիստոնէական հոգւոյ արտադրութիւն մի եղած կ'երևի. զի 303 իշում պատասխանելով նոր օրինաց հրեշտակն՝ հինաւուրց Եզրի այս հարցման, թէ մեռնելէն վերջ ի՞նչ կերպով պիտի ազատուինք մեղաւորքս՝ սատանայի ձեռքէն, կ'ըսէ. « Եթէ ոք մնայ յետ մեռելոյն հայր կամ մայր, կամ եղբայր կամ քոյր... և կամ այլ ոք ի քրիստոնէից, և աղօթս մատուցանէ պահօք և քասասնօք, մեծ հանգիստ և ողորմութիւն լինի ի ձեռն զենման Քրիստոսի, զի Քրիստոսը:

1. Պատառիկս՝ սոյն խորագրու կը գտնուի Ս. Ղազարու ձեռագրատան կը Մաշտոցի մէջ, որ գրուած է ի թու. Հայոց ՈՄԷ = 1208, Ծոփաց գաւառի Ասորամայր անապատին մէջ. է հին բուրբէր թղթեայ, ի վերջոյ պակասաւոր: Կը պարունակէ ձեռագիրս նահ. Հարցոթմասիւծ Ս. Գր. Լսաստարէ, Տեւի Կիւրբուհոյ Ասորամայր, և Մանգակունց, Եփրեմի և Եւսեբեայ մի քանի նուրբը:

տուս վասն մեր պատարագեցաւ ի վերայ խաչին, և զվեց դարուն ըզ-
 հոգիքն ի ձեռաց սատանայի կորզեաց » և այլն. Յաջորդ էջերն իսկ
 բաղորովին պահոց և խոստովանութեան վերայ կը ճառեն, և մեզ
 ծանօթ մի այլ հայկական երկասիրութեան հետ մեծ նմանութիւն
 ունին, զորս յետոյ պիտոր ցուցնենք: Այսպիսի մի քարոզանման
 գրութեան վերայ աւելի յարմար և աւելի հասկանալի պիտի լի-
 նէր մակագրուած տեանել Եզր Կաթողիկոսի մի՝ քան թէ մարգարէի
 անունը, որուն անվաւեր գրքի է գլխու 105 համարին մէջ ընդհա-
 կառակն բաղորովին բացասական պատասխան տրուած է նմանօրի-
 նակ հարցի մի, զոր մէջ բերինք արդէն՝ այն գրոց ուսումնասիրու-
 թեան մէջ, և այժմ աւելորդ է կրկնելը: Այս աչքի զարնող պա-
 րագայս ի ձեռին ունելով հանդերձ, կարող ենք ըսել, թէ առանց
 հիման չէ որ գրուածիս անծանօթ հեղինակն՝ Եզրի անուան մակա-
 գրած է զայն: Առ այս դիտել կու տանք, թէ գրուածիս առա-
 ջին երեք էջերն՝ համեմատութեամբ յաջորդներուն ստուգիւ հնու-
 թեան հետքեր կը կրեն, և իրօք անկանոն Եզրի գրքէն փոխառու-
 թիւններ կը պարունակեն:

Այժ, առաջին հարցումն, որ կը սկսի. « Զինչ պատրաստեալ է
 Աստուած արդարոց և մեղաւորաց » բառերով, այսպէս և անոր պա-
 տասխանին՝ նոյն են Դ Եզրի է գլխու 75 համարին մէջ առ հրեշ-
 տակն ուղղուած հարցին և 79-80 համարներում ընդունած պա-
 տասխանւոյն հետ: Չորրորդ պարբերութիւնն, որ կը սկսի, « Տէր,
 ո՞վ է որ ոչ իցէ մեղուցեալ Աստուծոյ ի կենդանեաց » բառերով
 նոյն է Եզրի յիշեալ գլխու 46-51 համարներում աւանդուածին հետ,
 ուր լսելով սա հրեշտակէն՝ բազմաց համար պատրաստուած տանջանք-
 ները, կ'ողբայ Աստուծոյ դիմաց, երանելով անասուններն, որոնք
 յարութեան յոյս չունին բնաւ, քան մարդիկ՝ որք անոր զաղափարովը
 կ'ապրին, և վերջէն այլ կը կորսուին: Յաջորդ պարբերութիւնն, ուր
 հրեշտակն, կը սաստէ հարցողին, որ իրմէ վեր բաները չի քննէ և չի
 դատի՝ իր անցուկ կարողութեամբ, նոյն է Եզրի Ը գլխու 1 հա-
 մարի նախադասութեան հետ: Յէջ 301 առաջին պարբերութիւնն,
 յորում կը հարցուի հրեշտակին, թէ հոգին՝ մարմնէն անջատուելէն
 ետքը « ի տեղի տանջանաց կարգի, եթէ ի տեղի պատուոյ՝ մինչև ի
 գալուստն », կրկնութիւն է Եզրի է գլխու 75 համարին մէջ ըրած հար-
 ցին. բայց ավստ՛ս որ այս հարցովս կ'ընդհատի Դ Եզրի հետ ունե-
 ցած աղբրան, ձեռագրին մէջ մէկ թուղթ ինկած լինելով և անոր յա-
 ջորդող եօթն թերթերն այլ կիսով չափ եղծուած: Յուցընելու հա-

մար թէ յիշեալ կրկնութիւնն՝ դիտմամբ իսկ եղած կարէ լինել, բաւական է՝ դիտել, որ Հարցանողն՝ այս տեղ բոլորովին մի ուրիշ Հարց յարուցեր է, այսինքն թէ՛ մեղաւորի Հոգին առնող չար կոչուած Հրեշտակն՝ արդեօք բնութեամբ իսկ չար է, թէ փոխաբերաբար կամ լաւ ևս ըստ գործոց շարագործին, — խզելով իմն նախորդ Հարցի բուն պատասխանը, զոր Բ պարբերութեան վերջին մասի մէջ ազաշարունակած է բարգաւաճել և յաջորդով ամբողջացնել: Այդ միջանկեալ Հարցն և պատասխանին, որ աւելի յետագայ ժամանակի խմբագրական մեկնութիւն մ'ըլլալու երևոյթն ունի, եթէ պահ մի մէջ տեղէն վերցնենք, մնացածն քաջ կը միանայ նախորդ Հարցման Հետ, և Հին բնագրի յոյժ Հետաքրքրական մասը կը ներկայացնէ մեզ, այսպէս. « Առնու (այսինքն Հրեշտակն) զհոգին, տանի ընդ այլեւս, ընդ եղեանն, ընդ ձիւն, ընդ խաւար, ընդ կարկուտ, ընդ սառն, ընդ մրրիկ, ընդ գոռնդս աստուանայի, ընդ վտակս, ընդ հողմն՝ աստիկ անձրևաց, ընդ անեղ և ընդ՝ զարմանայի ձանապարհսն, ընդ անձռի կապանս և բարձրահամ (810) յետուս անցոցանսն: Ո՛վ զարմանայի ձանապարհն. զի ոտնհետ ոտին է, և առաջի նորս հրեղեն գետք են »: Ապա կը շարունակէ. « Յայն ձանապարհն՝ ետքն քանակք դիւաց կան, և ետքն աստիձանք աստուածոտրեանն, երէ ընդ այն կարեւր անցոցանել: Քանզի առաջին օրևանքն՝ չար են և զարմանայի երկուքն՝ անեղ և անպատուսն. երեքն՝ դժոխք են և առաւանկը չորքն՝ կոխք են և պատերազմուք. ի հիկզն՝ ապա քննուսն, երէ արդար է՝ շուսաորի, և երէ մեղատր է՝ մքանայ. ի վնցն՝ ապա պայծասանայ հոգի արդարոյն իրրև զարեգակն. յետքն ապա տարեալ հասոցանել զնա յերկրպագոտրիւն մեծի արոտոյն աստուածոտրեան »:

Այս տեղիս մէջ բերելէն վերջ՝ Հետևեալ Հարցը կը ծագի, այսինքն թէ՛ յունական աղբերէ՛ յառաջ եկած է այդ նկարագիրն. թէ սեմական: Առ այս դիտել կու տանք, որ այս տեղ նկարագրուած եօթն աստիճաններն իրենց որպիսութեամբ Հանդերձ, որոց միջէն կը ճանապարհորդէ Հոգին՝ աստուածութեան Հասնելու Համար, չեն պարզապէս ոչ Յունաց աստեղարաշխներուն ծանօթ երկնային կամ աստեղարաշխական եօթն պարտնակներն, զորս նկարագրած է և մերս Ան. Շիրակացի¹, և ոչ իսկ ըստ Հրէից կամ սրբազան մատենագրաց, որոնք Պաւղոս առաքելոյն Հետ երեք երկինք միայն կը ճա-

1. Տես Հրատարակութիւն Բ. Պատկանեանի ի Պետերբուրգ 1877, էջ 65-86, Յաւելու տարեգրութիւններ:

նաչէին, այսինքն են, ա. օղեղէն կամ ամպեղէն. ք. աստեղային՝ որ և հաստատութիւն, և գ. հրեղէն կոչուածն, որ կը կոչուի նաև աթոռ Աստուծոյ և բնակարան հրեշտակաց: Ուստի, դա այնպիսի մի ժամանակի և գրչի ծնունդ է, որուն ծանօթ եղած ըլլալու էին թէ՛ յոյն իմաստնոց նկարագրած բնական երկնից եօթն պարունակներն և թէ սուրբ գրոց փոխաբերական կամ խորհրդական երկինքն. և որ ջանացած է իւր վարդապետական ուղղութեան կամ գրութեան համեմատ՝ զանոնք իրարու հետ զուգել:

Գէթ վերջին մասն, ուր կը յիշուին եօթն կայանք կամ բանակք դիւաց և մանաւանդ աստուածութեան եօթն աստիճաններն՝ հեռաւոր կերպով կը թուին ցոյց տալ մեզ իբրև սկզբնաղբիւր 'ի Եզրի է զլիւու 84-99 համարներում նկարագրուած՝ եօթնական ճանապարհները, որով մեղաւոր հոգիներն պիտի տանջուին և արդարք ուրախանան, բայց նկատելով որ՝ այս տեղ յիշուած եօթնատեսակ պարզանքներն բոլորովին կը տարբերին այն տեղ յիշուածներէն, հետևաբար՝ Եզր Սաղաթիբի գիրքն չկարէ եղած լինել բուն աղբիւր Հարցաքննոչքեան Եզրի խորագրուած գրութենէն մէջ բերուած տեղոյն:

Վերացումն՝ Եսայեայ խորագրուած անվաւեր գրութիւնն (Գլ. Է. 9) գոր Ռընէ Բասսէ՝ եթովպականէն ֆրանսերենի թարգմանելով հրատարակեց, մասամբ մի կը պարզէ մեր հաստատութի գաղտնիքը: Մարգարէիս հոգին, — նորա սղոցուելէն վերջ, — եօթներորդ երկընքէն ղրկուած հրեշտակին առաջնորդութեամբ՝ առաջին վերելքն ըրած ժամանակ՝ կը հանդիպի Սամայէլ շար հրեշտակին և անոր զօրացը, ուր կ'ըսուի. « Il y avait là un grand combat et les troupes de satan ; l'un s'acharnant contre l'autre ». Տասներորդ համարին մէջ կ'ըսուի, « Il se passa là ce qui se passe sur la terre ». 12րդ համարին մէջ հրեշտակն պատասխանելով Եսայեայ հարցմանը՝ կ'ըսէ, թէ այդ պատերազմն աշխարհիս սկիզբէն կայ և թէ պիտի տևէ, մինչև որ գայ ինքն Աստուածորդին և գայն դարեցնէ: Եսայեայ վերացման մէջ բերուած տեղիքն՝ համաձայն են, անտարակոյս, Եզրի Հարցաքննոչքեան « Ընդ գունդս սատանայի... և առաջին օթևանքն շար են և զարմանալի »... և թէ « ի շորքն

1. Տե՛ս Les Apochryphes Éthiopiens, traduits en français par René Bas-set, III Ascension d'Isaïe, Paris 1894. p. 17-18. Գրուածիս սկզբնաղբիւր՝ քրիստոնէական թուականի Բ-Գ շարու սկիզբը զբուած կը համարի Ա. Հանսակ (Die Chronol. der altech. Litteratur, Leipzig 1897, S. 778).

կուիւք են և պատերազմունք » բացատրութիւններուն . սակայն և այնպէս՝ դա ցոյց կու տայ միայն, թէ եղած է երկուքին հասարակաց աղբիւր մի, բայց ոչ եթէ վերացումն իրայեայ ուղղակի: Եւ այս բանիս յայտնի ապացոյց է այն հանգամանքն, որով այս վերջինս կը զանազանի մեծապէս առաջինէն . այսինքն՝ վերացումն իրայեայ անվաւեր գրուածին մէջ նկարագրուած առաջին երկնքէն սկսեալ մինչև եօթներորդը՝ իբրև առանձինն հրեշտակախումբ զօրաց աստիճանաւոր օթեաններ կը նկատուին միայն, առանց օդերևութաբանական արգասեաց, որոնք իրենց աստիճանաւոր լուսափայլութեան համեմատ՝ աւելի կամ պակաս Բարձրերոյն աթոռը կը փառաբանեն . իսկ Հարցաքննոչքեան մէջ՝ ընդհակառակն՝ այս ամենայն լուծած է բոլորովին, այլ դժոխք, սառամանիք, հողմ և մրրիկ, կարկուտ և հուր, գունդք դիւաց և պատերազմներ միայն կը յիշուին առաջին չորս օթեանաց մէջ . Եին մէջ կը սկսի քննութիւն գործոց, Զին մէջ կը սկսի լուսաւորութիւնն, ուր սակայն զարմանալի հակադրութեամբ արդարներն կը լուսաւորուին և մեղաւորք կը մթազնին: Էր օթեանն կամ պարունակն՝ երկու գրուածոց մէջ իսկ՝ Աստուածութեան իբրև աթոռ նկատուած է, ուր կը մատչին հուսկ ուրեմն հոգիք յերկրպագութիւն փառաց Բարձրելոյն: Ահա, մի ուրիշ օղմիւսութեան հասարակաց աղբեր, զոր վերացման հեղինակն ջանացած է քրիստոնէացնել, որ յայտնի նշան է նորա յետնութեան . իսկ Հարցաքննոչքեան մէջ աւելի անաղարտ պահուած է նախաքրիստոնէական հին աղբիւրն:

Բնականաբար, այժմ պէտք է որոնել այդ աղբիւրը, և որոնել աւելի անվաւերական գրուածոց կամ լաւ ևս տեսիլներու ընդարձակ սահմաններուն մէջ:

Պաշտոս առաքելոյ և Աստուածածնի Տեսիլները¹ աչքէ անցնելով՝ կը գտնենք մէկ կողմէն Եզրի Հարցաքննոչքեան վերոյիշեալ տեղւոյն մէջ նկարագրուած բնական և բնագանցական երևոյթները . այսինքն են՝ Կայանք մարդկան, դժոխք և դեք, ի հարաւ՝ հրեղէն գետեր, յարևմուտս՝ անպեղէն մրրիկներ և հրաշռակ վիշապներ, ի ձախա-

1. Տեսեանցս առաջինն, զոր հրատարակած են Տէշէ:գորֆ (Apocal. Apocryphes, 1865.) և ուրիշներ, պա՛ուած է սլաւ, լատին, զգախարէն, ասորերէն և եւրեթե թարգմանութեամբք, և գրուած է Քրիստոսի թուականի Դ դարում: Հինգերորդ դարուն սկիզբները յաճախ կը յիշուի այն՝ Գեղասիոսի վճռոց մէջ (Decret. Ge-las.): Իսկ երկրորդն, որ հայկական թարգմանութեամբ միայն ինչ ծածօթ է, գրեթէ թէ նախորդէն աւելի նոր է և կեդ Մելիտոսէն ծագած լինելու է:

կողմն դրախտին՝ խառար մեծ, կայծակուճը հրոյ և ծով հրեզէն, որոնց մէջ կը յիշուին տանկոզ հոգիներ, տեսակ տեսակ տանկուճը, և մեղաւորաց իրարմէ սենեցած ասորեր վիճակներն. իսկ միւս կողմէն այլ արգարաց օրհաններն: Այս նմանութիւններէս կարելի էր նետեցնել, թէ վերջինքս՝ իբրև աղբիւր ծառայած ըլլան Հարցաքննութեան, եթէ չլինէին առձեռն պատրաստ աստնցմէ աւելի հնազոյն սղբիւրներ, որոնք աւելի ընդարձակ պարագաներով մեր սւշագրութիւնը գրաւէին իրենց: Այս հին և աւելի հեղինակաւոր ազրերաց մին է Երեմիայի Գիրքն¹, որ ծնունդ տուած է քրիստոնէական շատ մի տեսիլներու և Յայտնութեանց: Եւ սառուգիւ, բազդատելով ուշի ուշով այս գրուածս՝ Նզրի Հարցաքննութեան հետ, գտանք այս տեղ ոչ միայն բոլոր վերև յիշուած պարագաները իրենց ամբողջ պարտութեամբ, այլ նայն իսկ վարդապետական բուն նշանակութեամբ: Երբ զլիով կը սկսի մտովքայ տեսիլն, ուր կը վերանայ տեսանողն, առաջնորդութեամբ հրեշտակապետին, երկրէս՝ երկնից հաստատութեան մէջ, շրջապատուած ամպերով և մառախուղներով, և կը դիտէ աստեղաց և անեզր բնութեան գաղտնիքը: Ի Ա գլխում կը տեսնէ ահագին անապատի մի մէջ իրարու հետ շղթայուած եօթն աստղեր, և կ'իմանայ իւր առաջնորդէն, որ դռքս են այն հրեղէն հոգիներն, որոնք ապստամբեցան ընդդէմ Աստուծոյ, և թէ հոն պիտի մնան անհամար դարեր: Կը տեսնէ հրեղէն սիւներ, որոնք իրարու հետ կը մտրտելիս և կը գահավիժին ահաւոր անգնդոց մէջ: Ի Բ գլխում կը տեսնէ, արևմտեան կողմէն, երկնաբերձ լեռն մի և կրեք երանաւէտ կայաններ՝ խոր, շայնատարր և մթին յոյժ. կ'իմանայ հրեշտակէն, թէ հոն ծածկուած կայ երջանկոտրեան գառառն, հոն է ժողովն հոգոց, և թէ այն տեղ պիտի համահաւաքուին ննջեցելոց հոգիներն. իսկ միւս կողմէն դաստապարտելոց կայանքը, ուր կապուած կան մեղաւորք և կը կրեն ահաւոր տանջանքներ: Այս կայաններս՝ զատուած են առաջիններէն մեծ վեղ մի, յրով և յոստովն, որ կը թափառի ջրոյն վերայ: Ի Ա գլխում կը տեսնէ երկնից ընտրեալ և մեղաւոր հոգիներու գաղտնիքին հետ՝ նոյնպէս կայծակնութեամբ, որոտմանց, եղեման, անկոց, կարկտի, անկրոպայոյց հոգմոց

1. Այս գրոցս Միսի կրտսարակութիւնը միայն ունէի առձեռն, գաղղիւրէն թարգմանութեամբ, ուսկից կ'ընեմ կոչումներս. Գիրքմանի կրտսարակութիւնն աւելի կրտսարեալ է, ուր հաւանորէն եթովպական բնագիրն աւելի համանայնութեան կէտեր ընծայելու էր մեզ:

և խառարի գանձերը: Հուսկ ապա ԽԹ գլխում կը նկատէ այս երկ-
նային զօրութեանց և բնական երևութից մէջ մի մի հրեշտակական
հոգիներ, որոնք կարծէք թէ կը շարժեն զանոնք, կ'ուզեն անոնց
ընթացքը և կը ծառայեցնեն հրամանաց Բարձրելոյն: Ահաւասիկ
այդ կարևոր կէտերը. Je vis l'obéissance de ces fléaux célestes
à sa divine volonté. J'appris que la lumière ne se séparait
point de la foudre, et quoique l'un et l'autre soient unis par
des esprits différents, ils n'en sont pas moins inséparables. Car,
quand la foudre sillonne la nue, le tonnère gronde, mais leurs es-
prits s'arrêtent au moment opportun, et font un juste équi-
libre... Egalement l'esprits de la mer est puissant et fort, et
de même qu'une puissance prodigieuse la retire en arrière
avec une bride... L'esprit des frimas, c'est son ange, l'esprit de
la grêle est un bon ange, ainsi que l'esprit de la neige, à cause
de sa force; et il y a en elle principalement, un esprit qui
en fait élever comme de la fumée, et son nom est fraîcheur. L'es-
prit des nuages n'habite point avec ceux dont je viens de par-
ler, mais il a sa demeure particulière, sa marche s'opère dans
la splendeur, dans la lumière et dans les ténèbres, dans l'hiver
et dans l'été, son séjour est splendide, et son ange est toujours
lumineux. L'esprit de la rosée fait sa demeure sur les confins
mêmes des cieux, son séjour est voisin de celui de la pluie; son
empire s'exerce pendant l'hiver, pendant l'été... Je vis toutes ces
merveilles, aussi bien que le jardin des justes ».

Ենովբայ Գրքի այս այլաբանական նկարագրէս՝ այնպէս հետև-
ցուցին հին և նոր մատենագիրներէն ոմանք¹, իբր թէ անոր հե-
ղինակն ուզած ըլլայ ներկայացնել բնութեան երևոյթներն իբրև մի մի
անձնաւոր հրեշտակներ, համաձայն եգիպտական վարդապետութեան:
Սակայն այդ հակառակ է հրէական աւանդութեան, և հեղինակն
ինքնին ըլլալով ազգաւ հրեայ՝ շէր կարող այդպիսի նորօրինակ վար-
դապետութիւն մի աւանդել իւրայոց՝ նոյն իսկ կապաղիստիկական
տեսակետով. հետևաբար, նա ո՛չ թէ բնական զօրութիւնները՝ իբրև
անձնաւորեալ հրեշտակներ ուզած է ցոյց տալ մեզ, այլ ընդհակա-

1. Աստուէս հասկացեր է, յամին 536, Կոզմոս Աղեքսանդրացին՝ իւր Topographia Christiana գործին մէջ (տես Montfaucon, Collect. nov. Patr. et script. Gr. T. II. p. 150, 155, 280). Աստուէս և Յովհ. Փիլոզոսոս, De mundi creatione գործին մէջ (տես B. Corderius, Vienne, 1630. lib I, e. 12. p. 25).

ուակն իրարմէ անջատ և հակառակամարտ գորութիւնները, որք հրեշտակաց գործակցութեամբ ուղղուած՝ իրարու հետ կը դաշնակաւորին և տիեզերաց հրաշալիքը կը յօրինեն, ըստ կամաց ամենագորարարչին: Արիստոտէլեանք իսկ, ինչպէս նաև անոր դպրոցին պատկանող եկեղեցական Հարք և վարդապետք, ուսուցանեն զայս յայտնապէս: Սակայն մեզ համար կարևորն այս է, որ ինչպէս Եզրի Հարցաքննութեան այսպէս նաև Ենովքայ Գրքում՝ երկնից նիւթական պարունակներէն անցնելով՝ կ'ընէ հոգին իւր աստիճանաւոր վերելքը դէպ ի յիմանալին, աստուածային կայանը ժամանելու համար. և թէ այդ պարունակներուն մէջ են բարի և չար հրեշտակներն, որոց առջիմներն՝ կ'արբանեկեն նախասահմանելոց՝ ածելոյ ի փառս, իսկ վերջինքս մեղաւորաց՝ ի տանջանս: Վերջին կէտս՝ որոշ կերպով արտայայտուած կը գտնենք իրօք Ենովքայ գրոց ԿԹ գլխու հետեւալ տողերում, « Et les anges qui régissent ne seront point là pour les faire rentrer dans leur route, et toutes les étoiles se souleveront contre les pécheurs ». Ձինչ և իցէ, ասկէց իսկ կարելի է հետևեցնել, ըստ ամենայն հաւանականութեան, թէ կամ Ենովքայ Գիրքն ծանօթ լինելու էր Եզրի Հարցաքննութեան հեղինակին, և թէ անոր հետևողութեամբ է որ զանազան օթեաններ դրուած են երկնային պարունակաց մէջ, լծորդելով բարի և չար հոգիները՝ բնական գորութեանց հետ. և կամ սորայս հեղինակն իսկ զենդավեստեան գրոց և զրադաշտական վարդապետութեան ազդեցութեան ներքև ըրած է իւր աշխարհահայեցողութիւնքը քան թէ հրէական գրաւոր աւանդութեանց:

Յամենայն դէպս, այսպիսի հետևողութեան մի այլ ակնյայտնի պացոյց կարելի է համարել Հարցաքննութեան 302 իջի հետևեալ տեղին, որոյ նման ուրիշ տեղ բնաւ հանդիպած չեմ, գէթ հայկական գրականութեան մէջ, և կարելի է եզական մի պատահիկ անուանել, թէ իւր բառական կազմութեան և թէ վարդապետական իմաստից համար: Արդ, կեղծ Եզրի այս հարցմանս, թէ « Տէր իմ, երբ ընդ այնպիսի՜ արհաւիրսն, ընդ կռիւքն, ընդ տապախառիւքն անցուցանես զնա (զհոգին), ընդէր ոչ հանդիպեցուցանես զնա Աստուածութեան, քան աթոռոյն միայն հասուցանես ».— Կը պատասխանուի, թէ « Եթէ հայեսցի ոք (իմա յԱստուածութիւնն), իբրև զմոմ հալեսցի յերե-

1. Նախապէս մէջ բերուած տեղին կ'ակնարկէ, որուն շարունակութիւնը հոս կ'ընէ:

սացն Աստուծոյ, զի Հրեղէն է Աստուածութիւն և զարմանալի » : Այս ամենայն համաձայն է սրբազան մատենից (Ելից, Սազմոսի, և այլն), ուր Աստուած՝ Հուր ծախիչ կ'անուանուի, և չէ ինչ անսովոր. իսկ Հետեւել տողերն՝ ի զուր է որոնել՝ քան թէ գտնել ի Ս. Գիրս, յորս կը նկարագրուի կարծէք թէ աւելի Ահուրամազդայ կամ Որմզդի՝ քան թէ Եհովայի աթոռն կամ բնակութիւնն, այսպէս. « Քանզի այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռոյ Աստուածութեան. Կայանք են, մանասրոռանք են, խոտոյք են, հրեղեկք են, կամարագգեստք են, շապտերք են : Սկի որոտմունք են, անդ շարժմունք են, անդ կոխք են, անդ պատերազմունք են, անդ տապախասիկք են, շրջախոտոյք են, գետունք են, հրեղեկագգեստք են, բոցեստսք են, հրեղեկագունք են : Շուրջ զնովառ սերովքերն անմարմին, քերովքերն վեցրեւան » :

Վերստին բանալով Երևոյքայ Գրոց ԺԴ գլուխը, ստուգել՝ սոյն տեղին պատող քողը մասամբ մի վերացած կը տեսնենք : Տեսանողս երկինքը վերանալով, — կանխաւ նկարագրուած նիւթական պարունակաց միջէն, — կը նկարագրէ Բարձրելոյն և փառաւորելոյն բնակութիւնը՝ այսպէս. « Je fus enlevé ainsi jusqu'au ciel, et j'arrivai bientôt à son mur bâti avec des pierres de cristal. Des flammes mobiles en enveloppaient les contours ; et je pénétrai dans une vaste habitation, je commençai à être saisi d'effroi... Son toit était formé d'étoiles errantes, et d'éclairs de lumière, et l'on voyait, au milieu, des chérubins de feu dans un ciel orageux. Des flammes vibraient autour de ces murailles et la porte était de feu. Quand je fus entré dans cette habitation, elle était à la fois brûlante et froide comme la glace, et il n'y avait là trace ni de bonheur ni de vie... Voici : Il y avait une autre habitation plus spacieuse que la première, dont toutes les portes étaient ouvertes devant moi, au milieu d'une flamme vibrante. Telle était sa gloire, sa magnificence, sa grandeur, qu'il m'est impossible de vous dépeindre... Je l'examinai avec attention, et je vis qu'il y avait un trône élevé, dont l'aspect ressemblait à la grêle, tandis que son contours était comme l'orbe éclatant du soleil ; et il en sortaient des voix des chérubins. De ce trône puissant s'échappaient des torrents de flammes... Et il y avait quelqu'un assis sur ce trône de gloire, dont le vêtement était plus brillant que le soleil et plus blanc que la neige. Et aucun ange

n'était capable de regarder en face le Glorieux et le Magnifique, ni de s'approcher à lui, et des myriades de myriades étaient devant lui ». eot.

Գիտելու ենք նախ, որ Ենովբայ տեսեան մէջ եղած վերջին կայանին կամ օթեանի նկարագիրն՝ Դանիելի և Յովհաննու Յայտնութեան ազդեցութեանը ներքև փոփոխուելով՝ իւր նախկին աղբբէն օտարացած է. բայց առաջին օթեանի նկատմամբ եղած այս բացատրութիւնքս, թէ « Նա բոցեռաց էր միանգամայն և ցրտիկ իբրև գուռ, և թէ անդ չգտանէին հետք ինչ ոչ բարոսրեան և ոչ կենաց » Համեմատութեամբ աւելի անարատ պահուած են, և յոյժ նշանաւոր: Բ. Այս վերջին տեղիս՝ եթէ ամբողջապէս նախընթացաբար մէջ բերուածին Հետ ի միասին առնունք, կը ներկայացնեն մեզ Հակադրական Երկրորդական մի՝ նիւթական և հոգեկան էութեանց, Հակադրութիւն լուսոյ և խաւարի, կռիւ մի բարւոյ և չարի՝ նոյն իսկ գերագոյն օթեանին մէջ, նոյն իսկ Սատուածութեան անմատոյց աթոռոյն շուրջը:

Կարելի է արդեօք զուտ երբայական Համարել զայս, կամ առանց արիական ազդեցութեան: Կարծեմ թէ ոչ: Գէթ Եզրի Հարցաքննութեան Հնագոյն Հատուածներն, զորս մէջ բերինք, Համաձայն են զբաղաչական վարդապետութեան, և անտարակոյս Զենդ-աշեստայ գրքերէն (տես Վիկնիդայ և Գարաշ) յառաջ եկած է, վասն զի այս գրոց և վարդապետութեան մէջ կը գտնենք վերը յիշուած բոլոր կէտերը՝ զարմանալի մանրամասնութեամբք: Այո՛, այս տեղ միայն կը տեսնենք որ յաւիտենական և ամենարարի Արամազդի (Ահուրա-մազդայ) անմատոյց և լուսաւոր գահուն առընթեր՝ կեցեր է ամենաչարն Ահրիման կամ Արհմն, իբրև Հակաթու. երկուքն ևս կ'արարչագործեն՝ մին բարի, և միւսն՝ չար էակներ. անընդհատ պատերազմներ և կռիւներ է որ կը մղուին, ի սկզբանէ մինչև յաւիտեան երկաքանչիւրին և անոնց արբանեկող բարի և չար հոգւոց մէջ, և այդ պատերազմներն կը լինին ո՛չ միայն երկրիս միգապատ սահմանաց վերայ, այլ նոյն իսկ մշտայոյզ մթնոլորտին մէջ, երկնից աստեղազարդ կամարներում և Ահուրամազդայի անհաս օթեւանին շուրջը, ուր կը հսկեն անքուն ակամբ իրենց ոսկի աթոռոց վերայ բազմած նորա վեց խորհրդականներն՝ Ամաշասպանք, իբրև անդրանիկ ծնունդք: Արամազդայ ստեղծած այս բարի Ամաշասպանքներու, Ազատաց և Փէրվէններու իբրև Հակապատկերներ են Արհմնէն ստեղծած չար ոգիներն, որոնք Դարվանդք և Գեք կ'անուանին, և

յառաջ կը բերեն կայծակ, կրակ, որոտմունք, կարկուտ, երկրա-
շարժներ, մրրիկներ, գեռուններ և բնութեան բոլոր հարուածները:
Որմզդի բարի արարածներն եղծանելու և թագաւորութեան սահ-
մանները վրդովելու համար: Այդ սահմաններուն վերայ պահապան
կարգուած Որմզդի զօրաց գլխաւորն է՝ յաղթողն և գեղանին Մրա-
ռուհա՝ կամ Մրանօ-սրառահ. որ արեգակը մտնելէն վերջ կը սկսի
իւր սուսերամերկ կռիւր՝ խաւարի իշխանութեան դէմ, և դեւեր ան-
գամ կը սպաննէ: Մարդկային հոգիք՝ մեռնելուն երկրորդ օրը՝ ա-
ռաջնորդուած Ազատներէն, կը գտնեն իրենք գիրենք Ջինեվադ-պե-
րեդառ, այսինքն է՝ ժողովող կամրջի կամ նրբանցքի դիմաց, որու
ներքեւ բացուած են բերանարաց Արհմի թագաւորութեան կամ
Տոզախի (դժոխոց) խաւարամած անդունդներն և խողոններն, ուր
կը մղուին երկուստեք կռիւներ՝ մարդկային հոգւոց տիրապետութեան
վերայ, որոնք յերկրէս՝ յերկնից օթեանները կը թեւակոխեն: Մե-
ղաւորներն հոն կը գահավիժին՝ յաւիտեանս տանջուելու համար.
Իսկ արդարներն՝ պաշտպանուած քաջէն Սրաւոսհայ և Միհրայ՝ կ'անց-
նին այդ անդունդներէն և կռիւներէն, մինչև որ կը հասնին Որմզդի
արքայութեան զարմանալի և լուսաւոր օթեանը, զոր կը պահպա-
նեն անմահ Ամշասպանդք:

Եզրի Հարցաքննութեան մէջ պահուած բառս իսկ՝ մանահրոռանք,
որ եթէ հնդկարիական անուան մի փոխադրութիւն է սոսկապէս,
մեր ըսածը լիովին կը հաստատէ: Չանդկերէն mananh կամ պարս-
կերէն mainyu, manō հոգի կը նշանակէ, իսկ sravha գեղեցիկ,
փառատր, որոնք կը յիշեցնեն մեզ Եաշնայի կամ Վինդիդատ —
Սադէ գրոց մէջ ներբողուած Ազատն կամ քաջն Mana-Sraosh
կամ Seroshը, և կամ ընդհանուր առմամբ լուսաւոր և բարի ոգի-
ները, որոնք չուրջ կան զՈրմզդի: Ափսո՛ս որ միւս բառերն հայա-
ցուած են, որով կը դժուարիմք համաձայնեցնել զանդկերէն՝ այս
ինչ կամ այն անուան: Յամենայն դէպս, չենք սխալիր, եթէ ըսենք,
որ Եզրի Հարցաքննութիւնն՝ Որմզդի և Զրադաշտի մէջ եղած խօ-
սակցութեան վերայ յօրինուած ըլլայ, զոր դժբախտաբար չունէի ի
ձեռին բաղդատելու համար. և սակայն բաղդատողք՝ ըսածս պիտի
հաստատեն: Այո՛, բարի սկզբան վերջնական յաղթութիւնն, և մե-
ղաւոր հոգւոց ի վերջ ժամանակաց դժոխքէն ազատուիլն իսկ, որ ի
զարմանս մեզ շեշտուած են Հարցաքննութեան մէջ՝ համաձայն են

1. Sra Serosh-yasht (Yaçna LVII. 2), — Rawlinson, vol. III. p. 112.

գրադաշտական վարդապետութեան, ըստ որում Արհմն՝ իբրև սկիզբն չարի՝ թէպէտ և անսկիզբն է, բայց ունենալու է իւր վերջը, ոչընչանալով և կամ ապաշխարելով պիտի սրբուի իւր շարութենէն, և Որմբզդայ հետ իմիասին յաշտ պիտի առնէ Զրուանայ, և յետ այնորիկ նոր կեանք մի պիտի սկսուի լի բարութեամբ միայն, կամ առանց շարութեան:

Եզրի Հարցաքննութեան հնագոյն հատուածներն՝ դժբաղդարար յիշեալ տեղով կ'աւարտին, տեղի տալով մեզ անյայտ խմբագրի քրիստոնէական ձկտմանց, որ իւր խօսքը շուտով պահոց և ապաշխարութեան վերայ կը դարձնէ: Սակայն մենք կարեմք զուշակել անկէ, թէ այդ նորամուտ վեց երես յորդորակէն յառաջ՝ լինելու էր անշուշտ անոր առջև եղած հին բնագրին, կամ նոյն իսկ մի և նոյն գրութեան կատարեալ օրինակի մի մէջ, նշանաւոր մաս մ'այլ, ուր կը խօսուէր անշուշտ կայանաց, դժոխքի, արդարոց և մեղաւորաց վերջին հատուցման և ուրիշ խնդրոց մասին, որոնք առաջին դարերու ուղղափառ կամ հերետիկոս քրիստոնէից համար մեծ նշանակութիւն ունէին և վիճմանց նիւթ դարձած: Եւ այս բանիս ես ապացոյց կը համարիմ կեղծ Եզրի բերանը դրուած այս հարցը. « Արդ, թե զերծանիմք, կամ ո՞վ հանէ զմեզ ի ձեռաց նորա », այսինքն է՝ սատանայի կամ դժոխոց, որ Եզրի անկանոն գրքին մէջ ստէպ ստէպ յեղյեղուած են՝ տարբեր վարդապետութեամբ, իսկ մեր խմբագրութեան քրիստոնեայ կամ լաւ ևս հայագգի հեղինակն դուրս թողլով զայն՝ անոր տեղ փոխանակած է աղօթք, պատարագ, բարեխօսութիւն և ուրիշ գործեր ողորմութեան:

Գր. Լուսաւորչին ընծայուած Հարցաքննութիւնն, որ ժամանակաւ կրտսեր ըլլալու երևոյթն ունի, պահած է մեզ այդ մասը, կամ աւելի ճիշդն ըսելով՝ նման բաներ այդ կարծեցեալ մասին, բաւական ընդարձակօրէն, և մեր ենթադրութիւնը կը հաւաստէ: Ինչպէս Գրիգորի Հարցաքննութիւնքն՝ ուղղակի կամ անուղղակի կը լրացնեն Եզրի Հարցաքննութեան պակասը, այսպէս այլ վերջինս՝ առաջնոյն հետ ունեցած սերտ աղերսներով կը լուծէ նորա գաղտինքը, որ թէև անհարազատ, բայց մեր նուիրական չօր և առաքելոյ անուան ներքև ունեցած է ժամանակաւ իւր բարերար և միանգամայն վատ ազդեցութիւնը հայ գրողներու¹ և ժողովրդեան վերայ: Տեսլեանս

1. Ինչպիսիք են Խաչատուր Վ. Կեչառեցի՝ բանաստեղծ ժՊ դարու, Գրիգոր Աղթամարցի՝ երգասաց ի ժՁ դարու, Բուդաղօղու՝ հայ բանաստեղծն, Ասլիկի վէպն՝ ի Մանանայն Սրուանձառանի, Ղունկիանոս Կարնեցի՝ տաղերգակ, և Քաբոզդեանք:

անծանօթ հեղինակն՝ ունեցած է անշուշտ հիմն ինչ՝ Գրիգորին մա-
կագրելու գայն, թէպէտև այստեղ եղած վարդապետութիւնն՝ Լու-
սաւորչի մեզ ծանօթ վարդապետութեան հակապատկերն է :

Եւ սակայն կը հարցուի, թէ ո՞րն է այդ կարծեցեալ հիմն : Մեր
կարծիքով՝ է այն Յաճախապատումի՝ ժժ ճառին մէջ (յէջ 152) մէկ
տեղին, ուր յետ նկարագրելոյ արդարոց աստիճանաւոր վայելքը,
սպա կ'ըսուի մեղաւոր հոգւոց համար. « Եւ այս ամենայն սպառ-
նալիք յանցաւորաց յոյժ ի տրտմութեան ունին զոգիս մեղաւորացն՝
ի կայանս, որ ըստ իարաքանչիար մեղացն՝ բաժանեալ և որոշեալ է
(ե՛ն) տիրական տեղիք : Եւ որպէս երևամարք տեսանեն իմանալեօքն՝
զհատուցումն արդար դատաստանօք, զանչէջ հուրն և զխաւարն ար-
տաքին և զլալ աչաց և զկրճել ատամանցն, այնոքիւք ահիւ տխրեալ
տրտմեալ կան ոգիք մեղաւորացն մինչև ի հասարակաց յարութիւնն,
որ Քրիստոսիւն է » , այլովքն հանդերձ : Իսկ անոր բովանդակ շէն-
քին իրր ասաղձ ծառայած են Եզրի Հարցաքննութեան մի կատա-
րելագոյն օրինակն, ինչպէս նաև վկայաբանութիւն մի, որոյ մասին
յետոյ պիտի խօսինք : Իմ գործս չի ներեր Գր. Հարցաքննութիւնը՝
իւր ամբողջութեամբն արտագրել այս տեղ, այլ կ'ուզեմ համեմա-
տել այն հատուածները միայն, որոնք Եզրի Հարցաքննութեան հետ
մերձաւոր նմանութիւններ ունին :

1. Տպագրեալ ի Վենետիկ 1838 : Սակայն այս ճանաչուաւ հարազատութեան
մասին մեծամեծ դժուարութիւններ կը գինուին. Ա. Ֆետտեր (bei Nirschl. Pa-
trotologie und Patristik, III. Band. p. 215-227) Ս. Միսրոյճայ կու ապ զմ-
նոնք, մէկ կողմէն կորեան վկայութեան վերայ հասաատուած, որ Միսրոյճայ կեն-
սադրութեան մէջ կ'ըսէ, թէ նա « ճառս յանախապատումս » գրած ունէր, իսկ
միւս կողմէն այլ գտնելով այդ ճանաչուած մէջ գրադաշտական կրօնից յանախակի
հերքումներ, որ Ե գարուն աւելի ի գէպ դան :

Էջմիածնի « Աբարատ ամագրի » (1898 թիւ Զ. հր. 244-249) մէջ Պ. Ս.
ստորագրութեամբ քննադատ մ'արդէն ապացուցած է, թէ ի՞նչ ճառը Ս. Բարսիլ
Հարցաքննութեանը հետեղութեամբ և Ե գարուն յօրինուած է. սակայն ի ճակ
վերլուարանէն դատելով, ուր Արշակունիք մեծ կամարուած են քան զամհնայն, և այս
ոչ միայն ի Հայս այլ և « ի Պարսս », դժուար է ընդունել՝ որ այդ ճառն Ե գա-
րուն գրուած լինի, զի այդ ժամանակ Սասանեանք էին գերիշխանք :

ՆՈՅՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱԳՐՈՑ

« Հարցաքննութիւն Եզրի մարգարէին ընդ հրեշտակն Տեառն՝ վասն հոգոց մարդկան » :

Ա. « Եհարց մարգարէն ցհրեշտակն և ասէ, թէ Զինչ պատրաստեալ է Աստուծո՛ւ արդարոց և մեղաւորաց ի ժամանակին, յորում հասանէ օր վախճանին. զինչ լինիցին, կամ ո՛ւր երթան, ի պատիւ թէ ի տանջանս :

« Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցմարգարէն. Պատրաստեալ է արդարոցն ուրախութիւն մեծ և լոյս յաւիտենից, և մեղաւորացն պատրաստեալ է խաւարն արտաքին և հուրն յաւիտենից :

Բ. « Ասէ մարգարէն ցհրեշտակն. Տէր, ո՞վ է որ ոչ իցէ մեղացեալ Աստուծոյ ի կենդանեաց. և եթէ այդ այդպէս իցէ, սպա երանի է անասնոց և թռչնոց, որ ոչ մնան յարութեան, և ոչ ակն ունին վախճանին :

« Եթէ զարդարան, որ ամենայն տանջանաց համբերեցին, զմարգարէսն և զառաքեալսն և զմարտիրոսսն պսակեսցես, յորժամ զգալախազն առնոյին և ծածէին ու. ումբ զերեսս նոցա, մինչև երևէին երկամունք նոցա. նոքա վասն քո շարչարեցան, մեզ մեղաւորացս ողորմեա՛, որ զբաւեալ

« Հարցաքննութիւն սրբոյն Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչին, || զոր եհարց ցհրեշտակն Տեառն մինչ էր յայրին Մանեայ || (վասն հոգոց մարդկան) :

« Ասէ սուրբն Գրիգոր ցհրեշտակն. որովհետև առաքեցար առ իս, Ծրանո՛ւ ինձ վասն հոգոց մարդկան՝

թե զի՞նչ լինին :

« Ասէ հրեշտակն. Զինչ ասեմ, զի կարի շար է մահ մեղաւորին, յորժամ ելանէ հոգին մեղաւորին՝ ապա իմանայ գտեղին տանջանացն և գեհեհեհին և զխաւարն աղջաւնդիւն, որ կայ և պահի նմա » :

« Յայնժամ տրտմեցաւ սուրբն Գրիգորիոս, և ասէ .

Եթէ այդ այդպէս է, սպա երանի է չեղելոցն, որ ոչ են ելեալ յորովայնէ, և չռանին յարտաքիւն և ակն գեհեհեհին » :

« Զի...

առաքելոցն
պսակ է խոստացեալ,
որք քարկոծեցան, աղոցեցան,

և մեք որ այնպէս ոչ կարեւր չարչարիչ, զի՞նչ լինիցի :

« Եմք և ըմբռնեալ ի ձեռն սատա-
նայի :

« Պատասխանի ետ հրեշտակն
և ասէ .

Եթէ ոք քան զքեզ ի վեր է՝ մի՛
յաւելուս խօսել :

« Այլ յորժամ հասանէ օր վախ-
ճանին, բարի հոգւոյն՝ բարի հրեշ-
տակ գայ, և չարին՝ չար. որպէս
առաքեալ ոմն ի Թագաւորացն՝
առ չարագործսն և առ բարե-
գործսն, բարւոյն՝ բարի հատու-
ցանէ և չարին՝ չար. նոյնպէս և
բարի հոգւոյն՝ բարի հրեշտակ
գայ, և չարին՝ չար : Ոչ եթէ հրեշ-
տակն է չար, այլ իւրաքանչիւր
գործքն :

Գ. « Երբժամ... առնու զհո-
գին՝ ի տեղի տանջանսց կարգէ
զնա, եթէ ի տեղի պատուոյ՝ մինչև
ի գալուստն :

« Պատասխանի ետ հրեշտակն
և ասէ . Տանի ընդ արևելս, ընդ ե-

ղեամն, ընդ ձիւն, ընդ խաւար, ընդ
կարկուտ, ընդ սառն, ընդ մրրիկ,
ընդ գունգս սատանայի, ընդ վտա-
կըս, ընդ հողմն սաստիկ անձրևաց,
ընդ ահեղ և զարմանալի ճանա-
պարհսն, ընդ անձուկ կապանս
և ընդ բարձրաճամ լեռոշնս ան-
ցուցանեն. զի ահեղ և զարմա-
նալի է աստուածութիւնն և ո՞վ
իշխեսցէ հայել ընդդէմ ան-

« Ասէ հրեշտակն .

Հարցեր և ասացի քեզ զպատուա-
խանիս :

« Երբժամ արդարն վախճանի,
ոչ մի գայ կամ երկուս, այլ գունդք
հրեշտակաց, բազում և մեծ ու-
րախութեամբ տանին...

քայց առ մեղաւորն մի գայ կամ
երկուս. և այն ոչ կամաւ, այլ
ի հարկէ հրամանին Աստուծոյ :

« Երբժամ առնոյք զհոգին մար-
դոյն՝ յապաղէ՞ք աստ, եթէ փոշ-
քով երբայք » :

« Ասէ հրեշտակն . Մինչև ցայն
վայր զհոգին ի վերայ մարմնոյն
պահեմք՝ մինչև ասեն քահանայքն .
Հաւատ ունելով », և այլն . և
յորժամ երիցս անգամ ասեն,
առնումք եւ վերանամք յերկինս...
բազմի արդարն առաջի Աստու-
ծոյ, և լսէ զահաւոր բարբառն,
որ ասէ . Ե՛կ ծառայ...

քայց յԱստուածոթիւնն ոչ կարե
նայել, զի անեղ և զարևանայի է .

« Եղին... քանզի այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռով աստուածութեանն. Կայանք են, մանասրուանք են, խոռոչք են, հրեղէնք են, կամարազգեստք են, լպպտերք են: Անդ որոտմունք են, անդ շարժմունք են, անդ կոիւք են, անդ պատերազմունք են, անդ տապախառինք են, շրջախոռոչք են, զեռունք են, հրեղէնազգեստք են, բոցեռացք են, հրեղէնագունդք են.

« Յայն ճանապարհն եւթն բանակք դիւաց կան և եւթն աստիճանք Աստուածութեանն...:

« Առաջին օթեանքն՝ չար են և զարմանալի. երկուքն՝ ահեղ և անպատում.

երեքն՝ դժոխք են և սառամանիք.

չորքն՝ կոիւք են և պատերազմունք.

ի հինգն՝ ապա քննումն. եթէ արդար

է՝ լուսաւորի. և եթէ մեղաւոր

է՝ մթագնի. ի վեցն ապա պայծառանայ հոգի արդարոյն՝ իբրև զարեզակն.

« Եւթն տարեալ Հասուցանեմ զնա յերկրպագութիւն մեծի ա-

« ընդդէմ կան,

Հաւարէմք, բոցեղէնք, և առիւծադէմք, ցլագլուխք, և մարդապատկերք...:

« Յառաջին աստիճանն գոռեղք դիւաց են, եթէ մեղաւոր լինի՝ յառաջ գան և Հագիւ կարեն Հանել ի նոցանէ. և յերկրորդումն՝ տարտարոսք ահագինք են...:

և յերրորդ աստիճանն՝ առնէ և ցուրտ ահագին, և ոչ յաղթեն նմա.

և ի չորրորդ աստիճանն՝ նեղ դուռն է և անձուկ մուտ.

ի հինգերորդ աստիճանն՝ լոյս է կամարաձև,

և պայծառանայ արդարն՝ առաւել պայծառ քան զարեզակն...:

(ի վեցերորդն) դասք Հրեշտակաց են և Հրեշտակապետաց, աթոռոց, իշխանութեանց, պետութեանց, զուարթնոց, և ուրախանան և ցնծան.

« Եւթնիորդ աստիճանն ընդդէմ գան հոգիք սրբոցն սաղմո-

« Թոռոյ աստուածութեան... »

ընդդէմ դրախտին՝ յանդիման փառացն Աստուծոյ, ուր գերազանցիկ լոյսն է :

Դ. « Ընդէր ոչ դիպեցուցանես զնա Աստուածութեան քան աթոռոյն միայն Հասուցանես » :

« Քանզի այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռոյ Աստուածութեան. Սերորէքն անմարմին, Քերորէքն վեցթևեան. երկու թևօքն զդէման ծածկեն, երկու թևօքն՝ զոտան, և երկու թևօքն թռուցեալ՝

աղաղակեն. Սուրբ, սուրբ (սուրբ) Տէր զօրութեանց, լի են երկինք փառօք քո :...

Ե. « Եհարց մարգարէն ցհրեշտակն և ասէ.

Տէր, զի՞նչ լինիցիմք, զի մեղաւոր եմք ամենեքեան և ըմբոնեալ ի ձեռս աստանայի : Արդ, ի՞նչ գերծանիմք, կամ ո՞վ Հանէ զմեզ ի ձեռաց նորա :

« Պատասխանի ետ հրեշտակն և ասէ.

« Եթէ ոք մնայ յեա մեռելոյն Հայր կամ մայր, կամ եղբայր... և

« սիւք և աւրհնութեամբ, և ողջունեն զհոգի արդարոյն առնուն և դառնան. ընդ այս եւթն դասս անցուցանեմք, և ապա յութերորդ աստիճանն երկիր պագակե սուրբ և ահառոր արքայն Սատուածոյ. ապա տարեալ Հանգուցանեն զնա ի չորրորդ պարունակին՝ հանդեպ դրախտին... և բարձր և պայծաս է քան զարեգակն :

« Աստուծոյ ընդէր ոչ պագանեն, քան արքայն :

« Զի ահեղ և զարմանալի է. և շորջ կան

զարքոսով Աստուածորեան, ընդ ալմէ և ընդ ահեկէ, և սուրբ հրեշտակապետն Միքայէլ և Գարրիէլ և վարաառոր սերովրեան... և բազմաչեայ քեանքողնով ամենայն դասք Հոգեղինաց՝

գերզս նռազեն. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո :...

« Ասէ սուրբն Գրիգոր (ցհրեշտակն).

Ասա՛ ինձ զձըմարիտն, յանռն մեռելոյն զի՞նչ է օգոռտ, պահէքն, եթէ աղաւթքն, եթէ պատարագըն, եթէ ողորմութիւն առ աղքատս նեղեալս » :

« Պատասխանի ետ հրեշտակն և ասէ.

« Բայց երբ ունիցի ոք յերկրի, որ պահօք կամ աղօթիք կամ ողոր-

« աղօթս մատուցանէ՛ պահօք , տրօք քառասնօք , մեծ հանգիստ և ողորմութիւն լինի ի ձեռն զենման Քրիստոսի... որչափ ի ձեռն սրբաամատոյց քահանային հոգին ազատի... »

« Զի աղօթքն ձեր այնպէս , որպէս ելանէ մշակն երթայ սերմանել , և ելանէ բոյս զուարթ և վայելուչ , և կամի առնել արդիւնս բազումս , և ելանէ փուշ և որոմն և հեղձուցանեն , և ոչ տայ ժողովել զարդիւնս բազումս . նոյնպէս և դուք յորժամ երթալք ի դուռն եկեղեցւոյն և կամիք աղօթս մատուցանել առաջի աստուածութեանն , ելանեն հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան , և հեղձուցանեն զձեզ » :

« մոռեալք ջանայ հանել զմեղաւորին հոգին ի տակն և փոխել ի տեղի լուսոյ . և քահանայն երբ ձշմարիտ մտօղ մատուցանէ պատարագն՝ զահեղ և զանալատ դատաւորն հաշտեցուցանէ :

« Եւ աղօթքն այնպէս է , որպէս հերկէ մշակն զերկիրն և ոչ սերմանէ , և յորժամ սերմանէ՛ ապա ժողովէ զցորեանն ի շտեմարանս իւր , նոյնպէս յորժամ ձեռս ի յաղքատս ձգեցի ոք և ողորմութիւն սերմանեցի » ... :

Այս համեմատութենէս յայտնապէս կը տեսնուին , բաց ի գաղափարաց նոյնութենէն , որ կատարեալ է , նոյն իսկ այնպիսի բառական նմանութիւններ , որոնք դիպուածով եղած չեն , այլ մէկուն՝ միւսին հետևողութեամբ միայն : Այսպիսի պարագայի մէջ կը հարցուի , հետևարար , թէ երկու գրուածներէս ո՞րն իբրև աղբիւր ծառայած է միւսին : Այս հարցիս պատասխանն անով աւելի կը դժուարանայ , վասն զի երկուքն ևս կը գտնուին մի և նոյն թուականին , այն է՝ յամի Տեառն 1208 գրուած Մաշտոցին մէջ , և թէ ասկէ աւելի հնագոյն ներկայացուցիչ չունինք զէթ մեր մատենադարանին կամ լաւ ևս մեզ ծանօթ գրչագրաց մէջ : Մէկ պարագայ մի կայ , զոր կարելի է առնուլ աւելի ի նպաստ հնութեան Գրիգորի՝ քան թէ Եզրի Հարցաքննութեան հնութեանը . այսինքն է , առաջինը՝ կը գտնուի նոյն իսկ բառական հնութիւն ունեցող Ճատրնտիրներու և Ոսկեփռ-

րիկներու մէջ. իսկ երկրորդն՝ ոչ նոյնպէս: Իսկ ներքին հանգամանքներուն եթէ լաւ ուշ դնենք՝ ցոյց կու տան մեզ, թէ առանց տարակուսի Գրիգորի Հարցաքննութեան հեղինակն եղած է բանաբաղ Սգրի Հարցաքննութեան. վասն զի նոյն իսկ վերջնոյ մէջ՝ առանձինն վերը նշանակուած հնագոյն հատուածներն՝ առաջնոյն մէջ բոլորովին քրիստոնէական կերպարանք առած են: Երկրորդ հարցման պատասխանւոյն վերջին մասին մէջ՝ Գրիգորի Հարցաքննութեան հեղինակն թէև դիտմամբ կամ դիպուածով դուրս թողած է Սգրի Հարցաքննութեան « մարգարէից և մարտիրոսաց » և այլ խօսքերը, սակայն նորա « սըղոցեցան » բացատրութիւնն կը մատնէ իւր աղբիւրը: Երրորդ համեմատութեան մէջ՝ երկու կոչումներ կ'ընէ Գր. Հարցաքննութիւնն, բայց երկուքն ևս իւր աղբեր նախաքրիստոնէական հատուածք՝ քրիստոնէացնելու նպատակաւ, որոնք իրենև իւր ժամանակակիցներուն գաղափարին դէմ՝ էին. և այս կոչմանն առաջինն է Թաղման կանոնի « Հաւատ ունելով հոգի խաղաղութեան » շարականն, որ թէև՝ ամենաչին է¹, սակայն խիստ անյարմար իւր դիմաց դրուած Սգրի հատուածին, որուն քիչ վերջ ինքն ևս ստիպուած է համակերպիլ՝ եօթն աստիճանաց նկարագրին մէջ: Իսկ երկրորդին մէջ՝ չորս անտարանաց նշանակիր պատկերներն², զորս ուզած է փոխանակել Սգրի Հարցաքննութեան « Վայանք են, մանասրուանք են » և այլն նկարագրին, գոգցես իմն խիթայով անկէ: Եօթն կայնից կամ աստիճանաց վերայ՝ ութերորդ մ'ևս աւելցուցեր է³ գերզգօնութեամբ՝

1. Շարականիս նութեան յայտնի նշանն է, որ կը գտնուի մեր Թ-Թ զարուս գրուած Մաշտոցին մէջ, որ է ըստ հին կարգաւորութեան Միտարին, յառաջ քան զՊետրոս Գետազարծ կաթողիկոսն, որուն ընծայուած են ընդհանրապէս նշկեցելոց Շարականներն, ըստ ութ ձայնից: Յամենայն զէպս, այս Շարականի կոչումէն չհետեւի, որ Գրիգորի Հարցաքննութիւնն ևս հին ըլլայ:

2. Այսպիսի են « Հաւազէմք, առեւծազէմք, ցլազուխք և մարգապատկերք » բառերն: Այս բանս զեռ աւելի բացայայտ կը տեսնուի 583 իջում, ուր Գրիգորի այս նարին, թէ « Որպէս է աթոռ Աստուածութեան », կը պատասխանուի, թէ « Մէ է՝ և չորս զէմս ունի, ելքն, Ժորոյ, աւիւնայ և աբիւայ »:

3. Այս յաւելուածս կարող է մի ուրիշ աղբեր աշգեցութեամբ եղած լինել կամ ըստ քմաց, այս երկրորդական նշանակութիւն ունի. իսկ մեզ հետաքրքրողն այն է, որ Աստուծոյ աթոռոյն երկրպագելէն վերջ, զարձեալ չորրորդ պարունակին մէջ կը վերադառնայ հոգին, որ այս անգամ հանգէպ դրախտին և « բարբ և պայծառ » նկարագրուած է՝ Սգրի Հարցաքննութեան հետեւորութեամբ, մինչդեռ յառաջոյն իբրև « գուռն նեղ և անձուկ մուս » նկարագրուած էր: Իսկ յաւելուածիս յայտնի նշանը կը գտնենք 567 իջում, ուր առաջին երեք աստիճանները Եզ. Հարց. հետև.

Գրիգորի Հարցաքննութեան հեղինակն, որով յառաջ եկած է փոքրիկ անհամաձայնութիւն մի. այսինքն է՝ Սգրի Հարցաքննութեան վեցերորդ աստիճանին մէջ արդարոց պայծառափայլութեան մասին աւանդուածն, Գր. Հարցաքննութեան ութերորդ աստիճանին մէջ անցած է, նման բառերով. իսկ եօթներորդ աստիճանին մէջ աւանդուածն, այն է՝ Աստուածութեան աթոռոյն երկրպագութիւնն՝ ութերորդ աստիճանին մէջ փոխադրուած է :

Ստեփ. Սիւնեցիի իւր առ Պատրիարքն Յունաց Գերմանոս գրած պատասխանւոյն մէջ, խօսելով նախազօր անկման մասին՝ անուղղակի կերպով մեր խնդրոյն վերաբերեալ կէտ մի կը շօշափէ, այսպէս : « Իբրև շեղեցաւ յաստուածային պատուիրանապահութենէն, ըստ ախորժակաց իւրոց, ըստ եզրնից պարունակոչքեամբ դասուց հոգեյիւնաց՝ վերագոյն բացորոշոչքեամբ եզրնից աստիճանաց ի վայր կործանեցաւ » : Արդ, դիտելով որ Ստ. Սիւնեցւոյն նօտրագրուած խօսքերն Սգրի Հարցաքննութեանն աւելի կը համաձայնին՝ թէ՛ ըստ եօթնական թուոյն և թէ՛ ըստ յարացուցին. ուստի կարելի է ըսել, թէ նոյն իսկ Ը դարում ծանօթ ըլլալու էր անոր այս գրուածս :

Գր. Հարցաքննութեան այն մասն, ուր մկրտուած հոգիներուն տանջանաց մատնուած վիճակն կը նկարագրուի՝ նմանութեամբ հատոյ մանանխոյ, և որը Գրիգորի միջնորդութեամբ հանգիստ կը գըտնեն ի տանջանաց՝ մինչև վերջին դատաստանին օրը, ուրիշ բան չեն՝ բայց եթէ փոխառութիւնք Աստուածածնի Տեսիլէն (յէջ 404-410), ուր հրեղէն ծովուն մէջ տանջուող քրիստոնեայ բազմութեան վերայ գթալով Ս. Կոյսն՝ կոչել կու տայ բոլոր հրեշտակաց գունդերն և նահապետաց հոգիներն ի միասին, բարեխօսելու շօր Աստուծոյ առջև, որ զանոնք ազատէ. և ի վերջ գրութեան՝ Քրիստոս ինքնին կը ծանուցանէ այն հոգիներուն, թէ « Ահա տայ ցձեզ տանջելոցդ՝ հանգիստ, զտիւ և զգիշեր, զաչք սոչրք կիշրակէիս, ի փառս և ի պատիւ ամենասուրբ Երրորդութեան » : Եւ այսպիսի փոխառութեան յայտնի նշան է հետևեալ բացատրութիւնն, ուր նոյնպէս շեշտուած են և՛ հատն մանանխոյ և՛ մկրտեալքն ի Քրիստոս և՛ գործքն անհաստատութեան, այսպէս. « Եւ եկեալ ամենասրբուհին ետես զմեղաւորսն՝ որպէս հատ մանանխոյ, եհարց զնախազաւրավարն. Ո՞վ են սղբա, և

գրութեամբ նկարագրած ծամանակ՝ խօսքն յանկարծ կ'ընդհատուի՝ Գրիգորի բերանը գրուած ուրիշ հարցումներով. իսկ 577 էլում նորէն կը սկսուի շարունակել և աւելողնալ աստիճանաց նկարագիրն :

զինչ են մեզք նոցա : Եւ ասէ ցնա Միքայէլ . Սոքա են մկրտեալքն
 և ի Քրիստոս միայն նուիրեալքն , և զգործան սատանայի միայն աւ-
 րարին և կորուսին զժամանակ ապաշխարութեան » : Անտեղութիւնս
 մի գործած է Աստուածածնի տեսեան Հեղինակն , զի անբաւական հա-
 մարելով Ս . Կուսին բարեխօսութիւնը , Հրեշտակներ և նահապետ-
 ները կը կոչէ առ այն յօգնականութիւն . Իսկ Գր . Հարցաքննութեան
 Հեղինակն կրկնապատկած է այդ անտեղութիւնը , այնու զի Տիրա-
 մօր և Հրեշտակաց և բոլոր նահապետաց շիրքած գործը՝ միայն Գրի-
 գորի բարեխօսութեամբ կատարուած կը համարի , և այն՝ անապաշ-
 խար մեղաւորաց համար : Արդ , այս տեղ եթէ խօսքը քաւարանի
 Հոգւոց մասին չէ , անհանդուրժելի է երկու Հեղինակացս վարդա-
 պետածն և հակառակ ուղղափառ դաւանութեան ընդհանուր եկե-
 ղեցւոյ : Որոգինեան և զրադաշտական սկզբան ազդեցութիւնն կը
 տեսնուի նաև հոս անուղղակի , ինչպէս ըսինք Սգրի Հարցաքննու-
 թեան համար :

Նիկ . Մառ¹ խօսելով Գրիգորի Հարցաքննութեան մասին՝ երկու
 գրուածներ կը յիշէ անոր իբրև իսկական աղբիւրներ . այսինքն են՝
 Աստուածածնի և սրբոյն Մակարայ Տեսիլներն , Սգրի Հարցաքննու-
 թեան վերայ բնաւ խօսք չըներ : Մառէն յիշուած Մակարայ Տե-
 սիլն՝ մեզ անծանօթ է . Հետևաբար , չենք կարող ըսել , թէ Գր . Հար-
 ցաքննութեան Հեղինակն թնչ չափով կարէր անկէ օգտուած լինել :
 Իսկ մեր համեմատած հատուածներն՝ ցոյց կու տան արդարև , թէ
 մեղաւոր Հոգիներուն շնորհուած հանգիստն ևս՝ համաձայն է Սգրի
 Հարցաքննութեան Ս պատասխանւոյն , ի բաց առեալ զաշր առաքր
 կիտրակէին բացատրութիւնն , որ անհիմն յաւելուած մ'է Գր . Հարց .
 Հեղինակէն : Դիտելու ենք և զայս , որ Գրիգորի Հայոց Լուսաւորչի
 անուամբ հարցումներ շինելն՝ բնական բան էր հայու մի համար ,
 զի Ագաթանգեղոսէն զիտէր նա , թէ Հայոց Լուսաւորիչն՝ տեսիլներ
 ունեցած էր Խորվիրապին և Մանեայ արք կոչուած ճգնարանին մէջ :
 Բայց կարծել , որ Գրիգորի ժԲ դարում յօրինուած այդ Հարցաքն-
 նութեան վերայ ձևացած լինի յետոյ , — հայազգւոյ մի ձեռքով , —
 Սգրի Հարցաքննութիւնն , դա՛ մի անբնական բան կը լինէր Հեղինա-
 կին համար , և մեզ՝ զլիսովին անհասկանալի գործողութիւն . այնու
 մանաւանդ , որ բաց ի վերը նշանակած հանգամանքներէն՝ լեզուա-

1 . Տես Ա՛տուանայն օգլեւորութեան գրեղ է Հայո , ազ . ի Վիեննա , Հանգ . Ամս .
 1892 . Թիւ 10 , էրես 303 և շար . :

կան կազմութեամբ իսկ առաջինն՝ ստոր է վերջինէս: Արդ, եթէ ստոյգ է ն. Մառի յիշեալ տեղում տուած այն միւս տեղեկութիւնն, այսինքն թէ՛ այդ յիշատակարանն, — այն է Գր. Հարցաքննութեան, — կը գտնուի մասամբ նաև Ասիական Մուզէոնի թիւ 3 քարոզագրքերու մի ժողովածոյի մէջ (Ձեռ. 1620 Թ), ինչպէս նաև վրացերէն թարգմանութեամբ¹, այն ժամանակ կարելի է ըսել, թէ Գր. ընծայուած Հարցաքննութեան սկզբնագիրն՝ ո՛չ հայերէն լեզուով գրուած էր և ոչ այլ Գրիգորի անունը կը կրէր իւր վերայ, այլ ասորի կամ պարսիկ լեզուով, և Եզրի՛ կամ բոլորովին մի այլ մակագրութեամբ: Այդ սկզբնագիրն՝ շատ կը տարբերէր մեր ձեռքը հասած Եզրի և Գրիգորի Հարցաքննութիւններէն, և համեմատութեամբ աւելի ազատ էր քրիստոնէական ներմուծութիւններէն:

Հաւանօրէն, հայագգի թարգմանիչներու կամ լաւ ևս խմբագրողաց ձեռքով Եզրի և Գրիգորի անուանց հետ՝ նաև իրարմէ աւելի կամ նուազ եկամուտ հատուածներ ևս յաւելցան այդ կրկին խմբագրութեանց մէջ, ըստ պատշաճի ժամանակին և անձանց, որոց անուան որ վերագրեցին զայն: Երկաքանչիւրն իսկ՝ մասամբ և եթ պահեցին հին բնագրի նիւթը, իրենց պատշաճ կամ անպատշաճ երեցածին համաձայն: Ինչպէս Եզրի Հարցաքննութեան այն երկու հնագոյն հատուածներն, զորս մէջ բերինք, կը պակասին Գրիգորի Հարցաքննութեան խմբագրի մէջ, այսպէս այլ վերջնոյս մէջ միայն պահուած կը գտնենք դեռ ուրիշ հատուածներ, զորս զանց ըրած է առաջինն:

Այս հատուածներէս մին, զոր խմբագիրն զետեղած է եօթներորդ աստիճանին մէջ, ուր հրեշտակներ ընդ առաջ գալով արդարոյն երգօք օրհնութեան՝ կ'ողջունեն զնա և կը տանին ի տես Աստուածութեան, ամենաման է վլենդիդադ—Սատեի մէկ տեղոյն, յորում այն ինչ արդարոյն հոգին՝ Սէրոս հրեշտակի կամ Ազատի հովանաւորութեամբ անցնելով ընդ կոիւս Դիւաց՝ կը մօտենայ Որմզդի օթեանին, անդէն ընդ առաջ կ'ելնէ անոր հրեշտակապետն վլոռուսն, և ողջունելով՝ ամմահութիւն կ'աւետէ անոր. և ապա կը տարուի նա ի դրախտն՝ ի տես Որմզդի, որ բազմած է իւր Ամշասպաներուն հետ լուսեղէն աթոռոց վերայ:

Այսպէս նշանաւոր է նաև հոգւոյն՝ մարմնոյն հետ ըրած ընդարձակ խօսակցութիւնն², ուր դատախապ կը լինին փոփոխակի զիրերաց:

1. Տես Վրաց « Իվերիա » լրագիրը, 1891, Թիւ 118:

2. Զոր իբրև նորութիւն հրատարակեց ն. Մառ՝ իւր վերոյիշեալ խորագրի ներքև: Մառի գործածած ձեռագիրն՝ համեմատութեամբ մեր կ'ը Մաշտոցին՝ շատ նոր է, և նոր յաւելուածներ և փոփոխութիւններ կրած է:

Այս խօսակցութիւնս՝ որ շատ նմանութիւն ունի Ս. Աբբայ Մարկոսի Առաջնահայտարարեան հետ, ահագին ազդեցութիւն ունեցած է միջնադարեան հայ բանաստեղծից վրայ: Եւ իրօք հանգստեան Շարականի ԺԳ տէր յերկնիցի Բ տունն՝ « Ոսկի եղեալս անպիտանացայ », այլովք հանգերձ, փոքր ինչ տարբերութեամբ՝ այդ խօսակցութեան մէջ մարմնոյն առ հոգին ուզղած խօսքերուն հետ նոյն է:

Առաջին աստիճանին վերայ դիւայ բանակին մէջ նկարագրուած երկայն, սևադեմ և չարտեսակ այրն, որուն գլուխն մինչև յերկինս կը հասնի, և յանկարծակի յարձակելով մեղաւոր հոգւոյն վերայ կը ըռնէ և կը շարչարէ, շէթից գրոց Բելիարէն և եօթնազլխեան վիշապէն բոլորովին տարբեր յատկութիւն ունի, և Եաշնա գրոց մէջ (ԺԳ. 2, Լ. 3-6) յիշուած Անգրո-Մաիկյոս = Սեա հոգւոյն և կամ Թարիքի, այն է՝ խաւարի անձնաւորութեան հետ նոյնը կը թուի լինել. հետևաբար, զանիկայ նկարագրող հատուածն ևս հնդկարիական միացորդ մ'ըլլալու է՝ քան թէ քրիստոնէական: Մեղքերու և մեղաւորաց կրած պատուհաններու մասին եղած հարց ու պատասխանիքն ևս յոյժ հետաքրքրական են, բայց քրիստոնէական գրչի ներքև գրեթէ բոլորովին կերպարանափոխ եղած. որով աւելի Աստուածածնի տեսլեան հետ մերձաւոր ազերս ցոյց կու տան, քան թէ նախաքրիստոսեան մի ուրիշ գրաւոր կամ անգիր աղբեր, թէպէտ և իրօք ըլլալու էր այնպիսի մի գրաւոր աղբիւր, որուն հետ և՛ Եզրի Հարցաքննութիւնն սերտ կապ ունէր:

Ս. Կալիստրատոսի հայերէն Վկայարանոքիսն, ուր կայ ընդարձակ վարդապետութիւն մի, որով մեծ վկայն՝ կ'ուսուցանէ իւր ԽԹ վկայակիցքը՝ քրիստոնէական վարդապետութեան մէջ, կը թուի թէ ճանչցած է մեր կրկին Հարցաքննութեանց սկզբնագիրն, և կերպով մի կը հաստատէ անոր մասին վերև արտայայտած մեր կարծիքը: Վկայարանութեանս մէջ (Հտ. Ա. ԼՂ 669) մեր սուրբ վկայն՝ Գրիստոսի Տեառն մերոյ տնօրինականաց վարդապետութիւնն սքանչելի աստուածաբանութեամբ և ուղղափառապէս աւարտելէն վերջ յականջս իւր ընկերակցաց, Հեղիոզորոս՝ հետևեալ հարցը կ'ուղղէ անոր այսպէս. « Աղաչեմ զքեզ, տէր իմ Կալիստրատէ, յորժամ վախճանի մարդ՝ զիսրդ լինիցի ոգի նորա, ո՞չ երբայ, կամ զինչ գործէ, կամ ո՞չ բնակէ, ի տակննս եքէ ի հակագտեան »: Տարակոյս չկայ, որ այս տեղ Հեղիոզորոսի բերանը դրուած հարցումներն՝ մի և նոյն են իսկապէս Եզրի և Գրիգորի Հարցումներուն հետ. բայց ո՞վ կը կարծէր, որ Կալիստրատոսի տուած պատասխաններն ևս յար և նման բաներ

պարունակէին հրեշտակէն աւանդուածներուն. եւ սակայն այս իրական և շօշափելի ճշմարտութիւն է: Այլ մեզ համար մեծ կարևորութիւն ունեցող իրն այն է, զի Կալիստրատոսի վկայաբանութեան մէջ տրուած պատասխաններէն ոմանք՝ աւելի Եզրի Հարցաքննոչքեան կը համաձայնին, ոմանք Գրիգորի Հարցաքննութեան, և կան ոմանք այլ, որք երկաքանչիւրին հետ զուգարար կ'ընթանան, իբրու այն թէ մասն մի մէկէն քաղած ըլլար, և մաս մ'այլ միւս Հարցաքննութենէն: Սակայն դժուար է որ դա ծառայական բանաքաղութիւն եղած լինի, վասն զի շարաբանութեամբ՝ երկուքէն իսկ կը տարբերի, և թարգմանութիւն մ'ըլլալու բնորոշ յատկութիւն ունի: Բայց այս մասին վերայ խօսելէն յառաջ, դնենք հոս համեմատութեամբ սոյն եռատեսակ հատուածներէն՝ նմոյշներ.

ՀԱՐՑ. ԵՋՐԻ

ՎԿԱՅԱԲ. ԿԱԼ.

« Այլ յորժամ հասանի որ վախճանին, բարի հոգւոյն՝ բարի հրեշտակ գայ, և չարին՝ չար. որպէս առաքեալ ոմն ի թագաւորացն առ չարագործան և առ բարեգործան, բարւոյն՝ բարի հատուցանէ և չարին՝ չար, նոյնպէս և բարի հոգւոյն՝ բարի հրեշտակ գայ, և չարին՝ չար. ոչ եթէ հրեշտակն է չար, այլ իւրաքանչիւր գործքն »:

« Արդ, որպէս բարի հոգին՝ ի ձեռն բարի հրեշտակաց աւանդի, նոյնպէս և մեղաւորին՝ ի ձեռն չար հրեշտակաց. և ոչ եթէ չար են հրեշտակք, քանզի չար միայն բանսարկուն է, և ի չար կամս նորա հաւանեալ են դեքն, այլ վասն չարագործաց մարդկան և աղտեղի գնացիցն՝ և հրեշտակք նոցա չար անուանին: Այսպէս իմացարուք. մի զինուոր առաքի ի թագաւորէն ի գովութիւն և ի պատուատրութիւն բարեաց և առաքինեաց, և ի սպանումն և ի տանջումն չարագործաց. արդ, նոյն է և մի, հրեշտակք սոցա՝ բարիք, և նոցա չար՝ վասն գործոց իւրեանց »:

« Յորժամ երիցս անգամ աւսեն քահանայքն՝ « Հաւատ ունելով, ատնումք (զհոգին) և վերանամք յերկինս : Յառաջին աստիճանն գունդք դիւաց են . եթէ մեղաւոր լինի՝ յառաջ գան, և հազիւ կարեմք հանել ի նոցանէ : Յերկրորդումն . . . յառաջ գան և ասեն՝ տուք ի մեզ զխորհրդակիցդ մեր և ծափս հարկանեն և ասեն . Այս մեր կամարարն է, և բազումս տանջեն և ապա թողուն » :

« Ասէ սուրբն Գրիգոր . Եթէ չեղև մահ նորա առ քահանայս՝ որ արձակեալ էր զնա, կամ ի գետոյ եղև մահն նորա, կամ ի խորշակէ, կամ ի սառամանեաց, կամ ի գաղանաց, կամ ի սրոյ, կամ յանդաստանի, կամ յօրհասարակի և խնդրեաց զքահանայն և զգրկական խորհուրդն և ոչ եգիտ, զԲնչ լինիցի նա » :

« Արդ, յորժամ վախճանի մեղաւորն, առնու զհոգի նորա հրշտակն, և տանի սգով և տրամութեամբ, ամաչեցեալ ի գործոց նորա . յայնժամ գան ի վերայ նորա կաքուելով՝ օղային դեքն, պատերազմ յարուցանելով և իւրեանց անուանելով զնա, ծափ զծափի հարկանեն և վազեն . սակայն հրշտակն հարկանելով զնոսա յետս և մոնչելով ի նոսա, անցուցանէ ընդ նոսա, և չանէ յեօթներորդ պարունակն՝ ի ներքոյ ջրամած հաստատութեան » :

« Պատասխանի ետ Նւարխտոս և ասէ . Տէր իմ Կալիստրատէ, ըստ թուոյ առեւրց վախճանէ Աստուած զաշխարհս, թէ ըստ հանդիպման . և կամ զիմրդ յանկարծակի մեռանին մարդիկ կամ ի սովոյ, կամ ի ծառոց, կամ ի ծովու կամ ի գետոց, կամ ի հրոյ կամ յայլ պատահարաց հրաժարեն կեանք մարդկան, կամ ընկեր զընկեր սպանանէ, կամ ի դիւէ և յանկարծակի մեռանիարդ, իբրև մեռանի մարդ կամ ի մանկութեան կամ ի ծերութեան, լցեալ լինի զօրութիւնն, և կամ այնք որ ի պատերազմունս անկան » :

Գիտելու է, որ նկատմամբ առաջին հատուածին վկայաբանութիւնն՝ առանձինն աստիճանաց նկարագիրը չնեղով՝ աւելի ամփոփ է և միապաղաղ. սակայն երկուքին իմաստքն ևս նոյն են, այսինքն են՝ Հրեշտակի ձեռքով հոգւոյն վեր տարուիլն, օդային դիւաց՝ գանիկայ նեղեմն, և Հրեշտակաց ձեռքով գերծանելով՝ մինչև եօթներորդ պարունակը բարձրանալն: Երկրորդն՝ Գրիգորի Հարցաքննութեան մէջ քրիստոնէացած է. իսկ Վկայաբանութեան մէջ աւելի պահուած է բնագրի բնադրոշմն: Ի վերջոյ դնենք խառն օրինակ մի:

ՎԿԱՅԱԲ. ԿԱԼԻՍՏ.

« Իսկ յորժամ գայ հասանէ օր վախճանին ի վերայ մարդոյն, գան Հրեշտակք առ մարդն, յորժամ տեսանեն զհոգի մարդոյն թե արդար է, խնդան և առնուան սաղմուսիք և օրհնութեամբ, և տանին ընդ արեւելս, և անցուցանեն ընդ վեց պարունակս. ընդ շտեմարանս կարկտի, ձեան, ընդ վտակս անձրեաց, և ընդ ամենայն շտեմարանաց տեղիս, և ընդ այսս չարութեան՝ որ են յօդս, և հանեն զնա յեօթներորդ պարունակն, և կացուցանեն զնա դէմ յանդիման փառացն Աստուծոյ, և երկրպագէ Աստուծոյ յեօթներորդ պարունակին՝ ի ներքոյ հաստատութեան... Եւ դարձեալ հոգին ի ձեռն տեսչութեան հրեշտակացն Աստուծոյ տեսանէ զդրախտն, և ըստ բարի գործոց իւրոց զհատուցումն, և յուսով հանդերձելոցն զուարճանայ... Իսկ մեղադրքն՝ ի գործս իշրեանց հայելով՝ սզան և ողբան, գիտելով թե որպիսի տանջանս կրելոց են յառտրն դատաստանի: Բայց յաստուածուստ բարեբարութենէն երկայնմտութիւն և հանգիստ պարգևեալ է երկոցունց՝ կողմանցն՝ մինչև յօրն վրէժխնդրութեան: Բայց քրիստոնէից մեծ յոյս կայ և յետ մահուան. զի թէ իցեն ուրեք ծնողք կամ եղբարք կամ որդիք կամ ազգակիցք և կամ բնաւ ի քրիստոնէից ևս բարեգութ չը, և աղօթս մատուցեն, և պատարագս և ողորմութիւնս նուիրեսցեն, և զսուրբս բարեխօս ունելով՝ կարեն ի մեծի հանգստեան առնել զայն, որ ակն ունէր տանջանաց. զի հաշտի Աստուած և թողու զմեզս ննջեցելոցն ի ձեռն զենմանն Գրիստոսի, որ ի վերայ սրբոյ սեղանոյն զենեալ լինի՝ ի փրկութիւն և ի կենդանութիւն և ի քաւութիւն կենդանեաց և մեռելոց »:

Նօտարագրուած խօսքերն միայն նման են Գր. Հարցաքննութեան. իսկ մնացեալն մեծաւ մասամբ կը համաձայնի Եզրի Հարցաքննու-

թեան: Արդ, այս երևոյթն՝ որ յայտնապէս կը տեսնուի նաև նախ-
ընթաց համեմատութեանց և նոյն իսկ ուրիշ հատուածոց մէջ,
զորս զանց ըրինք համեմատել, յայտնի ապացոյց է, որ Եզրի Հար-
ցաքննութեան խմբագրութիւնն՝ թէ՛ աւելի հին է՝ քան զզրիգրեալն,
և թէ համեմատութեամբ աւելի հաւատարիմ մնացած է հին բնա-
գրին:

Սովայն, ասկէ աւելի մեզ համար նշանակութիւն ունեցող և
ուշագրութեան արժանի կէտերն են հետեւեալքն. այսինքն թէ՛ եղամծ
է արդեօք Հնագոյն գրուած մի կամ ՝ Στρανωτισουαφης (Διαλόγος)
նման Եզրի Հարցաքննութեան՝ ընդարձակ պարունակութեամբ, յորմէ
օգտուած լինէր Քրիստոսի թուականին Բ-Գ դարում նոյն իսկ Ս.
Վալիստրատոս, թէ ընդհակառակն՝ սորա և իւր հեթանոս ընկերակ-
ցաց բերանը դրուած խոսակցութիւնք՝ պարզապէս կեղծիք են, և
վկայասիրաց միոյն ձեռքով յետոյ ուրեմն խմբագրուած յիշեալ Հար-
ցաքննութեանց վերայ, և ներմուծուած են Վալիստրատոսի վկայա-
բանութեան մէջ:

Բասիլեան Յայմաւուրաց և Մետափրաստեսի համառօտ հաւաք-
ման մէջ ևս յայտնապէս կը տեսնուի կայանաց և վերջին հատուց-
ման մասին ըրած Ս. Վալիստրատոսի սոյն վարդապետութիւնն, թէ-
պէտ և յոյժ հակիրճ և հարևանցի: Ստիլդիէնկի հետ ուրիշ լատին
մատենագիրք իսկ՝ չկարենալով որոշել Վալիստրատոսի ճիշդ ժամա-
նակը կամ Քրիստոսի թուականի Դ դարում ենթադրելով զնա, ան-
կարելի համարեցան, որ սուրբ վկայն այսպիսի մի թիւր վարդա-
պետութիւն ըրած ըլլայ, քան թէ գրով աւանդած. հետեւաբար,
Մետափրաստեսի քմահաճոյքին ուզեցին վերագրել զայն և ոչ թէ
Վալիստրատոսի հարագատ մի բան:

Սովայն, ինչպէս շատ ուղիղ կերպով դիտել կու տայ Հ. Մկր.
Աւգերեան 1, Վալիստրատոսի հին վկայաբանութեան յունարէն և
կատարեալ բնագիրն՝ Մետափրաստեսէն շատ դարեր յառաջ գոյու-
թիւն ունէր, և լաւագոյն և ստուգագոյն վկայաբանութիւններէն
մին ըլլալու էր, որուն իբրև կատարեալ ներկայացուցիչ՝ յետոյ ու-
րեմն յայտնուեցաւ հայկական հաւատարիմ թարգմանութիւնն: Այո՛,
այս թարգմանութեանս մէջ եղած լեզուաբանական և այլ խօսուն
փաստերով կը փարատին այսօր ամէն կասկածք և վարկածք Ստիլ-

1. Տես Լեւոնուր լուր և վայաբանութեան սրբոց, Վենետիկ 1813, Հո. Զ.
երես 589-594:

գինեկեանց: Եթէ ուշ դնելու ըլլանք որ սկսեալ Քրիստոսէ երկու դար յառաջ և մինչև Գ դարուն վերջը գրուած անկանոն գրուածոց հեղինակներն, — լինին դժբա հրէայք թէ քրիստոնեայք, — յեղյեղած են միշտ կայանաց և հազարամեայ վարդապետութիւնը: Եթէ Պապիաս, Երանոս և Յուստինոս անգամ՝ իրենց բազմաթիւ կուսակիցներով, եթէ արևելեան եկեղեցեաց սրբադրոշմ Շարականներն և մաղթանքներն իսկ գոգցես իմն զայն կ'արտայայտեն. ուրեմն զարմանալու ինչ պատճառ կայ, որ Ս. Վալիստրատոսի պէս մի բարեպաշտ գինուրական ևս նոյն կարծիքն և համոզումներն իրրև ուղիղ վարդապետած ըլլայ՝ իւր հեթանոս ընկերաց, մանաւանդ քանի որ հակառակ ողջամիտ վարդապետութիւնն՝ դեռ սուրբ Գրոց բացայայտ վկայութեամբ վճռուած չէր յեկեղեցւոյ: Մեծ վարդապետն Հերոնիմոս՝ (Մեկն. Երեմ. զլ. ԺԹ) յիշելով Վայանադրաց և Հազարամեայց սխալական կարծիքը, կարծէք թէ մատնանիշ կ'ընէ մեզ Վալիստրատոսի կամ անոր վկայաբանութեան վերայ, ըսելով. « Բազումք յեկեղեցական արանց և մարտիրոսք զնոյն ասացին »:

Վալիստրատոսի վկայաբանութեան գրութեան ժամանակն իսկ՝ նորա կենաց և մարտիրոսութեան ժամանակին պէս մթութեան մէջ ծածկուած է: Մետափրատեսի և Հայերէն վկայաբանութենէն գիտենք որոշակի, թէ նա ծնած էր ի Քաղկեդոն Բիւթանիոյ, և ի Հռովմ նահատակուեցաւ՝ ԽԹ գինուրակիցներով ի միասին, ուր գնացած էր յունական Քաղկեդոն կոչուած գնդին հետ: Վկայաբանութեանս մէջ յիշուած կայսրն, որուն հալածանաց զոհ եղան Վալիստրատեանք, է Դիոկղետիանոս. սակայն շատ հաւանական է որ Դեկոս կայսեր ժամանակ հանդիպած ըլլայ անոնց մահն, որ սխալմամբ գրչութեան Դիոկղետիանոս անուան փոխուած է: Եւ իրօք, երկու բացորոշ պարագաներ շեշտուած են վկայաբանութեանս մէջ, որոնք յոյժ կը նպաստեն այս բանիս. ա. Վալիստրատոսի ընկերն Եւարեստոս՝ մարդկան պատահական մահուան մասին հարցում մի ուղղած առ Վալիստրատոս, կ'ըսէ. « Քանզի ահաւանիկ բազումք անկան ի զօրաց մերոց ի պատերազմին Պարսից »: Դիտելու ենք, որ Դիոկղետիանոսի կայսերութեան սկիզբը Հռովմայեցիք իրօք պատերազմ ունեցան Պարսից հետ, ներսեհ թագաւորին օրով. սակայն այդ պատերազմն՝ Հռովմայեցւոց համար աւելի յաջող ելք ունեցաւ քան թէ ձախող, և յետ այնորիկ կռեցան 40ամեայ խաղաղութեան դաշինքն: Ուստի, աւելի հաւանական է որ Վալիստրատեանց վկայաբանութեան մէջ գիտմամբ շեշտուած մեծ կոտորածն՝ կամ

յամին 259 հանդիպածն ըլլալու էր, երբ Վաղերիանոս գերի ընկաւ Նապուհ Ա. Պարսից թագաւորին ձեռքը, և կամ յամին 251 Գաւնուր գետին քով Պարսից դաշնակից Գթաց դէմ Գեկոսի կրած պարտութիւնն և իւր որդւոյն հետ եղտիւրներու մէջ խորասոյգ կորնչիլն: Երկրորդ, Կալիստրատոսի կողմէն կը յայտարարուի, — ի վերջ վարդապետութեան, — թէ ինքն առած է զայն՝ իւր հաւէն Ոկորոսէ, որ կ'ապրէր ի ժամանակս Պոնտիոսի Պիղատոսի և դարձած էր ի քրիստոնէութիւն: Արդ, յամին 26-37 յիշուած Ոկորոսն՝ եթէ ստուգիւ էր հաւն Կալիստրատոսի, կը հետևի որ նա ինքն Կալիստրատոս իսկ՝ աւելի մօտ եղած ըլլար իւր հաւուն, այսինքն է՝ Բ դարուն քան թէ Գին. և այս բանիս ապացոյց է նորա անուամբ մեզ հասած վարդապետութիւնն, որ իսկապէս Բ դարուն աւելի կը պատշաճի:

Հայկական թարգմանութեան մէջ յիշուած անունն, որ բոլորովին անծանօթ է, կարծէք թէ կասկածի կ'ենթարկէ իւր հետ՝ նաև վկայաբանութեանս հարսգատութիւնը¹, սակայն պէտք է նկատել, որ այդ՝ մի ուրիշ անուան խանգարուած ձևն ըլլալու է: Եւ յիրաւի, Մետափրաստեսի քով Կալիստրատոսի հաւն՝ Νεοχωρος անուանուած է, զոր հաւանօրէն հայազգի թարգմանիչն՝ Ոկորոսի վերածած է, դուրս թողով անգիտակցաբար անոր Νε մասնիկն, իբրու այն՝ թէ մակբայ մ'եղած լինէր: Այսպիսի կրճատմանց շատ օրինակներ կան նաև մեր ուրիշ թարգմանութեանց մէջ: Բայց թէ Մետափրաստեսի զործածած հին բնագիրն իսկ՝ Νεοχωρος ձևն ունէր, թէ ընդ հակառակն Νεοχωρος կամ այլ ինչ, զայս դժուար է որոշել: Յամենայն դէպս, մեզ համար ամենակարևոր ճշմարտութիւնն այն է, որ Կալիստրատոս կամ անոր վկայաբանութիւնը գրողն՝ ունեցած է ստուգիւ իւր դիմաց Նեոկորոսի անուամբ հնագոյն Տրամախօսութիւն մի կամ քրիստոնէայ Գնոստիկեանի մի այլ գրուածը, և անտի քաղած է հոգւոց, կայենից կամ մեծ անծանօթին վերաբերեալ հարց ու պատասխանիքը: Եւ ստուգիւ, Կալիստրատոսի հետևեալ խօսքերու՝

1. Բաց աստի՛ կայ նաև ուրիշ կէտ մի, որ կասկածի կ'ենթարկէ վկայաբանութեանս հարսգատութիւնը. այսինքն է՝ 663 իլում Երրորդութեան մասին վերաբերեալ հատուածն, յորում « Ամենայնիւ տես է, ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է, ամենայնիւ կեանք է » բացատրութիւնքն կը գտնուին բառ առ բառ նաև առ Ազաթանգեղոսի: Անտարակոյս, գրուածոցս մին՝ միւսէն փոխ առած է զայդ, բայց թէ ստուգիւ փոխառուն Կալիստրատոսի վկայաբանութեան հեղինակն եղած ըլլայ, այս դժուար կ'երևի ինձ:

« Արդ, և ես ի նորա (Նեոկորոսի) առանդարենե՞ն ռաայ զայս » իսկ բուն իմաստն եթէ որոնենք, զրաւոր՝ քան թէ անգիր աւանդութիւն մի ցայց կու տայ մեզ, դիտելով որ Կալիստրատոս կամ նորա վկայարանութեան գրիչն՝ եթէ Բ-Պ դարում ապրող մէկն էր, ինչպէս կը կարծուի, կարող չէր Նեոկորոսէն պարզապէս լսելով ուսանել, վասն զի սա առաքելոց ժամանակակից էր, և ըստ ստեղծ վկայարանին՝ ստուգիւ յառաքելոց անտի լուեալ ուսաւ յԵրուսաղէմ, և յաւուր Պենտակոստէից՝ Պետրոս առաքելոյն քարոզութեամբը քրիստոնեայ դարձող և մկրտուողներէն մին:

Այդ Տրամախոսութիւնն՝ հաւանօրէն յունարէն գրուած էր, — դիտելով որ Նեոկորոս իսկ Քաղկեդոնացի կամ Քաղկիդացի յոյն մ'էր, — և թէ մինչև Կալիստրատոսի ժամանակ՝ մեծ ազդեցութիւն ունեցած էր նորադարձ քրիստոնէից վերայ, իբրև կուսակից և թերևս իբրև նախկին ներկացուցիչ Կայսանդրաց և Հագարամեայց վարդապետութեանն, որուն հետևած են ապա փրկչական թուականի Բ-Պ դարերում գրուած շատ մի անվաւեր Տեսիլներ և Յայտնութիւններ, ինչպէս և Յզրի և Գրիգորի Հարցաքննութիւնքն: Յիբաւի, վերջին գրուածոցս այն հատուածներն, որոնք կը գտնուին Կալիստրատեայ վկայարանութեան հայկական թարգմանութեան մէջ՝ մէկ կողմէն, և միւս կողմէն այլ բուն հնութեան բնադրոյժ կրող այն մի քանի հատուածքն, որոնք զանց ըրած է մէջ բերել վկայարանութեան հեղինակն՝ կամ լաւ ևս քրիստոնէացուցեր է, մի մի զօրեղ կուուաններ են այսպիսի վաղեմի գրութեան մի գոյութեանն, որ կարող էր նոյն իսկ առանց հեղինակի անուան Գործք կամ Գիրք Առաքելոց¹ վերտառութեամբ ծանօթ լինել Բ դարում: Չարմանք է, որ Սևեբրիոս Կեսարացի բնաւ յիշատակութիւն չըներ իւր եկեղեցական պատմութեան մէջ, ո՛չ Ս. Կալիստրատոսի և ոչ այլ անոր առաքելաշնորհ հաւուն՝ Ոկորոսի կամ Նեոկորոսի. այս բանս ուրիշ կերպով չի մեկնուիր՝ բայց եթէ ըսել, թէ նա՛, — համաձայն իւր Եկեղ. Պատմութեան Դ գրոց՝ ԺԾ, ԽԷ և Ե գրոց՝ Բ, Գ, Դ, Ե և ԻԱ ակնարկութեանց, — գրած էր առանձինն Գիոկղետիանոսէն յառաջ

1. Այս ինքն է՝ Libellus quidam Apostolorum dictum continens ըստ Որդիինայ (Hom. in Lev. 10), զոր Հառնակ (Gesch. der altchr. Litt. 2. Hälfte, Leipzig 1893, S. 755) Քարոզութիւն Պետրոսի կոչուած անվաւերակահին նման մի գրուած կը համարի: Կալիստրատոս իսկ, ինչպէս վերը մէջ բերուած օրինակէն կը տեսնուի, իւր հաւուն Ոկորոսի, այսպէս և իւր աւանդածը՝ Առաքելոց անուան հետ միացեալ կը յիշատակէ:

եղած հալածանաց և նահատակաց Վկայարանոսփիանքը = Ἀρχαίων μαρτυριῶν συναγωγῆ վերնագրով, ուր Ս. Կալիստրատեայ մասին գրած ժամանակ, անշուշտ շատ կարևոր տեղեկութիւն տուած ըլլալու էր անոր հաւուն Ոկորոսի կամ Նեոկորոսի Բիւթանացւոյ և նորա գրութեան մասին: Իսկ դժբախդարար այսպիսի մի հետաքրքրական հնութիւն, յորում Հայոց և մասնաւորապէս ի քրիստոնէութիւն դառնալու պատմութեան վերաբերեալ բաներ ևս լինելու էին, և որուն գոյութիւնը Սոկրատայ, Սեղբաստրոսի վարուց հեղինակին հետ՝ Հառնակ և Դիւչէն իսկ կ'ընդունին այսօր, արդէն ի վաղուց անյայտացած է ի միջոյ: Երանի թէ օր մի յայտնուէր դարձեալ, և յայտնէր մանաւանդ խնդրոյ նիւթ եղող մեր գրուածին գաղտիքը:

Բազմահմուտն Հառնակ՝ իւր վերոյիշեալ գրութեան (Հտ. Ա. էջ 116—139) բազմաթիւ հին և նոր մատենագրաց վկայութեամբ պացուցած է արդէն, թէ փրկչական թուականին առաջին դարերում կայր գործոց առաքելոց և աշակերտաց անվաւեր Հառաքումն մի, որուն հեղինակն է Մանիքեցի ոմն Լեւկիոս Կարինոս: Սակայն; Պապն Լեոն Ա. (Ep. ad Exsuperium) կը գրէ, թէ այդ հաւաքման մէջ գէթ Անդրեաս առաքելուն ընծայուած գործոց հեղինակներն էին Նեքսոքարիդ (Nexocharide) և Լեոնիդաս իմաստասէրքն: Փարբիկիոս (Cod Apocryph. N. T. II, p. 767 sq.) սխալ աւանդութեան մի վերայ հաստատուած կը համարի այդ անուանագրական ձևերն, և կ'ըսէ թէ Nexocharide՝ կարդալու է Charinus, և Leonida՝ Leucius, այսինքն է՝ մի միայն անձն: Այո՛, շատ հաւանական է, որ բերանացի աւանդութեամբ Լեւկիոսն Լեոնիդասի փոխուած լինի, բայց դժուար է, որ Քարինոս՝ Նեքսոքարիդի փոխուած լինի: Վերջին ձևս՝ աւելի Նեոքորոս = Νεοχώρος կամ Նեոքորիս = Νεοχώρις ուղիղ ձևը կը յիշեցնէ մեզ, որ նոյն է Մետափրաստեսի քով յիշուած Նեոկորոսին հետ, և Լեւկիոսի տրուած է իբրև վերադիր, անոր ծննդավայրին կամ ազգատոհմին յայտարար: Յամենայն դէպս, Նեոկորոս կամ Ոկորոս անուան հետ՝ անոր գրուածն ևս կը մնայ մեզ համար տակաւին իբրև առեղծուած, և ժամանակն միայն պիտի լուծէ այդ առեղծուածը:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն


Անվաւեր գրուածոց և մասնագիտութեան անծայրածիր և յաճախ մառախուղով պատած ծովն հատած անցած, և լուսաւոր հորիզոնին վրայ հասած ժամանակ՝ աւելի պայծառ կերպով կը տեսնենք այժմ մեր ստանձնած աշխատութեան և նեղութեանց հետ՝ նաև անկէ քաղած օգուտները, որոնք ոչ միայն նուաստ քննասիրիս, այլ և հայկական նոր գրականութեան այս պահանջն իսկ՝ գէթ ըստ մասին լրացնելու յատկութիւնն ունին: Մենք այսպիսի ամբողջական ուսումնասիրութիւն մ'ի լոյս ընծայելով, բնաւ յաւակնութիւն չունինք կարծելու, որ անոր մէջ յայտնուած եղելութիւնքն՝ մի մի կողմբոսեան նոր աշխարհներ են և կամ գրականական անյայտ նորութիւններ. վասն զի դժբա մեր գրասէր և վաստակասէր նախնեաց անկապտելի ժառանգութիւնքն եղած են երբեմն, զորս ժամանակն և բիւր արկածներ՝ դժնդակօրէն և՛ կապտե՛ջ և՛ յօշոօշ պատառել փորձած են յաճախ, և որ ցաւալին է միջաւանդ, անստուգութեան դատապարտեր: Այդ անստուգութեան խաւարը փարատելու և անոնց յարգը ճանչցնելու պէտք եղած ջանքն ըրինք մերօրսան, պարզելով ի նմին ժամանակի մեր մատենագիրներուն ընծայուած քանի մ'երկերու ստերակողմանքն ևս՝ օգտակար դիտողութեամբք, որով այսուհետև մերայոց հետ՝ օտարք ևս քաջ պիտի տեսնեն, թէ ինչն' ունէինք երբեմն, և ի՛նչ այսօր, և թէ դժբա որքան կը նպաստեն արեւելեան ազգերու սրբազան գրականութեան, կրօնագիտութեան, վիպագրութեան և այլ աւանդական զարգացմանց ուսման: Ասով ջանացինք միանգամայն ծանօթացնել մերայոց՝ նոյնպէս ուրիշ ազգերու գրականութեան մէջ պահուած նոյնօրինակ և աւելի կամ պակաս գանձերն և՛ անոնց հրատարակութիւնները, որոց թերևս շատեր անտեղեակ էին: Գիտնոց կը մնայ այսուհետև ուղղախոս մտօք և լրջօրէն քննել և դատել, թէ որչափ յաջողած ենք մենք այս ինչ կամ այն ինքրական կէտերը լուծելուն մէջ. բայց ընդհանուրին գալով՝ կը յուսանք, թէ մեր այս ուսումնասիրութիւնն՝ պիտի ծառայէ ապագայում նաև մեր հանճարաշատ նախնեաց ընծայուած՝ բայց դեռ չի ստուգուած մեկնողական երկասիրութիւններն ևս՝ դիւրաւ ուսումնասիրելու: Մերձաւոր ապագայում թերևս յայտնուին ազգա-

յին գրչագրաց մէջ հին Կտակարանին վերաբերեալ դեռ ուրիշ շահեկան բեկորներ ևս, որոց մասին դժբաղդաբար մենք բաղդ շունեցանք խօսել և գրել. սակայն այս՝ մեզի յանցանք պիտի չհամարուի, այլ ժամանակին զանոնք մեզ զլացողաց: Յամենայն դէպս, մենք կը սպասենք մանաւանդ աննախանձ հոգևով, որ մեզմէ աւելի դիւրութիւն և հմտութիւն ունեցող անձինք ելնեն յասպարէզ՝ շարունակելու գիտութեան այս ճիւղը նաև մեր ազգին մէջ, զոր գերմանացի և անգղիացի առաջին կարգի գիտնականք՝ այնքան զարգացուցին յԵւրոպա: Նոր կտակարանի բազմաթիւ անվաւեր պրուածքն իսկ, որոց տպագրութիւնն աւարտելու մօտ է՝ ի Ս. Ազար, առատ նիւթեր կ'ընձեռեն ուսումնասիրաց: Թեբևս նիւթոյն անձեռնհաս անձինք՝ ընդ ակամբ և ընդ հենգն նային այս տեսակ հրատարակութեանց վերայ, կարծելով որ միայն վէպերն և պատմական երկերն են ուսումնասիրելի. սակայն կը յուսանք, թէ բարեյիշատակ Մ. Էմինի պէս լուրջ գիտնականներ պիտի չպակսին, որք յարգեն զանոնք ևս, իրրև մեր բազմոստեան գրականութեան մէկ ճիւղը և անոնցմով զբաղողները խրախուսեն: Ահա՛, այսպիսի խրախուսանք միայն պիտի լինին իրրև վարձք՝ ինչպէս ամէն անվարձ վաստակաւորաց, այսպէս և ինձ նուաստիս, որ առաջին փորձն ընծայեցի ազգիս՝ ներկայ Հատորովս:



Յ Ո Ւ Ց Ա Կ

Գ Լ Ի Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Ե Ի Ն Ի Ի Թ Ո Ց



Ներածութիւն

Գ Լ Ո Ւ Ի Ի	Ա. Աղամգիրք	Էջ 8
»	Բ. Կտակք ժբ՝ ՆաՀապետաց	» 66
»	Գ. Պատմութիւն Ասանեթայ	» 101
»	Դ. Տեսիլք Ենովքայ արգարոյ և Դանիելի Է	» 131
»	Ե. Պատմութիւն Մովսիսի	» 220
»	Զ. Մահք մարգարէից	» 246
»	Է. Մատմութիւն Համառ. Եղիայ մարգարէին	» 273
»	Ը. Վասն Երեմիայի մարգարէի՝ ի գրոցն Բարուքայ	» 280
»	Թ. Եզր երրորդ	» 318
»	Ժ. Հարցմունք դշխոյին և պատասխանիք Սողոմոնի որդւոյ Դաւթի	» 430
»	ԺԱ. Հարցաքննութիւն Եզրի մարգարէին ընդ Հրեշտակին տեառն վասն Հոգւոցմարդկան	» 452
	Վերջարան	

Ա Ջ Դ

Թէջ 289-290 համեմատութեան առաջին սխեմակը կարդայու է երրորդ, իսկ երրորդն՝ առաջին:



3 2044 024 515 397

WIDENER
SEP 10 1994
SEP 09 1994
CANTON



3 2044 024 515 397

WIDENER
SEP 10 1994
SEP 09 1994
CANTON

